



147
C-99

4/3

124
4-99

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԳՐԵԱՑ

ՄԻՆԱՍՆԱՌԻՐԻԹԱՆ

Ի ՄԻՒԹ. ՈՒՒՏԵՆ

ՄԱՍՆԲ.

1848 - 1867



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍՍ. ՂԱԶԱՐՈՒ

1896

1971 21

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

ԳՐԵԱՑ

Հ. ՄԻՆԱՍՉ. ՆՈՒՐԻԲԱՆ

Ի ՄԻԻԹ. ՈՒԻՑԵՆ

ՄԱՍՆ Բ.

1848 - 1867



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1896

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ Պատմութեանս Ա Հատորը կը հրատարակուէր յամին 1881: Երբ Բ Հատորը ևս պատրաստ էր մտնելու ընդ մամլով, միաբանական կենաց հպատակութեամբ, հարկ եղաւ մեկնիլ յԱրևելս և մանաւանդ 'ի Փոքրն Ասիա և զբաղիլ անդ երեքտասան ամ զաստիարակութեան և քահանայական պաշտամամբք:

Թէ որքան կարելի էր այդ օրինակ կենաց և շրջանակաց մէջ յառաջ վարել այսօրինակ ուսումնասիրութիւն մը, և հսկողութիւն և խորհրդակցութիւնք իսկ հրատարակութեան ժամանակ, գիտեն որոնք փորձեր են այդ կեանքը. որով առ ժամս հարկ եղաւ կասիլ Բ Հատորոյն տպագրութենէն: Զանացինք միայն 'ի սպառ զուրկ և անտեղեակ չգտնուելու բազմաթիւ նոր յիշատակարաններու և մատեաններու, որոնք 13 տարուան ընթացքին մէջ 'ի լոյս գալով, ժամանակակից Պատմութեան բազում նոր երևոյթներ տուին. և չէ անկարելի որ օրէ օր երևնան ուրիշ լուսաբանութիւնք, որոնք թէ ոչ ի սպառ փոխեն պատմութիւնը, սակայն կարող են ինչ ինչ պարագայք այլակերպել:

Որչափ որ ալ ազգերնուս մէջ կարօտութիւն կայ ընդհանուր Պատմութեան ալ՝ Հին, Միջին դարու, և Նոր,

սակայն ցանկալի եղաւ ինձ ժամանակակից Պատմութենէ սկսիլ, որ բոլորովին նոր է ազգերնու համար, և բնաւ չկան մատեանք այս մասին վերաբերեալ. թերևս քաղաքական պարագայք չդիւրեւոյ՞վ այսօրինակ հրատարակութիւնքը: Եւ մինչ եզիպական, յունական, հռովմէական պատմութեանց ընդարձակ ժամանակ կը նուիրենք վարժարանաց մէջ, աւաղելի է որ փոքր ժամանակ չենք պահեր ժամանակակից Պատմութեան, որ միայն կարող է ուղիղ առաջնորդութեամբ մը, հասուն, խորհող և արդարադատ միտքեր պատրաստելու:

Երկար կ'ըլլար թէ յիշէինք հոս այն բազմաթիւ պատմական հրատարակութիւնք և աղբիւրք՝ առ որս պէտք էինք դիմել, իւրաքանչիւր ազգին համար, ըստ կարելոյն, փնտռելով իւր մէջէն պատմական տեղեկութիւնք և յիշատակարանք, յիւս յիւս դիմելով նաև անտիպ նամակագրութեանց կամ պրակաց մէջ յանկարծ հրատարակուած լուսաբանութիւններու, հազիւ երբէք օգտուելով լրագիրներէ. որով կը մնան շատ առաւել թուովք, զորս զանց ըրինք, գրութեան ոճոյն չափէ դուրս ընդարձակութիւն չտալու համար: Բայց 'ի մասնաւորի պէտք է յիշեմ որ՝ կնճռոտ և տարաձայն կարծիքներու մէջ, ուր կրնայի, նախադաս ընտրել եմ գերմանացւոյն Վէպերի կարծիքը, զոր միշտ համարած եմ նոր թուկիդիտէս մը կամ Տակիտոս. և թէ իւր կրօնական և իմաստասիրական ուղղութիւնք չեն յամենայնի ընկալեալք, սակայն չէ կարելի կասկածիլ պատմական անաչառ խուզարկութեանց վրայ: Նոյն անկողմնակալ ճշմարտութիւնը փնտռեցի Արևելեան խնդրոց մէջ առանց համակրանաց և հակակրութեանց, որոնք պատմագրի մը մեծագոյն բաղխման ժայռերն են. յամենայնի ջանալով չմղուիլ ի կանխակալ

կարծեաց և խորշելով հաճելի ըլլալու կողմնակալ կտր-
ծիքներու, այլ խորհրդածելով պարզապէս պատմութիւ-
նը ըստ համոզմանս: Յորս թէ վրիպեցայ, կը խնդրեմ
համարիլ աննպատակ և փափագող միշտ լուսաւորուե-
լու:

Յայտնի է թէ քան զամենայն մատեան, պատմականն
մեծ դժուարութիւնք ունի անսուանց յեղափոխման մէջ:
Նախ անհնարին էր ինձ գիտակ ըլլալ ամեն ազգաց
հնչմանց. և որչափ որ ալ ջանացի քննութեամբք և
հարցմամբք զբազումս ստուգել, սակայն անհնար է որ
սպրդած չըլլան վրիպակք ինչ. և ո՛ր էր թէ յայսմ ըն-
դունէի բարեսէր զիտողութիւններ ապագային զգուշու-
թեան համար:

Երկրորդ կը մնար այդ հնչումները նոյն իսկ հայ տա-
ւերով հնչել տալ, և յայդմ իսկ էր գործոյն դժուարու-
թիւնը: Արդարև զիւրագոյն էր օտար անուանքը դար-
ձնել ի մերս տառադիպութեամբ, զնելով ի զիմաց Բ,
Ը զիմաց Գ, Ժ զիմաց Դ ևն, օգտուելով միանգամայն
այն գրերէն որոնք մեր այբբենարանին հարստութիւնք
կը կազմեն. սակայն կը մնար տառից արտասանութեան
խնդիրը, նոյն գրերը այլազգ հնչուելով Յայսկոյս և Յայն-
կոյս Վոսփորի: Պատմութեանս առաջին թերթը նոյն
իսկ սկսաւ Յայսկոյս վոսփորեան հնչմամբ (որ վրիպա-
կաւ սահմանուած է « Հնչումն Ռուսահայոց », զի նոյն
հնչումն էր 30 տարի առաջ և ցարդ իսկ է 'ի բովանդակ
Փոքրն Ասիա) և յոր հակեալ եմ և համոզեալ, և որ
բազում զիւրութիւնք կ'ընձեռէր, սակայն այլ և այլ
զիտողութեամբք, չվճռեալ խնդիր մը թողլու որ սահ-
մանուի հասարակաց պայքարով և մանաւանդ համա-
կերպելու Ա Հատորոյն, յանձն առի չմխելու այդ ե-

աանդուն մրցարանին մէջ, զոհելով առ ժամս անձնական կարծիք, մինչև որ առ սակաւ սակաւ ուսուցմական պայքար մը լուսաւորէ հետեւելի շաւիղը և կամ մտցնէ հնչմանց յեղափոխութիւն մը Յայնկոյս Վոսփորի՝ այն է յԱրևմուտս. զոր և ոչ եմ կարող վրիպական դատակնքել, այլ գաւառական և նահանգական սովորոյթ մը զոր կարող է պահել իւրաքանչիւր ոք, միայն գիտելով ստոյգը և ըստ այնմ վարելով ՚ի գրութիւնս: Եւ որովհետև ներկայիս յիտալիա կը գտնուիմ, կը լսեմ որ Ե, Յ, ձ, է, և այլ տառք, բազմազգի կը հնչուին ըստ գաւառաց. ամեն գաւառ վրէժխնդիր է պահել իւր հընչումը, սակայն առանց ժխտելու այն կանոնը որ տառակարգաւ գրելու հարկ է օտար անուանքը և ոչ ըստ իւրեանց հնչման. որով մեզ համար ևս ուղիղն էր գրել Նապոլէոն, Պարիս, Վիգտորիա, Լոնդոն, Տիէր, Կալուր, Լէոպոլտ, Պասքելէ, առանց սակայն դատապարտելու այն տառերը, որ հայկական լեզուին ճոխութիւնքն են, որով Քուճճիա և ոչ Քուկկիա, Տիլիպ և ոչ Փիլիպ, Տիվոնչայր և ոչ Տիվոնսհայր, Ֆրանչիսգոս և ոչ Փրանկիսկոս, Տիցիանօ և ոչ Տիտիանօ, Շիլէր և ոչ Սգհիլէր, Զէքք և ոչ Տգհէքք, Մոն Սընի և ոչ Լեառն Գենիս Իսկ թէ համարուի թէ յայսմ ևս ընդարձակ հմտութիւն կարևոր էր ըստ ազգաց հնչմանց. ի՞նչ կ'ընեն Եւրոպացիք:

Եւ սակայն թէ միաբանական պատշաճողութեամբք այս հատորիս մէջ ևս չկրցայ գործածել կարծիքս, կը յուսամ որ բաղդաւորագոյն գտնուին այլք յապագային, որով և չունենան այն դժուարութիւնք որոց ևս պատահեցայ անուանց մասին. և կը յուսամ հանդիպիլ ներողութեան, թէ յանկարծ զիտողք գտնեն մի և նոյն անուանց վրայ ոչ համաձայնութիւնք տառից երբեմն սպրդեալք յաչաց:

Ա Հատորոյն մէջ ըսած էի որ Բ Հատորն պիտի կազմէր Գաղղիական ազդեցութենէն մինչև Բրուսիական ազդեցութիւնը յայսմ Գարու. այն է 1848էն 1870 կամ 1867 յետ Սատովայի պատերազմին, յորում հեռատես աչք մը կարող էր տեսնել 1870ի դիպաց սկզբնաւորութիւնը: Եթէ Տէր Սեզի կեանք տայ և պարագայք ներեն, չի յամեր Գ Հատորը՝ Բրուսիական ազդեցութենէն մինչև Ռուսական ազդեցութիւնը, քաղաքագիտական բարձր ուղղութեան մէջ: Յայտ է թէ որքան մերձենանք ներկայ ժամանակաց, կը բազմանան դժուարութիւնք և մըթութիւնք, յիշատակարանաց նուազութիւնք, լրագրոց և հարեանցի պատմողաց առատութիւնք, այլ և այլ կուսակցական ոգիներու մրցմունք քաղաքական և ընկերական ասպարիզին մէջ, որոնք աւելի ևս կը շփոթեն մտքերը և խոչընդոտն կ'ըլլան թափանցելու 'ի ճշմարտութիւն, նա՛ զի մերձաւոր ժամանակաց զիպուածոց մէջ զրեաթէ անհնարին է չունենալ անձնական համակրութիւնք և հակակրութիւնք:

Եւ որովհետև Պատմութեանս Ա Հատորը հրատարակած ժամանակ, ուսուցիչ էի ժամանակակից և Խօսարանական Պատմութեան Մուրատ-Ռափայէլ Լիկէնի մէջ, դասախօսութիւնք՝ մասամբ իւրիք պատմական գրքի մը կը ձուլուէին: Բ Հատորը փափագելի երեցաւ ինձ աւելի ևս դիւրընթեռնլի ընել մեր ժողովրդեան, պահելով միանգամայն այն ամեն տարերքն և մասունք, որոնք կարեւոր դատուին ժամանակակից Պատմութիւնը ուսումնասիրողի մը. և այսպէս ընել մատեան մը ուսումնասիրաց և գիրք մը ընթերցասիրաց. և եթէ « Պատմութիւնն է կրթող զժողովուրդս » ըստ իմաստուն ասացուածին, այսպէս միանգամայն կրթութեան գիրք մը ընել

զայն. որով, եթէ կարելի է, մեր ժողովուրդը փոխանակ յունայն վիպասանութիւնս, ստոյգ պատմութեան մէջ փնտռէ իւր մտաց յագուրդը և քաղաքական կրթութիւնը: Շատ բան ուսուցանող է ներկայ պատմութիւնը, և այդ ուսման անհոգութեամբ, սրբան աղետալի վրիպակք կ'ըլլան մարդկային, ընկերական և ազգային կենաց մէջ:

Եթէ այս տեսակէտով ևս փոքր օգուտ մը ունենայ ներկայ հրատարակութիւնս իւր ամէն թերութեամբքն հանդերձ, ահաւասիկ արդէն իւր նպատակին հասած կը համարի:

14 Յուլիս 1896 Վենետիկ

Հ. ՄԻՆԱՍ Վ. ՆՈՒՐԻՅԱՆ

ՏԵՍՈՒԶ

Մոռատ-Ռափայիլ Վարժարանի:

Գ Ա Ղ Ղ Ի Ա



ԲԱՐՁՈՒՄՆ ԼՈՒԻ ՖԻԼԻՓԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

1. 1848. Բարեկարգութեանց փափաք. — 2. Հացկերպթք. —
 Ընդդիմակացք 'ի Խօսարանի. — 3. 1848ի Խօսարանի բացումը. —
 4. Յեղափոխութիւն փետրուար 24ի — 5. Ստիլոն Պարօ և
 Թիէր Պաշտօնարան. — 6. Անկումն Լուի Ֆիլիպի թագաւորու-
 թեան. — 7. Վարչակալութիւն. — 8. Առժամանակեայ վարչ-
 ութիւն :

1. Բարեկարգութեանց փափաք. — Թէպէտ 1848ի
 սկիզբը բոլոր Եւրոպա յուզեալ էր և արդէն կը տեսնու-
 շէր ընդհանուր միառում մը ազատական գաղափարաց
 և ընդարձակագոյն սահմանադրութեանց, բայց դժուար
 չէր ըլլար Պետութեանց զանոնք ճնշելը, եթէ Գաղղիա
 նոր յեղափոխութեամբ մը աւելի արծարծած չըլլար
 զայնս, ինքնին նախ ստապալելով այն վարչութիւնը՝ զոր
 18 տարի առաջ ազատական յեղափոխութեամբ մը
 դարձեալ ինքը իւր վրայ դրեր էր :

Արդէն տեսանք անցելոյն մէջ Կիզոյի դէմ ձևացած
 ընդդիմութիւնը ի Խօսարանի¹. վարչութիւնը իրեն հա-
 կառակ ունէր թէ զառակապետականս թէ զհասարակա-
 պետականս և թէ զօրինաւորականս, որոնք երբէք չէին
 մտցած Լուի Ֆիլիպի մարտնչինը ընդդէմ Կարոլոս
 Ժի : Ընդհանուր կարծիք էր ամենուն որ ընտրութեանց
 եզրանակի բարեկարգութիւն մը, շատ մը գանգատնե-

1. Parlement. Parliament.

րու առջև կրնայ առնուլ: Տիւվէրժիէ տը Հորան և տը Ռէմիւզա գայն առաջարկեցին Խօսարանի մէջ: Առջինը կ'առաջարկէր որ ընտրողաց թիւը բազմապատկելու համար, տուրքով իրաւունք ստանալու գումարը 200 ֆրանքէն 100ի վերածուի. իսկ երկրորդը կ'առաջարկէր որ Խօսարանէն զրկուին պաշտօն ունեցող երեսփոխանք: Ընդհանուր գանգատ էր՝ որ Խօսարանը զվարչութիւնը կը ներկայաց նէր քան թէ զՎաղղիւս. և այս պատճառաւ իսկ առաջարկութիւնքը ընդունելի չեն ըլլար: Այ թէ Կիզօ հակառակ էր այսօրինակ բարեկարգութեանց, ինչպէս թերևս իւր ընկերներէն ոմանք, այլ զի չէր ուզեր այսպէս տեղիք տալ պահանջմանց և իբր գլուխ պաշտօնարանի, իւր ընկերաց մեծամասնութեան կողմը կը պաշտպանէր:

2. Հացկերոյթք. — Ընդդիմակացք՝ Խօսարանին միջոցովը չկրնալով փափաքածնին ձեռք ձգել, սահմանեցին ժողովրդական միջոցներու դիմել և հացկերոյթներ պիտի տրուէին յընտրատեղովոց առ իրենց երեսփոխանս, որուն օրինակը չէր ինչ նոր: Հոն պիտի գտնուէին ուրիշ համամիտ երեսփոխանք և հրաւիրեալք, և հոն ճառախօսութիւնք պիտի ըլլային իրենց սկզբանց վրայ: Փութով գրի առնուեցան պահանջները և որուն հաւանութիւն տուին ամեն ընդդիմակաց երեսփոխանք, ինչպէս նաև ռամկապետականներէն մաս մը: ()րինաւորականք չէին ուզեր որ և իցէ բարեկարգութիւն մը որ կարող ըլլար Յուլիսի վարչութիւնը ամրապնդել: Առաջին հացկերոյթը 'ի Բարիզ' կատարուեցաւ. Յուլիս 9ին ի Մոնմարգրը՝ Շաղօ ս' Ոյի պարտիզին մէջ, ուր գտնուեցան 86 երեսփոխանք և 1300 հրաւիրեալք. Լասդըրի, Ռըֆիւր, ()տիլոն Պարօ, Տիւվէրժիէ տը Հորան, Սէնար, Մարի, Կիւստավ տը Պոմոն և ուրիշ անձինք վարչութեան դէմ պարսաւաւոր բանախօսութիւնք բրին: Թիէր ներկայ չի գտնուեցաւ սեղանոյն՝ պատճառելով որ թէպէտ ինքը սրտով միաբան, բայց որովհետև ճառախօսութեանց մէջ անցեալ վարչութեանց դէմ ալ պիտի խօսուէին, որոց ինքը նախագահ եղած էր, անոր

Համար կը հրատարէր ներկայ գտնուելէն: Չուզեցին նաև մասնակցիլ ծայրայեղ հասարակապետականք, յորս Լըտրիւ Ռոլէն և Ֆլորեն Ռէֆորժի լրագրապետը: Բայց փութով իրենք ալ դիմեցին այս միջոցներու: Բարիզու այս հացկերոյթը մեծ շառաշ և մեծ ազդեցութիւն ունեցաւ: Շատ մը ընդդիմակաց երեսփոխանք գաւառները տարածուեցան. նորեւուկ սովորութեան մը պէս ամեն տեղ հացկերոյթներ կազմուեցան, և բոլոր Գաղղիա յուզեցաւ:

Հացկերոյթներու մէջ նշանաւոր եղած է Մաքոնինը՝ զոր քաղքին շահապը՝ կու տար Լամարթինի Ժէրոնտեան և Պատմագրութեան ի պատիւ: Լամարթին պատասխանելով շահապին մաղթանաց, գուշակեց Յուլիսի Թագաւորութեան անկումը արհամարհութեան յեղոթիտութեամբ. և այս անունը և արհամարհութեան ձայնը հնչեց փութով Գաղղիոյ մէկ ծայրէն միւս ծայրը: Հացկերութիւն սկիզբը ահաւոր փոթորիկ մը ելեր էր, հրաւիրեաք վրանին կեդրոնը ամենը ամփոփուելով միաբան եռանդալից հնչեցուցեր էին Մարտիեղի վերջին տունը: Չայնը հնչեց ամեն կողմ, միայն երեսփոխանք և քաղաքացիք չէին որ կը յուզուէին. «Չերմը, ինչպէս կ'ըսէր Փրանկիսկոս Բ. Աստրիոյ կայսրը, անցեր էր նաև ռամկին», որուն յայտնապէս գլուխ անցեր էին Լըտրիւ Ռոլէն և Լուի Պլան:

3. 1848ի Խօսարան. — Այս յուզմանց ժամանակ հասաւ 1848ի Խօսարանի բացման օրը և պաշտօնեայք գհակառակորդս ուզեցին պախարակել Պըսակի ճառին մէջ դնելով որ՝ «Այս յուզմունքները կը գրգռուէին թշնամի և կոյր կրքերէ»: Այս երկու բառերը մեծ խռովից պատճառ եղան ի Խօսարանի, պաշտօնեայք օրինաց հակառակ հրատարակեցին այս հացկերոյթները. Տիւլէրժի: Հորան, տը Պարօ, և տը Փետր. 11.

Ումիւզա պաշտպանեցին զայնս: Կիզօ և Տիւլոդէլ պաշտօնեայք ծանուցին որ թէ ներեալ էին մինչև այն ատեն, սակէ վերջը կը վերցուէր այդ թոյլատուութիւնը:

և մերժեցին որ և իցէ փոփոխութիւն մ' իրենց առաջարկութեանց . սասնելինն շփոթալից նիսաք եղան, այս անգամ ալ Պաշտօնարանին առաջարկած պատասխանը ընդունելի եղաւ :

Սակայն դեռ պատասխանին վէճերը չլրմնցած Բարիգու ժԻ րնտրաժողովոյն գլխաւորք, Փետրուարի 19ին համար հացկերոյթ մը սահմաններ էին . թաղին ոստիկանը օրինաց յօդուած մը մէջաեղ բերելով արգիլեց այս գումարումը . ժԻ րնտրաժողովը լնդհանուր Բարեկարգութեան հացկերութից ժողովոյն դիմեց, որ 19ին գումարուեցաւ և սահմանեց ընդդիմանալու : Խօսեցաւ Լամարթին որ չէր հարկ տարակուսիլ և պէտք էր քաղաքացւոյ պէս գործել : Իր օրինակը զամենն ալ համոզուեց և որոշուեցաւ հացկերոյթը կատարելու փետր . 22ին : Միանգամայն ընդդիմակաց լրագիրք ծանուցանելով զայն, զքաղաքացիս կը հրաւիրէին ի հանդարտութիւն :

Պաշտօնարանը և իրեն հետ իշխանութիւն, օր օրուան վրայ դաստիարար կ'ինկնար յարհամարհութիւն . Լուի Տիլլիի հաստատուն իւր մտաց վրայ, շուղեց քայլ մը յետս ընկրկել և կամ փոխել իր ընթացքը . ի գուր զանազան բարեկամ անձինք, ինչպէս Սէրաստիանի, Մոնթալիվէ և ժէրար խորհուրդ կուտային միջին ուղի մը գտնալ : Ժօէնվիլի իշխանը, որդի թագաւորին, մէկ երկու խորհրդածութիւն ընելուն համար Ալիբիկէ զրկուեր էր : Միով բանիւ Լուի Տիլլիի չէր ուզեր թողուլ զԿիզօ : Այսու հանդերձ Վիդէ և Մոնի երեսփոխանք պաշտօնէից հետ նախ տեսնուելով դիմեցին սու ընդդիմակացս այս երկու կողման զժտութեան միջին ճամբայ մը գտնալու : Քարմարցուեցաւ որ հրաւիրեալք սեղանի երթան հանդիսով, և հոն ոստիկանութեան պաշտօնեայ մը արգիլէ իրենց մուտքը, սակայն անոնք մտնան, և երբ իշխանութիւնը սպառնայ որ գումարումը բռնութեամբ պիտի լուծէ, Օտիլոն Պարօ բողոքէ ընդդէմ այս բռնութեան առ դատաստանական ատեանս, և յորդորէ ըզկոչնականս խաղաղութեամբ ցրուելու : Մեծաւ մու-

սամբ երեսփոխանք համոզուեցան այս բանիս բաց 'ի Լամարթինէ, որ « Եթէ Քոնքորտի հրապարակը ամայի ալ ըլլայ, կ'ըսէր, և ամեն երեսփոխանք ետ քաշուին իրենց պարագէն, ես միայն կ'երթամ հացկերութիւն և իմ ստուերս ալ ետեւէս » : Փետրուար 21 ի ընդդիմակաց լրագիրք կը հրատարակէին և կը նշանակէին այն կէտերը՝ ուսկից հացկերութիւն համար բազմութիւնը կարգաւ պիտի միանար ի Մատրլէն և հոնկէ պիտի ուղղուէր ի Քոնքորտ հրապարակը : Կը հրաւիրէին դարձեալ զազգային պահապանս գտնուելու այս հանդիսին իրենց չքաղգեստովը և առանց հրացանի : Վարչութիւնը աւելի տազնապեցաւ այս հրուերին վրայ, և Տիւշադէլ պաշտօնեայն ծանոյց Ոսիլօն Պարօյի որ իշխանութիւնը իր իրաւունքը 'ի գործ պիտի դնէր : Այն իրիկունը վարչութիւնը քաղքին որմոց վրայ կ'պցընել տուաւ այն օրէնքին օրինակը, որով ամենայն ժողովք կրնար բռնութեամբ ցրուիլ յետ երեք անգամ ազգարարութեան :

4. Յեղապոխութիւն փետրուար 24 ի. — Որչափ որ երեսփոխանք որոշեր էին հացկերոյթը շկատարելու և զայն մասնաւոր հրատարակութեամբ ծանուցեր էին, բայց ժողովրդեան մաս մը մղուած՝ և մաս մը անգէտ, պատրաստուեր էր արդէն առջի երեկոյէ. և Փետր. 22 ին առաւօտը այլ և այլ բազմաթիւ խումբեր մանաւանդ գործաւորք, կը տեսնուէին այն նշանակեալ տեղերը և Մատրլէնի շորս կողմը, ուսկից ճամբայ պիտի ելլային : Եւ ահա 700 աշակերտացմէ կազմեալ զունդ մը կը հասնի հոն, որուն հետ կը միանայ ամբոխը և ամենը միարան ճամբայ կ'ելլան Քոնքորտի հրապարակը : Ոստիկանութեան պահանջողք խափանեցին Քոնքորտի կամրջին անցքը, բայց սպա տեսնալով որ դէնք չունին, թողուցին : Ամբոխը հասաւ Որէնսդիր պալատը և հոն Փրէմիէօ և Մարի երեսփոխանաց աղերս մը ներկայացընելով, դարձաւ դէպ ի Քոնքորտ հրապարակը : Հոն ոստիկանութեան հեծեալք ջանալով ցրուել ամբոխը՝ չատ անձինք վիրաւորուեցան և ամբոխը քաշուեցաւ Աէնդ Օնորէ

Թաղը, ուր առաջին անգամ ջանաց պատնէշ բարձրացրնել և անկէ քաշուեցաւ դէպ ի պուլվարները: Բրունադատուեցան միանգամայն անձրեալից օդէն, որով և գունդերը շուտով կրցան դէմ կենալ ընդդիմութեան, և Բարիզ նոյն իրիկուն հանդարտ վիճակի մէջ էր և վարչութիւնը գոհ իր առաջին յաղթութեան վրայ, նա մանաւանդ գունդերը զինուորանոց ղրկեր էր և բնաւ պէտք մը չէր ցուցուցած ազգային պահանջողին՝ որ ինքնակամ գումարուեր էր այս շփոթութեան միջոց և յետոյ ցրուեր էր գայրացած այսպէս արհամարհուելուն վրայ: Միայն զինուորաց ջոկաս մը կը պաշտպանէր տակաւին Արտաքին գործոց պաշտօնարանը, ուր էր Կիզօ: Խորհրդարանին մէջ Օտիլոն Պարօ ջանացեր էր յուզում մը պատճառել և ամբաստանութեան փութսիշ մը գրուեր էր ընդդէմ Պաշտօնարանին, սակայն ի գուր. Կիզօ միշտ յաղթող էր:

Փետր. 25.

Երկրորդ առաւօտ ամբոխը տեսնալով որ գունդերը բռներ են քաղքին դանազան կէտերը, յուզեցան և կռիւ սկսաւ Սէն Տընի և Սէն Մարթէն թաղերուն մէջ. վարչութիւնը փոխանակ այն ատեն բանակին ձայն աւարտ, ի դէն կոչեց ազգային պահապանները՝ որոնք ընդհանրապէս տեղոհ էին սովի սրուան արհամարհութեան վրայ և « Կեցցէ բարեկարգութիւն » կոչելով, ժողովրդեան ու գունդերուն մէջ միջնորդութեան մը ետեւ եղան: — Միանգամայն ազգային պահապանաց Կ. լէգէոնէն նուիրակութիւն մը գնաց Խօսարանը՝ խնդրելով պաշտօնարանին անկումն, և բարեկարգութեանց հաստատուելը: Ազգային պահապանք միշտ նեցուկ եղած էին Լուի Ֆիլիպի արքայութեան. և արդ իրենց բողոքը մեծ նշանակութիւն ունէր: Թագաւորը խռովեցաւ, տեսաւ որ հարկ էր տեղիք տալու, կանչեց զԿիզօ և ընդունեցաւ հրաժարականը և յանձնեց Մոլէի նոր պաշտօնարան մը կապմելու: Նոյն երեկոյեան ժամը 6ին երբ լսուեցաւ այս, Բարիզ ուրախութեան կերպարանք մ' առաւ, և զանազան կողմեր ալ լուսուորութիւնք եղան, գունդերն զինուո-

րանոց քաշուեցան և աշխատաւորք պատնէշները թողուցին :

Որչափ որ Մոլէ եռանդուն ազատականի մը համբաւ չունէր՝ այսու հանդերձ ժողովուրդը ուրախուեթեամբ կր տեսնէր թագաւորին բաժնուելը՝ ՚ի Կիզօ — Տիւլադէլ պաշտօնարանէ և նոյնը ցուցուց բազմաթիւ լուսաւորութեամբ նոյն իրիկունր : Միայն Թամփլի, Սէն Մարգէնի և Սէն Տրնի թաղերուն մէջ պատնէշներն տակաւին կանգուն էին՝ զորս կր պաշտպանէին զինեալ քանի մը քաղաքացիք : Ամբոխը իր անչափ զուարթութեան մէջ աղմկալից սկսաւ փողոցները պտրտիլ՝ պատուիրելով և գոչելով որ ամեն կողմ լուսաւորուին : Աննպատակ խառնիճաղանճին մէջ մտեր էին նաև խռովայոյզ անձինք, որոնք կր խիթային ժողովրդեան հանդարտելն :

Վարչութիւնը որչափ որ ալ զգուշութիւններ ըրեր էր, սակայն յոյժ նուազ քան ինչ որ կարևոր էր. կր տեսնուէին յանկարծ բազմաթիւ խուճիկեր, որոնք բարձրը ջահեր շարժելով փողոցներու մէջ կր յառաջէին : Այս խուճիկերէն մէկը, որ երթալով կր ստուարանար իրեն գլուխ սեննալով վիթխարի երիտասարդ մը և ազգային պահապաններէ անձինք, հասաւ ի պուլվար տէ Քափիւսէն և հոն Արտաքին գործոց պաշտօնարանին պալատը պահպանող գունդերէն արգիլուեցաւ առաջ անցնելու : Ազգային պահապանք և առաջնորդը պահանջեցին որ շնորհուի իրենց ազատ անցքը, ինչպէս ուրիշ տեղեր եղեր էր : Բայց Քուրան տեղապահ հապարապետը ցուցունելով իրեն յանձնեալ պատուէրը, անկարելի համարեցաւ : Այս խօսակցութեան միջոց ամբոխը սկսեր էր բռնի հրել զինուորաց առաջին կարգը և երիտասարդ առաջնորդը ջահով Քուրանի վրայ դիմեց սպառնալով եթէ չթողու անցնիլ : Քորսիքացի սիրասէր սպայ մը ճիւղբովն կ'ուզէր դիակնացընել այն ժողովրդական երիտասարդը՝ եթէ քովէն շխափանէին զինքը, բայց երբ ամբոխին սպառնալիքները շատցան՝ այն ատեն փութով զինուորաց հրաման արուեցաւ հրացաններն ուղղելու, և այս

շարժման միջոց զինուորաց կողմէն հրացանի հարուած մը թուաւ ¹ :

Գունդը առանց սպասելու հրամանի մը և առանց ըստ պառնալու գիմացիներուն, ամեն կողմէն կրակ պարպեց : Աննկարագրելի է այն ատեն ամբոխին ազմուկը և խառնաշփոթ փախուստը ընդ փողոցս, թողլով հարուածին տեղ 35 մետաք՝ յորոց շատը անմեղ անցորդք էին և 47 վիրաւորք, բաց անոնցմէ որք կրցեր էին տուներնին ապաւինիլ : Զինուորք իսկ եղածին վրայ այլայլած կը փախչէին աստ և անդ մտիկ չընելով իրենց գլխաւորաց հռետորական յորդորանաց : Մեծ մաս մը Արտաքին գործոց պաշտօնարանին գաւիթը ապաւինեցաւ : Սակայն սարսափին ասաջին ազդեցու թիւնը անցնելով՝ ամբոխը փութով գիմեց ազլ տից տեղը, վիրաւորելոց օգնութիւն հասցընելու համար : Երեկոյեան ժամը սասնին միջոց ճանապարհորդաց կառք մը կ'անցնի հոնկէ Հավրի երկաթուղին երթալու : Սպայ մը կը հրամայէ կառավարին իջեցընելու ճանապարհորդքը և ներս առնելու մետաքքը, և որ փութով կ'աճապարէ կատարելու և 16 մետաք կառքին մէջ կը տեղաւորուին : Յետոյ ամբոխը « վրէժխնդրութիւն » և « ՚ի Պատգի » գոչելով կը դիմէ Նասիանալ լըրագրին տպարանն ի Ախլ Լըփէլիթիլ : Հոն մետելոց կառքը կը կենայ, ապա կ'առնի Փաժէս քանի մը խօսք կ'ըսէ ամբոխին, խոստանալով վրէժխնդրութիւն և արդարութիւն : Ամբոխը իր ճամբան շարունակելով կը հասնի թաղին ոստիկանութեան պալատը ուր կը թողուն ատ ժամս գիակները, ուսկից երկրորդ օրը Մըլ մետելալայրը տարուեցան, և ամբոխը տարածուե-

1. Մեծ վէճերու նիւթ եղած է թէ արդեօք ուսկից եկած է այս հարուածը. մենք Մաքսիմ տիւ Բանի հետեւեցանք, որ իւր հատարակած Յիշատակարանաց մէջ իբր ականատես կը պատմէ՝ որ այս հարուածը կ'ուզէր հարուածել զհայտարարատար և Քուրան հրաման տուաւ հրացանները շտկել միայն : Ճիտքովնի սպայն զո՛ր չեղաւ միայն շտկելու և հարուածը նետելով մեռցուց այն հուժկու ժողովրդականը :

ցաւ յարուարձանս ի զէն գոչելով, թմբուկները զարնելով և պատնէշները կը սկսին բարձրանալ: Եթէ ՉՅին առաւօտեան յուզումը խռովութիւն մը միայն էր՝ հիմա յայտնի յեղափոխութիւն մ' էր և կը լուէր արդէն ամբոխին բերանը Լուի Տիլիփի անկումը:

5. Օտիլոն Պարօ եւ Թիէր պաշտօնարան. — Այսպիսի արիւննահեղ յեղափոխութեան լրոյն վրայ Մոլէ անմիջապէս հրաժարեցաւ, և որչափ որ Պիւժօ Ալճէրիի զիւցազնը խոստացեր էր փութով ընկճել ապստամբները, սակայն հարկ էր վարչական միջոցներու գիմել:

Լուի Տիլիփի փութով աղաչեց զԹիէր պաշտօնարան մը կազմել և Թիէր յանձն առաւ այն պայմանաւ՝ որ թագաւորը հաւանի պաշտօնարանին մէջ մտցընելու նաև զ()տիլոն Պարօ, որ ժողովրդեան մեծապէս սիրելի էր, և ժողովրդական ու Խօսարանի բարեկարգութիւններ գրուին: Լուի Տիլիփի իր յետին վայրկեանին կը թողուր այն քաղաքագիտութիւնը՝ զոր իրեն փառք համարեր էր միշտ. ընդունեցաւ զ()տիլոն Պարօ, բայց այս անգամ ալ շատ ուշ, ինչպէս ամեն յեղափոխութեանց մէջ:

24ին առաւօտը քաղաքը սխուր և ահաւոր կերպարանք առեր էր և Պիւժօ, որուն յանձներ էր թագաւորը ազգային պաշտպանաց հրամանատարութիւնը ամենայն հանդերձանք տեսեր էր, նա մանաւանդ կը խոստանար փութով նուաճելու ապստամբութիւնները զեռ բաշխման հրամանը շտրուած ազգային պաշտպանաց հրամանատարութիւնը իրեն ձեռքէն կ'առնըցուէր և կը տրուէր Լամորիսիէր զօրավարին: Մի և նոյն միջոցին կը հրատարակուէր ամեն կողմ հետեւեալ ծանուցումը.

« Բարիգեցիք, հրամայուեցաւ կրակը դադրեցընել յու, թագաւորը մեզի յանձնեց նոր պաշտօնարան մը կազմելու: Խօսարանը պիտի լուծուի. Լամորիսիէր զօրավարը ազգային պաշտպանաց հրամանատար անուանուեցաւ. Տ. Տ. Օտիլոն Պարօ, Թիէր, Լամորիսիէր, Տիւվէրժիէ տը Հորան՝ պաշտօ-

» նեայք են : Ազատութիւն , բարեկարգութիւն » :

Ստորագրողք՝ Ստիլոն Պարօ և Թիէր :

Այս ծանուցման պատասխան ապստամբք ալ հրատա-
րակեցին . « Լուի Տիլիփի գմեղ կը սպաննէ Կարոլոս
Փի պէս . երթայ հիմա անոր հետ միանալու » : Ստի-
լոն Պարօ հրամայեալ էր որ բնաւ ոյժ չգործածուի
նուաճելու ապստամբութիւնը , բաւական կը համարէր
միայն իր ներկայանալը ժողովրդեան , և Հօրաս Վէռ-
նէի հետ հեծեալ ամբոխին ներկայացաւ : Ալճէրիի
պատերազմաց անմահանուն նկարիչը իր պատկերնե-
րուն ընդունելութիւնն անգամ չգտաւ և երկուքն ալ
նախատուած դարձան : Այս միջոցիս Պիւժօյի մարա-
ջախտին գունդերը որոնց արգիլուեալ էր շարժելու և
թշնամութիւն ընելու , ժողովրդէն շրջապատեալ ընկե-
րացան անոր հետ , մնացեալ գունդերուն հրաման տրը-
ւած էր զինուորանոց քաշուիլ . շատերը իրենց վա-
նօղը և գնտակները ռամկին յանձնեցին : Երևսփո-
խանք , լրագրապետք կ'երթային կուգային 'ի Խօսա-
րան և Թիւլլըրի , ամենուն տրտունջն այն էր որ բնաւ
մէջտեղ իշխանութիւն մը չկայ :

6. Անկուսն Լուի Տիլիփի Թագաւորութեան . —
Լուի Տիլիփի Թիւլլըրիի գաւթին մէջ գումարեալ գուն-
դերը աչքէ կ'անցրնէր , որոնք զինքը ընդունեալ էին
« Կեցցէ բարեկարգութիւն » գոչելով , ասոր վրայ
թագասորը տխուր էր : Թիէր տեսնելով որ խնդիրը
կը ծանրանար հրաժարեցաւ . նախագահութենէ . Թա-
գաւորը բռնապատուեցաւ Ստիլոն Պարօյի զայն յանձ-
նել և գունդերուն հրամանատարութիւնը ժէրար
մարաջախտին տուաւ , բայց ի գուր : Ամբօխը յու-
զեալ կը դիմէր դէպ ի Թիւլլըրի և եթէ տակաւին
տիրելու կ'ուշանար , այն էր պատճառը որ զբազեր
էր ձեռք բերելու Շաղօ տ'Սյի կայարանը : Ժամը եր-
կուքին միջոցները էմիլ Փիրարտէն հասաւ արքու-
նիքը և յայտնի ծանոյց թագաւորին՝ որ թագաւորու-
թիւնը իւր ցեղին պահելու համար ուրիշ ճար չկար ,
բայց եթէ հրաժարելու և վարչակալութիւնը տալու :

Օւլէանի դքսուհւոյն փոխանակ Նըմուրի դքսին, որ ժողովրդեան շատ սիրելի չէր :

Թագաւորը ստիպուած էր բան մը որոշելու, և փութով որոշելու : Երկու արքայորդիք Նըմուրի և Մոնփանսիէի դուքսերը կ'ուզէին հաւատարիմ գունդերու գլուխ կեցած ընկճել ապստամբութիւնը : Նոյն խորհուրդը կու տար նաև թագուհին Մարի Ամելի, սակայն Նուի Տիլիփի միշտ թշնամի ըլլալով կռուի և արիւնահեղութեան՝ ընտրեց հրաժարիլ ի նպաստ Բարիզու կոմսին :

Այս միջոցիս Շագօ տ'Օ կայարանը առնուեր էր մեծ կռուով, յորում զինուորք ամենայն անձնանուիրութեամբ կռուեր էին և ժողովուրդը դիմեր էր ի Թիւլլրի : Ալ բարեկարգութեան վրայ խօսող չիկար և ամենը Հասարակութիւն կը գոչէին. և երբ Վամորիսիէր զօրավարը վերջապէս կրցաւ ծանուցանել թագաւորին հրաժարիլը, Էդիէն Արակօ պատասխանեց որ ժողովուրդը տէր էր Բարիզու և չէր ձանձնար թագաւոր և իշխան : Վնդակ մը զօրավարին ձին սպաննեց և իրեն թե՛ն ալ սուինի հարուած մ'ընդունելով ապրտամբելոց ձեռքը ինկաւ, որոնք վէրքը պատելով իր տունը տարին զինքը : Ժէրար մարաջախտը իրմտակելի բաղդ մը չունեցաւ, դեռ ապստամբելոց չկարդացուած հրաժարման թուղթը, ամբողջն մէկը ձեռքէն յափշտակեց տարաւ, և խառնիճապանձը « Կեցցէ Մարաջախտ » գոչելով զինքը դէպ ի Պալատը մղեց : Չախորդութիւն մ'էր այն ժամանակին Նուի Տիլիփի՝ որ հետու էին քովէն Ժոէնվիլի իշխանը և դուքսն տ'Օմալ, որոնք թէ ժողովրդեան համարումը և թէ կարողութիւն մ'ունէին : Նըմուրի և Մոնփանսիէի դուքսերը իրենց տարտամ և երկչոտ բնաւորութեամբ խոհեմագոյն ձամբայ կը համարէին փախչիլ Բարիզէն : Սակայն ամբողջը հասեր էր ի Թիւլլրի և տիրեր էր կառքերուն, որոնք զթագաւորը առնելու համար կ'երթային. և հարկ եղաւ որ թագաւորը հետի ելլայ պալատէն և պարտիզէն անցնելով հասնի Քոնքորտի հրապարակը, ուր հասաւ նաև Նըմուրի դուքսը և հոն

թեթե և անպատշաճ կառքերու մէջ պատասպարուելով, գրահաւորաց պաշտպանութեամբ ուղղուեցաւ դէպ ի Սէն Քլու, մինչ հեռուէն կը լսէր խաժամուծին գոչումը « Ի մահ Կիզօ, ի մահ Լուի Ֆրիփ » : Լուի Ֆրիփ անկէ անցաւ ի Կրիանոն, յետոյ ի Տրէօ, և ապա ծպտեալ ի Հավր՝ ուսկից անցաւ յԱնգղիա ՚ի Քլէրմընթ զղեակը, ուր հաւաքուեցաւ բովանդակ իր բնտանիքը :

7. Վարչակալութիւն¹. — Լուի Ֆրիփի քաղաքէն փախած ժամանակ Օուէանի դքսուհին գրեթէ միայնակ մնացած, գոցուեր էր մասողաչ տղոցմովը իր սենեկաց մէջ : Խելացի, կիրթ, ազնուական մտաք և մարմնով, չունէր սակայն այն հաստատամտութիւնը, որ այսպիսի մեծ կէտերու մէջ կարևոր է և այն յանդրգնութիւնը՝ որ այսպիսի պարագայից մէջ անուանի բրած է ուրիշ կանայք, ինչպէս Կատարինէ Ռուսիոյ և Մարիա Թերեզա Աւստրիոյ, և այն ճառախօսութիւնը՝ որ բանակներէն աւելի զօրաւոր է բնկճելու ապստամբ միաբերը և յաղթելու քաղաքային պատերազմաց : Այսու հանդերձ մօր մը պարտքէն չպակսելու համար արհամարհելով ամեն վստանգ՝ քանի մը բարեկամներով, Նյմուրի դքսին հետ խորհրդարան դնաց իր որդին Լարիգու կոմսը՝ Թագաւոր Քաղղիալոց հռչակել ստուլ և իւր անձը վարչակալ :

Նայն միջոցին ամբոխը մտեր էր ի Թիւլլրի²

1. Régence.

2. Մարսիմ տիւ Քան իր Յիւստալարանաց մէջ կը պատմէ որ՝ « Մարաջախտներուն դահլճին մէջ միայն Բիւժօ մարաջախտին պատկերը հաներ էին, ընդ ամենը չափու 200ի չափ անձինք կային այն սենեկաց մէջ : Ընդհանուր ոգին նետաքրքրութիւն էր քան ատելութիւն և բարկութիւն . . . : Գահուն սրահին մէջ ըստ բաւականի մաքուր չափուած անձ մը, կարմիր թաւիչով պատած գահաւորակին վերայ նստեր էր. իր չորս կողմը ամեն խեղկատակութիւն կ'ընէին, զինքը մինչև գետին բարեկելով. ինքն ալ ըսաւ. « Տեսաք, միշտ նոր հաճութեամբ մ'է որ կը գանուիմ Ձեր մէջը » : Ամենը բարձրաձայն ձիժաղեցան, որովհետև սաէպ այս քաղաքութիւնը

« Կեցցէ Հասարակապետութիւն » գոչելով . հոն դրո-
ները բաց զտնելով կողոպտեց և կոտորեց ինչ որ գտաւ
բաց յՕւլէանի դքսուհւոյն սենեակներէն՝ որոնց չը-
դպաւ . ուրիշ խումբեր ալ մտեր էին ի Փալէ Ռուս-
յեալ¹ :

Նստի՞նալ, Ռեֆոր՝ լրագիրներուն պալատները ժող-
վուած բազմաթիւ ժողովրդականք, առժամանակեայ
Հասարակապետական վարչութիւններ և իշխանութիւն-
ներ կ'որոչէին . սակայն ի զուր Զանազին զՕտիլոն Պա-
րօ Հասարակապետութեան կողմը շահելու , որ բացար-
ձակապէս կ'ուզէր պաշտպանել զթագաւորութիւնը և
Օուլէանի դքսուհւոյն վարչակալութիւնը : Պքսուհին՝ մինչ
իր բաղդին վրայ կը վիճուէր Խօսարանին մէջ ինքն ալ
հոն բազմեր էր որդուց հետ , թագաւորական ձախա-
կողմնան աստուոց վրայ : Վարչակալութեան պաշտպա-
նողք և զան Տիւրքէն և Օտիլոն Պարօ : Մարի՝ Առժա-
մանակեայ վարչութիւն մը կ'ուզէր , Տրժրնուտ և Վա-
Ռաշժաբլէն օրինաւորականք կ'ուզէին՝ որ ազգին հար-
ցուի իր կամբը : Օրինաւորականք ուրախացան Օու-
լէանի դքսին անկման վրայ . կը յուսային որ ազ-
գը յետս պիտի կոչէր զանդրանիկ ցեղը , որով ու-
րախ էին այս յեղափոխութեան համար : Արեւոփո-
խանաց խօսելու ժամանակ խուռն պինեալ բազմու-

Պսակին ճառին յառաջաբանի տեղ կը ժառայէր : Ի սկզբան
զգուշացան բանի մը չգրելու , բաց զգուշութիւնը քիչ
տակեց » :

1 . Փալէ Ռուսայեալի կողոպտուելուն համար վերոյ յիշեալն կ'ըսէ .
« Կը կողոպտէին և կ'սյրէին , ասկէ աւելի անբան և անշահ
գործ կրնա՞ր ըլլալ :

Հինգ մի թ կրակ վառեր էին ուր կը նետէին կան կարա-
սիք , հայելիք և յախճապակիներ , բնաւ բան մը չազատեցաւ :
Արծիթ գաւաթ մը տեսայ չին և մեծագին և ամենազեղեցիկ
մետաղներով ազուցեալ : Առի զայն և խնդրեցի որ ինայեն
անոր իր այնքան զանազան արժէից համար , փութով հրացանը
վրաս ուղղուեցաւ և ստիպուեցայ զայն կրակը նետելու » :

թիւն մը սղողեց զԽօսարանն և կ'ուզէր որ հրատարակուի Օւլէանի ցեղին անկումը: Ատենին նիստ, խափանուեցաւ և դքսուհին իր որդւոց հետ սրահէն դուրս ելաւ: Լրտրիւ Ռուլէն առաջարկեց, որ Առժամանակեայ վարչութիւն մը հաստատուի ոչ թէ Խօսարանին անդամներէն այլ ի ժողովրդենէն. Լամարթին առաջարկեց անուանելու Առժամանակեայ վարչութիւնը և Խօսարանը լուծելու:

Կոյն միջոցին ժողովուրդը կոխեց սրահը գոչելով. «Կարտուի Խօսարանը, կեցցէ Հասարակապետութիւն» և Տիւփոն ու Լրտրիւ Ռուլէն կը կարգային Առժամանակեայ վարչութեան մը անձանց անուանները:

8. Առժամանակեայ վարչութիւն. — Թագաւորական ընտանեաց բոլորովին քաշուելովը, Յեղափոխութիւնը ինքնագլուխ կը մնար, և Փալէ Պուրպոնի մէջ վերջապէս միաձայն հաւանութեամբ կազմուեցաւ Առժամանակեայ վարչութիւնը, զոր կազմող եօթն անձիւնքն էին. Տիւփոն՝ նախագահ, Լամարթին, Քրէմիէօ, Արակօ, Լրտրիւ Ռուլէն, Կարնիէ Փաժէս և Մարի, որոնք պաշտօնները մէջերնին բաժնեցին: Տիւփոն՝ նախագահ, Լամարթին՝ Արտաքին Գործոց, Քրէմիէօ՝ արդարութեան, Լրտրիւ Ռուլէն՝ Կերպին Գործոց, Արակօ՝ ծովային զօրութեան, Պըտօ զօրավարը՝ Պատերազմի, Քաոնօ՝ Հասարակաց կրթութեան, Պեթմոն՝ վաճառականութեան, Մարի՝ Հասարակաց վաստակոց, Կուտչօ՝ Գրամական տնտեսութեան, Կաոնիէ Փաժէս՝ քաղաքին շահապ եղաւ:


Սթէլ ալ Վյլի մէջ ալ գրեթէ նոյն անձիւնքը ընտրուեր էին, աւելցընելով միայն Լուի Պլան, Տըտքոն Ռեֆորմի խմբագրապետը, Մարրա՝ Կոնսուլ խըմբագրապետը և Ալպէր որ ինքզինքը Գործաւոր կ'անուանէր:

Այս շորսն ալ քիչ մը ատեն Առժամանակեայ վարչութեան մէջ մաս ունեցան քարտուղար անուամբ: Ժողովուրդը նոր վարիչները ընդուներ էր «Կեցցէ Հասարակապետութիւն» աղաղակներով: Առժամանակեայ վարչութիւնը հրատարակեց փութով, թէ որչափ

որ ալ ինքը կ'ուէր զՀասարակապետութիւն, այլ չէր կրնար սահմանել ազգին կամքը շիմացած : Լուծեց թօսարանը, ընդհատեց ատենակալաց գումարումները և Ազգային ժողովք մը հրամայեց կազմելու : Յրուեց ոստիկանութեան զինուորքը, և շնորհակալ եղաւ ազգային պաշտպանաց իրենց մասուցած ծառայութեան համար :

Պատմութեան մէջ զարմանալի դէպք . ()ր մը, նա մանաւանդ մի քանի ժամք բաւական եղեր էին տապալելու ութետասնամեայ պայծառ և յառաջադէմ թագաւորութիւն մը :

Ազատական յեղափոխութենէ ծնած իշխանութիւն մը կը խեղդուէր ուրիշ ազատական յեղափոխութենէ : Չենք կրնար զլանալ անցելոյն շար մ' : յառաջադիմութիւնք՝ մանաւանդ ի մատենագրական մասին, որոնց սկիզբը թէպէտ Վերանորոգման միջոց եղած, սակայն Լուի Տիլիփի թագաւորութիւնը անոնց փառաց յետին կէտը տեսաւ և պսակեց զանոնք :



ԵՐԿՐՈՐԴԻ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ


1. Հասարակապետութիւն — Իրաւունք աշխատութեան. —
 2. Հասարակապետութեան հրատարակուիլը. — 3. Գաղղիոյ ներ-
 քին և արտաքին վիճակը. — 4. Ապրիլ 16. — 5. Ընտրութիւնք —
 Սահմանադիր ժողովք. — 6. Մայիս 15. — 7. Զանազան ըն-
 տրութիւնք, Լուի Նաբոլէոն. — 8. Յեղափոխութիւն Յունիսի. —
 9. Քաւէնեաք դիկտատոր. — 10. Սահմանադրութիւն. — 11. Լուի
 Նաբոլէոն Նախագահ:

1. Հասարակապետութիւն, — Իրաւունք աշխա-
 տութեան: — Յեղափոխութեան երկրորդ օրը մեծ
 էր քաղքին սարսափը. հանդարտ քաղաքացիք չէին
 կրնար հաւատալ որ Լուի Ֆիլիփ Բարիզէն հեռացած
 ըլլայ, և երբ լսուեցաւ յԱնգլիա փախուստը՝ նոյն իսկ
 ընդդիմակաց երեսփոխանք իրենց ցաւոյն բացատրու-
 թիւն մը չէին գտնար. սակայն իրենք պատճառ եղեր
 էին ամենայնի, և հիմայ հարկ էր խոնարհիլ նոր
 տեարց: Օտիլոն Պարօ, Տիւվէրթիէ տը Հորան, Շարլ
 տը Աէմիւզա քաջուեցան յառանձնական կեանս ցա-
 ւով սրտի տեսնալով՝ որ մինչ իրենք բարեկարգու-
 թեան համար կը կարծէին զինուորիլ, նոր վարչու-
 թիւն մը սառջ բերեր էին հակառակ իրեց փափագին
 և համոզման: Առժամանակեայ վարչութիւնը փու-
 թով հրատարակեր էր, որ «Գաղղիոյ ներկայ վար-
 չութեան ձեռ հասարակապետական է և թէ ազգը
 փութով պիտի հարցուի՝ իւր քուէովը վաւերացընելու
 Առժամանակեայ վարչութիւնը և Բարիզու քաղաքա-
 ցւոց որոշողութիւնը»:

Այլ դեռ Հասարակապետութիւնը չի վճռուած՝ որիչ խնդիր մ'էս ծագեր էր ամբոխին մէջ։ Մոլեգին հասարակապետականք կ'ուզէին փոխանակ եռագոյն դրօշակին կարմիր դրօշակ հաստատել։ Ժողովրդեան կողմէն նուիրակութիւն մը հասեր էր առ վարչութիւնը։ Լուի Պլան մեծապէս կը նպաստէր այս կարծեաց, և Լամարթինի հմայող ճարտասանութիւնը հաղիւ փրկեց զեռագոյն դրօշ։ Լամարթին իւր ճառը լմընցուց ըսելով. « Գայով ինձի, բնաւ կարմիր դրօշակ չեմ կրնար ընդունիլ, որովհետեւ եռագոյն դրօշը բոլոր աշխարհիս շրջանը բրած է Հասարակապետութեան և Կայսրութեան հետ ձեր ազատութեամբ և փառքերով, մինչդեռ կարմիր դրօշը Արիսեան դաշտին մէջ միայն պտըտած է շաղախեալ ժողովրդեան արեամբ »։ Այս խօսքերս ծափահարութեամբ ընդունելի եղան և վարչութիւնը հրովարտակով մը պահեց եռագոյն դրօշը, աւելցրնելով միայն դրօշին ծայրը զկարմիր նիւրապար, ինչպէս նաև վարչութեան անձանց զգեստներուն վրայ կրած պատուոյ կոճակը։ Այս նոր պատահարով Լամարթինի ազդեցութիւնը աւելի մեծցաւ, և խաղաղասէր քաղաքացւոց ամենուն յոյսը իր վրայ դարձաւ։ Շատերը յանձն առին Հասարակապետութիւնը միայն այն պատճառաւ՝ որովհետեւ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցողն էր Լամարթին։

Կար նաև կուսակցութիւն մը կազմեալ աւելի յանդուգն անձանցմէ քան զԼուի Պլան, և որոնց ազդեցութիւնը մեծ էր ուսմկին վրայ. գասիկայ կազմողք էին Գոսիտիէր, Պլանքի, Պարպէս։

Եթէ ասոնց մէջ ուզենանք տարբերութիւն մի դնել՝ զՊլանքի ամենէն աւելի փնասարեր պէտք ենք դատել ընկերութեան, Պլանքի՝ որ երբէք վարչութեան մը գաղափար չէր կրնար ունենալ, կ'ուզէր նորոգել Առաջին Հասարակապետութեան արիւնհանգ օրերը դիկտատորութեամբ ժողովրդեան։ Բարերազգաբար այս երեք ուսմկավարք մէջերնին միաբան չէին, իւրաքանչիւրը ուզելով ինքը միայն իշխել։ Պլանքի տեսնալով որ կարմիր դրօշակի խնդրոյն



ժողովեց համախոհներէն հինգ հարիւր հոգի և պատրաստուեցաւ Առժամանակեայ վարչութիւնը ձգելով ինքը իշխել յ(Թէլ)տը Վիլ: Բայց ապա տեսնալով որ Գոսիտիէր ամփոփեր էր իւր մօտ, պատրուակաւ քաղքին բարեկարգութիւնը պահելու, ուրիշ մոլեռանդըն ռամկապետականներ՝ որոնք Լեւոն-Կոնստանտինով կը կոչուէին, և անոնցմով կրնար կոուիլ իրեն ղէմ, ցրուեց ժողուած անձինքը:

Քաղաքացիք տեսնելով յուզմունքը և վտանգը՝ աւելի յարեցան ի Լամարթին և յԱռժամանակեայ վարչութիւնը: Եւ փութով բազմաթիւ ժողովակներ ձևացեր էին՝ որոնք քաղքին մեծամեծ սրահից մէջ կը հաւաքուէին: Պլանքի՝ Քոնստանտինովի սրահը ամեն երեկոյ նախագահ կը բազմէր ժողովակի մը: Ընդհանուր Գաղղիա գոգցես երեքի բաժնուեցաւ, հասարակապետականք¹, ընկերավարք², հասարակավարիչք³: Ժողովքներէն մին կը կոչուէր Կեդրոն-Կոնստանտինով, ուրիշ մը Ժողովակ յեղ-Կոնստանտինով. և իւրաքանչիւր ժողովակ ունեցաւ իւր ջերմեռանդն լրագիրները՝ նախկին հին հասարակապետութեան ժամանակի պէս, և իւր ճարտասանները՝ զամբօխը գրգռելու համար, յորս աւելի համբաւ կը ստանային ընկերավար ժողովակներու մէջ Քարէ, Պարպէս և Պլանքի: Պարպէս յանդուգն կերպով ազնուականաց և հարուստներու ղէմ խօսած ժամանակ, ինքը ձօխ հարուստ մ'էր: Ուրիշ ժողովակներու մէջ Քոնստանտինով և Քանթակրել՝ Քարէի վարդապետութիւնքը աւելի կ'ընդարձակէին. և առանձին ժողովակի մ'ալ գլուխ էր Ռոսփայլ անուանի բժիշկը, որ որչափ ալ նկերավար էր սկզբամբ, այսու հանդերձ յանդուգնութիւն չունէր զանոնք ի զործ դնել տալու համար: Այսին ուրիշ բազմաթիւ ժողովակք, և ասոնք մէջերնին միաբանութեան մը համար հաստատեցին ժողովակոց ժողո-

1. Républicains.
2. Socialistes.
3. Communistes.

էնչ, ուր ամեն ժողովակ իր նուիրական ունէր: Բաւական չէր Բարիզ. ասոնք իրենց յանդուգն ճարտարախօսութեամբք սփռուեցան գաւառներուն մէջ զանոնք ալ բորբոքելու համար, բայց իրենց չափազանց խօսքերով աւելի սարսուցին զժողովուրդը քան շահեցան: Ժողովակներուն թուոյն համեմատ էին և ճարտարախօսք. ուրիշները գրով կը հրատարակէին իրենց վարդապետութիւնքը, յորս յիշենք մանաւանդ զՎամբնէ և զանուանի վիպագիրն Տէօրժ Սանտ, և ամենայն վարդապետութեանց հակառակամարտը Փրուտոն, առանց սեպհական վարդապետութիւն մը ունենալու: Արդէն ռամկավարական մասը Ղիւսսամպուրի մէջ զօրացեր էր և կ'ուզէր յափշտակել վարչութիւնը: Կառավարութիւնը վտանգներու դէմն առնելու համար փութով սկսաւ բարեկարգել բանակը. սղգային պահապանաց քսան և շորս շարժուն գունդեր հաստատուեցան, հրովարտակով հրատարակուեցաւ որ թագաւորութիւնը ջնջուեր էր, որ սղգային գործարաններ պիտի բացուին աշխատաւորաց համար:

Թէ և Կարոլոս Ժի պաշտօնեայքը 1830ին բռնուեր, դատուեր և դատապարտուեր էին, բայց Առժամանակեայ վարչութեան հոգը չեղաւ Լուի Ֆրիլիի պաշտօնեայքը բռնելու: Սակայն անմիջական կարևորն էր գործաւորաց աշխատութիւն գտնալն, որ Բեղափոխութեան պատճառաւ նուազեր էր անեցընելով զթշուառութիւնը: Քաղցեալ և պարապորդ գործաւորք Օթէլ ալ Վիլ կը դիմէին պահանջելու՝ որ հրատարակուի աշխատութեան իրաւունք ունենալնին, կ'ուզէին և սպաւ հովութիւն փոքրիկ վճարման մը իրենց հիւանդութեան ժամանակ Լուի Պլան կ'ուզէր որ անմիջապէս ճարը տեսնուի, բայց այլ էր որոշողութիւնը և այլ էր դրամ գտնալը, ինչպէս կ'ըսէր Վամբրին: Այսու հանդերձ՝ խռովութեան մը դիմացն առնելու համար վարչութիւնը հրովարտակ մը հանեց, որով կը բռնադատուէր ապահովյրնելու գործաւորաց կեանքը աշխատութեամբ, և անոնց իրաւունք կու տար մէջերնին միաբանակցութեան, և անոր արդիւնքը վայելու:

Գիւրաւ դարման տանելու համար պաշտօնատարութիւն մ' ալ հաստատուեցաւ յառաջագիտութեան, որուն գործը պիտի ըլլար աշխատութեան վերաբերեալ հրովարտակը ի գործ դնելու. և այս նոր պաշտօնը յանձնուեցաւ Լուի Պլանի' որ ռամկին ամենասիրեցեալ անձն էր: Սակայն ոչ այս պաշտօնը և ոչ այս յանձնաժողովներն իսկ չկրցան հասնիլ այնչափ թշուառաց պէտքին, և ոչ դարձեալ այն գործարանները՝ որոնք այս նպատակաւ հաստատուեցան. նա մանաւանդ ասոնք մասամբ մը կեդրոն եղան շփոթութեանց:

Ի սկզբան եօթր, ութր հազար աշխատաւորք ներկայացան, զորս զինուորաց պէս կարգ կարգ կազմեցին իրենց գլխաւորներ տալով, և աշխատէին կամ շաշխատէին օրականներն կ' ընդունէին:

Այս շահը ուրիշներն ալ ձգեց. դատարկութիւն յառաջ եկաւ, իւրաքանչիւր դատակցութեան մը գրչխաւորը ջանաց գասոնք զրգուել և վերջապէս Յունիսի արիւնահեղ Յեղափոխութիւնը ծնաւ:

2. Հասարակապետութեան հաստատուիլը. — Սակայն այս ալ պէտք է յիշել՝ որ այսպէս յանկարծական յեղափոխութեամբ Հասարակապետութիւն հաստատուիլն՝ ընդհանուր ընդունելութիւն գտաւ ամեն կուսակցութենէ, իւրաքանչիւրը համարելով զայն իր սեպհական նպատակին ծառայեցընել: Ար և իցէ պաշտօնեայ հաւան էր իրեն պաշտաման մէջ մնալու: Պիւժօ մարաջախաբ փութով զինքը պատրաստ ցուցուց ծառայութեան, նոյնը ըրաւ նաև Եանկառնիէ զօրավարը, և Մոնիդէօր լի էր այսպիսի հաւանութեամբք: Բարիզու արքեպիսկոպոսը Գեր. Աֆրը, պաշտօն հանգըստեան պատուիրեց 24ին անկելոց, և ողորմութիւն ժողուել տուաւ անոնց ընտանեաց համար: Իւնիվէր եռանդուն թագաւորական լրագիրն՝ Իւնիվէրն անգամ համոզուեցաւ որ Քաղղիա ամբողջ հիմա հասարակապետական էր: Դուքան տ' Օմալ՝ որ Յեղափոխութեան միջոց յԱլճէրի էր, իր եղբօրը Ժօէնվիլի իշխանին հետ բնաւ չուզեց ընդդիմութիւն մը փորձել հակառակ նոր իշխանութեան, և լսելով որ՝ Քապէ-

նեաք զօրավարը անուանուեր է վարիչ Ազճէրիի, աս մենայն ինչ յանձնելով անոր՝ յԱնգղիա քաշուեցաւ ընտանեաց քով:

Հասարակապետութիւնը ուրիշ նշանուոր անձ մը ևս ունեցաւ հպատակ զԼուի Նափուլէոն՝ Ստրազպուրկի և Պուլոնէի մէջ երբեմն դաւ փորձել ուղողն: Լուի Նափուլէոն թղթով մը կ'ընծայէր Հասարակապետութեան իր ծառայութիւնը: Արուն համար վարչութիւնը շնորհակալ եղաւ ինդրելով միանգամայն որ Գաղղիայէն հեռանայ, և ինքն ալ գնաց Անգղիա քաշուեցաւ:

Առժամանակեայ վարչութիւնը այս հաւանութիւնքը տեսնելով, արգէն իբրև ընկալեալ յԱզգէն՝ որոշեց մեծ չքով հրատարակել Հասարակապետութիւնը: Եւ փետրուար 27ին սղգային պահապան գունդեր Պասպիլէն մինչև ի Մասլէն շարուած էին, և վարչութիւնը դումարուելով սա սա սեան՝ որ ի յիշատակ Յուլիսի յեղափոխութեան կանգնեալ էր Պասպիլի հրապարակին մէջ, հռչակեց հասարակաց ցնծութեան ձայներուն միջէն Հասարակապետութիւնը: Յետոյ Մարտ 4ին չքեղ յուղարկաւորութիւն մը կատարեց անկելոց համար, և անոնց մարմինքը թաղուեցան 1830ին Յուլիսի յեղափոխութեան անկելոց քով:

3. Գաղղիոյ արտաքին եւ ներքին վիճակը. — Այս ամենայն յուզմանց և Հասարակապետութեան հրատարակուելուն միջոց՝ բոլոր Եւրոպիոյ պետութիւնք և ժողովուրդք անհամբերութեամբ կը սպասէին Գաղղիոյ Արտաքին բռնելու քաղաքագիտական ընթացքին. ոմանք կը յուսային և ոմանք կը վախէին: Միապետական վարչութիւնք կը խիթային՝ որ չըլլայ թէ իր զինուց զօրութեամբ ուզէ մերձաւոր ազգաց ալ իր ընդունած սկզբունքները քարոզել: Վերջապէս Մարտ 5ին Մոնիդէօր պաշտօնական լրագրին մէջ՝ Արտաքին գործոց պաշտօնեայն Լամարթին, որ բանաստեղծութենէ յանկարծ քաղաքագէտ մը դարձեր էր, կը հրատարակէր այն հռչակաւոր Յայտարարութիւնը՝ որ միաձայն հաւանութեամբ ընդունելի եղեր էր Առժամա-

նակեայ վարչութենէն, և որ նոյն ժամանակին և թէ յետոյ այնքան գովութեանց և պարսաւանաց նիւթ եղած է: Քաղղիա այս յայտարարութեամբ կ'իմացրնէր, որ իր էութեանը համար պէտք չունէր օտարներէն ճանչցուելու, և թէ ինքը կեայ և է զօրութեամբ բնական և ազգային իրաւանց: Ի Քաղղիա Հասարակապետութեան հաստատուելը բնաւ ընդդիմութիւն մը չէր աշխարհիս որ և իցէ ձեռով վարչութեան մը, և իր նպատակը պատերազմ չէր՝ ինչպէս Նախկին Հասարակապետութեան, յամին 1792: Քաղղիացի ժողովուրդը խաղաղութեան պէտք ունէր, ինչպէս կը փափաքէին նաև վարչութեան գլուխ եղող անձինք՝ անոր աւելի հաստատուելուն և տեսողութեան համար: Ուրով Հասարակապետութիւնը բնաւ մէկու մը դէմ պատերազմի փորձ չէր ուզեր ընել, բայց պաշտպանութիւն կը խոստանար անոնց, որոնց անկախութեան յանկարծ վտանգ մ' ըլլար:

Այս վերջին իմաստով կը հասկնար զԶուիցցերի և Իտալիոյ վիճակները: Եւ վարչութիւնը խոհեմութեան համար պատուիրեց որ 30,000 հոգևով բանակ մը պատրաստ ըլլայ Ալպեանց ստորոտը: Կազմուեցաւ դարձեալ Հասարակապետութեան համար յանձնաժողով մը՝ որուն նախագահ զրուեցաւ Արալօ: Այս ամեն պատրաստութեանց համար դրամ կարևոր էր, և գանձը այնքան խեղճութեան մէջ էր, որ Կուտչօ պաշտօնեայն շուգեց իշխանութեան մէջ մնալ և իրեն յաջորդեց Կասնիէ Փատէս, որուն տեղ քաղաքին շահապեղաւ Մարա:

Համարթինի յայտարարութիւնը մեծ բնգունելութիւն գտաւ քաղաքագէտներէ, և պատերազմի կասկած ունեցող պետութիւնք հանգստացան. օտար սրբունիքներէ զրկուած դեսպանք և նուիրակք մեծամասամբ ծանրաբարոյ հասարակապետականք և կամ հին թագաւորականք ըլլալով փոխեալք ի հասարակապետականս, ամեն կողմ խաղաղութեան ձայնը տարածեցին, մինչ Քաղղիա դեռ ինքն իր մէջ գայն չէր գտած:

Սակայն դրամական պէտքը օր օրուան վրայ կ'առաւելուր և գանձը պարապ էր: Աշխատաւորք՝ որոնք անգործ մնալով դրամի պէտք ունէին, կը դիմէին Խնայութեան արկղէն իրենց սոււածը պահանջելու, քայց դրամ չկար տալու: Հարկ էր որ վարչութիւնը սնանկութիւն հրատարակէր, ինչպէս Խորհուրդ կուտային ոմանք: Այլք՝ իշխանութեան ներկայացուցին բոլոր սեղանաւորաց անուանքը՝ Խորհուրդ տալով որ բռնի տուրք մը դնէ վրանին, սակայն վարչութիւնը երկու Խորհուրդն ալ իրեն համար անվայել համարեցաւ: Սահմանեց Խնայութեան արկեղ մէջ եղած դրամագլխին միայն շահը վճարել և կանխիկ վճարեց առաջին 6 ամսուանը, միանգամայն չըջանի մէջ դրաւ 200,000 ֆրանքի դրամաթուղթ: Բարիգու և մեծ քաղաքացի մէջ Ազգային Հաշուետուն Վերածմանց՝ դրաւ, և ուրիշ նոյն տեսակ վարկերով ընկերութիւններ: Մեծամեծ շտեմարաններ հաստատուեցան, յորս արուեստաւորք կրնային աւանդ տալ իրենց ձեռագործը՝ թուղթ մը բնդունելով, որուն համար Հաշուետունը կանխիկ փոքր վճարում մը կ'ընէր, և այսպէս քիչ ժամանակուան մէջ վաճառականութեան երկմիլիոն վարկ աւելցաւ: Կառնիէ Փամէս միանգամայն կալուածոց վրայ ալ քառասուն և հինգ հարիւրեակ աւելցուց սուրբերը, որով մեծ տեղութիւններ ծագեցան իրեն դէմ. և թէպէտ Լրարիւ Սալէն և Լուի Պլան շատ ջանացին վերցրնել տալու այս սուրբը՝ նրկատմամբ փոքրիկ կալուածատեարց, այսու հանդերձ վարչութիւնը յանձն չառաւ: Վրէմիէօ՝ Արդարութեան պաշտօնեայն, նուազցուց դատաստանական ծախքերը, վերցուց Սեպահմբերի օրէնքները ընդդէմ սոպագրութեան, քաղաքական երդմունքը, անձնական պարտուց համար բանտարկելութիւնը: Վարչութիւնը լռեց և սա ժամն չցրուեց Կոնֆիէրէ Եւանկիւնը, որովք Քոսի-

1. Comptoir national d' escompte.

2. Երբ Առժամանակեայ վարչութիւնը ձգեց իր իշխանութիւնը, այս սուրբն 80 միլիոն պաղարեբեր էր:

տիէր, թէպէտ առանց հրամանի մը, այլ մեծ մասադրութեամբ կը հսկէր քաղքին ապահովութեան և պաշարուց վերայ և ըստ իրեն բացատրութեանը « Անկարգութեամբ մը կարգաւորութիւնը կը պահէր » :

Այսու հանդերձ մեծ էր քաղքին յուզումը, և ամեն օր մեծամեծ խումբեր ի ժողովրդականաց նուիրակութեամբ կ'երթային յ()թէլ տը Վիլ նոր գանգասմը կամ պահանջ մը տանելու. այսօր՝ վաճառականք, երկրորդ օրը՝ գործաւորք, ուրիշ օր մը՝ այլք: Նոր չորս վարսակ մը կը վերցրնէր ազգային պահապանաց մէջ ըստիչ գոնդ կոչուած խտրութիւնը, բանակը կը կոչուէր ի Բարիզ և շարժան պահապանը կը շաստատուէին: Հին ընտիր գունդերէն մաս մը սահմանցան ասոր վերայ, և բազմութեամբ ()թէլ տը Վիլ գացին բողոքելու իրենց իրաւանցը համար: Սակայն Արակօ, Մարա խասիւ կշտամբեցին իրենց ըրածը իբրև անխոհեմութիւն մը և բնաւ յանձն չառին հրովարտակր փոխելու: Այս է Մարա-Կարա Գլխաւոր բողոք ըսուածը:

Ուրիշ նմանօրինակ ցոյց մ'ալ երկրորդ օրը հանդիպեցաւ. 100,000 հոգի, որոնց մէջ կային Վիլսամպուրի պալատան յանձնատղոլոյն ալ նուիրակները, աշխատաւորք, ազգային գործաւորք, իրենց գլուխ ունենալով Պարպէս, Քարէ, Պլանքի և այլք, ()թէլ տը Վիլ ուղղուեցան: Հոն պահանջեցին նուիրակները՝ որ ազգային պահապանաց բնտրութիւնք դեռ ուշացուին և գունդերը Բարիզէն հեռանան: Ամբոխէն մաս մը՝ Ներքին գործոց պաշտօնարանը գնաց, ուր Վրտրիւ Սոլէն գորաւոր կերպով ջանաց համոզել որ անիրաւէր պահանջածնին և պէտք է ցրուին, և թէ իրենք միայն զԲարիզ կը ներկայացրնեն և ոչ զբովանդակ Քաղղիա. և մինչ նուիրակները անմիջական որոշողութիւն մը կը պահանջէին իրենց խնդիրներուն համար, Վուր Պլաննախ գովելով զժողովուրդը, որոշողութեան մը համար, ըսաւ, ժամանակ պէտք էր: Վամարթին իր ճարտարխօսութիւնը գործածեց համոզելու համար և հանդարտեցրնելու զժողովուրդը, որ վերջապէս կեցցէնե-

բով ցրուեցաւ : Այս երկու օրինակները կը յայտնէին քաղաքին և քաղաքացւոց շփոթութիւնը և յուզումը :

4. Ապրիլ 16 : — Եւ զարմանք չէր ժողովրդեան այսօրան շփոթը, վասնզի վարչութեան իսկ գլուխ կեցողք մէջերնին սարաձայն էին, յորոց ոմանք հակառակընդդէմ դիտաւորութեամբք ժողովակներու միջոցով դիկտատորութիւն մը կը խորհէին : Լիւստամպուրի սամկավարական ժողովոց գլխաւորք Լրտրիւ Ռոլէն, Ալպէր, Լուի Պլան, սահմանեցին Ապրիլ 15ին, յորում ժողովուրդը Արիսեան դաշտը պիտի գումարուէր ազգային պահապանաց ընտրութեան համար, հոն իրենց համախոհքը յուզել թօթաիելու վարչութենէն իրենց ոչ համամի տանձինքն, տիրելու Սթէլ տը Վիլի, փակել ի վէնսէն դղեակը զԼամարթին, Արակօ, Տիւփոն տը Լէօս և ուրիշները : Հասարակաց փրկութեան Յանձնաժողով մը կազմել, որուն անդամք ըլլան Լրտրիւ Ռոլէն, Լուի Պլան, Ֆլորոն, Ալպէր, Ռասախյը, Պլանքի, Քէրսոզի և Քարէ : Այս բանիս պէտք եղած անձինքը շահեր էին, և Լրտրիւ Ռոլէն իբրև պաշտօնեայ Կերքին գործոց սպահովցուցեր էր, որ Արտաքին պահապանաց գումարուելուն վախ չկար, և թէ ինքը բնաւ պիտի չթողուր թմբուկ վարներու : Առժամանակեայ վարչութեան անձինք կասկածեցան այս բանիս վերայ, որով և պաշտպանութեան պատրաստուեցան : Յայտնապէս մեծ յեղափոխութիւն մը կը գուշակուէր, ինչպէս զայն կ'իմացընէր նաև Հասարակաց Գործիչան Ժանսոցոմը, որուն գրիշն էր լիօրժ Սանա : Գիպուածով Բարիզ հասեր էր Շանկառնիէ զօրավարը, որ խրախուսեց զԼամարթին և բռնապատեց երթալու առ Լրտրիւ Ռոլէն և դանիկայ ստիպել կամ յայտնապէս միանալու Լիւստամպուրի հետ, և կամ Սթէլ տը Վիլի օրինաւոր իշխանութեան կողմը անցնիլ : Լրտրիւ Ռոլէն ընդ երկար դեղևեցաւ . բայց սպա յաղթուելով Լամարթինի հայրենասիրութենէն և ճարտասանութենէն, ստորագրեց ազգային պահապանքը ի զէն կոչելու հրամանը : Շանկառնիէ փութով ինքնին տոնելով զայն ի Լամարթինէ ի գործ դրաւ, ինքնին

ուղղեց զինուորական զանազան շարժմունքները վարչութեան ապահովութեան համար, և այն օրը փրկեց զԲարիզ: Սակայն Լըտրիւ Ռոլէնի քաշուելով միւս ծայրայեղք չէին քաշուած: Պլանքի, որ ինքզինքը կ'ուղէր սրգարացրնել ամբաստանութենէ մը և ժողովըրդեան սէրը գրուել, ուղեց փորձ փորձել ժողովըրդական հարուածով մը: Ապրիլ 16ին առաւօտը անհամար բազմութիւն մը գումարուեր էր Արիսեան դաշտը և Չիարձակարանը՝ յետ ընտրութեանց. այս բազմութիւնը ուղղուեցաւ դէպ ի Յթէլ տը Վիլ: Սակայն արդէն Լամարթին և Լըտրիւ Ռոլէն ռաք հաներ էին շարժուն պահապանքը և ազգային պահապանաց լէգէոնքը, ընդ ամենը 50,000էն աւելի:

Գործաւորք Արիսեան դաշտէն ելլալով, հանդարտութեամբ և կարգով առանց արգելքի հասան մինչև ի Լուվրը: Անկէ անդին իւրանքանչիւր փողոցի գլուխ ազգային պահապանաց ջոկատներու հանդիպելով, շուարեցան: Արէլ հրապարակը հասած ժամուն այնքան էր ազգային պահապանաց բազմութիւնը, որ ստիպուեցան դադար առնելու, և նուիրակութիւն մը զրկեցին առ վարչութիւնը թսելով որ՝ մինչ իրենք կուգային իրենց հնազանդութիւնը վարչութեան ցուցրնելու, վարչութեան կողմանէ այսպիսի ընդունելութիւն մը կը գտնէին: Շահապին պալատուն անձինք խիստ պատասխան մը տուին, վրայ հասնելով Լուի Պլան, պատուիրեց որ ժողովըրդեան ճամբայ բացուի անցնելու, որոնք դիւրութեամբ կարգաւ անցան, ազգային պահապանաց « Կորսուին հասարակավարիչք » ձայներուն մէջէն: Երկրորդ օրը Լիւսամպուերի Նուիրակք բողոք մը ըրին առ վարչութիւնը, առջի օրը ընդունած մահացուցման համար, և վարչութիւնը վստահութեան խօսքերով զանոնք ջանաց հանդարտեցրնել: Բետոյ ազգային պահապանաց գորահան դէսը եղաւ, որոնք կարգաւ անցան գոչելով « Կեցցէ Լամարթին, կորսուին հասարակավարիչք »: Ասով Ապրիլի շփոթութիւնն աւելի նպաստ եղաւ վարչութեան՝ քան հակառակորդաց:

5. Ընտրութիւնք. — Սահմանադիր ժողովք: — Մնայր տեսնել, որ արդեօք վարչութիւնն պիտի կրնա՞ր յաղթել ընտրութեանց մէջ ալ՝ որոնք պիտի կատարուէին Ապրիլ 23ին: Այս առաջին անգամ կը կոչուէր ամբողջ ազգը ընդհանուր քուէով մը ընտրել իւր ներկայացուցիչքը, և վարչութիւնը իրաւունք ունէր մեծապէս հոգալու այս բանիս համար: Քիչ օր առաջ ոգիները ի նպաստ իրեն և ևս աւելի արժարժելու համար՝ Ապրիլ 20ին Ելքայրո՛ւն տօն մը խմբուեցաւ, յորում ազգային պահապանաց և բանակին դրօշներ բաժնուեցան, և այս եղբայրութեամբ կը յուսային բանակը և քաղաքացիքը հաշտեցընել: Հոն հանդիսացան 200,000 ազգային պահապանք և 100,000 զինուորք, և ամեն լէզէն հասնելով այն պատշգամբին առջև, որ Աստեղ կամարին դիմացը շինուեր էր և ուր կը բազմէր վարչութիւնը, կ'ելլէր վեր ընդունելու դրօշակը, մինչ բերաւոր ձայներ կ'աղաղակէին. « Կեցցէ՛ Հասարակապետութիւն, կեցցէ՛ Աւժամանակեայ վարչութիւն »:

Ընտրութիւնք սահմանեալ օրը եղան և հասարակապետականք՝ կը յաղթէին. հասարակավարչաց և ոչ մէկը ընտրուեր էր ի Բարից, և ի զուր Ռուանի մէջ ուզեցին յեղափոխութիւն մը փորձել: Լամարթին տասր տեղ ընտրուեր էր, ժողովրդենէն ընդունած սէրը ալ իւր յետին կէտը հասեր էր: Ընտրուած երեսփոխանք 900 էին թուով, որոնք առաջին անգամ գումարուեցան Մայիս, 4. Մայիսի 4ին Պուրպոն պալատին մէջ և բացուեցաւ Սահ-

4. « Այն օրը ծառայութեան մէջ էի լա Գոնգորտի կամըրլին վերայ (իբր ազգային պահապան), և տեսայ Աւժամանակեայ վարչութեան անցնիլը, իրեն զլուխ ունենալով Տիւփոն աը Լէօն տկարացած տարիքէն, ծռած, ձեռքը հովանեակ մը, ապա Գոսիտիեր՝ սրանկիւն դիտարկով և Ռուպէսփիւրեան բաճկոնով, լայն թիկունք. և կարծես ծափահարութիւն կը մուրար, զոր բնաւ չէր ընդուներ: Լամարթին թագաւորի մը պէս ողջունելով յաջ և յահեակ: Քրեմիէօ կը շարժարթի ժպտաւ մը: Կառնիէ միշտ ասարութիւններով իր գլուխը կեղծ վզնոցին մէջ »: Մ—տիմ Գիւ—Քան:

մանադիր ժողովր, որուն նախագահն նստաւ ամօք երէցը Սորի աը Փիւրափօ, երբեմն վերանորոգման դառն թշնամիներէն մէկը: 'Նոյն միջոցին Առժամանակեայ վարչութիւնը՝ որ ժողովուեր էր Արդարութեան պալատը, խմբովին պալատ մտաւ իրեն գլուխ ունենալով զՏիփօն աը Լէօն՝ ամենքը ոսք ելած ողջունեցին պալատիկայ. «Կեցցէ Հասարակապետութիւն» գոչելով. և Տիփօն աը Լէօն ճառախօսութեամբ մը յանձնեց իշխանութիւնը Ատենին և վերջացուց իւր խօսքը «Կեցցէ Հասարակապետութիւն» գոչելով, զոր կրկնեցին բոլոր հանդիսականք: 'Նոյն ատենը Քուրդէ՝ սոցալիստ պահապանաց հրամանատարը ներկայացաւ լսելով որ ժողովուերդը կ'ուզէ տեսնել զժողովր: Փութով ամեն երեսփոխանք սանդխոց վերայ դիմեցին, և նախագահը վերէն կրկնեց ժողովրդեան. «Հասարակապետութիւնը», զոր կեցցէներով կրկնեց քաղաքացուց անհամար բազմութիւն մը և անոնց ձայնը թրմբուկներուն և թնդանօթից ահաւոր որոտման հետ խառնուեցաւ: Կա՞ր արդեօք գուշակող մը այն ահաւոր սեւարանաց, որ քիչ մը վերջը պիտի տեսնուէին:

Մայիս 4ին ժողովքը իրեն նախագահ ընտրեց ըզԲիշէ և վեց ալ փոխան նախագահի, որոնք էին Սրբիւր, Քապէնեաք զօրավարը, Գորպան, Կինար, Քորմընէն և Սէնար. այս ընտրութեանց մէջ յաղթեց հասարակապետական մասը: Յետոյ Առժամանակեայ վարչութեան անդամք իւրաքանչիւրը իրեն հաշիւը տուաւ, որոնք մեծ գովութեամբ ընդունելի եղան, թէպէտ և հանրածանօթք էին Կառնիկ Փաթէսի շուայլութիւնը և իւր վերայ եղած ամբաստանութիւնք: Ամենէն վերջը Լամարթին՝ Կաղղիոյ թէ 'Ներքին և թէ Արտաքին միճակը ճշգրիտ նկարագրեց իւր պերճախօս սճովը, անթիւ ծափահարութեամբք ընդհատեալք: Ատեննը որոշեց՝ որ իւր ճառը սպուռի և գրկուի Կաղղիոյ ամեն հասարակութեանց և արտաքին պետութեանց: Յետոյ Մայիս 8ին վճռեց ատեննը միաձայն հաւանութեամբ (բացի Պարպէսէ) որ՝ «Առժամանակեայ վարչութիւնը արդիւնաւոր եղաւ. Հայրե-

նեաց » : Ապա Տոռնէս երեսփոխանին առաջարկու-
թեամբ սահմանուեցաւ, որ գործադիր յանձնաժողով
մը կազմուի հինգ հոգիէ՝ որ անուանեն, իրմէ դուրս,
զպաշտօնեայս, որոնք պատասխանատու պիտի ըլլային
և փոփոխելիք և իրենց գործոց հաշիւ պիտի տային ա-
տենին : Մայիս 10ին քուէարկութեամբ ընտրուեցան
Աբակօ, Կառնիէ Փատէս, Մարի, Լամարթին, Լըտրիւ
Ռայէն ¹ :

Դործադիր յանձնաժողովը փութով անուանեց պաշ-
տօնեալքը, Ռեբիւր՝ Ներքին գործոց, Իրէլլա՝ Հասա-
րակաց վաստակոց, Ֆլորոն՝ Վաճառականութեան,
Պէթմոն՝ Կրօնից, Տիֆլէր՝ Դրամական տնտեսութեան,
Պաստիա՝ Արտաքին գործոց, ծովակալն Քազի՝ Կո-
վային գորութեան, Շարրաք՝ Պատերազմի — Ժաֆ,
Քրէմիէօ կր մնար Արդարութեան, ինչպէս նաև Քառ-
նօ՝ Հասարակաց կրթութեան : Էւ միանգամայն Ժիւլ
Ֆալրը՝ տանադպիր Արտաքին գործոց, Քարդրէ՝
Ներքին գործոց : Իսկ Քասիաիէր մնաց դարձեալ
Ոստիկանութեան զլուի :

Էւ ի Պլան տեսնելով որ փարչութեան Յանձնա-
ժողովէն և պաշտօնէութենէ դուրս կը մնար, իբր միակ
բարեկամ ժողովրդեան առաջարկեց որ նորէն պա-
հուի Յառաջադիմութեան պաշտօնէին, սակայն ժո-
ղովքը չընդունեցաւ առաջարկը, որով թէ՛ ինքը և թէ՛
Ալպէր հրաժարեցան գործաւորաց համար դրուած
Յանձնաժողովոյն մասնակցութենէ, և ժողովքը ան-
միջտակօ իրեն մէջէն նոր Յանձնաժողով մը անուա-
նեց թշուառ վաստակաւորաց համար :

6. Մայիս 15ին Յուլիուսը : — Այսպէս ծայրայեղ
հասարակապետականք տեգոհելով թէ՛ ատենին և թէ՛
պաշտամանց ընտրութեանց վերայ, նոյն օրուրն
սկսան առիթ մը փնտուել ցրուելու զայն . և ի Քաղղիա

1. 794 քուէարկուաց մէջ Աբակօ 725 քուէ ունեցաւ, Կառնիէ Փա-
տէս 705, Մարի 802, Լամարթին 643, Լըտրիւ Ռայէն 438 :
Յառաջացեալ Հասարակապետականք կ'ուզէին Լամարթինէն
վրէժ առնուլ Ապրիլ 16ին համար :

առիթը երբէք պակաս չէ: Նախ Պլանքի քաղաքին որմոց վերայ հրատարակութիւն մը կ'պցընել տուաւ՝ թէ պատնիշաց վրայ ժողովրդեան եղած խոսամունք չէին կատարուած, և կը յորդորէր զամբոխը ոտք ելլալու, բայց ժողովուրդը չի շարժեցաւ և Պլանքի կրկին յաղթուեցաւ: Քան զինքը աւելի խորագէտ գտնուեցաւ Ռասսիայ: Վաղղիոյ ժողովրդեան սէրը և համակրութիւնը Լեհաց միշտ ծանօթ է. արդ Լեհք՝ Փետրուարի յեղատիոխութեամբ նորէն օգնութեան յոյս մը ունեցեր էին ի Վաղղիոյ, և որչափ որ ալ Լամարթին անոնց նուիրակութեան մը ժխտեր էր այս օգնութիւնը, սակայն ընդհանուր ժողովուրդը մեծապէս զայրացեր էր Լամարթինի և վարչութեան դէմ, և դրամով օգներ էր պանդխտելոց իրենց հայրենիք դառնալու: Եւ Լեհաց յետին ապստամբութեան լուրը և Քրաքովիոյ արիւնհանգեղ նուաճումը աւելի գրգռեցին զՔարիզ, և ժողովակներու մէջ որոշուեցաւ վարչութեան աղերս մը ներկայացընելու ի նպաստ Լեհաստանի, և սղերսարկուք Մայիսի 15ին առաւօտ Պասդիյի հրապարակէն ճամբայ ելան դէպ ի ժողովքը՝ իրենց գլուխ ունենալով զՀիւպէր՝ որն որ Լուի Տիլիփի թագաւորութեան ժամանակ դատապարտուեր էր իրրև դաւաճան և հասարակապետական: Քուրդէ ազգային պահապանաց հրամանատարը՝ այնքան զանդաղ և անհոգ շարժեր էր այս աղմկին զիմացն առնելու, որ յայտնի դաւակից կը տեսնուէր, նա մանաւանդ արգիլեր էր իսկ թմրուկները հնչեցընելու: Եւ Վոսիտիէր իւր լեռնականքը անորոշ վիճակի մէջ թողուցեր էր՝ յետոյ յաղթողին կողմը բռնելու համար, որով Սահմանագիր ժողովը անպատասպար մնացեր էր:

Հիւպէրի ամբոխին հետ ճամբան Պլանքիին խումբերն ալ միացան, որոնք փոխանակ կեցցէ Լեհաստանի՝ « կեցցէ աշխատութեան կարգադրութիւն » կը գոչէին, և գլուխներն անցեր էր Պլանքի: Կային մէջերնին նաև Իւլանաիոյ և Իտալիոյ ապստամբեանց ժողովակներէն ալ: Այս զանազան տարերքներէ կապմեայ խաժամուժը առանց դժուարութեան մը հասաւ

ի պալատան Պուրպոն, որուն դրունքը բացուեցան Քուր
դէի հրամանով՝ ամբոխին, և հրամանատարն միարան
« Կեցցէ՛ Լեհաստան » գոչելով՝ խաժամուժին առաջնորդ
դեց դէպ ի մուսքերը, և ամբոխը սանդուխներէն վեր
ելլելով փոռուեցաւ նախ հանդիսականաց նստարան-
ներուն վերայ և յետոյ երեսփոխանաց կիսաբոլորա-
կին մէջ: Հոն ամենը սկսան խօսիլ. նախ մէկը ելաւ.
խօսեցաւ ի նպաստ Իտալիոյ, և ապա Լեհացին Վո-
լովաքի իր հայրենեաց համար, ուրիշներն ալ՝ աշխատու-
թեան վերայ: Սակայն այս ճառախօսութիւններէն
բնաւ իր մը չէր լսուեր բայց միայն « Կեցցէ՛ Լեհաս-
տան », որ նոյն օրուան ամենուն նշանն էր: Պիւշէ նա-
խագահը ծածուկ հրաման զրկեր էր որ ազգային պաշա-
պանք գումարուին. կը լսուի այն միջոցին թմբուկին
ձայնը, ամբոխը վրան կը վազէ ստիպելով և սպառնա-
լով՝ որ հրամանը ետ առնէ, և նա ալ անկնիք թուղթե-
րու վերայ հրամաններ կ'ըստորագրէ և ամբոխէն ոմանք
առնելով զայն դուրս կը վազեն. բայց տեսնելով որ
ազգային պաշապանք յետս չեն կտար, ամբոխը գնա-
խագահը աթուռէն վար կը քաշէ նախաստանք. իսկ
երեսփոխանք ցրուեցան մերձաւոր սրահներուն մէջ:
Ի զուր Լամարթին իր պերճախօսութեամբ կարծեց
հանգարտեցընել աղմուկը. իրեն պատասխան կուտա-
յին որ « Բաւական է կիթառդ, ալ քու քնարդ ալ
ջախջախեցաւ » . ի զուր կ'աշխատէին նաև Լըտրի
Ռայէն, Քլէման Թոմա, Պարպէս և Լուի Պլան.
անկարգութիւն և խառնակութիւն մը սիրեր էր սը-
րահին մէջ. և ամբոխը բռնի իր սիրելի երեսփոխան-
ներէն ոմանք ուսի վերայ առնելով կը պտտցընէր սրա-
հին մէջ: Ատեանը աճպարարներու սրահի մը քան
խորհրդարանի կերպարանք աւած էր: Վերջապէս Լուի
Պլան կրցաւ քիչ մը լռեցընել. և այն ատեն Սասիայլ
կարդաց բարձրաձայն Լեհաստանի համար սահմանեալ
պերսը: Բայց ի զուր կը գոչէր, մտիկ բնող չկար:
'Կա մանաւանդ ամբոխը մոռնալով զայն՝ իրրև եթէ
թատերաց մէջ դերասանի մը համար գոչէր, այնպէս
սկսաւ գոչելով խնդրել զՊլանքի: Եւ ահա կը հաս-

նի նոյն միջոցին Պլանքի ամբոխին կեցցէներուն մէջէն, բեմը կ' ելլէ, լուսթիւնը կը տիրէ և կը խորնդրէ՝ որ Լեհաստանը կանգնուի և աշխատութիւնը հաստատուի: Պարպէս, որ մինչև այն ատեն ժողովքին կուսակից երեցեր էր, հիմա մեծապէս նախանձելով Պլանքիի, և վախնալով որ իր ախոյեանը քան զինքը աւելի զօրանայ ամբոխին վերայ, ինքն ալ կ' առաջարկէ որ փութով Լեհաստանի համար բանակ մը ղրկուի, և հարուստներէն մէկ միլեար տուրք առնուի¹: Սրահէն դուրս ալ Լուի Պլան տագնապէն ու յոգնութենէն կը նուազի: Ժամը 3 1/2ին միջոցները այս խաժամուժին առաջնորդը Հիւպէր բեմը կ' ելլէ, և « Յանուն ժողովրդեան կը լսծէ Ազգային ժողովքը », յետոյ աներևոյթ կ' ըլլայ: Ժողովուրդը յետ նախ իւր ուսոց վերայ յաղթանակաւ պատգընելու իր գլխաւորքը՝ կը սկսի նոր վարչութեան մը անդամներ բնտրելու և կը հնչեն աղմկին մէջ Պարպէս, Ալուի Պլան, Փրուտոն, Ռասփայլ, Պլանքի, Հիւպէր, Սոպրիէ, Գոսիտիէր, և ամենէն վերջը Լըտրիւ Ռոյլէն անուանքը: Պարպէս և Ալրէր Սթէլ ալ Վիլ կը վագեն նոր վարչութիւնը հաստատելու, մինչ երեսփոխանք ձանձրացած այս պժգալի և խառնաշփոթ տեսարանէն չորս ժամ, ի վեր դուրսը գաւթին մէջ կը պտտէին և կը սպասէին ամբոխին ցրուելուն, որ նորէն նիստը սկսին:

Եւ ահա յանկարծ կը հնչէ թմբուկին ձայնը, և շարժուն պահապանաց երկրորդ շոկատը Քյարի հրամանատարին առաջնորդութեամբ սրահին մէջ կը մտնէ սուինները դէպ ի բազմութիւն դարձուցած, որ այս տեսքին կը սկսի փախչիլ և երեսփոխանք նորէն ներս կը մտնեն « Կեցցէ Հասարակապետութիւն » գոչելով: Իւժէն Գիւքլէր երիտասարդ կտրիճ երեսփոխանը եւ ռանդուն ճարտասանութեամբ կը հրաւիրէ զերեսփոխանս բազմելու և յառաջ վարելու նիստը: Հագիւ-

1. Երկրորդ օրուան Մօնիքէօրի մէջ կայ որ՝ երբ Պարպէս առաջարկեց մէկ միլեար տուրք հարուստներէն, ռամիկը գոչած ըլլայ, « անոր տեղ երկու ժամ աւարառութիւն »:

նիստը սկսեր էր երբ ուրիշ աղմուկ մը ծագեցաւ : Ազգային պահապանք մատնիչ կոչելով զՔուրդէ զօրավարը՝ կ'առնուն իրմէ սուրը, ուսին շքանշանը, կը պատեն իւր համազգեստը և կ'ուզէին հոն խեղդել զինքը, և որն որ հագիւ կ'ազատի Քլարիի օգնւթեամբ : Լամարթին ալ ի ժողովն կը հասնի և կը խօսի երեսփոխանաց, բայց իր ամեն ճարտասանութեամբ հանդերձ պաղ ընդունելութիւն կը գտնայ : Եոյն միջոցին խաժամուժը տիրեր էր Օթէլ տը Վիլի, և Պարպէս և Ալպէր կը ջանային նոր վարչութիւն մը հաստատել, մինչ Մարա իր օգնականներով հրամաններ կը զրկէր ազգային պահապանաց, որոնք փութով կը հասնին, ինչպէս նաև Լամարթին, Լըտրիւ Ռուէն և Քլէման Թոմա, որ Քուրդէին տեղ ազգային պահապանաց հրամանատար անուանուեր էր : Օթէլ տը Վիլ պաշարուեցաւ, Պարպէս և Ալպէր բռնուեցան, ուրիշ կողմեր ալ բռնուեր էին Պլանքի, Ռասփայլ, Հիւպէր, Փիէլ և Լըրու, Սարրիէ և ուրիշ խռովարարք : Իսկ Լուի Պլան հալիւ ժողովքին դիմելով ազգային պահապանաց բարկութենէն ազատեցաւ, որոնք ետեէն կը վազէին : Սահմանուեցաւ՝ որ փութով դատ բացուի ընդդէմ Պարպէսի, Քուրդէի և Ալպէրի : Ազգային ժողովքը վրձոնեց՝ որ ազգային պահապանք, շարժուն պահանորդք և բանակը արդիւնաւորք էին հայրենեաց, և նիստը վերցուց : Գործադիր Յանձնաժողովն ալ անուանեց զՊարակէ տ'իլիէ բարձրագոյն հրամանատար՝ Ազգային ժողովքին պաշտպանութեան համար սահմանեալ նորութեանց : Սակայն որովհետև աղմկին միջոց Գոսիտիէր ոստիկանութեան գլուխը՝ անորոշ կերպ մը բռներ էր, անոր համար որոշուեցաւ պաշտօնընկէց ընելու զինքը : Գոսիտիէր կանխեց հրաժարեցաւ, և իւր լեռնականքը ցրուեցան, որոնք ապրելու միջոց մը շունենալով միայան բազմաթիւ սոճոհներու և հասարակավարիչներու հետ, և պատրաստեցին Յունիսի յեղափոխութիւնը : Գոսիտիէր Յունիս Ծին ազգային երեսփոխան ընտրուեցաւ, իսկ Լուի Պլան ալ դատի կանչուեցաւ յանձնաժողովոյ մը առջև. բայց ինքզինքը մեծ ճարտասա-

նութեամբ պաշտպանեց, և հազիւ սակաւ քուէից առաւելութեամբ ազատեցաւ: Ռամկավարաց Յեղափոխութեան մը փորձը այսպէս աննպատակ և ապարդիւն կը մնար, սակայն առանց ոգիները հանդարտեցընելու:

7. Զսնապան ընտրութիւնք, — Լուի Նարոյէոն: — Շատ մը հրաժարմանց, և բազմաթիւ սեղեաց նոյն անձը ընտրուելուն համար՝ հարկ էր որ կրկին ընտրութիւնք ըլլային, և Յունիս Կին Սէնի նահանգը ժողովուած էին այս բանիս համար: Ընտրելեաց մէջ կը գտնուէր նաև Ժոէնվիլի իշխանին անունը, որդի Լուի Ֆրիլիի: Գործադիր ժողովը այս ընտրութեան դէմն առնելու համար առաջարկեց, որ Պուրպոնեանց անդրաւնիկ ցեղին դէմ ելած օրէնքը, (Օրէտնեանց համար ալ զօրէ: Առաջ հարկ էր որ Գաղղիայէն ելլան: Իւթէպէս տ'Օմալ դուքան և Ժոէնվիլի իշխանը՝ իրենց առագոյն մրած ծառայութիւնը և յԱրձէրի վարմունքնին յիշեցընելով ընդդէմ բողոքեցին, սակայն այդ ի գուր էր: Ազգային ժողովքը կը խիթար, որ իշխանապունք մտնելով ի ժողովն, յետոյ նախագահութեան յոյս ունենան: Արդէն Պոնափարթեանք՝ Ժէրոմ Պոնափարթ և Պետրոս որդի Լիւսիէնի, որոնք ժողովքին մէջն էին, կանխաւ խօսք տուած էին երբէք այսպիսի յոյս մը չունենալու, և նոյնը այս առթիւս հաստատեցին:

Ընտրութեանց մէջ ամէն կուսակցութենէ կը գլտնուէին, և կը տեսնուէր որ գաղափարք երթալով կը չափաւորէին. Խորհրդարանին մէջ կը մտնային Թիէր և Շանկաւնիէ: Ընտրեալ անձանց առաջինն էր Գոսիտիէր, յետոյ կուգային Մօրօ և Կուաչօ, Շանկաւնիէ, Թիէր, Փիէր Լըրաւ, Վիկտոր Հիւկօ, որ այս միջոցիս տակաւին թագաւորական կրնար համարուիլ, Լուի Նարոյէոն, Լակրանժ, Պուսսաէլ, Փրուսոն:

Քան զամէն անուն աւելի ուշադրութիւն գրաւեց Լուի Նարոյէոնի ընտրութիւնը, մինչ մոռացեալ և արհամարհուած կը կարծուէր ամեն կուսակցութիւններէ, և իւր գատը ի սպառ անհետացեալ կը համարուէր:

Լուի Նարոլէոն յետ մահուան Նարոլէոն Բի (1831) համարելով որ եթէ Կայսրութիւնը օր մը նորոգուի՝ իրեն կ'իյնայ անոր գլուխ կինայլը, 27 տարի ամեն ջանք և եռանդն ի գործ դրեր էր ի նպաստ իւր կուսակցութեան թէ՛ զինուք և թէ՛ զրջով: Տեսանք յամին 1836¹ որ յետ Ստրազպուրկի դաւանաց, Լուի Ֆիլիփ ներելով զինքը յԱմերիկա զրկած էր, երդումն առնելով որ մշտնջենաւոր հոն մնայ, թէպէտ ինքը ուրացած է միշտ այս երդումը: 1837ին սկիզբները իւր մօրմէն նամակ առնելով, որ ծանր հիւանդ էր, մեկնեցաւ Եւրոպէ: Որդենսիա թագուհին մեռաւ հոկտեմբեր 3ին, և Լուի Նարոլէոն հաստատուեցաւ յԱրէնպէրկ իւր մայրենի կալուածը, ունենալով ի վաղուց Գուրկովիոյ քաղաքակցութեան պատիւը: Փութով Լուի Ֆիլիփի վարչութիւնը խնդրեց Զուիցցերիի վարչութենէն Լուի Նափոլէոնի արտաքսումը: Մեծամեծ վէճեր ելան Գաշնակցութեան խորհրդոյն մէջ, և երբ Զուիցցերի չէր ուզեր ընդունել Լուի Ֆիլիփի կամքը, Լուի Նարոլէոն ինքնին անցաւ յԱնգղիա, ուսկից չդադրեցաւ նոր գրգիռներ և զլքեր յղել ի Գաղղիա զժողովուրդը յուզելու: Ստացաւ նաև զինուորական բարեկամներ, յորս Մոնթոլոն պօրավարն, ևս այն՝ որ Նարոլէոն Առաջնոյն հետ ընկեր էր ի Ս. Հեղինէ, և յանկարծակի 1840ին 56 անձինքով իջաւ ի Պուլոններ: Կը համարէր, որ հոն բովանդակ պահանորդք և բանակը պիտի վազեն ողջունելու կայսերական արծիւը՝ «Կեցցէ՛ կայսր» գոչելով. բայց փողոցէ փողոց վանուելով դիմեց կրկին ի ծով իւր նաւը ապաւինելու: Հոն չհասած հրացանի գնտակաց ներքև իրեններուն հետ ջուրը նետուեցաւ, և հոն բռնուելով բերուեցաւ ի բանտ: Բո՛ւր Եւրոպա ծիծաղեցաւ այս դաւոյն վերայ, զայն կոչելով «անփոք և փոքալիւն», և Կայսրութեան նորոգումը «անփոք և փոքալիւն»: Գրաստատանի մէջ զինքը պաշտպանողն եղաւ Պէրիէ հուշականուն փաստարանը. վճի-

ուր ելաւ որ մշտնջենաւորապէս փակուի Համ դղեակին մէջ: Իրեն ընկեր կը տրուէին Մոնթոլոն զօրավարը, անձնական բժիշկը և սպասաւորը: Մնաց հոն թղթակցելով միշտ բարեկամաց հետ, և զանոնք ընդունելով մինչև 1844 Մայիս 25:

Երբ իւր հայրը Լուի Նարոլէոն ծերացած և հիւանդ էր Ֆիորէնցա, խնդրեց Լուի Ֆիլիփէն շնորհելու առ ինքն իւր միակ զաւակը, և ինքն ալ կը խոստանար իւր պատուոյն վրայ, յետ դարմանելու իւր ծերունի հայրը, դառնալ վերստին ի Համ. խնդրանքը մերժուեցաւ և միտքը դրաւ դղեկէն փախչիլ: Իւր հաւատարիմ սպասաւորին ձեռքով գործաւորի զգեստ շինել տուաւ, փոխեց կերպարանքը և աշխատաւորաց վատակելու ժամանակ, գերան մը կանակը դռնէն դուրս ելաւ պահապանաց մէջէն՝ որ զինքը չձանչցան: Իւր բժիշկը՝ անկողնոյն մէջ պաճուճապատանք մը դրած էր, և զինքը հիւանդ հռչակած էր¹: Իսկ երեկոյեան՝ դղեակին հրամանատարը ուղեւորով ստուգել բանտարգելոյն հիւանդութիւնը, բռնի մտենալով անկողնոյն իմացաւ եղածը՝ երբ Նարոլէոն արդէն կը գտնուէր Պելձիոյ հողոյն վերայ, ուսկից անցաւ յԱնգլիա և մնաց հոն մինչև 1848ի Յեղափոխութիւնը: Հոն հանդարտ չկեցաւ, և իւր Լոնդոնէն նամակաց մէջ վրէժխնդիր զինքը միշտ կը ցուցընէր ռամկին վիճակի բարւոքման: Իւր կուսակիցք՝ ամեն կողմ գործաւորաց ներկայացուցին զինքը իրրև պաշտպան մը ժողովրդեան, և մեծամեծ դրամոց գումարներ բաշխուեցան: Սակայն շատ աւելի ներգործեր էր Նաբոլէոն հմայիչ անունը:

Փութով ստեանին մէջ ծագեցաւ այն խնդիրը՝ թէ արդեօք իշխանին ընտրութիւնը վաւերակա՞ն էր՝ Պոնափարթից ցեղէն ըլլալուն համար: Եթէ ընտրութիւններէն առաջ խնդիրը ելած ըլլար՝ թերևս և ոչ իսկ առաջարկուէր: Բայց հիմայ որ ընտրուեր էր և արդէն Պոնափարթ, Յովակիմ Միւրա կը նստէին ժողովքին մէջ, դժուար էր զայն ոչնչացընել, և որչափ

1. Թիրիա. Նաբոլէոն Գ. Յիշատակարանք. տպ. 1898:

որ Լամարթին և Լըսարիւ Ռուլէն ջանացին ցուցընել՝ որ ինչ վտանգաւոր էր այս ընտրութիւնը, սակայն հաւանութիւն չըստացան, և ժողովքին մեծագոյն մասը ընդունեցաւ¹, յորում կը գտնուէին Լուի Նարոլէոնի ապագայ մեծ հակառակորդը Ժիւլ Ֆալրը, և Լուի Պլան: Ասոնք անհնարին և անխելք կը համարէին կարծել՝ որ Լուի Նարոլէոն մտադրութիւն ունենայ նորոգել Կայսրութիւնը: Մանաւանդ վտանգաւոր կը համարէին մերժել ընտրութիւնը, որով և կարեւորութիւն մը տալ Լուի Նարոլէոնի անձին, որ ուրիշ բան մը չէր՝ բայց թէ պարզ քաղաքացի:

Նորընտիրը Յունիա 15ին Լոնտրայէն նամակով մը ծանոյց, թէ ինքը չունէր այն դիտաւորութիւնքը, որ իրեն կ'ընծայուէին, « բայց եթէ ազգը իրեն վրայ պարտք մը դնէր, գիտէր զայն ի գլուխ հանել », և դարձեալ՝ « իր անունը կը նշանակէր Կարդ, Ազգութիւն, Փառք », և կը ցաւէր որ իր անունը պատրուակ մը կ'ըլլար շփոթութեանց. անոր համար « նախամեծար կը համարէր մնալ յաքսոր, և զոչել իր երջանկութիւնը Գաղղիոյ համար քան առիթ ըլլալ աղիտից »:

Նամակին բացատրութիւնքը մեծապէս գրգռեցին զերեսփոխանս: Ժողովքը երկրորդ օրուան թողուց վըձ աելու՝ որ արդեօք այս նամակը հրաժարակա՞ն մ'էր. և անցին գացին ամբոխին մէջէն՝ որ կը գոչէր, « Կեցցէ՛ կայսրը, անկցի թիւր, անկցին Երեսփոխանք »: Երկրորդ օրը՝ ուրիշ նամակով մը Լուի Նարոլէոն յայտնապէս կը հրաժարէր երեսփոխանութենէն՝ զժողովուրդը սուելի յինքն գրաւելու նպատակաւ:

1. Պահպանողականաց խմբին բնաւ հոգը չէր Հասարակապետութեան վտանգը. բաց աստի աժգո՛հ հասարակապետականք, ինչպէս ՊՊ. Լուի Պլան, Ժիւլ Ֆալր, Քրէմիէօ և ուրիշ շատերը գրեւեղատրութիւնը զէք մը կ'առնուին գործադիր իշխանութեան դէմ: Աւելցուցէք ասոր վերայ Պոնափարթի ընտանեաց բարեկամքը, որոնք շահերով և յիշատակներով կապուած էին, կամ զանոնք՝ որ ապագային յոյսեր ունէին. և զարմանք չէ մեծամասնութիւն ընդունելիւ: (Յիշատակարանք Օտիլոն Պարօ. Հտ. Ա. էջ 226, 227):

8. Յունիսի Յեղափոխութիւնը: — Մայիս 15 էն մինչև Յունիսի Յեղափոխութիւնը՝ Բարիզ շուարեալ և խռովայոյզ վիճակի մէջ էր, յանկարծ յանկարծ ժառուղոյ մը կամ փողոցի մը գլուխ խուռն բազմութիւն մը կը տեսնուէր, ստէպ կը լսուէր թմբուկին ձայնը, որ զբաղաբացիս կը կոչէր ի պահպանութիւն հասարակաց ապահովութեան: Քաղաքացւոց ի զէն դիմելովը՝ վաճառականութիւնը աւելի կը նուագէր, և կրպակներէն ոմանց փակուիլը տխուր տեսարան մը կուտար քաղաքին: Վարչութիւնը յետին անգործութեան և վարանման մէջ էր: Գործադիր ժողովը՝ որ կը բազմէր ի Լիսսամպուր, իւր անհոգ անգործութեամբ մեծապէս կը վնասէր հասարակաց կարգաց: Լամարթին և Լըտրիւ Ռոլէն՝ ի զուր կը ջանային ձեռք բերել երբեմն ունեցած ժողովրդականութիւննին. Տրանսուա Արակօ կը ցաւէր միշտ՝ որ իր երկնային հրաշալի զննութիւնքը թողուցած, բռնադատուեր էր երկրաւոր կռիւններու զբաղիլ. Մարի՝ որչափ որ բարի անձ մ'էր և մեծ օրէնսգէտ, բայց անյարմար վարչութեան մը գլուխ կենալու. իսկ Կառնիէ Փափէս բնաւ նշանակութիւն մը չունէր: Զկար մէկը որ ուղղութիւն մը ազդէր ժողովոյն, վասնզի չկար նաև երկիրը կառավարող իշխանութիւն մը: Քաղաքական անորոշ վիճակին յաջորդեց դրամական նուագութիւնը. գործարանաց դադրելով գանձը ստակ չէր մնացած, բայց սակայն հարկ էր հոգալ գործատուները, որոց աշխատաւորաց թիւը 100,000ի հասեր էր, և օրական 300,000 ֆրանք ծախք կ'ըլլար: Որ օրուան վրայ կ'առաւելուն գործաւորաց թիւը, նա մանաւանդ շատերը իբր ապաւէն մը ծուլութեան, կը դիմէին ի գործատուս: Այս անկարգ վիճակը աւելի կը զայրացընէին ժողովակաց ճարտարախօսք և անոնց լրագիրքը, որք ամէն կողմ կը հռչակէին թէ ժողովուրդը կը հալաւ ծուի և կը տանջուի յազնուականաց: Հարկ էր դրամ հասցընել, որ սակայն չկար, կը մնար դիմել ուրիշ միջոցներու և Կուաշօ պաշտօնեայն, ինչպէս նաև տը Տալլու թագաւորական անուանի երեսփոխանը, խորհուրդ

կուտային գոցելու զգործատունս : Յետ ջերմ հակաճառութեանց յաղթեց տը **Ֆալլուի** առաջարկը, և Յունիս 21ին Գործադիր Յանձնաժողովը հրովարտակով մը կը պատուիրէր, որ 18էն 25ամեայ աշխատաւորք անմիջապէս զինուորագրուին, և պատրաստ ըլլան մեկնելու ի գաւառս և մանաւանդ ի Սոլոններ՝ երկիրը հարթելու համար : Երկրորդ օրը՝ շատ մը գործաւորք մեկնեցան ի գաւառս ընդունելով իրր թոշակ 75 հարիւրեակ : Գործաւորաց պարագլուխք, որք հաստատուն մտքերնին դրած էին բռնի միջոցներով պահանջմունքնին ձեռք բերելու, տեսնելով որ խնդիրը կարծածնէն տարբեր կերպարանք մը կ'առնուր, 22ին առաւօտը գումարեցին ըզգործաւորս Փանթէոն, և հոն Փուժոյ անուամբ պարագլխոյ մը ճառախօսութեամբ զրգռեալ՝ վեց հազար գործաւորք նուիրակութիւն զրկեցին առ Գործադիր ժողովքը, որ զիրենք յորդորեց մեկնելու ի գաւառս : 'Նոյն երեկոյ' Բարիդու մէջ աստ և անդ գործաւորաց խումբեր կը տարուբերէին, և 23ին առաւօտը 10, 000 գործաւորք Փուժոյի առաջնորդութեամբ՝ յետ Պասդիյի սեան տակ գումարուելու և հոն ծնրադիր վրէժխնդրութիւն երդուրննալու, թաղերուն մէջ ցրուեցան պատնէչներ բարձրացրնելու, և առաջինը կանգնեցաւ Սէն Տընիի թաղին մէջ : Փութով թմրուկներուն ձայնը հնչեց քաղաքին մէջ, և քաղաքացիք կոշուեցան քաղաքին պահանորդութեան, որուն կը հրամայէր Քլէման թոմա : Պատերազմի պաշտօնեայն Քավէնեաք՝ կանխաւ կարելի հնարքները հոգացեր էր քաղաքին և Սթէլ տը Վիլի պաշտպանութեան համար . և ազգային պահապանաց թմրկին ձայնը լսուած ժամանակ, արդէն կազմ էր բանակը, որուն այլ և այլ կէտերու վերայ պիտի հրամայէին Քավէնեաք, Վամորիսիէր, Տամէսմ և Տիւվիվիէ գօրավարք : Բարիզ ընդհանուր ձամբարի կերպարանք առած էր, ամենայն ընտանեաց գլուխ՝ թէ՛ հարուստ, թէ՛ աղքատ, թէ՛ ազնուական, թէ՛ ռամիկ՝ զէնք առած, իւր խմբին դիմած էր ընտանեացը պաշտպանութեան համար : Վամորիսիէր և Տիւվիվիէ գօրավարք փութով յարձակ-

մամբ առին շատ մը պատնէշներ: Հասաւ Քավէնեաք ևա Լամարթինի հետ կռուոյն տեղը, և գլուխ կեցաւ Սէն Մօրի պատնիշաց յարձակման՝ ուր 300 զինուորէն աւելի ինկան: Չանազան կողմեր ալ վիրաւորուեցան Պըտօ զօրավարը, Պիքզիօ և Տոնէս երեսփոխանք, Տէմարէ և Փիէր տը Ռէմիւզա:

9. Իրկուսաստրուէիւն Քավէնեաքի: — Ժողովքը իր նիստերը կը շարունակէր, և ՉԿին սահմանեց որդեգրելու՝ այս կռիւներուն մէջ պաշտպանութեան համար անկեկոց որդիքը և այրիները, և յետոյ ինքզինքը մշտամնաց հրատարակեց: Սակայն ի զուր. յայտնի էր իր անկարողութիւնը: Բանակին, ինչպէս նաև քաղաքացւոց փափաքն էր, որ Գործադիր Յանձնաժողովին ձեռքէն իշխանութիւնը առնուելով Քավէնեաք զօրավարին յանձնուի: Երեսփոխան մը ազգային պահապանաց այդ փափաքը հաղորդեց Ժողովքին՝ առաջարկելով ևս սր քաղաքը պաշարման վիճակի մէջ դրուի. և թէպէտ այս երկրորդ մասին 60 երեսփոխանք ընդդիմացան, յորս էին նաև Օտիլոն Պարօ, Կրէվի և Քոնսիտէրան, այսու հանդերձ երկու առաջարկութիւնք ալ ընդունելի եղան: Գործադիր Յանձնաժողովը բռնադատուեցաւ հրատարելու և Քավէնեաքի յանձնուեցաւ դիկուսատորական իշխանութիւն մը, զոր ժողովրդեան ժանոյց Սէնար՝ ժողովոյն նախագահը: Քավէնեաք թէպէտ չէր առաջնակարգ զօրավար մը, սակայն իր պատերազմական հմտութեամբք և ազնուական յատկութեամբք՝ յարգելի և սիրելի անուն մը ձգած է Քաղզիոյ պատմութեան մէջ, որուն նպաստած են նաև իր հօրը և Կոտրֆրուա եղբորը յիշատակքն ալ: Այս իրնէ խոչեմ և միանգամայն անկեղծ անձին իշխանապետութիւնը՝ թէ քաղաքը և թէ բանակը մեծ խընդութեամբ լսեց՝ վստահ որ զինքը կառավարող մ'ունէր:

Կռիւը երթալով կը սաստկանար փողոցներուն մէջ, ահաւոր լուռութիւն մը տիրեր էր Բարիգու բազմամբոխ ծառուղեաց և անցքերուն մէջ, յորս կարկտի նման կը հասէին կապարեայ գնասակք, և արդէն արիւ-

նը սկսեր էր ընթանալ: Մարդկային երասնոց ընկերութիւնը և գործաւորներէ մաս մը ի սկզբան չէր մասնակցած կռուոյն, հիմա յայտնապէս կրկանգնուէր կարմիր դրօշը: Խռովարարք նորէն տիրեր էին Պրսո զօրավարին դրից՝ Սէնի աջ ափանց, և ամրացեր էին Փանթէսնի քով: Այս դիրքը առնելու համար արիւնահեղ և մոլեգին կռիւ մը ծագեցաւ, յորում վերջապէս քաջացան ազգային պահապանք և զինուորք, և սիրեցին Փանթէսնի, ուր մահացու վիրաւորուեցաւ Տիւմէսմ գօրավարը, և իրեն յաջորդեց գօրավարն Պրէա: Տաճարի թաղին մէջ ապստամբները վանելու համար հարկ եղաւ բրիչ, ական և հրաձիգ թնդանօթներ գործածել: Ժողովքը վերջին փորձ մը ուզեր էր ընել, խոստանալով երեք միլիոն ֆրանք բաժնել աղքատ ընտանեաց. այժմ՝ Քալէնեաք հրովարտակով մը կը թախանձէր գէւքերը, թողուլ և գալ հնազանդել օրինաց, բայց ունայն սեղ: 24-25ին գիշերը Բարիզ ահաւոր մթութեան մէջ անցուց, և երկրորդ օրը կանուխ պատերազմ: սկսաւ այն թաղերուն մէջ, յորս ազգային պահապանք միացեր էին ապստամբելոց հետ: Պրէա գօրավարը՝ Սէն Մարսէլ թաղին ապստամբները մղեց և վանեց մինչև ՖոնթէնՊլոյի քաղաքասահմանը՝ ուր գօրաւոր պատնէչք բարձրացեր էին: Պրէա՝ դեռ կրակը չսկսած ուզեց յետին փորձ մ'ալ ընել. անցաւ իր գունդերուն մէջէն դէպ ի պատնէչները և կարդաց ապստամբելոց՝ Ժողովքին խոստմունքը և Քալէնեաքի հրովարտակը: Այն ատեն զինքը ստիպեցին ապրտամբք անցնելու պատնէչները, և գալ խօսակցելու իրենց գլխաւորաց հետ: Եւ Պրէա սիրով յանձն առաւ անլուր իւր սպայից աղաչանաց, որք կը խնդրէին ինք զինքը չմատնելու զայրացելոց ձեռքը, անցաւ պատնէչները՝ ուր մոլեգնեալ ամբոխ մը զինքը պատեց և կալանաւորելով տարաւ տուն մը, և հոն խողխողեց ըզ-Պրէա իր Մանթէն հազարապետին հետ¹:

1. Պատմագրացմէ ոմանք կ'ըսեն՝ թէ յապստամբելոց սակաւք կ'ուզէին ազատել Պրէա, բայց երբ գօրավարն թոճա՝ փոխանորդ

Սէնդ՝ Անդուան թաղին մէջ, ուր ապստամբելոց մեծագոյն ոյժը գումարուեր էր, Տիւվիվիէ զօրավարը մահացու հարուածէ մը ընկեր էր, ինչպէս նաև Նէկրիէ զօրավարը՝ որ փորձեր էր Պասդէյի հրապարակի մէջ ապստամբելոց խօսիլ. ինկեր էին նաև Շարպունէլ և Տոանէս երեսփոխանք:

Սէնդ՝ Անդուանի արիւնհաչեղ խառնուրդին ժամանակ Բարիզու արքեպիսկոպոսը Գեր. Աֆրը՝ խնդրեց Քավէնեաքէն երկու կողման միջնորդ ըլլալու. և հետը 10 քահանայ առած, անցնելով փողոցները և վիրաւորելոց օգնելով, հասաւ կռուոյն տեղը և խնդրելով ստացաւ ժամ մը զինադադարումն: Կրակը դադրելով, անցաւ պատնէշը, մտաւ կատաղեաց մէջ և հագիւ սկսեր էր խօսել, լսուեցաւ հրացանի հարուած մը, և բաղմաթիւ « ի գէն, մատնուած ենք » ձայներ: Արքեպիսկոպոսը կուշտը ընդունած հարուածէն կ'ինկնայ. ապստամբները վրան կը վազեն, յարգանք զինքը կը վերցընեն մօտ տուն մը կը տանին, ուսկից կը փոխադրեն յԱրքեպիսկոպոսարան. հոն քիչ ժամէն պատկառելի հովիւր իր յետին շունչը կ'աւանդէ ըսելով. « Ո՛ւր էր թէ իմ՝ արիւնս յետինն ըլլար ¹ »:

Տակաւին 26ին առաւօտ կռիւր կը շարունակէր Սէնդ՝ Անդուան թաղին մէջ. բայց ապստամբք վհատեր էին և պայմանովք կ'ուզէին խոնարհիլ: Քավէնեաք շուրջ պայման մը ճանչնալ, որով և կռիւր նորոգուեցաւ, բայց տկար յոյժ, և փութով իսկ դադրեցաւ ապստամբելոց շատերուն մահուամբ, գերի ինկնալովը և հրազինուց պակսելով: Քավէնեաք այն ատեն ծանոյց ժողովքին՝ որ ապստամբութիւնը դադրեր էր քաղաքին ամէն

Պրէայի. իր հրամանատարին դառնալը շտեմնելով, պատուրեց յարձակումն սկսելու, այն ատեն ապստամբք յարձակելով Պրէայի վրայ, զինքը խողիողեցին:

1. Յետ Յեղափոխութեան՝ վարչութիւնը երկար ժամանակ փնտռած է իմանալու Գեր. Աֆրի վրայ գնտակ նետողը, բայց անկարելի եղած է իմանալ. և ապստամբք իրենք չեն ուզած պատմել այդ գէպրին պարագայը:

կողմ: Եւ արդարեւ դադրեր էր կենաց աղիտից մէջ աւհաւորագոյնը, թողլով Բարիզու պէս քաղաք մը տխուր և զարհուրելի վիճակի մէջ, ի մեծ ցաւ և սարսափ նոյն իսկ յաղթողաց¹:

Երկրորդ առաւօտ արթնցաւ Բարիզ, բայց նախ իր կորուստները համբելու համար: Այս 4 օրուան կռիւներուն մէջ 5000էն աւելի ինկեր էին, յորս 2 երեսփոխանք և 7 զօրավարք. 12,000 ալ գերի բռնուեր էին յապստամբելոց, որոց համար որոշուեցաւ յԱլճէրի փոխադրութիւն՝ յետ դատուելու զինուորական ատենէ մը. այլ սակայն այդ 12,000 թիւը յետ զանազան ներմանց 2,400ի իջաւ, որք դեռ ի Գաղղիա էին՝ երբ նոր նախագահը ընտրուեցաւ: Փերելոց մէջ էին նաև Լըտրիւ Ռուլէն՝ որ յետոյ ազատ թողուեցաւ, Լուի Պլան և Գոսիտիէր՝ զորս վարչութիւնը յորդորեց թողլու գՊաղղիա:

Զօրավարն Քալվենեպ ասպտամբութեան նուաճիլը խողովքին ծանուցած ժամանակ, միանգամայն անփառասէր վեհանձնութեամբ յայտներ էր իւր փափագը, հրաժարելու այն իշխանութենէն՝ զոր յանձներ էին իրեն՝ վտանգին միջոց: Խողովքը 28ին գումարման մէջ յետ հռչակելու՝ որ «մեծապէս արդիւնաւոր էր հայրենեաց», կարևոր համարեցաւ զինքը առ ժամս Գործադիր Իշխանութեան գլուխ անուանելու, իրաւասութիւն տալով ըստ իւր կամացը ընտրելու և կամ փոփոխելու իւր պաշտօնակիցքը: Այսպէս կը լմննար Քալվենեպի շորեքօրեայ դիկտատորութիւնը, և կ'ըլլար գլուխ վարչութեան լիակատար իշխանութեամբ:

1. «Երկուշաբթի օր, Յունիս 26, երբ Անդր՝ Անդուան թաղին առմամբ դադրեցաւ ասպտամբութիւնը, Արտաքին զործոց պաշտօնեայն Ժիւլ Պասդիտ գնաց առ Քալվենեպ, ում ազգակից էր: Գտաւ զզօրավարը նստած մօրը դիմաց, որ և զուլիւր մօրը ծնգաց վերայ կուլար հեծկլտալով: Դիւցազնաբար կատարեր էր իր պարտքը. բոցց սյս յաղթութիւնը՝ թէպէտ կարևոր և փրկաւէտ Գաղղիոյ համար, իրեն սարսափ կը բերէր»: Մոսկով Գլուխ Գլուխ ԺԶ:

Յունիս 28էն մինչև 20 դեկտեմբերի՝ որչափ ալ Քավէնեաք զբաղաբը պաշարման վիճակի մէջ պահեց, այսու հանդերձ հանդարտ և կանոնաւոր վարչութիւն մը ունեցաւ: Քործադիր ժողովոյն և պաշտօնէից փոփոխութիւն մը չըրաւ բաց ի Քաւնոյլ, որուն հակառակ քուէ տուեր էր ժողովքը: Եւ Քաւնոյի յաջորդեց Հասարակաց կրթութեան պաշտաման մէջ Աշիլ տը Վոլապէլ՝ Վերանորոգման պատմագիրը: Սեպտեմբեր 17, 18ի մասնական ընտրութեամբք ալ Լուի Նաբոլէոն երեսփոխան ընտրուեցաւ Եոնի, և այս անգամ իշխանը չհրաժարեցաւ ազգային նուիրակութենէն, նա մասնաւանդ հրատարակեց՝ որ ուրիշ բանի համար յանձն չէր առնուր այս պարսքը, բայց եթէ Հասարակապետութեան ծառայելու համար¹:

Քավէնեաք սպագրութեան ազատութիւնն ալ շափաւորեց, և լրագիրներէն ոմանք խափանուեցան կամ ստիպուեցան մեծագոյն գրաւ մը տալու: Այս պատճառաւ էր ահա՝ որ հռչականունն Լամբնէ ստիպուեցաւ դադրեցընել իւր լրագիրը՝ և այս օրէնքը անուանեց «լուութիւն աղքատին»: Քավէնեաք իմաստուն հաստատամտութեամբ մը տեղիք շտուաւ ազատականաց ընդդիմութեանց առջև, գիտէր՝ որ այսպիսի շփոթալից ժամանակ խռովայոյզ լրագրութիւն մը կրնար սգինները կրկին բորբոքել. և հայրենեաց օգուտը ի վեր համարեցաւ քան զամենայն անձնական համակրութիւն:

10. Սամմանադրութիւն Հասարակապետութեան: Այս միջոցիս մէջ ժողովքը կը վստակէր Հասարակապետութեան Սահմանադրութիւն մը տալ, որ հրատարակուեցաւ հանդիսապէս Նոյեմբեր 4ին, բաժնուած ի 16 յօդուածս:

Ըստ այսմ՝ Սահմանադրութեան, կը հռչակուէր Հասարակապետութիւնը ժ և անբաժան, հիմնեալ ի վերայ

1. Իւր ընտրութեան լուրը աստիճանելով ի Բարիզ, ժողովուրդը դայն ընդունեցաւ երաժշտութեամբ և «կեցցէ Նաբոլէոն», «կեցցէ կայսր» աղագակներով:

աղտորութեան, հասարակութեան և եղբայրութեան. կար Օրէնադիր իշխանութիւն մը. պատերազմ հրատարակելու և դաշինքներ դնելու և շափաւորելու իրաւունքը կը տրուէր մշտամնաց Ազգային Ժողովքի մը, որ պիտի կազմուէր 750 երեսփոխաններէ, որոնք պիտի ընտրուէին Ազգէն, և ամենայն շամբայ գաղղիացի մասնակից էր քաղաքական և աշխարհավարական իրաւունքներու, և կրնար ընտրող ըլլալ: Ամենայն ընտրողք կրնան ընտրուիլ, տրոց բնաւ պայման չկար. Գործադիր իշխանութիւնը պիտի յանձնուէր Նախագահ մը՝ որ ընդհանուր քուէով չորս տարուան համար պիտի ընտրուէր, ինչպէս ի Միացեալ Նահանգս, և էր պատասխանատու: Նախագահը մասնակից էր առաջարկութեան իրաւանց ի Ժողովի. ինքը օրէնքները պիտի հրատարակէր և ինքը զանոնք պահել պիտի տար. կրնար բանակին վերաբերեալ պատուէրներ տալ, բայց չէր կրնար հրամանատար ըլլալ: Արդարութեան բարձրագոյն դատաստանարան մը կը հաստատուէր՝ Պետութեան դէմ եղած յանցանքները դատելու, և դատաւորք անփոփոխելիք էին. դարձեալ Պետութեան ատեան մը, որուն անդամքը Ժողովքէն պիտի անուանուէին, որ պիտի վաստակէր օրինաց վրայ ընդ նախագահութեամբ փոխան նախագահի Հասարակապետութեան՝ զոր պիտի ընտրէր Ժողովք՝ Նախագահին առաջարկած երեք անձանց մէջէն: Իրաւունք կը տրուէր գումարմանց աղերս ներկայացընելու և սպազրութեան լիովին ազատութիւն կար: Վարչական կարգաց մէջ կը պահէր Հիւպատոսութեան և Կայսրութեան կարգաւորութիւնները, զոր պահեր էին նոյնպէս Վերանորոգումը և Յուլիսի Թագաւորութիւնը:

Սահմանադրութեան յօդուածոց մէջ նախ խնդրոյ նիւթ եղաւ Ազգային մէկ միայն Ժողովքի հաստատութիւնը, մինչ Թիէր և Իրեն հետ ուրիշներ կ'ուզէին երկու Ժողովք դնել. սակայն յաղթեց Մարա՝ որ մէկ միայն Ժողովք առաջարկեր էր:

Ամենէն աւելի ծանր խնդրոյ և հակաճառութեան նիւթ եղաւ Նախագահի մը ընտրութիւնը: Հասարա-

կապետականներէն ոմանք կ'ուզէին Նախագահ մը ունենալ Միացեալ Նահանգաց նման՝ սահմանեալ տարիներով. ուրիշները կը վախէին՝ որ այս Նախագահութիւնը յետոյ միապետութեան մը շփոխուի, անոր համար Փիւլ Կրէվի երեսփոխանը կանխատես աջքով մը առաջարկեք էր, որ գոնեայ իշխանութեան ժամանակը շորոշուի և ուզած ժամանակնին ժողովքը կարենայ փոփոխել: « Ապահով էք, կ'ըսէր, որ այս շորս ստարին մէկ մը փոխուող Նախագահք ամէնն ալ ճշմարիտ հասարակապետականք ըլլան, որ անմիջապէս թողուն իշխանութիւնը: Ապահով էք, որ պիտի չգտնուի փառասէր մը՝ որ պիտի ուզէ երկարել ժամանակը. և եթէ այս փառասէրը ըլլայ անձ մը այն ցեղերէն, որ Քաղղիոյ մէջ թագաւորած ըլլան և հրատարած չըլլան տակաւին իրենց իրաւունքէն, և ժողովրդեան դժբաղդութիւնը իրեն առիթ առնելով անորոշ ժամանակի միջոց, խոսամունքներով ծածկելով իր միտքը ընդդէմ ազատութեան, արդեօք կարելի չէ՞ որ այս փառասէրը ուզէ Հասարակապետութիւնը տապալել »: Որչափ որ Կրէվի նոյն օրը կտրիճ հռետոր երեցեր էր, սակայն քուէից բազմութիւնը Նախագահի հաստատութիւնը ընդունեք էր որոշեալ ժամանակով:

[1. Լուի Նաբոլէոն՝ Նալսապահ. — Կը մնար հիմա սահմանել ընտրութեան եղանակը: Արդեօք ազգային ժողովքը պիտի ընտրէր զՆախագահը թէ ընդհանուր քուէարկութիւնը: Լրպլոն երեսփոխանը առաջարկեց՝ որ Նախագահը ժողովքէն ընտրուի և փոխուի: Թէպէտ պաշտօնեայք այս կարծիքին վրայ էին և նոյն իսկ Քալէնեսպ ալ, սակայն յետինս հակառակ քուէ տուաւ, որպէս զի ի նպաստ իր շահուն գործել չկարծուի: Կային որ վտանգաւոր կը համարէին ազգային ընդհանուր քուէով ընտրութիւնը, որով զօրաւոր իսկ կ'ըլլար քան զթագաւոր մը: Լամարթին քեղ պերճախօսութեամբ մը պնդեց, որ պէտք է բովանդակ ազգէն ընտրուի. նոյնը առաջարկեց նաև Տիւֆոր: Երբ խնդիրը քուէարկութեան եկաւ, ընդունելի եղաւ ընտրութիւնը ուղղակի քուէով բովանդակ

Քաղղիայէ և ՍԱՃԷՐԻԷ: Պաշտօնեայք իրենց կարծեաց հակառակ քուէ ունենալով հրաժարեցան: Քավէնեաք նոր պաշտօնարան կազմեց, յորում երեք նոր անձինք մտան Տիւֆօր, Վիվիէն և Յրեւլոհ, յորոց երկուքը Յուլիսի յեղափոխութեան միջոց արդէն պաշտօնեայ եղած էին. և Քավէնեաք՝ խոհեմութիւն՝ նա մանաւանդ պարտք մը համարեցաւ իր կարծեաց դէմ ընդունել զանոնք պաշտօնարանին մէջ: Ծայրայեղ հասարակապետականք մեծապէս զայրացան այս բանիս համար, և թշնամացան զօրավարին, և իրենց վրէժը առին նախագահի ընտրութեան միջոց՝ որ կատարուեցաւ Կեկտեմբեր 10ին:

Ամէտ մը ի վեր պաշարման վիճակը վերցուեր էր, և Քավէնեաք շատ բարեկարգութիւններ ջանացեր էր մտցրնել մանաւանդ ՍԱՃԷՐԻ՝ ուր երկար ատեն ապրած էր. հիմա երկիրը խաղաղութեան մէջ ըլլալով կրնար նախագահի մը ընտրութիւնը կատարել:

Մասնաւորապէս չորս անձանց վրայ կը խօսուէր: Ծայրայեղ ընկերամուլաց մաս մ'. կ'ուզէր զՌասափայլ, ուրիշ մաս մը զԼըտրիւ Ռոլէն, իսկ շափաւոր հասարակապետականք՝ կամ զԼամարթին և կամ զՔավէնեաք: Եւ այց հասարակապետականաց մաս մը զայրացեր էր Քավէնեաքի դէմ և կ'առաջարկէր զԼուի Նարոլէոն, և ասոնց հետ կը միանային նաև շատ մը թագաւորականք, որոնք այս միջոցով կը համարէին փաստել Հասարակապետութեան: Ազիներուն այս վիճակի մէջ եղած ժամանակ ձայն ելաւ, որ Պիոս Թ Հռովմայ շփութութեանց պատճառաւ ի Քաղղիա պիտի դիմէ. վարչութիւնը պատուէր տուեր էր զինքը ամենայն յարգանքով ընդունելու, և նաեւ ալ ճամբայ պիտի ելլային Քաջանայապետին պաշտպանութեան համար: Ծայրայեղ հասարակապետականք աւելի զայրացան այս որոշման հաստատութեան համար ընդդէմ Քավէնեաքի. իսկ Լուի Նարոլէոն ճարտար եղանակ մը ունեցաւ այս խնդրոյն մէջ, որով որչափ զօրավարին ազդեցութիւնը կ'իյնար՝ այնչափ աւելի կը բարձրանար Պոնափարթինը: Լուի Նարոլէոն բնաւ առիթ մը չէր

Թողուր օգուտ քաղելու՝ մերթ գրութեամբ, մերթ շողաքորթելով հակառակ երեսփոխանները, կամ խոստմունքներով առ ռամիկը. բայց քան զայդոսիկ աւելի՛ Նարոյէոն և Պոնափարթ անուանքը գործեցին՝ զորս մինչև յերկինս համբարձեր էին նախ Նափոյէոն Ա, ապա քերդոզք և ճարտարապետք. այս անունը միայն կը ծածկէր իւր թերի յատկութիւնքը, և ծերունիք քաղաքաց և գիւղօրէից մէջ իրենց երիտասարդ որդւոց Մեծին Նարոյէոնի չքեղ փառքը պատմած և աւանդած ժամանակ, կը կարծէին որ այս եղբօրորդին պիտի կենդանացընէր նոյն յիշատակքը՝: Եւ այն նեղութիւնքը, պատերազմունքը և սառապանքը՝ զոր երբեմն կրեր և ատեր էին, հիմա իրենց ամենէն աւելի պարծանաց նիւթ էին և կարծես իսկ ցանկալի: Յանկարծ օր մը Նարոյէոնի անունը լսուեցաւ մէջ աեղ, փութով Քաղղիոյ մէկ ծայրէն միւս ծայրը ընթացաւ իրեն անհամար խոստմունքներով, իբր ժողովրդական ազատութեան ձայն մը. և Քաղղիա որ Կեկտեմբեր 10ին կոչուած էր ընտրելու կամ զՔալէնեաք և կամ զԼուի Նարոյէոն, զարմանալի դատողութեամբ մը արհամարհեց պայն՝ որուն վարչութեան յատկութիւնքը կը ճանչնար, և որ զինքը Յեղափոխութենէն փրկեր էր, ընտրելու իրեն համար անծանօթ անձ մը, միայն Նաբօյէոն անունը կրելուն համար:

Ընտրողք էին թուով 7,327,315: Իսկ յընտրելոց ունեցան սակաւաթիւ քուէներ այլ և այլ անձինք, յորս գորավարն Շանկառնիէ: Բազմաթիւ քուէ ընդունողք են հետեւեալքն:

1. Մ. Թրիա կ'ըսէ ի Նաբօյէոն Գ. (տպագրեալ 1895). Մայրաքաղաքին ամէն կողմ որմոց վերայ կ'պոչուցած էին նստեհալը.

Անուանեց

զԼուի Նարոյէոն Պոնափարթ

Բարիզու զաւակն է

Սէն Նահանգին ընտրեալն է

Քաղղիացի ժողովրդեան ընտրեալն է:

Լուի Նարոլէոն 5,434,226, Քալէնեաք 1,443,107, Լըտրիւ Ռոլէն 370,119, Ռասփայլ 36,920, Լամարթին 17,910:

Յետ քուէից ստուգութեան, և Լուի Նարոլէոնի ընտրութեան, Գեկտիմբեր 20ին Քալէնեաք զօրավարը Ազգային ժողովքին մէջ բեմը ելաւ, և պարզ՝ բայց վսեմ՝ ոճով մը յանձնեց ժողովքին իր ընկալեալ իշխանութիւնը: Ժողովքը առաքինի զօրավարին խօսքերը ընդունեցաւ մեծ ծափահարութեամբ, և « Կեցցէ Հասարակապետութիւն » աղաղակներով: Եւ յետոյ ժողովքին Նախագահը Արման Մարա՝ յետ յանձնելու իշխանութիւնը Լուի Նարոլէոնի՝ հրաւիրեց զինքը որ գայ երգմունքը ընէ բեմին վրայ, Հոն երգուաւ իշխանը « Առաջի Աստուծոյ և Գաղղիական ազգին », և ապա ատենախօսութիւն մը ըրաւ իր Հասարակապետական կարծիքները ծանուցանելու համար՝ զորս պիտի պաշտպանէր: Յետոյ բեմէն վար իջնելով ուղղակի գնաց առ Քալէնեաք, որ երեսփոխանաց մէջ քաշուեր նստեր էր և ձեռքը երկնցուց առ նա, զոր զօրավարը ընդունեցաւ վսեմ ծանրութեամբ մը:

Այս անակնունելի վերջը ունեցաւ ահա Փետրուարի Յեղափոխութիւնը, եթէ վերջ կրնանք ըսել և ոչ ըսկիզբ մը նոր թագաւորութեան, որուն նպաստեցին յակամայս նոյն իսկ Հասարակապետականք և օրինաւորականք: Արդեօք Լուի Ֆիլիփի անկումը պատրաստող անձինք կրնային երբէք այսպիսի կատարած մը գուշակել իրենց ջանից. վերջընել սահմանադրական բարգաւաճ թագաւորութիւն մը, միապետական կայսրութիւն մը կամ ազատութեանց լռութիւն մը Հաստատելու համար:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ ՅԱՒՍՏՐԻԱ, Ի ԲՐՈՒՍԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ

1. Գաղղիոյ Յեղափոխութեան արձագանգ. — 2. Ասորի, Մէդէնիքի փախուսար. — 3. Սահմանադրութիւն. — 4. Կայսեր փախուսար յԻնսպրուք. — 5. Պահիթ, Յեղափոխութիւն. — 6. Աւագածոցով. — 8. Յուսիս 12ին խռովութիւնը. — 7. Կալցի, Յեղափոխութեան ընկճուիլը. — 8. Մահաստան, Գոշութ, Ազատական առաջարկք. — 9. Խառնադք, Սլավոնք, Զինուորական սահմանք՝ ընդդէմ Մահառասանի. — 10. Բրասիլ, Յեղափոխութիւն Ի Պէուլին. — 11. Փրեդերիկոս Գուլիէլմոս Գ կը խոստանայ սահմանադրութիւն. — 12. Գերմանական պետութիւնք. — 15. Տանիմարքա. Խնդիր յաջորդութեանց, զքսութիւնք:

1. Գաղղիոյ Յեղափոխութեան արձագանգ: — Եթէ 1830ի Յեղափոխութիւնը մեծ ազգերը անպատրաստ վիճակի մէջ գտնելով՝ թողուց զիրենք իրենց առաջին պայմանին մէջ, Փետրուարի Յեղափոխութիւնը այնպիսի ժամանակի մը կը հասնէր, յորում արդէն ամէն կողմ սկսեր էր յեղափոխութիւնը, և Բարիդէն հասած հեռագիրք կայծ մը եղան բորբոքիչ ահաւոր խարուկին, որուն հրդեհին բոցը պատեց բոլոր Եւրոպա և շարժեց և տապալեց բաղմադարեան վարչութեան ձևեր և իշխանութիւններ:

Մինչ 1830ին վեննայի և Պէուլինու վարչութիւնք՝ Գաղղիոյ ազգեցութեան դէմ իրենց պատուար ունէին Գերմանիոյ երկրորդական պետութիւնները, հիմայ Յեղափոխութիւնը ոսք հանեց զիրենք շրջապատող իշխանութիւնքը: Պատէն՝ Գաղղիոյ ամենէն մերձաւորը՝ յիշխանութիւն կոչեց ազատասէր պաշտօնեա-

ներ, նոյնը ըրին նաև Վիրդէմպէրկ և Սաքսոնիա: Պապիէրայի Լուդովիկոս թագաւորը՝ գոցեր էր համալսարանները, որովհետև ժողովուրդը՝ և մանաւանդ աշակերտք պախարակեր էին իր ինքնակամ վարչութիւնը և սպանիացի գուսանի մը հաճոյից գերի ըլլալը. աշակերտաց և ոստիկանութեան մէջ կռիւններ ծագեցան ի փողոցս, թագաւորը ստիպուեցաւ համալսարանները բանալ և հեռացընել զգուսանը, զոր Մոնպէսի կոմսուհի անուանած էր: Ամէն կողմ ոգիները յուզեալ էին, ամէն կողմ ազատութիւն կը հնչէր:

2. Աւստրիա. Մհրէանիլի փախուստը:— Յեղափոխութեան արձագանգները լսուեցան նաև այն երկրին մէջ, ուր կը կարծուէր թէ միապետական հին ձևը բնաւ պիտի չսասանէր. և սակայն Փետրուարի Յեղափոխութեան ձայնը ոսք հանեց նախ զՎեննա, Միլան, Վենետիկ, Բէշդ, Փրակա, Ակրամ, Իլլով. և Աւստրիա յանկարծակի պաշարուած գտնուեցաւ բաղմաթիւ ապրտամբութեամբ, որոնք թէպէտ ամէնն ալ սուանձին ձեւերով և կերպարանօք, սակայն ամենուն նպատակն ալ ազատութեան և ազգութեան հմայիչ բառերն էին: Մաճառատանի խորհրդարանք կը խնդրէին ունենալ ազգային անկախ վարչութիւն մը՝ ընդ իշխանութեամբ Պալատինեան արշիդքսին, սահմանադրութեան նորոգութիւններ, արոց նուագումն, ազատութիւն մասնակցելէ աւստրիական պետութեան պարտուց, և մաճառ զինուորականաց շժառայելու արտաքոյ հայրենեաց. նոյնը կը խնդրէին նաև Պոհէմբ: Տէգոսութիւնը մեծ էր նաև ի Վեննա, թղթապրամոյն ինկնալուն, գանձուն խեղճութեան և գաւառական աշխատաւորաց անգործութեան պատճառաւ: Մարտ 11ին աղերս մը ուղղեալ առ ժողովն Ստորին Աւստրիոյ՝ կը պահանջէր անիջական հրատարակութիւն հաշիւներուն, գումարումն շարունակաբար մեծագումար ժողովոյ մը, յարում բաց յաւապոց մտնեն նաև ժողովրդականք, ազատութիւն տրուի սոցադրութեան, ատենից նիստերուն հրապարակումը և նորանոր ոստիկանական և քաղաքական բարեկարգութիւններ: Եւ երկու օր վերջը համալսարանի

աշակերտք այս աղերսը թափօրով ժողովքին կը տանէին: Ի զուր գունդերը ջանացին ցրուելու բազմուկ թիւնը, ամբողջը « Անկցի Մէդէնիք » գոչելով պաշարեց անոր պալատը և կը պատրաստուէր մեծագոյն շփոթից, երբ ժողովքը խնդրեց ի կայսերէն պաշտօնէին անկումը: Մէդէնիք՝ Աւստրիոյ վարչութեան հինաւուրց պաշտօնեայն, որ 30 տարիէն աւելի կառավարեց էր զԵւրոպա, ինքնին խնդրելով՝ հրաժարակալնը գաղտ սպասաւորի մը կառքով փախաւ և դիմեց յԱնգղիա, ուր մինչև կենաց վերջը պահեց այն ասպետական վեհանձնութիւնը, զոր միշտ կրեց էր, և որով 33 տարի իր քաղաքագիտութեան թերութիւնքը ծածկելով հմայեր էր Եւրոպիոյ բովանդակ միապետական վարչութիւնքը, և անկմամբը միայն ցուցուցեր էր իր ջախիչ կառավարութեան թերի մասունքը. կառավարութիւն մը որ շէր կրնար ապրիլ ընդ երկար ներկայ դարուց մէջ՝:

1. Իր անկման օրը կը գրէր Թայմզ Լրագիրը, որ « ինկաւ ՚ին վարչական գրութեան յետին նշխարը. Մէդէնիք իշխանը յաղթուեցաւ և չկրցաւ ընդդիմանալ Ստորին – Աւստրիոյ հանդարտաբարոյ բնակչաց կարծեաց: Ամենէն ՚ին արքունեաց ամենէն ՚ին պաշտօնեայն վնասուեցաւ...: Յետ քառասնամեայ անսահման իշխանութեան, Մէդէնիք կը թողու զԱւստրիա յետեակ ի մէջ Եւրոպիոյ, աղքատ ի գանձուն, բաժանեալ ի գաւառս և սպառնացեալ կորսնցրնելու իր ամենէն մեծ գաւառքը »:
2. Մեդեմիտի Յել-Գալ-Գալ. Հասոր Զ. մեզ կը ցուցնեն, որ իշխանը մինչև իւր անկման օրը ինքը պատգամատու էր Եւրոպիոյ: Առ նա կը գրէին խորհուրդ հարցնելու Փրեզիդենթոս Գուլիելմոս Ի. Նիկողայոս Ա. կիզօ և նոյն իսկ Փալմերսըն: Կը գրէր և խորհուրդ կու տար ամէն կողմ, յուսով Յեղափոխութեան մը դիմացն առնելու. կը համարէր գոնեայ զԱւստրիա փրկել, և բոլորովին իրեն անակնկալ եղաւ վեննայի յուզումը: Յել-Գալ-Գալ մէջ իւր Տիկիլը այսպէս կը նկարագրէ անկման օրը. « Աւպերդ մեծ դուքսը կը հրամայէր գունդերուն: Երբ անոնց գլուխ կեցած, անցաւ Տրայանի հրապարակէն, քարերու հարուածներով ընդունուեցաւ: Իւր ՚ետ եղող

3. Սահմանադրութիւն: — Մէդէոնիքի հեռանալով կայսրը հաւանեցաւ զինելու զուսանողս, որոնք «-հարեմական լեփեռն մը պիտի կազմէին. հաստատուեցան ազգային պահապանք և Պետութեան ամէն ժողովքները հրաւիրուեցան զումարուելու ի վեննա՝ Յուլիս Յին: Մի և նոյն միջոցին կ'իմացընէր՝ որ կը վերցնէ տպագրութեան արգելքը և ընդ հուպ ազատ տպագրութեան օրէնք մը պիտի հրատարակուէր: Մայրաքաղաքին ուրախութիւնը մեծ էր, ամէն կողմը լուսաւորութիւններ կը տեսնուէին: Գոլովրազ՝ նախագահ հուշակուեցաւ խորհրդոյն. Ներքին գործոց պաշտօնէութիւնը յանձնուեցաւ Տիբրլմոն կոմսին, որ թէպէտ աշակերտ Մէդէոնիքի, այսու հանդերձ պարագային յարմարելու համար փութով սահմանադրութիւն մը կազմեց, որ Ապրիլի 25ին հրատարակուեցաւ, և որ մեծաւ մասամբ պելճիականին օրինակութիւն մ'էր: Այր հաստատուէին երկու Խօսարանք, ծերակոյ-

ղորավարներէն ալ մին ծա'ր կերպով վիրաւորուեցաւ. այն առն զունդերը գէնք գործածեցին: Երկու հոգի վիրաւորուեցան, զորս յաղթանակաւ պտտցուցին վեննայի մէջ... ի Մարեանիլճ եղան մեռեալք և վիրաւորք: Արքունի Ախուր և զինարանը պաշարուեցան:

Ժամը 6ին կ'ըմէս (Մէդէոնիք իշխանը) Արքունիք կանչուեցաւ: Ամէն կողմ հրացանի հարուած կը լոււէր... և սպառնալիք Ալպերդ մեծ դքսին դէմ:

Ժամը 10ին երբ կը կուռէին հարժուղեաց վրայ, իմացայ որ սկսուեր էր զիջանիլ ամբոխին. և առաջին զիջումն էր իմ ամուսնոյս անկումը: Ի սկզբան իրը ինձ անկարեւիլ երեցաւ. մեռնիլ այո, բայց փառքով. Չիջանիլ: Եւ այսօրուան պատահարաց քով շատ եղկելի երեցաւ ինձ, և իմ առաջին զգացումս եղաւ այն ամօթը՝ որով պիտի ծածկուէր մեր թշուառ Միապետութիւն, բոլոր Եւրոպիոյ և բոլոր աշխարհի առջեւ:

Այ՞ կ'ըմէս տուաւ իւր հրամարականը...:

Լուսովիկ մեծ դուքսը տեսնելով իր նախասենեակը ողողած անձանց սպառնալիքը, յանձն առաւ ըսել ամուսնոյս, որ յիսուն տարուրնէ ի վեր Միապետութեան ամենէն հաստատուն

տը կը կազմէին արշիդքսեր, ուրիշ կալուածատէր իշխաններ և ի կայսերէն ցկեանս անուանեալ ատենակաք: Ընտրական Խօսարանը 383 անձանցմէ պիտի կազմուէր: Սահմանադրութիւնը կ'ապահովցընէր դարձեալ գումարելոյ, տպագրութեան և խղճմտանաց ազատութիւնքը: Այս առանձնաշնորհութիւնքը չունէին Լոմպարտիա, Վենետիկ, Մաճառստան և Պոհնմիա, որուն քիչ օր առաջ բազմաթիւ խոստմունքներ եղած էին:

Սակայն ժողովուրդը ազատութեան անվարժ, փութով ստացած իրաւունքները ի շարն գործածեց. զօրացաւ տպագրութեան խռովարար մասը, բազմացան յուզիչ գումարումներ: Անգործ աշխատաւորք ևս սասակացուցին յուզումը, փութով ռամկավար ճարտասաններ կանգնեցան ամբօխներու մէջ, կը նախատուէր Ֆիլլէրստորֆ, որ ընտրութեան օրինաց կազմութեան միջոց ոչ միայն ընդհանուր քուէարկութիւնը չընդունեցաւ, այլ և գրկեց աշխատաւոր ժողովուրդը:

Նեցուկն ելած էր, որ յայտնապէս քաղքին ապահովութիւնը իր հրաժարեալանէն կախումն ունէր:... Կլեմէս, ամէն կողմանէ լքեալ, պատասխանեց որ չէր ուզեր Վեննայի մէջ վազած արեան պատասխանատու ըլլալ, և չէր ուզեր խոչընդոտն ներկայանալ վարչութեան, և կը քաշուէր, ի զգացմամբ որ ըստ իւր պարտոց ծառայեր էր Պետութեան, և կը խնդրէր յիշրկնից որ իւր հրաժարելը ըլլայ ի փրկութիւն և ի փառս հայրենեան: Միայն կը վախնար որ չըլլայ թէ օր մը յանդիմանեն գինքը որ մեկնած ժամանակ, իւր ուսոց վրայ տարաւ ի բաց նաև զմիապետութիւնը. յանդիմանութիւն մը որուն դէմ հիմակուրնէ կը բողոքէր: Վերջապէս իւր հրաժարականը՝ որ յանձնէր ի ձեռս մեծ դքսին: Ասոր վրայ անվերջ ուրախութեան ձայներ լսուեցան»:...

Քիչ ժամ վերջը՝ կենաց վտանգէ վախնալով ծածուկ փախաւ ի Վեննայէ: Եղան քաղաքք որ իրեն չուզեցին տալ հիւրընկալութիւն: Իսկ թագաւորք և իշխանք ի զգացմամբ ցաւոց թղթեր գրեցին առ իշխանն:

4. Կայսեր փախուստը յինսպրուք: — Ասով աւելի սաստկացաւ յուզումը, կայսրը զիջող կը կարծուէր ժողովրդեան կամաց, հաւանեցաւ որ մէկ միայն Խոսարան ըլլայ ընդհանուր քուէարկութեամբ ընտրեալ. սակայն ինքն ևս շուարեալ, երկրորդ օրը թողլով Վեննա յինսպրուք փախաւ: Այս անակնկալ փախուստն վրայ քաղաքը սարսափեցաւ, որ և իցէ յուզումն ընաւ կայսերական իշխանութեան անկումը իրեն նպատակ առած չէր, և ժողովուրդը բազմազարեան սովորութեամբ առ կայսրութիւնն բերեալ, նոյն իսկ չունէր կարողութիւն զայն իր վրայէն թօթափելու. որով և թագաւորին փախուստը ընաւ գրգիռ մը շեղաւ իրեն նոր վարչութիւնը մը կազմելու: Փիլլէրստորֆ իր պաշտօնէութեան մէջ մնաց. բայց ուզելով վարչութիւնը ի նպատակ իւր առնուլ այս սարսափը, և ցրուել ուսանողաց գունդերը, ապստամբութիւնը նորէն ոգի առաւ և զանազան փողոցներու մէջ պատենէշներ բարձրացան: Հարկ եղաւ երկու կողմանէ զիջողութեան մը գալ, և ազգային պաշապաններէ և ուսանողներէ Հասարակաց Ապահովութեան խումբ մը կազմուեցաւ քաղաքին բարեկարգութեան հսկելու համար: Յետոյ սակաւին կայսրը հեռի ըլլալովը, Յովհաննէս արշիդուքսը յանուն կայսեր բացաւ Ազգային ժողովքը: Աւելի ազատական պաշտօնարան մը կազմուեցաւ, յորում Տոպլովֆ՝ Ներքին գործոց պաշտօնեայ կ'անուանուէր և Ալեքսանդր Պախ՝ Արգարութեան: Բայց որովհետեւ մայրաքաղաքը յուզեալ էր քանի որ արքունիքը յինսպրուք կը գտնուէր, անոր համար բազում աղերք գացին դառնալու ի Վեննա: Աղերսրայն ատեն ընդունելի եղաւ՝ երբ Ազգային ժողովը երկրորդ անգամ նուիրակութիւն մը զրկեց, և Փերսինանտոս՝ Սպոստոս 12ին մտաւ ի Վեննա:

Յուլի 16.

5. Պոմուլլա. Յելլափոխութիւն: — Մայրաքաղաքին ապստամբութիւնը խրախուսեց յեղափոխութեան միշտ պատրաստ գաւառները: Արդէն Պոհնմք կանխեր էին քան զՎեննացիս՝ իրենց առաջնորդ ունելով Խորհուրդ Բողոքոյ անուանեալ ազատական ընկերութիւնը: Մար-

տի 11ին ժողովք մը գումարուելով Ս. Վինչեսլաւի բաղանեաց սրահի մը մէջ՝ աղերս մը գրուեցաւ ի վեննա, որով կը պահանջուէր Մորավիոյ և Շլէզիոյ միութիւնը ընդ Պոճեմիոյ միաբանական վարչութեան մը ներքեւ, շինականաց լաւագոյն վիճակ մը և հասարակաց կրթութիւն: Այս պահանջները կազմելու վրայ էին՝ երբ վեննայի ապստամբութեան լուրը հասաւ: Փութով չէք ուսանողք ճեմարանական Լեգէոն մը կազմեցին. ալբերձ Ժողովը ինքզինքը մշտամիաց հրատարակեց, և ազգային ոգին նոր յոյս և խրախոյս զգեցաւ: Երկրորդ աղերս մը կազմուեցաւ, որով կը պահանջուէր Պոճեմիոյ թագաւորութեան նորոգումը, պաշտօնարան մը պատասխանատու թագաւորութեան, կեդրոնական միակ ատեան մը ի Փրակա, և հաւասարութիւն իրաւանց ընդ Պոճեմս և ընդ Վերմանացիս: Եւ նուիրակութիւն մը մեկնեցաւ. դէպ ի վեննա այս աղերսներուն համար, և հոն խոստացուեցան իրենց՝ Մորավիոյ և Շլէզիոյ միութիւնը առաջարկել երբ կեդրոնական Խօսարանը բացուի. սպահովցընելով միանգամայն ազգաց հաւասարութիւնը, խոստանալով ատեան մը հաստատել ի վերայ հասարակաց քուէարկութեան, և միանգամայն ինքնօրէն վարչութիւն մը և ուրիշ զանազան կարգաւորութիւններ: Եւ որոց համար մասնաւոր ազգային ժողովք մը պիտի հաստատուէր:

Ապրիլ 8.

Միանգամայն այս միջոցիս յիսնից ատեանը, որ ի Յրանքֆորդ գումարուեր էր, գերմանական խորհրդաւրանի մը բացման պատրաստութիւնքը տեսնալու համար, հրաւիրեց զպոճեմ հռչականուն պատմիչն Փաւլաքի՝ գալ իրենց որոշողութեանց ընկերելու: Փաւլաքի նշանաւոր թղթով մը պատասխանեց, որ ինքը «պոճեմ էր և ոչ գերմանացի. և որչափ ալ պատիկ էր իր ազգը, այլ սակայն միշտ պատմական առանձին անհատ մը կազմած է»: Սակայն Պոճեմիոյ մէջ գրտնուած գերմանացիք կ'ուզէին մասնակից ըլլալ Յրանքֆորդի որոշողութեանց, մինչ չէքերը ի սպառ կը մերժէին: Ասկէ յառաջ եկան բազմաթիւ շփոթութիւնք,

անկարգութիւնք և յերկուս բաժանումն ազգային ոգւոյն : Աւելի զայրացաւ խնդիրը՝ երբ Ապրիլ 25ին հրատարակուեցաւ աւստրիական սահմանադրութիւնը, որ բնաւ չէր յիշատակեր քիչ օր առաջ Պոհնմիներուն ըրած խոստումները : Չէքերր կայսեր յինապրուք փախստեան միջոց շուզեցին հնազանդիլ պաշտօնւորանին, և կոմս Լէօ Թուն կայսերական տեղապահին նախագահութեամբ՝ տեղապահական ժողովք մը գումարեցին իբրև Առժամանակեայ վարչութիւն մը, որ փութով թագաւորութեան աւագաժողովը կոչեց ի պումարումն : Մի և նոյն միջոցին աւելի եռանդուն հայրենասէրք՝ ի Փրակա հրաւիրեցին ամէն սլաւական նուիրակութիւնքը, և առաջին անգամ սլաւք միութեան մը ոգւով դիմեցին այսպիսի կենսական գործոյ մը :

6. Աւագաժողով . — Յունիս 12ի խառնութիւնը : — Ժողովը կազմուք 300 նուիրակք էին՝ 237 չէք, մորափք և սլավոնք, 41 լեհ և ռուզէնք, 42 խրուաղք, և սերպիաք : Առաջարկեալ խնդիրքն էին հաստատել՝ թէ ինչ յարաբերութիւն ունէին իրենք ընդ աւստրիացիս, ընդ գերմանացիս, ընդ մաճառս և ընդ սլաւս (սամանեան պետութեան, ինչպէս պիտի շարժէին Տրանքֆորդի Խորհրդարանին նկատմամբ, ինչպէս կարելի է զԱւստրիա դաշնադրական պետութիւն մը կազմել . և թէ Տրանքֆորդի Խորհրդարանին որոշողութիւնք կրնային իբրև օրէնք մը համարուիլ նաև Աւստրիոյ սլաւներուն համար : Առաջարկուեցաւ դարձեալ՝ ընդհանուր հրատարակութեամբ մը ծանուցանել՝ Եւրոպիոյ իրենց առանձին ազգութիւն կազմելու իղձը . ցուցնել որ այնպիսիք չեն, որպիսի ի սկզբանէ զիրենք հրատարակած են թշնամի ազգեր :

Այսպէս հանդարտաբար որոշողութիւնքը յառաջ վարելու ժամանակ՝ Փրակայի մէջ խռովութիւն մը վեր ի վայր տապալեց առաջարկութիւնները : Իսկ խռովութեան պատճառը տակաւին չգիտցուիր¹, բայց այս

1. Պատմագրացմէ ոմանք կ'ըսեն, որ մաճառք շուզելով սլաւաց

ստոյգ է՝ որ Յունիս 12ին պահակապանաց մէջ ծագեցաւ արիւնահեղ կռիւ մը, և իր տանը մէջ սպաննուեցաւ ընդհանուր զինուորական հրամանատարին կինը՝ իշխանուհին Վինտիշկրաց։ Փութով պատնէշներ բարձրացան, հրամանատարութիւնը մայրաքաղաքին բարձրը մասը քաշուած՝ երեք օր շարունակաբար ուժակոծեց ստորին մասը, մինչև որ լիովին անձնատուր եղաւ։ Ժողովքը ցրուեցաւ, Փրակա պաշարման վիճակի մէջ գրուեցաւ, պատերազմական ատեանը մըշտամնաց հաստատուեցաւ, և Պոհեմիոյ թագաւորութեան կարգերը կազմելու համար Ատեանը չգումարուեցաւ։ Քիչ վերջը Վեննայի Սահմանադիր Ժողովոյն համար ընտրութիւնք ըլլալով, Պոհեմիոյ գերմանացիք իրենցմէ սլաւաց ազգութեան թշնամի անձինք երեսփոխան զրկեցին. որոնց փոյթը այնչափ չէր Աւստրիոյ կայսրութիւնը՝ որչափ ընդհանուր գերմանական դաշնակցութիւնը։ Ընդհակառակն չէքերը այն խռովութեան մէջ գտնուողները խրկեցին պատուիրելով իրենց՝ վրէժ խնդիր ըլլալ սահմանադրական ազատութեանց, կայսրութեան ամբողջութիւնը պահել՝ որուն կ'սպառնային գերմանացիք և մաճառք և ընդարձակ ինքնօրէն վարչութիւն մը ստանալ Պոհեմիոյ համար։

7. Կալիցիա. Յեղափոխութեան ընկճուկը։— Կայսրութեան սմէն կողմ՝ եղած սպասական յուզմունքները գրգռեցին նաև Լէմպէրկի լեհացիքը, որոնք առանց բաժնուիլ ուղեւու աւստրիական կայսրութենէն, կը պահանջէին միայն որ հեռանան կասկածաւոր պաշտօնեայք, գաղտ ոստիկանութիւնը վերցուի, տեղական անձանցմէ մատակարարութիւն կազմուի, և լեհ գունդերն ալ կարենան մնալ Կալիցիոյ սահմանները։ Որչափ որ Կալիցիայի ազնուականք ռուսաց վախէն չէին ուզեր ապստամբական ձև մը առնուլ, այնքան առաւել սոս. այն կը մղէին գործը շատ մը աքսորէ նոր դար-

այսօրինակ միութիւնքը, և փափաքելով սնչացնել որոշողութիւնքը, գաղտ յարուցին այս խռովութիւնը.

ձած լեհք, որոնք Գրագովիոյ մէջ վարիչ ընկերութիւն մը հաստատեցին, և Ապրիլ 26ին ապստամբութիւնը յայտնի մէջտեղ ելաւ: Սակայն Սդատիոն կառավարիչը փութով զայն նուաճեց՝ քաղաքը ուժակոծելով: Սդատիոն քիչ օր առաջ վերուցեր էր նաև ազնուականներէն ձրի աշխատցընելու իրաւունքը¹, միանգամայն խորագէտ խորհրդով մը պաշտպաններ էր զուղէնս, որոնք յունածէս հոովմէական ըլլալով կը պահանջէին հաւասարութիւն ազգային ընդ լեհս և ընդ ուղղափառ լատինս: Այսպէս յեղափոխութիւնը առաջ քայլեց ի կալիցիա, մինչ ի Մաճառստան և յիտալիա մեծաքայլ կ'ընթանար ընդդէմ Աւստրիոյ:

8. Մաճառստան. Քոշուէ, Ազատական առաջարկք: — Մարտի 15ին Քոշուէ երեսփոխանաց Խօսարանին մէջ ի Փրէսպուրկ՝ ընդունելի ըրեր էր պատասխանատու պաշտօնարան մը հաստատելու առաջարկք: Սակայն բարձրագոյն խորհրդարանը աւելի երկչոտ՝ գայն մերժեր էր, և վրայ հասնելով Վեննայի յեղափոխութեան լուրը ոգիները աւելի գրգռուեցան և 15ին առաջարկը Վեննա զրկուեցաւ: Առաջարկութեան յաջորդեցին ուրիշ աւելի ազատական առաջարկներ ալ, բարեկարգութիւն փողովըզական դաստիարակութեան, հաւասարութիւն կրօնից, հաստատութիւն երգուելոց, ազատութիւն սոյազրութեան, ամէն տարի գումարումն աւազափողովոյն, միութիւն Գրանսիրվանիոյ ընդ Մաճառստանի, մասնակցութիւն ազնուականաց հետ յամենայն հասարակաց պաշտամունս, բարձումն ձրի վաստակոց և ուրիշ կալուածատիրական իրաւանց, և անոր տեղ՝ Պետութեան վերաբերեալ մասանց գումար մը վճարել, խորհրդարանական ազատ ընտրութիւն, ազատ սոյազրութիւն և հրատարակումն դատից: Միով բանիւ, ամէն ինքնօրէն ազատութիւն պահելով սոսկ կապակցութիւն մը ունենալ Հապսպուրկի տան հետ: Փրէսպուրկի մէջ այս որոշողութիւնքը եղած ժամանակ,

1. Ըստ կալուածատիրական իրաւանց կային օրեր՝ յորս աշխատաւորք ձրի պիտի ծառայէին ազնուականաց:

Բէշշդի մէջ արդէն յեղափոխութիւնը սկսեր էր. բազմաթիւ երիտասարդք, յորս նաև Բէօտէֆի բանաստեղծը, Եռքայ վիպասանը և Վլազարի ժողովրդական ճարտասանը, տիրեցին տպարանի մը և առանց միտ դնելու տպագրութեան արգելից, տպեցին և հրատարակեցին Մարտի 13ին առաջարկութիւնքը, և այն պահանջից վրայ աւելցուցին, որ Աւագածողովրդ մէջ տարի գումարուի ի Բէշշդ, պաշտօնարանը այն քաղքին մէջ նստի, ազգային պահապան հաստատուի. ինչպէս նաև մաճառ դրամատուն և քաղաքագիտական յանցաւորաց ազատութիւն: Այսպիսի պահանջք եթէ երբևի՛ն և ոչ իսկ ներեալ էին մտածելու յԱւստրիա, հիմա կայսրը այնպիսի պայմանի մէջ կը գտնուէր՝ որ ստիպուեցաւ ընդունելու, և Պալատինեան կոմսը յանձնեց Պաղդիանի հայրենասէր և հռչականուն կոմսին՝ առաջին մաճառ պաշտօնարանը կազմելու, յորում մտաւ Լուդովիկ Քոշուժ՝ Իրամական տնտեսութեան, Լօդվէս՝ Հասարակաց կրթութեան, Չէչէննի՝ Հասարակաց աշխատութեան և Տէպք՝ Արդարութեան: Ժբխտուեցաւ միայն առանձին բանակ մը, և Աւստրիա պահանջից որ Մաճառստան իր վրայ առնու համեմատաբար Պետութեան պարտուց մաս մը: Մինչև հոս ամենայն ինչ խաղաղութեամբ կը համարուէր. այլ Մաճառստանի մեծագոյն մասը բացարձակապէս չէր ուզեր Հապսպուրկի տունէն բաժնուիլ, և կայսրը մեծ ընդունելութիւն գտաւ՝ երբ Ապրիլ 16ին եկաւ խօսարանին աշխատութիւնքը գոցելու:

9. Խուռադք, սլավոնք — Զինուորական սանւմանք ընդդէմ՝ Մաճառստանի: — Սակայն Աւստրիա իրեն մեծ օգնութիւն գտաւ հարաւային սլաւ ցեղերէն, խուռադներէն, սլավոններէն և Զինուորական սահմաններէն, որոնք մինչև այն ատեն մաս մ'էին Մաճառստանի թագաւորութեան և երեսփոխաններ ունէին հունգարացի խօսարանին մէջ: Այս ազգերը զրգոեալ միւս սլաւ ցեղերէն, և զայրացած որ Մաճառստան իր լեզուին միայն կողմնակցութեամբ անտես կ'ընէ միւսներուն ազգայնութիւնը և լեզուն, մինչ դա-

րուս ընդհանուր ոգին էր հաւասարութիւն ազգաց, կը խնդրէին բաժնուիլ Մաճառստանէ և անկախ վարչութիւն մը կազմել կայսերական պաշտօնէի մը իշխանութեան ներքեւ: Նոյն պահանջները կ'ընէին նաև Կրանսիլվանիոյ ուրիշ ցեղեր, այնպէս որ փոխանակ Մաճառստանի ամբողջ թագաւորութիւն մը կազմելու, վախ կար որ բաժնուէին մաճառ թագաւորութենէն բոլոր օտար ազգերը: Մի և նոյն ժամանակի մէջ մաճառ և խոուադ նուիրակութիւն մը կը տառապեցընէին Վեննայի վարչութիւնը. առաջինը կը խնդրէր՝ որ Մաճառստանի հին թագաւորութիւնը ամբողջական պահուի. երկրորդը կ'ուզէր, որ խոուադք, սլավոնք, տալմասք և Ջինուորական սահմանները պետութիւն մի կազմեն՝ անկախ մաճառ պաշտօնարանէն և խորհրդարանէն, և իրենց պահապան զինուորք խոուադ ըլլան: Արքեպիսկոպոսութիւն մը ունենան, բարձրագոյն սահման մը, Բէչդի որոշողութիւնքը ընդունելի ըլլան մինչև որ հաստատութիւն չառնուն յԱկրամ:

Աւստրիա այս ազգային ստեղծութիւնքը կը սնուցանէր իր թշնամիքը սկար վիճակի մէջ պահելու համար, կը ջանար գոհացրնել զխոուադս անուանելով իրենց դո՛ւ զՆլլաչիչ՝ մաճառաց թշնամի և հաւատարիմ արքունեաց անձը, և միանգամայն շատ մը շնորհքներ խոստանալով մաճառաց. սակայն բաժանմունքը եղած կը համարուէր ի մէջ երկուց ազգութեանց, և պատերազմը պիտի որոշէր ապագայ ինչ վիճակ ստանալին:

10. Բրուսիա. Յելլափոխուկութիւն ի Պէլլին: — Ընդ երկար Փրեղերիկոս Գուլիէլմոս Գ ջանացեր էր խոյս տալ ազատական զիջողութիւններէ, վստահ բանակին հաւատարմութեան վրայ կը համարէր՝ որ տակաւին ազատ ուսմանագրութեան մը զանգակը հնչելու ժամը հասած չէր, և անոր համար յետ ցրուելու տեղական սուլագաժողովները, ուրիշ բարձրագոյն շնորհքով մը անոնց կը հրամայէր որոշեալ ժամանակներնուն գումարուիլ: Սակայն Վեննայէն հասած լուրերը ամենայն ինչ կերպարանափոխ ըրեր էին: Քաղաքագիտաւ

կան տեսարանին վրայէն Մէդէոնիքի սնկետանալը արծարծեր էր ամենայն յոյս, ընկերութիւնները և գումարումները օր օրուան վրայ բազմացան, և թագաւորը յայտնի տեսաւ որ հարկ էր տեղիք տալ, սակայն տակաւին կը դանդաղէր: Ամէն օր բազմաթիւ զօրաց գունդեր կը հասնէին ի Պէռլին, որոնք ժողովրդեան կասկածը կը զարթուցանէին: Ամէն կողմէն ձայներ բարձրացան՝ որ հեռացուին այս գունդերը, որոնք ևս զայրացած էին զինուորանոցներու մէջ փակուած մնալնուն և ամբօխէն նախատուելնուն համար: Վերջապէս Մարտի 17ին վերցուեցաւ արգելքը և տպագրութիւնը ազատ հռչակուեցաւ, ներքոյ սնկեալ միայն օրինական կանոնաց: Բազմութիւնը դէպ յԱրքունի պալատը դիմեց, թագաւորը պատուհան երևցաւ և անհամար ծափահարութիւնք և կեցցէներ յաջորդեցին այս երևման: Սակայն հազիւ թէ թագաւորը քաշուեր էր՝ խռովութիւնը սկսաւ, զօրաց դէմ ստեղծութեան պատճառաւ, որոնք բոլոր արքունի պալատը շրջապատեր էին: Ժողովուրդը « ի բաց զինուորները » սկսաւ աղաղակել, գունդերը աւելի բազմացան, շատցան սուելի ամբօխին աղաղակները, և ստիկանութեան նուիրակութիւնը կազմուեցաւ զայն թագաւորէն խնդրելու: Բայց թագաւորը տարբեր կը մտածէր, և հետեակ գունդ մը պալատէն դուրս ելաւ վանելու զժողովուրդը: Այս միջոցիս երկու հարուածք թռան՝ դիպուածով թէ կամօք, ի զինուորաց թէ յամբօխէն չգիտցուիր, բայց անոնց ձայնը նշան մ'եղաւ ապստամբութեան՝: Ամբօխը սկսաւ փախչիլ « մատնութիւն, աղաղակելով, զմեզ կ'սպաննեն, ի գէն »: Երկու ժամ վերջը քաղաքը բոլոր պատնէշներով գոցուեր էր, և պատուհաններէն քարեր կը հօսէին զինուորաց վրայ: Բանակը պատնէշները վերցընելու համար թնդանօթներ բերաւ և հրացաններու հարուածոց շառաչը հնչեցուց բոլոր քաղաքը, կոիւր տեւեց բոլոր

1. Ժողովուրդը հարուածին հրամայող համարեցաւ զԳուլիէլմոս Ի: Խան Բրուսիոյ, յետոյ կայսր Գերմանիոյ, որ և այս դէպքէն զերջը յԱնգղիա փախաւ:

գիշերը փողոցներուն մէջ՝ խաղաղութեան հանդիսին համար պատրաստուած լապտերներով, այնպիսի կատաղութեամբ մը, « որուն նմանը ժամանակակից Գերմանիա տեսած չէ » կ'ըսէ Վէյպէր¹ : Քաղաքացւոց մաս մ'ալ, որոնք ի սկզբան հանդարտ կեցած էին անոնք ալ պատնիշաց քով եղողներուն միացան, և գունդերը հաղիւ քանի մը պատնէշներ ջախջախեր էին : 19ին առաւօտ : սակաւին կռուոյն ելքը անորոշ էր . հըրաւէր մը կպցուեցաւ որմոց վերայ, զէնքերնին թողլու, բայց ի գուր . հարկ եղաւ որ Փրեզերիկոս Գուլիէլմոս ինքնին զիջանի՝ որ ազգային պահպանք հաստատուին քաղքին և պալատին պահպանութեան համար և գունդերը փողոցներու մէջէն քաշուին, ներուձն շնորհուի քաղաքական յանցաւորաց, ինչպէս նաև այն գունդերուն՝ որոնք ժողովրդեան կողմը բռներ էին, պաշտօնեայք պաշտօնընկէց ըլլան և նոր պաշտօնարան մը կազմուի : Հայիւ գունդերը քաշուեր էին՝ ամբոխը մեռելոց դիակները սայլի մը վրայ լեցուցած թմբուկով պալատին գաւիթը բերաւ, և սկսաւ սպաղակել որ թագաւորը երևայ : Նոր պաշտօնեայք երեցան ամբոխը հանդարտեցընելու, թագաւորը զարհուրած և գլխիբաց երեցաւ ամբոխին թագուհւոյն հետ, որ դիականց տեսքէն մարեցաւ : Թագաւորը ուղեց խօսիլ, բայց ամբոխը ձայնը գոցեց աղաղակելով՝ որ վար իջնայ և ողջունէ դիակները, զոր խոնարհարար կատարեց . և կռուոյն մէջի վիրաւորք արքունիք բերուեցան, որպէս զի թագաւորը և թագուհին զանոնք խնամեն :

11 . Փրեզերիկոս Գուլիէլմոս Գ կը խոստանայ Սանմանադրուծիւն : — Մարտ 20ին, քաղաքական պահպանք կազմուեցան, նոյն օրը երեցաւ նաև ներումը . « Երէկ, կ'ըսէր թագաւորը, հրատարակեցի որ սիրտս ամենայն ինչ մոռցեր էր, բայց որպէս զի գիտցուի թէ այս ներումը ամբողջ ժողովրդեանս համար է, և տըխուր յիշատակներով շխուովելու համար այն ապագայն որ կը սկսի մեր հայրենեաց համար, ներումն կը

1 . Պոմբ . ժամանակակից 1848 ի իրուոխա :

հրատարակեմ նաև անոնց, որոնք հալածեալ կամ դատապարտեալ են քաղաքական յանցանքներով» : Այս հրովարտակին վրայ բանտերը բացուեցան, արձակուեցան նաև քիչ առաջ դատապարտեալ լեհ դաւադիրք, որոնք փութով Փոզէն դիմեցին՝ հոն նորէն իրենց հայրենակիցքը գրգռելու ընդդէմ Գերմանիոյ : Գուլիէլմոս աւելի յառաջեց : Իր նախկին ազատութեան դէմ թշնամութեան՝ յաջորդեցին մեծամեծ գաղափարք, ինքզինքը գլուխ հրատարակեց բոլոր Գերմանիոյ այս ազատական շարժման, և գերմանական գոյներով պծնեալ ձիաւոր ելաւ ժողովրդեան դիմաց, պատուիրուեցաւ՝ որ բանակը Բրուսիոյ դրօշին հետ Գերմանիոյ դրօշն ալ կրէ, կը խոստանար, որ փութով գումարել պիտի տար գերմանական խօսարան մը : Բրուսիա այս վայրկենէս կը ձուլուէր ի Գերմանիա, որուն ազատ վարչութիւն մը պիտի տրուէր : Սակայն այսպիսի մեծ յուզման մը ժամանակը տակաւին հասած չէր և անկարելի իսկ : Ժողովուրդը արդէն վարժ թագաւորին երկմիտ բարուց՝ բնաւ կարևորութիւն և հաւատք չընծայեց այս նոր և յաճախ կրկնեալ բանից. նա մանաւանդ կը հռչակուէր քաղքին մէջ որ Բրուսիոյ իշխանը, եղբայր թագաւորին՝ յետոյ Գուլիէլմոս կայսր, որ կռուոյն զայրանալուն յանցաւորներէն մէկը կը համարուէր, և որուն պալատը հազիւ փրկեցաւ ի սպառսպուռ աւերածէ մը, Ռուսաց բանակով մը մայրաքաղաքին վրայ կը դիմէ :

Փութով ժողովուրդը քաղքին դրանց դիմաց պատնէշներ բարձրացուց, և Պաշտօնարանը զբնակիչս համուզելու համար բռնադատուեցաւ մնացած զինուորները ևս քաղքէն դուրս հանել : Մարտ 22ին անկելոց յուղարկաւորութիւնը կատարուեցաւ, և մեռելոց դագաղները ծանրութեամբ անցան թագաւորին պատուհանին դիմացէն, ուր ինքը կեցած էր և թաղուեցան պատնէշները պաշտպանողաց ձեռամբ պատրաստեալ գերեզմանի մը մէջ : Ապրիլի մէջ գումարուեցաւ վերջին անգամ տեղական աւագաժողովքը՝ ընտրական օրինաց քուէարկութեան համար, որով յետոյ ձևացաւ

Բրուսիոյ Ազգային ժողովը: Եւ Սահմանադիր ժողովը առ ժամս միտքերը զբաղեցուց առանց զանոնք հանդարանցընելու: Իսկ իրեն առաջարկած սահմանադրութիւնը ուրիշներու նման լի էր ազատական խոստմունքներով. խօսարանք, իրաւունք գումարելոյ, պատասխանատուութիւն պաշտօնէից և որ ըստ կարգի, որոնք մաս մը գոհացուցին զժողովուրդը և մաս մ'ալ զայրացուցին: 23ին, 26ին, 30ին քաղաքին մէջ մեծ խռովութիւնք ելան, կրկին պատնէշները բարձրացան, ժողովուրդը յարձակմամբ առաւ զինարանը և ձեռք բերաւ բոլոր զէնքերը. խօսարանն իսկ իր կողմանէ պետութեան առաջարկածէն աւելի ազատական սահմանադրութիւն մը կը պահանջէր: Քիչ օրուան մէջ Պէռլին փոխուեր էր, շատ մը հարուստ ընտանիք քաղաքէն մեկնելով՝ վաճառականութիւնը փնասուեր էր և աղքատութիւնը շատցեր էր: Ստէպ պաշտօնեայք կը փոխուէին և պաշտօնարաններ մէկմէկու կը յաջորդէին տարբեր սկզբունքներով, որոնց ամենուն հաւասարապէս թագաւորն ալ կը հակամիտէր յոչ կամս: Թագաւորք և իշխանք իրենց ազդեցութիւնը չկորսընցընելու համար՝ նախ մտածեւ էին միաբան իշխանաժողով մը գումարելի Տրէպտա, վասն զի հին Աւագաժողովը ալ բնաւ ազդեցութիւն մը չունէր, սակայն իշխանք ևս Բրուսիոյ մէջերնին երկպառակ էին, և պահանջը ընդհանուր Գերմանիոյ վրայ մեծապէս զայրացուցեր էր միւս իշխանքը մանաւանդ զԱւստրիա. և աւստրիացի լրագիրք ստէպ նախատական ակնարկներ կ'ընէին Փրեզերիկոս Գուլիէլմոսի փառասէր խորհրդոց և Յեղափոխութեան միաբանելուն վրայ: Այսպէս եթէ թագաւորք և եթէ Աւագաժողովը անկարող ըլլալով, ամէնը կը մնային Ֆրանքֆորդի Պատրաստիչ ժողովոյն, որ կը կազմուէր ի նուիրակաց բոլոր Գերմանիոյ, և որ հին Աւագաժողովոյն տեղ պիտի հաստատէր գերմանական ընդհանուր խօսարանը:

12. Գերմանական Պետութիւնք:— Որչափ որ գերմանական հին աւագաժողովը, որ միշտ ամբարտակ մ'եղեր էր ընդդէմ ամենայն նորութեան, Գաղղիոյ

յեղափոխութեան լրոյն վրայ՝ ինքն ալ ոգիները հանդարտեցընելու համար փութացեր էր հրատարակելու Մարտ 2ին, որ « իւրաքանչիւր վիճակ իշխանութիւն ունէր վերցընելու տպագրութեան արգելքը և ազատութիւնք տալ », այսու հանդերձ յեղափոխութիւնը իր արդիւնքը ունեցեր էր ի Տրանքֆորդ, Համպուրկ, Լիւպէք, Պատէն, Պրունշվիք, Վիզպատէն, Վայմար, Տարմշդատ, Հանաւ, Քարլսրուհէ, Շտուտկարտ, Կէօդինկէ, Օլտէնպուրկ, Միւնիխ, Լայպցիկ, ժողովրդոց գոհութեան կամ տոգոհութեան համեմատ. և որչափ լուրերը կը հասնէին այնչափ ոգիները աւելի կը գրգռուէին: Ի Պավիէրա արքայն Լուդովիկոս հարկ եղաւ՝ որ հասարակաց կարծեաց տեղիք տայ, և հրաժարեցաւ գահէն ի նպաստ իւր որդւոյն Մաքսիմիլիանոս Բի¹: Նոյնը ըրաւ նաև Հեսսէ Տարմշդատի ծեր դուքսն ալ: Ընտրական Հեսսէի մէջ՝ Վեփփերման տււպագրութեան յանցանաց մը ամբաստանեալ ըլլալով, պաշտօնեայ անուանուեցաւ: Այլ նմանօրինակ դէպքեր պատահեցան ուրիշ իշխանութեանց մէջ, և իշխանք բռնադատուեցան իրենց վարչութեան սահմանադրական և ռամկավարական կերպարանք մը տալ. սակայն տեսնուեցաւ միանգամայն փութով ևս, որ ազատական գաղափարք բաւական չէին ժողովրդեան մը վէրքերը բռնկելու. տպագրութեան ազատութեան հմայիչ անունը, տեղական պահապանք, սահմանադրութիւնք ոչ ինչ էին՝ եթէ ժողովուրդը կորսնցընէր իշխանութեան բարոյական գաղափարը, և սահմանադրութեան մը գործածութեան համար պէտք է, որ նախ ոգիները զայն գործածելու վիճակի մէջ ըլլան: Բոլոր Գերմանիոյ համար ազատական տարեբքներէ կազմեալ Ազգային ժողովք մը կազմելու գաղափարը՝ առանց խտրութեան կրօնից և դասու՝ բաւական չեղաւ գոհացընելու զծայ-

1. « Երբ օրէնքը այնչափ կ'արհամարհուի, բսեր է հրաժարած ժամանակ, որ ժողովուրդը բռնի կը մտնայ իր թագաւորին պալատը, այն աստն ամենէն աղէկն է հրաժեշտը տալ և մեկնիլ »:

րայեղս, որոնց գլուխ կեցած էին Հէքքեր և Սղուվ և այլք, որք խորհուրդ կուտային յեղափոխութեան մը դիմել: Առաջարկեցին, որ այս ժողովը մշտամնաց ըլլայ և ջնջուի աւագածողովը, բայց բազմութիւնը հակառակ ըլլալով, բաժնուեցան և յեղափոխական յուզմունքներով ոտք հանեցին զբարձր Պատէն: Սակայն այս հասարակապետական ապստամբութիւնք եքք մը չունեցան: Քանդէնի պատերազմէն վերջը, յորում մեռաւ Դաշնակցութեան քաջ զօրավարն Փրեդերիկոս Կակէն և յետ Տոսէնպախի, կամաւոր զինուորք, որոնց հետ միացած էին շատ մը օտարազգի հասարակապետականք և գերմանացի աշխատաւորք՝ եկեալք ի Գաղղիոյ, ցրուեցան անգլուխ, և ապստամբութիւնը լմնցաւ:

13. Տանիմարքա. — Խնդիր յաջորդուեամնց. Իրքուովիւնք: — Մեծամեծ յուզմունք և արիւնահեղ մըրցմունք կը վրդովէին նաև Գերմանիոյ հիւսիսային սահմանքը: Տանիմարքայի Քրիստիանոս Ը ծեր էր, և իր որդին Փրեդերիկոս Է տղայ չունէր, որով թագաւորութիւնը յետ իր մահուան իգական ձիւղին պիտի անցնէր: Արդ ըստ աւանդական օրինաց պետութեան, հարկ էր որ Շլէզվիկ Հոլշտայն դքսութիւնքը արական երկրորդ ձիւղին անցնէին, որուն գլուխն էր Աւկուստէնպուրկի դուքսը, ասով դքսութիւնը հարկ կ'ըլլար որ բաժնուէր Տանիմարքայէն: Այս պատճառաւ Քրիստիանոս Ը հրատարակեր էր՝ որ դքսութիւնքը Տանիմարքայի ամբողջացուցիչ մասն կը կազմեն: Քրիստիանոս Ը մեռնելով, իր որդին նոյն օրը հրատարակեց, որ կ'ուզէր Տանիմարքայի և դքսութեանց միաբան սահմանադրութիւն մը տալ՝ որ 26ին հրատարակուեցաւ, որով երկու պետութեան ժողովք կը հաստատուէին 50 երեսփոխաններով, յորոց 26 ի Տանիմարքայէ և 24 Դքսութիւններէն, ասոնցմէ 16ը թագաւորը, ինքը պիտի անուանէր, միւսները անուանեալ էին ի հարուստ կալուածատեարց, յեկեղեցականաց և յազնուականաց: Այս բանիս դէմ բողոքեցին թէ Տանիմարքա և թէ Դքսութիւնք: Քիչ վերջը Փետրուարի յեղափոխութեան լուրը տարածուելով, Տանիմարքա-

Աւրել

1848
Յունուար
21.

ցիք աւելի ազատական սահմանադրութիւն մը պահանջեցին՝ միանգամայն խթանելու իրենց միութիւնը: Այն ատեն դքսութեանց ատեանք ոտք ելան բողոքելով, որ իրենք գերմանական դաշնակցութեան մաս կը կազմեն, և Առժամանակեայ վարչութիւն մը հաստատեցին, գլուխ անուանելով զՔուլտիէլմոս Պէսէշէր և բանուեցան ի Տանիմարքայէ: Ասիկայ նշան մ'եղաւ պատերազմի: Գերմանիա յանձն առաւ պաշտպանելու զդքսութիւնները ընդդէմ Տանիմարքայի, և Փրեդերիկոս Գուլտիէլմոս ազատական խրախոյս մ'ազդեց անոնց. սակայն Շլէզվիկ Հոլշթայնի փոքր բանակը Պալի

9 Արիւ քով յաղթուելով ցրուեցաւ: Կոր կամաւոր զինուորք ի Արիւ 23. Բրուսիոյ և ուրիշ Գերմանիոյ իշխանութիւններէն՝ կըռուոյն նոր կերպարան մը սուլին. Վաանկէլ բրուսիացի զօրավարը վանեց յաղթութեամբ զՏանիմարքացիս մինչև յԵուզլանդ, սակայն նաւատորմիդ մը չունէր պատերազմէն շահածը հաստատուն պահելու, և միանգամայն Բրուսիոյ վարչութիւնը, որուն յանձնուած էր գլուխ կենալ գործոյն, Ռուսիոյ, Եուէտի և Անգլիոյ հակառակ ազդեցութենէն բռնադատուած ստիպուեցաւ՝ յետ Ծըլենսպուրկի մուեգին կռուոյն՝ դաշնադրութեան մը զիջանիլ Տանիմարքայի հետ, որով Շլէզվիկ կը թողուէր այն վիճակի մէջ ինչպէս որ էր պատերազմէն առաջ, և երկու բանակները ձգեցին զխթանելու իրենց միութիւնները՝ որ անկէ վերջը պիտի կառավարուէին հինգ անձանցմէ, յորոց երկուքը ընտրեալ ի Տանիմարքայէ և երկուքը ի Բրուսիոյ, և որոնք պիտի ընտրէին զնախագահը: Բրուսիական Փոգէնի մէջ ալ լեհ բնակիչք՝ վստահացեալ ազատական ոգւոյն վրայ՝ ազգային անկախութեան դրօշը կանգնեցին, և չխոնարհեցան Բրուսիացի բանակին՝ բայց եթէ յետ արիւնահեղ և անգուլթ մրցմունքներու երկու կողմէն ալ:

1848
Օգոստոս
26.

ԳԼՈՒԽ Լ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՔ Ի ՖՐԱՆՔՅՈՐԴ՝

1. Սահմանադիր Ազգային ժողովք ի Ֆրանքֆորդ. — 2. Սահմանադրութիւն. — 3. Արտաքին խնդիրք. — 4. Բրուսիա և Ֆրանքֆորդի խորհրդարանը. — 5. Աւստրիական խօսարան. — 6. Ապստամբութիւն ի Վեննա. փախուստ կայսեր. — 7. Վիեննայի կրօն կը պաշարէ զՎեննա և կը տիրէ. — Գլխապարտութիւնք. — 8. Ազգային ժողովք ի Պէռլին. — 9. Աւստրիա, խորհրդարան ի Քրէմսիէն. — Հրաժարիլ Փերտինանտոս Դի. — 10. Փրանկիսկոս Յովսէփ կայսր — Սահմանադրութիւն. — 11. Խորհրդարան Ֆրանքֆորդի. Աւագ և կրտսեր գերմանացիք. — 12. Նոտիրակք կայսերական թագի առ Փրեզերիկոս. — 13. Ֆրանքֆորդի ժողովք Տանիմարքայի և Դքսութեանց խնդրոյն մէջ. — 14. Յեղափոխութիւն ի Տրեզտա և յայլ տեղիս Գերմանիոյ — Վերջ Ֆրանքֆորդի ժողովոյն. — 15. Դաշինք Իրից թագաւորաց — Խորհրդարան Էսթրադի — Աւագածոյով Ֆրանքֆորդի — Տեսակցութիւն յՕլմից :

1. Սահմանադիր սպագայիս ժողովք ի Ֆրանքֆորդ : — Անցեալ գլխոյ մէջ պատմեալ պատահարաց հանդիպած ժամանակ՝ արդէն գումարուեր էր գերմանական ընդհանուր ժողովը ի Ֆրանքֆորդ քաղաքացուցութեան երեսփոխաններէ, և սկսեր էր իր ազատական բարեկարգութիւնքը : Ֆրանքֆորդի սահմանադիր ժողովը իրեն նպատակ առած էր Գերմանացւոց ազատ վար-

1. Գերմանական Սահմանադրութեան Պատմութեան մէջ մեծաւ մասամբ առաջնորդ առած ենք մեզ զՎէպէր, նշակահուն պատմադիրը, դարձեալ ժամանակի լրագիրները :

չութիւն մը տալ, և զՔերմանիա միակ մարմին մը կազմել օտարաց դիմաց ոյժ մ'ունենալու համար, բայց այս նպատակին հասնելու միջոցին վրայօք անհամար արգեթքներ դիմացը կ'ելլէին զանազան կարծեաց պատճառաւ, որով և ժողովը շատ դանդաղութեամբ կը յառաջէր: Ծանր խնդիրներէն մէկն եղաւ կեդրոնական իշխանութեան մը կազմութիւնը. եթէ հասարակապետութիւնը ընդունելի չէր բազմութեան, հարկ էր ուրեմն իշխանութեան անձնաւորութիւն մը տալ: Առաջարկուեցաւ տեսչական վարչութիւն մը հաստատել, կամ եռապետութիւն մը յերից անձանց՝ յորոց մին առաջարկէ Աւստրիա, միւսը՝ Բրուսիա, և երրորդը՝ Քերմանիոյ փոքր և միջակ պետութիւնները. և ասոնք գործեն միարանութեամբ ժողովրդեան երեսփոխանաց: Առաջարկուեցաւ գլուխ անուանել Քերմանիոյ կամ Աւստրիոյ կայսրը, և կամ Բրուսիոյ թագաւորը, կամ ուրիշ անգոր իշխան մը, և վերջապէս միացան մէկ միայն առժամանակեայ գլուխ մ'անուանելու մինչև սահմանադրութեան կազմութիւնը, փոփոխութիւններէն տիտղոսով, Քերմանիոյ արքայազուն ցեղէ մէկը. և ընտրութիւնը վիճակեցաւ Աւստրիոյ Յովհաննէս արշիդքսին, ծանօթ իր ազատասէր սկզբամբք, որով Ազգային ժողովոյն նախագահը յանձնեց ժողովոյն իշխանութիւնը կայսրութեան փոխանորդին, որ փութով անուանեց իր պատասխանատու պաշտօնեայքը:

2. Սահմանադրութիւն: — Փոխանորդին ընտրութենէն վերջը՝ ժողովքը և նոյն իսկ կուսակցութիւնք որոշեալ գոյն մը և ձև մը ստացան, և Յուլիս 4ին սկսան գերմանական ժողովրդոց իրաւանց վրայ վիճարանութիւնք մեծ եռանդեամբ, որոնք երկար տևեցին և շատ անգամ ընդհատեցան զանազան դէպքերէ: Ժողովուրդը, որ արդէն ինքնին ձեռք բերեր էր այս ազատութիւնքը, անհամբեր կը սպասէր այն ստացուածքին իրաւանց կարգ անցնիլը տեսնել, և երեսփոխաններէն ոմանք կ'առաջարկէին փութով լմնցընելու ամէն խընդիր, ընդդէմ գերմանական բարուց և սովորութեան: Սակայն յապաղումը այն ելքը ունեցաւ, որ երբ հը-

բատարակուեցան այս հիմնական իրաւունքները, Պետութեանց ոմանք նախկին տկարութենէն զօրացած, շուտ վեցին ընդունել զասոնք և յապաղեցին անոնց գործածութիւնը: Հիմնական իրաւունքները կը ճանչնային անձնական ազատութիւն, ստացուածոց ապահովութիւն և հաւասարութիւն իրաւանց ամենայն Գերմանացւոց՝ բարձմամբ դասուց, խտրութեանց, իրաւունք գումարելոյ և ընկերութեանց, հաւասարութիւն կրօնից, կրթութիւն և տպագրութիւնը ազատ յամենայն անպատշաճ հալածանաց: Երդուեալք ալ պիտի վճռէին յետ յայտ յանդիման վիճաբանութեանց, և ապա ասոնք անչափ դատաւորութեան մը հետ միաբան պիտի կազմէին իրաւունք մը ըստ ոգւոյ ժամանակին, և վերցուեցաւ նաև պատժոց մէջէն մահը:

Հիմնական իրաւունք ըստ ինքեան ազատ սահմանադրութիւն մը կրնային համարուիլ՝ եթէ պետութիւնք զայն մատակարարելու ժամանակ այլ և այլ մասեր չյապաւէին:

3. Արտաքին խնդիրք: — Հիմնական իրաւանց վիճաբանութիւնք այլ և այլ անգամ ընդհատուեցան արտաքին խնդիրներէ: Ժողովոյն մաս մը ազատական ոգւոյն վառուած ժամանակ՝ առաջարկեց Քաղղիոյ հետ պաշտպանողական և վանողական դաշինք մը դնել, և օգնութեան դիմել Հռենոսէ անդին գերմանական ժողովրդոց: Սակայն ժողովոյն մեծ մասը վճռեց չընդմիջել օտար ազգաց խնդրոց մէջ, և գոհ եղաւ ճանչնալ միայն Քաղղիոյ Հասարակապետութիւնը և գերմանական դեսպան մը ղրկել: Աւստրիա — իտալական կռուոյն վիճաբանութեանց մէջ ձախակողմեանք ուզեցին պաշտպանել ամէն ազգաց ինքնիշխանութեան սկզբունքը, և պահանջեցին որ պատերազմը խափանուի, սակայն բազմութիւնը Ռատովիցի պերճախօսութեամբ համոզեալ, կարևոր համարեցաւ Գերմանիոյ ապահովութեան համար Աւստրիոյ տիրապետութիւնը մինչև ի Մինչիօ, և երբ առաջինք կը պահանջէին՝ որ գոնեայ Տրիտենդոն թողուի իտալիոյ, Ռատովից կը ցուցունէր որ տան մը դուռը յանձնել ըսել էր այս:

Սակայն, ժողովը միաձայն հաւանեցաւ որ Լիմպուրկ դքսութիւնը, որ մինչև այն ատեն մասն էր Գերմանիոյ, չմիանայ Ստորին Նազանգաց վարչութեան հետ, թէ և բռնադատեալ չէր անոր պարտուցը հաղորդակցելու: Մեծ վէճ ծագեցաւ նաև, որ արդեօք Չէքք և Պոհեմք պիտի մասնակցէին այս ժողովոյն արդեանց, և խնդիրը Աւստրիոյ թողուեցաւ. դարձեալ թէ ժողովը պիտի ընդունէր Փոզէնի այն մասին երեւփոխանքը՝ որոնք Գերմանիոյ մասն կը կազմէին: Չախակողմեանք յարմար ժամանակ կը համարէին Լեհաց վրայ ունենեցած համակրութիւննին ցուցունելու, և զԼեհաստան ազատ իշխանութիւն մը հաստատելու: Առնուլտ Ռուժիլընց պերճախօսը մեծապէս պաշտպանեց զԼեհս, որոնք իրենց հայրենեաց սէրը ցուցունելու համար՝ միշտ բռնադատեալ էին ծայրայեղ և մինչև արիւնահեղ միջոցներու դիմելու: Բայց այս արդարացումը բաւական չեղաւ, տակաւին ամենուն մտաց մէջ կենդանի էր Լեհաց գործած անգթութիւնքը ի Փոզէն ընդդէմ Գերմանացւոց, զորս հիմա ազատ ազգ մը կ'ուզէր կազմել Ազգային ժողովքը. և Լինքնովքի իշխանը բազմութեան կողմանէ յանդիմանեց զԼեհս, որոնք միշտ պատնիշաց առաջին գծին վրայ կը գտնուէին. պարսաւ մը, որ ըստ մտաց ազատականաց պարծանք մը կը կազմէր: Ի դուր լեհ երեւփոխանը՝ արգարութեան կը բողոքէր, ի դուր կը ջանար յուզել զժողովը յիշելով իրենց «անպատմելի տառապանքները», երբ Եորտան՝ Պէռլինոյ հռետորը, որ մինչև այն ատեն Չախակողմեանց մէջ էր, ելաւ պաշտպանելու Փոզէնի Գերմանացիքը, և զօրաւոր ճարտասանութեամբ ցուցուց, որ որչափ անիրաւ և նախատական էր իրենց գերմանացի եղբարքը մատնել օտար ազգի մը, որ իրմէ դուրս զամէնը ռիսերիմ թշնամի կը նկատէր, երբ նկարագրեց որ՝ Լեհաստանի պառակտման պատճառ իր ապականութիւնն էր և բարուց անկումը, և թէ Գերմանացւոց տիրապետութիւնք Վիսդուլայի և Վարտի վրայ, չէին տիրապետութիւնք սրոյ՝ այլ արօրի, երբ ըսաւ, որ մինչ կը կարծուէր զԼեհաստան պատուար մը կանգնել ընդդէմ

Ռուսաստանի, վախ կար Ռուս—լեհ դաշնակցութեան մը: Այն ատեն յայտնի էր վիճարանութեանց ելքը: Որոշուեցաւ, որ Գերմանական Փողէնի 12 երեսփոխանք ընդունելի ըլլան, և գուշառը երկու մաս բաժնուած մնայ: Մերժեց նաև այն առաջարկութիւնը՝ զոր Չախակողմեանք կ'ընէին. « Լեհաստանի բաժանմունքը ամօթալի դժբաղդութիւն մը հռչակել », ըսելով որ ասիկայ պատմական պատահար մ'էր, որուն վրայ ժողովքը չէր կրնար դատողութիւն մ'ընել:

4. Բրուսիա եւ Ֆրանքֆորդի Խորհրդարանը: — Խորհրդարանը իր որոշողութեանց մէջ յառաջելու ժամանակ բնաւ չէր նկատեր, որ արդեօք իր որոշողութիւնքը ինչ ազդեցութիւն ունէին իրեն միացեալ պետութեանց մէջ, որոց վրայ ինքնաճնար իշխանութեամբ մը բարձրագոյն տեսուչ մը դրեր էր՝ Փոխանորդ կայսրութեան տիտղոսով: Փէոքէր՝ այս կայսրութեան պատերազմի պաշտօնեայն՝ հրամայած էր, որ գերմանական ամենայն բանակ պիտի հնազանդի Փոխանորդին, յայտնի է որ այսպիսի հրաման մը բացարձակապէս յանձն չէր առնուր Բրուսիա, և ամենայն որոշողութիւն ի Ֆրանքֆորդ խոժոռ աչքով կը նկատուէր ի Բրուսիա, ուր ոգիները փոխանակ միաբանելու աւելի կը պառակտէին: Օգոստոսի 7ին Ազգային ժողովքի մը մէջ Չախակողմեանք առաջարկեցին՝ անդամ ընդունելու նաև զՀէքքէր Փրեդերիկոս՝ ընտրեալ ի Դիէնկէն: Այլ Ալակողմը բնականապէս չէր կրնար ընդունիլ յեղափոխութեան մը յուզիչը: Այն ատեն Պրենդանօ երեսփոխանը համարձակեցաւ ըսելու, որ նոյն վիճակի մէջ կը գտնուէր նաև Բրուսիոյ իշխանը, ուր Պատէնի կամաւոր զօրաց գլուխ կեցեր էր: Այս խօսից վրայ մեծ յուզումն և շփոթութիւն ծագեցաւ, մաս մը կ'աղաղակէր որ ճարտասանը ի կարգ կոչուի, ուրիշները հակառակ կը գոչէին. հարկ ելաւ որ նիստը վերցուի: Բայց երկրորդ օրը նոյն խռովութիւնը կրկին սկսաւ՝ երբ նախագահը զՊրենդանօ կոչեց ի կարգ. և այնքան սաստկացաւ աղաղակը և շփոթութիւնը մինչև բռնադատուեցաւ առ կախ թողուլ նիստը, բազմոցներէն դուրս հանել տալու համար զամբոխը:

Այս հանդիպած ժամանակ՝ միանգամայն ի Ֆրանք-
 ֆորդ ևս մեծ էր տեղադրութիւնը ընդդէմ Բրուսիոյ,
 որ ինքնագլուխ առանց Ֆրանքֆորդի խորհրդարանին
 հարցընելու՝ լմնցուցեր էր Շլէզվիկի և Տանիմարքայի
 խնդիրը, և Միացեալ գաւառաց վարիչ խրկուեր էր ի
 Տանիմարքայէ կոմսն Կարոլոս Մոլդթէ՝ մեծ պաշտպան
 միապետական վարչութեան: Արդ սղգային ժողովք ի
 Ֆրանքֆորդ կ'ուզէր ոչնչացրնել Բրուսիոյ գործածը, և
 հազիւ յետ եռանդուն և շփոթալից վիճարանութեանց
 ընդունելի եղաւ Մալմսէի զինադադարումը՝ աջակող-
 մեանց յորդորանօք: Սակայն խռովայոյզ մասը իրեն
 պատեհ առաւ այս որոշողութիւնը՝ Խորհրդարանին հա-
 րուած մը սալու համար, և զժողովուրդը ոտք հանեց
 Ազգութեան անուամբ: Մակոնցայէն զինուորք հասնե-
 լով խռովութիւնը աւելի մեծցաւ, մէկէն պատնէշներ
 բարձրացան. թէպէտ սպասամբութիւնը փութով ընկ-
 ձուեցաւ, սակայն զոհ եղան ժողովրդեան կատաղու-
 թեան անուանի կոմսն Լիննովլքի և զօրավարն Ավէրու-
 վալտք, որոնք քաղթէն փախչելու ժամանակ պարտիզպա-
 նի մը տուն սպաւիններ էին. հոն ճանչցուելով դուրս
 քաշուեցան և սպաննուեցան յետ դառն տառապանաց:
 Սեպտեմբերի այս ահաւոր օրերէն վերջը՝ Խորհրդա-
 րանին մէջ պառակտումը և թշնամութիւնքը աւելի զայ-
 րացան ի լուր Շմէրլինկ պաշտօնարանին: Նախագահը
 դժբաղքը պաշարման վիճակի մէջ դրաւ, և օրէնք հաստա-
 տեց Խորհրդարանին պաշտպանութեան համար, ինչպէս
 նաև դատակոչումն ընդդէմ ժողովոյն ապստամբեցուցիչ
 երեսփոխանաց. այս որոշողութիւնքը աւելի զայրացու-
 ցին ռամկավար մասը: Այն օրուրնէ ամենայն կուսակ-
 ցութիւնք ջանալով հակառակ մասին զօրութիւնը տը-
 կարացրնել, ջանացին ի դերև հանել ո՞ր և իցէ ընդհա-
 նուր միաբանութեան գաղափար ի Խորհրդարանի. ընդ
 հուպ վրայ հասնելով Պէռլինու և Վեննայի պատահարք
 մեծագոյն հարուած մ'եղան ժողովոյն:

5. Աւստրիական խորհրդարան: — Մայիսի մէջ
 Սահմանադիր ժողովոյն ընտրութիւնք եղեր էին, և Յու-
 լիսին ժողովը բացուեր էր՝ մինչ տակաւին Կայսրը
 յինսպրոգ կը գտնուէր:

Երեսփոխանք ընդ ամէնը 383 էին, Աւստրիոյ ինքնակալութեան ամէն կողմէն եկած Գերմանացիք, Չէքք, Սերպ-Խռուաղք, Սլաւոնք, Լեհք, Ռուդէնք, Իտալացիք (Երեսփոխոյ), Վալաքիացիք (Ի Պուքովինոյ), և յորոց շատերը՝ մասնաւորապէս Ռուդէնք և Կալիցիացիք և ոչ իսկ գերմաներէն գիտէին, անոր համար գերմանասէր լրագիրք «Բարբարոսաց արշաւանք» անուանեցին զԽորհրդարանը, յորում գերմանական տարերքը ամենէն նուազն էր. և անոր համար առաջին խնդիրն այն եղեր էր՝ թէ որ լեզուով պիտի խօսուէր, և որչափ որ սահմանուեցաւ գերմաներէնը, այսու հանդերձ մէկը չհամարձակեցաւ զայն պաշտօնական լեզումը անուանել: Չէքերն և Ռուդէնք՝ աջակողմը կը կազմէին, Գիրուցիք՝ պահպանողական, Աւստրիացիք և Շրվուարց Կէլքք՝ զկեդրոնը, իսկ ձախակողմը կը բռնէին Գերմանացիք և Ռամկավարք: Այստեղ ընտրուեցաւ Վեննայի փաստարան մը Շմիտ, փոխաննախագահք Սդրոչպախ չէքը, Սմոքա լեհը: Խորհրդարանին բացումը ըրաւ Յուլիս 22ին Յովհաննէս արշիդուքը՝ կայսեր բացակայութեան պատճառաւ, բայց քիչ վերջը կանչուեցաւ Ի Ֆրանքֆորդ, ուր Փոխանորդ կայսրութեան անուաններ էր, այն ատեն կրկին անգամ Խորհրդարանը հրաւիրեց զկայսրը, որ Սգոստոս 12ին հանդիսաւոր մուտք ըրաւ Ի Վեննա՝ պար սուեալ յազգային պահպանոց: Այս ժամանակիս մէջ Խորհրդարանը յանձնաժողով մը անուաններ էր՝ նոր սահմանադրութիւն մը կազմելու, և զիւղացուց վերաբերեալ խնդիրը առաջին եղաւ, որուն համար սպառնական, երկար և ջերմ կռիւք յարեան. որովհետեւ Խորհրդարանին մէջ շինականաց մասը աւելի բազմաթիւ էր: Վերջապէս Սգոստոսի վերջը ժողովքը քուէարկութեամբ վերցուց ձրիաշխատանքը՝ 274 քուէով ընդդէմ 125ի, և անոր փոխարէն իւրաքանչիւր գաւառ սահմանեալ փոքր գումար մը պիտի վճարէր:

6. Այստեամբուծիւն Ի Վեննա. Փախուստ կայսեր: Այս վիճարանութեանց միջոց քաղաքը մեծ յուզման մէջ էր. հարուստներուն քաղքէն քաշուելով նուազեր

Օրոշում
23.

էին աշխատութիւնքը, և գործաւորք՝ որոնք օրական աշխատութեամբ միայն կ'ապրէին յետին խեղճութեան մէջ, ինքնայոժար մտիկ կ'ընէին զիրենք յուզող ուսուցիչաց: Պետութիւնը իր դրամական վիճակին մէջ կարող չէր հասարակաց աշխատութիւններ առաջարկել, նոյն պատճառաւ Շուարցէր պաշտօնեայն աշխատաւորաց օրական թոշակը նուազցուց: Այս լրոյն վրայ ամբոխը ժողուեցաւ ի Փրադէր, և յետ այրելու պաշտօնէին կաւիճէ արձանը, դիմեց դէպ ի քաղաքը ազդակներով և դրօշներով: Ղամբան ազգային պահապանաց ջոկատի մը հանդիպելով արիւնհանել կոխ մը սկսաւ, յորում վեց գործաւորք ընկան և երկու կողմէն բազմաթիւ վիրաւորք եղան: Պետութիւնը ցըրուեց փութով Ապահովութեան ժողովը, որ Մարտին հաստատուեցէր, և ամբոխը կը պահանջէր, որ Լադուր, Շվարցէր և Ալեքսանդր Պախ պաշտօնեայք՝ պաշտօնընկէց ըլլան: Ազգային ժողովը այս խռովութեան միջոց ինքզինքը մշտամեաց հուշակեց, բայց քաղքին մէջի եղած խռովութեանց արձագանգը իր ծոցոյն մէջն ալ ունենալով, բնաւ չկրցաւ ազդեցութիւն մը ունենալ, և ուսկաւարք կը պահանջէին հասարակաց Ապահովութեան հաստատուիլը, և բոլոր ուսկաւարական ընկերութիւնք կեդրոնական ժողով մը կազմեցին:

Այս յուզմանց միջոց հասնելով Մաճառաց նուիրակութիւնը՝ որք իրենց դասը կ'ուզէին պաշտպանել ի Խորհրդարանի, աւելի գրգռեց ոգիները: Վեննայի ուսկաւարքմեծ փառաւորութեամբ ընդունեցան զՄաճառս, և իրենց խոստացան ամենայն եղբայրական օգնութիւն: Կոմսն Լամպերկ, որ ի Մաճառստան զրկուեցէր իբրև կայսերական նուիրակ և հրամանատար, մուլեգին ամբոխէ մը սպաննուեցէր Պուտա-Քեչդի կամբրջին վրայ, կայսրը հրովարտակ մը հաներ էր նոր գունդեր յղելու ի Մաճառստան: Վեննայի ամբոխը՝ մանաւանդ ուսանողաց լեգէոնները, Բազմարուեստ վարժարանին աշակերտք և ազգային պահապանաց մաս մը դէմ կեցան գունդերուն երթալուն: Այլ և այլ կողմեր խանգարեցին երկաթուղին, տիրեցին քանի մը թըն-

Թանօթներու և մոլեգին կռիւ մը ծագեցաւ, յորում
 ինկաւ զօրավար մը, քանի մը սպայք և զինուորք: Սուրբ
 Ստեփանոս եկեղեցւոյն և Պատերազմի պաշտօնարա-
 նին պալատան մէջ աւելի մոլեգին էր կռիւը, ուր գե-
 տինը ծածկուեցաւ դիակամք: Վերջապէս ամբոխը
 տիրեց պալատին, և խուռն դիմելով կը փնտռէր զպաշ-
 տօնեայս և զԼազուր Մարաջախտը: Գտաւ պահուրտած
 շորրորդ յարկին մէջ. ի զուր կ'աղաչէր եղկեցին՝ որ
 կենացը խնայեն. կացնի հարուածով յետ ջաղխելու ըզ-
 գանկր և յետ յօշ յօշ պատառելու մարմինը, սաւա-
 նի մը մէջ պլլած փողոցի ջահերու վրայ կախեցին: Ան-
 կէ ամբոխը դիմեց ի զինարան, զոր Լեհաց գունդ մը
 կը պաշտպանէր, և յետ ամբողջ գիշերը մրցելու՝ ներս
 ողողեց՝ և տիրելով զինուց, բաժնեց զանոնք մոլեգին
 կատաղեաց, թէպէտ և ուսանողաց լեզէտններու մաս
 մը կ'ուզէր չսփմը դնել այս աւարառութեան: Կայս-
 րը այս ահաւոր լրոյն վրայ յետ բողոք մը գրելու
 առ ժողովուրդը, թողուց զՇէօնպրիւն և դիմեց յՍու-
 միւց: Պաշտօնեայք ամէնը փախեր էին, միայն Քրոս
 կը գտնուէր իր վտանգալից պաշտաման մէջ: Խոր-
 հրդարանը իր մշտամնացութեամբն հանդերձ անկա-
 ռող էր դէմն առնելու. հասարակաց սպառնութեան
 ընկերութիւն մը հաստատեց. կրկին աղերսներ դըր-
 կուեցան առ կայսրը դառնալու ի մայրաքաղաքն. և
 միանգամայն հրովարտակ մը առ աւստրիական ժո-
 ղովուրդը՝ յարգելու զօրէնս և հաւատարիմ մնալ սահ-
 մանադրական միապետութեան և սպասութեան: Սա-
 կայն կայսերականաց ի Խորհրդարանին հակառակ գոր-
 ծելով՝ աւելի զօրաւոր գտնուեցաւ քաղքին մէջ յե-
 ղափոխութեան կողմը, որուն կեդրոնն էին Համալսա-
 րանին սրահքը. և արդէն ընդդիմութեան մը համար
 ամենայն պատրաստութիւն տեսնուած էր: Մէսսէն-
 հաւզէր տեղապահը՝ ընդհանուր հրամանատար անուա-
 նուեր էր ազգային պահապանաց, և Պէմ լեհ զօրավա-
 րը՝ հրանօթից ուղղիչ: Ամէն կողմէն ինքնակամ զի-
 նուորներ կը դիմէին, և ապստամբք մեծ յոյս ունէին
 Մաճառաց օգնութեան վրայ, որոնց գունդերը արդէն

կը համարէին տեսնալ Ս. Ստեփանոսի զանգակատան վրայէն:

7. Վինտիշկրաց կը պաշարէ զՎեննա եւ կը տիրէ. Գլխապարտութիւնք: — Այս պատրաստութեանց միջոց՝ քաղաքը հարաւային կողմէն պաշարեր էր նաև Ելլաչիչ պանը 50,000 զօրօք, հաւաքեալ կայսրութեան ամէն կողմէն, իրեն հետ միացաւ նաև կոմսն Աւերսպէրկ, և քիչ օր վերջը երեցաւ նաև Վեննայի քով Վինտիշկրաց իշխանը՝ զոր կայսրը բոլոր կայսրութեան (ի բաց առեալ զԻտալիա) գունդերուն հրամանատար անուաներ էր:

Քաղաքը ահաւոր կերպարանք մը առեր էր, խոհեմագոյն մասը տեսնելով՝ որ ուսմկաւարք բռնութեամբ կ'ուզեն ընդդիմանալ այսպիսի մեծ զօրութեան, աճապարեցին փախչելու քաղաքէն դուրս, նաև բազմաթիւ երեսփոխանք Խորհրդարանին, որով քաղաքը աւելի շիտից մէջ ընկղմեցաւ: Վինտիշկրաց քաղաք պաշարելու ամենայն կազմութիւն հետն ունէր, և ի գուր նախ հրաւիրեց զՎեննացիս ի հպատակութիւն, բազմաթիւ երեսփոխանք ուզեցին միջնորդ ըլլալ խաղաղութեան, նոյնը կը ջանար նաև Տրանքֆորդի Խորհրդարանը, բայց ի գուր. նոյն օրերը ուսանողի մեռեալ դիակ մը գտնուելով պարիսպներէն դուրս աւելի զայրացուց ոգիները, նա մանաւանդ Վինտիշկրացի հրովարտակը՝ որ ներումն կը խոստանար յանցաւորաց, բաց յայնոցիկ զորս ինքը յետոյ պիտի անուանէր: Ալ անկարելի էր հաշտութիւնը, Պէմ, Մէսսէնհաւզէր և Ֆէնսլէրկ պաշտպանողական մասին կը հակէին, կեդրոնական ուսմկաւար ընկերութիւնը ինքնակամ զօրաց երկու գունդ ձևացուցեր էր, շարժական պահապանք և ընտիր գունդը, յորում կը զինուորէին նաև բազմաթիւ զրագէտք, յորս և երկու ատենակաք Տրանքֆորդի Խորհրդարանին՝ Ռոպէրդ Պլում և Յուլիոս Տրէսպէլ: Ինչ խստութիւն որ արտաքին բանակը կը հրամայէր ընդդէմ ուսմկաւարաց, նոյնը ի ներքս կը կատարէին ուսմկաւարք ընդդէմ կայսերականաց: Դըրսէն բանակը ամբողջ եօթնեակ մը՝ ահաւոր կրակ մը

գիշեր ու ցորեկ կը թափէր գեղեցիկ մայրաքաղաքին վրայ, և հրդեհեալ տանց բոցը կը տեսնուէր բարձրագեալ մինչև երկինք: Մեծ էր երկուց կողմանց ալ կատաղութիւնը, մանաւանդ Լազուր գնդինը՝ որ պատրաստուեր էր իր զօրավարին վրէժն առնելու¹: Հոկտեմբեր 28ին և 29ին արդէն արուարձաններէն շատ մասը նկճուեր էր, և ներսն ալ պաշարք կը պակսէին, արդէն Ոստիկանութեան ժողովք, որ կայսերական հրամանով Խորհրդարանին ցրուելովը Նոյեմբեր 15ին ի Քրէմսիէր, ինքը միայն իշխանութիւն մը կրնար ձեւացընել, սկսեր էր անձնատրութեան վրայ խօսիլ և զէնքերը կը ժողուէր յապստամբելոց, երբ յանկարծ լուր տարածուեցաւ՝ որ Մաճառ գունդերը մօտ էին հասնելու, մէկէն զէնքերը նորէն առնուեցան և նորէն կատաղի ընդդիմութիւն մը սկսաւ, բայց շատ քիչ ժամանակ: Եւ յիրաւի հասնելու վրայ էին, երբ Խռուաղ և Աւատրիացի գունդեր զանոնք պարտելով վանեցին հեռու: Այն ատեն Վինտիչկրացի խումբերը ողողեցին մոլեգնութեամբ ի քաղաքն, և ներս մտան անցնելով բոցերու և դիականց մէջէն: Ահաւոր տեսարան մը, որուն պատճառ եղողք անհետացեր էին: Ելլաչիչ մտաւ քաղաքը, որ Խռուաղներուն աւարառութեանցն նշաւակ մնաց: Քաղաքը գոցուեցաւ, բնակչացմէ զէնքերը առնուեցան և խիստ խուզարկութիւն մը սկսաւ տանց մէջ, բանտերը լեցուեցան, զինուորական ատեանը հաստատուեցաւ, հրացանի բռնուեցան Մէսսէնհալզէր՝

1. « Վեննայի Խորհրդարանը կը պահանջէ՝ նեռանայ, ներուձ տրուի Լազուրը սպաննողաց, և աքսորուին մեծ դքսուհին Սոփիա և մեծ դուքսն Լուդվիկ: Այս ժողովքին յանդգնութիւնը ամէն չափէ դուրս է: Մեր երեք քաջերը՝ Վինտիչկրաց, Ռադեցքի և Ելլաչիչ, կը յուսամ որ պիտի զօրացնեն թագաւորութիւնը:

... Գործաւորք ուզեր են կտրել Փրազէրի բոլոր ծառերը, և Լըբ աղպային պահապանք ուզեցին խափանել այս վայրենի գործը, անոնցմէ երկուքը ողջ թաղեցին Փրազէրի մէջ: Տեսինչեզաւ Վեննայի երջանիկ և հանդարտ ժողովուրդը: Յէլ-տ-տ-տ-տ-տ Մերեմեմեմ (Հտ. է. 1848—1849):

ազգային պահապանաց հրամանատարը, ինչպէս նաև Ալֆրէտ Բուլիոս Պէքէր՝ անուանի երաժիշտ երգահանը և խմբագիր ծայրայեղ լրագրի, և իր ընկերը Ելլինէք և Պլում՝ Ֆրանքֆորդի Խորհրդարանին ձախակողմեանց գլուխը: Ի զուր գերմանական խորհրդարանն բողոքեց Պլումի համար, ի զուր յեղափոխութեան մը սպառնալիք կ'ըլլային, ի զուր և Աւստրիոյ Կայսրութեան պաշտօնեայն Շմէրլինկ անհաւան կ'երևար, Վինտիչկրաց՝ որ Յեղափոխութեան սկիզբը վեհանձնութեամբ սարբեր էր իր ամուսնոյն սպանման, առանց վրէժ խնդրելու, այժմ անողոքելի էր, և գոհ էր որ Նիկողայոս կայսրը կը գոհանար իրմէ՝ Եւրոպիոյ մէջ այսպէս կարգաւորութեանը համար ըրած ծուռ այրութեան վրայ: Պլումի անունը բոլոր ազատականաց իբր նշան մը եղաւ, և Գերմանիոյ ամէն կողմէն մեծամեծ նպաստներ ղրկուեցան իր այրւոյն և զաւակաց: Քիչ վերջը ձերբակալուելով հրացանի բռնուեցաւ Հաւք, այն՝ որ ընտրելոց գունդ կազմեր էր և խմբագրապետ էր Սահմանադրութեան լրագրին¹: Ահա այս անհաւոր վերջը կունենար ռամկավարաց փորձը ի Վեննա, առանց բնաւ արդիւնք մը ունենալու, վասն զի ինչ նպատակի համար որ կը գործէին՝ նոյն նպատակը չէր ընդհանուր ժողովրդեան զգացմունքը, նա մանաւանդ իսկ կը պակսէր ստոյգ նպատակ մը՝ անհնարին ըլլալով խախտել ի Վեննա, գէթ յայնժամ, միապետական վարչութեան մը դրութիւնը:

8. Այգուստին ժողովքը ի Պէուլին: — Վեննայի ապստամբութեան լուրը մեծ յուզում պատճառեց նաև ի Պէուլին: Ազգային խորհրդարանին մէջ ձախակողմեանց գլուխը Վալտէք, առաջարկեց, որ ի Վեննա ազատութիւնը ի վտանգի ըլլալով, փութով գերմանական Կայսրութիւնը օգնութիւն մը ղրկէ: Այս նիւթոյս վրայ վիճարանութեանց միջոց՝ ամբոխը աղաղակով Խորհրդարանը ողողեց, դանակով սպառնալով հակառակորդ երեսփոխանաց, և դէմ դրու ազգային պահապանաց, որ

եկեր էին պաշտպանելու զժողովը: Սակայն Վիննայի անկման լուրը վհատեցուց նաև զՊէռլինցիս, և թագաւորը այս օրինակ յուզմանց պատճառ չտալու համար նոր պաշտօնարան մը կազմեց, որուն գլուխ կեցաւ Պրանտէպուրկի կոմսը, ազգական թագաւորական ցեղին. բայց պաշտօնարանին ոգին էր Ներքին գործոց պաշտօնեայն կոմսն Մանդէօֆֆէլ՝ նախաջրհեղեղեան քաղաքագէտ մը, ըստ ասելոյ երեսփոխանի մը. և որոշուեցաւ փութով՝ որ ժողովքը Պրանտէպուրկ փոխադրուի և բացումն ըլլայ Նոյեմբեր 27ին: 3 Նոյ. Եւ ի զուր ժողովքը բողոքեց և ուզեց համոզել զթագաւորը, որ ինքը կարող չէր այսպիսի հրաման մը տալու, ի զուր ջանաց պաշտօնարանը փոխել տալու և ինքը հաստատուն մնալու իր տեղը: Վրանկել զօրավարը հրամանատար Պրանտէպուրկ նահանգին, հրաման ընդունեցաւ զօրօք մայրաքաղաքը մտնելու, որ պաշարման վիճակի մէջ դրուեցաւ: Զօրքը ցրուեց զերեսփոխանս, ստանձին ընկերութիւնները ցրուեցան և խիստ հսկողութիւն մը հաստատուեցաւ ի քաղաքին: Երկու հարիւր երեսուն երեսփոխանք տեղէ մը հալածուելով ուրիշ տեղ կը գումարուէին, մինչև տեսնելով որ անկարելի էր ընդդիմանալ, յետ հրատարակելու Գաղղիոյ 1789ի ազգային ժողովոյն նման, « որ Պրանտէպուրկ պաշտօնարանը հրաման չունէր հարկերը ժողուելու, մինչև որ Ժողովքը նորէն դառնայ ի Պէռլին », իրենք ցրուեցան. բայց այս իրենց բողոքն ալ բնաւ ազդեցութիւն մը չունեցաւ, որով և յայտնի տեսնուեցաւ Ազգային ժողովոյն տկարութիւնը:

Պէռլինու այս յուզումը իր արձագանգը ունեցաւ նաև ի Ֆրանքֆորդ, ուր ձախակողմեանք առաջարկեցին բողոք մը գրել առ Փրեզերիկոս Գուլիէլմոս, կոչելու ի Պէռլին Խորհրդարանը և փոխելու զՊրանտէպուրկ Մանդէօֆֆէլ պաշտօնարանը, և այնպիսի պաշտօնարան մը կազմել՝ որ մեծագոյն մասին վստահութիւնը ունենայ. բայց Պասսէրման երեսփոխանին Պէռլինէն Ֆրանքֆորդ հասնելովը ոգիները հանդարտեցան: Իսկ Պասսէրման Ֆրանքֆորդի Խորհրդարանէն ղրկուեր էր առ

Բրուսիոյ Ազգային ժողովը՝ կեդրոնական իշխանութեան վրայ անոր կարծիքը իմանալու . ուր չկարենալով միաբանիլ Ազգային ժողովոյն հետ, թագաւորին խոստմունքներովը միայն դարձեր էր ի Ֆրանքֆորդ, որով և Խորհրդարանին մեծագոյն մասը թագաւորին կողմը եղաւ : Իսկ Բրուսիոյ Ազգային ժողովոյն երեսփոխանք՝ որոշեալ ժամանակին սահմանեալ թուով ի Պրանտէպուրկ շքանուելով, թագաւորական հրովարտակը ցրուեց ժողովը, և ինքնին Պետութիւնը սահմանադրութիւն մը հրատարակեց՝ առնելով մաս մը ի Հիմնական իրաւանց Ֆրանքֆորդի և մաս մ'ալ յորոշողութեանց Ազգային ժողովոյն, և այս սահմանադրութիւնը յետոյ քննութեան նիւթ պիտի ըլլար դարձեալ օրէնսդիր ժողովոյ մը : Այսպէս Բրուսիոյ պետութիւնը գիտցաւ իր տարած յաղթութիւնը վսեմութեամբ գործածել՝ ինքնաբերաբար սահմանադրութիւն մը տալով, որով և խոռվութեամբ սկսեալ տարի մը ուրախ յոյսերով կը կնքուէր :

5 Դեկտ. 1848

9. Աւստրիա. Խորհրդարանի Քրեմսիէր. Հրաժարումն Փերտինանտոս Դիւ : — Աւստրիոյ պետութիւնը ևս կը յուսար զԽորհրդարանը հեռացընելով ի Վեննայէ, զայն ազատել ի ռամկավարական ազդեցութեանց : Նոյեմբեր 21ին նոր պաշտօնարան մը կազմեր էր, որուն գլուխ էր իշխանն Ֆէլիքս Շվարցէնպէրկ, որ բոլոր Եւրոպիոյ մայրաքաղաքները բնակեր էր իբրև քաղաքագէտ, և Ռատտցֆիլի բանակին մէջ յիտալիա մեծ մասն ունեցած էր : Ներքին գործոց պաշտօնատարութիւնն ալ յանձնուեցաւ Ֆրանց Սդատիոն կոմսին, որուն մասակարարութեան մասին ունեցած տաղանդը արդէն ծանօթ էր : Նոր պաշտօնարանը ինքզինքը կողմնակից հրատարակեր էր սահմանադրական ազատութեանց և փափագող Գերմանական միութեան : Պաշտօնական այս ծրագիրը հրատարակուեր էր Նոյեմբեր 27ին, և Դեկտեմբեր 2ին ուրիշ արտաքոյ կարգի գումարումն մի խմբուեցաւ, յորում նախագահը ի մեծ զարմացումն ժողովոյն ծանոյց՝ որ Կայսրն Փերտինանտոս հրաժարեր էր, և թէ իր եղբայրը Փրանկիսկոս

Կարոլոս արշիդուքսը կը հրաժարէր յաջորդութեան իրաւունքէն, որով և ի գահ կ'ամբառնայր յետնոյս որդին պատանի արշիդուքսն Փրանկիսկոս Յովսէփ, որ անմիջապէս 18 տարին լմնցուցած ըլլալով աւագութեան տիոց մէջ էր :

Այս որոշողութիւնը սահմանուեր էր առանձին ընտանեկան ժողովոյ մը մէջ, որուն մասնակցեր էին նաև իշխանն Վինտիչկրաց և Ելլաշիչ պանը : Փերտինանտոս արդէն տկար, հիւանդոտ . հանդարտ վարչութիւն մը ունեցեր էր : Սովորեալ միշտ զՄէդէնիք իր քովն աջակից ունենալու, հիմայ իրեն անկարելի կ'երևար առանց անոր իշխելու : Հրաժարելէն վերջը քաջուեցաւ ի Փրակա, ուր ապրեցաւ մինչև իր մահը :

10. Փրանկիսկոս Յովսէփ Կայսր . — Սահմանադրութիւն : — Նոր կայսրը փութով ծանոյց իր սահմանադրական գաղափարքը ի գահ բարձրացած օրը՝ ըսելով որ . Հաստատապէս միտքը դրած է պահելու թագին պայծառութիւնը, ըսյց և պատրաստ՝ ժողովըրդեան ներկայացուցիչքը մասնակից ընելու օրէնսդիր իրաւանց, և « կը յուսանք Աստուծոյ օգնութեամբ որ միաբանութեամբ ժողովրդեան, կարենանք միակ մեծ վիճակ մը կազմել յամենայն երկրէ և յամենայն ցեղից միապետութեան » : Քրէմսիէրի խորհրդարանը կը շարունակէր իր սահմանադրական վաստակքը առանց Մաճառստանի երեսփոխանաց, որոնք տակաւին չէին երևնար : Աշխատութիւնը լմնցեր էր և ժողովը կը յուսար զայն հրատարակել Մարտ 15ին, 1848ի Մարտի տարեդարձին : Բայց 6ին Սգաստիոն երեսփոխանացմէ զոմանս կոչեց և իմացուց, որ անկարելի էր հաստատուն բան մը որոշել բովանդակ կայսրութեան համար ի հեռաւորութեան մաճառ երեսփոխանաց . ի զուր երեսփոխանք բողոքեցին, ժողովը լուծուեցաւ և հրատարակուեցաւ կայսերական Մարտ 4ի սահմանադրութիւնը, խառնուրդ Պելճիական, Պէլլինու սահմանադրութեան և հիմնական իրաւանց Գերմանիոյ : Կը հրատարակէր զԱւստրիա անկախ, անբաժան, անլուծանելի, հաւասարութիւն ամենայն գաւառաց, երկու

խորհրդարանք: Մաճառստանի սահմանադրութիւնը կը պակսէր, մասնաւորապէս սահմանադրութիւն մը պիտի ունենային նաև Լոմպարտիա — Վենետիկ: Տպագրութեան նախնական արգելքը կը վերցուէր, և հրաման կը տրուէր բնիկ կրօնքը ազատարար պաշտելու:

11. Խորհրդարանն Ֆրանքֆորդի. Աւագ եւ կրտսեր Գերմանացիք: — Ֆրանքֆորդի Խօսարանն ալ կը շարունակէր իր հիմնական իրաւունքները՝ երբ դիմացը ծանր խնդիր մը ելաւ, որուն համար ամիսներ հարկ եղաւ ծախել: Աւստրիա իր բազմաթիւ ազգերը անհնար էր, որ Գերմանական ազգայնութեան մէջ կարենար մտցընել: Արդ ժողովը սահմանեց, որ ամենայն գերմանական պետութիւն չէր կրնար միապետութիւն մը կազմել ոչ գերմանացի իշխանութեամբք. որով և Աւստրիա պէտք էր ամփոփել Մաճառստանի, Պոհեմիոյ և Խտալիոյ վրայ ունեցած վարչական միջամտութիւնը: Աւստրիա մերժեց առաջարկը, և ասկէ Խորհրդարանին մէջ կազմուեցան երկու կուսակցութիւն. Առաջ Գերմանացիք, որոնք, Աւստրիոյ ձեռաց ներքեւ եղած ամէն ազգերն ալ կուզէին գերմանական դաշնակցութեան մէջ ընդունիլ, և Կրտսեր Գերմանացիք, որոնք գերմանական դաշնակցութեան մէջ միայն զԳերմանացիս կ'ընդունէին: Յետ երկար վիճարանութեանց խնդիրը յանձնուեցաւ Կակէռնի, որ պաշտօնարանին նախագահ եղեր էր Շմէրլինկի հրաժարելով, որ աւստրիացի էր և աւստրիական միութեան վրէժխնդիր: Կակէռն կ'ուզէր, որ Աւստրիա զատ Կայսրութիւն մը ըլլայ ի գերմանական կայսրութէնէ և անոր հետ կապով մը միայն միացած ըլլայ: Խորհրդարանին մէջ այս նիւթը ընդ երկար անորոշ մնաց, մինչև որ զանազան պարագայք վրայ հասնելով բնական որոշումն տուին խնդրոյն: Ժողովոյն ամենէն ծանր մասն էր նաև Կերդոնական իշխանութեան վերաբերեալ բացայայտութիւնքը: Գերմանական միակ կայսրութիւն մը կազմելու ժամանակ՝ իւրաքանչիւր փոքր և միջակ պետութիւն պէտք էր, որ ազատ վարչութիւն և խորհրդարան ունենար, և այս ամենայն ազատութիւնք միարա-

նէին կեդրոնական զօրութեան մը հետ, որ պիտի կազմէր Գերմանական կայսրութիւնը: Սահմանեցաւ՝ որ կայսրութեան գործադիր իշխանութիւնը միայն կարենայ « դեսպաններ և հիւպատոսներ ղրկել և քաղաքական դաշինքներ ընել, կայսրութեան գլուխը կարենայ հրամայել ի խաղաղութեան և ի պատերազմի, և ինքը առանձին Պետութեանց բանակաց իսկ գլուխ ըլլայ և բերդորէից, և դրօշի վրայ երդուելու ժամանակ առաջին նիւթն ըլլայ, երդնուլ կայսերական գլխոյն և սահմանադրութեան վրայ: Հոգ պիտի տանէր հարկաց վրայ, և բաց իւրաքանչիւր պետութեան հարկէ նաև ինքն ալ կրնար տուրք մը դնել. բոլոր Գերմանիա վաճառականական և մաքսական միակ դրութիւն մը պիտի ունենար. կայսերական իշխանութիւնը կըրնար ձամբաներ բանալ, բարձրագոյն ուղղիչ ըլլալ թըղթատանց, երկաթուղեաց, դրամական, շափական և կըշտոց դրութեանց, և հսկել ընդհանուր խաղաղութեան, և եթէ խնդիր մը ծագէր ընդ պետութիւն և ընդ պետութիւն, ընդ պետութիւն և ընդ կայսրութիւն, կայսերական բարձրագոյն ատենանը զայն պիտի դատէր և այսպէս խաղաղութիւնը բնաւ պիտի չխռովէր: Արկու խորհրդարանք կային, մին պետական, որուն անդամքը պիտի ընտրուէին յիւրաքանչիւր պետութեանց ժողովոց՝ ըստ մեծութեան պետութեան, և միւսը ժողովրդական, կազմեալ ժողովրդեան ազատ ընտրութեամբ. իսկ առաջինը ամէն վեց ամիս, և միւսը ամէն երեք տարի հարկ էր որ նորոգուէր: Խնդիր ծագեցաւ որ՝ ի՞նչ հարկ էր ընել եթէ յանկարծ կայսրութեան գլուխը այս երկու խորհրդարանաց որոշողութեանց չատորագրէ, և հաստատուեցաւ որ, « Աթէ խորհրդարանը երեք անմիջաբար նորոգ գումարմանց մէջ, առանց փոփոխութեան հաստատէ նոյն որոշողութիւնը, եթէ կայսերական վարչութիւնը զայն չհաստատէ իսկ, յետ երրորդ գումարման, օրինաց կարգը անցնի»: Ար մնար հիմայ որոշել սոյն այս կայսրութեան գերագոյն գլուխ մը տալ. և այս նիւթոյս վրայ վիճաբանութիւնք սկսան 1849ի Յունուարին: Ասկէ՞ն առաջարկած էր միակ և յաջորդաւ

կան գլուխ մը դնել, ուրիշները կ'առաջարկէին եռապետութիւն մը կազմել յԱւստրիոյ, ի Բրուսիոյ, ի Պապիէրայէ, կամ իշխանաց ժողովոյ մը յանձնել: Հասարակապետականք կ'ուզէին ընտրական և ժամանակաւոր գլուխ մը դնել, որով ամենայն անձն կարենար հասնիլ այս իշխանութեան, սակայն այս դրութեան մէջ անհամար անտեղութիւնք կային. Պետութիւնը միշտ յուզմանց մէջ պիտի գտնուէր: Եւ վերջապէս բազմութենէն ընդունելի եղաւ այն առաջարկը, որով կայսրութեան գլուխ պիտի դրուէր թագաւորոզ իշխաններէն մին, առանց ժառանգութեան վրայ խօսելու: Այս ծանր խնդիրն ալ լմինալէն վերջը Խորհրդարանը փութով յառաջեց, և Փետրուար 3ին ամբողջական ընթերցումն եղաւ Գերմանական սահմանադրութեան: Արդէն միջակ և փոքր պետութիւնք առաջուրնէ յայտներ էին իրենց հաւանութիւնը. կը մնային երկու մեծ պետութիւնք՝ յորոց Բրուսիա շրջաբերականով մը առանց մասնաւոր յիշատակութեան մը հակամէտ կ'երևար գերմանական դաշնակցութեան մը ի գերմանական ազգաց. բայց և Հիմնական իրաւանց ընդունելի ըլլալուն հարկ կը համարէր, որ իւրաքանչիւր պետութիւն զրկէ իր դիտողութիւնքը՝ որոնք ի քննութիւն առնուին, և թէ թագաւորի բնաւ կարեւորութիւն մը չէր տեսնար, և ինքն ալ իր անձին համար չէր փափագեր այս միութեան համար նոր կայսերական պատիւ մը ստեղծելը. աւելի աղէկ կ'ըլլար այս միութեան զօրոյն համար ուրիշ կերպ մը մտածել: Իսկ Աւստրիա, որ իր կայսրը փոխեր էր, Փետրուար 4ին ծանուցագրով կը խոսէր կեդրոնական միութեան գաղափարը՝ ինչպէս նաև դաշնակցութեան հետ կրկին տեսակ միութիւն մը՝ մին առաւել մերձաւոր, միւսն ընդարձակ, և կուզէր այնպիսի բնդարձակ դաշնակցութիւն մը՝ յորում մտնար և ամենայն օտար ազգ, որ Աւստրիոյ ներքև կը գտնուէր:

Չայն մը տարածուած էր ևս, որ Աւստրիա արհամարհելով զԽորհրդարանը և փոքր իշխանքը, առանց այն դաշնակցութեան դաշինք մը կ'ուզէր հաստատել թա-

գաւորաց հետ : Այս լուրերուն վրայ Ֆրանքֆորդի խորհրդարանը մեծ յուզման և երկպառակութեան մէջ էր . տակաւին եռանդուն վիճաբանութիւնք և առաջարկութիւնք կը շարունակուէին , երբ յանկարծ լսելի եղաւ , որ Աւստրիա Քրէմսիէրի Խորհրդարանը լուծելով ինքնաբերաբար նոր սահմանադրութիւն մը տուեր էր՝ առանց Գերմանիոյ և անոր սահմանադրութեան վրայ խօսք մը ընելու : Աւստրիոյ ներքեւ եղած ամենայն պետութիւն անբաժանելի մաս մը կը կազմէր Աւստրիոյ : Միանգամայն ծանուցագրով մը կը պահանջէր , որ Աւստրիոյ պետութիւնը ամբողջովին Գերմանիոյ դաշնակցութեան մէջ մտնայ , կեդրոնական վարչութիւն մը հաստատուի եօթն տեսուչներէ՝ ընդ մշտնջենաւոր նախագահութեամբ Աւստրիոյ : Յայտնի էր այսպիսի առաջարկութեան մը ազդեցութիւնը ի Ֆրանքֆորդ . Մարտ 12ի գումարման մէջ վէճէր երեսփոխանը առաջարկեց՝ որ երկրորդ ընթերցումն ըլլայ Սահմանադրութեան , և Խորհրդարանը հաստատէ միաձայնութեամբ , և Բրուսիոյ թագաւորին ընծայէ ժառանգութեամբ կայսերական թագը : Հրաւիրելով միւս ամենայն իշխանները՝ միաբան ընդունելու այս հայրենասէր որոշողութիւնը և զայն գործադրելու : Այս խօսքերուն վրայ այնքան մեծ եղաւ ժողովոյն եռանդը , որ երբ ճարտասանը ըմբոսց ըսելով՝ որ « Հայրենիք ի վտանգի կայ , ազատեմք զայն » , երեսփոխաններէն շատերը յուզեալ էին :

Գաղղիոյ մէջ այսպիսի եռանդով սկսած առաջարկ մը անդէն իւր գործադրութիւնը կը տեսնայ . սակայն Գերմանիոյ ծանր երեսփոխանք խնդիրը յանձնաժողովոյ մը յանձնեցին , և քուէարկութեան միջոց անընդունելի եղաւ . մանաւանդ որ աւստրիացի երեսփոխանք բաց երկուքէ , չէին ուզած հրաժարել ի քուէարկութենէ , թէպէտ կ'ուզէր ձախակողմը արգելուլ անոնց : Որչափ որ ստով Աւստրիացիք ուրախ էին այս քուէարկութեան վրայ , այսու հանդերձ Մարտ 27ին գումարման մէջ 4 քուէից առաւելութեամբ հաստատուեցաւ կայսրութեան գլխոյն ժառանգական ըլլա-

լը, որ պիտի կոչուէր կայսր Գերմանիոյ . և մեծագոյն բազմութիւնը զայն ընծայեց Բրուսիոյ թագաւորին : Յետ միանգամ Աւստրիա ինքզինքը բաժնելու ի գերմանական Դաշնակցութենէ՝ այս որոշողութիւնը բնական հետեւանք մ'էր :

12. Նուիրակք կայսերական թագի առ Փրեդէրիկոս Գուլիէլմոս Դ : — Փութով Ֆրանքֆորդէն նուիրակութիւն մեկնեցաւ դէպ ի Պէւլին՝ կայսերական թագը ընծայելու Փրեդերիկոս Գուլիէլմոսի Դի : Ապրիլ 31ին թագաւորը հանդիսապէս ընդունեցաւ զնուիրակութիւնը իր պալատան ասպետաց սրահին մէջ : Նուիրակներուն ճամբորդութիւնը մինչև ի Պէւլին յաղթանակ մը եղեր էր : Ամէն կողմանէ գերմանական ժողովուրդք ձանձրացած ստէպ յեղափոխութիւններէ, կը յուսային վերջապէս Հիմնական իրաւանց ձեռքով հանդարտութիւն մը գտնել : Փրեդերիկոս Գուլիէլմոս Դ . յետ նուիրակաց ուղերձը մտիկ ընելու անորոշ պատահան մը տուաւ, որ աւելի ժխտողական իմաստ մը ունէր և նուիրակութիւնը շուարեալ ելաւ պալատէն : Արշափ որ թագաւորը կը ցանկար այսպիսի չքեղ տիաղոս ունենալ, բայց կէս մը Աւստրիոյ նկատմունքը, որ զայրացած հրատարակած էր՝ թէ Ֆրանքֆորդի ժողովը իր չափէն դուրս ելեր էր, և իր երեսփոխանքը յետս կոչեր էր, և կէս մը շուգելով գլուխ կենալ իշխանութեան մը, զոր ի ժողովրդենէ և ի սամկավարաց կը ստանար և ոչ յաստուածային իրաւանց, սակաւ օր վերջը ծեր Պրանսէպուրկ կոմսին ձեռքով յայտարարութեամբ մը ծանոյց, որ կը մերժէր իրեն ընծայեալ կայսերական թագը¹ : Այսու հանդերձ սահ-

1 . Խորհրդարանի անդամոց մին Պիզմարք՝ յետոյ այնչափ նշանաւոր, այս առթիւ կ'ըսէր, որ « Պրանսէպուրկցի եմ, այն երկրէն՝ ուր բրուսիական միապետութիւնը կերտեցաւ և ձեացաւ արեամբ . այս պատճառը բաւական է՝ որ չուզեմ որ թագաւորս վարձկան մը ըլլայ Սիմոնի » : (Նախագահ Խորհրդարանին) : Մերթնէիթի Յէլտուլուրնի կ'ըսեն, որ Փրեդերիկոս Գուլիէլմոս Դ . գիտէր որ այդ կազմակերպութիւնը պիտի չտէ և կը վա-

մանադրութիւնը ընդունելի եղաւ ճիշդ այնպէս՝ ինչպէս երկրորդ անգամ կարգացուեր էր, և վերցուց Պէտլինու վրայէն պաշարման վիճակը, որ Նոյեմբերի 12էն ի վեր կը սեւէր: Երկրորդ օրը լսելով Ռուսաց միջամտութիւնը ի Մաճառստան և յաղթական ընթացքին, փոխեց կարծիքը, բողոքեց ընդդէմ սահմանադրութեան և զթագաւորս արքայաժողովի մը հրաւիրեց, որուն գլխեցին Պավիէրա, Սաքսոնիա և Հանովեր:

13. Ֆրանսէիորդի ժողովը՝ Տանիմարքայի եւ Իլլքսուեթեանց խնդրոյն մէջ: — Փրեզերիկոս Գուլիէլմոսի թագը մերժելը մեծ հարուած մը եղաւ գերմանական խնդրոյն՝ մինչև այն ատեն 28 իշխանութիւնք իրենց հպատակութիւնը խոստացեր էին, սակայն Պավիէրայի, Հաննովերի, Սաքսոնիոյ և Վիւրդէմպէրկի թագաւորութիւնք կը յապաղէին հաւանութիւննին տալու. հիմայ Բրուսիոյ այսօրինակ գնացքը զիրենք առաւել ամբացուց իրենց կարծեաց մէջ: Բրուսիա անկէ վերջը բոլորովին անկախ կեդրոնական իշխանութենէ մը, որ բնաւ զօրութիւն չունէր, ինքնօրէն սկսաւ մտնալ օտար վիճակաց խնդիրներուն մէջ, և պատրաստ հասնելու՝ ուր որ հարկ կար սահմանադրութիւն մը և ազատութիւն մը խղզելու:

Շլէզվիկ — Հոլշտայնի՝ Մալմոէի զինադադարման ժամանակը լմնցեր էր և անկարելի եղեր էր խալաղութեան դաշանց վրայ միաբանիլ: Տանիմարքացիք թըշնամութիւնը սկսեր էին, և գերմանական կայսրութիւնը բանակ մը դրկեր էր՝ կազմեալ գերմանական ժողովուրդներէ, որոց կը հրամայէր Գոպուրկ-Կոթայի դուքսը. դաշնակցաց բանակը այլ և այլ կէտերու վրայ յաղթեց թշնամոյն, և մեծամեծ քաջութիւններ կատարեց պավիէրայի Գան զօրավարը. բայց և Պոնին զօրավարը՝ Շլէզվիկ-Հոլշտայնի գունդերուն հրամանատարը՝ Կուտտոէի արիւնահեղ յաղթութեամբ բռներ էր Եուզլանտի անցքը: Սակայն Փրիդվից զօ-

1849
Մայիս 7.

Իւր կորսնցրնելու թէ զգերմանական կայսրութիւն և թէ Բրուսիոյ թագը: Հտ. Ը.

րավարին հրամանատարութեան ներքև եղող բրու-
 սիացի և գերմանացի զինուորք տակաւին չէին խլըր-
 տիր, և երբ Շլէզվիկ-Հոլշտայնցիք Ֆրէտէրիչիա քա-
 ղաքին պարսպաց տակ մոլեգնաբար կը կռուէին, Բրու-
 սիացիք հեռուէն ականատես կ'ըլլային կռուոյն, մինչև
 ամենուն մտաց մէջ հաստատուեցաւ Բրուսիացուց
 պատերազմ կեղծելը: Վերջապէս շարժեցան դէպ ի
 Եուզլանտ՝ բայց այնպիսի ծանրութեամբ և զգուշու-
 թեամբ, որ կը տեսնուէր եթէ ժամանակ կ'ուզեն շա-
 հիլ մինչև որ լմննան դաշնախօսութիւնք՝ որոնք սկսեր
 էին գաղտ ընդ Տանիմարքացիս: Այս յապաղումներէն
 և անգործութենէն ժամանակ շահելով Տանիմարքա-
 ցիք կրկին ամրացուցին Վոլտէրիչիա, և իրենց Ռիէ
 զօրավարը Եուզլանտէն մտնելով անցաւ ի Ֆրէտէ-
 րիչիա առանց հակառակորդաց իմանալուն: Այսպէս
 Տանիմարքացիք զօրանալով յարձակումն տուին Պո-
 նինի խոնջ և նուազեալ գունդերուն վրայ: Եւ այս ան-
 ակնկալ բաղխման վրայ գունդերը յետ կատաղի կրու-
 ւոյ մը ընկան և ցրուեցան, և Տանիմարքացիք տիրե-
 ցին բանակատեղւոյն և բոլոր կարասեաց: Այս ա-
 հաւոր պարտութեան յուրը գայրացուց բոլոր գերմա-
 նացի հայրենասէր ոգիները, մանաւանդ որ յարձա-
 կումը ի թիկանց եկեր էր բրուսիական գունդերուն,
 որոնք բնաւ չէին շարժած, և աւելի մեծ եղաւ զար-
 մանքնին և զայրոյթնին՝ երբ լսեցին որ անմիջապէս
 ի Պէռլին յանգէտս գերմանական միութեան՝ դաշինք
 մը կը դրուէր, որով Շլէզվիկ և Հոլշտայն մէկմէկէ կը
 բաժնուէին. զՀոլշտայն պիտի կառավարէր կեդրոնա-
 կան իշխանութեան տեղապահ մը, իսկ Շլէզվիկ՝ տե-
 ղական վարչութիւն մը՝ կազմեալ յերից անձանց ընդ
 նախագահութեամբ անգղիացի նուիրակի մը, յանուն
 Տանիմարքայի թագաւորին: Ի հարաւ բրուսիացի պա-
 հակապան պիտի նստէր, ի հիւսիս շուէտացի և ի
 կղզիս՝ տանիմարքացի: Մեծ ստգոհութիւն տիրեց զը-
 սութեանց մէջ, որովհետև կը խախտուէր իրենց վար-
 չական իրաւանց հիմունքը: Սակայն սեղի սուին զօ-
 րութեան առջև:

14. Յեղափոխութիւն ի Տրեզուա եւ յայլ տեղիս Գերմանիոյ . Վերջ Ֆրանքֆորդի ժողովոյն : — Քիչ առաջ Տրեզուայի մէջ խռովութիւն մը ծագեր էր, որովհետեւ վարչութիւնը հակառակորդ երեւցեր էր Ֆրանքֆորդի ժողովոյն : Ժողովուրդը զինարանը վազեց զէնք կողոպտելու, ուր պահապան զինուորք վանեցին զայն հրացանի հարուածներով : Այն ատեն բոլոր քաղաքը զանգակաց խառն ձայնէն ոտք ելաւ, և զինեալ մանգաղով, գերանդուով, արիւնահեղ կռիւ մը սկսաւ սաքսոն զօրաց հետ . թագաւորը Քէօնիկշդայն ամրոցը փախաւ և քաղաքը ժողովրդեան ձեռքը մնաց, որ Առժամանակեայ վարչութիւն մը հաստատեց, և Ֆրանքֆորդի ժողովոյն նուիրակ զրկեց՝ որ այս ապստամբութիւնը իր պատճառաւ ըլլալով, իրեն հովանաւորութեան ներքեւ կը մտնար : Բայց փութով սահմանադրական ոգւոյն հետ յեղափոխականը միացաւ, և զանազան տեղեր տեսնուեցաւ կարմիր դրօշը : Սաքսոնիոյ տէրութիւնը անկարող միայնակ յեղափոխութիւն մը ընկճելու, Պէսլինու արքունեաց զիմեց, և Մայիս 6ին Բրուսիացի բանակ մը հասաւ ի Տրեզուա, և յետ երեք օր արիւնահեղ և աւերիչ կռուոյ մը, քայլ առ քայլ մրցելով մտաւ քաղաքը Գին գիշերը, զոր պաշարման վիճակի մէջ դրաւ և ապստամբութեան գլխաւորացմէ զոմանս բռնեց, մաս մ'ալ գիշերը փախեր էր :

Կամանօրինակ ապստամբութիւն մը ծագեր էր նաև ի Պատէն՝ ի նպաստ Ֆրանքֆորդի ժողովոյն, ինչպէս և ի Քարլսրուհէ ի ձեռն ուսմկաւարաց, և Առժամանակեայ վարչութեան գլուխ կեցեր էր Պրէնթանօ : Մայիս 14ին գիշերը մեծ շփոթութիւն և արիւնահեղութիւն եղեր էր, բանակը ստիպուեր էր քաշուիլ, մեծ դուքսը և զինուորական գլխաւորք խոյս տուեր էին, բոլոր Վիւրդէմպէրկի մէջ խռովութիւնը տարածուեցաւ, մինչև որ բրուսիական բանակ մը հասնելով ընդ զօրավարութեամբ Բրուսիոյ իշխանին՝ ցրուեց Միէրոսլաւիքի լեհ զօրավարին բանակը, որուն յանձնուած էր յապստամբելոց բանակին հրամանատարութիւնը : Ապստամբելոց մեծ մասը գիմեց ի Զուիցցերի՝ մեծ

դուքսը դարձաւ ի Պատէն, և ամենայն ինչ իր առջի կարգն առաւ :

Այսպէս Ֆրանքֆորդի ժողովոյն պաշտպանողաց դէմ կռուելու ժամանակ, Ժողովն օր օրուան վրայ կը տըկարանար : Արդէն Բրուսիա յետս կոչեր էր իր նուիրակը ի Ժողովն : Ուրիշ 65 երեսփոխանք խաղաղասէրք տեսնելով, որ առանց յեղափոխութեան և արիւնահեղութեան անկարելի էր դիմանալ, իրենց հրաժարականը տուին, յորս էին Կակէռն, Սիմսոն, Տահըլման, Մօրից Առնդ և ուրիշ հանճարներ : Կայսրութեան պաշտօնարանն ևս հրաժարեցաւ, և ժողովը ապահովութիւն մը գտնալու համար որոշեց փոխադրուիլ ի Շդուդկարտ, ի մէջ զինք, պաշտպանող գաւառներու : Յունիս 6ին Ժողովը բացուեցաւ ի Շդուդկարտ, որուն հազիւ 105 հոգի ներկայ գտնուեցան, բայց որովհետև թէ Պավիէրա և թէ ուրիշ պետութիւնք ալ յետս կոչեցին իրենց նուիրակքը, այն ատեն Ժողովը բոլորովին կրճատեցաւ :

Կայսրութեան ատեան մը դրուեցաւ հինգ անձանցմէ, որ ջանաց գրգռել Եպստամբական ոգիները ի Վիւրդէմպէրկ ընդդէմ վարչութեան : Ռէօմէր՝ խորհրդարանին նախագահը ստիպեց զժողովը, որ հեռանայ ի Վիւրդէմպէրկէ, և Յունիս 18ին գոցուեցաւ գումարմանց սրահը և հոն ժողվուած երեսփոխանք վանեցան, որոնք մասնաւոր գրով մը ծանուցին որ տեղիք կուտային բռնութեան : Այսպէս կը լմննար գերմանական Խորհրդարանը, որ եթէ ապարդիւն իր ժամանակին մէջ, սակայն ապագային շաւիղ մը գծեց այն մեծ գերմանական միութեան՝ զոր յետոյ ի գլուխ տարաւ Փրեդերիկոս Գուլիէլմոսի Գի եղբայրը : Գերմանիոյ խորհրդարանին մէջ կային մեծամեծ և այլազան հանճարներ, որոնք ամէնը, թէպէտ ի հայրենասէր ոգւոյ շնչեալ, սակայն չկարենալով միաբանիլ իրենց դրութեանց վրայ, ցրուեցան հետերնին կրելով իրենց սեպհական խորհուրդքը և գաղափարքը, և քան զամենայն առաւել գերմանական միութեան սէրը, որ գրգռիչ և միակ նպատակ էր եղեր ժողովոյն, և որուն արդիւնքը պիտի տեսնուէր ոչ շատ տարիներէ վերջը :

15. Դաշինք Երից Թագաւորաց . Խորհրդարան Էրֆուրդի . Աւագաժողով Ֆրանքֆորդի . Տեսակցութիւն յՕլլից : — Բրուսիա , որ այսպէս խորշեր էր ազատական միութենէ մը , ուզելով միապետական դաշնակցութիւն մը կազմել , Սաքսոնիոյ և Հաննովերի թագաւորաց հետ դաշինք մը հաստատեց՝ կոչեցեալ Դաշինք Կոնֆոյնց , որուն նպատակն էր հսկել Գերմանիոյ ներքին և արտաքին հանդարտութեան վրայ , և այս բանիս խնամ տանելու համար դաշնակից մատակարարութիւն մը պիտի կազմուէր ի հինգ ատենակալաց , և աթուր պիտի ըլլար ի Պէուլին : Աւստրիա չուզեց դուրս մնալ այսպիսի կենսական խնդրէ մը , որ Բրուսիոյ ազդեցութեանը առաւել ընդարձակութիւն մը կուտար . և ի Փիլինից՝ Աւստրիոյ , Բրուսիոյ և Սաքսոնիոյ վեհազունք տեսաւորուելով , սահմանեցաւ Կոնֆոյնց Կոնֆոյնց մը կազմել , որուն երկու անձինքը Բրուսիացիք ըլլան և երկուքը Աւստրիացիք , և ասիկայ փոխանակէ կեդրոնական իշխանութիւնը՝ որ արդէն տկարացեր էր , և Յովհաննէս արչիդուքսը արդէն թեալ թի ի ռամկավարաց և թէ ի վեհապանց , Դեկտեմբեր 20ին այս Յանձնաժողովոյն յանձնեց իր իշխանութիւնը :

Բրուսիա չյաջողելով գլուխ անցնիլ գերմանական միութեան մը ի Պէուլին , ինչպէս իւր փափագն էր , առաջարկեց այն ատեն խորհրդարան մը գումարել Բրուսիական Էրֆուրդ քաղաքը : Սաքսոնիա , Հաննովեր և Ռուսաստան իսկ գրգռեալ յԱւստրիոյ , ջանացին ընդդիմանալ ասոր . սակայն 27 գերմանական իշխանութիւնք հաւանեցան երից թագաւորաց դաշանց՝ և Խորհրդարանը բացուեցաւ Ռատովիցի նախագահութեամբ : Էրֆուրդի Խորհրդարանը իր խոհեմ և խոհական ընթացքով՝ մեծապէս օգնեց միութեան ոգւոյն և սահմանադրութեանց ընդունելութեան՝ հաւանութեամբ իւրաքանչիւր պետութեան : Սակայն Աւստրիա չկարենալով զայն խափանել , ուզեց պատուար մը յարուցանել այս Կոր խորհրդարանին Առօրինակ մը , զոր կ'ուզէր գումարել ի Ֆրանքֆորդ : Ասոր հակառակ մ'ալ


ուզեց Մայիս 1ին Բրուսիա գումարել ի Պէռլին՝ բուր Միուլթեան դաշնակից պետութիւններէ, որուն հակառակ կ'ուզէր կենալ նաև Հէսսէի կայսրընտիրը: Սեպտեմբեր 1ին ի Գերմանիա երկու ժողովք կային, մի դաշնակցաց՝ ոսկից բաժնուած էին Հէսսէի կայսրընտրութիւնը, և ուրիշ մէկ քանի փոքր պետութիւնք, միւսն Յրանքֆորդի Աւագաժողովը, առաջինը ընդ նախագահութեամբ Բրուսիոյ, երկրորդը՝ Աւստրիոյ: Այս երկպառակութեան ոգին այնչափ զայրացաւ մինչև երկիւղ ծագեցաւ պատերազմի, մանաւանդ Հէսսէի պատճառաւ, ուր մեծ թշնամութիւն ծագեցաւ ընդ մէջ պաշտօնարանին և Խորհրդարանին, որ սահմանադրութեան պահպանութիւնը կը պահանջէր: Խորհրդարանը ամբողջ դքսութիւնը պաշարման վիճակի մէջ դրեր էր՝ վստահացեալ Աւստրիոյ—Պավիէրայի օգնութեան վերայ: Բրուսիոյ կողման կը հրամայէր Կրէօպէն զօրավարը, որ սակայն պատերազմը չսկսած, թողուց զՀէսսէ Աւստրիոյ, կամ լաւ ևս ըսել՝ Յրանքֆորդի Աւագաժողովոյն ձեռքը: Հէսսէի վիճակը որոշելու համար յՕլմիւլց Գաշնախօսութիւն մը կազմուեցաւ, յորում Աւստրիոյ կողմէն կը գտնուէր Շվարցեմպէրի իշխանը, ճարտար քաղաքագէտ իբրև զՄէդէնխիք և յանդուգն քան զնա ի գործադրութեան. որուն ամենայն ջանք և նպատակն էր կղզիացնել գերմանական վիճակները, և շթողուլ՝ որ Բրուսիոյ ազդեցութիւնը և յարաբերութիւնքը ընդարձակուին: Բառնալ դարձեալ ամենայն հետք 1848ի գաղափարաց: Օլմիւլցի դաշնախօսութեան մէջ սահմանուեցաւ, որ Բրուսիա արգելք չըլլայ աւստրիա—պավիէրական բանակին յառաջելուն ի Հէսսէ, գունդ մը միայն ունենայ Բրուսիա ի Գասսէլ, խաղաղութեան պահպանութեան համար, Աւստրիա և Բրուսիա միաբան խաղաղացընեն զՇլէզվիկ—Հոլշտայն, և վերջապէս Գաշնախօսութիւն մը գումարուի ի Տրեգտա՝ Գաշնակցութեան գործերը նայելու համար:

Ըստ այսմ որոշողութեանց աւստրիա—պավիէրական գունդերը մտան ի Հեսսէ, և դիւրաւ նուաճեցին

յեղափոխութիւնը: Օրինաւոր իշխանութիւնը հաստատուելով, դարձան կայսրընտիրը և Պաշտօնարանը, իսկ Խորհրդարանի անդամք շատ տարուան բանտերու դատապարտուեցան:

16. Ելեզվիկ-Հոլզայի Տանիմարքայի յսնմուելիը: Յետ առաջին անգամ ազատական շարժմանց ընկճուելուն, Բրուսիա յանուն գերմանական Վաշնակցութեան խաղաղութիւն մը կնքեց, որով Տանիմարքայի թագաւորը ազատ էր ամէն միջոց գործադրելու՝ Վըքսութեանց մէջ ընդդիմութիւնը ջնջելու համար. խոստանալով միանգամայն յետոյ յաշորդութեան միակերպ օրէնք մը ևս հաստատելու բովանդակ Տանիմարքայի: Ղքսութիւնք գուշակելով՝ որ ալ իրենց միջոց մը չէր մնար, ուղղակի ուզեցին բանակցիլ Տանիմարքայի հետ, բայց երբ արհամարհուեցան, այն ատեն յետ բրուսիական և չուէտ բանակներուն քաշուելուն, սահմանեցին շարունակել պատերազմը, յուսալով օգնութիւն մը ի գերմանացւոց, որով կարենան պաշտպանել իրենց իրաւունքները ընդդէմ Տանիմարքայի: Պոնին զօրավարը շուգելով թողուլ Բրուսիոյ ծառայութիւնը, տեղը դրին ուրիշ բրուսիացի մը երբեմն ընդհանուր տեղապահ՝ զօրավարն Վիլլիսէն: Յետ ի դուր փորձելու վերջին անգամ խաղաղութեամբ լմնցընելու վէճը, եթէ Ղքսութեանց և եթէ Տանիմարքայի բանակք մտան ի Ելեզվիկ, և Խոստէտի քով արիւնհաւիչ պատերազմ մը եղաւ, որ տեւեց երկու օր և յորում պարտեցան Գերմանացիք, որով Տանիմարքացիք տիրեցին Ելեզվիկի: Միսսունտէնի քով փորձ փորձեց Վիլլիսէն և հոն ալ յաղթուելով քաշուեցաւ Ռենտսպուրկ բերդը՝ ուր ընդերկար մնաց անգործ, թէպէտ գունդերը կը խնդրէին պատերազմելու: Վերջապէս Վիլլիսէն դիմեց յարձակմամբ առնելու Տրէտէրիչիա ամուր քաղաքը, բայց հոն ալ 600 զինուոր կորսնցուց: Ղքսութեանց վարչութիւնը զՎիլլիսէն անկարող համարելով, առաւ իրմէ զօրավարութիւնը և յանձնեց Ֆոն տէր Հօրսդ զօրավարին, որ մեծ քաջութիւն ցըցուցեր էր Խոստէտի պատերազմին մէջ: Բայց այս

միջոցին էր, որ Օլմիւցի Դաշնախօսութիւնը իրաւունք տուեր էր Աւստրիոյ և Բրուսիոյ միջամտելու և վերջ տալու Հիւսիսային ազգային կռուոյն: Աւստրիա և Բրուսիա 1851ի Յունուարի առջի օրերը՝ յանուն Դաշնակցութեան սպառնացան դադրեցընելու ամենայն թշնամութիւնք: Դքսութեանց վարչութիւնը տեսնելով, որ անկարելի էր ընդդիմանալ երկուց մեծ պետութեանց, յանձն առաւ գերմանական Դաշնակցութեան որոշողութեանց ենթարկուելու, որ անմիջապէս ցրուեց Շլէզվիկ – Հոլշտայնի բանակը և նոր վարչութիւն մը անուանեց խորհրդակցութեամբ Տանիմարքայի: Հին վարչութեան անդամք մեծաւ մասամբ Հարաւային Ամերիկա փախան, և աւստրիական բանակը յաղթութեամբ յառաջեց Համպուրկէն մինչև Ռէնտսպուրկ: Մեծ Պետութիւնք խօսք տուած էին Դքսութեանց՝ յարգելու իրենց իրաւունքները, բայց ընդհակառակն բոլորովին յանձնուեցան Տանիմարքայի, որ սկսաւ այն հալածանաց և խստութեան վարչութիւնը, որոնք բնաւ հիմնական օգուտ մը բերած չեն, տարագրելով ինչ որ էր գերմանացի կամ ի նպաստ գերմանական գաղափարաց Յամին 1852 Լոնտրայի Դաշամբք՝ Տանիմարքա հրոշակուեցաւ թէ և անբաժան, և Եւրոպիոյ բովանդակ պետութիւնք ընդունեցան զՔրիստիան Կլիւքսպուրկ իբրև յաջորդ գահուն, որ թագաւորը զաւակ չունէր: Տանիմարքա գրաւեց Դքսութեանց պատերազմական մթերքը իբրև աւար պատերազմի, և բովանդակ Եւրոպա ճանչցաւ Տանիմարքայի Պետութիւնը Աքակէրաքէն մինչև Էլպա, և Սունտէն մինչև Հիւսիսային ծով:



ԳԼՈՒԽ ԼԱ

ԻՆՔՆԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՒԻ Ի ՄԱՃԱՌՍՏԱՆ

1. Փափագ ինքնիշխանութեան. Գժտութիւն խռուաթնկերու և Սերպերու. Ելլաչիչ. — 2. Քոչութ. Մանառաց բանակները. — 3. Վինտիչկրաց ի Մանառտան. — 4. Մանառք բնդդէմ Դրանսիականոց. — 5. Պատերազմ բնդ Աւստրիոյ. — Կռիւ ի Նակի Սարլոյ — Յաղթութիւն Մանառաց. — 6. Աւստրիացիք կը թողուն զԲէլչը. Մանառք կը տիրեն Պուտայի. — 7. Առժամանակեայ վարչութիւն. Քոչութ և Կէօրկէյ. — 8. Միջամտութիւն Ռուսաց. Բանակք Փաօքեիչի և Հայնաի. — 9. Փոփոխակի յաջողութիւնք. — 10. Պատերազմ Իմշվարի — Կէօրկէյ դիկտատոր. — 11. Կէօրկէյի անձնատուր բլլալը. — 12. Հայնաի անաւոր դատապարտութիւնքը. (սժանեան Պետութեան պաշտպանութիւնը. — 13. Քոչութ յԱնգղիա և յԻտալիա:

1. Փափագ ինքնիշխանութեան. Գժտութիւն խռուառդնկերու և Սերպերու. Ելլաչիչ: — Ընդհանուր ազգաց ազատականութեան կամ ինքնիշխանութեան համար իլլրտմանց ժամանակ, Աւստրիոյ Պետութեան ներքև եղող կարիճ ժողովուրդներէն մին, իրեն անցեալ յիշատակներով եռանդնացեալ, ինքն ալ յոյս մը ունեցեր էր ձեռք բերելու նախկին մեծութիւնը և ինքնիշխանութիւնը: Յաջող պարագայք քիչ մը ժամանակ արծարծ պահեցին այս յոյսերը, բայց փութով մարեցան արեան մէջ, թողլով միանգամայն 1848ի ամենագան իջից մէջ կտրիճ և տխուր էջ մը:

Մանառտան ի բնէ զօրաւոր՝ չէր կրնար անտարբեր մնալ ինքնիշխանութեան համար մրցմանց մէջ: Բայց ինչ որ ինքը կը զգար, նոյնը հաւասարապէս կը փա-

փողերն իրեն Աւագածողովոյն ներքեւ գանուող ուրիշ փոքր ազգերն ալ : Աւստրիա գաղտ գրգռեր էր այդ փափագները, և զՄաճառս տկարացընելու մտքով՝ ճարտար և կտրիճ Ելլաչիչ խուռաթը իւր ազգակցաց զո՛ն կամ հրամանատար կարգեր էր : Ելլաչիչ՝ պահ-պանողական տեսութեամբ՝ յամենայնի համամիտ էր Արքունեաց : Եւ այն ինքնօրէնութեան պահանջը ունեցան նաև Սերպք. և երբ մաճառ Աւագածողովը մերժեց խնդիրնին, ծածուկ միաբանեցան Ելլաչիչի հետ և այլ ևս « չէին ուզեր հնազանդիլ ասիական բարբարոսաց », ինչպէս կը կոչէին զՄաճառս :

Ելլաչիչ ամէն կողմ՝ կը հրատարակէր՝ որ եկեր էր նուաճելու յանուն կայսեր մաճառ ապրտամբ կուսակցութիւնը, և իւր գունդերով հասաւ մինչև ի Փլադէն : Մաճառ գունդերու հրամանատարք՝ մեծաւ մասամբ աւստրիացի ըլլալով, բնական է շուարեցան, որով անորոշ բնութեայք բռնեցին : Միանգամայն Մաճառք յուսալով խաղաղ կերպով լմնցընել խնդիրը դիմեցին ի Վեննա, նոյնը բրին նաև Խուռառք : Մաճառք կը ջանային ստացած ի բաւուրքնին ցուցընելու, բայց ի զուր . Պադպիանի մաճառ պաշտօնարանին գլուխը կը մեկնէր Ելլաչիչէն՝ ըսելով « որ ընդ հուպ նորէն զինքը պիտի տեսնէր Տրալի ասիունք : » — « Այ, պատասխաններ էր պանը, ես կուգամ զՁեզ գանալու Կանուրի վրայ » : Եւ յիրաւի Սեպտեմբեր 9ին անցաւ զՏրալ. միանգամայն Սդրադի-Նիրովիչ սլաւաց առաջնորդը ինքնին միայն 30,000 մարդ գումարեց և 100 թնդանօթ : Մաճառք Վեննայի խորհրդարանին նուիրակութիւն մը զրկեցին, բայց այն ժողովոյն մէջ ալ Սլաւականք աւելի ազդեցութիւն ունենալով, մերժուեցաւ նուիրակութիւնը, և Մաճառք աւելի հաստատեցան մտքերնուն մէջ՝ որ կայսերական արքունիքը հակառակ էր Բեչդի ժողովոյն և բնաւ թոյլ պիտի չտար Մարտի խոստմանց գործադրութեան, և զիրենք ջաղխելու համար ոտք կը հանէր սլաւ ազգերը :

2. Քոշուժ . Մաճառաց բանակները : — Ելլաչիչի սահմանքը անցնելը և Բէչդի մօտենալը աւելի սաստ-

կացուց զայրոյթը, որ Քոչութի ժողովրդական պերճախօսութենէն արծարծեալ մինչև մոլեգնութեան դարձաւ: Պալատինեան իշխանը՝ արշիդուքսն Ստեփանոս, չգիտնալով ինչպէս շարժիլ այսպիսի պարագայի մը մէջ, թողուց քաշուեցաւ, Պաղղիանի և Լօղվէօս հրաժարեցան պաշտօնէութենէն և բովանդակ վարչութիւնը Քոչութի ձեռքը մնաց, որ իբր նախագահ Ազգային Պաշտպանութեան ստացաւ Գիկտաստրութիւն մը՝ ունենալով օգնական մոլեռանդն հայրենասէրներ. և յայտնի էր ոգիներուն ինչ աստիճանի մէջ գտնուիլն՝ Լամպէրկ կոմսին սպաննուելէն Բէշդի և Պուտայի կամըրլին վրայ, զոր Աւստրիա ընդհանուր հրամանատար կարգեր էր մաճառ գունդերուն: Այս ահաւոր դէպքին հետ միանգամայն լսուեցաւ ի Վեննա, որ մաճառ դօրափարն Կէօրկէյ կախաղանի դաստապարտեր էր զԿոմսն Զիբի՝ գործակատար կայսեր Ելլաշիչի բանակին մէջ և անոր ստացուածքը գրաւեր էր: Այն ատեն Աւստրիոյ վարչութիւնը մէկէն հրամայեց ցրուել մաճառ խօսարանը, բոլոր երկիրը պաշարման վիճակի մէջ դրաւ, և զԵլլաշիչ ընդհանուր հրամանատար կարգեց բոլոր կայսերական գունդերուն ի Մաճառտան և ի մօտակայս: Սակայն Ելլաշիչ արգէն երկու անգամ յաղթուեր էր ի Մաճառաց՝ երբ Վեննայի Հոկտեմբերի յեղափոխութեան համար մայրաքաղաքը կանչուեցաւ: Վեննացիք զՄաճառս իրենց օգնութեան կանչեցին, և չթողուցին որ Մաճառաց դէմ գունդեր մեկնին ի Վեննայէ, սակայն Մաճառք յապաղեցին կամ չուզեցին թերեւ ուղղակի կռուիլ Աւստրիոյ դէմ, և Շվէտագի քով քիչ վերջը յաղթուելով, Վեննացիք անօգնական մնացին:

Վեննայի անկմանէն վերջը Կայսերական մասը զօրանալով, տեսաւ Փերտինանտոս, որ այսպիսի վարչութեան մը հետ կը հակառակէին Մաճառստանի իր տուած շնորքները և խոստմունքները, լաւ համարեցաւ հրաժարել ի նպաստ իւր Փրանկիսկոս Յովսէփ թոռան: Մաճառք, որ կայսեր բանակներուն դէմ կռուելու ժամանակ իսկ, ծիծաղական հպատակութեամբ միշտ

զիրենք կը հռչակէին հաւատարիմ « իրենց սիրեցեալ թագաւորին », Փերտինանտոսի հրաժարումը չընդունեցան, և հրատարակեցին՝ որ նոր թագաւորին որ և է իշխանական արարքը՝ չէին ճանչնար մինչև որ չգայ ի Մաճառստան հոն չպսակուի և չերդնու սահմանագրութեան վրայ, ինչպէս օրէնքն էր : Միանգամայն Աւստրիոյ սպառնալից հանդերձանաց դէմն առնելու համար՝ Քոչութ կրակոտ հրաւէր մը գրեց առ բոլոր Մաճառս՝ որոնք կարող էին զէնք կրելու, և ընդ հուպ, զարմանալի բան, 20, 000 հոգևով բանակ մը կազմուեցաւ նոյն անուամբ այսինքն Պաշտպանք հայրենեաց . կազմեց նաև օտար գունդերը, յորում մեծ մասը Լեհացիք էին : Իրենց առաջին զօրավարները եղան Արդուր Կէօրկէյ, Մեսծարոս, Փէրցէյ և Քիս, յորս Կէօրկէյ թէ իր հանձարով և թէ փորձով մեծ անուն ունէր : Ինքը ծննդեամբ գերմանացի, աւելի փառասիրական քան հայրենասիրական ոգևով գլուխ կեցաւ ապստամբութեան, համարելով միանգամայն հնազանդիլ այսպէս թագաւորական կամաց, զոր միշտ պատրեալ կը համարէր ի մերձաւորաց : Քոչութ զիմեց, բայց ի զուր, նաև ուրիշ պետութիւններէ օգնութիւն կամ ի նպաստ Մաճառաց ինքնիշխանութեան միջամտութիւն խնդրելու ¹ :

3. Վինտիլկրայ ի Մաճառստան : — Վինտիլկրայ իշխանը բոլոր Մաճառստանի գունդերուն հրամանատար անուանուելով, Գեկտեմբեր 15ին մտաւ ի Մաճառստան, և առանց դժուարութեան փոքր քուպարածներով առաւ դէօստէնպուրկ, Փրէսպուրկ, Ռասայ և ուրիշ աւաններ և որոշեց մի և նոյն միջոցին ութը գունդով զիմել Բէշդ մայրաքաղաքին վրայ, որուն մօտե-

1. « Քոչութ զիմեր է, կը տեսնուի ամերիկայի հիւպատոսին որպէս զի խնդրէ պինազադարումն ի վինտիլկրայէ : Ե՛մ է ինչդիրը մերժուի այն ատեն պիտի խնդրէ Ամերիկայի միջամտութիւնը : Հիւպատոսը նամակները զրկեց միայն առ Քեյս—Մարաշխատար, որ պատասխանեց թէ չէր կրնար բանակցիլ ապստամբելոց հետ » : Յէլ. Մեդեթէթ. 2. Ը.

ցան դիւրաւ սառոյցներու վրայէն սահելով 1849ի սկիզբը: Մաճառք նուիրակութիւն մը զրկեցին դաշնախօսութեան, որուն գլուխ կեցած էր Պաղդիանի, սակայն նուիրակութիւնը մերժուելով Յունուար 4-5ին գիշեր Քոչութ ձգեց լուծեամբ Մաճառ բանակին հետ քաղաքը՝ հետը տանելով ի Տէպրէցին բոլոր պատերազմական մթերքը, Ս. Ստեփանոսի թաղը, բոլոր թագաւորական նշանները և մամուլ մը թղթադրամ՝ արւպելու, իրեն հետ մեկնեցան նաև Երկրին պաշտպանութեան ընկերութիւնը և Խօսարանին երեսփոխանքը: Երկրորդ օրը, Վինտիչկրաց՝ Ելլաչիչ պանին հետ միաբան իր մուտքը ըրաւ ի Պուտա-Բէշդ, և անոնց բանալիքը կայսեր զրկեց: Պաղդիանի բռնուեցաւ, ամէն կողմ՝ զինուորական ատեան հաստատուեցաւ և սարսափը տիրեց ի մայրաքաղաքին:

15 Յուն.
1849

4. Մաճառք ընդդէմ Իրանսիլվանիոյ: — Այս դէպքերը հանդիպած միջոց Մաճառստան կը կուէր միանգամայն այն փոքր ազգաց հետ, որոնք իրեն հետ միութիւնը արհամարհէր էին, և յորս առանձին ազգութեան նոր հողմը՝ զիրենք իրենց լեռներէն և հանդարակեանքէն պատերազմական դաշտի վրայ բերեր էր: Նախ Խուճանները խնդրեցին և ընդունեցան ի կայսրութենէն Սասոններուն և Մաճառներուն հաւատար իրաւունքներ ունենալ և իրենց երեսփոխանները զըրկեցին ի Վլազէնպուրկ: Մաճառք և Ձէքլէրք ջանացին, որ Իրանսիլվանիոյ աւագաժողովը խնդրէ ի կայսրութենէն անբաժանելի միութիւն մը Մաճառստանի հետ, որուն զիջեր էր Փերտինանտոս 1848 ի փոթորկալից օրերուն: Սակայն Իրանսիլվանիացիք փութով մաքերնին փոխեցին: Նախ Խուճանք հռչակեցին որ կ'ուզեն միանալ կայսրութեան հետ, սպա Սասոնք ծանուցին, որ իրենք նախամեծար կ'ընարէին իրենց նախկին ազատութիւնքը քան իւր խոստացեալ բարեկարգութիւնքը, և այսպէս միացան կայսերական գունդերուն: Մաճառք և Ձէքլէրք իրենց կտրիճ ձիաւորներով արշաւեցին Սասոնաց երկիրը, և իրենց կատաղութեան առջև շարեցաւ ոչ սեռ և ոչ հասակ: Նոյնը ըրին նաև Խուճանք իրենց մերձաւոր երկիրներուն մէջ. իսկ Սա-

սոնք աւելի անվարժ կուլեներու, իրենց օգնութեան կանչեցին Փուխնէր աւստրիացի զօրավարը իր գունդերովը: Բոլոր Գրանսիլվանիա ոտնակոխ եղաւ. աւելի յափշտակութեան և աւազակութեան արչաւանք մ'էր քան օրինաւոր պատերազմի, մինչև որ 1849ին սկիզբները Պէմ լեհ ազնուականն եւ կորովի զօրավարը մաճառ գունդերուն հրամանատար եղաւ ի Գրանսիլվանիա: Պէմ համոզուած՝ որ Մաճառք թէ միանային Սլաւաց, Ռումաններու հետ կարող էին դէմ դրնել Աւստրիոյ, ջանաց այս միութիւնը կատարել տալ, մի և նոյն միջոցին ինկաւ Սասսոնաց վրայ, որոնք դաշնակցեր էին Աւստրիոյ հետ և տիրեց անոնց Քրոնշդատ և Գլաւգէնպուրկ երկու մեծ քաղաքներուն և պաշարեց նաև գլխամանչդատ:

Փուխնէր՝ Պէմի դէմ պէտք եղած զօրութիւնը չունէր և Սասոնք որչափ որ ալ դիւցազնութեամբ կը պաշտպանէին գլխամանչդատ՝ սակայն անկարելի էր դիմանալ ընդ երկար: Այն աստն սաստն և ռուման ազգապետք՝ Աւստրիոյ ձեռքով իրենց օգնութեան կանչեցին զՌուսս, որոնք երկու ամսէ ի վեր հաւաքուեր էին Վալաքիոյ սահմանագլուխը և սիրով ունկնդիր եղան. և Էնկէրհարտ զօրավարը Գրանսիլվանիա մտաւ 6000 հոգով և քսան լուծ թնդանօթով, յետ մոլեգին կռուոյ առաւ դարձեալ զՔրոնշդատ և գլխամանչդատ, և զԱւստրիացիս մեծ հոգէ մը ազատեց, որոնք մեծապէս զրաղած էին Մաճառստանի կեդրոնը ընկճելու:

5. Պատերազմ ընդ Աւստրիոյ. — Կուլի ի Նակի Սարայ — Յալթուլիւն Մաճառաց: — Աւստրիոյ վարչութիւնը կը համարէր՝ որ Պուտա-Քէշգի անկմամբ և պաշարման վիճակով, լմնցուցած ըլլայ ազգայնութեան կռիւր, զԵլլաչիչ կուսակալ անուանեց Տալմացիոյ՝ իւր առաջին պաշտօնը միանգամայն պահելով. հաւանեցաւ Սերպիոյ վայժոտայութեան բաժանման, և սկսաւ Գրանսիլվանիոյ՝ Մաճառստանի միութենէ բաժանման վրայ խորհիլ: Այս նիւթը կրկին զրգռեց մաճառ սգիները, որոնք այս միջոցով կը նկատէին իրենց հայրենեաց անկումը. իրենց յուզմանը մասնակից գրաւ

նուեցան լե՛հ անուանի գաղթեալ զօրավարք, յորս Տէմ-
պինաքի և Պէմ, որոնք կը յուսային Մաճառստան ա-
զատելէն վերջը միաբան զօրութիւննին գործածել ի-
րենց սիրեցեալ Լեհաստանի համար: Այսպիսի միջոց
մը Քոչութի խօսքը կայժ մը եղաւ բորբոքելու Մաճա-
ռաց պէս հայրենասէր ժողովուրդը, ամէն կողմէն դի-
մեց բազմութիւն մը ինքնակամ զինուորաց: Քոչութ
հաւանութեամբ Խօսարանին վախճուն միլիոն թղթա-
դրամ տպել տուաւ, բանակին ընդհանուր սպարապետ
անուանուեցաւ Տէմպինաքի, որ մեծ նախանձու առիթ
եղաւ Մաճառ զլիսաւորաց նա մանաւանդ Կէօրկէյի-
ուրիչ գունդերու կը հրամայէին Մեսծարոս, Փէրցէլ և
և Քլաիկա: Պատերազմը ընդհանուր տարածուեցաւ,
բայց Քափոնոյի արիւնահեղ պատերազմով որ տեւեց
երկու օր, Մաճառք գիւցազնական կերպով կուտե-
լով հանդերձ, մեծ շահ մը չունեցան, Կէօրկէյի՝ նա-
խանձու պատճառաւ դանդաղ շարժելուն համար: Սա-
կայն Պէմ՝ Փետրուարի մէջ բռնեց ամբողջ Իրանսի-
վանիա, և Ռուսք բռնադատուեցան թողլով զՔրոնչ-
դաս և զհրմանչդատ՝ քաշուիլ սահմանագլխէն ան-
դին, նոյն իսկ Փուխնէր հալածուելով ի Պէմէ բոլոր
բանակով ի Վալաքիա քաշուեցաւ, ուրիչ գունդեր ալ
հոս հոն ցրուեցան:

Փետր.
26 - 27.

Գարնան սկիզբը Վինտիչկրաց մայրաքաղաքէն մեկ-
նելով կայսերական մեծ բանակով կը յուսար փութով
խորտակել մաճառ բանակը Դայսի ձահիճներուն մէջ,
ուր սպաւիներ էր. բայց պարտեցաւ: Տէմպինաքի մեծ
յաղթութիւն մը տարաւ Շլիք զօրավարին վրայ, նմա-
նապէս ուրիչ զօրավարներ ալ պարտեցան ի Յէկլէտ,
Հադվան, Կէօտէօլլէօ և յիսասցէկ: Վէլտէն աւստրիա-
ցի մարաշախտը տեսնելով, որ անկարելի էր յարձակ-
մամբ առնուլ Իանուրի վրայ Քոմորն ամուր բերդը, սահ-
մանեց քաղաքը պաշարելու: Այս միջոցիս Մաճառք,
որոնց ընդհանուր սպարապետ անուանուեր էր Կէօր-
կէյ, պաշտպանողականը թողլով վանողականը սկսան,
և որչափ կը մօտենային Պուտա-Բէչդի, այնքան զօ-
րաց եռանդը կ'ածէր: Զատկին օրերը սկսան կռիւ-

ները Պուտա-Բէշդի մօտերը՝ զոր կը պաշտպանէին Վինտիչկրաց և Ելլաչիչ: Ուրիշ Մաճառ գունդեր, որոց կը հրամայէին Տամեանիչ և Քլափկա, թշնամեաց գունդերուն շրջան ընելով տիրեցին Վայցէն ամուր աւանին, ուր ինկաւ հարուածեալ աւստրիացի Կէօց զօրավարը: Կէօրկէյ, միաբան ընդ Տամեանիչ և Քլափկա զօրավարաց անցաւ Կրանը. յաղթեց Նակի-Սարլոյի քով աւստրիացի զօրավարին և ազատեց զՔոմօրն, զոր թշնամի բանակը շաբաթէ մը ի վեր կը սրմբակոծէր, և որուն աշտարակաց վրայ կարմիր դրօշը կանգնէր էր ժողովուրդը ի նշան մինչև ցվերջ յուսահատ կռուելու:

6. Աւստրիացիք կը թողուն Վէշդ. Մաճառք կը տիրեն Պուտայի: — Այս ձախողութեանց վրայ Վինտիչկրաց և ուրիշ զօրավարք իբրև անկարողք յետս կոչեցան ի Վեննա, և բանակին ընդհանուր հրամանատար անուանուեցաւ Վէլտէն: Սակայն նախընթաց ձախողութիւնքը այն վիճակի մէջ դրեր էին զԱւստրիացիս, որ ալ անկարելի էր մնալ մաճառաց մայրաքաղաքին մէջ, և զԲէշդ Ապրիլ 23ին ձգելով քաշուեցան ի Պուտա յետ այրելու երկու քաղաքաց հաղորդակցութեան կամուրջը: Երկրորդ օրը Մաճառ գունդերը կը մրսնէին ի Բէշդ անպատմելի ուրախութեամբ և հանդէսներով: Երկու օր վերջն ալ Քոմօրն պաշարող գունդերը կը թողուն զպաշարումը, որովհետև Կէօրկէյ յանկարծակի նոր կամուրջ մը ձգելով Վանուրի վրայ տիրեր էր թշնամեաց պատնիշաց:

Կը մնար սակայն տիրել Պուտայի՝ ուր կայսերական գունդերը յուսահատ պաշտպանութեան մը պատարաստուեր էին, և երբ Մայիսին սկիզբները Կէօրկէյ իր կտրիճ գունդերով պատուարաց դիմաց երեցաւ, Պուտայի ընդհանուր հրամանատարը Հէնցի, ազգաւ զուիցերացի, պատուիրեց զոցել զոնները, բերդերը և փոսեր փորելու, ամբարտակներ կանգնել և միով բանիւ ամենայն հանդերձանք տեսնել: Կէօրկէյ՝ շարունակ ումրակոծմամբ և ականներով աւրեց խանգարեց պաշտպանութեան հանդերձանքը: Հէնցի. զԿէօրկէյ հե-

ուսցընելու համար քաղքին մէկ մասին կրակ տուաւ : Մայիս 21ին սկսաւ ահաւոր կրակ մը՝ զոր ուժգին հողմ՝ մը աւելի կը ձարակէր : Երկրի և տարերաց շփոթութեան միջոց ուժգին յարձակումն տուաւ Կէօրկէյ և մտաւ ի քաղաքն, ուր աննկարագրելի էր երկու կողման մոլեգնութիւնը և կորովութիւնը : Քայլ առ քայլ հարկ էր յառաջել . դաւիթներուն և տանց մէջ ահաւոր կռիւներ կային, գետինը դիակամբ ծածկուած էր : Հէնցի դիւցազնաբար ինկաւ կռուելով, միւս մնացեալ զինուորները ջարդուեցան, և աւստրիական գունդերը ի Փրէսպուրկ քաջուեցան՝ հոն նոր օգնութիւն ընդունելու¹ :

7. Առժամանակեայ վարչութիւն . — Քոչուլէ եւ Կէօրկէյ : — Մաճառք ի հարաւային Մաճառստան ալ յաղթեր էին Աւստրիացուց, որոնք օտար երկիր դիմեր էին . և Խօսարանը որ կը գտնուէր ի Տ՛ պրէցին, ցնծացած այս յաղթութեան վրայ հրատարակեց Մաճառստանի անկախութիւնը, և Առժամանակեայ վարչութիւն մը կազմեց, որուն գլուխ դրուեցան Քոչուլէ՝ կառավարիչ անուամբ, և կոմսն Պադդիանի՝ պաշտօնեայ Արտաքին Գործոց : Բայց ոչ մի պետութիւն Եւրոպիոյ, բաց ի Վենետիոյ նորահիմն Հասարակապետութենէն, որ ինքն ալ չէր ձանչցուած, չընդունեցաւ Մաճառստանի այս վիճակը : Վարչութեան այսպիսի հասարակապետական ձև մը առնուլլ՝ պատճառ եղաւ Քոչուլի և Կէօրկէյի մէջ եղած տարաձայնութեան : Կէօրկէյ իր ամենայն պատերազմական հանձարովն և քաջութեամբ՝ ոչ զօք կրնար իրմէ վեր նախադաս տեսնել : Թէպէտ ընդհանուր սպարապետ, թէպէտ և պատերազմի պաշտօնեայ անուանուեցաւ, այսու հանդերձ անկարելի եղաւ զինքը հաշտեցընել Քոչուլի հետ . իր գոռոզ փա-

1. Չինուորական գրիչք կը ստգտանեն զ՛ Կէօրկէյ Պուտայի վերայ գիմելուն համար, մինչ հարկ էր, կ'ըսեն, ընթանալ ի Վիննա . և Կէօրկէյ որ իր մտաց մէջ պատրաստեր էր Աւստրիոյ հետ միութիւն մը, կայսեր հանց ըլլալու համար (կ'ըսեն), Վիննայի վրայ չգնաց :

ուսիրութեամբ նոյն իսկ կ'արհամարհէր այն ամենայն պատիւ և աստիճան, զոր Խօսարանը վճռեր էր ի պատիւ իրեն, և գիտնալով ինքնին իր մեծ կարողութիւնը, ամենայն ինչ սկսաւ ինքնագլուխ գործել, և այս եղաւ ահա Մաճառաստանի իրաց ձախողելուն պատճառ :

8. Բանակք Փասքեւիչի եւ Հայխուսի: — Աւստրիա յետին ահաւոր պարտութիւններէն սարսափած և գիտնալով՝ որ միայնակ կարող չէր դէմ դնել, Ռուսաց կայսեր դիմեր էր : Ի Վարչաւիա տեսաւորութիւն մը եղեր էր ընդ Նիկողայոս և ընդ Փրանկիսկոս Յովսէփ : Չարք ինքնայօժար խոստացաւ օգնելու Աւստրիացոց ընկճելու զՄաճառոս և անով ազգայնութեան ընդհանուր ոգին, մանաւանդ որ Լէնչք մեծ ուրախութեամբ կը դիտէին Մաճառաց յաջողութիւնքը : Ի զուր Լատիսլաւ, Գէշէքի ի Բարիզ և Յուլիոս Անարաչի ի Տաճկաստան՝ կը ջանային այս միջամտութեան դէմ նոր դժուարութիւններ հանել ի նպաստ իրենց հայրենակցաց, փութով հանդերձանքք տեսնուեցան, և Մայիսի վերջերը ռուս զունդերը մշտայաղթ Փաքեւիչի հրամանատարութեան ներքեւ անցնելով ընդ Գրագովիա և Տուքլա, զանազան կողմէ մտան ի Մաճառաստան, մինչ Աւստրիացիք նոր օգնութեամբ կը յառաջէին դէպ յարեւելս ընդ հրամանատարութեամբ Հայնաւ զօրավարին. և Ելլաչիչ պանը հարաւէն կը մտնար ի Մաճառաստան : Այսպէս յամենուստ պաշարեալ յայտնապէս տեսաւ, որ ահաւոր կռուոյ հարկ էր հանդերձիլ :

9. Փոլիովսակի յաջողութիւնք : — Քոչութի ձայնը կրկին անգամ ոգիները արծարծեց և մոլեգին եռանդ մը բերաւ կռուելու : Քոչութ պատուիրած էր, որ ամենայն աւան և դաշտորայք աւերակք դառնան թշնամեաց բանակներուն առջև : Սրուան ջերմութիւնը, գիշերուան ցրտութիւնը և Գայսի չրջապատի ճահիճները փոխանցիկ հիւանդութիւն պատճառեցին թշնամի բանակներուն, որոնք մեծամեծ կորուստներ ըրին : Այսու հանդերձ առաջին գուպարածներուն մէջ Աւս-

տրիացիք յաջողութիւն գտան, և Վահլկէմնութ և Հայնաւ վանեցին զԿէօրկէյ մինչև Քոմորնի պատուարները: Այն ատեն Հայնաւ հրովարտակով մը հրաւիրեց զՄաճառս զինաթափելու և ծանր պատուհաս ըսպառնացաւ Տէպրէցիների վարչութեան օգնողաց: Մաւէաօք շուգեցին մտիկ ընել: Քիչ օր վերջը կայսերական գունդերը Փասփեիչի գունդերուն հետ Պուսաթէշդ մասն, ուսկից փախեր էր Քուչութ, և Հայնաւահաւոր պատիժները սկսաւ ընդդէմ հայրենասիրաց: Մահ էր պատիժը ով որ համարձակէր խօսք մը ըսել ի նպաստ ապստամբութեան, և Քոչութի թղթադրամը առնել, տալը, ունենալը, մահուամբ կը պատժուէր: Հարաւային կողմէն ալ յաջողութեամբ կը յասաջուէր և Փէրցէլ զօրավարը վանուեր էր: Կէօրկէյ անորոշ և երկմիտ ոճով կը գործէր, Քոչութ ընդհանուր հրամանատար անուանեց զՊէմ, և Տէպրէցիների Խօսարանը իրեն ենթարկեալ սպասութեանց հաստատութիւնը հրատարակեց. բայց շատ ուշ:

Այսու հանդերձ տակաւին Մաճառստանի վերջին ժամը չէր հնչած: Թշնամի գունդերը օրերով բռնապատուած չուելու ջերմ, ճախճախաւ և անշովանի աւերակ երկիրներու մէջ, յետին խեղճութեան մէջ էին. փութով մաղձախար սկսաւ և Պէմ յետ յանդուգն կռուոյ մը, յետ խիստ պաշարման մը տիրեց Արատ ամրոցին և Եւաշիչի բանակը ստիպեց քաշուիլ գէպ ի Գայս Գանուրի վրայ, և այսպէս յաղթական յառաջեց մինչև ի Նէվասց և ի Փէդրվարատին, սակայն չյաջողեցաւ տիրելու Գմշվարի, զոր Ռաքավինա Աւստրիացի զօրավարը մեծ քաջութեամբ կը պաշտպանէր, թէպէտ քաղփին մէջ մաղձախար ահաւոր ջարդ կ'ընէր, և որուն զոհ եղաւ քիչ վերջը նաև նոյն իսկ հրամանատարը: Յուլիսի վերջերը և Օգոստոսի սկիզբները վերջապէս Պէմ Գրանսիլվանիա հասաւ, սրուն մեծաւ մասամբ տիրեր էր Լուտերս ուս զօրավարը, և իրեն հոն հասնիլը աւելի սասակացուց թշուառութիւնները երկրի մը մէջ, որ ստէպ յաղթողէ յաղթող անցնելով բազում անգամ աւերածի բազմը կրեր էր:

10. Պատերազմ Գինձվարի. — Կէօրկէյ դիկտաւտոր: — Այս միջոցիս Քոչութ՝ պաշտօնէից և Խօսարանին երեսփոխանաց հետ ի Չէկէտին կը գտնուէր, հոն Խօսարանը կատարեց իր վերջին նիստերը, յորս յայտնապէս կը տեսնուէին երկպառակութեանց և կուսակցութեանց սգիները, հարկ էր Կէօրկէյի ձեռքէն առնել ընդհանուր սպարապետութիւնը, բայց այս էր ամենէն դժուարինը: Քամորն սակաւին պաշարուած էր՝ զոր քաջութեամբ կը պաշտպանէր Քլարիկայ, նա մանաւանդ անգամ մը զորս ելլալով զթշնամին վաներ էր մինչև ի Գասալ: Արդէն Ռուսք՝ Փապիւրի, Սուգէն – Սախրնի և Կրասկի առաջնորդութեամբ հասեր էին մինչև ի Թոքոյ և Միաքոց, երբ Կէօրկէյ սակաւին անգործ կեցեր էր Քամորնի քով, յետոյ ջանացեր էր ի դուր Ռուսաց և Ասարիացոց հաղորդակցութիւնը կարել, սակայն յիս յաջող բաղխման մը ի Վլայցէլ հասաւ մինչև ի Գայս:

1849

Օգոստ. 2.

Թշնամեաց գունդերը անհամեմատ աւելի էին իւրեններէն, որով և Տէպրէցիւնի քով յաջող կուուէ մը վերջը սկսաւ քաջուիլ յարեւելս՝ դէպ ի հարաւ իր կրթունկը ունենալով զՌուսս՝ որոնք զինքը կը հալածէին, և Սգոստոս Տին հասաւ ի Վիրսկոս դաշար, մօտ Արասի, այնպիսի դիրք մը՝ ուր անկարելի կ'երեւար պատերազմը շարունակել: Այս միջոցիս ալ Հայնու՝ աւսարիացի և ռուս գունդերով Բէչզէն դէպ ի ստորին Գայս չու մը սկսեր էր, և ի Չէկէտին անցներով զգետը կը վանէր առջևէն զՄաճասս դէպ ի հարաւ-արեւելք: Հասնելով Գինձվարի մօտ զոր Մաճառները պաշարեր էին, զարնուեցաւ անոնց հետ և վանելով ազատեց զքաղաքը՝ ուր մաղձախտը և սովը մեծ ջարդ րբեր էին: Գինձվարի պատերազմէն վերջը Տէմպիւնսքիի և Մեւթարոսի գունդերը զրուելով՝ մնացած խումբերը ժողուեցան Արասի մօտ, ուր կը գտնուէր Քոչութ Աւթամանակեայ վարչութեան հետ, և ուր հասաւ նաև Կէօրկէյ, որ չուոյն միջոց զանազան անգամ ընդուներ էր ծածուկ ռուս սպաներ ի բանակցութիւն: ՅԱրասս գումարուեցաւ վերջին պատերազմական ժողով-

քը և քուէից առաւելութեամբ որոշուեցաւ, որ Քուշութ հրաժարի պաշտօնէն և զիկտատորութիւնը յանձնուի Կէօրկէյի: Ասով կը համարէին շահիլ զԿէօրկէյ: Օգոստոս 11ին երկու հրամանք՝ մին ստորագրեալ ի Քուշութէ և յԱստամանակեայ վարչութենէն, միւսն՝ յԱրդուր Կէօրկէյէ զայս կը ծանուցանէր:

11. Կէօրկէյի անձնատուր ըլլալը: — Եւ ահա ի մեծ զարմանս բոլոր Մաճառաց՝ Օգոստոս 13ին առաւօտը նոր զիկտատորը 30,000 հոգևով բանակով մը և 120 թնդանօթով անձնատուր կ'ըլլար ոռու Ռուսեկէր զօրավարին ի Վիլսկոս՝ առանց գրաւոր պայմանի մը: Անկարելի էր նկատազրել մաճառ բանակին մոլեգնութիւնը, զայրոյթը և ամօթը այսպիսի վատութեան մը վրայ:

Այնքան կարիճ երիտասարդներու կենաց ի զուր կարուստը, լիճ զօրավարաց հեա ունեցած հակառակութիւնը և մանաւանդ Քուշութի զէմ նախանձը, պատճառ եղեր էին Կէօրկէյի այսպիսի գործ մը կատարելաւ, զոր մաճառ ազգասէրք ընդհանրապէս կոչած են պատմութեան մէջ մասնութեան անուամբ, և որ մեծ արատ մը բերաւ Կէօրկէյի պէս զիւցապնի մը անուան¹: Առսարիացիք զաղաւ վշտացան տեսնելով որ օտարին ձեռքով գործը այսպէս կը լմըննար, մինչ իրենք կը կարծէին ընդհանուր բաղխամբ մը նուսձել ապստամբութիւնը:

Ի զուր յուսացեր էր Կէօրկէյ, որ Ռուսք ազատ կը թողուն բոլոր զինուորները և այս յուզման զլխաւորքը: Իրեն միայն հրաման տուին, այս մեծ ծառայութեանը համար, բնակել ի Գլակէնֆորդ, միւս ամէնքն ալ դատաստանի ներքոյ ձգուեցան: Արատ և Փէդրվարա-

1. Յամին 1884 Նոյեմբեր 14, պատուաւոր նուիրակութիւն մը, յորում կը գտնուէին կոմսն Յուլիոս Անդրաշի, զօրավարն Գլապկա, Արքեման և Ինվանքա, յայտարարութիւն մը ուղղեց առ զօրավարն Կէօրկէյ, որ ինքը բնաւ զնայրենիս շմասնեց ի Վիլլապոս յամին 1849, և թէ իւր անունը անարատ էր: Յայտարարութեան ստորագրած էին 260 զինակիցք Կէօրկէյի:

տին ամուր քաղաքները անձնատուր եղան, Քոչութ, Պէմ, Տէնպինաքի, Մեսծարոս ապաւինեցան օսմանեան հողին՝ վերայ: Վլալաքները և Սլավաքները Գրանսիլվանիոյ մէջ դիմելով Ձէքլէրու և Մաճառներու վրայ, անհամար սպանութիւնք և աւարառութիւնք գործեցին մինչև որ Ռուք և Աւարիացիք կրցան զսպել զանոնք: Միայն Քոմորն, ուր կը հրամայէր արին Գլափկա տակաւին ամիս մը դիմացաւ, ուսկից վերջը տեսնելով որ ալ լինցեր էր բոլորովին մաճառ ազգայնութեան կռիւը, պատուաւոր դաշամբք անձնատուր եղաւ և քաշուեցաւ յօտարութիւն, և Փաթիկի կը գըրէր առ Չարը « Տէր արքայ, Մաճաստան յօստ քոյ է »: Այս տխուր վերջը կ'ունենար չքեղ հրատարակութեամբ և ազգութեան պանծալի անուամբ սկսած կռիւ մը, բայց առանց խոհական քննութեան և հաշուի. իցիւ թէ սակայն այսպէս լինցած ըլլար:

12. Հայնաւի անուոր դատապարտութիւնքը. — Օսմանեան պետութեան պաշտպանութիւնը: — Մինչ երկու պետութիւնք կը ջանային՝ որ փախստականք օտար երկիրներու մէջ ընդունելութիւն չգտնան, Հայնաւ մահու վճիռներ կը ստորագրէր այն ամենուն՝ որոնք մաս մը ունեցեր էին այս յեղափոխութեան: Լուգովիկոս Պապդիանի առաջին նախագահ մաճառ պաշտօնարանին, կախաղանի դատապարտուեցաւ, բայց նա ինքզինքը վիրաւորած ըլլալով, հրացանի բռնուեցաւ ի Ռէչդ, նոյն պատուհասը ունեցաւ պաշտօնեայն Չանի և ծերն Փէրնի՝ նախագահ բարձր Ատենին: Յետոյ կախուեցան նաև զօրավարքն Կարոլոս Վէքսէյ, Կակի Սանտոր, Լուգովիկոս Աւլիք, կոմսն Կարոլոս Լայնինկէն, Տէսէօֆֆի, Դէօրէօք, Փէօղէնպէրկ և այլք, ինչպէս նաև քաջն Տամենանիչ, որ իր փայտէ ոտքով ամենէն վերջը հասնելով կախաղանին դիմաց, « ո՛հ, հառաչեց, զարմանք, մինչ ես միշտ առաջինն էի »: Ուրիշներն ալ իրրև պարզ զինուոր խառնուեցան աւստրիական զունդերուն մէջ և օտար երկիրներ զրկուեցան: Բանտերը լեցուեցան հայրենասէրներով, յորս և քաղմաթիւ ազնուական կանայք: Բոլոր դատապար-

տեղոց սասցուածքը գրաւուեցան, Օսմանեան պետութիւնը գթած մարդասիրութեամբ այս խեղճ փախըստականներուն սպաւէն մը եղաւ. Աւստրիա և Ռուսաստան պահանջեցին անմիջապէս Տաճկաստանէն՝ որ առ ինքը սպաւ ինողքը մատնէ իրենց: Ապաիւլ Մէճիս մերժեց խնդիրքնին, և այն ատենուրնէ սկսաւ Մաճաւաց Օսմանեան Ազգին և Պետութեան հետ ունեցած առաւելագոյն համակրութիւնը: Եղան նաև այս փախստականներէն ոմանք՝ որոնք մահմէտականութիւն ընդունեցան, յորս նաև Պէմ լեհ զօրավարը՝ որ քիչ վերջը մեռաւ ի Հալէպ: Յուլիոս Անարաչի ալ կախաղանի դատաւարատուած էր, բայց ինքը փախած ըլլալով պատկերը կախուեցաւ: Ո՞վ կը կարծէր, որ ինքը օր մը այնպիսի պանծալի քաղաքագիտութեամբ պիտի կառավարէ Աւստրիա-Մաճաւական պետութիւնը, և զայն վերանորոգիչներէն մէկը պիտի ըլլար: Տէմպիւնաքիքաչուեցաւ ի Բարիզ՝ ուր մեռաւ յամին 1864:

13. Քոչուծ յԱնգղիա և յԻտալիա: — Քոչութի Մաճաւաստան թողլէն երկու տարի վերջը Անգղիա անցաւ, ուր մեծ եսանդով ժողովուրդը զինքը ընդունեցաւ: Մաճաւաստանէն շմեկնած թաղեր էր Մաճաւաց թաղը և պետութեան գոհարեղէնքը, որոնք յետոյ 1853ին պանուելով կայսեր զրկուեցան: Քոչութի Լոնարա միացաւ Մաճծինիի և Լըտրիւ Ռալէնի հետ՝ նոր յեղափոխութիւնք յարուցանելու պայմանաւ, բայց չյաջողեցաւ: Անկէ վերջը մեծաւ մասամբ ապրեցաւ յԻտալիա, և թէպէտ իւր հայրենակիցք զանազան անգամ ընտրեցին զինքը անգամ մաճաւ աւագածողութոյն, բայց երբէք չառաւ յանձն երթալու¹:

1 Այս վերջին տարիներս աւստրիական պետութիւնն անգամ հաշտ աչքով կը նայեր Քոչութի ընծայուած պատիւներուն. և երբ մեռաւ ի Դուրին յամին 1894 Մարտ 21, իւր մարմինը փոխադրուեցաւ հանդիսովի Պուտա-Բէշք, ուր թաղուեցաւ յաղթական պատիւներով:

ԻՏԱԼԻԱ ԸՆԴԴԷՄ ԱԻՍՏՐԻՈՅ . ԻԱՏԷՏՔԻ

1. Իտալիոյ վիճակը — Յեղափոխութիւն ի Միլան . — 2. Հիւտ-տորտ Միլանու . — 3. Առժամանակեայ վարչութիւն . — 4. Յեղափոխութիւն ի Վենետիկ — 5. Մանին . Հասարակապետութեան հրատարակութիւն . — 6. Յեղափոխութիւն ի Գոմոյ , Պերկամոյ , Պրէշիա , Գրէմոնա , Մանդուա , Մոտենա . — 7. Փիէմոնթի բանակը ի Լոմպարտիա . — 8. Գոսպանա , Հոովմ , և Նափոյի կը մասնակցին պատերազմին — 9. Պատերազմուք ի Փասզրէնկօ , Սանդա Լուչիա , Գորնուտա , Գուրչադոնէ , Կօիլօ , Վիչէնցա . — 10. Իստեցքի յաղթութիւնքը անկուռ Վիչէնցայի . — 11. Մայիս 15 ի Նափոյի . — 12. Բանակցութիւնք միութեան Լոմպարտիա — Վենետիկոյ ինչ փիէմոնթի . — 13. Պատերազմ Գուստոզայ — Աստրիա-ցիք կը տիրեն Միլանու :

1. Իտալիոյ վիճակը . Յեղափոխութիւն ի Միլան : — Վեննայի մէջ հանդիպած ազատական շարժումներէն ըր հարկ էր , որ իրենց արձագանգը ունենային նաև ի Լոմպարտիա — Վենետիկ , ուր աւստրիական խիստ ուտիկանութիւն մը անհանդուրժելի լուծ մը եղած էր ժողովրդոց , և ուր օտարին անունը դարերէ ի վեր ատելի անուն դարձեր էր հպատակաց :

Բարիպու , Վեննայի և Պէռլինու յեղափոխականք ինքնօրէն ազատ վարչութիւն մը կը պահանջէին . բնաւ օտար մը մերժելու մտածութիւն չկար , բայց Իտալացիք հարկ էր՝ որ այս ազատական իրաւունքները ստանալու համար նախ բառնային վրաներնէն աւստրիական և պուրպոնեան օտար լուծերը , և ապա միագումար ժողովուէին կենաց պայման մը հաստատելու :

Համար . և այս իսկ էր խոհեմագունից կարծիքը յԻտալիա : 1848ին ի սկզբան յուզումը իրեն նպատակ առած էր զմիութիւնը և զազատութիւնը՝ առանց իտալական իշխանաց յատուկ իշխանութեան դպչելու , շատ էր միայն որ իտալացի բլլային և իտալական սահմանադրութեան մը միաձեռնին :

Տեսանք արդէն , որ Փետրուարի յեղափոխութենէն առաջ ալ արդէն մեծ էր յուզմունքը ի հիւսիսային Իտալիա , ի Միլան և ի Վենետիկ ընդդէմ աւստրիական խիստ բռնութեանց , և որչափ որ Քարլօ Ալպէրդօ և խոհեմ Հայրենասէրք խորհուրդ կուտային այլ գաւառաց ժողովրդոց հանդարտութեամբ յառաջել , սակայն ոգիները զայրացած փոքրագոյն նշանի մը միայն կը սպասէին մոլեգին կռիւ մը յարուցանելու . և Փետրուարի Յեղափոխութեան լուրը և Վեննայի ժողովրդեան յուզմունքները անցնելով զԱլպեանս՝ ոտք հանեցին նախ զՄիլան , որ ներկայ ժամանակաց մէջ բովանդակ Իտալիոյ ամենէն եռանդուն և ազատական քաղաք եղած է և է :

Աւստրիա իր զօրավարաց վստահացաւ զայն ընկճելու փոյթը , որոնք յոյս կուտային փութով դէմն առնելու , և անոր համար փոխարքայն և Ֆիլէլմոն քաղաքապետը թողուցին զքաղաքը՝ որպէս զի զինուորական իշխանութիւնք ազատ գործեն : Այս առաջին յուզմանց մէջ ի Վեննա պատահած յեղափոխութեան և տրուած ազատութեանց լուրը հասնելով , Օտոննէլ՝ կուսակալին փոխանորդը հրատարակեց կայսերական հրաման մը տուեալ 15ին , որով տպագրութեան արդեւքը կը վերցուէր , և ի Վեննա կը հրաւիրուէին Լոմպարաիա-Վենետիոյ կեդրոնական և գաւառական նրւիրակութիւնք :

18 Մարտ .

2 . Հինգ աւուրք Միլանու : - Մարաջախտն Ռատէցքի կը յուսար այս հրամանով զժողովուրդը հանդարտեցընել , և անոր համար բնաւ զինուորական զգուշութիւնքը չպատուիրեց , բայց ժողովրդեան երիտասարդ մասը միանգամ ոտք ելած , չուզեց հանդարտիլ մինչև որ յեղափոխութիւնը իր նպատակին հասցընէ , և Մարտ 18ին

ստիպեց զՊատգաղի քաղաքին շահապր՝ կուսակալին փոխանորդէն ազգային պահապանք խնդրելու՝ միանգամայն վերցընել ստտիկանութիւնը, պատել թաղաքական կալանաւորները և Առժամանակեայ վարչութիւն մը կազմել։ Ամբողջ միաբան առած զՊատգաղի դիմեց վարչութեան պալատը և յետ կոուելու պահապանաց հետ, բռնի հասու փոխան կուսակալին, որ բռնադատուեցաւ։ Հրաման տարու ազգային պահապանաց կազմութեան և ստտիկանութեան գլուխը փոխելու։ Այս միջոցիս թուեցաւ որ աւարիացի գունդեր կը հասնին պալատան վրայ, ամբողջ խուռն դուրս դիմեց հեռը տանելով իբրև պատանդ մը զՊատգաղի և զՕ՝տոննէլ և ամբացաւ Մանդէ ճամբուն տանց մէջ։ Աւարիացի գունդերը յետ աիրելու վարչութեան պալատին տարածուեցան քաղքին մէջ, պատնէշները ոմբակոծմամբ վար առնելով, որով և ահաւոր կռիւք ծագեցան փողոցներուն մէջ։ Ժողովուրդը զէնք չունենալով, ամէն պատուհաններէն և սանիքներէն կղմինար և ծանրոցներ կը տեղային։ Երկու կողմէն ալ բազում մեռեաք եղան և շատ մ՝ ալ վիրաւորք, իրիկունը հասաւ և յալթութիւնը անորոշ էր։ Ռատէքքի ի Վասպէլլօ քաղուեցաւ և զայրութէն հրացանի բռնել տուաւ ութը քաղաքական յանցաւորներ, և առաջին գնդին հրամանատարութիւնը տուաւ Վալմոնտէն զօրավարին ձեռքէն և յանձնեց Վրասիսլուի, և քաղքին իշխանութեանցմէ նուիրակութիւն մը հասնելով քաղաքական պահապանաց կազմութեան համար, Ռատէքքի իր 40,000 պոհեմ և մորաւ զօրաց վրայ վստահացեալ, խստիւ մերժեց փոխանորդ կուսակալին խոստումը, աւելցընելով որ ինքը « աւարառութեամբ և ուրիշ միջոցներով դիտէր զպպել քաղաք », և ամբողջ գիշերը անցուց բռնելու քաղքին դրուներ և պատուարքը, որպէս զի չըլլայ թէ Միլանցիք մերձաւոր տեղերէն օգնութիւն ընդունին։ Քաղաքացիք ալ հուստար և աւելի երազութեամբ ամէն պատրաստութիւնք կը տեսնային ընդդիմութեան։ 18-19ին գիշերը յորդ անձրևի և փոթորկի մը ներքև հազարաւոր արք և կանաք

կը վաստակէին փողոցներուն մէջ պատնէշներ բարձրացընելու և սուռները ամրացընելու : Եւ Անֆոսսի տնուամբ Նիցցացի կարիճ մը գիշեր ասուն սիրեց Փորդա-Նլուովայ դրանց և կանգնեց առաջին անգամ եռասորոյն դրօշը . Վազադի շահապր ապագայ երկիւզիւ գարհուրած խոյս սուեր էր և ծածկուեր էր : Յեղափոխութեան շարժիչք գումարուեցան , և գործոյն ուղղութիւն մը տալու համար պատերազմի յանձնաժողով մը կազմեցին շորս անձանցմէ , որուն պլուխ կեցաւ կորիճ հայրենասէր մը Վաղդանէօ : Ազգմուեցաւ նաև Ոստիկանութիւնը , որուն բռնի գլուխ դրուեցաւ Վազադի : Ռասէցքի տեսնալով որ ալ անկարելի էր պաշտպանել արքունի պալատը , հրամայեց զինուորաց ամփոփուելու ի Վասպէլլօ , որոնք անցան քարերու կարկախ մը մէջէն : Հագիւ մեկներ էին , ժողովուրդը ողողեց պալատը , բայց բնաւ աւարառութիւն և սպանութիւն մը չըրաւ , և յանձնուեցաւ սզգաւ յին պահապանաց . զիմեց նաև բանտերը և ազատեց քաղաքական յանցաւորները : Աէսօրուան մօտ մարաջախտը խռուապ սպայ մը զրկեց քաղքին իշխանութեան , թշնամութիւնքը զազրեցընելու համար : Ոստիկանութիւնը կը փափագէր , որ 15 օր զինադադարուն ըլլայ մինչև որ մարաջախտը կարենայ գրել ի վէննա և պէտք եղած շնորհքները ընդունել , միանգամայն ասով կ'ուզէին ժամանակ շահել և Վարլօ Ալպէրդօյէ օգնութիւն խնդրել : Սակայն Վաղդանէօ իր ընկերներով դէմ կ'եցաւ այս առաջարկութեան . եթէ մարաջախտը կ'ուզէ , ըսաւ , խաղաղութիւն , բոլոր զինուորները մեր սահմաններէն դուրս հանէ , թողլով միայն անոնցմէ զիտալացիս . այս է միայն իրեն համար ապահով և պատուաւոր նահանջը : Խռուաղ սպային մեկներէն վերջը պատերազմի խորհուրդը ծանոյց՝ որ մարաջախտին առաջարկութիւնքը մերժուեր էին : Ոստիկանութիւնը քաղքին ապահովութեան և պաշտպանութեան համար ընկերութիւններ հաստատեց , քաղաքացուցմէ յիսնական հոգևով գունդեր կազմուեցան , օդապարիկներ թռուցին ազատական հրատարակու-

20.

թիւններով, գրգռելով մերձաւոր քաղաքները Միլանու պէս ապստամբելու և օգնութեան գալու. միանմայն Աւստրիացւոց քիչ քիչ քաշուելով կը տիրէին ամբողջ քաղքին և անոնցմէ շատ մը հրացան և երկու թնդանօթ յափշտակեցին :

Այս անորոշ վիճակին մէջ՝ Գաղղիոյ, Անգղիոյ, Պէլձիոյ, Զուիցերիի և Սարտենիոյ հիւպատոսք խնդրեցին ի Ռատէցքիէ քաղաքը ումբակոծելէն առաջ յայտնապէս իրենց իմաց տալու, որպէս զի ըստ այնմ կարենան պաշտպանութիւն ընել իրենց հպատակաց : Մարաշախտը պատասխանեց, որ քաղաքացիք յանկարծակի դիմեր էին իր գունդերուն վրայ և թէ ինքը անհրաման չէր կրնար զիջանիլ անոնց պահանջներուն, բայց թէ Միլանցիք յանձն առնուն զինադադարումը, ինքը պատրաստ էր : Եւ յիրաւի Չլին յետ տեսութեան մը հիւպատոսաց ընդ Ռատէցքիի, հիւպատոսք առաջարկեցին ոստիկանութեան քաղքին դռները երեք օրուան համար բաց մնալու, ներս միայն պաշար մտցընելու համար և թշնամութիւններէ դադրելու : Խուհեմագոյն մասը կ'ուզէր յանձն առնուլ, բայց եռանդուն յեղափոխականք վախնալով որ այս զինադադարմամբ ժողովրդեան նախկին եռանդը պաղի, բացէ ի բաց դէմ կեցան :

Ասկէ աւելի ծանր վիճից նիւթ եղաւ Սաւոյիոյ հպատակիլը, որուն համար Գարլօ Ալպէրդօ նուիրակ զըրկէր էր զկոմսն Հենրիկոս Մարդինի, խոստանալով բանակով հասնիլ թէ իրեն անձնատուր ըլլան, ինչպէս էր նաև ոստիկանութեան փափաքը, որուն մեծապէս ընդդիմացաւ Գաղղանէօ, «Քանի որ Ալսուլած մեզ ազատութիւնը կը զըրկէ, ըսաւ, գոնեայ քանի մը օր զայն բռնենք, այսչափ Չեզ ատելի է կեանքերնուդ մէջ գոնեայ անգամ մը Չեզի տէր ըլլալնիդ, երբ յաղթուինք այն ատեն կը մտածենք, պէտք է ի զէն կոչել բոլոր Իտալիա և ազգութեան կռիւը յարուցանել» : Այս կրակոտ ճարտասանութեան միջոց ամբուխը դուրսը սկսեր էր կռուիլ Աւստրիացւոց հետ. ի դուր մարաշախտը ջանացեր էր Գասդէլլոյէն օգնու-

թիւն զրկել, երբ ժողովուրդը սկսաւ Զինուորական ձարտարապետութեան պալատան կրակ տալ, ալ այն ատեն Աւստրիացիք բռնադատուեցան անձնատուր ըլլալ և Հրամանատարութեան պալատանն պահապանք փախան :

3. Առժամանակեայ վարչութիւն : — Թշնամեաց հեռանալով պատերազմի ատեանն ալ միացաւ Պաշտպանութեան յանձնաժողովոյն հետ, որուն նախագահեղաւ պատրիկ պատմիչն Լիդրա Պոմպէօ և ատենադըպիր՝ Գորրէնդի : Ոստիկանութիւնն ալ յԱռժամանակեայ վարչութիւն փոխուեցաւ, որ փութով իր հրամանները սփռեց ի քաղաքին : Միլանցիք այս նոր յաջողութեամբ խրախուսեալ յետ միանգամ օգնութիւններ ընդունելու դուրսի աւանաց բնակիչներէն՝ որք կռուելով քաղաքին պաշար կը հասցընէին, գիմեցին քաղաքին դրանց համար մրցելու՝ մինչև մարտախառը վախնալով որ չըլլայ թէ փիէմոնթեցի բանակը հասնելով կարէ յետկուսէ իր նահանջը, 23ին գիշերը հապճեպ նահանջով պատուիրեց թողուլ զՄիլան և շուել Ատտայի վրայ թողլով զԳասպէլլօ, ուր երկրորդ օրը դիմեց ժողովուրդը և այսպէս տիրացաւ բոլոր Միլանու և շրջակայից : Այս է Հնգաւուրց կոչուած նշանաւոր կռիւր յորում ժողովրդէն 300 հոգի մեռեր էին և 500 ալ վիրաւորք . իսկ Աւստրիացւոց կորուստը աւելի բազմաթիւ եղեր էր . բանակինն նախ 10,000է կազմեալ, ապա նոր հասած օգնութեամբք մինչև 20,000ի ելեր էր :

4. Յեղափոխութիւն ի Վենետիկ : — Միլանու մէջ ստոնք հանդիպած ժամանակ արդէն ոտք ելեր էր նաև Աւստրիոյ խիստ ոստիկանութեան ներքև գտնուող ուրիշ վիճակակից և լծակից մայրաքաղաք մ՝ ալ՝ Վենետիկ, ուր ազատութիւնը շատ ատենէ ի վեր ժողովրդեան ամէն դասու ամէն վիճակի ուխտն էր և ոչ յեղափոխական քարոզութեանց արդիւնք : Վենետիկ Մարտ 13ի տրուած ազատութեանց լուրը 16ին հասաւ ի Վենետիկ, և հայրենասէրք սակէ խրախուսեալ պատարասուեցան իրիկունը ի Ֆէնիչէ թէատրոնը յայտնապէս պահանջելու, Մանինի և Թոմազէօի հայրե-

նասէր քաղաքացւոց բանտէն արձակուիլը ըստ վճուոյ դատաստանին: Աւստրիական սոսիկանութիւնը, թէաւորոնը գոցել տուաւ: Երկրորդ առաւօտ անսնալով կուսակալը, որ ամբօխը աղաղակով և գոչելով դիմեր էր ի հրապարակ և կը պահանջէր, որ անմիջապէս արձակուին Մանին և Թոմսոյլէօ, դատաստանի նախագահը և սոսիկանութիւնը առ ինքն կոչեց զանոնք ազատել տալու համար, բայց արդէն ամբօխը բանտերը դիմեր էր ուր պահուեր էին բանտեալքը: Մանին օրինապահութեան համար, շուզեց դուրս ելլել մինչև որ հասաւ նախագահը և ապահովցուց արդէն վճռով արձակուած ըլլալը: Ժողովուրդը իր ուրախութեան եռանդեան մէջ՝ աթոռով իր ուսոց վրայ բարձրացուց երկու հայրենասէրքը և յաղթանակով պտտցուց Ս. Մարկոսի հրապարակին մէջ: Բոլոր քաղաքը յուզեալ էր, քաղաքապետը պալատան պատուհանէ մը ուզեց ժողովրդեան խօսել հանդարտեցընելու համար և զօրքով բռնեց հրապարակը:

Քաղաքացւոցմէ ոմանք խնդրեցին քաղաքին շահապէն՝ ազգային պահապան հաստատելու խնդիրը ընել քաղաքապետին, որ իր իշխանութենէն վեր ըլլալով, նուիրակ զրկեց առ փոխարքայն ի Վերոնա զայն խընդրելու, յետոյ հաւանեցաւ հրաման տալու որ 300 քաղաքացիք զինուորին: Փութով սկսեր էր ամբօխին և զինուորաց թշնամութիւնքն, պատանի մը զինուորի մը հրացանի վրայէն սուրինը յափշտակած ըլլալով, զինուորք հրացան պարպեցին ընդդէմ ամբօխին, որ փոխանակ զինուոց Ս. Մարկոս հրապարակին քարերով սկսաւ կուսիլ և չորս հոգի մեռեալ ինկան և վիրուորք: Ազգային պահապանք կազմուեցան, իրենց գլուխ կեցաւ փաստաբանն Մէն՝ կալաօ երբեմն սպայ նաբօլէոնական բանակին. առաջին ջոկատին կը հրամայէր Մանին: Սակայն սակաւին յուզումն էր քան յաղափոխութիւն, և 20 և 21 օրերը անցան մեծ ուրախութեամբ, և զինուորք, պահապանք, նաւաստիք մէկ մէկու հետ հաշտուեցան, Ֆէնիչէի թէսարոնը չքեցապէս լուսաւորուեցաւ, բիւրաւոր կեցցէներ լսուե-

ցան սահմանադրութեան, Պիոս Թի և Փերտինանտոս կայսեր :

Այս բնդհանուր սերախութեանց միջոց՝ յուզման գրւխաւորք յեա շահելու նաւարանին աշխատաւորքը և նաւասաիքը 21-22ին գիշերը՝ ժողվուեցան Մանինի սոււնը մտածելու, որ թէ յաջողին վանել զԱւստրիաւցիս ինչ վարչութիւն պիտի հաստատէին : Զանազան էին կարծիքները : ոմանք Իտալական թագաւորութիւն մը կ'ուզէին կազմել զաշնակցեալ բնդ Աւստրիոյ, ուրիշները անկախ թագաւորութիւն մը Լոմպարտիա-Վենետիոյ արքայական թագը բնծայելով Ռանիէրի արշիպֆսին : միայն Մանին պնդեց որ յեա միանգամ պատելու զհայրենիս օտար լծէն, պէտք չէր դեղեկի կանգնելու վերստին Վենետիեան հին Հասարակապետութիւնը : Ժողովը ցրուեցաւ առանց վճռական որոշողութեան մը, բայց Մանինի բարեկամք գիշերը ամենայն հանդերձանք տեսան երկրորդ օրը յեղափոխութիւն սկսելու և նաւարանին սիրելու : Աւստրիական վարչութիւնը լրտեսներու ձեռք խմանալով, որ Մանինի սոււնը բնաւ որոշողութիւն մը չէին կրցած ընել հանդարտեցաւ՝ առանց գիանալու առանձին անհասներու : Ըրած որոշողութիւնը :

Երկրորդ օրը՝ Նաւարանին տեսուչը Մարինովիչ, որ մեծապէս ատելի էր աշխատաւորաց, երբ նաւարանը երկցաւ հոն աշխատաւորք զինքը պատեցին և թէպէտ դէպ յաշտարակ մը փոխաւ և մեծապէս կ'աղաչէր կենաց խնայելու, սակայն աշխատաւորին մէկը Խտէն կուպրին շերեփ մը նետելով դիակնացեալ և արիւնաթաթաւ պետին ձգեց զինքը : փութով հասան ազգային պահապանաց գունդեր խաղաղութիւն պահել սալու համար, և նաւական սպայիցմէ մէկը վաղեց Մանինի իմացընելու եղածը, որ փութով իր որդւոյն և քանի մը բարեկամաց հետ հասաւ ի նաւարանը, և հոն յեա խօսակցելու աւստրիացի Տէ Մարզինի փոխան-ժովապետին հետ գլխաւոր պահապանի սեղը բռնեց : Տէ Մարզինի կ'ուզէր երթալ հրաման հարցրնել քաղաքապետին, բայց ճիւղբիադի սպգային պահապանաց

գլխաւորացմէ: մին ծանոյց որ ալ ինքը կալանաւոր էր: Այն միջոցին նաւարանը կը հասնի նաւաստեաց ջոկատ մը, իրենց հրամայող սպայն վանդակադուռը գոց գըտնելով կը հրամայէ նաւաստեաց կրակ թափելու, բայց մէկը չհնազանդիր: Մանին հրամայեց Տէ Մարդինիի յանձնել նաւարանին բանալիները, խառն ի խուռն հնչել տուաւ զանգակները, որպէս զի ժողովուն աշխատաւորք և մեծ սրահը բանալով մէջի եղած զէնքերով զանոնք զինեց: Առ ժամս անոնց հրամանատար անուանեց զԿրացեանի, իտալացի սպայ մը զըկեց ի Չէրփոզա երթալ տիրելու վառօդին և պատերազմական մթերից, և յետոյ նաւարանին դրան դիմաց խօսելով անհամար խոնեալ ժողովրդեան՝ հուշակեց Վենետկոյ ինքնիշխանութիւնը և Հասարակապետութիւնը:

5. Հասարակապետութեան նրատարակուիլը: — Արդէն քաղքին մէջ ալ յուզումը սկսեք էր աւստրիական զունդերուն մէջ. իտալացի ջոկաաք փութով ժողովրդեան կողմը անցեր էին և միաձուռ ու խռուող սպայք բարեկամութեամբ կը խոստանային բնաւ միտս մը չընելու: Քաղքին շահապը 'Գորբէր' հետը երկու խորհրդական և քանի մը նշանաւոր քաղաքացի սուած թագաւորական պալատը գնաց՝ խօսակցելու Փալֆի քաղաքապետին հետ, որ երկար ձառախօսութեամբ մը ուզեց ցուցընել եթէ պետութեան զէմ եղած ամբաստանութիւնք սուտ էին: Այն ատեն քաղաքացւոց մէջէն Ալէգանի փաստարանը զինքը ընդհատեց լսելով, որ հոս եկանք յանդիմանութիւն լսելու լատ վաղեմի սովորութեան թէ դաշնախօսելու: Եւ երբ շահապը զինքը հրաւիրեց նուիրակութեան կողմանէ ձառախօսել, այն ատեն Ալէգանի յայտնապէս լատ, որ աւելորդ էր երկնցընելը և թէ ժողովրդեան փափաքը այս էր, որ Աւստրիական իշխանութիւնը քաշուի Վենետիկէն: Այս եղած միջոց կը լսուէր հրապարակին մէջ ժողովրդեան անհամար կեցցէներուն ձայնը, որոնց կը ձառախօսէր Մանին և Հասարակապետութիւնը կը ծանուցուէր: Քաղաքապետը կոման Փալֆի հրամարեցաւ իր իշխանութենէն, լատ ընկալեալ պատուէրներուն,

ի ձեռս գինուորական իշխանութեան, որուն գլուխն էր Զիբի տեղապահ—մարաջախտն և կը գտնուէր նոյն պալատան մէջ, աղաչելով միանգամայն որչափ կարելի էր խնայել իրեն սիրելի եղած քաղքին: Յետ երկար վիճաբանութեանց հաւանեցաւ Զիբի անձնատրութիւն մը ստորագրելու, որով աւստրիական թէ՛ քաղաքական և թէ՛ գինուորական իշխանութիւնք պիտի քաշուէին ի Վենետկոյ, աւստրիացի գունդերը (բաց յիտալացոց) Գրիէստ պիտի երթային իրեք ամսուան թուշակինն ընդունելով և թողլով ի Վենետիկ իրենց պատերազմական ամենայն կազմած, և Զիբի խօսք կուտար ամենէն վերջը ինքը մեկնելու. Մէնէկալսօ քաղաքական պահապանաց հրամանատարը՝ հուշակեց Առժամանակեայ վարչութիւնը, որուն Նախագահ էր Գանիէլ Մանին, և զայն կազմողներէն մին էր նաև Թօմազէօ:

6. Յեղափոխութիւն ի Գոմօ, Պերկամոյ, Պրէշիս, Գրէմոնա, Մանդուա, Մոստինա: — Սակայն այս նախկին յաջողութեանց փութով յաջորդեցին մեծամեծ վրիպակներ:

Մանին և սամկավարք յետ իշխանութեան գլուխ անցնելու, ինչպէս ամենայն սամկապետ, աւելի բռնաւորք գտնուեցան քան զամենայն միապետական իշխանս և չուզեցին գումարել փութով ազգային ժողովք մը ի բոլոր վենետիկեան գաւառաց և միաբան խորհրդակցութեամբ յառաջել, ինչպէս ի զուր կը քարոզէր Թօմազէօ, հապիւ յետոյ Խորհուրդ մը հաստատեցին, որ բնաւ ուժ չունեցաւ. թէ՛ Վենետկոյ և թէ՛ Միլանու վարիչք շիրցան մէկէն մտածել որ Աւստրիացոց այս երազ փախուստը կամ նահանջը, սկարութենէ աւելի խոհեմութեան և նախաստեղծութեան արդիւնք մ'էր, որպէս զինախ ամբիստուելով յետոյ բովանդակ ուժով ինկնան ապստամբ դաւառաց մէջ, յորս արդէն անմիաբանութիւնը կը սկսէր և գինուորութիւնը ցրուեր էր:

Միլանու և Վենետկոյ յեղափոխութեանց լուրը սաք հանեց նաև բոլոր իրենց մերձակայ քաղաքները, Գոմօ պարաստուեր էր օգնութիւն զրկելու Միլանու. երբ

Աւստրիացիք իր վրայ եկան, որոց հետ կռուելով յաղթող գտնուեցաւ և կանգնեց եռագոյն դրօշը: Ի Պերկամայ ժողովուրդը խողխողեց Միլանու վրայ գացող աւստրիացի գնդին հրամանատարը, և Սիկիամոնտ արշիդուքսը ծածուկ փախաւ: Պրէշիա ոտք ելլալով Առժամանակեայ վարչութիւն մը հաստատեց, և աւստրիացի գունդերը պատերազմական պատուով քաղքէն դուրս ելան. նոյնը եղաւ նաև ի Գրէմոնա և ի Մանդովա՝ ուր յետոյ նոր աւստրիացի գունդեր հասնելով կրկին նուաճուեցան: Մոտենա ոտք ելած ըլլալով Պոլոնիայէն եկած օգնութեամբ խոյս տուաւ Փրանկիսկոս Ե դուքսը, և ի Փարմա ի զուր Կարոլոս Լուդովիկոս Զանաց զիջողութեամբ շահիլ ժողովուրդը: Այս ամէն գաւառաց մէջ ուրիշ բան չէր լսուեր բայց թէ « Կեցցէ » և « ի մահ »: Երգք, բանաստեղծութիւնք, գինեհարութիւնք, եռագոյն դրօշ, յանձնաժողովք և այլն. մինչ Աւստրիացիք խոհեմութեամբ կը կեդրոնանային երկու մեծ բերդաքաղաքներու մէջ ի Մանդովա և ի Վերոնա. և ամէն բերդորայք իրենց ձեռքն էին բաց ի Փեցցիկեղդոնէ և Փալմանովայէ: Յետնոյս տիրելով իտալացիք ազատեցին Յուքքի զօրավարը, որ 1831ի յաղափոխութեան պատճառաւ հոն արգելեալ էր:

7. Փիլէմոնտի բանակը ի Լոմպարտիա: — Միլանու սպստամբութեան լուրը Փիլէմոնթի մէջ մեծ ուրախութեամբ լսուեր էր, և ժողովուրդը փութով կ'ուզէր դիմել օգնութեան, սակայն Գարլօ Արլէրդօ Անգլիոյ պաշտօնէին ընդդիմութեան պատճառաւ կը դանդաղէր, մինչև տեսնալով որ իր ուշանալովը Միլան ինքզինքը հասարակապետութիւն պիտի հռչակէ այն ատեն, որոչեց շարժելու բանակը և անցնիլ զ'Ռիչինօ: Մարտ 25ին Գուրիչի մէջ հրովարտակ մը ի գէն կը կոչէր զժողովուրդը, և կը խոստանար Լոմպարտիոյ և Վենետիոյ ժողովրդոց « եղբայրական օգնութիւն մը »: Կը հրամայէր միանգամայն իտալական եռագոյն դրօշին վրայ կրել նաև Սափոյիոյ տան վահանաձև նշանը: Գունդերը երկու բաժնուած էին, Պալա և Սոնագ զօրավարաց հրամանատարութեան ներքև: Մարտի 29ին

Գարլօ Աւպէրդօ իր երկու որդուֆք և 24,000 հոգուով կը մանար ի Լոմպարտիա, ի Փիէմոնթ՝ թագաւորութեան տեղապահ թողլով զիշխանն Եւգինէոս սի Գարինեանոյ իւր աղբակիցը, և ամէն կողմ չքեղ և անշահասէր հրովարտակներ հրատարակելով՝ որ ինքը բունաւ ուրիշ նպատակ չունէր բայց եթէ ազգին ընդհանուր կամաց թողլու յետ յաղթութեան իրեն վարչութեան ընտրութիւնը, զզինուորս կը խրախուսէր ըսելով որ այսպիսի մեծ գործ մ', և օտարին արտաքսումը իրենց պահեալ էր: Այս խրախուսանաց յաջողեցին երկու փոքր յաղթութիւնք ի Կոյիդօ և ի Մոնցամպանօ, և Աւստրիացիք թողլով Դիշինոյի գիծերը բռնադատուեցան քաշուիլ Ատիճէի վրայ: Այս փոքրիկ յաջողութիւններէն վերջը թագաւորը իր ճամբարը հաստատեց ի Վոլդա և հոն մնաց մինչև Ապրիլի վերջը, թէպէտ ամենայն հայրենասէլք իրեն խորհուրդ կուտային շթողուլ Աւստրիացւոց ժամանակ կազդուրելու՝ մինչ ունէր Ապրիլի 15ին 42,000 զինուոր և 120 թնդանօթ:

8. Գոսքանա, Հուովմ, Կափոյի ի պատերազմ: — Միլանու յեղափոխութեան լրոյն վրայ բոլոր Գոսքանայի քաղաքք ոսք ելան օգնութեան հասնելու. Տիրէնցէ, Փիզա, Լիվոռնօ և Սիէնա կը խնդրէին՝ որ անմիջապէս գունդերը մեկնին դէպ ի Լոմպարտիա—Վենետիկ. Լէոփոյտ Բ. հայրենասիրական հրովարտակով մը կ'ըսէր, որ հասաւ ժամանակը հայրենեաց ամբողջական կառուցման և թէ հրամանները տուեր էին՝ որ գունդերը անյապաղ մեկնին դէպ ի սահմանագլուխս, և թէ կը պատրաստուէր ընդհանուր խալական դաշնակցութիւն մը: Երեք հազար կանոնաւոր զինուորք և երեք հազար կամաւորք կը մեկնէին ի բանակ, զորս կը խրախուսէր Լէոփոյտ ըսելով, որ այսպիսի չքեղ ժամանակի մէջ հարկ է որ Գոսքանացիք անգործ չմնան:

Ի Հոովմ Լոմպարտիայէն և Վենետիկէն հասած լուրերուն վրայ զանգակները զարնուեցան, տուները զարդարուեցան, և փողոցները երգովք հնչեցին. ամբոխէն մաս մը Աւստրիոյ պաշտօնէին պալատան վրայ

վազեց և նշանը ջախջախեց : Յիսուսեանք Հռովմէն հանուեցան . փութով կամաւոր զինուորաց գունդեր ձեռացան Աւստրիոյ դէմ երթալու համար , որոց զլուխ կեցաւ նէապոլսեցի Տէրրարի զօրավարը . իսկ բովանդակ գունդերուն հրամանատարն էր Տուրանտօ զօրավար , որ իր համհարզ Մասսիմօ տ' Ածէլիոյի հետ Մարտ 24ին մեկնեցաւ Հռովմէն : Պիոս Թ . ժողովրդեան այս շափազանց եռանդը շափաւորելու համար նոր շրջաբերական մը հանեց , որով խորհուրդ կուտար խոհեմութեամբ վարիլ , քանի որ խնդիրը տանը մէջ էր : Փափագելի էր բարեկարգութիւն և ինքնիշխան վարչութիւն , բայց հիմա որ կարգը պատերազմելու կուգար և այն Եւրոպիոյ հին ուղղափառ պետութեան մը հետ իբրև զլուխ Եկեղեցւոյ շէր կրնար մխիլ այն գործոյն մէջ : Բաց աստի՝ որ խաւական հայրենասէրք իւրենց նախկին ծրագիր դրած իւրաքանչիւրին ազատութիւնը և Գաշնակից ինքնիշխանութիւնը մոռցած , հիմայ օտար նպատակներու կը փափագէին :

Ի Նափուլի Փերտինանտոս Բ . բռնադատուեր էր յոչ կամս նոր պաշտօնարան մը կազմել՝ նախագահ դնելով զՔարլօ Դրոյա սղատական հմուտ պատմագիրը : Գուլիէլմօս Փէփէ իր երկարժամանակեայ արտօրանքէն հանչուեր էր և թագաւորը զինքը մեծ սիրով ընդուներ էր : Իր հրովարտական մէջ ինքն ալ սովորական դարձած սձով կը խօսէր օտարին արտաքսման , խաւական սղատութեան վրայ : Արդէն 200 կամաւորք մեկնած էին երթալ միանալու Գոաքանայի գունդերուն : Մայիսի սկիզբը 16,000 զինուորք ընդ հրամանատարութեամբ Փէփէի շարժեցան դէպ ի Փօ , և Փերտինանտոս խոստացաւ ուրիշ 24,000 ալ ետեւէն հասցընել : Քիչ վերջը նէապոլսեցի նաւատորմիցը մասու յԱդրիական , միանալու Սարտենիոյ և Վենետիոյ նաւերուն հետ , որպիսի իր մը Լէփանցոյի պատերազմէն ի վեր չէր տեսնուած :

9. Պատերազմ ի Փատրիէնիօ , Սանդա Լուչիա , Գարնուտա , Գորդայրնէ , Կօլդօ , Վիչէնցա : — Սակայն այս ամէն գաւառական բանակները որչափ որ

մեծ եռանդեամբ մեկնեց էին, նոյն արագութեամբ տակաւին չէին գործեր, և հագիւ Ապրիլ 26, 27ին Փիւմոնթի բանակը միացեալ Գուպանայի, Փարմայի և Հոովմայ բանակներուն՝ անցաւ ի զանազան կէտս զՄինչիօ և բանակեցաւ ձախ կողմը: 30ին յետմոլեգին կռուոյ մը, որուն մասնակից էր նաև Գարլօ Ալպէրդօ, տիրեցին Փասդրէնկոյի, և մինչև այն ատենուան դանդաղութենէն յանկարծական արագութեան մը փոխուելով, սահմանեցին մէկէն դիմել Վերոնայի վրայ ըզՌատէցքի բռնադատել մեծ պատերազմի մը: Յետ արինահեղ կռուոյ մը ի Սանդա Լուչիա մերձ ի Վերոնա, Իտալացի բանակները յետ քաջութեամբ մրցելու, յետս նահանջեցին զօրավարաց անփորձութեան պատճառաւ և պատերազմին յաղթութիւնը անորոշ մնաց: Աւստրիացիք ալ մեծ քաջութեամբ կռուեր էին և շատ զինուոր կորսնցուցեր էին: Իտալացոց կողմանէ անձնական արութիւն ցուցուցին նոյն օրը Գարլօ Ալպէրդօ և իր որդին Վիկտոր Էմմանուէլ իշխան Սափոյիոյ:

Այս միջոցիս՝ Քահանայապետին գունդերը Տուրանտոյի հրամանատարութեան ներքև բաժնուեր էին Փիւմոնթի բանակէն և ընդ առաջ դիմեր էին Աւստրիոյ բանակին, որ զՎենետիկ թողլով, օգնութեան կուգար Ռատէցքի ընդ հրամանատարութեամբ Նուկէնդ զօրավարին: Իտալացի Ֆէրրարի զօրավարը իր 7,000 կամաւոր զինուորներով չէր կրցած դէմն առնուլ և ի զուր Տուրանտոյէ նոր գունդեր խնդրեր էր իրեն բանակը ուժովքընելու. Նուկէնդ յառաջելով տիրեց Ֆէլդրէի և Պէլլունի, Տուրանտօ հասնելով ի Գրէվիզ հրամայեց Ֆէրրարիի բռնել Մոնդէպէլլունայի շրջակայքը՝ յառաջելով մինչև ի Գոռնուտա. հոն Ֆէրրարի զարնուեցաւ իր գունդերով Աւստրիացոց հետ և Տուրանտոյէն խոստացեալ օգնութիւնքը չտեսնալով, քաշուեցաւ նորէն ի Մոնդէպէլլունա և հոնկէ ի Գրէվիզ՝ թողլով Աւստրիացոց ձեռքը Փիավէի հովիտը¹:

1. Ոմանք կը համարին որ Ֆէրրարի ուղեւորով միայնակ տանել յալթանակը, սպասած չըլլայ Տուրանտոյի օգնութեան:

Փուլթով իր գունդերուն խառնակութեան պատճառաւ բռնադատուեցաւ թողուլ նաև զԳրէվիզ և քաշուիլ ի Մէսդրէ՝ ժամաւ հեռի ի Վենետկոյ : Տուրանսօ Պրէն-դայի անցքերը բռներ էր թշնամւոյն դէպ ի Վիչէնցա շուն խափանելու համար , յետոյ թողլով շուեր էր ի Գրէվիզ . և Նուկէնդ այս վրիպակ շարժման վրայ դիւմեր էր ի Վիչէնցա և կը տիրէր իսկ՝ եթէ Տուրանսօ անսուպարած չըլլար կրկին ի Վիչէնցա , որով Նուկէնդ յետ անօգուտ փորձոյ մը շուեց դէպ ի Վերոնա , թողլով Վիչենցայի քով Գուրէդաքսիս զօրավարը 14,000 աւսորիացւոյք , որ յետ արիւնահեղ կռուոյ մը յորում՝ կորսնցուց 2,000 հոգի , ինքն ալ քաշուեցաւ ի Վերոնա , և Տուրանսօ 14,000 հոգի թողուց զՎիչէնցա պաշտպանելու :

10 . Ռատէցքի յաղթութիւնքը . Վիչէնցայի անվու-ւնը : — Ռատէցքի՝ Նուկէնդի բերած գունդերով զօրացած թողուց զպաշտպանողական ծրագիրը և յարձակողական մասը սկսաւ : Մայիս 27ին ելաւ Վերոնայէն 35,000 հոգւով և բազմաթիւ հրանօթովք . փուլթով հետը միացան ուրիշ 11,000 ալ և շուեց դէպ ի Մանդուա , ուր բանակած էին Գուքանայի գունդերը : Որքան մեծ էր Աւսորիացի անուանի զօրավարին հրմտութիւնը և պայծառ գաղափարը , այնքան վարանեալ էր Խտալացւոցը . խտալացի լրտեսք չէին իմացած Ռատէցքիի այս շարժումը և հազիւ շատ ուշ Պափա դիտելով զայն՝ ծանուցեր էր Լոճիէի Գուքանացւոց հրամանատարին՝ որուն բանակը 10,000 անձանցմէ խաւրական աջ թևը կը կազմէր : Գուքանացիք ձախէն և ճակատէն պաշարուած արութեամբ դիմացան մինչև որ լմեցաւ ամենայն պաշար , և ալ անհնարին էր դիմանալ : Շատ անձինք մեռան , 2,000 գերի բռնուեցան . Ռատէցքի ճշմարիտ վեհանձնութեամբ մը ստուգելով թշնամւոյն փաք թիւը և անոնց աննման արութիւնը , մեծ պատիւ ըրաւ մեռելոց :

Իրենց ընդդիմութիւնը ժամանակ սուեր էր Գարլօ Ալպէրգօյի 22,000 հոգի ժողուելով յանկարծ դիմել Աւսորիացւոց վրայ և զանոնք կրկին անգամ պարտել ի

կօրդօ, բայց առանց գիտնալու օգտուելի յետոյ նոյն յաղթութենէն: Քիչ օր վերջը Փէպիէրա անձնատուր եղաւ Գարլօ Ալպէրդօյի, Սոնագ զօրավարը բունեց Ռիվոլիի բարձուկը: Սակայն Ռաստէցքի, որ փորձեր էր Իտալացոց զինուորաց քաջութիւնը և անոնց զօրավարաց անհմտութիւնը, ամուր պահակապան թողլով ի Վերոնա յանկարծակի դիմեց և պաշարեց զՎիչէնցա. յորում թէպէտ մեծ քաջութիւն ցուցուցին իտալական և Քահանայապետին զուիցցերի զինուորք, սակայն քաղքին աւերածը խնայելու համար, Տուրանսօ յանձն առաւ դաշանց զիջանիլ: Իտալացիք և Զուիցցերացիք զինաթափ ազատ մեկնեցան քաղքէն, վեց ամիս չկուուելու պայմանաւ. և Ռաստէցքի՝ Վիչէնցա պահակապան թողլով, հապճեպով դարձաւ նորէն ի Վերոնա. այս յանգուգն և վարպետ հարուածին անգէտ թողլով թագաւորական բանակը: Վիչէնցայի անկմամբ փութով նըւաճեցան Փալմա Նովա՝ զոր քաջութեամբ կը պաշտպանէր Յուբբի, և Գրէվիլո. այնպէս քիչ ժամանակուան մէջ Աւստրիացիք նորէն տիրացան ամբողջ Վենետիկեան գաւառին բաց ի Վենետիկէ:

11. Ի Նափոլի Մայիս 15: — Փերտինանտոսի ազատական խոստմունքները և բանակին յօգնութիւն մեկնելովը ընդդէմ Աւստրիացոց, առ ժամանակ մը Նափոլիի ժողովուրդը հանդարտեր էր, և Մայիս 15ին նոր խորհրդարանը պիտի բացուեր՝ երբ առջի իրիկունը թագաւորը հրատարակեց բացման երդման ձևը: Երևափոխանաց մեծամասնութիւնը սո՛գոհ ձևոյն վրայ՝ զոր ընդդէմ սահմանադրական ազատութեանց կը համարէր, խմբեցաւ քաղաքատեսչութեան պալատը, և թէպէտ յետ բազում թախանձանաց պաշտօնէից՝ Փերտինանտոս զիջաւ փոփոխութիւն մը ընելու, սակայն ժողովուրդը մէկ մը ստք ելեր էր և պատանէչներ բարձրացուցեր էր և թագաւորը հրաման տուած էր զինուորական ուժով մը զայն նուաճելու: Գորէտոյ ձամբուն մէջ ահաւոր կոխ մը ծագեցաւ, ապստամբք քիչ էին և մեծաւ մասամբ Քալապրիացիք և գաւառականք որոնք և ոչ զենք ունէին, մինչ զինուորք ամենայն կանոնաւոր կեր-

պով կը յառաջէին: Խօսարանը, որուն նախագահն էր ութսնամեայ Քանեացցի աւագերէցը, շուգեց լուծուիլ, բայց և թշնամական կերպ մը շուգեց առնուլ: Պալատը գունդերով և թնդանօթներով պաշարուած էր և սպայ մը ներս մտաւ հրամայելով ցրուիլ. այն ատենը Մանչինի երեսփոխանը, բողոք մը առաջարկեց առ բովանդակ Իտալիա և Եւրոպա, որ միայն Բռնութեան տեղիք կուտային, և յետ միաձայնութեամբ ընդունելու այս բողոքը, առ ժամս վերուցին նիստերը: Պաշտօնարանը փոխուեցաւ, դարձաւ նորէն Պոճձէլլի, որ անդէն հրաման ղրկեց Փէփէ զօրավարին՝ իր գունդերը առած ետ դառնալ Անգոնայի վրայէն, ապա թէ ոչ՝ իր հրամանատարութիւնը յանձնէ Սդադէլլա զօրավարին: Փէփէ իտալական ազատութեան եռանդուն պաշտպաններէն մին՝ շուգելով գունդերը ետ դարձնելու, զօրավարութիւնը յանձնեց Սդադէլլայի, սակայն Պոլսնեայի մէջ այս բանիս համար խռովութիւն ծագելով, նորէն զօրավարութիւնը առաւ և յորդորուած հիւսիսային Իտալիոյ ամէն իշխաններէն, ընտրեց իրեն հետ իւր հաւատարիմ մնացող գնդերը՝ անոնցմով անցաւ զՓօ: Ըամբան իրեն միացան ինքնակամ զինուորներ և անոնցմով յառաջեց դէպ ի Վինետիկ: Իսկ ի Նափոլի յեղափոխութիւնը նուաճեալ կրնար համարուիլ, միայն Փերտինանտոս անորոշ վիճակի մէջ թողուց ամէն խոստումն և շուգեց բնաւ կողմ մը միտել, մինչև տեսնայ ուրիշ գաւառաց մէջ ալ Յեղափոխութեան ինչ ընթացք ունենալը:

12. Բանակցութիւնը միութեամբ Լոմպարտիոյ եւ Վենետիկոյ ընդ Փիէմոնտի: — Իսկ ի հիւսիսային Իտալիա յետ Կոիդօյի և Փէպիէրայի յաղթութեանց, որոնք ծանր գնով եղեր էին Գարլօ Ալպէրդօյի, թագաւորը հակամէտ էր հաշտութեան մը ընդ Աւստրիոյ, միայն թէ իրեն թողուէին Լոմպարտիա, Մոտենա, Փարմա, և Ատիճէ սահման ըլլար. և արդէն Աւստրիա և Փիէմոնթ զԱնգլիա միջնորդ առեր էին հաշտութեան մը, զիջանելով զԼոմպարտիա ինքնիշխան թողուլ՝ միայն թէ աւստրիական պարտուց մաս մը ստանձնէ, և Վենետիկ ունենար ազգային կառավարութիւն մը ընդ նա-

խազահութեամբ աւտորիացի իշխանի մը : Բայց նաև Լոմպարտիացիք բացէ ի բաց մերժեցին ըսելով, որ ասիկայ իտալական և ոչ թէ փիլեմոնթական խնդիր մ'էր : Ասկէ բռնադատուեցաւ նաև Գարլօ Ալպէրդօ առաջարկը մերժելու ըսելով, որ չէր ետ կենար պատերազմէ մինչև որ զԻտալիա ազատ շտեմնայ մինչև յիշոնցօ :

Սակայն օր օրուան վրայ իտալական բանակները կը տկարանային և վարիչք իրենց ազդեցութիւնը կը կորսնցընէին : Արտաբերդի կ'ընթանար Լոմպարտական գաւառները յորդորելով զանոնք միանալու Փիլեմոնթի հետ, ուսկից միայն էր փրկութիւնը և միաբանելովն մեծամեծ հրաշալիքներ պիտի գործէին : Լոմպարտիոյ վարչութիւնը որոշեց առաջարկել ժողովրդեան Փիլեմոնթի հետ միութիւնը, նոյնը կը փափաքէին նաև Վենետիկեան գաւառք, որոնք տժգոհ էին Վենետիկէ, որ իրենց վրայ նախկին աւագութիւնը կ'ուզէր ի գործ դնել : Ռասկավարք և Մածժինի, որ կը գտնուէր ի Միլան, որուն գաղափարն էր Իտալիոյ ամբողջական միութիւն, Մայիս 29ին ժողովուրդը զրգուելով խռովութիւն մը հանեցին ի Միլան, կը պահանջէին որ Գազադի երևնայ պատուհանը և իրենց նորոգէ առջի եղած խոստմունքները : Ուրպիսօ անուամբ ռասկավար մը զինքը բռնեց և բռնի պատուհան բերաւ, ուր Գազադի հոգիւ ըսաւ. « Ուրեմն լաւ վարչութիւնը կը հրաժարի », և մարեցաւ : Ամբոխը ասկէ ի գութ շարժեցաւ, անիշխանութեան մ', հետևանքները զամէնը վախցուց. ազաչեց որ Գազադի նորէն մնայ և խռովարարներէն վաթսուն հոգի բանտ դրուեցան : Առժամանակեայ վարչութիւնը այս յուզումը իրեն օգուտ առնելով, առաջարկեց և հաւանելի ըրաւ Փիլեմոնթի հետ միութիւնը այն պայմանաբ, որ Սահմանագիր ժողով մը ընտրեալ ընդհանուր քուէարկութեամբ՝ աքքէ անցընէ Սահմանագրութիւնը, տպագրութիւնը ազատ թողուի և թաւ գաւորը չկրնայ լուծել քաղաքական պահապանքը : Փիլեմոնթի հետ միացան նաև Վենետիկեան գաւառներէն Իրէվիզ, Փաստուա, Վիչէնցա և Ռովիկօ, որոնք ամէն

ջանք ըրին մինչև յեօին կէտ նսե զՎենետիկ իրենց ընկեր ունենալու :

Վենետիկ բոլորովին առանձնացեալ, ծանր վիճակի մը մէջ կը գտնուէր : Մանին ծանր պատասխանատուութենէ մը ազատելու համար՝ Յունիս ՉՑին ի ժողով կուչեր էր այս նիւթիս համար բոլոր Վենետիկեան գաւառին նուիրակութիւնքը : Հարկ էր վճարական որոշողութիւն մը ընել, ժողովը գումարուեցաւ զքսերուն պալատան Խորհրդեան մեծ սրահին մէջ : Ժողովոյն մէջ ի նպատակ հակառակ միութեան խօսող հռետորք երկու հոգի եղան, երկուքն ալ վարչութեան անդամք՝ Թոմագէօ և Փալէօգափա : Թոմագէօ խորհուրդ կուտար այսպիսի կենսական խնդիր մը աւելի հանդարտ ժամանակի թողուլ, վասնզի սր և իցէ դաշն եղեալ ընդ բռնութեամբ, ինչպէս էր հիմակուան վայրկեանը, թէ՛ ըստ աստուածային և թէ՛ ըստ մարդկային օրինաց ոչինչ էր . լիցուց իր ճտը մաղթելով Աստուածային օգնութիւնը : Ընդ հակառակն Փալէօգափա այսպիսի տագնապողական վայրկենի մէջ, կ'ըսէր, մտածելու ժամանակ չկայ, հարկ է գործել և փութով գործել : Լոմպարտիս ի լաւագոյն պայմանի քան զՎենետիկ է Փիէմոնթի հովանաւորութեան ներքեւ, և միաբան կը փափաքի զՎենետիկ : Ասենէն վերջը բեմը ներկայացաւ Մանին, որ հաստատեց թէ իր կարծիքը այն էր ինչ որ Մարտ 22ին, յորում հասարակապետութիւնը հրատարակեց էր . բայց որովհետև յեա այն օրուան շատերը կարծիքնին փոխեր էին, աւնոր համար կը խնդրէր՝ որ հասարակապետական մասը զոհէ իր կարծիքը հայրենեաց մեծ մնասու մը առջև : Փիէմոնթի և Լոմպարտիոյ հետ ձուլուելու խնդիրը քուէարկութեան ելաւ, և ի նպատակ ընդունեցաւ 127 քուէ ընդդէմ վեց քուէի :

13. Պատերազմ Գուսդուպայ . — Ռատուցքի կը տիրէ Միլանու : — Այս միութեան աւելի մեծութիւն մը տալու համար՝ Գարլօ Ալպէրդօ որոշեց ուժով ցընել Ռիփոլիի բարձունքը և դիմել Մանդուայի վրայ : Խաւրացուց բանակը շատեր էր մինչև 70,000 հոգի, հաստար գրեթէ Աւսարիացուց : Յետինքս առողջ կէտեր

բռնած էին առատ պաշարօք . մինչ Իտալական գունդերը շատ պիտոյքներէ նուազեալ էին : Եւ Ռաստէցքիի խորհուրդն էր զարնուիլ ձախ թևին հետ , ապա մղել զանոնք մինչև Ատիճէ և յետոյ յետս վանել դէպ ի Մանդուա : Յուլիս 25ին և 26ին Գուսգոզայի և Վալէճճիոյ մօտ մոլեգին կռիւներ եղան , յորս մեծ քաջութիւն ցուցուցին Գարլօ Ալպէրզօ և Պապա , ինչպէս նաև և թագաւորին որդիքը . Ղենովայի դուքսը 4,000 հոգևով կրցեր էր երեք անգամ վանել ի Պէրէզգարա թըշնամույն 20,000 հոգևով գունդերը , որոնց կը հրամայէր անձամբ Ռաստէցքի . և Սափոյիոյ Գուքսը մոլեգին մրցելով կրցեր էր Վալէճճիոյ մօտ բարձունքը բռնել : Սակայն անկարելի էր դէմ դնել Աւստրիացոց նոր հասած գունդերուն , որով Իտալացիք ի վերջոյ կորսնցուցին Գուսգոզայի պատերազմը , յետ մեծ արութեամբ կռուելու : Ռաստէցքի ինքն ալ մեծապէս մնասուած չկըրցաւ զթշնամին հալածել , որով կորսնցուց յալթութեան պտուղը :

Գարլօ Ալպէրզօ ըստ կարծեաց Զինուորական խորհրդոյն , զինադադարունն ինդրեց , առաջարկելով քաշուիլ Մինչիոյի գծերը : Ռաստէցքի ուզեց Ատտայի զիծը և Իտալացիք թողուն Փարմայի և Մոսէնայի դքսութիւնքը՝ տալով միանգամայն զՓէւքիէրա , Ռաքթա ա' Անֆօ և Փիցցէկէզգոնէ , նաև զՎենեսիկ : Գարլօ Ալպէրզօ այս պայմանքը ծանր դատելով մերժեց , և շարունակեց նահանջը , և յիրաւի կրնար աստա և ապահով նահանջ մը ունենալ ի Փիաչէնցա անցնելով զՓօ , բայց որոշեց զիմել պաշտպանելու զՄիլան , որ արդէն պատերազմական ամէն առատ պաշար ունէր : Սգոստոս 3ին Փիէմոնթեցիք 25,000ի շափ քաղցին զիմաց կիսարտլորակ մը ձևացուցեր էին , և Վին հոն կը հասնին Աւստրիացիք մօտ 40,000 հոգի և անմիջապէս ստաւօտեան ժամը 10ին կը սկսին պատերազմը , որ մինչև երեկոյ կը տևէ և Փիէմոնթեցիք կը բռնադատուին քաղաք մտնալ և պատուարաց ներքև պաշտպանուիլ : Նոյն օրը և գիշերը՝ քաղաքը յետին խռովութեան մէջ էր , ոմանք խորհուրդ կու տային փութով զիկտատու

րութիւն մը հաստատել, այլք կ'ուզէին Գաղղիոյ դիմել . Միլանու ժողովրդեան ունեւոր մասը յանձն կ'առնուր անձնատրութիւն մը, զոր բացէ ի բաց կը մերժէր հասարակ ժողովուրդը : Հարկ եղաւ Գարլօ Ալպէրդօյի գումարել Ջինուորական խորհուրդ մը, որ կարևոր տեսաւ զինադադարումն ընել և որ կատարող զօրավարին անուամբ Ջինադադարումն Սալասկոյի կոչուեցաւ : Ըստ այսմ զինադադարման Չ օրուան մէջ Փիէմոնթեցիք Գիչինոյի աջակողմը պիտի քաշուէին, թողլով Աւստրիոյ ձեռքը վերը յիշեալ քաղաքները և զՎենետիկ : Երկրորդ օրը 6 Օգոստոսի Ռասէցքի կը մտնար ի Միլան : Քիչ օր վերջը Աւստրիացիք բռնեցին զՄոտէնա և զՓարմա, ուր դարձան իրենց նախկին դքսերը, որոնք ջանացին խոչեմութեամբ շահել ոգիները « Այս ձախող վերջը կ'ունենար Իտալական ինքնիշխանութեան վսեմ թատրերգութեան առաջին Հանդէսը » կ'ըսէ իտալացի պատմագիրն Աբիաբարէլլի : Յայտնի է, որ ասով մեծագոյն տեղեկութիւնք և ամբաստանութիւնք եղան ընդդէմ Գարլօ Ալպէրդօյի, որ յետ խրախուսելու զամէնը յընդդիմութիւն, հիմայ յանկարծ կը քաշուէր թողլով անօգնական :



ԽՕՍԱՐԱՆՔ ՅԻՏԱԼԻԱ, ՓԱԽՈՒՍՏ ՊԻՈՍ ԹԻ

1. Հ--Վ-- Աւստրիացիք ի Պոլոնիա. — Պիոս թի բողոքը. —
2. Խօսարան ի Ի--տան. Լիվոնոյի ազմուկքը. — Կուէրացցի. Մոնղանէլի. — 3. Խօսարան ի Փիէմոնթ. Իսաւական դաշնակցութեան դաղափարը. — 4. Ն--տի և Սիէնէ. — 5. Սիկիլիա թագաւոր կ'ընտրէ զԱլպէրդօ Ամէտէօ Սափոյիոյ — Մէսսինայի պաշարումը. — 6. Ի Հ--Վ-- Պաշտօնարան Իոսսի — Իոսսիի սպանումը — փախուստ Պիոս թի. — 7. Հռովմ յետ փախըստեան Պիոս թի. — 8. Հասարակապետութիւն ի Հռովմ: — 9. Ի--տան — Կուէրացցի — Փախուստ Լէոփոլտի Ի'. — 10. Վիէտի. — Յէղափոխութիւն 11 Օգոստոսի. — 11. Վարչութիւն Մանինի — Պատերազմ Մէսքրէի — Մանինի դիկտատոր. — 12. Իեսսպանաժողով ի Պրիսսէլ վասն Իտալիոյ:

1. Հռովմ. Խօսարան — Աւստրիացիք ի Պոլոնիա — Պիոս թի բողոքը: — Պատերազմին յառաջելու ընթացից մէջ միանգամայն ամենայն իշխանութիւնք կը հաստատէին իրենց խօսարանները: Պիոս թի աշխարհականացմէ պաշտօնարան մը կազմեր էր նախագահ դնելով զԹիրանաւորն Չիաքքի՝ այն որ բողոքեր էր ընդդէմ Աւստրիացւոց ի Ֆէրրարա: Պաշտօնարանին մէջ ամենէն առաւել ազդեցութիւն ունեցողն էր՝ Ներքին գործոց պաշտօնետայն Իէրէնցիօ Մամիանի, ազատական հայրենասէր մը, որ սակայն հակառակ էր իտալական միութեան և դաշնակցական միութիւն մը կը փափաքէր: Յունիս 15ին Խօսարանը բացուեցաւ և Ալգիէրի ծիրանաւորը յանուն քահանայապետին ընթերցաւ Բացման ճառը. և փութով վիճարանութիւնք

սկսան: Ողբոց յուզեալ ժամանակ հասաւ Վիչէնցայի անկման լուրը, Խօսարանը մեծաւ մասամբ ի ռամկաւ լարաց առաջարկեց, և մեծամասնութեամբ ընդունեցաւ նոր բանակներ օգնութեան հասցընելու, սակայն Բարձրագոյն տառանը մերժեց խնդիրը և քահանայապետը ծանոյց որ բացարձակապէս պատերազմ չէր կըրնար ընել ընդդէմ ուղղափառ պետութեան, հարկ եւ զաւ որ Մասիանի հրաժարի և քահանայապետը փոխանակ առաջարկեց զՓէլէկրինօ Ռոստի, հմուտ արնատեսագետ, ազատ գրիչ, որ Լուի Տիլլիփի անկմանէ վերջը առանձին կ'ապրէր ի Հռովմ, սակայն Փէլէկրինօ ամենայն կուսակցութեանց առ հասարակ անընդունելի ըլլալուն համար առ ժամն մնացեր էր առանց անուանուելու: Այս միջոցիս Լոմպարտիոյ պատերազմը ձախող երթալով, լուր հասաւ որ Աւստրիացիք մտեր էին ի Տէրրարա, և յիրաւի Լիխտէնշդայն իշխանը աւստրիացի գունդերով Յուլիանի կէսերուն կը մտնար ի Պուլոնիա, քաղքին վերայ պարսպեր կը դնէր և քանի մ'ալ պատանդ կ'առնուր: Վէլտէն զօրավարը բոլոր Եուլիանութեան քաղաքաց և ի մասնաւորի Պուլոնիոյ կը ծանուցանէր փութով իր գալուսար հուր և սուր ըստ պատնալով ընդդիմակաց քաղաքաց: Որչափ որ Օգոստոս Յին Պուլոնիոյ սրմոց վրայ կպուցած քահանայապետին մէկ հրովարտակր՝ պաշտպանութիւն կը պահանջէր ընդդէմ օտարին յարձակման, և ժողովուրդը Փոխաննուիրակի պալատը վազելով գէնք կը պահանջէր, և ամբողջ օրը բոլոր քաղքին զանգակաց խառն ի խուռն գուշիւնը աւելի կը գրգռէր զամբոխը, երկրորդ օր Փոխաննուիրակը Պիանքէդդի, Պուլոնիոյ շահապը և ուրիշ իշխանաւոր անձինք սիարան տեսնալով որ ընդդիմութեան ոյժ մը չունին, անձնաարութիւն ստորագրեր էին Աւստրիացւոց այն պայմանաւ, որ թշնամին քաղքին երեք դռները բռնէ, բայց քաղքէն ներս չիմանայ: Անգղիոյ և Գաղղիոյ կողմանէ բողոքներ հասեր էին ընդդէմ այս տիրապետութեան: Աւստրիացիք իրենց խոստման հակառակ զանազան անգամ երեւցեր էին քաղքին մէջ, և ի քաղաքացւոց փոքր նախասինք բնողքն ալ մտ-

Հուամբ պատժեր էին : Սրճանոցի մը մէջ աւստրիացի գինուոր մը նախասինք բրած ըլլալով, սպաննուեր էր, աւստրիացի գունդերը պատերազմի կարգաւ քաղքին մէջ սկսան յառաջել, Յուքքինի ատենակալը այսպիսի արիւնահեղութեան դիմացը առնելու համար դիսեյ առ աւստրիացի հրամանատարը, որ 30,000 սկուա պահանջեց և քաղքին այնուականներէն վեց պատանդ : Այս որոշողութիւնը բացէ ի բաց մերժուեցաւ, միայն Փոխսաննուիրակը յանձն առաւ ինքն միայն երթալ իրրև պատանդ Աւստրիացւոյ բանակը, բայց դուռը հասած միջոց արդէն մուկեցին կռիւ մը սկսեր էր ընդ Աւստրիացիս և ընդ ամբոխն, որ թէպէտ անզէն և առանց թնդանօթի, յարձակեցաւ թշնամուոյն վրայ, որ Սան Միքէլէ բլրոյն վրայէն կ'ուզէր ուժակոծել զքաղաքը . և ամենէն սաստիկ խտտուրդը եղաւ Մոնդանեօլայի քով, որ քաղքէն դուրս բարձրաւանդակ մ'է հասարակաց պարտէզի նման և ուր ճամբար դրած էր աւստրիացի հեծելազօրը և թնդանօթքը : Աւստրիացիք տեսնելով որ այնպիսի մոյեգին կատաղութեան մը դիմաց անհնարին էր առնուլ, մանաւանդ որ Պէլլուձձի գնդապետը քաղքին օգնութիւն կը բերէր, նահանջ գարնելով երկու սիւնակ բաժնուած, քաշուեցան ի Վասդէլ Մաճիսրէ և ի Ս. Արտիաննի :

8
Օգոստոս.

Պոլոնիա քանի մը օր անիշխանութեան մէջ մնաց, զոր բազումք իրենց յօգուտ գործածելով, գործեցին ամենայն եղևուն յանուն Իտալիոյ ազատութեան : Բանտերէն արձակուեցան շատ մը շարագործք, որոնց շատերը իրենց քաշածներուն վրէժխնդրութիւնը արեամբ առին : Իշխանութիւն ունեցող անձինք տեսնելով որ դէմ չեն կրնար դնել, լուծիւնը ընտրեցին և ազատութեան անուամբ քաղքին մէջ զօրացաւ ամենէն սպէտալի բանութիւնը :

Երբ ի սկզբան լսուեցաւ Աւստրիացւոց մուտքը, Քահանայապետը արժանաւայել խօսքերով բողոքեց այս յափշտակութեան դէմ : Բաժկավարական ժողովքները յուզեալ նուիրակութիւն մը զրկեցին առ նախագահն Խօսարանին, խնդրելով որ հրատարակէ զհայ-

րենիս ի վտանգի և զժողովուրդը զինէ ընդդէմ Աւստրիոյ : Ամբոխը Խորհրդոյ սրահը ողողեց . Նախագահը նիստերը վերցուց , և երբ ամբոխը քաշուեցաւ նորէն զանոնք բացաւ : Խօսարանն ալ նուիրակութիւն մը զրկեց առ Քահանայապետը , որ պատասխանեց թէ ինքը « բնաւ չէր հրատարեր յիրաւանց պաշտպանութեան » : Գուսգոզայի պարտութեան լրոյն վրայ կրկին ժողովուրդը ռաք ելաւ , ամէնը կը պահանջէին գունդեր զրկելու յօգնութիւն , սակայն Խօսարանին մէջ պատերազմին կողմը յայթուեցաւ , հարկ եղաւ նոր պաշտօնարան մը կազմել , որուն նախագահ անցաւ Սոլիա ծիրանաւորը և Ներքին գործոց պաշտօնեայ Եգուարդ Տապրի :

2. Խօսարան ի Գոսքանու . Լիւլունոյի սպնակքը . Կուէրացցի . Մոնթանէլի : — Ի Գոսքանա Պահպանողական մասը զօրաւոր գտնուեր էր յընարութիւնս և Խօսարանին նախագահ ընարուեր էր Ռիտտլֆի : Լէսփոլտ Բ . անձամբ Յունիս 15ին բացաւ Խօսարանը հայրենասիրական ճառով մը , յորդորելով ի պատերազմ , որպէս զի կարող ըլլան Իտալիոյ իշխանութիւնք օտարէն ազատելով միաբան դաշնակից Պետութիւն մը կազմել : Նմանօրինակ ճառախօսութիւնք եղան նաև ուրիշ երեսփոխաններէն , սակայն պաշտօնարանը ծանոց որ 7,000էն աւելի մարդ չէր կրնար զրկել : Այս վիճարանութեանց միջոց կար ժողովրդական մաս մը որ դաշնակից միութիւնը խոտելով ընդհանուր միութեան մը ետևէ էր , և զոր կ'արժարժէր ընդ բովանդակ Իտալիա ընթանալով պառնապիդեան կրօնաւոր մը Հայրն Կալիպցցի : Որչափ որ ի Խօսարանի զօրաւոր էր պահպանողական մասը , այնքան ալ զօրաւոր էր ի հրապարակի սամկալարականը , « որով երկու կուսակցութիւն բաժնուած , երկուքն ալ աւելի իրենց շահուն քան հայրենեաց ծառայողք » կ'ըսէ Իտալացի գրիչ մը : Ի Լիվոնո մեծ խոսվութիւն յարուցեր էին սամկալարք , Գուսգոզայի պարտութեան լուրն ալ հասնելով , հարկ եղաւ որ Ռիտտլֆի պաշտօնարանը հրատարի , և իրեն անց Պաշտօնարանին գլուխ անցաւ Տի-

նօ Կափփոնի Տիրէնցացի հին ազնուական ցեղէ, որ իր գիտութեան հաւասար ունէր ազնուութիւն և առաքինի կենցաղափարութիւն մը: Սակայն այսպիսի փոթորկալից ժամանակ պետութիւն մը կառավարելու յատկութիւնքը չունէր, նա մանաւանդ որ արդէն յեղափոխութիւնը սկսեր էր ի Լիվոնոս, Դուքսոնայի ամենէն աւելի կրակոտ և ազատասէր քաղաքը: Պետութիւնը վախնալով՝ որ Հ. Կավացցիի ներկայութիւնը հոն աւելի գրգռէ ոգիները, ազգային պահապանաց գնդով մը ի Սիէնա՝ հրամայեց որ քաջուի ի Փիստոյա, ձեռքէն առնելով Լիվոնոյի սամկապետներէն իրեն ընծայեալ դրօշակը. հետը ընկերողներէն ոմանք ալ զրկուեցան ի բանտ ի Տիրէնցէ: Այս լուրը Լիվոնոս հասածին պէս ժողովուրդը ստք ելաւ, ամենը զէնքի վազեցին, զանգակները խառն ի խուռն զարնուեցան և փողոցները գոցուեցան և ազգային պահապանաց գունդ մը խուժանին վրայ կրակ սկսաւ պարպել՝ որով հինգ հոգի մեռեալ ինկան, ժողովուրդը վազեց ի զինարան, կոսրեց ներս մտաւ, յափշտակեց ինչ զէնք որ գտաւ և քիչ ժամանակուան մէջ տիրեց քաղքին: Երկու պերճախօս քահանայք ծանօթք և սիրելիք ժողովրդեան իրենց ապատասիրութեամբ՝ քահանայն Յուքքի և հայրն Մէլունի, վազեցին ամբոխին մէջ, համոզելու որ այն զէնքերը ընդգէմ օտարին հարկ էր գործածել և ոչ ընդգէմ եզրարց, սակայն ամբոխը չհանդարտեցաւ. տիրեց կուռելով Փորդա Մուրատա ամրոցին, և քաղաքացւոցմէ վարչութիւն մը կազմելով, յետոյ նուիրակութիւն մը զրկեց ի Տիրէնցէ, պահանջելով որ օգնութիւն զրկուի Խաալական պատերազմին, ներուձն շնորհուի ամենուն, աղին գինը իջնայ և միանգամայն դատաստանաց բարեկարգութիւնք ըլլան: Պաշտօնարանը հաւանեցաւ կատարելու՝ միայն թէ սիրով ընդունելին զՉիփրիանի, որ իբրև քաղաքապետ կը զրկուէր: Ժողովուրդը ընդ առաջ գնաց նոր քաղաքապետին և սիրով ընդունեցաւ, բայց քիչ օր վերջը տժգոհ անկէ՝ արհամարհոտ կերպին համար, կրկին սպրտամբեցաւ, և պահապանք և քաղաքացիք զանազան

1848
Սեպտեմբեր

անգամ կուեցան : Քաղաքը յետին անիշխանութեան մէջ էր , օտար նաւերը մեկներ էին , վաճառականութիւնը դադրեր էր , ամէն կողմ թշուառութիւն : Զիփրիանի նոր օգնութիւն ուզեց . Պետութիւնը ամէն կողմանէ քաղաքական պահապանք կը գումարէր ի Փիզա ապստամբ քաղաքաց լրայ ղրկելու համար : Այն ատեն Գափրիոնի աղաչեց բարեկամարար զԿուէրացցի , Լիւլունօ երթալ և միջնորդ ըլլալ խաղաղութեան : Կուէրացցի կրցաւ հանդարտեցընել գրաղաքացիս ընդդէմ վարչութեան , ուսկից կը պահանջէին ընդհանուր ներուճ : Այս միջոցիս հասաւ նաև Մոնդանէլլի , որ Գուրդադոնի պատերազմին գերութենէ ազատելով հիմա Գոսքանայի վարչութենէն Լիւլունայի քաղաքապետ անուանուեր էր , և զոր ժողովուրդը մեծ խնդութեամբ ընդունեցաւ : Մոնդանէլլի փութով սկսաւ տարածել ի Լիւլունօ իր գաղափարքը , որ հարկ էր Իտալական Սահմանագիր ժողով մը կոչել , որ որոշէ Իտալիոյ վիճակը , մինչ պաշտօնարանը ի Գոսքանա Իտալական դաշնակցութեան համար կ'աշխատէր : Այս խառն յուզմանց և բազմօրինակ կարծեաց մէջ Լէսփուլտ անորոշ և տարատակալ , զժողովուրդը շահելու համար պաշտօնարանին գլուխ կոչեց զՄոնդանէլլի , որ իրեն ընկեր սուս զԿուէրացցի :

3. Խօսարան ի Փիէմոնթ — Իտալական Գաշնակցութեան գաղափարը : — Փիէմոնթի Խօսարանը բացաւ Մայիս 8ին Գարինեանոյի իշխանը յանուն թագաւորին : Փիէմոնթ պատերազմի զբաղած Աւստրիոյ հետ , երեսփոխանաց առաջին մտածութիւն բանակն եղաւ . և սահմանուեցաւ փութով նոր 6,000 հոգի ժողուել և շորս միլիոն ֆրանկ ի գործ դնել : Փիէմոնթի հետ միացեր էին նախ Խօսարանական վարչութեան համար Մոսէնա , Փարմա և Մոնագօ փոքր իշխանութիւնը , յետայ յաջորդեց Լոմպարաիա , որուն ձուլուելուն համար մեծամեծ սօներ կատարուեցան , բայց փութով քաղաքապետական նախանձներ ծագեցան նախադատութեան պատճառաւ : Միլան կ'ուզէր արքունիք մը ունենալ զոր չէր ուրեր կորսնցընել Իււրին . Պաշտօ .

նարանը այս նիւթոյս վրայ չրաժարեցաւ : Այս միջոցիս հասան Սանդա Լուչիայի, Գուրդագոնէի և Մոնդանարայի պարտութեան լուրերը : Վարչութիւնը փոխանակ պատերազմին համար նոր միջոցներ մտածելու, կրօնական խնդրոյ զբաղած էր և կը վանէր զՅիսուսեանս և զՔորս գթութեան, հրաման ստալով սպաս պաշտօն ամէն կրօնից :

Յետ բողոժմ գժուարութեանց հազիւ նոր պաշտօնարան մը կազմուեր էր, յորում ի Փիէմոնթ կը մըլանար Ռապայցի, Ռիչչի ի Լիգուրեան գաւառաց, Գազադի երբեմն վարիչ Միլանու, ճիոյս ի Փիաչէնցայէ և Փալէոգափա Վենետկեցին : Սակայն այս պաշտօնարանը բնաւ չկրցաւ նեցուկ մը գտնալ և այն ատեն պատահեցաւ Գուադոգոյի պարտութիւնը և Միլանու անկումը, Սալասկոյի զինադադարումը, Պաշտօնարանը ժողովրդէն մղեալ չընդունեցաւ այս զինադադարումը : Թագաւորը նոր պաշտօնարան մը անուանեց, որուն նախագահ կեցաւ կոմսն Ալֆիէրի տի Սուգենիօ, և յորում նշանաւոր անձինք Փինէլլի Կերֆին գործոց և Ռէվէլ Ելլեմաից : Նոր պաշտօնարանը ոչ միայն կողմնակից էր Սալասկոյի զինադադարման, այլ և հաստատուն հաշտութեան մը համար կ'ուզէր միջնորդ անուել զԱնգղիա և զԳաղղիա :

Աւարիացեաց Միլան մանալով բազմաթիւ սպասականք վտանգէն խիթալով Փիէմոնթ զիմեր էին, բաջներու գունդ մ'ալ ժողովուեր էր պաշտպանելու Գիրոլէն Իտալիոյ անցքը, սւր հասեր էին նաև յԱմբրիկայէն Կարիպալտի, որ 1833ին Ղենովայէն փախեր էր ¹ :

1. Յովսէփ Կարիպալտի ծնած էր ի Նիցցա յամին 1807: Գիտ պատանի մտնալով Սարսենիոյ նաւատորմին մէջ, անուանի եղաւ այլ և այլ կուսներու մէջ : Յամին 1854 գաւի մը մէջ գտնուելով, փախաւ ի Գաղղիա, և Մարսիլիո չափարեութեան դաս կուտար : Հոնկէ քնաց իժուսուցի պէյին ժովային սղայ եղաւ : Յամին 1856 անցաւ ի հարաւային Ամբրիկա, ուր Ռուսկուայ Հասարակապետութիւնը զինքը հրամանատար անուանեց նաւատորմրդին, որ կը պատերազմէր Պուէնոս Այրէսի դիմաց : Անգղոյ և

Երբ Փիէմոնթեցիք յաղթուեցան, այս կամաւոր զինեալք միաբանած ի Լուկանօ հասարակապետութիւն մը հրասարակեցին՝ որ անօգնական մնալով ցրուեցաւ, միայն Կարիպուտի և Մէտիչի իրենց սակաւաթիւ ընկերներով տակաւին ընդ երկար դիմացան Մաճիորէ լճին վրայ: Իսկ Գարլօ Ալպէրդոյի զօրավարք ամէնն ալ քաշուեցան ի Փիէմոնթ՝ թողլով Աւստրիոյ ձեռքը իրենց հետ միացած քաղաքները: Կրիֆֆինի զօրավարը յետ արութեամբ պաշտպանելու զՊրէշիա՝ բռնադատուեցաւ թողուլ: Տուրանտօ Շվարցէնպէրկ զօրավարին հետ հաշտութիւն խօսեցաւ. Պրիքէրազիօ առանց ընդդիմութեան ինքնին թողուց Փիաչէնցայի դղեակը:

Արտաքին կոխները դադրելով՝ ներքին յուզմունքները սկսեցին ինձամբոյն, ինչպէս միշտ սովորութիւն է, պատերազմին ձախողելուն պատճառ զօրավարաց կողմանէ մատնութիւն մը կը համարէր, և հասարակաց կարծիքը գոհացրնելու համար պատժուեցան Սալասկօ Տէսաերիչի և Պրիքէրազիօ զօրավարները: Կալացցի իր ռամկավարական ճառերով յուզեր էր զՂենովա որ սկզբանէ միշտ նախանձորդ Գուրինի, հիմայ կը սպառնար բաժնուելու: Խորհրդարանը հոն զրկեց զՏուրանտօ՝ քաղաքը հանդարտեցընելու համար, միւս կողմանէ կը յուզէր ամենուն մտաց մէջ Իտալական խրնդիրը: Ընդդէմ ի մեծ պաշտպան Իտալական դաշնակցութեան մը՝ պահելով իւրաքանչիւր իշխանի իւր նախնի ի հնուց ունեցած վիճակը, խորհուրդ կուտար զայն փութով ի գործ դնել օտարին դէմն առնելու համար, և արդէն Գազադի պաշտօնեայն ծրագիր մը ներկայացուցեր էր Պիոս Թի. ըստ որում Աւագաժողով մը պիտի հաստատուէր ի Հուովմ, և որուն գործը պիտի ըլլար միակերպ հաւասարութիւն մ', մացընելու, զինուց, զրամական անասութեան, կշռոց, զրամոց, չափուց,

Գազդիոյ միջամտութենէն վերջը 5000 հոգեով կը պատրաստուէր պատերազմի, երբ իր հայրենեաց յեղափոխութիւնը ըսելով, անդաւ յիշրոպա:

օրինաց մէջ և անուանէր արտաքին պետութեանց դիմաց ներկայացուցիչքը: Գարլօ Ալպէրդօ, որ ի սկզբան հակառակ էր դաշնակցութեան գաղափարի մը և միութիւն կ'երազէր Փիէմոնթի առաջնութեամբ, չիմա Աւստրիայէն յաղթուած հակամիտ էր այսպիսի առաջարկութեան մը, սակայն իշխանք եթէ արտաքսապէս ուլ փախագէտին կրնայի՞ն արդեօք միաբանիլ, զոհելով իւրաքանչիւրը իր անձնուրոյն իշխանութիւնը: Նա մանաւանդ որ Պիոս Թ. և Լէոփոլա Բ. չէին ուզեր պատերազմ, և Փերտինանտոս ի Նախիլի միտումն չունէր ազատական սահմանադրութեան մը, զոր արդէն բռնի և յոչ կամս տուեր էր և թէ կարենար փութով կը ջնջէր գոյն:

4. Նափոյի եւ Սիկիլիոս: — Ինչպէս տեսանք որ Փերտինանտոս զՓէփէ յետս կոչեր էր. խրախուսեալ առաջին գործոյն յաջողութեամբ ազգային պաշտպանքը զինաթափ բրաւ, Խօսարանը ցրուեց և տպագրութեան ազատութիւնը վերցուց: Սակայն չկրցաւ վերցնել այն սահմանադրութիւնը զոր բռնի իրեն հրատարակել տուեր էին Յունուարի մէջ: Նոր գումարուած Խօսարանն ալ մեծաւ մասամբ ազատասէրներէն էր, որոց ծայրայեղք, գաւառները ցրուեցան զանոնք փաշտութեան դէմ ապստամբեցընելու. Արիանօ, Սալէռնօ և Պազիլիքա քաղաքները նախ ապստամբեցան, որոնք սակայն իրենց առաջնորդ մը և օգնութիւն չըստանալով փութով նուաճեցան: Գալապրիոյ մէջ ապստամբութիւն աւելի սպառնական կերպ մը առաւ, ուր ժողովեր էին ազատական գլխաւորներ, և Փերտինանտոս՝ Փէփէի գունդերէն ետ դարձող գունդերը Գալապրիոյ վրայ դրկեց, բայց այս գունդերէն աւելի երկպառակութիւնը և տարաձայնութիւնը նպաստեցին ապստամբութեան նուաճելուն: Սիկիլիայէն հասած օգնութիւնը հալածեալ Փերտինանտոսի գունդերէն՝ հազիւ սպառինեցաւ ի Սփէցցանօ և Նունցիանդէ գօրավարը ի սպառ ջախջախեց գալապրիացի շոկատները: Եւ որոնք որ պատերազմին մէջ չմեռան, իրենց ապստամբութիւնը ահաւոր բանտարգելութեամբք քաւեցին. լուսթիւն մը

սիրեց Գալապրիոյ վրայ և Փերսինանտոս սա ժամս վախ մը չունէր :

Ի Սիկիլիա յեղափոխութիւնը կը տւէր սակաւին և սիկիլիացի կրկին Խօսարանք գումարուէր էին ի Փալէրմօ : Այս Լլոժամանակեայ վարչութիւն մը հաստու սուեցաւ, որուն նախագահ անուանեցաւ Ռուճէրօ Սէզզիմօ և իրեն օգնական պաշտօնեայք տրուեցան յեղափոխութեան մէջ քաջացած անձիւք, յորս նաև Փալէրնօ, որ թողլով զՆափոլի եկեր էր հայրենիքը պաշտպանելու և որուն փութով մարաջախսութեան ախալոսը առին, ինչպէս նաև առատօրէն մեծամեծ պատուանուններ ամենայն անձանց՝ որոնք փոքր մաս մը ունեցեր էին ի յեղափոխութեան : Խօսարանք որոշեց որ Սիկիլիոյ թագաւորաց պղնձէ արձաններու մէջէն անոնք՝ որոնք արուեստական յարգ մը չունէին թնդանօթի ձուլուին : Ապրիլի կէսին միջոցները Լորս Մինչօ ծանոյց՝ որ ի գուր ջանացեր էր համոզելու զՓերսինանտոս Բ. Սիկիլիոյ թագաւորութենէն հրաժարելու ի նպատա իւր մէկ որդւոյն, միանգամայն լրսուեցաւ որ Փերսինանտոս իրր թագաւոր երկուց Սիկիլիացի՝ նուիրակներ զրկեր էր ի Հոռով՝ Իտալական դաշնակցութեան վրայ խօսելու : Այն ատեն Փաղէսնոս դրոյի առաջարկութեամբ Խօսարանը զՓերսինանտոս Բ. և իւր ցեղը անկեալ հրատարակեց Սիկիլիոյ դաշէն, զոր ժողովուրդը ըստ սովորութեան մեծ խնդութեամբ և ծափահարութեամբ և հանդէսներով ընդունեցաւ, նայնպէս ըստ առաջարկութեան Յովսէփ Լաֆարինս երեսփոխանին (յետոյ ժամանակու հեղինակ դանապան պատմութեանց) հաւանեցաւ փութով փարչութեան ձևը չորոշելու՝ մինչև տեսնան Իտալիոյ ինչպիսի կերպարանք մը առնուլը : Սգապիլէ պաշտօնեայն խորհուրդ կուտար փութով թագաւոր մը ընդունելու, և կը յուսար այն ատեն հաստատութիւն մը գտնալ. սակայն հասարակապետական մտար շատ աւելի զօրաւոր, բնաւ շէր ուղեր այսպիսի որոշ կէտի մը հասնիլ : Յետ այլ և այլ պաշտօնարանաց փոփոխման, Պաւլաւնոդականք Խօսարանին մէջ յաղթեցին և սահմանուեցաւ

որ հարիւր կամուր երիտասարդք Լամազայի առաջնորդութեամբ՝ Հիւսիսային Իտալիոյ օգնութեան երթան :

5. Սիկիլիա թագաւոր կ'ըստրէ զԱլպէրդօ Սիլետօ Սալլիոյ. — Մեասլնայի պաշարումը : — Սիկիլիոյ վարչութիւնը զրկեց զՀ. Վէնգուրա իրեն ներկայացուցիչ ի Հռովմ, զՂէմէլլի ի Գուքանա. Ամարի, Փիզանի և Լաֆարինա նուիրակ զրկուեցան առ Քասանայապետն, առ դուքսն Գուքանայի և առ Գարլօ Ալպէրդօ իրենց վարչութիւնը ճանչցընելու համար : Քասանայապետը սիրով ընդ ունեցաւ առանց բնաւ խոստմունք մը ընելու, ինչպէս նաև Գուքանայի դուքսը և դքսուհին Մարիա Անդոնիէզզա՝ քոյր Փերտինանտոսի. յուսալով որ թերևս թագաւորական այս նոր գաշը իր որդւոյն մէկուն վիճակի : Ետնը ըրաւ նաև Գարլօ Ալպէրդօ փափաքելով՝ որ իր երկրորդ որդին Ղենովայի դուքսը՝ թագաւոր ընտրուի Սիկիլիոյ : Գաղղիա և Անգղիա կը խոստանային այն ատեն յիրաւանց ճանչնալ Սիկիլիոյ իշխանութիւնը՝ երբ լիննար նոր Սահմանադրութիւնը և ընտրուէր թագաւորը : Անոր համար Փալէրմոյի Խօսարանը աճապարելով լմընցուց նոր Սահմանադրութիւնը և զՂենովայի դուքսը զՓերտինանտոս՝ թագաւոր անուանեց Ալպէրդօ Ամէսէօ Ա. յորջորջմամբ, չուզելով Փերտինանտոս անունը տալ անոր առ ատելութեան Փերտինանտոս Բի Պուրպոնեան :

Փութով նուիրակներ մեկնեցան թագը ընծայելու նոր ընտրելոյն, որոնք Գարլօ Ալպէրդօյի բանակը հասան Յուլիս 21ին՝ Գուսդոզայի աղէտալի պատերազմին առջի իրիկունը : Անոր համար չկրցան մէկէն տեսնալ ըզԳարլօ Ալպէրդօ, Ղենովայի դուքսը և պաշտօնեայքը, որոնք ուրիշ աւելի կարևոր խնդիրներ ունէին մտածելու : Անկէ վերջը ամենայն ինչ ձախող գնաց Սիկիլիոյ համար. Փերտինանտոսին վարչութիւնը՝ որչափ որ ալ ներքստայէս յետին անկարգութեան մէջ էր և մեծ տարածայնութիւն կար Խօսարանին և պաշտօնարանին մէջ, այսու հանգերձ ընդհանուր կարծիք էր, որ

հարկ էր փութով նուաճել զՍիկիլիա՝ քանի որ տակաւին իրենց ձեռքն էր Մեսսինայի նաւահանգիստը և դղեակը: Փալէրմոյի վարչութիւնը Սպապիլէ պաշտօնէին խօսից վրայ վաստահացեալ կը յուսար, որ բնաւ Անգղիա պիտի չթողուր այսպիսի յարձակում մը. և այն ատեն խարուելնին իմացան երբ ոմբակոծումը սկսաւ Փերտինանտոսի զօրաց կողմանէ իրեք հարիւր հրաձիգ գործեօք: Մեսսինա միտքը դրած էր մինչև ցլետին շունչ ընդդիմանալու՝ զոչելով իրեն վաճառակաւ նական ամէն շահերը: Սակայն ամուր դղեկիմը տիրելու և հայրենիք ազատելու համար՝ այս դարուս մէջ միայն եռանդն և արութիւն բաւական չեն, հարկ էր կանոնաւոր բանակ մը ունենալ, դրամ և նաւեր. Սիկիլիա չկրցաւ հոգալ զասոնք քաղաքի մի որ հինգ ամսէ ի վեր պաշարուած էր, և Փերտինանտոս աւելի դայն սաստկացուց երբ լսեց որ Ղենովայի դուքսը մերժեք էր Սիկիլիոյ թագը: Սպապիլէի յաջորդեր էր Գորրէարսա, որ զԼամպիո սակաւաթիւ գնդով օգնութեան ղրկեց Մեսսինայի: Քաղաքը ամսուան մի ընդդիմութեան համար ամենայն պատրաստութիւն տեսած էր և բարձրաւանդակներու վրայ դէպ ի Սան Սալվատոր ամրոցը շարեր էր հրանօթքը, որոնց կը հրամայէր հմուտ գնդապետն Սրսինի: Քաղաքը պաշտպանութեան համար 5,000 զինուոր ունէր միայն, մինչ թշնամուոյն թիւն էր 20,000 որոնց ընդհանուր հրամանատարն էր Ֆիլանճիէրի, և երկու մեծ ջուկատներուն կը հրամայէին Փրոնիօ և Նունցիանդէ:

Սեպտեմբեր 3ին նաւատորմիլը սկսաւ ահաւոր կրակ մը և 6ին Նէպոլիցիք կրցան ի ցամաք ելլալ: Մեսսենացիք դիւցազնաբար կ'ընդդիմանային, ահաւոր խառնուրդ մ'եղաւ ուր բնաւ անձնատրութիւն չըկար. երկու ական պայթելով թագաւորական երկու գունդք թաղուած մնացին: Սիկիլիոյ վարչութիւնը ժամանակ շահելու համար Ֆիլանճիէրիէն 24 ժամուան զինադադարումն խնդրեց՝ զոր մերժեց նէպոլիցիք զօրավարը և 7ին առաւել մոլեգնութեամբ սկսաւ պատերազմը: Արդէն Լամպիոյ անկանոն գունդերը փա-

Սեպտեմբեր 3-1848

խտական ցրուեր էին արգելք ըլլալով միանգամայն Փալէրմոյէն եկած օգնութեանց: Մեսսենացիք միայնակ մնալով տակաւին կը դիմանային: Ամենէն մոլեգին կոիւր Մատտալէնա վանքին վրայ եղաւ ուր կրօնաւորք անգամ քաջութեամբ կռուեցան. փութով կրակը ինկաւ հիւանդանոցին վրայ ուր այրեցան շատ մը հիւանդք և վիրաւորք: Հուսկ՝ յետ ահաւոր և արիւնահեղ մրցմանց թագաւորականք կրցան մտնել քաղաքը՝ զոր դատարկ գտան ի բնակչաց և լի դիակամբք և որոնց վրայ աւելցեր էր ահաւոր հրդեհ մը տանց, պալատանց և եկեղեցեաց. քաղաքը գրեթէ հիմնայատակ կործաներ էր: Տխուր հետեւանք ոչ հաշուեալ ազատասիրութեան:

6. Ի Հուլիմ՝ պաշտօնարան Ռոսսի. Սպանումս Ռոսսիի. — Փախուստ Պիոս Թի: — Պիոս Թ. ըզֆէլէկրինօ Ռոսսի պաշտօնարանը կազմելու կանչած միջոց բնաւ պաշտօնեայ մը այնպիսի դժուարին կէտի մը մէջ գտնուած չէր. որովհետև Ռոսսի իրեն հակառակ ունէր բոլոր ծայրայեղ կուսակցութիւնները, առանց իրեն ուրիշ կողմնակից ունենալու բայց ի Քահանայապետէն և քիչ անձանցմէ: Ամէնքը զինքը կ'ամբաստանէին որ բարեկամ Կիզոյի՝ անոր նման զազգը կ'ուզէր նիւթական շահուց զբաղեցընել որպէս զի ազատութեան խնդիրը մոռցուի: Երբքի Փալմանուվայի անձնատրութենէն վերջը քաջուեր էր ի կեդրոնական Իտալիա և պատերազմի պաշտօնեայ անուանուելով գացեր էր ի Պոլոնիա, ուսկից արտաքսեր էր զԿարիպալտի և զԿապլացցի կալանաւոր ի Հոլովմ զըրկեր էր: Ռոսսի կը ջանար ի Հոլովմ մարել Սահմանադիր ժողովոյ մը գաղափարը և սպառնացեր էր ազատականաց ծայրայեղ մոլութիւնքը պատժել, և այս իր սպառնալիքը զործով ալ ցուցուցեր էր այլ և այլ բանտարկելութեամբք. և յայտնապէս հրատարակեր էր ի լրագրի որ բնաւ գովութիւն կամ պարսաւ հոգը չէր իր պաշտօնին կատարման մէջ, որովհետև կային գովեստք որք նախատինք են մարդոյ և պարսաւք որ զմարդ կը փառաւորեն: Սահմանուեցաւ որ Նոյեմբեր

Նշ. 15
1848.

15)ին Խօսարանը բացուի, Ռոսսի ամէն կողմանէ: քաղա
 սագդարարութիւնք ընդուներ էր, որոնք կը ծանուցա-
 նէին իր կենաց դէմ դաւաճանութիւնը և զինքը կը
 զգուշացընէին: Սահմանեալ ժամանակը հասնելով, ե-
 րեսփոխանք սկսան գումարուի խորհրդոյ սրահներուն
 մէջ և մեծու մասամբ գացին ձախակողմը նստելու:
 Ամբոխը լեցուեր էր ի գաւիթ, ուր կառք մը կը մըտ-
 նայ և մէջէն կ'իջնան Ռոսսի և իր տատենադպիրը Ռի-
 կէդդի: Ամբոխը տհաճութեան ձայներ կը յայտնէ, բայց
 Ռոսսի անխռով, վսեմ, արհամարհոտ նայուածքով դէպ
 յամբոխը կը յառաջէ և երբ կը հասնի սանդուխը՝ յան-
 կարծ դաշոյն մը կը փայլի և պաշտօնեայն արիւնա-
 թաթախ կոկորդէն հարուածեալ գետին կը գորի մէկ
 սկնթարթի մէջ: Սպանողը իր համախոհներուն մէջէն
 անցնելով կ'աներևութանայ և բնաւ չգիտցուիր ով ըլ-
 լալը: Փութով վիրաւորեալը սանդուխին վրայ սենեակ
 մը տարուեցաւ, ուր քիչ վայրկեան վերջը տւանդեց հո-
 գին: Ամբոխը զարհուրած ցրուեցաւ: Այս ահաւոր ըս-
 պանութեան լուրը տարածուելով բոլոր քաղաքը, վըշ-
 տացոյց նոյն իսկ զազատականս բաց ի քանի մը ծայ-
 րայեղ մոլեգիւններէն, որոնք Ռոսսիի բարձմամբ կը յու-
 սային փութով հասարակապետութիւն մը հրատարա-
 կել: Քահանայապետը խռովեալ զՄարգօ Մինկէդդի և
 զՓաղոլինի կանչեց պաշտօնարան մը կազմելու, բայց
 երկուքն ալ այսպիսի յուզեալ վայրկենի մէջ յանձն չա-
 ոին: Ամբոխը քաղքին տիրեր էր և կը պահանջէր պա-
 տերազմ ընդդէմ Աւստրիոյ, Սահմանադիր ժողով մը
 և սամկապետական պաշտօնարան մը: Քահանայապե-
 տը բազէ ի բաց ժխտեց ըսելով, որ բնաւ բռնութիւն
 յանձն չէր առնուր: Երկրորդ օրը քաղաքը յուզեալ էր,
 ամբոխը պալատին վրայ դիմեց և ոմանք փորձեցին
 նաև կրակ տալ մէկ մասի մը և պատուհաններէն,
 տանիքներէն սկսան հրացանի հարուածներ թափել
 զտիցցերացոց վրայ, որոնց տառնք ալ կը պատասխա-
 նէին: Քորեպիսկոպոս մը, որ դիպուածով պատուհանի
 մը դիմաց կը գտնուէր՝ հարուածով մը կը սպանուի:
 Խուժանք թնգանօթ մը քաշելով կը բերէ հրապարա-

կին մէջ և կ'ուզէ դրան վրայ : Այն ատեն քահանայապետը ծանուցանելով օտար դեսպանաց, որ իրեն բով կը գտնուէին, թէ ինքը միայն բունութեան տեղիք կուտայ որով և ամենայն շնորհք ոչինչ էր, կը կանչէ զՍուրիա և կը յանձնէ կալէիդիի հետ միաբան սամկավարական պաշտօնարան մը կազմելու : Նոր պաշտօնարանին նշանաւոր անձինքն էին գիտուն և ազատական քորեպիսկոպոսն Մուձձորէլլի, Մամիանի և Սդէրպինի : Քահանայապետը արտաքսապէս հաւանիլ ցուցուց : բայց ծածուկ սպաւինութեան տեղ մը կը փնտռէր : Հարքուր՝ Գաղղիոյ դեսպանը զՄարսիլիա կ'ընծայէր, Մարդինէզ տէ լա Բոգա Սպանիոյ՝ Բաղէարեան կըզղիւքը, բայց Պիոս Թ. մտիկ ըրաւ Սփաւր պաշտօնէին, որ խորհուրդ կուտար սպաւինիլ Նափոլիի թագաւորութեան մէջ տեղ մը, և իրմէ առաջ նախ զրկեց ըզծիրանաւորն Անդոնէլլի, յետոյ ինքն սլ պարզ քահանայի զգեստով, Պավիէրայի պաշտօնէին հետ ծածուկ անցնելով իր երկրին սահմանները, կատչալ գիւմեց ուր եկեր էր Փերտինանտոս զինքը մեծ պատուով ընդունելու : Հոովմայ պաշտօնեայք, ո՞նք բախորովին անգէտ էին այս փախստեան, հրատարակեցին որ քահանայապետը այսպէս գործեր էր պատրուալ աղէտալի խորհրդատուներէ : միանգամայն կալէիդիի ժողովըրդեան ծանոյց, որ իշխանին հեռաւորութեան միջոց օրինաւոր հաստատեալ իշխանութիւնք վարչութիւնը առաջ պիտի տանէին և պիտի լրացընէին ժողովրդեան յոյսերը և ժողովրդեան կը յանձնէին հանդարտութիւն :

ՆՊ. 24.

7. Հուովմ յետ փախստեան Պիոս Թի : — Այս միջոցիս Հոովմ հասաւ Քահանայապետէն կոնդակ մը, որ յետ մի առ մի պատմելու իրեն ըրած զիջողութիւնքը, և ազատական մասին սպերախտութիւնքը, ոչինչ կը հրատարակէր ամենայն ինչ գործեալ յետ սպանման Ռոսսիի, և եօթը անձանցմէ վարչական յանձնաժողով մը կ'անուանէր խառն յեկեղեցականաց և յաշխարհականաց, որոնք սակայն յանձն չատին : Իսկ նախկին պաշտօնեայք երբ յեցին որ քահանայապետ

տը չէր ճանչնար իրենց իշխանութիւնը, մէկէն հրա-
ժարեցան, որով քաղաքը անիշխանութեան մէջ մնաց :
Երևոյի տխանք քահանայապետին զրկած կոնդակին մէջ
չատ մը սահմանադրական բերմունք գանելով, հրաւի-
րեցին զպաշտօնեայս նորէն վարչութիւնը ձեռք առնե-
լու . և նուիրակութիւն մը զրկեցին ի Կաէդա պա-
հանայապետը հրաւիրելու ի Հոովմ . ուրիշ զանազան
նուիրակութիւնք ալ զացին և ի մասնաւորի Հոովմայ
ոստիկանութենէն միարան ընդ Հոովմայ Ատենակա-
լին : Ատենց ամենուն նպատակն էր քահանայապե-
տին վարչութեան գլուխ կենալու ալերս մը ընել :
Սակայն նուիրակաց արգիլուեցաւ Նափոյի ի սահմա-
նը մտնալ և նուիրակութիւնք թղթով խնդրեցին յԱն-
դոնէլիէ, որ իրենց հրաման տրուի գալ առ քահանա-
յապետն և Անդոնէլի միջոցով իմացուց՝ եթէ բը-
նաւ ի Հոովմ՝ հրաւիրանայ նուիրակութիւն մը չէր
ընդուներ :

1848
Դեկտ. Այն ատեն Խոսարանը վարչական ժողով մը կազ-
մեց յերից անձանց որք էին Ատենակալն Հոովմայ, Ա-
տենակալն Պոլոնիոյ և Անգոնայի շահապը : Քաղա-
քը յետին շիթութեան մէջ էր . չափաւորականք մե-
ծաւ մասամբ դիմեր էին Պոլոնիա առ Յուլքի գորավա-
րը, որ հոն ժողուելով նաև զուիցցերացիքը կը խոր-
հէր շուեւելգէպ ի Հոովմ՝ և հաստատել քահանայապետին
վարչութիւնը կամ՝ պահանայապետ, կոչել ի Պոլոնիա :
Մամիանի իրը Արտաքին գործոց պաշտօնեայ՝ նուի-
րակ զրկուեր էր Քաղղիոյ և Անգլիոյ վարչութեանց՝
միջնորդ ըլլալ ընդ քահանայապետն և ընդ ժողովուր-
դըն, նոյնը կը ջանար նաև Ճիոպէրդի, որ այն օրերը
Փիէմոնդի պաշտօնարանին գլուխ անցեր էր փոխան
Փինէլիի : Ճիոպէրդի կը քարոզէր, որ Իտալիոյ միու-
թիւն կ'ուզէր առանց իշխանի մը իրաւանց զպշելու
ի ձեռն դաշնակցութեան : Ընդ հակառակն Մածթինի
զանազան թղթերով Զուիցցերիէն կը յորդորէր զժո-
ղովուրդը առիթը ձեռքէ չփախցնել, և մինչ արդէն հոն
չէր իշխանը փութով հրատարակել հասարակապետու-
թիւնը : Տոուլիէն և Անգոնայէն նուիրակութիւնք ե-

կան ի Հոովմ՝ խնդրելով որ ժողովք մը կազմուի վարչութեան ձև մը հաստատուելու: Ժողովուրդը զօրաւոր քան զամենայն պաշտօնեայ, ուրք ելաւ զայն պաշանջելու. Մամիանի իր անկարողութիւնը տեսնելով բռնադատեալ էր հեղեղին ընթացքին հետ երթալու, և անդէն հրաժարեցաւ. նոր պաշտօնարան մը կազմուեցաւ, որուն մէջ մասն երկու ազատականք Արմէլլինի և Մարիանի: Քաջանայտպեսը զՔասպրաքանէ և զԽոպէրդի ծիրանաւորները վարիչ անուաներ էր, որոնք սակայն բնաւ չէին կրնար գործել: Նոյն իսկ ազատութեան պիտաւորք միտքան չէին մէջերնին, շարունակ պաշտօնէից հրաժարմունք կը յաջորդէին և պաշտօնարանը բռնադատուեր էր առ ժամս վերցընելու բարձրագոյն խորհրդեան նիստերը: Վերջապէս կուչեցին Փետրուարի 5ին հոովմէական գաւառաց համար սահմանադիր ժողով մը ընտրեալ ընդհանուր քուէարկութեամբ: Քաջանայտպեսը կոնգակով մը նդովք սպառնացաւ անոր՝ որ այս միջոցով իր ժամանակաւոր իշխանութեան դէմ կուռի. ժողովրդեան մաս մը բացարձակապէս չուզեց մասնակցիլ այսպիսի անիշխանական շփոթութեանց: Եւ նոյն իսկ անոնք որ Սահմանադիր ժողովքը կ'ուզէին հրատարակել, մաքերնին չէր ժամանակաւոր իշխանութեան բարձումը քաջանայտպետին ձեռքէն, ինչպէս կ'ըլակէին իրենք, այլ այնպիսի խարութիւն մը դնել՝ որ մէկմէկու հետ բնաւ յարաբերութիւն մը չունենան: Քոնեայ այսպիսի մեկնութիւն մը հարկ էր տալ. վասն զի այս Սահմանադիր ժողովը ոչ միայն հաճելի չէր Փիլեմոնթի վարչութեան, այլ և ճիտպէրդի կ'առաջարկէր քաջանայտպետին բոլոր իր գունդերով գալ և հաստատել ժամանակաւոր իշխանութիւնը: Իտալիոյ ամէն կողմէն պահպանողական մասը կը թախանձէր զքաջանայտպեսը դառնալ ի Հոովմ՝ սակայն քաջանայտպեսը յանձն չէր առնուր մինչև որ պիտոժանն ալ հանդարտած չտեսներ, որուն ձեռքն էր ամենայն իշխանութիւն կամ լաւ ևս ըսել ամենայն անիշխանական բռնութիւն: Սպանիա կ'առաջարկէր Եւրոպիոյ Պետութեանց դեսպանատո-

դով մը կազմել, քահանայապետը Հռովմ ազատ դարձնելու համար, և Աւստրիա սիրով կ'առաջարկէր զօրքով միջամտութիւն մը ընելու: Եւ յիրաւի ծիրանաւորաց ժողովքի մը մէջ սահմանուեցաւ օգնութիւն խընդրելու յուղղատիառ պետութեանց՝ յԱւստրիոյ, ի Գաղղիոյ, ի Սպանիոյ և ի Նափոլիէ, ի բաց թողլով զՓիէմոնթ որով մեծապէս զայրացաւ ճիւղակէրդի: Յիտալիա ևս շարժմունքներ եղան ի նպաստ Պիոս Թի անյաջողք: Պէտինի գորավարը փորձ մը փորձեր էր զուիցցերացի զուեղերով դիմել ի Հռովմ, ինչպէս նաև Յուքքի՝ յետ ջանալու ոտք հանել Ռոմանիոյ նուիրակութիւնքը և սենալով որ դժուարին էր՝ քաշուեր էր կատա քահանայապետին քով, ի Հռովմ՝ Լագուր գորավարը անօգուտ արիւնահեղութեան մը դէմն առնելու համար ցրուեր էր զուիցցերացի զուեղերը:

8. Հասարակապետութիւն ի Հուլիմ՝ — Այս ժամանակ ընտրութիւնք եղեր էին և ընտրեալք Փետրուար 5ին մեծ հանդիսով կապիտոլիոնէն Ատենադպրութեան պալատը գացեր էին, ուր նախ Ներքին գործոց պաշտօնեայն յետ ըստ իւր մտաց պատմութիւն մը ընելու Պիոս Թի. քահանայապետութեան դիպուածոց, հրաւիրեց՝ զամէնը իմաստուն կերպով խորհելու վարչութեան վրայ: Հոն ամենէն առաջ Կանինոյ իշխանը «կեցցէ Հասարակապետութիւն» ազադակեց, և կարիպալտի առաջարկեց փութով երթալ ի կապիտոլիոն և հոն հրատարակել հասարակապետութիւնը: Այսու հանդերձ եղան և հակառակ պերճախօսք յորս մանաւանդ Մամիանի, որ ցուցուց եթէ այսպիսի պարագայից մէջ հասարակապետութիւն մը կեանք չէր կրնար ունենալ՝ մինչ Գոսթանա և Փիէմոնթ իսկ միացեալ էին միապետական վարչութեան: Աւելի լաւ էր այսպիսի որոշողութիւն մը իտալական Սահմանադիր ժողովոյն թողուլ, որ քիչ վերջը պիտի գումարուէր ի Հռովմ: Մամիանիի և իր կուսակցութեան դէմ խօսեցան ուրիշ ժայրայեղ ազատականք ծանօթք յետոյ ի մատենագրութեան, յորս Մպի, Ֆիլոսոփանդի, Ռուսթոնի, Սաֆֆի, կապուսսի և ուրիշներ ալ: Որոշուե-

ցաւ որ իւրաքանչիւր երեսփոխան յայտնի ըսէ իր կարծիքը, և 142 երեսփոխաններէն չը հակառակ ելան քահանայապետին իշխանութեան անկման և ՉՃ ընդդէմ հասարակապետութեան: Ժողովքը տեւեր էր մինչև Փետրուար 9ին առաւօտեան իններորդ ժամը: Աոյն օրուան մէջ հանդիսապէս Ապպիտոլիոնէն հրատարակուեցաւ Հասարակապետութիւնը:

9: Դոսքանա — Աուէրացցի — Փախուստ Աէուփոլտի Բ: — Ի Դոսքանա ռամկափարաց կուսակցութիւնը գործնալով, Աէուփոլտի իշխանութիւնը միայն աւուամբ էր, Ուիքագօլի, Քիճի, Մոնդանէլլի, տեղիք տուեր էին Աուէրացցիի առջև, որուն միտքը ոչ այնչափ հասարակապետութիւն էր, այլ որ և իցէ իշխանութիւն մը յորում ինքը միայնակ կարենայ իշխել՝ իրեն ձևօք իրրև խօսարան մը առնելով զխուժանը: Ի Դոսքանա, ուր Աէուփոլտ ապատասէր և խոհական կառավարութիւն մը վարեր էր, միայն խոռվարարք կըրնային վարչութեան անկման փափագի՝ յետոյ իրենց փառասիրութեան հասնելու համար, և յիրաւի նոյն իսկ Աուէրացցի մեծ զժուարութիւն կը քաշէր գոհացընելու այս փառասիրաց փափագները. միանգամայն զպահպանողականս ալ շիրտեցընելու համար զՈւպալտինս Փէրուցցի շահապ անուաներ էր Ֆիրէնցէի: Ազգային պահապանք հաստատուեր էին. Խօսարանը լուծուեր էր, փոթորկալից ընտրութիւնք կզեր էին և նոր Խօսարանը կը գումարուէր Յունուար 10ին. յորում մեծաւ մասամբ առաջին երեսփոխաններն էին և ռամկապետականք հապիւ քանի մը աթոռ շտաշեր էին: Առաջին վիճեալ խնդիրն եղաւ Սահմանադիր ժողովքը, որ պիտի կարենար ըստ իւր կամաց տալ Իտալիոյ որ և իցէ վարչութեան ձև մը: Պաշտօնտարանը հուսկ կազմելով առաջարկը՝ ներկայացուց զայն Խօսարանին որ փութով ընդունեցաւ:

Աէուփոլտ բացարձակապէս հաւանութիւնը շտուաւ այս որոշման, որ զինքը գործիք մը կը կազմէր Սահմանադիր ժողովոյն, բայց խիթալով ևս Ֆիրէնցէ և զած միջոց ժխտել իր հաւանութիւնը, ընտանիքը տես-

նալու պատրուակաւ Սենա գնաց, և անկէ խոյս տը-
լաւ ի Սանդօ Սղէֆանօ սահմանագլուխ ետրուրական
ճահճաց: Այս լուրը Ֆիրէնցէ տարածուելուն պէս ժու-
ղովուրդը գումարուեցաւ Պետութեան պալատին առ-
ջին, և հոն ժողովրդականաց ոմանց առաջարկութեամբ
ոստիկանութիւն մը կազմեց և Առժամանակեայ վարչու-
թիւն մը, որուն գլուխն էին Մոնդանէլլի, Կուէրացցի
և Մածժինի, մինչև որ ի Հռովմ՝ կազմելիք Սահ-
մանադիր ժողովը սահմանէ վարչութեան ձև մը: Ժու-
ղովրդեան նուիրակները և ամբոխին մաս մը վազեց Խօ-
սարանը, ուր պաշտօնեայք բռնադատուեցան հրաժա-
րիլ և ընդունիլ ռամկապետութիւնը և Առժամանա-
կեայ վարչութիւնը, որ Մարտ 10ին համար որոշեց գու-
մարել հասարակաց քուէարկութեամբ ընտրեալ Ասեան
մը, խոստանալով նաև հոգալ Հռովմայ Սահմանադրին
համար:

Այս յուզմանց միջոց ար Լոտիէ գորավարը հրատա-
րակեց Լէոփոլտի հրովարտակ մը, որ կը ժանուցանէր
եթէ ինքը պետութեան սահմանքը չէ անցած և թէ
20,000 Փիլմանթեցի գունդերով, օգնեալ նաև ի Գոս-
քանացւոց կուզար հաստատելու իշխանութիւնը: Ֆի-
րէնցէ աւելի խռովեցաւ այն օրերը հասած ըլլալով
նաև Մածժինի, որ խորհուրդ կուտար հասարակապե-
տութիւն հրատարակելով միանալ Հռովմայ հետ: Ըն-
դունելի եղան առաջարկութիւնքը, Լէոփոլտ անկեալ
յիշխանութենէ հոշակեցաւ, ար Լոտիէ մասնիչ հայրե-
նեաց անուանուեցաւ. Պաշտպանութեան Յանձնաժու-
ղով մը կազմեալ ի Կուէրացցիէ, ի Մոնդանէլլիէ և ի
Մաննէդեայ: Գոսքանայի ամէն քաղաքաց մէջ հրատա-
րակուեցաւ հասարակապետութիւնը և Հռովմայ հեա
միութիւնը, յորոց Լիվոնօ մանաւանդ մեծ ուրախու-
թեամբ լսեց: Ընդհակառակն գիւղական ժողովուրդք մե-
ծապէս հակասակք հասարակապետութեան, կ'ուզէին
փորձ փորձել գիշերը դիմելով քաղքին վրայ տիրել Ֆի-
րէնցէի: Քաղաքը շիտից մէջ էր, Մոնդանէլլի անկող-
նէն յարուցեալ խօսեցաւ առ ժողովուրդը, որ զինեալ
դէպ ի դուռները վազեց և գիւղականք յետո նահանջե-

ցին, տը Լոժիէի գունդերն ալ քաշուեցան ի Սիեցիա: Կուէրացցի և տԱփիչէ պատերազմի պաշտօնեայն՝ իւրենց գունդերով շրջան մը ըրին քաղաքներէն յոմանս, և ամէն տեղ մեծ ընդունելութիւն գտան:

Լէոփոլտ դքսին Սանդօ Սդէֆանօ քաշուելով օտար պետութեանց ներկայացուցիչք ալ ի Գոսքանա, հոն դիւմեր էին. և թէպէտ Լէոփոլտ միաքը դրած էր Գոսքանայէն չելլալ, սակայն ուսմկապետաց յարձակման նշաւակ չըլլալու համար որոնք կ'սպառնային հասնել իւրենց գունդերով, միանգամայն իր դասը ուզելով միացընել Քահանայապետին դատին հետ, մտաւ ի նաւ և հասաւ ի Ասէդա:

10. Վենետիկ — Յեղափոխութիւն 11 Օգոստոսի: — Վենետիկոյ հասարակապետութիւնը Փիէմոնթի հետ ձուլուած ժամանակ՝ կը յուսար նոր օգնութեամբք ոչ միայն ինքզինքը պաշտպանել այլ և թշնամոյն երկիւզ տղղել և զանիկայ աւելի հեռացընել: Արդուեր էր որ վենետիկցի, սարտենեացի և նէապօլսեցի նաւերը Յունիա 15ին զԳրիէսդ ումրակոծեն, բայց Փերտինանտոս իր նաւերը յետս կոչեր էր և Փիէմոնթի վարչութիւնը Գրիէստեցոյ օտարազգի հիւպատներուն բողոքներէն միտցած միաքը փոխեր էր: Վենետիկոյ ծովու և ցամաքի զօրաց ընդհանուր հրամանատար աւնուանուեր էր Փէփէ, որուն սպայակոյտին մէջ երկու նէապօլսեցի զօրավարք Ուլլոա և Մեծծագափօ մեծ համբաւ ստացան 1848-1849 պատերազմաց մէջ. իսկ ամբողջներուն պաշպանութեան գունդերուն մէջ մաս մը վենետիկեցիք էին և մաս մը նէապօլսեցիք:

Փիէմոնթի հետ միութեան քուէարկութենէն վերջը Մանինի և Թոմապէօի պաշտօնը լմնալով, Առ ժամանակեայ նոր վարչութիւն մը հաստատուեր էր առաջին պաշտօնէիցսէ, որոնցմէ մէկը Քասպէլլի իրենց նախագահ դրուեցաւ: Աոր իշխանութիւնը այլ և այլ հրովարտակներով գովեց այս Յուզումը, որ իրենց միայն փրկուելիւն պիտի ըլլար. կ'արգելուր որ ալ բնաւ շխտուի հասարակապետութեան, սահմանադրութեան և ինքնիշխանութեան վրայ, և ստիկանութիւնը աւստրիա-

կան օրէնքները տակաւին ի զօրութեան հռչակեց : Փութով տարածայնութիւնը տիրեց վարչութեան և ժողովրդեան մէջ . լուր հասնելով որ աւստրիացի զօրավարն Վալտէն կրկին կ'առաջարկէր՝ նախ քան զպաշարումն բանակցութեան գալ : Ժողովուրդը պահանջեց որ պաշտպանութեան Յանձնաժողով մը կազմուի, որուն ըստ ծանրութեան պարագային լիովին իշխանութիւն տրուի . սակայն վարչութիւնը ոչ միայն չընդունեցաւ առաջարկը, այլ և աւստրիական ամենայն խիստ պատիժները սպառնացաւ ամենայն ժողովրդական ժողովոց և գումարմանց : Փաստէլլի ժողովուրդը զբաղեցրնելու համար խոստացեր էր վենետկեան ժողովքը բանալու, և յիրաւի որոշուեցաւ գումարուելու Օգոստոս 10ին : Տեսնուեցաւ, որ ժողովքին մէջ հասարակապետական մասը հագիւ 30 քուէ ունէր և միայն ժողովուրդն էր պաշտպան հասարակապետութեան : Այս միջոցիս էր, որ Փարլօ Ալպէրդօ ինքնագլխութեամբ իբրև տէր վենետկոյ զոր բնաւ ստացած չէր, Սալասֆոյի դաշնադրութեամբ զայն գաղտ Աւստրիոյ յանձնած էր, սակայն վենետկեցիք տակաւին լսած չէին այս մատնութիւնը և ոչ կրնային կասկածիլ : Օգոստոս 6ին դաշնադրութեան ստորագրութենէն մէկ օր վերջը՝ հասեր էին ի վենետիկ թագաւորին կողմանէ Փոլլի և Ջիպրարիօ քաղքին և ամրոցներուն տիրապետութիւնը առնելու միտքն ընդ Փաստէլլի՝ յանուն Փարլօ Ալպէրդօյի : Նուիրակք չէին կրնար գիտնալ Փիէմոնթի բանակին՝ Իլչինոյէն անգին քաշուելը և Սալասֆոյի դաշնադրութիւնը, յետոյ զինադադարման լուրը հասնելով, ամենուն սիրտը անհանդարտ էր որ արդեօք ինչ եղած էր վենետկոյ բաղդը : Բանկարծակի քաղքին մէկ ծայրէն միւս ծայրը կասկած մը ընթացաւ՝ որ Աւստրիոյ մատնուած ըլլայ : Բերդերուն զինուորք մեծ խռովութիւն հանեցին, ժողովրդականք կ'ուզէին բռնի միջոցներու դիմել, Մանին զիրենք հանդարտեցուց, Փաստէլլի ինքնին այնպիսի մեծ պատասխանատուութենէ մը ազատելու համար կը փոփազէր հրաժարիլ պաշտօնէն, յանձնելով զայն Մանինի :

Սգոստոս 11ին երեկոյեան դէմ ժողովուրդը խմբեցաւ վարչութեան պալատան դիմաց Ս. Մարկոսի հրապարակը, և աղաղակելով կ'ուզէր տեսնալ զԳոլլի, որ վերջապէս երեցաւ և ըսաւ որ բնաւ պաշտօնական հաղորդելու լուր մը չկար, բայց և հասկցուց որ Աւստրիացիք մտեր էին ի Միլան և թէ դաշնադրութիւն մը եղեր էր: Այն ատեն ամբոխը հարցուց՝ իսկ «Վենետկոյ համար ի՞նչ կար», Գոլլի պատասխանեց, որ բնաւ պաշտօնական լուր մը չկար և թէ առնելուն պէս կը հաղորդէր: Կայծական պէս համբաւը ընթացաւ և ժողովուրդը ամէն կողմանէ՝ հրապարակը խոնեցաւ և ուղղեց պալատը: Ժողովրդեան գլուխ կեցած էին երկու նշանաւոր անձինք՝ Սերգորի և Մորտինի, որոնք ամբոխը ամենայն բռնութենէ զգուշացընելով, պահանջեցին վարիչներէն որ հրատարին իրենց իշխանութենէն: Քասդէլլի գոչեց որ առ ժամայն կը հրատարէր, ժողովուրդը բռնի հրատարեցուց զՉիպրարիօ և զԳոլլի և բիւրաւոր ձայներ կը գոչէին որ կ'ուզենք զՄանին:

11. վարչութիւն Մանինի. — Պատերազմ Մշուրէի, Մանին Գիկատաւոր: — Արդէն Մանին այն միջոցին կանչուած էր Ատենէն, և պատուհանէն երեւնալով յետ յանդիմանելու զժողովուրդը այսպիսի սղմուկ յարուցանելուն համար, իմացուց որ վարչութիւնը կը հրատարէր, երկու օրուան մէջ ժողովքը պիտի գումարուէր և թէ այս 48 ժամը «ես պիտի կառավարեմ»: Ամբոխը տեսնալով իրեն սիրելի անձը, ուրախութեան ձայներով և հանդարտ սրտով ցրուեցաւ: Այդ պիտի կերպը հապարաւոր քաղաքացիք թողլով ընտանիքնին վայեցին բերդերուն պաշտպանութեան: Ժողովրդեան փափակ էր, որ Մանինի հետ վարչութեան գլուխ կենայ նաև թոմազէօ. բայց Մանին՝ զինքը և զԻսֆֆօլի օգնութիւն խնդրելու համար Քաղղիոյ Հասարակապետութեան զրկեց փոխան Սերգորիի, զոր նախ սահմանած էին. 13ին ժողովքը գումարուեցաւ՝ և Մանինի ուրիշ երկու վարիչ օգնականք տրուեցան գնդապետն Քապէտալիս և ծովակալն Կրացիանի: Սակայն

այս երկու օգնականքը անուամբ միայն էին և Մանին բացարձակ դիկտատուրութիւն մը կը վարէր, փափազելով իր հայրենեաց յաղթանակին համար միայն իր տեսութեամբք կառավարուիլ առանց խորհրդակցութեան մը ուրիշ նշանաւոր հայրենասիրաց, որոնք իր վարչութիւնը անգործութիւն կը կոչէին և մինչև կը կասկածէին, որ ետևէ էր վենետկեան հին դքսութիւնը նորոգել, և անոր համար բնաւ հաղորդակցութիւն և օգնութիւն մը չէր փափագէր Խտալիոյ միւս իշխանութիւններէն, և բնաւ չէր ուզեր զօրքը Վենետկէն դուրս հանել վինետկեան միւս գաւառաց օգնութեան: Եւ արդարև 20, 000էն աւելի զինուորք կային ի Վենետիկ, յորս խառն էին նէապոլսեցի, լոմպարտացի, և հոլանդացի կամաւորք: Եւ այս բանակին պատճառաւ Աւստրիացիք թէպէտ շատ անգամ փորձած էին Մալկէրայի բերդերուն տիրելու, որ ընդ մէջ է Վենետիոյ և Մէսդրէի, սակայն միշտ վանուեր էին:

Հայրենասիրաց մաս մը կազմեր էին Խոսլայն ընկերութիւնը մը: Մանին, որ աւստրիական ամէն խստութիւնները նորոգեր էր, գիշեր սասն կոխեց Մորաինիի և տի Ռիվերէի տուները և հրամայեց Վենետկէն ելլել: Զինուորականք անգործութենէն տաղակացեր էին և Փէփէ միշտ կը կրկնէր, որ հարկ էր գործ մը տեսնել: Վերջապէս որոշուեցաւ Մէսդրէի վրայ դիմել, ուր Աւստրիացիք ճամբար դրած էին և 2500 զինուորք կային, և թէպէտ Աւստրիացիք առաջուց մատնութեամբ իմացած էին թշնամեաց ամենայն դիտաւորութիւնքը և շարժմունքը, այսու հանդերձ Վենետկեցիք մեծ յաղթութիւն ըրին և Աւստրիացուցմէ 300 մեռեալք ինկան և 600 գերի, և շատ մ'ալ պաշար և վեց թնդանօթ: Մեծ էր նաև Խտալացուց կորուստը, յորոց մեռաւ նաև Աղեքսանդր Փօէրիօ հայրենասէր քերթողը, որ աւստրիացուց թնդանօթի մը վրայ յարձկած ժամանակը մահացու վիրաւորեալ ինկաւ: « Ուրեմն մերն է թնդանօթը », հարցուց և լսելով Այո՛, « Գոհ կը մեռնիմ » ըսաւ և յետին շունչը տուաւ: Սակայն այս յաղթութիւնը բնաւ հետևանք մը չունեցաւ: Խտալա-

կան ընկերութեան նման ուրիշ ժողովրդական ընկերա-
 ինն մ'ալ կազմուեցաւ, որուն նպատակն էր ժողովրդ-
 դեան ընդունելի ընել Սոցիալ-Դեմոկրատիկ ժողովոյն գաղափա-
 րը: Մանին՝ անոր լրագրապետը իրրև Աւստրիոյ ծա-
 ռայող բանտ դնել տուաւ և ամբողջ ընդդէմ գրգռեց
 այն երեսփոխանաց, որ իրեն նակառակ էին կարծեօք
 և այն պայմանաւ. յանձն առաւ զանոնք պաշտպանե-
 լու ժողովրդեան բարկութենէն՝ եթէ օտար զինուորք
 արձկուին և իրեն լիակատար անսահման դիկտատու-
 րութեան իշխանութիւն մը տրուի: Փետրուար 15ին
 արտաքոյ կարգի ժողով մը գումարուեցաւ. Մանին
 կը սպառնար քաղաքական պատերազմ՝ եթէ իր պա-
 նանքը չկատարուին. և Քննութեան համար տրուած
 Յանձնաժողովոյն ատենախօս Վարէ ծանոյց՝ որ Յանձ-
 նաժողովը կը հաւանէր անոր համար միայն, որովհե-
 տև Մանին կ'ուզէր: Թոմազէօ ալ աւելցուց՝ կը հա-
 ւանէր վասն զի կը վախէր, որ քաղաքական երկ-
 պառակուծիւն մը չծագի աղիտալի քան զամենայն
 թշնամի: Ժողովը միաձայն հաւանութեամբ իշխանու-
 թիւն յանձնելու ժամանակ պայման դրաւ միայն՝ գու-
 մարուելու ամէն 15 օր և իշխանապետը նաչիւ պի-
 տի տար իր գործոց, նոյնպէս Արտաքին պետութեանց
 հետ դաշինք մը պիտի չդրուի առանց իրեն կանխա-
 գիտութեան: Այս միջոցիս սկսեց էին Աւստրիացոց
 կողմանէ պաշարու մը և Վենետիկ դրամական յետին
 կարօտութեան մէջ էր: Քաղաքին եկամուտն էր ա-
 միսը 200,000 ֆրանք. կտրուած ցամաքէն և դուրկ ի
 վաճառականութեանց, հիմայ իրեն 3 միլիոն կարևոր
 էր: Քաղաքացոց պատուիրուեցաւ ունեցած ոսկինին
 և արծաթինին բերելու, Իտալիոյ ամէն աւերութեանց
 աղերսաւորք զրկուեցան 10 միլիոն փոխ դրամ գումար-
 րուելու, և նազիւ 1 ու կէս միլիոն ժողուեցաւ: Փիէ-
 մոնթ միայն առատաձեռն գտնուեցաւ որ 1 միլիոնէն
 աւելի տուաւ: Վենետիկեան դրամասեղան մը հաստա-
 տուեցաւ. և թղթէ դրամքը հանուեցան, քաղաքացոց
 մէջ հինգ միլիոնի դրամազլիտոց արժէթուղթք սփռուե-
 ցան և ուրիշ բազմաթիւ միջոցներ. որոնցմէ շատ աւելի

վեր գտնուեցաւ քաղաքացւոց եռանդը և բարերարութիւնը որոնք հոգացին զինուորաց անկողին, ծածկոցք և ուրիշ ամենայն պիտոյք և որով կրցաւ այնչափ ատեն դիմանալ բանակը: Սակայն վարչութիւնը չկըրցաւ մտածել և նաւերով ապահովել Ադրիականէն Ռումանեայի հետ ունեցած հաղորդակցութիւնը պաշարոց համար, և այն քիչ նաւերը զորս յետոյ հանեց ծովուն վրայ, առանց մասնաւոր առաջնորդութեան մի մնացած, ստիպուեցան քաշուիլ, երբ Վենետիկ ծովէն ալ պաշարուեցաւ:

12. Եւրոպական Պետութեանց Գեսպանաւորութիւնը ի Պրիւսիէ վասն Իտալիոյ: — Իտալական պետութիւնք յոյս ունեցած էին ի սկզբան որ այս իրենց ազատական շարժմանց մէջ օգնող պիտի գտնային զՎաղղիա, և Լամարդինի հռչակաւոր հրովարտակը կերպով մը իւրենց գրաւական էր, սակայն Վաղղիա զԼոմպարտիա և զՎենետիկ՝ ինքնիշխան գաւառներ չէր ձանչնար և այն ատեն կը խոստանար օգնութիւն մը՝ երբ Աւստրիա մտնէր ի Փիէմոնթ: Ի գուր Վենետիկեցիք հազարաւոր ստորագրութեամբ աղերսներ զրկած էին, ի զուր զթոմազէօ Բարիզ զրկեր էին օգնութիւն մը պաղատելու ամենայն ինչ միայն խոստամարք լինցաւ: Անգղիոյ հոգը աւելի նուազ էր, որ իբրև միջնորդ մը կ'ուզէր ըլլալ ընդ Աւստրիա և ընդ ապստամբ գաւառս, և այնպիսի դաշնադրութեան առաջարկութիւնք կ'ընէր, որոնք բնաւ չէին կրնար ընդունելի ըլլալ յիտալացւոց: Հուսկ ուրեմն առաջարկեց, որ դեսպանաւորով մը գումարուի ի Պրիւսիէ՝ ուր նուիրակ զրկեցին եթէ Փիէմոնթ եթէ Դոպանա և Վենետիկ: Բայց ժողովքը լինցաւ՝ ստանց կարենալու որոշողութիւն մը ընելու. վասն զի Աւստրիա և ոչ նուիրակ ուզեր էր զրկել, նա մտնուանդ Շվարցեմայէրկ կոմսը Աւստրիոյ պաշտօնարանին զուխ անցնելով Իտալիոյ կրած ձախողանքներէն աւելի խրախուսեալ, տարօրինակ գաղտփար մը կը համարէր Լոմպարտիա — Վենետիկը թողուլ և զՂարլօ Ալպէրզօ և Իտալացի ռամկտպետ իշխանքը յիմարեալ կ'անուանէր: Երբ 1849ին սկիզբը Փիէմոնթ յուսահատեալ դեսպա-

նաժողովէն, կրկին զինուց բաղդը ուզեց փորձել, Աւստրիոյ պաշտօնարանը ծանոյց իրեն, որ գիտնայ թէ բնաւ կերպով մը միտք չունէր Լոմպարտիա – Վենետիկը ձգել և շխարուի, որ Պրիւսսէլի դեսպանաժողովոյն պետութիւնք զինքը այն գաւառներէն պիտի վանէին: Այսպէս Իտալիա միայնակ կը մնար իմանալով այնուհետև, որ բնաւ օգնութեան յոյս մը չկար ի Պետութեանց: Այսու հանդերձ Վենետիկ յանձն կ'առնուր միաձայն քուէարկութեամբ « Գիմանալ ինչ որ ալ ըլլայ » :



ՅԻՏԱԼԻԱ ԸՆԿՃԻԼ, ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻԱՆՑ

1. Փիլեմոսի ընդդէմ Աւստրիոյ : — 2. Սոճարայի պատերազմը. — Գար-
 10 Ապրիլի ճակատամարտը : — 3. Վիկտոր Լյամանուէլի Բ — Սանմանա-
 դրու թիւն : — 4. Յուզմունքի Պրէշիտա, Ղենովա — Ընկճումն : — 5. Գու-
 քան — Կուէրացի իշխանապետ և կալանաւոր : — 6. Գարձ Լէոփոլտի
 յիշխանութիւն : — 7. Սիլիւսի ընդդիմութիւնը և Նուսնումն : —
 8. Հրովմ. Միջամտութիւն Գաղղիոյ — Պատերազմ 50 Ապրիլի : —
 9. Պաշարումն Հոովմայ — Վախճան Հասարակապետութեան : —
 10. Գարձ Պիոս թի : — 11. Վիկտորի Պաշտպանութիւնը : — Պա-
 տերազմ Մալիէրայ : — 12. Բանակցութիւնը հաշտութեան : —
 13. Սոճ և մաղձախտ : — 14. Անկումն Վենետիոյ : — 15. Աւ-
 ստրիոյ վարչութիւնը տիրեալ գաւառաց վրայ :

1. Փիլեմոսի ընդդէմ Աւստրիոյ : — Արդէնի Փիլե-
 մոսի Փիլեմոսի պաշտօնարանին անկումը և ռամկա-
 պետականաց յաջորդելը, որ ոցգլուխ էր ճիւղերդի, կը
 նշանակէր որ մերձ էր Աւստրիոյ դէմ պատերազմը :
 Սակայն ճիւղերդի յետ միանգամ վարչութեան գլուխ
 անցնելու՝ սկսաւ ինքն ալ խոչեմութիւն քարոզել և մինչ
 Պրոֆֆէրիս ծայրայեղ ազատականաց առաջնորդը կը
 յանդիմանէր զինքը իրրև անգործ իր նախորդաց պէս,
 ճիւղերդի կը դատապարտէր Գուքանայի Սաճմանա-
 դիրը իրրև ժողովակ մը խոովարարաց : Կ'առաջար-
 կէր քահանայապետին Փիլեմոսի բանակը իր իշխա-
 նութիւնը հաստատելու համար, և երբ Պիոս թ. մեր-
 ժեց, այն ատեն ճիւղերդի միտքը դրաւ անկոչ դի-
 մելու ի Գուքանա և ի Հոովմ և հաստատելու օրի-
 նաւոր իշխանութիւնքը : Այս իւր կարծիքը մեծամեծ

Հակառակորդներ գտաւ յորս նաև Քարլօ Ալպէրդօ . և յետ ազմկալից վիճարանութեանց ի Խօսարանի , ճիւղ պէրդի մերժեալ տեսնելով իր կարծիքը՝ հրաժարեցաւ . և թագաւորը յանձնեց Քիօտօ զօրավարին , որ էր պաշտօնեայ պատերազմի , նոր պաշտօնարանը կազմելու , և պատրաստութիւն տեսնելու պատերազմի , ուսկից անկարելի էր խոյս տալ :

Արդէն Փիէմոնթի , Լոմպարտիոյ և Վենետկոյ բազմաթիւ լրագիրք և պարբերականք զայն կ'արժարժէին յետ Սալւադոյի նախատական զինադադարման : Քարլօ Ալպէրդօ հարկաւոր կը տեսնէր զպատերազմ և փութով , հասարակապետութեան ծաւալելուն և իր թագին կորստեան վախէն : Բայց դժբաղդն այն էր , որ բանակը իւր առաջնորդաց վրայ կորսնցուցեր էր իր վստահութիւնը , որով երթալով նուազեր էր բարեկարգութիւնը :

Ընդհակառակն Ռատէցքի յետին յաղթութիւններէն վերջը՝ ոչ միայն ջանացեր էր քաղցրութեամբ գնալ ժողովրդոց հետ , այլ և մեծ խնամք տարեր էր զինուորական բարեկարգութեան և տեղեաց կրթութեան և վարժութեան . և երբ Մարտ 12ին Փիէմոնթի պաշտօնարանին նոր նախագահը Տէֆէրրարի և միանգամայն պաշտօնեայ Արտաքին գործոց , զինադադարումը կը վերցընէր հրովարտակով մը՝¹ հայրենեաց քաջած վշտաց և նախատանաց վրէժն առնելու համար , Իտալիոյ գաւառները օտարին բռնութենէ ազատելու համար և միանգամայն օգնելու Վենետկոյ և Իտալական ազատութիւնը ապահովցընելու համար , արդէն Ռատէցքի կազմ էր և պատրաստ : Փիէմոնթ նախ քան զպատերազմը զլօրէնցօ Վալէրիօ Ղրկած էր ի Դոսքանա և ի Հոովմ՝ պատերազմին վրայօք միաբան խորհելու համար , բայց նուիրակը Դոսքանա հասնելէն երեք օր վերջը յանկարծ լսուեցաւ պատերազմին հրատարակուիլը :

1. Կը պատմեն , որ Ռատէցքի ի ձեռն մատնչաց արդէն քանի մը օր առաջ գիտէր զինադադարման վերջուիլը :

Վարլօ Ալպէրդօ թերևս զղջացեր էր ուրիշ իշխանութեանց հետ խորհրդակցելուն, որպէս զի պատերազմին յաջող ելից միջոց ալ չըննադատուի միաբան բաժնելու արդիւնքը: Այսու հանդերձ Գուպանա խոստացաւ օգնութիւն զրկելու և ի Հոռով մեծ եռանդեամբ սահմանուեցաւ 10,000 հոգի զրկելու: Նուիրակ զրկուեցաւ նաև առ Մաճառս և Խուուադս որոնք յուզեալ էին ընդդէմ Աւստրիոյ պետութեան, սակայն շատ ուշ և առանց արդիւնքի մը: Քիչ ամիս առաջ բանակին ընդհանուր հրամանատար անուանուեր էր Քոճանովաքի լեհ՝ կարիճ, արդէն փորձ 1831ի յեղափոխութեան մէջ, բայց անտեղեակ հրամայելիք բանակին և տեղեաց: Փանձը լմնցեր էր, և պետութեան պարտատեարք չէին համարձակեր վճարել. միով բանիւ, ոգւոց պէս ամենայն ինչ յուզեալ էր:

Աւստրիացի բանակը մեծ ուրախութեամբ լսեր էր պատերազմին լուրը և Ռատէցքի պատերազմական եռանդուն խօսիւք զայն աւելի վառեր էր: Ռատէցքի միաքն էր շթողուլ Վարլօ Ալպէրդօյի Լոմպարտիա հասնել պատերազմելու համար, և կանխել հասնել ի Փիէմոնթ և հոն կռուիլ: Քոճանովաքի ջանացեր էր բռնել Վիշինոյի երկու գիւրին անցքերը, մին ի Պուֆֆալորա և միւսն ի Փավիա, զոր Ռամարինոյ գնդապետին յանձներ էր. բայց յետինս հրամանին անասաւելով Փոյ գետէն անդին կեցեր էր¹. և Ռատէցքի յետ սակաւաթիւ պահակապանք թողլու ի Պրէշիա, Միլան, Պէրկամօ և Գրսութիւնները, բանակին զօրաւոր գունդերով 20—21ին գիշերը անցաւ Փավիայի քովէն գիւշինս, 70,000 հոգւով և թնդանօթով: Վարլօ Ալպէրդօ հասեր էր ի Մաճէնդա՝ երբ լսեց որ Աւստրիացիք ալ անցեր են Փավիոյ քովէն: Երկու բանակները մէկմէկու հանդիպեցան նախ ի Պորկօ Սան Սիրօ և ի Վիճէվանօ և երկու կէտերուն մէջ ալ Փիէ-

1. Պատերազմէն ետքը Մայիս 22ին Ռամարինոյ զօրավարը՝ Պատերազմական ատենէն դատապարտուելով հրացանի բռնուեցաւ:

մոնթեցիք յետս նահանջեցին. նոյնպէս Տուրանտօ զօրավարը և Սավոյիոյ դուքսը չկրցան պաշտպանել ըզ-Մորդարա, որուն վրայ յարձակեր էր 15,000 հոգևով և 48 հրանօթիւք տ'Ասփրը զօրավարը, և որուն բանակին մէջ կը զինուորէին նաև արշիդուքսն Ալպէրդ և Պէնէտէք: Լա Մարմորա զօրավարը ուզեց քաղաքը կտրելով անցնիլ, սակայն իր զինուորքը ցրուեցան և շատը սպաննուեցան կամ բռնուեցան: Նոյն օրը 500 հոգի մեռան, 2000 գերի բռնուեցան և հինգ ալ հրանօթք: Մարտ 23ին փիլմոնթեցի բանակը քաշուեցաւ Նովարայի քով և հրամանատարութիւնը հաստատուեցաւ ի Պիլքօքա: Քոճանովքի սահմանեց հոն տալու պատերազմը. երկու բանակն ալ գրեթէ հաւասար էին թուով 50էն 60,000. միայն հրանօթիւք կը գերազանցէին Աւստրիացիք: Ինչպէս ի Մորդարա նոյնպէս նաև ի Նովարա, պատերազմին առաջին յարձակողը եղաւ տ'Ասփրը աւստրիացի կտրիճ զօրավարը, որ յետ իմացընելու միւս գնդապետաց եթէ դիմացն ունէին ամբողջ Փիլմոնթեցի բանակը, ինքը ահաւոր եռանդեամբ մը սկսաւ կռիւր:

2. Պատերազմ Նովարայի — Գարլօ Ալպէրդօյի հրաժարիլը: — Սավոնայի և Սավոյիոյ ջոկատները տկարանալով, Փիլմոնթիւնը յառաջեց որ ընդ երկար պաշտպանուելով մեծ վտանգի մէջ ձգեց զտ'Ասփրը: Գասդէլաձձօ աւանը քանի մը անգամ երկու կողմէն առնուեցաւ. հուսկ ուրեմն Փիլմոնթեցիք չկրնալով թշնամեաց ահաւոր հրոյն դէմ դնել, սկսան Նովարա փախչիլ և Փէրրոնէ զօրավարը որ կը ջանար ցրուեալ գունդերը նորէն միացընել, հարուածեալ ինկաւ: Այսու հանդերձ քիչ մը ժամանակ Փիլմոնթեցիք նորէն զօրացան Պիլքօքայի մօտ և մերձ էին զտ'Ասփրը վանելու, երբ հասաւ Ռաստէցի իր գունդերով և պատուիրեց մէկ մասի մը՝ դէմ դնել Փիլմոնթի աջոյն, և կեղրոնէն միւս մասերն ալ ամենայն ուժով դիմել Գասդէլաձձօյի և Պիլքօքայի վրայ: Փիլմոնթեցիք ձախ թևերնին կորսնցընելով և սեսնելով որ ալ անհնարին էր դիմանալ, քաշուեցան ի Նովարա խառն ի խուռն կոխելով ամենայն բարեկար-

գուժիւն, Բանակայ փնտար հաւասար էր. երկու կողմն ալ 5000 հոգի գրեթէ կորսնցուցեր էր. սակայն Աւստրիացիք բռնած էին պատերազմի դաշտը և գունդերը կարգով և կանոնով ձամբարը դրեր էին: Գարլօ Ալպէրդօ Ռաստէցքիէ զինադադարումն խնդրեց, բայց աւստրիացի զօրավարը պահանջեց բռնելու Գիշինոյ և Սէզիոյ մէջ եղած երկիրները և Ալեքսանդրիոյ դղեակը: Գարլօ Ալպէրդօ շուգելով յանձն առնուլ այսպիսի ծանր և նախատալից պայմաններ, սահմանեց ի զործ դնել զոր մտածեր էր կանխաւ, եթէ յանկարծ պատերազմը ձախող երթար. հրաժարեցաւ թագաւորութենէն ի նպաստ իւր որդւոյն Սաւոյիոյ իշխանին:

3. Վիլտոր Էմմանուէլ Բ: — Նոր թագաւորը Վիլտոր Էմմանուէլ և աւստրիացի հրամանատարը միարան տեսնուելով ստորագրեցին զինադադարումը այս պայմաններով՝ որ 20,000 Աւստրիացիք Փիէմոնթի ծախքով բռնեն Սէզիոյ և Գիշինոյ մէջ եղած երկիրը, որ Աւստրիացւոցմէ և Փիէմոնթեցիներէ կաղմեալ պահակապաշտ բռնեն Ալեքսանդրիոյ դղեակը. Փիէմոնթ այնքան զօրք պահէ որչափ ի խաղաղութեան, և հաշտութիւնը կատարուէր 1815ին դաշանց վրայ: Փիէմոնթ պիտի վճարէր նաև պատերազմին ծախքը:

Իսկ Գարլօ Ալպէրդօ հրաժարած գիշերը թողուց գրանակը, և ելաւ յիտալիոյ կոմս Պարկայ տիաղոսով, յետոյ գնաց ի Նիցցա և անտի յԱնդիպօ և հուսկ յՕփորդօ, ուր մեռաւ քիչ վերջը սրտին ցաւէն, թողլով պատմութեան մէջ այլազան դատողութիւնք իր վրայ, կոչուելով յոմանց մեծ հայրենասէր և ազատասէր և յայլոց մատնիչ և պատճառ աղետից: Բայց եթէ առաջին անուանակոչութեան բովանդակապէս արժանի չէր՝ երկրորդին բնաւ: Գարլօ Ալպէրդօ կտրիճ և անձնանուէր զինուոր մը՝ կը սիրէր զՓիէմոնթ և կ'ուզէր զայն մեծցընել և այս նպատակին հասնելու համար մտիկ ըրաւ որ և իցէ խորհրդոյ մը, որ զինքը առայն կ'առաջնորդէր: Իտալական միութեան սէրը այն կերպարանքով էր իր մտաց մէջ, որ այս միութեան անվրէպ գլուխն ըլլայ Փիէմոնթ, և այս գլխաւորու-

թեան զոհը բնաւ չէր յանձն առնուր կատարել . այնպէս որ եթէ ուրիշ իշխան մը առաջարկուէր իր տեղը, ինքը պատրաստ էր Փիէմոնթով միաբան բաժնուելու այս միութենէն : Այսու հանդերձ՝ եթէ այս եթէ այն պիտաւորութեամբք մեծ արդիւնք ունեցաւ իտալական խնդրոյն մէջ և սկզբնապատճառ եղաւ այն վիճակին, զոր ի ներկայի ստացաւ Փիէմոնթ և Իտալիա :

4. Յուզումնք ի Պրէշիա եւ ի Ճենովա եւ Ընկճումն : — Աւստրիոյ և Փիէմոնթի մէջ պատերազմը սկսած ժամանակ, Լոմպարտիոյ քաղաքներէն ոմանք ապստամբեր էին . սակայն լսելով յետոյ Նովարայի պարտութիւնը հանդարտեր էին : Ոչ նոյնպէս նաև Պրէշիա որ սուտ լուրերով խրախուսեալ ոտք ելաւ, խորսակեց կայսերական նշանը և կանգնեց եռագոյն դրօշը . փութով քովի աւաններէն օգնութիւն ընդունեցաւ, զինուորեց ազգային պահապանքը, փողոցները ամրացուց, փոսեր բացաւ և հասարակաց պաշտպանութեան Յանձնաժողով մը կազմեց : Հասաւ փութով Նուկէնդ աւստրիացի զօրավարը 2,000 հոգով ²⁶ Մարտ. և դքաղաքը յորդորեց անձնատուր ըլլալու . բայց պատասխան ընդունեցաւ որ միտքերնին դրած էին դիմանալ եթէ մոխիր անգամ դառնար քաղաքը : Արդէն Աւստրիացիք երկու անգամ յարձակելով վանուեր էին և Նուկէնդ նոր օգնութիւն ընդունելով 3,500 զօրաց, երրորդ անգամ փորձեց յարձակումը՝ բայց երրորդ անգամ վանեցաւ, որովհետև կ'ուզէր խնայել քաղաքին : Հասաւ այն ատեն Վենետիկեան գաւառէն Հայնաւ զօրավարը նոր գունդերով և հրաւիրեց ըզ-Պրէշիացիս անպայման անձնատուր ըլլալ, և անոնց մերժելովը ահաւոր կրակ մը սկսաւ տեղալ և յարձակեցաւ դրանց վրայ : Պրէշիացիք անզուխ խառն ի խուռն կը կուռէին . վրայ հասաւ գիշերը և գղեկին մէջ եղած զինուորք ալ կողմնակի կուռելով, Հայնաւ կըրցաւ մտնել քաղաքը, ուր ահաւոր կռիւ մը սկսաւ, որ քանի մը օր տևեց յորում Աւստրիացիք շինայեցին, ոչ տկարի, ոչ ծերոց, ոչ կնոջ և ոչ տղայոց, հրով և

սրով ամենայն ինչ ջնջելով. Հայնաւ ի Պրէշիա սկսաւ այն անգութ յաղթանակը զոր յետոյ ի գլուխ տարաւ ի Մաճառստան, և որով իր անունը տխուր հռչակ մը ստացած է¹:

Ի Գուրին պաշտօնարանը Նովարայի պարտութեան վրայ հրաժարեք էր և նոր պաշտօնարան մը կազմուեք էր, որուն նախագահ եղաւ Տէլօնէ և Ներքին գործոց պաշտօնեայ եղաւ Փինէլլի: Թագաւորը հրովարտակով մը ծանոյց պատերազմին ձախող եքքը՝ հրաւիրելով զամենեսին բարեկարգութեամբք ջանալ սուրբ պահելու ազգին պատիւը: Սակայն Խօսարանը զինադադարումը հրատարակեց Սահմանադրութեան հակառակ: Վիկտոր Էմմանուէլ Սահմանադրութեան վրայ երդուրննալէն վերջը Խօսարանը լուծեց:

Գուրինէն աւելի մեծ էր շփոթութիւնը ի ճենովա, ուր ոտք ելաւ ժողովուրդը և տիրեց դղեկին. պաշտպանութիւնը երեք անձանց հաւատացաւ յորս էր և Ավէցցանա զօրավարը: Զինուորաց և քաղաքացոց մէջ կռիւր սկսաւ և յետինքս յաղթուելով բռնադատուեցան քաղքէն ելլելու, և քաղաքացիք հրաւիրեցին Լոմպարսացի ջոկատքը իրենց գալու օգնելու: Բայց Լոմպարսացիք չհասած՝ յանակնկալս հասնելով նոր գունդերով Ալֆոնսօ Լա Մարմորա զօրավարը տիրեց նախ քանի մը բերդորէից, ապա բովանդակ քաղա-

1. Պատերազմին մէջ ինկաւ նաև աւստրիացի ծեր զօրավարն Նուկէնդ, որ իր երկար բնակութեամբը յիտալիա մեծ սէր ունենալով ժողովրդեան վրայ, իրեն ժառանգ թողուց զՊրէշիա, և Պրէշիացիք այսպիսի վեհանձն գործոյ մը համար իրեն դամբանարան մը կանգնեցին չքեղ արձանագրութեամբ: Իսկ Հայնաւ 1850ին պաշտօնընկէց եղաւ « ոչ բարւոք վարելուն համարի յիսանութիւնք », իր անունը այնքան ատելի դարձաւ Եւրոպիոյ ամէն կողմ, որ տարի մը վերջը Լոնտրա երբ այցելութեան ելած էր Արհեստանոցի մը, Ռոշիլտի հետ միաբան, հոն աշխատաւորք զինքը ճանչնալով այնքան թքին երեսը և ապտակեցին և բռնցի ծեծեցին, որ հազիւ կրցաւ զինքը Ոստիկանութիւնը մահուընէ մը ազատել:

քին: Ընդհանուր ներուժն շնորհուեցաւ, բայց ի վարչութեան գլուխ կեցողներէն և քանի մը քաղաքացւոցմէ. քաղաքը պաշարման վիճակի մէջ դրուեցաւ և ազգային պահապանք ցրուեցան և քաղաքացւոցմէ գէնքերը ժողովուեցան. ստով սպստամբութիւնը նուաճուեցաւ:

5. Գոսքանա. Կուէրացցի իշխանապետ եւ կալսնաւոր: — Ի Գոսքանա կ' յուզէր տակաւին Հոովմայ հետ միութեան խնդիրը: Կուէրացցի, որ միշտ նախադաս կը համարէր առաջին համարուիլ փոքր վիճակի մը մէջ քան երկրորդ մեծ պետութեան մը, ամենայն կերպով կը ջանար այս միութիւնը ուշացընելու: Հոովմէն նուիրակութիւն մը եկեր էր որուն գլուխ էր Չիչերուաքիս ժողովրդեան տրիրունը, և Գոսքանայի վարչութիւնը Մարտ 25ին պիտի կատարէր այս միութիւնը, երբ Փիէմոնթի ձախողանաց լուրերը հասնելով ամենայն ինչ վրդովեցին: Անկէ վերջը Ատենին նիւտերը լի էին յուզմամբ, յորս Կուէրացցի կը նկարագրէր վարչութեան ներքսպէս և արտաքսպէս խեղճութիւնը. հարկ էր խորհել ձև մը տալ վարչութեան և հասարակապետութիւնը մեծամասնութեամբ մերժուեցաւ: Այն ատեն առաջարկուեցաւ դիկտատորութիւն մը հաստատել. յիտ մեծամեծ գովեստից և պարսաւանաց իշխանապետ անուանուեցաւ Կուէրացցի պայմանաւ՝ որ առանց Ատենին խորհրդակցութեան չկարենայ փոխել վարչութեան ձևը և Հոովմայ հետ միութեան խնդիրն ալ առ ժամս կախ մնայ: Այնուհետև Կուէրացցի աշխատեցաւ երկիրը ոտք հանելու ընդդէմ՝ Աւստրիոյ և ռզիները պատրաստելու միանգամայն լէֆոփուտի դարձին, պայմանաւ ազասութեանց պահուելուն: Չորս կուսակցութեանց բաժնուած էր քաղաքը, մաս մը կ' ուզէր հասարակապետութիւն և անմիջական միութիւն Հոովմայ հետ, ասոնց գլուխն էր Մոնդանէլլի, Կուէրացցի իր բարեկամներով յանձն կ' առնուր ազատ սահմանադրական վարչութեան մը հաստատութիւնը. ուրիշ կուսակցութիւն մը նոյնպէս կ' ուզէր ղլէֆոփուտ, բայց իշխանին հրատարակած սահմանադրութեամբ,

5. Ապր.

և ասոնցմէ էին ձինս Գափփոնի, Ղիւսդի և որոնք ըզ-
Սէրիսդորի զրկեցին ի Կատեդա Լէոփոլտի հետ բա-
նակեցելու . կար դարձեալ մաս մը որ կուզէր գիշխա-
նը բացարձակ վարչութեամբ : Առաջին կուսակցութեան
գլուխը Մոնդանէլլի տեսնալով, որ իրեն համար անհնա-
րին էր կուռիլ Կուէրացցիի նման զօրաւոր հսկայի
մը հետ, յանձն առաւ ի Կուէրացցիէ իրեն առաջար-
կեալ պաշտօնը, ի Քաղղիա և յԱնգղիա երթալ հայ-
րենեաց դատը պաշտպանելու համար . քաղաքաց մէջ
Լիվոնսօ միայն հասարակապետական էր, իսկ Լուքթա
բացարձակ իշխանութեան կողմը : Կուէրացցի խնամք
չէր տարած իրեն հակառակորդքը ցրուելու և կը
յուսար վերջ տալ այս քաղաքական յուզմանց, Ապ-
րիլի 15ին հրատարակելով իշխանին վերանորոգումը
ազատ սահմանադրութեամբք . սակայն անակնկալ յե-
ղափոխութիւն մը վրայ հասնելով արգիլեց զայն և
պատճառ եղաւ անկման իրեն և իր կուսակցաց :

Ֆիրէնցէի մէջ շատ մը կամաւոր Լիվոնսօյի զի-
նուորք կային, որոց կը հրամայէր Կուարտուչչի գըն-
դապետը որոնք Արէզինոյէ կը դառնային Փիսդոյա
երթալու . ինչպէս ուրիշ խմբեր ալ կը հանդերձէին
սահմանազուխները երթալու : Ֆիրէնցացիք մեծա-
պէս տփգոհ էին այս կամաւորաց համարձակ վար-
մանց համար, որ իրենց հասարակապետական ըլլալով,
աւելի անտանելի էին : Ֆիրէնցացուց և Կուէրացցիի
բարեկամք խորհուրդ կուստային օր մը առաջ զանոնք
ձամբելու, քանի որ տակաւին արիւնհաշեղութիւն մը
եղած չէր : Հրամայուեցաւ որ նախ Ապրիլ 11ին մեկ-
նին Կուարտուչչիի գունդերը . և յիրաւի երբ 11ին ա-
ռաւօտը ամէնը սահմանեալ տեղ մը կը ժողվուէին և
շատերը ասդին անդին ցրուած էին, նախ մասնական
ապա ընդհանուր կռիւ մը ծագեցաւ Լիվոնսօյի կա-
մաւորաց և Ֆիրէնցէի ժողովրդականաց մէջ, որոնք
ձայն տալով բոլոր քաղաքացուց՝ դիմեցին Լիվոնսօ-
յուց վրայ՝ նաև անոնց որ կը մեկնէին, և երկու կող-
մանէ ալ սպանեալք եղան : Ի զուր Կուէրացցի աներ-
կիւղութեամբ վազեց կռուոյն ամենէն ջերմ կէտը . ամ-

բոխը զայրացեալ Ոստիկանութեան պալատը դիմեց և սկսաւ աղաղակել, որ խորհրդականք գումարուին և վարչութիւնը ձեռք առնուն յանուն իշխանին : Բոլոր քաղաքը ոտք ելաւ, ամէն կողմ կը լսուէր « Ի մահ Կուէրացցի », « Կեցցէ Լէոփոլտ » : Կուէրացցի փութով հրաման ղրկեց Լուքա գացող իրեն հաւատարիմ պահանորդաց յետս դառնալու ի Ֆիրէնցէ, որոց կը հրամայէր հազարապետն Սոլէրա . բայց Սոլէրա հրաժարեցաւ զօրավարութենէն Կուէրացցիի կողման չնպաստելու համար, և յետոյ նորէն զայն առաւ յանձն ի նպաստ Լէոփոլտի :

Ատեանը խմբեցաւ և վճռեց իշխանին վերանորոգումը . սակայն Ոստիկանութիւնը ցրուել տուաւ Ատեանը և իր վրայ առաւ վարչութիւնը՝ անուանելով առ ժամանակեայ պաշտօնեաներ : Կուէրացցի ամբօխին մոլեգնութենէն ազատելու համար հին պալատը դիմեր էր՝ քանի մը հաւասարիմ պահապանացմէ պաշտպանեալ : Առաջարկուեցաւ իրեն նախ Լիվոնոս երթալ և խաղաղել շփոթութիւնը, ապա կամաւոր պքսոր : Ամբօխը երթալով կը յուզէր և աղաղակները կը բարձրանային, որ իրեն մահը կը պահանջէին : Յանձնաժողովը սահմանեց զինքը անցընել Հին պալատէն Փիդգի պալատը գացող սրահը՝ դէպ ի Պէլլէտէր դղեակը և խաբել զամբօխը, յետոյ անկէ ազատ թողուլ, սակայն տարուելէն վերջը՝ զգուշութեան համար, նենգութեամբ հոն պահուեցաւ :

6. Իարձ Լէոփոլտի յիշխանութիւն : — Բոլոր Դոսքանա բաց ի Լիվոնոյէ հաւանեցաւ այս եղած յեղափոխութեան և ամէն քաղաքաց նշանաւոր քաղաքացւոցմէ ժողովք գումարուեցաւ ի Ֆիրէնցէ և վարչական յանձնաժողով մը կազմուեցաւ : Նոր վարիչք գրեցին առ Լէոփոլտ, որ իր երազ գալստեամբը անշուշտ կը խափանէր օտարին միջամտութեան պատճառած ամօթը և վնասը, և Լէոփոլտ պատասխանով մը կը խոստանար ամենայն սահմանադրական ազատութիւն . զկոմսն Սէրիսդորի առ ժամս լիակատար իշխանութեամբ գլուխ կ'անուանէր վարչութեան : Սակայն

Աւստրիացիք կը յառաջէին, և վարչական յանձնաւ-
 ժողովը իր պաշտօնը յանձնելու ժամանակ կը յայտ-
 նէր իր մեծ ցաւը Աւստրիացւոց միջամտութեան հա-
 մար. բայց Սէրիսգորի կը հրատարակէր որ ինքը բը-
 նաւ մասնակցութիւն մը չունի, և սակայն եթէ տ'Աս-
 փրը և եթէ իշխանն Շվարցէմպէրկ իրենց հրովար-
 տակներուն մէջ կը հռչակէին որ կուգային հրաւիրեալ
 ի Լէոփոլտէ: Մայիս 10ին 10,000 Աւստրիացիք Լի-
 վոունոյի մօտեցան և արիւնահեղ մոլեգին կռիւ մը սկը-
 սաւ, բայց երբ թշնամին տիրեց Փորդա ա Մարէ ա-
 բուարձանին, այն ատեն քաղաքը կանգնեց սպիտակ
 դրօշը և Աւստրիացիք ներս մտան: Ֆիրէնցէ բնաւ
 ընդդիմութիւն մը չըրաւ՝ Մայիս 25ին մտաւ տ'Աս-
 փրը և յետ գինաթափ ընելու բոլոր քաղաքացիքը
 ցրուեց նաև ազգային պահապանքը: Լէոփոլտ Կաէ-
 դայէն նոր պաշտօնարան մը անուանեց, որուն նախա-
 գահն եղաւ Յովհաննէս Պալտաստէրոնի, և նոր պաշ-
 տօնարանին առաջին դործն եղաւ վերջընել իաալա-
 կան դրօշը և հաստատել նախկինը: Լէոփոլտ Յուլիսի
 24ին դարձաւ ի Ֆիրէնցէ, և դեռ քաղաքը չմտած
 ներուժն շնորհեց այն ամենուն որ խօսիւք կամ գրով
 իրեն դէմ զինելու էին, ի բաց առեալ հասարակաց խա-
 ղաղութիւնը վրդովողները և փոստակարքը: Առաջ-
 նակարգ նշանով պատուեց զՌաստէցի մարաջախտը, և
 ուրիշ գօրավարք ալ ըստ աստիճանի: Տարի մը վեր-
 ջը Սեպտեմբեր 10ին վեննա գնաց ի պատիւ նոր կայ-
 սեր Փրանկիսկոս Յովսէփի, և ի դարձին նաև շատ
 մը քաղաքական յանցաւորաց ներուժն շնորհուեցաւ:

7. Սիլվիոյ ընդդիմութիւնը եւ նուաճումը: — Մեա-
 սինայի անկումն վերջը Գաղղիոյ և Անգղիոյ կողմա-
 նէ ի Նաիոլի գտնուած երկու ծովակաք ջանացեր էին
 Փերտինանտուէն զինադադարումն ստանալ Սիկիլիոյ
 համար, որ սակայն բնաւ անձնատուր ըլլալու միտք չու-
 նէր և ամենայն եռանդեամբ կը պատրաստուէր ընդ-
 դիմութեան: Անգղիայէն և Գաղղիայէն 18,000 հրա-
 ցան գնուեր էին, և աւելի ևս կը գնէին եթէ Լուի-
 Նարոլէոն նախագահ ընտրուելով շարգելուր արտա-

Հանութիւնը : Իրենց զօրավարութեան հրաւիրեր էին զՄիէրօլավաքի լեհ անուանի զօրավարը, գանձը յետին չքաւորութեան մէջ էր . ազգային կալուածները ծախուեցան, մեծամեծ տուրքեր դրուեցան եկեղեցական կալուածոց վրայ . առնուեցան եկեղեցիներէն սկունք և արծաթեղէնք . այսու ամենայնիւ հազիւ քանի մը միլիոն ժողովուրդ էր : Միաձայն հաւանութեամբ ի Խօսարանին օրէնքով հաստատուեր էր շինելու 15 միլիոնի թուղթ՝ վճարելիք հարիւրին չորս տարւոյն մէջ, միանգամայն աղքատ ժողովրդեան օգնութեան համար աղօթեաց վրայէն վերցուեր էր տուրքը : Պաշտօնարանը ըմբռներ էր իր ծանր վիճակը և երկու անգամ թէպէտ հրաժարեր էր, բայց Խօսարանին աղերսելով նորէն յանձն առեր էր մինչև Փետրուարի ըսկիգրը, յորում հարկ եղաւ որ փոխուի և նոր պաշտօնարանին գլուխ անցաւ Արտաքին գործոց պաշտօնէութեամբ իշխանն Պուդէրա :

Այս կազմութիւնքը տեսնուած միջոց՝ Եւրոպոյ պետութիւնք Գաղղիա և Անգղիա կը ջանային միջնորդ ըլլալ ընդ Փերտինանտոս և ընդ Սիկիլիացիա : Գաղղիա կը փսփագէր ինքնիշխան սահմանադրութիւն մը տրուի կղզւոյն, ուր նստի Փերտինանտոսի կողմանէ փոխարքայ մը . Անգղիա կը յաւելուր՝ որ Սիկիլիա ունենայ առանձին մատակարարութիւն և բանակ մը : Ասոնց պատասխան կուտար Ֆիլանձիէրի իր թագաւորին կողմանէ, որ Երկուց Սիկիլեայց վերարբերեալ նոր կազմութեան մը համար հարկ էր 1815ի պետութեանց ամենուն հաւանութիւնը և Փերտինանտոս 28 Փետր. կատէրայէն վերջնագրով մը կը ծանուցանէր, որ եթէ Սիկիլիա հնազանդէր, ինքը պատրաստ էր շնորհելու Առանձին քաղաքական վարչութիւն և մատակարարութիւն և Խօսարան մը և փոխարքայ ընդարձակ իշխանութեամբ : Սիկիլիա տարին 15 միլիոն պիտի վճարէր թագաւորութեան հասարակաց ծախուց համար, և տասնուհինգ տարի կէս միլիոն պատերազմին ծախքին համար : Այս ծանուցագրին պատասխան Ռէալի երեսփոխանը կ'առաջարկէր Մարտ 7ին ի Խօսարանի ի զէն

կոչելու 18 տարուըն՝, մինչև 70 տարուան բոլոր Սիկիլիացիքը: Գալվի և Սդասպիլէ հաշտուելով պաշտօնարանին մէջ մտան և ամենայն հանդերձանք սկսան տեսնուիլ մոլեզին ընդդիմութեան մը: Ի զուր Գաղղիոյ և Անգղիոյ ծովակաք ջանացեր էին համոզել ըզ-Պաշտօնարանը, որ Կաէդայի վերջնագիրը հիմն առած, դաշնագրութիւն մը սկսին աւելի ազատական. ի զուր երկուց պետութեանց պաշտօնեայքը ի Նափոլի՝ Գամիլլը և Ռայնէվալ դիմեր էին ի Փալէրմօ իբրև միջնորդք հաշտութեան. Պաշտօնարանը և ոչ իսկ յանձն առաւ իրենց առաջարկութիւնքը հաղորդելու Խօսարանին, ուր հնչեց նախ պատերազմը և անկէ տարածուեցաւ ժողովրդեան մէջ, որ մեծ ցնծութեամբ և հանդէսներով ընդունեցաւ զայն: Քայց եթէ պատրաստք էին սօներ կատարել և ամենայն հանդերձանք տեսնալ պատերազմին համար՝ ոչ նոյնպէս և պատերազմելու, և Տիլանձիէրիի 16,000 զօրաց դիմաց Միէրոլավքի հազիւ 7000 ունէր, բաց ասկէ Փերսինանտոս ունէր նաև փոքրիկ նաւատորմիղ մը և բանակին մաս մը նաւերուն մէջ էր, որ ըստ պիտոյից կարենար օգնութեան հասնիլ: Ամենէն առաջին բաղխման մէջ Սիկիլիացիք փախան, և երբ Միէրոլավքի կը պատուիրէր հասնել ի Քաղանիա, արդէն առաջ թշնա մին զայն բռներ էր և թէպէտ մէջի պաշակապանք և քաղաքացիք դուրս դիմելով մեծ արիւնահեղութեամբ կռուեր էին և Միէրոլավքի ալ հասեր էր ընդունելով նաև ծանր վէրք մը ի կոկորդն, սակայն յետ երեք օրուան ընդդիմութեան քաղաքը ընկճեցաւ:

Քաղանիայի անկմամբ անձնատուր եղաւ փութով Սիրակուսա և Ալկուսդա, իսկ Փալէրմօ յետ այնքան մեծաշառաչ հանդերձանաց, միաձայն հաւանութեամբ Խօսարանաց փութով յանձն առաւ Պոսէն ծովակալին միջնորդութիւն մը, որ կ'առաջարկէր պաշտութիւն: Թագաւորին պայմանքն էին սահմանադրութիւն մը ըստ վերջնագրոյն Կաէդայի, փոխարքայ մը, ազգային պաշտպան ի Փալէրմօ, ազատութիւն Գալապրիոյ կալաւաւորաց, ընդհանուր ներուճն բաց ի յեղափոխութեան

գլխաւորաց : Պաշտօնարանը հրատարեցաւ և նոր պաշտօնարան մը կազմուելով ցրուեց զինեալ գունդերը, և թէպէտ Ապրիլ 27ին և Մայիս 7ին ժողովուրդը, յորս մտեր էին նաև շատ մը գաղղիացի ազատասէրք, ապրատամբութիւն մը փորձեցին, բայց աննպատակ : Անոնք, որ պատճառք եղած էին այս Յեղափոխութեանց, մեծաւ մասամբ թողուցեր փախեր էին ի Սիկիլիոյ . և Մայիս 15ին թագաւորական գունդերը մտնելով ի Փալէրմօ կանգնեցին թագաւորական դրօշակը :

Անկէ վերջը Փերտինանտոս տէր բոլոր իր թագաւորութեան, շատ փոյթ չունեցաւ ազատական խոստմունքներուն կատարման, ի գուր Անգղիա կը յիշեցընէր իրեն 1821ին սահմանադրութեան հաստատութիւնը և Սիկիլիոյ խոստացեալ ներումը, 500էն աւելի անձինք բանտերու մէջ տառապեցան, և 20 միլիոն տուգաթ պարտք դրուեցաւ կղզւոյն վրայ : Աւաջին ընդհանուր տեղապահն եղաւ Ֆիլանճիէրի : Սեպտեմբեր 10ին ժողովուրդը նորէն յուզուալ էր և ապրատամբութեան մը դիմացը առնելու նպատակաւ զժողովուրդը փախցընելու համար բանտ դրուեցան Սիլվիօ Սփավէնդա և Փիէրօ Լէոփոլտի, որոնք Գուրինի դաշնակցութեան ժողովոյն մասնակցեր էին ընդ նախագահութեամբ Ըրոպէրդիի . Սէդդէմպրինի մատենագիրը և Ալկուսդի մահուան դատապարտուեցան, որոց դասակնիքը Փերտինանտոս ապա մշտնջենաւոր բանտի փոխեց . նոյնը եղաւ նաև Սփավէնդայի : Իսկ բանտարգելոց ամենայն տանջանք կրել կու տային, բեռնաւորեալ շղթայիւք, գուրկ յամենայն միաթարութենէ, խառն ի խուռն ձգուած աւազակաց և եղեռնաւորաց հետ, որ ահաւոր սարսափ մը ազդեց բոլոր Եւրոպիոյ, երբ այցելութեամբ մը գանոնք նկարագրեց Արատըսդոն : Փերտինանտոսի անունը միշտ տխուր հնչեց, այլ ազգ ամենևին ուրիշ իշխաններէ՝ որոնք յետ դառնալու իրենց աթուրը ջանացին ներելով շահել իրենց հրպատակքը :

8. Հռովմ — Միջաւրուութիւն Գաղղիոյ — Պատերազմ 30 Ապրիլի : — Ի Հռովմ հասարակապետու

թեան հրատարակուելով երեք հոգիէ կազմեալ գործադիր յանձնաժողով մը դրուեցաւ . և որովհետև Յուզքի Փերտինանտոսի փոքր բանակով մը կը յառաջէր հարաւէն, այն պատճառաւ ընդդէմ զրկուեցաւ կարիպալտի կամաւոր յանդուգն զինուորներով: Իսկ ի հիւսիս Հայնաւ գօրավարը 10,000 հոգուով Յէրաւրայի վրայ շուելով պահանջեր էր որ քաղաքին դրուներ յանձնուին, հաստատուի քահանայապետին զրօշը, 200,000 տուգաթ վճարեն քաղաքացիք 24 ժամուան մէջ և ազնուականացմէ պատանդներ տրուին, սպառնալով սրով և հրով դատել քաղաքը՝ եթէ պահանջք չկատարուին: Աղերսաւորք ընդ առաջ գացեր էին պայմանները մեղմացընելու. Հայնաւ յետ իր ամէն պահանջները ստանալու, քաշուեցաւ դէպ յԱրճէնդա: Հռովմայ եռապետք բողոքներ ուղղեցին այս միջամտութեան պատճառաւ Եւրոպական պետութեանց, բայց անկարող էին թէ յօտարս և թէ ի ներքինս: Համարելով գանձուն դատարկութեան սօգուտ մը ընել, բռնի միջոցներու դիմեցին, որով և աւելի զայրացուցին ոգիները: Յափշտակուեցան ամենայն եկեղեցական ստացուածք և արգելք դրուեցաւ կրօնաւորաց որ և իցէ կալուածք մը գնելու, խոստանալով որ այս յափշտակութեանց տեղ կարևոր եղած դրամը յետոյ կը մատակարարուի իրենց:

Որչափ որ ամէն կողմ իշխանութիւնք հաստատուած էին, այս իշխանութիւնը պարզ ստուեր մ'էր և անիշխանութիւնը իրենց միջոց առնելով թէ՛ հասարակապետականք և թէ՛ նախկին իշխանութեան կողմնակիցք, իրենց առանձնական շահերը և վրէժները առնելու զբաղեցան գաւառներուն մէջ, իսկ Հասարակապետութիւնը զբաղած իր կենաց պահպանութեան, առանձնական գժտութիւնքը իրեն յօգուտ կը ջանար ի կիր առնելու: Փիէմոնթի պատերազմաց ձախող լրերուն վրայ, գործադիր ժողովոյն լիակատար իշխանութիւն տրուեցաւ, և նոր եռապետք անուանուեցան Մածժինի, Սաֆֆի և Արմէլլինի, որոնք ծանր բողոք մը գրեցին առ Եւրոպական պետութիւնս ընդդէմ քահանայապետական աշխարհական վարչութեան և անոր վերանորոգման,

գոր դարուս ոգւոյն հակառակ կը համարէին և պատճառ ամենայն չարեաց :

Պետութիւնք, մանաւանդ Աւստրիա, Քաղղիա ոչ միայն վատահոլութիւն մը չէին կրնար ունենալ այնպիսի վարչութեան մը վրայ, որուն նախագահ կը բազմէր Մածծինի, այլ և կը ջանային օր մը առաջ վերջ տալ այս անխիտանութեան և շփոթից : Նա մանաւանդ որ Լուի-Նաբոլէոն և Քաղղիոյ վարչութիւնը մեծապէս փնասակար կը տեսնար իր շահույ՝ Աւստրիոյ այս առթիւ այնքան լիաժառակ միջամտութիւնը յիտալիա : Պիոս Թ զիմեր էր ի Քաղղիա և Խօսարանին մէջ ի Հռովմ միջամտութիւնը մեծ յուզման պատճառ եղաւ և մեծամասնութիւնը ի նպաստ անոր գտնուելով ընդուներ էր 1,200,000 ֆրանքի վարկ մը :

Վարչութիւնը արչաւանին գլուխ անուանեց զՈւտինօ զօրավարը, պատուիրելով միջնորդ ըլլալ ընդ քահանայապետն և ընդ Հռովմայեցիս, իսկ թէ ի Հռովմ գտնուած վարչութիւնը իրենց Չիլիդավէքիս գալուն պէս ընդդիմանար, այն ատեն դէպ ուղիղ չուել Հռովմայ վրայ : Աւտինոյի գունդերը առանց ընդդիմութեան մը ելան ի Չիլիդավէքիս. նամանաւանդ զինուորք հրաժարակելով որ իրրև բարեկամք կուգային ընդդէմ Աւստրիոյ միջամտութեան, ժողովուրդը ուրախութեան նշաններով ընդունեցաւ զիրենք : Բայց քիչ օր վերջը զօրավարաց բռնած խօսակցութիւններէն կասկածելով, բողոք մը հռչակեց ընդդէմ գաղղիա ան միջամտութեան, որ իրր բարեկամ մանելով իրենց երկիրը, զիրենք կու գայ չլիթայի զարնելու, որ տկարը ընկձելը բնաւ փառք մը չէր և թէ չէին կրնար կարծել որ Եւրոպիոյ հասարակապետական ազգ մը կուռի այսպէս ընդդէմ Հռովմէական հասարակապետութեան : Աւտինօ այս հրատարակութիւնքը անդէն մէջտեղէն վերջընել տուաւ և քաղաքը պաշարման վիճակի մէջ հրատարակեց և ծանոյց, որ Քաղղիոյ վարչութեան նպատակն էր հաստատել եկեղեցական իշխանութիւն :

Այն ատեն Ատեանը յանձնեց եռապետաց բռնու Արբիւ 30.

թեամբ վանելու . և մինչ Գաղղիոյ գունդերը կը կարծէին առանց ընդդիմութեան մը մտնել ի Հոովմ, Կարիպալտի, Մագի և հրանսթից հրամանատարը Կալանդրէլի՝ Հոովմէական ջոկատներով անոնց ընդ առաջ ելլալով, գաղղիական առաջին գունդերը ցրուեցին քանի մը հարիւր գերի ալ հետերնին առնելով : Կարիպալտի խորհուրդ կուտար յօգուտ ի կիր առնելով յաղթութիւնը դիմել մինչև ի Չիլիդալէքիս և հոնկէ ևս վանել թշնամին . բայց Մածծինի յուսալով հաշտութեամբ աւելի շահելու , յանձն առաւ զինադադարումը և գաղղիացի կալանաւորքը ազատ զրկեց : Ստիպուած էր միանգամայն առ ժամս այս զինադադարումը ընելու իր վրայ դիմող միւս պետութեանց հետ ալ կուտելու համար , Նիսապօլսեցիք կը մօտենային ի Վէլլէդրի , Սպանեացիք ցամաք ելեր էին ի Ֆիուրիչինօ . Աւստրիացիք կը սպառնային Պոլոնիոյ :

Մայիս 7ին Գուռն զօրավարը մտնալով ի Ֆէրրարա վեհանձնութեամբ մը արձակեց Հայնաւին ընդունած պատանդները , յետոյ թողլով զայն քաջուեցաւ դէպ ի Փոնտէնօ : Վիմփֆէն 6,000 հոգով հասաւ Պոլոնիոյ դիմաց , որ 2,000 զինեալ պաշտպանողք ունէր և Պոլոնիա քանի մը օր ընդդիմանալէն վերջը , անօգնական մնալով անձնատուր եղաւ :

Այս միջոցիս Ապրիլ 30ի պատերազմին լուրը ի Բարիդ հասնելով՝ Խօսարանը մեծապէս զայրացաւ համարելով , որ Ուտինօ իրեն պատուիրեալ սահմաններէն դուրս ելեր էր և Օտիլոն Պարօ պաշտօնարանը զրկեց փութով զգիտնական աշխարհագէտն Լըսէփս լիակատար իշխանութեամբ , որ Մածծինիի հետ զանազան տեսաւորութեամբք որոշուեցաւ , որ Գաղղիոյ բանակը իբրև բարեկամ համարուի , և գունդերը քաղքին արտաքին կէտերը բռնեն երկրին պաշտպանութեան համար , առանց բնաւին կերպով մը վարչութեան մէջ մխելու և այս դաշինքը պիտի զրկուէր ի Բարիդ հաստատուելու : Բայց Ուտինօ զայրացմամբ ծանոյց , որ Լըսէփս այսպիսի դաշնագրութեան մը իշխանութիւն չունէր և թէ փութով թշնամութիւնքը ինքը պիտի սկսէր : Այս

բռնած ճամբուն մէջ իրեն ծածուկ նպաստ ունէր, կ'ըսեն, Հասարակապետութեան նախագահը, որ 30 Ապրիլի կռուով Քաղղիոյ զինուորական փառքը արատաւորեալ կը համարէր և զոր նորոգել հարկ կը տեսնէր, անոր համար Քաղղիայէն նոր գունդեր գացեր էին օգնութեան: Ընդդիմակացք Խօսարանին մէջ մեծապէս բողոքեցին և ջերմ ճառախօսութիւնք եղան, սակայն բազմութիւնը ի նպաստ ըլլալով ի Հռովմ վերանորոգման, Լըսէփսի առաջարկութիւնքը տեղիք չունեցան, և Ուտինօ որ ի ձեռն դաշնադրութեան մտեր էր արդէն ի Մոնդէմարիօ, Յունիս 3-4ին իրիկունը բռնեց Վիլլա Փանֆիլի:

9. Պաշարումն Հռովմայ. — Վախճանն Հասարակապետութեան: — Անկէ վերջը յայտնի էր Հռովմայ պաշարումը. Ուտինօ 36,000 տնձիւք ունէր, իսկ Հռովմայ պաշտպանք էին 17,000, ունենալով զօրագլուխ զԿարիպալտի և զԱվէցցանա: Քաղղիացիք Սան Փանգրացիօ դրան կողմէն յանկարծակի ուզեր էին բռնել քաղաքը, բայց մեծ ընդդիմութիւն գտնելով, ամբարտակներ բարձրացուցին, և երբ Հռովմայեցիք շուզեցին անձնատուր ըլլալ գնդակները սկսան տեղալ աշխարհիս ամենէն հրաշակերտ քաղքին վրայ: Հռովմայեցիք թշնամւոյն հրանօթից դիմաց իրենք ալ հրանօթք հաստատեր էին. քաղքին մէջ խիստ հսկողութիւն մը հաստատուեր էր. հսկողութիւն մը ընդդէմ իրենց կարծիք ունեցողներուն միայն: Քանի մը քահանայք Ս. Քալիստոսի եկեղեցւոյն զանգակատան վրայ ելած ըլլալով զթշնամին դիտելու իբր՝ մատնիչք և թշնամւոյն նշան տուողք, հրացանի բռնուեցան: Քաղքին մէջ հայրենասիրական ոգւոյն հետ միաբան կը տիրէր միանգամայն սարսափը և յուսահատութիւնը, բնաւ ուստեք օգնութեան յոյս մը չըլլալէն զատ, Եւրոպիոյ գոզցես կէսը իրեն դէմ կը զինուորէր: Ի Բարիզ ռամկապետականք և Լըտրիւ Ռոլէն ջանք մը ուզեր էին փորձել ի նպաստ Հռովմայ հասարակապետութեան, սակայն Շանկառնիէ զօրավարը զինուորական գունդերով յուզումը նուաճեր էր:

Իսկ ի Հոովմ՝ պատուարաց մաս մը խանգարելով՝ Յունիս 21 ին գիշերը Գաղղիացիք երեք սիւն բաժնուած յարձկեցան քաղքին վրայ և տիրեցին դուրսը զանազան դիրքերու, բաց ի Վաշէլլօ կոչուած շէնքէն զոր կը պաշտպանէր գնդապետն Մէտիչի: Իտալացիք կրկին փորձեցին ձեռք բերելու կորսընցուցած դիրքերնին բայց ի զուր: յետ խառնուրդի մը որ քիչ տևեց, քաշուեցան քաղաքը, որուն վրայ Յունիս 30 ին գիշերը թշնամիք նոր ուժով մը յարձակումն ըրին և տիրեցին Ալբերլիանա մասին: Այն անկէ վերջը անկարելի էր դէմ կենալ: Ուտինօյի առաջարկեալ պայմանքը անընդունելի էին ազատականաց իրենց խստութեանը համար: Կարիպալտի խորհուրդ կուտար գետոյն աջակողմեան մասը թշնամեաց թողլով իրենք ձախակողմը պաշտպանեն, Մածօինի կ'առաջարկէր պատերազմը փոխել դէպ յԱպենինեանս, բայց այս առաջարկութիւնք մերժուեցան և ընդունելի եղաւ, որ Հոովմէական Սահմանադիր ժողովը հրաժարի պաշտպանութենէն որ անկարելի եղած է: Եռապետք այս որոշողութիւնը հաղորդեցին ոստիկանութեան և իրենք հրաժարեցան և նոր եռապետք ընտրուեցան Սալիչէզի, Գալանդրելլի և Մարիանի: Ատեանը հայրենեաց արդիւնաւոր հուշակեց առջի իրեք եռապետքը, մերժեց որ և իցէ կերպով անձնատրութիւն մը և սահմանեց Գաղղիացւոց քաղաք մտած օրը Կապիտոլինէն հրատարակել նոր կազմեալ Սահմանադրութիւնը: Յունիս 3 ին Հոովմ տխուր կերպարանք մը ունէր, կրպակները մեծաւ մասամբ գոցուեր էին և Գաղղիացւոց զօրքը ներս կը մտնար յաղթական առանց ընդդիմութիւն գտնելու բայց եթէ ազատականաց ազադակները « Կեցցէ հասարակապետութիւն, ի մահ Պիոս թ, ի մահ ծիրանաւորն Ուտինօ » . որոց բնաւ կարևորութիւն մը շտուաւ գաղղիացի զօրավարը. միայն վերջընել տուաւ եռագոյն դրօշակները: Երկրորդ օրըմտան նաև Երեսփոխանաց Ատենին սրահը և ուր երեսփոխանք բողոքեցին ընդդէմ այս եղելութեան: Վարչութեան գլխաւորք փախեր էին. Կարիպալտի 4,000 ան-

ձինք հետը առած ելեր էր Հոովմէն Վենետոյ ոգնու-
թեան երթալու, բայց իր գունդերն ցրուեցան և ինքն
ալ յետ երկար թափառելու ապաւինեցաւ ի Լիգու-
րիա: Երկու ջերմ աղատականք Ուկո Պասսի քահա-
նայն և Զիչէրուաքիս տրիբունը Աւստրիացոցմէ կա-
լանաւորեալք՝ հրացանի բռնուեցան:

10. Դարձ Պիոս Թի: — Հասարակապետութեան
անկմամբ առ ժամս ամենայն իշխանութիւնք Ուտի-
նոյի ձեռքը մնալով, ցրուեց ազգային պահապանքը,
արգիլեց գումարումները, տպագրութեան վրայ ար-
գեք դրաւ, քաղաքը պաշարման մէջ դրաւ որուն վա-
րիչ անուանեց Ղոսոգոյան զօրավարը, պատուիրելով
որ քաղաքացիք 24 ժամուան մէջ յանձնեն որ և իցէ
զէնք. ոստիկանութեան ժողովքը ցրուեց և ուրիշ մը
կազմել տուաւ: Ուտինո երբ քաղաքը հանդարտա-
ցած տեսաւ, Յուլիս 4ին հրովարտակով մը ծանոյց, որ
Քաղղիոյ Հասարակապետութիւնը Քահանայապետին
աշխարհական իշխանութիւնը վերանորոգելու ժամա-
նակ՝ բոլոր Ուղղափառ Եւրոպիոյ փափագը կը կատա-
րէր. և ինքն ալ իր իշխանութիւնը յանձնեց երեք ծի-
րանաւորաց ձեռքը որոնք էին Վաննիչէլի, Ալդիէրի
և Տէլլա Կէնկա. որոնք անգոր հրատարակեցին ամե-
նայն պաշտօնական և վարչական գործ՝ յետ փախըս-
տեան Պիոսի Թի: Դրամական վիճակը յետին չքա-
ւորութեան մէջ էր, Ելեմտից պաշտօնեայ եղաւ Կալլի
և Ներքին գործոց՝ Սավէլլի: Ընդհանուր ներումն շնոր-
հուեցաւ ամենուն բաց յեռապետաց, վարչութեան ան-
դամոց և Գործադիր ժողովոյն ատենակալներէն: Պա-
ւառական և ոստիկանական ժողովքները հաստատուե-
ցան, ժողովք մը պիտի կազմուէր յերեսփոխանաց որ
պիտի վիճէր և կարծիք պիտի տար առաջարկեալ օ-
րինաց վրայ: Կրամոյն չքաւորութեան պատճառաւ ա-
ղօրեաց տուրքը նորոգուեցաւ և վարչութիւնը բռնա-
պատուելով 40 միլիոն պարտք առնուլ՝ տուրքերը ծան-
րացան: Քահանայապետին իշխանութեան վերանորո-
գումը ըստ վկայութեան նոյն իսկ ազատարարաց, բնաւ
ատելութիւն մը չներչնչեց մանաւանդ ազատեց կ'ըսեն

զիրենք զաղղիական և աւելի աւստրիական ատելի միջամտութիւններէն: Քահանայապետը ընդ երկար շուգեց մտնել ի Հռովմ. բայց վերջապէս բազում անգամ հրաւիրեալ, հասաւ յաջորդ տարւոյն Ապրիլի: Այն ատեն վերջացաւ եռապետաց իշխանութիւնը և անոնց իշխանութեան յաջորդեց պետութեան Ատենադպրինը՝ որ էր Անդոնէլի ծիրանաւորը: Իսկ օտար բանակք կը մնային առժամա իբր պաշտպանք:

11. Վենետիկց պաշտպանութիւնը պատերազմ Մարկեր:պ: — Վենետիկ երկրորդ անգամ պատերազմ սկըսելու յոյս մը ունեցեր էր, բայց Նովարայի պարտութենէն վերջը բռնադատուեր էր նորէն ամրանալու իր լծերուն մէջ: Թշնամին կը յուսար որ արտաքին ձախողութիւնք զինքը ընկճեն: Հայնաւ յետ ծանուցանելու իտալական բանակին խորտակուիլը կը յորդորէր որ անձնատուր ըլլան, բայց վարչութիւնը Ապրիլի 2ին հրովարտակով մը ծանոյց որ « Վենետիկ դէմ պիտի կենայ Աւստրիացւոց որ և իցէ կերպով », և նախագահն Մանին այս մասին լիակատար իշխանութիւն ունէր: Մանին վերջին անգամ փորձեց զիմելու Քաղղիոյ և Անգլիոյ վարչութեանց, որոնք յօժար էին միջնորդութեան մը այն պայմանաւ՝ որ Վենետիկ անկախ ըլլայ իրեն գլուխ ունենալով աւստրիական իշխան մը¹. Բայց Աւստրիա հիմա զօրացեալ և վստահ յաղթութեան, չէր զիջաներ այսպիսի դաշտնց:

1. Գաբսիլ Տըլոր կը պատմէ որ Քաղղիա կ'ուզէր գունդեր զրկել օգնութիւն, սակայն Անգլիոյ դեսպանը, ի Բարիզ՝ լորտ Նորմէմպի ծանուցեր էր՝ որ իր Պետութիւնը աղէկ աչքով մը չէր կրնար տեսնալ այսպիսի միջամտութիւն մը: Սակայն Քաղղիոյ դեսպանը Պոմոն անհիմն ցրցուցեր էր Անգլիոյ դեսպանին որ և է կասկածը և կը յորդորէր որ փութով մեկնին օգնութիւնք: Ի Մարսիլիա չորս նաւք պատրաստ էին գունդերով մեկնելու յԱզրիական ընդ հրամանատարութեամբ Մոլլէր զօրավարին, և Մանինի իմաց տրուած էր դիմանալու մինչև որ հասնին Քաղղիացիք: Սակայն այն նաւերը քիչ վերջը ուղղեցան ի Հռովմ: Գաբսիլ Տըլոր Պոմ. Բ. Կայսրութեան Ա. Հո. Գ. Գ.:

Վենետիկ երկար պաշարման մը դիմանալու պատրաստութիւնքը տեսած էր. չորս ամսուան պատրաստ պաշար ունէր և եթէ ծովը իր դիմացը բաց ըլլար, շատ աւելի կրնար դիմանալ: Մանին իր վառվառն և գիւտաւոր խօսիւք ոգիները վառեր էր, « ի ծով, ի ծով, հոն մենք պիտի յաղթենք » . սակայն իր քանի մը փոքրիկ նաւերը ուզելով փորձ փորձել Աւստրիոյ բազմաթիւ նաւատորմիդը հեռացընել, առանց իսկ կռուելու բռնադատուեցան Ադրիականէն քաշուիլ, սրով և ծովն ալ իրենց գոց մնաց:

Ռաստէցքի Մարկէրայի դիմաց 24,000 զինուոր գումարեց որ լծին ծայրը ցամաքին քով մեծ բերդ մ'է, և ուր Վենետիկեցիք 120 թնդանօթ դրած էին և 12 պատերապմի սանդ: Զօրավարն Փէփէ հոն հրամանատար զրկեր էր նէպոլսեցի կտրիճ գնդապետն Ուլլօս, որ փէփէի հետ եկողներէն էր: Ռաստէցքի իր ճամբարը Մէսդրէի քով հաստատելով հրաւէր մը ուղղեց առ Վենետիկեցիս անպայման և լիովին անձնատուութեան, սպառնալով ամենայն պատերազմական խտտութիւն՝ թէ շարունակեն սպստամրութիւննին: Մանին պատասխանեց, որ Ասեանը արդէն որոշեր էր որ և ինչէ կերպով ընդդիմանալ Աւստրիացւոց, և թէ արդէն Վաղղիոյ միջնորդութեամբ կը յուսար դաշնադրութեան մ': հասնիլ և թէ ուզէր՝ ուղղակի կրնար իրեն հետ բանակցիլ և առ ժամս դադրեցընել թշնամութիւնքը: Բայց Ռաստէցքի մերժեց ամենայն միջնորդութիւն և զինադադարումն, և ծովէն ու ցամաքէն սկսաւ պաշարումը:

Մարկէրայի մէջ պաշարուածք կը ջանային միշտ խռովել թշնամեաց աշխատութիւնքը և հանդերձանքը, և 1,200 հոգևով ջոկատ մը մերձ ի Պրոնտոլօ դիմելով Աւստրիացւոց գունդի մը վրայ, վանեց զայն և ձեռք բերաւ շատ մը պաշար, սակայն այս յաղթութիւնը հետևանք մը չունեցաւ: Մայիս 24 ին Աւստրիացիք Մարկէրայի բախման կազմութիւնքը լմնցընելով 156 հրանօթիւք սկսան ուժակոծումը: Պաշարեալք դիւցազնաբար կը պաշտպանուէին, հոն դիմած էին քաղաքէն

օգնութեան շատ մը ազգային պահապանք և քաղաքացիք. 25 ին իրիկունը գործածութեան համար 25 թնդանօթք միայն մնացեր էին և ամբողջ ալ հողակոյտ մը դարձեր էր: 26ին Ատեանը որոշեց թողուլ զՄարկէրա և պաշտպանութիւնը կեդրոնացընել ի Վենետիկ: Գիշեր ատեն Ուլլօա թողուց զայն ինչպէս նաև Սանձիւլիանօ կղզեակը, որ շատ մօտ էր ցամաքին. Աւստրիացիք յետ տիրելնուն վկայեցին որ բնաւ գունդ մը չէր կրնար այնչափ ատեն դիմանալ, որչափ դիմացան Վենետիկեցիք: Այնպէս թողլով իրենց առաջին պաշտպանութեան գիծը՝ քաշուեցան ի քաղաքն և իրենց պաշտպանութեան կէտ մը ձեւացուցին հրանօթիւք այն կամըրջին մէջ տեղը, որ զՎենետիկ ցամաքին հետ կը կապէ երկաթուղւով, և կամըրջին միւս մասն ալ փլցընելով, Աւստրիացւոցմէ մեծ ջրանցքով մը բաժնեցին քաղաքը, աւերեցին նաև քաղաքը եկող միւս ջրանցները: Ուրիշ հրանօթք հաստատեցին նաև ի Սան Սէգոնտօ և Սանդ'Անճէլօ, որոնք փոքրիկ կղզեակք են Վենետիկոյ չորս կողմը, ինչպէս նաև քաղքին ծայրերը, և Ուլլօա ընդհանուր զօրաւար անուանուեցաւ:

12. Բանաւցուծիւնք Հաշտութեան: — Այս միջոցիս Աւստրիոյ պատերազմունք ձախողելով ի Մաճառստան, Մայիս 30ին Մէսլրէի բանակը հասաւ, Տէպրուք կայսերական պաշտօնեայն առաջարկեց Վենետիկոյ դաշնագրութեան մը համար բանակցիլ: Ժողովքը նախագահին իշխանութիւն տուաւ կամ անձամբ կամ ի ձեռն նուիրակաց բանակցելու երբեմն առաջարկեալ պայմաններով և բնաւ իր մը չառնուլ յանձն առանց Ատենին հաւանութեան, միանգամայն հրատարակեց որ Վենետիկ պատրաստ է ընդդիմանալ որ և իցէ եղանակու քան նախատուական պայմանք յանձն առնուլ: Նախագահը զրկեց երկու նուիրակք, որոց առաջարկեց Տէպրուք կամ Վենետիկ մասն կազմէ Լոմպարտիա-Վենետիկ թագաւորութեան մը, առանձին սահմանագրութեամբ, իշխան ունենալով զնոյն ինքն կայսրը և մայրաքաղաք զՎերոնա, կամ՝ Վենետիկ և Միլան առանձին թագաւորական աթոռ ունենա-

յին, և կամ Վենետիկ կայսերական քաղաք մը ըլլար կառավարեալ իր ոստիկանութենէն¹ :

Յունիս 16ին Ատենանը աւստրիացի պաշտօնէին առաջարկութիւնքը անբաւական գտնելով, խնդրեց որ 1849 16 Յունիս աւելի զանոնք բացայայտէ. միանգամայն կը կազմէր զինուորական լիակատար իշխանութեամբ յանձնաժողով մը և կազմողքն էին Պալտիսէրոզո, Սիրդորի և Ուլլօա. և ուրիշ խորհրդատու յանձնաժողով մը յորում կար նաև Թոմազէօ: Աւստրիա Մաճառատանի համար ապահովեալ Ռուսաց միջամտութեամբ, ալ բնաւ հաշտութեան մը միտք չունեցաւ և Տէպրուք սկսաւ ըսել, որ այս դաշնագրութեան համար նախ հարկ էր պատրաստ հնազանդութիւն մը որպէս զի այն ատեն կայսրը հաճի: Աւստրիացի բանակը յետ տեղաւորելու և հրանօթք շարելու ի Մարկէրա, ի Սան Ըիուլիանօ և խանգարեալ կամրջին գլուխներուն վրայ հոս հոն, առաջին անգամ ուսմբ մը ձգեց այն քաղաքին վրայ որ 15 դարէ ի վեր օտար թշնամւոյ նշան մը տեսած չէր իր մէջը, և սկսաւ այն ահաւոր ժամանակը որ քաղաքացւոյ մը սարսափէն աւելի պարծանք կը բերէ: 20—30ին գիշերը ցամաքէն մինչև Վենետիկ օդը կրակով և ուսմբերով գոց էր: Ատենանը նորոգեց իր ընդդիմութեան որոշողութիւնքը, մերժեց Տէպրուքի վերջնագիրը. և որոշեց դրամական նոր պարտք առնելու:

13. Սով եւ մաղձախտ: — Քաղքին մէջ բաց ի նիւթական խեղճութիւններէն, հետեանք երկար պաշարման մը, չարօդ տենդը ինկաւ մանաւանդ զօրաց մէջը և հարիւրաւորք պաշտպանութեան տեղերնուն վրայ մեռան առանց պատերազմելու. անհնարին սով մը սկսեր էր քաղքին մէջ, յիրաւի յանդուգն քաղաքացիք զանազան անգամ փորձեր էին վաճառանենգութեամբ ցա-

1. Վենետիկոյ Հասարակապետութիւնը այս միջոցիս գաղա դաշնագրութիւն մը բրած էր Մաճառաց նետ, և որոց օգնութիւն պիտի ղրկէր: Բայց այս դաշնագրութիւնը Ռուսաց միջամտութեամբ: արդիւնք մը չունեցաւ:

մաքէն պաշար բերել, բայց քիչ վերջը Ֆուլինա ալ բռնուելով ամենայն յոյս վերցաւ. Վենետկոյ ժողովուրդը՝ որուն մեծ պաշարն է ձուկը, անկէ ալ հիմայ ի սպառ զրկուեցաւ ծովուն բռնուելովը յԱւստրիացոց։ Այս դժբաղդութեանց վրայ և ժողովրդեան աղքատութենէն աւելցաւ նաև մտղձախտը, որ ահաւոր ջարդ մը սկսաւ քաղքին մէջ և մինչև 500 հոգի մէկ օրուան մէջ հնձեց. օր օրուան վրայ ապրուստը կը նուազէր, թշնամեաց կրակէն ազատելու համար քաղքին արևմտեան բնակիչք բոլոր Արևեթի կողմը ի Քասսէլլօ փոխադրուեր էին՝ թողլով իրենց տուները, առանց տրտնջելու, առանց ցանցաօր մը ընդդէմ վարչութեան և բնակելով նաւակներու մէջ կամ խեղճհիւղերուն ներքև։ Կը տեսնուէին մտրք տղաքը գըրկերնին և աղջկունք հետերնին գոհ սրտիւ տներնին թողուլը, և բնաւ այն ամիսներուն մէջ գողութիւն մը չպատահեցաւ։ « Եթէ գնդակները պակսին, կ'ըսէին, նետելու Աւստրիացոց վրայ, Ս. Մարկոսի հրապարակին քարերը կը նետենք »։ Ի զուր Վալէնդինօ Փազինի Վեննա գացեր էր պատուաւոր դաշնագրութեան մը աղերսաւոր։ Աւստրիա նախ անպայման հնազանդութիւն կը պահանջէր, զոր երբէք յանձն չէր ուզեր առնուլ Ատեանը։ Եւ սակայն այնչափ կրնար ընդդիմանալ որչափ էր պաշարը։ Հացը լմնցեր էր և նոր շինուած հացը սև անհամ փոխան քաղցը լեցընելու, զգուանք կը բերէր. Զուրը լմնցեր էր, բռնադատուեր էին ծծմբուտ արդիսեան ջրհորոց դիմել, գինի չկար և հագիւ վիրաւորելոց համար քիչ մը պահուած էր, չկար նաև սառոյց հիւանդաց համար։ Այս ամենայն նիւթական և բարոյական ձախողանաց միջոց բնաւ քաղքին մէջ խռովութիւն մը և անկարգութիւն մը չկար, բաց ի մէկ երկու պարագայէ, յորում ժողովուրդը ուզեց ցուցընել իր զգացմունքը։ Տանտօլօ ոմն առաջարկեր էր աւտենին՝ վերջ մը տալ ընդդիմութեան, նոյնպէս Վենետկեան պատրիկ մը ջանացեր էր համոզելու Վենետկոյ պատրիարքը գնչանաւոր Յակոբ Մոնիզն՝ իր հա-

1. Ազատական գրիչ մը կ'ըսէ. « Պէտք ենք յիշել ի պատիւ Մո-

ւանութիւնն ալ տալու : Ամբոխը զայրացած իբրև թէ աւստրիացւոց պիտի մատնուին վազեց պատրիարքարանը և զայն կոխեց . պատրիարքը հրամանաւ Մանինի ապաւինեցաւ ի Ս . Ղազար վանս Մխիթարեանց¹, զոր ամբոխը միշտ յարգեց : Թոմազէօ հանդարտեցուց զժողովուրդը և ցրուեց :

Պաշարուց նուագութեան փոքր նպաստ մը եղաւ Վենետիկեան զօրաց կրկին փոքր յաղթութիւն մը ի Պրօնդօլօ , յորում գերեցին նաև աւստրիական 184 գունդին դրօշը , բայց այս փոքր օգնութիւնը ինչ էր ամբողջ սովեալ քաղքի մը համար : Ատեանը որոշեր էր ուրիշ 6 միլիոն ալ փոխառնելու . որով պաշտպանութեան համար առած փոխը ընդ ամէնը կ'ըլլար 60 միլիոն տուեալ ի քաղաքացւոց : Պաշարուց վրայ եղողք կիմացընէին որ հազիւ շորս հինգ օրուան յուսահատ ապրուստ մը կայ , և մաղձախտը կը շարունակէր իր ջարդը , ամէն կողմը հրդեհ՝ որոնք հարկ էր շիջուցանել :

14 . Անվումն Վենետիկոյ : — Օգոստոս 6ին Ատեանը ամենայն իշխանութիւն յանձնեց Մանինի որպէս զի հոգայ Վենետիկոյ փառօք անկումը , և յիրաւի հուսկ ուրեմն հարկ էր անձնատուր ըլլալ , որովհետև բնաւ ապրուստ մը չէր մնացած , և սակայն Ատեանին մէջ այս առաջարկը ընդունելի եղեր էր 57 քուէով ընդդէմ 37ի : Ժողովուրդը հանդարտ և արժանավայել կերպ մը ունէր : Կային որոնք խորհուրդ կուտային բազմութեամբ քաղքէն դուրս վազել , ուրիշները զՎենետիկ Սարակոսա մը կամ Նումանտիա մը դարձընել և թաղուիլ աւերակաց տակ . ուրիշները կ'ամբաստանէին

նիգչին , որ երբ Աւստրիա եկաւ և բռնադատեց զինքը լուսնու իր քահանայիցմէ անոնց անունը որոնք մասնակցեր էին յեղափոխութեան , պատրիարքը բացէ ի բաց մերժեց ինչիբլը : Եւ յիրաւի Վենետիկոյ եկեղեցականաց մէջ նշանաւոր անձինք նայրենասիրական ոգով վառեալ այս յեղափոխութեան մասնակցեր էին ընդդէմ օտարին » :

1 . Մնաց չոն Պատրիարքը 19 օր :

20 Օգոստ.

զԽորհրդականս կաշառեալս յԱւստրիոյ և յուսահատ վերջի մը կը պատրաստուէին: Մանին ժողողուրդը աննպատակ և յուսահատ որոշողութենէ ազատելու համար, վերջին անգամ խօսեցաւ առ նա ոգևորեց թեալ սրտերը և դժբաղդութիւնքը մոռցընել տալով յիշեցուց որ Վենետկոյ չքեղ անունը և այսպիսի պանծալի ժողովուրդ մը որ այնքան համբերեր էր՝ չէր կրնար ջնջուիլ, որ Վենետկոյ անունը եթէ երբեմն արհամարհ՝ այս վերջին պաշտպանութեամբ իր թշնամեաց անգամ պատկառելի էր: Լմեցուց խօսքը խնդրելով ի քաղաքական պահապանաց, որ հայրենեաց այս գերագոյն կէտին միջոց հսկեն բարեկարգութեան ամենայն արթնութեամբ: Նոյն գիշերն վերջին փորձ մը ըրաւ բանակը ի ցամաքէն և նաւատորմիդը ծովու կողմանէ, սակայն երկուքն ալ առանց յուսոյ մը դառնալով, այն ատեն իմացուեցաւ որ ալ անհնարին էր դիմանալ, և չորս նուիրակք զրկուեցան առ Տէպրուք անձնատրութեան համար: Ըստ այս դաշանց Վենետկէն պիտի աքսորուէին օտար սպայք, և անոնք որոնք երբեմն Աւստրիայէն ծանուցուած էին և քառասուն քաղաքացիք¹: Թղթադրամը միայն քաղքին շրջապատին մէջ կրնար գործածուիլ իր կէս գնովը, բնաւ պատերազմի ծախուց տուրք մը չկար և փութով պիտի մեկնէին իտալական գունդերը, որոնք պատերազմին սկիզբը 25,000, հիւանդութեանց պատճառաւ հիմա հազիւ 11,000 կային: Ամենեւին ապրուստ և պաշար չէր մնացած: Նոյն գիշերը զօրաց մաս մը և քաղաքացիք բռնի ուզեր էին քաղքէն նորէն դուրս ելլել, և դիմեր էին կամրջին վրայ հրանօթի մը, բայց իշխանութիւնք հասնելով հանդարտեցուցին: Այսպէս Վենե-

1. Այս քառասնից մէջ էին, Մանին, Թոմագէօ, Ավեզանի, Պենվենուֆի Պարզուոմէօ, Ղիւրիադի Յովսէփ, Սէիսմէտ Տոտա, Վարէ, Լանցա Մարգօ, Ղիւսգինեան Ալկուսո, Մէնէկալտօ Անէլօ և այլք: Աքսորելոց մէջ կային նաև երկու հայրենասէր կղերականք Թոունիէլլօ ի վեղարաւորաց՝ և Մածժուքքէդո ի փրանկիսկեանց:

տիկ անօգնական մնալով ի բոլոր Եւրոպիոյ յետ պանծալի ընդդիմութեան մը տարի ու կէս, կ'իյնար փառօք չքեղ և թերևս միակ փառաւոր անուն մը թողլով 1848ի իտալական ամենայն յեղափոխութեանց մէջ:

Օգոստոսի 24ին Վենետիոյ Ոստիկանութիւնը առժամանակեայ վարչութեան ձեւը առաւ՝ մինչև որ մըտնեն Աւստրիացիք և նոյն գիշերը հեռացան այն ամենայն անձիւք նշանակեալ յԱւստրիոյ յորս և Մանին¹. և երկրորդ օրը Աւստրիացի զօրքը մտաւ ի Վենետիկ, ինչպէս քիչ օր վերջը նաև յաղթական մուտք մը ըրաւ մարաշխտն Ռատէցքի որ, յետոյ Վեննա երթալով մեծաւ փառօք իրրև մին ի փըրկողաց զԱւստրիական կայսրութիւնը, ընդհանուր վարիչ անուանուեցաւ Լոմպարտիոյ և Վենետիոյ թագաւորութեանց՝ որ այս անգամ մէկմէկէ բաժնուած համարուեցան²:

1. Մանին Բարիզ գնաց, ուր քեալ յամենայն դրամական օգնութեանէ՝ ինն ապրելու համար իտալական լեզուի ուսուցչութիւն կ'ընէր, և մեռաւ 1860ին յաղքատութեան: 1866ին երբ Վենետիկ իտալիոյ հետ միացաւ իրեն մարմինը փոխադրուելով մեծ հանդիսիք ի Վենետիկ, թաղուեցաւ Ս. Մարկոս եկեղեցոյն արտաքին կողմը չքեղ դամբանարանով: 1875ին ալ պղնձէ արձան մը կանգնեցաւ հրապարակի մը մէջ, որ իր անուամբը հրապարակ Մանին կոչուեցաւ: 1880ին, չքեղ արձան մը ունեցաւ նաև Թոմազէօ՝ Վենետիոյ Սան Ստեֆանոյ հրապարակին մէջ: Այսպէս Փալէոգափա և ուրիշ հայրենասէրք:
2. Յամին 1836 Ռափայէլեան վարժարանը բացուած էր ի Վենետիկ՝ Փէզարօ ընտանեաց մեծ և հոյակապ պալատան մէջ:

Յեղափոխութեան սկիզբը աշակերտք 30 էին թուով, որոց վերատեսուչ էր նշանաւոր իւր բարձր կրթութեամբ և ազնուական բարուք՝ Վ. Հ. Ռափայէլ Վ. Թրեանց «Վարդապետ ի Վարդապետ», ինչպէս կը կոչէր գիւնքը ազգերնու մէջ նոյնպէս ուրիշ նշանաւոր դաստիարակ մը (Վ. Հ. Աբրահամ Վ. Ճարեան):

Վերատեսչին օգնական էին՝ ուսմանց հակառակ հիւղերու մէջ յետոյ հռչակաւոր եղած երկու մեծ անուններ՝ Վ. Հ. Վեռնի Վ.

15. Աւստրիոյ Վարչութիւնը տիրեալ գաւառաց վրայ: — Այս երկու գաւառաց ընկճուելէն վերջը Իտալացոց ամենէն մեծ նեղութիւնը զինուորականաց ձեռքէն էր, որոնք ամէն կողմ հարստահարութիւններ կ'ընէին. Շվարցէնպէրկ իշխանը ի վեճնա պաշտօնարանին գլուխ անցնելով մեծ փոյթ ունէր իտալական ժողովրդոց վրայ և կ'ուզէր սանձ մը դնել ամենայն կողմ զինուորականաց, բայց շատ աւելի հեղինակութիւն ունէր ծերն Ռատէցքի, որ իր աթոռը դրած էր ի վերոնա, իրեն օգնական ունենալով քաղաքական մասին զկոման Մոնդէթրուբոլի, որ ամէն ջանք ըրաւ իր հայրենակցաց գերութեան տառապանքները կակղացը ներու և ի զինուորականին զկոման Սգրասուլտօ: Բաց աստի Լոմպարտիոյ տեղապահ անուանուեցաւ ազնիւ և բարերար կոման Շվարցէնպէրկ՝ հօրեղբորորդի իշխանին, և վեճնետկոյ՝ զօրավարն Փիւխնէր: Աւստրիոյ

Աւիշան և Վ. Ն. Մանուէլ Վ. Քաշուսի. որոց կ'օգնէր տրնտեսական մասին Եղ. Ստեփան Ումուտեան, այն որ լուրջ և կանոնաւոր անձի մը դաղափար ձգած է յԱզգիս ի կ. Պօլիս բազմամեայ գրապետութեամբ: Պատերազմը սկսելուն երբ ծովը փակուեցաւ, աշակերտաց մաս մը յանձնուեցան Ե. Ստեփանի ցամաքի ճամբով տանելու ի հայրենիս: Միւս աշակերտք քաղքին ռաբակոծուիլ սկսելուն՝ ընկերակցութեամբ Վ. Ն. Ղեոնդ Աւիշանի մակուկաւ գնդակներուն ներքե, որոց մին պայթեցաւ քովերնին ի մեծ վտանգ, ապա ինեցան ի վանս Ս. Ղազարու: Մնացին միայն ի վարժարանի երկու ծառայք և Վ. Ն. Մանուէլ Վ. որ նա ևս յետ սակաւ աւուրց երբ ռումբերը սկսան հասնիլ վարժարանին, կոշեցաւ ի վանս: Հագիւելած էր վարժարանէն երբ ռումբ մը և գնդակ մը ինկնալով պայտան վերայ, ինկած տեղերնին աւերակ դարձուցին: Քաղքին ռաբակոծումը տեւեց 27 փութք և աշակերտք Պաղիս ի վանս 50 օր: Որչափ որ ի քաղաքի և ամենուրեք սև և անհամ հաց մի միայն Պաղիս էր, առանց մսոյ, ձկնեղինաց և կարագի. Ս. Ղազարու վանքը արտաքոյ կարգի նեղութիւն մը չկրեց իմաստուն նախահոգութեամբ և մատակարարութեամբ: Միխիթարեան Միաբանութեան Տարեգրոց մէջ, անմահանուն

վարչութիւնը այս երկու գաւառներու ժողովուրդը շահելու համար, որոնք սակայն բնաւ չհաջուեցան, երեսփոխաններ կոչեց ի Վեննա բարեկարգութեանց և այսփան ատենէ ի վեր խոստացեալ Սահմանադրութեան մը խորհրդակցութեան համար: Սակայն այս երեսփոխանք, յորս էր նաև Վենետկոյ պատրիարքն, ետ զըրկուեցան առանց նպաստակի մը հասնելու: Վենետիկ տակաւին պաշարման վիճակի մէջ էր, նոր հրաման մը բոլոր արսաքսելոց ստացուածքը կը գրաւէր. միայն անոնց շահը յաջորդաց պահելով և տերանց ապրուստը միայն մատակարարելով: Այնքան մեծ էր անիրաւութիւնը, որ Վեննայի քաղաքացիք սնգամ՝ բողոքեցին և կայսրը իբր շնորհք մը լուծեց այս ընչից յափշտակութիւնը, ներումն շնորհուեցաւ նաև անոնց որոց ժխտուեր էր 1849ին: Աւստրիական զինուորականաց դասալիքներէն Վենետիկեան գուլառաց մէջ աւազակներ ձեացեր էին, յորոց շատերը բռնուեցան և ումանք մահուամբ ևս պատժուեցան: Ստէպ կոիւ էր ընդ քաղաքական և ընդ զինուորական իշխանութիւնը, անոր համար երկու տեղապահք ալ հրաժարեցան և անոնց տեղն անցաւ Սդրասսօլտօ ի Միլան և Գոկկէնպուրկ ի Վենետիկ: Կայսրը Վենետիկցոց ցուցընելու համար իր բարեկամութիւնը նաւահանգիստնին ազատ հռչակեց, և ապա այց ելաւ քաղաքին¹, յուսալով այն շնորհքէն վերջը մեծ ըն-

Էդ. Անտոնի Քալունոյ (հարագատ Վ. Շ. Մանուէլի), որ ոչ միայն վանաց, այլ և շրջակայ մերձաւոր կղզեաց երկնային Նախախնամութիւն մը եղաւ Պաշարման ժամանակ:

1. Յամին 1873 յետ Վենետկոյ միանալուն ընդ իսալիոյ, փրանկիսկոս Յովսէփ հանդիսաւոր այցելութեան եկաւ առ Վիկտոր Էմանուէլ ի Վենետիկ սպայակուտով և պաշտօնէիք: Վենետիկեցիք յարգանք ընդունեցան զինքը բայց լուր թեամբ, և այն եօթնեկի աննման հանդիսից մէջ, յորում անհամար կեցցէներ կը նշուէին Վիկտոր Էմանուէլի, ոչ մի ձայն լսուեցաւ Փրանկիսկոս Յովսէփի համար: Այսքան խոր է ժողովրդեան սրտին վրայ եղած տխուր տպաւորութիւն մը:

դունելութիւն գտնել. բայց այնպիսի լռութեամբ ընդունելի եղաւ որ մէկէն Գրիէստ անցաւ և անկէ ի Վեննա: Սեպտեմբերին կրկին անգամ ճանապարհորդութիւն մը յրաւ ի Վենետիկ, Միլան, Մոնցա և Գոմս, սակայն ամէն տեղ նոյն լռութիւնը ընդունելով:



ԱՆԳՂԻԱ

ԱՆԳՂԻԱ ԵՒ ԻՌԼԱՆՏԱ

1. Բարեգու Յեղափոխութիւնը ի Պելճիա. — 2. Յուզմունք յԱնգղիա. — Ի Լոնտրա դաշնագրականաց ժողովակ. — 3. Իռլանդա. — Նորաբողոքն իռլանտա. — 4. Պրիէն, Միչլի, Մայքըր. — 4. Լրագրոց ազատաբանութիւնը. Միչլի ի բանտ և յաքսոր. — 5. Գուպարած ի Իրիփէրարի — Իատապարտութիւնք. — 6. Լորտ Փալմէրստըն. Տօն Փաշիֆիքոյի խնդիրը. — 7. Պայքարք ի Խօսարանի ընդդէմ Պաշտօնարանին. — 8. Մահ Ռոպրորդ Փիլի. 9. Հոովմէական Եկեղեցի յԱնգղիա. — 10. Հրովարտակ ընդդէմ Հոովմէական Եկեղեցոյ պատուանունաց. — 11. Առաջին Աշխարհանդէս ի Լոնտրա :

1. Բարեգու Յեղափոխութիւնը ի Պելճիա : — Երբ 1848ի Յեղափոխութիւնը տարափոխիկ ախտի մը պէս տարածուեցաւ ընդ բոլոր Եւրոպա, և վրդովեց շատ մը իշխանութիւններ, հակառակ բոլորովին ազգեցուծութիւն մը ունեցաւ Եւրոպիոյ երկու իշխանութեանց մէջ ի Պելճիա և յԱնգղիա : Երբ գաղղիական Փետրուարի յուզումը կտրեց անցաւ սահմանագլուխը և մտաւ ի Պելճիա, Լէոփոլտ Ա. նորօրինակ վեհանձնութեամբ մը ծանոյց ժողովրդեան, որ եթէ կը փափագէին իրմէ ազատիլ, պատրաստ էր մեկնելու ինչպէս իրենց կամքովը եկեր էր : Թագաւորին այսօրինակ գնացքը աւելի համոզեց զՊելճիացիս, յարգելու իրենց իշխանը և անոր հրկարժամանակեայ իշխանութիւն փափազելու :

2. Յուզմունք յԱնգղիա — Ի Լոնտրա դաշնագրա-

կանաց ժողովակ: — Իսկ յԱնգղիա Բարիզու Փե-
տրուարի լուրերը փոքր արձագանգ մը ունեցան նոր
դաշնագրութիւն փափագողներուն մէջ: Գաշնագրա-
կան գլխաւորներէն ոմանք ամբողջին գլուխ երեւցան,
կը պահանջէին որ Պաշտօնարանը հրաժարի, Խօ-
սարանը լուծուի, Գաշանց գիր¹ մը հաստատուի և
« բնաւ տեղիք չտրուի »: Լոնտրայի մէջ դաշնա-
գրականք սկսան գումարել իրենց նիստերը և պատ-
րաստել Ապրիլ 10ի համար ընդհանուր բողոք մը և սըր-
տագին ցոյց մը: Սակայն ի գլխաւորաց ևս ոմանք տա-
կաւին զժողովուրդը անպատրաստ կը համարէին Գա-
շանց թղթոյ մը համար կռուելու, և աւելի խոհեմա-
գոյնք խորհուրդ կուտային ի զուր շկուռելու ընդդէմ
օրինաց, մինչ անկէ աւելի բարոյական ոյժ մը շու-
նէին: Այսու հանդերձ որոշուեր էր, որ Ապրիլ 10ին
դաշնագրականք գումարուին ի Քէննիկդոն Գոմմըն՝
գլուխ ունենալով իրենց առաջնորդներն զ'Օգոննոր Ֆէր-
կըս և հոնկէ մեծ թափօրով մեկնին դէպ ի Սառ-
րին Խօսարանը, խնդրելով անկէ Գաշանց թուղթ մը:

Վարչութիւնը ընդդէմ օրինաց հրատարակեր էր
այս թափօրը, և Ուէլլինկթոնի դքսին յանձնուեր էր
քաղքին ընդհանուր խաղաղութեան պահպանութիւ-
նը, որ մեծաւ զգուշութեամբ ամէն կողմ պատրաս-
տական գունդեր հաստատեր էր անոնց վրայ կար-
գելով իրեն վստահ անձինք: Այնքան մեծ էր ծեր
ղօրավարին արթնութիւնը, որ երբ Ապրիլ 10ին դա-
նագան նշանաւոր անձինք կը դիմէին իրեն նոր խոր-
հուրդ մը և յոյս մը տալու, ինքը անայլայլ կերպով ա-
մենուն կը պատասխանէր որ « Արդէն քիչ առաջ այն-
պէս սրամագրեր էր »: 200,000 քաղաքացիք և ա-
ւելի դիմեր էին ինքնակամ զինուորելու այն օրը, կար-
գաց պահպանութեան համար կռուելու, յորս հարկ է
յիշել և զիշխանն Լուի-Նաբոլէոն, որ կը գտնուէր
ի Լոնտրա: Ապրիլ 10ին ամբողջ օրը Լոնտրա մեծ

յուզման մէջ էր, հեռաւոր թաղերու մէջ համբաւ տարածուեր էր որ Գաշնագրականաց և Ջինուորաց մէջ արիւնահեղ կռիւ մը ծագելով՝ Գաշնագրականք յաղթող գանուեր էին և կը սփռուէին բոլոր քաղաքը: Անտարա այսպիսի երկիրդի միջոց ուրիշ ամէն քաղաքներէն աւելի հակամէտ էր սարսափելու: Ամբողջ Ապրիլ 10ին օրը շատ մը քաղաքացիք իրենց տուներուն մէջ փակուած ժամէ ժամ մահուան կը սպասէին, առանց փնտռել ուզելու իրին վիճակի և խնդրոյն ելքը:

Մինչ կը կարծուէր որ Գաշնագրականաց գումարումը ի Քէննինկոնն Գոմմըն կէս միլիոն անձանցմէ աւելի բլլայ, հազիւ 25,000ի չափ անձինք ժողվուեր էին, յորոց կէսը հանդիսականք միայն էին և հազիւ 200 տաքզլուխ երիտասարդք կրնային փափագել ընդդէմ դինուորաց և ոստիկանութեան գէնք ամբառնալ: Անտարա՝ Բարիզ չէ. թափօրը չկազմուեցաւ. և Օ՛Քոննօր ինքնին, զոր վարչութիւնը անձամբ պատասխանատու կարգեր էր որ և իցէ խռովութեան մը, մեծապէս պնդեց հպատակելու կարգաց և իշխանութեանց, նոյնը ըրին ուրիշ առաջնորդք ալ: Այս պատճառաւ ի Գաշնագրականաց ոմանք յետոյ իրենց ճառախօսութեանց մէջ առաջնորդաց համար կ'ըսէին, որ ուրիշ բան չէին բայց թէ՛ « շաղակրասք »: Այսպէս Ապրիլ 10ին հռչակաւոր գումարումը ցրուեցաւ ուրիշ արդիւնք մը չունենալով բայց թէ ընդհանուր ցուցունելով Գաշնագրականաց սակաւութիւնը և անհաստատութիւնը: Նոյն իսկ 5,600,000 ստորագրութիւնը զոր Օ՛Քոննօր ներկայացուցեր էր Ստորին Խօսարանին և որուն վրայ ամէնը զարհուրեր էին, մանր քննութեամբ կէս միլիոնէն ալ աւելի վար իջաւ, նոյն անուանքը շատ անգամ կրկնուած բլլալով, և կամ այնպիսի անձանց անուններ դրուած բլլալով, որոնք բնաւ Գաշնագրութեան հետ յարաբերութիւն մը չունէին, ինչպէս էր Թագուհւոյն, Ուէլլինկթոնի, Ռոպրորդ Փիլի և ուրիշ նմանեաց անուանք: Յետ Ապրիլ 10ին այսպիսի ծիծաղական ելքի մը, անկէ վերջը Գաշնագրական խնդիրը ամենուն համար անհամ և ծաղու նիւթ

մը դարձաւ և փութով նուաճուեցան ուրիշ քաղաքացի մէջ նոյն նիւթոյն վերաբերեալ աննշան յուզմունքներ ալ: Ի. Մէնչըսդր և ի Լոնտոն սակաւաթիւ անձինք բանտարկուեցան, յորս իբրև նշանաւոր անուն մը կըրնանք յիշել զէրնէսդ Գոն իր քերթողութեանց և պերճախօս ատենաբանութեանց համար, որ երկու տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

3. Նորաբողոք իռլանտա: — Գաշնագրաց յուզումը լմնցած ժամանակ աւելի մեծագոյն և կարևորագոյն խնդիր մը գրաւեր էր ամենուն միտքը:

Յիռլանտա 1847ի վերջի ամիսներուն մէջ Նոր-Բոլ-քոլ Իւլանթո կուսակցութիւն մը կազմուեր էր, այլապէս ի Բոլոտոյ, որոնք միշտ հաւատարիմ կը մնային Օ'Քոննէլի քաղաքագիտութեան: Օ'Քոննէլի տըւած շարժումը այնքան մեծ էր, որ այս նոր երիտասարդաց հայրենասիրական վառումը հետեանք մ'էր անոր, և զոր աւելի կը բորբոքէր Նեշընը (Ազգ) լրագիրը որուն խմբագիրք եռսնդուն և գիտնական երիտասարդք էին մեծաւ մասամբ: Վերջի տարուան սովը և յետին աղքատութիւնքը աւելի գրգռեր էին ըզժողովուրդը ընդդէմ վարչութեան, որ խնայութիւն կը քարոզէր ամէն կողմ մինչ արդէն մահը անհամար անձինք կը հնձէր յիռլանտա. և որուն համար Անգլիոյ պետութիւնը զօրաւոր դարման մը չէր տաներ: Եւ մանաւանդ ոմանց համար միջոց մը կը համարուէր այսպէս ընկճեալ բռնելու գիռլանտա¹: Նոր ընկերութիւնը սակաւին ինքզինքը գլուխ սամբառնալու վիճակի մէջ չէր տեսներ նա մանաւանդ յետ մահուն Օ'Քոննէլի, որուն ներկայութիւնը և ձայնը միայն կարող էր գողացընել իր ախոյեանքը և Նոր-Բոլքոլ Իւլանթո այն ատեն նոր ոյժ մը զգեցաւ երբ իր թուոյն մէջ ան-

1. Յիրաւի եղան ատանձնական նպաստներ և ընկերութիւնք իսկ հաստատուեցան առ այս: Օտար ազգերէ դրամական օգնութիւններ հասան նաև յԱրեւելոց և յՍամանեան պետութիւնէն. այսու հանդերձ ի սովոյ և յաղքատութիւնէ մեռելոց թիւը նաև մինչև 249,533:

յաւ Գուլիէլմոս Սմիթ Օ'Պրիէն, իռլանտացի հա-
րուստ ազնուականը, որուն ցեղը կ'իջնար Իռլանտիոյ
հին թագաւորներէն և իր ընտանեաց մէջ ունէր թէ
լորտուծիւն մը և թէ մարգիդուծիւն: Օ'Պրիէն ա-
ռանձնական ամենայն ասպետական և պատուաւոր
յատկութիւնքը ունէր, սակայն առանց կարողութեան
չարժման մը գլուխ կենալու. տկար ճարտասան մը,
չափաւոր միտք մը զոր աւելի կը շփոթէին իր հետե-
ւողաց պատուասիրութիւնք: Քառասուն և իրեք ամ-
եայ էր Օ'Պրիէն երբ յուզման գլուխ անցաւ՝ իրեն
օգնական ունենալով զթովմաս Ֆրանսիս Մայըր 23
տարուան երիտասարդը, որ կուսակցութեան աշխոյժ
և փայլուն ճարտասանն էր, զՄիչըլ, նշանաւոր և հան-
ճարեղ մատենագիրը Տիուֆֆի, և երկուքն ալ հազիւ ե-
րեսնամեայ. և սակայն ասոնք ամենէն ծերագոյնքը
կը համարուէին յուզման մէջ: Պէտք ենք ևս նշանա-
կել որ 1848ի ապստամբութեան մէջ յԱնգղիա գլխա-
ւորք և նշանաւորքը ամէնն ալ նորաղանդք էին:

Ի սկզբան Նոր-Քոլէ՞՞ն Իւլանթոս դպրոցական ըն-
կերութեան մը ձև ունէր կազմեալ յերիտասարդ լրա-
գրապետաց, ի մատենագրաց և յապագայ քերթողաց,
յորս բազումք ընչաւէտք էին կամ որդիք ազնուական
տոհմից, սակայն այս պատուաւոր և յարգելի տարերաց
մէջ մտեր էին նաև խռովարար տարերք, որով փոխա-
նակ ձեռք բերելու իրենց երկրին համար բազմաթիւ ա-
ղատութիւնք և բաժանումն յԱնգղիոյ և երկրին տնտե-
սական բարւոքումն, գլխաւորաց տարագրութեամբ ա-
մենայն ինչ վճարեցաւ: Չարմանալի իրականութիւն
Անգղիա քաղաքակիրթ գաղթականութեանց ամենէն
յաջողակը, երբէք բաւական հոգ տարած չէ յԵրոպա
իւր վերքը բժշկելու:

Օ'Քոննէլի մահուընէ առաջ արդէն այս ընկերու-
թիւնը յայտնապէս բաժնուեր էր ի Բողոքողաց՝ որոնք
րնաւ չէին ուզեր նիւթական զօրութիւն մը զործա-
ծել իրենց պահանջմանց համար: Ընդ հակառակն Մա-
յըր քերթողական պերճախօսութեամբ մը դատապար-
տեր էր այն « բարոյագէտները, որոնք զազատութիւ-

նը արժանի չէին համարեր կաթիլ մի արեան» : Փետրուարի Յեղափոխութենէն առաջ ընկերութիւնը տակաւին համրակաց պայքարներու ժողովքի ձե մը ունէր քան քաղաքիտական նպատակի : Բարիզու Յեղափոխութեան լուր : և Լուի Ֆրիլիփի փախուստը գիրենք եռանդնաւորեց ձեռնարկութեան մը : Լամարզին իրենց գիւցագն դարձաւ , Նորթոլթոն Իւլանթոցոց ամենուն ձեռքը կը շրջ ին « Ժիրոնդեանք » պատմութիւլ : Մէջի անձինքը սկսան կերպաւորիլ , Մայրը նոր Վէրնետ և Օ'Պրիէն՝ Լաֆայէթ : Նուիրակութիւն մը մեկնեցաւ ի Բարիզ որուն գլուխ էին Մայրը և Օ'Պրիէն : Նոր Հասարակապետութիւնը քանի մը իռլանտացի երիտասարդաց պատճառաւ բնաւ Անգղիոյ հետ աւրուելու միտք չունէր , և Լամարզին կիրթ բայց աննշան վարմամբ ընդունեցաւ զանոնք և ձամբեց :

Սակայն արդէն տարաձայնութիւնը սկսեր էր՝ նոյն իսկ ընկերութեան մէջ մաս մը անմիջապէս կ'ուզէր գործել , ուրիշները խոհեմ՝ յապաղումն խորհուրդ կու տային : Գործելու խումբը իրեն գլուխ կը ձանչնար Բոլդուին Միչըլ , որ հակառակ Նեշլեշ լրագրին ուրիշ օրագիր մը հաստատեց Ունայթըդ Այըշէն (Միացեալ Իռլանտացիք) , որ փութով Նեշլիւնէն աւելի ժողովրդական պարձաւ և բազմընթեռնի : Միչըլ կ'ուզէր որ վարչութիւնը վախնալով իրենց գործունէութենէն , զոմանս փնէր ի բանտ ի գլխաւորաց , և կը յուսար որ այն ատեն բոլոր ժողովուրդը զայրացած ոտք ելլայ , մնացածը բաղդին կը թողուր : Սակայն ապագայն ցուցուց որ ինչ մնասակար և անխորհուրդ գաղափար մ'էր այս : Միչըլ 1848ի ապաստամբաց մէջ ամենէն ահաւորն էր և պատրաստ միշտ յեղափոխութեան մը գլուխ կենալու : Կտրիճ մատենագիր՝ գրեց պայծառ՝ եռանդուն հատու և նոյն իսկ երգիծարանական յօդուածներ , որոնք իրեն նպատակին կը ծառայէին , և ամէն շաբաթ զվարչութիւնը գողցես կը հրատարէր զինքը հալածելու . պատրաստ էր զոհելու իր կեանքը եթէ պէտք ըլլար : Գործոյն յաղողութեան համար , կարևոր կը համարէր և կը փափագէր արիւնա-

հեղ ապստամբութիւն մը, առանց սակայն հաշուելու իրեն հետևողաց և նախանձողաց թիւը որոց հետ պիտի կռուէր վարչութեան և այն անզղիական վարչութեան դէմ:

4. Լրագրոց ապստամբութիւնը. Միջըլի բանտ ել յարար:— Այս միջոցիս վարչութիւնն ալ բռնադատուեր էր իրեն հսկողութիւնքը սկսելու: Տեղապահ լորտը չէր կրնար թողուլ, որ այսպէս լրագիրք ապստամբական բողոքներ գրեն և մանրամասն տեղեկութիւնք տան անգլիացի զինուորները սպաննելու միջոցներու վրայ: Եղած օրէնքներուն մէջ չկար մին՝ որով կարելի ըլլար խտտապէս վարուիլ ընդ Միշէլի և խափանել լրագիրը. կ'արգիլուէին միայն ապստամբական ճպտախօսութիւնք ընել և գրել, սպառնացաւ հակառակորդաց, սակայն այս խափանումը զիրենք աւելի գայրացուց, մինչև վարչութիւնը Վահան սպահովութեան համար նոր հրովարտակով մը սպառնացաւ, որ թէ շարունակէին այն գրութիւնք պիտի բռնէր զգրողս և տարագիր հետանէր ի հայրենեաց: Նոր հրովարտակը անցաւ փութով իր սահմանքը խափանելով նաև ուրիշ լրագիրներ, որոնք նմանութիւն մը ունէին Ռ-ն-յ-բ-բ Այրշե-նի և սպառնալով պահել ի բանտի առանց գրաւի մինչև ի դատաստան ամենայն ոք, որ յանցանէ ընդդէմ նոր հրովարտակին: Միջըլ առաջինը եղաւ որ իշխանութեանց պատճառ տուաւ գործադրելու այս հրովարտակը: Արկին նորոգած ըլլալով ապստամբական գրագրութիւնքը, բռնուեցաւ և բանտ գրուեցաւ: Իրեն կալանաւորութեան լուրը իւրանտական յուզումը իր գերագոյն կէտին հասուց. վարչութիւնը կասկածելով, որ իրեն փախտեան համար գանազան փորձեր պիտի ըլլային ամենայն արթնութեամբ կը հսկէր: Առ ժամս խաւարեցան Օ'Պրիէնի, Մայլրի և ուրիշ գլխաւորաց անուանքը, ամենուն աչքը և միտքը Միշըլի արգելաբանին վրայ էր. յիրաւի վարչութիւնը կը խիթար որ արինահեղ կռիւ մը չծագի բանտին դրանց առջև: Վատաստանը փութով կատարուեցաւ և յանցաւոր դատուելով, քառասուն տարուան տարագրութեան դա-

տապարտուեցաւ . և Տըպլինի փողոցներուն մէջ երկու կարգ հեծելագորուն մէջէն անցնելով պատերազմական նաւու մէջ մտաւ , որ քիչ ժամ վերջը մեկնեցաւ դէպ ի Պէրմոստա :

5. Գուպարածք ի Դիփիէրարի . — Դատապարտուած իւնը : — Սակայն Միչըլի հեռանալով եթէ առ ժամս Տըպլինի մէջ լուսթիւն տիրեր էր , փութով Իռլանտական յուզումը աւելի բորբոքեցաւ : Սմիթ Օ'Պրիէն կը շրջէր ամէն կողմն զօրահանդէս կազմելով « ի դաշնակցաց » , ինչպէս կ'անուանէին իրենք զիրենք Նորարողը Իռլանտացիք : Վարչութիւնը շուզեց ներողամիտ գտնուել , վերցուց յԻռլանտա անձնական ազատութեան¹ հրովարտակր և վճռեց Օ'Պրիէնի Մայրբի և ուրիշ գլխաւորաց կալանաւորութիւնը , որոնք թողուցին զՏըպլին և ցրուեցան ի գիւղօրէս ամէն կողմ ապստամբական ժողովքներ գումարելով և պատրաստելով զանձինս զինուք պաշտպանուելու Փութով կռուելու առիթն ընդ առաջ ելաւ , Օ'Պրիէնի հետեողաց գլխաւոր գունդը հանդիպեցաւ ոստիկանութեան սակաւաթիւ զօրաց ի Պէլլինկէրի Դիփիէրարի , ուր ոստիկանութեան զինուորք ապաւինեցան ազքասին հիւղի մը մէջ և հոն իրրև բերդ մը պաշտպանուելով հրացանի կրակով ցըրուեցին ապստամբաց բանակը և անոր հետ մէկտեղ նա և ամբողջ ապստամբութիւնը : Քիչ օր վերջը Սմիթ Օ'Պրիէն՝ Դիփիէրարի Թուրլս կոյարանը կը գտնուէր , ուր տոմսակ մը կը գնէր հանդարտութեամբ Լիմէրիք երթալու համար , երբ ձանչուեցաւ ոստիկանութենէն : Առանց ընդդիմութեան և խռովելու ազնուական կերպով մը յանձն առաւ կալանաւորելու . և անկէ վերջը ամբողջ դատաստանին մէջ ազնուական և վեհանձն կերպ մը ցուցուց : Ոստիկանութեան զինուորաց մին վկայեց , որ Դիփիէրարիի կռուոյն մէջ մեծ անձնանուիրումն ցուցուցեր էր Օ'Պրիէն և անհողու-

1. Habeas corpus. անձնական ազատութեան հրովարտակր լատինական այս բառերով սկսելուն համար , հրովարտակր այս անուամբ կը կոչուի :

թեամբ իր կեանքը վտանգի մէջ դրեր էր, ուրիշ մը ըսաւ որ զանազան անգամ կոռույն մէջ առիթ ունեցեր էր զինքը սպաննելու բայց խորշեր էր մտածելով որ Իռլանտիոյ թագաւորաց սերունդը պիտի մարէր :

Բռնուեցան նաև քիչ օր վերջը Մայրը և ուրիշ երկու գլխաւորք : Բանտարգեալք մասնաւոր Ատենի մը առջև ելան : Ամենէն առաջ Օ՛Պրիէնի դատաստանը եղաւ որ յանցաւոր դատուելով վճռուեցաւ որ « կախուի, գլխասուրի և չորս մաս բաժնուի » : Ամբողջ դատաստանին միջոց ծանր և արժանավայել կերպ մը ցուցուց և Հանդարտութեամբ ըսաւ միայն, « որ ինքը ջանացեր էր կատարել իւր պարտքը առ իւր հայրենի» և թէ պատրաստ էր տանելու ամենայն հետևանքներուն » : Յետոյ Մայրի դատաստանը եղաւ որ նոյնպէս յանցաւոր դատուեցաւ : Ամենուն սիրտը յուզեր էր իր կտրիճ երիտասարդութիւնը և չքեղ պերճախօսութիւնը, ծերունի հօրը արդիւնքը որ Խօսարանին պատուական անձանցմէ մին գտնուեր էր, ամենուն յուսալ կուտային որ ներուի երիտասարդ Մայրի կենաց, առ այս մանաւանդ մտածել կուտար իր յետին մէկ պերճախօս և սրտաշարժ հրատարակութիւնը, որով կը ծանուցանէր թէ ինքը բնաւ իրի մը համար ներուի կամ յետս կոչելիք չունէր. « Մի կարծէք որ դողդոջուն շրթամբք կեանքս պիտի խնդրեմ՝ ես զայն արդէն նուիրեցի հայրենեացս ազատութեան համար... Իռլանտական պատմութիւնը արդէն կը բացայայտէ իմ յանցանքս և զայն կ'արդարացրնէ նա մանաւանդ երբ մահու ստուերք պատեն զիս, և անոնց մէջէն տեսնեմ իմ կանխաժաման խամրիլս անսուրբ երկրի մը վրայ, յոյսը միայն զոր կը նկատեմ անկէ վերջը այն ալեկոծ ծովուն վրայ, յորում ես նաւարեկեցի, զիս կը քաջալերէ, կը մխիթարէ և կը զմայլեցընէ : Այ, չեմ յուսահատիր իմ հինաւուրց հայրենեացս խաղաղութեան, ազատութեան և փառաց համար » :

Մայրը ալ մահուան դատապարտուեցաւ Օ՛Պրիէնի նման վճռովը, սակայն ընդհուպ թագուհին այս գլխաւոր պարտութիւնքը ցկեանս սքսորի փոխեց : Բանցաւոր-

ները Աւստրալիա ղրկուեցան, ուսկից քիչ տարի վերջը Միչէլ կրցաւ հնարիւք խոյս տալ Մայրրի հետ ընդդէմ իրենց խոստման: Իսկ Օ'Պրիէն բնաւ չուզեց այսպիսի ազատութեան մը ձեռնարկել, և իր ազնուական և պատուաւոր գնացքը յորդոր եղան վարչութեան ներուձն տալ իրեն, այն պայմանով որ չդառնայ ի Բրիտանական կղզիս: Բայց այս պայմանն ալ քիչ վերջը վերցուեցաւ և այն ատեն դարձաւ յիւր սիրելի Իռլանտա և խաղաղութեամբ մեռաւ ի Ուոլս յամին 1864¹:

Նոր-Բրիտանիոյ վիսաւորաց հեռանալով, ցըրուեցան նաև միւս երիտասարդք, յորս բազումք յետոյ անուանի գտնուեցան եթէ ի Ստորին Խօսարանի, եթէ ի մատենագրութեան և եթէ օտար երկիրներու մէջ. Չարլս Ալէվէն Տիուֆֆի՝ Նեշլըն տպագրողը որ երկու անգամ դատաստանի կանչուեր էր յետ խռովութեան ընկճուելուն, և զոր երգուեալք բնաւ չէին յանձն առած դատապարտել, Ստորին Խօսարանին նշանաւոր անձանց մին եղաւ. և քիչ վերջը գաղթելով ի Վիկտորիա հոն Առաջին պաշտօնեայ եղաւ ընդունելով միանգամայն ասպետութիւն և թոշակ: Թովմաս Տերուի Մ'կի ուրիշ սպասամբ մը գնաց ի Միացեալ Նահանգս և հոնկէ ի Գանատա, ուր անպիւս

1. Միշըլ բնակեցաւ յԱմերիկա ի Վիրգինիա նահանգս և հոն մեծ պաշտպան եղաւ գերութեան: Երբ տարագրութեան տարիները լմեցան դարձաւ յԻռլանտա. և թէպէտ իր ազատութիւնը անկանոն եղանակաւ եղեր էր, բայց այսպիսի պարագայից համար մասնաւոր օրէնք մը չըլլալով՝ վարչութիւնը գինքը հանդարտ թողոց. նա մանաւանդ Իռլանտա գինքը երեսփոխան բնարեց Անգլիոյ Ստորին Խօսարանին: Վարչութիւնը բնորութիւնը անվաւեր համարեցաւ. Բայց Միշըլ կրկին բնարուեցաւ. և մինչ երկիւղ կար շփոթութեան մը մահը վրայ հասաւ:

Իսկ Մայր կուտեցաւ Գանատայից Պետութեանց բանակին մէջ, և գինուորական մեծ արութիւն ցուցուց. սակայն մուժ գիշեր մը նաուուս յարկածածկէն ինկնալով, իւր գերեզմանը գտաւ յարձական բնթացից մէջ:

կան Պետութեան պաշտօնեայ անուանուեցաւ և իր յաւազակաց սպանութեան վրայ սուգ բռնեց ամէն անգղիացի սիրտ : Դեռ ուրիշ բազմաթիւ երիտասարդք մտան Ստորին Խոսարանին մէջ և մեծ պատիւ ստացան : Այսպէս Իւլանտական յուզմունքը սասուերի մը պէս անցաւ՝ որ Դաշնագրաց խնդրոյն հետ Անգղիական 1848ի Յեղափոխութիւնը կը կազմեն, բայց եթէ Դաշնագրաց խնդիրը ի սպառ մեռաւ, Իւլանտականը նուազեր էր միայն :

6. Փալմէրսդըյն . — Տօն Փաշիֆիքոյի խնդիրը : — Այս երկու խնդիրներէն բոլորովին օտար և ըստ ինքեան չնչին խնդիր մը, մեծ վիճարանութեանց նիւթ պիտի ըլլար յԱնգղիա սպառնալով ընդհանուր եւրոպական պատերազմ, թշնամութիւն ընդ Վասիլիոյ և Լորտ Փալմէրսդըյնի խոսարանական հզօր ատենախօսի համբաւը մեծապէս պիտի հաստատէր և ընդարձակէր : Էր այս Տօն Փաշիֆիքոյի խնդիրը :

Տօն Փաշիֆիքօ, որուն անունը սուանց արժանեաց մը Պատմութեան մէջ այնպիսի ընդարձակ տեղ մը բռնեց, փորթուգայցի հրեայ մ'էր ծննալ ի Ղիպրալգար և անգղիացի հպատակ Սովորութիւն էր Յունական քաղաքացի մէջ, ինչպէս ցարդ պանաղան տեղեր յԱրևելք, Աւագ Հինգչարթի օրը Յուդա Իսկարիովտացոյ պատկեր մը կամ պաճուճապատանք մը այրել : Աթէնքի ոստիկանութիւնը 1847ի այս սովորութիւնը արգիւյր էր, և այս խափանման պատճառ համարուեցաւ Հրէից պղծեցութիւնը : Ապրիլ 7ին Աթենացոց ամբոխ մը, որոց կ'առաջնորդէին Պատերազմի պաշտօնէին երկու որդիքը, դիմեց Տօն Փաշիֆիքօ հրէին տանը վրայ որ մօտ էր պաճուճապատանքին այրուելիք տեղոյն և կրակ տուաւ անոր : Յարձակումը յայտնի է, որ սպօրինաւոր էր և յունական իշխանութեան փոյթ չեղաւ պաշտպանելու զՏօն Փաշիֆիքօ, որ բողոքեց ընդդէմ յունական վարչութեան և փոխարինումն պահանջեց իր ամէն ուղղակի և անուղղակի կորուստները արժեցնելով 32,000 սաւրւին :

Մի և նոյն միջոց նմանօրինակ ուրիշ բողոք մը կ'ը-

նէր աւելի նշանաւոր անձ մը՝ Ֆինլէ Յունաստանի պատմագիրը . Ֆինլէ այն անգղիացիներէն էր որոնք ազատութեան եռանդով լցուած Պայրընի և Քոչըրնի չետ դիմեր էին ի Յունաստան , և հիմայ Յունաստանի ինքնիշխանութենէն վերջը հոն հաստատուեր էին : Իրեն երկիրներէն զոմանս յունական վարչութիւնը խնդրեր էր () թոն թագաւորին պալատը և պարտէզը ընդարձակելու համար : Ֆինլէ յանձն առեր էր այն պայմանովք որովք կ'ըլլային ուրիշ աթենացի կալուածատեարց , բայց փոխարինումը իրեն գոհացուցիչ չըլլալով մերժեր էր , և իբր օտար չէր կրցած բողոքել դատաստանական օրինաց : Բաց աստի անգղիական Արտաքին պաշտօնարանը զանազան տրտունջներ ունէր ընդդէմ յունական իշխանութեանց . անգղիական պետութեան նաւու մը երկրորդ հրամանատարը Պաղրասի եզերքը բռնուեր էր , թէպէտ և անգղիացի ըլլալը իմացուելուն պէս մեծ պատուով արձկուեր էր : Փալմէրսդըն յարդ խոհեմութիւն համարեր էր լուել գիտելով զՎաղղիա և զՌուսաստան պատրաստ մըրցելու Յունաստանի չովանաւորութեան վրայ , սակայն տեսնելով յունական իշխանութեանց անհոգութիւնը և Վաղղիոյ պաշտօնեայն ի Յունաստան ծածուկ գըրգռիչ համարելով , պահանջեց որ զոհութիւն տրուի անգղիացի նաւապետին վրիպակաւ բռնուելուն , և սպառնական բողոքով մը Ֆինլէյի կալուածին և Տօն Փաչիֆոքոյի կահ կարասեաց խնդիրքը ազգային խընդիր մը դարձուց : Յունաստան տատամսեցաւ և փութով բրիտանական նաւատորմիդը մտաւ ի Պիրէոն և տիրեց թէ՛ յունական Պետութեան և թէ՛ վաճառականական հոն գտած նաւերուն :

Յունական վարչութիւնը բողոքեց Վաղղիոյ և Ռուսիոյ պետութեանց իբր առ իւր պաշտպանս ըստ դաշանց . և երկու պետութիւնքս պատրաստուեր էին սաստկապէս տրտնջելու առաջուրնէ՛ բրիտանական վարչութիւնէն իրազեկ չըլլալնուն համար , երբ Փալմէրսդըն պատասխանով մը ծանոյց որ խնդիրը ընդ մէջ Անգղիոյ էր և Յունաստանի և թէ ուրիշ պե-

տութեանց բնաւ միջամտութեան պէտք չկար: Ռուսաստանի Արտաքին գործոց պաշտօնարանը նախատական յանդիմանութիւն մը գրեց, որ ինչպէս Անգղիոյ այս անակնունելի բռնութիւնը ընդդէմ Յունաստանի «Գառնակակիծ ազգեցութիւն մը ունեցեր էր Կայսեր մտաց վրայ» և կը հարցընէր, որ «արդեօք Անգղիա հպարտացած իր նաւական բարձր ուժոյն վրայ, ինք զինքը ազատ կը կարծէր յամենայն պարտաւորութեանց, իր զօրութեամբը յամենայն պարագայս դիմելով սկարին վրայ, առանց այլ պատճառաց բայց թէ իր կամքը, առանց այլ իրաւանց բայց նիւթական ուժը»: Իսկ Գաղղիոյ վարչութիւնը որ ներքսապիւս շատ մտածելու նիւթեր ունէր, փափագ միայն ցուցուց հաշտարար միջամտութեան մը. որով ընդունեցաւ բարեկամական դատաւորութիւն մը և մասնաւոր նուիրակ զրկեց յԱթէնս, հոն իր պաշտօնէին հետ իրին հաշտութեան վճարման աշխատելու:

Եւ յիրաւի ի բաց առեալ Տօն Փաշիֆիքոյի խընդիրը միւս ամէն դժուարութիւնք դիւրաւ հարթեցան: Ի սկզբան գաղղիացի նուիրակը յանձն առաւ Տօն Փաշիֆիքոյի տան կարասեաց չափազանց գինն, սակայն յետինս սեռնելով որ յանձն կ'առնուր վճարել, նորանոր աւելի պահանջներ մտուց: Սկսաւ ըսել որ Փորթուզալի թղթադրամներ ունէր, որոնք տանը աւարաւորութեան միջոց գողցուեր էին և որոց գինն էր 26,618 ստէրլին: Փաղղիացի նուիրակը այս նորոգ պահանջմանց վրայ վարանեցաւ. սակայն հաւանեցաւ զայն ևս ընդունելու, այն պայմանաւ որ ուրիշ նոր պահանջը չյառնեն, բայց երբ Անգղիոյ պաշտօնեայն Ուայդ ծառնոյց որ ինքը իշխանութիւն չունէր Գնջելու որ և իցէ նոր պահանջ մը, այն ստեն բանակցութիւնք աւրուեցան: Մի և նոյն միջոց Գաղղիոյ և Անգղիոյ մէջ ի Լոնտրա բանակցութիւնք կ'ըլլային, որոնք լմենալու վրայ էին երբ յանակնկալս ինչպէս յԱթէնս նոյնպէս ի Լոնտրա ոչ ինչ պատճառաւ երկու կողմանքն ալ մէկմէկէ բաժնուեցան առանց միաբանելու: Փաղ-

ղիոյ վարչութիւնը իւր դեպքանը Տրուէն տը Լիւյ կան-
չեց Լոնտրայէն, բոլոր Եւրոպա վախցաւ որ ընդ հուպ
ահաւոր պատերազմ մը պիտի սկսէր « բայց ոչ Քաղ-
ղիա և Անգղիա, կ'ըսէ ժամանակակից գրիչ մը, շատ
միտք չունէին Տօն Փաշիֆիքոյի սաւաններուն և վեր-
մակներուն համար եւրոպական պատերազմ մը յա-
րուցանել » : Ընդ փոյթ Անգղիա հաւանեցաւ թողու
Քաղղիոյ թովանդակ խնդրոյն դատաւորութիւնը, և
երկար ժամանակէ վերջը մասնաւոր դատաւորք քըն-
նելով Տօն Փաշիֆիքոյի բողոքները գտան վնասքը ի
սկզբան պահանջածին երեսներորդ մասը հետեւելով ի-
րենց արժէք տալուն մէջ ազատ և երևակերպեալ ար-
ժէքներու ¹ :

6. Պայքարք ի Խօսարանի ըմբռէմ Պաշտօնարա-
նին : — Անգղիոյ և Քաղղիոյ վարչութեանց մէջ բա-
նակցութիւնք տակաւին չլմնցած, Խօսարանական վէճ
մը սկսեր էր ընդ մէջ վարչութեան և ընդդիմակացից, որ
Խօսարանական պատմութեան միշտ վսեմ էջերէն մին
պիտի մնայ : Լորա Սդանլէ վարչութեան բռնած ըն-
թացքին դէմ քուէ մը առաջարկեց, որ յետ եռանդուն
և զօրաւոր հակահառութեանց ընդունելի եղաւ 37

1. Տօն Փաշիֆիքոյի խնդիրը որ ժամանակին գողցես վրդովեց բու-
լոր Լաբուպէ, լմնցնելու հոս Մըք-Քարթէյ անգղիացի պատմա-
գրին խօսքերով. « Տօն Փաշիֆիքօ, ինչպէս կերեանայ այն հրովար-
տակին մէջ, կը պահանջէր և կ'առնուր 150 ստերլին անկողնոյ
տախտակաց համար, երեսուն ստերլին սաւաններուն և անկող-
նոյն համար, 25 ստերլին երկու վերմակներու համար և 10 ստեր-
լին բարձի երեսին համար : Տօն Փաշիֆիքօ կրնար մրցել կղէոս
պատրայի հետ, իր սովորական գործածութեան համար այս-
պիսի փարթամ անկողնոց կահկարասիք ունենալով : Իր կա-
նանց և դատերաց ակունքներուն զինք դրաւ 2000 ստերլին,
և սակայն այս բողոքներուն բնաւ հաստատութիւն մը չու-
նէր, վասն զի կ'ըսէր թէ աղմկին մէջ կողոպտուեցան բոլոր
իր թղթերը : Միշտ չափաւոր վիճակով ապրած էր և իր մեր-
ձաւորներէն ոչ ոք կրնար երեւակայել, որ տանը մէջ այսպիսի
հոսի զարդեր և կահ կարասիք ունենայ :

քուէիւր մեծամասնութեամբ: Լորտ Փալմէրսդըն չը-
 վախցաւ, ինչպէս ամենայն պաշտօնարան որ լորտե-
 րու խօսարանէն հակառակ քուէ կ'ունենայ: Սակայն
 հարկ էր, որ փոխադարձ Հասարակութեանց Խօսա-
 րանին մէջ առաւելութիւն մը ունենար ի կշիռ լոր-
 տերէն ընկալեալ հարուածոյն և Յունիս 14ին Ռէօ-
 պըք երեսփոխանը ի ստորին Խօսարանին առաջարկեց՝
 որ « Պետութեան Արտաքին գործոց պաշտօնարանը ար-
 ժանապէս վարուեր էր ի պահպանութիւն պատուոյ հայ-
 րենեաց և ամենադժուարին ժամանակի մէջ կրցեր էր
 պահել խաղաղութիւնը Անգղիոյ և աշխարհիս պանազան
 ազգաց հետ »: Յունիս 14ին գիշերը Փալմէրսդըն ցու-
 ցուց կուսակցութեան մը առաջնորդելու մեծ կարո-
 դութիւնը. Ռէօպըքի առաջարկութիւնը մեծ ճարտա-
 րութեամբ շինուած էր, վասնզի մինչ ամենուն հակա-
 ռակութիւնը անձնական էր և թէ Փալմէրսդընի դէմ
 ինքը ընդհանուր Պաշտօնարանին վրայ կը տարածէր.
 փոխանակ մասնաւորելու յունական խնդիրը, պաշ-
 տօնարանին ընդհանուր քաղաքագիտութիւնը միայն
 կը յիշատակէր. և թէպէտ Հասարակութեանց Խօ-
 սարանին մէջ կային զանազան նշանաւոր երեսփո-
 խանք, սրոնք կը դատապարտէին պաշտօնարանին
 ընթացքը յունական խնդրոյն մէջ, բայց անով չէին
 ուզեր Ազատական պաշտօնարանի մը անկումը, որով և
 առանց իրենց խղճին դէմ ընելու, կրնային քուէ տալ
 առաջարկութեան: Բացասկէ Հասարակութեանց Խօ-
 սարանին կերպով մը կը շնորհուէր Եւրոպայի ցու-
 ցունել իր արդեցութիւնը յԱնգղիա, լորտերէն դա-
 տապարտեալ պաշտօնարանը պաշտպանելով և պա-
 հելով:

Այսու հանդերձ եռանդուն պայքարք ծագեցան. Փալ-
 մէրսդընի անձնական քաղաքագիտութեան դէմ եղող-
 ներուն մէջ էին նաև Կլատտոն, Գոպտըն, Սիր - Ռու-
 պըրդ Փիլ, Սիր Ռելլեամ Մոլտուորդ, Սիանէյ Հէ-
 պէ: Փալմէրսդըն վսեմ բեմախօսութեամբ մը ցուցուց
 որ իրեն համար ինչ սրբազան պարտք մ'էր անգղիացի
 յետին հպատակն անգամ պաշտպանելու օտար եր-

կիրներու մէջ և որովհետև ամենուն մտաց մէջ Տօն Փաշիֆիքօ իր անկողնոյն չքեղկահկարասիքով ծիծաղաշարժ անձ մը դարձեր էր, ինքը այս թերութիւնը իրեն ի նըպաստ առաւ բողոքելով, որ թէ անձ մը արհամարհ է, եղկելի է և մինչև ծիծաղական, ինքը սակայն պարտական չէր գայն պաշտպանելու որ անգղիական դրօշուն ներքև ապաւիններ էր: Արդեօք իր խեղճութիւնը կամ ազգի և կրօնքի տարբերութիւնը հրաման կուտան զինքը նախատելու. « ինչպէս երբեմն կայանաւորեալ հռովմայեցի մը ազատ էր՝ երբ ըսէր միայն Հոմարտի Ե՛, այսպէս նաև բրիտանական հպատակ, որ երկրի մէջ ալ ըլլայ վստահ պէտք է ըլլայ որ Անգղիոյ անքուն աչքը և հօր զէնքը զինքը կը պաշտպանէ ամենայն անիրաւութեանց և նախատանաց դէմ»: Մեծ եղաւ այս յետին բանից ազդեցութիւնը: Հինգ ժամ շարունակաբար խօսեր էր: Կլատսպոն կ'ըսէ որ վերջալուսէն քիչ վերջը սկսաւ խօսքը և լմնցած ժամանակ արշալոյսը սկսեր էր:

Հակաճառութիւնք տակաւին չորս գիշեր տևեցին՝ յորում խօսեցան նշանաւոր և հռչականուն ճարտասանք: Եւ հուսկ առաջարկութիւնը ընդունելի կ'ըլլար 46 քուէից առաւելութեամբ, ի մեծ յաղթանակ պաշտօնարանին: Փալմէրսդընի պաշտպանողաց մէջ առաջին տեղին ունեցեր էր Գոքպըրն՝ որուն¹ նման ոչ ոք բեմախօս այսպէս փութով և կատարելապէս համբաւ ստացաւ: Իր գմայլեցուցիչ խօսից հետ կը միացընէր նաև պայծառ, անոյշ և թափանցիկ ձայն մը և շնորհալից ձև մը:

8. Մահ Ռոպըրդ Փիլի: — Սակայն այս չքեղ և պանծալի պայքարաց վրայ սև քօղ մ', ձգեց Անգղիոյ

1. Գոպտըն կը յիշատակէ, որ երբ Գոքպըրն լմնցուց իր խօսքը խօսարանին նստարաններէն կէսէն աւելի պարպուեցան, շատ մը յարգոյ երեսփոխաններ իրենց և ուրիշներուն գրասեղաններուն վրայէն ցատքելով կը վազէին յարգոյ և ուսեալ պերճախօսին ձեռքը սեղմելու: Փալմէրսդըն Գոքպըրնի խօսածը « հրաշակերտ » մը կոչած է « a first-rate performance »:

Համար աղիտալի պատահար մը: Այս առթիւ Ռուսերդ Փիլի խօսած ճառը յետինն պիտի ըլլար բրիտանական Խօսարանին Համար: Ընտանիքի ղեկավար լինելու փոխարէն ձեռնարկէին Յունիս 29ին առաւօտը, և երեկոյեան դէմ երբ Ռուսերդ Փիլ Համաշխարհական Յուցահանդիսին ժամանակ ժողովքէ մը կը դառնար, ձին խրտելով Փիլ վար ինկաւ և կրած հարուածքը ամէն դարմանէ և խնամքէ ապստամբ մնալով, յետ տառապելու երեք օրուան մը շտի, Յուլիսի 2ին գիշերը վախճանեցաւ, չըջապատեալ բոլոր իր ընտանիքէն, սիրելի բարեկամներէն, և քաղաքիտական զինակիցներէն: Ուէլլինկթոնի խօսած դամբանականը լորտերուն խորհրդարանին մէջ և Կլատտոնին Հասարակութեանց Խօսարանին մէջ՝ կը յայտնէին ազգին ամենամեծ սուգը: Պատիւ մը չմնաց զոր Խօսարանը և Հայրենիք շուգէին ընծայել Փիլի յիշատակին, սակայն ինքը արդէն կը տակաւ փափագած էր թաղուելու իր Հայրենական գերեզմանին մէջ հօրը և մօրը քով և ի զուր փափագեր էին ամէնը չքեղ դամբանատուն մը կանգնել ի Ուէլլինկթոնը: Պետութիւնը առաջարկեց Փիլի տիկնոջ իր որդւոյն յաջորդական ատենակալի աւագութեան բարձ մը, սակայն Տիկին Փիլ ծանոյց որ իւր ամուսնոյն չքեղ անուանակոչութենէն զատ ուրիշ անուն չէր կրնար կրել, և արդէն Փիլ պատուիրած էր որ ոչ ոք յընտանեաց և յորդուց վարձատրուի հօրը ծառայութեանց Համար: Փիլի վսեմ զգացմանց ասկէ աւելի մեծ գովեստ մը անկարելի է ընծայել, և թէպէտ իր հակառակորդացմէ ոմանք Փիլի այս զգացումը Համարեցան շնչեալ առ նախատինս լորտերու, բայց Հասարակաց կարծիքը և իր կեանքը զինքը ցըցուցին որ իր փափագն էր իրեն որդիքն ալ Հայրենեաց արժանաւոր դաւակունք պատրաստելու: Ռուսերդ Փիլ առանց արտաքոյ կարգի Հանճար մը ունենալու, ամենամեծ յատկութիւնք ունէր վարչութեան մը զուր կենալու, ուրիշ նպատակ մը չունենալով բայց եթէ Հայրենեաց բարութեան ծառայութիւնը, յարգելով ամենայն աղէկ կարծիք եթէ և յօտար կուսակցութեանց,

անոր համար արդարև « իր մահը, կը գրէր Փայմէրսդըն առ իւր եղբայրը, մեծ դժբաղդութիւն մ'էր, և բնաւ հաւասար մը չէր կրնար ունենալ » :

9. Հռովմէական Եկեղեցի յԱնգղիա : — Անգղիոյ ներքին մեծ յուզումն պատճառեց կարևոր խնդիր մը, որ դարերէ ի վեր լուսժ կը համարուէր : Ուղղափառութեան անճշտութիւնը յԱնգղիա և շատ դարձերուն պատճառաւ Պիոս Թ. ուզեր էր հաստատապէս եպիսկոպոսութիւնք հաստատել յԱնգղիա և զՎայգման եպիսկոպոսը փոխանորդ առաքելական յԱնգղիա՝ արքեպիսկոպոս անուաներ էր Ուէսդմինսդրի՝ իրեն աթոռ ունելով զՎոնտոն : Վայգմանի անունը մեծահռչակ ծանօթ էր յԱնգղիա նախ իր անուական սերնդեամբ յԷսսէքս ցեղէ, երկրորդ՝ արևելեան լեզուաց հմուտ ուղեշուքեամբ և ընտիր գրութեամբք¹ : Այժմ իրեն Ուէսդմինսդրի արքեպիսկոպոս անուանուիլը մեծապէս զայրացուց զանգղիադաւանս, որոնք Հենրիկոս Ընն ի վեր բնաւ չէին ներած որ ուղղափառ եպիսկոպոս մը Անգղիոյ բարձր եպիսկոպոսութեան թեմական անուն մը կրէ, նա մանաւանդ որ այս եպիսկոպոսը միանգամայն ծիրանաւոր էր : Ամբոխը գրգռեալ ի մոլեռանդն նորադանդից մեծ յուզումն յարոյց քաղաքին մէջ, բազմաթիւ անձանց թափօր մը ուղղուեցաւ դէպ ի կիւհրապարակը ուր այրեց աղմկալից յուզմամբ Քահանայապետին և Վայգման ծիրանաւորին պատկերները, թափօրը կը ներկայացընէր զՔահանայապետը, զծիրանաւորը և Սրբաքննութեան ատենը, և այս բանիս համար, կ'ըսէ անգղիադաւան գրիչ մը, անբաւ դրամ ծախք եղաւ : Վարչութեան ընդդիմակալք ջանացին օգնել յուզման յուսալով ասով պաշտօնարանին անկումը, զոր իբրև հռովմէական մասին միտող կ'ամբաստանէին, ամէնը կը պատրաստուէին Խօսարանին բացման, որուն նիստերը Փետրուար 4ին ինքնին անձամբ բացաւ թաղուհին, պատկի ճառին մէջ յայտնի

1. Վայգմանի է Փոքիւլ-Քրիստոնէութեան առաջին դարերուն ընտիր պատմական վիպասանութիւնը թարգմանեալ ևս ի հայ :

ապահովցուց իր հպատակները որ « թէպէտ օտար Պէտուժեան մը եկեղեցական տիտղոսներու համար յուզումն ծագեր էր իր երկրին մէջ, սակայն ինքը պիտի ջանար հաստատապէս պահելու իր թագին իրաւունքները և ազգին ինքնիշխանութիւնը ամէն արգելից դէմ, ուսկից որ անոնք յառաջ գան : Մի և նոյն միջոց յայտնեցի իմ՝ առաջին փափագս և հաստատուն որոշողութիւնս, Աստուծոյ օրհնութեամբք, անկորուստ պահելու հայրենեացս, ժողովրդեան այսպէս ցանկալի կրօնական ազատութիւնը » :

10. Հրովարտակ ընդդէմ Հուովկէսկան եկեղեցւոյ պատուանուանց : — Որչափ որ թագուհին Պասկի ճառին մէջ այսպէս յայանի կը ցուցունէր իր կամքը, բայց առ իր հօրեղբայրը գրած նամակին մէջ կ'ըսէր որ թէպէտ ինքը բոլորով սրտիւ բողոքական, սակայն բռնաւ չէր կրնար այնպիսի քայլ մը ընել որով ինքը կրօնամոլ մը երևայ աններող ուրիշներուն, որով և անիրաւի իրեն շատ մը հոովմազաւան բարի և անմեղ հպատակաց : Նոյն մտածութեան վրայ էր նաև Փարմէրսդրն : Քիչ օր վերջը եռանդագին վիճարանութիւնք սկսան, և երեք օր վերջը Վորա ճօն Ռուսարլ հրովարտակ մը առաջարկեց, որով յանցաւոր կը համարուէր ով որ համարձակէր Հոովմէական եկեղեցիէն ընկալեալ տիտղոս մը գործածել յԱնգղիա, և հարկ էր տուգանել 100 ստէրլին : Խորհրդարանին մէջ Փարմէրսդրն, Ռէօպլք, Պրայթ և Տիգրաէլի գայն նախասական և արհամարհ առաջարկ մը համարեցան : Այլ և այլ գիշերներ տեւեցին պայքարք . ընդդիմակացից մէջ անուանի պայծառացան կրօնական ազատութեան պաշտպանք, Սըր Ղէմս Կրէմ, Կլատտոն, Գոպտըն, Պրայթ, Ռատենտըր Փամըր, յետոյ լորա Սիպրըն, ինչպէս նաև Իռլանտացի ուղղափառ երեսփոխանք : Առաջարկը ընդունելի եղաւ 395 քուէիւք, ընդդէմ 63ի :

Որչափ որ ալ վարչութիւնը սպառնացաւ կրօնական պատուանուն գործածողաց յԱնգղիա, բայց նոյնը չէր կրնար ընել Իռլանտիոյ համար, ուր շատ ա-

տենէ ի վեր ուղղափառ գասակարգութիւն մը կը շարունակէր նոյն իսկ պետութեան թոյլտուութեամբ, և պաշտօնեայք անհնարին կը համարէին սոսանձին օրէնք մը դնել Անգղիոյ և առանձին օրէնք մը Իռլանտիոյ համար: Հասարակութեանց Խօսարանին մէջ ալ եռանդուն և մինչև մոլեգին պայքարք ծագեցան, « յիրաւի կ'ըսէ, անգղիացին Մրբ Քարթէյ, մեծամասնութիւնը օրէնքին կողմն էր, սակայն Խօսարանին ամէն նշանաւոր անուանիցի ոմանք և պերճախօս հուետորք կը հակառակէին և կը դատապարտէին զայն »: Այս առթիւ ոմանք Իռլանտական խնդիրը իրենց պատրուակ առնելով նոր խումբ մը յարուցին Խօսարանին մէջ, որ կոչուեցաւ « Խումբ Պապական համարձակութեան »¹, և որ հաւասարապէս անսիրելի մնաց թէ ուղղափառ Իռլանտացուց և թէ բողոքականաց: Իրենց գլուխն, էր երբեմն հօշակեալ, ձօն Սիտլէյ աջողակ և հնարիմաց երեսփոխանը, որ իր կողմը շահեր էր նաև մէկ քանի բարեբարոյ միամիտ անձինք ալ և կը կարծէր Իռլանտական խնդրոյն նոր մղումն տալով իշխանութեան հասնիլ, սակայն յետոյ երբ իր զանազան նենգութեանց համար պիտի բռնուէր, ինքզինքը սպաննեց, և իր եղբայրն ալ որ միշտ նենգակից գտնուէր էր, Հասարակութեանց Խօսարանէն մերժուեցաւ:

Եկեղեցական շրջվարտակին վերաբերեալ պայքարք ընդհատուեցան յանկարծ ուրիշ խնդրով մը, որ Պաշտօնարանին հրաժարելուն պատճառ եղաւ: Տիրաւէյի Ազատ վաճառականութեան առաջարկութիւն մը բրաւ որ հազիւ 40 քուէից մեծամասնութեամբ անցաւ: Քիչ օր վերջը Լոք քինկ երեսփոխանը առաջարկեց որ Հասարակութիւնք ունենան կոմսութեանց առանձնաշնորհութիւնքը: Լորա ձօն Ռուսսըլ ընդդիմացաւ առաջարկութեան և վարչութիւնը յաղթուեցաւ 100 քուէով ընդդէմ 50 ի: ձօն Ռուսսըլ իր հրաժարականը զրկեց թագուհւոյն և թագուհին կուշեց զԼորա Սգանլէյ յետոյ Լորա Տէրպի. որ փոր-

1. The Papes Brass Band.

ձեց նոր պաշտօնարան մը կազմելու, մեծամասնութեամբ ճօն Ռուսսըլի և Փիլեանց: Այսպէս կը կոչուէին անոնք որոնք հեակոյք էին Սըր Ռոպէրդ Փիլի: Բայց Փիլեանք չէին յանձն առնուր պաշտօնարանին մէջ մտնալ եկեղեցական հրովարտակով և ճօն Ռուսսըլ չէր ուզեր առանց անոր պաշտօնարան մտնել. միանգամայն Փիլեանց գլուխը Լորտ Ապըրտին յանձն չէր առնուր ինքը պաշտօնարան մը կազմել, գիտնալով որ երկրին ընդհանուր զգայմունքը կողմնակից էր հրովարտակին: Լորտ Սդանլէյ ապարդիւն տեսնելով իր ջանքը՝ հտ քաշուեցաւ: Անգլիոյ վարչութիւնը տարակուսեալ վիճակի մէջ էր, երեք կուսակցութիւնքն ալ Ազնուապետականք, Պաշպանողականք և Փիլեանք չէին գոհացըներ մտքերը: Թագուհին կոչեց Ուէլինկթոնի դուքսը և զԼորտ Լանտարով, բայց ի զուր. պաշտօնարանը որ արդէն կը շարունակէր ի գործառնութեան, նոյն ֆորձով մնաց անխախուտ և պաշտօնեայք տեղերնին դարձան և նորոգեցին Եկեղեցական պատուանուանց հրովարտակը: Ընդդիմակացք կրկին բորբոքեցան ընդդէմ պաշտօնարանին. Իռլանտացի եօթանասուն ուղղափառ երեսփոխանք հրաժարեցան նիւ տերուն ներկայ գտնուելէն, և յետ պերճախօս և հզօր բողոքանաց Ալատսդոնի ընդդէմ հրովարտակին իրը և ոչնչացուցիչ կրօնական ազատութեան մեծ սկըզբան, հրովարտակը երրորդ անգամ կարդացուեցաւ և անցաւ ի մեծ գոհութիւն ճօն Ռուսսըլի որ այս առթիւ թշնամի ուղղափառաց և կրօնական ազատութեանց տիտղոսը ընդունեցաւ: Ապա անցաւ դիւրաւ Լորտերուն Խորհրդարանէն և քիչ վերջը ընդունեցաւ թագաւորական ստորագրութիւնը: Այսու հանդերձ արդիւնք մը չտեսնուեցաւ և ժիրանաւոր Արքեպիսկոպոսը շարունակեց կոչել անպատուհաս ինքզինքը արքեպիսկոպոս Ուէսդմինսթրի, նոյնը ըրին նաև յայտնապէս Իռլանտացի եկեղեցականք մինչև նաև առ պաշտօնեայս թղթոց մէջ¹:

1. Յամին 1871 ամբողջովին վերցուեցաւ այս հրովարտակը:

1851
Մարտ 4.

11. Յուզահանդէս Համազգային : — 1851 տարին նշանաւոր է Անգղիոյ՝ առաջին Համազգային Յուշահանդիսին համար ի Լոնտրա ի Հայտ Փարբ, ուր յԱրևելից և յԱրևմտից ամէն սուղագրիմեր էին իրենց յառաջադիմութիւնը ցուցունելու և վարձատրուելու իրենց ջանից համար : Յիրաւի ըստ վկայութեան նոցին իսկ Անգղիացոց 1851ին Յուշահանդէսը ստորին կը մնար քան զերկուս Յուշահանդէսս, որք եղան յետոյ ի Բարիզ յամին 1867ին և 1878ին. բայց Լոնտրայինը տակաւին առաջին ըլլալով ընաւ պիտի շմոռցուի իր ունեցած մեծ ազդեցութիւն զայն այցելուաց վրայ : Յուշահանդիսին բացուելով Լըրոպա կը համարէր փակել Յանսսի տաճարին դռները և խաղաղութեան պարագայք սկսիլ, սակայն ընդհակառակը եղաւ :

Յուշահանդիսին գաղտփարն ունեցաւ նախ Ամուսին-իշխանն Ալպէրդ, որ յետ յաղթելու մեծամեծ դժուարութեանց և ընդդիմութեան, ինքնին գլուխ կեցաւ գործոյն և զայն պսակեց և հնարարուեալ տարտար մը Փէքդըն՝ բիւրեղեայ հրաշալի պալատը կառոյց ի Հայտ Փարբ որ ըստ գրելոյ Փալմէրսդընի, « թերևս չքնաղագոյն և զարմանալի էր քան զնոյն իսկ Յուշահանդէսը », զոր մեծաւ չքով բացաւ թագուհին անհամար բազմութեան առջև Մայիս 1ին և Հոկտեմբեր 5ին զայն գոցեց իշխանն Ալպէրդ¹ : Բիւրաւոր օտարազգիք յամենուսս գիմեր էին ի Լոնտրա կամ տեսնելու և կամ իրենց ճարտարութիւնքը դնելու, քաղաքը ամբողջ այն ժամանակը տօնախմբութեան կերպարանք մը ունէր և

1. Այս առթիւ թագուհին պարզ և ընտիր նախակ մը գրած է, որ յետ գովելու իր սիրելի ամուսնոյն փառաւոր մտածութիւնը և Յուշահանդիսին չքեղութիւնը, կը վերջացրնէ լուելով. « Երբէք պիտի չմոռնամ այն ամենամեծ խնդութիւնը, ծաղիկները, ծառերը, արձանները և աղբիւրները, երաժշտութիւնը կազմեալ երկու հարիւր գործիքներէ և 600 ձայներէ, և իմ սիրեցեալ ամուսինս կարգադիր այս խաղաղութեան հանդիսին, որ բոլոր աշխարհիս ճարտարութիւնքը ի մի կը հաւաքէ : Աս-

իշխանն Ալպէրդ կրնար գոհ ըլլալ իր մտածութեան
այսպիսի չքեղ ելից համար, որ ապագային ունեցաւ
իրեն արժանաւոր հետեւողք և նախանձորդք ի Բարիկ,
Վեննա, Փիլատեւիփիա, Մէլպըրն, Չիքսկօ:

տուած օրնն: Իմ սիրեցեալ Ալպէրդս, Աստուած որ ինքզինքը
այսպէս մեծ ցուցուց այսօր: Պէտք է ամենայն ոք երախտա-
պարտ ըլլայ մեծին Աստուծոյ, որ յամենայնի կ'երեւայ և զա-
մենայն կ'օրննէ:



ՓԱԼԱՄԵՐՍԻՐՆ ԵՒ ՎԻԿՏՈՐԻԱ

1. Փալմէրսդըն. — 2. Գժտութիւնք ընդ Վիկտորիա թագուհին և ընդ Փալմէրսդըն. — 3. Լորտ Փալմէրսդըն և Քոչուլթ. — 4. Լորտ Փալմէրսդըն և Լուի Նաբուլէոն նախագահ. — 5. Փալմէրսդընի նրաժարիլը. — 6. Տէրպի պաշտօնարան. — 7. Տիգրաէլի — Վիպասան նոստոր և երգիծաբան. — 8. Տիգրաէլի պաշտօնեայ գանձուն. — 9. Մահ Ուէլլինկիթըն դքսին. — 10. Պաշտպանողականաց պարտումը ի խօսարանի. — 11. Տիգրաէլի և Կլատուդոն նահառակընդդէմք. — 12. Կլատուդոն — Եկեղեցւոց և Պետուլթեան մէջ յարաբերութիւնք — Կլատուդոն պաշտօնեայ. — Ճառ Էլեմոնից իւր նոստորական նանւարր:

1. Փալմէրսդըն: — Ռուսները Փիլի մեռնելով Անգլիոյ քաղաքագիտաց մէջ ամենէն դօրաւոր ազդեցութիւնը Փալմէրսդընի մնացեր էր: Հաստատամիտ էր Փալմէրսդըն և սիրող մեծամեծ գործառնութեանց, վստահ անձին վրայ և գործունեայ, և սիրող վաստակելու արտաքին պաշտօնարանի տեսութեանց. քան զամենայն ժամանակակից պաշտօնեայս, միանգամայն մեծ յարմարութիւն ունէր ճանչնալու թէ՛ արտաքին քաղաքագէտքը և թէ՛ լեզուները: Թերևս իր գաղափարքը չէին այնքան ազատականք ինչպէս Ղօն Ռուսսըլինը, բայց իր եռանդուն և գործունեայ բնաւորութեամբ կողմնակից երևցաւ 1848ի յեղափոխական դուրսը եղած յուզմանց¹, մինչ ներքին վարչութեան մէջ մեծա-

1. Սոփորական ձև մը դարձած էր ժամանակին Գերմանիոյ բարձրագոյն պաշտօնէից բերանը. « Եթէ սատանան որդի մը ու-

պէս պաշտպան երեցաւ պահպանողութեան և հակառակորդ նորոգ բարեկարգութեանց, որով և Անգղիոյ ազատականք իրենց մեծ արգելք կը տեսնէին զՓալմէրսդըն: Իւ սակայն Փալմէրսդըն իր պահպանողական գաղափարաց մէջն անգամ ազատ էր և ինքնիշխան և բնաւ հոգ չունէր ծածկելու իր մտածութիւնքը. աւանց խնայելու իր կատականաց նիւթ կ'առնուր վառվառն խօսից մէջ հակառակորդքը, որով և բազմաթիւ թշնամիներ ունեցաւ. թէ ի խորհրդարանս և թէ օտարազգի պաշտօնէից մէջ, որոնք կ'ամբաստանէին զանգղիացի պաշտօնեայն զիրենք նուաւորացընող թէ ժողովրդեան և թէ թագուորաց առջև: Ըստ Փալմէրսդընի պաշտօնեայ մը հարկ էր փութով մտածէ և գործէ, և սկարամիտ մինչև անմիտ կը համարէր զանոնք որոնք պատրաստ որոշողութիւն մը չունէին: Իր որոշողութիւնքը պատրաստք էին և ըստ իրեն հարկ չկար անոնց վրայ վիճարանել, որով և փութով պէտք էր գործադրել. և սակայն այս յետին իւր կարծիքը պատճառ եղաւ մեծամեծ զժառութեանց ընդ ինքն և ընդ թագուհին:

2. Գժտուեթիւն ընդ վիկտորիա թագուհին եւ ընդ Փալմէրսդըն: — Ամուսին իշխանը, որուն խորհրդոց բունականապէս կը հեռուէր թագուհին, բնութեամբ հանդարտ էր և բնաւ կարծիք մը չէր ըսեր մինչև որ նախադէկ մը վրան շմտածէր. Լորտ Փալմէրսդըն իրրև Արտաքին գործոց պաշտօնեայ շատ անգամ հեռագիրներ կ'ընդունէր և պատասխանները կուտար անմիջապէս ասանց հարցընելու զթագուհին կամ իւր ընկեր-

նենար, ապահովապէս Փալմէրսդըն պիտի ըլլար»: Աւստրիոյ պահպանողական մասը նոյնպէս կը համարէր որ 1848ի ամին յուզմանց կ'իտիւներուն պատճառը Լորտ Փալմէրսդըն է իւր անաոր ազատասիրութեամբ. և այս «անհանդարտ և չար» ոգւոյն համար, ինչպէս կը կոչեն, շատ էջեր լեցուած են Մէգէուերի Յիւլ-Կարլ-Վոլֆ-Վոլֆ մէջ. մինչև կ'ամբաստանուի որ Լորտ Փալմէրսդըն կարծես կ'ուզէ կենդանացնել Լուզովիկոս Ժ'ի Խօսքը՝ «Պետութիւնը՝ իյս եմ»: Զտ. Բ:

ները: Եւ երբ հարկ էր երբեմն անոնց կարծեաց ըստ
պատելու, մեծապէս կը գանգատէր որ ամենակարևոր
խնդրոյ մը վրայ այսպէս կը յապաղէին պատասխա-
նելու: Ապանիական ամուսնութեան խնդրոյն մէջ, ըստ
իւր կարծեաց, եթէ ինքը հուսկ չաճապարէր, ամե-
նամեծ միտս պիտի հասնէր անգղիական շահուն: Կը
պահանջէր՝ որ երբ միանգամ յայտնի էր քաղաքագի-
տութեան բռնելիք ընթացքը, Արտաքին գործոց պաշ-
տօնեայն կրնար ինքնին կատարել իւր պարտքը և հարկ
չկար, որ ամէն թղթոյ բեկոր դեռ զԱնգղիա չթողու-
ցած թագուհւոյն ստորագրութիւնը ընդունի, և որով-
հետև իւր այս պահանջից զիջումն չկար, անոր հա-
մար ինքը կ'ուզէր համարել որ ներկայ պաշտօնէին իր
պաշտաման անյարմարութենէն ըլլայ և կ'ըսէր որ
պատրաստ էր հրաժարելու, որպէս զի իւր տեղը աւելի
կարող անձ մը գրուի:

Եւ սակայն թագուհւոյն արտունջը այն չէր որ ի-
րեն ստորագրութեան չէին բերուեր դուրս զրկուած
թղթեր, այլ թէ ներկայ քաղաքագիտութեան մէջ Աորտ
Փարմէրսդըն սովոր էր ինքնին անձնիշխանաբար գոր-
ծել, և թէ ինքը բնաւ պարտականութիւն մը չունէր
այսպիսի քաղաքագիտութեան մը տալ իր հաւանու-
թիւնը, երբ բնաւ տեղեկութիւն չունէր: Թագուհին
իրաւունք ունէր գանգատելու: ՅԱնգղիա թագաւոր մը
եթէ պաշտօնեայ չէ, սակայն գլուխէ պաշտամանց, և որ-
չափ որ չկրնար մերժել Հասարակութեանց Խօսարանին
բնտրած պաշտօնեայ մը, սակայն կարող է դայն ձգել երբ
պակսի իր պարտուց մէջ: Պաշտօնեայք և պաշտօնարանք
կը փոխուին ստէպ՝ այլ թագաւորութիւնը իր մշտամնա-
յութեամբ մշտնջենաւոր պաշտօնարան մը կը կազմէ,
աւանդապահ պետութեան շահուց և իբր փորձաքար
մը: Աորտ Փարմէրսդըն շատ անգամ այնպէս կը գոր-
ծէր իբրև թէ ամենևին իրմէ բարձր իշխանութիւն
չըլլար. առ այս բերեալ էր մանաւանդ ոչ իր անհամ-
բեր և վառվռուն բնաւորութենէն, որչափ ևս զի գը-
թագուհին և զԱմուսին իշխանը 1848ի յուզմանց մէջ
համակրող կը ճանչնար առ իշխանս և թագաւորս:

մինչ Անգլիոյ ժողովուրդը աւելի յեղափոխականաց կողմն էր, և Փալմէրսդըն կը փափագէր առ Արտաքինս՝ Անգլիոյ ժողովրդեան կամաց թարգմանն ըլլալ քան Ալբերտ իշխանին :

Թագուհին 1849ին սկիզբները ստիպուեցաւ իրեն յիշեցընել տալու, որ Արտաքին գործոց պաշտօնարանը սահմանադրապէս ներքոյ անկեայէ Առաջին պաշտօնէին քննութեան, որով և ամենայն պատճէնք հարկ էր անցնէին Լորտ Ըօն Ռուսսըլի ալ ձեռքէն: Լորտ Ըօն Ռուսսըլ հաւանեցաւ այս միջին ճամբուն. պատճէնք փութով պիտի հաղորդուէին այսպէս Թագուհւոյն, որ արագ պատասխան մը պիտի տար, ստով առ ժամն կը համարուէր որ տարածայնութիւնը վերցուած ըլլայ: Բայց քիչ ժամանակուան համար. Լորտ Փալմէրսդըն, որ արագապէս իր խորհուրդը կը կազմէր, շէր կրնար Ապէրդ իշխանին հանդարտ և ծանր մտածութեանց սպասել. նոր առիթներ ծագեցան և խնդիրը առաջուան կերպարանքը ասու: Փալմէրսդըն զանց կ'ընէր նոյն իսկ հաղորդելու իւր ընկերաց: Իշխանը թագուհւոյն կողմանէ գրեց առ Լորտ Ըօն Ռուսսըլ, արտնջելով Լորտ Փալմէրսդընի ընթացից վրայ, « որ կը պակսէր իր պարտուց մէջ առ թագուհին՝ աննման անհոգութեամբ և յամառութեամբ, ընդդէմ ամենայն ջանից իսկ թագուհւոյն »: Ասով ալ գոհ չըլլալով, թագուհին ծանր յուշարար մը գրեց առ առաջին պաշտօնեայն, որով կը պահանջէր Ա. որ թագուհին շտորագրած պէտք է գիտնայ ամենայն ինչ. Բ. ստորագրութենէն վերջը բնական պայն պիտի չկարենայ փոխել Արտաքին գործոց պաշտօնեայն, պիտի ծանուցանէ ինչ որ կ'անցնի իր և արտաքին պաշտօնէից մէջ: Պիտի հաղորդէ ժամանակին ամենայն պատճէն և ժամանակ պիտի տայ անոնց պատասխանելու, և կը վերջացընէր. « Թագուհին կը խնդրէ զԼորտ Ըօն Ռուսսըլ, ցուցունելու այս թուղթը Լորտ Փալմէրսդընի »:

Յայտնի է այս թղթոյն ըրած ազդեցութիւնը Արտաքին գործոց պաշտօնէին վրայ, նա մանաւանդ որ կը հասնէր իր պաշտօնէութեան չքեղ յաղթանակաց

միջոց, երբ Տօն Փաշիֆիքոյի խնդրոյն առթիւ մեծ յաղթանակ մը կը տանէր Հասարակութեանց Խօսարանին մէջ. և թէպէտ կրնար ցուցունել փոխադարձ իր գանգատները և իւր պատճառքը, սակայն անգղիացի սահմանադրական ճշգրիտ հպատակութիւն և ազնուութիւն ցուցուց յանդիմանութիւնը ընդունելու և ղանակին մէջ. գրեց ևս առ Ղօն Ռուսարլ, իմացընելով խնդրոյն էութիւնը, վրայ բերելով որ սակայն ինքը պատրաստ էր ամենայնիւ գոհ ընելու իւր թագուհին, միայն թէ իրեն պաշտաման մէջ աւելցուին մէկ երկու սպասաւորք ալ գործոց երազութեան համար: Իր հպատակութիւնը յառաջ ևս մղեց. ունկնդրութիւն մը խնդրեց Ալպէրդ իշխանէն, և իրեն յայանեց զգայուն բացասութեամբք, իր մեծ վիշտը և ցաւը որ իրեն դէմ ամբաստանութիւնք կ'ըլլային իբրև հակառակորդ իւր Թագուհւոյն. « բայց, կ'ըսէ անգղիացի պատմագիր մը, բնաւ չխօսեցաւ Արտաքին գործոց պաշտօնէութեան մէջ իւր բռնած դրութեան վրայ »:

3. Լորտ Փալմէրսդէլն եւ Քոչուլթ: — Խնդիրը այս վիճակի մէջ էր երբ ուրիշ պարագաներ վրայ եկան: Ծանօթ է մեզ Մաճառաստանի գլուխ ամբաստանը և Ռուսաստանի միջամտութեամբ ընկճուելը, և բուլոր պատերազմին գլխաւորաց ցրուելը ի Տաճկաստան, յԱսիա և ի Միացեալ Նահանգս: Անգղիոյ ժողովուրդը մեծ կարեկցութեամբ կը դիտէր Մաճառաց վիճակը և երբ իմացուեցաւ Քոչուլթի յԱնգղիա գալուստը, պատրաստուեցան զինքը չքով ընդունելու, նա մանաւանդ որ Վաղղիա մերժեր էր իր երկրէն անցքը: Եւ յիրաւի Անգղիոյ ժողովուրդը թէ ի Սուդէմիդըն, ի Պըրմինկէմ և թէ ի Լոնարա այնպիսի եռանդով և չքով ընդունեցաւ զՔոչուլթ, որպիսի ընդունած չէր Նոր դարուս մէջ օտար մեծ անձ մը, ի բաց առեալ զՎարիպալտի: Քոչուլթ իր բնական ձրից վրայ կ'աւելցընէր նաև անգղիարէն անոայթաք և քաղցրահընչիւն խօսակցութիւն մը: Փութով առիթք ընդ առաջ ելան և իր հայրենասիրական փառփոռն ճառախօսու-

թիւնք, յորս ստէպ հարկ էր որ ընդդիմանար Աւստրիոյ և Ռուսիոյ, վառեցին բոլոր անզղիացի միտքերը: Աւստրիացի քաղաքագէտք մեծաւ տհաճութեամբ զայս կը նկատէին, բայց Փալմէրսդըն արհամարհանօք մը կը դիտէր Աւստրիոյ երկիւղը. յայտ է որ անզղիացի ժողովուրդը ոչ երբէք Քոչուլթի հետ միացած պատերազմի պիտի երթար ընդդէմ Աւստրիոյ, և ի դուր էր Աւստրիոյ կարծելը որ այս չքեղ ընդունելութիւնը հրատարակութիւն մ'էր պատերազմի: Այս երկիւղը աւելի սաստկացաւ երբ լսուեցաւ, որ Քոչուլթ Արտաքին գործոց պաշտօնէին այցելութեան պիտի երթայ ի շնորհակալութիւն իւր և իր ընկերաց ըրած սիրալիր ասպնջականութեան:

Աւստրիոյ դեսպանին հրամանն եկած էր այցելութիւնը կատարուելուն պէս թողուլ զԱնզղիա: Դոյն իսկ Փալմէրսդընի ընկերները տագնապի մէջ էին, Լորտ Ջօն Ռուսսըլ խուճապով Պաշտօնարանը ժողովքի կանչեց, և Փալմէրսդըն հաւանեցաւ ընդհանուր սարսափը փարսաւելու. համար այցելութիւնը զանց ընել տալ¹: Այսու հանդերձ նորանոր ժողովրդական գումարուլներ խմբուեցան յայտնելու իրենց սէրը առ Քոչուլթ և շնորհակալութիւններն առ Փալմէրսդըն, որ իր ազդեցութեամբը ազատեր էր զՔոչուլթ Աւստրիոյ մատնելէն: Դուրսկուլթիւն մը պատրաստուեցաւ տանելու շնորհակալութիւնը առ Փալմէրսդըն, որ յանձն առաւ ընդունել զայն յԱրտաքին գործոց պաշտօնարանը: Յայտնի է, որ այսպիսի ցոյցերը ինչ մեծ տագնապի պատճառ էին Լորտ Փալմէրսդընի ընկե-

1. Անզղիացի պատմագիրք գրելի է առ նասարակ Փալմէրսդընի այցելութիւնը ընդդէմ քաղաքագիտութեան չեն դատեր, նախ որ Քոչուլթ ներկայապէս վարչութեան մը անձ չէր, և թէ ազատ էր Անզղիոս որ և իրէ անձ մը ընդունել մինչդեռ խոստումն չկայ: Իւր կը հաշուեն որ երբեմն Նաբուլիի թագաւորը, երբեմն Հաննովրի թագաւորը Տօն Գարլուս և ուրիշ բազում այսպիսի անձինք, զանազան անգամ այց էլած են եթէ պաշտօնէից և եթէ թագուհոյն:

րաց և ինչ տհաճութեան առիթ թագուհւոյն և Ալբերդ իշխանին: Թագուհին ուզեց որ Պաշտօնարանը գումարուի դասելու այս գործերը, Լորտ Ռուսարը առաջարկեց իւր ընկերաց խնդիրը. և ընդհանուր ամէնն ալ անխոհեմ վճռեցին Լորտ Փալմէրսդընի գնացքը. այսու հանդերձ մասնաւոր որոշողութիւն մը չեղաւ: Լորտ Ղօն Ռուսարը գրելով իւր ընկերաց կարծիքը առ թագուհին կը յուսար, « որ մեծ ազգեցութիւն պիտի ընէր Լորտ Փալմէրսդընի վրայ, որուն ինքն ալ նամակ մը կը գրէր խոհեմութեամբ գնալու Եւրոպիոյ քաղաքագիտութեան այսպիսի դժուար ժամանակի մէջ »: Բայց դեռ նամակը չգրած, ուրիշ նոր պարագայ մ'ալ կը ներկայանար, և յորում Լորտ Փալմէրսդըն իր եռանդուն բնաւորութեամբ կանխելով քան զիւր ընկերս, մեծամեծ տապնապներու և յուզման պատճառ կ'ըլլար Անգղիոյ վարչութեան:

4. Լորտ Փալմէրսդըն Կ. Լուի Նաբուլէոն: — Լուի Նարոլէոնի պետական հարուածին լուրը փութով ասուրածուեր էր ի Լոնարա. որչափ որ իշխանը ծանօթ էր Անգղիոյ, բայց այսպիսի բռնական միջոց մը և Պուլվարներուն սրիւնահեղութիւնը սնախորժ ազգեցութիւն մը ունեցեր էին Անգղիոյ ժողովրդեան վրայ: Թագուհին մասնաւորապէս կը տագնապէր որ չըլլայ թէ Անգղիոյ դեսպանը հաւանութեան նշան մը տայ, և Գեկտեմբեր 4ին թղթով մը առ Լորտ Ղօն Ռուսարը կը պատուիրէր, որ իւր Բարիզու դեսպանը չէզոք դիրք մը առնու ոչ հաւանելով և ոչ դատաւարտելով. հրամանը փութով թռաւ ի Բարիզ առ Լորտ Նորմէնպի: Երկրորդ օրը՝ Փալմէրսդըն իրրև Արտաքին գործոց պաշտօնեայ կը գրէր առ Լորտ Նորմէնպի՝ բնաւ երկուց պետութեանց յարարերութեանց մէջ փոփոխունը շմացընելու. և երբ դեսպանը գնաց առ գաղղիացի պաշտօնեայն Գիւրկօ զայս ծանուցանելու, մեծ պարմացմամբ լսեց որ Գիւրկօ երկու օր առաջ լսեր էր Վալեաքի կոմսէն, որ էր Գաղղիոյ դեսպանը ի Լոնարա, թէ Փալմէրսդըն մեծապէս հաւան էր Լուի Նարոլէոնի գործոյն և իւր համոզումն էր որ Նախագահ

իշխանը ուրիշ կերպով չէր կրնար գործել: Լորա Նորմէնպի գարմացմամբ ծանոյց գայս Լորա Ղօն Ռուսսըլի, և դիւրաւ կրնայ գուշակուիլ Լորա Փալմէրսդընի պաշտօնակցաց զգացմանքք: Թագուհին կրկին գրեց սա Լորա Ղօն Ռուսսըլ, որ արդեօք ստոյգ էր Քաղղիոյ վարչութեան պարծիլը որ Անգղիոյ հաւանութիւնը ստացեր էր, մինչ ինքը պատուիրեր էր բացարձակապէս անսարքեր մնալ Բարից եղածներուն: Նոյնը գրեց Լորա Ղօն Ռուսսըլ սա Փալմէրսդըն, որ պատասխանեց՝ թերևս կոման վայրևաքի իր լսածներուն աւելի ուժով գոյն մը տուած ըլլայ: Բայց միանգամայն նամակին մէջ կը ցուցունէր որ ինքը իւր հաւանութիւնը ցրցուցեր էր վայրևաքիի, և թէ իւր մտածածը լաւ էր և ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Ի զուր Լորա Ղօն Ռուսսըլ կը ջանար ցուցունել որ խընդիրը միայն հաւանութիւն տալուն վրայ չէր, այլ եթէ յԱնգղիա Արտաքին գործոց պաշտօնեայ մը, առանց ծանօթութեան և ընդդէմ իսկ կամաց Թագուհւոյն և իւր պաշտօնակցաց այսպիսի քայլ մը չկրնար ընել: Լորա Փալմէրսդըն կը պնդէր որ նախապահ իշխանին ըրածը լաւ էր, և թէ Օւլէանի ցեղը արդէն կը հանդերձէր դաւ մը ընդդէմ իշխանին:

Փալմէրսդըն կարելի է մեծ կանխատես քաղաքագիտութեամբ կը մտածէր յայսմ. բայց օտար պետութեան մը մէջ եղած տարածայնութեանց համար, սահմանադրական պաշտօնեայ մը կ'արդարանա՞ր գործելով իր պարտուց և հրամանաց դէմ: Բնդհանուր յԱնգղիա տշածելի տպաւորութիւն մը ունեցաւ: Իւր պաշտօնակիցներէն ոմանք նախկին իւր համարձակագործութեանց մէջ որչափ որ արտաքսապէս տշած բռնադատուեր էին իրենք զիրենք ցուցունելու, ներքսապէս հաւանելով Փալմէրսդընի գործած եղանակին, այս անգամ՝ իրենք ալ կը դատապարտէին զՓալմէրսդըն:

5. Փալմէրսդընի նրաժարիլը: — Լորա Ղօն Ռուսսըլ թղթով մը ծանոյց Փալմէրսդընի, որ ստէպ տարածայնութեանց պատճառաւ Արտաքին գործոց պաշ-

տօնարանը ալ դժուարին էր որ իրմով կառավարուէր յօգուտ հայրենեացը, և միանգամայն կ'առաջարկէր իրեն ընդունելու ի Թագուհւոյն Իռլանտիոյ տեղապահութիւնը: Փալմէրսդըն բնաւ Իռլանտիոյ գործոց համար ուսումն չէր ըրած. իր ամբողջ ճարտարութիւնը Արտաքին գործոց մէջ էր: Իրեն փոյթը չէր եղած Ներքին վարչութեան և չէր կրնար երևակայել մաշելու իր քաղաքագիտական տաղանդը Տըպլինի փոխարքայական արքունեաց մէջ: Փալմէրսդըն առաջարկութենէն հրաժարեցաւ, ինչպէս նաև Արտաքին գործոց պաշտօնարանէն և իւր տեղն անցաւ Լորտ Կրանլիլ:

Սակայն Փալմէրսդընի մը պէս պաշտօնէի փոփոխութիւնը մեծ ապաւորութիւն ունեցաւ, և որ վարմանալին է ի նչպասա Փալմէրսդընի, ժողովուրդը զինքը զոհ մը համարեցաւ Յամաքային բացարձակ իշխանութեանց ազդեցութեան. յիրաւի եթ, զոհ մ'ալ չըլլար, բայց այս յայտ է որ Աւստրիա, Ռուսաստան, Գերմանիա, մեծ հաճութեամբ կը տեսնէին իր անկումը, և նոյն իսկ Փալմէրսդըն իր մէկ նամակին մէջ առ իւր եղբայրը կը գրէր, որ այս Պետութիւնք շատոնց կ'աշխատէին զրելով առ Թագուհին և առ Ամուսին իշխանը իրեն դէմ: Այնքան ընդհանուր տարածուեցաւ օտար տէրութեանց ազդեցութեան ձայնը, որ Ռուսիոյ դեսպանը Պարոն Պրուննով, բողոքեց ընդդէմ այս համբաւոյն և Թագուհին հրատարակեց որ բնաւ օտար ազդեցութիւն մը չկար:

Քիչ օր վերջը Խօսարանը զուճարուեցաւ, և որովհետև Հասարակութեանց Խօսարանը բացայայտութիւն մը կը խնդրէր, անոր համար Լորտ Ճօն Ռուսըլ ի սկզբանէ պատմեց իւր և Փալմէրսդընի մէջ եղած տարաձայնութեանց պատմութիւնը, և որ մեծն է ի մեծ զարմացումն անգղիացի Խօսարանի մը, պաշտօնէին և Թագուհւոյն մէջ եղած տարաձայնութիւնը, և այս առթով առաջին անգամ հրատարակեց Թագուհւոյն գրած Յուշարարը: Լորտ Ճօն Ռուսըլի խօսակցութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ. ընդ հակա-

ուսկն տկար եղաւ Փալմէրսդընի պաշտպանութիւնը, կամ, ինչպէս կ'ըսեն իւր բարեկամք և վրան ըզմայտոյք՝ չուզեց խօսիլ այնպիսի խնդրոյ մը վրայ, յորում հարկ էր իրեն գթագուհին ալ յիշել, և անոր համար ի սպառ լոեց պատասխանելու Ղորտ Ղօն Ռուսսըի ըսած թագուհւոյն Յուշարարին համար: Այն նիստէն վերջը թէ Հասարակութեանց Խօսարանին և թէ Հասարակաց կարծիքը այն էր որ Փալմէրսդընի ընթացքը լմեցաւ. « Փալմէրսդըն շիջաւ »: Իսկ ինքը ընդհակառակն աւելի վստահ էր իւր վրայ ինչպէս կը տեսնուէր առ իւր բարեկամս գրած մէկ նամակէն, և հանդարտութեամբ կը սպասէր « Իր կարգը գալուն, որ խաղայ Ղօն Ռուսսըի հետ »:

6. Տէրպի պաշտմնարան: — Այս կարգը փութով հասաւ: 1850էն ի վեր Անգղիա պատերազմ ունէր ի Գաֆրաստան, որ վարչութեան անորոյ ընթացքէն կ'երկարէր: Ղօն Ռուսսըլ եթէ ասկէ եթէ Գաղղիոյ ներկայ վիճակէն խորհրդածեալ, մտածեց զինուորութեան նոր ձև մը տալ հրովարտակով մը, յորում փոխանակ « կանոնաւոր զինուորութեան » « տեղական զինուորութիւն » մը կ'ուզէր: Փալմէրսդըն գիտեց որ Ղօն Ռուսսըլի առաջարկը մեծ դժուարութիւն կը գրունէր ի Խօսարանի, և ինքը առաջարկեց քիչ ատին վերջը փոխանակ « տեղական » բառին հաստատել վերըստին « կանոնաւոր » բառը. իր առաջարկութիւնը յաջողութիւն գտաւ. եթէ Փիլեանք և եթէ պահպանողականք իրեն հեռակեցան և Փալմէրսդընի առաջարկը յաղթեց 136 քուէով ընդդէմ 125ի: Ղօն Ռուսսըլ անմիջապէս իւր հրաժարականը տուաւ և Թագուհին կոչեց զՂորտ Տէրպի, որ քիչ առաջ հօրը մեռնելով այս տիտղոսը ժառանգեր էր, նոր պաշտօնարանը կազմելու. յորում սակայն Փալմէրսդըն յանձն շառաւ մտնելու. և Ղորտ Տէրպի յետ զանազան դաշնակցութիւն փորձելու, քաղաքագիտապէս աննշան պաշտօնարան մը կազմեց, յորում երկու գլխաւոր անձինք կային ինքը և Տիգրաէլի՝ ժամանակակից պատմութեան նշանաւոր քաղաքագէտներէն և մատենագիրներէն մին յԱնգղիա:

7. Տիգրաէլի վիպասան, հուետոր եւ երգիծարան : — Տիգրաէլի այն հրեայ ընտանիքներէն էր, որոնք Սպանիայէն արտաքսուելով ժե դարուն վերջերը Վենետիկ ապաւինած էին և ինքը ծնած էր ի Լոնսարա յամին 1885 Գեկտեմբերի : Յետ Սրբազգէնդէդիֆ ցրագրին խմբագիր ըլլալու, նախ ծանօթացաւ (1826) իբր վիպասան և իւր Վիվիէն Կրէյ գրութիւնը լի է տարօրինակ, զգայուն և աշխոյժ մտածութեամբ. միանգամայն կը ջանար այս միջոցով դասնացունել դուրիները, որոնք անտարբեր աչքով նայեր էին իրեն և որոնց ուզեր էր ծառայել : Առաջին վիպասանութիւնը յաջող ընդունելութիւն գտաւ և մաստապաշտակ գրիչը խրախուսեալ՝ փութով ուրիշ վիպասանութիւնք ալ հրատարակեց, և ապա ելաւ ճանապարհորդութեան մը ի Սպանիա, յԻտալիա, ի Կ. Պօլիս, ի Յունաստան և յԵգիպտոս : Եւ երբ ընտրութեանց բարեկարգութեան խնդիրը ծագեցաւ, այն ատեն Տիգրաէլի յարմար ժամանակ դատեցաւ ջանալ աթու մը ունենալ Հասարակութեանց Խօսարանին մէջ, և յայտնապէս ինքզինքը կողմնակից հրատարակեց Օ'Քոննէլի և Հըմի, որոնք երկուքն ալ ազատական մասին գլխաւորքն էին : Սակայն բնաւ ընտրածողով մը զինքը չընտրեց : Քիչ վերջը ուզելով ինքնին անուն մը ունենալ, կարծիքները փոխեց և ժամանակին լրագիրք շատ իսկ լի են ամենայն ծիծաղաշարժ գրութեամբք իր վրայ : 1835ին ներկայացաւ Գէնտոնի ընտրածողովոյն իբր բացարձակ Դոքթ, ընդդէմ խօսելով միանգամայն իր նախկին գլխաւորաց և պաշտպաններուն : Յայտ է Օ'Քոննէլի պայրոյթը այն ատեն ընդդէմ Տիգրաէլիի, որ զինքը մինչև « ժառանգորդ կոչեց Խաչին ձախակողմեան անապաշխար աւազակին » : Տիգրաէլի ատոր պատասխանեց որ « Զիրար կը գտնենք ի Փիլիպպէ », և Օ'Քոննէլի որդւոյն սոմսակ մը զրկեց մենամարտութեան : Յետոյ իսկ Տիգրաէլի միշտ ինքզինքը պատրաստ ցուցուցած է ատրճանակով իր խորհուրդքը պաշտպանելու : Օ'Քոննէլի և Տիգրաէլիի մէջ եղած խնդիրը մեծ շառաչ ունեցաւ և ընդերկար լրագրաց նիւթ դարձաւ

խօսակցութեան, նա մանաւանդ որ անմիջապէս վերջը «Տիգրաէլի Անգղիական Սահմանադրութեան» վրայ նոր գրութիւն մը կը հրատարակէր ի նմա բարձրացընելով շարքէնէն և ջաղխելով զազատականա: Քիչ վերջը Մէտադըն աւանը զինքը երեսփոխան ընտրեց, բայց Տիգրաէլիի առաջին խօսակցութիւնը ոչ միայն յաջող ելք մը չունեցաւ, այլ և ծիծաղելի իսկ եղաւ շատերուն. « Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, բսեր է Տիգրաէլի, բայց ժամանակը կուգայ որ մտիկ կ'ընէք »: Իւր առջի ժամանակին մէջ տարօրինակ ձև և եղանակ մը ունէր պերճախօսութեան, և իւր հոետորութեան արհեստը մինչև կ'իջնէր ի նուաստութիւն: Հասարակութեանց խօսարանին պայքարաց մէջ ամէնը կը զգուշանային իրմէ իրր վտանգաւոր թշնամիէ մը, պատրաստ վրէժխնդրութեան դարձուածներով և երգիծարանութեամբք: Արդեօք այս միջոցիս ինչ սկզբունքներ ունէր Տիգրաէլի, անկարելի է որոշել. աւելի լաւ է ըսել, որ ի խնդիր էր սկզբանց: Քիչ քիչ իր խօսից մէջ աւելի ծանր և աւելի պատշաճական կերպ մ'առաւ իրր խորագնին ամենայն խնդրոց: Վերջը անցաւ Ռուսերդ Փիլի կողմը և պաշտպանեց ազատ առուտուրը, որուն յետոյ այնքան հակառակորդ գտնուեցաւ. միանգամայն նոյն միջոցին կ'աշխատէր ճ. Մէննըրսի և ճ. Սմիթի հետ Նորթուէ-Սթրիմ մը ձևացնել: Իր նոր ստացած և փոփոխած գաղափարները փութով ծանօթացուց ուրիշ նոր վիպասանութեամբք (Քոնինկսպի, Սիպիլ, Իանգրէտ):

Անգղիա այս անգամ զմայլած մատենագրին գեղեցիկ գրչին վրայ շատ ուշադրութիւն չդրաւ մէջի քաղաքական գաղափարաց, որոց համար քիչ վերջը հարկ եղաւ մրցիլ մեծապէս ի խօսարանի ընդդէմ Ռուսերդ Փիլի (1846) մաքսական բարեկարգութեանց համար: Եւ թէպէտ այն յուսահատ կռուոյն մէջ յաղթուեցաւ, սակայն խօսարանական առաջին կարգի հոետորի անուն ստանալով իր սուր երկասյրաբանութեամբք և արամաբանութեամբ, յաջող և յարատև սկզբամբք, իր յանկարծական փոփոխ ձևերով և խայթող եր-

գիծարանութեամբք նոյն իսկ ընդգէմ Փիլի գոր կը կոչէր « Այր՝ որ բնաւ չկրնար գաղափար մը ծնանիլ, արթուն հսկող մթնոլորտի, և երբ տիեզերաց մէկ կողմը հով մը նկատէ, իւր թւերը պարզած անոր հետ կը դիմէ », և յայտնի կ'ըսէր « որ այսպիսի անձ մը կրնայ գորաւոր պաշտօնեայ մը ըլլալ, բայց ոչ մեծ քաղաքագէտ »: 1846ի նիստերուն մէջ իւր խօսակցութիւնքը լի են երգիծարանութեամբք ընդգէմ Փիլի և որոնք ժամանակին ամենուն բերանը գուարճութեան նիւթ մը դարձեր էին, ոչ այնչափ իրենց ճշդութեանը համար, որչափ ծիծաղաշարժ և հնարագէտ ըլլալուն համար, ինչպէս սովորութիւն է միշտ: Այն օրուրնէ Տիգրատէլի կազմէր էր իւր համբաւը և յայտնի էր իւր ընելիք ընթացքը: 1845-46ին պայքարք այնքան մեծ հուշակ ունեցեր էին, մինչև Ամուսին իշխանը գնաց անգամ մը զանոնք լսելու. հակառակորդք մեծապէս զայրացան այս պատուոյն և հարկ եղաւ որ Թագուհին մեկնութիւն տայ, որ միայն ուսանելու նպատակաւ էր: 1847ի ընտրութեանց մէջ Պլաքընկէմի կոմսութիւնը գիւնքը երեսփոխան ընտրեց, և յաջորդ տարին ճըրճ Պէնսիւնքի մեռնելով միայնակ կը մնար գլուխ Պահպանողական մասին՝ որոնք ազնուականաց մէջ աւելի նշանաւոր հռետոր մը չգտնելով բռնադատուեր էին իրենց առաջնորդ ընդունելու գայն, զոր քիչ առաջ կը ծաղրէին իբր վիպասանութեանց գրիչ, առանց նախնեաց և առանց կալուածոց: Տիգրատէլի կրցաւ պատուով պահել իր առաջնորդութիւնը հաւասարաքայլ ընթանալով եթէ Փիլեանց և եթէ ազատականաց, նա մանաւանդ երբ 1852ին Ղօն Ռուսըլ պաշտօնարանը ինկաւ, Տէրպի պաշտօնարանին մէջ ստացաւ գանձուն բարձր պաշտօնէութիւնը: Ահա այս առաջին անգամ էր որ կը մըտնէր վարչութեան մէջ և յայտնէր իր բովանդակ կենաց պատմութիւնը անմեկին է անկէ, թէպէտև մերթ բազմի պաշտօնական գահոյից վրայ, և մերթ ընդդիմութեան աթոռոց վրայ հակառակ Ալատսդոնի: Սուս միտք մը, ազդու խօսք մը, հանդարտ և ան-

խոռով ամէն արկածից մէջ մանաւանդ տարիներուն յառաջելով, Տիգրաէլի իր կենաց խոնարհելուն ժամանակ Անգղիոյ առաջին անձը կը համարուէր, զոյգ հաւասար Կլաստդոնի և ըստ ոմանց առաւել:

8. Տիգրաէլի պաշտօնեայ գանձուն: — Լորտ Տէրպիի կազմած նոր պաշտօնարանին մէջ ըստ ասից Լորտ Փալմէրսդընի երկու նշանաւոր անձինք միայն կային Լորտ Տէրպի և Տիգրաէլի¹, թէպէտ և առաջինը ծանօթ ի քաղաքագիտութեան բազմաթիւ վրիպակներով, իսկ երկրորդին հանճարէն՝ աւելի կը վախէին իւր Պաշտօնողական բարեկամք քան միւս պաշտօնէից տկարութենէն, նա մանաւանդ այնպիսի գործոյ մը գլուխ կը կենար, այն է Գանձուն, որուն կանխաւ մասնաւոր փորձ մը չունէր, և առաջին անգամ պաշտօնարանի մը մէջ մտած ժամանակ միանգամայն կը գտնուէր կերպով մը գլուխ և շարժիչ պաշտօնարանին: Իր գանձուց հաշուին համար ձառը, որչափ որ ալ մեծ հաւանութիւն մը չգտաւ ի խօսարանի, սակայն մեծապէս զարմացուց Հասարակութեանց խօսարանը որ քիչ ժամանակուան մէջ չէր սպասեր այսպիսի պայծառ և յաջողակ բացայայտութեանց: Վարչութիւնը ապա զինուորական հրովարտակ մը առաջարկեց, որուն սիրով օգնեց նաև Փալմէրսդըն և Սահմանադրութիւն մը տուաւ Կոր Զէլանտայի: Յետոյ խօսարանին գումարումները Յուլիսի սկիզբը ձգուեցան, և ապա լուծուեցան:

9. Մահ Ուէլլինկոն դքսին: — Ընտրութեանց

1. Անգղիացի կատակարանք այս պաշտօնարանին «*վ՛, վ՛*», (who? who?) անունը տուին. վասն զի դուքսն Ուէլլինկոն որ մեծապէս կը փափագէր պաշտօնէից անուանքը լսել, առաջին անգամ Տէրպիի ծանուցած ժամանակ ի խօսարանի, երբ ի ծերութենէ խլութեան պատճառաւ, չէր լսեր Տէրպիի նշած անունը, բարձրաձայն կը հարցնէր ի խօսարանի «*ո՛վ, ո՛վ*» . և յիշուի Ուէլլինկոն այս նոր պաշտօնէից շատին անունը և ոչ իսկ լսեր էր: Ասկէ Տէրպիի կազմած պաշտօնարանը կոչուած է «*վ՛, վ՛*» ինչպէս երբեմն կիզոյիսը «*չի՛ն, ոչի՛ն*»:

մեծամեծ յուզմանց միջոց Սեպտեմբեր 4ին կը մեռնէր Ուէլլինկոն դուքսը ութսուն և չորսասեայ. դարուս Անգղիոյ ամենէն մեծ գորավարը և ամենէն ժողովրդեան ծանօթ անձը որ Գուքս անուամբ զինքը միայն կը ճանչնար, և որչափ որ իբրև քաղաքագէտ բնաւ յատկութիւն չունէր և իբրև վարիչ բազում թերութեանց մէջ ընկած էր, այսու հանդերձ ժողովրդեան իր խորհրդատուութեան վրայ ունեցած համարմունքը անսահման էր, և չէին կրնար երևակայել որ Ուէլլինկոնի դուքսը իր խորհրդոց մէջ Պետութեան բարիքէն զատ ուրիշ նպատակ մը ունենայ. իսկ դքսին ալ առ իւր իշխանը ունեցած հպատակութիւնը և հաւատարմութիւնը հին ժամանակները կը յիշեցընէր և կը զմայլեցնէր. մէկ միայն հոգ ունէր և այս հոգն էր որ բարուք ընթանայ Թագուհւոյն վարչութիւնը: Յուրտ էր բնութեամբ և մինչև բիրտ իր կերպին մէջ, բայց ոչ ցուրտ և սիրոյ մէջ, և ջերմ սիրով սիրեց իր բարեկամքը: Երբ Ռոպերդ Փիլ վախճանանեցաւ Ուէլլինկոն Լորտերուն խորհրդարանին մէջ յորդ արտասուքէն ընդհատեալ չկրցաւ տանիլ ի գլուխ իւր դամբանականը: Բայց իր առանձնական կենաց մէջ, անհամրոյր էր, և առանձին քաջուած, և բնաւ չունէր այն յատկութիւններէն մին որ զվարիչ մը ժողովրդեան պաշտելի անձ մը կը դարձնեն. և այսու հանդերձ երբէք ժողովրդեան անձ մը սիրելի եղած չէ ինչպէս Ուէլլինկոն, և բնաւ մէկուն դէմքը և անձը ծանօթ չէր ի Լոնտոն ինչպէս դքսինը. և երբ իւր ձիովը շրջագայութեան համար ծանրաքայլ կ'անցնէր Լոնտրայի փողոցներէն, ամէնը կը նայէին ի նա իբր դրօշակ մը ազգային դիւցազնութեան և յաջողութեանց: Իւր քաջութիւնքը արդէն պատմութեան կարգը անցած էին, իւր անձին ներկայութիւնը անոնց աւելի անմահական կերպարանք մը կու տար: Իբրև զինուորական հանձար յիրաւի յոյժ ստորին էր քան զիւր ախոյեանը Նաբոլէոն Ա, բայց մտաւորական հանգարտ տեսողութեամբ և ընտրողութեամբ ի վեր քան զնա և իւր ճշգրիտ հաշիւներով շատ անգամ խու-

վեցուց զՆարոլէոն: Ոչ երբէք բաղդով գործեց այլ ամենայն ինչ պատրաստութեամբ, թէպէտ Նարոլէոն Ա. ըսած է որ « Աւելի բաղդը իրեն ծառայած է, քան ինքը բաղդին »: Մարմնով ալ հուժկու և զօրաւոր, իւր հայրենակիցք զինքը Երէմիեոյ դոստ¹ կը կռչէին. իսկ պատերազմական հանճարով Ուէլլինկոն կը նմանէր Ուոլինկոնի քան Նարոլէոնի: Ոչ ոք զօրավար հասաւ այն մեծ նպատակին յԱնգղիա ինչ որ Ուէլլինկոն, և բնաւ մէկը այն մեծ ծառայութիւնը չկատարեց իւր հայրենեաց, յորմէ ամենէն առաջին պատիւները ստացեր էր: Եւ սակայն Ուէլլինկոն բնաւ պատերազմ չէր սիրեր, և իւր պատերազմները պարտուց և հպատակութեան համար առ իւր թագաւորը ըրած է և ըստ վկայութեան անգղիացի կենսագրաց առանց երբէք անձնական նպատակ մը ունենալու Նարոլէոնի անկման: Անգղիա իւր մահուանէն վերջն ալ ցուցուց իւր զգացմուցքը այնպիսի չքեղ յուզարկաւորութեամբ մը որուն նման երբէք տեսած չէր Լոնտրա և միշտ պարծանաց նիւթ պիտի ըլլայ անգղիացւոյ մը Ուէլլինկոնի անունը:

10. Պահպանողականաց պարտումը ի Խօսարաւնի: — Նոր Խօսարանը կը գումարուէր Նոյեմբերի, և նոր մտնող երեսփոխանաց մէջ իր ապատական գաղափարովք, յանդգնութեամբ և երգիծարան ոճովը նշանաւոր պիտի ըլլար Խոպէրդ Լով որ նոր դարձեր էր յԱսարալիոյ գաղթականութեանց և իւր հայրենեաց քաղաքական գործոց մէջ կը մտնէր: Ինդհանուր ոգիները Պաշտօնարանին հակառակ էին և յայտնի կը գուշակուէր անոր անկումը: Առաջին գումարմանց անմիջապէս Վիլլիէրս առաջարկութիւն մի ներկայացուց ոչ ի պահպանութիւն միայն ազտա առուտուրի, այլ դատապարտելու որ և իցէ իր՝ որ ցարդ անոր գործադրութեան արգեթք եղաւ՝ եթէ առաջարկութիւնը ընդունուէր՝ պաշտօնարանը այն ատեն անկեալ էր: Սակայն եթէ կ'ուզէին ծանուցանել որ Ա-

1. Iron Duke.

զատ Առուստուրը երկրին կամքն էր, բայց ասով չէին ուղեր յաղթական ջատագովութիւն մը տալ վաճառականական այն քաղաքագիտութեան որուն քիչ տարի առաջ մեծապէս թշնամի հանդիսացան: Լորտ Փարմէրսըն որ անկարելի չէր դատեր Լորտ Տէրպիի պաշտօնարանին մէջը մաս ունենալու, եթէ ի սպառ ի բաց թողուց Պաշտպանութիւնը, փոքրիկ տարբերութիւն մը մտուց առաջարկութեան մէջ, առանց գովելու և դատապարտելու 1846ին վարչութիւնը: Առաջարկութիւնը ընդունուեցաւ 468 քուէով ընդդէմ 53ի, յորոց մաս մը եռանդագին պաշտպանողականք էին:

Որչափ որ վարչութիւնը ազատեցաւ անկումէն, բայց հազիւ յոտին կայր: Ամէնը կ'ըսպասէին որ Տիգրաէլի դրամական տնտեսութեան Ելեմտից ճառը խօսի, որպէս զի ըստ այնմ որոշուի վարչութեան բազդը: Եւ յիրաւի այնպէս եղաւ: Տիգրաէլի Ելեմտից ճառը ցուցուց որ պաշտօնեայն մեծ ճարտարութիւն ունէր հաշուոց: Մինչ առաջին Ելեմտից ճառը օտար կերպարանք մը ունէր. ասիկայ արդարև դրամական տնտեսի խօսակցութիւն մ'էր որ կ'առաջարկէր դրամական և տրոց նոր դրութիւն մը, Գարեջրոյ, գարիին տուրքը կը նուազէր, և անով առաջ եկած նուազումը լեցնելու համար բնակութեանց վրայ կ'աւելցնէր տուրքը: Լորտ Տէրպիի վարչութիւնը յիշխանութիւն հասած ժամանակ խոստացած էր գոհացնել թէ զգիւղացիս և թէ զկալուածատէրս, նոր առաջարկած դրութիւնը կը տոգոհացնէր մէկ մասը առանց միւսը գոհացնելու: Պաշտօնարանը տեսաւ որ եթէ խնդիրը զիւրաւ շանցնէր կը հակառակէին իրեն եթէ ազատականք, եթէ Ազատ Առետրականք, Փիլեանք և ուրիշ անկախ երեսփոխանք: Խօսարանին մէջ պայքարք սկսան որոնք իրենց հմուտ և հռետորական արուեստիւ անուանի մնացած են: Երկու կողմանէ ալ մեծ էր եռանդը, Պաշտօնարանին յուսահատական դիրքը աւելի ոգևորեր էր զՏիգրաէլի որ մեծաւ կրիւք և երգիծարաւ

նական պերճախօսութեամբ յարձկեցաւ իւր նախորդին Չարլս Վուտի վրայ :

11. Տիգրաէլի եւ Կլատտոդոն հակառակընդէմք : — Հագիւ Տիգրաէլի իւր ճառը լմնցուցեր էր երբ առաւօտեան ժամը Չին իրեն յաջորդեց ի բեմն Կլատտոդոն : Եւ ահա այս վայրկենէն կը սկսի խօսարանական այն երկար մրցումը այս երկու նշանաւոր անձանց մէջ որ տեւեց մինչև 1876, յորում Տիգրաէլի, Լորտ Պիքոնսֆիլա տիտղոսով թողուց Հասարակութեանց Խօսարանը և անցաւ Լորտերուն մէջ : Այս 24 տարուան միջոց անընդհատ ախոյեանք հանդիսացան իշխանութեան այս երկու մեծ հանձարները ինչպէս երբեմն Փիզ և Տոքս, որոնցմէ ստորին չէին մնար իրենց զանազան յատկութեամբք : Անոնք որ կը համարէին թէ Կլատտոդոն այսպիսի անսպասարաստ բեմասացութեամբ չէր կրնար առաջնոյն յրաժ տպաւորութիւնը բառնալ, բողբոջին հակառակը տեսան : Առաւօտեան ժամը 4ին քուէարկութիւնը կ'ըլլար և պաշտօնարանը կ'ինկնար 90 քուէով : Տիգրաէլի իւր ընդարոյս անխռով եղանակաւ տեսաւ պարտութիւնը : Առաւօտը ցուրտ էր և խոնաւ « Եստ հաճոյական բան մը չէ այսպիսի առաւօտ մը Օսպըրն երթալ » ըսաւ իւր մէկ բարեկամին փողոցը ելլելով : Նոյն օրը յՕսպրն, Պաշտօնարանը կը յանձնէր իւր պաշտօնը թագուհւոյն ձեռաց մէջ :

Քիչ օր վերջը այլ և այլ կուսակցութենէ Պաշտօնարան մը կը կազմուէր . յորում առաջին պաշտօնեայն էր Լորա Էպըրտին, Լորտ Ճօն Ռուսսըլ Արտաքին գործոց, Լորա Փալմէրսդըն Ներքին գործոց, Կլատտոդոն Ատենադպիր Փանձուն : Բողբոջ Անգղիա զարմացաւ տեսնելով զԼորա Փալմէրսդըն պաշտօնեայ Ներքին գործոց, մինչ իւր անունը գոգցես Արտաքին գործոց պաշտօնէութեան հետ կապակցեալ էր, սակայն Լորտ Փալմէրսդըն կ'ըսէ առ իւր հղբայրը զբաժ թղթին մէջ՝ որ յանձն առեր էր զայն երկիրը ազէկ ձանչնալու և ազդեցութիւն մը ունենալու ժողովրդեան և զինուորութեան վրայ : Կամ ինչպէս կ'ըսեն

պատմագրացմէ ոմանք, վասն զի Արսաօքին գործոց պաշտօնէութիւնը կ'ուզէր առնուլ յանձն՝ իւր գաղափարներով միայն, և այդ իրեն չէր ներուեր տակաւին:

12. Կլատսդոն. — Եկեղեցւոյ եւ Պետութեան մէջ յարաբերութիւնք. Կլատսդոն պաշտօնեայ, Բուտտոր: — Սակայն այս նոր պաշտօնարանին ոգին միայն Փալմէրսդըն չէր, ամենուն աչքը հետաքրքրութեամբ դարձած էր գանձուն Ասենադպրին Կլատսդոնի վրայ որ թէպէտ 43 ամեայ բայց Խօսարանական կենաց համար նոր երիտասարդ մը կրնար համարուիլ: Կանուխ մտած ըլլալով Հասարակութեան կենաց մէջ, փութով նշանաւոր գտնուեր էր և 31 ամեայ եղած ժամանակ արդէն անուանի եղած էր Հասարակութեանց Խօսարանին մէջ: Կլատսդոն ծնած էր 1809ին Գեկտեմբեր 29ին և չքեղ ուսումնական ընթացք մը կատարած էր Ռքսֆորտի համալսարանին մէջ: Հաղիւ իւր ուսմունքները լմնցուցեր էր, ընտրութեանց բարեկարգութենէն ետև գումարուած առաջին Խօսարանին մէջ (1832) երեսփոխան զրկուեցաւ յանձնարարութեամբ Նիւքասլի դքսին հովանաւորութեամբ, և թէպէտ տակաւին կարի երիտասարդ, սակայն փութով ամենուն համարմունքը առ ինքն ձգեց մանաւանդ, Ռուպրդ Փիլի որ երբ 1834ին վարչութեան հասաւ արդէն զԿլատսդոն Գանձուն լորտ անուանեց: 1835ին պաշտօնարանին անկմամբ ընդդիմակացից կողմն անցնելով եւ ռանդագին զարնուեցաւ Մէլպըրն պաշտօնարանին հետ, միանգամայն զբաղած միշտ իրեն սիրելի աստուածաբանական ուսմանց՝ գրեց « Եկեղեցւոյ և Պետութեան մէջ յարաբերութիւնք » յորում կը հաստատէր այն սկզբունքը մեծապէս՝ զփութեամբ իսկ ընդդիմացեալ ի Մըգառլէէ, թէ մարդս պարսպեր ունենալով առ Աստուած անկախ ի պարտուց առ ընկերութիւնը, Պետութիւնը որ յինքեան անհատ մ'է, պէտք է ունենայ իւր առանձին կրօնքը և գոյն դաւանի, և կը հետևեցնէր որ պէտք էր տկարացնել ամենայն կրօնք որ Պետութեան կրօնք չէ, ոչ հալածանօք և պատուհասիւք:

այլ զրկելով զայնս ի քաղաքական և յազգային պաշտամանց և պարտուց: Պիտի տեսնենք ապագային մէջ թէ այս իւր գաղափարքը որքան փոփոխութիւնք կրեցին:

Ազատական պաշտօնարանը ինկեր էր առաջարկելով օտար շաքարի ընդունելութիւնը (1841) և Ռուսիոյ Փիլ վարչութեան գլուխ անցնելով՝ զԿլատտոն տեսուչ անուանեց դրամոց և Փոխան-Նախագահ վաճառականութեան Ատենին և մտուց զնա իւր առանձին խորհրդոյն մէջ: Այն ատենուրնէ Կլատտոն սկըսաւ զբաղիլ, խորհրդածել գնոց, տուրքերու, արտաշանութեան և ուրիշ առևտրական խնդրոց: 1843 Մայիսին Վաճառականութեան Ատենին Նախագահ ընտրուեցաւ, ուսկից սակայն հրաժարեցաւ երբ (1845) վարչութիւնը Մայնութի ուղղափառ վարժարանին թռչակ հաստատեց և զոր ընդդէմ իւր սկզբանց կը համարէր: Բայց տարին շլմեցած երբ Լորտ Սդանլէյ գաղթականութեանց պաշտօնը թողուց ինքը իրեն յաջորդեց: Նիւքասլի դուքսը իրեն ընտրութիւնը ետ առած ըլլալով, Կլատտոն չկրցաւ մասնակցիլ Խօսարանին մեծ պայքարներուն և 1846ին քաշուեցաւ պաշտօնէն Ռուսիոյ Փիլի հետ:

1847ին ընտրութեանց, Աքսֆըրտի համալսարանէն երեսփոխան ընտրուելով, սրպիսի պատիւ միշտ նախանձելի եղած է ամէն հուշակաւոր անձանց, Կլատտոն դարձաւ ի Խօսարան և բաղմեցաւ Ռուսիոյ Փիլի քով ազատ-պահպանողական մասին մէջ: Կուուեցաւ ընդդէմ ուղղափառութեան եկեղեցական տիտղոսաց հրովարտակին. պաշտպանեց՝ որ Հրեայք կըրնան մտնել ի Խօսարան՝ Ռոչիլտի ընտրութեան առթիւ, և դէմ խօսեցաւ Տիգրաէլիի երկրագործական ըրած առաջարկութեան: Պաշտպանողականք իմացան որ դիմացնին մեծ ախոյեան մը ունէին և 1851ին Լորտ Տէրպի պաշտօնարան կազմած ժամանակ ի դուր իրեն զանազան առաջարկութիւնք եղած էին պաշտօնարանին մասնակցելու համար (1853) ինքը իւր հմուտ և պայծառ ընդդիմութեամբ Տիգ-

րաէլիի Ելեմտից ճառին, Տէրպիի վարչութեան անկման պատճառ կ'ըլլար:

Իւր խօսարանական ամբողջ կեանքը շարունակութիւն մը կրնայ համարուիլ յաջողութեանց հռչականուն պայքարողի մը և անուանի հռետորի: Երբ ի կուսակցութեանց կազմեալ պաշտօնարանէն քիչ վերջը խօսեցաւ իւր առաջին Ելեմտից ճառը, ամէնը հիացան տնտեսական ոճոյն վրայ: Ճառը քանի մը ժամ տևեր էր, և սակայն բնաւ մէ կը չէր կրնար անոր համառօտութեանը փափաքիլ. իւր խօսքը հեղեղի պէս կ'ընթանար անխափան հետը տանելով ամենուն մը տաղրութիւնը և կամքը. և յիրաւի ժամանակին պատմութեան մէջ երբէք պաշտօնեայ մ, չհասաւ Ալատրուդոնի՝ այսօրինակ խօսից մէջ, և ամէն անգամ նոյն յաջողութիւնը ունեցաւ: Ալատրուդոնի յատկութիւններէն մին էր նաև իւր յստակ, պայծառ հնչող և քաղցր ձայնը, և երբէք խօսարանի մէջ պէտք ունեցած չէր զայն ուժովցնել: Ունկնդրաց լսելի ընելու համար. իւր ձայնին կ'ընկերէին եռանդուն կերպը և փայլուն աչքերը: Որ և իցէ ընդդիմութիւն մը կամ ընդհատումն որ աշխոյժ նոր գրգիռ մը կու տար իւր խօսից, և շատ անգամ ընդդիմակաց երեսփոխանի մը վրայ ձև տեսնելը բաւական էր, նորանոր փաստք, իմաստք, կորով մտցնելու. իւր խօսից մէջ. ստենայն պատասխան պատրաստ էր իւր շրթանց վրայ: Ոչ մի հռետոր այնքան մեծամեծ յատկութիւնք միտքան ունեցած է ինչպէս Ալատրուդոն: Միանգամայն հռետոր էր և քերթող, կարիճ քննադատ, սիրող արհեստեց, երաժշտութեան, սոստուածարանական կաճառորդ, սնտեսական քաղաքագէտ, քաջ մատակարար և պաշտօնեայ Ելեմտից յորում քիչ անձ կրնար հետը բաղդատուիլ: Կոր կազմելի կուսակցութեանց Պաշտօնարանը կըրնար Ամէն հանձարներու Պաշտօնարան կոչուիլ և յիրաւի ի բաց առեալ զԱորա Տէրպի և զՏիզրաէլի, Խօսարանին միւս հանձարքը մէջը կը գտնուէին: Այսպիսի անձինք էին Անգղիոյ վարչութեան գլուխ և այս պիսի էին վարչութեան պարագայք, երբ Ա-

րևելեան խնդիրը ծագեցաւ, ուսկից ծնաւ Ղրիմու պատերազմը, յորս պիտի տեսնենք զԱնգղիա թէ առանձին և թէ միաբան ուրիշ Պետութեանց յորս լաւ կը համարինք չզատել իւրաքանչիւրին պատմութիւնը, միաբան ընթանալով:



ԳԼՈՒԽ ԼԵ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ ԼՈՒԻ ՆԱԲՈԼԷՌՆԻ

1. Նախագահութիւն — Ա. Պաշտօնարան — Հռովմէական խընդիր. — 2. Օրէնդիր ժողովք. — 13 Յունիս. — 3. Ուղեորութիւն Նախագահին: — 4. Կայսրութեան համար ջանքերը. — 5. Տարածայնութիւն ընդ Նախագահն և ընդ Ժողովն: — 6. Պերհախօսութիւնք Պէրիէի, Իիէրի, Շանկաոնիէի Կայսրութեան մը դէմ: — 7. Թոշակ Նախագահին — Խնդիր վերաքննելու զՍահմանադրութիւն: — 8. Խօսք Նախագահին ի Տիժոն. — Հետևանք: — 9. Պաշտօնարան Հոկտեմբերի — Սէնդ Աոնօ պաշտօնեայ Պասերազմի: — 10. Դրածուկ հանդերձանք Պետական հարուածին:

1. Նսիլուգահուութիւն. — Ա. Պաշտօնարան — Հռովմէական խնդիր: — Լուի Նարոլէոնի նախագահ ընտրուելովը, Քաղղիա ըստ նոր Սահմանադրութեան իր վրայ երկու վարիչ իշխանութիւն կ'ունենար՝ Նախագահը և Ժողովքը, երկուքն ալ մէկմէկէ անկախ և ընդարձակասահման իշխանութեամբք, երկուքն ալ մտքերնին դրած երբէք չթողուլ որ իրենց իրաւանց փոքր եղանակաւ մը ռք դպչի. յայտնի էր որ այսպէս կազմեալ երկու իշխանութեանց մէջ փութով պիտի ծագէր տարածայնութիւնը նա մանաւանդ որ առաջին աւնուանեալ պաշտօնարանը չունէր այն զօգիչ յատկութիւնը որ այսպիսի պարագայից մէջ կարևոր են: Նախագահը իր պաշտօնարանին գլուխ անուանեք էր զՕտիլոն Պարօ տալով իրեն նաև Արդարութեան պաշտօնարանը, Ներքին գործոց պաշտօնեայն էր Լէոն Մալվիլ, Լէոն Ֆոշէ Հասարակաց վաստակոց, Իրասի Ծովային զօրութեան, Փասսի Ելեմտից, Տրուէն տը Լիւյ՝ Ար-

տաքին գործոց, աը Տալու Հասարակաց կրթութեան, Ռիւլիէր զօրավարը՝ Պատերազմի, Պիքսիօ Վաճառակառնութեան որուն քիչ վերջը յաջորդեց Պիւֆֆէ: Շանկառնիէ զօրավարը հրամանատար անուանուեցաւ զինուորական Ա. Զօրաբաժնին և Սէնի ազգային պահապանաց և մարաջատն Պիւժօ՝ հրամանատար Ալպեան բանակին: Նախագահը այս ընտրութեանց մէջ դիմեր էր նաև առ Ժողովքը որ փոխադարձ երբ հարկ եղաւ Հասարակապետութեան փոխան Նախագահը ընտրել, առաջարկեց Լուի Նաբոլէոնի սիրելի անձ մը՝ զկոմսն Պուլէ տըլա Մէօրթ, որ մէկէն ընտրուեցաւ ի Նախագահէն: Սակայն քիչ օր վերջը պաշտօնարանը զանազան փոփոխութիւնք կրեց որովհետև Նախագահը ուզեր էր ի Մալվիլէ Սդրազպուրկի և Պուլոննի յուզմանց դատը և Մալվիլ գայն մերժած ըլլալով, ինչպէս նաև հաղորդած չըլլալով զանազան հեռագիրք, իշխանին յանդիմանական թղթի մը վրայ փութով հրաժարականը տուաւ:

Պաշտօնարանին մէջ ամէն կուսակցութենէ կային բաց ի ծայրայեղ հասարակապետականաց: Առաւելն միապետականք էին կամ պոնաբարդեանք որով ընդհուպ ամենայն պաշտօնէից մէջ մեծամեծ փոփոխութիւնք պիտի ըլլային և պիտի սկարսնար հասարակապետական մասը, որ փութով առանձին մաս մը կազմեց ժողովքին մէջ Մոնթանէը հին անուանակոչութեամբ: Յունուար 26ին գիշերը բոլոր Բարիզ յուզման մը մէջ էր, գլխաւոր կէտերը բռնած էր բանակը. կէս գիշերուն ժողովոյն նախագահը Արման Մարա նուիրակ զրկած էր առ Շանկառնիէ պատճառն իմանալու, որ որոշ պատասխան մը չէր տրուած: Ամէն կողմ կը լսուէր որ երկրորդ օրը Նախագահը պետական հարուած մը պիտի ընէ. ժողովքը գիշեր ատեն գումարուեցաւ Մարայի սրահը, ուր լա Մորիսիէր զօրավարին առաջարկուեցաւ 50,000 հոգևով պաշտպանել Ժողովքը, և ծանր վէճերու մէջ էին երբ հասաւ Օտիլոն Պարօ, և Մարայի հետ խօսակցութեամբ

մը որուն նպատակը անյայտ մնացած է, ամենայն ինչ նախկին հանդարտութեան մէջ մնաց:

Ժողովքը կրկին յուզեցաւ Իտալական և Հռովմէական խնդրոց պատճառաւ: Նախագահը և պաշտօնարանը կ'ուզէին միջամտութեամբ մը զՔահանայապետը դարձնել ի Հռովմ, մինչ Ժողովքին մեծամասնութիւնը հակառակ էր այս միջամտութեան, և Օտիլոն Պարօ արշաւանաց առաջարկը ընելու ժամանակ պատճառ բերեր էր Քաղղիոյ ազդեցութեան շահուն պաշտպանութիւնը: Արշաւանքը սկսաւ ինչպէս տեսանք, բայց երբ լսուեցաւ Ուտինոյ զօրավարին գտած ընդդիմութիւնը ի Զիվիդա Վէքքիա, այն ատեն ետէ՛ ետէ կրակոս ճառախօսք յաջորդեցին ի բեմը բացատրութիւն մը պահանջելով այս եղածներուն համար. ազմկալից ժողովքը սեւեց մինչև առաւօտեսան երկուքը և Ժողովքը վճռեց պահանջելու վարչութենէն որ Իտալիոյ միջամտութիւնը իր սահմանէն դուրս չելլէ: Սակայն Զիվիթա Վէքքիայի գուպարածով Նաբոլէոն իր զօրաց պատիւը անպոսնեալ կը համարէր և Ուտինոյի կը գրէր յառաջ վարել գործը:

Երկրորդ օրը Լըտրիւ Ռոլլէն բեմը կ'ելլէ և կ'առաջարկէ որ ամբաստանուին թէ՛ Նախագահը և թէ՛ պաշտօնեայքը իբրև հակառակորդք Սահմանադրութեան վասն զի կը պատուիրէին կռուելու ազգաց սղատութեան դէմ: Ժիւլ Ֆավրը կ'առաջարկէ որ փոխանակ ամբաստանութեան, միայն հրատարակուի ազգին անվստահութիւնը պաշտօնարանին վրայ. սակայն ժողովքին մեծամասնութիւնը մերժեց երկու առաջարկն ալ և հաստատեց Մայիս 7ին վճիռը: Այս վճիռը Սահմանադիր ժողովոյն վերջին կարևոր վճիռը կը համարուի որ իր նիստերը լմնցուց Մայիս 26ին անդիք սալով Օրէնսդիր ժողովոյն: Իր կատարելութիւնը համարուեցաւ առանց արեսան մեծ յեղափոխութիւն մը կատարելը, սակայն մեծապէս պակսեցաւ վարչութեան գլուխ երկու հաւասարօր իշխանութիւնք դնելով անկախ ի միմեանց:

2. Օրէնսդիր ժողով: — Արդէն Նոր ժողովոյն

Համար ընտրութիւնք եղեր էին Մայիս 8ին . ծայրաշեղ միապետականք և մանաւանդ 10 Գեկտեմբերի միարանողք զանազան գրքոյկներով ջանացեր էին աւելի պախարակել ժողովրդեան ռամկավարական մասը, անոր համար ընտրութեանց մէջ հասարակապետանք յոյժ նուազ էին թուով, Լըտրիւ Ռուլէն շորս վիճակի մէջ ընտրուեր էր . իսկ Լամարգին, Տիւփոն (տը Լ'էօն), Կառնիէ Փաժէս, Ֆլուքոն, Մարի, Պասգիտ, Ժիւլ Ֆալըր՝ Օրէնսդիր ժողովքէն դուրս կը մնային . որով ժողովքին մէջ կը բազմէին երկու ծայրայեղ հակառակորդ կուսակցութիւնք, և յայտնի էր որ ընդ հուպ պիտի սկսէին ծանր մրցումներ :

Հռովմէն հասած լուրերը երթալով կը ծանրանային . ամբողջը մղեալ ի ռամկավարաց մեծ յուզման մէջ էր . Յունիս 10ին երկկոյ լուր հասաւ որ Քաղղիացի բանակը կը կռուի Հռովմայ պատուարաց ներքե : Յուզեալ զիշեր մը անցաւ երկրորդ օրը ժողովքը գումարուեցաւ և նախ ընդդիմակացից գլուխը Լըտրիւ Ռուլէն ներկայացաւ ի բեմը և պաշտօնապէս ամբաստանութիւն մը ներկայացուց ընդդէմ Նախագահին և պաշտօնէից, իր խօսքը լմնցուց ահաւոր ձայնով մը գոչելով « Զկայ ոչ մի յաղթութիւն ընդդէմ իրաւանց, կայ իր մը գերագոյն յոյժ քան դպրասիր և է իրաւունք՝ և սնմահ արդարութիւնը » : Հասարակաց այլազան յուզման մէջ կը յաջորդէ իրեն ի բեմը Սաիլոն Պարօ որ չժխտեր գՔահանայապետը հաստատելու խորհուրդը յաւելլով որ « Հասարակապետութեան Նախագահը պՔահանայապետը հաստատելու ժամանակ միտք չունի նաև ժամանակաւոր իշխանութեան թերութիւնքն ալ նորոգելու » : Կրկին անգամ իրեն կը յաջորդէ Լըտրիւ Ռուլէն որ հանդարտ և ահաւոր սպառնալեօք մը կը պատասխանէ թէ ամենայն ինչ պայծառ է, « պակսեցաք ընդդէմ Սահմանադրութեան, մենք զայն պիտի պաշտպանենք ամենայն միջոցով և նոյն իսկ զինուք » : Այս սպառնալեաց վրայ կը յուզի աջակողմը, ամէնը կը գոչեն որ ետ առնու խօսքը, սակայն Լըտրիւ Ռուլէն կը կրկնէ

որ « Սահմանադրութիւնը վատահացեալ է ամենայն Գաղղիացւոց պահպանութեան, ըսի և կը կրկնեմ արհամարհեալ Սահմանադրութիւնը պիտի պաշտպանենք. նոյն խկ զինուք » : Լըտրիւ Ռուլլէն մտնալով երեսփոխանի մը պարտքը և պատշաճը կը զրգոէ վիսուժանը : Արդէն քաղաքը արհաւրաց մէջ էր մաղձախտին ըրած զոհերուն համար յորս էր նաև մարաջախտն Պիւժօ և ահա 13ին առաւօտը քանի մը հարիւր հոգի « Կեցցէ Սահմանադրութիւն, կեցցէ Հասարակապետութիւն և կեցցէ Իսալիա » գոչելով Շադօ-տ'Օէն ուղղեցաւ դէպ ի Մատըլէն : Սակայն Շանկառնիէ արդէն առաջուրնէ ամենայն ինչ հոգացեր էր և ձուտորաց երեք գունդ ամբոխին վրայ դիմելով ցիրուցան ըրաւ զայն և ժամը երեքին արդէն տիրեր էր շիթութեան : Լըտրիւ Ռուլլէն ուրիշ 40 երեսփոխաններով Գոնսէրվաթուառ մղուեցաւ 400 հրաձիգ ազգային պահապաններէ և յետ ծածուկ 23 օր պահուրտելու մերձաւոր բնակարան մը փախաւ ի Պելճիա և հոնկէ անցաւ յԱնգղիա :

Այս յուզման վրայ Օտիլոն Պարոյի առաջարկութեամբ Բարիզ պաշարման վիճակի մէջ զրուեցաւ, զանազան լրագիրներ խափանուեցան, տարուան մը շափարգիլուեցան ժողովակները, օրէնք մը հաստատուեցաւ ընդդէմ նախատողաց զՆախագահն, ուրիշ օրէնք մ'ալ քաղաքագիտական յանցանքները զինուորական ատենի կը մատնէր. « Ուրեմն դիկտատորութիւն է այս » գոչեց Կրէվի, որուն պատասխան տուաւ Ներքին գործոց նոր պաշտօնեայն Տիւֆոր՝ հին հռովմէական առածով « Փրկութիւն ժողովրդեան՝ գերագոյն օրէնք » : Ուրիշ քաղաքներ ալ Յունիս 13ին ապստամբութիւն փորձեցին բայց ամէն տեղ ալ նուաճուելով. Յունիս 13ին վերջը հրատարակեց Լուի Նարուլլոն այն հրովարտակը առ Գաղղիացիս յորում ուժով բացատրութեամբ մը կ'ըսէր որ « Հասաւ ժամանակ յորում բարիները պէտք էին ոգի առնուն և չարերը դողալ » : Յաջորդեցին ապա Մայիս 15ին և Յունիս 13ի յանցաւորաց դատաստանները և զանա-

դան անձինք դատապարտուեցան մշտնջենաւոր բանտի կամ աքսորանաց . այսպէս Պրէա զօրավարին ըսպանողներէն հինգը մահուան դատապարտուեցան . երեքին պատիժը փոխեց Նախագահը , միւս երկուքը գլխատուեցան յետագայ Մարտ 17ին¹ :

3. Ուղեւորութիւն Նախագահին : — Նախագահը ժողովոյն հանգստեան ամիսները իրեն յօգուտ առնելով , այց ելաւ Համ դղեկին ուր երբեմն գոցուեր էր և ուրիշ զանազան քաղաքաց , ամէն տեղ ճառախօսութիւններ ընելով կայսերական և միապետական բացատրութեամբք , բազում խոստմունքներով , և մեծամեծ ընդունելութիւններ գտնելով բաց ի Ստրապուրկէ : Այս ճամբորդութեան ժամանակ ընդունած ընդունելութիւններէն խրախուսեալ յանկարծ փոխեց իր առաջին պաշտօնարանը յորում կային նշանաւոր անուններ և նոր իրեն հպատակ պաշտօնարան մը անունեց , յորում կը մտնէր առաջին անգամ Ռուհէ փաստարան Ռիոմի , Հօգփուլ զօրավարը Պատերազմի , Ֆուլտ՝ Ելեմտից , Լահիտ՝ Արտաքին գործոց և այս պաշտօնարանով կը սկսէր Լուի-Նարոլէոնի անձնական վարչութիւնը :

Քիչ վերջը ժողովքին մէջ զանազան օրէնքներ ընդունելի կ'ըլլային յորս անուանի է մանաւանդ Հասարակաց կրթութեան վերաբերեալ օրէնքը պատրաստեալ ի սը Ֆալլուէ և առաջարկեալ Փարիէօ կրթութեան պաշտօնէէն . ըստ այսմ օրինաց՝ ազատ էր Երկրորդակարգ դաստիարակութիւնը . որով ներեալ եկեղեցականաց ևս առանձին կամ հասարակաց դպրոց ունենալ : Այս օրինաց ընդդէմ խօսեցաւ Վիկտոր Հիւկօ , զոր ուժով պերճախօսութեամբ մը պաշտպանեցին Մոնդալամպէր և Թիէր : Այսպէս խափանուեցան ծայրայեղ հասարակապետական սկզբունք ի դա-

1. Այս շփոթութենէն վերջն է յորում Տիւփէն ժողովոյն նախագահը +-ղ+-ոյէ (citoyen բառին տեղ Տեբ (Monsieur) բառը փոխանակեց « Ամէննիս քաղաքացի ըլլանք . բոս : բայց տեաք կողէնք զմիմեանս » :

սախտութիւնս և այն ուսուցիչք՝ որոնք մտիկ չըրին, կորսնցուցին իրենց պաշտօնը: Վերցուեցաւ նաև ժողովրդեանէն Փետրուարի յեղափոխութենէն վերջը հրապարակներուն մէջ տնկուած ազատութեան ծառերը, շինայեղով անոր ևս՝ որոյ վրայ ժողովուրդը գրած էր « Առ Գեր. Աֆրը, Աւքեպիսկոպոս Բարիզու, իր անձ նանուիրման համար 1848ին »: Սակայն մասնական բնարութեանց մէջ շահեցան սամկավարք և ժողովքին մէջ կը մտնէին Քաւնօ, պաշտօնեայ յամին 1848 և Եւփէն Սիւ ընկերամուլ վիպասանութեանց հեղինակը:

4. Կայսրութեան մը ջանքերը: — Ժողովքին և նախագահին մէջ եղած տարաձայնութիւնը երթալով կ'աւելնէր: Լուի Նաբոլէոն իր ամէն գործոց նպատակ առած էր հօրեղբօր կայսրութեան յաջորդութիւնը. իսկ ժողովքին մեծամասնութիւնը, թէպէտ ոչ թշնամի միապետութեան մը, այսու հանդերձ հակառակ մեծապէս Կայսրութեան նորոգման և փոքր մեծամասնութեամբ մը հազիւ հաւանած էր իրեն ծախուց համար դրամը յաւելուլ: Նախագահը իր ճանապարհորդութեան միջոց մեծ ուրախութեամբ և անձկանօք լսեր էր « Կեցցէ կայսր » աղաղակները. որոնց պատասխաններ էր Քաղզիոյ փառաց և « Նաբոլէոն կայսեր » վրայ խօսելով, « Նաբոլէոն » անունը փառք կը նշանակէր, Քաղզիոյ « Կայսրութիւնը, խաղաղութիւն կը նշանակէ » և ստոր նման ուրիշ բացատրութիւնք: Վերսայլի մօտ Սադորիի բանակեսողէն անցնելու ժամանակ յետ սուտ կերակուր և գինի բաշխելու, հիծելագօրը « Կեցցէ կայսր » աղաղակեր էր, իսկ հեռակալը բոլորովին լսեր էր: Նախագահը կը հարցնէ այս լուսութեան պատճառը և կ'իմանայ որ ընդհանուր հրամանատարը՝ զօրավարն Նեւմայէր յիշեցուցեր էր Ա. գնդին հրամանատարին զինուորական կանոնը որ կը պատուիրէր խիտ լուսութիւն զինուցներքև: Հոկտեմբեր 13ին Նեւմայէր զրկուեցաւ իր հրամանատարութենէն: Երկու օր վերջը Շանկառնիէ ընդհանուր հրամանատար բանակին, կարգացընել կու

տար գունդերուն զինուորական օրէնքը՝ ըստ որում հրաման չկար որ և իցէ ցոյց մ'ընել կամ գոչել զինուց ներքե եղած ժամանակ: Յայտնի է այս յայտարարութեան հետևանքը. այն օրուընէ միտքը դրաւ Նախագահը օր մը առաջ Շանկառնիէի պաշտօնընկէցութիւնը: Սակայն առ ժամս կեղծեց ամենայն ինչ: Քիչ օր վերջը Հողփուլ զօրավարը Ալէէրիի վարիչ անուանելով և Նեւմայէր զօրավարին աւելի մեծագոյն հրամանատարութիւն մը ընծայելով ամենայն տարածայնութիւն վերցուած կը համարուէր:

Նախագահը գիտէր որ կարող չէր պետական մեծ հարուածի մը մինչև որ զօրավարներ շունենայ: Ժողովքին մէջ բազմող զինուորականք, ծանօթք ամենուն և սիրելիք թէ զօրաց և թէ ժողովրդեան՝ Գավէնեաք, Լամորիսիէր, Պըտօ, Շանկառնիէ և Շարա, բնաւ յանձն չէին կրնար առնուլ իրեն բարձրանալուն ձեռք մը տալ, հարկ էր նոր զօրավարներ ստեղծել և այն ատեն Նարոլէոնի անձնանուէր մտերիմն Փէրսինի խորհուրդ տուաւ նոր արշաւանք մը փորձել յԱլէէրիէ ի Զաաչա և ի Գասթիլի, որուն յաջողութեան համար մեծապէս վաստակեցաւ Ֆլեւրի հրամանատարը, և Սէնդ Աւնոյի սիրելի անունը որ այս արշաւանին գլուխ պիտի ըլլար և Նարոլէոնի մտաց մէջ սպազայ պաշտօնեայ պատերազմի, ձրպեց առ ինքն շատ մը ուրիշ ջոկատներու հրամանատարներ որոնք համբաւոյ մը կը ցանկային և յորս յիշեմք տը Գոդ, Ռոչֆոր, Գանրոպէր, շէրպիյոն:

5. Տարածայնութիւն ընդ Նախագահն եւ ընդ ժողովն:— Նախագահին կուսակցութեան մեծ ջանքերէն մէկն էր Ժողովոյն առջև անվստահ ցուցնել զՇանկառնիէ զօրավարը և անոր անկումը պատրաստելով մեծ հարուած մը տալ Հասարակապետութեան: Յունուար 2ին լրագիր մը Շանկառնիէի մէկ քանի իրամանքը հրատարակեց որոնք արհամարհիչք կ'երևային Ժողովոյն, և ատենակալացմէ Ժէրոմ Պոնարրդ հօրեղբորորդի Նախագահին զանոնք ամբաստանեց ժողովոյն առջև հրաւիրելով որ Շանկառնիէի դէմ

պարսաւադիր քուէ մը տրուի: Շանկառնիէ ինքզինքը արդարացուց և ժողովքը առանց իսկ սպասելու պատերազմի պաշտօնէին բացատրութեանց ինչպէս պաշտօնէին պատիւը կը պահանջէր, աճապարեց օրական վճռով մը ծանուցանելու իր վտահուծիւնը Շանկառնիէի վրայ: Պատերազմի պաշտօնեայն ասկէ մեծապէս մահացեալ, սուաւ իր հրաժարակաւնը, նոյնը ըրին նաև իր ընկերքը:

Նախագահը նոր պաշտօնարանը կազմելու ժամանակ Շանկառնիէի պաշտօնընկեցութիւնը իրեն նպատակ առաւ, առջի պաշտօնէիցմէ Պարոշ, Ֆուլտ, Ռուհէ, և Փարիսի կրկին անուանուեցան. Տրուէն տը Լիւյ Արտաքին գործոց պաշտօնեայ եղաւ և Ռէնիօ տը Ալէն Ժան ա' Անժէլի պաշտօնեայ Պատերազմի: Այս փոփոխութեանց յաջորդեց անմիջապէս Շանկառնիէի իշխանութեան երկու բաժնուիլը՝ որոց մի մասը այսինքն, Բարիզու գնդերուն հրամանատարութիւնը տըրուեցաւ Պարակէ ա' Իլլիէ զօրավարին և Սէնի ադգային պահապանաց հրամանատարութիւնը Փէրրօ զօրավարին: Այս ծանր հարուածը մեծապէս զայրացուց ժողովքին մէջ պահպանողական ոգիները. երկարատե եռանդնալից պերճախօսք բեմը յաջորդեցին: Նախագահին և ժողովքին մէջ եղած կռիւը յայտնի էր բայց որո՞ւն պիտի մնար յաղթութիւնը: Մաս մը խորհուրդ կու տար Շանկառնիէի գլխաւորութեան ներքև խօսարանական ուժ մը կազմել և անով մրցիլ ընդդէմ Նախագահին. ժողովոյն մեծամասնութիւնը վիճարանութեամբք կ'ուզէր հասնիլ այս նպատակին: Ժողովոյն մէջ հարցուեցաւ Պարոշի սրճով փրկեց զՌադղիա՝ ժողովքը թէ Նախագահը, և թէ ինչ ընթացք կը բռնէր պաշտօնարանը: Պաշտօնեայն պատասխանեց որ զՊաշտօնարանը չդատած, նախ հարկ է անոր գործոց սպասել» . «Սպասե՛լ, աւելցուց Տիւֆոր, յես այս նոր գործերնուդ և յետի Սագորի եղած աղաղակաց»:

6. Պերճախօսութիւնք Պէրիէի, Դիէրի, Շանկառնիէի կայսրութեան մը դէմ: — Այսու հանդերձ ժու

զովքը տակաւին յայտնապէս չուզեց ամբաստանել ըզ-
 Նախագահը և Պարոշ յետ առաջին հարուածոց ինքն
 ալ խրախուսեալ, ամբաստանեց յերեսփոխանաց զա-
 նոնք որոնք գացեր էին ի Վիզպատէն և ի Գլէրմոն,
 առաջինները տեսնելու Շամկորի կոմսը, յիտինքը
 զԼուի Ֆիլիփ որ մեռաւ 28 Օգոստոսի 1858: Պէրիէ
 կը ծանուցանէ որ Վիզպատէն գացեր էր տեսնելու
 այն աքսորականը որ բնաւ վերարբերութիւն մը չու-
 նէր նոր պատահարաց հետ, և որ աքսորուեր էր ու-
 բովհետև կը ծառայէր սկզբան մը որ բազմաթիւ դա-
 րեր չքեղապէս կառավարեր և մեծցուցեր էր զՎաղ-
 ղիա. յետոյ կը թախանձի զմեծամասնութիւն չբաժ-
 նուելու « վասն զի եթէ բաժնուի, կ'ողբամ հայրե-
 նեացս գալիք տպագայն, չեմ գիտեր ինչ պիտի ըլ-
 լայ Ձեր յաջորդաց. չեմ գիտեր ևս թէ արդեօք յա-
 ջորդ պիտի ունենա՞ք. այս որմունքը թերևս կանգուն
 մնան, բայց բնակեալ ի համր օրէնսդրաց. կ'ըսեմ որ
 թէ մեծամասնութիւնը ջախջախի, այն ատեն հարկ է
 կրել կամ ռամկավարութեան մը ներքև լուծիւն մը
 և կամ ինքնիշխան բռնութիւն մը. և կամ լուծիւն
 մը՝ զոր հակասական բացարձակ զօրութիւն մը պիտի
 ջանայ դնել հայրենեաց վրայ »: Պէրիէի կը յաջոր-
 դէ թիէր որ յետ մի առ մի թուելու մեծամասնու-
 թեան ի նպատտ Նախագահին գործածները և օրէնք-
 ները, զոհելով նաև ամենայն անձնական կարծիք ինչ-
 պէս դրամոյն աւելնալուն միջոց և միայն ջանալով որ
 այս երկու իշխանութիւնք մէկմէկէ չբաժնուին, կանց-
 նի յետոյ արդարացնելու Գլէրմոնի ճանապարհորդու-
 թիւնը առ Լուի Ֆիլիփ. « Չուզեցի առանց այցելու-
 թեան մը թողուլ մահուան ատեն, թագաւոր մը, որուն
 թէպէտ հակառակ էի քաղաքագիտութեան, յարգելով
 հանդերձ իր անձը: Այսու ամենայնիւ ես զայս ծանու-
 ցեր էի Նախագահին »: Բետոյ կը յաւելու որ ինչ-
 պէս Նախագահը այն միջոցին զօրահանդէսներ կ'ը-
 նէր « Կեցցէ կայսր » աղաղակներու մէջ, այն ժամա-
 նակներուն պէս յորում լեզէոնք կը ստեղծէին զԿե-
 սարը: Շանկաոնիէ պաշտօնընկէց եղեր էր պարզ բը-

նութեանը թեթև թերութեան մը համար: Իր դիրքը հակասական էր կ'ըսէք. սակայն Գաղղիոյ մէջ ուրիշ շատ հակասական բաներ կան, ամենէն առաջ այն որ ի Հասարակապետութեան երկու բաժանեալ իշխանութիւնք հաստատուեր էին»: Կը լմնցնէ իր խօսքը որ այս երկու իշխանութեանց հակառակութեան միջոց Գործադիրը հարկ է որ տեղիք տայ: « Մէկ միայն խօսք մ'ալ կը յաւելում, երկու իշխանութիւնք կան, եթէ ժողովքը տեղիք տայ, այն ատեն մէկ միայն կը մնայ, և վարչութեան ձևը պիտի փոխուի: Ապահով եղէք, բառերը վերջը կուգան. ե՞րբ, չեմ գիտեր. բառը երբոր կրնայ այն ատեն կուգայ, ալ կայսրութիւնը կազմուած է»: Արթուն և սպառնական գուշակութիւնք. Պէրիէ և Գիէր երկուքն ալ արդէն կը նկատէին գործադիր իշխանութեան պահանջքը և կայսրութիւնը, որուն ճամբուն յարդարիչք եղեր էին. և հիմայ արդեաք կարող էին ընդդիմանալու առանց բնաւ ոյժ մը ունենալու և պարզ ակադեմական ճառախօսութեամբք խոյս տալու այն վտանգներէն ուսկից կը կարծէին միշտ ազատ ըլլալ քիչ առաջ:

Շանկառնի՛, որուն վրայ կրնար դառնալ շատերուն յոյսը Ափրիկէի պատերազմաց մէջ ստացած համբաւով, իր մեծամեծ յասկութեամբք և զբօսեցուցիչ սեծարանութեամբք իսկ կարող չէր այսպիսի մեծ գործոյ մը: Ժողովքը ուզեց որ զօրավարր բացայայտէ իր և Նախագահին մէջ տարաձայնութիւնը: Շանկառնի, իր ընդլայնեալ ոճով յետ նկարագրութեան մը Գաղղիոյ մէջ եղած հինգ կուսակցութեանց որոց երկուքը ռամկավարք և կայսերականք՝ ի սկզբանէ հետէ իրեն դէմ պատերազմ կը յարուցանէին և հուսկ յաղթեր էին, լմնցուց խօսքը լսելով որ, « Սուրն հանգրստեան գատապարտուած է, գոնեայ առ ժամս, բայց ջախջախեալ չէ, և թէ օր մը հայրենիք պէտք ունենայ զայն պատրաստ պիտի գտնէ և հնապանդ, հայրենասէր և հաստատուն ներշնչութեանց, արհամար-

հելով սուտ մեծութեանց պըրանքը¹ » : Ժողովքը իբրև աւարտ այս գումարման օրական վճռով մը հաստատեց որ Ժողովքը բնաւ վստահութիւն չունէր Պաշտօնարանին վրայ, մտիկ չընելով Պարոջ պաշտօնէին բողոքանաց որ այս վճիռը ընդդէմ Սահմանադրութեան կը համարէր : Պաշտօնարանը բռնադատուեցաւ հրաժարիլ և Նախագահը չուզելով ընտրել ոչ մեծամասնութենէն և ոչ փոքրամասնութենէն, գործակատար պաշտօնարան մը կազմեց, այսինքն այնպիսի անձանցմէ որոնք քաղաքագիտական նշանակութիւն մը չունէին :

18
Յունուար.

7. Թոշակ Նախագահին . — Խնդիր վերաքննելու ըզ-Սահմանադրութիւն : — Փետուար 2ին Ելեմտից պաշտօնեայն օրէնք մը առաջարկեց որով յաւելուած մը կ'ուզէր Նախագահին թոշակին . Ժողովքը պատրաստ էր զայն շնորհելու այն պայմանաւ որ Նախագահն ալ

24
Յունուար.

1. « Երբ շանգամ մ'ալ տակաւին զօրավարն Շանկառնիէ պիտի երևէր բեմը, հսնկէ մէկ քանի բնդլայնեալ բացատրութիւնք ալ ընելու, բայց ապարդիւնք. այն նիստին մէջ լացաւ իր սոյտօնը : Այսպէս քաղաքական տեսլարանէն կ'աներևութանար յետինն Ափրիկէի այն զօրավարաց որոց վրայ Գալղիա մեծ վստահութիւն և սէր ունեցաւ . Գալէնեայք՝ որդի դաշնախումբ ժողովականի, իր ծննդեամբը հասարակապետական . Լամորիսիէր օրինաւորական, և թէպէտ կարծես քիչ մը ժամանակատարտամ երեցաւ իր կարծեաց վրայ բայց յետոյ անոր համար մեռաւ ազնուութեամբ . զօրավարն Շանկառնիէ կ'ուզէր, կ'ըսեն, միացնել օրինաւորականութիւնը ընդ օրէնանականութեան : Այս երեք զօրավարքս թէպէտ կարծեօք տարբերեալք, սակայն նմանք էին խոհմութեամբ . Գալենեայք, Լամորիսիէր, Շանկառնիէ և իրենց բնկերները Տիվիվէ, Պրատ և Լրֆօ, Լուի-Ֆրիլփի անկամանէն վերջը թէպէտ այլազան պարագայից մէջ, սակայն միշտ գոռոզք էին որ Գաղղիոյ կը ծառայէին և ոչ անձի մը, կ'արհամարհէին շողովքը և արծաթը : Ի դաշտ պատերազմի, ի բեմը, յարտը և յառանձնութեան, պատիւ հղան բանակին, իրենց կարծեաց և նայրենեաց : Գազսիլ Տրլըր Գլ . Գ. :

խօսարանական պաշտօնարան մը կազմէ. այս առաջարկը մերժուելով, ժողովքն ալ պաշտօնէին առաջարկը մերժեց զոր ի զուր պաշտպաներ էր Մոնպարմպէր :

Ժողովքը յանձնաժողովի մը յանձներ էր քննելու Սահմանադրութիւնը վերաքննելու համար եղած ազերսները : Ամենայն կուսակցութիւն յոյս մը առած էր այս միջոցով իր նպատակին հասնիլ : Օրինաւորականք գրեթէ ապահով կը յուսային Հենրիկոս Եի դարձը և տը Ֆալլու որ նոր դարձեր էր ի վենետկոյ Հենրիկոս Եի այցելութենէն, կը պատմէր աւոր սահմանադրական գաղափարքը և բարքը. և թէ ինչ մեծ անիշխանութիւն մը կը պատրաստուէր Քաղզիոյ, թէ չդառնար Հենրիկոս Ե, նոյնը կը պաշտպանէր նաև ի Ժողովին. խօսեցան յետոյ նաև Քավենաք, Միշէլ տը Պուրժ, Պէրիէ. իւրաքանչիւրը ի նպաստ իւր կուսակցութեան : Լոեց սակայն Փէրսինի՝ կայսրութեան և Լուի Նաբոլէոնի բերանը. վասն զի ապահով էր իր լուծեամբը աւելի գործելու : Խնդիրը մեծամասնութենէն ընդունելի չըլլալով մերժուեցան ազերսները : Արգիլուեցաւ դարձեալ առ ժամն Միշըլէ պատմութեան ուսուցչին դասախօսել ի Գոլէժ տը Ֆրանս, վասն զի ըստ վկայութեան նոյն իսկ իւր պաշտօնակցի մը Պարթէլլմի Սէնդ-Իլէր, որ միանգամայն մատուկարար էր վարժարանին. « Վնաս կը բերէր Քաղզիոյ վարժարանին պատուոյն որ ամենէն ցանկալին էր, և փոխանակ պատմութեան և բարոյականի դասախօսութիւն ընելու ինչպէս իր պարտքն էր, Միշըլէ քաղաքագիտութիւն կը քարոզէ » : Որչափ որ ազատականք տժգոհութեամբ կը տեսնէին Միշըլէի առ ժամն լուրը, սակայն Պարթէլլմի Սէնդ-Իլէրի խօսքը մեծապէս ազդեցութիւն ունեցաւ ինչպէս նաև իր արդիւնքը :

8. Խօսք Նախագահին ի Տիժոն. — Հետեւանք : — Այս խնդիրներուն միջոց Նախագահը Տիժոն գացեր էր շան դիսով բանալու Տիժոնէն Բարիզ երկաթուղոյն զիժը, ուր շահապը հացկերութիւն վրայ մաղթանք մը

իրեն ըրած ըլլալով, Նախագահը զանազան խօսից մէջ կ'ըսէր նաև « Երեք տարի է, կրցանք տեսնել որ ժողովքը այն ատեն ինծի միայն օգնեց երբ անկարգութեան մը դէմ հարկ եղաւ կոռուել ընկճմամբ. բայց երբ ուզեցի բարեգործել, երբ ջանացի բարւոյքել ժողովրդեանս վիճակը, այն ատեն մերժեց իր ընկերակցութիւնը: Եթէ Քաղզիս կուզէ ըսել, որ առանց ժողովոյն, իրաւունք չէ իրեն վրայ տրամադրութիւն մը ընել, այն ատեն թող ըսէ ազատ. իմ արութիւնս և եռանդս բնաւ պիտի չպակսին իրեն »: Եւ կը լմնցնէր իր ձառը այս խօսքերով « ինչ պարտք որ երկիրը վրաս դնէ, զիս միշտ յօժար պիտի գտնէ հետևելու իր կամաց: Եւ ապահով եղէք, Տեաքք, որ Քաղզիս իմ ձեռացս մէջ չկորսուիր »: Որչափ որ Լէօն Տօչէ պաշտօնեայն Նախագահին այս լեզուն յանդուզն և ընդդէմ Հասարակապետութեան համարելով, զիմեր էր ի Ռարիզ որ չըլլայ թէ Մանդեօրէ մէջ այսպէս սպառնալի, բայց համբաւը և հեռագիրք քան զինքը կանխեր էին: Ժողովքը մեծ յուզման և զայրացման մէջ էր, դրամագիրը իջեր էր, ամէն կողմ պետական հարուածի մը մերձաւորութիւնը կը հրատարակուէր: Ժողովոյն յուզման մէջ Շանկառնիէ բեմը կ'ելլէ և իր սովորական ոճով կը ծանուցանէ որ բանակը զրկուեր է այսպէս կեսարաց ժամանակի արժանի նուաստութեանց տեսող գանուելու, և զինուորք այն գլխաւորաց միայն պատրաստ են հետևելու որոց ձայնին վարժած են. և լմնցուց խօսքը ըսելով « Հիմայ, օ- 302-ի 15. բէնպիրք Քաղզիս, որոշեցէք ի խաղաղութեան »: Ժողովքը տակաւին չէր համոզուած որ Նախագահը իր ձարտարութեամբ քիչ քիչ պաղեցուցեր էր իրմէ զբանակը և նոյն իսկ քաղաքացիք անտարբեր աչքով կը նկատէին ամենայն ինչ:

Ըստ Սահմանադրութեան Նախագահ մը երկրորդ անգամ չէր կրնար ընտրուիլ, արդ 1852 Մայիս 1ին կը լմննար Լուի Նարսիլէոնի նախագահութեան ժամանակը. ուսմկավարք ամսօք յառաջ սահմանեցին յասմջ վարելու Նաստօ երեսփոխանին անունը, որ թէ-

պէս անվնաս և ճարտարամիտ անձ մ'էր սակայն իր հակակրօնական և ընկերամոլ սկզբանց համար ժողովրդեան մեծամասնութեան խորշելի, որ Նատոյի իշխանութեան հասնելով կը համարէր վտանգեալ ընկերական ամենէն յարգելի շահերը: Որչափ որ հասարակապետականք վարչութեան վրայ իրենց անվրտաչուութեան լեզուն կը սաստկացնէին, այնչափ առաւել Նախագահը կը ջանար ճառախօսութեամբք ժողովրդեան միտքը մերձաւոր սպազայ փոփոխութեան մը պատրաստել, նոյնը կը կատարէին նաև իրեն մտերիմ եղած զնդապետք Հոկտեմբերի պահպանութեան փոփոխութեանց առթիւ: Բարիզու կեդրոնական Հուլիոն հիմնարկութեան առթիւ Նախագահը կ'ըսէր որ կը յուսար ընդ փոյթ բարի քաղաքացւոց ձեռնառութեամբ Գաղղիոյ երկրին վրայ այնպիսի հիմնարկութիւն մ'ընել որ կարենայ հաստատուն մնալ մարդկային ամենայն բռնութեանց և յարափոխութեանց դէմ: Նախագահին ըսածները միայն խօսքով չէին, այլ փութով արդիւնքն իսկ կը տեսնուէին և քաղաքացիք օր օրուան վրայ անտարբեր աչքով կը սպասէին պետական հարուածին: Պարակէ ա'իլլիէի Բարիզու հրամանատարութեան մէջ յաջորդեր էր զօրավարն Մանեան որ իր կենաց ասջի տարիներուն մէջ աննշան անուամբ մը կոուած ըլլալով ի Սպանիա և ի Ռուսիերլու, յետոյ անուն ստացեր էր Լուի Նաբոլէոնի դաւակից գտնուելով երբեմն ի Լիլ:

9. Պաշտօնարան Հոկտեմբերի, Սէնդ Առնօ պաշտօնեայ Պատերազմի: — Քիչ վերջը Նախագահը առաջարկելով ի ժողովի Մայիս 31ի օրինաց բարձումը, Լէոն Ֆօլէ պաշտօնարանը որ Նաբոլէոնի ծառայած ժամանակ բնաւ Հասարակապետութեան հարուած մը չէր կարծեր տալ, հրաժարեցաւ, և նոր աննշան պաշտօնարան մը կազմուեցաւ, Ֆուրթուլ Մովային զօրութեան Գաղապիսանքս վաճառականութեան, տը Գորինէի Ներքին գործոց և ամենէն աւելի նշանաւոր Սէնդ-Առնօ զօ-

րավարը¹ մտաւ իրր պաշտօնեայ պատերազմի և Ոստիկանութեան գլուխ անցաւ տը Մոփա: Նոյեմբեր 4ին՝ 31ին օրինաց վիճումը ներկայացաւ ի Ժողովի և թէպէտ աջակողմեանք մեծագոյն փնասու մը դէմ առնելու համար կ'ուզէին յայտ մասին զիջանիլ Նախագահին կամաց, բայց մեծամասնութիւնը զայն մերժեց. և անկէ վերջը ալ յայտնի էր Ելիւսեան պալատան մէջ պետական հարուածին պատրաստուելը, կը մնար միայն օրը որոշել զոր Մանեան և Սէնդ-Առնօ տակաւին հասած շէին համարեր: Մանեան ամենէն առաջ ժողուեց իր քովը զինուորական հրամանատարները և ծանոյց իրենց որ հայրենեաց մեծ ծառայութիւն մը հարկ էր կատարել. և յորում կուրօրէն հնազանդութիւն կարևոր էր, անոր համար ուզողը կրնար հիմակուրնէ քաշուիլ եթէ հակառակ էր կարծեօք, « պարագաները ծանր են, պիտի փրկենք զՔաղաքիս որուն վստահութիւնը մեր վրայ է, բայց ինչ որ ալ ըլլայ ամենայն պատասխանատուութիւն իմ վրաս է. և ամենայն հրաման գրով ինծմէ պիտի ընդունիք, որպէս զի թէ յանկարծ ձախողի և որ և իցի վարչութիւն մը ձեզմէ հաշիւ պահանջէ, ցուցունէք ձեր ընդունած հրամանը: Միայն պատասխանատու ես եմ, Տեսաք, որ թէ հարկ ըլլայ կու տամ իմ գլուխըս գլխատիչ գործւոյն կամ կուրծքս կրնէլի տափարակին »: Այս խօսակցութիւնը մեծ ծավարութեամբ ընդունելի եղաւ: Սէնդ-Առնօ զօրավարը իր

1. Արկար կ'ըլլար եթէ ուզէինք Լյուսա Սէնդ Առնօ զօրավարին կեանքը համառօտի. զնեւ որ լի է միջնադարեան արժանի վիպասանական զանազան անցքերով, յորում կը տեսնուի իր արթուն, աշխոյժ, ամէն բանի ձեռք գարնող և յանգուսն բարքը: Պիտի մեծ խնամք ունենալով այս յանգուսն զնգապետին վրայ զիջքը շատ զործածեց Ափրիկէի պատերազմաց մէջ և յորս անգամ մը հինգ հարիւր արաքացիք բոցուած այրի մը մէջ կրակ տալով այրեց: Նոյնպէս Փետտար 24ին յեղափոխութեան միջոց իրրև հազարապետ, յանգուսն հրամաններ սուեր էր:

պաշտօնը ձեռք առած ժամանակ, այնպիսի հրաման մը ուղղեր էր առ բանակը որով յայտնի կ'ուզէր ժխտել Ազգային Ժողովքին իրեն պահպանութեան համար սահմանեալ զինուորական գորութեան արամադրութեանը իրաւունքը :

10. Ծածուկ Հանդերձանք պետական հարուածին : — Նախագահին զանազան առթիւ խօսքերը և պաշտօնէին նոր հրամանը, յայտնի ցուցուցին Ժողովոյն պէմ մերձաւոր դաւ մը, և խուզարկուք, որոնք անոր պահպանութեանը պատասխանատուք էին, առաջարկեցին որ հաստատուի կրկին 1848 Մայիս 11ի վճիռը որ Ժողովոյն նախագահին իշխանութիւն կուտար ուղղակի բանակին և ուրիշ իշխանութեանց վրայ արամադրել որչափ որ իրեն կարևորք էին : Երեսփոխանացմէ մաս մը կը համարէր որ այսպիսի հաստատութիւն մը այնպէս կրնայ նշանակել իբրև թէ վճիռը մասնաւոր օրինաց մը պէտք ունենար ի գործ դրուելու համար : Երբքին գործոց պաշտօնեայն տը Գորինեի անգէտ տակաւին Նախագահին դաւուռն, ծանոյց որ Սահմանադրութեան այդ յօդուածը արդէն ամէն զինուորանոցներու մէջ որմոց վրայ յարեալ է և հիմայ զայն օրինաց փոխարկելը բազմաթիւ հակառակընդդէմ մեկնութեանց պատճառ կրնայ ըլլալ : Սակայն այս իր խօսքը տհաճութեամբ լսուեցաւ յԵլիսեան պալատը և երկրորդ օրը թլլթով մը առ Նախագահն ժողովոյն կը ծանուցանէր որ « ինքը համոզեալ էր թէ Մայիս 11ին հրովարտակը ո՛ւր ուժ չունէր գործադրութեան » : Իրեն խօսքով հրատարակած ժամանակ՝ արդէն Սէնդ-Աւնօ պատուիրեր էր բառնալու զայն զինուորանոցներու որմոց վրայէն : Խուզարկուաց առաջարկութիւնը 17ին վիճարանութեանց առաջարկուեցաւ, գնդապետն Շարրա եռանդեամբ զայն պաշտպանեց ցուցունելով որ հարկ էր զառաջարկութիւնը օրինաց փոխարկել, իրեն պատասխան տուանուանի հռետորն Միշէլ աը Պաւրժ ցուցունելով որ այս ամենայն կարծեալ երկիւղները, տեսութիւնք էին և ցնորք, և վերջացուց խօսքը լսելով « որ թէ

Նոյեմ. 17

կայ վտանգ մը, կայ նաև աներևոյթ դէտ մը որ զմեզ կը պահպանէ և այս դէտն էր ժողովուրդը » : Այս խօսքերս մեծ ծափահարութեամբ ընդունելի եղան և շատերուն միտքը առ ինքն ձգեցին, և ի մեծ զօրմացումն հասարակապետականաց, առաջարկութիւնը մերժուեցաւ : Վիճարանութեանց սաստկացած ժամանակ Պըտտ զօրավարը հարցուցած ըլլալով Սէնդ-Առնօյի որ զինուորանոցներէն արդեօք ինքը վերուցեր էր հրովարտակը, անիկայ գոռոզութեամբ « Այո՛ » պատասխաններ էր, յետոյ ժողովը շլմեցած, արհամարհութեամբ մը ձգեր էր զայն՝ աչքով նշան մը ընելով Մանեան զօրավարին և տը Մոփայի, որոնք իրեն հետեւեցան : Կը պատմեն յիշատակարանացմէ ու մաւր որ թէ առաջարկութիւնը ընդունելի ըլլար, նոյն իրիկունը անմիջապէս պիտի կատարուէր պետական հարուածը և եթէ հաւատանք ևս Կրքնիէ Քասսանեաքի¹, այս վարչական հարուածոյն գիտակ էին նաև տը Ֆալլու և Թիէր, որոնք թէպէտ յետոյ բողոքեցին այսպիսի ամբաստանութեան մը դէմ : Սակայն այս յայտնի է որ թէպէտ շատերը կը կասկածէին և շատերը կը զուշակէին, բայց բնաւ մէկը չէր մտածեր զայն խափանելու : Ընդհանուր միտում մը կար աւակողման մէջ դէպ ի միապետութիւն, բայց ո՞վ պիտի յաղթէր . — այն որ պիտի գործէր : Բանակը

1. Պատմութիւն անցից՝ 2 Գեկտեմբերի . Նոր տպագրութիւն . յառաջաբան :

2. Կը պատմեն ևս ոմանք որ Փէրսենեի Նաբոլէոնի հաւատարմը, 1851 Ապրիլի սկիզբները գացած ըլլայ առ Շանկաոնիլ զօրավարը որ կ'աշխատէր իր աղքատին սենեկին մէջ « ինչցաւ, ըսեր է ներս մտնելով, որ այսպիսի պզտիկ տեղ մը ամփոփուեր է այն անձը որ ի Գաղղիա այնպիսի մեծ դիրք մը ունի » — « Վասն զի պզտիկ շրջանակի մը պէտք ունիմ մեծ երեւելու համար, պատասխաներ է զօրավարը » : Յետոյ Փէրսենեի իրեն շատ առաջարկութիւններ ըրեր ի նպաստ Նաբոլէոնի, մեծամեծ խոստումաճք, զորս ամէնն ալ արհամարհելով մերժեր է Շանկաոնիէ :

ընդ երկար անորոշ վիճակի մէջ մնացեր էր, մինչև տեսնելով ժողովոյն անգործութիւնը և անհոգութիւնը Նախագահին կողմն անցաւ : Նախագահը Նոյեմբեր 25ին Լոնտրայի աշխարհահանգիսին ընկալեալ մրցանակքը բաշխելով յայտնապէս կ'ըսէր ճարտարաց, որ Գաղղիա կը ծփայ ի մէջ ռամկավարաց և միապետականաց յորոց երկուքէն ալ օգուտ մը չկրնար ունենալ, յուսացնելով միայն իր վարչութեան վրայ : « Այս վարչութիւնը պիտի կատարէ իր պաշտօնը լիտան զի կը կրէ յինքեան զիրաւունս ստացեալ ի ժողովրդէն և զգորութիւն որ կու գայ յԱստուծոյ » :



ԳԼՈՒԽ ԼԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐ ԶԻ

1. Պետական հարուած. — 2. Մոռնի և տր Մոփա գլխաւոր գործոյք. — 5. Կալանաւորութիւնք 16 էրեւոփոխանաց. — 4. Հրովարտակք Նախագահին — Առաջարկ նոր Սահմանադրութեան. — 5. Ընդհանուր քուէարկութիւն. — 6. Բողոք երեւոփոխանաց ընդդէմ Նախագահին. — 7. Բարիզեցոց անտարբերութիւնը — Սակաւ պատնէշք. — 8. Նոր պաշտօնարան. — Պատրաստութիւնք քուէարկութեան. — 9. Պատերազմ Բարիզու. — Իատապարտութիւնք. — 10. Խտտութիւնք ի Գաւառս. — 11. Ընդհանուր քուէարկութիւն — Տասնամեայ Նախագահութիւն. — 12. Աքսոր Հասարակապետականաց. — 13. Սահմանադրութիւն. — 14. Օրէնք ընդդէմ Օսլէանեան ջեղին:

1. Պետական հարուած: — Նոյեմբեր 29ր, Գեկտեմբեր 1ր ամբողջ օր և գիշեր Նախագահը իր մտերիմներով պետական հարուածին ելից վրայ մտածեր էին: Սահմանուեցաւ Գեկտեմբեր 2՝ օր պատերազմին Աւստրիացի, ամենայն ինչ նախատեսուեր էր. Փերսիաներ, Մոռնի, Սէնդ-Առնօ պատերազմի պաշտօնեայն, ար Մոփա Ոստիկանութեան գլուխը, Լավեւոզին սղգային պաշտպանաց հրամանատարը, Մանեան Բարիզու բանակին հրամանատարը իրենց վերաբերեալ հրամանքը հոգացած էին, բոլոր թմբուկները պատուեր էին սրպէս զի չըլլայ թէ ազգային պաշտպանք շնչեցնեն զայն ի գումարումն: Նախագահը մերթ տըխուր էր և աժգոյն և մերթ բռնադատեալ զուարթ երևնալու, Մոզգարի հետ վեր վար կը քայլէր սրահին մէջ երբեմն զրադեալ մտօք և երբեմն ծիծաղելով որ

արդեօք « ինչ պիտի ընէին ժողովոյն երկու փոքրահասակները թիէր և Պազ, յանկարծ իրենք զիրենք տեսնելով կալանաւոր և շապկանց ¹ » :

2. Մոռնի եւ տը Մոփա գլխաւոր գործողք : — Մոռնի զոր Նախագահը մտացը մէջ Ներքին գործոց պաշտօնեայ անուաններ էր և որ բարուք և դիմօք իսկ մեծ նմանութիւն ունէր իր սիրոջ, բնու կասկած մը շտալու համար Օփէրա գացեր էր, ուր կը գտնուէին երաժշտութեանց մօտ խցիկի մը մէջ նաև Գալէնեաք և Լամորիսիէր : Մոռնի աստ անդ այցելութեան կ'երթար ի խցիկս ինք զինքը ցուցունելու . ամենուն հետ ըստ կամս քաղցրութեամբ վարուելով, յետոյ փութով դիմեց յԵլիւսեան պալատը ուր կը սպասէին իրեն Մոգար, Փէրսինեի, տը Մոփա, տեղապահ զնդապետն Պէվիլ, Աէնդ-Աոնօ : Մանեան խոստացեր էր ամենայն օգնութիւն այն պայմանաւ որ իրեն շժանուցանեն պետական հարուածոյն օրը և ժամը, այլ միայն երբ հարկ է գործել : Տէօրի գունդեր կը պատրաստէր որոնք նախ պիտի պաշարէին սղգային տպարանը :

Նախագահը երբ քովը տեսաւ իրեն մտերիմքը այն ատեն նախ տուաւ Մոռնիի՝ Ներքին գործոց պաշտօնէութեան հրովարտակը և ծրար մը յանձնեց Պէվիլի փութով տանելու զայն Աղգային տպարան և սպազրել : Տպարանին տեսուչը բունի աշխատաւորքը տպարան պահեր էր և Պէվիլ հանելով և բաժնելով տը պուելիք հրատարակութիւնքը, մահ սպառնացաւ ով որ չուզէր աշխատիլ կամ փախչիլ և կամ պատուհանէն դրսի հետ հաղորդակցութիւն մը ունենալ և ամէն աշխատաւորի մէջ երկու զինեաք դրուեցան : Առաւօտեան ժամը երեքին տպագրութիւնը լմնցեր էր և Պէվիլ օրինակները փութով տարէր էր առ տը Մոփա Ոստիկանութեան պաշտօնեայն որուն յանձնուած էր զանոնք կպցնել տալ քաղքին մէջ, և ուր ժողովուած էին ամէն կողմէն Բարիզու ոստիկանք Լոնտրայէն եկած աքտորելոց դաւոյ մը պատրուակաւ : Հրատաւ

1. Վերոն . Յիշատակարանք Բարիզու քաղաքացւոյ մը :

բակութիւնքը նախ կարգացուելով Ազգային տպարանին զինելոց՝ մեծ ծափահարութեամբք ընդունուեր էին :

Քաղաքը սակաւին լուծեան մէջ էր . Բարիզու 48 ստիկանք որ ար Մոփայի քով ժողովուեր էին կասկած մը չտալու համար , իրենց թաղերը կը ցրուէին , ամէնն ալ համամիտք անթերի կատարել իրենց յանձնեալ պարտքերնին : Ամէն կողմ բազմաթիւ վատահանձինք կը ցրուին և պէտք եղածին չափ կառքեր կը հոգացուին կալանաւորքը տանելու համար : Բնու ազգային պահապան մը պիտի չզինուեր և այս մասը խնամքով պատուիրեր էր Նախագահը :

3. Կալանաւորութիւն 16 Երեսփոխանաց : — Ժամը առաւօտեան վեցն էր երբ ղոկատներու և ոստիկանաց հրաման տրուեցաւ կալանաւորելու անմիջապէս 16 երեսփոխանք յորս էին նախ Քավէնեաք , Լամորիսիէր , Շանկառնիէ , Պըտօ , ԼըՏըօ , Շարրա , Շօլա , տեղապահն Վալանդէն , նոյնպէս Թիէր , Պագ , Ռօժէ տը Նորա և այլք : Բաց յերեսփոխանաց ուրիշ 42 քաղաքացիք՝ որոց ազգեցութիւնը կրնար վասնպաւոր ըլլալ :

Ամենէն առաջ բռնուողներն եղան իրենց զիշերուան քնոյն մէջ առանց կարենալու դէմ դնել , զինուորական երեսփոխանները՝ Քավէնեաք , Լամորիսիէր , Շանկառնիէ , Պըտօ , ԼըՏըօ և Շարրա : Ոմանք ջանացեր էին ի զուր զզինուորս համադելու որ այս իրենց գործածը ընդդէմ էր Սահմանադրութեան և Թիէր վիճեր էր առ ինքն եկած ոստիկանին հետ . սակայն բռնադատուեր էին հնազանդելու և ամէնն ալ կառք տարուեր էին ի բանան Մագաս : Բարիզու գունդերը կարգաւ Ազգային ժողովոյն պահպանութիւն կ'ընէին , հազարապետն Լափինաս որուն պահպանութեան կարգն էր զիմեց գունդերով Ազգային ժողովոյն պալատան վրայ ուր կը գտնուէր տեղապահն Նիէլ և հրամանատարն Մեւնիէ , որոնք չուզելով հնազանդիլ և մաս-

նել պալատը, կալանաւորեցան և զօրքը բռնեց պալատան ամէն մուտքերը¹ :

Ժամը սուաւօտեան վեցը անցեր էր երբ տը Մոփա հեռագրով մը կը ծանուցանէր Լուի Նյարսլէտնի տարած լիովին յաղթանակը : Եւ յիրաւի կալանաւորութիւնքը մեծ արթնութեամբ և զգուշութեամբ կատարուեր էին . 30,000 զինեալ հետեակք, հեծեաք և թնդանօթաձիգք գետեղուեր էին ի հրապարակն լա Կոնգորտ և յԵլիւսեան դաշտս, պատրաստ որ և իցէ արկածի և պաշտպանելու դաւակիցքը եթէ կարեւոր ըլլար : Բարիզեցիք այն ատեն իմացան երբ առաւօտը սրմոց վրայ կպուցած տեսան պետական հարուածոյն վերարհրեալ հրովարտակը և սրոց դիմաց խռնեցաւ ամբոխը ցուրտ և բարակ անձրեւի մը ներքև :

1. Այնքան կարեւոր և նաաքրքրական է Կեկտեմբեր 2ի պետական նարուածին պատմութիւնը որ նամառօտիւ մը պատշաճ կը դատինք յիշելու այս կալանաւորացմէ ոմանց պատահարը քաղելով երկու կողմի զրիշներէ որ յայտ մեծաւ մասամբ կը միաբանին :

Զօրավարն Կավէնեաք, որ իշխանու թենէն իջնալէն վերջը սուրիշ հեկամուտ մը շունէր բայց ինչ որ կը տրուէր շոկատի մը զօրավարի, շափաւոր բնակու թիւն մը ունէր ի փոփոցն շէլտէր թիւ 12 : Ոստիկանն Գուէն ժամը 6ին կ'արթնցնէ դռնապանը որ փութով նշանով մը կ'իմացնէ զօրավարին ի ձեռն աղախնոյն ոստիկանի մը գալուստը : Կավէնեաք արդէն գիտէր որ այսպիսի կալանաւորութիւն մը մտա է, պատուիրեց դռնապանին որ ներս մարդ շընդունի մինչև շատու գէ անձին ո՛վ բլլալը : Կոնապանը յետ ստուգելու որ ոստիկան մ'է, ներս կը մտցնէ : Այս միջոցիս զօրավարը զգեստները հագեր էր և զինքը ներս կ'ընդունի . — « Իչկեր ես գիս կալանաւորելու, ըսաւ, պատրաստ եմ ետեւէդ գալու, միայն հրաման տուր ինձ երկու նամակ գրելու » : Ոստիկանին հաստատական պատասխանին վրայ Կավէնեաք ներքին սենեակը մտաւ որուն դռները բաց մնացին : Կավէնեաք այն օրերը պիտի ամուսնանար, երկու նամակներէն մին կը գրէր առ ապագայ աները միւսը առ նշանածը յորում կ'ըսէր, որ տեսնելով այն զիրքը յորում կը գտնուէր :

4. Հրովարտակը Նախագահին. — Առաջարկը Նոր Սահմանադրութեան: — Այս հրովարտակներէն մին կ'ըսէր որ ինչպէս ներկայ վիճակն չէր կրնար այլ ևս տեւել, հայրենիք ի վտանգ կը դիմէր. Ազգային ժողովք փոխանակ նեցուկ ըլլալու կարգաց, վառարան մը դարձեր էր դաւաճանութեան և վնասակար Գաղչիոյ հանգստութեան համար: « Ես զայն ցրուեցի և զժողովուրդը դատաւոր կը կոչեմ իմ և իր մէջը. Սահմանադրութիւնը եղած էր, գիտէք, տկարացնելու համար առաջուրնէ այն իշխանութիւնը որ դուք ինծի պիտի յանձնէիք: Վեց միլիոն քուեայք յայտնի բողոք մ'էին ընդդէմ անոր, և սակայն ես հաւատարմութեամբ պահեցի: Առ ոչինչ գրեցի գրգիռները, նախատինքները և արհամարհութիւնները: Բայս այ-

պատիւր կը պահանջէր զնշանածը ազատ ընելու այն խոստմանէն զոր տուած էր: Յետ այս դառն պարագը կատարելու, պատրաստ կ'ընէ ինքզինքը չետեւելու և վեր կ'ելլէ, միշտ քով ունենալով բարձրաճասակ, խոժոռ և յանգրիհեալ զգեստով անձ մը որ միշտ քովէն կ'երթար այլ ձեռքը ծոցը, ուր կարծես հրազէն մը պահած էր, և կառքին մէջ ալ իր դիմացը կը նստի, ձեռքը միշտ ծոցը, Գազէնեայք հանդարտութեամբ մը « կը գուշակեմ, կ'ըսէ, քեզ յանձնուած պաշտօնը. բայց ապահով եղիք որ զայն կատարելու առիթ մը չեմ տար »: Անկէ վերջը մինչև Մազաս ուրիշ բան չըսաւ:

Լրբա ոստիկանը և քաղաքական պահապանաց հրամանատարը Պօտինէ որոնց յանձեալ էր կալանաւորել Ղանկառնիէ, բազմութեամբ և արդարեւ քաղաքի մը պաշարման նման պատեցին Սէնզ (Սնորէ փողոցին թիւ 5 տունը, ուր կը բնակէր զօրավարը: Դանկառնիէ հանգիստ կը քնանար երբ յանկարծ դռնապանէն ազգեալ զանգակ մը, կ'իմացնէ իրեն, բայց մէջերնին դրած նշանին, զինելոց տունը պաշարելը: Զօրավարը կ'ելլէ զէնք կը փնտռէ: Ի զուր դռնապանը կը ջանայ ոստիկանութեան զինուորքը զբաղեցնել. անոնցմէ մէկը ծածուկ անցք նկատելով որ չիշտ գաւիթը կը չանէր, Լրբա կը նետեի և կը մտնեն առաջին յարկը ուր կը գտնեն ծառայ մը ձեռքը բանալիներով և բռնութեամբ զայն կորցելով կը դի-

սօր որ հիմնական գաշինքը այլ բնաւ պատուեալ չէ անոնցմէ, որոնք միշտ անոր անունը կը կարգան և այն մարդիկ որ արդէն երկու միապետութիւն կործանեցին և հիմայ ալ կ'ուզեն իմ ձեռքեր կապել, Հասարակապետութիւնը տապալելու համար, իմ պարտքըս է ի դերև հանելու անոնց դաւաճան խորհուրդները, պահպանելու զՀասարակապետութիւնը և ազատելու զՀայրենիս, հարցնելով ժողովրդեան կամքը զոր միայնակ զլուխ կը ճանչնամ Քաղղիոյ :

Ուրեմն կը կարգամ առ բովանդակ ազգն և կ'ըսեմ. « Նիւէ կ'ուզէք որ շարունակենք այս խառնաչփոթ վիճակը որ զմեզ կը սկարացնէ և կը վտանգէ մեր ապագայն, իմ տեղս ուրիշ մը ընտրեցէք, վասն զի պէտք չէ ինձ այնպիսի իշխանութիւն մը որ սղէ-

մեն զօրավարին ննջելոյ սենեակը: Շանկառնիւ էր յառաջէ ձեռքը ասբանակով մը, բայց Լըրա որ հուժկու անձ մ'էր, կ'անապարէ կը բռնէ զօրավարին երկու բազուկքը. այլ անկարելի էր ընդդիմանալ, զօրավարը կ'ըսէ որ պատրաստ է իրենց նետակու, շուտով կը հագուի, կը նստի կառք, որ երկու կարգ ոստիկանութեան ձիաւոր և սապարակիր պահապանաց մէջէն անցնելով կը հասնի ի Մազաս :

Պլանչէ ոստիկանը որուն յանձնեալ էր Լամորիսիերի կալանաւորութիւնը կը հասնի ի փողոցն Լաս-Գազ թիւ 11. սակայն չէր գիտեր յարկը, և դանապանը անհնարին եղաւ որ զայն իրեն նշանակէ, այսու հանդերձ ոստիկանութեան ծառայք վեր կ'իւլեն և կը հանդիպին Լամորիսիերի ծառայի մը որ ձեռքի կանթեղը մարելով ծառայից սանդուխէն « Գողեր », պոռալով ի փողոցը կը դիմէ և ուր զինքը կը բռնեն ոստիկանութեան սպասաւորք, որոց նետ կուռելով կը վիրաւորուի ևս. յետոյ երբ զինքը շատ կը նեղեն, կը նշանակէ իր տիրոջ սենեակը. Լամորիսիեր առանց ձայն հանելու կը նետուի ոստիկանութեան անձանց. բայց հագիւ կառքը կը մտնէ գլուխը դուրս կը հանէ և տեսնելով Լէժիօն տ'()նէօրի պահապանքը անոնց հայրենախորութիւն կը կարդայ. Պլանչէ զինքը ետ կը քաշէ « Նիւէ լուռ չկենայ, կ'ըսէ, կայ կերպ մը զինքը լուսննելու » և ծոցէն գէնք մը կը հանէ :

կութիւն չկրնար ընել, զիս պատասխանատու կ'ընէ այնպիսի գործոց, զորս չեմ կրնար խափանել և զիս զէկին կը կտպէ երբ զնաւը կը տեսնեմ դիմել յանկուղի :

« Իսկ թէ ընդհակառակն տակաւին իմ վրաս վրասաճուութիւն սնիք, միջոց տուէք ինձ կատարելու այն մեծ պաշտօնս զոր Ձեզմէ ստացած եմ :

« Այս պաշտօնս կը կայանայ վերջ տալ Յեզակիոսի ժամանակաց, գոհացնելով ժողովրդեան օրինաւոր պէտքը զանոնք պաշտպանելով խռովիչ կրքերէ և մանաւանդ կարգել այնպիսի կանոններ որոնք մարդու մահուընէն վերջն ալ տեսն և հիմունք ըլլան տեական կարգաւորութեան համար :

« Համոզուած որ իշխանութեան հաստատուիլը և մէկ միայն ժողովքի մը ազդեցութիւնը պատճառք են

կըր Սասիկանութեան պաշտօնեայն Պրատո գորավարին սեւեակը կը մանէ և զինքը կը բռնադատէ փութով էլլելու անկողնէն, գորավարը նանգարտ դանդաղութեամբ մը կը գգեստաւորի, և երբ մեկնելու ժամանակ կուգայ, Պրատո փոխան նախագահ ժողովոյն կը սպասենց իրեն որ ինք զինքը արատրոյ օրինաց կը զնէ այնպիսի կալանատնութեան մը համար և կը յենու վատարանին վրայ բռնով որ չուզէր մեկնիլ բայց թէ բռնութեամբ. Հիպո ոստիկանն ձեռքը կ'երկնցնէ վզնոցին և միտ պաշտօնեայն ալ ձեռքերէն և արունքներէն բռնելով կառք կը տանին որ դրան առջե կը սպասէր : Պրատոյ ձայնը, « Մատնութիւն ի գէն » կը լսուի մինչև ճիւղոցն Պաք, ուր կեցած էին բազմաթիւ քաղաքացւոյնք որոնք զինուալ կը պաշարեն կառքը :

Կը պատմէ Գասանեայ պետական նարուածին գրիչը, որ թիէր խոր քնով կը ննջէր երբ Հիպո ոստիկանը մտաւ իր տանը ի հրապարակին Սէն-Պիէրթ թիւ 1. և զինքը արթնցնելով ծանայց իր սով բլլալը և իր պաշտօնը : Թիէր անկողնոյն մէջ նստելով և ձեռքը աշարներուն տանելով « որոց վրայ իջած էր սպիտակ բրդէ գլխանոց մը » և երկար վիճաբանութիւն մը սկսաւ. Հիպոյի հետ թէ արդեօք այս իր կատարած պաշտօնը սահմանադրական էր : Յետոյ զգեստատնութեան վրայ

յարատե շփոթից և անմիաբանութեան, Չեր քուէարկութեան կ'առաջարկեմ սահմանադրութեան մը հետեւեալ հիմունքը զորս ապա աւելի պիտի ընդարձակեն ժողովներ:

Ա. Մէկ պատասխանատու գլուխ մը ընտրուած աւսը տարուան համար:

Բ. Պաշտօնեայք որոնք կախումն ունենան Վործադիր գլխէն:

Գ. Ատեան մը պետութեան կազմեալ ի նշանաւոր անձանց, պատրաստող օրինաց, և վիճող Օրէնսդիր ժողովոյն առջև:

Դ. Օրէնսդիր ժողովք մը որ վիճէ և քուէ տայ օրինաց, անուանեալ յընդհանուր քուէարկութենէ, առանց դասակարգութեան ի քուէարկութեան, պատճառ խարբեայ, նենգաւոր ընտրութեանց:

Ե. Երկրորդ ժողովք մ': կազմեալ հայրենեաց ա-

քր տարուեցաւ առանց ամենեին այլայլութեան մը և անկէ ի Մագաս:

Լը Տըօ զօրավարը որ միշտ կասկած մ'ունէր Պետական նարուածին, ամէն երեկոյ տուն շագացած աղէկ մը կը զննէր ամենայն շարժումն, և թէպէտ առջի իրիկուրնէ ունեցեր էր կասկածներ, սակայն զործոյն լրումը նոյն գիշերը չէր նամարեր: Երբ Պէրդոլիօ ոստիկանը մտաւ յարկը, զօրավարին եօթնամեայ տղան արթննալով սկսաւ պոռալ: Պէրդոլիօ ապահովուց զմանուկը որ չօրը նամար կարեւոր թուղթ մը բերեր էր և ուրիշ բան չկար, այն ատեն մանուկը առաջնորդեց մինչև չօրը սենեակը: Լը Տըօ, քայլից շառաչէն գետին ցաղբեր էր անկողնէն, Պէրդոլիօ և իր մարդիկը վրան կը վազեն, կուզէ գէմ կենալ և կոխ մը կը ծագի, գինուորները ներս մտնելով ի զուր օգնութեան կը կանչէ « իր գինուց ընկերքը »: Իր տիկնոջ հիշը և արտասուքը, ինչպէս նաև որդւոյն յուսահատութիւնը որ կուլար իբրև չօրը մատնիչ. չազդեցին իր վրայ և նաւանեցաւ նետեելու Պէրդոլիօյի: Մինչև որ կառք մը մտաւ գինուորք իրենց նրացանները վրան շտկած բռնած էին պատրաստ նրամանի. Լը Տըօ ալ Մագաս տարուեցաւ:

կանաւոր անձանցմէ, որ զօրաւոր իշխանութիւն մը ունենայ և պահապան ըլլայ հիմնական դաշանց և հասարակաց ազատութեանց :

« Այս գրութիւնը զոր դարուս սկիզբը հաստատեց Առաջին Բղեաշխը, Վաղղիոյ խաղաղութիւն և հանգստութիւն սուաւ. նոյնը հիմայ ալ կրնայ ապահովցնել :

« Այս է իմ խորին համոզումս : Եթէ դուք ալ նոյն կարծիքը ունիք, ցուցուցէք Ձեր քուէներով. իսկ թէ հակառակ և նախամեծար կը համարիք սկստ վարչութիւն մը՝ միտպետական կամ հասարակապետական. չեմ գիտեր, որ անցեալ և ապաւնի ցնորքներէ դայն առնելով, ժխտողաբար պատասխանեցէք :

« Այսպէս ուրեմն, ստաջին անգամ 1804էն վերջը, քուէարկութիւն պիտի ընէք գիտնալով խնդիրը, գիտնալով որո՞ն և ի՞նչ բանի համար :

« Եթէ Ձեր քուէից մեծամասնութիւնը շընդունիմ, այն ատեն կը ջանամ Նոր ժողովք գումարելու և անոր յանձնելու Ձեզմէ ընկալեալ իշխանութիւնը :

« Բայց թէ կը կարծէք որ այն խնդիրը որուն նշանակ է իմ անունս, այսինքն Վաղղիա նորոգ կազմեալ ի ձեռն 89ի յեղափոխութեան և բարեկարգեալ ի կայսերէն, է միշտ ձերը, այն ատեն հուշակեցէք զայն հաստատելով իշխանութիւնը զոր ես Ձեզմէ կը խընդրեմ :

« Այն ատեն Վաղղիա և Եւրոպա կ'ազատին յանիշխանութենէն, կը հարթին խոչք և խուժք, դժուարութիւնք կ'աներևութանան, վասն զի ամէնը ժողովրդեան վճռոյն մէջ կը տեսնեն Նախախնամութեան կամքը » :

Աւելորդ է ըսել սրբան ճարտարութեամբ գրուած էր հրովարտակը : Ընդհանուր քուէարկութիւնը որչափ որ արտաքսապէս ախորժելի խայծ մ'է ժողովրդեան բայց և դիւրին գործիք մը միշտ իշխանին կամքը հաստատելու :

5. Ընդհանուր քուէարկութիւն : — Արեւ հրովարտակ մը յանուն գաղղիական ժողովրդեան կ'ըսէր .

« Ազգային ժողովքը լուծուած է .

« Ընդհանուր քուէարկութիւնը կը հաստատուի : Մայիս 31 օրէնքը վերցուած :

« Քաղաքացի ժողովուրդը իր յանձնաժողովոց հրաւիրեալ է 14 գեկտեմբերէ մինչև 21 դեկտեմբերը :

« Բոլոր Առաջին զօրաբաժինը պաշարման վիճակի մէջ է » :

Կար ուրիշ հրովարտակ մ'ալ առ բանակն յորում յեա շողօքորթելու զինքը և ըսելու որ ցրուեցաւ այն ժողովքը որ խախտանարար էր իրեն սիրոյ զգացմանը սա Նախագահն, կը յաւելուր՝ որ ինքն է միայն օրինաւոր իշխանութիւն զոր պէտք են յարգել յասաջ քան զամենայն : « Տուէք աղասուէթեամբ Ձեր քուէն իրրև քաղաքացիք, բայց մի մտնաք որ զօրավարէն մինչև զինուոր բանակին պարտքն է կոյր հնագանդութիւն փարշուէթեան գլխոյն » : Եւ կը լրմընցնէր այս խօսքերով . « Զինուորք, Ձեր պատմութիւնը իմն է, անցելոյն մէջ միարան են իմ և Ձեր փառքը և աղէտքը . նոյնպէս ապագային մէջ նոյն պիտի ըլլան զգացմունքնիս և խորհուրդնիս, յանդորրութիւն և ի մեծութիւն Քաղաքի » :

6. Բոլորք երեւափոխանաց ընդդէմ Նախագահին : — Առաւօտը պետական հարուածին լրոյն տարածուելով, երեսփոխանք իմանալով իրենց ընկերաց կաշխանաւորութիւնը, մաս մը զուամբուեցան Իվան երեսփոխանին քով որ ժողովոյն ատենագրայիրներէն մէկն էր և մաս մ'ալ Սախլոն Պարոյի քով ուր բողոք մը գրեցին ընդդէմ Լուի Նարոլէոնի, զինքն անկեալ հրատարակելով և հրաւիրելով Արդարութեան ատենանը դատելու զինքը իրրև մասնիչ : Այս բողոքը ստորագրողաց մէջ էին Գոքվիլ, Կիւստավ ար Պամոն, Տիւֆոր, Էդիէն, Օսկար Լաֆայէթ, Լանտիւրնէ, ար Պրուլեր, Տիւվէրժիէ ար Հօրան, Ալենդ-Պէօլ և այլք բազումք : Երեսփոխանաց մաս մը իրեն գլուխ ունելով զՏարիւ, փոխան նախագահը, փորձ փորձեց Պուրպոնի պաւտար մանել բանութեամբ բայց յեաս վանեցաւ Էսփինասի գնդերէն : Աւրիչները ազատ դունէ մը կրցան ներս մտնել և ժողովքի մը բաղմեցան : Բանութեամբ

հոն բերին նաև զՏիւփէն Նախագահը : Փութով դիմեցին զինուորք ցրուելու զերևոփոխանս և որովհետև երեսփոխանք կը բողոքէին, Տիւփէն դառնալով իրենց ըսաւ. « Իրաւ է որ մենք իրաւունք ունինք, բայց իրենք այժ ունին, հարկ է մեկնիլ » :

Երեսփոխանք այսպէս վաճառուած իրենց բնակութենէն իրեք հարիւր հոգի գումարեցան ընդ նախագահութեամբ Պընուա—տ'Ազի՝ փոխան—Նախագահին Բարիլու ժ. աստիկանական վիճակին պալատան սրահին մէջ, ուր առաջին գործերնին եղաւ բողոք մը բնդդէմ Լուի Նարոլէոնի զոր անկեալ կը հռչակէին յիշխանութենէ, կը հրաւիրէին որ Արդարութեան Բարձր ասեանը կազմուի և ամենայն քաղաքացւոց և պաշտօնէի կ'արգիլէին հնազանդիլ Լուի Նարոլէոնի հրամանաց : Այս երեք հարիւրոց մէջ բացի առաջին անուններէն զորս յիշեցնէք կային նաև Պէրիէ, Կրէվի, տը Ֆալլու, Պարդէլլուի Աէնդ—Իլէր, Պալզաք, Փասքալ, Տիւփրա, Քէրադրի, Լէօ տը Լապորտ, Լակարա, Լօրանսօ, Միչօ, Տ'Օլիվիէ, Նէդման, Ուտինօ, տը Ռէմիւզա, Վիդէ, Վօկէ, Եւսէն Սիւ և այլ բազում նշանաւոր անուանք : Երեսփոխանք յետ այս բողոքոյն, Պէրիէի առաջարկութեամբ միաձայն բնդունեցան հրաւիրելու զՄանեան զօրավարը, իր գունդերը արամադրել ի պահպանութիւն ժողովոյն, սպաննալով զինքը մասանիչ հռչակելու թէ անհնազանդ մնայ : Ուտինօ զօրավարը բնդհանուր հրամանատար կ'անուանուի Օրէնսդիր իշխանութեանը զօրութեանց, և Պէրիէ զայն պատուհանէ մը կը ծանուցանէ ժողովրդեան յորմէ հազիւ քանի մը « Կեցցէ Հասարակապետութիւն » կը լսուի, և Պէրիէ զայն սերախութեամբ մը կը ծանուցանէ ժողովոյն :

Բայց այս միջոցիս սպայ մը ներկայացաւ որ զիրենք հրաւիրեց ցրուելու, ըսելով որ բանադատեալ էր զայն կատարելու բռնութեամբ թէ չուզէին մեկնիլ, վասն զի ինքը զինուորական էր և իր մեծերէն այս հրամանը բնդուներ էր : Երեսփոխանք միտրերան « Ի Մալպա » կը գոչեն և բնաւ չեն ուզեր ցրուիլ : Գունդե-

ըը կ'ողողեն սրահը, ի զուր Ուտինոյ կը խօսի անոնց հրամանատար Ֆորէյ զօրավարին հետ, որ կը պատասխանէ թէ. « Չինուորականք ենք, այս է մեր հրամանը, մեր պարտքն է հնազանդիլ Գործադիր ժողովոյն »: Նախագահը Պընուա տ'Ազի և Վյտէ կը ծանուցանեն որ միայն բռնութեան կը հնազանդին, ոստիկանութեան պաշտօնեայք բռնի կը քաշեն թևերնէն, նոյնը կ'ընեն նաև Ուտինոյի և Գամիզիէ գնդապետին և զիրենք փողոց կը տանին: Երեսփոխանք չեն ուզեր ցրուիլ և ամենը միաբան երկու կարգ զօրաց մէջէն ացնելով, Փոն Ռուայեալի դիմաց հեծելոց զինուորանոցը կը տարուին, ուր վրաներնէն դուռը կը գոցուի: Ժամը 3.20 էր:

Պատմագրացմէ ոմանք կ'ուզեն ապահովցնել որ եւթէ Երեսփոխանք երևնային ժողովրդեան, խօսէին իրենց պերճախօսները, խօսեր Պէրիէ, յայտ է որ կը յառնէին ամէնը անգործութենէն: Բայց երեսփոխանք ջանացին միայն պատիւնին ազատել այն կերպով առանց գլուխնին վտանգի դնելու. և կը պատմէ մէկը որ քիչ որ վերջ. Մոռնի այցելութեան գացած ըլլալով տը Ֆալլուի ի բանտը, սը Ֆալլու ըսած ըլլայ Մոռնիի որ « յիրաւի ես ինքն կը մտածեմ՝ որ աղէք ըրիք¹ »:

7. Բարիկիցեաց անտարբերութիւնը — Սակաւ պատուէջք: — Երեսփոխանացմէ ոմանք որ ազատ մնացեր էին, ի զուր ջանացին ոտք հանել դատաւար, ամէնը անտարբեր աչքով կը նայէին:

Ըստ Սահմանադրութեան, Նախագահին յանցանոց համար հարկ էր որ Արդարութեան բարձրագոյն տատեանը գումարուէր: Վճռաջինջ Ատենին դատաւորք պիտի կազմէին այն ժողովը, ինչպէս եղաւ իսկ և զուամարուեցաւ Արդարութեան տտեանը որուն ընդհանուր խնամակալ անուանեցաւ Ռէյնուար, որ խոտատեցաւ կատարելու իր պաշտօնը. բայց փութով հասարանակը և սրահը բռնելով չթողուց որ սրաշարութիւն մը ըլլըցուի: Բոլոր հասարակապետական լրագիրները

1. Տանիէլ Սպէնն, Պատմութիւն Փետրուարի Յեղափոխութեան:

խափանուներ էին, ի զուր անոնց Լյմիլ ժիրարտէն կը համոզէր որ փոխանակ բողոքելու գործեն և զամբոխը ոտք հանեն: Պետական հարուածը, ժողովրդեան ծանուցողք՝ պոնարարդեան լրագիրքն եղան որոնք Ազգային ժողովոյն ըրած վնասքը կը թուէին: Լուի Նարսիլէոնի խորհրդակիցք պատշաճ դատեցան որ մէկ մը երևնայ ժողովրդեան. ելաւ Շանգէլիդէի պալատէն հեծեալ. աջ կողմէ ունենալով իւր հօրեղբայրը զՓէրոմ Պոնարարդ և ի ձախն զմարտախան Նարվաէզեաւէն կուգային մարաշխան Էքսէլման, Սէնդ-Աւնո, Մանեան, տը Ֆլահո, Լավեսդին, գնդապետքն Միւրա, Ֆլէօրի, Պէվիլ, Էտկար Նէյ և այլք: Ամենը չքեղ նշանազգեստիւք ուղղուեցան դէպի Թիւլլըրի: Նարսիլէոն կը յուսար ուրախ ընդունելութիւն մը գրտնալ յամբոխէն. բայց ամբոխէն անտարբեր և ցուրտ կերպ մը գտնելով, ինքն ալ սոժոհ գարձաւ Շանգէլիդէի պալատը, կ'ըսէ անկողմնասէր գրիչ մը:

Յին կեդրոնական թաղերուն մէջ ընդդիմութիւն մը կազմուեցաւ: Վիկտոր Հիւկօ բողոք մը գրեց առ ժողովուրդը և զանիկայ ի գէն կը կոչէր, նոյնը փորձեցին նաև Սէնդ Անթուանի թաղին մէջ մէկ քանի հասարակապետական երեսփոխանք յորս էին և Վիկտոր Շէօլշէ և Շարլ Պօսէն: Յետինս երբ կը ջանար ի կռիւ գրգռելու զգործաւորս, անոնցմէ մէկը դարձաւ ըսաւ « կարծես որ փափագ մ'ունինք մեռնելու, քու 25 ֆրանքդ պահելու համար¹ »: — « Հիմայ կը տեսնես որ ինչպէս կը մեռցուի 25 ֆրանքի համար »: Եւ դիմեց պատնէչքը պաշտպանելու, քամը վայրկեան վերջը զինուորաց ջոկատ մը հասաւ: Երեսփոխանացմէ ոմանք գունդին ընդ առաջ գացին զիրենք համոզելու որ ընդդէմ օրինաց կը գործէին. զինուորք ըսաւ հրամանի իրենց զլիսոյն կը յաւաճէին առանց մտիկ ընելու երեսփոխանաց, երբ յանկարծ հրացանի հարուած մը թուաւ զինուորաց կողմէն: Պատնէչք պաշտպանողք համարելով որ զինուորք կրակ

1. Երեսփոխանք ժողովոց գումարման օրը 25 ֆր. կ'ընդունէին:

կը թափեն, հրագէներին պարպեցին և զինուոր մը ինկու։ Զոկատը միաբան հրաձգութեամբ պատասխանեց հարուածոյն և Պոտէն որ պատնէշին վրայ կանգուն կեցեր էր, գլխուն երեք գնդակ ընդունելով ինկաւ մեռեալ։ Զոկատը յառաջեց ապա առանց ընդդիմութիւն մը գտնելու։

8. Նոր պաշտօնարան պատրաստութիւնք քուէարկութեան։ — Գեկտեմբեր 3ին Մոնիդէօրը կը հրատարակէր վարչական Յանձնաժողովոյ մը կազմութիւնը, յորում բաց ի պոնաբարդեան անուանց, Նախագահը և Մոնի մտուցեր էին նաև հասարակապետական ժողովրդեան սիրելի անուններ ինչպէս Վէտն Ֆօշէ և Կուչար որ ի Մագաս բանա էր, որոնք երկուքն ալ թղթով ինքրեցին որ իրենց անունը աւրուի այն ցանկէն, այսպիսի տիպոս մը իրենց նախաարձնք համարելով։ Յետոյ ուրիշ հրովարտակ մը կը ծանուցանէր պաշտօնէից անուանքը. յորս նշանաւորքն էին միայն Անդ-Անսօ որ կը մնար Պատերազմի, Մոնի Ներքին գործոց, Ֆուլա՝ Ելեմտից։

Նոր հրատարակութիւնք, և պաշտօնէից անուանքը քիչ քիչ սկսեր էին յուզել զքաղաքը. Անդ-Անսօ սրմոց վրայ կ'պցնել առաւ հրակէր մը առ քաղաքացիս հանդարտ կենալու և հետաքրքրութեամբ փողոցներուն մէջ շարտելու. « Ամենայն անձն որ բռնուի պատնէշ կազմելու կամ պաշտպանելու միջոց կամ ձեռքը պէնք, հրացանի պիսի բռնուի »։ Մ. Մոնի զինուոր զրկեց զրուելու գօրինաւորական երեսփոխանքը որ գումարուեր էին ի փողոցն Ալիօլի և Մոնդանի երեսփոխանքը, սրոնք գումարուեր էին Մարիի քով։ Նայն օրը դարձեալ Մոնիդէօրը կը սորուեցնէր որ ամենայն քաղաքացի այժմ կամ ոչ պիտի պատասխանէր այս հարցման. « Քաղցիացի ժողովուրդը կուզէ Վուի Նարոյէտի իշխանութեան պաշտպանութիւնը, և իրեն պետք եղած իշխանութիւնը կուտայ, հաստատելու Սահմանադրութիւն մը ըստ հիմանց եղելոց ի հրովարտակի Գիկտեմբեր 2ի »։ Իւրաքանչիւր քուէ պիտի գրուէր հասարակաց Տեսրի մէջ

եղեալ յիւրաքանչիւր շահապետի պալատ, ստորագրութեամբ անուան և մականուան իւրաքանչիւր քուէարկուի :

Անժ էր այս խնդրոյն վրայ ընդհանուր յուզումը և թէպէտ քիչ օր վերջը հարկ եղաւ փոխանակել գաղտ քուէարկութիւնք, այսու հանդերձ Դեկտեմբեր 3ին ամբողջ օրը ամբոխը յուզեալ այսր անդր կը տարուբերէր թշնամական ապստոնալեօք պուլվարներուն վրայ, ուր մերթ ընդ մերթ կը շրջէին հեծելոց ջոկատներ : Պատգիչի մօտ ամբոխը հեծելոց ջոկատի մը առջև « Աեցցէ հասարակապետութիւն » գոչած ըլլալով, գնդապետը հրամայեց կրակ թափել ամբոխին վրայ, և բազմաթիւ քաղաքացիք գետինը ինկան մեռեալ կամ վիրաւոր : Փութով սատ անդ պատնէշները տեսնուեցան, որ Մովսայի և Մոսնիի հեռագիրք առ պալատն Շանգէլիդէի կը յայտնէին իրենց տագնապը այնքան, մինչև, կ'ըսեն, Հիւսիսային երկաթուղւոյն կայարանին մէջ պատրաստ կար միշտ շոգեշարժ մեքենայն բորբոքեալ : որ թէ կարևոր ըլլայ Նախագահը փախչի : Մոնմարգրի փողոցին, Աէնի և Դամիլլը փողոցներուն մէջ պաշտպանութիւնք կ'ամրանային : Վարչութիւնը որոշեր էր բնաւ շինայել արեան և ուժով հարուածով մը սարսափեցնել ընդդիմակացքը : Նախագահը զգիտուորս շահելու համար առատ ստակ բաշխեր էր իրբև օրական թոշակ, ժախելով իր անձնական բովանդակ դրամը և նոյն իսկ փոխ սունելով, պատճառ երկրորդ օրուան գինովութեանց :

Գ. Պատերազմ Բարիզու. — Դատապարտութիւնք :—

4ին առաւօտը տակաւին յայտնի կոռույ մը նշան չկար. ամբոխը այսր անդր կը սարուբերէր, ժամը երկուքին միջոցները զանազան հետի, ձիաւոր և թընդանօթաձիգ ջոկատներ բռնեցին պուլվարներուն քայլելու հիւսիսակողմ անցքերը, ազատ թողլով մէջտեղուանքը Փէ փողոցէն մինչև Պոն Նուվէլ, ուր ական պատնէշ մը բարձրացեր էր զոր կը պաշտպանէին 100 անձինք յորս կային նաև ալևորեալ ծեր մը և երկու սակրաւոր պառաւեալ կանայք : Իսկ պուլվարներուն

Հարաւակողմը ամբոխը սպառնալից կը դիտէր այս նոր տեսարանը, երբ յանկարծ յանակնկալս ահաւոր ձայնով մամբ մը սկսան թնդանօթները արձկուել և կրակ թափել պուլվարներուն վրայ և դէպ ի տուները. առաջին մեռնողը եղաւ անմեղ տղայ մը որ Շագո—տ' Օի աւագանին եզերքը կը խաղար: Արակը շարունակեց դէպ ի ամբոխը և դէպ ի տուները. իրբու թէ հոն խռնած ըլլային բոլոր սպասամբք. ահաւոր տեսարան մը բացուեցաւ. բարբ քարոյ ծուխերուն մէջ կը տեսնուէր մութ բոցը և կը լսուէր գնդակներուն ձայնը. բոլոր վաճառականք փութով կրպակները գոցեցին, եղան որ գնդակներէն ինկան, ամբոխը արհաւիրաց ձայներով կը փախչէր դէպ ի Սիչլիէօ փողոցը. հարուածներուն ներքև շատերը գետին կ'իյնային մեռեալ կամ վիրաւոր. բնաւ ոք պատճառը չէր իմանար և ցարդ իսկ տակաւին պատմութեան գաղտնիք մնացած է, այս ահաւոր զինուորական շարժման պատճառը զոր նոյն իսկ Պետական հարուածին կողմնակիցք Պոպեր—ը Բարէլո—կոչեցին և ըստ այնմ վարձատրեցին քաջացեալները: Քիչ վերջը յանկարծ կրակը լմեցաւ. և պուլվարներուն անցքերը գոցուել էին մեռեալներով վիրաւորներով, որոց արիւնը կը վազէր ծառերուն շորս կողմ բացուած բաժակները լեցնելու. ահաւոր տեսարան. տակաւին երկրորդ օրը կը տեսնուէին հոս հոն մնացեալ այն մեռեալներէն: Անմիջապէս այս տեսարանէն վերջը եկեղեցական մասին շնորհք մը ընելու համար Նախագահը Սենդ ժընէվիէվ եկեղեցին դարձոյց ի պաշտօն:

Եթէ Լուի Նարոլէոնի դիտաւորութիւնն էր սարսափեցնել զՔարիզ, կրնանք ըսել որ այս յանկարծական և անպատճառ հարուածը և արիւնահեղուկիւնը ունեցաւ իր մեծ հետեանքը, որուն յաջորդեցին զինուորաց զինովութիւնքը որոնք նոյն իրիկունը բոլոր գինետունները անցուցին և յետոյ շատ մը անմեղ քաղաքացիներ նեղեցին և մինչև սպաննեցին իւր և յանցաւոր: Երկրորդ օրը բնաւ երկու բարեկամ իսկ միաբան չէին կրնար շրջիլ, զինուորք առջի ու

բուան գինւոյն ազդեցութեամբ միշտ սպառնալեաց մէջ էին : Պետական հարուածին կողմնակիցք 4ին սպանելոյ թիւը 380 կը հաշուեն որ ըստ բազում գրչաց յոյժ նուազ է քան զստոյգը : Գեկտեմբեր 7ին Նախագահին հրովարտակ մը զինուորական յանձնաժողոջներ կը հաստատէր դատելու 4ին « ապստամբութեան » յանցաւորները : Այնքան բազմաթիւ անձինք բանաուեցան ի Բարիզ, որ ալ տեղ չըլլալով, զինուորական յանձնաժողոյ յանձնուեցան, ուրիշները քաղաքական ատենից, իսկ վտանգաւորները աքսոր պիտի դրկուէին : Ամենայն անձն որ գտնուեր էր պատնէշի մը վրայ կամ ձեռքը գէնք, հրացանի բռնուեցաւ :

10. Խստութիւնք ի գաւառս : — Ինչ որ ի Բարիզ կ'ըլլար նոյնը կը պատահէր նաև ի գաւառս ընդդէմ Լուի Նարոլէոնի հակառակորդաց : Նահանգներէն ոմանք մինչև կարմիր դրօշակ բացեր էին, շատ տեղեր պաշարման վիճակ հրատարակուեցաւ և գանազան անձինք հրացանի բռնուեցան և կամ բանտ դրուեցան . սմէն կողմ խառն յանձնաժողովներ հաստատուեցան՝ այսինքն կաղմեալ ի դատաւորաց և ի զինուորականաց որոնք պիտի դատէին յանցաւորները և էսպիինաս զօրավարը որ այցելութեան մը ղըրկուած էր գաւառաց, ի դարձին առ Նախագահը գովեց այս յանձնաժողովոյ եռանդը, ծանուցանելով որ բնաւ ներումն չէր տրուեր յանցաւորաց : Այսպիսի մեծ խստութեամբ գաւառաց՝ մէջ ալ տիրեց լուծիւնը և կը լմննար Գեկտեմբեր 2ին պետական հարուածը, գովեալ յոմանց իբրև դարման մը անիշխանութեան, և պարտաւեալ յայլոց իբրև ընդդէմ օրինաց, անգութ և աղիտարեր Քաղզիոյ : Յիրաւի եթէ տակաւին պատմութիւն, որոշ վճիռ մը չկրնար տալ նա մանաւանդ որ կը պակսին շատ մը յիշատակարանք, յայտ է թէ ընդդէմ էր սահմանադիր կարգաց, սակայն մեծ արթնութիւն և հաստատամտութիւն կարևոր էր ի գլուխ տանելու այնպիսի գործ մը առանց մեծ յեղափոխական յաղմանց : Ըսենք միայն Գեկտեմբեր 2էն ծնաւ

այն վարչութիւնը որ յետոյ 18 տարի վերջը զՎաղղիա Սէտան պիտի հասցնէր և պիտի ձգէր զինքը ջախջախեալ յիւր բանակը և որ մեծն է յիւր բարոյականը :

11. Հասարակախումբ քուէարկութիւն . — Տասնամեայ Նախագահութիւն : — Ընդհանուր քուէարկութիւնը բացուեց էր ընդ բոլոր Վաղղիա Գեկտեմբեր 20ին և 21ին, որուն արդիւնքն էր Այս 7, 439, 216, Ոչ 646, 737, աննշան քուէք 36, 880 . բովանդակ քուէարկութիւն էին 8, 122, 823 : Քուէարկութեան վրայ վիճարանութիւնք եղած չէին և արդէն խափանուեց էին շակառակորդ լրագիրք որով և աւելի յաջող եղաւ քուէարկութիւնը : Արդէն, կ'ըսեն, որ մեծաւ մասամբ թագաւորականք քուէ տուած էին, ինչպէս կը պատուիրէր նաև Մոնղալամպէր, յուսալով որ կայսրութեան յաջորդէ թերևս կրկին վերանորոգումն Պուրպոնեանց : Պարոջ՝ քուէները քննելու յանձնաժողովոյն Նախագահը, յետ քուէից ստուգութեան և հրատարակութեան ի ժողովին, դարձաւ առ Լուի Նարուէն, և « Ստացիր, իշխան, ըստ այն իշխանութիւնը որ չքեղապէս քեզ կը տրուի . . . Հաստատէ ի Վաղղիա իշխանութեան ազդեցութիւնը տատանեալ ի յիսուն ամաց հետէ յաճախ յուզմամբք, կուռէ միշտ անիշխանութեան կրից հետ, որոնք կը խախտեն զընկերութիւնը ի հիմանց . . . Ազատի Վաղղիա վերջապէս այն մարդիկներէ որոնք միշտ պատրաստ են սպանութեան և աւարաւուութեան, այն մարդիկներէ որոնք ժիժ դարուն մ'ջ արհաւիրք մ'են քաղաքականութեան » : Նախագահ իշխանը յետոյ յայանելով իր շնորհականութիւնը, ծանոյց իր ունեցած փոյթը և խնամքը բարեկարգութեամբք բարւոյքելու զՎաղղիա : Ապա յետ խորհրդական ժողովոյն ընդունելութեան, յաջորդեցին օտար պետութեանց նուիրակք և կղերր գլուխ ունենալով գարքեպիսկոպոսը : Երկրորդ օրը չքեղապէս հնչուեցաւ Նոգր Տամի կամարաց ներքև գոհարանական երգը և « Տէր, պահեա զՀասարակապետութիւն և զիշխանն Լուզովիկոս Նարուէն » :

Նոյն օրը 1 Յունուար, Մոնթրեօր կը ծանուցանէր որ կայսերական արծիւը կը դրուէր Քաղղիոյ դրօշակաց վրայ փոխանակ կելտական աքաղաղին, և Նախագահը իր բնակութիւնը կը հաստատէր ի Գիւլլըրի սակայն Քաղղիոյ Հասարակապետութեան նշանը սակաւին վրան կը մնար :

12. Աքսոր Բասարակապետականաց : — Յունուար 9ին 65 երեսփոխանք արտաքսեցան Քաղղիոյ հողէն . 16 ալ առ ժամս կը հեռացուէին, յորս էին նաև Շանկաունիէ, Լամորիսիէր, Պըտօ, Լը Տըլօ և այլք որք Քալէնեաքի յիտ Համ դղեակը տարուած էին : Քալէնեաք տակաւին Համ մնաց մինչև Փետրուար, յորում զինքը ազատ ձգեցին որպէս զի կարենայ ամուսնանալ : Քալէնեաք խնդրեց ի սպառ հրաժարումն ի պաշտամանց, և փութով շնորհուեցաւ : Նոյն օրը նաև արտաքս տարուեցան ի Քաղղիոյ ուրիշ 480 դատապարտեալք, Պիսէրի բանտերէն, և հանուեցան նաև 4ին ուրիշ դատապարտեալք և ամէնն ալ շրջկուեցան ի Քայէն¹ : Այս ամէն փոխադրութեանց համար վարչութիւնը գիշերը բնտրեր էր . կը լսուէին զինուորաց խումբ խումբ միաձայն քալուածքներուն մէջ լալու և աղաղակներու ձայներ ծերոց և տղայոց, որոնք շէին կրնար զինուորաց քալուածքին հասնիլ . ամենայն դանդաղումն և կամ փախստեան մը փորձ սպառնացեալ էր պատժելու հրացանի հարուածով :

13. Ասիմանադրութիւն : — « Յիշխան Նախագահէն, հաստատեալ 1789ի մեծ սկզբանց վրայ » ինչպէս կ'ըսէր այս նոր Ասիմանադրութիւնը, Յունուար 14ին հրատարակուեցաւ :

Նոր Ասիմանադրութիւնը ամենայն իշխանութիւն

1. Պատմագրացմէ ոմանք կուզեն հաւաստեօք ցուցունել որ Բարիզու փողոցաց մէջ սպաննելոց թիւը աւելի էր քան 41000 . ընդ ամէնր կալանաւորաց թիւը ընդ Քաղղիա կ'առաւելուր քան 4100,000 . մինչ պաշտօնական գրութիւն մը աը Մոփայի՝ միայն դատապարտելոց թիւը կը գնէ . 26,642 . 6,501 ազատ արձկուեր էին :

Հասարակագետութեան նախագահին ձեռքը կը դընէր ընտրեալ 10 տարուան համար : Պետութեան գլուխը կը հրամայէ ցամաքի և ծովու գորութեանց . ինքը պատերազմի, խաղաղութեան և վաճառականութեան դաշինքներ կը կռ. և զանոնք կը դնէ ի գործադրութիւն օրինօք՝ զորս ինքն միայն կրնայ առաջարկել, հաստատել և հռչակել . դատաստանք իր անուամբ կ'ըլլան, և իրեն ձեռքն է շնորհել : Պաշտօնեայք իրեն պիտի երդնուն, և կրնայ Օրէնսդիր ժողովոյն սահմանածէն զատ վարկ բանալ հրովարտակով . ինքն է միայն պատասխանատու ժողովրդեան առջև և կըրնար Օրէնսդիր ժողովոյն երեսփոխանքը ինքը առաջարկել ընտրութեան և ջանալ անոնց յաջողութեան համար : Իսկ Օրէնսդիր ժողովքը ընտրեալ վեց տարուան համար , իշխանութիւն չունէր օրէնք առաջարկել և վիճել, բայց թէ այն մասանց վրայ զոր կը շնորհէր պետութեան գլուխը : Իբրև չափաւորող մը գործադիր իշխանութեան, Սահմանադրութիւնը ծերակոյտ մը կը հաստատէր ընտեալ ի Նախագահէն, որ օրինաց մը հրատարակութեան իշխանութիւն ունէր ընդգրկմանալու : Կար դարձեալ Պետութեան Ատենանը, բայց այս ամէնն ալ հպատակք էին գործադիր իշխանութեան և առանց անոր կամաց բնաւ գործ մը չէին կրնար կատարել կամ գրել : Հաստատեց նաև Պետութեան պաշտօնեայ տիտղոսը, զոր տուաւ Գաղպիանքայի և տը Մոփայի : Նոր սահմանադրութեամբ Լուի Նաբոլէոն Նախագահ՝ կ'առնուր նաև Իշխան անուանակոչումը : Սահմանադրութիւնը այն ատեն պիտի դրուէր ի գործ երբ սյս ամեն ժողովքները կազմուէին :

14. Օրէնք ընդդէմ՝ Օւլէանտեան ցեղին : — Այս Սահմանադրութիւնը մեծաւ մասամբ օրինակեալ յԱ. կայսրութենէ և որ ճանապարհ մ'էր Երկրորդին, իր գործադրութիւնը սկսաւ, նախ ապահովցնելով զինքը յամենայն երկիւղէ որ կրնար ունենալ երբեմն թագաւորող ցեղերէ : Յունուար 22ին հրովարտակ մը ծանուցեր էր, ինչպէս 1816ին Լուգովիկոս ԺԸ՝ ստի-

պեր էր Նարոլէոն կայսեր ազգակիցքը, վեց տմնուան մէջ ծախելու ի Կաղղիա ամենայն ունեցած ստացուածքնին, ինչպէս նոյնը 18:32ին ըրեր էր Լուի Ծիլիփ Պուրպոնեանց համար, խորհելով որ այսպիսի ըզգուշութիւնք կարևոր են միշտ կարգաց և հասարակաց շահուն համար, և միանգամայն նուազեցնելու (Ուլէանի ցեղին ազդեցութիւնը որ 300 միլիոնի անշարժ ստացուածք ունէր ի Կաղղիա, կը վճռէր, « որ մէկ տարուան մէջ Օուլէանի ընտանեաց անդամք ծախեն այս իրենց կալուածքը » : Թէպէտ 300 միլիոնի էին կալուածքը, սակայն ուրիշ հրովարտակով մը զանազան պատճառք բերելով իբր թէ աղքատ աշխատաւորաց սպաւինարան մը պիտի շինուէր, 100 միլիոնը կը բառնար :

Այսպիսի հրովարտակ մը որ փոխանակ օգնելու մեծապէս կը փնասէր շատ մը անձանց և քաղաքացւոց շահուն, մեծ տրտունջ գտաւ քաղքին ազնուականութեան մէջ : Նոյն իսկ Պետութեան խորհրդոյն մէջ ընդդիմակացք եղան, որոնք անմիջապէս պաշտօնընկէց եղան : Մոռնի որ մեծամեծ բարիք վայլեր էր Օուլէանի ցեղէն, հրատարեցաւ պաշտօնէութեանէն, իրեն հետեւեցան նաև Մաները, Ծուլտ և Ռուհէ : Սէնդ-Աուսո ալ կուզէր հրատարիլ բայց իշխանին թախանձելովը յանձն առաւ մնալ : Իսկ հրատարեալ պաշտօնեայքը ուրիշ կերպով վարձատրեց, զիրենք Պետութեան ժողովոյն կամ ծարակուտին անդամ ընտրելով : Մոռնիի տեղ անցաւ Ներքին գործոց պաշտօնէութեան մէջ Փէրսիննի, զոր Նախագահը նշանակեր էր պետական հարուածին միջոց : ԶՌուհէ փոխանակեց գորսիգացին Ապագուշի՝ երբեմն ձախակողմեան երեսփոխան, նախագահ Օուլէանի դատաստանարանաց, և Պինս Ելեմտից պաշտօնեայ եղաւ :

Օուլէանի ցեղին դէմ տրուած հրովարտակին վրայ նամակով մը բողոքեցին Նրմուրի դուքսը և Ժօէնվիլի իշխանը. կտրիճ փաստաբանք Պէրիէ, Վագիսմէնիլ, Տիւֆոր և Փայէ իրենք զիրենք ընծայեցին դատը պաշտպանելու համար քաղաքական Ատենին դի-

մայ որ ինքզինքը «նկարող խնդրոյն» դատեց: Այս առթիւ վարչութիւնը փնտռեց և գտաւ մեծ վճարքով զինքը պաշտպանող գրիչ մը, զկուանիէ Վասանեաք: Բազմաթիւ յօդուածք երևցան ի Գոնարիդի-«Ինէլ լրագրի, ընդդէմ պաշտպանողաց որոնք ընդ երկար զբաղանաց և ընթերցման նիւթ մ'եղան ժողովրդեան, մինչև որ Յունիս 19ին Պետութեան ատեանը ծանոյց որ Արդարութիւնը բնաւ խնդիր մը չէր կրնար ունենալ այն հրովարտակաց վրայ որք պետութեան քաղաքագիտական գործ մ'էին:

Այս միջոցս մինչև ժողովքներուն կազմուիլը, զոր ոմանք իշխանապետութեան ժամանակ կը կոչեն, իշխանը ջանաց զիշխանութիւնը զանազան օրինաք ամրապնդել. ազգային պահապանք հաստատուեցան և քաղաքացւոցմէ վերցուեցաւ անոնց սպայքը անուանելու իրաւունքը. ուսուցիչք անփոփոխ չէին, սպազրութիւնը հսկողութեան ներքև ենթարկեալէր, եկամուտը 100ին 5էն 4¹/₂ ի կը փոխուէր: Թողովոց կազմութեան առաջին օրը կը լմնցնէր իշխանապետական վարչութիւնը բառնալով նաև պաշարման վիճակը:



Բ. Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Օրէնսդիր ժողովք. — 2. Ուղեորութիւն Նախագահ իշխանին — Խօսք ի Պորթօ — « Ողջոյն Կեսար » — 3. Ընդհանուր քուէարկութիւն Կայսրութեան համար. — Արդիւնք. — 4. Կայսրութեան հրատարակումը. Նարուէոն Գ. — 5. Կայսերական արքունիք. — 6. Ստար պետութիւնք. — 7. Ամուսնութիւն Նարուէոն Գի — Կայսրուհին Էլիզէնի — Պերհութիւն. — 8. Նխաք Ատենին գոնիակ. — 9. Իսաք ընդդէմ Կայսեր:

1. Օրէնսդիր ժողովք: — Պետական հարուածի հրովարտակին համեմատ կատարուեր էին ընտրութիւնք և մեծաւ մասամբ յաջողակք վարչութեան, որովհետև հասարակապետականք իրենց մեծ զայրոյթէն արհամարհեր էին քուէարկութիւնը և չէին ուզած ներկայանալ սափորներուն, նոյնը ըրած էին նաև օրինաւորականացմէ մաս մը: Միայն Բարիզու և Լիոնի ազատական մաս մը շուղեց ի սպաս լուել. ի Բարիզ ընտրուեցան Քալէնեաք և Քառնօ, ի Լիոն Չէնոն հասարակապետականը: Սակայն այս երեքն ալ շուղելով երդնուլ « Նախագահ իշխանին », զրկեցին իրենց հրաժարականը: Արդէն նոր ընտրեալ երեսփոխանք զիտէին որ միայն լուութեամբ Նախագահ իշխանին կամքերուն հաւանողք պիտի ըլլային. և ուսուցիչն Վէրոն, երբեմն տեսուչ Օփէրային և հիմա խորհըրդատու Նախագահին, Գոնօրիդի-Օիոնել լրագրին մէջ կը խրատէր զընտրեալս և կ'իմացնէր իրենց որ « Ալ մտքերնիդ մի գնէք ունենալու այն ազգեցութիւնը ինչ-

պէս խօսարանական միջոցին. գոհ եղէք շափաւոր և սիջակ դիրք մը ունենալ» :

Ժողովը բացաւ Մարտ 29ին Նախագահ իշխանը 121 թնդանօթի հարուածներէն ողջունեալ : Մեծ հետաքրքրութեամբ ամէնը կը սպասէին ճառին և շատերը կը համարէին որ այն օրը պիտի հռչակուէր Կայսրութիւնը, սակայն Նախագահը ծանոյց միայն որ եթէ ուզէր իւր ձեռքն էր հաստատել զայն երբ 1848ին վեց միլիոն քուէք զինքը անուանեցին ընդդէմ իսկ կամաց Ազգային Ժողովոյն՝ Նախագահ : « Կըրնայի ընել նոյնը դարձեալ 13 Յունիսի 1849 կամ շրեկտեմբերի. սակայն մերժեցի, և ունեցածովս գոհ եղայ » : Սակայն կը սպառնար վարչութեան ձեռք փոխել եթէ կուսակցութիւնք իրենց ծածուկ դաւանաբջանային վարչութեան ստնանել : Յետ Նախագահին ճառախօսութեան, Պետութեան պաշտօնեայն կարգաց երդման ձեռք վասն ծերակուտին և երեսփոխանաց « կ'երգնում հնազանդութիւն Սահմանադրութեան. և հաւատարմութիւն Նախագահին ¹ » : Այս ձեռք ոչ յա-

1. Այս երգումը Մայիսի մէջ պահանջուեցաւ նաև յամենայն անձանց որոնք նասարակաց պաշտամանց մէջ կը գտնուէին և այն պատճառաւ բաղմամբի : նշանաւոր անձինք շուգելով զայն կատարել, քաջուեցա իրենց պաշտօններէն ուսկից թէպէտ միայն ապրուստներն կը հոգային. յորս յիշենք Պարթէլըմի Սէնդիլէր, ուսուցիչ և տեսուչ Գազդիոյ վարժարանին, Միշրէլ, Վիլմէն, Գուզէն և ուրիշ ուսուցիչք :

Պահանջուեցաւ այս երգումը նոյն իսկ յաքսուրիոց որպէս և ի Շանկառնիէէ, Պըտօէ, Լա Մորիսիէրէ և ի Շարրաէ : Որոնք բացէ ի բաց մերժեցին նամակներով, յորս նշանաւոր մնացած է Շանկառնիէի թուղթը պատմական շատ մը կէտեր բովանդակելովը, յորում կը զուցընէ Լուի Նաբուլէոնի գաւնազան անգամ ինչ մեծ պաշտամունք և պատիւք ընծայելը իւր խորհրդոց նպաստելու համար և Շանկառնիէի մերժելը. և կը լմացնէ թուղթը « Այն երգումը զոր երգմազանցը, որ զիս շիրքաւ պատրել, կը պահանջէ ինծմէ, ես զայն կը մերժեմ » :

ւերմամբ և ոչ յապաւմամբ մը կարելի էր փոփոխել : Ամենէն առաջ երգուընցաւ Նախագահին հօրեղբայրը իշխանն ժէրոմ իբրև նախագահ ծերակուտին . որուն նիստերն ալ բացուեցան նոյն օրը իր նախագահէն որ լմնցուցեր իր բացման ճառը ըսելով « Ժողովուրդը Նարոլէոն անուամբ իշխան մը կոչեր էր ամբառնալու իր կարգերը և անձամբ վրէժխնդիր ըլլալու մեր ազիտից և մասնութեանց ի Ուաթէրլու :

Բայց այս երկու ժողովոց օրինաց կազմութիւնը և առաջարկութեան մէջ ինչպէս նաև Պետութեան ամենայն ներքին և արտաքին գործոց մէջ առաջին ազդեցութիւնը պիտի ունենար Պետութեան Ատեանը յոյժ վեր քան զերեսփոխանաց ժողովը, որուն նախագահը Պարոչ, պիտի կարենար ներկայ գտնուիլ նաև պաշտօնէից գումարմանց : Օրէնսդիր ժողովոյն նախագահ ընտրուեր էր Պիլյօ և նիստերը սկսեր էին :

Իշխանը ուղելով նորոգել Նախկին կայսրութեան յիշատակները, Մայիս 10ին գանսպան գունդերու արծուէակիր դրօշներ բաժնեց մեծ չքեցութեամբ և խօսիւք առ բանակը :

2. Աւելեորութիւն Նախագահի իշխանիւ — Խօսար ի Պորտօ — « Ողջոյն կեսար » : — Յետ իր իշխանութիւնը ապահովելու, Լուի Նարոլէոն Սեպտեմբերի Գաղղիա յաղթական ճամբորդութեան մը ելաւ Հիւսիսէն Հարաւ, Արևմուտքէն Արևելք և ամէն կողմէն մեծ չքով և եռանդեամբ ընդունուեցաւ : Ամենուրեք առ հասարակ քաղաքապետք և շահապք, որոնք մեծաւ մասամբ իրմէ ընտրեալք էին, նուիրակութեամբք կը թախանձէին հաստատելու կայսրութիւնը, « որ բոլոր ժողովրդեան իղձն էր և վերջ մը տալ Հասարակապետութեան որուն անունը զուգորդ էր Յեղափոխութեան » : Ընդհանուր ժողովրդեան կամքըն էր վերջ մը տալ պատերազմաց և զինուորական փառաց և ապրիլ պատուով ի խաղաղութեան : Ինքն ալ ամէն կողմ կը յայտնէր իր հնազանդութիւնը Ազգին կամաց և Նախախնամութեան իրեն համար սահ-

մանեալ վճռոյն, կը խոստանար վաստակիլ ազգին փառաց և միանգամայն խաղաղութեան համար, և ի Պորտո կ'ըսէր այն նշանաւոր խօսքերը որոնք կայսերական գահուն սանդուխքն եղան իրեն համար և պատճառք բերանգամ կրկնուելու ի շողոքորթութիւնս « Կայսրութիւն՝ է՛ խաղաղութիւն ¹ » : Նըվէր քաղաքը նախ իրեն ընծայեց Նաբոլէոն Գ անուանակոչու մը : Սգրագպուրկի բազմաթիւ վերտառութեանց մէջ կը կարդացուէր ևս « Ալլպաս երախտապարտ » : Ի Մարսէյլ միայն խռովայոյց անձինք դժոխային մեքենայ մը պատրաստած էին քաղքին մաս մը յօդս հանելով կողոպտել դբաղաքը . բայց դաւը յերևան եկաւ, ինչպէս նաև ուրիշ դաւ մը պատրաստեալ ի Բարիզ :

Այս երկու պատահարք Նախագահին ընդունած չբեղ և շառաչայից ընդունելութեանց մէջ և կեցցէ կայսր աղաղակաց մէջ ընկղմեցան : Ամէնը դարձին կը սպասէին ի Բարիզ . բանակին ամէն կարգ սպայք քաղաքական պաշտօնեայք ի գլխաւորաց մինչև ցյետին դպիր Բարիզու Օռլէանու երկաթուղւոյն կայարանը դիմած էին ընդառաջելու իշխանին . հոն էին դատաւորք, ատենակալք, ծերակուտին անգամք, Սրէնս դիր ժողովոյն երեսօխանք, Բարիզու արքեպիսկոպոսը Գեր . Սիպուր բազմաթիւ եկեղեցականօք . Պետութեան մեծամեծ վարժարանք և անհամար օտարականք այս հանդիսիս համար Բարիզ եկեր էին : Պետութեան բարձր պաշտօնեայք « Կեցցէ կայսր » շնչեցուցին և զինքը դէպ ի գահոյից սրահը ընկերեցին : Նախագահը Սրէնսդիր ժողովոյն դիմացէն անցնելու ժամանակ կեցաւ վայրկեան մը փնտտեց և տեսաւ զՄոունի, որուն ձեռքը յետ թոթուելու նաև բազ-

1. Պորտոյի քաղաքապետը Հոսման յետոյ նշանաւոր նաև Աէնի քաղաքապետութեամբ, Նախագահին այս խօսքերը արձանագրել տուաւ Նաբոլէոնի ձիաւոր արձանին պատուանդանին վրայ գոր կանգնեց Պորտո ի պատիւ Նաբոլէոն Գի : Հոսման այս հաւատարմութեան համար առ Նաբոլէոն Գ, ապա փոխադրուեցաւ ի Պորտոյէ ի Բարիզ, Աէնի քաղաքապետութեան :

կացը մէջ ընդունեցաւ : Հոն գահոյից սրահին մէջ Սէնի քաղաքապետը երբեմն շահաւ պետրուարի պատնիշաց, մալթանք մը կարդաց առ իշխանը ի դիմաց ժողովրդեան զոր կը կնքէր ըսելով « Չիլէք, ով Տէր, ամբողջ ժողովրդեան մը ըղձից առնուլ Յեղերնուդ չիմնադրին անմահ թագը : Կայսր տիտղոսով միայն կրնաք կատարել այն չքեղ խոստմունքները չքեղ դիտաւորութեանց, զոր ի Պորտոյէ ուղղեցիք առ համօրէն Եւրոպա » :

Իշխանը շուրջ բոլորեալ բոլոր սպայակոյտէն համբայ ելաւ Գիւլլըրի երթալու, և անցաւ զանազան յաղթական կամարներու տակէն փառաւոր վերտառութեամբ : Միջօրէ էր երբ մեկնեցաւ Սուլէանու երկաթուղւոյն կայարանէն և ժամը երեքին տակաւին Մասըլէնի դիմացն էր, այքան մեծ էր ամբոխը և ընդունելութիւնը : Քոնգորտ հրապարակին մուտքին կամարին վրայ գրուած էր . Առ « Նարոյէոն Գ. փրկիչ արդի քաղաքականութեան » : Իշխանին Գիւլլըրի քաշուելէն վերջն ալ տակաւին տեւց քաղքին սօնը, ամէն կողմ՝ զինուորական երաժշտութիւնք կը հնչէին բազմամբոխ քաղաքացիք այսր անգր կը տարուբէրէին պատմելու օրուան չքեղութիւնը և Մոնմարչրի փողոցին մէջ վարսավիրայի կրպակի մը վրայ արգէն կը տեսնուէր օրուան տպաւորութիւնը « Ողջոյն կետար ¹ », յատին համառօտ բացատրութեամբ :

3. Ընդհանուր քուէարկութիւն կայսրութեան հաւմար . — Արդիւնք : — Երկրորդ օրուան Մոնիդէօը կը պարունակէր որ՝ Ամբողջ Գաղղիոյ մէջ արսայայտեալ կայսրութեան համար փափագը, կը պարտաւորեն զՆախագահը այս նիւթոյս վրայ խորհուրդ հարցնել ծերակուտին : Եւ հետեւաբար նոյեմբեր 4ին ծերակոյտը կոչուած էր ի գումարումն : Եթէ ծերակոյտը սահմանէր վարչութեան Չեին փոփոխութիւնը, այն ատեն ծերակուտին վճիռը պիտի առաջարկուէր ժողովրդեան

1. Ave Cæsar.

քուէարկութեան, և Օրէնսդիր ժողովը կոչուած էր ի գումարումն. քուէից թուելուն համար:

Յայտնի էր ծերակուտին վճիռը և Նոյեմբեր 4ին ժողովուրդը հրաւիրուեցու ի քուէարկութիւն՝ « Կաղղիացի ժողովուրդը կ'ուզէ՞ կայսերական իշխանութեան նորոգումը յանձն Լուի Նաբոլէոն Պոնաբարդի, յաջորդութեամբ՝ յիւր պայազատս, օրինաւոր կամ որդեգիր և իրեն իրաւունք կուտայ իր յաջորդութեան կարգը տրամադրել, ինչպէս որ որոշած է 1852 Նոյեմբեր 7ի ծերակուտին վճռով », այս էր ժողովրդեան առաջարկեալը: Թոյլ տրուած էր այս նիւթիս վրայ վիճել լրագրաց մէջ: Ընդհանուր քուէարկութիւնը այս անգամ ալ, ինչպէս միշտ, իշխանին կամքը հաստատեց: 8, 140, 404 քուէարկուաց մէջ 7, 824, 129 Այս պատասխանեցին, 253, 149 ոչ, 63, 126 ոչնչ: Օրէնսդիր ժողովք այն ստեն հրատարակեց վճռոյն ընդունելութիւնը ի ժողովրդէն:

Իրկտեմբեր լին երեկոյեան ժամը ութին, թանձր մշուշի մը մէջէն երկու հարիւր ջահիւք լուսաւորեալ կառքեր կը կտրէին զՊուա տը Պուլսնեը դէպ ի Սէն Գլու, սանելով յինքեանս Մերակուտին, Պետութեան, Ատենին և Օրէնսդիր ժողովոյն նուիրակութիւնք որոնք ընդունուեցան Ադոլֆ սրահին մէջ և ուր զօրավարի զգեստով մտաւ ընդ փոյթ Նախագահ իշխանը միարան ունենալով զիշխանն Ֆէրոմ մարալախտի չքազգեստով և զիշխանն Նաբոլէոն սև պարզ զգեստով: Երբ գահ ելաւ իշխանը բոլոր սրահը թընդաց ուրախութեան աղաղակներով և նախ Օրէնսդիր ժողովոյն նախագահը զինքը ողջունեց փոքր խօսակցութեամբ մը « Աւհափառ Տէր » անուանելով, և ըսելով, որ « Պոնաբարդ ցեղին գահը չէր սապալեալ ի Կաղղիացուց » . յետոյ խօսեցաւ Մասնար ծերակուտին փոխան-նախագահը զինքը հրաւիրելով « դնել ի գլուխ Մարէնկոյի յաղթութեան թագը » : Որոց երկուքին ալ պատասխան տուաւ յիշելով առաջին կայսրութիւնը և կայսրը « որուն ստուերը իրեն պահապան պիտի ըլլար և առաջնորդ » և լիցուց ըսելով

« Աւելորդ է ըսել որ իմ մեծ ջանքս պիտի ըլլայ Ձեզի հետ միաբան վաստակիլ Գաղղիոյ մեծութեան և յաջողութեան համար » :

« Այս խօսից լմննալուն, ծերակոյտը, ատենակալք, խորհրդականք, պաշտօնեայք միաբան կը թնդացնեն « Կեցցէ կայսր » Կոչելով զինքը Նարուլէոն Գ. անուամբ: Յետոյ կը թողուն զարահը, ջահերը կը վառին պալատան գաւթին մէջ և քիչ վերջը կառքերը կ'ուղղուին ի Բարիզ թողլով զպալատը ի հանդարտութեան :

4. Կայսրութեան հրատարակումի — Նարուլէոն Գ. — Երկրորդ օրը Գեկտեմբեր 2ի, այնքան յիշատակներով անուանի, Պէրժէ քաղաքագլուխը Օթէլ տը Վիլի հրապարակին վրայ կը հռչակէր կայսր զՆարուլէոն Գ. որ քիչ վերջը Պուա տը Պուլոննի ճամբով քաղաք կը մտնէ, կ'իջնէ ձիէն Շանգէլիգէ և վանսոմի հրապարակին շրջանը ոտքով կատարելով ապա կը մտնէ ի Գիւլլըրի ուր կը սպասէին իրեն իշխանք և իշխանուհիք՝ կայսերական չքեղութեամբ:

Այսպէս գրեթէ համաձայն հաւանութեամբ բովանդակ ազգին կը կործանէր Երկրորդ հասարակապետութիւնը և կը յառնէր անոր աւերակաց վրայ Բ. Կայսրութիւնը որ ինքն ալ 18 տարի վերջը պիտի կործանուէր միաձայն այն ժողովրդէն որ 1814ին միաձայն կոչեր էր զՊուրպոնս զորս արտաքսեր էր միաձայն ընդունելու զՕուլէանի ցեղը և զոր մերժեր էր 1848ին միաձայն՝ Հասարակապետութիւն հաստատելու համար: Քանի յարափոխութիւն մարդկայնոյ բնութեան. թէպէտ և այսպիսի յաճախ օրինակք միայն Գաղղիա մեզ ընծայած է յետ 1792ի, և ո՛ր գիտէ տակաւին որչափներ պիտի ընծայէ:

1852ին Կայսրութիւնը ծնունդ մ'էր ընդդէմ հասարակապետութեան ասելութեան. Պուրպոնեանք կը

1. Այս չքեղութեանց մեծ զարդ կ'աւելցնէր իր չոխութեամբք Ապտ-էլ Գասէր ամօք յառաջ արձակեալ ի Նախագահ իշխանէն:

յուսային Օուլէանի ցեղին անկմամբ և Հասարակապետութեան հաստատելով, փութով Շամպորի կոմսին դարձը. երբ իրենց յոյսը պատրեալ տեսան և ընդհակառակն խիթացին որ Հասարակապետութիւնը չամրապնդի, այն ատեն թէ Պուրպոնեանք և թէ Օուլէանեանք ատեցողը Հասարակապետութեան ջանացին կործանել զայն և նպաստեցին Լուի Նաբոլէոնի զոր ի ժամուն միայն կարող դատեցին միապետութիւն մը հաստատելու համար: Հասարակապետութեան մը և Յեղափոխութեան երկիւղը հիմն եղաւ Երկրորդ կայսրութեան, դժբաղդարար այնպիսի հիմն որուն վրայ շէր կրնար ընդերկար հաստատուն մնալ տարբեր սարերացմէ կազմեալ շէնք մը: Եւ նոր կայսրը որ իր խորագիտութեան հետ չունէր իր նախնոյն բարձր և վսեմ միտքը, չկրցաւ առ ինքն ձգել ոգիները. կրցաւ միայն այս ոգիները ընդերկար ընկձեալ բռնել իրեն անուան ազդեցութեամբ և իր ներկայութեամբ. այն օրը որ տեսլարանին վրայէն բարձաւ, արդէն ոչ պէ կը յիշէր զինքը¹:

5. Կայսերական Արքունիք: — Կայսրութեան հաստատուելուն հեռեանք մ'էր կայսերական արքունեաց կազմութիւնը, որուն առաջին և գլխաւոր մասունք կը կազմէին իր մերձաւոր ազգակից իշխանք և իշխանուհիք, որոց տարեկան մէկ ու կէս միլիոն բաշխուելիք սահմանուեցաւ, ի բաց առեալ իրենց առանձնական մեծափարթամ հարստութիւնքը: Պուրպոնեանք 1814ին դարձած ժամանակ իրենց կրած մեծամեծ վնասներուն և աղիտից համար ընդհանուր յարգանք մը և գթութիւն ազդեր էին ժողովրդեան: Բայց այս նոր արքունեաց մեծ մասը Միւրաները, Քանինսները և նոյն իսկ իր հօրեղբայրը և հօրեղ-

1. Ամենէն ազէկ ճանչցած է զՆաբոլէոն Գ իւր ընտանեացմէ մէկը որ ըսած է « Թէ Լուի Նաբոլէոն երկու անգամ խաբած է զաշխարհս, նախ երբ ինք զինքը ամենուն ապուշ կարծեցնել տուեր էր, երկրորդ անգամ, երբ ամենուն մեծ քաղաքագիտի համարմունք տուաւ »:

բօր որդիքը յօտարութեան իսկ վայելք էին իրենց եկամուտքը և հանգստութիւնքը: Ամբողջ Պոնաբարդ ընտանեաց մէջ միայն Հերոնիմոսի որդին՝ իշխանն՝ Նաբոլէոն հսկառակորդ պետական հարուածին և գահուն, զօրավար գնդի և մեծ-խաչ Լէփօն տ'Օնէօրի, ցուցունելու համար արտաքսապէս իր մեծ տփգոհութիւնը այս պատահարաց վրայ, բնաւ չէր ուզած հանդիսից մէջ չքազգեստներով գտնուիլ և միշտ սեւազգեստ կը ներկայանար:

Բաղդաքեր էր նաև, ընդդէմ՝ Կայսրութեան, Հենրիկոս Շամպորի կոմսը թղթով մը, յորում՝ ինքզինքը միայն կը ճանչնար « աւանդապահ այն աւանդութեանցն տուելոց ի Նախախնամութիւնէն և սրոնք միայն կարող են փրկել զՎաղղիա »:

Կայսերական ընտանեացմէ վերջը կուգար Կալուստոս Կոստան, զոր կը կազմէին մեծ մարաջախտը, մարաջախտն Վայեան, որ Ուտինոյի ձեռաց ներքև կը հրամայէր Հոովմայ բանակին և Ուտինոյի գալովը հրամանատար անուանուեր էր ապա մարաջախտ, մեծ ախուապետ մարաջախտն Սէնդ-Աոնօ, մեծ որսորդ՝ մարաջախտն Մանեան: Սէնդ-Աոնօ 100,000 թոշակ կ'առնուր իբրև մեծ ախուապետ, 130,000 իբրև պաշտօնեայ, 40,000 իբրև մարաջախտ, 30,000 իբրև անդամ՝ ծերակուտի, որով ընդ ամէնը թոշակը կ'ըլլար 300,000, նոյնպէս Մանեան մարաջախտը կ'ընդունէր 200,000: Առաջին ախուապետն էր գնդապետն Տլէօրի որուն գանազան թոշակները միարան կը կազմէին . 75,000 ֆրանք. առաջին որսորդ էր զընդապետն Էտկար Նէյ որդի սնմահանուն մարաջախտին, որուն թոշակքն էին միարան 95,000: Այս գումարներէն կարելի է դատել Կայսրութեան պետութեան Ելլամտից վրայ բերած մեծ ծանրութիւնը:

6. Օտար պետութիւնք: — Գաղղիոյ մէջ այս ամէն փոփոխութիւնքը եղած ժամանակ օտար իշխանութիւնք առանց կարծիքնին յայտնելու անհամբերաբար կը սպասէին խնդրոյն լուծման և արդէն Լուի Նաբոլէոնի նախագահութեամբ գուշակելով ապագայ

Քաղաքի վարչութեան ձեռք, շատ չգարմացան երբ յսեցին նախ Գեկտեմբեր Չին պետական հարուածը և Կայսրութեան հաստատուիլը: Քանուեցան նաև պետութիւնք որ առանց իսկ համակրութիւն ունենալու կայսրութեան և Լուի Նարոլէոնի անձին, ուրախացան միասպետութեան մը հաստատութեան վրայ, որ հարուած մ'էր Յեղափոխութեան և ազասական գաղափարաց, անոր համար Քերմանիոյ փոքր պետութիւններէն իրենց իշխանութեան վրէժ խնդիրք, փութով զրկեցին իրենց հաւանութիւնը ինչպէս նաև Պելճիոյ և Նարոլիի թագաւորները: Մեծ պետութեանց մէջ գայն առաջին ընդունողն Անգղիա եղաւ. Անգղիա որուն մեծապէս ծանօթ էր իշխանը ի բազմաց հոն բնակած ըլլալով և ընդհանուր սիրելութիւն մը ունէր իբրև դժբաղդ և տկարամիտ ևս իշխան մը: Անգղիացոց համար Սդրագպուրկ և Պոլոններ ծաղու նիւթ դարձած էին և իշխանին վրայ կը կարեկցէին: Ի սկզբան խիթացեր էին որ կայսրութեան նորոգուելու գաղափարով չըլլայ թէ նոր կայսրը ջանայ յանձին կենդացնել իր հօրեղբոր յիշատակքը և վրէժ խնդրէ Ուսթէրլուի, և Փամէրսթըն որ ուրախութիւն ցուցուցեր էր Գեկտեմբեր Չի պետական հարուածին, բռնադատուեր էր պաշտօնարանէն հրաժարելու, սակայն Պորտոյի ճառախօսութիւնը և յետոյ կրկին և կրկին Նախագահին խաղաղութեան քարոզները, զինքը ապահովցուցեր էին և անապարեր էր ընդունելու Կայսրութիւնը, անփոյթ առնելով իրեն լրագրաց յօդուածները և մանաւանդ թայն լրագրինը որ Յունուար Չին յօդուածով մը Տիբերիոսի ժամանակի ծերակուտէն աւելի վատ կը համարէր Քաղաքի ծերակոյսը որ կայսեր տուեր էր ամենապահանջ իրաւունքները, և մէկ հարուածով սպաններ էր այն ամենայն ազատական գրաւները, որոնք տակաւին կը մնային ազգին:

4835

Աւստրիա, Ռուսաստան և Բրուսիա ընդերկար մէկմէկու նայեցան այս ընդունելութեան մէջ, և Յովսէփ Փրանկիսկոս և Փրեդերիկոս Գուլիէլմոս որչափ որ ալ բարեկամական աչքով չէին կրնար տեսնել զՔաղաքի,

սակայն պարագայից հպատակելով, հուսկ ընդունեցան: Ամենէն վերջը մնաց Նիկողայոս որ ընդունելութեան ժամանակ իսկ յայտնեց իր զանազան պայմանքը և մեծ կարեւորութիւն մը շտալը այն անձին որ ինքնին թերևս ոչ մեծ հանճար մը բայց գրաղլիա ներկայացնելուն համար երկու տարի վերջը գատաւոր մը պիտի համարուէր Եւրոպիոյ:

7. Ամուսնութիւն Նաբոլէոն Գի. կայսրուհին Եւժէնի — Պերճուժիւնք: — Կայսրութիւնը հաստատուելէն վերջը թէ Նաբոլէոն Գի և թէ իր կուսակցաց առաջին խորհուրդն եղաւ իշխանական ամուսնութեամբ մը ապահովել յաջորդութիւնը: Նաբոլէոն տեսնելով որ վեհագունք իրեն ազգակցութիւնը պիտի մերժէին, յանձն առեր էր իշխանական տան մը հետ խնամենալ և խնդրիւ էր զգուստը Վալդա իշխանին որդի Կարոլոս ԺԳ Շուէտաց թագաւորին, բայց իշխանուհին նախամեծար ընտրեր էր քան զինքը Սաքսոնիոյ իշխանը: Այն ատեն Հոհէնձոլլէոնի իշխանուհւոյ մը փափազեցաւ, որուն հայրը ըսաւ որ առանց Բրուսիոյ թագաւորին հաւանութեան, գլուխ ընտանեաց, չէր կրնար այսպիսի ամուսնութիւն մը կատարուիլ: Հարկ եղաւ անկէ ալ հրաժարիլ:

Եւ ահա Յունաւոր 20ին ծերակուտին և Որէնսգիր ժողովոյն ատեանք կը հրաւիրուէին ի Գիւլլըրի կայսեր ծանուցում մը ընդունելու և Յունուար 21ին Մոնիշէօրը կը ծանուցանէր որ « Վեհափառ կայսրը իւր ցեղին ապահովութեան համար յապագայն, կ'ամուսնանայ ընդ օրիորդին տը Մոնդիյօ, կոմսուհի թէրայ. 22ին պաշտօնապէս պիտի ծանուցուի պետութեան մեծամեծ ատենից և հարսանիքը պիտի կատարուի 29ին:

Օրիորդն Մոնդիյօ՝ Սպանիոյ ամենէն մեծ ընտանիքներէն, քոյր է դքսուհւոյն Ալպայ: Օրիորդն իր լարձը մտաց, կը միացնէ նաև կատարեալ գեղ մը: Լ. Բարբէ կ'աւելցնէր ևս թէ « իր հայրը կոմսն Մոնդիյօ պատերազմեր էր ի նպաստ նախկին կայսրութեան Գաղղիոյ »:

Այսպիսի լուր մը գարմացուց զամէնը, նոյն իսկ կայսեր բարեկամները, որոնք կը համարէին թէ յետ միանգամ իշխանական ընտանիքներէն արհամարհուելու, անշուշտ կայսրը ազգին սէրը աւելի յանկուցանելու համար գաղղիական մեծ ընտանեաց մը հետ կը խնամենար, « միթէ, կ'ըսէին, Քաղղիոյ մէջ Մոնղոլոյէն աւելի մեծ ընտանիք մը չկայ » : Միշտ ազգ մը շներէր թագաւորի մը ըստ իւր սրտին հաւանութեան ամուսնութիւն մը :

Տիկինն Մոնղոլոյ, այրի սպանիացի զօրավարի մը, շատոնցուրնէ կը բնակէր ի Քաղղիա առանց հաստատուն ընկուծեան սեղ մը ունենալու, մերթ քաղնիք ունեցող քաղաքները գիմելով և մերթ ի Բարիզ հանդիսից. ամէն տեղ ծանօթ իր պճնասէր և չքեղ կեանքով : Փրոսփէր Մէրիմէ մտանազիրը որ ընտանի էր Մոնղոլոյ տիկնոջ, զանիկայ օր մը ներկայացուց Նախագահին իր դասեր հետ : Նախագահը սիրեց զօրիօրոյն Եւթէնի և անկէ վերջը ամենայն նախագահական և յետոյ կայսերական տանից հանդիսադիրն եղաւ, մինչև որ Նարոլէոն մտածեց զինքը Քաղղիոյ կայսրուհի ընել :

Յունուար 29ին երեկոյին կատարուեցաւ ի Դիւլլըրի ըստ կարգաց Ա. կայսրութեան, ամուսնութեան արարողութիւնը. և այս առթիւ Նարոլէոն Ք. գործածեց Ա. Նարոլէոնի Լէժիօն ա' Օնէօրի մանեակը զոր լէրոմ հօրեղբայրը իրրև աւանդ մը անցուց իւրեն : Այս արարողութեան, բաց ի բոլոր ընտանեաց, ի մտրաջախտաց և ի զօրավարաց, ներկայ էին նաև տը Պոնալ, Տիւփոն, Մաթիէօ, Կուսսէ և Տօնէ ծիրանաւորք : Երկրորդ օրն ալ չքեղապէս եկեղեցական ամուսնութեան խորհուրդը կատարուեցաւ յարքեպիսկոպոսէն Բարիգու ի Սիպուրէ, Նօդր Տամի եկեղեցւոյն մէջ : Յետոյ չքեղ հանդիսից և երգոց մէջ, անցնելով հասան ի Դիւլլըրի :

Բարիզ քաղաքը 600,000 ֆր. սահմաններ էր կայսրուհւոյն մանեակ մը ընծայելու համար. բայց նա գրեց քաղաքապետին այն գումարը բարի գործոց ծառայ-

յեցնելու, վասն զի ինքն ալ ըստ օրինակի Ժողէֆին կայսրուհւոյն, կ'ուզէր գլուխ կենալ ամենայն բարեգործական տեղեաց, և այն դրամով բացուեցաւ փութով Եւփէնի Նարոլէօն անուամբ աղքատ դատերց համար արուեստական տուն մը Սէնդ Անդուան թաղին մէջ:

Սակայն այսպիսի բարեգործական դիտմունքները գովելու ժամանակ հարկ է ևս աւելցնենք որ Եւզինէ թողլով Վաղղիոյ վերջին իշխանուհեաց և թագուհեաց պարգութիւնը և խստութիւնը մեծապէս սիրող եղաւ չբեղութեանց և կամ լաւ ևս ըսել բիւրազգի նորածնութեանց զոր իրմէ օրինակեցին իրեն մերձաւորք ինչպէս սովորութիւն է և անկէ ապա հեռաւորք, և որ իւր թեթեւ փնասակար ազդեցութիւնքը ունեցաւ ժողովրդեան բարուց վրայ:

Սկսան նախկին կայսերական ժամանակին մեծածախ ընդունելութիւնքը և խնջոյքները, նոր կոմսեր և ազնուականներ անուանուեցան, կայսեր տարին 25 միլիոն սահմանուեցաւ: Վաղղիա քիչ ամսուան մէջ սիրայօժար հասարակապետական, խիստ և ազատ գաղափարները մերկանալով, ընտրեր էր միապետութեանց ամենէն շուայր և բազմածախը: Մարդկային բնութիւնն է միշտ երկու ծայրերը դիմել: Սրէնսդիր ժողովոյն 1853ին խօսերը Պսակի ձառով մը բացուեր էին ինախազահէն: Մեծամեծք տեսնելով որ հարկ էր վարիլ ըստ իրենց տեսարց, իրենք ևս սկսան ջանալ արծարծել հանդիսից եռանդը, և Սրէնսդիր ժողովը սահմանեց իրեն նիստերը սկսիլ չքեզ պարահանդէս մը նախ ընծայելով Կայսեր և Կայսրուհւոյն Պուրպոնի՝ Սրէնսդիր ժողովոյն պալատան մէջ իւրաքանչիւր երեսփոխանէն որոնք 362 էին 460 ֆր. հաւաքելով¹:

Յետ պարահանդէսին կազմաձքը վերցնելու, ատե-

1. Մոնդալամպէր մերժեց վճարելու այս գումարը և զայն զրկեց Պրզանսոն հիմնեալ նորուստմն արուեստաւորաց ընկերակցութեան: Բայց Պրզանսոնի շահապը « մտածելով որ աւելի օգտակար էր, կ'ըսէ Դաքսիլ տըլոր, Բարիգեցիքը պարեցնել,

նական նիստերը սկսան . արդէն Գեկտեմբեր 3ի պետական հարուածը իրենց իշխանութեանց ալ հարուած մը տուեր՝ էր, կայսրութիւնը գայն ի սպառ ամփոփեց : Ամենէն առաջին խնդիրը 1854ի համար Ելեմուտքն եղաւ , յորում պիտի վիճուէր Կայսրութեան ծախուց և Օուլէանի ընտանեաց ընչից գրաւման համար : Մոնղալամպէր վիճարանութեանց մէջ մեծապէս ընդդիմացաւ քուէարկութեան : Օրէնսդիր ժողովքը երբեմն Առժամանակեայ վարչութեան հրովարտակին հետեւելով քուէարկեց զանազան կարգադրութիւնք որոնք կը վերաբերէին եղեռնական օրէնսգրտութեան . վերցուց մահը ի քաղաքական յանցանս . հայրասպանից և կայսեր կենաց դէմ յանցանաց պատուհասքը պահուեցան : Կլխատումը պահուեցաւ միայն ընդդէմ՝ կայսերական ընտանեաց եղած դաւաճանութեանց :

Ընդունեցաւ դարձեալ օրէնք մը որով վարչութեան իրաւունք կուտար անուանելու իրաւարարաց նախագահները որոց միջոցով ազդեցութիւն ունեցեր էին գործաւորաց վրայ , ամփոփեց քաղաքական թոշակները և նիստերը գոցուեցան Յունիս ՚ին : Ժողովուրդը տեղեկութիւն չունէր վիճարանութեանց վրայ , մինչև որ դոցուելէն երեք օր վերջը պաշտօնապէս հռչակուեցան իւրաքանչիւր նիստերը առանց անուանելու ճառասփից անունները : Սահմանադրութիւնը բացարձակապէս կ'արգելուր խօսելու ինչ որ յանձնաժողովոց մէջ կը խօսուէր . և միայն Մօնիդէօրը կարող էր բանալ այն խորհրդաւոր քողը որ կը պատէր զՊուրպոնի պալատը . Յունիս 21ին վերցուեցաւ Ոստիկանութեան պաշտօնէութիւնը :

9. Իսաք ընդդէմ՝ կայսեր : — Այս միջոցներս 27 անձինք բռնուեցան իրրև դաւաճանք ընդդէմ՝ կենաց Կայսեր և Կայսրուհւոյն ի Չիարձակարան և յ(Վիէրա Գումիք . սակայն Կոյեմբեր 7ին մէջերնէն 10 հոգի ար-

քան Պըզանտնի աղքատաց օգնութեան հասնիլ » , յանուն նորուումն ընկերակցութեան մերժեց Մոնղալամպէրի բնծայն :

ձրկուեցան, միւսերն ալ զանազան պատուհասներու դատապարտուեցան: Երկու ամիս վերջը 1854ի Յունուարին ուրիշ անձինք ալ բռնուեցան յորս նաև փաստաբանն Հիւպպարտ իբրև ծածուկ ընդիմակաց տպագրութեան մը ձեռնարկողք: Հիւպպարտ դատապարտուեցաւ 3 տարուան բանտի և 10,000 ֆր. տուգանքի:



ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ

1. Սուլթան Ապտիւլ Մէհիտ. — 2. Ռէշիտ և Մէհէմէտ Ալի փաշայք. — 3. Ճէզայրլեան Մկրտիչ Ազա սեղանաւոր. Բարենտրոգուժն մաքսատանց. — 4. Ռէշիտ Պաշտօնարան. — 5. Մէհէմէտ Ալի Պաշտօնարան — Բանտարգելութիւն Ճէզայրլեանի. — 6. Մէհէմէտ Ալի յաքսոր — Ազատութիւն Ճէզայրլեանի. — 7. Ճէզայրլեան յԱնգղիա. — 8. Լիբնէն — Տրուչ և մարօնդ ցեղերուն հակառակութիւնը. — 9. Գաղղիա և Անգղիա ի Լիբանան. — 10. Տրուզներուն շարքը 1845ի Մարտին. — 11. Բոչոք Գաղղիոյ և Թնդանօթակոծել զՊէրութ. — 12. Բարեկարգութիւնք Լիբանանու :

1. Սուլթան Ապտիւլ Մէհիտ : — Սուլթան Ապտիւլ Մէհիտով Օսմանեան պատմութիւնը նոր պարագայի մը մէջ կը մտնէ : Յիրաւի որչափ որ բարեկարգութեանց նախկին մղումը իւր հօրմէն սկսեր էր, սակայն վարչութեան եղանակը տակաւին իւր հին կերպարանքը փոխած չէր և Սուլթան Մահմուտ չէր կըրնար համոզուիլ իր առանձնական կարծիքները զոհել պարագայից քաղաքագիտական հարկին : Ապտիւլ-Մէհիտի ընտիր դաստիարակութիւնը, հեղ և անոյշ բարքը, զամէնը զոհացնելու փոյթը յորդոր եղան բարենորոգմանց և մեծամեծ հանճարներու յառնելուն և Եւրոպա հիացեալ մնաց այն ծանուցագիրներուն վրայ զորս օսմանեան վէճիւրք կը յղէին առ Արտաքին պաշտօնարանս, իբր ի բազմաց վարժք քաղաքագիտական վարչութեան ձևոյն : Ռէշիտ, Մէհէմէտ Ալի Մէհմէտ Ռիշտի, Ռիլա, Էօմէր, Աալի և Յուստ

փաշայք, դարուս նշանաւոր աշխարհավարաց կարգը անցած են և գոգցես խօսարանական ընդդիմութիւններ կազմած են ի յառաջադիմութիւն և յերուսյական ձեւակերպութիւնս :

Ապտիւլ Մէճիտի թագաւորութեան սկիզբը մասնաւորապէս երկու պաշտօնեայք զանազան անգամ վարչութեան զլուխ մէկմէկու փոխանակեցին, Ռէշիտ փաշա և Մէհէմմէտ Ալի. երկուքն ալ իրենց հանճարովն անուանի երկուքն ալ հակառակ ճամբով Պետութեան բարձր պաշտամանց համար մրցողք, խառն երբեմն արևելեան պալատական միջին ազդեցութեամբք : Ապտիւլ Մէճիտ գիտցաւ երկուքին յատկութիւնքն ալ յարգել և զանոնք գործածել մերթ առանձին և մերթ միարան, և որ աւելին է, այս երկու հակառակըդէմ գաղափարով անձինքը իրեն հետ միացուց ազգակցութեամբ. իւր քոյրը Սուլթան Ատիլէ՝ Մէհէմմէտ Ալի տուաւ կնութեան, և դստերայ մէջ սիրելագոյնը զՍուլթան Ֆաթմա՝ Ռէշիտի Ալի Ղալէպ որդւոյն ամուսնացոյց հարուստ օժիտով :

2. Ռէշիտ եւ Մէհէմմէտ Ալի փաշայք : — Ռէշիտ փաշա ծնած էր 1802ին և թէպէտ որդի ոչ հարուստ փաշայի մը, սակայն իւր արթուն յաջողակութեամբը ընտիր դաստիարակութիւն մը ստացեր էր որով և Փէրթէվ մեծ վէզիրը զինքը քարտուղար ընտրած էր և նոյն պաշտօնը վարեց 1829էն 1833 Բարձրագոյն Խորհրդեան մէջ : Ադրիանուպօլսոյ Գաշանց բանակցութեանց ժամանակ աստենադպիր ըլլալով, լաւ տեղեկացաւ Եւրոպիոյ վիճակին և քաղաքագիտութեան, քիչ վերջը մասնակցեցաւ նաև Եգիպտոսի փոխարքային հետ եղած հաշտութեան բանակցութեանց, ուսկից Բարիդ անցաւ և հոն ծանօթացաւ բազմաթիւ քաղաքագիտական, մասենազրական և արուեստական համբաւաւոր անձանց հետ : Իրեն քով ժողովեց տաճիկ, հայ, յոյն և լուլղար ուսանողք, որպէս զի ցուցրնէ իր ունեցած հաւասարութեան գաղափարը : Բարիդ էր երբ ի Ղոնտրա դեսպան անուանուեցաւ 1844ին և անկէ անմիջապէս կոչուեցաւ ի Կ. Պօլիս իբրև պաշտօնեայ Ար-

տաքին Գործոց: Կիրթ և արթուն միտք մը հաստատամիտ բնաւորութեամբ, մինչև այն ատեն յԵւրոպա տեսած յառաջադիմութիւնքը հիմա կրնար սկսիլ դնել ի գործ, ունելով մանաւանդ իրեն օգնական անուանի թիկունքներ, Աալի էֆէնտի, Ֆուատ էֆէնտի, Լյմին Միւխլիս. Ահմէր Վէֆիք, Սալֆէթ էֆէնտի, Նուրէտտին պէյ, ամէնն ալ յետոյ հռչակաւորք, ու մանք քաղաքագիտութեամբ և այլք տաճկական մատենագրութեան մէջ: Հազիւ տարի մը անցեր էր երբ մեծ վէպիր անուանուեցաւ, ունենալով Արտաքին Գործոց համար զԱալի էֆէնտի և Մովային զօրութեան զՄէհէմէտ Ալի:

1846
Սեպտ.

Մէհէմէտ Ալի Տրապիզոնի գաւառին մէջ ծնած էր և Ռիպա փաշայի հետ միաբան իրենց աջողակութեամբը սիրելի եղեր էին Սուլթան Մահմուտի: Նոյն համարմունքը գտան նաև իր յաջորդին ժամանակ: Նախ Ռիպա փաշա, որուն միջոցով 1840ին Մէհէմէտ Ալի հազարապետ անուանուեցաւ և 1844ին Դեբլի: Անկէ վերջը քաղաքագիտական ասպարիզին վրայ երևցան, միշտ ընդհանրապէս հակառակորդ հանդիսանալով, և որոց երկուքին ունեցած զգացմունքները աւելի դուրս ցատքեցին Ճէզայիրլեան Մկրտիչ Աղա Աղանաւորին դատին մէջ:

3. Ճէզայիրլեան Մկրտիչ Աղա. — Բարեկարգութիւն մաքսատանց: — Երկար կ'ըլլայ մեզի եթէ ուզէինք այս մթին խնդրոյն ամէն պարագայքը քննել, նա մանաւանդ որ տակաւին ժամանակը զայն չէ պայծառացուցած, և որչափ որ ջանացինք օգտուիլ գրութիւններէ և ականատես անձանցմէ, նա մանաւանդ անոնցմէ որոնք կարող էին հմուտ ըլլալ այդ պայքարներու, ուրիշ բան չգտանք բայց թէ մէկ կողմէն մեծ գովեստ ճէզայիրլեանի իբրև արդարակորով և անաչառ անձ մը, միւս կողմանէ իբրև կաշառակեր և տէրութեան գանձուն փնասակար մէկը: Այնպէս հակառակընդդէմ են վկայութիւնք և դժուարին է գանոնք միացնել, և մենք հոս միայն համառօտ մը յիշենք պարզ պատմութիւնը, ապագային թողով անոր քննա-

դատութիւնը ըստ սպագայ հռչակուելիք յիշատակագրոց :

Ծանօթ է ամենուն որ Տաճկաստանի Ելեմուտքը կէս դար առաջ սեղանաւորաց միջոցով կը կատարուէր . որոնք գրեթէ ամէնն ալ հայազգի էին , և այս սեղանաւորք կրնային կոչուիլ եթէ Արքունեաց և եթէ Պետութեան գանձապետքը : Հայ Ազգը բովանդակ Տաճկաստանի վաճառականութեան և սեղանաւորութեան մեծագոյն միող անձաւորութիւնը եղած է : Գարուկիսուն ժամանակները այս սեղանաւորաց մէջ իր ճարտարութեամբ և վէյիւրներու սեղանաւորութեամբ մեծ անուն ստացեր էր հայազգի երիտասարդ մը : Մկրտիչ Աղա Ղէզայիւրեան որ խնդրեց և ստացաւ Սուլթանէն Պրուսա նահանգին շերամի մետաքսին մեկ նաւվաճառութիւնը , յանձն առնելով իր ծախիւք շինել հոն շոգեւոր գործարաններ , մրցելով հոն գտնուող նոյն իսկ գաղղիացի գործարանաց հետ : Գաղղիայէն բերուած ընտիր մեքլենայից վերակացու կարգեց քաջուսումն հայազգի երիտասարդ մը Աղաթոն Էֆէնաի , զոր իւր ծախիւք երբեմն զրկած էր ի Գաղղիա կրիներին երկրագործական վարժարանը և ուր Աղաթոն յառաջադէմ հանդիսացեր էր : Ղէզայիւրեանի գործարանք այնչափ առաջ գացին որ Լոնտրայի 1851ի Աշխարհահանդիսին մրցանակ ստացան :

4. Ռէշիտ փաշա Պաշտօնարան : — Երբ Ռէշիտ փաշա յետ Գպրոցները հաստատելու և 1840ին վաճառականական օրինագիրքը հրատարակելու ուզեց նաև Մաքսատանց մէջ ալ բարենորոգումն մտցնել , մեծապէս յորդորեց Ղէզայիւրեան իրեն նպաստելու , Իզմիրի Մաքսատան եկամուտը ամենէն յաջող տարիները շկամ : Յ միլիոն զուրուշ կը բերէր , թողունք որ եթէ տարին գէշ երթար , Տէրութիւնը զպակասը չէր պահանջեր : Ղէզայիւրեան ինքը յանձն առաւ Իզմիրի մաքսապետութիւնը 8 միլիոնի և միշտ կանոնաւորապէս վճարեց : Ղէզայիւրեանէն առաջ Իզմիրի Մաքսը կը տնօրինէր սեղանաւոր մայր-Սուլթանին՝ Թահիր փաշա , ուսկից Ռէշիտ փաշա հաշիւ պահանջեց Ատենին

մէջ անցեալ տարիներու համար: Ռէշիտ տեսնելով իզմիրի Մաքսատան կանոնաւորութիւնը, յորդորեց զձէգայիրլեան և նա յանձն առաւ 20 միլիոն զուրուշի Կ. Պոլսոյ մաքսապետութիւնը երեք տարուան համար: Յետոյ առաջարկեց և ընդունեցաւ 4 միլիոնի կրեաէի մաքսը, որուն համար Մուսդաֆա փաշա կուսակալը միայն 750,000 զուրուշ կը վճարէր: Յայտ է թէ այս գործերը մեծամեծ թշնամութիւնք պիտի ձրգէին առ ինքն, մանաւանդ իր նախորդ մաքսապետներէ. և արդէն կուսակցութիւն մը կազմեալ էր ի Մուսդաֆա փաշայէ, ի Հիւսէյին փաշայէ, որդի թահիր փաշայի որոց գալտ կ'օգնէր նաև Սուլթանին փեսայն Մէհմէտ Ալի փաշա: Երբ յեզրպատու թանգիմազի հռչակման յապաղելուն լուրը Կ. Պոլիս հասաւ, Ռէշիտի հակառակորդք զայն սուրթ առնէլով, փոխել տուին Սուլթանին զպաշտօնարանը և նոր վարչութեան մը գլուխ անցան Աալի փաշա՝ իրր մեծ վէպիր, Տուատ էֆէնտի՝ պաշտօնեայ Արտաքին գործոց, Մէհմէտ Ռիւշտի փաշա՝ Մովսային գորութեան և Հաֆըզ փաշա Ելեմտից, որ մեծ բարւոքումներ մը տուց իր մասին մէջ և ի ներկայութեան Սուլթանի 100 միլիոնի թղթադրամ՝ այրեց, որոց ամէն ծրար մի առ մի քննեց Ապտիւլ Մէճիտ: Աալի փաշայի պաշտօնարանը միշտ կրնար Ռէշիտի կուսակցութեան պաշտօնարան մը համարուիլ, որով և Մէհմէտ Ալի կուսակցութիւնը մեծապէս ջանաց յԱրքունիս և կրցաւ անոր տեղ փոխանակել, ունենայով մեծ վէպիր զՄէհմէտ Ալի:

5. Մէհմէտ Ալի Պաշտօնարան. — Բանտարգելութիւն ձէգայիրլեանի: — Ռէշիտ փաշա երբ ձէգայիրլեանի յանձնեց Կ. Պոլսոյ մաքսը, որպէս զի դիւրացնէ անոր երաշխաւորութիւնը մտածեր և սկսեր էր փոխառութիւն մը ի Գալլիոյ, կոչուած Կալլիոսի փոխառութիւն: Մէհմէտ Ալի շուզեց ընդունել այս փոխառութիւնը, այլ ընդհակառակն այս փոխառութիւնքը ուզեց կատարել սեղանաւորաց վրայ, յորում իրեն առաւել օգնական եղան հայ-հռովմէական սե-

զանաւորք: Հարկ է ինձ ըսել որ ընդարձակօրէն չուզեցինք նշմարել տալ բովանդակ այս ճէզայիրլեանի խնդրոյն մէջ Հոռովմէական հայ և Եջմիածնական հայոց փոխադարձաբար իրարու դէմ ցուցուցած ցաւայի հակաակուլթիւնը և ատելութիւնը:

Ճէզայիրլեան Մաքսատան բարենորոգման համար առաջին տարին մեծ ծախքեր ունենայով, յաջող եկամուտ մը չէր ունեցած, անոր համար առաջին տարիէն ուղեր էր հրաժարիլ ինչպէս իրաւունք ալ ունէր ըստ զաւանց, սակայն Ապտիւլ Մէճիտ ուղեց որ շարունակէ և դաշանց տարիներուն վերայ տարի մը ևս աւելցուց, որպէս զի առջի տարւոյն փնասը վերջնովը փոխարինէ: Ճէզայիրլեան գոհ եղեր էր. նա մանաւանդ որ Ռէշիտի յորդորանօք Պալթաճի և Ալլէոն սեղանաւորք իրեն երաշխաւոր եղեր էին և որոնք կը յուսային գործերը կարգի դնել եթէ Գաղղիայէն փոխառութիւնը ըլլար: Բայց երբ Մէհէմմէտ Ալի իշխանութեան հասնելով փոխառութիւնը խափանուեցաւ, այն ատեն եթէ Պալթաճի և եթէ Ալլէոն հրաժարեցան երաշխաւորութենէն որով և Ճէզայիրլեան միակ մնաց առջին անյաջող տարւոյն պակասովը:

Մէհէմմէտ Ալի գիտէր զայս և կ'ուզէր սգտուիլ սակէ զմաքսատեալ տապալելու համար: Յանձնաժողով մը կազմեց, իրեն մտերիմ անձինքերէ, իրր մաքսին բարենորոգման համար մտածելու, և հոն կոչեց նաև զՃէզայիրլեան ուր փոխանակ ժողովականներու իրեն դիմաց դատաւորներ տեսաւ, որոնք բիւրաւոր հարցմունքեր կ'ընէին և յորոց ոմանք բնաւ յարաբերութիւն չունէին խնդրոյն հետ: Հոն իմացաւ որ զինքը բանտ դնելու համար կոչեր էին և ի զուր բողոքեց: Արդ որովհետև մեծ էին Ճէզայիրլեանի անական ճոխութիւնքը, միայն կա՛հ կարասիքը հազարաւոր լիրաներու կը համարուէին, թող ակունքերը, սկեղէնքը և արծաթեղէնքը, զիչեր ատեն մարդիկ զրկուեցան Պէտլիւք Տէրէի ամարանոցը և դուրս ձգելով գրեթէ մերկ եօթանասնամեայ մայրը և իւր կիները, կողոպտեցին տանը մէջ եղածները և բոլոր թղթե-

ըլ որոց եկամուտը ըստ վկայելոյ հաւատարիմ անձանց կրնար երկու անգամ վճարել մաքսատան մէջ բաց համարուածը, որ էր 11, 632, 143 ղուրուշ¹ : Այդպիսիքան ի զուր բողոքեց որ դեռ ինքը տարի և կէս իրաւունք ունէր շարունակելու մաքսապետութիւնը, հայազգի էջմիածնական բարեկամ սեղանաւորք եւրաշխաւոր ներկայացան, բայց վարչութիւնը մտիկ չըրաւ : Եթէ Պէօյիք-Տէրէի, եթէ Խասգիւղի և եթէ Լէնի Քէօյի շինել սուած ապարանքը կնքուեցան, յետինը դեռ ի շինութեան՝ որուն համար գաղղիացի աշխատաւորք, քանդակագործք և պատկերահանք բերել սուած էր :

6. Մէհէմմէտ Ալի յաքսոր. — Ազատումն ճէզայիլեանի. — Շատ կ'երկարէր եթէ ուղէինք նոյն իսկ համառօտ մը պատմել սմբողջ դատաստանին ցաւալի պարագայքը և անոր ունեցած յարաբերութիւնքը քաղաքական դիպաց հետ ինչպէս նաև մաքսատան և Սանտըքճիներուն մեծ հրդեհները, յորս այրեցան կարևոր թղթեր ալ : Քիչ վերջը Արևելեան կամ լաւ ևս ըսենք Ղրիմու պատերազմին սկսելով, քաղաքագիտական պարագայից դժուարանալով, Ապտիւլ Մէճիտ զՌէշիս փաշա պաշտօնեայ անուանեց Արտաքին Գործոց և զՄէհէմմէտ Ալի պաշտօնեայ պատերազմի : Այս միջոցիս Այգալիբեան բանտի մէջ հիւանդանալով դիմեր էր առ Մէհէմմէտ Ալի, բայց ի զուր : Լազարիստներուն հռչականուն մեծաւորը Հայրն Բօրէ Չանացէր էր միջնորդութիւն մը ընել և խնդիրը հասեր էր մինչև առ Սուլթանը, որ մանրամասն լսելով Այգալիբեանի արկածքը, պատուիրեց որ բանտէն ազատուի և սակայն Մէհէմմէտ Ալի պաշտօնարանը բանտէն հանելով, պատրիարքարանի մօտ տան մը մէջ փակեր էր զանիկայ հսկողութեան ներքև : Նոր պաշտօնարանին նախագահ Քպրըղլի Մէհէմմէտ փաշա դատը քննող Յանձնաժողով մը կազմեր էր, որ Այգա-

1. Տունը գտնուած հարստութիւնք հայուեցան 20, 968, 128 ղուրուշ. գրեալ է 4, 414, 545 ֆրանք :

յիրլեանի տետրակներուն մէջ գտած էր այլ և այլ գումարներ դուրս տրուած, առանց նշանակելու, որոնք: Ճէզայիրլեան ինչպէս Ռէշիտ փաշայի սեղանաւորն էր, նոյնպէս ժամանակին սեղանաւոր եղած էր Մէհէմմէտ Ալի փաշայի: Ճէզայիրլեան դատի մէջ ըսաւ որ այդ 4,500,000 զուրուշը Մէհէմմէտ Ալի իրմէ կաշառ ընդուններ էր և երբ փաստ պահանջուեցաւ, փաշային կնքով երեք ընկալագիր գտնուեցան իրեն կնքեալ պրոցներուն մէջ: Մէհէմմէտ Ալի ուրացաւ կնիքները և զանունք խարդախեալ հռչախեց: Մասնաւոր Ատեան մը կազմուեցաւ որուն ինքնին գլուխ կեցաւ Քարըզլի Մէհէմմէտ փաշայն: Ճէզայիրլեանի մայր տետրակաց մէջ ալ գտնուեցան այդ գումարները և որչափ որ մի քանի փորագրութեան հմուտ արուեստագէտք, իսկզբան տարակոյս հանեցին կնիքներուն վաւերականութեան վերայ, սակայն ապա զայնս հաստատեցին ինչպէս նաև մայրաքաղաքին եւրոպացի ամենէն նշանաւոր փորագրիչը: Ապտիւլ Մէհիտ գիտնալով որ իւր փեսային դէմ եղած դատը առաջ մղողն էր Ռէշիտ փաշա, շատ ջանացեր էր հաշտեցնելով զիրենք լուել տալ խնդիրը. սակայն դատաստանը առաջ գացեր էր և Ռէշիտ փաշա բռնուն կերպ մը ստացեր էր: Ստորագրութիւնքը Մէհէմմէտ Ալիի դատուեցան, որով և մնասապարտ դատուեցաւ Գանձուն:

Այն օրերը խումբ մը տաճիկ կրօնական ուսմանց աշակերտք ըստ ոմանց 30,000ի մօտ՝ խոռով մը ուզելով յարուցանել Պատերազմի պաշտօնարանին դիպաց, Ղրիմու պատերազմին առթիւ, Մէհէմմէտ Ալիի հակառակորդք իրեն ընծայեցին զայդ և Ապրիլ 14ին զիշերը կանչուելով յԱրքունիս լսեց որ անմիջապէս առանց իսկ իւր ընտանիքը տեսնելու հարկ էր որ արսոր երթար ի Քաստամուղու:

7. Ճէզայիրլեան յԱսգղիա: — Սակայն քիչ օր վերջը Սուլթանը զիջանելով իր քրոջը թախանձանաց և արսասուաց, արսորէն ետ դարձնել տուաւ, պայմանաւ որ ապարանքէն դուրս չելայ: Ռէշիտ այս բանիս վրայ իր հրաժարականը տուաւ և Ապտիւլ Մէ-

1854

ճիտ մեծ վեղիրութիւնը կրկին Մայիս Զին յանձնեց Աւլի փաշայի: Քիչ վերջը դարձեալ ծովակալ կարգուեցաւ Մէհէմմէտ Ալի և Սուլթանէն իր կրած ֆեսսներուն համար 500,000 ղուրուշ պարգև ընդունեցաւ: Ճէզայիրլեան Մկրտիչ Աղա, որուն մայրը արդէն բանտը եղած ատեն մեռեր էր, տեսնելով հակառակորդին նորէն բարձրանալը, թողուց զկ. Պոլիս և մեկնեցաւ յԱնգղիա յառանձնական կեանս: Այսպէս վերջացաւ խնդիր մը որ տեւեց գրեթէ ամբողջ Ղըրիմու պատերազմին ժամանակ, և որուն շատ անգամ միջամտութիւն ընելով օտարազգի ղեկապանք, ի նպատակը բնեց քաբաքական տեսակէտներու կ'ուզէին դարձնել զնա: Սակայն դեռ չմտած այդ խնդիրներուն մէջ կարևոր կը համարիմ ականարկ մը ձգել Օսմանեան Պետութեան թէ յԵւրոպա և թէ յԱսիա ունեցած ուրիշ նահանգներու գլխաւորապէս Լիբանանու և Պալքաններու վրայ:

8. ԼԻԲԱՆԱՆ. — Տրուզ եւ Մարոնիդ ցեղերուն նախառակութիւնը: — Իննևտասներորդ դարուն ըսկիզբը Լիբանանու կալուածատիրական իշխանութիւնը անցեր էր Շէհապ ցեղին, որուն անդրանիկը Մաան ցեղին պայազատ օրիորդին հետ ամուսնանալով միացուցեր էր զբովանդակ Լիբանան և այնպէս ճանչցուեր էր բոլոր էմիրներէն և Աքիայի փաշայէն: Լիբանու մէջ Շէհապ ցեղին հաւատար կար տրուզ ազդէ ուրիշ նշանաւոր գերդաստան մ'ալ ճոճալի անուանեալ, որուն գլուխը Շէյխ Պէշիր Ղոմպլաթ՝ Աքիայի մէջ սպաննուեր էր Ապտուլլահ փաշային հրամանով, և այս մահը մեծցուցեր էր Պէշիր Շէհապի իշխանութիւնը: Երբ Մէհէմմէտ Ալի Եգիպտոսի փոխարքայն տիրեց Ասորոց, Պէշիր իրեն կողմնակից եղաւ և սակայն փոխարքային որդին Իպրահիմ փաշա թշուամացուց իրեն առհասարակ բոլոր լիոնականքը, պահանջելով որ ամենայն զէնք իրեն բերուին: Անգղիացիք փոխարքային իշխանութիւնը տկարացնելու համար ջանացեր էին գրգռել զմարոնիդս ընդդէմ Եգիպտացուց և ձայն տարածեր էին որ Իպրահիմ փա-

չա բռնի զինուորագրութիւնը պիտի հաստատէ : Գամակոսի մէջ ժանտախտը տիրած ըլլալով, Մայիս 29ին վարչութիւնը առողջապահութեան զիծ մը հաստատեց Պէրուի շորս կողմը : Լեռնականք այս արգելքը իրենց իբրև պատիժ համարեցան և նախապատրաստութիւն զինաթափութեան, որով Պէրուի, Դրիփոլի, և Սախտա ոտք ելան : Ի զուր Օսման փաշա և Գաղղիա ջանացին համոզելու զմարտնիդս որ այս ապստամբութիւնը աննպատակ էր, Մարտնիդք եգիպտական բանակին վրայ յարձկեցան և շատ մը աւար ձեռք ձգեցին : Պէշիր Շէհապ խիտ հրատարակութիւն մը ըրաւ առ ժողովուրդը յորում զԱնգղիացիս գրգռիչ համարելով այս շփոթից, մահ կը սպառնար՝ ով որ ապստամբութեան մասնակցէր և կամ օգնէր զէնքով և պաշարով : Անգղիա ջանաց հեռացնել զՊէշիրը, զոր Բարձրագոյն զրան մատնեց իբր թշնամի, և Պէշիր Կ. Պօլիս կանչուեցաւ և մեռաւ արգելեալ ի Քատլքէօյ :

9. Գաղղիա եւ Անգղիա ի Լիբանան : — Իր տեղը Բ. Դուռը իշխան անուանեց իւր որդին Պէշիր էլ Քէսապ որ բնաւ չունէր այն յատկութիւնքը՝ որոնք կարևոր էին այսպիսի խռովեալ ժամանակի մը մէջ : Լիբանան եւրոպական քաղաքագիտութեան մրցարան մը դարձեր էր, ուր կը կուռէին Գաղղիա և Անգղիա, իւրաքանչիւրը ոտք հանելով առ ինքն շահած ցեղը և աննպատակ անոնց արիւնը թափել տալով : Փութով զայրացան այն սակաւաթիւ ազգաց մէջ ցեղական և կրօնական զայրոյթները : Մարտնիդներուն հրովմէական ուղղափառութիւնը անխտահոսութեան և անսիրելութեան նիւթ մ'էր Անգղիոյ, մանաւանդ Գամակոսի հիւպատոսարանին որ թողուց զանոնք և իրեն գործի առաւ զՏրուզս, յորս կը համարէր որ կարենայ նորադանդական քարոզութիւն մը հաստատել : Եգիպտացոց յԱսորոց քաշուելով, Լէճա կը դառնար իր նախկին իշխանութեան և Պէյթ-Էտտիինի մէջ առձիկ փաշա մը կը դրուէր : Իպրահիմ փաշային մեռնելովը, Տրուզք կը յուսային որ Գաշնակից մեծ

Պետութիւնք իրենց համար իշխանութիւն մը հաստատեն և յոյսերնին ունայն ելլելով ասպտամբեցան իրենց էմիրէն և գլուխ դնելով զՇէյխ Համուտ-Ապու-Նափէր, այրեցին Պէրութի մօտ զՊալաստտա և զՀատտէդ: Առին նաև զՏէիր-էլ-Քամար, բայց յետ չորս օր փողոցներուն մէջ կռուելու բռնադատուեցան յետս նահանջելու:

1841
Հ-4-

Սէլիմ փաշա երկու սպայք ղրկեց ի Տէիր-էլ-Քամար: Տրուգք յետ զայնս տառապեցնելու կալանաւորներու պէս, անոնց ձեռքէն ընդունեցան քաղքին անձնատուր ըլլալը որ կողոպտուեցաւ և աւերեցաւ: Տրուգք մեծ վատահուծեան մէջ էին. Գամասկոսի վարիչ Նէճիպ փաշա՝ գաղտ կ' հայթայթէր անոնց ամէն պէտք եղածը և անկանոն ջոկատներ Գամասկոսէն մեկնելով, լերան ամէն կողմը լեցուցին յափշտակութեամբ և աւերով: 1841ի Հոկտեմբերի վերջերը շէյխ Շէպ-լի էլ Հանամ՝ Նէճէպի ջոկատներուն զխաւորը Հաուրանի Տրուզներուն գլուխ անցնելով, ներկայացաւ Հասսէպէյա մարոնիդ ցեղին և յանուն Սէլիմ փաշայի զինաթափ ընելով բնակիչքը, քաղաքը յափշտակութեան մատնեց:

Բ. Գուռը այս խառնակութեան առջև առնելունը պատակաւ պաշտօնանկ ըրաւ զՊէշիր էմիրը և ղրկեց ի Լիբանանց ունդերով Մուսպֆա փաշա ծովակալը, և Տէիր-էլ-Քամարի կառավարիչ դրաւ զԷօմէր փաշա, զոր մեծ ուրախութեամբ ընդունեցան քրիստոնեայ ազգերը: Սակայն 1840ի Գաշանց ստորագրող Եւրոպիոյ մեծ Պետութիւնք բողոքեցին Բ. Գրան այս միջամտութեան վրայ ի Լիբանան, և Գաղղիա մասնաւորապէս կը պահանջէր Շէպապ ցեղին վերականգնումը:

Պէտք չէ կարծել որ երբ Եւրոպիոյ պետութիւնք կը միջատեն Արևելեան խնդրոց մէջ միշտ բարեկարգութեան կամ խաղաղութեան նպատակաւ. հազիւ երբէք մարդասիրական զգացմունքէ շարժեալ են և մեծագոյն մղողն է անհատական շահը և կամ փոփոխակի նախանձը:

Բարձրագոյն զրան Արտաքին գործոց պաշտօնեայն Սարիմ Լֆէնտի Եւրոպիոյ բողոքներուն վրայ ինքզինքը պատրաստ ցուցուց յետս կոչելու զԷօմէր փաշա, իսկ մնացեալ խնդիրները քննելու համար զրկեց օգնական Մուսղաֆա փաշայի զՎէլի փաշա և զՉատէ Սէլիմ պէյ՝ թոռն Տէփէտէլէնի Ալի փաշայի: Յանձնաժողովը ծանոյց Բ. Գրան որ Լեոնցիք տաղակացած Շէհապ ցեղէն, որուն մեծ հովանաւորութիւն կ'ընէր Քաղղիա, կը փափաքէին կառավարուիլ փաշայէ մը և կը ցանկային մնալ Էօմէր փաշայի արդարակորով վարչութեան ներքև: Սակայն Բ. Գուռը արգեօք, զՊետութիւնս հաճելու նպատակաւ եթէ զԼիբանան աւելի ուղղակի կերպով կառավարելու համար, հետեւալ Սեպտեմբեր 15ին պաշտօնանկ ըրաւ զԷօմէր փաշա և յետինն ամիս բանակցութեանց սահմանուեցաւ որ առ ժամս երկու *تاجه تاجه* (գաւառապետք) հաստատուին ի Լիբանան մին քրիստոնեայ միւսն տրուգ. Շէհապ ցեղը տկարացաւ և ճէպայիլ մարոնիդ գաւառը որ Շէհապներունն էր, Գրիփուլիի փաշայութեան միացաւ, որուն դէմ ի զուր բողոքեց առ Եւրոպիոյ պետութիւնս մարոնիդներուն արքեպիսկոպոսը Մուրատ: Յայտ է որ Լիբանան անգղիական և գաղղիական շահաւ կուռի տեսլարան մ'էր: Անգղիա երբէք չէր կըրնար զիջանիլ որ Քաղղիա իր ուղղափառ կրօնից համար մեծագոյն ազդեցութիւն ունենայ յԱսորիս մարոնիտներուն վրայ, և յայսմ իրեն նպաստաւոր ունէր զԱմբրիկա, Բրուսիա և զՌուսաստան: Բազմատեսակ քարոզիչք՝ աւետարանականք, անգղիականք, կալուինականք և յունածէք սիռուեցան յԱսորիս մարոնիդները շահելու նպատակաւ, որ երբ չյաջողեցան: Անգղիա Տրուզներուն կողմը բռնեց. գնդապետն Ռոզ՝ հիւպատոս մեծին Բրիտանիոյ յԱսորիս (յետոյ նուիրակ ի Պօլիս և ապա թագուհւոյն կողմանէ նուիրակ Քաղղիոյ րանակին ի Ղրիմ) յայտնապէս կը պաշտպանէր զՏրուզս և անոնց փաստաբան էր, ի զուր իրեն դիտել կուտար Քաղղիոյ հիւպատոս որ միջամտութիւնը ի նպաստ մարոնիդներուն էր, Ռոզ չուզեց լսող ըլլալ, նա մա-

նաւանդ միշտ կը յորդորէր զԼսատ փաշա ընդհանուր կառավարիչ Ասորոց, խստանալ մարտնիդներուն դէմ և գանոնք արուզներուն հպատակեցնել կամ գաղթեցնել զոր Բ. Գուռը երբէք յանձն չառաւ: Լսատ փաշա որուն ամէն գովեստ ընծայած են տեղացիք, այս նոր դիրքին դժուարութիւնը և անկարելիութիւնը ըմբռնելով, իմացուց Բ. Գրան և խորհուրդ տուաւ որ լաւագոյն էր նորէն հաստատել Շէհապ ցեղը և Պէշիր էմիրը: Բ. Գուռը Լսատ փաշայի խորհուրդներուն վերայ որոշեց նոր նուիրակ զրկել հոն զԽալիլ փաշա մեծ ծովակալը, համարելով որ այսպիսի բարձրաստիճան անձի մը ներկայութիւնը կարող էր փոխել պարագայքը և Լսատ փաշայի անկարելի համարածը կարելի ընել: Խալիլ փաշա հասնելուն պէս հրատարակեց որ Շէհապ ցեղին Կարձը անկարելի էր. կռուեցաւ ընդդէմ կարծեաց Լսատ փաշայի և պընդեց որ Լիրանան խաղաղելու համար հարկ էր մի միակ վարիչ հաստատել և որ կախումն ունենայ Սախտի սպարապետութենէն:

1844
Յուլիս

10. Տրուկներուն ցարդը 1845ի Մարտին: — Խալիլ փաշա և գնդապետն Ռոպ համաձայն գտնուեցան ի նպաստ Տրուզներուն և թէպէտ Գաղղիոյ դեսպանը ի կ. Պոլիս Նիս տը Պիւզանվալ, ջանացեր և ստացեր էր որ Փուժատի, Գաղղիոյ Պէրութի հիւպատոսին խորհրդոց համեմատ, խառն գիւղից մէջ երկու փոխան գաւառապետք ըլլան. մին քրիստոնէից և միւսն արուզներու, այսու հանդերձ սըր Սդրէթֆրրտի միջամտութեամբ սահմանուեցաւ որ քրիստոնեայ փոխան գաւառապետք, տրուց գաւառապետներէ կախումն ունենան: Մարտնիդք մերժեցին հնազանդելու, աւելի կ'ընարին հնապանցիկ Սախտի սպարապետութեան քան իրենց թշնամեաց: Գնդապետն Ռոպ յորդորեց զԽալիլ փաշա զինուք ընկձել զմարտնիդս, սակայն Լսատ փաշա՝ ծովակալին հրամանը չուզեց ի գործ դնել: Լսատ անմիջապէս ետ կանչուեցաւ և տեղը սահմանուեցաւ Մոհամմէտ Վէճի փաշա: Քիչ վերջն ալ լուր եկաւ որ Բ. Գուռ: կ'ուզէ զմարտնիդս ենթարկել

Սաիտի սպարապետութեան: Տրուգք զայրացան որ իրենց հպատակները ձեռքերնէն կ'ազատին, և Ապրիլ 30ին ընդ առաջնորդութեամբ քաջ և հմուտ զխաւորներու Լիբանանու ամէն կողմ՝ յարձակեցան մարտնիդներուն վրայ: Տավուտ փաշա տաճիկ զօրաց հրամանատարը փոխանակ պաշտպանելու գորիստոնեայս, անուղղակի կերպերով Տրուզներուն կողմը բռնեց: Մայիս 5ին Համուտ—Ապու Նաքէր, այն որ 1841ին կողպտեր էր զՏիր—էլ—Քամար և Շէյխ Հադդար՝ մտան յԱպպէյ զոր գրաւեր էին տաճիկ գնդեր. յարգեցին անգղիացի և ամերիկացի բողոքական քարոզիչները, ընդհակառակն յարձկեցան գաղղիացի վեղարաւորաց վերայ և ի ներկայութեան տաճիկ գունդերու խողխողեցին զմեծաւորը Հ. Շարլը տը Լորէդ, ինչպէս նաև ուրիշ երկու մարտնիդ քահանայ. յետոյ կրակ տուին եկեղեցւոյն և այրեցին սպանելոց մարմինը: Քրիստնէից մաս մը ապաւիններ էր Լյսսատ—Գէպապ էմիրին մեծակառոյց պալատը, ուր յետ յուսահատ ընդդիմութեան մը, վերջապէս բողոքական քարոզիչք հաւանեցան միջամտութիւն մը ընել առ Մուսդաֆայ պէյ: Անգղիացւոց և Ամերիկացւոց այս պարագային մէջ շարժելու եղանակը շատ կասկածներ տուած է:

11. Բողոք Գաղղիոյ. — Պէրուծի Թնդանօժակօժումը: — Ի Գաղղիա Կիզօ պաշտօնարանին յարափոփոխ հրամանք անկարելի ըրեր էին գաղղիական դեսպանատան ի Կ. Պօլիս զօրաւոր ազդեցութիւն մը: Այսու հանդերձ Գաղղիոյ և ուրիշ ևս դեսպանաց բողոքք բռնադատեցին զԲ. Գուռը պաշտօնընկէց ընելու զԹալիլ փաշա որ Ծովային զօրութենէն անցաւ Վաճառականութեան: Միանգամայն Արտաքին գործոց պաշտօնարանը ծանոյց որ նուիրակք կը մեկնէին ի Լիբանան տեղւոյն վրայ քննելու և գոհացնելու Եւրոպիոյ տրտունջը: Ապու Նաքէտ Հ. Շարլի սպանողը բռնուեցաւ Փուժատի խնդրանօք: Շատ տեղ սպանուեր էին քահանայք, խողխողուեր էին մանկունք և կանայք յետ անպատիւ ըլլալու, մերկ ձիու պոչի կապուած էին: Այս ամէն բռնութեանց համար

Շէքիպ էֆէնտի տաճկական դատաստանարանի դիւմաց կոչեց զԱպու Նաքէտ, որ անմեղ հռչակուեցաւ ի մեծ զարմացումն ամենուն և Ապու Նաքէտ, յաղթանակաւ ելաւ ի Պէրութէ, պաշտպանեալ ի Շէքիպ էֆէնտիէ որ իրեն ընկերեց մինչև ի Տէիր-էլ-Քամար: Երկրորդ օրը Արաաքին գործոց նուիրակն կրկին դառնալով ի Պէրութ, տեսակցութեան մը մէջ ընդ հիւպատոսս, խնդրեց որ սահմանեալ ժամանակի մէջ հեռանան իրենց հպատակք: Շէքիպ էֆէնտի ծանոյց որ պատասխանատու չէր ըլլար մնացողաց, ինչպէս նաև վանքերու և կուսաստաններու համար: Հրամայուեցաւ որ հաւաքուին ժողովրդեան քով եղած զէնքերը և այս խուզարկութիւնը սկսան կատարել Տավուտ և Նամըք փաշայի գունդերը: Արնայ երևակայուիլ, այսպիսի միջոցով եղած խռովութիւնք և անկարգութիւնք: Յիսուսեանց Ազգորի վանքը բովանդակ յափշտակուեցաւ: Փուժատ, իւր թարգմանը Խալիլ-Մուտուար՝ զրկեց փութով դէմ կենալու այս աւարառութեանց, սակայն հազիւ հասեր էր ի Սուք՝ 5 ժամ հեռու Պերութէն, բռնեցին զթարգմանը և բանտ ձգեցին: Ի զուր Փուժատ բողոքեց այս կալանաւորութեան դէմ առ սպարապետն Իպրահիմ փաշա, մտիկ ընող չկար. այն ատեն գաղղիացի հիւպատոսը հրամայեց Լա-պէլ-Փուլ Քաղղիական մարտանաւուն որ կը գտնուէր Պէրութի առջև թնդանսթակոծելու զքաղաքը: Փութով նաւակները ծովը ինջան և տ'Օրնանս հրամանատարը սկսաւ կրակ թափել քաղքին վերայ: Իպրահիմ փաշա զարհուրած յանձնեց զթարգմանը գաղղիացի սպայի մը:

Արդէն ի Կ. Պօլիս Ապու Նաքէտի ազատիլը մեծ պաղութեան առիթ եղեր էր ընդ Բ. Գուռը և ընդ Քաղղիոյ դեսպանը Տը Պուրքընէյ որ վերջնագրով մը պահանջեց Ա. Գարձ գաղղիացի հպատակաց իրենց ստացուածոց մէջ, վճարմամբ վնասուց պասսճառ եղողներէն. — Բ. Շէյխ Համուտ ի Կ. Պօլիս կոչուի և քննուի իւր ընթացքը. — Գ. Խուզարկութիւն անոր դաւակցաց. — Դ. Վճարումն վնասու Ապպէյ վանքին: Աալի Էֆէնտի ընդունեցաւ Քաղղիոյ վերջնագիրը,

Շէյխ Համուտ աքսորուեցաւ և Ապպէյի հրամանատարը պատերազմական ատենի առջև կանչուեցու :

12. Բարեկարգութիւնը Լիբանանու : — Անկէ վերջը Բ. Գուռը ջանաց հիմնական բարենորոգութիւններ մտցնել ի Լիբանան : Երկու ցեղք առանձին վարչութիւն ունեցան և առանձին փոխանորդներ խառն գիւղից մէջ, ինչպէս նաև առանձին ատեաններ, այս ատեաններուն կը վերաբերէր տրոց բաժանումը : Եթէ տուրքի բաժանման միջոց խորհրդականներէն ոմանք բողոքէին ընդդէմ որոշողութեան, այն ատեն խնդիրը կ'երթար առ Սպարապետն որ վերջին ատեան կը համարուէր : Իսկ միւս ատեանները 10 անձանցմէ կը բաղկանային, 2 տրուզք, 2 մահմէտականք, 2 մարունիդք, 2 մէլքիդ և 2 յոյնք, որով 6 քրիստոնեայք և 4 մահմէտականք : Յայտ է թէ այս անհաւասարութիւնը փութով տհաճութեանց պատճառ պիտի ըլլար, որով և այս խաղաղութիւնը առ ժամանակեայ կըրնար համարուիլ և քիչ վերջը կրկին պիտի տեսնենք սպանութեանց ահաւոր տեսարանը և գաղղիական պետութեան զօրաւոր կերպով միջամտութիւնը :



ԳԼՈՒԽ ԽԱ

ԴԱՆՈՒԲԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ

1. Մուտավիա—Վալաքիա. — 2. Վալաքիա. Աղեքանդը կի-
քա հոսփոտար և Ազատականք. — Պիպէսքոյ հոսփոտար. 4. Մու-
տավիա. Միքայէլ Սուրբա հոսփոտար և ըարեկարգութիւնք. —
5. Պիպէսքոյ վարչութիւնը. — 6. Յեղափոխութիւն ի Վալաքիա
և ի Մուտավիա. — 7. Սահմանադրութիւն ի Պուքրէշի և Առ-
ժամանակեայ վարչութիւն. — 8. Միջամտութիւն Ռուսաստանի.
Յեղափոխութեան տկարանալը. — 9. Միջամտութիւն Տաւրաս-
տանի. — 10. Տեղապահութիւն. — 11. Ընկնուն Ազատակա-
նաց. — 12. Դաշինք Պալթա Լիմանի. — 13. Իշխան Յովհաննէս
Աղեքանդը Ա. հոսփոտար Մուտավիա—Վալաքիոյ:

1. Մուտավիա — Վալաքիա: — Ըստ Ադրիանուպօլս-
ոյ Դաշանց մինչև որ Բ. Դուռը վճարէր պատերազ-
մին ծախքը, ռուսական բանակը պիտի բռնէր Դանուբի
իշխանութիւնքը: Զօրավարն Քիպլէֆ հրամանատար
այս բանակին և միանգամայն գլուխ վարչութեան եր-
կուց Դանուբի իշխանութեանց՝ Վալաքիոյ և Մուտա-
վիոյ, կրցեր էր յինքն գրաւել ժողովրդեան սիրտը
և վաստակել երկրին յառաջադիմութեան համար: Յա-
մին 1834 Բէդրպուրկի Դաշամբք սահմանուեցաւ որ
Քիպլէֆ և ռուս բանակը թողուին զիշխանութիւնս
հոսփոտարներուն ընտրուելէն երկու ամիս վերջը:
Միանգամայն Բ. Դուռը հրովարտակով մը պիտի ըն-
դունէր այս գաւառաց կանոնադրութիւնքը, տուեալք
թելադրութեամբ Ռուսաստանի. դարձեալ երկրին ներ-
քին ինքնավարութիւնը և հոսփոտարաց անկախ ըն-

տրութիւնը: Բեղրպուրկի Դաշինքը իբր զարտուղութիւն կը սահմանէր սակայն որ « միայն առաջին անգամուան համար երկուց գաւառաց իշխանք անուանուին հաճութեամբ երկուց Պետութեանց՝ Ռուսաստանի և Տաճկաստանի »: Բազմաթիւ առաջարկելոց մէջէն Մարտ 21ին Միքայէլ Սդուրցա անուանուեցաւ Մուտավիոյ համար և Աղեքսանդր Կիքա Վալաբիոյ համար: Քանի մը եօթնեակ վերջը Քիսլէֆ զօրավարը կը թողուր իշխանութիւնները, թողլով քաղցր յիշատակ մը Մուտո-Վալաբիոյ մէջ: Իսկ բանակը թողուց զիշխանութիւնս նոյն տարուան Հոկտեմբերին:

1834

Երկու Նորընտիր հոսփոտարք յետ ընդունելու ի Կ. Պօլիս Սուլթանին ձեռքէն իրենց իշխանութեան ըզգեստաւորումը և յետ հաստատելու հոն իրենց ներկայացուցիչքը, դարձան իրենց իշխանութեան երկիրները:

2. Վալաբիա. — Աղեքսանդր Կիքա հոսփոտար եւ Ազատականք: — Աղեքսանդր Կիքա սկզբնական եռանդով մը ազատական մասին հակիլ ցուցուց: Փամփինէանո ազատասէր գնդապետը բոլոր իւր ունեցած չնկէտէ ստրուկքը ազատագրեց էր, շատ Պոյարտք նոյնը ըրեց էին, յորս մանաւանդ Կոլէպոնները. Աղեքսանդր Կիքա իւր ունեցած ստրուկներէն մաս մը ածրդով հեռացուց, ուրիշ մաս մ'ալ տուաւ Օփրանօ սեղանաւորին ընդունելով փոխարէն 10,000 տուգադ զոր գործածեց ի շինութիւն չքեղ պալատան մը: Ազատականաց կողմը բռնելով, զայրացան իրեն հին պոյարտք, որոնք միշտ կ'ուզէին մնալ ռուսական ազդեցութեան ներքև: Աղեքսանդր այն ատեն յերկիւղէն դիմեց ինքն ալ առ Ռուսաստան, որուն իրմէ տհաճ ըլլալը յայտնապէս իմացաւ:

Ազգային ժողովոյն մէջ ևս մեծամեծ էին իրեն դէմ տեգոհութիւնք մանաւանդ տրոց գործածութեան մասին: Ստէպ Փամփինէանո, Յ. Ռոզէդդի և Գ. Գանդակուզէն կը պախարակէին վարչութիւնը. իշխանը իբրև յետին փորձ՝ պաշտօնապէս ծանոյց որ ժողովը ունկնդիր չըլլայ երեք ազատամիտ երեսփոխանաց:

Սակայն ժողովը այս ծանուցմամբ համարեցաւ օտար միջամտութիւն մը իր իրաւանց մէջ և յայտնապէս հրատարակեց որ բաց յՕսմանեան պետութիւնէ, որուն հարկատու էր, չէր ճանչնար ուրիշ հսկող պետութիւն մը. այսու զՌուսաստան իմանալով: 1837 տարին ամբողջ այս վէճերով սահեցաւ մինչև հասաւ Ազգային ժողովոյն ցրուելու ժամանակն: Նոր ընտրութեամբ, ընդդէմ ջանից իշխանին՝ երեք ազատախօս երեսփոխանք նորէն ընտրուեցան:

Հագիւ ժողովը գումարուեր էր, Ռուսիոյ հիւպատը պահանջեց որ Քիսլէֆ զօրավարին տուած հրամանքը երկիրը գրաւած ժամանակ, իբրև օրէնք աւելցուին Կանոնադրութեան վերայ և նոյն իսկ Կանոնադրութեան վերայ զանազան փոփոխութիւնք ըլլան ի նպաստ Ռուսաստանի: Ազգային ժողովը գրեաթէ միաբերան մերժեց այս միջամտութեան առաջարկը և իշխանը նորէն ցրուեց զայն: Սակայն Ռուսաստան նոյն պահանջածը քաղաքագիտական միջոցներով կրցաւ ստանալ ի Բ. Գրանէ: Փութով հրովարտակ մը գնաց առ Ազգային ժողովն, զոր ամէնը պէտք էին ստորագրել և ինչպէս ըրին իշխանը և երեսփոխանք բաց ի Գամփինէանոյէ որ զժողովը ձգեց ելաւ. միւս ազատական երեսփոխանք աւելցուցին որ կը ստորագրեն « Սուլթանին հրամանին համար »: Գամփինէանո անցաւ ի Գաղղիա և յԱնգղիա և կրկին ի դարձին ի հայրենիս, բռնուեցաւ և վանքի մը մէջ գոցուեցաւ. Գամփինէանոյի անունը ասով աւելի սիրելի եղաւ ժողովրդեան:

Քիչ վերջը Սուլթան Մահմուտի մահը, եւրոպական ընդհանուր պատերազմի մը գուշակութիւնը, խրախուսեցին զազատականս, եթէ հարկ ըլլար, նոյն իսկ զինուք բողոքել ընդդէմ ռուսական հովանաւորութեան: Պուրէշթի մէջ շատ անձինք կը գրուէին ծածուկ բանակի մը համար, որ յանակնկալս պիտի ինկնար Պեսարապիոյ վերայ, և պիտի շփոթէր զՌուսաստան՝ արդէն գժտեալ Գաղղիոյ հետ, սակայն դաւը իմացուեցաւ մատնութեամբ և գլխաւորք բռնուեցան:

յորս էին Տիմիդրիուս Ֆիլիպէսքո, Նիքոլաս Պալչէսքո մասնագիրը, Սոտեր և այլք, որոնք յետ իննամսեայ բանտարգելութեան, զրկուեցան աշխատելու հանքերու մէջ ոմն երեք տարի, այլք ութ տարի:

Բուլղարք ևս Կալացի ոուս հիւպատոսին գրգռութեամբ ապստամբեցան Տաճկաստանի դէմ: Լուրը Պուքրէշի հասնելով երեք հարիւր զինեալ անձինք դիմեցին յիպրայիլա և կ'ուզէին անցնել զԻանուր միա նալու Բուլղարաց: Աղեքսանդր Կիքա ասոնց գլխաւորները բռնել տուաւ և մնացելոց արգիլեց Իանուրէն անցնիլը: Բ. Գուռը այս բանիս համար իր գոհութիւնքը յայտնեց առ հոսփոտարն, մինչ Ռուսաստան իւր հիւպատոսի՝ Տաչքովի ձեռամբ, պատրաստել կուտար Կիքայի անկումը, որ շատ դիւրացած էր, քանի որ Ազգային ժողովը տժգոհ էր անոր վարչութեան վերայ և բողոքներ գրուեր էին եթէ ի կ. Պօլիս և եթէ ի Բեդրպուրկ¹: Երկու մեծ պետութիւնք մասնաւոր նուիրակներ զրկեցին և որչափ որ տաճիկ նուիրակը Շէքիպ էֆէնտի կ'ուզէր իշխանին կողմը բռնել, սակայն հարկ եղաւ զիջանիլ Ռուսաստանի կամաց և Սափէդ էֆէնտի զրկուեցաւ ի Պուքրէշի ծանուցանելու Աղեքսանդր Կիքայի իւր անկումը և ընտրութիւնը ընել տալու ըստ Կանոնադրութեան, որ կատարուեցաւ Գեկտեմբերի վերջը և քուէից առաւելութեամբ ընտրուեցաւ հոսփոտար Գէորգ Պիպէսքոյ:

3. Հոսփոտարն Գ. Պիպէսքոյ: — Պիպէսքոյ փառասէր և երիտասարդ երեսփոխան, երբեմն ատենադրպիր Արտաքին գործոց, ուսկից յետոյ գժտելով, ելեր էր և կ'ապրէր ճոխութեամբ ի Բարիզ և ի Վեն-

¹ Երբ 1844ի այս Բուլղարաց դատաստանը կատարուեցաւ. Գրիստոբոյ երեսփոխանը գոչեր է Ազգային՝ ժողովոյն մէջ. « Այդ ամէնը Նիկողայոսի գործն է հիմայ իրեն կ'ինկնայ հանգոյցը քակել »: Սակայն այդ ազատախօսութիւնը վնասաբեր եղաւ յանցաւորաց: Ռուսաստան քաշուեցաւ միջամտութենէ, 26 անձինք, յորս կային նաև և պոյարտք 15 տարի բռնի աշխատութեանց վատապարտուեցան:

նա, ծանօթ իւր մէկ քանի ընդլայնախօս գրութեամբք, մեծապէս ջանացեր էր Աղեքսանդր Կիւբայի անկման համար որպէսզի ին Քրփոխանակէ: Յիշխանութեան հաստատուիլը մեծ հանդիսով կատարեց Պուքրէշթի հին Արքունեաց եկեղեցւոյն մէջ. խօսելով նաև առ ժողովուրդն, ապա յետ արձկելու քաղաքագիտական յանցանաց համար կալանաւորեալ երեսփոխանք, ուղևորեցաւ ի Կ. Պօլիս զգեստաւորումը ընդունելու:

Ի դարձին նոր պաշտօնարան մը կազմեց և անմիջապէս սկսաւ հոգալ իւր առանձնական հարստութիւնքը շատցնել, խնամք տարաւ սակայն միանգամայն Երկրագործութեան և ճամբաներուն շինութեան: Յետոյ առաջարկեց մեղմելու այն օրէնքը որ կ'արգելուր էրիկ մարդու մը իւր կնոջ ստացուածքը գրաւել, և այս այն պատճառաւ, վասնզի շատոնց կ'աշխատէր բաժնուիլ իւր կնոջմէ, առանց անցնելու աւոր ստացուածոցմէ գրաւած մէկ մասը: Երեսփոխանք և հասարակաց կարծիքը զարմացաւ այսպիսի առաջարկի մը վրայ, և Ազգային ժողովոյն մեծամասնութիւնը հակառակ քուէ տուաւ: Պիպէսքո ի բարկութենէն հակառակ քուէ տուող երեսփոխանքը զրկեց քաղաքական կամ դատաստանական պաշտօններէ, յետոյ ցրուեց Ազգային ժողովը և Ռուսաստանի միջնորդութեամբ կրցաւ հրաման ստանալ հրովարտակով մը ցանորոշ ժամանակ կախեալ թողուլ ընդհանուր ժողովոյն գումարումը:

4. Մոլտավիա. — Միքայէլ Սդուրցա հոսփոտար եւ բարեկարգութիւնք: — Ի Մոլտավիա չենք գտներ Վալաքիոյ յուզմունքները և գփտութիւնք ընդ իշխան և ընդ ժողովն: Միքայէլ Սդուրցա ընտիր դաստիարակութիւն մը ունեցեր էր և որչափ որ ռուս սպայից հետ ունեցած բարեկամութիւնք պատճառ եղեր էին իրեն իշխանութեան հասնելուն, այսու հանդերձ ունէր իշխանի մը և քաղաքագիտի բազմաթիւ յատկութիւնք, որով գիտցաւ միշտ զՌուսաստան իւր թիկունք ունենալ և միանգամայն Ազգային ժողովոյն մէջ գտնալ անվրէպ մեծամասնութիւն մը, ի դերև

հանելով փոքրիկ ընդդիմութեան մը ջանքերը և այսպէս 14 տարի կառավարեց երկիրը հանդարտութեամբ առանց Սահմանադրութեան սահմաններէն դուրս ելլելու: Այսպէս ազաս ըլլալով վարչական ընդդիմութիւններէ և արգելքներէ, մեծ խնամք տարաւ երկրին բարւոքելուն: 1834ին տէրութեան պարտքն էր 15,000,000 տուբադ, քիչ վերջը գոցուեցաւ: Մաքսատան եկամուտը 14,000 տուբադէն 30,000ի ելաւ, առանց նոր մաքսեր աւելցնելու: Քաղաքապահութեանց եկամուտը փութով կրկինը հասաւ, որով և ճամբաները շտկուեցան, քաղաքը գեղեցկացան, Եաշ, Կալայ, Պէլլառ դարդարուեցան, և աւարտեցաւ Դանուբէն մինչև Պուքովինայի սահմանազլուխը մեծ ուղին ունենալով 108 կամուրջ: Խնամք տարաւ նաև քաղաքաց և գիւղօրէից մէջ կենաց ապահովութեան: Հասարակաց օգտին համար աշխատած ժամանակ, շնորհաւ նաև իրեն առանձնական հարստութիւնը և 14 տարուան մէջ 30,000,000 ֆրանքէն աւելի դիզեց, յորում կ'ամրաստանեն զինքը իբր կաշառակեր: Վալաքիոյ մէջ եղած ազատական շարժումները ի սկզբան բնաւ արձագանգ մը չունեցան ի Մուտավիա. ամէն մարդ նիւթական շահուց գրագած էր: 1843ին եկեղեցականք ճշմարիտ մարդասիրութեամբ մը ազատագրեցին իրենց շէնկեռէ ստրուկները, որուն փութով հետեւեցան և այլք:

Քիչ վերջը Միքայէլ Սդուրցա ուղևորեցաւ Պուքրէշթ երթալու ուր միանալով Վալաքիոյ իշխանին հետ ընդառաջ պիտի երթային Սուլթանին ի Ռուսնուք: Հոն էր նաև Սերպիոյ իշխանը Աղեքսանդր Քարաձէորճէվիչ:

5. Պիպէսքոյի վարչութիւնը: — Վալաքիոյ իշխանը այս ուղևորութենէն դառնալէն վերջը իբրու ճամբու ծախք պահանջեց և առաւ գանձէն 300,000 ֆրանք: Ապա ուզեց արձակել իւր կինը և ուրիշ մը առնուլ: Վալաքիոյ մետրապոլիտը բացարձակապէս մերժեց. ինքը Կ. Պօլիս դիմեց ի պատրիարքարան և տարի մը վերջը հարսանիքը կատարուեցաւ սահմանազլիին

վրայ Տոբբանի քաղաքը: Այս առթիւ Պիպէւբոյ թագաւորական չքեղութիւն ի կիր առաւ, մեծապէս ծանրանալով քաղաքաց և Գանձուն:

Սուլթանին այցելութեան ժամանակ, Ռէշիտ փաշա՝ պաշտօնեայ Արտաքին գործոց խորհուրդ տուեր էր Պիպէւբոյի ի դարձին բացումն ընել Ազգային Ժողովոյն: Պիպէւբոյ ամենայն ճիգն թափեց իրեն հաճելի անձինքը ընտրել տալու և յաջողեցաւ, սակայն ի վնաս երկրին ուր տիրեց ամէն անկարգութիւն: Ազնուական ցեղէ երիտասարդ մը ուզեր էր վրէժ խընդրել իր ամուսնոյն պատուոյն եղած նախատանաց հոսփոտարին սզգակից անձէ մը: Երիտասարդը աքսորուեցաւ և միւսը մեծ պատիւներ և պաշտօններ ընդունեցաւ: Գեռ այս դէպքին սզգեցութիւնը չէր նուազած երբ Արդարութեան ատենին նախագահը կը սպաննէ գիւլատէր մը: Ատեանը արձկեց սպանողը և իշխանն ալ վարձատրեց ի մեծ գայթակղութիւն ժողովրդեան: 1847-48ին ձմեռը լուռ տրտունջներով և ժողովակներով անցաւ:

6. Յեղափոխութիւն ի Վալաքիա եւ ի Մոլտավիա: — Ոգիները այս վիճակի մէջ էին երբ Փետրուարի Յեղափոխութեան լուրը հասաւ ի Պուքրէշթ: Ազատականք աւելի խրախուսուեցան լսելով յեղափոխութեան արձագանգները նաև ի Վեննա: Ի Պուքրէշթ, յիպրայլա և ի Գրայովա ընկերութիւններ ձևացան ըլլալիք բարեկարգութեանց վրայ վիճելու, Պիպէւբոյ իմանալով անոնց որոշողութիւնքը ինքնին կանխեց. և ճարտարութեամբ պահանջածնէն աւելի ազատութիւններ խոստացաւ, խնդրելով միայն քիչ մը ժամանակ, զոր ջանաց գործածել ժողովրդեան մէջ տարածայնութիւններ սփռելու համար:

Պուքրէշթի նմանեցաւ նաև Մոլտավիոյ մայրաքաղաքը Եաշ, յորում ազատականք յայտնապէս գումարուեցան ի պալատն Ռէկէնսպուրկ և սահմանադրութիւն մը կազմեցին, յորում կը խնդրէին իշխանէն ազատութիւն տպագրութեան Ներքին գործոց նկատմամբ, հաստատութիւն ազգային պահպանաց, պա-

տասխանատուութիւն պաշտօնէից: Սդուրցա սիրով ընդունեցաւ սահմանադրութեան նուիրակութիւնը, բայց ծածուկ հրաման զրկեց կալանաւորելու գլխաւորքը: Երեկոյեան զինուորք պաշարեցին Մաւրօքորտադոյի պալատը, ուր կը գտնուէին 11 երիտասարդք սահմանադրականք և զայնս բանտ տարին, ուսկից ապա տարուեցան ի Մաչին և հոնկէ Պրուսա զրկուեցան իբր ապստամբք:

Այս շփոթութեանց միջոց երկու նուիրակք մինն օսմանեան միւսն ուս զրկուէր էին յիշխանութիւնս քննելու ժողովրդեան յուզմանց պատճառքը: Վալաքները շուգեցին մոլտալներուն պէս անդէն սկսիլ յեղափոխութիւն մը և ազգային կուսակցութիւնը աղքատագիր մը ներկայացուց առ տաճիկ նուիրակն Թալաադ էֆէնտի, խոստանալով իրենց անկեղծ հպատակութիւնը առ Բ. Դուռը, խնդրելով միայն ազատիլ ուսական հովանաւորութենէն, հաւասարութիւն քաղաքական և տրոց, բարեկարգութիւն ի վարչութեան, ազատութիւն շինկեանէներու և գիւղացւոց, ազատութիւն տպագրութեան: Յայտնի է որ Բ. Դուռը չէր կարող անմիջապէս առանց քաղաքագիտական յառաջաբաններու վերցնել անդէն հովանաւորութիւնը և կանոնադրութիւնը: Նա մանաւանդ ուս գորավարն Տիւհամէլ ամենայն հնարք կը գործածէր ջաղխելու ազգային կուսակցութիւնը և օգնելու հոսփոտարին իշխանութեան: Ազատականք տեսնելով որ դժուարին էր ձեռք բերել խնդրածնին, մտածեցին ուղղակի դիմել առ հոսփոտարն և խնդրել իրենց պահանջածնին, բայց երբ իրենց թախանձանաց աքսորք և բանտք պատասխանեցին, այն ատեն որոշուեցաւ դիմել յեղափոխութեան: Ստեփան Կոլէպօ, Հէլիատ և գնդապետն Թէլ՝ սահմանուեցան երթալ յիսլաց Փոքր-Վալաքիոյ մէջ, որուն վարիչն էր Մակիերօ՝ եռանդուն ազատական մը, հոնկէ պիտի սկսէր ապստամբութիւնը և Իսլացի մէջ կազմեալ պահանորդք ընդ հրամանաք Փլէսսոյանօ գնդապետին պիտի սպասէին անոնց գալուն որ իրենք ալ ոտք ելլեն: Երկու Պոլչես-

քո եղբարք պիտի երթային ապստամբեցնելու Փրաքովա և Պոլչէա գաւառները, մինչ կարողոս կիբա ի կ. Պօլիս քաղաքագիտական հնարիւք պիտի փորձէր ձեռք բերել պահանջածնին: Քիչ օր առաջ Դեմետր Պրադիանօ նուիրակութեամբ մը զրկուեր էր ի Մաճառստան, միև գլխաւորք մնացին ի Պուքրէշթ, սպասելով արտաքին յուզմանց, ներքինը սկսելու համար:

1848 7. Սահմանադրութիւն ի Պուքրէշթ եւ Առժամանակեայ վարչութիւն: — Հէլիատ և Ստեփան կոլէպօ ծածուկ մեկնեցան Պուքրէշթ Յունիս 18ի և երկրորդ օրը հասան յիսլաց ուր գտան զգնդապետն թէլ, զՓլէսսոյանօ և զՌաստուլ Քլափկա՝ Չէլէյիու գիւղին քահանայն: Հոն երկրորդ օրը եկեղեցական արարողութեամբ, որուն ներկայ էր բազմութիւն ժողովրդեան և զինուորաց Հէլիատ կարդաց Սահմանադրութեան 31 յօդուածները ստորագրեալ « վերածնութեան դաշտէն, Յունիս 10 յիսլաց. քահանայն Քլափկա, Յովհան Հէլիատ, Ստեփան կոլէպօ, Քրիստիան թէլ և Նիկոլաս Փլէսսոյանօ » որք կազմեցին վարչութիւն մը յաւելլով նաև զՄակիէրօ: Հոն ամէնը երգուրննալով հաւատարմութիւն Սահմանադրութեան, նամակ մը գրեցին առ իշխանն Պիպէպօյ, Յեղափոխութիւնը անվրէպ կարևոր ցուցնելով հասարակաց փրկութեան, և կը թախանձէին իրենց գլուխ կենալու: Սահմանադրութիւնը կը հռչակէր՝ հաւասարութիւն քաղաքական և արոց. երեսփոխականաց ժողով մը, բացարձակ ազատութիւն տպագրութեան, ազգային պահապանք, ազատութիւն վանաց, սուրբ տեղեաց՝ որոց եկամուտք կ. Պօլսոյ պատրիարքարանը և կրօնաւորք կը ստանային, ազատութիւն տարապարհակ աշխատաւորաց և շինկեանէներուն, դաստիարակութիւնը ստիպողական, բարձումն մարմնաւոր պատժոց, գլխատման, հաւասարութիւն իրաւանց Հրէից ուրիշ ազգաց հետ, և պէտք էր անմիջապէս Սահմանադիր ժողովք մը կազմուէր, վերոյգրեալ հիմանց վրայ ամբողջական Սահմանադրութիւն մը կազմելու համար:

Մեծ էր Պուքրէշթի մեջ եղած յուզումը: Հէլիատի և Ստեփան Կոլէպոյի խորհրդաւոր մեկնիլը կասկածի ձգեր էր զՈստիկանութիւնը որ անմիջապէս կալանաւորել տուաւ զգնդապետն թէոյոկօ, զուսուցիչն Նէկուլիչի, զաւագերէցն Յովսարաթ, զԿոստանդին Ռոզէդզի և զՅովհաննէս Վոյնէպոյ: Յունիս ՉՉին հասաւ ի Պուքրէշթ յիսլաց հրատարակեալ սահմանադրութեան լուրը և նոյն օրը երեք երիտասարդք ատըրճանակ պարպեցին իշխանին վրայ, որոնք թէպէտ ամենեւին յարաբերութիւն մը չունէին ազատականաց հետ: Պիպէպոյ ելաւ պտըտեցաւ զինուորանոցները փորձելու համար զինուորաց կարծիքը, որոնք յայտնապէս ծանուցին թէ « պատրաստ են կռուելու ընդդէմ թշնամեաց բայց ոչ եղբարց »: Պիպէպոյ տխուր դարձաւ ի պալատն և հրամայեց դադրեցնել բանտարգելութիւնքը: Նոյն օրը Մակիէրոյի եղբօրորդի մը, սպայ զինուորական վարժարանին, իւր ընկերներով հրապարակը ներկայացաւ սահմանադրութեան օրինակով մը, և ծանոյց որ իշխանը զայն ընդուներ էր և թէ կ'երթար շնորհակալ ըլլալու: Փութով երկու հազարէն աւելի անձինք հետը միացած կեցցէներով գնացին առ իշխանը որ ստիպուեցաւ այն ատեն ընդունելու սահմանադրութիւնը և անմիջապէս նոր պաշտօնարան մը կազմեց, յորում մտան յեղափոխութեան գլխաւորք ալ, որոնք սակայն չուզեցին ստանձնել պաշտօն մը մինչև որ իշխանը օրինաւոր չհրատարակէ Յունիս ՉՉէն ի վեր Առժամանակեայ վարչութեան հրովարտականները և զՄակիէրօ ընդհանուր հրամանատար հռչակէ, վարչութեան ալ անդամ կոչելով զթէլ: Պիպէպոյ զարհուրած Ռուսիոյ Քոզցըպիւ ընդհանուր հիւպատոսին յանդիմանութենէն, հրաժարեցաւ իւր իշխանութենէն ի ձեռս նոր անուանեալ պաշտօնէից և անցաւ ի Գրոնշդատ Գրանսիլվանիոյ: Իշխանին մեկնելուն լուրը տարածուելուն պէս ամբոխը խուռն դիմեց վարչութեան պալատը խնդրելով որ անմիջապէս անուանուին Առժամանակեայ վարչութեան անդամք և որ սահմանուեցաւ այսպէս. Նախագահ՝ մետ-

րապօլիտն Նէօֆիդ . անդամք՝ Հէլիատ, Ստեփան Կուէպոյ, Թէլ, Մակիէրօ, Աբուրդօ . դարձեալ ատենադպիրք՝ եղբարք Կուէպոյ, Նիկոլաս Պալչէպոյ, Ռոզէդի, և Յովհ . Պրադիանօ : Պաշտօնեայք Նիկոլաս Կուէպոյ, Յ . Գամփինէանոյ, Կոստանդին Ֆիլիպպէսքոյ, Օտոպէպոյ, Հէլիատ, Վոյնէպոյ Բ . Նիոյցէսքո, որոնք ամենը փութով հրաւիրուեցան ի Պուքրէշթ :

8 . Մրջամտութիւն Ռուսաստանի . — Յեղափոխութեան տկարանալը : — Երեք օր առաջ Տիւհամէլ և Քոդցըպիւ թողուցեր էին զՎալաքիա այս « ապօրինաւոր » գործոց համար և ծանուցանելով որ Չարին գունդերը անդէն ացնելով զՓրութ կ'ուղղուէին Վալաքիոյ վրայ :

Առժամանակեայ վարչութիւնը անդէն ուզեց պաշտօնական յարաբերութիւնք հաստատել Տաճկաստանի և մեծ Պետութեանց հետ : Գործակատարք ղրկեց ի Կ . Պօլիս, Փէշդ, Բարիզ և Ֆրանքֆորդ ծանուցանելով չըջարերականով մը ժողովրդեան յօժարութեամբ հաստատուած վարչութեան ձևը, առանց հրատարելու առ Բ . Դուռը հարկատուութենէն : Սակայն այս ամենայն չըջարերականք անպատասխանի մնացին : Գաղղիա՝ ուսկից օգնութիւն կը յուսային, իր ներքին շփոթից զբաղեալ էր, անգղիացի հիւպատն Գոքհան, թէպէտ նպաստաւոր էր իրենց, բայց ոչ պաշտօնապէս : Իսկ Բ . Դրան նուիրակը Թալլադէֆէնտի քաշուեր էր Եաշ, չգիտնալով իր տէրութեան միտքը :

1 Յուլիս .

Եղելութեանց այս դիրքին մէջ հասաւ Քոդցըպիւլի մէկ թուղթը որ հաստատելով Յունիս 24ի բողոքը, կ'իմացնէր ռուս գնդերուն Փրութը անցնիլը : Եւ արդարև Յունիս 28ին Պեսարապիոյ պահակալ գունդերէն 12,000 հոգի մտեր էին ի Մուտավիա և արագութեամբ չուեր էին ի Պուրլատու, քսան մղոն հեռու Վալաքիոյ սահմանագլխէն : Այս զինուորական միջամտութիւնը մեծ տհաճութեանց պատճառ եղաւ ի Կ . Պօլիս : Բ . Դուռը, Գաղղիոյ և Անգղիոյ դես-

պանք բացայայտութիւն խնդրեցին Ռուսոյ Դիդոֆ դեսպանէն որ ծանոյց թէ հրամանի մը վրիպակ մեկնութեան արդիւնք էր այդ շուն և թէ գունդերը նորէն սկսեր էին յետս նահանջել :

Ռուս բանակին մերձենալը խրախուսեց իւր կողմնակիցքը զՕտոպէսքոյ, զՍոլոմոն, ևն, զորս Առժամանակեայ վարչութիւնը իրենց իշխանութեանց մէջ պահեր էր և որոնք կը շարունակէին ծածուկ յարարետութիւնք ունենալ Տիւհամէլ զօրավարին հետ : Յուլիս լին երբ Առժամանակեայ վարչութիւնը գումարուեր էր ի ժողով, Օտոպէսքոյ յետ գունդ մը դնելու ի դարան ընդ հրամանօք Սոլոմոնի, սպայից բազմութեամբ մտաւ ժողովոյն սրահը և զամէնը կալանաւորեալ հրատարակեց և ի մասնաւորի զթէլ զինաթափ ընելով յանձնեց զինուորաց : Այս լրոյն վրայ Մակիէրօ սուրը ձեռքը ճամբայ բանալով երկու զինուորօք հասաւ ի Պալատն, ժողովրդեան հետ ազատեց զթէլ և ընկերները և կալանաւորել տուաւ զՕտոպէսքոյ որ մատնեց դարանի դրած զինուորքը : Երբ վարչութիւնը սկսաւ բանակցիլ անոնց հետ, Պալատան պատուհանէ մը ատրճանակ մը պարպուեցաւ գունդին վրայ և և այն ատեն Սոլոմոն հրամայեց հրացաններն պարպել և ամբոխէն քսան հոգի ինկան հրապարակին վրայ . յորոց ինն մեռեալք, իսկ իրենք կալանաւորեցան :

Որչափ որ Առժամանակեայ վարչութեան դէմ եղած փորձը ի դերև ելաւ, սակայն նա առաւել ինքզինքը կը տկարացնէր : Շատ օրուրնէ ի վեր սուտ ձայն մը տարածուեր էր եթէ 30,000 ռուսք անցնելով զՓրութ կը շուէին Պուքրէշթի վրայ : Վարչութեան անձանցմէ ոմանք պատճառելով որ Պուքրէշթ անպատասպար քաղաք մ'է, կ'ուզէին քաշուիլ լեբանց մէջ գիւղաքաղաք մը : Պրադիանօ զրկուեցաւ երթալ ստուգելու Ռուսաց ո՛ւր գտնուիլը : Սակայն հազիւ Պրադիանօ մեկներ էր, վարչութիւնը մտիկ չընելով Ռոզէդդիի և այլոց խորհրդոց, թողուց զՊուքրէշթ ուղղուելով ի Դերկովիստ : Առ ժամանակեայ վարչութեան փախչելուն վրայ, քանի մը նշանաւոր պո-

Յուլիս 11

յարաք գումարուելով մետրապօլտին քով զինքը ստիպեր էին երկու գաւառապետ ընտրելու և անոնց հետ միաբան վարչութիւն մը հաստատելու զՍտոպէպո և զՍոլոմոն բանակին գլուխ դնելով: Մետրապօլիտը շրջաբերականաւ մը ծանոյց նոր գաւառապետութիւնը (քայմաքամութիւնը): Բայց երկրորդ օրը ամբոխին և վաճառականաց նուիրակութեան տրտունջներուն դիմաց, բռնադատուեցաւ ոչնչ հռչակել առջի օրուան շրջաբերականը և հաստատել կրկին Առժամանակեայ վարչութիւնը, որուն առ ժամս ներկայացուցին պիտի ըլլային ի Պուքրէշթ մետրապօլիտն, Գամփինէանոյ և Գրէցցուլէպո, որոնք նուիրակ զրկեցին առ վարչութիւնն դառնալու ի մայրաքաղաք, որք մինչ 19 գումարուեցան ի մայրաքաղաք և նոյն օրը վարչութեան ասենադպիրը Վոյնէպոյ՝ ծանոյց հիւպատոսաց Առժամանակայ վարչութեան իշխանութիւնը ձեռք առնուլը:

9. Միջամտութիւն Տաճկաստանի: — Սակայն արդէն սկսան տարաձայնութիւնք Սահմանադրութեան մէջ մտցնելիք փոփոխութեանց համար և վարչութիւնը տարտամ կերպ մը առաւ երբ լուուեցաւ որ օսմանեան գունդեր ընդ հրամանօք Էօմէր փաշայի հասեր էին ի Ռուսձուք և պիտի յառաջէին ըստ հրամանաց Սիւլէյման փաշայի՝ գործակատար Իշխանութեանց, փոխանակ Թալասա Էֆէնտիի: Միանգամայն Նէսէլրոտի յայտագիր մը կը ծանուցանէր որ ռուս գունդեր պիտի գային միանալու օսմանեան բանակին յեղափոխութիւնը ընկճելու համար: Առժամանակեայ վարչութիւնը ուզեց բանակցիլ Սիւլէյման փաշայի հետ ի ձիւրճէփօ, սակայն փաշայն չուզեց ձանչնալ անոր իշխանութիւնը, և Յուլիս 30ին խաղաղասէր յայտարարութեամբ մը կը ծանուցանէր տաճիկ գունդերուն ընդհուպ Գանուրը անցնիլը, յորդորելով զբնակիչս ի հանդարտութիւն: Օգոստոս 2ին Ռիֆաադ փաշա կը բռնէր Իպրայիլա մինչ Էօմէր փաշա կ'անցնէր զԳանուր ի ձիւրճէփօ 12,000 զինուորօք:

10. Տեղապահութիւն: — Յայտնի է որ Բ. Գու-

որ չէր ուզեր ճանչնալ որ և է գործ յետ հրաժարելոյ Պիպէսքոյի և թէպէտ յօժար ուռմէններուն փափազը կատարելու, սակայն կը պահանջէր նաև որ ցրուի Առժամանակեայ վարչութիւնը և տեղապահութիւն մը կամ Բայբաթի մը հաստատուի ըստ կանոնադրութեան: Առժամանակեայ վարչութիւնը տեսնելով որ անկարող է բանակի մը դէմ դնել, տեղիք տուաւ և իշխանութիւնը յանձնեց Ազգին, որով և Սիւլէյման փաշա հրովարտակով մը կոչեց զԱզգը յունկընդրութիւն տեղապահութեան, և միաձայն ընտրուեցան Նիկոլաս Կոլէսքոյ, Հէլիատ և Թէլ, զորս հաստատեց Սիւլէյման փաշա յանուն Սուլթանին և օտար հիւպատոսաց ծանոյց սկսիլ յարարերութիւնքը:

Տեղապահութիւնը անդէն Յանձնաժողով մը հաստատեց, որպէսզի Սահմանադրութեան մէկ քանի կէտերուն վրայ վիճելով զանոնք կայսերական վաւերացման ներկայացնեն, ինչպէս խորհուրդ կուտար Սիւլէյման փաշա: Ստեփան Կոլէսքոյ, Պալչէսքոյ, Դեմետր Պրադիանօ, Գրիգոր Կրատիսդէանօ և Պալիլիատիս Պուքրէշթի անուանի վաճառականներէն մին՝ զանոնք ի Կ. Պօլիս պիտի տանէին: Նուիրակաց մեկնելուն նախընթաց իրիկունը Սիւլէյման փաշա մեծ հացկերութով մը պատուեց զանոնք. մեկնելէն վերջը քիչ զինուորաք երեք օրուան համար Պուքրէշթ մտաւ և ժողովուրդը մեծ հանդէսներ կատարեց իրեն և շատ փախչողք դարձան իրենց տները և հպատակեցան նոր վարչութեան:

Սակայն ի Կ. Պօլիս տեսլարանը փոխուեր էր: Ռուսիոյ դեսպանը Դիգոֆ՝ տժգոհ խնդրոյն այսպէս վերջանալուն վրայ, վերջնագրով մը կը պահանջէր որ ի Կ. Պօլիս գալիք նուիրակութիւնը ետ ղրկուի, Սիւլէյման փաշա ետ կանչուի և տեղը ուրիշ մը ղրկուի որ գործէ միաբանութեամբ Տիւհամէլ զօրավարին, առ որ հրաման գնաց աճապարել մտնել ի Վալաքիա: Բ. Դուռը ի սկզբան վարանեցաւ, ապա տեղիք տուաւ և Տուատ էֆէնտի (յետոյ անուանի Տուատ փաշա) ղրկուեցաւ Սիւլէյման փաշայի տեղ և երբ Ռումանիոյ նուիրա-

կութիւնը հասաւ ի Կ. Պօլիս, Ռէշիտ փաշա և Աալի փաշա՝ Պաշտօնեայ Արտաքին գործոց, ընդունեցան զիրենք առանձին բայց ոչ պաշտօնապէս, անոնք ալ յետ բողոքելու, դարձան ի Պուքրէշթ, սակայն հոն չհասած լսեցին Ֆուատ էֆէնտի և Տիւհամէլ զօրավարին միաբան բանակով Պուքրէշթի վրայ շուելը:

11. Ընկճումն Ազատականաց: — Մեծ էր քաղքին մէջ եղած յուզումը. Սեպտեմբեր 23ին առաւօտ Ֆուատ էֆէնտի առ մետրապօլիտն թղթով մը ծանոյց որ այն օրուրնէ քաղաքն էր ընդ պահպանութեամբ կայսերական գնդերու և 25ին նոյնպէս մետրապօլիտին միջոցով ի բանակն կոչեց քաղքին նշանաւոր պոյարտքը և անոնց կարգաց հրովարտակ մը, ըստ որոյ մէկ միայն քայմաթ մը պիտի ըլլար՝ Կոստանտին Քանդաքուզէն, որ միշտ հաւատարիմ մնացեր էր կանոնադրութեան: Վալաքիա առ ժամս պիտի բռնուէր Էօմէր փաշայի գունդերէն որ միանգամայն կ'անուանուէր զինուորական վարիչ Պուքրէշթի որով և հրամանատար կ'ըլլար նոյն իսկ վալաք զինուորաց և Ոստիկանութեան: Երեսփոխանացմէ բողոքողք և դէմ կենալ ուզողք երկու կարգ զինուորաց մէջէն տարուեցան Կոտրոչէնի վանքը:

Նոյն օրը անմիջապէս առանց ընդդիմութեան մը տաճիկ գունդերը մտան ի Պուքրէշթ: Քէրիմ փաշա կարգաւ զինուորանոցները գրաւելով հասաւ Տիալօ-Սփիրի զինուորանոցին դիմաց, զոր կը պաշտպանէր գնդապետն Կոլէպոյ: Գնդապետը պահանջելով տեղապահութան հրաման մը, տաճիկ գունդերը 4000 հոգի ահաւոր կրակ մը սկսան ընել 100 հոգւոյ դէմ որուն պատասխանեցին ռումէնք տապալելով տաճնաց կողմէն 800 անձինք: Քէրիմ փաշա դադրեցուց կրակը, ազատութիւն խոստացաւ ռումէն զինուորաց եթէ թողուն դէնքերնին և այսպէս մտաւ ի զինուորանոց. բայց յետոյ բլուրէն իջնալու ժամանակնին զիրենք հալածեց գնդակներով: Էօմէր փաշա խստիւ արգելած էր ամենայն աւարառութիւն, լսելով որ տա-

ծիկ գունդերը ցրուելով քաղքին մէջ իր պատուէրը չէին պահեր, քաղաքը պաշարման վիճակի մէջ դրաւ:

Այս միջոցիս Տեղապահութիւնը քաշուած ի պալատըն, սարսափման վիճակի մէջ էր, երբ հասաւ իրենց նուիրակաց բանտարգելութեան և տաճիկ գունդերու Պուքրէշթի տիրելու լուրը: Հէլիատ ծպտեալ թողուց փախաւ, միւս երկու ընկերք չուզեցին վտանգին մէջ վատանալ և իրենց տեղը հաստատուն մնացին 25ին և 26ին գիշերը: մինչև որ ձիաւոր գունդ մը եկաւ և տիրեց Պալատին: Երեք օր վերջը Թէլ քաշուեցաւ ի Գրոնշդատ և Կոլէպոյ ուղղուեցաւ ի Կ. Պօլիս: Միւս կալանաւոր երեսփոխանք տարուեցան մինչև ի սահմանագլուխ և հոն ազատ ձգուեցան, որոնք մեկնեցան յաբսոր այսր անդր: Փոքր Վալաքիոյ մէջ ընդերկար Մակիէրօ չուզեց ցրուել իր գունդերը, մինչև վնասակար և անկարելի տեսնելով ընդդիմութիւն մը յետ բողոքելու առ օտար հիւպատոսս և առ նոյն իսկ Տուատ էֆէնտի, անցաւ ի Գրանսիլվանիա: Արդէն Սեպտեմբեր 28ին ռուս բանակին յառաջապահը ընդ հրամանօք Լոնտէրս գորավարին անցնելով զՍէրէթ հաստատուեր էր ի Տոքքանի: Ռուս և օսմանեան բանակք բռնեցին Իշխանութիւնները և առաջնոյն գրաման ծախքն ալ երկրին վրայ դրուեցաւ:

Նոր քայմաքամութիւնը իր պաշտօնը սկսաւ բանտարգելութեամբք, աքսորներով և անձնական վրէժխնդրութեամբք: Նոր կազմուած պաշտօնարանին մէջ ամէնն ալ բաց ի Գամփինէանոյէ, ազատականաց հակառակորդներէն էին և որոց վրայ ամենէն մեծ ազդեցութիւնն ունէր Տիւհամէլ զօրավարը:

12. Գաւլիմք Պալթա Լիմանի: — Ութ ամիս վերջը Մայիս 1ին երկու Պետութիւնք Տաճկաստան և Ռուսաստան դաշինք մը կուեցին ի Պալթա Լիման, որով Ռումանիոյ հոսփոտարաց ընտրութիւնը, ուղղակի կախումն ունէր երկու Տէրութիւններէն: Ընդհանուր ազգային ժողովք կը վերցուէին և կը դրուէին Խորհուրդք: Մասնաւոր Յանձնաժողովք ի Պուքրէշթ և Եաշ պիտի չափաւորէին կանոնադրութիւնքը և եր-

կու բանակները պիտի չթողուին իշխանութիւնները մինչև որ Յանձնաժողովք իրենց գործը լմնցնեն : Այս դաշինքը եօթը տարի պիտի տևէր : Ընտրուեցան նաև երկու հոսփոտարք Պարպոյ Սդիրպէյ՝ Վալաքիոյ, Գրիգոր Կիքա՝ Մոլտավիոյ :

Յուշի 16

1836

Երկու իշխանութիւնք այսպէս կառավարուեցան 5 տարւոյ շափ մինչև Բարիզու դաշինքը, յորում Ռուսաստան, յետ անկման Սեվաստափոլի, կը հրաժարէր որ և է հովանաւորութենէ մը Իանուրի իշխանութեանց վրայ որոնք կը մնային հարկատու Բ. Իրան և կը պահուէին իրենց առանձնաշնորհութիւնք ընդ հովանաւորութեամբ բովանդակ Պետութեանց : Սակայն իշխանութիւնք երբէք չկասեցան յառաջ մղելու իրենց միութեան խնդիրը ի ձեռն քաղաքագիտութեան և յետ երկար բանախօսութեանց, մեծ Պետութիւնք կրկին դաշինք մը ստորագրեցին ի Բարիզ, որով Մոլտավիա և Վալաքիա թէպէտ առանձին տէրութիւնք կը մնային յար և նման օրէնսդրութեամբք և հարկատու Բ. Իրան՝ ունենալով երկու առանձին հոսփոտարներ, բայց իբրև միութեան նշանակ մը՝ Առանձին խորհուրդ մը ևս պիտի ըլլար կազմեալ երկու իշխանութեանց նուիրակներէ :

1838
19 Օգոստ.1839
Սեպտ. 6

13. Իշխան Յովհաննէս Աղեքսանդր Ա. Հոսփոտար Մոլտո-Վալաքիոյ, - Պետութիւնք դեռ այս յետին մասին վերայ կը վիճէին երբ երկու իշխանութիւնք իրենց փափագած միութիւնը գործով կատարեցին ընտրելով մի և նոյն ժամանակ հոսփոտար զնոյն անձը՝ զհազարապետն Գուգա որ իշխան Աղեքսանդր-Յովհաննէս Ա տիտղոսը առաւ : Այս ընտրութեան դէմ բողոքեց Բ. Իուռը, սակայն Պետութեանց միջամտութեամբ ընդունելի եղաւ, այն պայմանաւ որ իբր զարտուղութիւն համարուի և ոչ իբրև կանոն : Տարիուկէս վերջը Բ. Իուռը աւելին շնորհեց մասնաւոր ֆէրմանով մը, մէկ միայն Ժողովք հաստատեց և մէկ միայն պաշտօնարան երկուց իշխանութեանց համար :

- ՊԱՏՃԱՌՔ ԿՐԻՄՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Ռուսաստան և Եւրոպիոյ Պետութիւնք. — 2. Նիկողայոսի խորհուրդքը Տանկաստանի վրայ. — 3. Գարատաղի խնդիրը — Էօմէր փաշա. — 4. Սրբազան տեղեաց խնդիրը. — 5. Նուիրակութիւն Մէնչիքով իշխանին ի կ. Պօլիս — Իւր պահանջքը. — 6. Ազտիւլ Մէհրա և օսմանեան պայտօնարան. — 7. Ռուսիոյ վերջնագիրը. — Ռուսք կ'անցնին Փրութը. — 8. Եւրոպիոյ Պետութիւնք. — Անգղիոյ և Գաղղիոյ նաւատորմիդք յԱրևելս. — Ծանուցագիր վեննայի. — 9. Հրատարակումս պատերազմին. — Նաւամարտ Սինոպի. — 10. Դաշնակցութիւն Գաղղիոյ և Անգղիոյ ընդդէմ Ռուսաստանի. — 11. Նիկողայոս և Փրանկիսկոս Յովսէփ, Բրուսիա և Գերմանիա. — 12. Տանկաստան. — Ռէշիս փաշա. — Սպարապետն Էօմէր փաշա. — 13. Պատերազմունք յԱսիա և Դանուբի վրայ. — Պաշարումս Սիլիստրէի. — Յունական դաւառք. — 14. Պատերազմ Պալմիրիկի վրայ. — Առումս Պորսմունիսի:

1. Ռուսաստանն եւ Եւրոպիոյ Պետութիւնք: — Դժուարին է վճռել եթէ արդեօք Արևելեան, կամ ինչպէս սովորաբար կը կոչենք, Ղրիմու պատերազմին գլխաւոր պատճառը Ռուսաստանն եղաւ իր պահանջներով, թէ ընդհանուր Եւրոպական դրութենէն և անգղիական գաղտնի քաղաքագիտութիւնէ մը ծագեցան այս անհամաձայնութիւնքը, որոնք ծնան դարուս մէջ անուանի եղած պատերազմներէն մին, որոյ յիշատակքը խառն վիպասանական դէպքերով կը հնչեն տակաւին թէ յԱրևմուտս և թէ յԱրևելս: Այս յայտնի է թէ Ռուսաստան յախուռն չէր դիմեր յայս ձեռ-

նարկ, եթէ ի սկզբան ընդհանուր եւրոպական վարչութեանց կողմանէ միտումն կամ գէթ առ ինքն համակրութիւն մը չտեսնէր: Աւստրիա իրեն պարտական էր Մաճառստանի մէջ ապստամբութիւնը մարելուն համար, Բրուսիա իւր ամենայն լրագրովք ուսական կողմը կը հակէր, բնաւ երկիւղ մը չէր տար Գաղղիա՝ իւր յարափոխ և անհաստատ վարչութեամբ, և չէր համարեր որ Նաբոլէոն Գ կարենայ այնպիսի ազդեցութիւն մը ունենալ Եւրոպիոյ վրայ որ ընդհանուր Արևմտեան դաշնակցութիւն մը ձևացնէ. և այն պատճառաւ քիչ առաջ մերժեր էր վստահ արհամարհութեամբ մը այն դաշնակցութիւնը զոր Նաբոլէոն առաջարկեր էր Շոուդկարտի դեսպան՝ իշխան Կորչաքովի միջոցաւ: Իւր ազդեցութեան միակ խոչընդոտն կը տեսնէր զԲրիտանիա, որուն ճարտար քաղաքագէտ դեսպանը ի Տաճկաստան Սըր Սդրէդֆըրտ Քէննինկ, նուազեցուցեր էր ուսական ազդեցութիւնը Բ. Դրան մէջ, և Ռուսաստան հարկ էր որ յարմար առիթ մը փնտռէր կենդանացնելու այն ազդեցութիւնը զոր երբեմն ունեցեր էր. նա մանաւանդ յառաջադիմութեան ճանապարհին մէջ հարկ էր զայն և ևս զօրաւոր ընել. և եթէ անկարելի էր նիւթական աշխարհակալութիւն մը, գոնեայ բարոյական տիրապետութիւն մը ունենալ Կոստանդնուպոլսոյ և Տաճկաստանի ժողովրդոց մեծ մասին վրայ:

2. Նիկողայոսի խորհուրդը Տաճկաստանի վրայ. — Եթէ ուզենանք փնտռել Նիկողայոսի փափագները, թերևս աւելի մեծագոյն էին, և չափազանց անկեղծ մտեմութեամբ մը հաւատացեր էր Անգղիացւոց 1844ին յԱնգղիա ուղևորած ժամանակ. և երբ 1853ի ընտրութեան առթիւ Պաշտօնարանը փոխուեր էր յԱնգղիա, կայսրը Բեդրպուրկի Անգղիոյ դեսպանին հետ խօսակցութեան մը առթիւ մեկէն յայտներ էր իրեն որ Անգղիա և Ռուսաստան պէտք էին մէջերնին բանակցիլ Տաճկաստանի ապագային համար: Խօսակցութիւնը քանի մը անգամ նորոգուեր էր: Այն ընտանեկան խօսակցութիւններէն մէկուն մէջ էր որ Նի-

կողայոս զՏաճկաստան կոչեց « այր հիւանդ » և յետոյ այս բացատրութիւնը հնչեց բոլոր Եւրոպա . « Թուերնուս վրայ, ըսեր է կայսրը, հիւանդ մարդ մը ունինք, կարի հիւանդ, և մեծ ձախորդութիւն մ'է, որ այս օրերէս մէկուն մէջ մեռնի, տակաւին մենք պէտք եղածը մէջերնիս չյարմարցուցած » : Նիկողայոսի ամենայն խօսակցութիւնք առ այն կը հայէին որ այս մահը անվրէպ էր և անխուսափելի . և եթէ Անգղիա ու Ռուսաստան միաբանէին, ալ իր հոգը չէր միւս պետութեանց մտածածին վրայ : Իւր փափագը այն չէր, կ'ըսէր, որ Ռուսաստան մշտնջենաւորապէս գրաւէ զԿ . Պօլիս, նոյնպէս չէր կրնար համբերել որ բաժին ըլլայ այն Գաղղիոյ կամ Անգղիոյ և կամ ուրիշ զօրաւորի մը . ամենեւին չէր խորհեր բիւզանդական կայսրութիւն մը նորոգել, և ոչ վերածել ի փոքրիկ հասարակապետութիւնս, « ուր ապաւինին Քոչութ և Մածծինի » բայց թէ ինչ կ'ուզէր, տակաւին չէր յայտներ : Պէտք էր որ Սերպիա և Պուլղարիա ինքնորէն պետութիւնք ըլլային, Գանուրի իշխանութեանց պէս « իմ հովանաւորութեանս ներքե » . և այսպէս յետ կազմակերպելոյ զՀարաւային Եւրոպա, եթէ Անգղիոյ կարևոր տեսնուի, ստանալու զԵգիպտոս, կայսրը ամենեւին ընդդիմութիւն չունէր, ինչպէս նաև Կրետէի համար, եթէ Անգղիա զայն փափագի : Այս խօսակցութիւնք մտերմական էին միայն, և որչափ որ ալ ճօն Ռուսսըլ յանձնառու եղած էր բանակցութեան մը, այսու հանդերձ երբէք պաշտօնական ձև մը առած չէր, և Նիկողայոս չէր համարեր որ օր մը յերևան ելլեն, ինչպէս եղան տարի մը վերջը . և Նիկողայոս ցաւելով տեսաւ որ Արևելեան խընդրոյն ծագելու միջոց, արդէն իւր խորհուրդը ծանօթ էին Անգղիոյ վարչութեան ¹ :

3. Գարատաղի խնդիրը : — Երկու պատահարք

1. Մօք Քարթէյ, կ'ըսէ, որ ասոնք ամենն ալ կան բրիտանական Իււստին մէջ : 2-ր. Բ. Գլ. Իե. A History of our own Times by Justin Mc Carthy.

հետզհետէ գալով պատճառ եղան Ռուսաստանի և Տաճկաստանի մէջ եղած տժգոհութեանց :

Քարատաղի բնակիչք որոնք Ռուսաստանի հովանաւորութեան ներքեւ կը գտնուէին, 1852ի Դեկտեմբերին մինչ իրենց նորընտիր իշխանը Գանիէլ, հազիւ դարձեր էր յայցելութիւնէ մը ի Բեդրպուրկ, թերեւ վստահ ռուսական պաշտպանութեան մը վըրայ՝ յանկարծական ասպատակութեններ սկսան ընել տաճիկ հողին վրայ : Իսմէր փաշա Շքոտրայէն և Առնաուտլուքէն վրանին դիմեց, աւերեց շատ տեղ և խստութեամբ բռնեց երկիրը : Աւստրիա ուզեց միջնորդութիւն մը ընել քրիստոնեայ ժողովրդեան մը յանցանաց, միանգամայն կը փափագէր խոյս տալ ռուսական միջամտութենէ մը, անոր համար Լայնինկէն տեղապահ—ֆէլտ մարաշախտը ի կ. Պօլիս դրկեց, և սպառնական ոճով մը պահանջեց որ թշնամութիւնք դադրին ի Քարատաղ :

Որքան այս քայլը քաղաքագիտական կանոնները կը զանցանէր, այսու հանդերձ Բ. Գուռը ըմբռնեց Աւստրիոյ ճշմարիտ նպատակը և հաւանեցաւ Լայնինկէնի խնդրոյն : Փետրուարի մէջ տաճիկ գունդերը քաշուեցան և Գանիէլ իշխանը վեննա գնաց իւր շնորհակալութիւնքը ընելու ավստրիական վարչութեան : Բովանդակ այս պատահարը լմնցներ էր առանց Ռուսաստանի միջամտութեան :

4. Սրբազան տեղեաց խնդիրը : — Սակայն Քարատաղի խնդրէն աւելի գրգիռ եղաւ Նիկողայոսի Սէքուլնի Գեղեցի վէճը : Մանօթ է ամենուն որ յերուսաղէմ և եթէ արտաքոյ, սրբազան տեղեաց վրայ եկեղեցական իրաւունք ունեցողներն են Յոյնք, Հայք և Լատինք. և յետինքս ընդ հովանաւորութեամբ եղած են Գաղղիոյ 1561ի, 1620ի, 1633ի և ուրիշ կայսերական հրովարտակներով : Սակայն ստէպ բազմութիւ վէճերով և կռիւներով, և Յունաց ալ միշտ զօրաւոր գտնուելովը, լատինք իրենց իրաւունքներէն զոմանա թողուցեր էին յափշտակուիլ ի Յունաց մանաւանդ յետ 1757ի և աւելի Գաղղիոյ մեծ Յեղա-

փոխութեան ժամանակ, յորում Գաղղիոյ վարչութիւնը փոյթ չէր տարած իրեն իրաւանց: 1808ի Ս. Գերեզմանի եկեղեցին մեծաւ մասամբ այրուելով, Յոյնք յետ նորոգելու զայն, ամբաստանելով նաև զլատինս վարչութեան առջև, բոլորովին տիրեցին անոր, և ելի շատցուցին իրենց խրոխտումը, գիտնալով որ ըզՌուսաստան իրենց թիկունք ունէին: 1851ի Լուի Մարտի 1-ին Նաբոլէոնի վարչութիւնը 1740ի դաշանց միջոցաւ, խնդրեց և ընդունեցաւ Բ. Դրանէն Յանձնաժողով մը կազմելու և քննելու այն Յիշատակարանք որոնք կը հաւաստեն Լատինաց այլ և այլ իրաւունքները Սրբազան տեղեաց վրայ: Յետ երկար վիճից, Յանձնաժողովը կը ձանչնայ Գաղղիոյ իրաւունքները, բայց կ'առաջարկէ պահել ամենայն ինչ « ի նմին պայմանի յորում է »: միայն յաւելլով որ լատինք մեծ դունէն մտնեն Ս. Աստուածածնայ մատուռը, և Յոյնք կարենան պաշտել Համբարձման մատրան մէջ: Գաղղիա խաղաղութեան սիրով, հաւանեցաւ զրկուիլ յիրս իրս, և հրովարտակով մը հաստատեց Յանձնաժողովոյն որոշողութիւնները:

Մարտ

5. Նուիրակութիւն Մէնչիքով իշխանին ի Կ. Պօլիս — Իւր պահանջքը: — Արդ եթէ այս վէճը և եթէ Գարատաղինը առանց Ռուսաստանի միջամտութեան լմնցեր էին, որով և Ռուսաստանի վարչութիւնը բողոքեց որ Քայնարճի¹ դաշամբ հովանաւորութեան իրաւունք ստացեր էր Տաճկաստանի մէջ եղած յունածէս քրիստոնէից վրայ, որով և պէտք էր իր միջամտութիւնը վերոյիշեալ խնդրոյն մէջ, և կը պահանջէր Բ. Դունէն փոխարինութիւն մը, սոռանց իրեն խնդրոյն վճարուելուն համար: Այս բանիս համար

1. Քայնարճի դաշանց Բ. յողուածն կ'ըսէր որ « Ենորհեալ է Ռուս դեսպանին, բաց ի դեսպանատան մատրանէն, եկեղեցի մը ևս չինել յունական ծիսով կալաթայի թաղը Պէյօղլու կոչուած տեղը, որ միշտ ռուս դեսպանին հովանաւորութեան ներքե պիտի ըլլայ »: Ռուսաստան այս պարագայիս մէջ, Քայնարճիին դաշինքը ուզեց լայնաբար մեկնաբանել:

զՄէնչիքով իշխանը, պաշտօնեայ ծովային զօրութեան, չքեղ սպայակուտով մը պատերազմական և նաևով մը Կ. Պօլիս ղրկեց, գոհութիւնը պահանջելու:

Եւրոպական պետութիւնքը մբռնեցին որ խնդիրը այն չէր թէ ի սրբազան տեղիս, Լատինաց, թէ Յունաց և Հայոց էր մեծագոյն իրաւունքները, այլ ուրիշ բարձրագոյն նպատակ մը կար. և Անգղիա որ շատ փոյթ չունէր ուխտաւորներ պաշտպանելու ի Պաղեստին, ամենէն եռանդունը տեսնուեցաւ Տաճկաստանի ամբողջութեան պահպանութեան համար, և Կ. Պօլսոյ դեսպանը Սդրէգֆըրտ Քէննինկ, որ հրամանաւ մը կը գտնուէր ի Լոնտրա, փութաց իւր տեղը հասնելու. թէպէտ Նէսըլրոտ կ'ապահովցնէր զՀամիլդըն Սիմուր, որ Մէնչիքովի նուիրակութիւնը Ս. Տեղեաց խնդրէն գատ ուրիշ նպատակ չունէր:

Սակայն քիչ նուիրակութիւն այնպիսի մեծ շառաչունեցած է ինչպէս Մէնչիքովինը: Իշխանը յետ աչքէ անցնելու ի Սէվաստափոլ ռուսական նաւատորմիղը, յետ զօրահանդէս կատարելու 30,000 ուլ բանակի մը, չքեղ փառաւորութեամբ երևցաւ ի Կ. Պօլիս: Հոն ճանապարհի զգեստով մեծ վէզիրին հետ տեսնուելէն վերջը, արհամարհանօք մը անցեր էր Արտաքին գործոց պաշտօնարանին դիմացէն առանց ներս մտնելու, և ուր պատրաստուած էր Ֆուատ էֆէնտի զինքը ընդունելու: Այս արհամարհութեան վրայ Ֆուատ անմիջապէս հրաժարեցաւ Արտաքին գործոց պաշտօնէութենէն, և թէպէտ Մէնչիքով բողոքեց այս հրաժարման համար, այլ ի զուր, և այս նիւթոյս վրայ Մէհէմէտ Ալի փաշային հետ այնքան սաստիկ խօսակցութիւն մ'ունեցաւ որ մեծ վէզիրը Անգղիոյ փոխան դեսպանին փափագ յայտնեց որ Անգղիոյ նաւատորմիղը Տարտանէլ մտնէ:

Մէնչիքով կը պահանջէր որ իրեն տրուին հաստատուն և անփոփոխ առհաւաչեայք ի նպաստ յունական եկեղեցւոյն, այնպիսի առհաւատչեայք որով Ռուսաստան հովանաւորութիւն ունենայ բոլոր յունածիսից վրայ: Եւ ասոր փոխարէն կ'առաջարկէր ծածուկ

դաշինք մը երկուց պետութեանց մէջ. և այս ամենուն պատասխանը կը պահանջէր 5 օրուան մէջ, վասն զի աւելի երկար յապաղում մը, արհամարհութիւն պիտի համարէր իւր Պետութեան:

Բ. Դուռը պատասխանեց որ պատրաստ էր դուհացնել զինքը ուս ուխտաւորաց և եկեղեցեաց նկատմամբ. բայց չէր կրնար շնորհել յունական եկեղեցւոյ հովանաւորութիւնը. նա մանաւանդ որ իր հաստատուն ջանիւքը քրիստոնեայ հպատակաց վիճակը բարւոքելու համար, կը ցուցընէր որ երբէք չէր ուզեր վնաս մը հասցնել անոնց առանձնաշնորհութեան: Ընդունիլ դաշամբ Նիկողայոսի պահանջը ուրիշ բան չէր, բայց ոչնչացնել և կործանել իւր ինքնիշխանութեան հիմունքը:

Մէնչիքով իշխանը տեսնելով որ մեծ վէճիրը Մէհմէտ Ալի աւելի պատրաստ է հրաժարիլ իւր պաշտամանէն քան ընդունիլ իր առաջարկքը, քիչ մը զիջաւ. փոխանակ նոր դաշանց, առաջարկեց յաւելուած մ'ընել Քայնարճիի դաշանց, որով յոյն պատրիարգունք ցկեանս այնպիսի առհաւատչեայք ունենան, որոնք կարեւոր են իրենց պաշտաման ինքնավարութեան համար, և Ռուսաստան գոհ կ'ըլլայ անոնց վրայ միայն պարզապէս հոգեւորական հովանաւորութիւն մ'ունենալ: Այս նոր առաջարկին պատասխանը կը պահանջէր 10 օրուան մէջ, ապա թէ ոչ կը սպառնար Օտէսսա մեկնիլ:

Բարձրագոյն Դուռը Մայիս 14ին վճռական պատասխան մը պիտի տար Մէնչիքովի առաջարկին: 12ին տիվանը գումարուեցաւ, և 13ին դեսպանը հրաւիրուեցաւ բանակցութեան մը մեծ վէճիրին ամարաստանը ի վոսփոր: Մէնչիքով ընդունեցաւ հրաւէրը, և պատշաճ մեծարանաց համար բոլոր օսմանեան պատօնեայք միաբան կը սպասէին ուս իշխանին:

Բայց Մէնչիքով յանկարծ փոխեց իւր խորհուրդը և խոստումը, առանց ծանուցանելու մեծ վէճիրին: Յուսալով աւելի դիւրաւ համոզել զՍուլթանը, որուն քով չկար ոք ի պաշտօնէից. վասնզի բոլոր խորհրդ-

դականք մեծ վէզիրին հետ կը սպասէին, ուղղակի գնաց յարքունիս և թախանձեց որ կարենայ տեսնել զՍուլթանը: Եետ երեք ժամու Սուլթանին դիմացն էր, որ իւր ամէն առաջարկներուն կը պատասխանէր թէ « իւր կամքը յայտներ էր իւր պաշտօնէից խորհրդոյն »: Եւ թէ ծանուցեր էր իւր այցելութիւնը, և անշուշտ փութով կը հասնին, և յիրաւի փութով ալ հասան¹:

Սակայն մեծ վէզիրը Մէհէմէտ Ալի վշտացած Մէնչիքով իշխանին ընթացքին վրայ, նախ առ ժողովը և երկրորդ առ Սուլթանը, նոյն նուիրակով որ զինքը յարքունիս կը կոչէր, հրաժարականը ղրկեց:

6. Ապտիւլ Մէհիտ եւ Օսմանեան Պոշտօնարան: — Սուլթան Ապտիւլ Մէհիտ, խոհեմ և հանդարտ բնաւորութեամբ, չգայրացաւ իւր փեսային, պարտք համարեցաւ միայն այնպիսի անձ մը առնուլ իւր պաշտօնեայ, որ առանց գրգռելու զՌուսաստան կարենայ պաշտպանել Օսմանեան պետութեան պատիւը, և կրկին յիշխանութիւն կոչեց զՌէշիտ փաշա, զՄէհէմէտ Ալի ևս անուանուելով պաշտօնեայ պատեւրագմի: Երկու անուանի ախոյանք միաբան կը գտնուէին վարչութեան այնպիսի դժուարին ժամանակի մէջ:

Ռէշիտ փաշա նոր կերպարանք մը տուաւ Մէնչիքովի խնդրանաց: Օսմանեան հնարիմաց ճարտարութեամբ, որուն փորձը շատ անգամ տեսանք այս դարուս երկրորդ կիսուն մէջ, առաջարկեց խնդիրը երկու բաժնելու, կրօնական և քաղաքագիտական, զոր ընդունեցաւ Մէնչիքով: Կրօնականին մէջ կը բովան-

1. « Իբր Մէնչիքով քան զչափն աւելի կը բռնադատէր զՍուլթանը, յանկարծ վարագոյր մը ձգուեցաւ ամբողջովին որ քածնեց զՍուլթանը դեպպանէն, որ սարսափած մնաց իւր թարգմանին նետ: Այս յանդիմանական տեսարանէն վերջը սենեկազան մը եկաւ իմացնելու իշխանին որ Սուլթանը իւր այցելութիւնը ծանուցեր էր մեծ վէզիրին » . . . Տե՛ր-Գրէլ, Տե՛ր-Գրէլ, Տե՛ր-Գրէլ-Գրէլ:

դակէր Ս. Տեղեաց խնդիրը, յորում գոհացոյց ըզ-
 Յոյնս, սահմանելով որ նախ անոնք կատարեն պաշ-
 տամունքը, հաստատեց Հայոց իրաւունքները, որոնք
 չէին դիմած առ օտար պետութիւնս և լատին ուղ-
 դափառաց շնորհուեցաւ մեծ դոնէն մտնելու ի Ս.
 Գերեզման. իսկ պէտք եղած նորոգութեանց ծախքը,
 Բ. Դուռը իր վրայ կ'առնուր: Ռուսաստան խնդրե-
 ր վանք մը և հիւրանոց մը ունենալ յԵրուսաղէմ.
 Բ. Դուռը կը հաւանէր այն պայմանաւ, որ Ռուսաս-
 տան ալ այսպիսի պարագայի մէջ կարևոր եղած պարտ-
 քերը կատարէ: Կը մնար կարգի դնել քաղաքագի-
 տական խնդիրը, որ մեծապէս դիւրացեր էր Տաճ-
 կաստանի համար, մանաւանդ որ Յունաց և Հայոց
 պատրիարգունք իրենց փափագը յայտներ էին ուղ-
 դերձով մը առ Սուլթանը, երբէք չհեւանալու իր հո-
 վանաւորութենէն¹:

7. Թուսիոյ վերջնագիրը. — Ռուսը կ'անցնին գՓը-
 րուի: — Ռէշիտ իր նպատակին հասած կրնար համա-
 բուիլ, և Մէնչիքով գիտէր որ ի զուր էր վստահիլ նախ-
 կին պատրիարգի կողմնակից՝ օսմանեան վարչութեան
 հակառակ քանի մը Յունաց վրայ, և զայրացած իր
 դեսպանութեան ամբողջովին ի դերև ելլելուն վրայ,
 փակելով զդեսպանատունը, և իջեցնելով դոնէն կայ-
 սերական դրօշը և նշանը, բոլոր պաշտօնէիւք դես-
 պանատան, Մայիս 18ին մեկնեցաւ Կ. Պօլսէն, սպառ-
 նալով որ ընդ հուպ պիտի դառնար իր չքազգեստ-
 ներով: 21ին ալ Նէսեյրոտ կը ստիպէր կրկին զԲ.
 Դուռը ընդունելու Մէնչիքովի վերջնագիրը, և կը ծա-
 նուցանէր որ ռուս գունդերը պիտի բռնեն Դանուբի

1. Պերպերեան կը յիշատակէ, որ Մէնչիքովի մեկնելէն վերջը,
 Յունաց, Հայոց պատրիարգունք Հրէից Թաքթիին նեա հրաւի-
 բուեցան Ռէշիտէն իւր ծովեզերեայ ամառաստանը, ուր Ռէշիտ
 հաստատեց կրկին Սուլթանին փափաքը, անխախուս պահե-
 լու իրենց կրօնական առանձնաշնորհութիւնքը: Լորտ Քէննինկ
 ևս անձամբ զնաց առ պատրիարգունս, զանոնք աւելի հաս-
 տատելու ի հաւատարմութեան:

իշխանութիւնքը մինչև որ Բ. Գուռը զիջանի և ընդունի Մէնչիքով իշխանին պահանջքը: Եւ յիրաւի Յուլիս 2ին Միքայէլ Կորչաքով 40,000 ով կ'անցնէր Փրութը և կը մտնէր ի Մոլտավիա և ի Վալաքիա:

Ռուս ժողովուրդը աւելի բորբոքելու համար պատերազմին կրօնական կերպարանք մը տրուեցաւ, և բանակը Փրութէ շանցած, Նիկողայոս ի Բեդրպուրկ մեծ գօրահանդէս մը և աստուածային պաշտօն մը կատարել տուաւ, յորում ինքը ձեռքը խաչ՝ մտաւ յեկեղեցին աղօթելու « այս սրբազան պատերազմին համար »: և Ռուսաց գունդերը Փրութը անցնելու ժամանակ, կայսերական հրովարտակ մը ծանոյց որ ամենայն ինչ կ'ըլլար սուրբ հաւատքը պաշտպանելու համար:

8. Եւրոպիոյ Պետութիւնքը. — Նաւատորմիդք Անգլիոյ եւ Գաղղիոյ յԱրեւելս. ծանուցագիր վեմնայի: — Բարիգու, Լոնտրայի, Վեննայի և Պեռլինու վարչութիւնք կը համարէին որ Մէնչիքով իշխանին նուիրակութիւնը, ուրիշ նպատակ մը չունէր, բայց եթէ կարգի դնել Ս. Տեղեաց խնդիրը, և երբ լսուեցան անոր խրոխտ ընթացքը, ամէնը համարեցան որ վաւժաւուն քաղաքագէտը իրեն սահմանէն դուրս ելեր էր: Բայց Մէնչիքովի մեկնելով և Նէսէլրոտի վերջնագրով ամենայն ինչ յերևան կ'ելլէր. Անգղիա մեծապէս տժգոհ էր. Գաղղիա յօժար զինուորական համբաւ մը ստանալու, Բրուսիա կը ծանուցանէր միայն որ Ռուսիոյ պահանջքը հասարակաց կարծեաց դէմ են և Աւստրիա պատրաստ՝ ամենայն անհամաձայնութիւն շտկելու, խիթալով որ իր ամբողջութեան նոր վնաս մը հասնի:

Սակայն Նիկողայոս երբէք մտադիր չէր յետս կասելու իւր ըրած քայլէն, ըստ իւր մտաց անհնարին էր Անգղիա Գաղղիական դաշնակցութիւն մը. « Ուսթէրլուի պարտեալք, երբէք իրենց յաղթողաց հետ չեն կրնար զինակցիլ » կ'ըսէր Համիլտըն Սիմուրի. և յայտ էր իր վրիպակը, և յորում զինքը աւելի կը հաստատէր իւր դեսպանը ի Բարիզ՝ Քիսլէֆ, որ իր ամե-

նայն հնարիմացութեամբ չկրցաւ գուշակել Նարոլէոնի Անգղիոյ հետ դաշնակցութեան մը փափազը և զայն ժամանակին ծանուցանել իւր Տիրոջ :

Մէնչիքով իշխանին պահանջմանց լրոյն տարածուելուն պէս, Անգղիա շուգելով յայտնի թշնամանալ Նիկողայոսի հետ, թողուցեր էր որ Գաղղիոյ նաւատորմիցը միայնակ նաւարկէ մինչև ի Սաղամինա, բայց երբ գունդերուն Փրութը անցնիլը լսուեցաւ, անմիջապէս իր նաւատորմիցը Պէշիքա հասուցուր հետեւեցաւ նաև Գաղղիոյ նաւատորմիցը և երկու ծովակալք հրաման ընդունեցան միաբան խորհրդակցութեամբ գործելու :

Այսու հանդերձ տակաւին պատերազմի ուղղակի վախ մը չկար. և Աւստրիա յորդորեալ կէս մը յԱնգղիոյ, միանգամայն խիթալով Մաճառստանի և Իտալիոյ անհանդարտ հպատակներէն, ջանաց հաշտութեան ճամբայ մը գտնել և կոմսն Պուոլ դաշնաժողով մը գումարեց ի Վեննա, աւաջարկելով Վեննայի ծանուցաբերը, ըստ որում Բ. Գուռը պիտի ջանար գոհացնել զՌուսաստան յիրս իրս, և Գանուրի իշխանութեանց մէջ արշաւանքը, պարտադրի արկած չհամարուէր : Գաղղիա, Անգղիա և Բրուսիա ստորագրեցին. Չարը կ'ընդունէր այն պայմանաւ որ մէջը ուրիշ փոփոխութիւնք չմտնեն : Դաշնաժողովը լմնցաւ, և ամէնքը կ'ուրախանային խնդրոյն այսպէս շուտով յարմարելուն վրայ, երբ Բ. Գուռը մերժեց զայն այն պատճառներով, որովք մերժեր էր Մէնչիքովի ծանուցագիրը, և մինչ ստորագրող վարչութիւնք կը մտածէին բռնադատել զՏաճկաստան ընդունելու, յանկարծ ի Պետլին հրատարակուեցաւ ռուս քաղաքագիտութեան ծածուկ երկասիրութիւն մը Վեննայի ծանուցագրին վրայ, յորում Եւրոպա յայտնի կը տեսնէր որ Ռուսաստան Վեննայի որոշողութեանց մէջ կը գտնէր մեկնութեամբ այն ամէն իրաւունքները զորս պահանջած էր Մէնչիքով իշխանին միջոցաւ :

9. Հրատարակումն պատերազմին. — Նաւամարտի Սիւտպ : — Յայնմհետէ ամենայն ինչ պատերազմ

և անհամաձայնութիւն կը գուժէր: Գաշնակից նաւատորմիդը անցաւ Չանաք Գալէսին, պատճառելով Եւրոպիոյ դիմաց որ տաճկական մոլեռանդութեան մը սանձ դնելու համար է: Ի գուր Աւստրիոյ և Ռուսաստանի կայսերք տեսակցութիւն մ'ունեցան յՍլմիւրց, ուր իրենց ընկերեր էին Նէսէլրոտ և Պոուլ. Տաճկաստան ևս Հոկտեմբերի մէջ հրատարակեց պատերազմը ընդդէմ Ռուսաստանի, և Ստորին Գանուրի մէջ Էսովէր փաշա սկսաւ բանակ կազմել: Խնդիրը այս վիճակին մէջ էր, երբ վրայ գալով Սինոպի նաւական կռիւը, ձեացաւ փութով Արեւմտեան դաշնակցութիւն մը, որ ընդ հուպ կամայ և ակամայ սլտի մղուէր ի պատերազմ, և որուն նաւատորմիդը արդէն Վոսփորի մէջ խարիսխ ձգեր էր:

Հազիւ թշնամութեանց սկսելուն ձայնը լսուեր էր, երբ ռուս պատերազմական եօթը նաւ և մէկ շոգենաւ, նախ Սամսոնի ապա Սինոպի դիմաց երեւցան, ուր կը գտնուէին տաճիկ պատերազմական ծառայութեան համար նաւեր, և որք Պաթում պաշար կը տանէին: Ռուս նաւերը յետ գննութեան մ', յետս կը քաշուին: Երկրորդ օրը կ'երևան դարձեալ, և տաճիկ հրամանատարը Օսման փաշա, փութով այս լուր կը հաղորդէ առ դաշնակից հրամանատարս ի Վոսփոր: Նոյեմբեր 2ին վերջին անգամ լուր կու գայ առ ԼորտըՍդէդֆրըտ և դաշնակից նաւերը կրնային դիմել օգնութեան. բայց անոնք հազիւ 30ին խարիսխ վերուցին: Սոյն օրը ճիշդ Նախիմոֆ ծովակալը վեց նաւով մօտեցաւ տաճիկ նաւերուն, յորոց նախ սկսաւ կրակը, և որուն յաջորդեց երկուստեք ահաւոր կռիւ մը: Տաճիկը կռուեցան մեծ քաջութեամբ, բայց ի բաց առեալ մէկ շոգենաւ մը միւս բոլոր տաճիկ նաւերը խորտակեցան և չորս հազար նաւաստիք կորսուեցան¹:

1. Կը պատմեն որ տաճիկ նաւազեաներէն ոմանք անձնատուր ըլլալու դրօշը ներկայացուցեր են Նախիմոֆի, բայց ռուս ծովակալը չտեսնել ձեացուցեր է, զանոնք խորտակելու համար: Քինկլէք, ԺԸ:

Սինոպի մարտը Ռուսաց կողմանէ յանկարծական արշաւանք մը չէր, վասն զի Ռուսք շատ օր առաջ երեւցեր և սպառնացեր էին, անոր համար մեծահըռչակ եղաւ ի Ռուսաստան յաղթութեան լուրը, եթէ յեկեղեցւոյ գոհութեան աղօթքներով և եթէ քաղաքական լուսաւորութեամբ :

Քիչ առաջ Նէսէլրոտ ծանուցեր էր որ Ռուսաստանի պատերազմը միայն պաշտպանողական պիտի ըլլայ, բայց երբ Տաճիկք տիրեցին Ս. Նիկողայոս բերդին Սև ծովուն վրայ և կը պատրաստուէին դիմել ի Ռուսահայս, այն ատեն Ռուսաստանի կողմէն ալ պատերազմը յարձակողական ձև մը առաւ :

10. Քաշնակցուծիւն Գաղղիոյ եւ Անգղիոյ ընդդէմ Ռուսաստանի : — Յայտնի էր որ յԱրևելս եղած պատահարք իրենց արձագանգը պիտի ունենային յԱրևմուտս, մանաւանդ ի Գաղղիա և յԱնգղիա :

Ամէնը անհամբեր կը սպասէին Գաղղիոյ Խօսարանին նիստերուն բացման առթիւ Պսակին ձառին : 1852ի հունձքերուն նուազութեան պատճառաւ ժողովուրդը մեծ նեղութիւն քաշեր էր. Նարոյէոն ապահովցուց որ ընդ հուպ օտարէն գնուածները պիտի հասնէին. բայց « հաղիւ նուազութիւնը լմնցաւ, պատերազմը կը սկսի » : Յետոյ վրայ բերաւ որ Անգղիա և Գերմանիա միաբան էին իրեն՝ Ռուսաստանի փառասիրութիւնը ընկճելու, պահելու Օսմանեան պետութեան ամբողջութիւնը և հսկելու Արևելքի քրիստոնէից վրայ :

Խօսքը լմնցուց բողոքելով ընդդէմ որ և իցէ խորհրդոյ մը երկիր ընդարձակելու. « վասն զի աշխարհակալութեանց ժամանակը անդարձ անցաւ » : Օրէնս Մարտ 7 դիր ժողովը որուն նախագահ ընտրուեր էր Մոսնի, 250 միլիոնի փոխառութիւն մը որոշեց, և այս բանիս համար ստորագրութիւն մը բացուեցաւ, որ տասնաւուր մէջ անցաւ 468 միլիոնը : Մարտ 27ին ալ Օրէնսդիր ժողովքին մէջ կարդացուեցաւ պատերազմի պաշտօնական հրատարակումը ընդդէմ Ռուսաստանի, զոր ժողովը ընդունեցաւ ուրախութեան նշանիւք, և

պրիւ 40

10 օր վերջը վճռեց այն օրէնքը որով վարչութիւնը խնդրեր էր 1853ի գինուորաց դասուն թիւը 80,000էն բարձրացնել 140,000ի: Քիչ օր վերջը Անգղիա և Գաղղիա կը ստորագրէին միաբան պատերազմի դաշնակցութիւն մը ընդդէմ Ռուսաստանի:

Անգղիա այս քայլը ընելու ժամանակ ներքին զանազան հակառակութիւններ կրեր էր: Ի Խօսարանի եռանդուն ճարտասանք մեծ համակրութիւն ցուցըցեր էին Տաճկաստանի համար. յորս ազդեցութիւն ունեցեր էր Նինուէի անուանի պեղիչն Լայարդ, որ առանց մեծ ճարտասանութիւն մը ունենալու, շնորհալից և ընտիր խօսից համար, ինչպէս նաև ուժով և յստակ ձայնովը, ամենուն ունկնդրութիւնը գրաւեր էր: Ընդհակառակն ուրիշ մաս մը յորս նաև Գոպտըն և Պրայդ իրենց ազդու հռետորութեամբ խաղաղութիւն կը քարոզէին:

Չորս քուաքէրք Բեդրպուրկ նուիրակ գնացին, և սև երկայն զգեստով, գլխարկ ձեռուընին ու խորհրդաւոր կերպարանքով Նիկողայոսի ներկայացան խաղաղութիւն խնդրելու: Կայսրը մեծ սիրով ընդունեցաւ զիրենք. զրկեց նաև առ Կայսրուհին հետաքրքրութեան մը համար:

Բայց Սինուպի արկածը ժողովրդեան մեծ մղում եղաւ ի պատերազմ, և անգղիացի նաւատորմին անգործութիւնը, ապգային պարտութիւն մը համարուեցաւ, որով կը նախատէին զժովակալս, դեսպանը և զպաշտօնեայս:

Պաշտօնարանին նախագահը լորտ Ապրտին, բարեկամ Նիկողայոսի, տակաւին կարելի կը համարէր խոյս տալ պատերազմէ մը: Պաշտօնարանին մէջ իրենն օգնականք էին Կլատտոն, Լորտ Գլարէնտոն՝ Արտաքին գործոց, և Ներքին գործոց Լորտ Փալմէրսդըն, որ պաշտօնարանին մէջ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցողն էր. որ ստէպ սպառնալեօք իր հրաժարականը տալու, կը կառավարէր զԱնգղիա իւր ազդեցութեամբ: Մեծ բարեկամ Նարոլէոնի, ամենայն ջանիւք կը փափագէր միաբան դաշնակցութեան

մը թէ և ի պատերազմ: Սինոպի մարտին լրոյն վերայ Լորտ Ապլրտին տակաւին տարտամ էր և Պաշտօնարանին մեծ մասը չէր ուզեր նոր հրամաններ աւելցնել առ ծովակալս որ ի Վոսփոր, բաւական համարելով Հոկտեմբերի մէջ տրուած պատուէրները. սակայն 10 օր տւեց. վասնզի Նարոլէոն առաջարկեց ծանուցանել Անգղիոյ պաշտօնարանին որ « Գաղղիա և Անգղիա որոշեր էին դիմացը առնուլ որ Սինոպի դէպքը չկրկնուի, և թէ ասկէ վերջը ուս պատերազմի նաւք բռնադատուին քաշուիլ ի Սեվաստափոլ, և յայմհետէ որ և իցէ փորձ մը ընդդէմ օսմանեան դրօշու կամ երկրի, յետս պիտի մղուէր զօրութեամբ »: Այս ծանուցման մէջ լռելեայն պիտի հասկըցուէր Անգղիոյ և Գաղղիոյ Տաճկաստանի հետ ունեցած բարեկամութիւնը: Անգղիա ծանուցագիրը չմերժեց և հաւանեցաւ որ զրկուի առ Նիկողայոս, որով և Փալմէրսդըն պաշտօնարանին մէջ մտաւ, և մտաւ իբր տէր մը: Փալմէրսդընի մտաց համեմատ Ռուսաստանի մեծանալը Անգղիոյ ամենէն մեծ վնասն էր, և որովհետև պատերազմը անխուսափելի էր, լաւ էր որ կատարուէր միաբանութեամբ Գաղղիոյ:

Երբ Արևմտեան դաշնակցաց որոշողութիւնը հաղորդուեցաւ Նիկողայոսի, անմիջապէս յետս կոչեց իր ներկայացուցիչքը ի Լոնտրայէ և ի Բարիզէ. փոխադարձաբար նոյնը կատարեցին միւս երկու պետութիւնք, և քաղաքագիտական յարաբերութիւնք դադրեցան Փետրուար 21ին: Արդէն վեց շաբաթ առաջ անգղիա-գաղղիացի նաւատորմիղը մտեր էր ի Սև ծով:

Այսու հանգերձ Նարոլէոն յետին փորձ մ'ալ ըրաւ առ Նիկողայոս կայսրը ինքնագիր նամակ մը գրելու, յորդորելով զնա ՚ի նպաստ խաղաղութեան. որուն պատասխանեց Չարը որ ինքը երբէք պահանջ մը չունէր արտաքոյ Գաշանց և կը յաւելուր որ « կ'ուզէր ցուցունել թէ 1854ի Ռուսք նոյն էին 1812ի Ռուսաց հետ »:

Անգղիա իր վերջնագիրը զրկեց Փետրուար 27ին և զանհկայ տանողին միջոցաւ պատասխան և խոստմունք

կը պահանջէր որ Ապրիլ 30էն առաջ Ռուսաստան յետս նահանջէ Գանուբի իշխանութիւններէն. և որ և իցէ մերժուլն կամ լռութիւն այս թղթոյս նկատմամբ պատերազմի հրատարակութիւն պիտի համարուէր: Նուիրակին ալ պատուիրուած էր վեց օրէն աւելի չսպասել պատասխանուոյ: Սակայն հինգերորդին մէջ Նէսէլրոտ ծանոյց բերանացի որ Չարը կարևոր չէր տեսներ նամակին պատասխանելու: Քիչ օր վերջը յԱնգղիա ամբաւ բազմութիւն մը գումարուած թագաւորական Գանձատան դիմաց՝ կը լսէր պաշտօնապէս թագուհւոյն պատերազմ հրատարակելը ընդդէմ Ռուսաստանի և Ապրիլ 10ին Գաղղիոյ հետ դաշնակցութիւնը: Արտան գնդապետը Գաղղիոյ կողմէն և սըր Ճոն Պըրկոյն Անգղիոյ կողմանէ հրաման ընդունեցան պատրաստել Օսմանեան պետութեան պաշտպանութեան համար ծրագիր մը և անգղիացի սակաւաթիւ բանակ մը զրկուեցաւ ի Մալթա: Լորտ Ապըրտին բաւական կը համարէր այս ամէնը, նա մանաւանդ կը յուսար որ երկուց պետութեանց դաշնակցութեան ձայնը շատանայ համոզելու զՆիկողայոս ետ կենալու ի պատերազմէ: Ազնուապետական մասը ոչ միայն տժգոհ էր պատերազմէն, այլ և անօգուտ կը համարէր Գաղղիոյ հետ դաշնակցութիւնը: Պատերազմին անունը ախորժանօք կը լսուէր միայն ժողովրդեան և զինուորաց մէջ, և Ապրիլ 10ի դաշնակցութիւնը Վիկտորիայի և Նարոլէոնի մէջ, ասոնց համար մեծամեծ ուրախութեանց պատճառ եղեր էր:

11. Նիկողայոս եւ Փրանկիսկոս Յովսէփ, Բրուսիա եւ Գերմանիա: — Ապրիլ 11ին ալ Ռուսաց կայսրը մասնաւոր հրովարտակով մը կը ծանուցանէր իր ժողովրդեան, որ Ռուսաստանի պատիւը չէր ներքեր յանձն առնուլ Գաղղիոյ և Անգղիոյ առաջարկքը, որոնք քրիստոնէութեան հակառակ կողմը ընտրեր էին ընդդէմ Ռուսաստանի, որ կը կուուէր վասն «բոգոս» հաւատոց:

Արդեօք Նիկողայոս իր եռանդուն և պատերազմասէր բնաւորութեամբ յախճուն ձգեր էր պատերազ-

մի քուէն, արդեօք մինչև այն՝ ատեն վարժ՝ զինուք անվրէպ ի գլուխ հանելու իւր կամքը, զօրութեամբ գահը ելլելու, ընկճելու զԼեհաստան, աշխարհակալել յԱսիա, շիջուցանել յեղափոխութեան հրդեհը ի Մաճառստան, յԱւստրիա. հիմայ ալ նոյն յուսո՞վ կը կատարէր առջին քայլը: Եթէ չկարենանք հաստատել այս կէտերը, բայց կրնանք ըսել որ Նիկողայոս ճամբայ ելած ժամանակ չէր կարծեր դիմացը անգղիա – գաղղիացի դաշնակցութիւն մը գուշակել. և յետ ուրոյ ուս ժողովուրդը պատերազմին սրբազան կերպարանք մը տալով ոտք ելաւ եռանդեամբ, բանակը և ազգը չէր հանդարտեր այլ ևս մինչև որ իր սրբազան համարեալ պահանջքը ձեռք չբերէր: Նոյնը կրնանք ըսել նաև Նիկողայոսի համար, նա մանաւանդ իր խորհրդականք աւելի պատրաստք հպատակելու իր կամաց քան խորհուրդ տալու, միայն դիտողք էին Նիկողայոսի ակնարկմանց, որ անմիջապէս ի գործ դնեն: Նէսէլրոտ, ճարտար և հնարիմաց քաղաքագէտը, Նէսէլրոտ որ կառավարեր էր զԵւրոպէ՝ Թայրանի, Փասլըրիի և Հարտընպէրկի հետ, ինքը միայն ըմբռնած էր որ ինչ վերջ պիտի ունենար այս ինդիրը և պատերազմը, բայց ցանկացող «մեռնելու մեծ ատենադպրի գահուն վրայ, իր դիտողութիւնքը կը պահէր ինքեան և իր ամենէն մտերիմ բարեկամաց՝»:

Յետ Արևմտեան դաշնակցութեան, Նիկողայոսի յոյսը կը մնար Աւստրիոյ և Բրուսիոյ վրայ, որոնք որչափ որ ալ խնդրոյն սկիզբը Անգղիոյ և Փաղղիոյ հետ միարան ջանացեր էին հաշտութեան միջոց մը փնտռել, սակայն երբէք թշնամութեան ցոյց մը չէին տուած Նիկողայոսի, ընդհակառակն Սինոպի յաղթութեան համար գոհութեան աղօթից յեկեղեցւոյ ի Բեդրպուրկ, պաշտօնապէս ներկայ էին Աւստրիոյ և Բրուսիոյ դեսպանք:

1. Իսթաիլ Տըլոր, Պատերազմ. Բ. կայսրութեան. Հ. Ա. Գլ. Բ:

Նիկողայոս երբէք չէր կրնար կարծել որ Փրանկիսկոս Յովսէփ կատարէ Շվարցէնպէրկ իշխանին գուշակութիւնը որ « Աւստրիա իր ապերախտութեամբ պիտի զարմացնէ զաշխարհ » : Տակաւին ամենուն մտաց մէջ նոր էին Նիկողայոսի մատուցած նպաստը Մաճառստանի ապստամբութիւնը նուաճելու համար . անկէ վերջը հաւասար եղբայրութիւն մը տիրեք էր երկու բանակի զօրավարաց և գունդերու մէջ : ՅՕԼ միւց եղած զօրահանդիսի միջոց Նիկողայոս արտասուօք գրկեր էր զՓրանկիսկոս Յովսէփ բոլոր գունդերուն կեցցէններուն մէջ . աւստրիացի զօրավարաց աւելի պատիւ կու տար քան իրեններուն . իբրև պարզ ընկեր մը անոնց գլխաւորաց այցելութեան կ'երթար չքանչաններով և խաչերով զանոնք պատուելով . կարելի՞ էր որ այս եղած մեծարանքը երախտագէտ սրտով չզգային աւստրիացի սպայք և սուր քաշէին իրէն դէմ : Երբ Գաղղիա և Անգղիա կը բռնադատէին զՓրանկիսկոս Յովսէփ իրենց հետ միանալու , Կոման Պուօլ-Շաւէնշդայն , որ յաջորդեր էր մեծանուն Շվարցէմպէրկի , կը ջանար որ խնդիրը մնայ յորո՞ւ պո՞յնէ կը գտնուէր , կամ Տաճկաց և Ռուսաց միաբանելով , առանց խնդրոյն եւրոպական ձև մը տալու : Բայց երբ Ռուսաց զինուորք անցան Գանուբը և Չարին հրատարակութիւնը ընկճեալ ժողովրդոց ազատութեան համար՝ ստոյգ կերպարանք մը տուին պատերազմին , Աւստրիա հարկ էր որ ծանրութեամբ մտածեր , և յիշեր այն գաւառները որոնք թերևս կը հեծէին իրեն ձեռքին տակ , որոց յանկարծ փափագ մը չգայ նոր փորձ մը ևս ընելու :

1854

Յունուար 29ին Օուլոֆ կոմսը վէննա զրկուեցաւ ի Չարէն , խնդրելու որ եթէ չուկեր նիզակակից ըլլալու , գոնեայ չէզոք մնայ : Փրանկիսկոս Յովսէփ փոխադարձաբար պահանջեց որ Ռուսաստան յարգէ Օսմանեան պետութեան ամբողջութիւնը և թողու Գանուբի գաւառները : Երբ Օուլոֆ չկրցաւ ընդունիլ Փրանկիսկոս Յովսէփի առաջարկքը , այն ատեն Աւստրիա մերժեց Ռուսաստանի առաջարկքը : Օուլոֆ թու-

ղուց զՎեննա և Չարը վշտացած բայց հանդարտ սրտով լսեց « Աւստրիոյ ապերախտութեան » լուրը :

Նմանօրինակ ընթացք մ'ունեցեր էր Ռուսաստան Բրուսիոյ հետ յորում մեծ էր Նիկողայոսի¹ ազդեցութիւնը մանաւանդ յարքունիս, վասն զի երկու թագաւորք միշտ բարեկամ եղած էին իրարու : Սակայն Փրեզերիկոս Գուլիէլմոսի մտքէն երբեք պատերազմի մը նիզակակցութիւն չէր կրնար անցնիլ : Վարժ յուսմունս, սիրող մատենագրութեան և վաստակող ի քերդութիւնս, շատերուն ծաղու նիւթ եղած էր իր անկարողութեամբ ի վարչութիւն, և ծանօթ էր ամենուն Անգղիացի Փընչիւնդիատակ թերթին « արքայ Գլիքոյ » անուամբ ներկայացուցած պատկերը : Փրեզերիկոս Գուլիէլմոս իր քոյրը կայսրուհի տուած էր Նիկողայոսի, և այս ընտանեկան կապերը եղած միջոց, չարկ էր որ բոլոր արքունիքը հակի Ռուսաստանի կողմը : Մանդէօֆ ֆէլմիայն յօժար կը տեսնուէր Արեւմտեան դաշնակցութեան . իսկ Վէրլախ, Վրանկէլ, Կրէօպէն գորավարք յօժար էին անմիջապէս դաշնակցութեան մը մտնել Պէնքէնտորֆ ռուս զինուորական դեսպանին հետ : Եոհնա ծեր մարաջախտը ամէն կողմ կը քարոզէր որ « երկու անգամ Բարիզ մտեր էր և անշուշտ էր երրորդ անգամ մ'ալ մտնելու » : Այս մղմամբ էր թերևս որ Փրեզերիկոս Գուլիէլմոս և ոչ իսկ արժանի համարեցաւ Գերմանական Դաշնակցութեան ժողովոյն ներկայացնելու չէզոք մնալու խնդիրը . յորմէ խրախուսեալ Նիկողայոս զՊուտայերկ Պեռլին ղրկեց, նոյն պահանջներով, որովք ղրկեր էր զՕւլոֆ ի Վեննա : Սակայն պահանջողական ձայնը առ ժամս վարանե-

1. Կր պատմեն որ Նիկողայոս իբր որդի մը կը սիրէր զՓրանկիսկոս Յովսէփ և իր սիրոյն առհաւատչեայ, իր սենեկին մէջ առջև ունէր անոր արձանը, զոր և միաբան կը պտըտցնէր ուղեորութեան միջոց : Հապիւ ընդուներ էր Փրանկիսկոս Յովսէփի իր առաջարկքը մերժելու լուրը և ահա Չարին քով մտ սենեկի սպայք բաղխում մը լսեցին յորմը և ջախջախուաք : Նիկողայոս իր որդեգրեալ համարուածին արձանը կը խորտակէր :

ցուց Բրուսիոյ թագաւորը և Փրեզերիկոս Գուլիէլմոս ծանոյց որ չէր կրնար ընդունիլ . զոր Նիկողայոս լսելով, գոչեր է կ'ըսեն . « Ո՛ւր էր թէ օր մը չլայ զիս ձգելուն համար » : Այս խօսքը իր ազգու արձագանգը ունեցաւ յարքունիս, և թագաւորը Ապրիլ 9ին դաշնագիրքը ստորագրելու վարանեալ էր : Թագուհին, բոլոր արքունեաց սւազք և փոքունք Նիկողայոսի կողմն էին ընդհակառակըն Մանդէօֆֆէլ, ֆոն Պոնին զօրավարն պատերազմի պաշտօնեայ և Պունսէն Լոնտրայի դեսպանը ի նպաստէին Արևմտեան դաշնակցութեան : Մանդէօֆֆէլ տեսնելով զթագաւորը ի կողմ արքունեաց միտեալ, տուաւ իւր հրատարականը զոր միջոց մը աւեր էր զթագաւորը իւր կամաց համաձայնեցնելու համար :

Պեւլինու խորհրդարանը, բրուսիացի մեծ քաղաքաց վաճառականական ստեանք ի նպաստ էին Արևմտեան դաշնակցութեան : Պաշտօնեայն խորհրդարանին փոխառութիւն մը առաջարկեր էր, և խորհըրդարանը ընդուներ էր այն պայմանաւ որ կարևոր եղած միջոցին այն դրամը գործածուի ընդդէմ Ռուսաստանի պատերազմի մը համար : Վաճառականական ստեանք կը տրտնջային որ անգղիացի վաճառականք, ոչ ևս ի կիր կ'առնուին բրուսիացի նաւեր, և ի Համպուրկ միւս ազգերէն աւելի պիտի վճարէին ապահովագրելու համար :

Հասարակաց կարծեաց Ռուսաստանի դէմ եղած ժամանակ, Աւստրիա ևս կը բռնադատէր զինքը յարարերութիւն հաստատելու իրեն հետ միարան ընդ Գերմանական դաշնակցութեան : Պարոն Հէս Վեննայէն ի Պեոլին զրկուեցաւ զինուորական դաշանց մը համար, և որչափ որ ի սկզբան Փրեզերիկոս Գուլիէլմոս փափագեցաւ ընդդիմանալու, այսու հանդերձ հաւանեցաւ ստորագրել որ եթէ « Ռուսաստան անպայման ժամանակաւ գրաւէ Գանուրի իշխանութիւնքը կամ փորձ մ'ընէ Պալզանները անցնելու, Բրուսիա 100,000 զինուոր պիտի կեդրոնացնէ յարևելեան գաւառս և մինչև 200,000 եթէ կարևոր

ըլլայ)»: Աւստրիա և Բրուսիա Ապրիլ 20ին ստորագրեցին դաշնագիր մը որով պիտի պահպանէին իրենց գերմանացի կամ ոչ գերմանացի գաւառները:

Գերմանական միւս փոքր պետութիւնք զորս Պէտտը և Ֆորտէն գումարել տուեր էին ի Պամպէրկ՝ չուզեցին ընդունիլ այս դաշնագիրքը: Կը պահանջէին որ Աւագածողովը սահմանէ դաշնակցութեան վերարեւելք որ և իցէ որոշողութիւն մը, կը խնդրէին ոչ միայն դէպ ի Սև ծով դիմող շրերուն ազատութիւնը, այլ և հովանաւորութիւն մը Տաճկաստանի քրիտոնեայ հպատակաց վրայ և Յունաստանի թագաւորութեան անվնաս մնալը. « որուն գերմանացի արքայական ցեղը, իրաւունք ունէր Գերմանիոյ համակրութեան»: Բրուսիոյ և Աւստրիոյ վեհազունք պատասխանեցին Գերմանական դաշնակցութեան, որ իրենց պարզ և անպայման համաձայնութիւնը կարևոր էր, ապա թէ ոչ՝ հոգերնին չէր: Փոքր պետութեանց ներկայացուցիչք թողուցին ըզ-Պամպէրկ, շատերը խոնարհեցան մեծագունին կամաց, Վիւրդէմպէրկ քիչ մը դանդաղեցաւ Ռուսի արքունի ընտանեաց հետ ունեցած յարաբերութեանց համար. և Մէքլէմպուրկ միայն մնաց կղզիացեալ:

Այսպէս Արևմտեան դաշնակիցք զուրկ կը մնային Աւստրիոյ և Բրուսիոյ գործակցութենէ ինչպէս նաև Գերմանական դաշնակցութեան: Սպանիա, Փորթուգալ և մանաւանդ Փիէմոնթ համամիտ էին. Պելճիա, Շուէտ, Տանիմարքս և Նափոլի չէզոք մնացին:

12. Տաճկաստան. — Ռէշիտ փաշա — Սպարապետն էօմէր փաշա: — Թերևս զարմացնէ զմեզ այս ամբողջ խնդրոյն ժամանակ Տաճկաստանի բռնած աներկիւղ և վստահ ընթացքը: Սուլթան Ապտիւլ Մէճիտ չէր յիշեր զՆէզիպ, զԱդրիանուպօլիս և Յունական պատերազմունքը, որոնք տխուր էջեր եղած էին Օսմանեան արդի Պատմութեան. և վստահ ոգւով մտածեր էր պաշտպանելու, իր թագաւորութեան պատիւը առանց խուսափելու եթէ հարկ ըլլար, և ի պատեւրագմէ, եթէ և միայնակ: Նա մանաւանդ մեծ վտանգի մէջ կրնար համարուիլ, երբ Ռուսաց Փրութը անց-

նիւր յԵւրոպական պետութեանց պատերազմի արկած չհամարուեցաւ: Այս դժուարին պարագային Ապտիւլ Մէճիտի պաշտօնեայն Ռէշիտ փաշա ցուցուց որ հմուտ էր մեծապէս ներքին և արտաքին աշխարհավարութեան: Առաջին անգամ ազգին քաղաքական և և կրօնական գլխաւորք յԱզգային ժողով կոչուեցան սահմանելու պատերազմ կամ խաղաղութիւն. և երկու գումարմանց մէջ Ռէշիտ պայծառ և մեկին բացատրեց իւր պետութեան դիրքը: Միանգամայն այս միջոցիս էր որ Եւրոպիոյ վարչութեանց կը շրկէր այն նրբամիտ և ազդու ծանուցագիրքը որովք մեծ համբաւ ստացաւ Եւրոպացի աշխարհավարութեան առջև¹. և երբ ի վեննա գումարուած դաշնաժողովը կը բռնադատէր զԱպտիւլ Մէճիտ ընդունելու Աւստրիոյ ծանուցագիրքը, Ռէշիտ յանձն առաւ, փոխելով սակայն մի քանի բառեր, որոնք ծանուցագրին ուրիշ իմաստ մը կու տային ի նպաստ Տահկաստանի: Յետոյ երբ իր փոփոխութիւնքը չընդունուեցան, նոյն ժողովքին առաջարկութեամբ, պատերազմ հրատարակեց:

Յայսմ արդէն իրեն կամակից ունէր զՄէհէմէտ Ալի պատերազմի պաշտօնեայն, որ անմիջապէս հրամայեց կամաւոր պաշտօնի գումարներ կազմել, որոնք թէպէտ աւելի արգեք մը եղան քան օգուտ վարչութեան, և յորոց մաս մը քիչ վերջը յԱսիա Չարին կողմը անցաւ, բարձրագոյն վճարք մը ընդունելով:

Իսկ օրինաւոր զօրաց զլուիս դրուեցաւ արի և հնարիմացն Էօմէր փաշա, երբեմն Միքայէլ Լադդաս, ծնեալ ի Խրուադս, յամին 1806, որ յետոյ յանցա-

1. Ոմանք այս ծանուցագիրներուն մէջ Գաղղիոյ դեսպանատան մատը ուզեր են տեսնել, կամ Ալիի և Ֆուաատի գրիչները. բայց Ռէշիտ զանոնք գրած ժամանակ, իր քովն ունէր միայն իւր նայ ատենադպիրը՝ Յակոբ:

Մանուցագիրներէն ոմանք որոնք իւր ստորագրութիւնը կը կրեն, վերջին անգամ Արտաքին գործոց մէջ մտնելու ժամանակ, կրնան նետորութեան և պատահաւորութեան օրինակք համարուիլ» Ուղիքի, Արդի Տեղագրութիւն էջ 160:

նաց մը մէջ գտնուելով՝ թողլով գերիստոնէութիւն, ընդունել էր զմահմէտականութիւնը Էօմէր յորջորջմամբ, և արդէն իր քաջութիւնը ցուցուցեր էր յամին 1839 յԱսորիս, յամին 1842 յԱռնաուուտլուք, յամին 1846 ի Քիւրտիստան, և 1848ին Վալաքիոյ զինուորական գլուխ անուանուելով, նոր բարեկարգութիւններ մտուցեր էր իւր գունդերուն մէջ:

Ռուսական բանակը իրեն նպատակ առեր էր ըզվիտին. այս քաղքիս տիրելով կրնար ձեռք բերել Նիշի ճամբան ի Սոֆիա, չրջել ընդ Պալզանս, ոտք հանել զՍերպս, Պոսնիացիս, Իուլդարս և Օսմանեան պետութեան ուրիշ գաւառները, և ձեռք տալ յունական թագաւորութեան: Էօմէր գուշակեց Ռուսաց ծրագիրը, անցաւ Դանուբը, բռնեց զՔալաֆադ Վիտինի դիմաց և կեղծ շարժմամբ մը զթշնամին ձգեց Օլտէնիցայի վրայ, ուր յետ արիւնահեղ պատերազմի մը երեք օր, իմացաւ որ Քալաֆադի բերդերը լմնցեր էին, այն ատեն պարպեց զՕլտէնիցա, և քաշուեցաւ ի Քալաֆադ Դանուբի աջակողմը, այսպէս պաշտպանելով նաև զՎիտին:

ՆՍ. 2

13. Պատերազմունք յԱսիա եւ Դանուբի վրայ. — Պաշարումն Սիլիստրէի. — Յունական գաւառք: — Սակայն յԱսիա Տաճիկք Օրպէլիանի քով յաղթուելով, Արփաչայէն անդին ձգուեր էին, և իրենց մեծ բանակը լախլախուեր էր Ախլցիսայի քով: Քիչ օր վերջն ալ Նախիմոֆ ծովակալը կը խորտակէր տաճիկ նաւերը ի Սինոպ, որուն հետեանքը եղաւ Արևմտեան պետութեանց Տաճկաստանի հետ դաշնակցութիւն մը: Տաճկաստան այս պարագային մէջ խօսք կու տար ի նպաստ քրիստոնէից՝ հաւասարութիւն հպատակաց առաջի օրինաց առանց կրօնից խտրութեան. Քրիստոնեայք կրնային վկայել յատենի արդարութեան. խառնատեանք պիտի հաստատուէ ին պետութեան ամէն կողմ և իւր-ձ տուրքը պիտի վերնար:

ՆՍ 14

Դանուբի վրայ կը յառաջէին գուպարածք և պատերազմունք. Սէլիմ փաշա յաղթող ի Լիտատիա, զՌուսս կը մղէ ի Ռատովա, բայց փութով կը բռնա-

1834
12 Յունիս
14 8.

դատուի դառնալ նորէն ի Քալաֆադ, ուր թշնամին
զինքը կը պաշարէ: Ռուսք այն ատեն կը սկսին յար-
ձակողականը երեք կէտէ ի Կալացէ յԻպրալլայէ և յԻս-
մայլլէ. կը տիրեն Տոպրուչայի և Կորչաքով իշխանը
ընդ հրամանաք Փապեհիչի կը պաշարէ զՍիլիստրէ յու-
րում ամրացեր էր Մուսա փաշայն: Ռուսք կը թողուն
իրենց առաջին ծրագիրը և բովանդակ ոյժերնին կը
կեդրոնացնեն այս քաղքիս առջև: Ահաւոր եղաւ պա-
շարումը, զոր ընդհատեցին վեց յարձակմունք: Մէ-
ջինները թեպէտ մեծ քաջութեամբ իրենք զիրենք կը
պաշտպանեն և թերևս յետին կէտին հասած էին մերձ
անձնատուր ըլլալու, երբ անգղիացի-գաղղիացի բա-
նակին գալուստը և Աւստրիոյ անհանդարտ դիրքը
համոզեցին զպաշարողս թողուլ քաղաքը և քաշուիլ,
յաղթուելով նաև Քավաքալի և ձիւրձէվոյի քով:
Սիլիստրէի պաշարման միջոց մեռեր էր հրամանատա-
րը Մուսա փաշա ճակտին հարուած մը ընդունելով:
Ռուսք թողուցին Գանուբի իշխանութիւնները, զորս
անմիջապէս գրաւեցին աւստրիացի գունդերը հաւա-
նութեամբ Բ. Դրան և ըստ դաշանց Յունիսի:

Յունիս 28

Սեպտ. 20

Սակայն ապստամբական յուզումը կը բորբոքէր
ընդդէմ Բ. Դրան յունական գաւառաց մէջ: Եպիւ-
ռոս, Ետողիա, Ակառնանիա ոսք ելան, Լարիսսա ա-
պստամբաց ձեռքը անցաւ, Չավէլլա անուամբ յոյն
սպայ մը սպարապետ անուանուեցաւ և Թեսսաղիա
մասնակցեցաւ յուզման: Մի և նոյն ժամանակին Ա-
թէնքի վարչութիւնը զինուորական մեծ հանդերձանք-
ներ կը տեսնէր և կը խրախուսէր կամաւոր ձեացած
ասպատակութիւնները, որոնք ընդ իշխանութեամբ օ-
րինաւոր հրամանատարաց և սպայից, պիտի եր-
թային միանալու ապստամբելոց հետ: Ի զուր Բ.
Դուռը բողոքեց, ի զուր Գաղղիա և Անգղիա կը ջանա-
լին համոզել զՅունաստան գոհացնել զԲ. Դուռը, թէ-
պէտ Չավէլլա յաղթուեցաւ ի Փիտա և Կրիվաց Մէց-
ցովոյի քով, այսու հանդերձ Յունաստան նոյն յուզ-
ման մէջ էր երբ Տորէյ զօրավարը հասնելով ի Պի-
րէոն բռնադատեց զՈթոն թագաւորը՝ թէ ոչ իրենց

հետ դաշնակցելու, գոնեայ սակայն չէզոք մնալու, և 3000 հոգևով պահանորդ մը ձգեց ի Պիրէոն. ինքը շարունակելով զուղին յԱրևելս:

14. Պատերազմ Պալթիկի վրայ. — Առումն Պորսմունտի: — Ասունք պատահած ժամանակ անգղիացի նաւատորմիդ մը ընդ հրամանատարութեամբ հինաւուրց Նէփըր ծովակալին, միաբանութեամբ նաև գաղղիացի նաւերու կը նաւարկէր ի Պալթիկ ծով, որպէսզի համոզէ գՇուէտս միաբանելու Արևմտեան դաշնակցաց հետ, տիրելու ոռւս Քրոնշդատ բերդին որ դռնն կրնար համարուիլ Բեդրպուրկի, և այսպէս զարհուրեցնելու զոռւս մայրաքաղաքը՝ մերձաւոր պաշարմամբ: Այն օրը յորում Վեննայի ծանուցագիրը կը մեկնէր ի Բեդրպուրկ, երկու նուատորմիդք կը բաղխէին զՊորսմունտ յԱրևմտից, որ ոռւս Ալանտ կղզեաց մէջ փոքրիկ բերդ մ'է: Պատերազմը տևեց առաւօտեան ժամը չորսէն մինչև երեկոյեան չորս: Մէջի հրամանատարը երկու ժամ զինադադարումն խնդրեց որ շնորհուեցաւ իրեն և ժամը չլինցած ինքը սկսաւ կրակը: Գաղղիացի որսորդք մեծ քաջութեամբ մրցեցան և առաւօտեան ժամը երեքին բերդը անձնատուր եղաւ, յորում էին սպայ մը և երեսուն զինուորք: Օգոստոս 15ին առաւօտ Անգղիացիք հիւսիսային բերդը կը սկսին ծեծել, և վեց ժամուան մէջ հիւսիսային բերդն ալ անձնատուր կ'ըլլայ: Յետոյ անգղիացի չորս նաւք և երկու գաղղիացիք կը սկսին կրակ թափել մեծ բերդին վրայ. այն ատեն դղեկին մէջէն սպիտակ դրօշը կը կանգնուի և նաւատորմէն երկու սպայք կ'երթան առ Վարիչը որ անձնատուր ըլլայ: Գաղղիացուց կորուստն էր ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 40 հոգի, իսկ Անգղիացուցը չորս մեռեալք և տասուերկու վիրաւորք: Բերդը քաջութեամբ պաշտպաններ էին երկու դնդապետք՝ Դերչ և Ժարլէն, առաջինը շուէտացի և երկրորդը գաղղիացի. Ֆինլանտացի գունդը իր զէնքերը յանձնեց էր յետ գայնս ջախջախելու:

Որչափ որ նաւատորմին կռիւը մեծ ազդեցութիւն

մը չունէր աշխարհավարական գործոց վրայ և ուրիշ արդիւնք մը չունեցաւ բայց ձեռք ձգել քանի մը վաճառականական նաւեր, այրել հանդարտ և խաղաղարեակ ծովանիստ քաղաքներ և կամ փճացնել նաւթի քանի մը շտեմարանք, այսու հանդերձ իր մեծ արձագանգը ունեցաւ յԱնգղիա և մանաւանդ ի Բարիզ ուր ժողովուրդը պատրաստ է անդէն զմայլելու. Անկելանոցին թնդանօթը որոտաց և Պարակէ տ'իլիէ Պորսմունտի յաղթականը Գաղղիոյ մարաջախտ աւնուանուեցաւ :



ԳԼՈՒԽ ԽԳ

ԴԱՇՆԱԿԻՑՔ Ի ՂՐԻՄ-ԱԼՄԱ ԵՒ ԻՆՔԷՐՄԱՆ

1. Դաշնակից բանակը — Սպարապետը. — 2. Դաշնակիցը ի կալիփոլի, Վառնա — Թնդանօթակոծու թ Օտէսայ. — 3. Ղրիմ. Դաշնակիցը կր հասնին յԵւփաղորիա. — Բանակ Մէնչիքովի. — 4. Պատերազմ Ամայի. — 5. Դաշնակիցը Սէվաստափոլի առջև — Զօրավարն Գոդլէպէն. — 6. Մաղձախտ. — Մահ Սէնդ Առնոյի Քանրուպէր սպարապետ. — 7. Պաշարու Սէվաստափոլի. — 8. Պատերազմ Պալլըլավայի. — « Վեցհարիւրք » — 9. Պատերազմ Ինքերմանի — Ռուսք և Անգղիացիք. — 10. Ռուսք և Գաղղիացիք — Յաղթութիւն Դաշնակցաց. — 11. Դաշնակիցը յետ Ինքերմանի. — Հիւսիսային նաւատորմիդն :

1. Դաշնակից բանակը. — Սպարապետը : — Յետ Ա կայսրութեան հսկայական պատերազմաց, առաջին անգամ կ'երևէր ցամաքին վրայ միաբան գաղղիացի և անգղիացի բանակը որ բովանդակ Եւրոպիոյ ուշադրութիւնը գրաւած էր ի Դանուբ և ի Պալթիկ եղած պատերազմին ժամանակ : Երկուց դաշնակից Տէրութեանց ցամաքային բանակն էր 60,000է կազմեալ. 40,000ը գաղղիացիք էին, 20,000ը անգղիացիք, և որոց կը հրամայէին երկու արիասիրտ զինուորականք Սէնդ-Առնօ մարաջախտը Գաղղիոյ մասին և Լորտ Ռէկլան Անգղիացուց :

Գաղղիացի հրամանատարը Սէնդ-Առնօ ծանօթ է մեզ արդէն իր քաջութեամբ եթէ յԱլճէրի և եթէ ի հայրենիս իւր այն նշանաւոր դերովը զոր ունեցաւ Գեկտեմրեր Չի պետական հարուածին մէջ : Սէնդ-

Առնօ պաշեց իր նախկին զինուորական անունը նաև ներկայ պատերազմիս մէջ :

Իսկ Լորտ Ռէկլան ծնեալ յամին 1788 ընդ ա- նուամբ Ֆիցոյ Սոմըսըդ բարձր դաստիարակութիւն մը ընդունած էր, և 1804ին մտեր էր ի բանակն : Սիր Արդուր Ուէլլէզլի, յետոյ դուքս Ուէլլինկթոնի, զԼորտ Ռէկլան իւր սպայակուտին մէջ ընդունեցաւ, և իւր ամէն պատերազմաց մէջ զանիկայ համհարդ ունէր : Յետոյ Վերանորոգման միջոց ի Բարիզ մեծ պատուով կատարեց Անգղիոյ դեսպանութեան Ատե- նադարութիւնը : Նաբոլէոնի Լյպայէն դառնալովը, Սոմըսըդ իւր նախկին արհեստին դարձաւ և ի Ուա- թէրլու պատերազմեցաւ Ուէլլինկթոնի քով : և ուր հրացանի հարուած մը ընդունեցաւ իւր աջ թևը : Այսուհանդերձ ձախ թևով ի գրութիւն վարժելով, պատերազմէն վերջը կրցաւ նորէն իր նախկին պաշ- տօնը վարել ի դեսպանատան Բարիզու, մինչև յա- մին 1819, յորում կանչուեցաւ յԱնգղիա հրազինուց սպարապետի ատենադպիր պաշտօնով : Քիչ վերջը Ուէլլինկթոնի հետ Նիկողայոսի օժման ղրկուեցաւ . և մինչև դքսին մահը յամին 1852, անոր հրամանաց ներքև մնաց իբր զինուորական ատենադպիր հեծե- լագօրուն մեծ սպարապետի :

Քիչ վերջը անուանուեցաւ սպարապետ հրազինուց և ընդհանուր զօրավար, որ յԱնգղիա յետ Ֆէլտ- մարաջախտութեան, ամենէն մեծ պատիւն է : Արևելքի բանակին գլուխ անուանուած ժամանակը 66 տարուան էր, սակայն արի կերպարանք մ'ունէր, և ազնուական վարմունք, և եթէ ոչ զինուորական մեծ հանճար մը, սակայն շատ պատերազմաց մէջ գտնուելով մեծ փորձ մը ստացեր էր :

Լորտ Ռէկլան և Սէնդ-Առնօ, այս երկու հակա- ուակընդդէմ բնաւորութեամբ հրամանատարք, առա- ջին անգամ միարան կը գտնուէին ժողովքի ի Գիւլ- լըրի, ամենայն հնարք մտածելու որպէս զի երկու բա- նակաց մէջ երբէք տհաճութիւնք չծագին : Ժողովքին նախագահ էր կայսրը . բաց յերկուց հրամանատա-

րաց կային նաև Հերոնիմոս իշխանը, Քէմպրիճի դուքսը վայրան մարաջախտը և Լորտ Ռոս: Երկու ազգաց մէջ ջանացուեցաւ ամենայն միտարանութիւն հաստատելու, պահելով իւրաքանչիւրին իրեն զինուորական դասակարգութիւնը: Մէնդ Առնօ փափագեցաւ որ սաճկական բանակին ալ սպարապետ անուանուի, որուն սակայն ընդդիմացան Լորտ Ռէսքլիֆ և Լորտ Ռէկլան. մարաջախտը ետ կեցաւ իր խորհուրդէն:

2. Դաշնակիցք ի Կալիպոլի, Վառնա. Թնդանօ-Թուկոժումն Օտեսսայի: — Երկու բանակները ճամբայ ելան ըստ ծրագրին զոր ներկացացուցեր էին զօրավարն Պուրկոյն և հազարապետն Արտան, որոնք բանակաց ցամաք ելլելու և միանալու յարմար տեղ ցըցուցին զԿալիպոլի փոքրիկ քաղաքը Տարտանէլլիի (Չանաք գալէսիի) բերանը ուր սակայն մեծաւ դժուարութեամբ ելաւ բանակը՝ հանգիստ ծովափնեայ մը չունենալով: Հոնկէ Քանրոպէր որ առժամանակեայ հրամանատարութիւնը ունէր, զՊոսքէ իր գունդով Շումլա զրկեց երթալ քննելու Օսմանեան բանակը և դատել եթէ ինչ օգնութիւն կրնային յուսալ անկէ: Պոսքէ Ապրիլ 14ին Աւագ Ուրբաթ օր հասաւ ի Վառնա ուսկից յետ երկու աւուր ի Շումլա և հոն գտաւ զԷօմէր փաշա Օսմանեան բանակով բաղկացեալ 100,000 անձանցմէ և ամրացեալ Շումլայի անուանի դիրքով: Ամենայն գաղղիացի զօրավարք միաբան են գովելու Էօմէր փաշայի զօրծունէութիւնը և քաջութիւնը: Շումլայէն Պոսքէ ուղղուեցաւ յԱդրիանուպօլիս ուր պիտի հասնէր քիչ վերջը ընդհանուր հրամանատարը Մէնդ Առնօ: Հոն յետ փոքր տարաձայնութեանց պատերազմը սկսելու տեղոյն վերայ, սահմանուեցաւ որ անցնին ի Վառնա, մինչև որ որոշուի Ղրիմ արշաւելու ծրագիրը:

Մարաջախտն Մէնդ Առնօ կը հասնէր Մայիս 7ին ի Կալիպոլի և 37,000 բանակի մը զլուրս կ'անցնէր, յետ զօրահանդէս մը կատարելու, նախ Մարմարայի եզերքը գունդերը հրաման ընդունեցան չուելու ի Հիւսիս. վասնզի Ռուք Մայիս 11ին Սիլիստրի պաշա-

րեր էին և Սէնդ Առնօ և Լորտ Ռէկլան էօմէր փաշայի աղաչանօք, որոշեր էին օգնութեան դիմելու: Սակայն Վառնայի մօտեցեր էին երբ լսեցին Ռուսաց նահանջը և Տասնկաց մեծ քաջութիւնը: Սէնդ Առնօ փափագելով Օգոստոս 15ի կայսեր տօնին առթիւ յաղթութիւն մը ներկայացնել անոր, ՂՔանրոպէր և ըզՊոպէ ունենալով նաև յառաջապահ զէպիինաս զօրավարը զրկեց դէպ ի Տոպրուճա, հոն մնացեալ ռուս ջոկատները վանելու: Սակայն այս ճահճալից երկրին մէջ ուր քիչ առաջ ռուսք 7000 հոգի կորսնցուցեր էին ի մաղձախտէ, ճարակեցաւ ցաւը նաև գաղղիացի բանակին մէջ, մինչև զինուորք բաւական չէին հիւանդները կրելու ի դարմանատեղին: Անօգուտ էր այլ ևս շուել ի Քէօսթէնճէ, և 10,500 զինուորէ ուրոնք մեկներ էին Յուլիս 25ին Վառնայէ, Օգոստոս 10ին վերադարձին ժամանակ 6000 հոգի մաղձախտին ճարակ եղեր էին, առանց երբէք ռուս գունդի մը հանդիպելու, բայց թէ քանի մը խազախներու ի Քակարլիք զորս դժուար չէր փախցնելու¹:

Իաշնակից նաւատորմիդը ևս անգործ չմնաց: Ֆէրէ պատերազմական նաւը յՕտեսսա ներկայացեր էր բանակցութեան դրօշակով խնդրելու զանգղիացի հիւպատոսը և հպատակքը: Օտեսսայի բերդերը իր խնդրանաց՝ թնդանօթի հարուածով պատասխանեցին, որով անմիջապէս ծովային զօրութեան ջոկատ մը ներկայացաւ քաղաքին առջև փոխարինութիւն մը պահանջելու ազգաց իրաւանց դէմ եղած զանցառութեան: Ջոկատին հրամանատարը թնդանօթակոծեց բերդերը, այրեց զինուորական նաւահանգստին մէջ եղած նաւերը, յարգելով սակայն որ և է առանձնական ստացուածք:

Լորտ Լայընս (Lyons) պատուէր ունէր քանի մը պատերազմիկ շոգենաւուք, փճացնելու Ռուսաց պաշտպանողական բերդերը Ղրիմու և Կովկասու ափուկքը:

1. Այս է գաղղիացի պատմագրացմէ ոմանց «Պատերազմ Քակարլիքի» կոչածը:

Սակայն Ռուսք արդէն իրենք կատարեր էին զայն. Անափա, Ռէտուդ քալէ և Սոխում քալէ, աւերակ դարձեր էին ի կամաւոր հրկիզմանէ, երբ Լորտ Լաւրնս անոնց դիմաց երևցաւ:

Եւրոպական երկու մեծ պետութեանց ուժոյն դիմաց, յայտ էր որ Ռուսաստան պաշտպանողական ընթացք պիտի բռնէր. նա մանաւանդ Դաշնակիցք յարձակողական ամենայն հանդերձանք կը տեսնէին և Յուլիս 21ին ժողովքով, սահմաններ էին բաղխել զՍէվաստոփոլ, Ղրիմու թերակղզւոյն վրայ ռուսական ժովային ամուր քաղաքը, և ուր կեդրոնացեալ էր Նիկողայոսի կազմած նաւատորմիղը:

3. Ղրիմ. Դաշնակիցք կը հասնին յԵւփաթորիա. Բանակք Մէնչիքովի: Զենք գիտեր որո՞ւն ընծայել Ղրիմ արշաւանաց կէտ ընտրելու սկզբնական գաղափարը: Նարոլէոն զայն իրեն ուզած է գրաւել. նոյնը ըրած են Լորտ Փալմէրսդըն, Նիուքասլի դուքսը: Եթէ Քինկլէքի լրածն ընդունինք, թայմս լրագիրը նախ զՂրիմ արշաւանաց յարմար կէտ անդրադարձնել տուաւ ի Վառնա պատերազմական ժողովքին մէջ: Շղայն զօրավարը, կամ լաւ ևս ըսել, Ֆուատ փաշա, վասնզի այսպէս կոչուեցաւ յետ ընդունելու զմահմէտականութիւն, միաբան Շամիլի որդւոյն հետ, կը պընդէր արշաւանաց կէտ ընտրել զՌուսաստան Ասիոյ, և զանոնք վանել ի կովկասէ: Սակայն եթէ չենք գիտեր զայն թելադրողին անունը, այս ծանօթ է մեզ որ Ղրիմու զինուորական տեղագրութիւնը շատ քիչ ծանօթ էր դաշնակից զօրավարաց, և թերի ռուս գունդերուն վրայ ունեցած տեղեկութիւննին, որոց թիւը 45,000էն մինչ 170,000 կը բարձրացնէին. և եթէ ընդունինք ևս գաղղիացի պաշտօնական գրչին լրածը, երբ ծածուկ հեռագիր հասաւ առ հրամանատարս դիմել ի Սէվաստոփոլ, զանազան տհաճութիւնք ծագեցան: Նոյն իսկ Սէնդ Աոնօ յօժար չէր այս արշաւանքին¹. այսու հանդերձ հարկ էր հրամանին յարմար

1. Յիշատակարանք Ղրիմու մարտին 1854—1856, կար. Ֆէյ գնդապետ. երբե՞ն համհարզ Պոսքէ մարաշախաին:

1884
Սեպտ 4

րիլ և յետ ժողովով կարգի դնելու ամենայն բան, պաշարումը պաշտօնապէս ծանոյց նաև Ռուսաց:

Փութով յետոյ Դաշնակից բանակք ճամբայ ելան, 50,000 հոգի՝ որոց հետ միացեր էին նաև 7000 տաճիկք ընդ հրամանատարութեամբ Սիւլէյման փաշայի: Նախ Գաղղիացիք և Տաճիկք բացին ուղին, երկու օր վերջը Անգղիացիք. և ըստ նկարագրութիւն տեսողաց՝ ահաւոր և ծանր կերպարանք մ'առած էր ծովը, այս բազմաթիւ նաւերուն ներքև մինչև հասան Ղրիմու գիւմաց: Անգղիացի հրամանատարը կը գտնուէր ի Գէրըտոք և Սէնդ Առնօ ի Վէլ քը Փոքի, տկար առողջութեամբ մը, և ուր գումարուեցան առաջին անգամ հազարապետքն Սդիլ և Դրոշիւ, զօրավարն Ռոս, ծովապետքն Տընտաս, Համլէն, Պրիւս և Պուէ Վիլլոմէ սահմանելու զօրաց ցամաք հանելու կէտը: Երկրորդ գումարմամբ մը ի Գէրըտոք որոշուեցաւ հետևելու նախկին ծրագրին և նաւերը ուղղուեցան Սէփաստորդի հիւսիսային կողմը: Հետևեալ կիւրակէն Քէրըտօք և Փրիմոկէ նաւերը քաղքին այնքան մօտէն անցան մինչև կը լսուէին եկեղեցեաց զանգակները. այս երկու նաւերուն ետևէն կու գար ուրիշ նաւ մ'ալ որուն կը հրամայէր Լորտ Լայընս, և յորում կը գտնուէին ափունքը քննելու համար զօրավարքն Քանրոպէր, Մարդէնիրէյ, Պիգօ, փոխան ծովակալն Պուէ Վիլլոմէ, հազարապետքն Դրոշիւ և Լըպէօֆ, զօրավարքն Ռէկլան, Պրաուն և Պըրկոյն: Կը գիտեն որ Ռուսք երբէք չեն փոխեր իրենց նաւերուն դիրքը, այլ միայն կ'ամրացնեն Կադչա և Ալմա գետերուն վրայ զօրութիւննին: Կը սահմանեն այս վերջին գետին բերնին քով ցամաք ելլելու, ուր աղէկ խոտ կը գտնուէր ձիոց ձարակ. և հին պարսպապատ հիւանդութեանց արգելանոց մը, որ զինուորաց պատսպարութիւն կրնար ծառայել. յայնմ հետէ չուել Եւփագորիայի վրայ: Փութով Սդիլ և Դրոշիւ հազարապետք թարգմանով մը և քանի մը զինուորօք զրկուեցան ամենէն մօտ գիւղը ուր ուրիշ արգեք չտեսան բայց եթէ զինուոր մը յարգելանդին դուռը, որ հաւատարիմ իրեն եղեալ հրամանաց,

դաշնակցաց ցամաք ելլելուն արգելք մը չցուցուց, միայն թէ անոնք հաւանին պարտուպատշաճ առողջապահական կանոնաց ենթարկուելու :

Այսպէս գունդերը ելան մօտ յԵւփագորիա, որուն մօտ էին Ինքէրման հին քաղքին աւերակները և որոց քովէն կը թափի Չէճնայա գետը : Չէճնայայի հարաւակողմը կը գտնուէր Սէվաստոփոլ, երկննալով մինչև Քերսոնեսոնի տափարակը : Աւելի յարեմտեան հիւսիս ձգուած է լերանց շղթայ մը, որոց մէջէն կ'անցնի Ալմա գետը և որուն ափունքի բարձունքը գրաւեր էր Մէնչկոյով իշխանը 43,200 զինուորաբ :

4. Պատերազմ Ալմայի : — Գաշնակիցք ըմբռնեցին որ Սէվաստոփոլի վրայ փորձ չըրած, հարկ էր նախ վանել հոնկէ այդ գունդերը և բռնել գետին ձախ ափունքը : Գետը հինգ տեղէ կարելի էր անցնիլ : 19ին երեկոյեան պատերազմին ծրագիրը հաստատուեցաւ . Պոպէ իր Բ զօրաբաժնով պիտի յառաջէր . իրեն պահեստ ունենալով տաճիկ գունդերը, առաւօտեան ժամը 5ին դեպ յԱլդամաքի կամուրջը, ուսկից պիտի անցնէր բանակին կէսը, միւս կէսը պիտի կտրէր զգետը յաւազակուտէն : Ափրիկեցի որսորդաց ջոկատ մը միաբան պիտի շուէր Պոպէի : Ի ձախն Անգղիացիք պիտի յառաջէին բռնադատելու մի և նոյն միջոցին թշնամւոյն ամբ այս կարգաւ՝ Լէսի-Իվընս և Պրաւն զօրաբաժինները ի ձախմէ Նարոլէոն իշխանին, ունենալով ի յետուստ յերկրորդ կարգի Ինկլանտի և դուքս Քէմպրիճի զօրաբաժինքը : Քէդքար զօրաբաժինը և հեծելազօրը էին ի ծայր յառաջացեալ ձախին, ճակատելու թշնամւոյն եթէ այդ կողմէն դարձ մը կատարէր : Ժամը եօթին միջոց երբ այս շարժումը յետ յաջողելու ձգէր առ ինքն զթշնամին, այս ատեն ամբողջ կեդրոնը յառաջ պիտի խաղար անցնելով զԱլմա ի Պուրլիուք և յԱլդամաք, և պիտի բաղխէր թշնամւոյն դիրքը :

Երկրորդ օրը ծրագրին կատարումը երեք ժամ յապաղեցու Անգղիացւոց դանդաղելովը, և կէսօրուան մօտ էր երբ Պուա զօրավարին ջոկատը հասաւ յաւա-

զակոյտս և տ'Օղըմար զօրավարինը յԱլդամաք, միաբան գետը անցնելով բռնելու գետափնեայ բարձունքը:

Ըստ վկայութեան ռուս կայանաւոր սպայի մը, Մէնչիքով կը համարէր որ դաշնակից բանակը զգետը պիտի փորձէր անցնելու ի Պուրլիուք որով և մեծ կարևորութիւն չէր տուած օգնութիւն յղելու ի ձախն: ՅԱլդամաքէ մինչև ի Դարխանլար ամէն կողմ հրացանաձիգք սփռեր էր և ամբարտակք բարձրացուցեր էր Պուրլիուքի կամրջէն անդին ի ծայր հովտին՝ որ կը հատանէր Սէվաստոփոլի ուղին, և այս կամրջէն վեր ընդ բովանդակ երկայնութիւն գետին բռներ էր զօրութեամբ ռուսական աջը: Միանգամայն պահեստ գնդեր պատեր էին Դելիլի-ֆ կոչուած տեղւոյն շրջակայքը:

Ժամը 12 1/2 էր Պոսքէի զօրաբաժինը անցաւ զԱլմա և զուաֆներու ջոկատ մը եռանդուն յարձակմամբ բռնեց բլրոց գագաթունքը, ուր հասաւ ամբողջ զօրաբաժինը հրանօթիւք և կրակը սկսաւ ի յետուստ թշնամւոյն, ձախ կողմէն: Մէնչիքով ձիու վրայ մերձ ի Դէլէկրաֆ, միշտ ուշադիր էր գաղղիական ամբողջ բանակին շարժման, երբ սպայ մը դիմելով իմացուց իրեն Պոսքէի զօրաբաժնին բլրոց վրայ երևնալը հրանօթիւք հանդերձ: Մէնչիքով դարձնել տուաւ ի ձախ շորս ջոկատ և 40 կտոր հրանօթ որոնք ահաւոր կրակ մը սկսան թափել թշնամւոյն վրայ: Զուաֆք սկսան վարանիլ, երբ Պոսքէ հասնելով արաբացի լեզուախօսեցաւ անոնց և այն ատեն զայրացաւ մարտը: Մէնչիքով առանց հետևակը շարժելու, ուզեց հեծելոց գնդով մը Ուլուքուլի հեղիղատէն անցնելով պատել զԳաղղիացիս բայց Դաշնակից նաւատորմի զընդակները ետ դարձուցին զիրենք:

Այս միջոցիս է որ ամբողջ գաղղիացի բանակը շարժեր էր դէպ յԱլդամաք, և Մէնչ-Առնօ հրաման տուած էր ընդհանուր բաղխման և ահաւոր կրակ մը թափելով կը յառաջէր դէպ յԱլմայի բարձունքը, ուղղանկիւն կազմելու Պոսքէի հետ և բաղխելու զ'Դէլէկրաֆ, ուր Ռուլք կեդրոնացուցած էին իրենց զօրու-

թիւնքը և ուր ահաւոր եղաւ մրցումը: Մէնչիքով դատեց որ ի զուր կը վտանգէր գունդերը այսպիսի կրակի մ'առջև մանաւանդ որ կը հասնէին ևս Անգղիացիք. հրաման տուաւ նահանջելու դէպ ի Սէվաստոփոլի ուղին, անշուշտ երջանիկ համարելով ինքզինքը, որ թշնամին բաւական հեծեալ չունէր զինքը հալածելու համար:

Անմիջապէս կոուէն ետքը մարաջախտը իր ուրախակցութիւնքը ըրաւ առ Պոսքէ զօրավարն որուն մեծապէս կը պատկանէր օրուան յաղթութիւնը. Քանրոպէր ևս վէրք մը ընդուններ էր ի Դէլէկրաֆ և նորէն ձի ելլելով դիմեր էր ի գլուխ ճակատուն: Իսկ Անգղիացիք թէպէտ քաջ, բայց դանդաղ գտնուեր էին: Մեծ եղեր էր նաև ոռու սպայակուտին անձնանուիրումը: Ալմայի պատերազմին մէջ Ռուսաց կորուստն եղեր էր 8000, դաշնակցաց 3,305: Քաղղիացւոց կողմէն 140 մեռեալ, 1,200 վիրաւոր. Անգղիացւոց կողմէն 343 մեռեալ, 1622 վիրաւոր:

Երկու կողման եղած մեծ կորուստներուն պատճառաւ, կը յուսային ժողովուրդք որ Ալմայի պատերազմը վճռական մարտի մը ձև ունենայ. նա մանաւանդ թաթար մը որ այս յաղթութեան լուրը տարեր էր ի Կ. Պօլիս, աւելցուցեր է, կ'ըսեն, որ Սէվաստոփոլ ալ առնուեր է: Այս լուրս իր շրջանը ըրաւ ընդ բովանդակ Եւրոպա, ոչ միայն զժողովուրդս այլ և ի վարչութեանց զմանս խարելով: Ի Քաղղիա մեծ եղաւ ուրախութիւնը և ժողովուրդը տօներու հանդերձանաց մէջ էր, երբ ստուգութիւնը յերևան եկաւ և ժողովուրդը ճշմարտութիւնը իր երևակայածէն նուազ գտնելով, անարգեց և մոռցաւ Ալմայի յաղթութեան արդիւնքը, որ մեծ քայլ մ'եղեր էր դէպ ի Սէվաստոփոլ:

1. « Չկարենալով հալածել զթշնամին, ստիպուեցանք 4 1/2ին պատերազմի դաշտին վրայ համբար դնելու. այս առաջին պատերազմին մէջ բարոյապէս միայն պատելով զԹուսս, վասն զի բանակին անարատ և ամբողջ գրեթէ կը նահանջէր »: Տէյ:

5. Դաշնակիցք Սեվաստոփոլի առջեւ . Զօրավարն Դոդլեպէն : — Դաշնակիցք պատերազմէն վերջը յետ երկու օր թաղելու մեռեալքը , հոգալու վիրաւորքը և ուրիշ ամէն պէտք եղած հանդերձանքը , Սեպտեմբեր 23ին չուեցին դէպ ի Կադչա գետը , և երկրորդ օրը հասան ի Պէլպէք առանց թշնամեաց գունդերու հանդիպելու , բաց ի սակաւ պահանորդաց գետին բերանակողմը : Սեպտեմբեր 25ին յետ զանազան արգելից և դանդաղութեանց , բանակին մաս մը հասաւ ի Մաքէնզի , ուսկից իր առջևն ունէր զՍէվաստոփոլ գեղեցիկ և ամուր քաղաքը շինեալ յամին 1786 Կատարինէ Զարուհույն ջանիւք Ախդիար աւանին քով : Ռուսաստան զայն շինելու ժամանակ իրեն նպատակ առած էր Կոստանդնուպօլսոյ դէմ ուրիշ ծովային ամբուլութիւն մը բարձրացնելու , և արդարև Սէվաստոփոլ զինուորական նաւահանգստի մը կարևոր եղած ամբուլութիւնքը ստացեր էր : Նաւահանգստին մուտքը , լայն 850 մէդր , ձախէն կը պաշտպանէին Կոսդանդին և Կասարինէ բերդերը , աջ կողմէն Արգելանոցին և Աղեքսանդրի բերդերը . ներսը 5,612 մէդր երկայնութեամբ և 1,600 մէդր լայնութեամբ նաւահանգստի մէջ խարխիս նետած էին պատերազմական նաւերը : Հիւսիսային կողմը կը գտնուէր Պէլպէք տափարակը , ուսկից ի ստոր էին Սիէվէռնայա , Սուխայա , Փանիոդո և Կոլանտիա ամբուլութիւնքը . որոնք կը պաշտպանէին քաղքին հիւսիսակողմը : Իսկ հարաւակողմը Հրազինուց նաւահանգստին և Նաւարանին մէջ ամփիթէատրոնի ձևով կ'ամբառնար քաղաքը երկըննալով մինչև Քերսոնի տափարակը :

Սէվաստոփոլ երկու մաս կը բաժնուէր , բուն քաղաքը յԱրևմուտս և յԱրևելս Քարապէլնայա արուարձանը : ՅԱրևելակողմը բազմաթիւ ռուս աշխատաւորք կը վաստակէին սպիտակ ամբարտակ մը ամբառնալու , որ կը տիրէր ամէն դիրքերու վրայ , և որ իր կարևորութեամբ քիչ վերջը Մուլտաֆ անուամբ կեդրոն և նպատակ պիտի ըլլար ամենայն զինուորական գործողութեանց : Մէնչիքով իւր նահանջէն վեր-

ըը, ժամանակ ունեցաւ նորանոր օգնութեամբք պահանորդքը բազմացնել և նոր զօրաւոր բերդեր ամբառնալու, յորս պիտի անմահանար Իողլէպէն Հրագինուց հանճարեղ սպայն: Մէնչիքով միանգամայն նաւահանգստին մուտքը թշնամեաց անմերձենալի ընելու համար, եսթը պատերազմական նաւ ջրասոյց հոն ընկղմեց:

Իաշնակիցք քաղաքին մօտեցած ժամանակ, համոզուեր էին որ աւելորդ էր յարձակումն փորձել այդպիսի պարսպաց դէմ, և հարկ էր սպասել նոր հրագինուց և պաշարման կազմածոց, անոր համար Սէվաստոփոլի հարաւակողմը ճամբար դրին, որպէս զի առ ժամ թշնամուոյն յանկարծական յարձակմունքներէն պաշտպանուին, պահելով միանգամայն ծովուն հետ յարաբերութիւննին: Անգղիացիք տեղաւորուեցան ի Պալլըբալա և Գաղղիացիք ի Գամիէշ, սպասելով պատերազմի հրամանին, ի մեծ ցաւ Սէնդ Առնս մարաշախտին որ հիւանդութեամբք ծիրեալ, օր մը առաջ կը փափագէր պատերազմը աւարտել յողթութեամբ մը:

6. Մաղծախտ. — Մահ Սէնդ Առնոյի. Քանրուպէր սպարապետ: — Կային նաև մեծագոյն պատճառք իր փափագանաց, և որոց յոյժ դժուարին էր տանել դարմանը, և էր նախ դաշնակից գլխաւորաց անհամաձայնութիւնը և երկրորդ մաղձախտը, որ երթալով կը զայրանար բանակին մէջ, մանաւանդ յետ Ալմայի պատերազմին: Հիւանդութեան առաջին գոհերէն մին եղաւ նաև մարաշախտը, որ 25-26ին գիշերը բռնուեցաւ, երբ մտադիր էր 26ին օրը ի հիւսիսէ Սեվաստոփոլի վրայ ինկնալ: Զկարենալով այլ ևս ձի հեծնել, Մէնչիքովի յԱլմա գերեալ կառքով կը տեղափոխուէր: 26ին առ ինքը կոչեց զՔանրուպէր զօրավարը և հրամանատարութիւնը անոր յանձնեց և 29ին մեռաւ Պերդուէ նաւուն վրայ մարաշախտն Սէնդ Առնս, որ լի բարի յատկութեամբք և թերութեամբք, իր յանկարծախալ հանճարով և յանդգնութեամբք դարուս անուանի զօրավարաց կարգն անցած է: Վերջին պատերազմիս մէջ «կը խնդրէր միայն

„Աստուծոյ, կ'ըսէ հազարապետն Տէյ, որ կեանքն առնու իրմէ յետ Գաշնակցաց յաղթութեան. իւր թղթերը վկայ են որ յուզեալ կեանք մը կ'աւարտէր քրիստոնեայ մահուամբ» : Պէրդոյէ իւր մարմինը բերաւ ի Գաղղիա, ողջունուելով ընդ բովանդակ երկայնութիւն Վոսփորի յօսմանեան հրանօթից : Սուլթանն անգամ երեցաւ ի պատուհան ողջունելու զանկենդան մարմին զօրավարին, որ նպաստեր էր տաճկական պետութեան պատուոյն բարձրանալուն :

Սէնդ Անոյի յաջորդը՝ զօրավարն Քանրուպէր չէր կարող. միանգամայն կը խիթար մեծ պատասխանատուութիւն մը վրան առնուլ իւր նախորդին երազ յարձակման գաղափարը ի գործ դնելու, որով սկսաւ այն ահաւոր պաշարումը, որպիսիք քիչ կը յիշատակուին ի Պատմութեան : Ռուք փոսով և հողաբլուրներով կ'ամրացնէին եռանդեամբ այն պատուարը որ կը սկսէր Քարէնած ծոցէն, կը շրջապատէր զՔարապէլնայա և Հրագինուց նաւահանգստին կէսը, յետոյ քաղքին արևմտեան կողմէն կ'երկննար մինչև Արգելանոցին նաւահանգիստը : Գաշնակից բանակին մաս մը արդէն 28ին առաւօտ ձգեր էր զՉէննայա և ուղղուեր էր ի Պալլըլավա, ուսկից ժամը 11ին առեր էր պաշարը. երեկոյեան դէմ սպայակոյտը ամբարտակէ մը որ յետոյ կոչուեցաւ յանուն Քանրուպէրի, դիտեց երկրին դիրքը. և որովհետև Պալլըլավայի նաւահանգիստը փոքր էր անգղիացի նաւատորմդին համար, սահմանուեցաւ մաս մը ամփոփելու ի Գամիէշ : Գաղղիացիք պիտի պաշարէին քաղաքը հեղեղատէն մինչև ծով, և Անգղիացիք բանակին աջը պիտի բռնէին հեղեղատին միւս կողմը՝ Պալլըլավայի մաս ըլլալու համար. որով 29ին ճամբարնին դրին Մեծ-Ռէտանի առջև, թողլով հեծելոց երկու ջոկատ Պալլըլավայի դիմաց : Հինգ բերդեր կազմուեցան այն յառաջացեալ բարձանց վրայ որ Չէննայայի աւազանը կը բաժնեն ի Պալլըլավայէ, Տէրիուքինի լեռանց դիմաց, և որք յանձնուեցան Տաճկաց պաշտպանութեան : Գաղղիացի գունդերու մաս մ'ալ որոց կը հրամայէր Տորէյ զօ-

րավարը տաճիկ գունդերու հետ ուղղուեցաւ ի Գամիէշ, այս կողմէն պաշարելու զՍէվաստոփոլ. իսկ գաղղիացի առաջին և երկրորդ զօրաբաժինքը որոց պահեալ էր յարձակումը, ընդ հրամանատարութեամբ Պոպէի, ճամբար դրին երկու կարգ ինքէրմանի առջև, Վարանցով ճամբան զուգահեռական գծով, Դէլէկրաֆի աջ կողմը: Որոշուած էր որ թէ Գաղղիացիք և թէ Անգղիացիք կեդրոնական մեծ ամրոց մը կառուցանեն: Գաղղիացիք փութով սկսան զայն ընդ հրամանօք Պիզօ զօրավարին ճարտարութեանց հրամանատարին. և որովհետև ռուս ումբեր կրնային մինչև իսկ ճամբարին մէջ ինկնալ, նաւատորմէն 30 ումբարձակք բերուեցան զորս կը կառավարէին ծովային զինուորք ընդ հրամանատարութեամբ ծովապետ Ռիկօ տը Ժէնուիյի:

Ասոնք էին պաշարման կարգադրութիւնքը: Հոկտեմբերի սկիզբը նոր հանդերձանքներ հասնելով, 17ին առաջին գծի թնդանօթք և նաւատորմի հրանօթք սկսան ումբակոծել բերդերը, որոց կը պատասխանէին 250 կտոր ռուս հրանօթք: 10ին միջոցները գաղղիացի երկու վառօդի շտեմարանք պայթեցան, իրենց հետ տապալելով երկու ամբարտակք ալ: Գաշնակիցք չէին կարծեր այսպիսի ընդդիմութիւն մը գտնել, և գաղղիացի հրամանատարութիւնը դադրեցուց կրակը, ռուսն հետևեցան Անգղիացիք ևս: Հոկտեմբեր 17ին փորձը ցուցուց որ անկարելի էր յանկարծական յարձակումը առնուլ զՍէվաստոփոլ:

Յետ եղած փնասները դարմանելու, 19ին կրակը նորէն սկսաւ բայց ի զուր և ըստ վկայելոյ զինուորական գրչի մը՝ այն ատեն միայն ցրուեցան երեւակայութիւնք, և տխրութեամբ մը համոզուեցան որ հարկ պիտի ըլլար Սէվաստոփոլի պարսպաց ներքև ձմերելու: Միանգամայն կը սեսնուէր որ նաւատորմիդը մեծ օգնութիւն մը պիտի չըլլար պաշարման:

8. Պատերազմ Պալրքլավայի — « Վեց հարիւրք » : — Մէնչիքով Ալմայի պատերազմէն վերջը 30,000 հոգևով ծածկուեր էր Պէլպէքի խորշերուն մէջ, ուր նոր

«գնութիւններ ընդունել էր Գանուբի բանակէն: Հոկտեմբեր 25ին ռուս զօրաբաժին մը որոց կը հրամայէր Լիփրանտի զօրավարը, կ'անցնի գՁէճնայա, կը յափշտակէ Փամարայի մօտ Տաճկաց պաշտպանած ամբարտակները և հրանօթքը կը դարձնէ ընդդէմ Գաշնակցաց: Օտէսայի գունդը յետ աւերելու դաշնակցաց 'Ի ամբարտակը կը դիմէ Պալլքըլավայի հովիտը բլրոց ետեւէն:

Անգղիացի հեծեալը որ Տաճկաց ամբարտակներուն զուգահեռական գիծ մը բռներ էր, յանկարծական թնդանօթներուն ձայնէն յետ զվրանս գոցելու, ի գէն դիմել էր. արդէն պահապանաց ջոկատ մը անցեր էր պաշտպանելու Պալլքըլավայի կէտերը, նպաստեալ և ի Պուրպաքի զօրավարէն, և արդէն գաղղիացի ռումբք ահաւոր կրակ մը սկսել էին տեղալ ռուսաց վրայ: Երկու դաշնակից սպարապետք բարձր դիտարանէն կը զննէին պատերազմին գնացքը. երբ ժամը 9ին ռուս հեծելագօրը իջնելով ի տափարակ, դիմեց անգղիացի ճամբարին վրայ հուժկու բաղխմամբ: Անգղիացիք տեղերնէն շարժեցան և Սկովաիացիք յետ թողու որ Ռուսք մերձենան իրենց, ի մօտոյ արձկեցին գնդակնին, և Սքէրլըդ անգղիացի ջոկատը միեցաւ ռուս գնդին մէջ: Ի սկզբան խառնակուլութիւն մ'էր և շփոթութիւն, ապա ռուս հեծեալք քաջութեամբ մը ձիոց սանձերը դարձնելով, քաշուեցան իրենց գծերուն մէջ ընդ հովանեաւ ռուս ռումբերուն:

Ժամը գրեթէ 11 էր երբ Գաշնակից գունդերը հասան տափարակին վերայ և Վինուա ջոկատը արդէն բռներ էր Պալլքըլավայի կրճին և Քատլքէտոյի միջոցը, երբ քիչ անդին ահաւոր և անօգուտ կռիւ մը կը կատարուէր յանգղիացի հեծելոց, և որուն պատասխանատուութիւնը ոչ ոք իւր վրայ ուզած է ստանձնել:

Լորտ Ռէկլան բարձր դիտարանէն տեսած ըլլալով ռուս հեծելագօրուն խառնակութիւնը, հրաման ղըրկեր էր աւ Լորտ Լուքէն՝ հրամանատար հեծելագօ-

բուն, մղել գունդերը և որ և է հնարքով մը տիրել բարձունքներուն: Հրամանը տանող սպային առ Լորտ Լուքէն հասած ժամանակ, պարագայք փոխուեր էին և Ռուսք կրցեր էին կրկին ձևանալ և կազմուիլ: Լորտ Լուքէն վարանեցաւ և պարսք համարեցաւ յարձակիլ ինչ որ ալ ըլլայ, որով և հրամայեց կոմս Գարտիկէն զօրապետին յառաջ շուելու իր թեթև ջոկատով: Գարտիկէն՝ գուշակելով իսկ անխուսափելի կորուստը եռանդեամբ անցաւ ջոկատին զլուխ, և իւր ձին մտրակեց ըսելով « Յառաջ վերջինն ի Քարտիկէնս »: Իւր աջ կողմը ունէր Ռէկլանի զրկած սպայն Նոլէն՝ որ իւր բերած հրամանին և տուած մեկնութեան զոչ ինկաւ ինքն ևս: Անզղիացի հեծելագօրուն յառաջած ատեն, Օտեսսայի զօրաբաժինը մեկնեցաւ ամբարտակէն և ուրիշ գունդերու հետ միաբան բոլորակ ծոց մը կազմեց, ուր յախուռն մը խեցաւ անզղիացի հեծելագօրը, ահաւոր կրակի մը ներքև յաջմէ ի ձախմէ և յառաջոյ, աննման զոսկես ի Պատմութեան: Յետ ընդ երկար աննպատակ արութեամբ կռուելու վերջապէս պարտասեալ և նուաղեալ նահանջ զարկաւ, թողլով դաշտին վրայ իւր արի զօրապետը և զնդին մեծ մասը: Սակայն պատերազմին հաւասար ահաւոր եղաւ նահանջն ալ: Ռուսք Ֆէտիուքինի բարձանցն վրայ նոր հրանոթից լուծեր հաստատելով, նահանջը սկսան ամբակոծել, մինչև որ Ափրիկեցի որսորդաց ջոկատ մը և Աբէրլըդ անզղիացի ջոկատը եկաւ պաշտպանելու զսակաւ մնացորդս ջոկատին զոր Անզղիացիք Լուստիանոս կոչած են, կամ Վէց-հորի-ր+, այնքան հուշակեալ ի Դէննիսընէ և յայլոց քերդողաց իրենց պանծալի բայց անօգուտ արութեան համար¹:

Լիփրանտի նահանջին հետևելով, բռնեց այն տեղերը զորս յառաւօտուն գրաւեր էր. անզղիացիք ձգեցին Պա-

1. Կը պատմեն որ ոռու հրամանատարն երկրորդ օրը ըսած ըլլայ Անզղիացեոց այս յարձակման համար « շատ գեղեցիկ, բայց և շատ յիմար »:

լրջլավայի աւագանին պաշտպանութիւնը այն օրու-
նէ և կեդրոնացան դէպ յԱրևելս եղած բարձանց վը-
րայ: Ռուսք ևս քաշուեցան Տէտիուքինի լեռանց վը-
րայ. ի ձախէն պաշտպանուելով Գամարայի մօտ բերե-
դերէն: Պալլբլավայի յաղթութիւնը մեծ խրախոյս
տուեր էր իրեն, և Մէնչիքով արդէն կը սպառնար « ծով
թափելու » զԴաշնակիցս. այդ յուսով 26ին կրկին
յարձակումն ըրաւ, բայց այս անգամ վանեցաւ յԱնգ-
ղիացւոց, թողլով դաշտին վրայ եօթնհարիւր մե-
ռեալ: Երկու բանակք այն ատեն ամփոփուեցան կու-
րուստնին դարմանելու և 27, 28ին գիշերը եղած գու-
պարածք միայն զննութեանց նպատակաւ էր, ի պատ-
րաստութիւն մեծ պատերազմի մը զոր երկու կողմն
ալ կը փափագէր տալ: Արդէն Գաղղիացիք աւարտե-
լով Քանրոպէր ամբարտակը զայն յանձներ էին Անգ-
ղիացւոց:

9. Պատերազմ Ինքէրմանի — Ռուսք եւ Անգղիա-
ցիք: — Դաշնակցաց թիւը այս միջոցիս եղեր էր
71, 223 յորոց 41, 786 Գաղղիացիք, 24, 530 Անգղիա-
ցիք և 907 Տաճիկք: Կ'առաւելուր նաև օր օրուան
վրայ Մէնչիքովի բանակը որուն թիւը 80, 666ի հա-
սեր էր յորոց 4, 000ը պահանորդք քաղաքին և Մէն-
չիքով սահմանեց յարձակումն տալ թշնամւոյն վրայ:
Յարձակող բանակը որուն կը հրամայէր Տաննէնպէրկ
զօրավարը, կազմեալ էր երկու զօրաբաժնէ, Սոյմո-
նոֆ յաջ և Փաւլով ի ձախ: Նոյեմբեր 4-5ին գիշե-
րը հեղեղօրէն անձրևներէն վերջը, թանձրախիտ մա-
ռախուղ մը տիրեր էր, անհնար տեսնելու քանի մը
քայլ հեռու: Սոյմոնոֆի գունդերը 5ին առաւօտը հրա-
մաննին ընդունեցան ժամը 4¹/₂ին և անցնելով Գա-
րէնաժի հեղեղատը յառաջեցին դէպ ի Սաիոն Լեռը:
Իոմսք և Քոլիվան գնդերը հասնելով բարձանց վը-
րայ տարածուեցան մէկ գծով մը, ի կողից և ի ճա-
կատուն պաշտպանուելով ի հրացանաձգողաց: Քա-
թերինէպուրկ գունդն զետեղեցաւ յառաջոյ ի պաշտ-
պանութիւն առաջին գծին որ յառաջապահ մը ձեւա-
ցաւ Սոյմոնոֆի ընդ հրամանատարութեամբ Վիլլը-

պոււս գորավարին: Միւս շորս գնդերը ի հեռուստ կը հետևէին իբրև պահեստ գնդեր ընդ հրամանօք Եսպարիչքի գորավարին:

Փաւլովի զօրաբաժինն ալ ժամը 5ին ելաւ Ինքէրմանի բարձունքը, հասաւ Չեռնայայի կամուրջը և անցաւ: Ծովեղերքէն ալ Վլադիմիր և Քերոնեան շոգենաւք պիտի օգնէին յարձակման:

Ռուսաց այս շարժմանց միջոց, որչափ որ ալ Անգղիացիք դիտեր էին յուզում մը, սակայն անկարելի կը համարէին որ և է յարձակում մը. այնքան սակաւաթիւ կը համարէին զՌուսս և քաղաքը պաշար բերողաց ոտնաձայնը կը կարծէին լսել: Այսպիսի մառախլապատ գիշեր մը Ռուսք առանց նեղուելու ի թըշնամուտն կրցեր էին բռնել Սափոն լեռան դիրքերը և պատել անգղիացի բանակը սրուն յառաջապահից դիտողութեան ելած ժամանակ Գոտրինկղըն գնդապետը, բազմաթիւ հրացանաց պարպուելէն յառաջապահին վրայ, գուշակեց թշնամուտն բազմութիւնը, և ընթացաւ ի զէն կոչելու երկրորդ և թեթև զօրաբաժինքը:

Ռուսք կը յառաջէին երագութեամբ: Սոյմոնֆի սիւնակաց զլուխք՝ ոտնակոխ ըրեր էին անգղիացի զօրաբաժնին յառաջապատնէչքը. Գոմաքի և Քոլիվանի գունդերը կը դիմէին տիրելու Լէսի Իվընսի զօրաբաժնի ճամբարին. ուրիշ երկու գունդք ալ յառաջելով Քարէնաժի հեղեղատէն կը փորձէին հեղեղատին զլիւնն անգղիացի բանակին մէջ մտնել:

Ժամը վեցուկէս էր երբ Եսպարիչքի զօրավարը, աշաւոր կրակ մը բացաւ Ինքէրմանի և Գէլէկրաֆի դիմաց, որուն գնդակքը հատանելով անցնելով Բ զօրաբաժինը, զարհուրանօք զարթուցին Լէսի Իվընսի զօրաբաժինը, որ տակաւին հանդարտ կը քնանար: Փէնֆաթըր զօրավարը որ կը հրամայէր Բ զօրաբաժնին Լէսի Իվընսի հիւանդ գտնուելովը, փութով գունդերը բարձունքը հանեց և ինքն ալ իւր սեպհական ջուկատով Սոյմոնֆի սիւնակաց ճակատը բռնեց թղթաբերի հին ճամբուն և Քարտանաժ հեղեղատին մէջ, մինչ-

դեռ Ատամս զօրավարը իւր աջէն կը յառաջէր աղեղ մը կազմելով մինչև Սաքսադէրի հրանօթից լուծերը։ Այս գունդերուն հասնիլը խափանեց Ռուսաց յառաջելը, որ սկսեւ էր բռնել Անգղիացուց դիրքերը և Քաթերինէպուրկի գունդերը Քարէնաժ հեղեղատին մէջէն անցնելով, կրցեւ էիր չորս հրանօթ յափշտակել ի թշնամուոյն։ Զայս տեսնելով Պիուլլըր գնդին ջոկատներէն երկուքը, դիմեցին և յափշտակեցին թնդանօթքը և Գոտրինկըն ջոկատին օգնութեամբ, նորէն հեղեղատին մէջ ձգեցին Քաթէրինէպուրկի գնդերը, զանոնք առանց նեցուկի թողլով ի յետուստ։ Յետոյ Պիուլլըրի բովանդակ գունդերը ի գիծ շարուելով յամէ և յահեկէ Բ զօրաբաժնին, ահաւոր բախմամբ վանեցին Սոյմոնոֆի յառաջապահքը, որոնք բոլորովին շփոթեցան և խառնակեցան Պրան զօրաբաժնին կրակէն և յետս նահանջեցին յետ կորսնցնելու շատ մը քաջ սպաներ յորս և Սոյմոնոֆ և Վիլլըպուա զօրավարք։

Այս դիրքին մէջ էր պատերազմը երբ հասաւ Պոսքէիր գնդերով, զորս ի շու դրեր էր սուաւօտեան առաջին թնդանօթին բոմբիւնը լսելուն պէս։ Պոսքէ Հեղեղատին քով հանդիպեցաւ Պրատուն և Քէդքար զօրավարաց, ընծայելով անոնց իր ձեռնտուութիւնը։ Սակայն Անգղիացիք քաջալերեալ Սոյմոնոֆի գունդերուն խորտակելովը և փափագելով պատերազմը միայնակ հանել ի գլուխ, շընդունեցան առաջարկը խնդրելով միայն յառաջոյ պատնիշաց գոցել անգղիացի աջը։ Պոսքէ յետ կարգադրելու իր գունդերը, գննելու ելաւ Կորչաքովի շարժմունքը և այն միջոց հանդիպեցաւ Գանրոպէրի որ զՏորէյ զրկեր էր յինքէրման թնդանօթից ձայնին բազմանալը տեսնելով։

Եւ արդարև յինքէրման Փաւլովի յառաջապահը վաներ էր անգղիացի ճամբարին ճակատը և ժողվելով Վիլլըպուայի և Սոյմոնոֆի գունդերուն մնացորդքը կը դիմէր տիրելու Սաքսադէրի բարձանց վրայ եղած հրանօթից լուծին։ Անգղիացի զօրավարն Փէնֆադըր Փաւլովի շարժման վրայ կը հրամայէ Ատամս գնդապե-

տին երկու շոկատով դիմել զանոնք պաշտպանելու, բայց հագիւ հասեր էին թնդանօթից՝ երբ ահաւոր կրակի անձրև մը սկսաւ թափիլ վրանին Խազախից գագաթան վրայի հրանօթներէն: Ատամս իր գինուորաց գետին պառկել տուաւ և իր հրանօթքը ուղղեց Փաւլովի սիւնակներուն վրայ, որոնք կը յառաջէին Գարրիէրի հեղեղատէն, և որք հասնելով առաջին բլրոյն որ ընդ մէջ է հեղեղատին և Սաքսադէրի, հոն վայրկեան մը կրակնին դադրեցուցին, ապա վանեցին Ատամսի գունդերը Սաքսադէրի վրայէն. այն փոքրիկ տեղւոյն վրայ այնպիսի ահաւոր և արիւնահեղ կռիւ մը խմբեցաւ որ երկրորդ օրը ամբողջ գետինը երկու կողման դիակներով ծածկուած գտնուեցաւ: Ի գուրանգ զիացի շոկատք արութեամբ կ'ընդդիմանային իրենց մէ բազմաթիւ թշնամւոյն, որ արդէն զիրենք սկսեր էր պատել, և անհնարին տեսնելով դիմանալը, յետս նահանջեցին անչիոթ՝ տանելով հետերնին իրենց վիրաւորքը, բայց թողլով Ռուսաց ձեռքը այնպիսի կարևոր կէտ մը:

Սակայն ընդ հուպ հասնելով Գէմպրիճի դուքսը Պահապանաց շոկատով մը ընդ հրամանատարութեամբ Պէնդինք զօրավարին, և ամենակարևոր դատելով ձեռք բերելու կորսնցուցած դիրքերնին, յառաջ մղեց ընտիր գունդերը, որոնք փութով վանեցին զթշնամին Գարրիէրի հեղեղատին մէջ և պիտի շարունակէին հալածել անտի ևս զթշնամին, երբ Լորտ Ռէկլան հասնելով, հրամայեց պաշտպանողական դիրք բռնել և սպասել Քէղբարդ զօրաբաժնին և Գէմփպըլ շոկատին, որոց հրամայեր էր դիմել յինքէրման: Այլ բռնած դիրքերնուն մէջ չկրցան հանգիստ մնալ, վասն զի երբ Փաւլովի զօրաբաժնին միւս գնդերը հասան, Տանէնպէրկ յառաջ մղեր էր զանոնք Պորոտինոյի և Գարուդինոյի նահանջը գոցելու, մինչդեռ Օխոդաքիի երեք գունդեր յառաջելով դէպ ի Սաքսադէրի լուծերը ըզ-Պահապանս կը բաժնէին բանակին մնացեալ մասէն: Անգղիացիք ի սկզբան դիւցազնաբար մրցեցան, բայց հրոյ պաշարնին լիմցած տեսնելով, բռնադատուեցան

տեղի տալ, և հազիւ կրցան միանալ իրենց գունդերուն, շատ զինուոր կորսնցնելով: Իսկ Սխորգի գունդը՝ որուն գնդապետը ինկաւ, բունց Սաքսադէրի լուծը և պաշտպաննց Եաքուդաք և Սէլէկինաք գունդերը, որոնք կը յառաջէին. այսպէս Ռուսք բռնացան բարձանց և շարեցին իրենց հրանոթքը: Այս միջոցիս հասնելով Քէդքարի զօրաբաժինը, Պէնդինքի ջոկատը թափով դիմեց Սխորգի վրայ և նորէն առաւ զՍաքսանդէր, վերջին անգամ մ'ալ տալու նորէն Եաքուդաքի գունդերուն. և անգղիացի Պահապանք չկարենալով այլ ևս յուսալ նորէն տիրելու Սաքսադէրի, ետ քաշուեցան կազմուելու:

Քէդքարը զօրավարը թողլով զՎոլտի ջոկատը ի պահեստ, դիմէր էր Գորրէնս ջակատով ռուս սիւնակաց վրայ, որոնք յարձակեր էին Պահապանաց վրայ և յանկարծակի Սէլէկինաքի երկու գունդերուն դիմաց կը գտնուի և բռնադատուելով յետս նահանջելու, կ'ուղղուի դէպ ի թնդանոթներուն լուծը զօր Անգղիացոց ձեռքը կը համարէր: Սակայն հրացաններու ահաւոր հարուածոց անձրև մը Ռուսաց կողմանէ որոնք արդէն վաներ էին զՊահապանս, զինքը կը շուարեցնեն: Քէդքարը կը համարի որ սխալմունք մը կայ դիմացէն և կրակը դադրեցնելու համար, վերցնել կուտայ զինուորաց վերնագգեստը. սակայն կարմիր հանդերձից տեսքէն կրակը առաւել ահաւորապէս կը կրկնապատկուի: Քէդքարը կը սպաննուի և գունդերը իրենք իրենց վրայ պտուտկելով, և հալածուելով ի Ռուսաց սուխնով կը բռնան նահանջը, ձամբան կորսնցնելով 500 անձինք:

Ռուսք այս յաջողութենէն խրախուսեալ յարձակում մը ուղեցին փորձել, սակայն Վոլտի ջակատին կրակը իրեն արգելք եղաւ, թէպէտ մեծամեծ կորուստներով. Վոլտի զօրավարը մահացու հարուած մ'ընդունեցաւ, Ատամս և Ղ. Պրաւն զօրավարք վիրաւորուեցան. Ռուսք նահանջ զարկին և քաշուեցան բլրոց գաւռի վայրներուն վրայ: Քանի մը վայրկեան վերջը Լորտ Ռէկլանի քով կ'ինկնար մեռեալ Ադրէնկուայս զօրա-

վարը : Քանրոպէր ևս որ հոն դիմած էր հարուած մը կ'ընդունի բազկին, սակայն անմիջապէս վէրքը կապել տալով դիմեր էր առ Լորտ Ռէկլան, որ հուսկ ուրեմն տեսնելով իր գունդերուն վաստակաբեկ ինկնալը և պաշարուց նուազիլը, խնդրեր էր Քաղղիացուց օգնութիւնը և կրկին ու կրկին համհարգք ընթացուցեր էր առ զօրավարն Պոպէ :

10. Թուսք եւ Քաղղիացիք. — Յաղթուածիւն Գաշնակցաց : — Ժամը գրեթէ ինն էր : Կորչաքով կրակը դադրեցուցեր էր, որով և մեծ դիւրութիւն մ'էր Պոպէի իր գունդերը շարժելու : Եւ իբրև ազատած կապանքէ մը որ զինքը կ'արգելուր գործելու, հրամանները տուաւ երազութեամբ և դիմեց յօգնութիւն Անգղիացուց, զրկելով յառաջոյ զՍիսսէյ արի հազարապետը առ զօրավարն Պուրպաքի իր գունդերով ինկնալ ինքէրմանի վրայ : Արդէն Պուրպաքի իր հրամանատարին պէս թնդանօթին առաջին որոտալուն՝ մօտեցուցեր էր գունդերը պատերազմի կէտին, հիմայ երբ զանոնք յառաջ մղեց, Անգղիացուց միաձայն կեցցէները զինքը ընդունեցան : Պուրպաքի ուժով բաղխմամբ զօրաց մէկ մասով ինկաւ Սաքսադէրի պաշտպանող գունդերուն վրայ, որոց ձեռքն էր յաղթութիւնը և իր թարմ բանակովը շփոթցուց զԹուսս, որք կը կարծէին դիմացնին ունենալ բովանդակ զօրաբաժինը : Սէլէկինսք և Էաքուդսք պարտասեալ գունդերը տեղիք տուին, բայց Էաքուդսք և Օխոդսք կրկին կազմուելով արութեամբ մը գրեաթէ աննման՝ յետս մղեցին Պուրպաքիի գունդերը որոնք ամբացան Քարրիէր հեղեղատին գլուխը կորսընցնելով հազարապետ մը և քաջ սպաներ : Հասան իրեն նահանջը պաշտպանելու նաև երկու լուծ հրանօթք զօրս բերել կուտար Լորտ Ռէկլան :

Պատերազմը այս դիրքի մէջ էր ժամը 9¹/₂ին երբ հասաւ Պոպէ և անմիջապէս որսորդաց շորս գունդ ուղղեց Սաքսադէրի վրայ, հրամայելով միանգամայն Պուրպաքիի կրկին յարձակումն տալու : Յաջորդեցին սպա Աւճէրիի ձգողք որոց կը հրամայէր Վէնֆէն հազարապետը որուն ձին սպանուեցաւ պատերազմին մէջ սպա

գուաֆք ընդ հրամանատարութեամբ Տիւպոյի: Այս նոր բաղխման առջև Ռուսաց յոգնած բայց արի գունդերը չվհատեցան, իրենց նահանջը ջանալով ապահոցընել, պատեցին գաղղիացի գունդ մը յորում կը գըտնուէր նաև Պոսքէ. և թէպէտ Գաղղիացիք հրանօթի լծով մը ուզեցին զթշնամին խորտակել, սակայն Ռուսք դիւցազնական մրցմամբ տիրեցին լծին, յետոյ նորէն Գաղղիացւոց ձեռքը թողու համար գայն, և առժամս գտած յաջողութեամբ խրախուսեալ Օխոզսք և Եսքուդսք ի ճակատոյ, Սէլէկինսք ի կողմանէ յարձակեցան Սաքսադէրի լուծերուն վրայ վերջին անգամ: Պոսքէ որ գրեաթէ ապահով էր ս'Օդըմար գօրավարին գունդերուն հասնելուն, բոլոր քովը ունեցած զօրքը կարգեց ի պատերազմ, զորս պիտի պաշտպանէին իրենց հրանօթովք հրամանատարն Պարրալ, թովմաս և Գուսսէն զօրավարք: Ասոնց հովանաւորութեան ներքև Պուրպսքի չորրորդ անգամ իր գունդերը մղեց ի յարձակումն:

Ռուսք վանեցան Գարրիէրի հեղեղատին մէջ, գուաֆք և ալճէրիացի ձգողք սուինով մղեցին Սէլէկինսքի գունդերը Սաքսադէրի լծերուն հեղեղատը, և գանոնք բռնադատեցին անցնելու Չէռնայայի ջրանցքը, յորում գահավիժեցին բազմաթիւ ռուս զինուորք, այսպէս վիրաւորուելով կամ մեռնելով: Պատերազմէն վերջը գտնուեցան նաև դիակունք այնպիսեաց, որք այրերու մէջ ապաւինեց չին:

Ժամը 11ին Գաշնակիցք պատերազմը շահած կըրնային համարիլ, թէպէտ կրակը երկու կողմանէ դեռ կը շարունակէր, հնձելով շատ մը կեանքեր մանաւանդ Սաքսադէրի քով, ուր գնտակ մը տապալեց նաև Պոսքէ զօրավարին ձին: Վլատիմիր և Սուստալ գունդերը վերջինքն եղան որոնք յառաջեցին դէպ ի խազախաց գագաթը, ռուս գունդերուն նահանջը պաշտպանելու գոնեայ, և ժամը 2¹/₂ին լուսեցաւ իրենց հրանօթից վերջին ձայնը, անկէ վերջը բոլորովին քաշուեցան Ռուսք: Սակայն ժամը 3ին անգղիացի գունդ մը դիմեց լծով մը փախստականաց ետևէն և ա-

հաւոր կրակով մը Ինքէրմանի կամրջին անցքը դիպեց անհամար դիակամքք և հազիւ ոռւս շոգեմաւուց գընդակները դարձուցին զինքը բռնելու պատերազմին դաշտը: Ժամը 5ին լմնցեր էր Ինքէրմանի արիւնհանեղ պատերազմը, թողլով ի Ռուսաց դաշտին վրայ 12,000 ընդ մեռեալ և ընդ վիրաւոր, յԱնգղիացւոց 2,816 և ի Փաղղիացւոց 1,800: Յաղթութիւնը կը մնար Պաշնակցաց ձեռքը, սակայն ոռւս գունդերը այնպիսի դիւցազնական արութեամբ մը մրցեր էին նորանոր բանակներու դէմ, որ չենք գիտեր որո՞ց ընծայել պատերազմին փառաց պատիւը:

Ինքէրմանի կռուոյն ժամանակ Թիմոֆէյիէֆ ոռւս զօրավարը 5,000 հոգւով ուղեր էր բռնադատել գաղղիացի ճամբարին պատնէշքը ի Դրաքդիր, սակայն Լուրմէլ և Լամոդոուժ զօրավարք զինքը վաներ էին:

11. Պաշնակիցք յետ Ինքէրմանի. — Հիւսիսային Նաւատորմիղ: — Ինքէրմանի պատերազմին երկու կողմանէ եռանդեամբ մրցելուն պատճառներէն մին էր նաև արքայազանց հոն գտնուիլը. վասնզի Ռուսաց բանակին մէջ էին Նիկողայոս և Միքայէլ մեծ դուքսերը, և դաշնակցաց բանակին մէջ էին Քէմպրիճի դուքսը և իշխանն Նարոլէոն:

Յաղթութիւնը Պաշնակցաց շատ ծանրագնի եղեր էր, և երբէք չէին կրնար փափագիլ նմանօրինակ յաղթութեան մը. անոր համար երբ Ինքէրմանի պատերազմին երկրորդ օրը, զօրավարացմէ ոմանք խորհուրդ կու տային յանկարծական յարձակում մը փորձել, լորտ Ռէկլան ընդդիմացաւ և դաշնակից հրամանատարք ժողովքով սահմանեցին նոր օգնութիւն չընդունած, ուրիշ պատերազմ չտալ: Անմիջապէս Քանրուպէր և Պոսքէ զօրավարք սկսան ամրացնել բերդօք զԻնքէրման, որուն զրից կարևորութիւնը յայտնի տեսնուեր էր, և Դեկտեմբերի մէջ սկսան հասնիլ օգնութիւնք:

Հասաւ նաև Տըմոնդէպէլլօ զօրավարը բազում նշանօք, որոնք պիտի բաժնուէին քաջացելոց: Դեկտեմբեր 31ին Քերսոնեսոնի գազաթան վրայ Չէոնալայի բերդորէից դիմաց, զօրաբաժնի հրամանատարք

բաշխեցին խաչերը: Պոսքէն առաջ ինքը անձամբ կախեց խաչը իւր բանակի ողորմարաչի՝ Սդալդէր քահանային կուրծքը: Քանի մը օր վերջը երկու նաւատորմի հրամանատարքն ալ բարձրագոյն աստիճանի անուանելով, Տնտասի յաջորդեց փոխան-ծովակալն Լայրնս և Համլէնի՝ փոխան-ծովակալն Պրիւա, երկուքն ալ արդէն ի Ղրիմ:

Խուսաց կողմանէ գորավարն Մէնչիքով որ իր հրամանատարութիւնը Մարտ 2ին պիտի յանձնէր իշխան Կորչաքով գորավարին, Գեկտեմբերի մէջ Սէվաստափոլի պաշտպանութեան ուղղութիւնը յանձնեց Օսդէն Սախըն գորավարին որ յաջորդեց Տանէնպէրկի Գ բանակին հրամանատարութեան մէջ, և որուն ստէպ յարձակմունքները ոչ սակաւ յապաղումն և վնաս պատճառեցին դաշնակցաց ջանքերուն:

Իսկ ի Հիւսիս Սպիտակ ծովուն և Խաղաղականին մէջ անգղիացի նաւատորմիղը այրեր էր ուս լափոնիոյ մայրաքաղաքը, նոյն յաջողութիւնը չէր ունեցած Քամչաթքա Փէյրովաքիի առջև ներկայացած նաւատորմիղը:



ԴԱՇՆԱԿՑԱՑ ՏԱԳՆԱՊՔ. — ՄԱՀ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Ա.

1. Դաշնակցաց նեղութիւնք ի ձմերան. — Հիւանդութիւնք. —
 2. Հաշտութեան մը բանակցութիւնք. — 3. Սարտենիա կը միա-
 նայ Դաշնակցաց. — 4. Տրտունջը յԱնգղիա վասն դանդաղու-
 թեան պատերազմին. — Անկումն Պաշտօնարանի. Փայմէրազոն
 պաշտօնարան. — 5. Նաբուէոն կը զրկէ զգորավարն Նիէլ. —
 Նոր կարգադրութիւնք ի բանակի. — 6. Հանգերձանք Ռուսաց. —
 Էօմէր փաշա. — Սպիտակ ամրոցք. — 7. Մահ Նիկողայոս կայ-
 սեր. — 8. Աղեքսանդր Բ. — Հաշտութեան մը փորձք. — Կոր-
 շաքով. — 9. Դաշնակից բանակք ի Ղրիմ. — Նաւատորմիդն ի
 ծովափնեայս :

1. Դաշնակցաց նեղութիւնք ի ձմերան. — Հիւան-
 դութիւնք : — Ինքէրմանի արիւնահեղ յաղթութիւնք
 ուրիշ բան չէր ըրած բայց շատցընել Դաշնակից բանա-
 կին վաստակք և հիւանդութիւնքը, առանց վճռական ու-
 թոշողութեան : Այն էր ծանրը՝ որ եղանակը երթալով կը
 դիմէր ի ձմեռն, և հարկ պիտի ըլլար ցուրտ ծովերու վը-
 րայ անցնել ձմեռը, առանց կարևոր եղած հանդերձանքը
 ունենալու : Տակաւին ձմեռը չեկած, աշնան յորդ անձ-
 րենները և հեղեղները ջրանցքի պէս ընթանալով ողո-
 ղեցին վրանները՝ մէկ ոտք բարձրութեամբ : Նոյեմբերի
 4ին ահաւոր փոթորիկ մը, անուանի մնացած զրիմ-
 ցոց յիշատակին մէջ, վրաններէն շատը յափշտակեր
 տարեր էր, մինչև գետին տապալելով շատ մը զինուոր-
 ներ : Ընկղմեցան նաև նաւք յորս կը գտնուէին ձմե-
 ռուան պաշարք և հանդերձեղէնք : Այս խոնաւութե-
 նէն և պատսպարուելու զգեստուց նուագութենէն զի-

նուորաց մէջ տարածուեցաւ փորհարութիւն և մաղձախտ, որ մեծ ջարդ ըրին մանաւանդ յԱնգղիացիս և ի Տաճիկս: «Անգղիացի զինուորական մատակարարութիւնը մեծապէս թերի գտնուեցաւ իր պաշտաման մէջ, որով և շատցան զինուորաց հիւանդութիւնք¹»: «Չմեռուան զգեստներէն մաս մը ընկղմեցաւ Փքէն» նաւով, որ զանոնք կը բերէր, կըսէ ակա նատես գրիչ մը, միւս մասը կորսուեցան, հիմայ կը լսենք որ ի Կ. Պօլիս այրեր է այն նաւը՝ որ ձմեռուան վերարկուներ կը բերէր: Ես իսկ անձամբ տեսայ Պալըքլավայի նաւահանգստին մէջ զանազան նաւեր զինուորաց համար լի մուշտակօք և վերարկուօք ամբողջ օրը անձրևի և ձեան տակ: Երբ հանուեցան, չկար մէկը որ զանոնք ընդունէր. կամ լաւ ևս ըսել, ոչ ոք կ'ուզէր զանոնք ընդունիլ, տակաւին հրաման մը չեղած²»: Չմեռուան մէջ Գաշնակցաց հակառակորդը միայն Ռուսաստան չէր, այլ հարկ էր կռուիլ ահաւոր տարրի մը հետ, յաղթել Սև ծովուն մրրիկներուն և դիմանալ ցուրտին դէմ: Հասաւ ժամանակ, մինչև զինուորք կարող չէին ձեռք դպցնել երկաթի առանց անոր վրայ ձգելու ձեռաց մարթը³: Թո՛ղ որ շատ անգամ բռնադատեալ էին ցրտէն սառեալ ոտուրները կտրելու, գործողութիւն մը՝ որուն վախճանը շատ անգամ մահ էր:

Հիւանդները և մաղձախտէն բռնուողք ի Սկիւտար պիտի փոխադրուէին Վոսփորի վրայ. բայց անհնարին խառնակութիւն մը տիրեր էր հիւանդանոցին մէջ. մինչև Սիտնէյ Հէպէր պաշտօնեայն լողաչեց գտիկինն Տրորէն Նէյթիկէլ, հմուտ և փորձ հիւանդանոցի կարգաւորութեանց, երթալ ի Կ. Պօլիս և բարեկարգել Հիւանդանոցը: Տիկինն Նէյթիկէլ յանձն առաւ և այս իւր պաշտաման մէջ գտաւ ուրիշ ազնուական տիկնաց-

1. Վէպէր. Պատմ. § 209:

2. Պատմական, զինուորական և բժշկական յիշատակարանք Արևելեան բանակին, Ֆ. Գէսնուա, զնդապետ բժիշկ:

3. Մըք-Քարթէյ: Ի է:

մէ իրեն ընկեր¹ : Հաւասար եռանդեամբ և մեծագոյն անձնանուիրմամբ կը ջանային մեղմել զինուորաց դառն տառապանքները նաև Քորք Գթութեան, որոց խնամքներուն յիշատակը ցարդ կը հնչէ յԱրևելս : Ամէն օր ի կ . Պօլիս նոր հիւանդներ կը զըրկուէին և ամէն օր նոր հիւանդներ կը յաջորդէին ի ի բանակի, ի բաց առեալ մաղձախտէն անմիջապէս մեռնողքը, որք ժամանակ չունէին կ . Պօլիս տարուելու . հիւանդութեանց խնայածներէն մաս մ'ալ զոհ կ'ըլլային ցրտոյն և անօթութեան : Յունուար 21ին յերևան ելաւ նաև ծիւր ախտը (դիֆթուս) . որ ճարակեցաւ . նաև ի բժիշկս և ի հիւանդապահս, և այս ախտը տևեց մինչև պատերազմին վերջը : Արդարև Պատմութեանս սահմաններէն շատ դուրս կ'ելլէինք, եթէ ուզէինք այս ահաւոր ձմեռուան Գաշնակից բանակին քաշածները պատմել :

2. Հաշտութեանս մը բանակցութիւնք : — Ռուսք կը յուսային որ Գաշնակիցք պարտասին այս տառապանքներէն և Նիկողայոս կը մերժէր տակաւին խաղաղութեան մը համար որ և է առաջարկ, յորում չէր գտնէր իւր նախկին փափագները : Ըստ նոր առաջարկութեան մը, որուն բաց յԱրևմտեան Գաշնակցաց, իրենց հաւանութիւնը տուած էին նաև Բրուսիա և Աւստրիա, Ռուսաստան պիտի հրաժարէր իւր հովանաւորութենէն Մոլտավիոյ, Վալաքիոյ և Սերպիոյ վրայ, ազատ պիտի թողուր Գանուրի նաւարկութիւնը, աչքի պիտի անցնուէին ամենայն հին դաշինք, Տաճկաստանի քրիստոնեայք ընդ հովանաւորութեամբ պիտի ըլլային բովանդակ մեծ պետութեանց և Բ . Գոււրը մասնաւոր առհաւատչէիւք պիտի ապահովընէր Պետութիւնները : Եթէ Ռուսաստան չընդունէր այս պայմանները, այն ատեն Աւստրիա յանձն կ'առնուր պաշտպանելու Գանուրի իշխանութիւնները ընդ-

1834
Դեկտ. 2

1. Վսեմարձանաբարձ կոթող մը ցարդ անմահացուցած է անզդիացի վախճանեալքը մերձ ի Սկիւտար անզդիական զերեզմանոցին մէջ ի Հայտար փաշա :

դէմ Ռուսաստանի և հաշտութիւն մը շընդունել առանց Դաշնակցաց խորհրդակցութեան: Այս դաշանց բանակցութիւններէն քիչ օր վերջը Ռուսաստան ծանոյց որ յանձն կ'առնուր դաշնախօսութիւն մը՝ վերոյգրեալ պայմանքը հիմն դնելով, միայն ջնջելով Ռուսաստանի հովանաւորութիւնը Դանուբի իշխանութեանց վրայ, և ենթարկելով զանոնք ամէն Պետութեանց երաշխաւորութեան, անեղծ պահելով անոնց առանձնաշնորհութիւնքը: Դաշնակից պետութիւնք չուզեցին փոփոխել իրենց պայմանները և Աւստրիա հաւանեցաւ միանալու Արեւմտեան Պետութեանց և գունդեր կեդրոնացնելու Կալիցիոյ և Իրանսիլվանիոյ սահմանները:

1855
Յուլ. 26

3. Սարտենետա կը միանայ Դաշնակցաց: — Քիչ շարաթ վերջը կը միանար նաև Արեւմտեան մեծ Պետութեանց հետ փոքրիկ թագաւորութիւն մը որ իր հնարիմացութեամբ և խոհականութեամբ քիչ ժամանակուան մէջ հսկայաքայլ ընթանալով, Եւրոպիոյ առաջին պետութեանց կարգն պիտի անցնէր: Կոմսն Գափուր՝ այս ժամուն իտալիոյ նախագահ պաշտօնեայն, դարուս քաղաքագիտաց ամենէն սրամիտը և հեռատեսը, երբ առաջին անգամ առաջարկեց միանալով Արեւմտեան դաշնակցաց զօրք՝ զրկել ի Ղրիմ, իւր պաշտօնակիցք Ռադացցի, Տամորպիտա, Լամարմորա գօրավարը և այլք հակառակեր էին իրեն. նոյն ընդդիմութիւնը գտեր էր և ի խօսարանի. աջակողմեանք զերկիրը անբաւական կը տեսնէին պատերազմի մը ծախքերու և ձախակողմեանք չէին կրնար երբէք յանձն առնուլ Աւստրիոյ՝ իրենց ռիսքիմ թըշնամւոյն հետ միաբան քայլել ընդդէմ ժողովրդոց: Գափուր կը խիթար որ եթէ Եւրոպիոյ Դաշնակից պետութիւններէն դուրս մնայ, շընդունուիր յետոյ նաև Դաշանց ժողովքի մէջ, ուր կը գտնուէր Աւստրիա իւր մեծ հակառակորդը. և խօսարանին մէջ եղած ընդդիմութեամբ հանդերձ յաղթող գտաւ իւր ձարտասանութեամբ և 17,000 սարտենիացիք ընդ հրա-

մանատարութեամբ Լամարմորա զօրավարին մեկնեցան ի Ղրիմ, միանալու Գաշնակից բանակին:

4. Տրտունքք յԱնգղիա պատերազմին ղանդաղութեան համար. — Ասկումն Պաշտօնարանին. Փալմէրսդոն Պաշտօնարան: — Իսկ պատերազմին տեղը անգղիա-գաղղիացի բանակք յետին անգործութեան մէջ էին, և տփգոհութեանց զօրաւոր ձայներ բարձրացեր էին յԱնգղիա և ի Գաղղիա: Ռամիկը, միշտ սովոր զո՛մը փնտոռելու իր տփգոհութեանց, ի Մեծն Բրիտանիա ամենայն յանցանք Ալբերդ ամուսին իշխանին վրայ կը ձգէր, իբրև ծածուկ համամիտ Գերմանիոյ և Ռուսիոյ: Ծննդեան տօներէն վերջը Խօսարանին բացուելուն, Ռէօպըք երեսփոխանը յետ բանակին խեղճութիւնը նկարագրելու Աէվաստփոլի առջև, պարսաւեց պատերազմի պաշտօնէին ընթացքը: Իրեն միացաւ ի պաշտօնէից ճոն Ռըսսէլ ևս որ հրաժարեցաւ ի պաշտօնատարութենէ: Ի զուր Փալմէրսդոն վեհանձնութեամբ մը ջանաց պաշտպանել իւր պաշտօնարանը. քուէարկութեան ժամանակ Ռէօպըքի պարսաւը ընդունելի կ'ըլլար 305 քուէիւք ընդդէմ՝ 148ի, և Լորտ Ապըրտին անմիջապէս կու տար թագուհւոյն իւր հրաժարականը միաբան բովանդակ Պաշտօնարարին: Թագուհին այսպիսի ծանր ժամանակի մը մէջ հրաւիրեց զԼորտ Տէրպի՝ պաշտօնարանը կազմելու, որ յանձն առաւ, ընծայելով պաշտամունք Փալմէրսդոնի, Կլատսդոնի, և Սիտնեի Նէպըրի: Սակայն Փալմէրսդոն չուզեց մասնակցիլ Տէրպի պաշտօնարանի մը, և Լորտ Տէրպի առանց անոր՝ անկարող էր պաշտօնարան մը կազմելու: Թագուհին կոչէց զճոն Ռըսսէլ, որուն սակայն բարեկամք իրմէ ցրտացեր էին, յետ իւր պաշտօնակիցը պարսաւելուն և յախուռն հրաժարման: Վիկտորիա այն ատեն բռնադատուեցաւ կոչել զՓալմէրսդոն, որ անմիջապէս պաշտօնարան մը կազմեց, յորում մտան Չարլս Վուտ, Ճոն Ռըսսէլ, Ճըրճ Գորնըուոյ Լէվս և Նիւքասլի դուքս՝ պաշտօնեայ պատերազմի:

Փալմէրսդոն պաշտօնարանի գլուխ անցնելով, պա-

տերազմը նոր մղում մը ստացաւ. անմիջապէս խիստ հրա-
մաններ գացին Լորտ Ռէկլանի զինուորաց առողջա-
պահութեան համար, մատակարարութիւնը բարեկար-
գեցաւ և դադարեցան Խօսարանին մէջ այս նիւթոյս
վերաբերեալ տօգոհութիւնք: Փալմէրսդոն Ղրիմու
պատերազմին զլխաւոր մղիչներէն մին, կարևոր կը
տեսնէր փութով անոր վերջ մը տալու:

5. Նաբոլէոն կը դրկէ զգօրավարն Նիէլ. — 'Նոր
կարգադրութիւնք ի բանակի: — Գաղղիա ևս մե-
ծապէս յուզեր էր բանակաց անգործ մնալուն պատ-
ճառաւ. մանաւանդ երբ Նաբոլէոն իշխանը դառնա-
լով ի Գաղղիա, բացատրեց իրաց վիճակը ի Սէվաստո-
փոլ, տօգոհութիւնը ընդհանուր եղաւ թէ ի ժողովրդ-
դեան և թէ յարքունիս: Յունուարի մէջ ի Ղրիմ զըր-
կուեցաւ հրագինուց զօրավարն Նիէլ, համհարզ կայսեր,
փորձ և հմուտ երկրաչափ պատերազմի, քննելու իրաց
վիճակը և ըստ այնմ որոշողութիւն և մղումն տալ
պատերազմին:

Գիտէր Քանրուպէր որ պատերազմին ամենէն կա-
րևոր կէտն էր Մալաքոֆ բերդին տիրելը, որ ի սկզբ-
բան յանձնուեր էր Անգղիացւոց, և հիմա Լորտ Ռէկ-
լոն կը թողուր այդ պաշտօնը Գաղղիացւոց, որոնք Յու-
նուար 22ին զետեղուեցան Մալաքոֆի դիմաց և սահ-
մանուեցաւ յարձակում մը տալ ներկայութեամբ Նիէ-
լի: Բանակը նոր կազմութիւն մը ստացաւ. 76,000
զօրքը յորոց 60,000 կազմք, երկու զօրաբաժին եղան:
Ընդհանուր հրամանատարն Քանրուպէր իւր սպայակու-
տին գլուխ կը պահէր դարձեալ զգօրավարն Մարդէն-
փրէյ՝ երկրորդ ունենալով զՇարրիաս հազարապետը և զի-
նուորական երկրաչափք զ'Իիրրի և զՊիզօ: Առաջին զօ-
րաբաժնին ընդհանուր հրամանատարը կ'ըլլար զօրա-
վարն Փէլիսիէ՝ այն ինչ եկեալ յԱփրիկէէ. իր բաժան-
մանց զօրավարքն էին Ֆորէյ, Լը Վայեան, Քադէ, Սալ,
և սպայակուտին գլուխ՝ Ռիվէ զօրավարը. հրագինուց կը
հրամայէին Լըպէօֆ և Տայէմ: Երկրորդ զօրաբաժնին
ընդհանուր հրամանատարն էր դարձեալ զօրավարն Պոս-
քէ. իւր սպայակուտին գլուխ ունենալով զգօրավարն

Միսսէյ և հրազինուց վրայ զՊէտրէ և զՖրոսսար . բաժանմանց զօրավարքն էին Պուա, Գամու, Մէյրան և Տիլաբ : Կազմուելիք պահեստ գունդերը էին ուղղակի ընդ հրամանօք ընդհանուր հրամանատարին, յորս գոյր և Պահապանաց չոկատ մը, որոց կը հրամայէր զօրավարն Իւլրիք :

Սակայն այս ամենայն փոփոխութեամբք հանդերձ Փետրուար 19ին Մալաքոֆի դէմ պատրաստուած յարձակում մը, ամենեկին արդիւնք չունեցաւ :

6. Հանդերձանք Ռուսաց . — Էսմէր փաշա : —

Դաշնակցաց հաւասար եռանդեամբ կը պատրաստուէր նաև Նիկողայոս նոր զինուորագրութեամբք, որոց սակայն շատ դժուարին և մահառիթ եղաւ Ղրիմ ձիւնալից ճամբաներուն և սառնամանեաց համար : Փետրուար 17ին ուզեց կրկին սկսիլ պատերազմը նոր ոյժերով և Քրուլէֆ զօրավարը 25,000 զինուորօք բաղխեց տաճիկ բանակը յԵւփադորիա, որոց թիւն էր 21,000, և որոց կը հրամայեր Էսմէր փաշա : Յետ չորս ժամ կռուոյ մը Ռուսք յաղթուելով յետս վանեցան թողլով դաշտին վրայ մեռեալ 500 հոգի ըստ իրենց վկայութեան, իսկ Էսմէր փաշա նոյն օրը մեծ ցոյց տուաւ արութեան և վարժ հրամանատարութեան :

Ռուսք անխոնջ էին նոր բերդեր կանգնելու . մէկ օրուան մէկ գիշերուան մէջ բարձրացուցին Սէլէկինսքի բերդը . հազիւ 800^մ հեռի Դաշնակցաց ամբարտակներէն՝ Գարէնաժ գետին ալ կողմը : Դաշնակիցք ժողովով սահմանեցին չթողուլ թշնամուոյն յառաջել, և յարձակմամբ մը երթալ աւերել այս Սալթիկ ամրոցը և նորէն վանել զՌուսս պատնիշաց մէջ : 23ի երեկոյն յետ 10ին հինգ գնդեր ընդ հրամանօք Մոնէ զօրավարին ճամբայ ելան . յորոց երեքը գիշերուան լուսնին մտնելէն վերջը ժամը մէկուկիսուն հասան լուսնեայն մինչև Ռուսաց յառաջապահքը ուր ահաւոր հրացաններու հարուած մը սկսաւ վրանին : Մոնէ՝ թէպէտ ինքն ալ երեք գնտակ ընդունեւ էր, սակայն առանց կրակ պարպել տալու, հաստատուն քայլով գնդերուն հետ կը յառաջէր . հասան նաև զուաֆք ընդ հրա-

մանօք Գլէր զօրավարին և հոն խոնեալ Ռուսաց ընդդիմութեան յաղթելով, հրացաններու գնդակաց ներքև սկսան քանդել ամրութիւնքը մեծ դժուարութեամբ՝ պաշտպանուելով միանգամայն ընդդէմ թշնամւոյն: Եւ ահա լսեցին նոյն միջոցին ի պատնիշաց նահանջի փողին ձայնը. մինչ կը սպասէին օգնութեան մը. պէտք եղաւ կրկին կռուելով սուինով, քաշուիլ դէպ ի պատնէջքը, թողլով 80 հոգի մեռեալ և վիրաւորեալ 180 անձինք: Իսկ Ռուսք իրենց անկեալքը 65 հրատարակած են և 236 վիրաւորք: Երկրորդ օրը Սադէն Սախըն կը գրէր առ գաղղիացի սպարապետը. « Կ'աճապարեմ խմացնելու Ձեզ որ 23ին գիշերը մեռեալ զինուորք, որք մեր ձեռքը մնացին, իրենց չքեղ արութեան արժանաւոր պատուով թաղուեցան »: Գրութիւն մը՝ որ պատիւ կը բերէ թէ գրողին և թէ անկելոց:

7. Մահ Նիկողայոս Կայսեր: — Այս ձախողութիւնք վերջին դառն հարուած մը եղան Նիկողայոսի աննկուն սրտին, որ իր անընկճելի եռանդեամբ և յուսով, կը համարէր ցարդ պատերազմին ձախող ընթացից առաջն առնելու: Իւր զօրավարաց և զօրաց հետ զհետէ պարտութիւնք խիթալի ազդեցութիւն մը ունեցեր էին իր առողջութեան վրայ, զոր սակայն կուզէր արհամարհել: Մարտ 1ին տժգոյն երես մ'ունէր, ուրուն վրայ կը փայլէր վառվռուն կարմրութիւն մը. այսու հանդերձ օոսկալի ցրտով մը ուզեց զօրահանդէս կատարել: Իւր բժիշկը Մանտ՝ հրաման չէր տուած և ձիոյն սանձէն բռներ էր ըսելով. « Տէր Արքայ, մահուընէ առաւել է այս, ասիկայ անձնասպանութիւն մ'է »: Նիկողայոս մտիկ շըրաւ և անցաւ: Քիչ վերջը դարձաւ սաստիկ դողալով մը և տենդով: Նիկողայոս զգաց վտանգին մերձաւորութիւնը, իւր քովը կանչեց Կայսրուհին և թագաժառանգը, եռանդեամբ ընդունեցաւ սրբադան խորհուրդքը, ընդերկար խօսեցաւ առանձին թագաժառանգին հետ և ապա հրաժարեցաւ ի Կայսրուհւոյն և յորդուոց, իւրաքանչիւրը զատ պատ օրհնելով ուժով ձայնով մը: Քիչ վերջը շունչը

կը նուազէր և թողային կաթուած մը պատճառ կ'ըլլար մահու Ռուսիոյ երկաթակամ և երկաթակազմ կայսեր :

Նիկողայոսի վրայ պատերազմասիրութիւնը թերութիւն մ'էր և միանգամայն կատարելութիւն , որով յաղթելով բնութեան ամենամեծ դժուարութեանց , յանկարծակի նաւային զօրութիւն մը հաներ էր յերևան որ թէպէտ իր ծնած տեղը թաղուեցաւ : Ռուսաստանի դրամը հեղեղօրէն բնթացաւ հսկայաձև բերդերու , նաւարաններու և զինարաններու համար : Արուեստք , մատենագրութիւնք , գիտութիւնք , վաճառականութիւն ամէնք տեղի պիտի տային պատերազմի . Ռուսաստանի ժողովուրդը գոգցես ուրիշ բանի համար չէր բայց կռուելու և աշխարհակալելու :

Ռուսաստան պէտք էր պատկառելի ըլլալ Արեւմտից և հրամայել Արեւելից , այս էր ահա իւր գաղափարը : Ճոխ յարգունական ծախս , բնաւ ծախք մը չէր ըներ իւր անձին համար . յարգեայ անկողնոյ վրայ կը ննջէր , մաշած զգեստներ կը հագնէր , ոչ գինի կը գործածէր և ոչ ծուխ , կրօնասէր , եռանդուն և յարգող ամէն քրիստոնեայ պաշտամունք և պաշտօնեայք¹ : Իր կենաց սիրելի զբաղմունքներն էին զինուորական բարեկարգութիւնք , հրահանք և զօրահանդէսք : Ամէնն ալ յարգի յատկութիւնք , սակայն կը պակսէր այն կատարելութիւնը որ պիտի բարեխառնէր այդ տարաշափ եռանդը , որով և զինքը ժամանակիս իշխանաց թէ ոչ առաջին՝ բայց առաջիններէն մէկը անշուշտ պիտի ընէր :

8. Ալվերսանդր Բ . - Հաշտութեան փորձք . կորչաբով : - Նիկողայոսի անակնկալ մահուն լուրը , սարսափեցուց զբոլոր Իւրոպա : Մահը քիչ անգամ այն տպաւորութիւնը ունեցած է ինչ որ ունեցաւ յանկարծակի Նիկողայոսի աշխարհիս տեսարանէն վերնալովը : Նախ

1. Առանձին պատուովք և ուշադրութեամբք զանազան պարագայից մ.ջ պատուած է զՉ . Մինաս Վ . Բժշկեան Ղրիմու հայկաթուրիկաց ժողովրդական և մեծայարգ Առաջնորդը :

կին արհաւիրաց յաշորդեց փութով խաղաղութեան քաղցըր յոյս մը, առ այն մանաւանդ խորհել կու տային իւր յաշորդին հեզ և խաղաղասէր բարբը, և որչափ որ ալ գահը ելած ժամանակ երգուեր էր « իւր հօրը շաւղէն շխտտորելու և հաստատել և պահպանել զՌուսաստան, զօրութեան և փառաց ամենէն բարձր աստիճանին մէջ, և կատարել այն խորհուրդները և իղձերը զորս երկներ էին Մեծն Պետրոս, Կատարինէ, սիրելին Աղեքսանդր և իւր անմոռանալի հայրը », այսու հանդերձ առանց պատերազմը դադրեցնելու, հակամէտ երեցաւ դաշնախօսութեան մը և բանակցութիւնք սկսան ի վեննա: Պուոյ և Փրօքէշ կը ներկայացնէին զԱւստրիա, Տրուին տը Լիւյա և Պարքնէյ՝ զԳաղղիա, ճոն Ռլասէլ և Կոման Ուէսդմորլըս՝ զԱնգղիա, իշխանն Կորչաքով և Դիդոֆ՝ զՌուսաստան: Բրուսիա շընդունուեցաւ ի բանակցութեան:

Ռուսաստան այս անգամ յանձն կ'առնուր Յունաց վրայ հովանաւորութեան պահանջէն հրաժարելու, գուհացնելու Դաշնակից Պետութիւնները Դանուբի իշխանութեանց վերաբերեալ պահանջից մասին. բայց չէր կրնար ընդունել որ բոլորովին վերցուէր իւր ծովային զօրութիւնը Սև ծովուն վրայէն: Աւստրիա իբրև վերջին միջոց մը կ'առաջարկէր որ Դաշնակից Պետութիւնք ալ իրաւունք ունենային Ռուսիոյ հաւասար Սև ծովուն վրայ զօրութիւն ունենալ. և Կորչաքով ճարտար հնարիմացութեամբ մը կը պնդէր ստէպ, որ ինքը պատրաստ էր ընդունելու ամենայն առաջարկ որ « չէր փնասեր Չարի իշխանութեան, իւր սեպհական երկրին մէջ »: Եթէ Լորտ Ռլասէլ և եթէ Տրուէն տը Լիւյ, առանց իրենց վարչութեան հարցնելու, խորհուրդ տըւին Աւստրիոյ իւր առաջարկին վերջոյն ձև մը տալ: Դեսպանաց այս քայլին վրայ տհաճեցան եթէ Անգղիոյ և եթէ Գաղղիոյ պետութիւնք, որով թէ անգղիացի և թէ գաղղիացի դեսպանք հրաժարեցան մասնակցութենէն և իրենց յաշորդ ունեցան Ուիլլիէմ Մոլտուորթ և Վալէպի կոմսը:

Կորչաքով՝ որուն հնարիմացութիւնը մեծ դեր ու-

նեցաւ այս դաշնախօսութեան ժամանակ, ի սկզբանէ ջանացեր էր իւր կողմը շահիլ զԱւստրիա, որ տակաւին յերկմիտս էր և վերջապէս յաջողեցաւ համոզել զԱւստրիա որ Ռուսաստան խաղաղութիւն կ'ուզէր և թէ պէտք էին ընդունուիլ Աւստրիոյ առաջարկքը: Փոխադարձաբար Աւստրիա օրինաւոր կը գտնէր Ռուսիոյ բռնած ճամբան, որով երբ Անգղիա և Քաղղիա ձգեցին դաշնախօսութիւնը, Աւստիա հրաժարեցաւ պատերազմի մասնակցելէ. և Կորչաքով յաջողեցաւ թէ ոչ իւր կողմը ունենալ զԱւստրիա, գտնեայ զինեալ միջոցին մէջ, զանիկայ չէզոք պահել և Աւստրիոյ սահմանագլուխ զրկած զօրքը կոչել ի Ղրիմ:

9. Ինչնակից բանակք ի Ղրիմ — Նաւատորմիղ ի Ծովափնետայս: — Դաշնախօսութեան բանակցութեանց ապարդիւն մնալէն մինչև Ապրիլի սկիզբները, երկու կողմի բանակք գրեթէ ամէն օր ունեցեր էին փոքրիկ գուպարածներ. Ռուսք ջանալով Մամըլոնի շորս կողմը դարաններ շինելու և ամրացնելու, Քաղղիացիք զանոնք յափշտակել աշխատելով: Մարտ 22ին գիշերը Քրուլէֆ պատնէշներէն դուրս յարձակում մը փորձեր էր բազում գնդովք, բայց մթոյն պատճառաւ չկրնալով հրամայել, ետ մղուեր էր կորուստներով: 24ին Օսդէն Սախըն զինադադարումն խնդրեր էր՝ մեռեալները թաղելու համար¹. և Մարտի վերջին օրերը մինչև Ապրիլի սկիզբը դէպք մը չէր պատահած:

1. «Նոյն օրը (24) Օսդէն Սախըն զօրավարք զինադադարումն խնդրեց մեռեալները թաղելու համար: Ժամր 12 1/2ին սպիտակ դրօշներ կանգնուեցան Մամըլոնի (ռուս) և Վիկտորիա (դաշնակից) դրօշակց վրայ. և երկու կողմէն կրակը անմիջապէս դադարեցաւ: Իրուս և զաղղիացի սպայք մէկմէկու ընդ առաջ գացին բերդերէն կէս կէս նեռաւորութեամբ, մինչդեռ աշխատաւոր զինուորք կը հաւաքէին իրենց կողմի վիրաւորքը և մեռեալքը: Այս տխուր գործողութեան ժամանակ երկու կողմի սպայք կը խօսակցէին բարեկամութեամբ... կը խօսէին Բարիգու վրայ. ինչ ուրախութիւն պիտի ըլլար թէ միաբան գտնուէին ինն հայտութեանէն վերջը. հիմկուհիմայ

Ապրիլ 9ին բոլոր գծի թնդանօթք որոտացին ահաւոր կրակով մը յորոց 92ը Մալաքոֆի դիմաց էին, սակայն հեռաւորութեան և օդոյն անհարթութեան պատճառաւ ըրած վնասներն ոչինչ էր. մանաւանդ որ Անգղիացիք մեծ դանդաղութեամբ և անհամաձայնութեամբ շարժեր էին: Քաղղիացուց կողմանէ մահացու վիրաւորուեր էր Պիլօ զօրավարը, որուն մահը երազ եղաւ և զոր թաղեցին առանձին տեղ մը, ուրիշ սպանից քով¹, և պատերազմի երկրաչափական հրամանատարութեան մէջ յաջորդեց իրեն՝ զօրավարն Տարլմ, որուն քիչ վերջը պիտի փոխանակէր Նիէլ զօրավարը: Այս գուպարածէն ետքը Իսլանակիցք սահմանեցին նորէն սպասել օգնութեանց, որոց գալուստը մերձաւոր էր: Իսկ Խուսք այս ժամանակիս թշնամեաց ամբարտակները խորտակելու համար, ականներ փորեցին շատ մը տեղ և այդ է Ղրիմու պատերազմին մէջ Սարբերլեայ կոտ կոչուածը:

մէկմէկու միայն ծխախոտ կը հրամցնէին... Ժամը 5 1/2ին սգալից աշխատութիւնը լմացեր էր. մէկմէկու ձեռք կը սեղմէին գեռ թշնամի չեղած: Երբ նշանը տրուեցաւ, իւրաքանչիւր ոք ահապարեց յիւր գունդը, սպիտակ դրօշները վար առնուեցան, և ուշ մնացողք կ'ահապարէին իրից տեղը հասնիլ: Ժամանակն է. վասն զի ահա պիտի սկսի սարսափը, իբրև թէ զղջած բլլային որ քանի մը վայրկեան կրցան մոռնալ թէ դիմացէ դիմաց կը գտնուէին՝ մէկմէկու կրցած շարիքներն ընելու: Թնդանօթին այսպէս որոտալը զինաւազարմանէ մը վերջը սրտիս վրայ խորին տպաւորութիւն մը ըրած է տխրութեան: Խիստ ճակատագիր պատերազմի: Հազիւ բանակցութեան դրօշը կ'աներևութանար, ահաւասիկ մարտիկք կը բռնեն դարանը հրացանը ձեռուրներն, նշան առնելով առաջին գլխին որ արդելարանէ մը վեր երևի, կը շտկեն հարուածներն. վտանգութերևս սպաննելու զայն, որուն քիչ առաջ ձեռք տուեր էին և զոր թողուցին « միաս բարեաւ » ըսելով ժպիտ չըթունս»: Ծեյ. Գնդապետ սպայակուտի, համհարգ Պոսքէ զօրավարին:

1. Քաղղիոյ վարչութիւնը յետոյ գնեց երկիր մը, ուր հաւաքեց որչափ կրնար գաղղիացի մեռեալքը. ճոն կազմելով գաղղիական նպրեճիք մը ընդ գաղղիացի դրօշու:

Թշնամութեանց սկսելուն սպասելու ժամանակը, խնդրեցին ծովակալք, մանաւանդ անգղիացի մասը որ նաւատորմդէն կտոր մը դիմէ դէպ յԱզոֆու ծովը, և փճացնէ ի Կերջ, յԵնիքալէ, ի Մարիոփալ, Թայրան և յԱնափա ժողովուած պարէնը: Քանրոպէր ի սկզբան ընդդիմացաւ, բայց և իր խաղաղասէր բնաւորութեամբը շուզելով տհաճեցնել դաշնակիցքը, հրաման տուաւ որ գաղղիացի գունդ մ'ալ հետևի Անգղիացւոց: Նաւատորմիդ քիչ վերջը յաջողեցաւ իր ձեռնարկին մէջ « անարժան մոլեգնութեամբ այսպիսի քաղաքականացեալ Գաւրու մէջ. Կերջի հնութեանց թանգարանը աւերեր էր, ամէն կողմ իրեն հետք թողլով զհրդեհ և զաւեր ¹ »: Սակայն հազիւ մեկներ էր, երբ հրաման եկաւ ի Նարուլէոնէ մեծ յարձակում մը տալ արտաքոյ քան զպատնէչս: Քանրոպէր անմիջապէս հրաման հասցուց առ նաւատորմիդն մտնելու ի Գամիէչ, և այս հրամանը որ ընդդէմ էր կամաց Լորտ Ռէկլանի աւելի ցրտացոյց երկու սպարապետաց մէջ եղած յարաբերութիւնը և Լորտ Ռէկլան մերժեց նպաստելու Գաղղիացւոց արտաքին յարձակման մէջ: Քանրոպէր համարեցաւ որ թերևս իր մեղմ բարբը արգեք կ'ըլլար պատերազմին փութով յառաջելուն, չկարենալով ի գործ դնել այն տեսութիւնք որոնք իրեն անմարդասէր կ'երևային, կրկին և կրկին խնդրեր էր ի Բարիզէ՝ հրաժարիլ ի սպարապետութենէ և դառնալ իւր առաջին զօրաբաժնին հրամանատարութեան:

1. Վէպէր Պոմ. Ժամանակակից § 210.



ԱՆԿՈՒՄՆ ՍԷՎԱՍՏՈՓՈԼԻ. ԲԱՐԻՁՈՒ ԿԱՇՆԱԺՈՂՈՎԸ

1. Նաբուլէոն ի Լոնտրա . — Յուցահանդէս ի Գաղղիա . — Վիկտորիա ի Բարիզ . — 2. Մայիս 2 ի Ղրիմ . — 3. Զօրավարն Փէլիսիէ ընդհանուր սպարապետ . — Վերաւորիլ Կողիլէպէնի . — 4. Մահ Լորս Ռէկլանի . — Պատերազմ ի Չէռնայա . — 6. Ընդհանուր յարձակումն Սէվաստոփոլի վրայ . — 7. Մաք-Մահոն կը տիրէ Մալաքոֆի . — 8. Կորչաքով կը թողու զՍէվաստոփոլ . — 9. Սէվաստոփոլի անկմանէն զհաշտութիւն . — 10. Ռուսք կը տիրեն Ղարսի . — 11. Հաշտութիւն և դարձ բանակաց . — 12. Կաշնախօսութիւն Բարիզու :

1. Նաբուլէոն ի Լոնտրա . — Յուցահանդէս ի Գաղղիա . — Վիկտորիա ի Բարիզ : — Պատերազմին այսքան երկարելը մեծ տագնապ մ'էր ի Գաղղիա և Նաբուլէոն կը խիթար մինչև իսկ կայսերական շէնքին ցնցում մը . և առ այս ճարտարամտութեամբ հռչակել տուաւ՝ թէ կայսրն ինքնին սահմաններ է երթալ ի Ղրիմ : Արդեօք այս հաստատուն որոշողութիւն մ'էր թէ հնարք և միջոց մը՝ շատ ժամամանակէ ի վեր մտածուած ծրագրի մը համեմատ , Անգղիոյ թուգուհիէն այցելութիւն մը ընդունելու¹ : Եւ արդարև Ապրիլի մէջ Նաբուլէոն հանդիսական չքեղութեամբ կայսրուհւոյն հետ միաբան

1. Սիպէլ Գերմանացի պաշտօնական լուրջ պատմագիրն , հրատարակութեամբ մը (1895 Ապրիլ) կը հաստատէ իւր Յիշատակարանաց մէջ , որ Եւթէնի կայսրուհին դիմած ըլլայ առ Վիկտորիա թագուհին՝ ընդունելու այս այցելութիւնը , որպէս զի իւր ամուսինը Նաբուլէոն Գ արգելու ի Ղրիմ մեկնելու :

կը մտնէր ի Լոնտրա ուր, իրեն եղած սիրալիր ընդունելութիւնը, հաստատութիւն մը կ'ըլլար երկուց Պետութեանց մէջ եղած դաշնակցութեան: Թագուհին անձամբ կ'անցընէր Զանկապանի նշանը Նարոյէոն Գի ծունկը:

Անգղիայէն ի դարձին՝ Նարոյէոն Մայիս 15ին հանդիսապէս կը բանար Բարիգու Յուցահանդէսը՝ զոր խորհեր, վճռեր և կարգադրեր էր 1848ի Առժամանակեայ վարչութիւնը, և որ տեւեց մինչև Նոյեմբեր 15: Ամենայն ճարտարագէտք յամէն աշխարհաց, բաց ի Ռուսիոյ դիմած էին անդ ներկայացնելու իրենց մտաց և ջանից արդիւնքը: Կարելի է ըսել որ Քաղղիա հոն ցըցուց՝ թէ ի գեղարուեստի և մանաւանդ ի նկարչութեան՝ հաւասար կը մրցէր Խտալիոյ հետ և յիրս յիրս կը գերազանցէր:

Յուցահանդիսին պատճառաւ բազմութիւն ժողովրդոց դիմած էր ի Բարիգ և որչափ ալ կը տեւէր պատերազմին հոգը, այսու հանդերձ պակաս չէին զուարճութիւնք մանաւանդ բարձր և հարուստ դասուն մէջ: Վրայ եկաւ նաև յՈգոստոսի Վիկտորիա Թագուհւոյն այցելութիւնը իւր ամուսնոյն Ալպէրդ իշխանին հետ ի Բարիգ: Նարոյէոն այս այցելութեամբ ասպակովեալ կը համարէր իւր ցեղին գահակալութիւնը. կը մնար միայն այժմ զինուորական փառք մը ևս ունենալ ի Վրիմ զժողովուրը յինքն գրաւելու և ընդդիմակաց կուսակցութիւնքը ջաղխելու համար:

2. Մայիս 2ի Ղրիմ: — Թաշնամութիւնք նոր եռանդեամբ սկսեր էին: Ռուսք ամբարտաւենք բարձրացուցեր էին Քաշնակից պատնիշաց մօտ Մայիս 2ին: Քաղղիացիք նախ տիրեցին անոնց, բայց և փութով վանեցան ի Ռուսաց որք հրանօթներով ամրացնելու վրայ էին, երբ Փէլիսիէ զօրավարը խնդրեց ի Քանրոպէրէ՝ երթալ դանոնք յափշտակել: Քանրոպէր այսպիսի

Միանգամայն առաջին անգամ իբր կայսրուհի պատիւ կ'ընդունի Քաղղիայէ դուրս:

մահառիթ մրցման մը ընդերկար չուզեց հրաման տալ. բայց երբ Փէլիսիէ կը պնդէր հրամանը ընդունելու և կը յաւելուր որ « Եթէ իմ ձեռքս ըլլար, չէի վարաներ », այն ատեն հրաման տրուեցաւ գործելու: Փէլիսիէի ծրագիրը մեծ եռանդեամբ յառաջ մղեց Սալ զօրավարը՝ օգնեալ ի Պագէն և ի Լամողոուժ զօրավարաց: Մայիս 1-2ին գիշերը ժամը 10¹/₂ին, լուսնի լուսով Գաղղիացիք զօրաւոր յարձակմամբ մը բռնեցին Ռուսաց դիրքերը, զանոնք հալածելով մինչև կեդրոնական ամբարտակին խրամները, յետոյ տիրածնին միացուցին դաշնակից պաշտպանութեանց հետ՝ ահաւոր կրակի մը ներքև որ մահ կը ցանէր ի Գաղղիացիս, որոց հրանօթք ևս թէպէտ մեծ յաջողութեամբ կը մրցէին ընդ հրամանօք Լը Պէօֆ զօրավարին: Գաղղիացիք 118 մեռեալք ունեցան, 480 ալ վիրաւորք: Ռուսք կէսօրուընէ վերջը կրկին փորձ մ'ըրին կորսնցուցածնին ձեռք բերելու, բայց անհնար եղաւ:

3. Զօրավարն Փէլիսիէ ընդհանուր հրամանաւ տար. — Վիրաւորիլ Գողլէպէնի: — Գաղղիացուց այս յաջողութեան յաջորդեց Փէլիսիէի ընդհանուր հրամանատար անուանուելու լուրը, մինչ Քանրուպէր զարմանալի վեհանձնութեամբ ըստ իւր խնդրանաց կ'անցնէր ի գլուխ Ա գնդի՝ Բ զօրաբաժնին, ընդ հրամանօք Պուքէի և քիչ վերջը կը կոչուէր ի Գաղղիս:

Փէլիսիէ բանակին գլուխ անցած ժամանակ իր ձեռաց ներքև ունէր գրեաթէ 120,000 զինուոր, որք երեք զօրաբաժին կը կազմէին. առաջնոյն կը հրամայէր զօրավարն Սալ, երկրորդին՝ զօրավարն Պուքէ, երրորդին՝ յորում էին սլահեստ գունդք, զօրավարն Ռէնեօ տը Սէն Ժան ս'Անժէլի: Բովանդակ բանակն ընդ փիլեմոնթեցիս, որոնք էին 17,000 Լամարմորս զօրավարին հրամանատարութեամբ, և ընդ տաճիկս կրնար 200,000 համարուիլ:

Յունիս 6ին և 7ին ահաւոր կրակ մը և յարձակում մը կը սկսին ընդդէմ Սպիտակ ամրոցաց և կանաչ բերդերուն որ Մալաբոֆէն 700 քայլ հեռու էին, մինչ Անգղիացիք կը բաղխէին Գարիէրի բերդերը, յորոց

հարկ էր անցնիլ մեծ Ռէտանի հասնելու համար: Բուռն եղաւ մաքառումը և Գաղղիացիք թէպէտ կը կորսնցնեն Լաւարանդ գորավարը և շատ անձինք, սակայն կը յաջողին տիրել այդ երկու կարևոր կէտերուն, որ առաջին քայլ մ'էին ի Սէվաստոփոլ, և զինուորական ժողովքով կը սահմանուի Յունիսի 18ին յարձակումն տալ քաղաքին վրայ: Տաճիկ օգնական գունդերուն զօրավարն էր Օսման փաշա, յետոյ այնքան անուանի ի Փլեւնայ: Իսկ ի Ռուսաց Յունիս 7ին կոուոյն մէջ ինկեր էր քաջ և ճարտար գորավարն Գիմոֆէիէիֆ:

Յունիս 17ին Գաշնակցաց հրանօթք բոլորը մէկէն կ'որոտան, տաճիկ և փիէմոնթեցի գունդք Յ'տիուքինի բարձանց վրայ գումարուած, կը պատրաստուին Մաքէնգի բարձանց տիրելու: Փէլիսիէ գորավարը զՊոսթէ գորավարը չորս գնդովք ի Չէռնայա ղրկեր էր և Մալաքոֆի տիրելու պաշտօնը իրեն պահէր էր, հրամանատար գորարածնին ունենալով զգորավարն Սէն Ժան տ'Անժէլի: Սակայն Ռուսք դիտեր և ըմբռներ էին թշնամւոյն շարժումը և Քրուլէֆ ինքնին զլուխ կեցած էր Գարուպէշնայի սմբուլթեանց: 18ին առաւօտ տակաւին յարձակման նշանը չտրուած, Մայիան զօրավարը վրիպակաւ մը կը սկսի բաղխումը և կ'խորտակուի թշնամւոյն կրակէն ինքն ալ մահացու վիրաւորուելով, մինչ ձախ թևը նոր կը մտնէր ի կռիւ: Փոքր անցքեր կը միացնէին զՄալաքոֆ դղեակը Ռէտանի հետ. տ'Օզըմար գաղղիացի գորավարը կ'անցնի և կը տիրէ անցքերուն ահաւոր կրակի մը ներքև, բայց տեսնելով որ անհնարին է դիմանալ հրոյն, կը նահանջի յետս. նոյնը կ'ընէ նաև Պրիւնէ գորավարը. և Գաղղիացիք այն օրը կը կորսնցնեն 2000 սնձանցմէ աւելի: Անգղիացիք ալ ի ձախն վանուեր էին Մեծ Ռէտանի առջև, կորսնցնելով 1,570 անձինք յորս և զգօրավարն Ղոն Գէմիպէլ. իսկ Ռուսաց կողմանէ 797 անձինք մեռեր էին և 4,127 վիրաւորք. սակայն ստացեր էին պատերազմին փառքը և կորչաքով իրաւամբ հոչակեց յաղթութիւնը ճոխ բանախօսութեամբ մը առ բանակն, յորդորելով զանոնք ի սպառ խորտա-

կումն թշնամուոյն : Սակայն ի մեծ դժբաղդութիւն Ռուսաց, երկու օր վերջը անմահանուն զօրավարն Գողդէպէն որ իւր պաշարման արուեստիւ հռչակաւոր ըրաւ Սէվաստոփոլի պաշտպանութիւնը, ծանր վէրք մը ընդունելով յազդեր՝ գնդակէ մը, բռնադատուեցաւ յոչ կամս տարուիլ ի Պագչէ Սարայ, որով և դաշնակցաց Սէվաստոփոլ մտած ժամանակ, ինքը շաքաթներով առաջ հոնկէ ելեր էր :

4. Մահ Լորտ Ռէկլանի : — Պատերազմին տուած մնասնեբուն հաւասար էր տակաւին մաղձախտին կոտորածը : Թէպէտ Յուլիսի մէջ սկսէր էր նուազիլ, յայց Յունիս 18ի պատերազմէն 10 օր վերջը բռնուեր էր նաև Լորտ Ռէկլան, որուն առողջութիւնը արդէն շատ վտանգեր էր դաշնակցաց յետին պարտութեան վրայ և անկարելի եղաւ ազատիլը : Մեռաւ շճին և դագաղը անցնելով գաղղիացի և անգղիացի շարուած գունդերու մէջէն, ունենալով ետևէն հեծեալ շորս դաշնակից սպարապետները իրենց սպայակուտով, տարուեցաւ ի շոգենաւ : Իսկ ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնեց Սիմսըն զօրավարը որ քիչ առաջ ղրկուեր էր ի Ղրիմ՝ իբր գլուխ սպայակուտին : Մեռաւ մաղձախտէն Փիէմոնթի բանակին մէջ նաև Լամարմորա զօրավարին եղբայրը : Մեռաւ թշնամեաց գնդակէ մը Յունիս 11ին Նախիմոֆ ուս ծովակալը : Ռուսք 18ի կուռէն վերջը զանազան յարձակմունքներ փորձեցին, սակայն միշտ կորուստներ ունեցան, և անկելոց թուոյն մէջ պէտք է յիշել քաջ Պրաթովսքի զօրավարը :

Իսկ Դաշնակցաց բանակին մէջ Փէլիսիէ գՊոսքէ զօրավարը կոչեր ի Չէոնայայ և կրկին յանձներ էր անոր Մալաքոֆի յարձակման հանդերձանքը : Օգոստոսի սկիպները երկու կողման բանակք պատրաստութեանց և ճամբաները հարթելու անցուցին, երբէք չհրաժարելով փոքրիկ գուպարածներէ, զորս մի առ մի յիշելը ընդարձակագոյն գրչաց կը թողունք, և յիշենք միայն զանոնք՝ որոնք ազդեցութիւն մ'ունեցան իրաց ընթացքին վրայ, որ սկսեր էր ընթանալ ի վերջ :

5. Պատերազմ ի Չէռնայա : — Օգոստոս 16ին կորչաքով փորձեց երեք զորաբաժնով, որոյ աջոյն կը հրամայէր զօրավարն Ռիտ և ձախակողման զօրավարն Լիփրանտի տիրել Չէռնայայ գծերուն : Ռուս յարձակող բանակը կազմեալ 51,000 հետեւակէ և 7,000 հեծելով, ունենալով 226 թնդանօթ, իւր առջևն ունէր 18,000 գաղղիացի որոց հրամանատարն էր զօրավարն Հէրպիլլիոն : Գաղղիացւոց աջը բռնած էին 9,000 սարտենիացիք որոց ընդհանուր հրամանատարն էր Լաւարմորա, և կը բաժնուէին յերկուս զօրաբաժինս, որոց առաջնոյն կը հրամայէր զօրավարն Տուրպնտօ (Ղոկատք Ֆանտի և Չիալտինի), և երկորդին զօրավարն Իրոդդի (Ղոկատք Մոնդէլէքքիօ և Մոլար), ունենալով իրենց պահեստ ճիւղակիւնիանի զօրավարին Ղոկատը : Քիչ մը ևս յաջ յեւանկեան կազմեալ ի Չէռնայայէ, բանակած էին տաճիկ գունդերը, որոց ընդհանուր հրամանատարն էր Օսման փաշա, վասն զի Էսմէր փաշա մեկնեալ էր ի Կ. Պօլիս և վեց գնդերու կը հրամայէր Սէֆէր փաշա՝ ծննդեամբ լեհացի : Տաճկաց բանակին թիւն էր 10,000. այս թիւերուն վրայ աւելցնելու է նաև անգղիացի հեծելագօրէն 3,000 սակրաւորք : Օգոստոս 16ին առաւօտը ահաւոր մառախուղով մը Լիփրանտի զօրաբաժինը շուեց Սարտենիացւոց վրայ, մինչ ուրիշ գունդեր տարբեր շարժումներ կը կատարէին : Գաղղիացի հրացանակիրք Իրաքդիրի դիմացէն իջան դէպ ի ջրանցքը, ուր կը յառաջէին Ռուսք ներփակեալ մշուշի մը մէջ : Ժամը 5ը անցեր էր երբ մտախուզը քիչ մը փարատելով, Իաշնակիցք տեսան որ Ռիտ զօրավարը իւր գունդերով կը յառաջէր դէպ ի Ֆէտիուկին լեռները և դէպ ի Չէռնայայ կամուրջը : Ի գուր Ֆայի զօրավարին Ղոկատը ուզեց դէմ առնուլ, Ռուսք գայն վանելով, Ռ. քրանիոյ գունդը անցաւ զգետը, Վէնֆէն զօրավարին հրանօթից ներքև : Այս յաջողութեան վրայ Ազոֆի գունդերը շարժեցան ի կեդրոնէ դէպ ի գետը և հարկ եղաւ որ Վէնֆէն և Ֆայի զօրավարք միացնեն բոլոր իրենց զօրութիւնքը կրկին գՌուսս Չէռնայայէն

անդին վանելու համար, և յորոց ինկան զօրավարն Ռիտ և իւր սպայակուտին գլուխը զօրավարն Վայմար :

Կորչաքով գունդերը կազմելով կրկին ուղղեց զանոնք Չէոնայայ անցքին վրայ . ահաւոր մտախուզ մը օգնական էր իրեն, և թէպէտ ժամը 7¹/₂ին փարատեցաւ, սակայն գաղղիացի գունդերը սեղիք սուին և Ռուսք սկսեր էին Ֆէտիուքինի լերանց վրայ ինկնալ, երբ հազարապետն Տանէ բազմաթիւ գնդերով ինկաւ Ռուսաց վրայ և զանոնք բռնադատեց յեսսս նահանջելու : Ուրիշ կրորդ փորձ մ'ալ ի Ռուսաց ապարդիւն մնաց և ժամը 9 էր երբ Կորչաքով նոր գունդեր զրկեց դժուարին նահանջը պաշտպանելու համար : Ռուսաց կորուստը կը համարուի Չէոնայայի կամ Գրաքդիրի պատերազմին մէջ 8,000 անձինք, իսկ դաշնակցացը 1,747 անձինք յորոց 250ը Սարտենիացիք, որոնք մեծ դեր ունեցան Չէոնայայի պատերազմին մէջ և յամառարութիւն :

Այս Ռուսաց յետին յարձակումը կրնայ համարուիլ, վասնզի այն օրուընէ սկսան եռանդեամբ ընդհանուր նահանջին պատրաստութիւնը և կազմել այն կամուրջը որ հատանելով զծանծաղուտը կը միացնէր իրարու Նիկոլա և Միքայէլ բերդերը, ունենալով 1000 մեղր երկայնութիւն :

Չէոնայայի պատերազմէն վերջը ալ շգալորեցան հրանօթք և յարձակմունք : Ռուս զինուորք բերդորէից և փողոցաց մէջ կ'ինկնային գնդակներէ, ի զուր ջանալով անխոնջ արութեամբ դէմ կենսալու դաշնակցաց զօրութեան և կարկատել աւերեալ դղեակները : Վաստի շտեմարաններէն մին պայթելով 130էն աւելի զինուոր ծանր վիրաւորեր էր : Օրը 100էն աւելի կը նուազէր թուերնին, և պիտի գար ժամանակ՝ յորում ալ պիտի չզօրէր իրենց անընկճելի կամքն : Սեպտեմբեր 5էն սկսեալ ումրակոծումը, քիչ օրուան մէջ 5000 ռուսէն աւելի սպաններ էր : Մեծ էր նաև Գաշնակցաց կորուստները ի պատերազմէն և ի հիւանդու-

թեանց, հարկ էր որ կամ յաղթէին և կամ նաւերը մտնելով, հեռանային այդ անընկճելի պարիսպներէն:

6. Ընդհանուր յարձակումն Սէւաստոփոլի վրայ: — Սեպտեմբեր 7ին զօրավարաց հաղորդուեցաւ երկրորդ օրուան ընդհանուր յարձակման ծրագիրը հինգ զանազան կէտերէ, յորոց առաջին կարևորն էր Մալաքոֆի տիրելը, և որ կը յանձնուէր Պոսքէի զօրաբաժնէն Ա գնդին որուն կը հրամայէր Մաք-Մահոն զօրավարը որ գՔանրուպէր փոխանակեր էր անոր Գաղղիա մեկնելէն վերջը: Երկրորդ կարևոր կէտն էր տիրել մեծ Ռէտանի՝ յանձնեալ Անգղիացուց: Մի և նոյն միջոցին հարկ էր դիմել փոքրիկ Ռէտանի, բերդորէից միջնորմին և կեդրոնական ամբարտակին վրայ:

Կորչաքով թշնամեաց գունդերուն շարժելէն գուշակեր էր ընդհանուր յարձակում մը և յանձնուեցաւ քաղաքին պաշտպանութիւնը Սէմիաքին զօրավարին 17,000 զինուորօք, մինչ Քրուլէֆ 45,000 հոգովք պիտի ընդդիմանար արուարձանին մէջ:

Ժամը 8ին դաշնակից գնդերն կը սկսին իրենց շարժումը և կէսօրուընէ առաջ Փէլիսիէ հաստատուեցաւ իւր սպայակուտով Պրանսիոն բերդը: Կէսօրուան ժամանակ յանկարծ կը լոեն ութ հարիւր թնդանօթք և կը լսուի « Յառաջ » հրամանը, որուն կը յաջորդեն զօրաց աղաղակք, թմբուկք և փողք և մեծ եռանդ մը, որուն մղմամբ Մալաքոֆի և փոքրիկ Ռէտանի խրամները կ'անցնին:

Սէն-Փոլի շոկատը երազութեամբ կը հասնի Փոքր Ռէտանի բերդերը, հոնկէ վանելով զՌուսս, որք սակայն կրկին ետ կը դառնան պահեստ գունդերով: Ի զուր Գաղղիացիք ընդ երկար կը մրցին պահելու ստացածնին, հոն մահացու վիրաւոր կ'ինկնան երկու հազարապետք, զօրաբաժնին սպայակուտին զլուխը Մանեան՝ և գնդին հրամանատարն Սէն Փոլ. ի զուր կըրկին Պիսոն զօրավարը կը ջանայ մնալ տիրած կէտերուն վրայ. հարկ կ'ըլլայ տեղիք տալ:

Այս միջոցիս Լամոդոուժ զօրավարին Պուրպաքի շոկատը կը մրցեր տիրելու Մալաքոֆի միջնորմոց՝ ճամ-

բուն վրայ. ուր կը հասնի նաև հազարապետն Փիքար իւր ջոկատով, և կը յաջողի հասնիլ մինչև երկրորդ որմը՝ արուարձանին մուտքը: Սակայն Ռուսք կը վանեն վերստին թէ զՓիքար և թէ զՊուրպաքի, որոց թէպէտ կը հասնին օգնութեան Ֆայի և Մէլինէ գորավարք, բայց ուս նաւերուն ահաւոր կրակին ներքև գունդերը կ'ընկրկին. Սուդի հրամանատարը կ'ինկնայ մեռեալ և Մէլինէ կը վիրաւորուի:

Քիչ վերջը Պուքէ գորավարն ալ ծանր վէրք մը ընդունելով հրամանատարութիւնը կը յանձնէ Տիւլաք գորավարին և յոչ կամս կը բռնադատուի պատերազմէն դուրս տարուելու:

Անգղիացիք առաջին թափով հասեր էին Մեծ Ռէտանի մինչև բարձր անկիւնը, սակայն հոն ահաւոր կրակի հանդիպելով բռնադատուեր էին ապաւինիլ իրենց պատնէշները, և Սիմսըն գորավարը սաշմաներ էր երկրորդ օրուան սպասել յարձակումը նորոգելու համար:

Այսպէս Ռուսք յաղթող էին գրեթէ ամէն կէտերու վրայ և Գաշնակիցք յետին ջախջախումը պիտի կրէին եթէ Մաք-Մահոնի ջոկատը շտիրէր և հաստատութեամբ չմնար Մալաքոֆի վրայ:

Կէսօրը նշան տրուելուն Մաք-Մահոնի գունդերէն զուաֆներուն Ա ջոկատը որոց կը հրամայէր հազարապետն Գոլլինս և ուրիշ հետևակ ջոկատ մը ընդ հրամանօք Տըզան հազարապետին, առանց սպասելու կամըրջասանդխոց, մագլցելով ելեր էր Մալաքոֆի վրայ զարմանալի երաշութեամբ մը թշնամուոյն հարուածոց հոգ չընելով, և Ա զուաֆներուն արծիւը կանգնուեր էր բերդին վրայ, նս մանաւանդ նախահոգակ զգուշութեամբ որոնելով գտեր էր ականի մը թելերը և զանոնք փծացուցեր էր: Ռուսք չկորսնցնելու համար զՄալաքոֆ կը բազմանային երկրորդ պատնիշաց ետևը և անխուսափելի կորուստ կը սպառնային յանդուգն տիրողաց, երբ Մաք-Մահոն յառաջ կոչելով պահեստ գունդերը, մոլեգին մրցմամբ կը յաջողի վանելու զՌուսս բովանդակ ամրոցէն, պաշտպանուելով միանգամայն Վինուա գորավարին ջոկատէն որ կը բռնէ ամրոցին կիրճը: Մաք-Մա-

հոն փութով կը կազմէ բերդին պաշտպանութիւնը, իւրաքանչիւր գնդին յանձնելով պահելու իւր տեղը « Ող կամ մեռեալ » . և կը հանդերձի Ռուսաց վերջին փորձը ընդունիլ իրեն պահեստներով, ամենուն կը հրատարակէ որ « եմ հոս և պիտի մնամ » : Ռուսք գիտէին որ Մալաքոֆ կը տիրէր Սէվաստոփոլի վրայ, և եթէ զայն կորսնցնէին, հարկ էր թողուլ նաև զքաղաքը անոր համար Մալաքոֆի անցից կրճին զիմաց յետ արիւնհաշեղ և յուսահատ կռուէ մը յամենուստ պաշարեալ կրակի մէջ, խառն ի խուռն քաշուեցան արուարձանին մէջ : Ժամը 4էր երբ դադրեցաւ Մալաքոֆի բերդին կռիւը : Գաղղիացիք զայն առնելու համար գործածեր էին 4, 700 զինուոր, յորոց 2, 934ը մեռեալք էին կամ ծանր վիրաւորք, այդքան յուսահատ եղաւ Մալաքոֆի վրայ մրցումը :

Կեդրոնական Ամբարտակին զիմաց Գիւստոն և Դրոշիւ ջոկատք սակաւին կը շարունակէին կռուելու և Դրոշիւ ծանր վէրք մը ընդուներ էր . ի զուր Լը Վալյան զօրավարը յառաջ մղեր էր իր զօրաբաժինը, ի զուր Սալ զօրավարը հասուցեր էր տ'Օզլմար զօրավարին գունդերը, մեծ էր Ռուսաց ընդգիմութիւնը, որոց հարուածներէն ինկեր էին Ռիվէ և Պրըզոն զօրավարք : Փէլիսիէ աւելորդ համարելով որ և է կրկին կռիւ մը յետ իւր ձեռքը ունենալու զՄալաքոֆ, հրամայեց դադրեցնելու պատերազմը :

Այսպէս հինգ յարձակման կէտերէն, միոյն մէջ յաջողեր էին, սակայն Մալաքոֆի առումը բաւական պիտի ըլլար վերջացնելու Արևելեան պատերազմը, մեծ պատիւներ բերելով Փէլիսիէի և Մաք-Մահոնի, որոց արդիւնքն էր . առաջինը քիջ վերջը կը ստանար ի վարձ՝ Դուքս Մալաքոֆի պատուանունը և մարաջխտութեան գաւազանը, երկրորդը արդեամբ Լէժիոն տ'Օնէօրի Մեծ Խաչը և ծերակուտի անդամակցութիւնը :

Գաղղիացիք Սեպտեմբեր 7ի պատերազմին մէջ կորսընցուցեր էին 7, 684 անձինք, յորոց 1751 մեռեալք, Անգղիացիք 2271, յորոց 385 մեռեալք . Սարտենիա-

ցիք 300 զինուոր: Իսկ Ռուսաց մնասուն թիւը համարուեցաւ 11,690 յորոց 2,684ը մեռեալք:

8. Կորչաքով կը թողու զՍէվաստոփոլ: — Մալաքոֆի անկումէն վերջը ալ անհնարին էր Ռուսաց մնալ ի Գարապէշնայս արուարձանին և ոչ ի Սէվաստոփոլ, որոյ վրայ կը տիրապետէր Մալաքոֆի թնդանսթը: Կորչաքով նոյն գիշերը սգը հանել տուաւ տակաւին Ռուսաց ձեռք եղած բովանդակ ամրոցքը, մի և նոյն միջոցին ահաւոր կրակով մը այրեց քաղքին մէջ ինչ որ 11 ամիս պաշարումէ վերջը անարատ մնացեր էր քաղքին մէջ, վառսդանոցք, բերդորայք և շտեմարանք: Ընկրղմեց նաւատորմէն մնացեալ նաւերը և մնացեալ զինուորովք քաշուեցաւ ծոցին հիւսիսակողմը, անցնելէն վերջը խորտակելով նաւակէ կամուրջները, և ամբացաւ քաղաքին արևելեան բլրոց վրայ. որպէսզի Փէրոքոֆէն միշտ հաղորդակցուի թեան մէջ մնայ ամրոջ կայսրութեան հետ:

Երկրորդ առաւօտ դաշնակից գունդերէն ոմանք խուհեմութեամբ մտան քաղաքը և բռնեցին: Սեպտեմբեր 10ին Պազէն զօրավարը քաղաքին ընդհանրէր հրամանատար անուանեցաւ. Գաղղիացիք բռնեցին քաղաքը և Անգղիացիք Արուարձանը:

Որչափ որ յաղթութիւնը դաշնակիցք տարեր էին և իրենց էր պատերազմին պատիւը, սակայն եթէ ուղենանք դատել զինուորական նկատողութեամբ, առանց յաղթողին պատուէն նուազեցնելու, Սէվաստոփոլ իւր անկմամբն անգամ աւելի մեծ անուն կ'ունենար քան որ և է յաղթութիւն, և ցորքան Պատմութիւնը և Աշխարհագրութիւնը յիշեն զՍէվաստոփոլ, պիտի պատմեն միաբան Գողլէպէնի հանձարոյն մեծութիւնը և ռուս զօրավարաց և գունդերուն անձնանուէր անխոնջ արութիւնը. շատ ըլլայ ըսել միայն որ Սէվաստոփոլի անկումը երբէք զինուորական Ռուսաստանի նախատինք մը բերած չէ, այլ կ'ը յիշուի նմա միշտ իբր պարծանք մը¹:

1. «Մեր (անգղիացի) զինուորք մեծ քաջութիւն ցուցուցին, ընդ-

9. Սէվաստոփոլի անկմանէն ցիաշտուծիւն : — Սէվաստոփոլի անկմամբ, պատերազմը շփոթ և տարտամ կերպարանք մ'առաւ : Սեպտեմբեր ՉԳին տ' Ալլոնվիլ զօրավարը Եւփապորիայէն ելլելով, կրցաւ իւր գունդերով հասնիլ մինչև Քանկիլ ուր բանակած էր ռուս Քորֆ զօրավարին հեծելագօրը, և կրցաւ տիրելու թըշնամույն մի քանի հրանօթից : Փէլիսիէ մարաջախտն աւաջարկեր էր տիրելու Քինպուրն բերդին Տներբրի դիմաց : Լայրնս և Պրիւա ծովակալք ճամբայ ելան և Հոկտեմբեր 17ին սկսան քաղաքը ումրակոծելու, որուն հրամանատարը Քոքանովիչ անձնատուր եղաւ : Թուսք թողուցին Տներբրի աջ կողմը Օչաքով ամրոցը, որով Դաշնակցաց ձեռքը մնաց գետին բերանը :

Հիւսիսային դաշնակից նաւատորմիզն ալ կործանեց զՍվէսպուրկ ի Տինլանտիա : Շուէտ՝ պաշտպանողական դաշինք մը հաստատեց Արևմտեան պետութեանց հետ :

Նոյեմբեր 6ին Լյովեր փաշա տաճիկ գնդերով անցաւ Ինկուրը, և մտնելով ի Մնկուէլիա տիրեց ռուս պատնիչաց :

Վրայ հասաւ ձմեռը և Դաշնակիցք կրկին սկսան մրցիլ ելնպախտի և ահաւոր ցրտերու ներքև :

10. Թուսք կը տիրեն Ղարսի : — Սակայն Թուսք ևս ունեցան իրենց յաջողութիւնքը ի Հայաստան

հակառակն մեծ անբաւականութիւն մեր զօրավարքն և դրութիւնը : Մէկ ռուս մը միայն 'Իողլէպէն' Սէվաստոփոլի պաշտպանողը, պատերազմին զինուորական առաջին կարգի համբաւ ստացաւ, վկայութեամբ ըզրոր աշխարհի : Իսկ մեր և կամ Դաղդիացուց կողմէն նոր անուն մը չգտնուեցաւ, նա մանաւանդ մէկ քանի խոստացող կամ նախկին համբաւք խորտակուեցան : Անդդիա քաղաքագիտական գոնացուցիչ արդիւնք մ'ալ չունեցաւ » : Մըք Քարթէյ, իլ :

Թուս բանակի մէջ վիրաւորեալ զինուորաց մասին բազմաթիւ ծառայող քահանայից մէջ յիշել պարտական ենք ի մասնաւորի Մխիթարեան Ուխտէն զՀ. Սիմոն Վ. Ճուլարտեան զոր պետութիւնը պատուեց առանձին մետալիւ :

Տաճկական: Ղարս ամուր բերդաքաղաքը, զոր պաշարեր կը Մուրավիէֆ զօրավարը, անձնատուր կ'ըլլայ սովէն, յետ արի պաշտպանութեան մը ի Վալֆ փաշայէ, օգնեալ անգղիացի Ռելլիէմս և մաճառ Քմէդս զօրավարներէն. որով Ռուսք յետ Սէվաստոփոլի մեծ հարուածոյն, նոր յոյս մը և խրախոյս մը զգեցան:

Արդէն Կորչաքով երբէք միաքը դրած չէր տեղի տալ և կ'իմացնէր իւր բանակին որ « բնաւ կամովին պիտի չթողուր այն երկիրը, ուր Ս. Վլատիմիր մկրտութիւն ընդուներ էր »: Աղեքսանդր Բ Կայսրը անձամբ գալով ողբալու աւերեալ քաղաքը, խրախուսեր էր զգինուորս: Մեղու ուս լրագիրը կը քարոզէր որ « պատերազմը ահաւոր կերպարանք մը պիտի առնու. կործանեալ Սէվաստոփոլի տեղ, ուրիշ մեծագոյն մը պիտի յառնէ » . և յիրաւի թերևս պատերազմը շարունակէր ինչպէս կը փափագէր Փարմէրսդոն և Անգղիա, եթէ Նարոլէոն որ անկմամբ Սէվաստոփոլի կը համարէր հասած իւր նպատակին, չկեցնէր պատերազմին ընթացքը հաշտութեան փափագով: Ռուսաստանի քաղաքական մասն ալ ասոր կը փափագէր և Աղեքսանդր Բ յետ Ղարսի առման, իւր պատուով կրնար փափագիլ դաշնախօսութեան մը:

11. Հաշտութիւն եւ դարձ բանակաց: — Արդէն ծածուկ բանագնացութիւնք սկսեր էին ի Բեդրպուրկ և ի Վեննա. Աղեքսանդր Բ յօժար էր օր մը առաջ աւարտելու այն պատերազմը զոր իւր հօրմէն դժբաղդ ժառանգութիւն մը ստացեր էր: Յունուար 16ին Բեդրպուրկի ժողովուրդը կ'իմանար որ Չարը դադրեցուցեր էր Նեւլայի վրայ հանդերձանքը և խաղաղութեան մը համար բանակցութիւնք յաջողութեամբ հը յառաջէին: Երկու օր վերջը իշխանն Կորչաքով, գեսպան ի Վեննա կը սկսէր իւր յարաբերութիւնքը Արևմտեան Պետութեանց հետ և Փետրուար 1ին Աւստրիոյ, Գաղղիոյ, Անգղիոյ և Տաճկաստանի հետ կը ստորագրէր հաշտութեան մը ստուերագիծ առաջարկքը, զոր պիտի վիճէր և հաստատէր Բարիզ գումարուելիք Դեսպանա-

Ժողով մը: Վերջապէս Ապրիլ 2ին թնդանօթին ձայնը բանակաց աւետեց ի Ղրիմ հաշտութիւնը, որով պիտի դադրէին ի սպառ թշնամութիւնք և իւրաքանչիւրը պիտի դառնար յիւր հայրենիս¹:

12. Իաշնախօսութիւն Բարիզու: — Անքան էր Պետութեանցմէ ոմանց եռանդը պատերազմը աւարտելու, որ տակաւին ամիսը չըրացած կը գումարուէին ի Բարիզ Աւստրիոյ, Քաղղիոյ, Անգղիոյ, Տաճկաստանի, Սարտենիոյ և Ռուսաստանի նուիրակք ընդ նախագահութեամբ Քաղղիոյ Արտաքին գործոց պաշտօնէին Վալէւոքիի: Ռուսաստան ներկայացուցիչ զրկած էր զՕրլոֆ կոմսը և զՊրունոֆ պարօնը: Տաճկաստան զՄէհէմմէտ Ղէմիլ փաշա, Անգղիա զԼորտ Քլարէնտոն, Աւստրիա զկոմսն Պուոլ և զՀիւպնէր, Սարտենիա զՔաւլուր և զմարգիզն Վիլլամարինա. Ժողովոյն ատենադպիրն էր գաղղիացին Պէնէտէզդի: Եւ որպէսզի Պետութեանց մէջ բարձի աւագութեան խնդիր չծագի, առաջին անգամ դեսպանք բաղմեցան իրենց Պետութեանց այրենարանին մէջ ունեցած կարգաւ:

Իաշնակիցք հրաւիրեցին նաև զԲրուսիա, որ մին էր 1841ի դաշանց ստորագրողներէն, և Մանդեֆֆէլ զօրավարը Հացֆէլտի հետ միաբան փութացին հասնելու ի Բարիզ. և թէպէտ Լորտ Քլարէնտոն կը պա-

1836
Փետ. 21

1. Հաշտութենէն վերջը երկու երբեմն թշնամի բանակք մեծ սիրով կապուեցան իրարու հետ: Ապրիլ 15ին ռուս ընդհանուր հրամանատարը զօրավարն Լուտէրս եկաւ առ Իաշնակից սպարապետս մինչև Գրաքդիբի կամուրջը և հացկերոյթ մը տուաւ անոնց բլրոց վրայ: Այս ազնուական մտածութեան համապատասխանելու համար, մարաշխտոն Փէլիսիէ և Գոտրինկզըն զօրավարը հրաւիրեցին զԼուտէրս զօրավարը զօրահանդիսի մը. և Փէլիսիէ ներկայացոյց մի առ մի զամէնը ռուս հրամանատարին: Քաղղիացի զօրահանդիսէն վերջը Գոտրինկզըն հանդէս բրաւ անգղիացի զօրաց Լուտէրսի առջև. և այս վերջին անգամ զէնք առնելին էր ի Ռուսաստան. վասն զի այդ օրուրնէ սկսան երագութեամբ նաւերը մտնել, հայրենիք դառնալու համար:

Հանջէր որ Բրուսիա Նեղուցներու խնդիրներէն զատ ուրիշ սահմանելեաց մէջ չմտնէ, այսու հանդերձ Վալէւաքիի խնդրանօք Բրուսիա ալ մասնակցեցաւ Դաշնախօսութեան:

Ժողովքը յետ մի քանի եօթնեակ բանախօսութեանց, սահմանեց որ Ղարսը նորէն տրուի Սուլթանին, նոյնպէս դաշնակիցք պիտի դարձնէին Ռուսաստանի զՍէփաստոփոլ և ուրիշ առնուած անդեր:

Բարձրագոյն Դուռը իրաւունք ունէր վայելելու Եւրոպիոյ ուրիշ Պետութեանց նման եւրոպական դրութեան մը արդիւնքը. Սուլթանն ալ հաւասարութիւն պիտի տար իրաւանց՝ Քրիստոնէից ընդ մահմետականս և Դաշնախօսութեան յօդուածոց մէջ անցուեցաւ նոյն օրը Սուլթանին մէկ հրովարտակը այս ազատութեան նկատմամբ. որուն վերայ պիտի հսկէին նաև Արևմտեան Պետութիւնք: Ռուսաստան կը հրաժարէր որ և է հովանաւորութենէ մը Սուլթանին հպատակաց վրայ. կը կորսնցնէր ինչ որ շահեր էր Քայնարձիքի, Պուքքէշի և Ադրիանուպօլսոյ դաշամքք: Սև ծովը չէզոք կ'ըլլար և երկու Պետութիւնք ևս չէին կրնար չոն զինուորական նաւարան ունենալ, բաց ի տասանց փոքր նաւերէ, իրենց ափանց պաշտպանութեան համար: Ազատ կ'ըլլար Դանուբի նաւարկութիւնը և Եւրոպական Զանձնաժողով մը պիտի հսկէր անոր պահպանութեան վրայ: Ռուսաստան կը հաւանէր փոքրիկ փոփոխութիւն մ'ընել Պետարապիոյ սահմանին վրայ և կորսնցնել փոքր մաս մը յերկրէն, որ պիտի միացուէր Մոլտավիոյ, ընդ իշխանութեամբ Բ. Դրան: Մոլտավիա և Վալաքիա պիտի շարունակէին իրենց հարկատուութիւնը Բ. Դրան, և անխախտաւ պիտի պահուէին իրենց ամենայն առանձնաշնորհութիւնք ընդ ապահովութեամբ Պետութեանց, յորոց սակայն ոչ մին իրաւունք ունէր առանձին միջամտութեան մը: Սերպիա իր ներկայ վիճակին մէջ կը հաստատուէր: Նեղուցներու վերաբերեալ որոշուեցաւ որ ոչ մի պատերազմական օտարազգի նաւ կարենայ մտնել ի Չանաքալէսի և ի Վոսիոր առանց Սուլթանին հրովար-

տակի: Նոյն իսկ միայուն մարտանաւքը կրկին ընելու համար կարեւոր էր հրովարտակ: Առանձին դաշամբ մ'ալ Ռուսաստան և Տաճկաստան սահմանեցին Սև ծովու մէջ վեց թեթև նաւ միայն պահել ոչ առաւել քան 4800 տակառակչոց և ուրիշ չորս ալ 200ի: Ուրիշ առանձին դաշամբ մ'ալ Ռուսաստան կը խոստանար երբէք չամրացնելու զԱլանտ կզգին:

Այս գլխաւոր որոշողութիւնքը ընելէն վերջը, որոց համար գումարուեր էր Դեսպանաժողովը, Վալէւաքի նախագահը Գափուր Կոմսին թելադրութեամբ բացաւ Պետութեանց առջև նաև Իրաքի ինքիբը, որուն մէկ մասը գրաւեր էր Աւստրիա և վարած իշխանութիւնը պարզ հովանաւորութեան մը ձև չունէր: Ծանր և երկարատև հակահարկութիւնք ծագեցան ընդ աւստրիացի նուիրակս և ընդ այլ պետութիւնս. և թէպէտ ոչ մի որոշողութիւն յերևան եկաւ, այսու հանդերձ իմացաւ բովանդակ Եւրոպա որ 17,000 Սարտենիացիք ի Ղրիմ գացեր էին՝ ի սալիոյ ազատութեան համար կռուելու ոչ ընդդէմ Ռուսաց այլ ընդդէմ Աւստրիոյ:

Ժողովքը խօսեցաւ նաև Յունաստանի թագաւորութեան ապահովութեան համար, ինչպէս նաև սանձ դնելու պելճիացի ազատ տպագրութեան. և վաճառականական յառաջադիմութեան համար սահմանեց որ պատերազմի ժամանակ ազատ էր վաճառական նաւ մը երբ չէզոք կամ նոյն իսկ թշնամի դրօշ կը կրէր, միայն թէ պատերազմական նիւթոց վաճառանենգութիւն չըլլայ:

Այս եղաւ ահա Արևելեան պատերազմին հետևանքը կամ լաւ ևս ըսել՝ Բարիզու Դաշնաժողով կամ դեսպանա, ժողովը որ գրեթէ 15 տարւոյ միջոց կառավարեց զԵւրոպա. և այդ Դաշանց վարչութեան ժամանակին մէջ, յԵւրոպա մեծագոյն ազդեցութիւնը սուա Գաղղիա, և մանաւանդ իւր գլուխը՝ կայսրն Նաբոլէոն, որ գոզցես պարգամատու մը երևցեր էր Եւրոպիոյ դիմաց: Ամենուն աչքը այս նոր դատաւորին վրայ էր, որ բաղդախնդիր փորձերէ, իշխանութեան ամենէն բարձր կէտը հասեր էր, և որ դաշնախօս դեսպանաց դիմաց

մեծամեծ հանդէսներով ցուցըցեր էր իւր ճոխութիւնքը, փառքը, ազդեցութիւնը և միանգամայն ճարտարութիւնը: Պատերազմի գացող Պետութեանց դեսպանք ի դարձին կրնային մէկ մէկու հարցնել, եթէ այնքան կեանքեր նուիրեր էին, այնքան զոհեր ըրեր էին, արդեօք Դաշնախօսութեա՞ն մը համար. որուն տևողութեան վրայ ամէնքն իսկ պէտք էին տարակուսիլ, քանի որ ջանացեր էր ոչնչացնել Ռուսական Պետութեան երկու դարերէ ի վեր քաղաքականութիւնը և ջանքը, որ անհնար էր թէ օր մը շունենար իւր հակադարձը:

Սակայն խաղաղութիւնը առ ժամս ամենուն ցանկալի ըլլալով, Դաշնախօսութիւնը քաղցր հնչեց ամենուն¹:

1. Բարիզու Դաշինքը ստորագրելու համար, մասնաւոր անձ մը ղրկուեցաւ՝ Բուսաքանութեան Պարտէզէն կայսերական արժույն թեւէն փետուր մը խլելու, և որ յետոյ ոսկեպատ՝ ապակոյ մը ներքև, զարդ մ'եղաւ կայսրուհւոյն սենեկին:



ԳԱՂՂԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՓԱՅԼՔ. ՆԵՐՔԻՆ ՏԱԿՆԱՊՔ

(1856 — 1859)

1. Ծնունդ Կայսերազուն Իշխանին . — 2. Շանեկանութիւն Իրամոյ. Տազնապ դրամական . — 3. Պարոն Հոսման քաղաքապետը գլուխ Աէնի. Բարիզ քաղաք զուարճութեանց. Օտար Իշխանք Ի Բարիզ . — 4. Օրէնսդիր ժողովքը. Կերակոյտար. Օրէնք նամալսարանական. Տազաբուլութիւն . — 5. Իկեղեցական վէհք. Սիպուր Արքեպիսկոպոս Բարիզու. Սպանուձ . — 6. Իշխանական այցելութիւնք և նանդէսք . — Մահ Գազենեաք զօրավարին . — 7. Օրսիիի դաւը . — 8. Օրսիիի դաւոյն նետեանք. Սպառնալիք ընդդէմ Անգղիոյ . — 9. Օրէնք Ընդհանուր ապահովութեան. Տարազբուլիւնք . — 10. Դատաստան և Գլխապարտութիւն Օրսիիի . — 11. Հասարակապետականք. Վիկտորիա Թագուհին Ի Շէրպուրի. Իշխանն Նաբոլէոն յԱ՛հէրի . — 12. Թագաւորականք. Զուլուձ . Դատ Մոնղալամպէրի :

1. Ծնունդ Կայսերազուն Իշխանին : — Դեռ չըստորագրուած Արևելեան պատերազմին Դաշնախօսութեան թուղթը , որ արդէն յինքեան մեծապէս կը բարձրացնէր և կ'ամրապնդէր Նաբոլէոնի անունը և իշխանութիւնը , ուրիշ ցեղական մեծագոյն ուրախութիւն և աւետիս մը կ'ունենար Կայսրութիւնը և Պոնաբարդեան ցեղը : Նաբոլէոն Գ Մարտ 16ին առաւօտ արու զաւակ մը կ'ունենար և որչափ դժուարածին եղեր էր , մինչև վտանգաւ իսկ կենաց Կայսրուհւոյն , այնքան առաւել եղաւ ցնծութիւնը թէ Կայսեր և թէ համօրէն կայսերականաց որոնք շառաշալից կեցցէներով ընդունեցր էին Մոռնի դքսին աւետիսը , և կայս-

ըը իր ծանուցման մէջ կը կոչէր զնա Որդի Գաղղիոյ: Այս վերջին պատուանունը ընդհանուր զարմանք պատճառեց, մինչև Նարոլէոն բռնադատուեցաւ առ ծերակոյտն Մաղթանաց պատասխանին մէջ բացատրութիւն մ'աւելցընել որ' ինքն ըլլալով բովանդակ Գաղղիոյ ընտրեալը, և բովանդակ Գաղղիոյ փափագն ըլլալով իւր արու որդիմը ունենալը, այն պատճառաւ կ'անուանէր զայն Որդի Գաղղիոյ: Այս ծննդեան առթիւ նորոգուեցան հին արքայական սովորութիւնք. ողորմութիւնք աղքատաց, ձրի տեսլարանք, մի ամասկոսն առաւել համօրէն պաշտօնէից կայսերական արքունեաց և կայսրը ու կայսրուհին՝ կնքահայր կնքամայր կ'ըլլային ի բովանդակ Գաղղիա այն օրը ծնած տղայոց, որոց թիւը կը հասնէր 3834ի:

Իսկ իշխանին մկրտութեան հանդէսը կատարուեցաւ Յունիս 14ին թագաւորական չքեղութեամբ Նոդր-Տամ եկեղեցւոյն մէջ, յորում գտնուցեան առաւել քան հինգ հազար հրաւիրեալք: Կնքահայրն էր Հովմայ քահանայապետը Պիոս թ, և կնքամայր Շուէտի թագուհին. երկուքն ալ բացակայք և կոչուեցաւ Յովհաննէս Յովսէփ Նարոլէոն: ԶՊիոս թ Քահանայապետը կը ներկայացնէր կարգինալն Փաղրիցցի որ գլուխ էր հանդիսին, իսկ նորածին իշխանին կառաց քովէն ձիաւոր կ'ընթանային մարաջախտքն Քանրուպէր և Պոսքէ: Միւս մարաջախտք չըլապատած էին կառքը: Կերկայ էին Մկրտութեան ութսուն և վեց եպիսկոպոսունք ի Գաղղիոյ:

Այս տօնախմբութենէն քիչ օր վերջը ի ներկայութեան բոլոր Աբբունեաց՝ Դիւլըրիի մատրան սեղանոյն վրայ դրուեցաւ Օրհնեալ Վարդը զոր Քահանայապետը կ'ընծայէր կայսրուհւոյն: Գաղղիոյ ամեն կողմ քաղաքաց և գիւղօրէից շահապէ դրամական ստորագրութիւններ բացին յայտնելու իրենց սէրը առ կայսրուհին և իւր զաւակը: Քիչ օրուան մէջ 60,000 ֆրանք հաւաքուեցան, որոց վրայ աւելցնելով կայսրը, կազմեց տարեկան 30,000 ֆրանքի եկամուտ մը որով հաստատուեցաւ Որբանոցն կայսերագուն իշխանին:

Իշխանին ծննդեամբ՝ վարչութիւնը առաջարկեց ի ծերակուտի՝ թագապահ վարչակալութեան օրէնք մը կայսրուհւոյն համար, որ ընդունուեցաւ յետ վիճարանութեանց, որք աւելի ձե մը դաձեր էր էին քան ստոյգ կարծեաց նշանակք:

Գաշնախօսութեան և արքայազուն իշխանին ծնընդեան առթիւ հանդէսք և տօնք նոր կերպարան մը տուեր էին Բարիզու, զոր Կայսրութիւնը գիտակ ժողովրդեան բարուց, ուզեց առաւել ևս յառաջ մղել ժողովրդականութիւն ստանալու նպատակաւ: Եւ ժողովուրդը ստէպ յեղափոխութիւններէ և վարչական փոփոխութիւններէ տաղտկացած, պատրաստ էր հանդարտ վաստակելու արհեստից և վաճառակութեան ասպարիզին մէջ, եթէ չունենար դրամական մեծ տագնապ մը ևս:

2. Շահեկանութիւն Դրամոյ. Տագնապ Դրամակաւ: — Կայսրութեան մեծագոյն երևոյթներէն մին էր դրամոյ մեծագոյն խաղը և շահեկանութիւնքը, որոնք յանկարծակի բարձրանալով կամ իջնելով, մեծամեծ ալլալութիւնք, հարստութիւնք և կամ սնանկութիւնք կը բերէին քաղաքացւոց հարուստ կամ միջին դասերու մէջ: Արդէն Վրիմու պատերազմէն եկած և երբեմն հնարուած լուրերուն համեմատ սեղանաւորք և առանձին դրամագէտք մեծապէս օգտուեր էին. ձախող լուրերը բարդելով երբեմն և ըստ այնմ հաւաքելով արժէթղթեր, զորս խաղաղութեան կնքուելէն վերջը մեծագին կարող էին վաճառել. և այս շահավաճառութիւնը դարձաւ իբր արհեստ մը և վաճառականութիւն մը որ սփռուեցաւ ամէն կարգի անձանց սիրտը և զոր աւելի զրգուեց վարչութեան կողմանէ 80, 000, 000 փոխառութիւնը, որ քաղքին գեղեցկանալուն պիտի գործածուէր: Այս շահավաճառութեան տենդը այնքան սաստկացաւ, մինչև Կայսրը բունադատուեցաւ զանազան յայտարարութեամբք առջևը առնուլ, և ուրախակից եղաւ եւանդագին առ Փոնսար և Ռսկար Վավալէ յորոց մին ի թատեր, միւսն գրքոյկով յայտներ էին այս շահավաճառութեան աղե-

տալի հետևանքները: Աւելցաւ ասոր վրայ 1856 տա-
րւոյն բերոց անբաւականութիւնը ի Քաղղիա, որով
վաճառականք բռնադատեալ էին օտար երկիրներէ
գնելու բերոց մաս մը. և որովհետև Հնդկաստան և
Չինաստան ոսկևով միայն յանձն կ'առնուին առու-
տուր ընել, հարկ էր որ մետաղը ելլէր Քաղղիայէն և
Դրամատունը կրկին բռնադատուած էր պարսպը լե-
ցնել, գնելով փոխառութեամբ: Յամին 1856 հինգ
միլիոն ֆրանք ոսկիէ աւելի ելած էր Քաղղիայէն:

Յայտնի է որ դրամական անձկութեան մը միջոց,
առաւելագոյն նեղուողը աղքատ դասն է որ կը տըր-
տընջէր մեծապէս իւր համօրէն պիտոյից սուղնալուն վը-
րայ. և որովհետև գաւառք և քաղաքք շատ մը փոխառու-
թիւններ ըրած էին վարչութեան հաճելի նորոգու-
թիւններ ընելու համար, հիմայ այս փոխառութիւնքը
վճարելու համար, հարկ էր որ նոր տուրքեր և տեղա-
կան հարկեր աւելցնէին: Կործաններ էին ի Բարիզ
ի Լիոն և ի Մարսիլիա հին փողոցներ, նոր ծրագրի
վերածելու համար և բնակութեանց պակսելով, տանց
վարձքերը սնհամեմատ բարձրացեր էին: Աշխատա-
ւորք և աղքատք կը բողոքէին այս բարեկարգութեանց
դէմ, որոնք իրենց սուղի կ'ըլլային: Վարչութիւնը
նպաստով մը ուզեց օգնել աշխատաւորաց. բայց ոչ-
ինչ էր այդ:

Նարոլէոն Գ այս տագնապին մէջ, երբ յանակըն-
կալս ամենուն, փոխեց Բարիզու քաղաքապետը ըզ-
Պէրժէ և անուանեց զՊարոն Հոսման, որուն անունը
միշտ կից և միարան պիտի ընթանայ մայրաքաղա-
քին մեծամեծ նորոգութեանց, կառուցմանց և պերճու-
թեանց հետ:

3. Պարոն Հոսման քաղաքապետ. Բարիզ քաղաք
զուարճութեանց. Օտար իշխանք ի Բարիզ: — Հաս-
ման՝ որուն պապը Յեղափոխութեան ժամանակ մեծ
դեր ունեցեր էր, պարզ նօտար մ'էր երբ Լուի Նա-
բոլէոն տակաւին իշխան, իրեն անձնանուէր անձինք
կը փնտռէր: Հոսման փութով հաճելի եղաւ Նախա-
պահ իշխանին որ զինքը անդէն բարձրացուց և ա-

նուանեց քաղաքապետ ի նահանգս : Ինքն էր որ ապագայ կայսրը ողջուներ էր ի Պորտո , այն նշանաւոր բայց աւանդ ոչ ի գլուխ ելեալ շողոքորթութեամբ , ինչպէս ինքն իսկ կը խոստովանի իւր Յիշատակարանաց մէջ « Կայսրութիւնն՝ է Խաղաղութիւն » :

Հոսման նորադանդ ըլլալով , Կայսրուհին մեծ զըժուարութեամբք յանձն առաւ որ Սէնի քաղաքապետ ըլլայ : Բարիզ հասնելուն պէս խանգարեց նախ ինչ Ելեմուսք հաստատեալ էր իւր նախորդէն : Անդէն բազում խորհրդականք հրաժարեցան : Ամենայն ոք կը սպասէր նաև քաղաքապետին հրամարումը , որ հաստատուն մնաց սակայն Օթէլ տը Վիլի մէջ և ահա տարի մը վերջը կը փոխուէին Գիւլբրիի և Լուվրի կերպարանքները , կ'այլակէրպէր Շանգ Էլիզէ , Ռիվոլիի փողոցը և Սղրազպուրկի ծառուղին կաւելցնէին իրենց ընդարձակութիւնը և շէնքերը , Պուա տը Պուլլոնյը կը զարդարուէր և հոնկէ մինչև Յաղթական կամարը եղած մեծ ուղին նոյն իսկ Կայսեր և Կայսրուհւոյ փափազով իւր անունը կը ստանար :

Այս փոփոխութիւնք այս շինութիւնք , կայսերական արքունիքը և հանդէսք նորօրինակ ազդեցութիւն մը ըրած էին Բարիզու վրայ որ կարծես իրեն համար կ'ուղէր սեպհականել յայսմ՛հետէ՝ բոլոր աշխարհի կեդրոն մը ըլլալ զուարճութեանց և պարսպամանց իրաւունքը : Բազմապատկեցան թատրոնք , կրկէսք , տեսարանք , խաղք և ամենազգի զուարճութիւնք : Քաղղիոյ նահանգաց մէջ գետերու ողողմունք , որոյ նոյն իսկ կայսրը ելաւ այցելութեան , զԲարիզ անպայ թողուցին , ուր ետևէ ետև կը յաջորդէին իրր հիւրք կայսերական պալատան Գուքսն Քէմպրիճի , Վիւրդէմպէրկի Թագաւորը , Աւստրիոյ Ֆրտինանտ արշիզուքսը , Շուէտի Օսկար իշխանը , Պափիէրայի Ատալպէրդ իշխանը , Գուքանայի Գուքսը , Բրուսիոյ Ֆրէսերիք Գուլիէլմոս իշխանը , և այլք :

Կայսրութիւնը կրնար համարիլ որ հասեր էր իւր նպատակին և փառաց ծայրը . և սու ժամս ինքն էր Եւրոպիոյ վրայ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցու-

ղը և ամենուն ուշադրութիւնը և յարգանքը գրաւողը: Ար մնար միայն խորագնին փնտուել որ արդեօք այս ազդեցութիւնը այս համարումը հիմնեալ էր հաստատուն հիմանց վրայ:

4. Օրէնսդիր ժողովք. Մերակոյտը. Օրէնք համալսարանական. Տպագրութիւն: — Օրէնսդիր ժողովքը արդիւնք մը ըլլալով Կայսրութեան, առ ինքն լուծիւն մը տիրած էր թէ Բարիգու Պաշնախօսութեան և թէ ի պատիւ Կայսերագուն իշխանին ծննդեան առթիւ եղած հանդիսից ժամանակ: Իր ամենայն զգացմանց մէջ՝ կ'ուզէր յետին հլութիւն և հպատակութիւն մը ցուցնել առ Կայսերական գահը: 1857ի նիստերուն մէջ ընդունեցաւ զինուորական պատժական օրէնսդրութիւնը, մերժեց տարեկան 100,000 Ֆրանքի թուշակ մը առ զօրավարն Փէլիսիէ իբր յաղթող Սէվաստոփոլի, որովհետև արդէն այդ պատճառաւ ստացեր էր մարաջախտութեան գաւազանը. նորոգեց Պաղլիոյ Պրամատան առանձնաշնորհութիւնքը. Անդրովկիանեան նաւարկութեանց ընկերութիւնը հաստատեց. քուէարկեց որ 80,000 Ֆրանքի գնուի Նարուէոն Ա. նոյի Ս. Հեղինէ բնակած տունը. յետոյ ընդունեցաւ տարեկան Ալեմուտքը, առաջնց իսկ վիճարանելու կամ դիտելու պարտուց առաւելութիւնը. ապա ցրուեցաւ, որովհետև ըստ Սահմանադրութեան, նոր ընտրութիւնք պէտք էին ըլլալ: Այս ընտրութեանց մէջ սակաւք յոյժ եղան հասարակապետականք յորս Լամիլ Օլիվիէ և զօրավարն Քալէնեաք, յետինս՝ նիստերուն բացմանէն առաջ մեռաւ:

Մերակոյտը որ կը բազմէր Լիւսսամպուրի պալատը և ուսկից բեմը վերցուեր էր իբր աւելորդ կահ մը, քըննել միայն կրնար որպէս զի Օրէնսդիր ժողովոյն մէջ առաջարկեալ օրէնքները: Ն'ըլլան հսկառակ Սահմանադրութեան: Ալ սակայն շատ դժուարութեամբ կը համբերէր այս բռնի լուծեան և ուզեց վիճարանել մանրամասն, ինչպէս կ'ընէր երբեմն, սակայն այդ պատճառաւ մեղմ յանդիմանութիւն մը ստացաւ: Մերակոյտը շուզեց խոնարհիլ. և երբ Օրէնսդիր ժողովքէն

ներկայացուեցաւ որ փառաւոր կառաց վրայ տուրք մը աւելցուի, ծերակոյտը, յորս բազումք չքեղ կառքերու տէր էին, մերժեց այդ տուրքը իրրեւ հակառակ Հաւասարութեան: Բայց և մեծ խնամքով քններ և եռանդուն կերպով վիճելով ընդունելու էր այն Ատենավճիւղը, որով կը կարգադրուէր Այսրուհունյն թագապահութիւնը, թէ յանկարծ մեռնէր Այսրը դեռ յաջորդ իշխանագունը չհասած յաւազութիւն: Այս քուէարկութեամբ ծերակոյտը ևս յայտնեց որ կը թողուր իւր սեպհական իրաւանց պահանջմունքները, և կը հպատակէր նոր կարգաց:

Նորութիւնք չէին միայն ի վարչութեան, այլ տարածուեցան նաև Ուսուցչական կարգաց մէջ: Տուրդու Հասարակաց Արթութեան պաշտօնեայն, Ուսմանց նոր ծրագիր մը պատրաստել տուելու էր ի հոշակաւոր Տիւմա բնալուծէն. յորում կը նուազէր մատենագրական և ընտրական ուսումը և կ'ընդարձակուէր գիտնական մասը: Աշակերտ մը յետ կրթական չորրորդ տարւոյ, կարող էր ընտրել զՎիրս կամ զՎիտութիւնս: Պատմութեան և փիլիսոփայութեան ուսմունք և ամենայն ինչ որ կրնար գաղափարաց ընդարձակութիւն մը տալ մեծապէս ամփոփուած էին: Տուրդու վախճանեցաւ յամին 1857 և իրմէն ըրած կարգադրութիւնք որչափ ալ երկու տարի միայն կեանք ունեցան, բայց տեսնուեցաւ մեծ հարուած մը ընտիր և մատենագրական ուսմանց: Իւր յաջորդները ջանացին հաստատելու նախկին կարգերը, տալով Համալսարանի իւր անկախութիւնն. բայց ի զուր. հարուածը միանգամ տըրուած էր:

Տպագրութիւնը ևս ունեցաւ իւր սահմանքը. յորս յիրաւի կային օրէնք կարեւորք և պահպանողք հասարակաց բարոյականի և օրէնք՝ որոց նպատակն էր միայն նոր վարչութեան հակառակորդները նուազեցնել: Լրագիրք ունեցան իրենց համար խստութիւններ և դատաստանարաններ: Լրագիր մը ոչ միայն պէտք էր դրամական ապահովութիւններ տալ, տուրքեր և ւաւանդներ վճարել, այլ և յօդուածները ոչ մի ակ-

նարկ պէտք էին ունենալ վարչական նոր հաստատութեանց մասին, ապա թէ ոչ մէկէն կը դատապարտուէին առ ժամանակեայ կամ՝ մշտնջենաւոր դադարման: Նոյնը էր նաև գրքերու և հասարակաց դասախօսութեանց համար: Արդէն դարուս ամենէն աւելի դժուարին խնդիրն եղած է միաբանելու տպագրութեան ազատութիւնը ընդ օրինաւոր խստութիւնս, հասարակաց բարոյականի և կարգաց պահպանութեան համար և սաէպ զհպատակա չգրգռելու ընդդէմ վարչակալաց, որք արհամարհ կը դառնան ժողովրդեան աչաց և կը խանգարեն բարոյականը: Եւ զարմանք չէ եթէ Բ. Կայսրութիւնը ևս չկրցաւ յաջողիլ յայսմ, չունենալով յինքեան նաև այն նախնաւանդ հայրենի ազդեցութիւնը որ կը պակսի ամէն նորահաստատ ցեղի մը:

5. Եկեղեցական վէճք. — Սիպուր արքեպիսկոպոս Բարիզու. — Սպանումը: — Երկրորդ Կայսրութեան մէջ Առաջնոյն նման նորոգութեան և ընդարձակութեան Եկեղեցական վէճք: Այլ որովհետև պատմութիւննիս առաւել քաղաքական է, գիտնալով հանդերձ որ ժամանակիս ընդհանուր ոգին ըմբռնելու համար անհրաժեշտ հարկ էր համառօտիւ գոնեայ յիշել այն եկեղեցական վէճք, որոնք մեծ արձագանգ ունեցան ընդ բովանդակ Եւրոպա, և գորս գոգցես կը սնուցանէր և կը մղէր Բ. Կայսրութիւնը, ոգիներ: զրադեալ բռնելու համար, այսու հանդերձ կը թողունք զայնս եկեղեցական պատմագրոց, յիշելով միայն համառօտիւ այն վէճը որ ծնաւ ընդ Սիպուր Արքեպիսկոպոս Բարիզու և ընդ Իւնիվէր Կրագիրը, որուն խմբագրապետ էր անուանին Լուի վէյիս:

Սիպուր Գերապայծառը զոր Բ. Կայսրութեան առաջին տարիները կը գտնենք եռանդուն ամէն ժողովրդական բարեկարգութեանց, Գավէնեաք զօրավարի վարչութեան ժամանակ ընտրուեք էր արքեպիսկոպոս Բարիզու փոխան տ'Աֆրը Գերապայծառին, որ սպանութեաց. Յեղափոխութեան մէջ: 1848ի Ստորին Ալպեանց ընտրաժողովքը զինքը երեսփոխան ուղած էր,

բայց նա հրաժարեր էր որպէս զի աւելի կատարելապէս զբաղի իւր պաշտամանը: Բարիգու աբքեպիսկոպոս ըլլալէն վերջը իւր մեծագոյն զբաղմունքը ըրած էր այցելել գործատանց, քարոզել գործաւորաց, գանոնք վտանգաւոր վարդապետութիւններէ զգուշացնել: Երբ Վենետկոյ սակաւակենցաղ Հասարակապետութիւնը իւր տագնապալից յետին ժամերուն դիմեց առ Փաղղիոյ Հասարակապետութիւնը, Գերապայծառ Սիպուր, իւր ազատական և մարդասիրական բերմամբ, աղօթք յանձնեց ժողովրդեան:

Գերապայծառ Սիպուր ինչպէս նաև Գերապայծառ Տիւբանլու և յԵպիսկոպոսաց ամոնք, գաղղիական ազգային Եկեղեցոյ զգացմամբ խիստ կը գտնէին Իւնիվէրսիտատը իւր զանազան լեզուներէ և վարդապետութիւնքը, մինչև Բարիգու Աբքեպիսկոպոսը ընդ բանադրանօք արգիլեց իւր քահանայից Իւնիվէրի ընթերցումը: Լուրի Վէյիօ դիմեց Հռովմայ Քահանայապետին վճռոյն. առ որ դիմեց նաև Փ. Սիպուր. Ժամանակին եթէ գաղղիացի և եթէ օտարազգի լրագիրք և Պրակք լցուեցան այս նիւթոյն վերաբերեալ յօդուածներով: Գեր. Սիպուր ըստ բարձրագոյն հրամանի բռնադատուեցաւ Իւնիվէրի բանադրանքը վերցնել և հաշտուիլ լրագրին հետ, որուն խմբագրութիւնը պաշտօնապէս գնաց յայտնելու շնորհակալութիւնը, ըստ պայմանաց:

Այս յուղմունքներէն վերջը որք լմնցան յամին 1853, Գեր. Սիպուր զբաղեցաւ իւր հովուական պարտուց և բեմական ժողովոց, որոնք եղեղեցական մեծ արդիւնքներ ունեցան: Եւ սակայն այդ ժողովրդասէր հովիւն ալ իւր նախորդին նման զոհ պիտի երթար դաշոյնի: Յամին 1857 Յունուար 31 եկեղեցական հանդիսաւոր արարողութենէ մը վերջը ի Սէնդ-Էդիէն տիւ Մոն եկեղեցին, դասէն աւանդատուն երթալու ժամանակ, Վէրժէր անուամբ, իւր յանցանաց համար, արգելեալ քահանայ մը, ճամբուն վրայ կեցած աշխարհիկ զգեստով, դանակ մը մխեց ի սիրտն:

Վէրժէր բանտ տարուեցաւ և ամբողջ հարցաքնութեան միջոց հակառակընդդէմ և ցնորական յայտա-

բարութիւններ խօսեցաւ : Միաբը դրած էր որ անիրաւ էին իրեն դէմ եղած եկեղեցական ամէն խստութիւնք, որոց վրէժը ուզեր էր առնուլ արքեպիսկոպոսին սպանմամբ : Գատաստանը զինքը մահուան դատապարտեց և Ռոբէրտի դիմաց գլխատուեցաւ : Մահուան պատշգամբին վրայ համբուրեց զխաչը գոչելով « Կեցցէ Աստուածն Սիրոյ . կեցցէ Տէր մեր Յիսուս Քրիստոս » :

6. Իշխանական այցելութիւնք եւ հանդէսք . Մահ Գավենեաք զօրավարին : — Նարոյէոն Գ յետ հանքային բաղանկները անցնելու 1857ի ամառնային եղանակը, (Սպըրն Դղեկին մէջ այցելութիւն մը տուաւ Վիկտորիա թագուհւոյն, ուր մնաց քանի մը օր : Ապա (Օգոստոս 13ի հաստատեց Սէնդ-Լէնի չքադրամը : Երկրորդ օրը մեծ չքեղութեամբ բացումն ըրաւ Լուվրի թանգարանին նոր շինուած մասերուն, որուն ներկայ էին նաև Կայսրուհին, Ժէրոմ Իշխանը, Իշխանն Նարոյէոն և Իշխանուհին Մադիլտ : Սեպտեմբերի վերջերը (25-28) Նարոյէոն տեսակցութիւն մը ունեցաւ ի Շոուդկարտ Ռուսիոյ Չարին հետ : Յետ որոյ Չարը ի Վայմար տեսակցեցաւ Աւստրիոյ կայսեր հետ . այսպէս յարաբերութիւնքը մէջերնին աւելի ամրապնդելու համար :

Լմննալու վրայ էր 1857 տարին, երբ յանկարծ ի Բարիզ լուեցաւ Գավենեաք զօրավարին մահը : 1848ի Բեղափոխութեան ընկճողը, արդէն Գեկտեմբեր 2ի Պետական հարուածէն ի վէր մեռեալ կրնար համարուիլ . և սակայն վեհանձն անշահասիրութեամբ կ'ապրէր համեստօրէն և քաշուած Սարդ գաւառին մէջ : Իւր աները մեծամեծ մնասներ կրած ըլլալով, Գավենեաք իւր կնոջ բովանդակ օժիտը սիրով յետս դարցուց : Շատոնց սրտի հիւանդութիւն մը ունենալով յանկարծակի մեռաւ իւր պարտիզին մէջ : Իւր մանկամարդ այրին զինքը Բարիզ տարաւ և թաղեց ի Մոն Մարդրը ի դամբանարանի ուր կային իւր հայրը, մայրը, հօրեղբայրը և եղբայրը : Պետութիւնը ամենայն խստութիւն ի դործ դրաւ, ամէն ջանք ըրաւ որ բազմաթիւ

յուզարկաւորք չգտնուին և արգիլեց դամբանական խօսիլը: Իշխանական նախանձը դագաղին առջևն իսկ չէր մարած. և սակայն Գալէնեաք իր վեհանձնութեամբ բնաւ իսկ պատճառ տուած չէր:

Սոյն տարւոյն մէջ մեռեր էին նաև Ալֆրէտ տը Միւսէ և Պէրանժէ քերթողը, որուն Կայսրութիւնը պաշտօնական և քաղաքական մեծ յուզարկաւորութիւն մը ըրաւ, վասնզի Գաղղիական արքայականաց դէմ խօսելով և պանծացնելով Ա. Կայսրութիւնը, ձանապարհ բացեր էր Բ. Կայսրութեան:

7. Օրսինի Գաւը: — Նարոլէոն 1858 տարւոյն կաղանդի ընդունելութեանց ժամանակ ըսեր էր առ դեսպանս. « Կը յուսամ որ Նոր տարին Հնոյն նման աւելի պիտի ամրապնդէ միութիւնը թագաւորաց և ազգաց մէջ », և մասնաւոր եռանդեամբ մը սեղմեր էր Անգղիոյ և Ռուսիոյ դեսպանաց ձեռքերը: Ժողովուրդը գոհ էր այսօրինակ չքեղ ընդունելութեանց համար, զորս խաղաղութեան նշանակ կը համարէր. և յիշուալի այս էր ընդհանուր զգացումն և կարծիք, երբ աղետալի արկած մը վեր ի վայր վրդովեց մայրաքաղաքին հանդարտութիւնը և նորոգել տուաւ կասկածանաց և տարագրութեանց տխուր օրէնքները:

Յունուար 14ին երեկոյեան ժամը ութին ժամանակ, երբ ղկայսրը և ղկայսրուհին տանող կառքը կը հասնէր ի թասրոն ի փողոցն Լըփէլիդիէ, յանկարծ լսուեցան ետեւէ ետև երեք ահաւոր պայթիւններ: Այնքան մեծ էր օդոյն ճնշումը՝ որ փողոցին ճրագները մարեցան և երբ կրկին վառուեցան, աղիողորմ տեսարան մը բացուեցաւ: Փողոցին վրայ մեռած կամ վիրաւոր ինկած էին բազմութիւն արանց, կանանց և ձիոց: Պայթուցիկ նիւթէն բեկոր մը ծակեր էր կայսեր գլխարկը և ապակոյ կտոր մը քերթեր էր ռնգունքը: Կայսեր համհարց՝ Ռոկէ զօրավարը թեթև մը վիրաւորուեր էր իսկ կայսրուհին մնացեր էր անվնաս: 14] անձինք մահացու կամ ծանր վիրաւորուած էին:

Պայթումը լսուելով Օփէրային մէջ, սարսափեցուցեր էր ղհանդիսականս և ամէնքը ահուդողով մէկմէկու

կը հարցնէին պատճառը, երբ անիլիաս Երևցան իրենց օթեակին մէջ Կայսրը և Կայսրուհին: Բովանդակ հանդիսականք մեծապէս ծափահարեցին և մի և նոյն վարկենին մէջ իմացան Կայսեր վտանգը և փրկութիւնը: Բարիգու մէկ ծայրէն միւս ծայրը կայծակի պէս ընթացաւ դաւանաց լուրը, մինչ ոստիկանութիւնը փրաւորելոյ մը շափազանց և ձեացեալ ողբերէն կատարածելով, կալանաւորեց զայն: Դա մէկէն յայտնեց որ Կոմէզ կը կոչուէր և էր ծառայ Ֆէլիչէ Օրսինի անուամբ խտալացոյ մը, որուն յայտնեց բնակութիւնը: Օրսինի ինքն ևս վիրաւորուեր էր և յետ դարմանուելու դեղատուն մը, իւր բնակութիւն, տարուեր էր կառքով: Օրսինի և իւր ընկերը Փիէրի 14ին երեկոյ կալանաւորեցան և հարցաքննուեցան:

Ֆէլիչէ Օրսինի, խտալացի նշանաւոր ցեղէ մը, յամին 1831 Պոնաբարդեան եղբարց հիտ միաբան յիտալիա փորձեր էր Յեղափոխութիւնը և անկէ վերջը միշտ գտնուելով Աւստրիոյ դէմ եղած ամէն ապստամբութեանց մէջ, բռնուեր և բանտ դրուեր էր, ուսկից խոյս տուեր էր յանդուպն ճարտարութեամբ: Մեծապէս զայրացեր էր Լուի Նաբոլէոնի դէմ այն արշաւանաց համար զոր յղեր էր ընդդէմ Հռովմայ Հասարակապետութեան, որոյ պաշտպաններէն մէկն եղեր էր, և զՆաբոլէոն Գ իտալական ինքնիշխանութեան արգելքներէն մին կը համարէր. և սահմաններ էր իր մտաց մէջ վերցնելու այդ արգեքը: Ի Լոնտրա գաղտնապէս պայթուցիկ շանթահար գնտակներ շինել տուած էր տանձի մը մեծութեամբ և կը խորհէր ատոնց պայթելովը զԿայսրը սպաննել:

Իրեն համախոհ առած էր ուրիշ երկու իտալացիք ալ Փիէրի և Ռուտիօ. և ապա այն Կոմէզը որ կալանաւորուելու կերպէն իբրև զիրենք մատնող համարուեցաւ:

Յունուար 15ին պաշտօնական լրագիրը կը ծանուցանէր աղետալի պատահարը և յանցաւորաց բռնուիլը, առանց ըսելու ինչ ազգէ ըլլալնին: Բայց երբ հաստատուեցաւ որ բաց յիտալացոց չկային ուրիշներ, այն

ատեն 17ին հրատարակեց յանցաւորաց ազգութիւնը, գոհութիւն մը յայտնելով որ օտարք էին, բայց և զանոնք զրգուռած կը համարէր Պետական հարուածէն օտար երկիր դիմող Գաղղիացիներէ :

Եւ սակայն այս առաջին անգամ չէր որ Նաբոլէոն Գ. իտալական վրէժխնդրութեան մը զոհ պիտի մնար : Յամին 1855 Ապրիլ 29ի, հռովմայեցի ծեր կամաւոր զինուոր մը Փիանորի անուամբ կայսեր վրայատրճանակ պարպեր էր և բռնուելով զլիատուեր էր : Յամին 1857 Թիպալտի, Կրիլլի և ուրիշ իտալացիք ծանր պատիժներու դատապարտուած էին կայսեր դէմ դաւաճանութեան մը համար : Իտալական ազատամոլք, որոց կարգին մէջ գրուեր էր երբեմն Լուի Նաբոլէոն, այժմ զինքը դասալիք կը համարէին և խանգարող իտալական դատին :

8. Օրսլնիի դաւոյն նետեւամք — Սպառնալիք ընդդէմ Անգղիոյ. — Դաւանաց երկրորդ օրը կայսրը անձամբ գնաց տեսնելու տեղին, յետոյ ընդունեցաւ բովանդակ դեսպանաց և Պետութեան բարձր պաշտօնէից մաղթանքները և ուրախակցութիւնքը : Յետինքս և մանաւանդ զինուորական հրամանատարք խօսիւք և գրով իսկ յայտնեցին իրենց բողոքը ընդդէմ տարագրելոց և մանաւանդ ընդդէմ Անգղիոյ՝ որ ապաստանարան մը եղեր էր ամենազգի աքսորեալներու և կը սպառնային երթալ հալածել « այս մարդասպանքը » իրենց որջոյն մէջէն, կը պահանջէին որ Անգղիա վանէ զՄածծինի յԱմերիկա : Այս սրտունջներուն հաճախ մաճայն դանուեցաւ նաև Վալլաբի՝ Արտաքին Գործոց պաշտօնեսայն, մինչև իսկ զրկեց ծանուցագիր մը առ Վարչութիւնն Անգղիոյ որպէս զի մտածէ ապաւինելոց դաւերուն դէմն առնելու, և իւր ըրած քայլը ծանոյց Մոնիդէօրի մէջ : Թէպէտ ի Լոնտրա իւր դեսպանին՝ Փերսինէէի միջոցաւ իմացուց որ հրատարակութիւնը վրիպակաւ եղեր էր պաշտօնական լրագրին մէջ, Լորտ Փալմէրսոյոն միշտ մտերիմ Նաբոլէոն Գ.ի, խօսարանին մէջ առաջարկեց գոհացնել Գաղղիոյ կառավարութիւնը միայն անոնց համար որ մարդասպա-

1858

Յունուար. 28

նութիւն մը կը պատրաստեն : Առաջարկները առաջին ընթերցման ժամանակ ընդունուեցաւ . բայց երկրորդ ընթերցման ժամանակ, Մայլնըը ձիպսըն հրեւիոխանը սառաջարկութիւն մ'ըբաւ՝ յայտնելով « այն ցաւը որ դաւը պատրաստուեր է յԱնգղիա բայց և կը զարմանար որ Անգղիոյ կառավարութիւնը, դեռ զիստարանը չկանչած օրէնքը վերածելու, իրեն պարտք չհամարեցաւ պատասխան մը տալու Քաղղիոյ վարչութեան Յունուար 28ին սպառնական ծանուցագրին » : Եւ յիշուի այդ պատճէնը մեծապէս յուզեր էր յԱնգղիա հասարակաց կարծիքը : Բազմաթիւ ժողովրդական գումարումներ բողոքեր էին Քաղղիոյ վարչութեան պահանջին դէմ՝ այնպիսի իրաւանց մը համար, որով Անգղիա կը պարծէր : Խօսարանը, թարգման ազգին զգացմանց, Մայլնըը ձիպսընի առաջարկը ընդունեցաւ և Լորտ Փալմէրսդոնի պաշտօնարանը հրատարեցաւ :

9. Օրէնք ընդհանուր Ապահովութեան . — Տարազրութիւնք : — Յունուար 18ին բացումն եղաւ Օրէնագիր ժողովքին : Կայսրը յետ նախ գովելու զվարչութիւնը և պատմելու Քաղղիոյ դաշնակցութիւնքը, աւելցուց որ « վտանգը՝ պատժական օրինաց պակասութենէն էր . պէտք էր նախ Սահմանագրութեան վրայ երդուընցնել ամենայն ընտրելի : Մեր հաստատուն նպատակն ըլլալով ոգիները խաղաղացնել, հարկ է որ ինձ սգնէք լռեցնելու համար ծայրայեղ և վնասակար ընդդիմութիւնքը » :

Այս Պսակի ձառին հետեանք՝ Փետրուար 1ին առաջարկուեցան խիստ օրէնքներ և տարագրութիւնք ընդդէմ անոնց որոնք արդի կացութեան դէմ գրողիւ մը կը պատճառէին և կամ կը համախոհէին ի Քաղղիա այդ կարծիքները ունեցողաց, որոնք որ կը շինէին կամ կը վաճառէին պայթուցիկ նիւթեր և շանթալից վաւօդ : Նոյն պատուհասը պիտի ըլլար նաև անոնց որ պատերազմական զէնք կը պահէին և կամ ծանր յանցանք կը գործէին ի տպագրութեան . վերջապէս ընդդէմ անոնց որ մասնակցեր էին 1848ի և 1849ի Յեղափոխութեանց կամ ընդդիմացեր էին Գեկտեմբեր 2ի Պետական Հարուածին :

Այս օրէնքները մեծաւ մասամբ Հասարակապետականաց համար էր և 126 երեսփոխանք որ զայնս ընդունեցան ընդդէմ 24ից, գիտէին որ բնաւ յարաբերութիւն մը չկար ընդ Օրսինի և ընդ հասարակապետականս, զորս մեծապէս պաշտպանեց Էմիլ Օլիվիէ օրէնքներուն դէմ խօսած ատեն :

Ոստիկանութեան կազմակերպութեան փոխուելովը Պիյո՝ Ներքին գործոց պաշտօնեայն հրաժարեցաւ, նոյնպէս Փիէզրի Ոստականութեան պետը, և կայսրը անուանեց Պաշտօնեայ Ներքին Գործոց և Ընդհանուր Ապահովութեան գբառասնամեայ զօրավարն Էսփինաս, բուն զինուորականը, որ յԱփրիկէ հարիւրապետ եղած ժամանակ Քապիլներու դէմ պատերազմին մէջ զինքը փրկեր էր դուքսն ս'Օմալ և յետոյ անոր հովանաւորութեան ներքև յառաջեր էր մինչև ի հազարապետութիւն : Էսփինաս Գեկտեմբեր 2ի Պետական Հարուածին մեծ ծառայութիւն մատուցած էր Նախագահ իշխանին, որ յարմար առիթ գտաւ զինքը վարձատրելու : Էսփինաս Բարիզ կանչել տուաւ բոլոր քաղաքապետները, և իւրաքանչիւրին կալանաւորելոց ցանկ մը տուաւ . լիովին իշխանութեամբ նաև կասկածաւորաց համար :

Մտտ երկու հազար հանդարտ քաղաքացիք յափըլտակուեցան իրենց յարկերէն և զբաղմունքներէն և ձեռքերնին կապեալ բանտը ձգուեցան գողերու և մարդասպաններու հետ . յետոյ փոխադրուեցան յԱփրիկէ : Յամին 1859 Փետրուարի մէջ տակաւին չէին լմնցած այս փոխադրութիւնքը :

10. Դատաստան եւ գլխատումն Օրսինի : — Օրսինի զինքը պաշտպանելու փաստարան ընտրած էր զԺիւլ Ֆալրը որ դեղեկելով հանդերձ, ապա ընդուներ էր : Յանցաւորք Դատաստանին առջև ներկայացան փետրուար 25ի և Օրսինի « նոյն իսկ իւր դատաւորաց համակրանքը յուզեց կ'ըսէ գրիչ մը, իտալական շնորհալից կերպովը, վայելչութեամբ, քաղցրութեամբ, որոց վրայ կը տիրէր առանց ճոռոմարան հաստատամտութեան և արթուն մտք առանց նրբաբանութեան, զարմա-

նալի ծնունդ մը իտալական հին և ներկայ քաղաքագիտութեան, այր միջին դարու և Նոր ժամանակաց տրիբուն քաղաքագէտ, Ռիէնցի և Մաքքիավէլլի, կէս սպարապետ, կէս քաճանայ... մարդասպան հայրենասիրութեան համար. կարծես աւելի գութ կը շարժէր քան զգուանք» : Այս էր ահա ժամանակին բազմաց զգացումը : Եւ սակայն ինքը մէկ կեանքի մը միայն չէր դաւած, Հարիւր քառասուն և մի անմեղք ծածկեր էին մեռնելով Լըփէլիդիէ փողոցը :

Ժիւլ Ֆալրի պաշտպանութիւնը՝ ճարտասանութեան գերագոյն օրինակներէն մէկն եղած է, յորում ոչ թէ կը պաշտպանէր իւր յանցաւորը, այլ կ'ուզէր ցուցնել հայրենասիրութեան մը մեծ պատրանքը : Ժիւլ Ֆալրը կարգաց Օրսինիի մէկ նամակը առ Նարոլէոն Գրուած Փետրուար 11ին ոչ անձնական շնորհ խընդրելու, այլ իտալիոյ ազատութիւն տալու համար : Յիշեց նաև որ « Օրսինիի հայրը գնդապետ էր Նարոլէոնի Առաջնոյ կազմած իտալական բանակին մէջ և մեր լէգէոնաց հետ ընթացած մինչև Ռուսիոյ սառոյցները. իւր արիւնը մեր արեան հետ խառնած է պատերազմի դաշտին վրայ, և գէնքը չթողուց մինչև որ չլինցաւ յետին զինուորն պոնաբարդեան դատին, որ այն ատեն նշանակ էր անկախութեան » :

Մայիս 26ին երեք յանցաւորքը դատապարտուեցան մահուան, որոնք վճռաջինջ ատենին դիմեցին : Օրսինի կ'ուզէր ժամանակ շահիլ ընտանեկան գործերը կարգի դնելու համար : Շինեց իւր կտակը ամենայն հոգածութեամբ՝ իւր մանկահասակ դստերաց համար : Ութ հարիւր ֆրանքի ոսկի ժամացոյց մը իբր յիշատակ շնորհակալութեան նուիրեց իւր պաշտպան փաստաբանին՝ Ժիւլ Ֆալրի :

Դատապարտելոց առ շնորհս դիմումը մերժուեցաւ. միայն Ռուսիոյի գլխապարտութիւնը փոխուեցաւ մըլտընընաւոր բռնի աշխատութեան : Երկու մահապարտք Մարտ 13ին յետ աղօթելու բանտին մատրան մէջ գլխատուեցան, Փիէրի գոչելով « Կեցցէ՛ իտալիա, Կեցցէ՛ Հասարակապետութիւն » և Օրսինի « Կեցցէ՛

Քաղղիա » : Լրագիրք արգելք ընդունեցան խօսելու այս գլխատմանց վրայ :

11. Նոր ընտրութիւնք . Հասարակապետականք . Վիկտորիա Թագուհին ի Շէրպուրկ . իշխանն Նարուէոն յԱլճէրի : — Այս պատահարաց ժամանակ , երեք նոր ընտրութիւնք եղեր էին փոխան Քալէնեաքի , Կուտչոյի և Քառնոյի որ շուգելով երգնուլ , հրատարեր էր երեսփոխանութենէ : Բարիզ՝ Կայսրութեան իբր բողոք մը ընտրեց երկու ծանօթ հասարակապետականներ զԺիւլ Ֆալրը և զԷռնէստ Փիքար : Յունիս լ՛4ին Էսփինաս հրատարեցաւ Նելզին գործոց պաշտօնէութենէ ընդհանուր տեղոհութեան առիթ ըլլալով Նելմտից կարգադրութեանց մէջ :

ԱՎՐԷ 27

Եւ որովհետև Վալեւքիի սպառնալիքէն վերջը Քաղղիոյ և Անգղիոյ յարաբերութիւնք ցրտացած էին , Նարուէոն Ք . հրաւիրեց զԹագուհին Վիկտորիա ի Շէրպուրկ ծովափանց հիմնարկութեան հանդիսին , և այս առիթ խօսեցաւ խաղաղութեան հաստատութեան մասին ոգիները հանդարտեցնելու համար :

Կայսերական հրովարտակ մը կը հաստատէր պաշտօնարան մը յԱլճէրի գոր կը յանձնէր իշխան Նարուէոնի , դարձեալ հրամանատար մը յԱլճէրի ծովու և ցամաքի զօրութեանց գոր կը յանձնէր Մաք Մահոն զօրավարին :

12. Թագաւորականք . Զուլումն . Դատ Մոնդալանկէրի : — Քաղղիական վարչութիւնը իր բազմատեսակ յեղափոխութեանց և այլակերպութեանց մէջ , իրեն Նախագահ իշխան մը և Կայսր մի ընտրած ժամանակ բնաւ չէր դիմած և չէր յիշած անձ մը որ ամենէն աւելի իրաւունք մը կը կարծէր ունենալ հրամայելու Քաղղիոյ , քանի որ իւր Նախնիքը ձեռացուցեր էին և չքեղապէս կառավարած էին զհայրենիս , որուն Հարցը պատմութիւնը էր նոյն իսկ Պատմութիւն Քաղղիոյ , և որչափ որ անոնցմէ ոմանց թերութեան հետեանք էր Քաղղիոյ վեր ի վայր վրդովիլը , Յեղափոխութիւնը և իրեն գահընկէցութիւնը , այսու ամենայնիւ կոմսն Շամպոր կը համարէր որ իրեն միայն

իրաւունքն էր իշխել Քաղղիոյ անոր սթափած ժա-
 ժանակ, և հրամայել ինչպէս դար մը առաջ: Եւ որ-
 շափ որ Քաղղիա զինքը չէր յիշած նորանոր վարչու-
 թիւններ հաստատած ժամանակ, սակայն ինքը ամէն
 նոր փոփոխութիւն առիթ առած էր բողոքելու և յի-
 շեցնելու Քաղղիոյ որ ունի տէր մը թագաւոր մը՝ պատ-
 րաստ կառավարելու հայրաբար, յայտնի է սակայն
 առանց Սահմանադրութեան: Շամպորի կոմսին հա-
 մար վատութիւն մ'էր զայն ընդունելը և ուրացումն
 իւր Նախնեաց: Եթէ Քաղղիոյ Քահնը ելլէր, պէտք
 էր զայն կառավարեր գոնեայ ինչպէս Լուղովիկոս
 ԺԹ և կամ Կարոլոս Ժ, Գաշանց թղթով և Սպիտակ
 Կրօշակով:

Իւր այս հաստատամտութիւնը կամ յամառութիւնը
 ինչպէս ըսած են նոյն իսկ իւր կուսակիցք, լաւ միջոց մը
 եղած էր Օւլէանեան ցեղին ժողովրդական համակրանքը
 ստանալու, քանի որ պաշտպան կը ներկայանար Սահ-
 մանադրութեան և եռագոյն դրօշին: Սակայն Պոնա-
 բարդեան ցեղին յանկարծակի զօրանալը և առ ինքն
 գրաւելը Ազգին ստուար մասը, նոր խորհուրդ մը շնչեց
 Օւլէանեան ցեղին զլիաւորաց: Շամպորի կոմսը զա-
 ւակ շունենալով, հարկ էր որ օր մը իւր իրաւանցը ժա-
 ռանգ թողու Օւլէանի ցեղը, որուն զլուխ էր Կոմսն
 Բարիզու: Լաւ չէր արդեօք այժմէն թագաւորական
 դատին զլուխ ձանչնալ զկոմսն Շամպորի և միացնե-
 լով օրինաւորականքը և Օւլէանեանքը կազմել մեծա-
 գոյն ոյժ մը և կուսակցութիւն:

Այս էր ահա Չուլուսը զոր 1849ի Ազգային ժողով-
 քի ժամանակէ ի վեր կը խորհէին Օւլէանեանք և զոր
 աւելի դիւրացուց Լուի Ֆիլիփի մահը: Բանակցու-
 թիւնք սկսած էին երկու կողման նշանաւոր անձանց
 ձեռքով, երբ Նըմուրի Գուքսը՝ որդի Լուի Ֆիլիփի
 փափագեցաւ անձամբ երթալ ի Ֆրոնտորֆ՝ յայցե-
 լութիւն Շամպորի կոմսին, և այսպէս ուղղակի կա-
 տարել ձուլումը: Այցելութիւնը հանդիսաւոր և շատ
 սիրալիր եղաւ: Շամպորի կոմսը յայտնեց առ իւր « Զօ-
 բեղբօրորդին » իւր մեծ ուրախութիւնը և գոհութիւնը:

նը. և Նըմուրի դուքսը պատասխանեց որ՝ « Հօրեղբորդդիդ իմ, չէք կրնար գուշակել մեծ ուրախութիւնս այս քայլին համար զոր շատոնց ի վեր կ'ուզէի ընել յանուն իմ և յանուն եղբարցս : Կը ծանուցանեմ որ մենք ի Գաղղիա ուրիշ թագաւորութիւն չենք ճանչնար՝ բայց Ձերը և բոլոր իղձերնիս առ այն է, որ օր մը առաջ մեր Տանը անդրանիկը բազմի Գահուն վըրայ » : Այս ընդունելութիւններէն և խօսքերէն վերջը Չուլումը կատարուած կամ գոնեայ սկսած կրնար համարուիլ : Շամպորի Գուքսը քիչ վերջը անապարեց փոխադարձ այցելութեան մը յԱնգղիա առ թագուհի այրին Լուի Ֆիլիպի՝ Մարի Ամէլի. որուն փոխադարձ Շամպորի կոմսին գնաց դուքսն Մոնիանսիէի :

Եւ սակայն քիչ վերջը այս միութիւնը նորէն պիտի խլուէր կամ լաւ ևս ըսենք պիտի ցրտանար նոյն իսկ Օուլէանեսան իշխանաց կողմէն, որոնք յայսմ Չուլման չէին գտներ իրենց կարծած գոհութիւնը և աստիճանը, մինչև իրենց մօրը կը զլացուէր օրինաւորականաց կողմէն Բաֆֆօնի տիտղոսը :

Ապագայ ժամանակի պահուած էր ստուգապէս ամբողջական Չուլումն ուղղակի նոյն իսկ ի ձեռն կոմսին Բարիզու :

Յամին 1858 Կայսրութիւնը ինչ պայմանաց մէջ գտնուիլը և կուսակցութեանց զգացումները ցուցընելու նախ քան գիտալական պատերազմը, պատշաճ կը դատինք յիշատակել աստ հոչականուն Մոզալամպէրի դէմ եղած դատը, որովհետև սա Հոկտեմբեր 25ի Քորրէսիոնտան լրագրին մէջ՝ ի Հնդկաստան Աիփալից ապստամբութեան առթիւ բաղդատութիւն մը ըրած էր ընդ « ազատ վարչութիւն » Անգղիոյ և ընդ վարչութիւն Գաղղիոյ : Գրաքննութեան ատեանը այս բառերը զրգուիչ գտաւ յատելութիւն, ընդդիմութիւն օրինաց և հակառակութիւն կայսերական իշխանութեան : Մոնդալամպէր և լրագրին անօրէնը դատի մատնուեցան : Մեծանունն Պէրիէ պաշտպանեց դատին մէջ զՄոնդալամպէր՝ պերճարան պաշտպանողականով մը որ կը վերջանար այսպէս. « Ե՛հ, Տեալք, մի գրէք

մեզ յանցանք մեր օրինաւոր ցաւերը: Մենք կը ծեւրանանք, փոքրիկ հուր մը ունինք որ կը մարի, թողէք որ հանդարտ և հաւատարիմ մեռնինք: Արդէն շատ իսկ թշուառ ենք որ մեր դատը, մեր սուրբ և փառաւոր դատը մատնեալ է, յաղթեալ, ուրացեալ և արհամարհեալ: Թողէք մեզ որ գոնեայ սրտերնուս խորը պահենք իրեն անեղծանելի սէր մը. թողէք որ մտածենք, թողէք որ ըսենք: Թողէք որ ունենանք և յիշենք այն մեծ խօսից, պայքարաց յիշատակքը, որոնք մեզ սիրելի ըրին այն կարգերը զորս պաշտպանեցինք և զորս միշտ պիտի պաշտպանենք և որոց հաւատարիմ պիտի ըլլանք մինչև մեր վերջին ժամը»: Պէրիէ կը խօսէր ոչ միայն օրինաւորականաց և Յուլէանեանց, այլ և բովանդակ հասարակապետականաց զգացումը: Սըրտերու մէջ սկսեր էին տարակոյսք ծնանիլ առ կայսրութիւնը:

ՆՄ . 24

Մոնղալամպէր դատապարտուեցաւ վեց ամիս բանտի և 3000 ֆրանք տուգանքի. լրագրին տնօրէնը մէկ ամիս բանտի և 1000 ֆրանք տուգանքի: Երկուքն ալ բողոքեցին վճռոյն դէմ: Եւ ահա յանկարծ Դեկտեմբեր 2ի Մոնիդէօրը կը ծանուցանէր որ կայսրը « Դեկտեմբեր 2ի առթիւ կը շնորհէր Մոնղալամպէրի իրեն դէմ եղած վճիւր »: Մոնղալամպէր Մոնիդէօրի վեհանձն և ծանր նամակ մը գրեց՝ որ շէր ճանչնար իշխանին իրաւունք՝ ներումն շնորհել տակաւին դատական վճռոյ ներքեւ եղած յանցանաց համար. « Ես ալ անոնցմէ եմ, կ'ըսէր, որ տակաւին կը հաւատամ իրաւանց և շնորհք չեմ ընդունիր »: Դեկտեմբեր 21 ին կայսերական ատեանը կը հաստատէր դատաստանին վճիւրը, բայց երկրորդ օրը կրկին կայսերական ծանուցագիր մը Մոնիդէօրի մէջ երկու յանցաւորաց պատիժքը կը շնորհէր. որոնք բոնադատուեցան յոչ կամս ընդունելու:

Եւ սակայն Մոնղալամպէր անոնցմէ էր որոնք եււանդեամբ ողջունէր էին պոնափարդեան ցեղին ի գահ բարձրանալը:

ԳԼՈՒԽ ԽԷ

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ

1859 Ի Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Է Ն Ա Ռ Ա Ջ

1. Փիեմոնթ. Վիկտոր Էմանուէլ Բ և կոմսն Քապուր. — 2. Փիեմոնթեցիք ի Ղրիմ և Բարիզու Գաշնածողովոյն մէջ. — 3. Յեղափոխական փորձեր ի Լիվոնս և ի Ղննովա. Արշաւանք ի Սափրի. — 4. Լոյսարդի — Վեյտի. Արշիզուքսն Մաքսիմիլիանոս. — 5. Գոթաւա. — Գարձ ի Նախկին Վիճակ. — 6. Իտալիան Իտալիան. Փարմա, Մոտենա — 7. Հոլլ. Ուղեորութիւն Պրոսթի. — 8. Նոբել և Սիէլի. — Փերտինանտոս Բ Վարչութիւնը. 9. Իտալական միութեան մը բնկերութիւնք. — 10. Քապուր և Լուի Նաբուէոն Գ.:

1. Փիեմոնթ. Վիկտոր Էմանուէլ Բ եւ Քապուր: — Յետ Նովարայի պարտութեան և ամբողջ 1849ի պատերազմի ծախուց և զնասուց, Փիեմոնթ ինքնին ներքսապէս և յաշս Եւրոպիոյ տկար դիրք մը առած էր: Վիկտոր Էմանուէլ Բ Աթոռը բարձրացած ժամանակ, տխուր կերպարանք մը ունէր իւր հայրենիքը, որուն մէկ մասը արդէն բռնած էր Աւստրիա, բանակը տկարացած, պաշտօնարանք՝ որ աննշան եղանակաւ մէկմէկու կը յաջորդէին, Խօսարանը իւր նախկին պատիւը և փայլը կորսնցուցած և երկիրը աղքատութեան մէջ՝ հեռեանք պատերազմին:

Վիկտոր Էմանուէլ որ Իտալիոյ ամէն թագաւորող տանց հետ ունէր խնամութիւն մը, երկրին տազնապեալ վիճակին մէջ, առանց իսկ հակառակութեան մը կարող էր չգործադրել իւր հօրմէ տրուած Սահմանադրութիւնը, և այսու թերեւս իսկ իշխողաց մեծագոյն մա-

սէն հաճութիւն գտնէր և խնդակցութիւն . և սակայն հրովարտակով մը յայտնելով իսկ այն դժբաղդութիւնք միայն որոնք զինքը, ժամանակէն առաջ իւր հօրը կենդանութեամբ, գահը կը բարձրացնէին, կ'ապաշովցընէր զհայրենիս որ բնաւ ստացած ազատութեանց վըտանգ մը չկար . և կը յանձնարարէր երեք մեծ կարևորք « Հանդարտութիւն, Յառաջադիմութիւն և Խնայութիւն » որոնք Ազգի մը յառաջադիմութեան գրաւականք են : « Փիէմոնթ բաղդաւոր գտնուեցաւ ունենալով թագաւոր մը ինքնիրմէ ձեացած , միշտ զինուորաց մէջ , որ երբէք չզեղծաւ արքունական մեղկութիւններէն : Մոլեռանդն որսորդ , բիրտ ի հանդերձ և ի կերակուր , ոչ բացարձակ այլ համարձակ , բնաւ չփնտռող զժողովրդականութիւն և հանդէսք , ոչ սիրող գրոց՝ թէպէտ դիւրաւ լմբռնող , ոչ այնքան վեր՝ որչափ օտար կուսակցութիւններէ . ճշգրիտ պաշող Սահմանադրութեան և կարելի եղածին չափ նուազ խառնուող գործոց ¹ » :

Սահմանադրութիւնը որ այն ժամանակի գաղափարաց մէջ էր նոյն ինքնին Ազատութիւն , խառնուրդ մ'էր Անգղիական և Առաջին Կայսրութեան կարգաց և ազատութեանց , զորս նոյն իսկ Գաղղիա ի բաց ձգեր էր յետ 23 տարի փորձելու , տեսնելով որ դա չէր կարող հաստատուն պահել եթէ զազատութիւն և եթէ խաղաղութիւն : Եւ սակայն Փիէմոնթի պէս բարոյապէս և քաղաքականապէս կրթեալ և ի հնուց իշխանասէր ժողովրդեան մը համար շունեցաւ , ինչպէս ուրիշ երկիրներու մէջ՝ յարաշիտ աղետալի արդիւնքը . և թերութեանցը շարունակ սրբագրութիւնքը կատարուեցան առանց յեղափոխութիւններու :

Մասսիմօ տ'Սթէլիօ՝ Պաշտօնարանին զլուխը , իւր ազնուապետական բարոյք և միտումով , հակառակ էր ժողովրդական շատ մը ազատութեանց , զորս աւելի կը դժուարացնէին Իտալիոյ ամէն կողմէն ի Փիէմոնթ հաւաքուած բազմաթիւ ազատասէրք , մեծաւ մա-

սամբ նշանաւոր և զօրաւոր հանճարներ, որոնք իրենց երկիրներէն փախստական կամ աքսորեալք, ի Փիէմոնթ կը յուսային գտնել իրենց մտաց յապուրդ մը :

Որքան կը տկարանար Մասսիմօ տ' Ածէլիոյի ազդեցութիւնը և ժողովրդականութիւնը, այնքան կը բարձրանար ՔաՎուր կոմսինը, որ 1847ին երեսուն և եօթնամեայ, ինքզինքը լրագրութեան տուած էր, և թէպէտ պաշտպան ազատական նորութեանց, սակայն իւր շափաւորութեամբ հարստութեամբ և կենաց եղանակաւ, սիրելի եղած էր նոյն իսկ կղերական կուսակցութեան . մինչև ճարտարութեամբ կրցաւ, սպրդիլ մտնել Մասսիմօ տ' Ածէլիոյի պաշտօնարանին մէջ :

ՔաՎուրի առաջին քայլէն տեսնուեցաւ որ իւր նպատակն էր նախ և առաջ բարեկամանալ Քաղղիոյ և մանաւանդ Նաբոլէօն Գի հետ : Առաջարկած վաճառականական դաշինքը, աւելի նպաստաւոր էր Քաղղիոյ քան Փիէմոնթի, որով մեծապէս ընդդիմութիւն կրեց Խօսարանին մէջ և այն ատեն միայն ընդունելի եղաւ, երբ Մասսիմօ տ' Ածէլիօ ծանոյց որ Պետութեան Հարկը և զօրաւոր բարեկամութեանց կարևորութիւնը կը ստիպէին հաւանիլ անոր, և թէ մերժուէր՝ Պաշտօնարանը կը ստիպուէր հրաժարիլ :

Խօսարանը յոչ կամս քուէարկեց առաջարկը, բայց և պաշտօնարանէն ելաւ Նիկրա՝ որուն յաջորդեց կոմսն ՔաՎուր և այն օրուրնէ արդէն իւր ազդեցութիւնը Նախագահէն աւելի էր : ՔաՎուր յաջողութեամբ կատարեց յԱնգղիա փոխառութիւն մը, նախ տասն և ութ ապա եօթանասուն և հինգ միլիոն ֆրանքաց : Եւսակայն այդ գումարները բաւական չէին Գանձուն պակասը լեցնելու, հարկ էր նոր սուրբերու դիմել և ՔաՎուր Խօսարանին մէջ յայտնապէս ծանոյց որ « Իտալիա Փիէմոնթի ազատութիւնը և բարձր դիրքը պահելու համար, հարկ էր վճարել, վճարել և միշտ վըճարել » : Պաշտօնարանէն քաշուեցաւ նաև Հասարակաց Կրթութեան պաշտօնեայն՝ Ղիոյա, որուն յաջորդեց Տարինի, երբեմն հետևող Մածժինիի և հիմա պահպանողական :

Քաղղիա յետ Պետական հարուածին, Նարուէոն Ք պահանջեց որ սանձ մը դրուի տպագրութեան և իրեն դէմ գրութեանց: Քաժուր առաջարկեց Խօսարանին որ բարեկամ ազգաց իշխողաց դէմ տպագրութեան յանցանք դատուին դատական ատեաններէն: Օրէնքը յետ բազում վիճարանութեանց ընդունելի եղաւ:

Մինչև այն ատեն Քաժուր Աջակողմեան կուսակցութեան կը պատկանէր. փութով սկսան տեսնուիլ իւր յարաբերութիւնքը Ռադացցիի հետ որ պուխ էր Չախակողմեան կեդրոնին: Մասսիմօ տ'Ածէլիօ որ արդէն անհանգստութեամբ կը դիտէր Քաժուրի իրմէ մեծագոյն ազդեցութիւնը, աւելի եղաւ զայրոյթը երբ Փինէլլիի մահուընէ վերջը Խօսարանին նախագահ ընտրուեցաւ Ռադացցի՝ Քաժուրի ազդեցութեամբ, հակառակ իւր առաջարկածին: Քիչ վերջը Պատերազմի պաշտօնէին՝ զօրավար Լամարմորայի հակառակ քուէի մը պատրուակաւ, տ'Ածէլիօ տուաւ իր հրաժարականը: Բայց սակայն նորէն իրեն յանձնուեցաւ կազմելու նոր Պաշտօնարանը և ինքը վրիպակաւ մը ոչ միայն զՔաժուր շընդունեցաւ Պաշտօնարանին մէջ, այլ իւր տեղը անուանեց աննշան անձ մը:

Երբ ծերակոյսը շընդունեցաւ քաղաքական ամուսնութեան օրէնքը զոր Խօսարանը քուէարկեր էր, տ'Ածէլիօ բազում դժուարութեանց մէջ՝ վերջին հրաժարականը տուաւ և Քաժուր կանչուեցաւ նոր պաշտօնարան մը կազմելու: Սակայն Քաժուր մեծ դժուարութիւն ցուցուց ընդունելու և քաշուեցաւ իսկ: Ի զօր վիկտոր Լամանուէլ դիմեց առ Պալպօ և Ռէվէլ և ուրիշ Չափաւոր անձանց, ամէնը գիտէին որ դժուարին էր Խօսարանին մեծամասնութիւնը ունենալ, ամէնն ալ հրաժարեցան: Այն ատեն կոմսն Քաժուր կրկին կանչուելով, յանձն առաւ կազմելու նոր պաշտօնարան մը որուն ինքն կ'ըլլար Նախագահ և միանգամայն պաշտօնեայ Ելեմտից: Այս միջոցիս էր յորում Քաժուր 400,000 ֆրանքի վարկ կը բանար Աւստրիայէն կողպտեալ շատ մը դիմելոց օգնելու համար:

Քաժուր իւր Պաշտօնարանին աւելի որոշ գոյն մը տալու համար, մասնակից ընդունեցաւ նաև զՌադացցի: Գերակոյտը հակառակ երևցաւ այս ձուլման և քուէարկութեանց մէջ յայտնեց զայն: Քաժուր փոխանակ ջանալու աւելցնել իւր կուսակիցքը Գերակուտին մէջ, լուծեց զԽօսարանը և Ազգը նոր ընտրութեամբ զրկեց իրեն Խօսարանին մէջ երեք չորրորդ մեծամասնութիւն մը: Հակառակորդք երկուց ծայրայեղ կուսակցութեանց, զինուք ապստամբութիւն մը ուզեցին փորձել Աօսդայի ձորոյն մէջ, բայց նուաճուեցան և Քաժուր գլխաւորացմէ զոմանս աքսորեց յԱմբրիկա, առանց ուշ դնելու հակառակորդաց ահաւոր և ամբաստանող խօսից:

2. Փիլէմոնէցիք ի Ղրիմ եւ Բարիզու. Գաշնաժողովոյն մէջ: — Քաժուրի այս ընթացքը, յայտնի է որքան գնահատելի եղան Գաղղիոյ վարչութենէն և մանաւանդ Նարոլէոն Գէ, որ այս միջոցիս զբաղեալ Արևելեան Պատերազմին, իւր սահմաններէն ապահովութիւն և հանդարտութիւն կը փնտէր, միանգամայն զԱւստրիա չգրգռելու համար չէր ուզեր միջամտել ի Փիլէմոնթ: Իսկ Քաժուր Աւստրիոյ դէմ պաշտպանութեան մը իրաւունք և ապահովութիւն ունենալու համար, բարձրացնելով միանգամայն Փիլէմոնթի զինուց պատիւը որ ինկեր էր 1848ի և 49ի, նախ ինքը զրգռեց և ապա նպաստաւոր երևցաւ Անգղիոյ առաջարկութեան մը, բանակ զրկելու ի Ղրիմ յօգնութիւն Գաշնակցաց: Իւր պաշտօնակիցք նախ հակառակեցան, ապա ամէնն ալ ընդունեցան բաց ի Տապորմիտա Արտաքին Գործոց պաշտօնէէն, որ հրաժարեցաւ իւր պաշտօնէն և զայն ևս ստանձնեց Քաժուր: Գաշնակից տէրութիւնք նեղուած էին տեսնելով պատերազմին երկարումը, որ կարծածնէն շատ սուելի աղետարներ եղեր էր: Նոր զօրութեան մը փնտոողք էին երբ Փիլէմոնթ ընդունեցաւ առաջարկնին և Յունուար 26ին ստորագրուեցաւ դաշնակցութիւն մը ընդ Անգղիա, Գաղղիա և Փիլէմոնթ, որով յետինս 17,000 զինուոր պիտի զրկէր իւր ծախիւք պատերազմին վայ-

րը : Փոխադարձաբար երկու մեծ պետութիւնք կը խոսուանային պահպանել Փիէմոնթի ամբողջութիւնը ամեն յարձակմունքէ : Եւ սակայն Դորինի Խօսարանը և ծերակոյտը մեծ դժուարութեամբ ընդունեցան այս պանծալի դաշնագրութիւնը որ հիմն պիտի ըլլար Փիէմոնթի ապագայ մեծութեան , և բարձր քաղաքագիտական գածը մը Քալուրի սուր հանճարոյն : Ընդդէմ բողոքողներէն մին եղաւ և Ռուսիա որ կանխեց պատերազմ հրատարակելու ընդդէմ Փիէմոնթի , դառնացած որ Սարտենիոյ թագաւորը իրեն թշնամի կը հանդիսանար առանց պատճառ մը ունենալու և « պաշտպանելով զՄահիկը ընդդէմ Խաչին » : Վիկտոր Էմանուէլ պատասխան տուաւ որ ինք , ոչ ատելութեան կամ ընկալեալ նախատանաց մը համար կ'իջնէր ի դաշտ , այլ Եւրոպիոյ ընդհանուր շահերը պաշտպանելու համար : Սովորական հարցմունք և բացատրութիւնք , որովք կ'ուզէ քողարկել իւրաքանչիւր պետութիւն իրեն առանձնական շահերը և ձգտումները :

Մարտ 12ին ուրիշ դաշինք մը ևս ստորագրուեցաւ ի Կ . Պօլիս ընդ Փիէմոնթ և ընդ Բ . Դուռը , յար և նման Լոնտրայի դաշանց և Փիէմոնթեցի բանակը կը դիմէր ի Ղրիմ ընդ հրամանատարութեամբ Լամարմորա զօրավարին :

Թէ ինչ դեր ունեցան Փիէմոնթի զինուորք ի Ղրիմ և ինչ քաջութիւն ի Չէննայա , արդէն տեսանք Ղրիմու պատերազմի Պատմութեան մէջ : Կուոյն աւարտելէն և հաշտութենէն վերջը դարձան զինուորք արդիւնք մը ստացած և Քալուր իրաւունք ունեցաւ բազմիչ Բարիդու 'Իաշնախօսութեան մէջ' հաւասար մեծ Պետութեանց : Հոն աւելի վստահութեամբ պաշտպանեց Փիէմոնթի և Իտալիոյ խնդիրը , հակառակելով միանգամայն Աւստրիոյ ընդարձակուելուն դէպ ի Գանուրի բերանը , պախարակելով նորա միջամտութեան ձեւը յիտալիա : Այն օրու ընէ կրնար հրատարակուած համարուիլ 1859ի պատերազմը :

3. Փորձ ապստամբութեան ի Լիվոռնօ եւ Ճենովա . — Արշաւանք ի Սափրի : — Յիտալիա ռամկաւ

պետականք՝ որոնք ի Փիէմոնթ անգամ գոհութիւն չէին գտներ և որոնք կը համարէին իւրաքանչիւր տեղեաց իշխողները վանելով գտնել իրենց երևակայեալ ազատութիւնը, նախ ապստամբութեան փորձ մը փորձեցին ի Ղենուիա տիրելով նաև բերդի մը, բայց չգրտնելով օգնութիւն մը ոչ ժողովրդէն և ոչ ուստեք, ցրուեցան և վարչութիւնը այդ շարժումը ընկճելու ներութիւն չունեցաւ: Նոյն օրինակ դէպքեր ևս պատահեցան նաև ի Լիվոռնոյ զորս ընկճեց Լէոփոլտ Բ, Գուքանայի Մեծ Գուքսը և դատաստաններէն մահուան դատապարտելոց վճիռքը, մշտնջինաւոր բանտի փոխեց:

Ազատականներէն Նարոլիցի սպայ մը, Գարլօ Փիւզաքանէ, որ 1848ի և 49ի ամէն պատերազմաց մէջ գտնուէր էր, Մածժինի խորհրդով ուղեց յանդուգն ձեռնարկ մը փորձել: Երեսուն ընկերներով Գալլաբի անուամբ շոգենաւր մտաւ իբր Ափրիկէ գաղթելու համար: Համբան սպառնալեօք բռնադատեցին գնաւապետը ընդունել ուրիշ վաթսուն դաւակիցք ալ, որոնք նաւակով մտանցեր էին և շոգենաւր իրենց ուղած ուղղութիւնը տալ: Հասնելով Փոնցա կղզին և ցամաք ելլելով, զինաթափ ըրին մաքսային պահապանքը և ուրիշ պահանորդք, ապա ազատեցին կղզւոյն քաղաքական յանցաւորները: Հոնկէ մեկնելով մտաւ Բրեքհարիւր թուով Փոլիքաստրօ ծոցին մէջ դուրս ելան ի Սափրի: Տիրելով ցամաքին և հոն ևս զինաթափ ընելով մաքսատան պահապանք, կը համարէին ոտք հանել բոլոր ժողովուրդը « Կեցցէ Իտալիա », « Կեցցէ Հասարակապետութիւն » գոչելով:

Բայց յոյժ սակաւք հետերնին միացան և Փատուլա աւանին քով վրանին հասնելով հազար պահապանք և որսորդ զինուորաց վաշտ մը, յաղթուեցան և ցրուեցան, թողլով նաև 50 մեռեալք: Մնացեալք փախան անտառները բայց նոր գունդեր հասնելով վրանին, մաս մը սպանուեցան և մաս մը գերի բռնուեցան, յորս էին նաև Փիզաքանէ և Նիքոդէրա, ապագայ Իտալիոյ անուանի պաշտօնեայն: Պուրպոնեան պետութեան

Գանդրէրի մարտանաւը շոտլանդի քաղցեց ի Նափոլի և մէջը գտնուողք բանտարկուեցան: Փիէմոնթի վարչութիւնը պահանջեց որ նաւապետը, նաւաստիք և ճանապարհորդք ազատ ձգուին, որոնք յանցանք մը չունէին և զորս Փիզաքանէ բռնադատեր էր հնազանդելու: Նափոլիի Արտաքին Գործոց պաշտօնէին պատասխանը այնքան արհամարհական էր որ Քաւուր ետղրկեց զայն:

Փերտինանտոս յետոյ զոմանս սպատեց. միւսերն ալ Փիէմոնթ պահանջեց սպառնալեօք, թիկունք ունենալով իրեն նաև Անգղիոյ վարչութիւնը, որովհետև նաև ուն մէջ կային երկու անգղիացի նաւաստիք: Նափոլիի վարչութիւնը տեղիք տուաւ. ետ դարձուց նաև և դրամական մեծ վարձատրութիւն մը ըրաւ անգղիացի երկու նաւաստեաց:

Յետ երկար և դառն բանտարգելութեան, Սափրիի արշաւանսոց հեղինակքը դատուեցան ի Սալէոնոյ մասնաւոր Ատեանէ մը: Եօթը անձինք մահուան դատապարտուեցան, յորս էր և Նիգոդերա, և երկու հայրիւր անձինք զանազան պատիժներու: Մահուան պատիժք յետոյ փոխուեցան մշտնջենաւոր բանտի:

4. Լոմպարտիա — Վենետիկ. Հանդարտութիւն. Արշիդուքան Մաքսիմիլիանոս: — Յետ 1849ի պատերազմաց և աղետից, Լոմպարտիա — Վենետիկ լուծութեամբ կը տանէին իրենց սահմանեալ վիճակը: Մարջախան Ռատէչքի, ընդհանուր կառավարիչ երկու միացեալ գաւառաց, ընդարձակ իշխանութեամբը և զօրաւոր ձեռքով ցրուեր էր որ և իցէ փորձի մը ամէն յոյս: Ի գուր վենետիկեցի Քաւլի սպայն 1853ի ուզեց ոտք հանել զԳատորէ, շուտով բռնուեցաւ և շղթայակապ տարուելով ի Մանդուա, մահուան դատապարտուեցաւ: Լոմպարտիա — Վենետիկոյ ժողովուրդք ըմբռնեցին որ առ ժամս իրենց ասպարէզ կը մնային քաղաքային և ուսումնական յառաջադիմութիւնք:

Կայսրն Փրանկիսկոս Յովսէփ չուղեց անզգայ մնալ դժբաղդ ժողովրդեան մը ցաւերուն: Յամին 1854 Մայիս 1ի իւր ամուսնութեան առթիւ ընդ պաւիերացի

չնաշխարհիկ իշխանուհւոյ մը հետ, վերցուց երկուց գաւառաց պաշարման վիճակը, հաստատեց դատաստանարաններ, ներումն շնորհեց շատ մը յանցաւորաց, ուրիշներու պատուհապքը նուագեցուց և գրաւեալ կալուածոց մաս մը ետ սրուեցան, որով և պանդխտելոց մաս մը սկսաւ դառնալ ի հայրենիս: Այս շնորհքները մեծապէս ծափահարուեցան այն պետութիւններէն, որոնք Արևելեան Պատերազմին ժամանակ կը փափագէին դաշնակից ունենալ զԱւստրիա, և Լորտ ճոն Ռուսսըլ Հասարակաց Խօսարանին մէջ համակրանօք մը կը յորդորէր վիտալացիս՝ հլու վաստակել Աւստրիոյ իշխանութեան ներքև, որ ապագային անշուշտ առաւելագոյն շնորհներ պիտի մատակարարէր: Անգղիոյ պաշտօնական այս ձայնը զրգոցեց իտալական ազատականքը յորս նաև լոմպարտացիք և վենետկեցիք: Մանին՝ իր քրտորանաց վայրէն, բուռն գրութեամբ մը բողոքեց ճոն Ռուսսըլի յորդորանաց դէմ, աւելցնելով որ վենետկեցիք մէկ միայն շնորհք կըրնան փափագիլ Փրանկիսկոս Յովսեփէ, այն է՝ իրենց երկիրը իրենց թողու:

Արևելեան պատերազմին առթիւ Աւստրիա 500 միլիոն ֆիորինի փոխառութեան համար, պահանջեց որ Լոմպարտիա-Վենետիկ տան (65 միլիոն. դարձեալ այդ պատճառաւ եղած զինուորագրութիւնը մեծ վնաս բերաւ Երկրին երկրագործութեան և շերամարտածութեան, որովք կ'ապրին այդ երկուց գաւառաց բազմագոյն ժողովուրդք: Յաջորդ տարւոյն հունձք և եկամուտք մեծապէս նուագեցին և ժողովուրդք տրտնջանաց և յուզման մէջ էին, երբ 1857ի Յունուարին, Փրանկիսկոս Յովսեփ իւր ամուսնոյն հետ անցաւ յիտալիա: Անդէն նորոգել տուաւ Լոմպարտիոյ-Վենետիկոյ կեդրոնական համախմբութիւնքը, վերցուց երկիրներու գրաւումը, 72 քաղաքական յանցաւորաց ներեց, շնորհեց Վենետիկոյ զաւառին 13 միլիոն ֆրանք պարտքը առ Գանձն, զոր կատարեր էր իւր պարտութենէն վերջը. ամէն կողմ բաշխեց ողորմութիւն, գթալիր նայուածք մը և պատիւք ևս: Եւ սակայն Վենետկեցիք իրեն պատասխանեցին լուրջ լուռութեամբ մը:

Անկէ անցաւ Յունուար 15ին ի Միլան ուր նաև ի սկզբան ցուրտ ընդունելութիւն մը գտաւ. բայց երբ 25ին հրովարտակով մը ներումն շնորհեց բոլոր քաղաքական յանցաւորաց, ջնջումն սկսեալ քաղաքական դատերու և բարձումն ի Մանդուայէ մասնաւոր հաստատեալ Արդարութեան Ատենին, որոց յաջորդեցին նաև առանձնական պատիւներ քաղաքացւոցմէ շատերուն, այն ատեն մեծ եղան ժողովրդեան երախտագիտութիւնքը և ծափահարութիւնքը :

Այս ամէն շնորհներուն վրայ Փրանկիսկոս Յովսէփ մեծագոյն մը ևս աւելցուց, փոխան իննսնամեայ Ռատեցքի մարաջախտին, որուն անունը ահաւոր կը հնչէր իտալացւոց ականջներուն, անուանելով ընդհանուր կառավարիչ Լոմպարտիոյ-Վենետիոյ իւր եղբայրը՝ Մաքսիմիլիանոս արչիդուքսը. Աւստրիոյ տանը ամենէն ազնիւ, մարդասէր և ամենուն առ հասարակ սիրելի իշխանը : Արչիդուքսը իւր անձնական յատուկեամբք միաբան կը բերէր միանգամայն յիտալիա Պելճիոյ տնէն համակրելի ընկեր մը զարչիդքսուհին Քարլոդդա : Երկուքն ալ աւանդ յետոյ այնքան դժբաղդք :

Երկու նահանգներու համար նոր ուրախայի կեանք մը կը սկսէր : Մաքսիմիլիանոս չխնայեց որ և է ջանք երկրին յառաջագիմութեան համար : « Կ'օգնէր առանձնական ձեռնարկներու և խորհուրդ կու տար, ինքն ալ գիտցողներու խորհուրդ կը հարցնէր, յանձնաժողով անուանեց երկուց գաւառաց տուրքերու հաւասարութեան համար. Լետրոյի հեղեղը կանոնաւորեց, Վերոնայի ճահիճները ցամքեցուց, Վալդէլլինայի յետին աղքատութեան օգնեց, ամէն գիւղ և աւան մեքենաներ հաստատեց հրդեհները մարելու, բարեկարգեց գիտութեանց և գեղարուեստից ձեմարանքը, Երկրին յարմար դաստիարակութիւն մտուց և մտաւորական աշխատութիւնքը զարգացուց ¹ » : Միով բանիւ ջանաց կարելի եղածին չափ մոռցնել տալ, ներկայ և անցեալ աղէտքը և օտար տիրապետութեան մը վիշտը :

1. Զեզարէ Քանթու. վերջին Երեսուն տարիներ. էջ 48 :

5. Դոսքանա. — Դարձ Նախկին Վիճակին: — Լէոփոլտ Մեծ Դքսին դառնալով, գրեաթէ հանդարտեր էր Դոսքանա և եթէ ազատամիտք գոհ չէին, բայց ընդհանուր ժողովուրդը գոհ էր և Լէոփոլտ խոհեմ լուծեամբ մը չէր հալածեր նոյն իսկ իրեն դէմ եղած կղզիացեալ ցոյցեր: Կար միայն կէտ մը, որուն անհամբեր կը սպասէր ժողովրդեան մեծ մաս մը հանդարտութեամբ, այն էր՝ որ օտար զինուորք, այսինքն Աւստրիացիք մեկնին Դոսքանայէն և պահուի Սահմանադրութիւնը, զոր ինքնին յօժարակամ տուեր էր Մեծ Դուքսը: Այս երկու կարևոր կէտերու վրայ պիտի կայանար Լէոփոլտի ժողովրդականութիւնը: Բայց ընդհակառակն մինչ կը կարծուէր որ Աւստրիացիք մեկնին ի Դոսքանայէ, Կայսրը և մեծ Դուքսը մէջերնին դաշինք մը դրին որ 10,000է բանակ մը մնայ ի Դոսքանա, որոյ վճարքը և զգեստը պիտի հոգար կայսրը և բնակութիւննին ու ապրուստը Մեծ Դուքսը: Դոցա հրամանատարը կայսրը պիտի համարուէր և կայսերական գունդերը պիտի պահպանէին զբերդերը: Սահմանադրականք բողոքեցին՝ որ այս ամէնը ընդդէմ էր Սահմանադրութեան: Լէոփոլտ ստիպուեցաւ լռել և ցրուել Խօսարանը, առնելով ձեռքը բովանդակ վարչութիւնը և խոստանալով կառավարել ըստ սկզբանց Սահմանադրութեան: Քաղաքագլուխն Փէրուցցի այն ատեն բողոքեց յանուն ժողովրդեան, բայց պաշտօնանկ եղաւ և Լէոփոլտ տպագրութեան և մատենագրութեան սիրող իշխանը, չափաւորեց տպագրութեան ազատութիւնքը: Դոսքանա այս վիճակիս մէջ մնաց մինչև 1855, որուն առջի ամիսներուն մէջ աւստրիացի գունդերը ձգեցին նախ զԼիվորնօ, ապա զՖիրէնցէ, թողլով սակայն ժողովրդեան սրտին մէջ այն մեծ տօգոհութիւնը ընդդէմ իշխանին, օտարին այսքան ժամանակ ուշանալուն համար, որ իրենց 25 միլիոն ֆրանքի արժեք էր: Այս յիշատակք էին թերևս որ երկրին 1859ի յուզմանց պատճառ եղան և ժողովրդեան անտարբերութեան առ Լէոփոլտ իրեն իշխանը:

6. Իտալական Գքսուծիւնք — Փարմա. Մոստենա: — Ի Փարմա դուքսն Կարոլոս Գ յետ իւր դարձին ռխակալ ընթացք մը բռնած էր, վրէժ խնդրելով այն ամէն անձէ որ մասնակցեր էր յեղափոխութեան կամ ազատական գաղափար մը ունեցեր և յայտներ էր: Խստութիւնը ծիծաղական եղանակաւ մը հասուց մինչև մաղերու, ընչացքի և մօրուաց, և Փարմայի հին բերդը նորոգելով կը համարէր որ ամրանայ և սպաւնովի: Մաքսային դաշնադրութիւն մը ըրաւ ընդ Աւստրիոյ, առաւել ի նպաստ Կայսրութեան: Շուայլ, բուռն և զեղիս, իւր վարչութեան և կենակցութեան մէջ այնպիսի անձնանցմէ չըջապատեալ էր որովք բնաւ չէին կարող պատիւ բերել իշխանի մը: Օր մը փողոցէ անցնելու ժամանակ քաղաքացի մը որուն պատուոյն մեծապէս դպեր էր, դաշոյնով զինքը սպաննեց և երկար ատեն ծածկուեցաւ: Ապա բռնուելով ինքզինքը արդարացուց և փախաւ յԱմերիկա:

Կարոլոս Գի որդին Դուքսն Ռոպէրդ՝ փոքրիկ ըլլալով, իւր մայրը Մարիա Լուիզա դքսուհին թագապահ անուանուեցաւ Փարմայի դքսութեան, որ ամէն ջանք ըրաւ իւր ամուսնոյն պատճառած վիշտերը ամբքելու: Խոհեմ և բարեհամբաւ անձինք կոչեց վարչութեան գլուխ. վերուց քաղաքական յանցանաց համար պանդըխտելոց կալուածներուն վրայէն յափշտակութիւնը, ծախքերը նուաղցուց, անիրաւ հրովարտակները ջնջեց և Գատաստանարանները բարեկարգեց: Եւ սակայն Մածծինիի կուսակիցներէն ոմանք ապստամբութիւն մը փորձեցին ի Փարմա զոր խստիւ ընկճեցին զինուորք և հինգ գլխաւորք մահուան դատապարտուեցան: Բայց յետոյ պատիժքն մշտնջենաւոր բանտի փոխուեցան:

Որչափ որ ազատամիտք կ'ամբաստանէին զդքսուհին որ մեծապէս կը գործէր կղերականաց ազդեցութենէ, այսու հանդերձ կը խոստովանէին ևս որ Մարիա Լուիզայի թագապահութեան օրով դքսութիւնը մեծամեծ օգուտներ ունեցաւ երկրին տնտեսական մասին, արոց թեթևանալով և Ելեմտից հաւասարութեամբ:

Իսկ ի Մոտենա Փրանկիսկոս Ե դառնալով յետ Նովարայի պատերազմին աւստրիացի զօրաց օգնութեամբ, հաստատեց բացարձակ իշխանութիւնը, բառնալով ինչ որ կը վերաբերէր ժողովրդական ազատութեանց, ջանալով հարստացնել անձնական գանձը, երկպառակելով ժողովուրդը: Դուքսը ի վնաս Մոտենայի դքսութեան՝ ընդունեց էր Աւստրիոյ առաջարկած մաքսային դաշինքը, իւր աթոռոյն վրայ հաստատուն մնալու համար: 1859ի պատերազմին ժամանակ խոյս տալով իր դքսութենէն, չկարողացաւ այլ ևս դառնալ: Վիլլաֆրանքայի դաշանցմէ վերջը Մոտենա միացաւ Փիէմոնթի հետ:

7. Հռովմ, Ուղեւորութիւն Պիոս Թի: — Քահանայապետն Պիոս Թ իւր դարձէն վերջը ի Հռովմ, ինքնակամ հրամանով մը, իւր Ատենադպրին Անդոնէլի կարդինալին ձեռքով ամէն պաշտամանց մէջ նոր բարեկարգութիւններ մտուցեց էր, հաստատել էր Պետութեան ատեան մը և քաղաքին ամէն մատակարարութեանց խնամք տարել էր զանազան յանձնաժողովներով:

Յայտնի է որ այս ամէն պաշտամանց և ժողովոց մէջ եկեղեցական տարրն ալ ունէր իր մասը: Ասկէ մեծ տեղեւորութիւն յազատականս, որոնք կ'ամբաստանէին և աւաղելի կը գտնէին երկրին մատակարարութիւնը և Հասարակաց կրթութիւնը: Իրենց ամէն բարեկարգութիւն անհաճոյ էր, քանի որ կը համարէին սղդեալ ի Գաղղիոյ և յԱւստրիոյ. մանաւանդ ախորժելի իսկ էր իրենց որ չգործադրուին այդպիսի բարեկարգութիւնք, զվարչութիւնը ամբաստանելու համար:

Պիոս Թ յետ վերցնելու պաշարման վիճակը և աւստրիական գրաւումը ի Ֆէրրարայէ ի Պոլոնեայ և յԱնքոնայէ, այց ելաւ գաւառաց մինչև ի Պոլոնիա ուր Մինկէդդի իրեն աղերս մը ներկայացուց Պետութեան բարեկարգութեանց աղաչաւոր. յետոյ անցաւ ի Մոտենա, Ֆէրրարա և ի Դուքանա: Ի դարձին ի Հռովմ ժողովուրդը զինքը ընդունեցաւ մեծ հանդէս-

ներով, յայտնելով իւր մեծ սէրը և համակրանքը առ Քահանայապետն: Եթէ կային տակաւին ուղղուելիք ի վարչութեան և նոյն իսկ երբեմն երբեմն խստութիւնք ոստիկանականք, ինչպէս կ'ամբաստանէին ազատականք, սակայն ամենայն ոք չէր կրնար ժխտել Պիոս Թի տիեզերահուշակ գթալիր սիրտը և քաղցրութիւնը:

8. Նափոլի եւ Սիկիլիա — Փերտինանտոս Բի վարչութիւնը: — Ի Նափոլի և ի Սիկիլիա Փերտինանտոս Բ յետ դարձին շարունակեց իւր դրութիւնը ընդդէմ ազատութեանց և ներելոյ: Հակառակող և նախանձորդ Փիէմոնթի յառաջադիմութեան և ազդեցութեան, Արևելեան պատերամին ժամանակ ծածուկ ջանաց պաշարներու մասին դժուարութիւններ յարուցանել Գաշնակցաց: Եթէ Անգղիա և եթէ Քաղղիա յայտնեցին իրենց տհաճութիւնը: Փերտինանտոս Բ երկուց պետութեանց լրագիրներուն սպառնալիքներէն վախցած, արդարացումն հրատարակեց և փոխեց պաշտօնէիցմէ զոմանս: Պատերազմէն վերջը Բարիգու Գաշնախօսութեան մէջ իրեն վարչութեան դէմ խօսուածներուն համար բողոքեց: Վալւսքի կ'ըսէր որ ալ ժամանակ էր կեցնել Նափոլիի վարչութեան վատթար գնացքը և փոխել դրութիւնը: Իսկ Լորտ Քլարէնտոն իր ծանուցագրին մէջ կը յայտնէր որ Սիկիլիա լաւագոյն վարչութեան մը պէտք ունէր, որ ամենէն առաջ հարկ էր ազատել և կոչել յետս անիրաւութեամբ հալածուած բարի քաղաքացիները: Մինչև որ ի Նափոլի վարչութեան կերպը չփոխուի, անհնար էր թագուհւոյն և Նափոլիի թագաւորութեան մէջ լաւ յարաբերութիւնք հաստատել: Քարաֆա պաշտօնեայն յանուն Փերտինանտոս Բի պատասխանեց որ ինչպէս Նափոլի օտար պետութեանց խնդրոց մէջ չէր մտնէր, այսպէս ալ Անգղիա և Քաղղիա իրաւունք չունէին իր ներքին վարչութեան մէջ խառնուելու. թագաւորը միայն կրնայ գիտնալ կառավարելու յարմար եղանակքը, խաղաղութիւնը պահելու համար: Եւ աւելցուց բանտարգելութիւնք և դատապարտութիւնք: Քաղղիա և Անգ-

ղիա խնդրեցին յԱւստրիոյ ջանալ համոզել զՓերտինանտոս որ դրութիւնը փոխէ և գթութեամբ վարուի հպատակաց հետ : Աւստրիա խիթալով որ օտար միջամտութիւն մը չըլլայ յԻտալիա, զՀիւպնէր զրկեց իՆափոլի, որ յաջողեցաւ միայն խաղաղական ծանուցագիր մը գրել առ երկուս Պետութիւնս : Փերտինանտոս միանգամայն ցուցնելու համար որ չէր վախեր անոնց սպառնալիքներէն, սկսաւ պատերազմի պատրաստուիլ : Անգղիա և Քաղղիա յետս կոչեցին իրենց դեսպանքը . անխուսափելի կը կարծուէր պատերազմը երբ երկու մեծ պետութիւնք վերջի վայրկենին ետ կեցան : Ասով աւելի փայլեցին Անգղիոյ և Քաղղիոյ ունայն սպառնալիքները, որոց յաղթելով Փերտինանտոս Բ իր յամառութեամբը, խրախուսեցաւ ևս առաւել իր առաջին ընթացքին մէջ, և բացարձակ սկսաւ գործել թէ քաղաքական և թէ եկեղեցական իրաւագիտութեան գործառնութեանց մէջ . յայտնի է ունենալով նաև իրեն կուսակիցներ և շողորթներ :

Ի Սիկիլիա ապստամբութիւն մը ծագեցաւ, բայց զլիսաւորը Պէնդիվենիա՝ կալանաւորուելով՝ հրացանի բռնուեցաւ : Աճէսիլաս Միլանօ քսան և վեցամիայ երիտասարդ մը որ կռուեր էր 1848ի պատերազմները, զինուոր գրուեցաւ որ կարենայ մերձենալ Փերտինանտոսի և սպաննել, զոր « բռնաւոր » կը կոչէին : Զօրահանդէսի միջոց հրացանի սուիճով վրան դիմեց, բայց հարուածը չհղելով, հագիւ թեթև մը վիրաւորեց յազգեր : Կրկին ուզեց փորձել հարուածը, բայց հազարապետ մը իւր ձիով դիմելով, գետինը ձգեց զայն : Յետ ահաւոր տանջանքերու որպէս զի իմացնէ իւր համախոհքը, մինչ ինքը կը պնդէր որ համախոհ չունէր, կախաղանի հանուեցաւ : Քիչ վերջը վառօդանոցը պայթեցաւ մեծամեծ փրաններով և մարտանաւ մը որ Սիկիլիա գէնք կը տանէր բռնկեցաւ և ընկղմեցաւ : Փերտինանտոս այս ահաւոր դէպքերէն վախնալով, աւելի սաստկացուց Արքունեաց պահպանութիւնը և խըստացուց վարչութիւնը կասկածաւորաց վրայ : Բանտերը լեցուեցան հազարաւորներով, յորս ի գործ կը դնէր նոյն իսկ միջնագարեան տանջանքներ :

Յանկարծ փոքրիկ քաղցրութիւն մը տեսնուեցաւ: Իւր որդւոյն Փրանկիսկոսի ամուսնութեան առթիւ՝ Մաքսիմիլիանոս Պավիերայի դքսին Սոփիա դստեր հետ, իննսուն մշտնջենաւոր բանտարգելոց պատիժը փոխեց ի տարագրութիւն: Ասոնք պիտի տարուէին ի Հարաւային Ամերիկա և հոն ցամաք չելած պիտի երդնուին այլ ևս չդառնալ յԵւրոպա: Երբ տարագրեալք Ատլանդական Ովկիանոսի վրայ կը գտնուէին, բռնադատեցին զամերիկացի նաւապետը զիրենք Եւրոպա դարձնել: Նաւապետը զիրենք հանեց Իռլանտիոյ Քորք քաղաքը, ուր մեծ հիւրընկալութեամբ ընդունուեցան. ամբողջ Անգղիոյ մէջ ստորագրութիւն բացուեցաւ դոցա օգնելու համար, յորոց ոմանք անցան ևս ի Փիէմանթ:

Փետրինանտոս Պարի գացած էր ընդառաջելու իւր
 ցուն 9. հարսին: Բռնադատուեր էր շորս ժամ ձեան մէջ քալելու, ասկէ հիւանդացաւ և հազիւ կրցաւ հասնիլ ի Փորդիչի և քաշուիլ իր Քապէրդայի պալատը, հոն յետքանի մը ամիս տառապելու ահաւոր հիւանդութեամբ մը մեռաւ Մայիսի 22ին:

Փետրինանտոս Բ գեղեցիկ տեսեամբ՝ իւր յայտնի պակասութեամբք հանդերձ, որով տխուր համբաւ մը ձգած է Պատմութեան էջերուն մէջ, սուր միտք մը ունէր և պարկեշտ և կրօնասէր կեանք մը: Աներկիւղ և յանդուգն՝ արհամարհեց նոյն իսկ Անգղիոյ և Քաղղիոյ զօրաւոր Պետութեանց սպառնալիքները. և սակայն իւր այս ընթացից հետևանքն էր իւր որդւոյն քիչ վերջը գահը կորսնցնելը:

9. Իտալական Միութեան մը ընկերութիւնք: — Որչափ որ առանձնական պետութիւնք ընկճեր էին 1848ի Իտալական յեղափոխութիւնը և դարձեր էին նախկին թագաւորք և իշխանք իրենց գահոյից վրայ. սակայն 1848ի զաղափարներէն մին՝ մեծ ընդունելութիւն և տեղիք գտած էր ժողովրդեան սրտին մէջ և էր այս Ընդհանուր Իտալիոյ միութեան մը գաղափարը, թողո՞ւ ի բաց 1848 « Գաշնակցական կամ Մաքսային Միութիւնը » և կամ Մածծինիի « Իտա-

լական Հասարակապետութեան » գաղափարը : 1848էն մինչև 1858 Փիէմոնթ իւր քաղաքագիտական և զինուորական վիճակով առաւելագոյն ազդեցութիւն մը առեր էր իտալիա : Միաւորականք մեծագոյն վստահութիւն մը կրնային ունենալ անոր վրայ, նա մանաւանդ որ Սափոյիոյ տունը խղճիւ վրէժխնդիր էր Սահմանադրութեան պահպանութեան : Միաւորականք սահմանեցին տարածելու ամէն կողմ « Միութիւն բովանդակ իտալիոյ, Սափոյիոյ տանը գլխաւորութեան ներքև » գաղափարը :

Որչափ որ այս գաղափարին նախկին յղացողն էր նոյն ինքն կոմսն Քափուր, սակայն գլուխ և կարգադրիչ եղան երեք նշանաւոր հայրենասէրք՝ Փալլափիչինի Դրիվուլցիօ, Դանիէլ Մանին և Ճիուզէփփէ Լաֆարինա, որոնք կազմակերպեցին Ալէքսանդր Եւլիանի Եւ, յայտնի ի Փիէմոնթ և ծածուկ իտալիոյ ուրիշ կողմեր, որուն նախագահն եղաւ Փալլափիչինի և փոխան-Նախագահ՝ Կարիպալտի : Ընկերութեան նպատակն էր այս միութեան ամբողջական գործը յանձնել Վիկտոր Էմմանուէլի, զոր միայն կարող կը համարէին և առ հասարակ ընդունելի : Եւ սակայն նոյն իսկ ի հայրենասիրաց շատերը անկարելի կամ յոյժ դժուարին կը համարէին այս գաղափարին գործադրութիւնը : Քափուր ևս իր ճարտար քաղաքագիտութեամբ որ գիտէր կառավարուել ըստ ժամանակին, արտաքսապէս առ ժամս երազ մը կը համարէր իտալական ամբողջ Միութիւն մը : Հաւանական կը համարէր միութիւն մը դաշնակցական կամ միաբանական . բաւական էր որ Աւստրիա Գառնիոյ Ալպեաններէն անդին անցնի, թողլով Փիէմոնթի իւր գրաւած երկիրները : Այնպէս կը ցուցնէր որ անկարելի էր գահերէն վանել բոլոր իշխանները և մանաւանդ չէր կրնար համոզուիլ զՔահանայապետը ամբողջովին զրկել իւր ժամանակաւոր իշխանութենէն : Այսու հանդերձ միանգամայն ետև էր գաղտնի մանրամասն տեղեկութիւններ ստանալ Ազգային ընկերութեան ընթացից և գործառնութեանց վրայ, և ուր կրնար կը ջանար նպաս-

տել այս գաղափարաց սփռուելուն: 1858ի վերջերը Դաշնակցականք և Հասարակապետականք գրեթէ ամբողջովին կորսնցուցած էին իրենց կուսակիցքը, ընդհակառակն Իտալիոյ միութեան գաղափարը Սափոյիոյ տան ներքև, շնորհիւ Ազգային ընկերութեան և ուրիշ բազում նմանօրինակ յանձնաժողովներու և խմբակներու, ամէն տեղ ընդունելութիւն և մուտք գտեր էր: Շարժառիթ մը և խրախուսող մը պէտք էր այս գաղափարաց որպէս զի իրականանային և զայն հնարեցին Քափուր և Նարոյէոն Գ:

10. Կոմսն Քափուր եւ Նարոյէոն Գ: — Երբ յամին 1855 Վիկտոր Էմմանուէլ այցելութեան մը ելաւ Նարոյէոն Գի ի Բարիզ Քափուրի և տ'Ածէլիոյի հետ միարան, Կայսրը յանկարծական բերմամբ մը հարցուցեր էր. « Ի՞նչ կարելի էր արդեօք ընել Իտալիոյ համար »: Այս հարցին պատասխան տուած էր կոմսն Քափուր որ հարկ էր զԱւստրիա վանել յիտալիոյ և Քահանայապետին թողուլ միայն զՀռոմ¹: Բարիզու Դաշնաժողովոյն մէջ լիովին ազատութիւն տուեր էր Քափուրի յայտնելու իւր գաղափարքը ընդդէմ Աւստրիոյ: Աւստրիա բողոքեր էր այս յարձակման դէմ: Սակայն Անգղիա փոյթ չունէր պաշտպանելու զԱւստրիա որ չէր ուզած միարանիլ Արևելեան պատերազմին մէջ, նոյնը փոխադարձաբար կը զգար Ռուսիա. իսկ Գերմանիա արդէն հնարքներ կը մտածէր Աւստրիոյ ազդեցութիւնը նուազեցնելու և ջնջելու իսկ գերմանական իշխանութեանց մէջ: Քափուր և Նարոյէոն յայնմհետէ միարան գաղտ կը գործէին Ազգային ընկերութեան միջոցով, որոնք գրաւեցին ընդհանուր բերքերը: Ընդհակառակն իտալացի հասարակապետականք զայրացած էին ընդդէմ Նարոյէոնի, զոր իւր խոստմանց զրժող կը համարէին և անհոգ իտալական ազատութեան և կ'երդուըննային մահուամբ վրէժ առնուլ: Ի սկզբան այս խօսքերը և գրութիւնք

1. Պիտանքի Պարտուէնն էրդուլնն Դիւնն Բիտուէնն յիտուլն:

պարզ սպառնալիքներ երևցան. բայց Օրսինիի դաւը յայտնապէս յերևան հանեց որ սպառնալիքները իրենց գործադրութիւնը կրնային ունենալ և Նարոլէոն Քայն օրուընէ միտքը դրաւ իւր կենաց և Կայսրութեան պահպանութեան համար « բան մը ընել իտալիոյ համար » :

Յամին 1858 ի Փիէմոնթ Խօսարանի նիստերը փակուելուն, Քաւուր անցաւ ի Սաւոյիա և ի Ճեներա և անկ՛, Փլումպիէրի բաղնիքները ուր կը գտնուէր նաև Նարոլէոն և հոն տեղի ունեցան այն կարեւոր խօսակցութիւնք կամ դաշինք, որոնք իտալիոյ բաղդը պիտի փոխէին և այդ որոշութիւնք աւելի խօսիւք էին քան գրովք: Ըստ այսմ Քաղղիա օգնութեան պիտի դիմէր Փիէմոնթի թէ Աւստրիա վրան արշաւէր: Հիւսիսային իտալիոյ թագաւորութիւն մը պիտի կազմուէր Սաւոյիոյ տան իշխանութեան ներքև, որուն պիտի միանային Փարմայի և Մոտենայի դքսութիւնքը և Սաւոյիա ու Նիցցա պիտի տրուէին Քաղղիոյ ¹ :

Այսպէս Քաղղիա իր օգնութեանը փոխարէն պիտի ունենար գեղեցիկ երկիր մը և Նարոլէոն կրնար պարծել որ Բ. Կայսրութիւնն ալ ունեցեր էր իր ապահով աշխարհակալութիւնը:

Փլումպիէրի տեսակցութենէն վերջը Կոմսն Քաւուր կրնար համարիլ իր նպատակին հասած և արդէն « զՆարոլէոն Ք շրջեցնելու գաղտնիքը գտեր էր », ինչպէս կ'ըսէ անուանի պատմագիրն Չէզարէ Քանթու ² :

1. Ոմանք կը յաւելուն որ՝ Լոմպարտիա—Վենետիկ առանձին թագաւորութիւն պիտի ձևանար, Լեւոդէնպէրկի դքսին իշխանութեան ներքև որ էր թոռն Եւժէն Պոնապոնէի:

2. Յետին Երեսուն ամբ. էջ 39:



ԳԼՈՒԽ ԽԸ

Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ Ի Տ Ա Լ Ի Ո Ց

ԽԱՂԱՎՈՒԹԻՒՆ ՎԻԼԼԱՑԻՐԱՆՔԱՅ, ԴԱՇԻՆՔ ՑՈՒՐԻՔԻ

1. Պատերազմի յայտարար նշանք. Նաբոլէոն Գ և Խնամու-
թիւն Սափոյիոյ տան նետ. — 2. Պատճառք և Հանդերձանք պատե-
րազմին. — 3. Բանակն Գաղղիական և քանակն Փիէմոնթի. —
4. Բանակն աւստրիական յիտալիա. — 5. Պատերազմ ի Մոն-
դէպէլլօ, Վարէզէ և Փալէսզրոյ. — 6. Պատերազմ Մաճէնդայի.
Մաք Մահոն զօրավարը. Նաբոլէոն ի Միլան. — 7. Կայսրն Փր.
Յովսէփ ընդհանուր հրամանատար. Պատերազմ Սոլֆերիոյ. —
8. Դուքանա. Դքսութիւնք և Միջին իտալիա պատերազմին ժա-
մանակ. — 9. Չինադադարուձն. Խաղաղութիւն Վիլլաֆրանքայ.
Դաշինք ի Ցուրիք. — 10. Տժգոնութիւնք Փիէմոնթի և Հիւսի-
սային իտալիոյ. — 11. Միութիւն Միջին իտալիոյ ընդ Փիէմոն-
թի. — 12. Միացուձն Սափոյիոյ և Նիցցայ ընդ Գաղղիոյ:

1. Պատերազմի յայտարար նշանք. Նաբոլէոն Գ.
Խնամութիւնք ընդ տանն Սափոյիոյ: — 1859 տա-
րին կը բացուէր ստուերամած գուշակութեամբք: Մեր-
ձաւոր պատերազմի մը առաջին նշանը տուաւ նոյն
ինքն Նաբոլէոն Գ իւր խօսից մէջ 1859ի տարեգլխին
առ աւստրիական դեսպանն պարոն Հիւպնէր. « Կը
ցաւիմ, կ'ըսէր, որ մեր յարաբերութիւնք Ձեր վարչու-
թեան հետ, առաջուան պէս լաւ չեն. բայց կը խընդ-
րեմ ծանուցանել առ Ձեր ինքնակալն որ իմ անձնա-
կան զգացմունքս առ նա միշտ նոյն են »:

Մի և նոյն օրերը Վիկտոր Լյամանուէլ Բ բանալով
Փիէմոնթի Խօսարանին նիստերը կ'ըսէր « Հորիզոնը,

որոյ մէջէն կը յառնէ Նոր տարին, բոլորովին պայծառ չէ . . . : Անցելոյն յուսով խրախուսեալ, վստահ կը քայլենք դէպ յապագայն : Այս ապագայն երջանիկ պէտք է ըլլայ, որովհետև մեր քաղաքականութիւնը հիմնեալ է արդարութեան, ազատութեան և հայրենեաց սիրոյ վրայ : Մեր երկիրը թէպէտ պզտիկ, սակայն համարումն ստացաւ Եւրոպիոյ խորհրդոց մէջ, որովհետև մեծ է այն գաղափարաց համար զորս կը ներկայացնէ, այն համակրանաց համար զորս կը ներշնչէ : Բայց այս պարագայք չեն ազատ ի վտանգաց, որովհետև թէպէտ կը յարգենք դաշինքները, սակայն չենք կարող անզգայ ըլլալ այն ցառոց, հեծեծանաց որ իտալիոց ռաբին իտալիէն կ'ողորմեն . . . : Զօրաւորք մեր միութեամբ, վստահ մեր իրաւանց վրայ, խոհեմք և ապահովք կ'սպասենք Աստուածային Նախախնամութեան վճռոց» : Երբ թագաւորը արտասանեց « ցառոց հեծեծանաց » բառերը, որոնք իրեն ներշնչեալ էին, ըստ իտալացի դիւանագիտաց, ի Նարոլէոն Գէ, ամենամեծ եղան թօսարանին ծափահարութիւնք¹ :

Յունուար 8ին Քալուր և զօրավարն Լամարմորս յանուն Վիկտոր Էմմանուէլի և իշխանն Նարոլէոն ու զօրավարն Նիէլ յանուն Նարոլէոն Գի ստորագրեցին ի Դուրին, Քաղղիոյ և Փիէմոնթի մէջ պաշտպանողական դաշինք մը : Ըստ այսմ դաշանց՝ Քաղղիա պարտական էր օգնել Փիէմոնթի եթէ Աւստրիա նախայարձակ ըլլար :

Այս դաշանց աւելի հաստատութիւն և զօրութիւն կուտար Յունուար 30ին Նարոլէոն իշխանին ամուսնութիւնը ընդ Կլոդիլտէ իշխանուհւոյն, դուստր Վիկտոր Էմմանուէլի Բ : Նարոլէոն Գ մեծապէս փափագող էր որ իւր գերդաստանը խնամենայ Եւրոպիոյ հին թագաւորական տանց հետ, և կոմսն Քալուր կարևոր դատեր էր յամենայնի գոհացնել զՆարոլէոն Գ, թէպէտ ոչ լիովին հաւանութեամբ թագաւորին որ երկուց ամուսնացելոց

¹ Նամականիք Քալուրի առ Նիկրա 31 Դեկտ. 1858. — Մասսարի Կիւնտ և Բագարուսիան Վիտոր Էմմանուէլ Բ. սպ 1880. էջ 240 :

բնաւորութեանց և միտմանց մէջ մեծ անհամաձայնութիւն կը տեսնէր: Իշխանն Նարոյէոն բուռն յամենայնի, նոյն իսկ իւր քաղաքական գգացմանց մէջ և սնտարբեր նաև երբեմն հակառակ իսկ ի կրօնականին. մինչ իշխանուհին Կլոդիլտէ հռչակեալ իւր ազնուութեամբ, բարեպաշտութեամբ և արքայաժայել կրթութեամբ, արժանաւոր դուստր Ատէլայիտէ սրբակրօն թագուհւոյն, ուսկից վաղաժաման զրկուելով ինքը մայրութիւն ըրած էր միանգամայն իւր եղբարց: Կլոդիլտէ յսնձն առած էր այս ամուսնութիւնը յուսով որ ինքն ալ այսպէս օգտակար ըլլայ իւր հայրենեացը և հնազանդած ըլլայ մեծագոյն կամքերու:

2. Պատճառք եւ հանդերձանք Պատերազմի: — Եւ սակայն այս ամէն բանէն վերջն ալ, պատերազմը սկսելու համար հարկ էր պատճառ մը ստեղծել, նամանաւանդ որ եթէ Նարոյէոնի ցեղը պատերազմ կը փնտռէր, նոյն չէր ընդհանուր Գաղղիոյ ժողովրդեան զգացմունքը: Միտքերը պատրաստելու համար Փետրուարի սկիզբները հրատարակուեցաւ ի Բարիզ փոքրիկ գրքոյկ մը Նաթոյէոն Գ և Իոպլեո տիտղոսով գրեալ ի դերակոմսէն տը Լակէրրոնիէր: Այս գրքուկին հեղինակը կը պաշտպանէր իտալիոյ անկախութիւնը, որոյ համար հարկ էր որ օգնէր Գաղղիա: Կ'առաջարկէր վանելու զԱւստրիացիս յիտալիոյ և իտալական Պետութեանց դաշնակցութիւն մը կազմել ընդ Նախագահութեամբ Քաշանայապետին Հոովմայ: Նարոյէոն Գ ևս երբեմն երբեմն վարանեալ կը ցուցնէր ինքզինքը պատերազմի համար, սակայն Քափուրի գրութիւնք և ազդեցութիւնք զինքը կրկին կը խրախուսէին: Քափուր յաջողեր էր 50 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը ընել, ապա վերջնագիր մը ուղղեր էր առ Գաղղիա և Անգղիա, ամբաստանելով մի առ մի Աւստրիոյ վարչութեան տխուր գործաւնութիւնքը յիտալիա և խնդրելով որ բռնադատեն զԱւստրիա Ազգային Կարգադրութիւնք հաստատել ի Լոմպարտիա-Վենետիկ ըստ դաշանց 1814-15ի:

Միանգամայն ի Փիէմոնթ տագնապաւ մեծամեծ

պատրաստութիւնք կ'ըլլային պատերազմի: Ամէն կողմէն դիմող կամաւորք՝ բանակի մէջ կը շարուէին. Աւգէան Որոտրոտ անուամբ գունդ մը կազմուեցաւ, որուն հրամանատար դրուեցաւ զօրավարն Կարիպալտի: Այս պատրաստութիւնք ունեցան իրենց արձագանգը ի Քաղղիա ուր փութով սկսան պատրաստութիւնք: Եւ սակայն Խտալիա օգնութիւն մը չէր կրնար յուսալ ի Քաղղիոյ, մինչև որ ըստ դաշանց Աւստրիա նախա-յարձակ չըլլայ յԻտալիա: Քափուր այս առիթը կը ջանար պատրաստել ճարտարութեամբ:

Եւրոպիոյ Պետութիւնք ի սկզբան անտարբեր աչքով կը դիտէին այս ամէն եղելութիւնքը. յետոյ Ռուսիա ծնաւ Դեսպանատողովոյ մը գաղափարը, « Իտալական գործերը կարգի դնելու համար ». ապա Անգղիա և Ֆրոսիա պաշտօնապէս առաջարկեցին այս Դեսպանատողովը, որուն պիտի մասնակցէին Իտալիոյ նոյն իսկ փոքր Պետութիւնք. կը մնար միայն ընդունիլ նաև Աւստրիոյ հաւանութիւնը: Յայսմ Փրանկիակոս Յովսէփ աւելի մտիկ ընելով զինուորական խորհրդականաց, յանկարծական որոշողութեամբ ուղեց ամէն բան աւստրիացեցնել, որով և պատերազմ անխուսափելի կ'ընէր: Ապրիլ 23ին երկու Աւստրիացի նուիրակք, յորոց մին էր պարոն Քէլլէսպէրկ, հասան ի Դուրին, իրենց Պետութեան վերջնապրով մը, բռնադատելով զՓիէմոնթ որ իր բանակը վերածէ խաղաղութեան ժամանակի նման և արձկէ կամաւորները: Երեք օրէն պատասխան կը պահանջուէր¹: Կը համարէր Աւստրիա մեծագոյն ուժով մը դիմելով Փիէմոնթի վրայ, դեռ Քաղղիա չհասած, ջախջախել զայն: Բայց այս վերջնագիրը այս նախայարձակ սպառնալիքները Քափուրի փափագածներն էին, որոնք ճամբայ կը բանային Քաղղիական միջամտութեան ի Փիէմոնթ: Քափուր մերժեց Աւստրիոյ վերջնագիրը: Առաջարկեց Խօ-

1. Դուքս տ'Ալմազան. Պատերազմ Իտալիոյ էջ 107: — Պազանքուր: — Պատերազմ Իտալիոյ, Երկուքն ևս պաշտօնական գրութիւնք համարուած:

սարանին մէջ և ընդունելի եղաւ թագաւորին զիւտատորական իշխանութիւն տալ, և թագաւորը Երկրին վարչութիւնը յանձնելով « Թագապահի » տիտղոսով իւր արեւնակից Եւգինէոս-Սափոյա-Փարինեանոյ իշխանին, պատրաստուեցաւ զօրաց հրամանատարութիւնը վրան առնելու: Ապրիլ 29ին մեկնեցաւ ի բանակն:

3. Գաղղիացի եւ Փիլէմոնթի բանակը: — Արդէն Գաղղիա ևս երկու ամսէ ի վեր կը պատրաստուէր և կը դիտէր զպատեհը, յորում խոստացեր էր Փիլէմոնթի իր միջամտութիւնը: Յետ Աւստրիոյ Վերջնագրին պատերազմը յայտնի էր և գունդերը սկսեր էին կեդրոնանալ սահմանագլխոյն այլ և այլ կէտերու վրայ զգուշութեան համար, մաս մ'այլ պիտի մտնէր յիտալիա, և էր կազմեալ այսպէս. կայսերական պահապանք՝ որոց կը հրամայէին Մեյլլինէ, Գամու և Մօրիս զօրավարները: Իարձեալ հինգ զօրաբաժինք. առաջին զօրաբաժնին հրամանատարքն էին՝ զօրավարն Լատմիրօ, զօրավարն Պապէն և հեծելագօրուն՝ զօրավարն Տէվօ: Երկրորդ զօրաբաժնին մէջ կը հրամայէին զօրավարքն Մոդ-Ռուժ և Էսփինաս: Երրորդ զօրաբաժնին մէջ, զօրավարն Ռէնօ, զօրավարն Իրոչիւ, զօրավարն Պուրպաքի և հեծելագօրուն՝ զօրավարն Փարտունօ: Չորրորդ զօրաբաժնին մէջ կը հրամայէին զօրավարն Վինուա, զօրավարն տը Ֆայի զօրավարն տը Լիւզի տը Փլիսսաք: Հինգերորդ զօրաբաժնին մէջ զօրավարն տ'Օդմար և զօրավարն Իւլրիք: Այս ամէն բանակները ընդ ամէնը 110,000 անձինք ուղղուեցան յիտալիա ոմանք Մոն Սընիի ուղևով և ուրիշները ի ճենովա շոգենաւուք ի Գուլոնէ, Մարսիլիայէ և յԱլճէրիէ:

Կայսրը Մայիս 3ին հրովարտակաւ մը կը ծանուցանէր Գաղղիոյ ժողովրդեան որ Աւստրիա պատերազմ հրատարակելով Սարտենիոյ իրենց Դաշնակցին, Գաղղիոյ կը հրատարակէր պատերազմը: Բովանդակ պետութիւնք հակառակ էին Աւստրիոյ այս յարձակման, որուն նպատակն էր հասնիլ մինչև ցԱլպեանս:

Ֆարդ խոհեմութեամբ լուեցինք. բայց այժմ հարկ էր ցուցընել արութիւն. և Քաղղիա պէտք է խօսի և յայտնէ իւր կամքը: « Այս պատերազմին նպատակն է, զիտալիա յանձնել ինքն իրեն... և բարեկամ ժողովուրդ մը ունենալ մեզ սահմանակից որ ի մէնջ պիտի ձանչնայ իւր անկախութիւնը¹: « Չենք երթար յիտալիա զայրացնելու անկարգութիւնը և ոչ Ս. Քազանայապետին իշխանութիւնը խախտելու, զոր դրինք իւր գահուն վրայ, այլ ազատել զայն յօտար ճնշմանց որ կը ծանրանայ ևս բովանդակ թերակղզւոյն վըրայ... Արութիւն ուրեմն և Միութիւն... »:

Կայսրը Մայիս 10ին՝ յետ առաւօտը պատարագ տեսնելու, բաց կառօք թողուց զԻւլլըրի ժամը 5¹/₂ին կայսրուհւոյն հետ միաբան: Իտալիոյ ազատութեան համար պատերազմ մը վառեր էր Բարիզու մարդասէր ժողովուրդը, և գունդերը ծափահարութեանց մէջէն կը կտրէին զԲարիզ: Շատ պատուհաններէ խառն կախուեր էին Քաղղիոյ և Սարտենիոյ, դրօշակք և երբ կայսրը կառօք երևցաւ Լիոնի կայսրանը երթալու համար, մեծ էր ժողովրդեան անհամար բազմութեան խանդը և եռանդը, մաղթելու բարի երթ իշխանին որ կը մեկնէր « ազնուական նպատակի մը, ժողովրդոց ազատութեան համար »: Կայսրուհին ընկերեց իրեն մինչև ի Մոնդրո, յետոյ դարձաւ ի Բարիզ ուր Պետութեան բարձրաստիճան Պաշտօնեայք կը սպասէին իրեն, և պալատէն չմեկնած ուզեցին տեսնել և մեծարել նաև զթագաժառանգ իշխանը:

Կայսրը յիտալիա ոտք կոխելուն, մեծ եռանդով ընդունելի եղաւ: Ի ձենովա Մայիս 12ին օրակարգով մը կը հռչակէր իւր օգնութիւնը առ բանակն Իտալիոյ, յիշեցնելով իւր զօրաց Մարէնկոյի, Լոտիի, Քասդիլիոնէի, Ալբոլիի և Ռիվոլիի յաղթանակքը և անշուշտ ըլլալով որ Իտալիոյ այս նոր բանակը, ար-

1. Նաբուէտն Գի քաղաքագիտութիւնը որքան ստուգութիւն ունէր յայսմ, ապագայն յայտնեց: Կայսրութեան ընդդիմակառք, միշտ զինքը մեղադրած են յայսմ:

ժանաւոր պիտի ըլլար առաջնոյն : Նարոլէոն Գ իր բանակատեղը հաստատեց յԱղեքսանդրիա : Իսկ Փիէմոնթի բանակը էր հինգ զօրարածին 65,000 զինուորք : Զիւստրաց կը հրամայէր տը Սամպիւլ զօրավարը : Իսկ հետեւակաց հինգ զօրարածիններուն կը հրամայէին զօրավարքն Մոլլար, Զիալտինի, Քուքքիարի, Ֆանդի և Տուրանտո : Ընդհանուր հրամանատար էր նոյն ինքն Վիկտոր Էմմանուէլ թագաւորը ունենալով զլուխ սպայակուտին զզօրավարն Մարոցցօ տէլլա Ռոքա, և իբր ընդհանուր տեղապահ զզօրավարն Լամարմորա :

4. Աւստրիոյ բանակը : — Աւստրիա որ արդէն 1856 տարւոյն սկիզբէն կը գուշակէր զպատերազմը և որ պատրաստ ըլլալով ամենայնիւ, կրնար վերջնագրէն երեք օր վերջը յանկարծակիի բերել զՓիէմոնթ դեռ Գաղղիայէ օգնութիւն չստացած, և կամ գոնեայ անցնելով զԻիչինօ և Աղեքսանդրիայէ ի ձենուվա ճամբան բռնելով, երկուց Գաշնակցաց միութիւնը խափանել, սակայն ընդհակառակն մեծապէս դանդաղեցաւ և Գաշնակիցք ժամանակ ունեցան՝ միանալով դիրքերնին զօրացնել :

Աւստրիական բանակը՝ որուն ընդհանուր հրամանատարն էր կոման Կիւլայ, կը բաղկանար Եօթը զօրարածինէ որոց կը հրամայէին կոման Գլամ-Կալլաս, Իշխանն Լիխդէնշդայն, Պարոն Զօպէլ, կոման Սդատիոն, զօրավարն Պէնէտէք, կոման Շաֆկոցէ, զօրավարն Մենստորֆ և պահեստին՝ զօրավարն Ուրբան, ընդ ամէնը 270,000 անձինք, յորոց սակայն մաս մը պահպանութիւն պիտի ընէր քաղաքաց : Կիւլայ՝ Փիէմոնթի հողը չմտած հրատարակութիւն մը ըրաւ առ Զինուորս, յորում կ'ըսէր որ « Կայսրը կը կոչէ զՁեզ դրօշակաց ներքև երրորդ անգամ չաղխելու Փիէմոնթի սնապարծութիւնը, մոլեռանդից և զԵւրոպէ խառնակողաց ապաստանարանը : Զինուորք յամենայն կարգէ, կ'երթաք ընդդէմ թշնամուոյ մը զոր միշտ փախուցիք... » :

Ի վիճակաւ Փրանկիսկոս Յովսէփ յետ հրովարտա-

կով մը պատմելու առ ժողովուրդն պատերազմին պատճառքը և վստահութեամբ քաջալերելու զժողովուրդը կը յաւելուր որ կը յուսայ թէ այս պատերազմին մէջ Աւստրիա մինակ չմնար: Այդ երկիրները որոց վրայ պիտի կռուի իւր բանակը, արդէն ոռոգեալ են արեամբ «մեր Գերմանիոյ եղբարց»: Երբ ուզեցին օտարք սպառնալ գերմանական ժողովրդոց. և նոյն վտանգին զգացումը այսօր իսկ կ'ընթանայ ընդ բովանդակ Գերմանիա: Կը վերջացնէր յայտարարութիւնը որ կը խօսէր «իբրև իշխան Գերմանական Դաշնակցութեան»:

Ապրիլ 29ին աւստրիական երկու բանակք անցան զԴիլիինօ և բռնեցին զՄորդարա, Վիճէվանօ և Վէրչէլլի:

5. Պատերազմ ի Մոնդէպէլլօ. Վարէգէ եւ Փաւլտըոյ: — Ութ օր վերջը աւստրիական բանակը յետ դանդաղութեանց ուզեց չուել Դուրինի վրայ, որուն պաշտպանութիւնը միայն ժողովրդեան ձեռքն էր¹: Առաւ զՊիէլլա և կը սպառնար ի վրէպի, երբ լուր ստացաւ որ Գաղղիացոց բանակը միացեր էր Փիէմոնթի հետ: Արդէն Կարիպալտեան գունդ մը որուն կը հրամայէր Տէ Սոնազ սկսեր էր ի կողից զինքը վանել. այն ատեն Աւստրիացիք սկսան ետ քաշուիլ և կեդրոնանալ Սէզիայի, Փոյի և Դիլիինոյի մէջ դէպ ի Սդրատէլլա և Փիաչէնցա, սպասելով Դաշնակցաց շարժումներին:

Գաղղիոյ և Սարտենիոյ զօրաց միանալով, Աւստրիացիք ալ չուզեցին Դուրինի վրայ փորձ մը փորձել: Երկու բանակները քանի մը օր դիմացէ: դիմաց կեցան առանց

1. Մեծ գծուութեանց նիւթ եղաւ ի Դաշնակիցս Դուրինի լքեալ մնալը:

Ի զուր Վիկտոր Էմմանուէլ և Քալուր Թախանձանօք շանացին համոզել զՆաբուէոն Գ բանակ մը թողուլ Դուրինի քով: Յարդ չգիտցուի յայսմ Նաբուէոնի խորհուրդը և գաղտնիքը, զոր որ և է դինուորական ռազմագիտութիւն բացատրած չէ. և եթէ Աւստրիացիք ուղղակի դիմէին ի Դուրին, քաղաքը չէր կրնար դիմանալ:

ծրագրի մը ձեռք զարնելու: Դաշնակից Պետութիւնք չէին ուզեր կռուիլ ոչ ի Լոմէլինա և ոչ ի Փիաչէնցա, երկուքն ալ ամուր դիրքեր Աւստրիացւոց համար: Մայիս 19ին Կիւլայ կը թողու զՎէրչէլի և կ'անցնի ի Մորդարա: Հոն մօտ ի Մոնդէպէլլոյ առաջին անգամ երկու բանակները բաղխեցան: Ի սկզբան Աւստրիացւոց դիմաց միայն իտալացիք էին, որոց Նովարայի, Մոնֆէրրադոյի և Աօսդայի թեթև հեծեալքը քաջութեամբ կը կռուէին, մինչև որ հասան Գաղղիացիք. այն ատեն սաստկացաւ պատերազմը և յետ խառնուրդի մը մարմին առ մարմին, Աւստրիացիք վանեցան իրենց ճամբարէն: Կռուոյն մասնակցեր էին 24,000 Աւստրիացիք և 18,000 Դաշնակիցք: Աւստրիացւոց կորուստն եղաւ 7000 մարդ, 1300 ձի և 12 թնդանօթք: Դաշնակիցք կորուսին 700 անձինք, յորս և զօրավարն Պելրէ և հազարապետն Մորէլի: Փիէմոնթեցի սպայք գրեաթէ ամէնն ալ լիրաւոր էին¹:

Այս միջոցին Կարիպալտի գիտնալով որ Աւստրիացիք թողուցեր են զՎէրչէլի և Սէզա գետը անցեր են, թողուց զՊիէլլա զոր պաշարեր էր, անցաւ զԴիւչինօ և յանդգնութեամբ մտաւ ի Լոմպարտիա, դիմելով ի Սէսդօ Քալէնտէ և ապա ի Վարէզէ: Իւր նպատակն էր սպստամբեցնել Գոմոյի և Վալդէլլինայի ժողովուրդքը և ապա զՊէրկամօ և զՊրէչիա. առ այս զինքը թղթովք կը խրախուսէր ի Դուրինէ կոմսն Քաւուր: Աւստրիացի զօրավարը Կարիպալտի դէմ 4000 զինուորք և հրանօթք զրկեց ընդ հրամանատարութեամբ Ուրբանի: Կարիպալտեանց մէկ մաս մը Վարէզէի պաշտպանութեան համար մնաց, մինչ ինքը Կարիպալտի, ծածուկ գնդով մը դուրս ելլելով ի կողմանէ բաղխեց Աւստրիացիքը, յորս տիրեց խառնակութիւն մը: Ուրբան քաջուեցաւ ի Գամէրլադա

1. Աւստրիացի բրէք հակառակ իտալացի և Գաղղիացի պաշտօնական համարոյն, մեծագոյն յոյժ կը համարին Դաշնակցաց կորուստը:

և անկէ երկու գունդ զրկեց ընդդէմ Կարիպալտեանց որոնք փախուցին զԱւստրիացիս և Ուրբան թողլով զՔամէրլադա քաշուեցաւ ի Մոնցա, և Գոմօ մնաց Կարիպալտեանց ձեռքը: Բայց Աւստրիացի ուրիշ գունդեր Վարէզէի կրկին տիրեցին: Կարիպալտի նոր օգնութեամբք զորս Քափուր կը զրկէր, յարձկեցաւ Աւստրիացոց վրայ ի Սէսդօ Քալէնտէ. այն ատեն Ուրբան թողուց նաև զՎարէզէ, ազատ մնացին Գոմօ և Վալդէլլինա, յորոց բազմաթիւ կամաւորք սկսան դիմել Սարտենիոյ բանակը:

Այս մասնական կռիւներուն ժամանակ, Նարոլէոն Ք սահմաններ էր բանակին ձախակողմը յառաջացնել ի Նովարա, յետոյ անցնիլ զՎիչինօ և տիրել Միլանո: Իսկ արտաքուստ ձայն տարածել սուլաւ և կեղծեց որ Իմպերիոն կը յառաջէ անցնելու զՓօ ի Փիաչէնցա: Կիւլայ հոն սկսաւ կեղրոնացնել բոլոր իւր ոյժը, մինչ Վաչնակիցք գաղտ իրենց զօրութիւնը կը հաւաքէին ի Նովարա: Այս շարժման մէջ Նիէլ զօրավարը նեցուկ պիտի ըլլար Սարտենիական ձախին և Քանրոպէր գետը պիտի անցնէր աջը պաշտպանելու համար: Կամըրլոց շինութեան դժուարութիւնք քիչ մը ուշացուցին բանակին ընդհանուր շարժումը և Զիալտինի որ ամենէն առաջ անցեր էր և յարձակեր էր Փալէսդրոյի վրայ, հազիւ օգնութեանց հասնելով, կրցաւ քաշուիլ ի Ռոպիօ: Ուրիշ Փիէմոնթեցի զօրավարք ալ բռնեցին իրենց նշանակեալ դիրքերը: Վիկտոր Էմմանուէլ ևս իւր ճամբարը դրաւ ի Գոնիոնէ Փալէսդրոյի քով:

Աւստրիացիք նոր ոյժերով դիմեցին բռնելու կորսընցուցած դիրքերնին և Տորնտորֆ զօրավարը ուղղակի յարձակեցաւ Փալէսդրոյի վրայ, մինչդեռ Զապօ զօրավարը, ընթանալով Սէզիայի եզերքէն հասաւ բաղխելու սարտենիացի բանակին ձախը: Իտալացիք երկու կողմանէ պաշարուած՝ մեծ վտանգի մէջ էին, երբ Քաղղիացիք որոնք յաղթելով Սէզիայի ջրոց յորդութեան, կրցեր էին վերջապէս կամուրջ ձգել, դիմեցին օգնութեան: Ահաւոր և զարմանալի բաղխմամբ

զուաֆններուն ընտիր գունդը միաբան Իտալացի պէր-սալիէրներու ընդհարաւ աւստրիացի ձակատին հետ, խրախուսեալ մանաւանդ Վիկտոր Էմմանուելի ձայնէն և օրինակէն, զոր զուաֆք պատերազմի դաշտին վրայ իրենց « Գնդապետ » կոչեցին: Ի թիկանց ևս յարձկեր էր Զիալտինի: Զապոյի շոկատը խորտակեցաւ, գունդերը սկսան փախչիլ, զինուորներէն շատը խզողեւլով նաև առուակներու մէջ: Աւստրիացի ուրիշ գունդեր օգնութեան դիմեցին, բայց տեսնելով որ անհնար էր դիմանալ, յետս նահանջեցին և յաղթութիւնը մնաց Դաշնակցաց ձեռք: Պատերազմը առաւօտէն ըսկըսելով, տւեր էր մինչև երեկոյեան ժամը 3: Աւստրիացիք կորուսեր էին 1600 անձինք և Դաշնակիցք 600էն աւելի: Հետևեալ երկու օրերուն մէջ բովանդակ գաղղիական բանակը սկսաւ կեդրոնանալ Վէրչէլիի և Նովարայի մէջ և անցնիլ Դիչինոյի աջ կողմը:

6. Պատերազմ ի Մաճէնդա. — Զօրավարն Մաք Մահոն. Նաբոլէոն Գ ի Միլան. — Այն ատեն միայն Կիւլայ գուշակեց Դաշնակցաց խորհուրդը և ծրագիրը և ինքն ալ հրամայեց որ գունդերը հաւաքուին Նովարայի վրայ. ուր սակայն արդէն հասեր էին Դաշնակիցք և կրնային խորտակել մի առ մի թշնամոյն ամէն հասած գունդերը: Աւստրիացի զօրավարը ամէն ջանք ըրաւ գոնեայ Դաշնակցաց կտրել Միլանու ճամբան, սակայն հրամանները պէտք եղած երագութեամբ չկատարուելով, թշնամին Դիչինոյի աջ կողմը զօրացաւ: Կիւլայ պատուիրած էր որ Պուֆֆալորայի կամուրջը օդը հանուի. բայց դիպուածով արդեօք թէ կամաւ իտալացի գործադրողաց կողմէ, հազիւ կամըրջին երկու կամարքը քակուեր էին, որով կրնար ծառայել անցքի: Գլամ Կալլաս զօրավարը աճապարանօք թողուցեր էր կամըջին գլուխը ի Սան Մարգինս և Գաղղիացիք փոքր գուպարածներով կրցեր էին տիրել Դիչինոյի անցքին ի Դուրպիկօ: Այն ատեն Նաբոլէոն որոշեց դիմել ի Պուֆֆալորա, անցնիլ անկէ, չուել ի Մաճէնդա և բանալ Միլանու ճամբան:

Մաճէնդայի յարձակողք պիտի ըլլային Նիէլ, Գան-

րուպէր, Պարսկէ Տ'Իլիէ և Մաք Մահոն իրենց բանակներով. և կայսերական պահապանք, որոց կը հրամայէր Ռէնիօ Սէնդ'Անժէլի, Կայսեր ներկայութեամբ ի ճակատէ պիտի բաղխէր զԱւստրիացիս ի Պուֆֆալորա: Ընդհանուր շարժումը քիչ մը յապաղեցաւ, որովհետև Էսպինաս պէտք էր սպասել Իտալացոց ի Պուսքայէ, որոնք երկիւղ ունեցեր էին Ուրբանի յարձակման մը ի թիկանց: Որով և Մաք Մահոն թէպէտ յաղթական ընթացիւք մեկներ էր Գուրպիկոյէն և հասեր էր ի Պէննադէ, բռնադատուեցաւ քիչ մը ժամանակ առ կախ թողուլ պատերազմը: Մաք Մահոնի հրանօթից յանկարծակի լուսթիւնը տագնապեցուց կայսերական պահապանքը որոնք մոլեգին յարձակմամբ դիմել էին Աւստրիացոց վրայ Պուֆֆալորայէն ի Փոնդէ Նուովոյ և զանոնք վանելով, Մոնդէ Ռոդոնտոյէն ահաւոր կրակ մը կը թափէին փախստականաց վրայ մինչև ի Մաճէնդա:

Կիւլայ տեսնելով որ Գաղղիացիք իրենց զօրութիւնը կը դարձնէին Մաճէնդայի վրայ, ինքն ալ հրամայեց Շվարցէմպէրկ, Սդատիոն, Զոպէլ և Պէնէտէք զօրավարաց՝ անմիջապէս դիմել այն կողմը, փորձել կըրկին ձեռք բերել Փոնդէ Նուովոյ և Պուֆֆալորա և ջանալ կրկին վանել զՄաք Մահոն ի Գուրպիկօ: Մեծ էր Աւստրիացոց եռանդը և յիրաւի յաջողեցան գաղղիացի բանակը մղել անդր քան զՆավիլիօ: Բայց հոն սարսափելի կռիւ մը նորոգուեցաւ: Աւստրիացի գունդերը որոնք կը ջանային առնուլ զՊուֆֆալորա յետս վանեցան: Գաղղիացի գունդերը սակաւաթիւ քան զԱւստրիացիս ահաւոր քաջութեամբ կը կռուէին միշտ ական ունելով Մաք Մահոնի հասնելուն: Ժամը 4ին ժամանակները կը հասնի Մաք Մահոն վանելով զԹշնամին Մաճէնդայի վրայ ուր արդէն Կիւլայ հաւաքեր էր զանազան գունդերու ջոկատներ, և ուր ժամը 4ին հասան նոր օգնութիւններ: Այն ատեն Մաք Մահոն հրաման տուաւ՝ մրցելով զբաւել զՄաճէնդա:

Էսպինասի գունդը աջէն յառաջեց՝ մինչդեռ ձախէն իրեն նեցուկ կ'ըլլար Լա Մոդ Ռուժի գունդը: Թնդա-

նօթի և հրացանի հարուածք կը տեղան քաղքին վրայ : Գաղղիացիք բուռն մրցմամբ կը տիրեն նախ երկաթուղւոյն կայարանին և Մաք Մահոն բովանդակ կրակը կ'ուղղէ քաղքին կեդրոնին վրայ : Մեծ էր երկու կողման ալ արուժիւնը : Լափինաս զօրավարը քայլ առ քայլ մրցելով կը տիրէ երկաթուղւոյն կայարանէն քաղաք տանող ճամբուն , ապա քաղքին դրան մօտ բազմայարկ մեծ տան մը ուսկից դիրոլեցի որսորդ զինուորք աւերիչ կրակ մը կը թափէին Գաղղիացւոց վրան : Լափինաս հարուածեալ կ'իյնայ . բայց նոր օգնութիւնք չեն թողուր շահածնին կորսնցնելու : Աննման էր Աւստրիացւոց յամառ քաջութիւնը որոնք չեն ուզեր բնաւ տեղիք տալ և այն ատեն կը յուսահատին երբ կը հասնին ևս իտալական ջոկատներ : Աւստրիացիք կարծելով որ ամբողջ իտալական բանակն է վաստակարեկ կը թողուն զՄահէնդա և Միլանու ուղին Գաղղիացւոց ձեռքը և կը քաշուին Մինչիոյէ յայսկոյս , թողլով դաշտին վրայ 281 սպայք և 3432 զինուորք : Գաղղիացիք ևս կորսնցուցեր էին 246 սպայք և 3463 զինուոր , բայց յետինքս յաղթանակը տարեր էին և իրենց ձեռքը կը մնար Միլանու ճամբան : Պատերազմին ելքը ընդ երկար անորոշ՝ երկու կողման քաջութեամբ , Մաք Մահոնի արթնութեամբ և յանկարծական շարժմամբ վերջացեր էր ի նպաստ Գաղղիացւոց : Պատերազմէն երկու օր վերջը կայսրը ինքնին իմացուց Մաք Մահոնի որ զինքը կ'անուանէր Դուքս Մահէնդայի և մարաջախտ Գաղղիոյ , սոյն պատիւը կ'ըստանար նաև Ռէնես Սէնդ' Անժէլի հրամանատար կայսերական պահապանաց , որուն մեծ յամառութիւնը ի կոուին , Մաք Մահոնի յաղթանակին ճամբայ եղեր էր : Ի Բարիզ Նոդրը Տամ եկեղեցւոյն մէջ Յունիս Դին գոհարանական աղօթք երգըցուեցան այս մեծ յաղթութիւն համար :

Աւստրիացիք քաշուեցան Մինչիոյէ անդին , թողլով զՄիլան ուր Յունիս Դին մտաւ Մաք Մահոն : Երկրորդ օրն ալ մեծ յաղթանակաւ մտան Նաբուէոն Գ և Վիկ-

տոր Լյմմանուէլ, ընդունուելով ժողովրդէն աննկարա-
գրելի ուրախութեան ցոյցերով:

7. Կայսրն Փր. Յովսէփ ընդհանուր հրամանա-
տար. Պատերազմ Սուֆէրինոյի: — Յետ որոյ Աւս-
տրիացիք քաջուեցան Մինչիոյ ձախ ափանց վրայ,
Փրանկիակոս Յովսէփ որ ի Վերոնա կը դիտէր պա-
տերազմին ընթացքը, տժգոհ Կիւլայի ձախողանաց
վրայ, Յունիս 18ին բանակը եկաւ անձամբ առնուլ բա-
նակին ընդհանուր հրամանատարութիւնը, գլուխ ունե-
նալով սպայակուտին զՏէլտ-մարաջախտն Հէս, որ
ընդերկար համհարդ գտնուեր էր Ռատէցքիի Իտալիոյ
պատերազմաց մէջ:

Կայսրը ընդհանուր հրամանատարութիւնը ստանձնած
օրը, կը ծանուցանէր բանակին օրակարգով մը որ եկեր
էր « Իր քաջ բանակին գլուխ անցնելու Աւստրիոյ պատ-
ուոյն և արդար իրաւանց համար: Զինուորք ձեր առ-
խ անձնանուիրումը, ձեր յայտնի արութիւնը, ինձ
գրաւական մ'են յաղթութեան, որուն կը սպասէ հայ-
րենիք »: Աւստրիական բանակը երկուքի բաժնուե-
ցաւ, միոյն կը հրամայէր գօրավարն Վիմփֆէն, միւ-
սոյն գօրավարն Շլիք:

Աւստրիացւոց նպատակն էր ձախէն պաշարել զԹըշ-
նամին, գաղղիացի գունդերը վանել դէպ Ալպեանք և
զԻտալացիս դէպ ի Կարտայի լիճը: Այն պառձառաւ
զանագան կէտերէ անցան զՄինչիօ և ուժով դիրքեր
բռնեցին ունենալով 150,000 զինուոր:

Հաւասար կրնար համարուիլ նաև դաշնակցաց թիւը:
Բայց սկզբնական շարժումաժքներու մէջ վարանեալ կերպ
մը ցուցուցին և Պէնէտէք կրցաւ քաջութեամբ և մնա-
սիւք յետս վանել զԳուքքիարի և զՄոլլար գօրավարնե-
րը, որ զինքը ուզեր էին բաղխել: Աւստրիացւոց մե-
ծագոյն ոյժերը կեդրոնացած էին ի Գավրիանա և Սու-
ֆէրինոյ, որ սեաւ ժայռուտ քառակուսի դղեակ մ'էր
հիանալի դիրքով, զոր Նարոլէոն Ա « Լրտես Իտալիոյ »
կոչած է, որովհետև անկէ պարզ աչօք կրնայ տեսնել
մէկը Կարտայի լիճը և Գրէմոնայի և Մանդուայի դաշ-
տերը: Փաղղիացիք ևս անոր շորս կողմը սկսան ամ-

փոփել իրենց ոյժերը և ահաւոր կրակ մը սկսան թափել որուն հաստատապէս կը դիմանային Աւստրիացիք :

Յաւաջ անցաւ Լատմիրո զօրաբաժինը թրուն սիւնակաց կը հրամայէին զօրավարքն Տուէ և Նէկրիէ : Լատմիրո կրկին վէրք կ'ընդունի սակայն կը շարունակէ հրամանները անձամբ տալու :

Աւստրիացիք այս բուն և ահաւոր բաղխմանէն պարտասեալ և տասանորդեալ ի զուր կը սպասեն օգնութեան : Կոմսն Սդատիոն կը բռնադատուի իր գունդերը Սուլֆէրինոյէ դուրս հանել . դղեկին և գերեզմաննոցին պահպանութիւնը կը յանձնէ Զոպէլի զրկած ջոկատներուն . և սակայն չեն կրնար դէմ դնել Պարակէ տ'Իլիէ մարաշախտին կրկին բաղխման : Գունդերէն մէկ մասը, որոց կը հրամայէր Լը Պէօֆ զօրավարը մագլցելով ահաւոր կարկտանման գնտակաց ներքև վերջապէս կը հասնին դղեկին և բարձանց կը տիրեն :

Աւստրիացիք նահանջելով Քավրիանայի վրայ, ուղեցին կրկին յարձակմամբ ձեռք բերել զՍուլֆէրինոյ, բայց Մաք Մահոն վանեց զիրենք մեծ բռնութեամբ : Մի և նոյն ժամանակ գաղղիացի աջ թևը որուն կը հրամայէր Նիէլ մարաշախտը կրցեր էր ընդդիմանալ և ունայնացնել Վիմիֆէնի յարձակումը, բայց կորսընցընելով 5000 հոգի ընդ մեռեալ և ընդ վիրաւոր :

Փրանկիսկոս Յովսէփ նոյն իսկ յետ կորսնցնելու զՍուլֆէրինոյ, յոյս ունէր յաղթութեան, պատերազմը նորոգելով տափարակի վրայ և մեծ յամառութեամբ կը պաշտպանէր զՔավրիանա : Պատերազմին եռանդան միջոց ահաւոր փոթորիկ մը կարկուտ և անձրևք ողողեցին բանակները, ջրաթաթախ ընելով զամէնը : Գաղղիէն վերջը կրակները նորէն սկսան : Մաք Մահոն արծուի պէս կը խոյանար ամէն կողմ : Աւստրիացիք տեսան որ անկարելի էր պաշտպանել զՔավրիանա և գայն թողուցին Գաղղիացուց ձեռքը :

Այս միջոցիս կը շարունակէր պատերազմը ընդ Աւստրիացիս և ընդ Փիէմոնթեցիս : Ֆանդի զօրավարը կը մղէ Փիէմոնթի գունդքը դէպ ի Փոցցուէնկօ, և յետ օգ-

նելու Տուրանտո զօրավարին, միաբան կրվանեն զթշնա-
մին Ֆէնիլէ լերան վրայէն, և կ'օգնեն Մոլլար զօրավա-
րին յաջողութեանց: Պէնէտէք որ ամբողջ օրը քաջու-
թեամբ պաշտպաներ էր Սան Մարդինոյի դիրքը, ե-
րեկոյեան նահանջի հրաման ընդունելով, զգոյշ կար-
գաւ մը սկսաւ քաշուիլ, միանգամայն վնասելով թշնա-
մւոյն: Աւստրիացիք նահանջը դիւրացնելու նպատա-
կաւ նաւակէ կամուրջներ ձգեր էին Մինչիոյի վրայ: Արդէն Գաղղիացիք ևս յոգնած և ահաւոր փոթորկին շարուններէն թաթախեալ, բնաւ չհոգացին թշնամւոյն նահանջը նեղելու ¹:

Աւստրիացիք քաշուեցան ի Սանդուա: Գաշնակից բանակին մաս մը հաստատուեցաւ ի Կոիդօ և ի Վալ-
լէճճիօ. կայսերական բանակետղը եղաւ ի Վիլլա-
ֆրանքա. իսկ պատերազմի դաշտին վրայ Գաղղիացիք բանակեցան:

Սուֆէրինոյի պատերազմը ներկայ դարուս արիւ-
նահեղ պատերազմներէն մին է յորում դաշտին վրայ
ինկան 25,000 կտրիճ զինուորք. ամէնն ալ անյագ կրից
անմեղ զոհեր: Ահաւոր տեսարան, զոր ցարդ կը նկա-
րագրեն պատերազմէն ապրողք, շատ օրերով վերջը
տակաւին դաշտին վրայ կտրիճ և առոյգ երիտասար-
դաց մարմնոց բեկորներուն հետ խառն ի խուռն կը
տեսնուէին ձիոց գէշեր: Այնքան բանակները պար-
տասեալ էին որ չկարողացան փութով թաղել և յե-
տին պարտք մը կատարել՝ տալով հողոյ շատ մը հայ-

1. Կը պատմեն որ Գանրուպեր Նիէլի դէմ նակառակութեան հա-
մար, միշտ անորոշ և անգործ դիրք մը բռնեց պատերազմին
մէջ: « Եթէ Գանրուպեր Սուֆէրինոյի մարտին սկիզբը օգնած
ըլլար Նիէլի, Աւստրիացւոց պարտութիւնը ջախջախուած պի-
տի ըլլար: Իր անստոյգ ընթացքը ազիտաբեր եղաւ Գաղղիոյ
յիտալիա, ինչպէս եղեր էր ի Ղրիմ », կըսէ, Գաքսիլ Տը-
լոր: Արդէն Նաբոլէոն մեծապէս նեղուեր էր զօրավարաց մէ-
ջերնին ունեցած նախանձներէն:

Աւստրիացւոց կողմէն ալ Եւալտիի Խոուադք չէին ուզած
կռուիլ:

րեր և զաւակներ որոնք կը թողուին դժբաղդութեան մէջ բազմաթիւ այրիներ և որբեր: Եւ միթէ աղքատին թոշակ մը կարող է դարման տանել և վարձատրել այնքան կորուստը, այնքան ցաւը:

8. Դոսքանա. Դքսուծիւնք եւ Միջին Իտալիա Պատերազմին ժամանակ: — Երբ Աւստրիոյ դէմ պատերազմին լուրը տարածուեցաւ, նախ Դուքանայի ժողովուրդը եղաւ որ ուզեց անմիջապէս օգնութեան դիմել Սարտենիոյ: Արդէն շատ տարիներէ ի վեր թէ ճառախօսութիւնք և թէ մատեանք ազատ կերպով կը քարոզէին Իտալական միութեան գաղափարը, առանց արգելքի մը ի Մեծ Դքսէն՝ որ հեզահամբոյր բնաւորութեամբ միշտ լռած էր: Միասէրք, յորս նշանաւորը էին 'Նէրի Քորսինի' մարգէզ Լայադիքոյ, երբեմն պաշտօնեայ Արտաքին գործոց, Պարոն Պէդդիւնօ Ռիքազօլի, Ուպալտինօ Փէրուցցի և ուրիշ ազդեցիկ անձինք կ'ուզէին որ Լէոփոլտ միանայ ընդ Փիէմանթի ընդդէմ Աւստրիոյ:

Պուռնքոմիանիի Փիէմանթի դեսպանը ի Ֆիրէնցէ, պաշտօնապէս զայս առաջարկեց իրեն Ապրիլ 2ին, բայց Մեծ Դուքսը ուզեց անկողմնակալ դիրք մը բռնել: 27ին առաւօտ անհամար ժողովուրդք խռնեցան Բարբանօ հրապարակը գոչելով « կեցցէ Պատերազմ, կեցցէ Վիկտոր Լյամանուէլ Բ գլուխ Իտալական միութեան »: Մի և նոյն միջոցին Պէլվէտէրի ամրոցին զինուորականք եռագոյն դրօշը կանգնեցին:

Այն ատեն Մեծ Դուքսը առաջարկեց Գորսինի Լայադիքոյի նոր պաշտօնարան մը կազմել, բայց սա այլ և այլ պայմաններ դրաւ, յորս նաև այն որ Մեծ Դուքսը հրաժարի ի նպաստ իւր որդւոյն Փերտինանտոս Դի: Այսպիսի պայմաններ, որոնք իշխանին պատուոյն կը դպչէին, Լէոփոլտի անընդունելի երեցան և նախադաս համարեցաւ նոյն օրը (27) մեկնիլ իւր ընտանեօք միաբան ի Դուքանայէ, ուր բնաւ այլ պիտի չդառնար:

« Անկողմնակալ պատմութիւնը, կըսէ նշանաւոր գրիչ մը, պարտական է յիշել որ Լէոփոլտ Բ շատ տարի-

ներ իր հպատակաց համար առարկայ մ'էր սիրոյ և յարգանք շնչող համօրէն իտալիոյ ժողովրդոց. հեզահամբոյր իշխան մը, բարեկամ յառաջադիմութեան և քաղաքականութեան: Ինքը գերեզման պիտի իջնէր անստերիւր գովութեամբք, եթէ Դոուքանա ընդլայնած չըլլար իւր ազգային անկախութեան խորհուրդը¹ »: Փութով քաղաքին Ոստիկանութիւնը, Պուոնքոմփանյի դեսպանին խորհրդով Առ ժամանակեաց վարչութիւն մը անուանեց, որուն անդամքն էին Փէրուցցի, փաստաբանն Մալէնքինի և գնդապետն Տանցինի: Ասոնք անմիջապէս Վիկտոր Էմմանուէլի ընծայեցին Դոուքանայի դիկտատորութիւնը: Բայց նա չընդունեցաւ Նարոլէոնի խորհրդով և յանձն առաւ միայն Դոուքանայի պաշտպանութիւնը և զինուորութեան հրամանատարութիւնը:

Երկրորդ օրը Ապրիլ 28ին կը հասնէր ի Տիրէնցէ զրկուած ի Քալուրէ գօրավարն Ուլլօս, այն որ մեծապէս քաջացեր էր Վենետիոյ պաշարման ժամանակ, կարգաւորելու և հրամայելու Դոուքանայի զինուորութեան: Անմիջապէս կամաւոր զինուորք հաւաքուեցան. 30,000է բանակ մը կազմուեցաւ և օգնութեան զրկուեցաւ Դաշնակցաց, որոնք սակայն երբ հասան, արդէն հաշտութիւնը կատարուած էր, որով և շմասնակցեցան պատերազմի:

Քիչ օր վերջը Պուոնքոմփանյի թագաւորին նուիրակ անուանուելով լիազօր իշխանութեամբ, պաշտօնարան մը կազմեց որուն գլուխ էր Պարոն Ռիքազոլի, որ փութով ջանաց ժողովրդախումբ քուէով² միացնել զԴոուքանա Փիէմոնթի հետ: Եւ սակայն այս խորհրդոյն առ ժամս ընդդիմացաւ կոմսն Քալուր, գիտնալով որ այսպիսի քայլ մը տհաճական էր Փիէմոնթի գօրաւոր դաշնակցին՝ Վաղղիոյ³:

1. Պիանքի. Վաւերական Պատմութիւն Եւրոպական Քաղաքագիտութեան յիտալիա. տպ. 1872 Հտ. Ը. էջ. 91:

2. Plebiscito.

3. Նարոլէոն կը խորհէր, կը համարին ոմանք, իտալիոյ կեդրոնը

Փարմայի մէջ ևս յուզմունքներ եղան համոզելու զԴրսուհին Մարիա Լուիզա որ թագապահ էր յանուն իւր Ռուպերդո Ա որդւոյն, մասնակցելու պատերազմին ի նպաստ Փիէմոնթի: Դրսուհին Մայիս 4ին մեկնեցաւ, թողլով պաշտօնէից Պետութեան վարչութիւնը: Ազատականացմէ ոմանք փութով Առժամանակեայ վարչութիւն մը ձևացուցին: Բայց հազարապետն Տավիքօ, հրամանատար զինուորութեան և հաւատարիմ Դրսուհւոյն, ստիպեց անմիջապէս որ վարչութիւնը թողուն ի Դրսուհւոյն անուանեալ պաշտօնէից: Այն ատեն իշխանուհին Մայիս 11ին հանգստեամբ դարձաւ ի Փարմա և հոն մնաց մինչև Յունիս 10:

Բայց Մաճէնդայի պատերազմէն վերջը երբ Աւստրիացիք սկսան քաշուիլ յայնկոյս Մինչիոյի, այն ատեն երկնչելով ներքին կամ արտաքին յարձակմանէ մը, քաշուեցաւ Աւստրիոյ բանակին հետ ի Մանդուա:

Հոն դիմեր էր նոյնպէս Մաճէնդայի պատերազմէն վերջը նաև Մոտենայի Փրանկիսկոս Ե դուքսը: Ժողովուրդը արդէն մեծապէս տժգոհ իւր բռնական վարչութենէն, Առժամանակեայ կառավարութիւն մը անուանեց և ինքզինքը Փիէմոնթի հետ միացեալ հռչակեց ըստ Դաշանց 1848ի: Մոտենայի գաւառաց կառավարիչ զրկուեցաւ ի Փիէմոնթէ Լուիճի Ֆարինի, երբեմն Մաժժինեան, յետոյ պահպանողական:

Աւստրիացիք Մաճէնդայէ վերջը քաշուեցան նաև ի Պոլոնեայէ, ուր ևս Առժամանակեայ վարչութիւն մը կազմուելով ստիպեց զՄիլէզի Քահանայապետին Նուիրակը մեկնել ի Պոլոնեայէ և քաղաքը ինքզինքը հռչակեց ընդ հովանաւորութեամբ Վիկտոր Էմանուէլի: Ի Պոլոնեա միասիրաց գլուխ էր մարգիզն Փէփոլի ազգակից Նարոլէոն Գի: Մի և նոյն ժամանա-

Խորուրական թագաւորութիւն մը ձևացնելով, իշխան կարգել անոր իւր հօրեղբօր որդին զՆարոլէոն իշխանը, զոր բանակով մը Մայիս 23ին զրկեց ի Կոսքանա: Բայց Քավուրի քաղաքագիտական գաղտ ջանքերը և ժողովրդեան առ իշխանն չակակրութիւնը ի գերև հանեցին զայն:

կին զինեալ գունդ մը գալով Դոսթանայէն և միանալով Փէրուճիա եղող միասիրաց ոմանց հետ որոց զլուխ էր Մարիա Պոնաբարդէ, կոմսուհի Վալէնդինի, ուրիշ ազգակից մը Նաբոլէոն Գի, վանեցին հոնկէ քահանայապետին ճիորտանի նուիրակը: Սակայն քանի մ'օր վերջը զուիցցէրացի հազարապետն Շմիտ սակաւ հրանթիւք հասաւ կրկին քաղաքը գրաւելու: Մէջինները եռանդով իրենք զիրենք ուզեցին պաշտպանել բայց չէին կարող, և Քահանայապետին Զուիցցերացիք ներս մտնելով ամենայն ինչ կարգաւորեցին ըստ հնոյն, որով Ումպրիա և Նուիրակութիւնք մնացին Քահանայապետին իշխանութեան ներքեւ¹:

9. Զինադադարումս. Խաղաղութիւնս Վիլլաֆրանքայ. — Դաշինք Յուրիքի: — Սուլթէրինոյի յաղթութենէն վերջը, ընդհանուր կարծիք էր որ Դաշնակիցք արդէն հասած Վերոնայի ներքեւ, պիտի երթային ազատելու նաև զՎենետիկ գաւառը Աւստրիոյ իշխանութենէն. և մինչ օր օրուան կը սպասէին չուելու հրամանին, Յուլիս 6ին լուր տարածուեցաւ որ Նաբոլէոն Գ. գաղանի նուիրակ մը զրկեր էր առ Փր. Յովսէփ կայսրը զինադադարման համար: Առհասարակ թէ գաղղիացի և թէ իտալացի զօրավարաց անհաւատալի կ'ե-

1. « Փէրուճիայի առման նկատմամբ ժամանակին միասէր լրագրացմէ ոմանք մեծ շառաչ հանեցին « ընդդէմ սպանութեանց և աւարառութեանց » զորս կատարած ըլլան « աւազակք » Քահանայապետին, մինչև ըսուեցաւ որ զինուորք սպանած ըլլան մանկունս յարգանդի մարց: Յայտնի է որ պատերազմի ժամանակ ամենայն ինչ բարի է ընդդէմ թշնամոյն, նոյն իսկ զրպարտութիւնն: Բայց 'իմայ' որ անկողմնակալ պատմութիւնը իր իրաւունքը ստացած է, պէտք է ըսենք որ՝ ի Փէրուճիա ամենեկին աւարառութիւն չեղաւ և զուիցցերացիներէն եղած սպանութիւնք, որչափ ալ ցաւալի, բայց չանցան պատերազմի կանոնաց սահմաններէն անդին... Պիոս Թ. որ մշտ վեհանձն եղած է առ թշուառս, փութով օգնութիւն զրկեց վտանգելոց »: Նոր Եւրոպայի. Պրոֆ. Ֆելիքէ Սավերիօ. Իտալական լիկէոնաց համար. տպ. 1895. էջ 212:

րևար այսպիսի յաջողութեանց վրայ զինադադարման և խաղաղութեան առաջարկութիւն մը, և սակայն Յուլիս 11ին Նաբոլէոն Գ և Փրանկիսկոս Յովսէփ տեսաւորեցան ի Վիլլաֆրանքա և խօսիւք կատարեցին հաշտութեան մը դաշինքները ըստ սրում՝

« Երկու պետութիւնք պիտի ջանային դաշնակցութիւն մը կազմել Իտալական իշխանութեանց ընդ պատուակալ Նախագահութեամբ Ս. Քահանայապետին :

Աւստրիոյ կայսրը Լոմպարտիոյ վրայ իրաւունքը կը թողուր Գաղղիոյ կայսեր, բաց ի Մանդուայէ և Փէսքնիրայ :

Այս տրուած երկիրները Գաղղիացւոց կայսրը պիտի յանձնէր Սարտենիոյ թագաւորին :

Վենետիկ գաւառը մասն պիտի կազմէր իտալական Գաշնակցութեան մնալով ընդ իշխանութեամբ Աւստրիոյ :

Դոսքանայի մեծ դուքսը և Մոտենայի դուքսը պիտի մտնեն իրենց երկիրը ընդհանուր ներումն շնորհելով » :

Երկու ինքնակալք յետ մնալու առանձինն ժամ մը, մեկնեցան իրարմէ :

Վիկտոր Էմմանուէլ այն երեկոյ իմացաւ Նաբոլէոն Գի բերնէն որ շուտով խաղաղութեան դաշինք պիտի հաստատուէին և Փիէմոնթի թագաւորութիւնը լուծութեամբ պատասխանեց « Որ ինչ ալ ըլլայ Ձեր Վեհափառութեան որոշողութիւնը, միշտ երախտագէտ պիտի ըլլամ Իտալիոյ անկախութեան համար պատերազմելուդ . և ապահով եղէք որ ամէն պարագայի մէջ զիս հաւատարիմ պիտի գտնէք » :

Յուլիս 12ին հրովարտակով մը Նաբոլէոն ծանոյց բանակին այս հաշտութիւնը օրակարգով մը յորում կ'ըսէր « Հայրենիք երախտագէտ՝ մեծ եռանդով պիտի ընդունի այն զինուորքը որունք զինուոց փառքը այնքան բարձրացուցին ի Մոնդէպէլլօ, Փալէսդրոյ, Գուրպիկո, ի Մաձէնդա և ի Սոլֆերինոյ . որունք երկու ամսուան մէջ կտրեցին զՓիէմոնթ և զԼոմպարտիա և այն ատեն միայն կանգ առին, երբ պատերազմը չափազանց ընդարձակուելով, կրնար վնասել Գաղղիոյ շու

հուց» : Նոյն երեկոյ Նաբոլէոն մեկնեցաւ ի Գաղղիա և իրեն անցքին ժամանակ ի Միլան և ի Դուրին մեծ լուսթիւն և տխրութիւն գտնելով, գանգատեցաւ իշխանութեանց՝ իտալացւոց ապերախտութեան վրայ : Սակայն այս հաշտութիւնը զարմացուց նոյն իսկ ըզ-Գաղղիա, և Նաբոլէոն դժուարացաւ իւր դարձը արդարացնելու համար : Ընդհանուր կարծիք այս եղաւ որ խոստումն ստացաւ ի Փրանկիսկոս Յովսէփ կայսերէ Գաղղիոյ գահուն վրայ պաշտպանելու իւր զարմը :

Վիլլաֆրանքայի հաշտութենէն վերջը երեք պետութեանց նուիրակք գումարեցան ի Յուրիք հաստատուն Դաշանց համար : Երկու ամիս վերջը աւարտեցան աշխատութիւնք, երեք առանձին դաշամքք . մինն՝ ընդ Գաղղիա և ընդ Աւստրիա, միւսն ընդ Գաղղիա և ընդ Սարտենիա և ուրիշ մը ընդ Երիս պետութիւնս : Յուրիքի Դաշինքը կը հաստատէր Վիլլաֆրանքայի պայմանքը այսու տարբերութեամբ որ՝

Վիկտոր Էմանուէլ ի ընդունելով ի Գաղղիոյ զԼոմպարտիա, պիտի վճարէր 150 միլիոն ֆրանք որ էր երեք չորրորդ Լոմպարտիոյ պարտուց և 100 միլիոն՝ մաս մը 1854ի աւստրիական փոխառութեան :

Դուքանայի, Մոտենայի, Փարմայի իշխանք կըրնային դառնալ, բայց առանց Աւստրիոյ զինուորական միջամտութեան . և իրենց սահմանքը կրնային որոշուիլ միայն 1815ի Վեննայի Դաշանց մասնակցող պետութիւններէն :

Փիէմոնթի ընդ Գաղղիոյ Դաշանց մէջ կար որ Սարտենիա պիտի վճարէր Գաղղիոյ 60 միլիոն ֆրանք ի հաշիւ ծախուց պատերազմին :

Նաբոլէոն կը թողուր յիտալիա 60,000 զինուոր ընդ հրամանատարութեամբ Լը Վայան մարաշխտին այս դաշանց գործադրութեան և պահպանութեան համար :

10. Տժգոհութիւնք մեծ ի Հիւսիսային իտալիա : — Զարմանք, ցաւ, բարկութիւն գրաւեց բոլոր իտալացի հայրենասիրաց սիրտը : Ամէն կողմ նախատինք և անէծք կը լսուէին Գաղղիացւոց կայսեր դէմ, զոր մատ-

նիչ կը կոչէին և կը ցաւէին որ հաւատք ընծայեր էին իւր խօսւոց: Մարդկային բնութիւնը առաւելագունին միշտ ցանկացող, ստացեալ բարիքը և արդիւնքը անդէն կը մոռնայ:

Կոմսն Քաւուր, զինադադարման լուրը լսելով, համարեցաւ ի սկզբան որ զինուորաց հանգիստ տալու համար էր. բայց ապա ստուգութիւնը իմանալով, փութով բանակը դիմեց՝ իւր Նիկրա գրագրին հետ: Վիկտոր Էմանուէլ ցաւով իմացուց իւր պաշտօնէին որ ալ դարման մը չկար եղածին, և Քաւուր, կ'ըսեն, չկրցաւ ինքզինքը բռնել նոյն իսկ քանի մը արհամարհական խօսքեր լսել ընդդէմ Քաղղիոյ կայսեր և Սարտենիոյ թագաւորին. որուն մինչև առաջարկեց հրատարիչ թագաւորութենէն: Քաւուր ձգեց զՎիկտոր Էմանուէլ և հասաւ ախուր ի Տէգէնցանօ ուր ժողովուրդը ընդունեցաւ զինքը «Կեցցէ Քաւուր» գոչելով:

Վիկտոր Էմանուէլ ևս յետին ցրտութեամբ բաժնուեցաւ ի Նարոլէոնէ. չէր կրնար միայնակ շարունակել զպատերազմը և հարկ էր գոհ ըլլալ եղած յաջողութեամբք, մնալով լաւագոյն ժամանակի: Քաւուր հրատարեցաւ պաշտօնէութենէն և իրեն յաջորդեց Ռադացցի—Լամարմորա պաշտօնարանը:

11. Միութիւն Միջին Իտալիոյ ըւղ. Փիէմոնթի: — Որչափ որ Դոսքանա և Դքսութիւնք Առ ժամանակեայ վարչութիւններ կազմած էին, որոնք ամէնն ալ ցանկացողք էին որ մը առաջ միանալու ընդ Փիէմոնթի, և ամենայն ինչ կը գործէին Վիկտոր Էմանուէլի հետ համաձայնութեամբ, այսու հանդերձ յայտնապէս և պաշտօնապէս չէր կարելի այս միութիւնը, քանի որ Նարոլէոն Գ հաւանութիւն մը շտար, և Նարոլէոն թուրքովին անորոյ և մթին լեզու մը բռնած էր:

Իւր կարծեաց թարգմանք կը համարէին, որ չէր փափագեր Փիէմոնթի այսքան ընդարձակուիլը, այլք կը համարէին որ Իտալիոյ իշխանութիւնքը կ'ուզէր բաժնել Նարոլէոնեան ցեղին, յորս և Միւրա:

Եւ սակայն Դքսութեանց Ատեանները նոյեմբերի

սկիզբները գումարուելով գրեթէ միաձայն հաւանութեամբ իրենց կառավարիչ անուանեցին զիշխանն Եւգինէոս Քարինեանոյ, մինչև որ միութիւնը կատարուի: Բայց Վիկտոր Էմանուէլ կը զգուշանար գործել առանց հաւանութեան Նարոլէոնի, և Ռադացցի-Լամարմորա պաշտօնարանը շթողուց Քարինեանոյ իշխանի մեկնիլը. առ ժամս ղրկուեցաւ Պուռլքոմփան, յի որ շուտով յետս դարձաւ: Վերջապէս 1860 ին սկիզբները Նարոլէոն խորհեցաւ Դեսպանաժողով մը գումարել ի Բարիզ, Իտալական խնդրոց վրայ որոշողութիւն մը տալու համար: Ռադացցի առաջարկեց որ Փիէմոնթի կողմէն նուիրակ ղրկուի Քավուր, և այս առթով թագաւորը և Քավուր հաշտուեցան: Դեսպանաժողովը տեղի չունեցաւ. Ռադացցի-Լամարմորա պաշտօնարանը ինկաւ և Քավուր անցնելով գործոց զլուխ, առաջին նպատակն եղաւ վերջ մը տալ Իտալական այս անորոշ վիճակին, և այն ճարտարութեամբ որով ունեցեր էր միշտ ազդեցութիւն մը Նարոլէոնի վրայ, գտաւ այս հնարքը որ իւրաքանչիւր գաւառ ժողովրդախումբ քուէով յայտնէ իւր փափագած վարչութիւնը: Նարոլէոն հարկ էր որ հաւանէր այս առաջարկին քանի որ ժողովրդախումբ քուէարկութեան ծնունդ էր կայսրութիւնը ինքնին և զէնք մը Նարոլէոնական ղրութեան: Փութով հաւատարիմ անձինք ղրկուեցան գործադրութեան համար ի Դուքանա, ի Դքսութիւնս և Նուիրակութեանց մէջ: Յայտնի էր արդիւնքը: Անհամեմատ մեծամասնութեամբ մը կ'ուզէին միանալ Փիէմոնթի հետ. և քուէարկութեանց ելքը և փափագը պաշտօնապէս բերին առ Վիկտոր Էմանուէլ Բ Լուիճի Ֆարինի Դքսութեանց և Նուիրակութեանց կողմանէ և Պէդդինօ Ռիքազոլի Դուքանայի համար: Վիկտոր Էմանուէլ արտաքին չքեղութեամբ և հանդիսապէս ընդունեցաւ այս Նուիրակութիւնքը, և այն օրուրնէ այդ գաւառաց միութիւնը կատարուած էր ընդ Փիէմոնթի:

12. Մրացումն Սավոյիոյ եւ Նիցցայ ընդ Գաղղիոյ: — Դքսութեանց և Նուիրակութեանց Փիէմոն-

Թի հետ միանալովը, Նարուէոն Գ կատարած կը համարէր իւր նիւթական և բարոյական խոստումը առ Փիէմոնթ, հիմա կը մնար յետնոյս կատարել իւր երախտագիտական պարտքը և խոստումը առ Գաղղիա, կամ յայնտնապէս ըսելով՝ վճարել օգնութեան փոխարէնը, տալով զՍաւոյիա և Նիցցա:

Կայսրը յայտնապէս պահանջ մը չէր ընել, բայց բովանդակ Գաղղիա համոզուած էր որ ի զուր արին չէր թափած Իտալիոյ համար և Նարուէոն յետ Դլքսութեանց միութեան ընդ Փիէմոնթի, Իտալիոյ տագնապ մը պատճառելու համար, հրամայեց որ գաղղիացի բանակը թողու զԻտալիա: Քաւուր ըմբռնեց սրհարկ էր զԿայսրը գոհացնել իտալական միութեան շաստատութիւն տալու համար և համակերպեցաւ կայսեր պահանջին: Դաշինքը ստորագրեցին Գաղղիոյ կողմանէ Դուրինի գաղղիական դեսպանը Տը Թայրան և Պէնէտէգրի երկրորդ դեսպան, իսկ Իտալիոյ կողմանէ կոմսն Քաւուր և Ֆարինի: Քաւուր ստորագրելէն առաջ ընդ երկար սենեկին մէջ վեր վար քայլեր էր տխուր, գլխակոր և ձեռքերը գրպանը: Ստորագրելէն վերջը ըսաւ Գաղղիոյ դեսպանին ի լուր « Ասկէ վերջը ուրեմն դաւակից ենք »: Անգղիա և Զուիցցերի շատ ջանացեր էին այսպիսի միացման մը հակառակ կենալու. բայց ամենայն ինչ յետին գաղտնութեամբ եղած էր: Լմենալէն վերջը ի զուր բողոքեց Զուիցցերի:

Սակայն միացմանէն առաջ հարկ էր որ Սաւոյիոյ և Նիցցայի ժողովուրդք քուէիւք տային իրենց հաւանութիւնը, զոր ապա պէտք էր հաստատել Սարտենիոյ Խօսարանը: Առ այս զրկուեցան հաւատարիմ անձինք՝ ոգիները պատրաստելու համար: Սաւոյիա շատոնց կը գուշակէր այս գոհը, բայց ի Նիցցա, ըստ ասելոյ նոյն իսկ գաղղիացի գրչաց, շատ սրտաշարժ տեսարանք պատահեցան և մեծ աշխատութիւն պէտք եղաւ զժողովուրդը համոզելու: Կարիպալտի որ Նիցցայէն էր, ըսած է. « Յաւիտեանս պիտի չներեմ Քաւուրի որ դիս յԻտալացիութենէ օտարական ըրաւ »: Նոյնը էր

նաև շատերուն զգացումը : Ժողովրդախումբ քուէն կատարուեցաւ . մեծամասնութիւնը ակամայ ի նպաստ էր միացման ընդ Քաղղիոյ և Խօսարանը կամօք և ցաւօք սրտի զայն կը հաստատէր : Քաղղիա առատօրէն հասուցեր էր իւր օգնութիւնը առ Փիէմոնթ բայց և օգնութեան փոխարէն առատօրէն կը վարձատրուէր :

1. Քաղղիացի նշանաւոր գրիչ մը այսպէս կը պատմէ գինուորաց բաժնուիւր . « Քիչ օր վերջը Թագաւորը յեաին անգամ Սաւոյիոյ ջուկատը նանդէսէ անցուց : Ըստ 'Իաշանց , ամէն գինուոր առանձին պիտի մտնէր գաղղիացի բանակին մէջ , պահելով սակայն իւր ստացեալ կարգը և աստիճանը : Թագաւորին բաժանումը իւր սիրելի ջուկատէն շատ սրտաշարժ եղաւ : Թագաւորը մեծապէս յուզեալ էր երբ դիմացէն կ'անցնէր այս փոքրիկ գունդը , որ ըստ վկայութեան ամենուն , Եւրոպիոյ առաջիններէն մէկն էր : 'Իիտեցի' գինուորներէն շատերը կու լային Թագաւորին դիմացէն անցած ժամանակ : Կը յիշէին անշուշտ Միլանու օրերը , 1849ի Նովարայի օրերը , երբ երիտասարդ իշխանին նետ կը կռուէին , որ տակաւին Թագածառանգ էր Սաւոյիոյ հին տանը : Վերջին անգամ էր որ կը ժողովուէին միաբան , գերագոյն վերջին ողջոյն տալու իրենց դրօշակին , իրենց Թագաւորին և իրենց ընկերաց : Այսպիսի ժամանակ տխրութիւնը օրինաւոր էր » : կոմսն տ'իալլիլ Սը-ֆէր Քաղ-տ-ֆէր Գլ . ԺԲ :



1851 — 1859

1. Փրանկիսկոս Յովսէփ կայսեր առաջին տարիները. — 2. Սահմանադրական բարեփոխումներ. — 3. Բրուսիա. — Փրեզերիկոս Գուլիէլմոս Գ. — 4. Բրուսիա Ղրիմու Պատերազմին և Նեօչազէի խնդրոյն մէջ. — 5. Փրեզերիկոս Գուլիէլմոս Գի հրաժարիլը. — 6. Գուլիէլմոս իշխան թագապահ և թագաւոր. — 7. Կոմսն Պիսամարը Շէօնհաւզէն. — 8. Գերմանական Միութեան խնդիրը. — 9. Գերմանական իշխանութիւնք և Սահմանադրութիւն. — 10. Տնտեսագիտական և Արուեստական հաստատութիւնք:

1. Փրանկիսկոս Յովսէփ կայսեր առաջին տարիները: — Դժուարին յոյժ պարագաներու մէջ Փրանկիսկոս Յովսէփ կայսրութեան գլուխ անցեր էր. երբ իր երկու մեծ Նահանգները Մաճառստան և Իտալիա մեծաւ զօրութեամբ կը կռուէին Աւստրիոյ դէմ: Սակայն ոչ միայն այդ ահաւոր կռուոյն մէջ յաղթական ելեր էր, այլ և Հէսսէի և Դքսութեանց խնդրոյն մէջ ալ ինքն գլուխ ըլլալով պատերազմին, յետ յաղթութեանց՝ բոլոր Գերմանիոյ վրայ մեծ ազդեցութիւն մը կը ստանար անհամեմատ նախադասութեամբ վեր քան զԲրուսիա: Այսպիսի յաջող սկզբունք մը բնականապէս հարկ էր որ լռեցնէր միապետութեան հակառակորդքը և խրախուսէր նախկին վարչութեան կողմնակիցքը: Մէդէնիք իշխանը Ազատականաց ընկճուելուն և Յեղափոխութեան մարելուն, դարձեր էր ի վեհնա: Փրանկիսկոս Յովսէփ Գեկտեմբեր 31ին հրովարտակով մը ջնջեց 1848ի Մարտի Սահմանադրու-

թիւնը, որուն վրայ ինքն ալ երգուեր էր, հաստատեց բացարձակ միապետութիւնը, պաշտօնեայք պատասխանատու էին առ ինքն միայն, և նորոգեց կայսերական նախկին Ատեանը և այս ամէնը առանց ընդդիմութիւն մը կրելու. վասն զի Սահմանադրութիւնը դեռ օգտակար արդիւնք մը չէր բերած մայրաքաղաքին, և այնքան զանազան իղձերէ կազմուած ազգերու, ընդհանուր սահմանադրութիւն մը չէր կարող փափագները կատարելու :

Աւստրիա կազմող սզատասէր ազգերը լուծեամբ դիտեցին Սահմանադրութեան բարձուժը, առանց սակայն համոզուելու ամրապինդ միութեան: Աղատութիւնը անոնց սրտերուն մէջ թողուցեր էր իրեն հետքերը և եռանդը. և զանոնք ճնշման մէջ պահելու համար ի Մաճառստան յիտալիա և ի Կալիցիա, պաշարման վիճակը չվերցուեցաւ. և որչափ որ Փրանկիսկոս Յովսէփ կայսեր կենաց դէմ՝ եղած դաւը ի մաճառէ մը, Յովսէփ Լեպէնէք, անձնակսն զգացումն դատուեցաւ և ոչ քաղաքագիտական, բայց պայքարները ծանուցին որ գաւառները մայրաքաղաքին պէս չէին մտածեր և հարկ էր բարւոքումն կատարել: Այն օրուրնէ Աւստրիա ուրիշ ընթացք մը բռնեց: Յամին 1854ի Փրանկիսկոս Յովսէփ իւր ամուսնութեան առթիւ ընդ Եղիսաբեթի, դուստր Ի. քսին Մաքսիմիլիանոսի Պապիէրայ, հրովարտակով մը կը բառնար պաշարումը Լոմպարտիա-Վինետիկ գաւառներէն և Մաճառոսց ալ արքայական թագին գտնուելուն առթիւ, զոր Քոշութ թաղեր էր, Մաճառստան հինգ Նահանգք բաժնեց ընդհանուր կուսակալի մը իշխանութեան ներքև, մեղմելով նաև Արդարութեան օրէնքները: Բայց Մաճառստան այսպէս փոքր շնորհներով չէր հաշտուեր Աւստրիոյ և Հապսպուրկի տան հետ. նա մանաւանդ ամէն օր անպակաս էին զրգիւք այն մաճառներէ որոնք օտար երկիրներու մէջ ապաւինելով, ազատ կ'ապրէին՝ ազատ սպազրութեամբ :

Արևելեան պատերազմին ժամանակ Փրանկիսկոս Յովսէփ որչափ որ ալ ինքզինքը համակրող ցուցուց

Գաղղիոյ և Անգղիոյ Գաշնակցութեան, բայց մինչև պատերազմին վերջը միջնորդի մը ձև ուզեց բռնել, առանց մասնակցութեան մը, զբաղեալ մեծապէս ներքին հոգերով:

2. Սահմանադրական բարեփոխումներ: — Արևելեան պատերազմէն վերջը վրայ հասաւ Իտալիոյ հոգը, ուր յայտնի կը տեսնուէր միտին ապագայ մը պատերազմական յայտարար նշաններով: Եւ յիրաւի այդ ընդհարումը տեղի ունեցաւ և Իտալիա միայն չէր ինչպէս տեսանք: Յուրիքի Գաշնադրութենէն վերջը, աւելի ևս ըմբռնեց որ իւր ձեռաց ներքև նազանգները ամբողջովին չկորսնցնելու համար, հարկ էր փոխել չին գրութիւնը և գոհացնել ժողովուրդքը:

Ի նպաստ Սահմանադրութեան մը եղած յուզմունքները ճնշելու համար, ամէն կողմ մեծաթիւ զինուորական ոյժ մը միշտ պատրաստ պէտք էր ըլլալ, և այս ահաւոր ծախքը, խանգարեր էր երկրին Մատակարարութիւնը և Քանձը: Հասարակաց պարսփը դիզուեր էր և որովհետև մետաղը մեծաւ մասամբ օտար երկիրներու շահերու կը վճարուէր, հարկ եղեր էր թղթադրամ տպել: Վարկը ամէն օր կ'իյնար և որովհետև Ազգային Դրամատունը Պետութենէն կախումն ունէր, վստահութեան նուազելով, տոմսակները կորուսին իրենց գինը: Աւստրիոյ Պետութեան ընդարձակ մուտքերը բաւական չէին այս նոր պարագայից և դրից համար եղած ծախքերուն: Ի զուր Պետութիւնը երկաթուղեաց մաս մը շնորհեց գաղղիական ընկերութեան մը, ի զուր վաճառեց հանքային ածխոյ հանքերը և պետական կալուածներէ մաս մը: Աւստրիոյ դրամական վիճակը յետին տազնապի մէջ էր և զոր աւելի սաստկացուցեր էր դրամատանց անհաւատարիմ մատակարարութիւն մը, որոց գլխաւորք անձնասպան անհետացան: Փրանկիսկոս Յովսէփ Իմաստուն հեռաւտեսութեամբ որոշեց վերջ մը տալ այս դինեալ խաղաղութեան:

Իտալիոյ պատերազմը նոր յոյս մը տուեր էր Մաճառաց որոնք պատրաստ էր տեսնուէին 1848ի կոխ-

ները սկսելու: Կայսրը 1860ի Մարտին սկսաւ փոքր զիջումներ, որոց բնաւ կարևորութիւն մը չտուին Մաճառք: Դժուարին էր փութով հրատարիլ բացարձակ անկախութեան մը փափագներէ: Վերջապէս Հոկտեմբեր 30ին Փրանկիսկոս Յովսէփ ՍաՀմանադրութիւն հրատարակեց ըստ իւրանքանչիւր ազգաց և Նահանգաց: Նախկին մաճառ ՍաՀմանադրութիւնը գրեթէ ամբողջովին հաստատուեցաւ. ամենայն ազգ պիտի ունենար իւր սեպհական Աւագաժողովը, որ պիտի որոշէր կայսրութեան Խորհրդոյն զրկուելիք նուիրակները, յորոց մի մասն կ'անուանուէր Կայսերէն:

Յամին 1854 Փրանկիսկոս Յովսէփ Հռովմայ ՔաՀանայապետին հետ նոր Գաշանց գիր մը հաստատեր էր բառնալով Յովսէփ Բինը: Ըստ այսմ Գաշանց Եպիսկոպոսունք կրնային ուղղակի բանակցիլ ՔաՀանայապետին հետ և Հասարակաց կրթութիւնն, լրագիրք և մատենաք Եպիսկոպոսաց հսկողութեան ներքե կը դրուէին: Ազատամիտք զայրացեր էին այս Գաշանց գրոյն դէմ: Ըստ ներկայ ՍաՀմանադրութեան Աւագաժողովոց մէջ բաղմաթիւ Աթոռներ կը շնորհուին ազնուականաց և եկեղեցականաց: Աստի կըրկին մեծ զայրոյթ յազատականս: Կայսրը զանոնք շահելու համար Պաշտօնարանին գլուխ կանչեց ազատական մը՝ զասպետն Շմէրլինկ որ առաջարկեց կայսեր գաւառական ժողովի մէջ առանձնաշնորհեալ դասերու հաւասար ընդունիլ նաև կալուածատէրները և անոնց ալ տալ նոյն առանձնաշնորհութիւնքը: Այս հիման վրայ կազմուեցաւ 1861 Փետրուարի ՍաՀմանադրութիւնը և Աւստրիոյ միապետութիւնն ալ անցաւ սահմանադրական Պետութեանց կարգը: Այսու հանդերձ Շմէրլինկ պաշտօնեայն մեծ դժուարութիւններ ունեցաւ գործադրութեան մասին: Նահանգներէն ոմանք առաւել կ'ընտրէին մեալ առանց ՍաՀմանադրութեան: Յայտնի է թէ կար Յօդուածներուն մէջ Հաւասարութիւն կրօնից. Գիրոլի ժողովուրդը հռովմէական ուղղափառ, ուր հազիւ սակաւ բողոքականք կային, տժգոհ այս նորա զատութեան համար, որուն պատճառն էր Սահ-

մանադրութիւնը, կը թախանձէին մնալ առաջին վիճակին մէջ և ազատ ըլլալ այդ « սահմանադրութեան ժանտախտէն »: Մաճառստան բացարձակապէս մերժեց ընդունելու, որովհետև իրեն համար սեպչական Սահմանադրութիւն կ'ուզէր և յանձն չէր առնուր հաւասար համարուիլ ուրիշ նահանգերու: Աւստրիոյ հետ կուզէր միայն միութիւն մը յանձին կայսեր: Նոյն օրինակ պահանջք կային նաև ի Պոլսեմիա և ի Կալչիցիա: Մաճառստանի նախագահ ժիրանաւոր արքեպիսկոպոսն և բազմաթիւ խոհական անձինք խորհուրդ կու տային Աւստրիոյ տուած շնորհը սիրով ընդունիլ և օգտուիլ, սակայն ի զուր. այնչափ սաստկացաւ Մաճառաց տեգոհութիւնը որ մերժեցին տուրքերը վճարելու մինչև որ Հունգարիոյ շնորհուի առանձին Խօսարան մը միաբանութեամբ Կրանսիլվանիոյ և Խռուագներու: Կայսրը վճարար գործելով առ ժամս յեղափոխութեան մը առջև առաւ: Երկուց Խօսարանաց բացման օրը յայտնի ծանոյց որ միտք դրած էր ամենևին տեղիք չտալ և հաստատապէս գործադրել տալ Սահմանադրութիւնը Փետրուարի յաւելուածով հանդերձ. որ և է ընդդիմութեան յանցանք կը համարէր Միապետութեանը ամբողջութեան: Խօսարանաց առաջին մեծ հոգը եղաւ բարւոյքել Պետութեան զրամական վիճակը և գոչացնել քաւառները, բաց ի վենետկոյ, որուն առ ժամս չէր տրուեր Սահմանադրութիւն « պահելով զայն յարմարագոյն ժամանակի »:

3. ԲՐՈՒՍԻԱ. Փրեդերիկոս Գուլիէլմոս Գ: – Փրեդերիկոս Գուլիէլմոս Գ իր ամբողջ վարչութեան ժամանակ ցուցուցած անհաստատ և հակասական ընթացքը շարունակեց նաև ազատական ոգւոյն և յեղափոխութեանց ընկճուելէն վերջն ալ: Թէպէտ բազմիցս հրատարակեր էր որ 1848ի Սահմանադրութիւնն իւր լիովին կամքովը և ինքայսօժար հրատարակեր էր. այսու հանդերձ ամբողջ իւր թագաւորութեան ժամանակ չներեց անոնց զորս պատճառ կը համարէր անոր հաստատուելուն: Եւ սակայն չէր համամիտ հակասահմանադրական այն զօրաւոր կուսակցութեան

որ Խաչակէր կը կոչուէր իւր լրացրին վրայ խաչ մը ըլլալուն համար և որուն գլխաւորքն էին Սդահլ և Կէրլախ :

Բրուսիոյ վարչութիւնը յաջող և ժողովրդական ձև մը ունեցաւ միայն մաքսային դաշնակցութեան մէջ . յորում մրցեցաւ Աստրիոյ հետ որ կը ջանար նախադասութիւն մը ունենալ անոր մէջ . և յայսմ կ'օգնէին իրեն Պավիէրա, Սաքսոնիա, Վիւրթեմպերկ, երեք Հէսսէները և Նաուա : Բրուսիա կուզէր բանակցիլ ընդ Աւստրիոյ յետ յարմարելու նախ դաշինքերը ընդ բովանդակ գերմանական իշխանութիւնս : Այս խընդրոյն պատճառաւ զանազան քաղաքաց մէջ ժողովքներ գումարուեցան . բայց Բրուսիա միշտ հաստատուն մնաց իւր առաջարկին վրայ : Փոքր Պետութիւնք սպառնացան բաժնուելու և ցրուելու . սակայն չէին կարող, գիտնալով այս միութենէն առաջ գալիք շահը : Այս տարածայնութեանց միջոց մեռաւ ի կաթուածէ Աւստրիոյ Արտաքին գործոց պաշտօնեայն՝ իշխանն Շըլարցէմպերկ՝ որուն միշտ նպատակն եղած էր խոնարհեցնել զԲրուսիա . և տեղը անցաւ Պուոլ Շաւէնշդալյն որ շունենալով նախորդին ճարտարութիւնը և ազդեցութիւնը, բռնադատուեցաւ առանձին վաճառականական դաշինքներ կռել եթէ Բրուսիոյ հետ, եթէ գերմանական իշխանութեանց և եթէ օտար Պետութեանց հետ : Բրուսիոյ մնաց գերմանական մաքսային դաշնակցութիւնը կազմելով միարանութեամբ, մեծագոյն ազդեցութիւնը ունենալ անոր մէջ :

Այս միջոցիս դարձեալ Բրուսիա հիմնեց ծովային զօրութիւնը նախ գնելով երկու զրահաւոր նաւեր և ստանալով Օլտէնպուրկէն Հիւսիսային ծովուն վրայ Եահատ փոքրիկ նաւահանգիստը :

4. Բրուսիա Արեւելեան պատերազմին եւ Նիսշաթէլի խնդրոյն մէջ : — Ղրիմու պատերազմին մէջ յամին 1854 Փրեքերիկոս Գուլիէլմոս որչափ որ ալ ժողովրդեան պատճառաւ չէր կրնար հակառակ երևնալ Դաշնակից պետութեանց, սակայն չէր կրնար ևս Ռուսիոյ դէմ ինքզինքը հրատարակել և անորոչ դիւք

մը ունենալով բնաւ ազդեցութիւն մը շունեցաւ, այնպէս որ հազիւ իւր ներկայացուցիչը ընդունելի եղաւ Բարիզու Դաշնաժողովոյն մէջ:

Չունեցաւ յաջողութիւն նաև Նէօշաթէլի խնդրոյն մէջ: Նէօշաթէլ Զուիցցերիի դաշնակցութեան հետ միացեր էր 1848էն ի վեր: Բրուսիա այս բանիս դէմ բողոքեր էր և մինչև պատերազմ սպառնացեր էր Հելուետական Դաշնակցութեան: Բրուսիա ունէր ի Նէօշաթէլ իւր կուսակիցները ազնուականաց և քաղաքացւոց մէջ: Ատոնք 1856ին յանկարծակի յարձակմամբ տիրեցին դղեկին և Հասարակապետութեան գլխաւորները բանտ գրին: Քիչ օր վերջը Արմատականք Դաշնակից զօրաց օգնութեամբ նորէն առին դղեակը և կալանաւորեցին զթագաւորականս: Բրուսիա պահանջեց որ իւր կուսակիցք բանտէն հանուին: Զուիցցերիի վարչութեան փոյթը շեղաւ, նա մանաւանդ Տիւֆուր զօրավարը բռնեց մինչև Գերմանիոյ սահմանները: Պատերազմը մերձաւոր կը կարծուէր, բայց միջամտեցին օտար Պետութիւնք և Գաղղիոյ միջնորդութեամբ Զուիցցերի արձկեց կալանաւորքը և Բրուսիա հրաժարեցաւ իւր իրաւունքէն Նէօշաթէլի վրայ:

5. Փրեդերիկոս Գուլիէլմոս Դի հրաժարիլը: — Նէօշաթէլի խնդրոյն հետ վերջացաւ Փրեդերիկոս Գուլիէլմոսի քաղաքական կեանքը և աւելորդ կը համարինք մանրամասն յիշել ներքին թէ սահմանադրական պայքարք և թէ դրամական տագնապները: Բաց ի մաքսային յաջողութենէն, Բրուսիա կորսնցուցեր էր իւր ամենայն ազդեցութիւն: Թագաւորութիւնը շուարեալ վիճակ մը առած էր, որուն պատճառ կրնար համարուիլ նաև թագաւորին մտաւորական հիւանդ վիճակը: Արդէն 1857ի Հոկտեմբերի սկսեր էին տեսնուիլ իր վրայ այդօրինակ այլայլութիւնք. որոնք երթալով բազմացան մինչև յայտնի եղաւ որ ալ անհնարին էր իրեն Պետութեան հոգոց զբաղիլ և աշխարհք մը կառավարել: Փրեդերիկոս Գուլիէլմոս որդի շունենալով, իւր եղբայրը զիշխանն Գուլիէլմոս Բրուսիոյ, երեք ամսուան համար փոխանորդ անուանեց և այդ

ամիսները լրանալուն երկու անգամ ևս նորոգեր էր նոյն փոխանորդութիւնը: Այս միջոցիս Գուլիէլմոս իշխանին անդրանիկ որդին Փրեդերիկոս Գուլիէլմոս ամուսնանալով Անգղիոյ Վիկտորիա թագուհւոյն դստեր հետ, Բրուսիոյ՝ Ժողովուրդը իբր բարեգուշակ ապագայ մը, մեծ ցնծութեամբք ողջունեց այս խնամութիւնը:

Իսկ թագաւորին առողջութիւնը բնաւ յոյս մը չէր տար: Այն ատեն ինքնին հետեւելով Սահմանադրութեան, Հոկտեմբեր 8ին (1858) իւր եղբայրը անուանեց « թագապատ » և զոր երկու ամիս վերջը հաստատեցին կրկին Խօսարանք:

Անկէ վերջը Փրեդերիկոս Գուլիէլմոս ելաւ ուղևորելու իւր ամուսնոյն հետ յիտալիա ի խնդիր առողջութեան. բայց առանց բժշկուելու և փութով բռնադատուեցաւ ետ դառնալ 1859ի պատերազմին պատճառաւ: 1859ի Նոյեմբերին՝ քաշուեցաւ իւր սիրելի Սան-Սուսի բնակութիւնը, ուր քիչ յետոյ կորսնցուց բուրրովին իւր ճանաչողութիւնը: Այսու հանդերձ տարի մը ևս ապրեցաւ այս վիճակին մէջ և մեռաւ յամին 1861 Յունուար 2ին: Իրմէ առաջ 1860ի գարնան մեռեր էր իւր քոյրը կայսրուհի-մայրն Ռուսիոյ:

6. Գուլիէլմոս Թագապատի եւ Թագաւոր: — Գուլիէլմոս եղբորը կենդանութեան ժամանակ վարչութեան զլուխ անցնելով, անմիջապէս անոր ոյժ մը տուաւ և զօրութիւն՝¹: Իւր պաշտօնեայքը մեծաւ մասամբ ընտրեց ազատականներէն, որոց զլուխ էր իշխանն Հոհէնձոլլէոն Սիկմարինկէն, որուն ուղղափառ հաւատոց պատկանիլը, յայտնի նշան մ'էր որ թագապահը կ'ուզէր վերցնել ամենայն կրօնական հակառակութիւն և միանգամայն կ'ուզէր շահել զուղղա-

1. Գուլիէլմոս եղբայր Փրեդերիկոս Գուլիէլմոս Գի և որդի Փրեդերիկոս Գուլիէլմոս Գի էր ծնեալ յամին 1797 Մարտ 22ին: Եղբորը թագաւորութեան ժամանակ ճանչցուած էր « իշխան Բրուսիոյ » անուամբ. յետոյ ժամանակաւ Գուլիէլմոս Ա կայսր Գերմանիոյ:

փառս : Գուլիէլմոս իրեն նպատակ դրած էր զԲրուսիա ներքսապէս զօրացնել զինուորական ուժով, մատակարարութեամբ և ուսմամբ . յետոյ իրեն տալ այն առաջին տեղին զոր կորուսեր էր յՕլմիւց և որ ինքը պէտք էր ունենալ Գերմանիոյ մէջ : Յամին 1860 Յունիսի մէջ Նարոլէոն Գի հետ հանդիսաւոր տեսակցութիւն մը ունեցաւ որուն ներկայ գտնուեցան նաև Գերմանիոյ զլխաւոր իշխաններ :

1861
2 Յունվ. Եղբօրը մահուան վրայ, ընդհանուր ներումն հրատարակեց քաղաքական յանցաւորաց և գազը ելլելու հրովարտակը կը յայտնէր որ Բրուսիա նոր կեանք մը նոր և գործսնեայ շրջան մը պիտի սկսէր : Այս խօսից յաջորդեցին նաև արդիւնք : Յամաքային գունդերը շատցան, նաևեր հրամայուեցան և գերմանական միւս Պետութեանց հետ դաշինքներ դրուեցան Գերմանիոյ սահմանազլխոյ պաշտպանութեան համար : Հոկտեմբերի մէջ զնաց այցելութեան մը առ Նարոլէոն Գի Կոմփիէյն և յետոյ դարձաւ ի Պէոլին Հոկտեմբեր 18ի թագաւոր պսակուելու համար : Այս առթիւ հաստատեց թագի պատուանշանը, ազնուականութեան տիտղոսներ բաժնեց և ներումն յանցաւորաց : Թագադրութեան ժամանակ պարզօրէն յայտնեց իւր գաղափարքը, որ թէպէտ ազատական յառաջադիմութիւնք կը սիրէր, բայց և թագաւորութիւնը ստացիր էր «չնորհիւ Աստուծոյ» և թէ «Բրուսիոյ թագաւորք կ'ընդունէին իրենց թագը յԱստուծոյ, և այդ պատճառաւ ինքն ալ կ'առնուր խորանին վրայէն և կը դընէր իւր գլուխը : Խորհրդարանք էին միայն թագաւորին խորհուրդ տալու համար» :

Յայտնի է որ այս իմաստները պիտի ունենային իրենց հակառակորդները յառաջադիմականաց մէջ որոնք նոր ընտրութեամբ աւելի բազմացեր էին : Խօսարանական պայքարաց մէջ Ելեմտից վերաբերեալ խնդրով մը Պաշտօնարանը մեծամասնութիւնը կորսնցնելով, հրաժարեցաւ : Թագաւորը փոխանակ ընդունելու հրաժարականը, Խօսարանը ցրուեց և փոփոխութիւնք ըրաւ ի Պաշտօնարանի ազատականներէն զոմանս ամ

բառնալով, և գլուխ դրաւ պաշտօնարանին զիշխանն Հոհէնլոհէ, Աւագաց Ատենին Նախագահը, որուն յետոյ փոխանակեց Պէռնստորֆ :

Այսու հանդերձ ընդդիմակացք չգոհացան : Պաշտօնարանը Զանաց շահիլ զանոնք բառնալով զանազան տուրքեր, վաճառականական դաշամք ընդ Գաղղիոյ, ճանաչելով Իտալիոյ Թագաւորութիւնը, բռնադատելով զՀէսսէ Ընտրական, 1831ի Սահմանադրութիւնը տալ իւր հպատակաց : Եւ սակայն ազատականք ընդդիմութիւննին շնուազեցուցին : Թագաւորը շուզեց անձամբ բանալ Խօսարանին նիստերը, որոնք շարունակեցին մեծապէս յուզեալ մանաւանդ Սեպտեմբեր 30ին, յորում պաշտօնարանը կը պահանջէր նոր գումարներ բանակը կարգաւորելու համար : Մեծամասնութիւնը մերժեց խնդիրը և պաշտօնարանը քաշուեցաւ :

7. Կոմսն Պիսմարք Շէօնհաւզէն : — Այն ատեն Սեպտ Թագաւորը Պաշտօնարանին գլուխ կոչեց ի Բարիդ Բրուսիոյ դեսպանը՝ զկոմսն Պիսմարք Շէօնհաւզէն, այն որ յետոյ այնքան պիտի մեծցնէր իւր հայրենիքը և զԲրուսիա ընդ երկար Եւրոպիոյ հրամայող պիտի կարգէր : Պիսմարք չկրցաւ յաղթել Խօսարանին մէջ և բանակին համար ուզուած գումարները մերժուեցան . բայց յաջողեցաւ ընդունելի ընել Աւագաց Խորհրդարանին մէջ : Երեսփոխանաց ժողովը բողոքեց ընդդէմ այս ընդունելութեան . այն ատեն Թագաւորը նիստերը փակեց և Պատգամագրով ¹ մը ժանոյց որ բռնադատեալ էր Ելեմուտքը ի գործ դնել արտաքոյ իսկ Սահմանադրական կանոնաց : Յայտնի է թէ այս արհամարհութիւն մ'էր Երեսփոխանաց, որով հակառակութիւնը աւելի կը բորբոքէր ընդ Գահն և ընդ Խօսարան . բայց վարչութիւնը իրեն նպաստաւոր գտեր էր կալուածատիրական Աւագաց Ատեանը որուն վրայ յենաւ . և քան զայդ իրեն իրաւանց նոր հզօր պաշտպան մը ունեցեր էր՝ Պիսմարքի հանձարը :

Այս յուզմունքները ընդ Պաշտօնարանը և ընդ ա-

1. Message.

զատականս տեեցին մինչև ցամն 1863: Թագաւորը Չարին դաշնադրեր էր միաբան ընկճելու Լեհաստանի խռովութիւնքը: Երբ Խոսարանը բացուեցաւ մեծամեծ վէճեր ծագեցան ընդ պաշտօնեայս և ընդ Նախագահ Խոսարանին, որուն իշխանութիւնը չէին ուզեր ճանչնալ պաշտօնեայք: Գուլիէլմոս պաշտօնէից կողմը բռնեց և խնդրոյն վերջ տալու համար ցրուեց Խոսարանը: Վերցուց նաև տպագրութեան ազատութիւնը: Նոր ընտրութեամբք ազատականք բոլորովին յաղթող եղան և մեծամեծ յուզմունքներ անշուշտ պիտի յառնէին, եթէ Տանիմարքայի պատերազմին խնդիրը չյառնէր, առ որ դարձան գրեթէ բոլոր միաբերը:

8. Գերմանական միութեան խնդիրը: — Գերմանական Դաշնակցութեան պայքարները և Ֆրանքֆորդի Խոսարանը որչափ որ ալ խափանուեր և լուծուեր էր պաշտօնապէս, սակայն զայն կազմող երեսփոխանք նոյն զգացմունքները կը կրէին մտքերնուն և սրտերնուն մէջ և Իտալական միութեան այնպիսի երագ իրագործուիլը, նոր լոյս մը եղաւ իրենց և յոյս մը Գերմանական միութեան: Շիլլէրի, գերմանական մեծ բանաստեղծին համար եղած ամենաջրեղ տօնախմբութեամբ, առաւել Գերմանիա կը տօնէր իւր ազգաց և ցեղից առ հասարկ եղբայրութեան գաղափարը, առ որ կը դիմէին ընդհանուր միաբերը և յորում կը գտնէին իրենց շահը և մեծութիւնը: Կազմուեցաւ Ալքսային Ընկեր-Նի-Նը որուն նպատակն էր Բրուսիոյ հիտ միութիւն մը 1849ի Սահմանագրութեան վրայ, առանց սակայն ի բաց ձգելու զԱլեստրիա: Դարձեալ Բ-բէկ-բ-բ-Նի-ն ընկեր-Նի-ն մը, որուն կուսակից էր Կակեռն, կ'ուզէր երկու ըմբռնել զԱլեստրիա՝ բացարձակ և սահմանադրական, և զԱլեստրիա կ'ուզէր սեանել ի գերմանական Դաշնակցութեան միաբան ընդ Բրուսիոյ:

Ինչպէս որ Փրեդերիկոս Գուլիէլմոս Դ մերժեր էր Ֆրանքֆորդի Խոսարանին ընծայած կայսերական թագը, հաւասարապէս հակառակորդ երևցեր էր Ազգային ընկերութեան գաղափարաց: Թագաւորք և իշխանք

աւելի հակամէտք էին Բարեկարգութեան ընկերու-
թեան: Երբ Փրանկիսկոս Յովսէփ հրատարակեց Սահ-
մանադրութիւնը և ազատական ընթացք մը սկսաւ, ու-
զեց օգուտ մը քաղել Բրուսիոյ պարագաներէն, յորում
թագաւորը մատակարարութեան խնդրոց համար միշտ
ընդդիմութեան մէջ էր Խօսարանին հետ, և Գերմա-
նիոյ բոլոր իշխանները ի Ֆրանքֆորդ կանչեց Աւա-
գաթողովի մը համար: Ամէնը դիմեցին հրաւերին բաց
ի Բրուսիոյ, բայց և Պատէնի Մեծ Դուքսը առաջար-
կեալ բարեկարգութեանց իւր հաւանութիւնը ժխտեց,
և ի Ֆրանքֆորդ Խօսարանը անբաւական համարեցաւ
այդպիսի Աւագաթողով մը, որուն անդամք ազգին
քուէով ընտրուած չէին, և թէ նախ հարկ էր ազատու-
թիւններ տրուէին ժողովրդոց: Ֆրանքֆորդի Աւագա-
թողովը արդիւնք մը չունեցաւ: Բայց և գերմանա-
կան պետութիւնք իրենց առանձնական շահէն մղեալ՝
չուզեցին խանգարել մաքսային միութիւնը զոր ունէին
ընդ Բրուսիոյ, և առանձին դարձեալ վճռական դա-
շինք ընդ Աւստրիոյ:

9. Գերմանական Տէրութիւնք եւ Սահմանադրու-
թիւնք: — Յեղափոխութեանց ընկճուելով, Սահմա-
նադրութիւններէն բազումք ալ կորսնցուցին իրենց
ազդեցութիւնը և գործադրութիւնը: Հազիւ սակաւ
Պետութիւնք չուզեցին ի սպառ մերժել ազատակա-
նաց փափագները: Ի Պավիէրա Մաքսիմիլիանոս Բ
իւր հօրը յաջորդած ժամանակ, խորշումն կը ցուցը-
նէր սահմանադրական գաղափարներու. Գերմանական
միութեան մէջ Բրուսիոյ հակառակ ընթացք մը կը հե-
տևէր, յենով Աւստրիոյ վրայ. բայց Խօսարանին հետ
ստէպ ընդհարումներէն տաղտկացած, վերջապէս ար-
ձակեց իւր Տոն տէր Տորտէն պաշտօնեայն ըսելով.
« Կ'ուզեմ ժողովրդեանս հետ խաղաղութեամբ ապ-
րիլ » և ընդունեցաւ Խօսարանին փափագները: Ի Գո-
պուրկ-Կոթա ազատամիտ և խոհական Դուքսն Էռ-
նէսդ ամէն ջանք ըրաւ սահմանադրական ազատու-
թեանց վրայ միացնել գոպուրկ և գկոթա, և Գեր-
մանիոյ այլ և այլ տեղերէ հայրենասէր ազատական-

ներ հրաւիրեց, վարչութեան և գիտութեանց մէջ յառաջագիմութեան համար: Նոյնը ըրաւ Պատէնի գուքսը: Իսկ ի Սաքսոնիա Փրեզերիկոս Բ մեռնելով ձիէն անկամամբ, իւր եղբօրը Յովհաննէսի ժամանակ որ յաջորդեց, պաշտօնեայն Պէտտը կրցաւ նոր ընտրական օրէնք մը ընդունելի ընել ոչ համաձայն Սահմանադրութեան: Վիւրդէմպէրկի թագաւորը Գուլիէլմոս Ա. միութեան խնդրոյն մէջ Աւստրիոյ կողմ, բռնեց. բայց երբ Աւստրիա ուզեց Ֆրանքֆորդի հին Աւագածողովը հաստատել, և առ այս հրաւիրեց բոլոր իշխանները, այն ատեն թողուց զԱւստրիա և Պափիէրայի հետ Միւնիխի դաշինքը դրաւ, որուն նպատակն էր ապահովել բոլոր երկրորդական Պետութեանց անկախութիւնը ընդդէմ Աւստրիոյ և Բրուսիոյ և որ կոչուեցաւ Եւրոպ. Գերմանիա: Այս պագմամբ էր որ Լայպցիկի պատերազմին տարեդարձին օրը Հաննովերի Պորրի պաշտօնեայն ըսեր էր որ « Փոքրիկ Պետութիւնք պիտի դիմէին օտար Տէրութեանց դաշնակցութեան, քան հաւանել որ ընդարմանան և կամ կլուին մեծագոյն Պետութենէ մը »: Հետէ Ընտրական և Լիփիէ Տէտմոյս, ի սկզբան հակառակեր էին Սահմանադրութեան, մինչև որ ներքին խռովութեանց պատճառաւ միջամտելով Բրուսիա և Աւստրիա, բռնադատեցին գործադրելու 1831ի Սահմանադրութիւնը: Ընդհակառակն ի Մէքլէմպուրկ զօրացաւ Այնուականաց մասը և ոչ միայն ջնջուեցաւ Սահմանադրութիւնը, այլ և Նոր ժողովք մը հաստատուեցաւ 1755ի հաստատեալ կարգաց վրայ: Քաղաքական մեծամեծ յուզումներ ծագեցան, յորոց առաջ եկան բանտարգելութիւնք և բազմաթիւ տարագրութիւնք: Ի Հաննովեր յամին 1848 Էրնէստ թագաւորը ընդունեց էր զՍահմանադրութիւնը և խզիւ հակամէտ էր պահպանութեան: Բայց Ազնուականք դիմեցին աւագածողովոյն ընդդէմ Սահմանադրութեան: Մեռաւ քիչ վերջը Էրնէստ և իրեն յաջորդեց իւր որդին Գէորգ, որուն իշխանութեան սկիզբները Ազնուականաց և երկու Խօսարանաց մէջ պայքարը իւր յետին կէտը հասաւ: Աւագածողովը

1855
Օգոստ.

1851 Նոյ.

վճռեց ի նպաստ Ազնուականաց և հրաւիրեց զԽօսարանս՝ իւր պահանջները չափաւորել ըստ Գաշնակցութեան կանոնաց և ըստ պահանջելոյ Ազնուականաց։ Այն ատեն վարչութիւնը յանձնեց Պորրի պաշտօնէին բաւնալու զՍահմանադրութիւնը, զոր պահելու բազում անգամ երդուեր էր թագաւորը։ Ի զուր ամէն կողմէն աղերսներ եկան առ թագաւորը՝ Սահմանադրութեան պահպանութեանը համար։ Թագաւորական չրովարտակ մը ցրուեց Խօսարանները « ըստ սահմանելոյ Աւագաժողովոյն »։ Վերցուեցաւ 1848ի Սահմանադրութիւնը և հաստատուեցան 1840ի Քաղաքական կարգերը։

10. Տնտեսագիտական եւ Արուեստական Հաստատութիւնք։ — Այսու հարդերձ քաղաքական հակառակընդդէմ պայքարք արգեք չէին լինէանուր գերմանական մտքերու զարգացման՝ տնտեսական, արուեստական և գիտական ասպարիզին մէջ, յորում կը գտնէին լիովին ազատութիւնը։ Բացուեցան ամենուրեք ընկերութիւնք քաղաքական տնտեսագիտութեան համար։ Շատ մը Արհեստական Տուներ օրէնքներով յարաբերութիւններ հաստատեցին առանց խտրութեան Գերմանիոյ ամէն իշխանութեանց քաղաքացւոց հետ։ Հաստատուեցան ի գործաւորս փոփոխիլ օգնութեանց ընկերութիւններ։ Ընկերավարութեան գաղափարները ուղղելու համար, որ ամէն օր առաւել կը տարածուէր, մտածեցին առանձին տնտեսագէտներ դարման տանել, շաստատելով ամենուրեք գործաւորին համար վարկի, խնայութեան և նախահոգութեան արկեղք։ Կրթութիւնը և Ուսումը ընդհանուր եղաւ առ որ կրնային, նա մանաւանդ պարտաւոր էին, մերձենալ ամէն տղայք, ամէն կարգէ նաև յետին չքաւորքն։

Այս ամէն հաստատութիւնք ի սկզբան առանձնականք, փութով գտան իրենց խրախոյսները ի Պետութիւններէ և որոց արդիւնք յապագային չքեղապէս պիտի տեսնուէր։ Գերմանիոյ ժողովուրդք ներքին յառաջադիմութեանց մէջ ոգւովք միարան, կը դիմէին զօրաւոր միութեան մը։

ՇԼԷՁՎԻԿ ՀՈԼՇԳԱՑՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԱՆԻՄԱՐՔԱԿԱՆ

1. Պատճառք Տանիմարքական պատերազմին. — 2. Հուլդայն կ'ուզէ թօթափել Տանիմարքայի լուծը. — 3. Մահ Փրեզերիկոս էի. Քրիստիանոս թ. — Փրեզերիկոս Ա. կուսդէնպուրկցի. — 4. Զինուորական միջամտութիւն Բրուսիոյ և Աւստրիոյ — Տիրել Տանէվէրբէի և Շլէզվիկի. — 5. Յուզմունք ի Քոփէննակէն. Բանակը յԵւթլանտ. Պատերազմ Տիւփփէլի. — 6. Տանիմարքացիք կը յաղթեն ծովու վրայ. — 7. Դեսպանաժողով ի Լոնտրա. — 8. Իշխանն Փրեզերիկոս կարոյոս Բրուսիոյ. Առուժն Ալսէնի. — 9. Դաշինք վէննայի:

1. Պատճառք Տանիմարքական պատերազմին: — Տանիմարքական պատերազմը բնական հետեւանք մ'էր գերմանական ոգւոյն զօրանալուն և ընդարձակուելուն, որով կը ջանար միացնել իւր հետ այն ազգերը որոց հետ կը համարէր գտնել եղբայրակցութիւն մը, առ ոտն կոխելով նոյն իսկ ժառանգական իրաւունքներ և բողոքներ: Եւ այն անձը որ իւր մտաց մէջ կազմեր էր Գերմանական կայսրութիւնը Բրուսիոյ նախագահութեամբ, ամենայն երկրորդական պատճառ գիտցաւ գործածել ի նպաստ իւր խորհրդոց:

Պիսմարքի մտացը մէջ Տանիմարքայի փոքրկանաւը, Գերմանիոյ մեծութեան առաջին քայլն էր: Այս էր ահա ճշմարիտ պատճառ պատերազմին ներքսապէս: Իսկ գալով արտաքին պատճառաց՝ տեսանք Լ. Գլխոյն մէջ որ Փրեզերիկոս է որդի չունենալով, ի Լոնտրա դեռ պանաժողով մը յաջորդութեան խնդիրը կարգի դրեր էր, սահմանելով յաջորդ յետ մահու Փրեզերիկոս էի

զոուքսն Շլէզվիկ—Հոլշտայն—Կլուքսպուրկի, ի սերնդոց Տանիմարքայի թագաւորաց և մօր կողմանէ թոռն Քրիստիան Ըի. որով յարմար իշխելու թէ Տանիմարքայի և թէ Դքսուժեանց: Եւ որպէս զի յապագային որ և է խնդիր մը չծագի, ինն միլիոն արծաթ վճարմամբ հրաժարել տուին գահէն Աւելուսդէնպուրկի զուքսը, որ և նա թագաւորական արեւնէ կը սերէր ժԸ դարէն: Փրեդերիկոս խոստացաւ Դքսուժիւնքը չմիացնել թագաւորութեան հետ և անոնց տալ սեպհական խօսարանք և գաւառական ժողովքներ. կազմելով միանգամայն մասն ամբողջութեան Տանիմարքայի:

Այս էր նաև Պետութեանց փափագը: Այսպիսի խնդրոյ մը համար չհարցուեցաւ Գերմանական Դաշնակցութեան Աւագաժողովը, որ կը համարէր իրաւունք ունենալ ո՛ւր որ գերմանացի տարր կը նկատէր: Հոլշտայն գերմանական ժողովուրդ կը սեպուէր: Տանիմարքա զայն իւր ամբողջութեան մէջ զրաւելու և զայն տանիմարքացի ընելու համար, ամէն միջոց ձեռք առաւ, երբեմն նոյն իսկ բռնութիւն, օրինակ, գերմաներէն լեզուն տարագիր ընելով եկեղեցիներէ, դպրոցներէ, դատաստաններէ և մինչև յառանձնական գումարումներէ. Դքսութեանց մէջ տանիմարքացի զինուոր գործածելով և բնիկները զրկելով թագաւորութեան մէջ: Տանիմարքացի և գերմանացի զգացմանց մէջ մեծ և յայտնի էր ասելութիւնը և զարմանք չէր որ գերմանացի ժողովուրդք ծածուկ և յայտնապէս համակրէին անոնց՝ զորս ինքեանց եղբայր կը համարէին:

2. Հոլշտայն կուզէ Խօթափել Տանիմարքայի լուծը: — Գերմանական Աւագաժողովը որ ի սկզբանէ հակառակ ընթացք մը բռնած էր Դքսութեանց միաբանելուն ընդ ձեռամբ Տանիմարքայի, որովհետև հակառակ կը համարէր Գաշնակցական իրաւանց, ոչինչ համարեցաւ 1851 և 52ի Գաշինքները: Տանիմարքա ընդ երկար շուրջ ճանչնալ այս որոշողութիւնը, բայց երբ յետ բազում ծանուցագիրներու Աւագաժողովը սպառնացաւ զինուք գործադրելու իւր սահմանածքը, այն ատեն Տանիմարքա ընդհանուր Սահմանադրու-

թիւնը ջնջեց Հոլլդայնի և Լաւէնպուրկի Դքսութեանց նկատմամբ. այնպէս հաստատեց միայն որ Տանիմարքայի Պատերազմի, Մովային Զօրութեան և Ելեւմտից պաշտօնեայք թագաւորին դիմաց պատասխանատու էին նաև Հոլլդայնի համար: Հոլլդայն մերժեց երեսփոխան ղրկելու Քոփէնհակի Խօսարանը, չուզեց ընդունիլ այս որոշողութիւնը բողոքելով որ Հոլլդայն և Ելէզվիկ Դքսութիւնք անբաժան էին մէկմէկէ: Ի գուր գերմանական Աւագածողովը ևս կրկին և կրկին ըսպառնացաւ այս բաժանման համար. Քոփէնհակի պաշտօնարանը Մարտի մէջ կը ծանուցանէր որ Ելէզվիկ մշտնջենաւորապէս կը միանար ընդ Տանիմարքայի նոյն Սահմանադրութեան ներքև և Հոլլդայնի ժողովոյն իշխանութիւնը կը չափաւորուէր: Այն ատեն Աւագածողովը սահմանեց ի գործ դնել ի բազմաց

Հոկտ. սպառնացածը և զինուց զօրութեամբ ձեռք բերել պահանջը ի նպաստ գերմանական ցեղերու:

3. Մահ Փրեդերիկոս Էի, Քրիստիան Թ. Փրեդերիկոս Աւկուսդէնպուրկցի:— Այս յուզեալ պայքարաց միջոց մեռաւ Փրեդերիկոս Է, և ըստ Լոնտրայի Դաշանց, յաթուր յաջորդեց իշխանն Հոլլդայն—Աւուքըսպուրկի՝ Քրիստիան Թ անուամբ: Մի և նոյն ատեն Աւկուսդէնպուրկի Դքսին անդրանիկը ծանոյց որ ինքը երբէք հաւանած չէր իւր հօրը յաջորդութեան իրաւունքէ հրաժարելուն և հրատարակութեամբ մը ինքզինքը հռչակեց Դուքս Փրեդերիկոս Ը Միացեալ Դքսութեանց Ելէզվիկ Հոլլդայնի և պատրաստուեցաւ իւր իրաւունքը պաշտպանելու ամենայն միջոցովք: Գերմանական ժողովուրդը, փոքր Պետութիւնք և Բրուսիա Պիզմարքի բերնով Աւկուսդէնպուրկի նրպաստաւոր երևցան ընդդէմ Տանիմարքայի: Խօսարաններու մէջ, քաղաքական ընկերութեանց, ժողովրդական գումարումներու մէջ կարծիք յայտնուեցաւ ամենայն միջոց գործածելու որ « Հիւսիսի եղբարք ստանան ինչ որ իրենց կը պատկանէր յիրաւանց, և թէ Դքսութիւնք ընդ բնիկ իշխանով դառնան առ հայրենիս որուն կը պատկանէին լեզուաւ և ծագմամբ, և

ուսկից բաժնուեր էին այսպէս տխուր եղանակաւ ¹ » : Եւ երբ Նոյեմբեր 18ին Քրիստիան թ հրատատակեց Նախորդին Սահմանադրութիւնը որով Շէզզիկ կը միանար անխզելի կապով Տանիմարքայի հետ, այն ատեն Ֆրանքֆորդի Աւագածողովը սահմանեց զինուք բռնել Դքսութիւնքը :

4. Զինուորական միջամտութիւն Բրուսիոյ եւ Աւստրիոյ . Տիրապետել Տաննէվէրքի եւ Շէզզիկի : — Արդէն Աւստրիա և Բրուսիա նոյն իմաստով ժանուցագիր յղեր էին առ Տանիմարքա և անմիջապէս 12,000 Սաքսոնք և Հանովրացիք ընդ հրամանատարութեամբ սաքսոն Հաբէ զօրավարին, մտան ի Հոլշտայն և ի Լաւէնպուրկ : Տանիմարքա առանց կռուոյ ետ քաշուեցաւ այդ Նահանգներէն, որոնք ըստ օրինաց կրնային պատկանել գերմանական Աւագածողովոյն իրաւանց . բայց պատրաստուեցաւ կռուիլ Շէզզիկի համար : 1864ի սկիզբը Դաշնակիցք արդէն զրաւեր էին զրովանդակ Հոլշտայն, ուր մտան Գերմանացի գունդերը և փութով հասաւ նաև Փրեդերիկոս Աւկուսդէնպուրկի Դուքսը, զոր Հոլշտայնի խորհրդարանը Նոյեմբեր 27ին արդէն Դուքս անուաներ էր և ժողովուրդը մեծ ցնծութեամբ ընդունեցաւ զինքը :

Տանիմարքացիք թէպէտ առանց դժուարութեան մը թողուցեր էին զՀոլշտայն, բայց պատրաստուած էին յետին արիւնը թափել Շէզզիկի համար, յոյս ունէին նաև որ գոնեայ քաղաքագիտօրէն իրենց նեցուկ պիպի ըլլար Անգղիա, որուն ժողովուրդը և Հասարակաց Խօսարանը կը բողոքէր Երկուց Պետութեանց այս միջամտութեան դէմ : Իսկ Աւստրիա և Բրուսիա կը պահանջէին որ ջնջուի Նոյեմբերի սահմանադրութիւնը, զոր հակառակ կը համարէին նախնագոյն Դաշանց և նոյն իսկ Լոնտրայի . և երբ իրենց պահանջը չընդունուեցաւ ի Քրիստիան թ . է, ազատ համարեցան իրենք զիրենք : Անգղիա առաջարկեց Եւրոպական Դեսպանածողովով մը՝ խնդիրը կարգադրելու, բայց Նարու-

1864

լէոնի շընդունելովը, այդ ալ տեղի շունեցաւ և Յու- նուարի մէջ աւստրիա-բրուսիական բանակը ութսնա- միայ Վրանկէլ մարաջախտին հրամանատարութեան ներքեւ մտաւ ի Հոլշդայն :

Մի և նոյն ժամանակ Պէոլիսու պաշտօնարանը կը ժանուցանէր ի Լոնտրա որ ինքը նպատակ շունէր Տանիմարքայի ամբողջութեանը դպչելու : Իսկ Գեր- մանական իշխանութիւնք զանազան զգացմանց մէջ էին : Սմանք արիւնահեղ պատերազմի մը առջև առ- նելու համար կ'ընդունէին Շլէզվիկ-Հոլշդայնի անուա- նական միութիւն մը ընդ Տանիմարքայի իշխանու- թեամբ :

Բրուսիացի բանակը Փետրուարի սկիզբները ընդ հրամանատարութեամբ Փրեյբրիկաս Կարոլոս իշխանին յառաջեց Քիէլի և Լքէոն Ֆէօստէի ճամբով դէպ ի Միսսանտէ, միշտ ճամբան կռուելով թշնամւոյն հետ : Աւստրիացի գունդերը որոց կը հրամայէր Կապլէնց զօրավարը, Հիւսիսէն յառաջելով յետ խիստ բաղ- խումներու ի Լոդդորֆ և յՕպէրսէք, հասան ի Տան- նէվէրքէ ձորը՝ որ Շլէզվիկի հարաւային կողմէն կը տատարածուի Արեւմուտքէն յԱրեւելս :

Տանիմարքացի ընդհանուր հրամանատարն Տէ Մէ- ցա խոհեմութիւն շհամարելով պատերազմ տալ այն- պիսի տեղւոյ մը վրայ, ուր երկու դաշնակից բանակք կրնային դիւրաւ միանալ իրեն դէմ, պատերազմի խոր- շուրդ գումարեց և սահմանուեցաւ թողուլ զՇլէզվիկ և զՏաննէվէրքէ և Փետրուարի 6ին քաշուեցաւ Տիւփ- փէլի ձորերուն մէջ, ուր եկած էր նաև Քրիստիան թագաւորը : Երկրորդ օրը ժամը 10ին Վրանկէլ՝ Բրու- սիոյ թագաժառանգ իշխանին հետ յաղթանակաւ մը- տաւ ի Շլէզվիկ ուր հաստատեց ճամբարը : Այն ա- տեն գերմանացի գունդերը սկսան զտանիմարքացի բա- նակը վանել զանազան կողմէ : Օվէրսիի քով մեծ ընդ- հարումն եղաւ ուր մեծ վնաս կրեցին աւստրիացի հե- ծեաք և որսորդք և հազիւ նոր եկած օգնութիւն- ներով երեկոյեան դէմ՝ աւստրիացիք կրցան յաղթու- թիւն մը տանիլ : Փետրուար 7ին տիրեցին Ֆլէնսպուր-

կի առանց ընդդիմութեան մը : Տանիմարքացի բանակին մաս մը այն ատեն սկսաւ ամրանալ Տիւփիէլի ձորերուն կռնակը և մաս մը ևս նահանջել դէպ ի Ֆրիտէրիչիա : Պատերազմը բոլորովին ի նպաստ էր Դաշնակցաց :

5. Յուզմունք ի Քոփէնհուսկէն . — Բանակը յԵրւթլանտ . Պատերազմ Տիւփիէլի : — Այս ձախողութեանց լուրերը հասնելով ի Քոփէնհակէն, զայրացուց զժողովուրդը և շատ հակառակ ցոյցեր եղան թէ արքայական ընտանեաց և թէ « ընդդ՛մ մատնչաց, որոնք կը գտնուէին ի բանակի » : Պաշտօնարանը ժողովրդեան զայրոյթը մեղմացնելու նպատակաւ, պաշտօնանկ ըրաւ Տէ Մէցա զօրավարը և թագաւորը հրովարտակով մը կը յորդորէր զբանակը ի միութիւն, մինչ թշնամին հայրենեաց հողոյն վրան էր : Գերմանական փոքր պետութիւնք ևս անհանդարտ սրտով կը դիտէին պատերազմը . չկարելով գուշակել Երկուց մեծ Պետութեանց միտքը, որոնք սկսեր էին յայտնուպէս հակառակ երևնալ Աւկուսդէնպուրկի դքսին : Միանգամայն Տանիմարքա իւր նաւահանգիստները պաշարման վիճակի մէջ դրած ըլլալով, վաճառականութեան խափանումը մեծ տաքնապի նիւթ էր փոքր իշխանութեանց :

Ի Տլէնսպուրկէ մարաջախտն Վրանկէլ որոշեց մի և նոյն միջոցին կռուիլ երկու կողմանէ : Բրուսիացի բանակը ընդ հրամանատարութեամբ թագաժառանգ իշխանին պէտք էր տիրել Տիւփիէլի և աւստրիացի գունդերը Բրուսիացի պահանորդաց հետ պիտի զրաւէին զՇլէզվիկ մինչև ի Քէօնիկսաւ : Ըստ այսմ որոշման թագաժառանգ իշխանը իւր ճամբարը փոխադրեց ի Կրավէնչգայն, և Տանիմարքայի նաւատորմիդը մանաւանդ Ռուֆ Քրոտէ նշանաւոր մարտանաւը ծեծելու համար թնդանօթներ հաստատեց Հոլնիսի բարձունքը, և յետ կամուրջ մը ձգելու Լքէնսոււնտի վրայ, բունեցին Պրուսպէր թերակղզին որով կրնային բաղխել Տիւփիէլի ձորերը թէ ի հիւսիսոյ և թէ ի

հարաւոյ: Միւս գունդերը կ'անցնէին Սահմանագլուխը և Փետրուար 18ին կը մտնէին ի Քոլտինկ, որ էր առաջին քաղաք Եուզլանտի վրայ:

Այս տիրապետութեան լուրը քաղաքական մեծ փոթորիկ յարոյց ի Լոնտրա. մինչև Բրուսիա ճարտարութեամբ բռնադատուեցաւ հրատարակելու որ Վրան կէլ իրեն տրուած հրահանգներէն անդին անցեր էր և պիտի յանդիմանուէր. բայց հիմայ որ մէկ մը հոն բռներ էին պարզ ռազմագիտական պատճառաւ, խօսք կուտար առաջ շանցնելու և Բրուսիա պատրաստ էր մասնակցելու այնքան ցանկացեալ Դեսպանատողովոյն ի Լոնտրա, միայն թէ Տանիմարքա ևս յանձն առնուր: Իսկ առանձինն Բրուսիա և Աւստրիա տեսնելով որ Տանիմարքական Խօսարանին մէջ Ազգային կուսակցութիւնը շնորհուրեցաւ Դեսպանատողովը՝ առաջարկեալ հիմանց վրայ, շարունակեց Մարտի մէջ Եուզլանտի գրաւումը: Մինչ Կապլէնց զօրաւոր կռուով մը կը վանէր զՏանիմարքացիս ի Հէրսէնս, տիրելով Վայլէի, Բրուսիացիք կը շուէին Տրէտերիչիայի վրայ: Երկու օր քաղաքը թնդանթակոծեցին ի զուր և երբ տեսան որ քաղաքը անձնատուր չըլլար, պաշարեցին զայն և թողուցին աւստրացի բանակին: Բրուսիացի գունդերը կը կեդրոնանային մեծ յարձակման մը համար ի Տիւֆֆէլ ուր արդէն այլ և այլ գուպարածք եղեր էին առանց արդեանց: Տանիմարքացիք ի Տիւֆֆէլ կ'ուզէին պայծառացնել իրենց զինուորական պատիւը ազարտեալ ի Տաննէվէրքէ: Անդադար կ'աշխատէին նոր բերդեր յարուցանելու և Ռոլֆ Քրաքէ մարտանաւը մեծամեծ վնասներ կուտար թշնամւոյն որ ծովեզրը բռնած էր: Բրուսիացի գունդերը կը տագնապէին եղանակին ցրտութեան և անհարթութեան պատճառաւ. սկսեր էին պակսիլ նաև զգետտք և պաշարք: Սահմանուեցաւ ընդհանուր յարձակումն տալ: Բրուսիացիք Մարտ 15էն մինչև 28 ունեցեր էին փոքր յաջողութիւններ և մինչև փախուցեր էին Ռոլֆ Քրաքէ և ուրիշ մարտանաւք: Մարտ 28ին սկսաւ բուն յարձակումը որ տևեց երեք եօթնեակ, յորս Բրու-

սիացիք կը յառաջէին մեծ ընդդիմութեամբ և իւրաքանչիւր գրաւած տեղերնին ամրացնելով: Վերջապէս Բրուսիացիք հասան այն վեց ձորերուն առջև որոնք փոսերով, ամբարտակներով և զինուք պաշտպանեալ էին: Ապրիլ 16ին ընդհանուր յարձակումը եղաւ, ահաւոր երկուց ազգաց Պատմութեան մէջ ալ: Երեկոյեան Տիւփփէլի ձորերը Բրուսիացուց ձեռքն էին և Տանիմարքացիք վանուեր էին մինչև Ալսէն կղզին:

Երկու կողմն ալ դիւցազնաբար կռուեր էր: Բրուսիացուց կողմէն 1200 զինուորք ընկեր էին ընդ մեռեալ և ընդ վիրաւոր յորս 70 սպայք: Նոյնքան բազմութիւն և աւելի կորսնցուցին նաև Տանիմարքացիք. դարձեալ շատ զէնք և հրանօթք: Բայց Բրուսիացուց գոհութիւնը մեծ էր այսպիսի չքեղ յաղթութեան մը համար: Գուլիէլմոս թագաւորը սնձամբ պատերազմին դաշտը եկաւ յայտնելու բանակին իւր գոհութիւնը: Այն օրը Բրուսիոյ համար առաջին օրն էր իւր Մեծութեան՝ Գարուս երկրորդ կիսհարիւրեակին մէջ:

Տիւփփէլի անկմամբ յայտնի էր պատերազմին ելքը: Տանիմարքացիք թողուցին ցամաքը և հոգերնին եղաւ պաշտպանել կղզիները, նոյն իսկ գճրէտէրիչիա թողուցին դեռ թշնամին յարձակումն չփորձած, որով պատերազմը վերջացած էր թերակղզւոյն մէջ: Վրանկէլ ճրէտէրիչիայի բերդերը քանդելէն վերջը, յառաջեց երկու գունդերով ի Հիւսիս և բոնեց Էօլպորկօ, Վիպօրկօ և Աքիվէ քաղաքները: Երկուսն ալ իրեն համար իրրև գրաւ մը կը համարուէր պատերազմի մէջ գերմանական գերեալ նաւերու փոխարէն: Երբ Լոնտրայի Դեսպանաժողովը զինադադարումն հաստատեց Մայիս 12ին, Գերմանացուց ձեռքն էր թերակղզին մինչև ի Լիմֆօրտ:

6. Տանիմարքացիք կը յաղթեն ծովու վրայ: — Տանիմարքացիք ծովու վրայ ունեցան այլ և այլ յաջողութիւններ: Աւստրիացի նաւատորմիղ մը Միջերկրականէն կուգար ի Հիւսիսային ծով: Հէլկոլանտի մօտ դիմաց դիմաց ելան աւստրիացի և տանիմարքացի նաւատորմիղք և մոլեգին կռիւ մը ծագեցաւ,

յորում երկու աւստրիական մարտանաւք (Շվարցէմպէրկ և Ռատէցքի) մեծապէս շլատուեցան և կորսընցուցին նաւաստիներէն մեծ մաս մը :

7. Դեսպանաժողով ի Լոնտրա : — Այս յետին կռիւներուն ժամանակ, արդէն Պետուժեանց դեսպանք ժողուեր էին ի Լոնտրա որոնք նախ հրամայեր էին Զինադադարումը ամուսան համար, ապա 15 օրուան ևս համար : Բայց տեսութիւնք բոլորովին տարբեր էին և մէկմէկու հակառակք : Անգղիա, Շուէտ և Տանիմարքա կը պաշտպանէին նախկին Լոնտրայի սահմանեալքը զորս կը մերժէին Բրուսիա և Աւստրիա :

Յետինքս յանձն կ'առնուին որ Շլէզվիկ-Հոլշթայն տարբեր բոլորովին սահմանադրական ինքնավարութեամբ մնան Տանիմարքայի թագաւորին անձնական իշխանութեան ներքև, և սակայն զայդ յանձն չէր առնուր գերմանական Աւագաժողովը, որ կ'ուզէր Դքսութիւնքը բաժնել Տանիմարքայէն և առանձին իշխանութեամբ յարել գերմանական Դաշնակցութեան : Խօսուեցաւ նաև բաժանումն ընել ըստ լեզուաց, Տանիմարքայի կամ գերմանական :

Պէտք սաքսոն նուիրակը առաջարկեց ժողովրդախումբքուէարկութիւնմը ընելով հարցնել Դքսութեանց կարծիքը՝ զայս պաշտպանեց նաև Գաղղիոյ կայսրը : Աւստրիա, Բրուսիա զայդ կ'ընդուէին Հոլշթայնի համար բայց ոչ Շլէզվիկի : Իսկ Տանիմարքա բնաւ չէր ընդուներ, յուսալով մանաւանդ Անգղիոյ վրայ :

Տանիմարքացիք պատերազմին սկիզբէն այս ունայն յուսով խարուեր էին : Սակայն ոչ կալլէսի իշխանուհին Աղեքսանդրա՝ դուստր Քրիստիան Թի, որ մեծ եռանդեամբ կ'աշխատէր իւր հօրը և Ազգին համար, ոչ խօսարանք, ոչ բուռն տպագրութիւնք և ժողովակք համոզեցին զՓալմէրսդոն-Ռուսսըլ պաշտօնարանը ճշմարիտ հետևողք անգղիական աւանդութեան, զինուք միջամտելու պատերազմի մը մէջ, յորում իրենց սեպական շահ մը չէին տեսներ : Դեսպանաժողովը արդիւնք մը չունեցաւ և ցրուեցաւ Յունիս 25ին :

8. Իշխանն Փրեդերիկոս Կարոլոս . Առումն Աստնի : — Անմիջապէս թշնամութիւնք սկսան և Յունիս 28—29ին գիշերը իշխանն Փրեդերիկոս Գուլիէլմոս որ հրամանատար անուանուեր էր Վրանկէլ մարաշխախին տեղ , բաղխեց զԱլսէն , ամրացեալ և զօրաւոր Տիւփիէլի նման : Գիշերուան մէջ Տանիմարքացոց ահաւոր կրակին ներքև գերմանացի գունդերը նաւարկեցին Ալսէնի ջրանցքին մէջ և հլան յՈւլքէպիւլ : Դեռ ուրիշ գունդեր ալ հասան փութով : Տանիմարքացիք յետ մեծամեծ կորուստներու , կրակ տուին Սոնաէրպուրկ զղեակին և դիմեցին Քէրէնիս թերակզին որ ամրացեալ և անառիկ կը համարուէր : Բայց հոն ալ յուսահատած անցան Ֆինլանտիա կղզին և Յուլիս լին Բրուսիացիք առանց զժուարութեան մտան ի Քէտէնիս , որով և տիրեցին բովանդակ Ալսէն թերակղզւոյն , ուր գտան բազում պէնք , հրանօթք և պաշարք : Այն ատեն սանիմարքացի Հէկէրման Լինսէնքրոնէ զօրավարը որ 5000 զինուորօք պիտի պաշտպանէր զԵութլանտ , թողուց ցամաք երկիրը , Չելանտիա քաշուելու համար զօրօք և հրանօթովք : Որով Բրուսիացիք առանց զժուարութեան յառաջեցին ի Աքակէն , մինչ Աւստրիացիք կը տիրէին Նիքոպլինկի , Մորսէօ կղզւոյն , նաև արևմտեան Յրիչիա կղզւոյն և ուրիշ կղզիներու , գերի բռնելով ևս նաւերով և նաւաստեօք անուանի նաւապետն Համմէր , ոխերիմ ատեցող Գերմանացոց :

9. Դաշինք Վեննայի : — Այն ատեն միայն Քրիստիան Թ համոզուեցաւ որ ի զօր էր օգնութիւն մը յուսալ յԱնգղիոյ և սահմանեց խաղաղութիւնը դաշնախօսել ուղղակի Աւստրիոյ և Բրուսիոյ հետ : Յուլիս 20ին թշնամութիւնք դադրեցան թէ ի ծովու թէ ի ցամաքի , առ ժամս ի Վեննա սկսան բանակցութիւնք , յորս չկար գերմանական Աւագաժողովը : Նա մանաւանդ իշխանն Փրեդերիկոս Կորոլոս Բրուսիոյ՝ բռնադատեր էր Դաշնակցութեան Հաքէ զօրավարը թողլու զՌէնտսպուրկ բերդը : Որով մեծ պաղութիւն ծնաւ ընդ Դաշնակցութիւն և ընդ Բրուսիա : Աւստրիա և

Բրուսիա բնաւ կարևորութիւն մը շտուին Աւկուսդէն-պուրկի և Օլտէնպուրկի Դքսերուն, որոնք ցեղաբանութեամբ կը ցուցնէին իրենց իրաւունքը Դքսութեանց վրայ: Հաշտութեան նախագիծք ստորագրուեցան Օգոստոս 1ին: Յետոյ կատարելապէս Վեննայի հաշտութիւնը եղաւ Հոկտեմբեր 30ին, ըստ որում Տանիմարքա կը հրաժարէր իւր իրաւունքներէն Լաւէնպուրկի, Շլէզվիկ և Հոլշտայնի վրայ: Կը կորսնցնէր ևս Հիւսիսային ծովուն կղզիները և Պալթիկի մէջ Ֆէհմէրնեանի և Ալսէն: Պիտի վճարէր պատերազմի ծախք նաև գերեալ նաւուց փնասները: Մինչ ամբողջ Տանիմարքա 3 միլիոն բնակիչ կը համարուէր, կը կորսնցնէր մէկ միլիոն:

Աւստրիա և Բրուսիա յետ բաժնելու Դքսութիւնքը ի Տանիմարքայէ տիրեցին հոն միաբանութեամբ տարի մը. ժողովրդէն պատերազմական ահաւոր տուրքեր քաղելով: Այս ի Կալչայն դաշնադրութեամբ մը մէջերնին բաժնեցին: Բրուսիա մշտնջենաւորապէս կը ստանար զԼաւէնպուրկ, պարտական մնալով դրամական գումարի մը առ Աւստրիա. իրեն կը տրուէին դարձեալ Քիէլ նաւահանգիստը և Ռէնտսպուրկ քաղաքը և առ ժամս պիտի կառավարէր նաև զՇլէզվիկ: Իսկ Աւստրիա առ ժամս զՀոլշտայն պիտի մատակարարէր:

Բայց Երկուց Դքսութեանց Խօսարանք բողոքեցին մէկմէկէ բաժնուելուն վրայ, կոչեցին նորէն Աւկուսդէնպուրկի Դուքսը և Ֆրանքֆորդի Աւագաժողովոյն փոքր Պետութիւնք, խիթալով Բրուսիոյ Մեծութենէն, Դքսութեանց կողմը թռնեցին: Բրուսիա վանեց զԱւկուսդէնպուրկի Դուքսը և սպառնացաւ Աւագաժողովոյն, խնդիրը քարշ բերելով այսպէս մինչև 1866, յորում պիտի տեսնենք զԲրուսիա վանել զԱւստրիացիս ևս ի Հոլշտայնէ:

Տանիմարքայի պատերազմին մէջ Բրուսիոյ բռնած քաղաքականութիւնը, յայտնապէս յերևան հանեց իւր պաշտօնէին կոմս Պիլմարքի սուր միտքը և ճարտարութիւնը: Եւ ամենայն արթուն քաղաքագէտ ըմբռնեց

որ այս յառաջարան մ'էր իւր քաղաքագիտական զօրաւոր կենաց և սկզբնական հրահանգ մը զինուորական հանճարներու, որոց յետոյ հարկ էր փնտռել մեծագոյն ասպարէզ մը: Բրուսիա իւր այս մեծանալու առաջին քայլին իրենն օգնական ունեցեր էր զԱւստրիա և անխռով դիտող մը զՔաղղիա. որոց դէմ յետոյ Բրուսիա պիտի դարձնէր իւր ոյժերը:

Իսկ Տանիմարքա պատերազմական այսպիսի ձախողանքէ մը վերջը, կ'ամիսփէր իր բովանդակ ոյժը ներքին կենսական բարեկարգութեանց, վաճառականութեան և ուսումնական յառաջադիմութեանց համար: Շատ տարիներ պիտի չանցնէին որ Տանիմարքայի թագաւորական Տունը, ընդհանուր Եւրոպիոյ համակրելի և յարգելի Տուն մը պիտի ըլլար և Պետութիւնք պիտի մրցէին խնամութիւն հաստատել այդպիսի Տան մը հետ:



Անգղիոյ Ներքին վարչութիւնը և Արտաքին քաղաքականութիւնը. — 2. Ճոն Ռոսսելի առաջարկած օրէնքները. — Ազլան դական նեռագրի և Սուէզի բացման խնդիրը. — 3. Արբու՛Նաւը ի Քանթոն. — 4. Որսիների պայթուցիկ գնդակք. — 5. Յոնիական կղզիք. — 6. Կլատսոն Նուիրակ Արտասովոր ի Յոնիական կղզիս. — 7. Անգղիա կը թողու ղՅոնիական կղզիս. — 8. Անգղիա և Պարսկաստան. — 9. ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Տժգոնութիւն բնիկ ժողովրդոց. — 10. Սիփայից ապստամբութիւնը. — 11. Անգղիացիք կը տիրեն Տէլլիի և Գաւնփորի — Վրէժխնդրութիւնք. — 12. Ընկնունն ապստամբութեան. — 15. Հրովարտակ վասն Հոնդկաստանի. փոխաբայութիւն:

1. Անգղիոյ Ներքին վարչութիւնը եւ Արտաքին քաղաքականութիւնը: — Անգղիա փալմէրսդոնի ազդեցութեամբ սիրով յօժարեր էր բարեկամութեան մը Նաբոլէոն Գի հետ, որով և Դաշնակցութեան Գաղղիոյ հետ բազում խնդրոց մէջ թէ յԵւրոպա, թէ յԱրևելս և թէ ի ծայր Արևելից: Եւ որովհետև իւր պատմութիւնը իստոն է ուրիշ պատմական դիպաց հետ, զորս արդէն տեսանք և կամ պիտի տեսնենք, աւելորդ կը համարիմ համառօտիւ իսկ զանոնք կրկնել: Իսկ ներքին մեծամեծ պատահարք կամ բուռն պայքարք գրեաթէ դադրած էին դարուս կէսին միջոցները և կամ ինչպէս կ'ըսէ անգղիացի պատմագիրն Մըք Քարթէյ « Կարծես Ղրիմու պատերազմէն վերջը թըմբութիւն մը ինկած էր Անգղիոյ Ներքին գործոց վերայ »: Սակայն քան զթմբրութիւն, պէտք ենք կոչել

ժամանակ Ներքին Հանդարտութեան, ծնունդ անշուշտ խղճիւ հաւատարմութեան թագոււոյ մը առ Սահմանադրական կարգ, որով Անգղիա ոչ կամք այլ Սահմանադրութիւնը թագաւորելով, միացուց զվարչութիւնը ժողովրդեան հետ սիրոյ և վստահութեան փոփոխակի կապերով, որով չծագեցան յուզմունք և յանկարծական այլայլութիւնք:

Խօսարանական կամքը վարչութեան անձինքը կը զրկէր յորինական ընդդիմակացութիւն, ընդդիմակացքը կոչելով յիշխանութիւն հանդարտ եղանակաւ մը և առանց յուզման: Իւրաքանչիւր կուսակցութիւն կը մրցէր ոչ ի կրից այլ Հայրենեաց լաւագոյն ծառայելու փափաքէն: Եթէ կար կէտ մը յորում Անգղիա չյաջողեցաւ նոյն իսկ այս հանդարտութեան մէջ ալ, իռլանտական ինդիրն էր. և Իռլանտա կը համարէր հեծել ընդ ծանր լծով, բռնութիւն ամբաստանելով Անգղիոյ վարմունքը իրեն հետ, և մինչ Մըքաւլէի ըսածին պէս « Անգղիոյ Պատմութիւնն է մասնաւորապէս Պատմութիւն Յառաջադիմութեան » մինչ իւր պաշտօնարանք ըլլան Թորթ ինչպէս Լորտ Տէրպի, Մալմէսպըրի, Տիգրաէլի, ըլլան Վիկերէն ինչպէս Փալմէրստոն և ճոն Ռուսէլ, ըլլան երկուց կուսակցութեանց դաշնակցութենէ մը ինչպէս Լորտ Ապըրտին և Կլատսդոն, ամէնն ալ վեհանձն զգացմամբ անխտիր օտար ազգաց և ժողովրդոց ազատութեան համար կը մրցէին, չկրցան գոհացնել և հաստատուն վիճակ մը ձեւակերպել Իռլանտայի համար, թերևս և նոցա չափէն աւելի ձգտումներէն:

Այս էր Անգղիոյ Ներքին վարչութեան պատկերը. իսկ Արտաքին քաղաքագիտութեան մէջ ընդհանուր ամբաստանութեան նիւթ եղած է իր Անձնական շահասիրութիւնը կամ լաւ ևս ըսենք նոր բառով մը իր Եստիքայինը, որով միշտ առարկայ անվստահութեան նոյն իսկ իւր Դաշնակցաց, որոնք ամէն անգղիական վեհանձնութեան և անձնանուիրման մէջ անպատճառ առանին օգուտ մը կ'ուզէին տեսնել Անգղիոյ համար: Թերևս այս ևս ամբաստանութիւնը քան զչափն աւելի

յիշուած: Անգղիա ուր որ կարող էր օգնել առանց իւր փնասունն և զոհողութեան, դիմեց ինքնայօժար: Եթէ Գաղթականութեանց Պատմութեան մէջ ընդերկար անհոգ երեցաւ և միայն անոնցմէ եկած նիւթական շահը տեսակէտ առաւ, բայց և յետ պատահարաց անդէն մտուց պէտք եղած բարւոյքմունք:

2. Ճոն Ռուսսըլի աւաջարկած օրէնքները — Ատլանդական հեռագրի եւ Սուէզի ջրանցքի բացման խնդիրը: — Ճոն Ռուսսըլ Բարիզու Դաշնաժողովէն վերջը դաստիարակութեան նոր օրէնք մը առաջարկեց, որով ընդհանուր Դաստիարակութիւնը անգղիական սեպհական կնիք պիտի ունենար:

Բայց որովհետև ըստ այսմ օրինաց Տէրութիւնը լայնարձակ միջամտութիւն կ'ունենար Դաստիարակութեան մէջ, և կը խափանուէին Ազաս վարժարանք, այն պատճառաւ կրօնականք մեծապէս ընդդիմացան այս առաջարկութեան և օրէնքը անընդունելի եղաւ:

Մերժուեցաւ ևս ուրիշ առաջարկ մը որով Հրեայք անխտիր պիտի ընդունուէին ի խօսարանի:

1856 աշնան Սայրըս Ֆիլտ ամերիկացի յանդուգըն և հնարիմաց վաճառականը Անգղիա եկաւ առաջարկելու ելեկտրական հեռագիր մը Ատլանդական ծովուն մէջէն, այսպէս կապելով զԱնգղիա Ամերիկայի հետ:

Լիվուրիոլի վաճառականութեան Ատենին մէջ գիտուն և շքեղ ճառախօսութիւն մը ըրաւ, բացատրելով իւր աստութեանց հնարաւորութիւնը: Սակայն Անգղիացիք մտիկ ըրին իրր պարզ հետաքրքրութիւն մը:

Իրմէ աւելի նուազ ընդունելութիւն գտաւ աշխարհագէտ երկրաչափն Փէրսինանտ տը Լըսէփս, որ և նա եկաւ յԱնգղիա բացատրելու իւր գաղափարը Սուէզի պարանոցի բացման նկատմամբ: Առաջարկութիւնը շատ ցրտութեամբ ընդունուեցաւ թէ յերկրաչափից թէ ի դրամատեսարց և թէ ի քաղաքագիտաց: Երկրաչափք անկարելի կը համարէին այդ պեղումը և թէ բացուէր, յետոյ անկարելի էր պահել: Դրամատեսարք կ'ըսէին որ երբէք եկած օգուտը չէ կարող վճարել

դրամոյն շահը : Իսկ քաղաքագէտք այդ ջրանցքը սպառնալիք մը կը համարէին անգղիական շահերու : Լորտ Փալմէրսդոն յայտնապէս ծանոյց Լըսէփսի որ Անգղիոյ Տէրութիւնը հակառակ էր այդ ջրանցքին , որով դիւրաւ կրնար բաժնուիլ Եգիպտոսը Տաճկաստանէն և զՀնդկաստան վտանգաւոր դրից մէջ կը դնէր :

Սակայն ոչ Ֆիլտ և ոչ Լըսէփս դիւրաւ յուսահատողք էին Անգղիոյ ժողովրդեան ցուրտ ընդունելութենէն և կամ Փալմէրսդոնի ընդդիմութենէն , և ապա զայ արդիւնքը պսակեց իրենց հանճարեղ և հաշուեալ ձարտարութիւնը :

3. « Արրով » նաւը ի Ք սնդոն : — Անգղիական վարչութիւնը և Խօսարանը 1856ի մէջ ևս ունեցաւ խնդիր մը նման երբեմն Տօն Փաշիֆիքոյի խնդրոյն և որ անգղիական Խօսարանական պայքարաց մէջ մնացած է Աբրով Լորչայէ անուամբ : Լորչայէ Փորթուգալցիք կը կոչէին Փայտաշէն փոքրիկ նաւերը և Արրով այդպիսի նաւ մ'էր շինեալ ի Չինաստան , առաջնորդեալ ի Չինաց , որ սակայն անգղիական դրօշակ կրած ժամանակ , բռնուեր և զբաւուեր էր Քանթոնի Ե՛հ կուսակալէն :

Անգղիոյ հիւպատը ի Քանթոն բողոքեց այս գրաման վրայ և պահանջեց որ նաւաստիները ազատ ձրգուին . և զրեց ի Հոնկ-Քոնկ Անգղիոյ անդ նստող լիակատար իշխանութեամբ պաշտօնէին , որ էր Սիր ձոն Պովրինկ :

Յետինս , ըստ ասելոյ ժամանակին լրագրոց , թէպէտ գիտնական անձ , սակայն սիրող անուն մը ստանալու , գործը մեծցուց շարառաչալից եղանակաւ մը և պահանջեց որ Չինաց իշխանութիւնը ոչ միայն ազատ ձգէ կալանաւորեալ անձինքը , այլ և ներումն խնդրէ պաշտօնապէս որ ուրիշ անգամ չպատահեր այդպիսի դէպք մը : Ե՛հ յետս զրկեց նաւաստիները , բայց առանց ներումն խնդրելու , պնդելով որ Արրով նաւը չինացի էր՝ բնաւ վերաբերութիւն մը չունենալով Անգղիացուոց հետ . դարձեալ Արրով թէպէտ ընդուներ էր ժամանակաւոր արտօնութիւն մը անգղիացի դրօշ կրելու , բայց

այդ իրաւանց ժամանակը լրացեալ էր և չէր նորոգուած, զոր քաջ գիտէր նոյն իսկ անգղիացի պաշտօնեայն: Սակայն Սիր Ճոն Պովրինկ իւր պահանջած ներուժը չընդունելով, պատերազմ հրատարակեց Չինաստանի և հրամայեց Սիմուր ծովակալի նաւարածնին որ կը գտնուէր շինական ջրոց մէջ, ոմբակոծելու զՔանթոն: Հոկտեմբեր 23էն մինչև Նոյեմբեր 13 նաւերը պատրաստք գտնուեցան, որոնք սկսան գնդակք և կրակ թափել թէ բերդորէից, և թէ քաղաքին վրայ: Չինացի նաւերը առնուեցան և փճացան, Քանթոնի արուարձանք կործանուեցան և կրակը ճարակեցաւ քաղքին մէջ, թող մեռելոց բազմութիւնը: Այս ամենը Արրով լորչայի դրօշակին համար: Սիր Ճոն Պովրինկ յարմար ժամանակ դատեցաւ այս առթով ձեռք բերելու Անգղիոյ դեսպանաց ժամանակաւ ունեցած քանի մը իրաւունքները, իրր մեծամեծ օգուտներ:

1859 Սակայն այս լուրերը ունեցան իրենց յուզիչ տպաւորութիւնքը յԱնգղիա: Փետրուար 24ին Լորտ Տէրպի՝ Լորտերու Խօսարանին մէջ առաջարկեց դատապարտել Անգղիոյ իշխանութեան գործածը ի Չինաստան և Լորտ Լայնալըրոզ զօրաւոր բանախօսութեամբ բացատրեց Սիր Ճոն Պովրինկի ապօրինաւոր վարմունքը. « Արրով, կըսէր, շինական նաւ մ'էր շինուած ի Չինաստան և վարեալ ի Չինաց »:

Բայց Լորտ Փալմէրսդոն հոռովմէական պահանջով մը պատասխանեց որ խնդիրը այն չէր թէ « Արրով ապօրինաւոր կերպով կը կրէր Անգղիոյ դրօշակը, այլ թէ շինական իշխանութեան բնաւ չէր պատկաներ զայդ քննել. բաւական էր որ դրօշակը անգղիական էր, որուն դիմաց հարկ էր պատկառիլ »:

Փալմէրսդոնի խօսից վրայ Լորտերուն Խօսարանը մերժեց Լորտ Տէրպիի ամբաստանութեան առաջարկը 146 քուէիւք ընդդէմ 110 քուէից: Լորտերուն Խօսարանի վիճարանութիւններէն վերջը նոյն խնդիրը ուրիշ ձևով մը ներկայացուելով Հասարակաց Խօսարանին մէջ ի Գոպտընէ, որուն համաձայն գտնուեցան նաև ամբաստանելու զվարչութիւնը Կլատսդոն, Տիգրաէլի

և մարքիզն Սալզպըրի, Պաշտօնարանը միայն 16 քը-
ւէից մեծամասնութիւն ունեցաւ :

Քիչ օր վերջը Լորտ Փալմէրսդոն կ'իմացնէր Խօ-
սարանին ցրուումը, որպէս զի նոր ընտրութեամբ ի-
մանայ իւր Հայրենեաց կարծիքը :

Նոր ընտրութեանց մէջ յաղթեց նորէն Լորտ Փալ-
մէրսդոն և վարչութեան գլուխ անցաւ նոր ուժով մը :
Այն միջոցներուն Պարսկաստանի փոքրիկ պատերազմն
ալ յաջողութեամբ և յաղթութեամբ վերջանալով աւե-
լի փայլ մը տուաւ իր քաղաքականութեան : Շահեցաւ
նաև զեկեղեցականս, Եպիսկոպոսաց թոշակը բարձ-
րացնելով, առանց փոյթ ընելու որ սոյս պատճառաւ
իւր հակառակորդաց շատ մը ծաղրածութեանց նիւթ
կ'ըլլար : Խօսարանին բացման թագուհին կ'իմացնէր
որ Չինաստանի խնդիրը լինցած չըլլալով « Նորին
վեհափառութիւնը հոն կը դրկէր լիազօր իշխանու-
թեամբ դեսպան մը, չըջապատեալ նաւային և զին-
ուորական ուժով, որոնք օգնեն թէ պարագայն ներ-
կայանայ » :

4. Օրսինլի պայթուցիկ գնդակը : — Իսկ թէ Փալ-
մէրսդոն ինչ ընթացք բռնեց Օրսինլի պայթուցիկ գըն-
դակաց խնդրոյն մէջ, արդէն տեսանք գաղղիական
պատմութեան նոյն իսկ Գաւոյն պատմութեան մէջ :
Փալմէրսդոն պատժական նոր օրէնքով մը ընդդէմ
գաւադիրներու ուզեր էր հաճել Գաղղիոյ վարչութիւ-
նը, որ յայտնապէս պահանջեր էր յԱնգղիոյ շատ մը
ապաւինելոց արտաքսումը : Օրէնքը առաջին ընթերց-
ման անցեր էր, բայց մերժուեցաւ երկրորդ ընթերց-
ման 234 քուէով ընդդէմ 215 քուէից : Հակառակ
խօսեր էին նաև Կլատսդոն և Տիզրաէլի : Փալմէրս-
դոն ստիպուեցաւ հրատարիլ պաշտօնէութիւնէ, բայց
տարի մը վերջը նոր ընտրութիւնք նորէն զինքը կու-
չեցին վարչութեան գլուխ : Օրսինլի խնդրով կը հա-
մարուէր որ Գաղղիոյ և Անգղիոյ մէջ անվրէպ մեծ
հակառակութիւն պիտի ծագի և արդէն եւրոպական
լրագիրք յայտնապէս կը համարէին տեսնել ահաւոր
պատերազմ մը, երբ յանկարծ Գաղղիա վալկաքիի

բերնով փոխեց իր պահանջմանց ձևը: Ամենայն ինչ հանդարտեցաւ և Անգղիա փոխարինումն ստացած համարուեցաւ:

5. Յոնիական կղզիք: — Վեննայի դաշնաժողովը յամին 1814, Յոնիական եօթը կղզիքը առանձին Հասարակապետութիւն մը կազմեր էր, յանձնելով սակայն Մեծին Բրիտանիոյ հովանաւորութեան, որ իրաւունք ունէր հոն պահապան զօրք պահելու: Անգղիա կը շրջէր հոն Լորտ տեղապահ մը իբր նուիրակ, որ ընդհանրապէս զինուորական մ'էր, և որ կը վարէր միանգամայն Զինուորական հրամանատարի և Քաղաքական կուսակալի պաշտօնը: Փոքրիկ Հասարակապետութիւնը ունէր իւր ծերակոյտը վեց անձանց մէ կազմեալ և Օրէնսդիր ժողովք մը ի քառասուն անձանց: Յետ միանգամ կատարուելու յոյն ազգին անկախութիւնը և առանձին թագաւորութիւնը, բնական էր որ Յոնիական կղզիք ալ փափագէին կերպով մը կապուիլ իրենց ազգակցաց հետ. բայց և կ'ըմբռնէին որ առ այդ անհնար էր Կատարական ճամբայ մը բռնել զոր Մեծին Բրիտանիոյ զօրութիւնը և մարտանաւք կարող էին անմիջապէս ճնշել: Այսու հանդերձ յայտնապէս կը ցուցնէին իրենց խօսից և գրութեանց մէջ մեծ աժգոհութիւննին անգղիացի կուսակալէ և բանակէ կառավարուելնուն համար, որոնք որչափ որ ալ լաւ ըլլային, վերջապէս իրենց համար օտարք էին: Ընդ հակառակն իբրև աւելի գրգիռ մը կը տեսնէին մեծ համակրանք մը և ցաւակցութիւն իրենց դրացի ազգակիցներէ, որոնք ազատ ինքնիշխանութեամբ կ'ապրէին, և չէին ըմբռներ պատճառ մը որով իրենք զատուած պիտի մնան անոնցմէ: Զանազան անգամ Եօթը կղզիք աղերս և բողոք ըրած էին առ Պետութիւնս, թէ ոչ միութիւն մը բովանդակապէս, գոնեայ լաւագոյն դիրք մը և զօր մը նկատմամբ առ Յունական թագաւորութիւնը: Այս զգացմունքները յայտնապէս յերևան եկան մանաւանդ յամին 1848, երբ Լորտ Սիդըն ազատամիտ յունասէրը նուիրակ էր Եօթն կղզեաց:

Անգղիոյ մէջ լրագիրք և պաշտօնական մարմինք կը գարմանային ի սկզբան Յոնիական կղզեաց « այս ապերախտութեան » վրայ : Անգղիոյ Հասարակաց Խօսարանին մէջ առաջարկուեցաւ մինչև որ Եօթն կըղզիք բացարձակ միանան Անգղիոյ հետ, երեսփոխանք իսկ ղրկելով, և ասոր դէմ յամին 1857 Յուլիս 2ի բողոքեց Եօթն կղզեաց Խորհրդարանը, առաջարկութեամբ Լոմպարտոս ճարտասան երեսփոխանին : Բայց որքան ազատական կուսակցութիւնը յառաջեց յԱնգղիա, նոյնքան բազմացան համակրանք առ Յոնիական կղզիս :

6. Կլատտոզոն Նուիրակ Արտասովոր ի Յոնիական կղզիս : — Սիր Պիուլվըր Լայդըն կարևոր դատեցաւ արտասովոր նուիրակ մը ղրկել իբր այցելու կըղզեաց և քննել տրտունջնին և առ այս յարմար դատեցաւ « Հոմերական Գպրոցի նշանաւոր աշակերտ մը » զԿլատտոզոն : Ընտրութիւնը առ հասարակ հասնելի եղաւ և Կլատտոզոն 1858ի Նոյեմբերին հասաւ ի Քորֆու : Սակայն իր մուտքը շատ վեր էր քան պարզ այցելուի մը կամ նուիրակի, և կատարեալ յաղթանակի կերպարանք ունէր : Ամէն կողմէն ընթացած էին ընդառաջելու ոչ թէ Մեծին Բրիտանիոյ բարձրապատիւ Նուիրակին այլ « Հեղինասէր Կլատտոզոնի որ եկեր էր ազատելու զկղզիս » : Ի զուր ինքը ջանաց համոզելու որ այդպիսի պաշտօն մը չունէր և թէ եկեր էր « Ժողովրդեան զգացումները հաշտեցնելու անգղիական Հովանաւորութեան հետ » . Ժողովուրդը այդ մասին ունկնդիր չէր ուզեր ըլլալ և զԿլատտոզոն կը համարէր կարապետ մը Յունական Թագաւորութեան հետ միանալու :

Փութով հասան յԱնգղիա Կլատտոզոնի յաղթական ուղևորութեան լուրերը և իւր այցելութիւնը յԱթէնս : Պահպանողականք ամբաստանութիւն յարուցին ընդդէմ Կլատտոզոնի որ ինքը խրախուսեր էր Յոնիական կղզեաց պահանջները համամիտ երևնալով անոնց : Անգղիոյ մեծ մաս մը կը պնդէր, և իրաւամբ, որ երբէք այդ կղզիները Յունական Թագաւորութեան ներքև

չեն կարող այնպէս լաւ մատակարարուիլ ինչպէս Մեծին Բրիտանիոյ հովանաւորութեան ներքեւ, նա մանաւանդ որ այն ժամանակին Լտմոնտ Ապուի Յունաստանի վերաբերեալ գրութիւնք ընտիր գաղափար մը չէին տուած Նոր Թագաւորութեան մատակարարութեան վրայ: Յոնիսկան կղզեաց բնակիչք համաձայն էին այս գատողութեան, բայց չէին կարող ըմբռնել որ ինչո՞ւ Եւրոպական Պետութեանց Դաշնաժողով մը բաժնէ զիրենք իրենց եղբայրներէն, և արդեօք իրենք ի՞նչ վերաբերութիւն ունէին Անգղիոյ հետ: Կլատըստս ինչ կանչուեցաւ և իրեն տեղ ուրիշ բարձր նուիրակ մը ղրկուեցաւ որուն պատուէր տրուած էր հանդարտեցնել յուզեալ ժողովուրդը և ջանալ ամրապնդել Մեծին Բրիտանիոյ հովանաւորութեան իրաւունքը:

7. Անգղիա կը թողու զՅոնիական կղզիս: — Սակայն յԱնգղիա ևս յառաջել սկսեր էր այն գաղափարը թէ ինչ օգուտ ունի Մեծին Բրիտանիոյ այդպիսի օտար և տժգոհ ժողովուրդքը կառավարելու յանուն Պետութեանց՝ քանի որ այդ կղզիքը երբէք չեն կրնար իրեն պատկանել, լաւ չէ՞ր ազատել այդ բռնէն, որ իրեն՝ միայն բերդորէից համար 1,398,700 Լ. ս. ծախքի պատճառ եղեր էր. և միթէ օրինաւոր չէ՞ր կղզիներուն բնակչաց փափագները: Այս գաղափարք այսու ամենայնիւ չէին գործադրուեր եթէ՛ նոր և շքեղ պարագայ մը չներկայանար Անգղիոյ Թագաւորական ընտանեաց:

Յունաստանի վրայ այլ ևս չէր Թագաւորեր Ոթոն գերմանական ցեղէ և անոր տեղ կ'ընտրուէր Թագաւոր Հելլէնաց Տանիմարքայի Թագաւորին երկրորդ որդին ծանօթ յետոյ Քէորգիոս Ա անուամբ, եղբայր Կալլէսի իշխանուհւոյն: Ալ յայտնի էր Թագաւորական ընտանեաց բռնելիք շաւիղք Յոնիական կղզեաց խնդրոյն մէջ և ճո՞ն Ռուսսըլ պաշտօնարանը կ'իմացնէր որ Մեծն Բրիտանիա կը հրաժարէր այդ կղզեաց վրայ իրաւունքէն ի նպաստ Յունական Թագաւորութեան, զոր Վիննայի Դաշանց ստորագրող Պետութիւնք հաւանեցան առանց դժուարութեան մը: Աս

այս ժողովրդախումբ քուէարկութիւն եղաւ Եօթն կըղ-
 զեաց մէջ, որ յայտնի է, բոլորովին նպաստաւոր եղաւ
 միութեան, և Անգղիա կը թողուր Յոնիական կղզիքը՝
 Իէորդ Աթազաւորին, յամին 1864ի գարնան: Ի սկզբան
 դարմանք մը ծնաւ ամենուն մտաց մէջ Անգղիոյ այս
 քայլը, սակայն ի մտոյ ուսամնասիրողք ճանչցան որ
 Ազատական կուսակցութեան այս առաջին քայլն էր:

8. Անգղիա եւ Պարսկաստանն Հէրաթի համար: —
 Յամին 1853 Անգղիոյ և Պարսկաստանի մէջ եղած
 բանակցութեամբ մը Պարսկաստան խոստացած էր
 գրով, բնաւ չմիջամտելու Աֆղանիստանի գործոց մէջ
 և ամենեւին չդպչելու Հէրաթի փոքրիկ թագաւորու-
 թեան զոր Անգղիա պատուար մը կը համարէր Հընդ-
 կաստանի համար ընդդէմ Ռուսաստանի և Պարսկաս-
 տանի: Բայց Պարսկաստան 1856ի յանկարծ գունդեր
 դրկելով պաշարեց զՀէրաթ: Այն ատեն Նոյեմբերի
 Անգղիական ընկերութեան Հնդկաց ընդհանուր կա-
 ռավարիչը պատերազմ հրատարակեց ընդդէմ Պարս-
 կաստանի: Փութով Պոմպայէն բանակ մը մեկնեցաւ
 ի Պարսկային ծոցը որ գրաւեց զՔարախ կղզին և
 Պուշիր նաւահանգիստը. ուրիշ բանակ մ'ալ Ուզբամ
 զօրավարին հրամանատարութեան ներքև մեկնելով
 Հնդկաստանէն փետրուար 8ին կրկին յաղթեց Պար-
 սից Պուշիրի մօտ որ կեդրոն մ'է վաճառականութեան
 ընդ Պարսկաստան և ընդ Հնդկաստան և Մարտ 26ին
 առաւ զՄոհամմէրահ:

1857

Իեռ այս յաղթութիւնք չպատահած, Պարսիկք հաշ-
 տութիւն խնդրեր էին և առ այս Պարսկաստանի դես-
 պանը ի Բարիզ Ֆէրուք խան, միջնորդ առեր էր զՆա-
 րոյէնն Գ:

Բանակցութիւնք կատարուեցան ընդ Ֆէրուք խան և
 ընդ լորտ Գոլվէյ դեսպան Անգղիոյ ի Բարիզ և ստու-
 բագրուեցան Մարտ 4ին, որոնք ապա ապրիլ 14ին ի Իեհ-
 բան հաստատուեցան շահէն: Ըստ այսմ դաշանց դար-
 ձեալ կը հաստատուէր որ Պարսկաստան բնաւ իրա-
 տունք մը չունէր միջամտելու յԱֆղանիստան և ի Հէ-
 րաթ, որոնք անկախ էին նկատմամբ Պարսկաստանի:

Յամին 1863 Աֆղանիստանի Տոսդ—Մէհէմէտ է-միրը գրգռեալ, ինչպէս համարեցան անգղիացի լրագիրք, ի Պարսկաստանէ և ի Ռուսաստանէ, պաշարեց և առաւ զՀէրաթ: Բայց սարի մը շտեւած Աֆղանք նորէն բռնադատուեցան թողուլ զՀէրաթ:

9. ՀՆԻԱԿԱՍՏԱՆ. ՏԺՂՈՒԹԻՒՆ ԲՆԻԿ ԺՈՂՈՎՐՈՂՈՅ: — Դար մը անցեր էր յետ որոյ Լորտ Գլայվ Փլասսիի յաղթութեամբ տիրեր էր Հնդկաստանի այն մասին զոր կը կառավարէր Արևելեան Հնդկաց Բնկերութիւնը և 1857ին ի Լոնտրա մեծ տօներով կատարուեր էր այս աշխարհակալութեան հարիւրեակը: Անգղիացի ժողովուրդը և կամ լաւ ևս ըսենք անգղիացի վաճառականական և պաշտօնական տարրը այդ երկիրը նկատեց իբրև տիրապետեալ հարուստ աւար մը, ուսկից իրաւունք ունէր հարստանալ ամէն անգղիացի անհատ ի վնաս իսկ տեղացւոյն. և Բնկերութեան բազում պաշտօնատէրք և զինուորականք Հնդկաստանէ դառնալով մեծ փարթամութեամբք, ընդհանուր անյագ տենչ մը ձգեր էին ամենուն սրտին մէջ՝ ըլլային օտարագգիք ըլլային Անգղիացիք՝ հարստանալու համար միայն Հնդկաստան երթալ: Այս զգացումը բնական էր որ ծնանէր շատ մը անկարգութիւնք, բռնութիւնք և հարստահարութիւնք, որոնք փոխանակ նուազելու, վերջերս աւելի սաստկացան և Լոնտրայի վարչութիւնը արհամարհանօք մը չուրեց բարեօքել այդ խեղճ հնդիկներուն վիճակը, որոնք գոգցես ծներ էին միայն ստրկութիւն մը կատարելու եւրոպական ժողովրդեան, և որոց գայրոյթը վերջապէս խառնեալ յուսահատութեան և վրէժխնդրութեան հետ, գազանային անգթութիւններ յառաջ բերաւ, զորս դուպելու և մարելու համար առաւելագոյնք ի կիր արկին Անգղիացիք:

Հնդիկ ժողովուրդք շատոնց կը տրտնջէին որ չէին պահուիր տեղացի իշխանաց և անոնց հպատակաց հետ դաշինքները և իրաւունքները, որ ամէն պաշտօնեայ զրուած իւր պաշտաման մէջ, ուրիշ նպատակ չունէր բայց թէ կեղեքել զժողովուրդը և հարստութիւն գիղել յետոյ յԱնգղիա փոխադրուելու համար: Կը տրտնջէին ընդ-

դէմ զինուորականաց որոնք ազատ էին նոյն իսկ եղեռն գործելով և զբնիկ զինուորս կը գործածէին իբր անասուններ: Այս արհամարհութիւնը աւելի անտանելի կ'ընէր իրենց կրօնից տարբերութիւնը և օտար ազգութիւնը: Եւ որչափ որ ալ մերթ ընդ մերթ վարչութիւնը կը յորդորէր զԵւրոպացիս յարգել և շնախատել տեղացի կրօնքները որք էին մահճմ, տականութիւն և կուսակալութիւն, բայց Անգղիացիք այնքան մեծ ատելութիւն և զգուանք ունէին կուսակալութեան անիմաստ և վայրենի իսկ ծիսից որ չէին կարող չցուցնել նաև արտաքուստ: Այս ընդհանուր արհամարհութիւնը մեծ հակառակութիւն մը ծնաւ ամէն տեղացւոց սրտին մէջ, և առ ժամս մոռցան կրօնից խտրութիւնքը և անկէ առաջ եկած թշնամութիւնք, իրենց բոլոր ատելութիւնը դարձնելու զիրենք ընկճող օտարին դէմ: Ընդարձակ դաւ մը ձևացաւ յորում մտան մասնաւորապէս տեղացի զինուորականք որ կը կոչուէին «իֆոյ»:

Անգղիա Հնդկաստանի մէջ երեք տեղացի բանակ ունէր. ի Պոմպայ, Մատրաս և ի Պէնկուլ: Ամբողջ բանակին թիւն էր 290,000, յորոց հազիւ 50,000ը անգղիացիք էին, մնացեալ ահաւոր մեծամասնութիւնը կը կազմուէր ի տեղացւոց: Միայն այդ տեղացի գունդերուն սպայք ալ յԱնգղիացւոց էին և բնիկ մը հազիւ երբէք կրնար հասնիլ հարիւրապետութեան աստիճանին: Արդէն սգիները յուզեալ էին երբ նոր պարագայ մը աւելի զայրացուց զայնս: Հրաման ելած էր որ գնդակք Լնկէլ հրացանից ի ներքս դրուելու ժամանակ օծուին խոզի կամ կովու ճարպով. արդ մահմեսական մը խոզի դպչելով անգամ կը պղծուի, իսկ հնդիքը զկովը սրբազան կը համարէին:

Տեղացիք այս հրամանքը կրօնից արհամարհութեան համար սեպեցին և Պէնկուլայի, Ալլահապատի, Մատրասի և Պոմպայի գունդերը ծածուկ հաղորդակցութեամբք որոշեցին ապստամբելու և վրէժ խնդրելու այս ամէն եղած նախաաանաց. փութով ամէն կողմ Սիփայք գիշերը գաղտ ժողովակներ կազմեցին, յորս կ'երգուըննային շթողուլ քրիստոնեայ մը ի Հընդկաստան:

10. Ապստամբութիւն Սիփայից. — Հնդկաստանի ընդհանուր կառավարիչն էր Լորտ Քէննիկ, որդի հըռւ շականուն պաշտօնէին, այր հեզահոգի և խաղաղասէր և այս պատճառաւ յԱնգղիա ընդհանուր էր իւր յորջորջումը « Լորտ Գթութիւն » կամ « Նորին Գթութիւնը Քէննիկ » : Որչափ որ ալ ինքը կ'ուզէր գոհացնել բնիկ ժողովուրդը և զինուորները, բայց իրեն վարչութենէն շատ առաջ արդէն ոգիները զայրացեր էին քան զշափն և ինքը չունէր այն կորովի բնաւորութիւնը կամ բռնութիւնը կանխել՝ ճնշելով դիմացն առնուլ սպառնացեալ ահաւոր դաւոյն : Եւ որ զարմանալին է թերևս, վարչութիւնը նոյն իսկ կասկած մը չէր ունեցեր այսպիսի ընդարձակ յուզման : Ապրստամբութիւնը սկսաւ Մայիս 9ին ի Միրութ, վերին Գանգէսի վրայ, ուր բաղմաթիւ սիփայք չուզելով խոզին ճարպը գործածել գնդակաց համար, կալանաւորեցան. բայց փութով իրենց ընկերները զիրենք ազատեցին : Երկու օր վերջը ծագեցաւ ահաւոր ապստամբութիւնը Տէլհի մեծ քաղքին մէջ ուր կը բնակէր « Մեծ-Մողոլը » պայազատ համարուած հնդկային թագաւորաց որ ի խոր ծերութեան կ'ապրէր առանձնացեալ : Ապստամբք զինքը թագաւոր Հնդկաստանի հրատարակեցին և յարձակելով զինուորանոցները և տունները սպաննեցին շատ մը սպաներ, հազարապետ մը, պաշտօնեաներ, եկեղեցականք, վսճառականք կանամբք և զաւակներով և կողոպտեցին հարուստ Գանձը : Բաց ասոնց տիրեցին նաև պատերազմական մթերից որոց պահապանք տեղացի զինուորք էին : Տէլլի քաղաքը ճահիճներու մէջ ըլլալով և օդը վատ, Անգղիացիք միշտ սակաւ զինուորք կը պահէին հոն, և զօրաց սպայք Վիլլուկպի և Ֆորըսդ կրակ տալով նաւարանին ականներուն, հազարաւոր թշնամեաց հետ իրենք ալ թաղուեցան աւերակաց ներքև : Ապստամբութիւնը տարածուեցաւ ամէն կողմ ի Ղիհանփուր, յԱլլահապատ, ի Պէնկալա, յԻնսոր և յԱզէկուր. սպանուեցան բաղմաթիւ սպայք և պաշտօնայք և իրենց ընտանիքներով, յետ նախ կրելու սոսկալի տանջանքներ, և տներնին ալ այրուեցան :

Բայց ամենէն աւելի վայրենի անգթութիւնք ի Գաւ-
փուր կատարուեցան. ուր ապստամբութեան զլուխ կի-
ցաւ Նանա Սահիպ՝ խորագէտ և յանդուզն տեղացին,
որդի պրահմանի մը և որդեգրեալ Մարաթաց ցեղի իշ-
խանին, որ թէպէտ կ'ապրէր եւրոպական ամէն բա-
րակութեամբք և զեղխութեամբ, ունէր նաև չափաւոր
տեղեկութիւն մը անգղիական պատմութեան և մա-
տենագրութեան, այսու հանդերձ մեծապէս կ'ատէր
զԱնգղիացիս, որոնք չէին ուզեր ճանչնալ իր իրաւունք-
ները իբր որդեգիր Մարաթաց իշխանին և միտքը
դրած էր ահաւոր վրէժ մը առնուլ այս համարեալ
զրկանաց: Կ'ապրէր իւր Պելուր գղեակը զոր եւրոպա-
կան ոճով զարդարած էր և բնաւ չէր մտներ ի Գաւ-
փորն: Նանա Սահիպ տեղեակ Սիւիայից յուզման,
յարմար ժամանակ սեպեց իւր խորհրդոց և յանկարծ
ապստամբ գունդերով պաշարեց զՎուրլլէր անգղիա-
ցի զօրավարը որ փութանակի շինուած պատնէչներու
մէջ ամփոփեր էր չորս հարիւր վաթսուն և հինգ անգ-
ղիացի, յորս կէսը կանայք և մանկունք: Բայց սովէն
և պաշտպանողաց սակաւութենէն, միանգամայն իւր
երկու մատաղահասակ դստերցը և ուրիշ կանանց և աղջ-
կանց պատիւը ազատելու յուսով, անձնատուր եղաւ.
պայմանաւ որ պատնիշաց մէջ անձինք սզատ մեկնին
յԱլլահապատ: Նանա Սահիպի կողմէն նուիրակ եկած
էր Աղիմուլլահ խան զպաշարեալս ապստովցնելու որ
վտանգ մը չկար. բայց հազիւ բազմութիւնը հասնե-

1. Նանա Սահիպ 1834ին իւր բողոքը նորոգելու համար ի Լոնտրա,
դրկեց իոն իրեն հաւատարիմ մանմետական երիտասարդ մը՝
Աղիմուլլահ խան. որ Լոնտրա մեծ ընդունելութիւն գտաւ
նոյն իսկ բարձր ընկերութեանց և ընդունելութեանց մէջ, ա-
մենուն ուշադրութեան նիւթ՝ բլլալով: Լոնտրայէն ուղևորեց
ի Կ. Պօլիս և ի Ղրիմ, ուր լաւ գաղափար մը չառնելով
անգղիացի բանակին յաջողութեան վրայ, ի դարձին ի Հընդ-
կաստան խրախուսած է, կ'ըսեն զՆանա Սահիպ չերկնչելու
յԱնգղիացոց: Գաւփորնի կոտորածին գրգռողներէն մին էր
նաև ինքը:

լով Քանգէսի եզերքը նաւակաց մէջ մտեր էր, և ահա սկսաւ նաւակաց ումբակոծումը և կրակը, որոց յաջորդեցին փութով ի մօտոյ հրացանի և ապա դաշոյնի հարուածներ: Վուրիլէր և իր ընկերներէն յիսուն հոգի բռնուելով բերուեցան ի Քաւփորն, ուր շարուելով կարգաւ մէկմէկու ձեռք բռնած հրացանի հարուածէ ինկան: Հարիւր քսանէն աւելի կանայք և տղաք նախ փակեցին նեղ սենեակի մը մէջ, ուր բնաւ շարժելու տեղ չկար, յորոց մաս մը մեռան ժանտօղէն, մաս մը մերկացուցին, սպաննեցին և դիակները ջրհոր նետեցին: Երեսուն մ'ալ կանանոց տարուեցան իբրև ստրուկք ծառայութեանց համար, որոնք ևս յետոյ անգթարար խոխողուեցան.

Եւ սակայն այս ապստամբութիւնը սիփայից մէջ պարփակեցաւ և քաղաքացի ժողովուրդը կը դիտէր անտարբեր աչքով, թերևս սպասելով յաղթողին կողմ յետոյ բռնելու համար: Յեղերէն ոմանք շուղեցին մասնակցիլ առ տարտամութեան, ուրիշներն ալ հաւատարիմ մնացին Անգղիացւոց որով և աւելի դիւրին եղաւ ընկճել մի առ մի ապստամբալ քաղաքները:

11. Անգղիացիք նորէն կ'առնուն զՏէլհի եւ Քաւփորն. — Վրէժխնդրութիւնք: — Ապստամբութեան առջևը առնողաց մէջ նախ աշխատողներէն մին է Սիր Ղոն Լորընս Փէնճապի կառավարիչը, որուն հպատակներէն Սէիս կոչուած ցեղը, միշտ անհաշտ տաւելութիւն ունեցած է ընդդէմ Սիփայից, որով և յօժարութեամբ Փէնճապէն դուրս դիմեցին յօգնութիւն անգղիացի գունդերուն: Տեղացի իշխաններէն ալ Նէփալի՝ Եունկ Պահադուր իշխանը, իւր զինուորները Անգղիացւոց տրամադրութեան ներքև դրաւ: Սիր Ղոն Լորընս գիտցաւ օգտուիլ և Յունիսի մէջ Փէնճապէն ի Տէլհի անգղիացի բանակ մը մտաւ, որուն հրամանատարք թէպէտ մի զմիոյ կնի մեռնելով մաղձախտէն, հրամանատարութիւնը մնաց Վիլսոն զօրավարին, որ պաշարեց զՏէլհի բայց չկրցաւ առնուլ: Սեպտեմբերի մէջ նոր օգնութիւնք հասնելով, Վիլսոն յարձակողականք սկսաւ և երկու կողմէն սոսկալի մըր-

ցումն շարունակեց: Լայնածաւալ քաղքին վրայ, ուր յայտնի է կար նաև անմեղ ժողովուրդ մը, կարկրտի պէս կը տեղային գնդակները ցանելով մահ և աւեր: Երբ Անգղիացիք զգացին որ թշնամեաց թիւը երթալով կը նուագէր, այն ատեն Սեպտեմբերի վերջը ընդհանուր բուռն յարձակումն ըրին, յորում ինկաւ նաև Նիքոլսոն քաջ զօրավարը, բայց Անգղիացիք մտան և տիրեցին Տէլհիի ահաւոր վրէժխնդրութեամբ, սպաննելով գրեթէ բոլոր բնակիչքը չիւրնայելով մէկու մը: Երբ թագաւորը կալանաւորելով Կալկաթա զրկուեցաւ և որդիքը և թոռները հրացանի բռնուեցան նաև ուրիշ յիսուն անձինք իշխանական ցեղէն: Սիփայից բնաւ ներումն չկար և ամէն բռնուածը սպանուեցաւ: Գուժըր անգղիացի զօրավարը զարմանալի պարծենկոտութեամբ մը կը պատմէ թէ ինչպէս 500էն աւելի ինքը որպիսի կերպերով կախեց կամ խեղդել տուաւ: Նոյն իսկ անգղիացի գրիչք ի Հնդկաստան եղած ահաւոր վրէժխնդրութեանց վրայ կ'ուզեն քող մը քաշել:

Ուտ գաւառին մէջ Անգղիացիք սիփայից ապստամբութեան ժամանակ ապաւիններ էին Լուխնովի ամրոցը, որս կային նաև 400 կանայք և տղայք: Խեղճերը 3-ուր 2 ահուդողով կը սպասէին ամէն օր ջարդուիլ Նանա Սահիպի գունդերէն, երբ յանկարծ 1400 զինուորսք հասաւ Կալկաթայէն Հէվլոք զօրավարը և Ֆաթիհփուրի քով զարնուելով թշնամուոյն հետ, խորտակեց զայն և մտաւ դղեակը: Երեք օր վերջը ուզեց դիմել Գաւառինի վրայ, ուր իրեն դիմացը ելաւ Նանա Սահիպ բոլոր գունդերով և զարհուրելի խառնուրդ մը եղաւ: Թէպէտ երկու կողմանէ ալ հաւասար էր արութիւնը և եռանդը, սակայն Նանա Սահիպի զօրքերը չկրցան դիմանալ անգղիացի կանոնաւոր յարձակմանց, և Նանա Սահիպ յաղթուեցաւ ու փախաւ և իւր Պիթուր դղեակը կրակի տրուեցաւ: Նանա Սահիպ վրէժքը առնելու համար նորէն ցրուեալ գունդերը հաւաքելով դիմեց Լուխնովի դղեակին վրայ որ առնու և բոլոր անգղիացիքը ջարդէ: Հէվլոք նախ մտաւ ի Գաւա-

փորն սրէ անցուց բոլոր բնակիչքը, յետոյ անցաւ Քանգէսը և մտաւ յՈւտ: Այս դիւցազնական բանակը, որուն հասաւ սգնութեան նաև Ուդրամ զօրավարը, որ թէպէտ աստիճանաւ բարձր քան շէվլիք սակայն սիրով յանձն առաւ մնալու անոր հրամանաց ներքև, առանց վհատելու ճահիճներէն, անձրևներէ, մաղձախտէ և ամէն արգելքներէ, Սեպտեմբերի վերջը հասաւ Լուխնով քաղաքին դիմաց որուն բնակիչքը 500,000 կը համարուէին: Նանա Սահիպի գունդերն էին 50,000 Անգղիացւոցը 2600: Շէվլիք փոխանակ պատերազմ տալու դարձուածքով մը թշնամւոյն քովէն մտաւ զինուորօք Լուխնով դղեակը, ուր ապաւինեալք, ընդունեցան զինքը աննկարագրելի ուրախութեամբ: Սակայն ներսը ապրելու պաշար չկար և հարկ էր վտանգաւոր նահանջ մը փորձել կանամք և տղոցմով: Այս պատրաստութեանց մէջ էին երբ Նոյեմբեր 14ին հասաւ 7000 զինուորօք Սիր Քոլին Գէմիպըլ զօրավարը, այն որ արդէն համբաւ ստացեր էր Վրիմու պատերազմին մէջ, և ազատեց դղեակին պաշարեալքը առանց քաղաքը մտնելու և առանց պատերազմ տալու: Լուխնովի դղեակին պաշտպանութիւնը և փրկութիւնը Հնդկային պատերազմին դիւցազնական և վիպասանական մասը կը կազմէ: Ութ օր վերջը մաղձախտէն կը մեռնէր քաջ զօրավարն շէվլիք, որ իւր դիւցազնական յանգնութեամբ փրկեր էր իւր Հայրենեաց մեծ Աշխարհակալութիւնը¹:

12. Ընկնումն Ապստամբութեան: — Ապրտամբք ամբողջ ձմեռը Տէլհիի անկմանէն վերջն ալ դիմացան Կվալիորի և Ուտիի մէջ և յաղթութիւն մը իսկ ըրին Ուինտամ զօրավարին վրայ, սակայն ասոնք սուանձնական և կղզիացեալ յաջողութիւնք էին, վերջին կայծեր մեծ հրդեհի մը: Ապստամբաց թիւը երթալով կը նուազէր մինչդեռ Փէնճապէն և Կալկաթայէն նոր գունդեր կը հասնէին գարնան: Սիր Հիւկ

1. Անգղիացի ժողովուրդը ի նշան երախտագիտութեան Լոնտրոնի հրապարակաց միոյն մէջ արձան կանգնած է շէվլիքի:

Ռոզ Կվալիորի մէջ տիրեց Չիանսի և Քալփի երկու մեծ քաղաքաց և թնդանօթով շարլուբուրդ ըրաւ հարիւրէն աւելի անձինք: Յետոյ անգղիացի բանակը պաշարեց Լուխնով մեծ քաղաքը, զոր առաւ երեք օր մուկնութեամբ պատերազմելէ վերջը և զինուորաց հրաման տրուեցաւ սպաննելու և կողոպտելու աներկիւղ: Փողոցք և դռները լեցուեցան դիակներով և բնաւ գութ չկար ոչ ծերուն և ոչ տղայուն, ոչ հիւանդին և ոչ թշուառին: Քաղաքակիրթ ժողովուրդ մը ցուցուց որ վրէժխնդրութեան միջոց շտարբերիր վայրենի ազգերէ: Տխուր ստուգութիւն: Ուստի թագուհին գերի բռնուեցաւ և ղրկուեցաւ յԱնգղիա: Որոնք որ կրցան ազատիլ փախան ի Ռոհինքանտ և ի Նախալ ուր փախաւ նաև բովանդակ Սիփայից ապստամբութեան գլուխը՝ Նանա Սահիպ:

Իւր փոխանորդը և անգթութեանց ընկերը Գանդիա Դոփի բռնուեցաւ և կախուեցաւ: Ծեր թագաւորը Գլուխ Բարեյուսոյ ղրկուեցաւ: Բայց անգղիացի գաղթականք մերժեցին զինքը ընդունիլ և Ռանկունի բանտերուն մէջ լմնցուց կեանքը: 1858ի Դեկտեմբեր 20ի Լորտ Գլայտ՝ երբեմն Սիր Քոլին Գեմփպըլ, կ'իմացընէր ընդհանուր կառավարչին «Ապստամբութեան վերջանալը»: Անկէ վերջն իսկ եղան փոքր համախմբութիւնք սակաւ ապստամբաց, որոնք աւելի աւազակներու երեւոյթ մը առին: Հիմայ կը մնար Անգղիոյ խաղաղեցնել երկիրը և բարւոքել իւր վարչութեան եղանակը, որպէս զի չծնանէին յապագային նոյնօրինակ աղէտներ:

13. Հրովարտակ վասն Հնդկաստանի. վերջ Արեւելեան Հնդկային ընկերութեան. Յաւաջադխմութիւնք: — Արդէն այլ և այլ Պաշտօնարանք յԱնգղիա փափագեր էին բարւոքել Հնդկաստանի ժողովրդոց վիճակը: Ներկայ ապստամբութիւնը առաւել ևս կարևոր ցուցուց զայն: Օգոստոսի մէջ յետ երեք զիչեր եռանդուն և պերճախօս վիճաբանութեանց խօսարանը Օգոստոս Տին ընդունեցաւ և Վիկտորիա թագուհին հաստատեց այն Առաջարկը որով՝ Նախ նե-

բումն կը շնորհուէր ամէն ապստամբաց որոնք ուղղակի սպանած չէին անգղիացի հպատակ մը և որոնք պիտի հնազանդէին մինչև 1859ի Յունուարը: Ապա կը վերջացնէր Արևելեան Հնդկային Ընկերութեան առանձնաշնորհութիւնքը և Պետութիւնը մասնաւոր Պաշտօնարան և Պաշտօնեսոյ կը հաստատէր Հնդկաստանի համար, որ կ'ունենար ժողովք մը տասն և հինգ անձանց, յորոց ութը կ'անուանէր Պետութիւնը և միւս եօթը ժողովականք: Ատենակալք 30,000 ֆրանք թոշակ պիտի ընդունէին և Խօսարանը միայն կրնար զիրենք պաշտօնընկէց ընել: Ընդհանուր կառավարիչը Փօր-բոյ պիտի սնուանուէր և պիտի ներկայացնէր զՎիկտորիա թագուհին, և բաց ի սեպհական առանձին ժողովքէն, պիտի ունենար նաև Օրինական ժողովք մը, յորում կը մտնէին նաև բնիկք: Աւաջին փոխարքայն կ'ըլլար Լորտ Քէննինկ: Հպատակք հաւասար էին յամենայնի սրինաց առջև առանց խըտրութեան ազգաց, ցեղի և կրօնից որոնք պիտի յարգուէին և ամենայն ոք ազատ էր իր գաղափարաց և կարծեաց վրայ¹:

Այսու հանդերձ Ընկերութեան պաշտօնեսոյք հաստատուն կը մնային առ ժամս իրենց պաշտամանց մէջ. համակերպելով նոր հաստատուած կանոնաց: Ընկերութեան մարտանաւք պիտի միանային Պետութեան նաւուց և զինուորք անկէ վերջը հաւատարմութիւն պիտի երդնուին միայն թագուհւոյն: Թէպէտ դոցանէ շատերը խնդրեցին դառնալ յԱնգղիա շյուսալով որ նոյն վաստակը ունենան ինչ որ ընկերութեան ժամանակ:

Տեղացի իշխանք և ազնուականութիւնք պահուեցան, սոյն ոճով ինչպէս յԱնգղիա կան ազնուականութիւնք, կը կորսնցնէին իշխանական անկախութիւնքը, բայց կ'ապահովցնէին իրենց անձինքը և ստացուածքը: Միով բանիւ Հնդկաստան այլ ևս նուաճեալ

1. Այս հրովարտակը գովելուն պատճառաւ էր որ Մոնղալաճպէր դատապարտուեցաւ Նաբոլէոն Գի վարչութիւնէն:

երկիր մը չէր, այլ Անգղիական գաղթականութիւն մը և մասն Մայր Հայրենեաց:

Եւ փութով տեսնուեցաւ ժողովրդեան խաղաղութեան մէջ այս կարգադրութեանց արդիւնքը և յառաջագիմութեան մեծաքայլ ընթանալը: Ճամբաները բազմապատկեցան, Քանգէսի ջուրէն 15,000,000 առուակք բաժնուեցան ցամաք երկիրները առողջանելու համար, երկրագործութիւնը՝ մայր հարստութեանց, բարգաւաճեցաւ. երկաթուղիք շինուեցան, Կալկաթա, Մատրաս և Պոմպայ մէկմէկու կապուեցան և ամբողջ Քաղթականութիւնը նոր կերպարան մ'առաւ, և քիչ վերջը Լորտ Մայօ փոխարքային սպանումը պարզանհատի մը կրօնամոլութեան մը արդիւնք էր քան քաղաքական յուզմանէ մը պատճառեալ: Ամերիկայի պատերազմը պատճառ եղաւ որով Հնդկաստան ըզբաղեցաւ բամպակի մշակութեան, և յայնմհետէ իր ամենէն հարուստ բերքերէն մին եղաւ:



Գ Լ ՈՒ Խ Ծ Ր

Չ Ի Ն Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ

1. Չինաստան ժԹ դարուս մէջ. — 2. Պատճառք չինական պատերազմին. — 3. Դաշնակցութիւն Անգղիոյ և Գաղղիոյ ընդդէմ Չինաստանի. — 4. Առու՞նք Փէյ-Շոյի. — 5. Դաշնակիցք կը չուեն ի Փէքին. Պատերազմ ի Փալիքաս. — 6. Աւարառութիւն Ամարաստանի կայսեր. — 7. Դաշնակիցք ի Փէքին. — Հըրկիզու՞նք Ամարաստանի կայսեր. — 8. Հաշտութիւն և Դաշինք Փէքինի. 9. ՃԱՓՈՆ. Դաշինք Ճափոնի հետ:

1 Չինաստան ժԹ դարուս մէջ: — Ասիոյ ամենէն հին ժողովուրդներէն մին որ երբեմն Քաղաքականութեան և Յառաջադիմութեան ասպարիզին մէջ ընդերկար կրնար մրցել Եւրոպական ազգաց հետ, մեծապէս վրէժխնդիր եղած է միշտ իւր սահմանքը և իւր անհուն գաղտնիքները բանալու օտարաց առջև: Բազմադարեան խիստ և միանգամայն պատկառեալ վարչութիւն մը ներքին երկպառակութեամբք և Հարստութեանց փոփոխութեամբք հանդերձ, կրցեր էր մինչև վերջին դարերուս մէջ ծածկեալ պահել ամենէն հետաքնին աչքերու իւր ժողովուրդքը և գանձերը: Մեծն Պետրոս հազիւ յաջողեր էր իբրև սահմանակից դրացի մը՝ ներկայացուցիչ ունենալ ի Փէքին, և Անգղիա, Գաղղիա մեծ դժուարութեամբք ԺԷ դարուն վերջերը կրցեր էին վաճառականական հաստատութիւնք ունենալ ի Քանթոն:

Չինաստան մոլեռանդն իւր կռապաշտութեան կամ անոր բազմազգի աղանդոց, առջի օրուրնէ սարսափեցաւ Քրիստոնէութեան փութով տարածուելուն վրայ,

պատժեց շատ անգամ հալածանօք և մահուամբ անոր հետևողք և 1828ի Փէքինէն քարոզիչք վճռաւեցան, բացարձակ արգելքով այլ ևս չմտնելու ի Չինաստան, այլ ի գո՛ւր:

Արևելեան Հնդկային անգղիական Ընկերութիւնը, կը համբերէր կրօնից դէմ եղած նախատանաց և հալածանաց, ի Քանթոն վաճառականութեան իրաւունքը չկորսնցնելու համար, յորս մեծագոյն շահաւէտն էր ափոնի մենավաճառաթիւնը որուն դաշինքը լմնցաւ 1834ի:

Փէքինի վարչութիւնը սարսափած այդ վնասակար և անբարոյական դեղոյն ահաւոր կերպով տարածուելուն վրայ, խստիւ արգիլեց վաճառումը և մինչև բանտուեցան վաճառողք և վաճառանենգք և նաւերու մէջ եղած ապրանքներն անգամ ծովը թափուեցան: Հնդկային Ընկերութիւնը բողոքեց և պաշտպան հանդիսացաւ իւր վաճառականաց, պատերազմը սկսաւ 1839 ի և Անգղիացւոյ բազում յաջողութիւնք ստիպեցին զՉինաստան 1842 Սոստոս 26ի Գաշինք մը ստորագրել ի Նանգին ըստ որուն Անգղիացիք կը ստանային Հոնկ-Քոնկ կղզին և կը բացուէին Եւրոպիոյ առջև Քանթոն, Լմույ, Շինկ-Փօ, Ֆու-Չեու, և Շանկ Հայ նաւահանգիստները: Նմանօրինակ դաշինք մը ևս կատարեց Գաղղիոյ հետ յամին 1844:

Այս Գաշինքները պետք էին նորոգուիլ տասը տարի վերջը, բայց Անգղիա և Գաղղիա զբաղեալ նախ Արևելեան խնդրոյն և ապա Ղրիմու պատերազմին, առ ժամս նորոգելուն կարևորութիւն մը չտուին: Սակայն Քանթոնի փոխարքայն 1856ի անգղիացի դրօշակ կըրող նաւ մը բռնած ըլլալով և Անգղիոյ ներկայացուցչին բողոքականաց կարևորութիւն տուած չըլլալով, յետինս անգղիացիներով քաջուեցաւ ի Հոնկ-Քոնկ: Եւ որովհետև Չինական վարչութիւնը մեռուցեր էր հըռովմէադաւան քարոզիչներ և Գաղղիոյ բողոքին գոհութիւն մը չէր տուած, Անգղիա և Գաղղիա պատերազմ հրատարակեցին Չինաստանի և 1857ի մէջ տիրեցին Քանթոնի: Յամին 1858ի Փէյ-Չօ գետոյն հոսանք-

ներով ելլելով դէպ Հիւսիս, հասան մինչև Դիէն-Չին Փէքինի մօտ :

Այն ատեն Չինական վարչութիւնը խնդրեց և Դիէն Չինի երկու Դաշինք ստորագրուեցան, մինն Անգղիոյ և միւսն Գաղղիոյ հետ : Անգղիոյ կողմէն ստորագրողն էր Լորտ Լլլկին և Գաղղիոյ կողմէն Պարոն Կուս : Երկու Պետութիւնք ևս իրաւունք կ'ունենային դեսպան ունենալ ի Փէքին. Քրիստոնէութիւնը հրաման ունէր բոլոր կայսրութեան մէջ . Եանկ-Չէ-Քիանկի նաւարկութիւնը ազատ էր և հինգ նոր նաւահան գիւստք՝ Նիու-Չուանկ, Թէնկ-Չէու, Սուադաւ, Թայ-Օւան՝ Ֆորմոզա կղզոյն մէջ և Քիունկ-Չէու՝ Հայ-Նամի մէջ կը բացուէին եւրոպական վաճառականութեան : Ռուս և ամերիկացի դեսպանք որոնք կը գտնուէին անգղիա-գաղղիական արշաւանքին մէջ, կանխաւ քան զդաշնակիցս իրենց համար ստացեր էին այդ արտօնութիւնքը : Ռուսաստան մեծագոյն ևս աշխարհակալութիւն մ'ունեցեր էր . Չինաստան իրեն կը թողուր Այկունի դաշամբ Ամուր գետին բոլոր աջ ափունքը որով կը կազմուէր Ամուր հարուստ և հանքաւէտ նահանգը . Ռուսաստան այդ կողմերը 1855ին ներքին խռովութեանց պատրուակաւ զրուեր էր : Ռուսաստան միացուց զԱմուր Սիպերիոյ հետ :

Դիէն-Չինի դաշինք կատարելագործուեցան Շանկհայի պայմանագրութեամբ յորս ի մէջ այլոց վաճառականական սլայմանաց կար ևս այն՝ որ ափիոնը ընդունելի ապրանք ըլլայ ի Չինաստան : Եւրոպա և մանաւանդ Հնդկային ընկերութիւնը աւելի ուշադիր էր շահու քան ամբողջ ժողովրդեան մը բարոյականի կորըստեան ¹ :

2. Պատճառք Չինական Պատերազմին : — Դիէն-Չինի և Շանկհայի դաշինքները տարի մը վերջը պիտի վաւերացուէին ի Փէքին, բայց երբ 1859 ի Անգ-

1. Առակ դարձած էր ժամանակին որ Անգղիացիք ատրճանակի հարուածի սպառնալեօք կը վաճառէին զափիոն, որ առաջին բերքն էր Հնդկաստանի .

ղիոյ և Քաղղիոյ դեսպանք եօթն շոգենաւովք, տասն թնդանօթակրովք և երկու տեղափոխիկ նաւովք որոց կը հրամայէր ծովակալն Հոփ՝ ներկայացան Փէյ-Հոյի բերանքը, գտան զգետը փակեալ և ամրացեալ և իրենց արգելուեցաւ ներս մտնել: Անգղիացի դեսպանն Պրիւս՝ նուիրակ զրկեց առ գնդապետն Փէյ-Հոյի որպէս զի իրենց ազատ անցք թողուի. որուն պատասխանեց չինացի հրամանատարը որ ինքը զինուորական անձ մ'էր և թէ հրահանգ մը չունէր զիրենք թողլու. բայց թէ սպասեն կրնայ Փէքին մարդ զրկել և և նոր հրաման մը խնդրել: Պրիւս նախատինք մը համարեցաւ այս պատասխանը և յետ խորհրդակցութեան Քաղղիոյ դեսպանին հետ, հրամայուեցաւ ծովակալին բռնի ներս մտնել: Ծովակալն Հոփ կը համարէր որ իւր գորութիւնքը բաւական էին վանել զթըշնամին, զինուորաց մաս մը ցամաքը հանեց և սկսաւ բաղխել Փէյ-Հոյի բերդերը. Չինացիք ահաւոր կրակով մը պատասխան տուին և սուրբերն մեծ ճշդութեամբ կը նետուէին: Յարձակումը վանուեցաւ և ծովակալն Հոփ դնդակէ մը հարուածեալ ի գուր արիւնաթաթախ դեռ հրամանները կու տար. հարկ եղաւ նահանջել, յորում մեծապէս օգնեց ամերիկացի նաւապետ մը որ ի դիպուածէ նաւովը կը գտնուէր անդ: Գաշնակիցք 450 հոգի կորսնցուցին ընդ մեռեալ և ընդ վիրաւոր և ի Փէքին դեսպանութիւնը առ ժամս ի դերև կ'ելլէր:

3. Գաշնակցութիւն Անգղիոյ եւ Քաղղիոյ ընդդէմ Չինաստանի: — Դիւրաւ կրնայ երևակայուիլ այս լրոյն ազդեցութիւնը ի Լոնտրա: Թէպէտ ընդհանուր կարծիք մը կը դատապարտէր զդեսպանն Պրիւս որ մեծապէս անխոհեմութեամբ վարուեր էր և իրաւունք չունէր առանց Փէքինէ բարձրագոյն հրամանի մը նաւարկել ի Փէյ-Հօ, այսու հանդերձ Չինաց զինուորական մեծ պատրաստութիւնը և նոր կանգնեալ ամրութիւնքը կը ցուցընէին որ հոն կեցած էին դարանելու և վիասելու դեսպանութեանց: Անգղիա և Քաղղիա միարանեցան դաշնակցութեամբ այս եղած խորամանկութեան

1860)

և նախատանաց վրէժն առնուլ: Սահմանուեցաւ զըրկուիլ բանակ մը և նուիրակութիւն մը դարձեալ քաղաքական, որուն գլուխ ըլլան նոյն իսկ Դիէն-Չինի դաշանց ստորագրողք՝ Լորտ Էլկին և Պարոն Կոօ: Անգղիոյ զինուորական գունդերուն պիտի հրամայէր Սիր Հոփ Կրանդ և Գաղղիոյ զօրաց զօրավարն Քուզէն տը Մոնդոպան որ ընդերկար գտնուելով յԱփրիկէ, վարժ կը համարուէր Արևելեան պատերազմաց: Գաղղիացի բանակը այնչափ դանդաղեցաւ մեկնելու որ թէ սակաւ մի ևս ուշանար, Անգղիա առանձին ի գլուխ պիտի տանէր պատերազմը: Հագիւ Յունուար 12ին զօրավարն Քուզէն տը Մոնդոպան մեկնեցաւ ի Գաղղիոյ և հասնելով ի Չինաստան իմացաւ որ ընդհանուր հրամանատարութիւնը իրմէ առնուելով, կը մնար միայն հրամանատար ցամաքի զօրաց. և ծովային բանակին պիտի հրամայէր զօրավարն Շաոնէ: Ամենայն ինչ պիտի գործուէր Անգղիացւոց խորհրդակցութեամբ և պատերազմը պիտի մղուէր ի Փէքին, մինչև որ պատուաւոր հաշտութիւն մը խնդրուի ի Չինաստանէ:

4. Առումն Փէյ-Հոյի: — Ի սկզբան երկու Գաշնակից բանակք գատուած էին, Անգղիացիք ի Իալիքու-Հուան և Գաղղիացիք ի Չէ-Ֆու, յետինքս տարածուելով ամէն կողմ աւարառութեամբ ըստ ասից նոյն իսկ իրենց գրչաց: Բայց Յուլիս 18ին սահմանուեցաւ միանալ Փէչիլիի ծոցին մէջ, հոնկէ փորձել բաղխելու Փէ-Գանկի ամրոցքը և ապա չուել Փէյ-Հոյի և Դիէն Չինի վրայ: Յուլիս 30ին երկու գունդք յաջողեցան տիրելու Փէ-Գանկի կամրջին և այսպէս տիրեցին ևս աւանին զոր յանձնեցին ահաւոր և գժղըմնելի աւարառութեան¹: Յետ այնորիկ Գաշնակիցք տի-

1. « Չինացիք իրենց կանայքը զինուորաց գազանութենէն ազալու համար, զանոնք կը խողխողէին և ջրհորները կը նետէին, ուսկից աննար էր զանոնք հանել, որովհետև կը մերժէին ո՛ր և է օգնութիւն և նախամեծար կը համարէին մար քան ինկնալ բարբարոսոց ձեռքը »: Գաքսիլ Տըլոր. Պատմ. Բ. կայսր.

րելով Թաքուի բարձանց, շուեցին դէպ ի Փէյ-Հօ, ուրուն աջ ափանց տիրեցին գրեթէ առանց պատերազմելու :

Այն ատեն Փէչիլիի կուսակալը զինադադարումն խնդրեց նոր հրահանգներ հարցնելու համար : Այս միջոցիս Գաշնակիցք լրտեսեցին գետին ձախ կողմի բերդերը և քիչ օր վերջը ահաւոր բաղխմամբ դիմեցին ամբուլեանց վրայ : Զինացիք յետ ընդերկար ընդդիմութեան մը տեղիք տուին : Սգոստոս 22ին ստորագրուեցան դաշինք և երկրորդ օրը նաւատորմիլը կը մտնէր ի Փէյ-Հօ և 2000 հոգի կը հաստատուէին 26ին ի Իիէն-Չին . Գաղղիացիք աջ կողմը և Անգղիացիք ձախակողմեան ափանց վրայ :

Իիէն-Չին ամրացեալ քաղաք մ'է, շտեմարան մեծ վաճառականութեան և մանաւանդ աղի, միանգամայն ձանապարհ Փէքինի : Գաշնակցաց հոն հասնելուն, կայսրը Մանտարին մը ղրկեք էր ընծաներով բանակցելու դաշանց ստորագրութեան համար : Սակայն Գաշնակիցք փութով հասկցան որ այս ամենը ժամանակ շահելու համար էր : Արդէն ձմեռը կը մօտենար և հարկ էր փութով գործել :

5. Դաշնակիցք կը չուեն ի Փէքին . Պատերազմ ի Փալիքաս : — Գաշնակցական խորհրդով մը որոշուեցաւ դիմել Փէքինի վերայ և Սեպտեմբեր 9ին երկու սիւնակք, որոց առաջնոյն գլուխ էին զօրավարն Կրանդ և Լորտ Լչկին և երկրորդին զօրավարն Մոնդոպան և Պարոն Կոօ, ձամբայ ելան յետ զօրաւոր պահակապան հաստատելու ի Իիէն-Չին : Կայսրը ժամանակ շահելու համար ուրիշ բարձրագոյն նուիրակութիւն մը ղրկեք էր ընդ առաջ, յորում էր և իշխանն Չայ՝ կայսերական ընտանիքէ, և բանակցութիւնք պիտի կատարուէին ի Իուենկ-Չաս : Գաշնակիցք կանխաւ սպայք

Հտ. Գ. Գլ. Ա. Լրագիրք անաւորագոյններ կը պատմեն :
 Վերոյիշեալ պատմագիրը զանազան անգամ կը ստգտանէ
 Զինաստանի Պատերազմին միջոց Գաղղիացի բանակին անկանոն և անկարգ վարմունքը :

ղրկեցին պաշար հոգալու և բանակցութեան պատ-
 րաստութեանց համար գնացեր էին Լորտ Լչկինի քար-
 տուղարք՝ ՊՊ. Փիրքս և Լոզ, որոց միացեր էին ու-
 ըրիչ անգղիացի սպայք և թայշ լրագրին նամակագի-
 րը: Բայց յանկարծ յուզումն ծագեցաւ և թաթարք
 պատրաստուեցան ընդհանուր յարձակման և անգղիացի
 ու գաղղիացի բանակցութեան գացող սպայք բանտէ
 բանտ տարուեցան անլուր տանջանքներով: Դաշնակիցք
 տեսնելով որ գնացող սպայք չեն դառնար և որոգայթ
 մը կասկածելով, սահմանուեցաւ պատերազմ տալ ընդ-
 դէմ թշնամեաց որոց թիւը կը հասնէր 50,000ի ընդ
 հրամանատարութեամբ Սահ-Քոլի-չինկ գորավարին,
 Անյաղթելի՝ կոչուած ի Չինաց: Դաշնակիցք Սեպտեմ-
 բեր 21ի հասան Դունկ-Չայոյի դիմաց որուն ընդար-
 ձակ արուարձանքը կը կտրեն երկու ջրանցք, որոց
 վրայ ձգուած են երկու կամուրջք. մինն հետիոտն
 անցորդաց համար, միւսը լայն և դարդարեալ խոյակ-
 ներով և կենդանեաց արձաններով՝ կոչուած Փալի-
 Քաս: Դաշնակիցք կը շուէին առանց առաջնորդի և
 ըստ բաղդին. Անգղիացիք դէպ ի փոքր կամուրջը և
 Գաղղիացիք դէպ ի Փալի-Քաս, ուր կարծես կը կեդ-
 րոնանային թաթար գունդերը, և որք յանկարծական
 շարժուածքով մը բաժնել ուզելով Գոլինոյ գորավարին
 գունդերը, անակնկալ բաղխամար ձիաւորօք դիմե-
 ցին անոնց վրայ: Սակայն Գոլինոյ կրցաւ վանել յար-
 ձակումը, նեցուկ ունենալով անգղիացի հեծեալքը:
 Յետ թշնամոյն նահանջելուն գորավարն Գոլինոյ դի-
 մեց դէպ ի Փալի-Քաս կամուրջը, որպէս զի երկու թևե-
 րը միացնելով տիրէ անոր: Ժամը առաւօտեան եօթն
 էր: Հոն վաղեց նաև թշնամին հասկնալով շարժման
 կարևորութիւնը, որով և ահաւոր կռիւ մը ծագեցաւ,
 յորում մեծ արութիւն ցըցուցին նաև չինացի կայսե-
 րական պահապանք: Բայց Գաղղիացիք ալ յետին
 ճիգն թափեր էին և կէսօրուան մօտ տիրեցին Փալի-
 Քաս կամրջին և հոն զրին ճամբարը: Ալ բաց էր դի-
 մացնին Փէքինի ճամբան: Այս պատերազմին մէջ
 կ'ըսուի թէ Չինք ունեցան 2000 անձանց կորուստ ընդ

մեռեալ և ընդ վիրաւոր, մինչ Գաշնակիցք կը հաշուեն իրենց կողմէն 6 մեռեալք և 34 վիրաւորք¹ :

6. Աւարառութիւն Ամարաստանի կայսեր. Չու Գաշնակցաց ի Փէքին: — Չինաց կայսրը պարտութեան լրոյն վրայ թողլով զՓէքին ապաւիններ էր ի Մանչուրիա և իշխանն Քոնկ կրսեր եղբայր կայսեր, պիտի ջանար յառաջ վարել բանակցութիւնքը: Սակայն Գաշնակիցք դեռ չսկսած կը պահանջէին գերեալ սպաները, զորս Չինք կը խոստանային տալ յետ հաշտութեան և թողլու զՓէյ-Չօ: Զօրավարքն Կրանդ և Մոնդուպան թշնամոյն ժամանակ շտալու համար չուեցին դէպ ի Փէքին: Հոկտեմբեր 4ին և երեկոյեան արդէն կը տեսնուէին բարձունքներէն Փէքինի պարիսպները և շէնքերը: Երկրորդ օրը իւրաքանչիւր զինուոր երեք աւուր պաշարով ուղղուեցաւ դէպ ի Մայրաքաղաքը, որուն պատուարքը անպահապան գտան և իմանալով որ թշնամին ապաւիններ է Փէքինէ տասը հազարամեզր հեռու՝ կայսերական Ամարաստանը, հոն ուղղուեցան Գաշնակիցք: Նախ հասան Գաղղիացիք և գեղեցիկ անուշարոյր ծառաստաններէ և ուղիներէ անցնելով, մտան պալատը զոր գտան լքեալ: Գիշերը վրայ հասնելով երկրորդ օրը զօրավարն Մոնդուպան այց ելաւ սրահներուն՝ հրաման տալով որ իւրաքանչիւր սպայ ընտրէ յիշատակ մը և չդպչուի հարստութեանց մինչև հասնին Լորս Էլկին և զօրավարն Կրանդ:

Կայսերաց Ամարաստանը շինական ճարտարապետութեան գլուխ գործոցը կը համարուէր: Արտաքին հիանալի տեսքը սակաւ ինչ էր ներքին ճարտարապետութեան և զարդուց քով: Պալատը մարմարեայ սանդղաներով կ'մտցուէր և ընդ առաջ կ'ելլէին ըն-

1. Նաբուէոն Գ ի վարձատրութիւն այս յաղթութեան, զզօրավարն Գուգէն Մոնդուպան Մեծ-Խաչ Լեգէոնի անուանեց: Յետոյ 1862ի Յունվարի զինքը կոմս Փալի-Քառլի կոչեց: Առաջարկեց նաև թոշակ մը, սակայն Օրէնսդիր ժողովքը մերժեց:

դարձակ և ճոխ սրահք, որոց որմուկը ծածկեալ էին մետաքսեայ նկարներով: Ամէն կողմ անօթք ոսկւոյ և արծաթի, ակունք, մարգարիտք, անդամանդք: Մառք վրանին ագուցեալ ամենազգի թանկագին քարերով և պտուղք ընտիր ականց, բիւրեղեայ կերտուածք և փոքրիկ պալատք:

Այս մոգական սրահներէն զատ կային ուրիշ բազմաթիւ սենեակք մուշտակաց և ճոխ զգեստեղինաց կայսեր և կայսրուհւոյն: Ապա կու գային իրենց սեպհական սենեակները: « Անհնար է նկարագրել ինչ որ կը պարունակէին այս սենեակք, կը պակսին բառեր բացատրելու նիւթական և արուեստական ճոխութիւնքը: Մինչև հոն տեսածնիս սին ստուերագիծ մ'էր այժմ դիմացնիս բացուած տեսարանին: Երևոյթ մ'էր Հաշու և Քիչերներու, Հմայութիւն մը, զոր ցնորայոյզ երևակայութիւն մ'անգամ չէ կարող երագել դիմացնիս եղած ճշմարտութիւնը ¹ »: Պալատը կը շրջապատէին պարտէզք, ամպհովանիք, տաճարք, լիճք, գաւիթք, արհեստական բլուրք, քարանձաւք և բազմաձև փոխքներ: Այս ամէնը դիտողաց սրտին մէջ նախ հիացումն ծնաւ որուն յաջորդեց փութով անյագ տենչ մը զանոնք ստանալու. զինուորք կը սպաննային բռնի ներս մտնել թէ իրենց շթողուէր. և այն ատեն սկսաւ այն աւարառութիւնը զոր իշխանութիւնը ջանաց արտաքսապէս օրինաւոր ձևի մը ներքև դնել և զոր աւելորդ է նկարագրել: Աւարառութիւնը տեկց մինչև որ հասաւ զօրավարն Կրանդ:

Այն ատեն իւրաքանչիւր ազգէն մասնաժողով մը կազմուեցաւ, ընտրելու արժանաւոր մասն այն աւարներէն Մեծին Բրիտանիոյ թագուհւոյն և Փաղղիոյ կայսեր համար: Յետոյ բաշխուեցան զօրավարաց, սպայից և մնացեալքը աճուրդի հանուելով, իւրաքանչիւր զինուոր ստացաւ ֆր. 100: Իսկ ինչ որ չկարացին աւնուլ կամ կրել, ջախջախեցին, փճացուցին, այսու իբր վրէժ խնդրելով այն տանջանքներուն զորս

1. Արշաւանք ի Զինաստան: Փոլ վարէն:

կրեր էին իրենց գերիները այն պալատան մէջ Չինաց կայսեր առջև :

Դաշնակից բանակը Հոկտեմբեր 9ին երեկոյ հասան Փէքինի որմոց ներքև : Յիրաւի թաթար գունդերը Դաշնակցաց բանակէն այսպէս վայրատեալ ժամանակ կըրնային փորձ մը ընելու զանոնք մէկմէկէ բաժնելու . բայց մանտարիները բարերազգարար ունկնդիր եղան խորհրդոց զօրավար Իկնադիէֆի որ Ռուսական դեսպան էր ի Չինաստան և սահմանուեցաւ Հոկտեմբեր 14ին Դաշնակցաց յանձնել Փէքինի դռներէն մին : Անգղիացիք նախ հասան և մտան մայրաքաղաքը առանց սպասելու Քաղղիացւոց որք հասան ապա և ծածուկ զայրոյթ մը ունեցան սրտերնուն մէջ ընդդէմ զինակցաց :

7. Դաշնակիցք ի Փէքին . Հրկիզումն Ամարաստանի Չինաց կայսեր : — Որչափ որ Դաշնակիցք հասնելով ի Փէքին , իրենց պատւոյն վրէժը առած կը համարէին , սակայն ձմեռը երթալով կը մօտենար և այն ցուրտ երկիրներու մէջ որուն սովորեալ չէին մանաւանդ Քաղղիացիք : Սահմանուեցաւ որ բանակները քաշուին և ձմեռեն ի Դիէն-Չին , բայց Փէքին չթողուցած հարկ էր վերջ մը տալ պատերազմին : Չինացի իշխանութիւնք այլ և այլ պատրուակներով կ'ուշացնէին դաշանց ստորագրութիւնը : Լորտ Լչկին սպառնացաւ որ եթէ դաշինքը չստորագրուէին մինչև 23 Հոկտեմբերի , պիտի հրկիզէր կայսեր Ամարաստանը , և իւր սպառնալիքը քիչ վերջը իրագործեց . « այնքան անգղիացի հպատակաց տանջանքներու և մահուան վրիժուն յիշատակ մը ձգելու » համար , ինչպէս յետոյ ըսած է ուզելով ինքզինքը արդարացնել այսպիսի անիմաստ և բարբարոս դատեալ հրամանի մը համար . որով այն հրաշակերտ Ամարաստանը որ լի էր գրատուններով և բազմադարեան հազարաւոր ձեռագրովք . թող քանդակ , հարստութիւնք և ինչ որ կրնայ երևակայել չքեղ և ճոխ մարդկային միտքը , մոխիր դարձաւ : Քաղղիացի դեսպանը շուզեց մասնակցիլ այս հրամանին և բոլոր Եւրոպիոյ բողոքք

և ամբաստանութիւնք ծանրացան Անգղիոյ հրամա- նատարաց վրայ, և պատմագիրք իսկ ցարդ չեն կա- ռող արդարացնել պատմական այսպիսի մեծ բար- բարոսութիւն մը և կ'ընդունին որ կային բազում ե- ղանակք վրէժխնդրութեան: Եւ եթէ չինական վար- շութիւնը փութաց դաշինքը ստորագրելու, զայն ա- ռաւել կ'ընծայեն Իկնադիէֆ զօրավարին ջանից:

8. Դաշինք Փէքիսի: — Հոկտեմբեր 25ին պատ- րաստ էր Դաշինքը զոր ստորագրեցին Լորտ Էլզկին և Պարոն Կոօ Դաշնակցաց կողմէն և իշխանն Քոնկ Չինաց կայսեր կողմէն: Ըստ այս Դաշանց Անգղիա և Քաղղիա կրնային հաստատապէս և արատաւոր դեպքաններ ունենալ ի Փէքին: Գիէն Չին կը բա- ցուէր վաճառականութեան և Եւրոպացիք կրնային հոն ներկայացուցիչ ունենալ: Չինաստան իբր պատե- րադմի ծախք և տուգանք մը սպանելոց ընտանիքնե- րուն պիտի վճարէր ութ միլիոն դուէլ, ինքզինքը պի- տի արդարացընէր Թաքուի բերդերէն պահանորդաց յարձակման վրայ: Չինաց հրաման կը տրուէր գաղ- թականութեան և Անգղիա կը ստանար Քոա-Լուն:

Այս դաշինքը որչափ որ ալ նիւթականապէս մեծ շահ մը չէր բերեր Դաշնակցաց, բայց Անգղիա և Քաղղիա գաղափար կ'առնուին Չինաց զինուորական վիճակին և կ'իմանային որ « Երկնային կայսրութիւն » կոչուածը չէր այնպէս անյաղթ և ահարկու ինչպէս իրենց երբեմն կը նկարագրուէր:

9. ՃԱՓՈՆ. Դաշինք Ճափոնի հետ: — Լորտ Էլ- շկին և Պարոն Կոօ առաջին անգամ արտասովոր դեպ- քան զրկուած ժամանակնին ի Չինաստան, մասնաւոր հրահանգ ստացեր էին նաև Ճափոնի համար: Անգ- ղիացի դեսպանը նախ հասաւ 1858ի Օգոստոս 3ին ի Նանկասաքի և ապա Սիմուր ծովակալին հետ երեք պատերազմական նաւուք մտաւ Ետոյ մայրաքաղաքը: Հոն դաշինք հաստատուեցաւ որ « Հրաման է դեպ- քան ունենալ Ետոյի մէջ և հիւպատոս այն քաղաքաց մէջ՝ որք օտարաց վաճականութեան բացուած են: Օտար դրամք պիտի ընդունուէին ըստ համեմա-

տուրքեան իրենց կշռոյն ճափոնական դրամոյն հետ : Եթէ վաճառարերուծեան և եթէ արտահանուծեան տուրքերը պիտի նուազէին :

Ճափոնացիք յիմացականութեան գերազանց քան զՂինս փութով պիտի համաձայնէին եւրոպական քաղաքականութեան : Սակայն հոն ևս կար օտարաց ընդդիմութիւն մը զոր կը կազմէին ազնուականք, կալուածատիրական պեսք և ամբողջ Ճափոնի հոգևոր վարիչն որ կը կոչուէր Միտոմո : Ընդհակառակն քաղաքական վարիչն Գայտուն կոչուած, կողմն էր յառաջադիմութեան և բարեկամ օտարաց : 1863ի Օգոստոս 15ին Անգղիացիք իրենց ազգակցաց ոմանց սպանութեան վրէժն առնելու համար ոմրակոծեցին և այրեցին Քակոսիմա քաղաքը որ 80,000 բնակիչ ունէր և ուր կը նստէր Գայտուներուն պետը՝ Սաթսումա իշխանը : 1864ի ալ Գաղղիացիք, Հոլանտացիք և Ամերիկացիք միանալով Անգղիացւոց՝ կործանեցին Սիմոնոսէքի ամրութիւնքը և մտան Ներքին ծովը :

Անկէ վերջը Ճափոն ընդունեցաւ Եւրոպական ամենայն քաղաքականութիւն և յառաջադիմութիւն, անգղիական լեզուն պաշտօնական լեզու մը եղաւ, գաղղիացի սպայք ընդունուեցան բանակը կրթելու և հաստատուեցան շոգենաւային ընկերութիւնք, հեռագիրք և երկաթուղիք : Ճափոն մեծաքայլ ընթացաւ ի յառաջադիմութիւն որուն արդիւնքը յայտնապէս ցուցուց ապագայ ժամանակաց պատերազմներու մէջ ընդ Ղինս :



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԻՐ Բ

1. Աղեքսանդրի Թագաւորութեան առաջին տարիները. — 2. Աղեքսանդր Բ և Բարեկարգութիւնք, Յառաջադիմութիւնք. — 3. Գաստիարակութիւն և Վարժարանք. — 4. Նաւարկութիւն և Երկաթուղիք. — 5. Տաղստան և Շամիլ. — 6. Վիճակ Գիւղացւոց. Ստրկութիւն կալուածական. — 7. Ազատութիւն Գիւղացւոց. — 8. Կարգաւորութիւնք դատաստանականք:

1, Աղեքսանդրի Թագաւորութեան Առաջին տարիները: — Աղեքսանդր Բ երեսուն և եօթն տարուան էր գահը ելած ժամանակ: Ի բնէ քաղցր և մարդասէր՝ աւելցուցեր էր այդ յատկութեանց վրայ քաղաքագէտ միտք և այրական կորով մը, արդիւնք իւր հօրը Նիկողայոսի տուած դաստիարակութեան. և արդէն թագաժառանգ իշխան եղած ժամանակ գրաւեր էր առ հասարակ թէ հպատակաց և եթէ օտարաց ուշադրութիւնը, որոնք կը տեսնէին ի նա միացեալ Աղեքսանդր Ա և Նիկողայոս Ա: Եւ սակայն պիտի գերազանցէր հասարակաց կարծիքը, բոլորովին նոր շրջան մը բանալով Ռուսաստանի համար յառաջադիմութեան ասպարիզին մէջ:

Իւր հօրմէն ժառանգեր էր Ղրիմու պատերազմը և որչափ ալ կարծեօք հակառակ այդ կռուոյն ի սկզբանէ, սակայն իւր հօրը և միանգամայն ռուսական զինուց պատիւը պահելու համար, շուզեց անդէն դիմել ի հաշտութիւն, նա մանաւանդ նոր եռանդեամբ մը ուզեց մղել պատերազմը և զայս մասնաւոր հրովարտակով մը ծանոյց ժողովրդեան, որով վարչու-

թեան սկիզբը արդէն իւր կարծիքներով ծանօթ խաղաղասիրաց՝ կը գոհացնէր միանգամայն զինուորական և պատերազմասէր մասը: Բայց երբ Ղարսայ առումը այդ խմբին համար փոխադարձ մը համարուեցաւ Սէվաստոփոլի և պատուարեր ուսական զինուորութեան, այն ատեն Աղեքսանդր յանձն առաւ հաշտութիւնը:

Եթէ Բարիզու Դաշնաժողովոյն պայմանաց մէջ կային տժգոհացուցիչ յօդուածք, սակայն պարագայն կը պատուիրէր լռել և հաշտ ցուցնել սպասելով հանդարտօրէն ապագայ ժամանակաց:

2. Աղեքսանդր Բ եւ բարեկարգութիւնը: — Սակայն Արևելեան պատերազմը որչափ որ ալ կը լմննար ի վնաս Ռուսիոյ, այսու հանդերձ ներքսապէս կ'ունենար իւր մեծ օգուտը, բանալով Կայսեր և ամբողջ իմացական ժողովրդեան աչքին առջև այն սրբագրութիւնք թերութիւնք, որոնք մասամբ իւրք պատճառ եղած էին ձախողանաց և որոնք կրնային ապագային մեծամեծ վնասներ բերել: Աղեքսանդր հաստատապէս ըմբռնեց որ նախ հարկ էր կրթել զժողովուրդը և հաւասար ազնուականութեան նաև զուամիկը և դմակը. պէտք էր զայն բարձրացնել իւր խեղճ վիճակէն, զայն ալ մասն ընելով ընկերութեան. և ներկայ ժողովրդոց յառաջադիմութիւնը կը կայանայ ամբողջովին դասուց միարան ընթանալուն մէջ յիմացականութեան ճամբան: Լաւ էր զինուորական խիստ բարեկարգութիւնը որ իւր հօրը թագաւորութեան բնադրոշմն եղած էր, բայց քան զայն աւելի նախադաս էր փոխադարձ սէր մը ընդ իշխանն և ընդ ժողովուրդ: Իւր թագադրութեան շքեղ տօները աւելի դարդարեցին շատ մը յանցաւորաց և աքսորելոց տրուած շնորհքները և ներումները, և այդ գութը և հաշտութիւնը աւելի տիրեց սրտերու և զանոնք փոխեց քան բազմամեայ բանտերը: Բանաստեղծք և մատենագիրք որոնք նախորդ թագաւորութեան ժամանակ միշտ խիստ հսկողութեան ներքև էին, հիմայ յայտնապէս կարծիքնին ոչ միայն կրնային ըսել, այլ և գրել: Նոյնը նաև լրագիրք և պրակք, որոնք

գոգցես չէին կարող հաւատալ այս աղատութեան: Գիւրընցան յօտարս ուղևորութիւնք որոնք խստիւ արգելեալ էին և օտարաց հեշտ եղաւ Ռուսաստան մտնել, ուրով գիտութիւնք, ճարտարութիւնք և արհեստք հսկայաքայլ յառաջեցին: Պետութիւնն ինքնին խրախուսեց այս երթևեկութիւնքը փափագելով որ ունենայ ընտիր հպատակք որոնք մանկավարժութեան և անոր ձիւղից մէջ յառաջանան ի Գերմանիա և կամ ի Չուիցցերի և ուրիշ երկիրներ: Վերցուեցան անաշու արգելքները օտարալեզու գրքերու մասին, որոց մուտքը արգիլուած էր մեծաւ մասամբ, և ներքին տպագրութիւնը շափաւոր և իմաստուն ազատութիւն ստանալով մեծապէս բազմացաւ և ծաւալեցաւ: Ոչ միայն քրիստոնեայ ուրիշ դաւաւնութիւնք արտօնութիւն ստացան ակատապէս եկեղեցիներ ունենալ և ըստ իւրեանց կարգաց վարուելու, այլ մեղմացան ևս Հրէից դէմ եղած խստութիւնք: Աղեքսանդր ի բնէ սիրող էր հաւասարութեան:

Հաւասար այս ամէն աղատութեանց, աճեցան երկրին արհեստք և ճարտարութիւնք: Շատ քաղաք մըրցեցան մէկմէկու հետ գերազանցել կտաւի, մետաքսի, մետաղաց, կաշւոյ, պողովատի և շաքարի գործարանք հաստատելու համար, որոնք փութով մեծ համբաւ ստացան և արտարերութեան մեծ մաքսը բունի մղումն տուաւ երկրին բերքերուն: Վաճառականական շարժման օգնելու համար, դրամատուններ հաստատուեցան քաղաքաց և աւաններու մէջ, ինչպէս նաև Խնայութեան Արկեղք աղքատաց համար:

3. Գասսիլարակութիւն եւ վարժարանք: — Աղեքսանդրի մասնաւոր ինամոց նիւթ եղան վարժարանք մեծապէս յետնեալք ի Ռուսաստան. համալսարանք ի Փէդէրսպուրկ, Մոսքովա, Խարքով, Խաղան, Քիէվ, Տորբաթ և յՕտէսսա նոր փայլ ընդունեցան: Երկրորդակարգ վարժարանք բազմացան և մանաւանդ նախանձելի յառաջադիմութիւն ստացան աղջկանց Բարձր վարժարանք և կրթարանք, որոց վրայ առանձին պաշտպանութիւն մը ունեցաւ կայսրուհին: Բնաւ Պետութեան մը մէջ այնպէս երազ և մեծ ընդարձակութիւն

մը առած չէ աղջկանց դաստիարակութիւնը որպէս ի Ռուսաստան: Այս մղման արդիւնքն էր որ արդէն 1875/ի Փէդրպուրկի համալսարանին մէջ 169 աշակերտուհիք կը յաճախէին բժշկութեան և վիրաբուժութեան դասարանաց:

Եւ որովհետև Գպրոցական մասին վրայ է խօսքերնիս, գիտէ ամենայն ոք թէ ի Կովկաս, ի Տփղիս ի Ռուսահայս ինչ բարձր աստիճանի հասան Ազգային երկուսեռի իսկ վարժարանք, որքան բազմացան և կարեւորութիւն ստացան կրթական հաստատութիւնք և ինչ զարգացումն ունեցան մատենագրութիւնն, թատրոնք և լրագիրք: Յիրաւի Կովկասի այդքան մեծաքայլ յառաջադիմութեան արդեանց մէջ պէտք չենք մոռնալ իւր կառավարչապետին անմոռաց Մեծ-Գուքս Միքայէլի, կայսեր հարապատին մեծեռանդն ճիգը, բայց և ինքը թարգման և գործադիր էր բարձրագոյն կամաց:

4. Նաւարկութիւն եւ Երկսթուղիք: — Մտաւորական յառաջադիմութեանց հաւասար կ'ընթանար նաև Ռուսաստանի նիւթական յառաջադիմութիւնը: Պատերազմին երկարութեան պատճառաւ երկիրները անմշակ մնացեր էին, Աղեքսանդր նուազեցուց բանակաց թիւը, որպէս զի երկրագործք բազմանան: Իւր այցելութիւնը ի Շղուդկարտ Նաբոլէոն Գի և ի Վայմար Աւստրիոյ կայսեր, խաղաղութիւնը անվրդով պահելու համար էր, որով կրնար հանգիստ սրտով զբաղիլ իւր երկրին բարւոքման: Վաճառականութեան դաշինքներ հաստատեց և կամ նորոգեց Եւրոպիոյ ամէն Պետութեանց հետ և շափաւորեց տուրքերը, այսպէս վաճառանենգութեան դիմացն ուզելով առնուլ: Իրեն մասնաւոր խնամոց նիւթ եղաւ նաւարկութիւնը և այն մանաւանդ Վաճառակաւական նաւարկութեան ընկերութիւնը զոր մասնաւոր իւր հովանաւորութեան ներքև առաւ: Նմանօրինակ ընկերութիւնք տարածուեցան Կասպից ծովուն, Հիւսիսային ծովուց և լճից մէջ: Օտար նաւարկութեանց ազատութիւնք բազմացան ի Պալթիկ և ի Սև ծով և յետոյս մէջ

յիշենք զգաղղիացի շոգենաւս վաճառականական Փաքէ և Ընկերութեան, որ ընդերկար կոչուեցաւ Հայկուն ընկերութիւն, շնորհիւ հայ վաճառականաց և արդիւնաբերաց: Թղթատարք կանոնաւորեցան և հեռագիրը ամէն կողմ հաստատուեցաւ:

Արտաքին փոխառութեամբ նաև բազմացուց երկաթուղիքը, որոնք փոխադարձարար առաւել ևս մըղումն տուին երկրագործութեան և վաճառականութեան, որոնք երկրի մը ստոյգ աղբիւրքն են հարստութեանց: Եւ այս ճամբաները մղուեցան ի Կովկաս և ի հարաւային Սիպերիա: Կովկասեան երկաթուղին որ կը կապէ զՍև Մով Կասպից հետ յորդաՀոս գետ մը եղաւ նորանոր ապրանքներու թէ ի Պարսից և թէ յԱղճախից և ի Թուրքաստանէ: Իսկ նաւթին գիւտը ի Բաքու և ի չրջակայս, գոգցես ոսկեհանք մը եղաւ բովանդակ Կովկասի և Ռուսաստանի որ հաւասարագոր սկսաւ մրցիլ և յաղթել իսկ ամերիկեան նաւթին: Նաւթին գիւտը ձգեց ի Կովկաս մեծամեծ գրամատէրներ և միլիոնաւոր աշխատողք, որոնք նոր ձոխութիւն մ'աւելցուցին Ռուսական հողոյն և ևս յառաջ մղեցին ճանապարհները և երկաթուղիք. և բովանդակ Ռուսաստան կապուեցաւ այս նոր ձոխութեանց հետ մինչև ի Բաքու, Վլատիկաւկասի վսեմ ճամբով: Տասը տարի վերջը այս ուղիները պիտի հասցնէին զՌուսաստան մինչև ի Սմրզանտ և ի Խիվա, զինքը սահմանամերձ և ախոյեան ընելով Անգղիական Հընդկաստանի:

5. Տաղստան եւ Շէյխ Շամիլ: — Ռուսաստան աւելի ազատութեամբ կրնար զբաղիլ Հարաւային ծովերու նաւարկութեանց և երկաթուղիներու Յայսկոյս և Յայնկոյս Կովկասեան լեբանց, յետ նուաճելու մանաւանդ բովանդակապէս զՏաղստան իւր լեւեռ, լեռն և լեռնցեղերով, որոց զլուխ կեցաւ ընդ երկար վիպասանական դիւցապն Շամիլ նեղելով զՌուսս և յամին 1859 Օգոստոսի անձնատուր եղաւ ինչպէս պատմած ենք Տաղստանի պատահարաց կարգին՝ Պատմութեանս Առաջին

Հատորոյն մէջ¹: Աղեքսանդր պատուով ընդունեցաւ ըզ-
Շամիլ և իրեն ազնուականութեան աստիճան տուաւ: Միանգամայն պատշաճ տեսաւ այդ անհանդարտ ժո-
ղովուրդքը իրենց լեռներէն իջեցնել Կովկասու դաշ-
տային տեղեր, մանաւանդ ի Գանձակ: Սակայն թա-
թարք, Նողայք Չէրքէզք մահմէտական ըլլալով, մեծաւ
մասամբ չուզեցին յարմարիլ և հնազանդիլ նոր եղած
կարգադրութեանց, որոնք քրիստոնեայ պետութենէ
մը ըլլալուն պատճառաւ իրենց ծանր կուգար: Միան-
գամայն լեռնցի ազատ և վայրագ ցեղ մը, չէր կրնար
յօժարակամ թողուլ իւր սիրելի ժայռերը. այն օրուը-
նէ կամայ և ակամայ սկսաւ այն անվերջ գաղթակա-
նութիւնը Չէրքէզք, Սև ծովուն Տաճկական ափուն-
քը և ի Փոքրն Ասիա որ ցարդ կը տեւէ և որ տարա-
փոխիկ հիւանդութեամբք 1863 և 1864 տարիներուն
մէջ շատ կեանքեր հնձեց թէ եղկելի և թշուառ գաղ-
թելոց և թէ հիւրընկալ քաղաքներու: Օսմանեան պե-
տութիւնը իբր կրօնակից շատ սիրով ընդունեցաւ
միշտ այս միլիոնաւոր գաղթեալքը, ջանալով ըստ կա-
րի հասնիլ անոնց աղքատութեան և թշուառութեան.
զանոնք տեղաւորելով մասնաւորապէս հայկական գա-
ւառները և գիւղերը: Յամին 1861ի ի Կիլիկիա միայն
գաղթեալք կը համրուին 30,000 անձինք, կրկինը ի
Սամսոն Սեբաստիա և Եւդոկիա. սակայն իցի՛ւ թէ այդ
չէրքէզք իրենց վարմունքով և աւարառութեամբք դը-
ժուարութիւններ յարուցանելով չվարձատրէին Օսմա-
նեան Պետութեան ցուցուցած գուժը²:

6. Վիճակ գիւղացւոց. Ստրկութիւն կալուածաւ

1. Ժամանակակից Պատմութիւն Ա. Հատոր Գլուխ Ի § 6:
2. Հարիւրաւոր վկայութիւններէն մէկ միայն յիշեմք ժամանակի
լրագրութեանց մէջ « Խարբերդէն և Սեբաստիայէն եկած
նամակները կը ծանուցանեն թէ թաթար գաղթականները լեռ-
ներուն ու դաշտերուն մէջ հանապարհորդներու վրայ կը յարձը-
կին և զանոնք կը կողոպտեն. եղեր: « Սամսոնէն մայրաքա-
ղաքիս Գուռիէ ա՛Սոխան լրագրին գրուած նամակի մը մէջ հե-
տեւալը կը կարդանք. Ուզուն Իսայլայէն խիստ ծանր լուրեր

կան : — Քան զամենայն բարեկարգութիւն Աղեքսանդր Բի անունը և սիրտը հռչակողն՝ որ գոգցես դրոշմ և կնիք եղաւ իւր թագաւորութեան տալով իրեն Աշտարակի և մինչև Հայ Հայրենեաց անուանակոչումը՝ եղաւ զիւղացւոց վիճակին բարւոգումը և զանոնք ազատելը իրենց կալուածատեարց գերութենէն :

Ի Ռուսաստան գիւղացիք երեք մեծ դասակարգութեան կը բաժնուէին՝ Գիւղացիք Արքունի, Գիւղացիք կալուածատիրութեան, և ծառայք կամ տնայաչք : Առաջինքը զրեաթէ կրնային ազատք համարուիլ վճարելով իրենց համար սահմանեալ եկամուտը, և կախումնին էր ի Պետութենէ և կամ Պետութեան պաշտօնէիցմէ : Ծառայից կամ տնայաչից թիւն կը համարուէր 400,000, իսկ կալուածատիրութեան գիւղացիք ըստ սզգահամարին որ կատարուեցաւ, կային 23,000,000. բնաւ չունէին հող մը և հաստատուն սահման մը եկամուտի վճարման մէջ : Գիւղացին բռնադատեալ էր աշխատելու և իւր աշխատութեան պըտուղը բովանդակապէս ընծայել կալուածատիրոջ, որուն կամքէն և առատաձեռնութենէն կախումն ունէր իւր ապրուստին եղանակը : Եւ որպէսզի զինուորութիւնը և զլիսահարկը չնուագի, ինքը կարող չէր թողուլ երկիրը և գաղթել, և կամ սեպհական չող մը ստանալ : Կալուածատիրոջ հողին հետ կապուած էր

եկան : Յիշեալ նահանգին մէջ Չերքէզներու գաղթականութիւն մը հաստատուեր է : Այս նորեկները կ'երևի թէ ստացուածոց սեպհականութեան վերայ խիստ սխալ գաղափար ունին : Մօտերը գտնուող քիւրտերուն անդեայքը համարձակեր գրաւեր են : Քիւրտերն ալ չ'անդուրժելով զէնք առեր Չերքէզներուն վրայ գացեր, սաստիկ և արիւնհանդ կռիւ մը ըրեր են, որուն մէջ վեց հարիւր Չերքէզ և հարիւրի չափ քիւրտ սպանուեր են : Սեքաստիոյ Հաֆրզ փաշան և Հանի Ահմէտ փաշան քանի մը գումարտակ զօրքով և տեսչութեան զինուորներով կռուին տեղը գացեր են խաղաղութիւնը հաստատելու համար » : Մատն. 1861 Հոկտ. 11 : Եղան նաև որք դարձան յետս ի Ռուսաստան :

առանց կարենալու վայելել իր արթնութեան և սր-
դար ջանից արդիւնքը: Եւ հետաքրքրելին այն էր որ
այս ազգի ստրկութիւնը աւելի յատուկ էր բնիկ ռուս
նահանգաց և կային գաւառք ի հիւսիս և կամ՝ յետոյ
աշխարհակալեալք, յորս շկային այդ սովորութիւնք:

Նախկին կայսերք և կայսրուհիք միշտ աւելի ազ-
նուականաց կողմը բռնեցին և հազիւ այս դարուս
սկիզբը, Քաղզիոյ Յեղափոխութեան շառաչէն վերջը,
Չարերը փափագ ունեցան բարւոքելու այդ թշուառ
դասակարգին վիճակը. նա մանաւանդ գիւղացիք Նս-
բոլէոնի արշաւանին միջոց յուզեալ և անորոշ վիճակ
մը բռնած էին և մինչև յոյս մը որ թերևս օտարին
արշաւանաց առթիւ ազատութիւննին ձեռք ձգեն: Ա-
ղեքսանդր Ա իւր հռչակեալ մարդասիրութեամբը նախ
ունեցաւ այդ ազատութեան գաղափարը և Նիկողայոս
որ մասնաւոր հակամիտութիւն մը չունէր ուրիշ նիւ-
թոց մէջ ազատական քայլերու, յայտմ ինքն ևս ու-
զեր էր բարւոքումն մտցնել և զանազան անգամ հրու-
վարտակներով որոց վերջինն էր 1848ի, իրաւունք ան-
գամ կու տար գիւղացւոց հող ստանալու ¹:

7. Ազատութիւն Գիւղացւոց ²: — Աղեքսանդր Բ
Բարիգու Քաշնաժողովէն քիչ վերջը հրաւիրեց բարձր
ազնուականութիւնը միաբան խորհելու գիւղացւոց մա-
սին. բայց անոնց կողմանէ մասնաւոր փոյթ մը չտես-
նելով, ինքնին Յանձնաժողով մը կազմեց: Սակայն
երբ այդ ևս ապարդիւն մնաց, այն ատեն հաստատա-
պէս սահմանեց աներկիւղ հասնելու իւր նպատակին
չնայելով որ և իցէ ընդդիմութեան թէ ըլլան նոյն իսկ
բարձրաստիճանք:

1. Նիկողայոսի վարչութեան հակառակ գրիչ մը կ'ըսէ. « Արդա-
րութեան համար պէտք է ըսել որ բոլոր իւր կենաց մէջ միշտ
փափագ ունէր ազատելու գերիները»: Պետ. Տոկոբոլքի.
Ճշմարտութիւն Ռուսիոյ իրոյ: Երայ. Բարիդ 1860:

2. Սոքա այն գիւղացիք էին որոնք ռուսական բառով «բեռնակ»
կը կոչուէին, որոնք չէին երբէք ստրուկք ըստ բուն նշանա-
կութեան բառին. այլ չէին ազատք հողային աշխատութեանց
մէջ:

Արդէն Տպագրութիւնը մեծ ուրախութեամբ և հիացմամբ ողջունել էր Կայսեր առաջարկը: Քաղաքացւոց յառաջացեալ խումբերուն մէջ այս էր կարծիքն որ գիւղացւոց ազատութիւնը առաջին քայլ մ'է սահմանադրական ուրիշ ազատութեանց: Կար մաս մը ևս կալուածատեարդ որ գիւղացւոց ազատութեան փոխարէն լուսագոյն դրամական փոխարինութիւն մը կը համարէր ընդունիլ: Աղէքսանդր գաւառաց մէջ 46 Յանձնաժողովք ձեւացուց, որոնք կայսեր կամաց հնազանդելու համար ազատութիւնը քուէարկեցին, սակայն խնդիրը կը մնար միայն կալուածատեարքը գոհացնել: Կայսրը ուրիշ Բարձրագոյն Յանձնաժողով մը կազմեց, որուն նախագահութիւնը իրեն պահեց և յորում անդրդուելի հաստատամտութեամբ յաւալ մղեց իւր փափաքը: Բայց քան զամէն Յանձնաժողով աւելի մեծ ազդեցութիւն ըրին իւր ուղևորութիւնք նահանգէ նահանգ, քաղցրութեամբ ջանալով համոզել ամէն կալուածատեարք: Փաւառական Յանձնաժողովոյ կարծիքն այն էր որ գիւղացիք տասն տարիներու մէջ իրենց ազատութեան համար փոխարինութիւն մը վճարեն ստանալով միանգամայն սահմանեալ չափով հող մը: Կայսրը կ'ուզէր անմիջական ազատութիւն և օրինակ տալու համար, ազատ ըրաւ կայսերական տան բոլոր գիւղացիքը, առանց փոխարինութեան մը և շնորհելով իրենց մշակած հողերնին: Կայսեր օրինակը կամայ և ակամայ մղեց նաև ազնուականութիւնը. ամէնքը համաձայն գտնուեցան այս ամենամեծ մարդասիրական գործոյն և 1861ի Փետրուար 19ին (Շ. Տ.) կը հռչակուէր հրովարտակը որով ստրուկ գիւղացիք ազատ կ'ըլլային ուրիշ ազատ մշակաց պէս և իրենց կը մնար մշակած երկիրներնուն մաս մը որ ըստ իւրաքանչիւր գաւառի կը սահմանուէր առ առաւելն և առ նոսրն: Այս շնորհեալ մասը միջին հաշուով կ'ըլլար առ իւրաքանչիւր արուերեք դիւրիւն¹: Իսկ մնացեալ մասերու փոխարինութեան համար առ կալուածատեարս Պետութիւնը փոխ

1. Տեսիագրին է 10.923 քառակուսի մէր:

դրամ կուտար: Այսպէս Պետութեան միայն պարտական կը մնային և ազատք էին կալուածատեարց նրկատմամբ: Իսկ ծառայութեանց մէջ եղող 400,000 ստրուկք որոնք հողագործութիւն չունէին, ազատք էին յետ երկու տարի ծառայութեան: Այս կարգադրութեանց մէջ որպէս զի շյառնեն շփոթութիւնք, հաստատուեցան Սէնտրալ հարբարք. որոնք ամէն ջանք ըրին ուղղութեամբ և հանդարտութեամբ գործը յառաջացնել: Սակայն ռամիկը ազատութիւն գտած ժամանակ միշտ մեծագոյնը կ'ուզէ և կամ կը կարծէ: Գիւղացիք մաս մը իրենց — — — — — սահմանեալ հողն ընդունելէն վերջը բնաւ փոխարինութիւն մը չէին ուզեր ճանչնալ միւս մասանց համար: Այլք բոլորովին տարբեր ազատութիւն մը կ'ըմբռնէին: Խոզանի կուսակալութեան մէջ Անտոն Փէդրոֆ անունով զիւղացի մը տասը հազար հոգի ժողուեց և անոնցմով ապրստամրեցաւ « Ղամարիտ Ազատութեան » համար: Սակայն ապստամբութիւնը փութով նուաճուեցաւ զինուք. հարիւր հոգի սպանուեցան և զլխաւորնին հրացանի բռնուեցաւ:

Այսու հանդերձ Աղեքսանդր շյուսահատեցաւ և ի զլուխ տարաւ իւր մեծ փափագը յորում օգնեցին իրեն նաև մեծ Գուքսն Կոստանդին, Մեծ Գքսուհին Հեղինէ որ 1859էն ազատեր էր իւր բոլոր զիւղացիքը: Գարձեալ ի պաշտօնէից և ի բարձր ազնուականութենէ ինքնայօժար օգնեցին կայսեր Ռոստովցոֆ, Փանին, Նիկոլա Միլիուզին, իշխանն Չէրքասքի, Լուրի Սամուրին, Քոչէլէֆ և այլք շատերը որոնք շնորհեցին զիւղացւոց — — — — — սահմանեալէն իսկ վեր: Յամին 1863 ստրուկ ծառայից համար սահմանեալ երկու տարին կը վերջանար, որով անոնք ալ ազատ կ'ըլլային: Աղեքսանդրի այս գործը չէր միայն գերագոյն եղանակաւ մը մարդասիրական գործ, այլ և մեծապէս քաղաքագիտական և ազգային յառաջագիմութեան չէնքին՝ ժողովրդական և հաստատուն շիմունք մը, որով կը սկսէր Ռուսաստանի ժողովրդեան նոր ընկերական կեանք մը որ ապագային պի-

տի ունենար իւր մեծ պտուղները թէ քաղաքական և թէ պատերազմական ձևակերպութեանց մէջ :

7. Բարենորոգմունք Դատաստանականը : — Յետ գիւղացւոց ազատութեան, Աղեքսանդրի հոգն եղաւ դատաստանական կարգաց բարեփոխմը, յորում Ռուսաստան տակաւին յետնեալ կը համարուէր և նիւթ մը քննադատութեան Եւրոպական Պետութեանց : Նոր կարգաւորութեանց համար նախ ուսումնասիրել տուաւ և ուսումնասիրեց Արևմտեան Ազգաց օրէնքները և մեծաւ մասամբ կարելի եղածները մտուց ի Ռուսաստան . ինչ ինչ փոփոխելով ըստ իւր ժողովրդեան բարուց : Դատաստանական վէճք հրապարակական եղան : Եղեռնական յանցանաց համար Երդու-եւր¹ հաստատուեցան : Ամէն նահանգ ունեցաւ իւր Նահանգ-ի-ն Դատաստանարանը² : Հաստատուեցաւ որ բողոքը Աղարութեան Ատենի³ երթայ : Իսկ վճռաջինը Ատեն-նը կը կազմէր Ծերակոյտը : Դատաստանական այս դասակարգութենէն զատ կար Հաշտարար Դատաւորաց⁴ Ատենը որ հաշտեցուցիչ դատերէ դուրս, էր դարձեալ տեսակ մը Ոստիկանութիւն . և օրական շատ մը փոքր դատեր կրնար վճռել, նոյն իսկ դրամականք որոնք չըլլային առաւել քան զ500 ռուպլի :

Յամին 1864ի օրէնքը իւրաքանչիւր կուսակալութեան մէջ բաց ի ժողովոյ կուսակալին ուրիշ Խորհուրդ ալ կը հաստատէր յերեսփոխաններէ, որոնք կ'ընտրուէին երեք տարուան համար, և որոնք թէ և մի անգամ իսկ հաւաքուէին տարին, բայց Մշտամնաց Յանձնաժողով մը ունէին և այս Յանձնաժողովը վեր էր քան զՔաղաքապահական Խորհուրդը :

Աղեքսանդր Բ մարմնոյ պատիժները վերցնել տուաւ բանակին և դատաստանաց մէջէն : Առաջին անգամ յամին 1859 Տէրութեան Ելեմուտքը ժողովրդեան հա-

1. Փրիսամնիէ դասէտադէլի :

2. Օքրուժնոյ Սուտ :

3. Սուտիէպտնայա Փալաւա .

4. Միրավոյ Սուտիա :

մար հրատարակուեցաւ : Գիտցաւ ժողովուրդը երկրին դրամական վիճակը և Աղեքսանդր Բ հասարակաց երախտագիտութեան հետ յինքն գրաւեց բովանդակ Եւրոպիոյ համակրութիւնը :

Աւանդ որ լեհական ապստամբութիւնը պատճառ կ'ըլլար Աղեքսանդրի խստութիւններէն զոմանս աստիճան մը նորոգել, զոր պիտի տեսնենք յետագայ Գլխուն վերջին մասանց մէջ :



ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

1. Լեհաստանի վիճակը յամին 1857. — 2. Յուզմունք և ապստամբութիւն ի վարչաւիս. — 3. Աղեքսանդր կայսեր զիջող ընթացքը. — 4. Եկեղեցական Դասը և Ազնուականութիւնը. — 5. Մեծ Դուքան Կոստանդին փոխարքայ ի Լեհաստան. — 6. Զախողութիւնք ապստամբաց — խստութիւնք վարչութեան. — 7. Լեհաստան և Եւրոպական Պետութիւնք. — 8. Ի սպառ ընկճումն Ապստամբութեան ի Լեհաստան. — 9. Ռուսական վարչութեան ոգին և ուղղութիւնը Լեհաստանի ապստամբութենէն վերջը:

1. Լեհաստանի վիճակը յամին 1857: — Աղէքսանդր Բի քաղցրութիւնը և հոգը միայն ոռւս ժողովրդեան համար շտաճմանափակեցաւ, այլ ծաւալեցաւ նաև իրմէ կախումն ունեցող երկիրներու և ի մասնաւորի կ'ուզեմք յիշել զԼեհաստան, թշուառ երկիր մը, որ միշտ յիշող իր ազատ և փառաւոր օրերուն, այժմ կը հեծէր մաս մաս եղած:

Յամին 1856 Մայիսի, Աղեքսանդր շնորհեց դարձ ի հայրենիս 1830ի և 1831ի ապստամբաց, որոնք ներումն խնդրեն: Լեհաստանի կառավարիչ էր ծեր իշխանն Փապլեիչ, որուն անունը չէր կարելի որ քաղցր հնչէր Լեհաց: Երբ մեռաւ Բարիզու Դաշնաժողովէն քիչ առաջ, Աղեքսանդր անուանեց զիշխանն Կորչաքով որ բարձր ազնուական բարուց հետ ունէր նաև մարդասէր անձի մը համբաւը: Հրամանն եղաւ որ ամէն կրթարանի մէջ լեհ օրէնսգիտութեան ուսումն հաստատուի: Որպէս զի մշակութիւնը յառաջէ, քանի մը տարի Լեհաստան զինուորութիւն պիտի չտար: Վարչ

չաւիա կը բացուէր օտարականաց և Ռուսիոյ մայրաքաղաքաց հաւասար երկաթուղեաւ հաղորդակցութիւններ կ'ունենար: Թղթատանց, ի սահմանագլխի Քննութեան Սենեկի և ուրիշ պաշտամանց մէջ լեհացի լեզուն հաստատուելու: Քաղաքք իշխանութիւն ունեցան ընտրելու քաղաքավարչութիւնը և քաղաքազուխը: Ի վարչաւիա ժողովուրդը խնդրեց և հրաման ընդունեցաւ հաստատելու Խնայութեան կամ Երկրագործական ընկերութիւն մը, որուն նպատակը պիտի ըլլար յառաջեցնել երկիրը Երկրագործութեան և Արհեստից մէջ: Դադրեցան նաև հռովմէական եկեղեցւոյ մասին խստութիւնք և բանակցութիւնք հաստատուեցան Հռովմայ գահուն հետ, եպիսկոպոսաց ընտրութիւնքը դիւրացնելու համար: Պէտք է նկատենք որ Լեհաստան մեծաւ մասամբ եռանդուն հռովմէադաւան, ընդերկար մեծ ցաւեր կրեր էր ի Ռուսաստանէ կրօնական տեսակետով:

Ուրիշ ժամանակի մէջ Աղեքսանդր կայսեր տուած ազատութիւնք և արտօնութիւնք թերևս մեծ ուրախութեամբ և գոհութեամբ ընդունուէին, բայց Ղրիմու պատերազմէն վերջը, իրենց համար ուրիշ կերպարանք մը կ'առնուր, և բնաւ գոհ չըլլայէն գատ, կը խօսէին բարձր դասուց մէջ ապստամբութեամբ ձեռք բերել ազգային ազատութիւննին: Այս բանիս իրենց մեծ գրգիռ եղած էր իտալացի ժողովրդեան քիչ ատենուան մէջ ձեռք բերած միւթիւնը և անկախութիւնը:

Կը յուսար ինքը ևս գտնել յԵւրոպա համակրանք մը մանաւանդ ի Քաղղիոյ, ինչպէս գտեր էր իտալիա ի Նարոլէոնէ: Միանգամայն կը համարէր որ Ռուսաստան Ղրիմու պատերազմով տկարացած էր. որ պիտի շուարէր եթէ յանկարծ տեսնէր զԼեհաստան ապստամբած և պիտի բռնադատուէր դաշնադրելու անոր հետ:

Լեհաստանի մէջ բնիկ ժողովուրդը և մանաւանդ գիւղացի մասը, թերևս չհամարձակեր ապստամբութեան մը սակայն բազմաթիւ հարուստ և արհեստական սքսորեալք, գաղտ և յայտնի դրամով և գրութեամբ կը սնուցանէին այդ յուզումը: Եւ իրենց աժգոհու-

թիւնը աւելի սաստկացաւ երբ Աղեքսանդր Բ ամենայն առանձնաշնորհութիւններով հանդերձ, յայտնի ժողովրդեան ծանոյց իւր կարծիքը, որ երբէք յանձն չէր առնուր Լեհաստանի բաժանումը Ռուսիոյ միութենէն և Լեհաստան երջանիկ կրնար ըլլալ միայն հաւասարմութեամբ միանալով կայսերաց գերդաստանին:

1850

2. Յուզմունք եւ ապստամբութիւն ի վարչաւիա: — Տժգոհ ազնուականութիւնը յայնմէտէ առիթներ սկըսաւ փնտռել ժողովուրդը յուզելու: Նոյեմբեր 30ին երեսներորդ տարեդարձ 1830ի Յեղափոխութեան, փողոցներու և եկեղեցեաց մէջ ուրախութիւնք և հանդէսք կատարուեցան, որոնք ամբողջովին ազգային դրոշմ կը կրէին: Այս ուրախութեանց մէջ տրուեցան ժողովրդեան Քոչիուցքօ և Քոլինսքի զօրավարաց պատկերները. ազգային երգեր երգըցուեցան, յորս մանաւանդ մին՝ պարզապէս Լեհաստանի հառաչանք մ'էր ընդդէմ բռնակալութեան: Այս առաջին անպատուհաս փորձը զիրենք խրախուսեց երկրորդի մը: Փետրուար 25ին տարեդարձ Կրոխովի պատերազմին, Երկրագործական ընկերութիւնը, որ ազգային յուզման զուխ անցեր էր, ընդհանուր հրաւէրներ ղրկեց մեծ հանդիսիւ տօնելու այս տարեդարձը: Բազմախուռն թափօր մը որուն առջևէն կ'երթար երիտասարդ մը բարձր բռնած Լեհաստանի դրօշակը, ուղղուեցաւ դէպ ի կառավարչին Պալատը, ուր ժողովք գումարուած էր Երկրագործ Դասուն շատ մը բարւոքմանց համար. բայց պալատը չհասած ձիաւոր ոստիկանք բռնութեամբ ուզեցին ցրուել ամբոխը, որ դէմ դրաւ. զինուորք սուրերնին հանեցին ի պատեանէ և այնպէս սկսան վանել, զոմանս վիրաւորելով և զոմանս կալանաւորելով: Ըսուած է նաև որ մեռած մը եղած ըլլայ: Երկու օր վերջը ննջեցեալ մը փողոցէն տարուելով, խռովիչք գոչեցին ժովրդեան որ այդ անձը 25ին թոյցի ժամանակ սպանեալ էր: Ամբոխը երթալով ստուարացաւ և սկսաւ քար նետել կարկտօրէն ոստիկանաց վերայ որոնք կ'ուզէին ցրուել: Ոստիկանք այն ատեն զէնք գործածեցին և եղան բազում վիրաւորք և երեք մեռեալք:

1861

Յայնմհետէ ապստամբութիւնը յայտնի էր. բոլոր կըրպակները գոցուեցան. խումբ խումբ ժողովուրդ անգէն և աննպատակ սպատական երգերով այսր անդր կը սարուբերէր. բնաւ չվախնալով ոստիկանաց սպառնալիքներէն և գէնքերէն, միանգամայն մէկու մը յնաս չբերելով: Կորչաքով իշխանը մեծապէս տագնապած հրատարակութեամբ մը յայտնեց իւր մեծ վիշտը, պատուիրելով որ դատաստանական քննութիւն ըլլայ սպանելոց նկատմամբ, յանձն առաւ գժողովուրդը հաճելու համար որ ականաւոր քաղաքացւոցմէ Ապահովութեան Յանձնաժողով մը կազմուի. հանդիսաւոր թաղումն ըլլայ Փետրուար 27ի անկելոց և կայսեր ուզերձ մը ղրկուի որով լեհ ժողովուրդը կը խնդրէր « Ազգ մը որ ինքնին է » առանձին օրէնսդրութիւն մը ունենայ իրեն համար՝ անձնական միայն՝ միութեամբ մը կայսեր հետ:

3. Ալիքսանդր կայսեր զիջող ընթացքը. — Աշէրականդր Բ այս ապստամբական յուղման անդէն զինուք չպատասխանեց. նա մանաւանդ Մարտ 26ին կայսերական հրովարտակ մը՝ կը հաստատէր լեհացի Պետութեան Ատեան մը և կանոնադրութիւն մը Հասարակութեանց, գաւառաց և կուսակալութեանց ժողովներու ընտրութեանց համար: Գարձեալ ի Վարչաւիա մասնաւոր պաշտօնարան մը կը կազմուէր Կրօնից և Հասարակաց Կրթութեան, որուն պաշտօնեայ կ'անուանուէր մարքիզն Վիելլոփոլսքի, որ 1831 Լեհաստանի յեղափոխական վարչութեան դետպան գոցած էր ի Լոնտրա և այժմ՝ ևս ընտիր ազգասէր մը կը համարուէր. միանգամայն հաճելի Ռուսիոյ վարչութեան:

Սակայն ժողովուրդը գոհ չեղաւ այս առանձնաչնորհութեամբք. իշխանն Կորչաքով գրեթէ աղերսելով ի հանգարտութիւն կը յորդորէր: Ազատականք պարգապէս սկսան անկախ Հասարակապետութիւն մը պահանջել և շարունակուեցան փողոցաց մէջ սգազգեստ խումբ խումբ ազատական երգերը: Վարչութիւնը իբր դարման՝ ցրուեց Երկրագործական ընկերութիւնը, զոր

պատճառ և զրդիչ կը համարէր յուզմանց . սակայն ընդհակառակն ժողովուրդը բոլորովին զայրացաւ : Մեծ թափօրով գնաց ազգային երգեր՝ հնչեցնելու Փետրուարի անկելոց գերեզմանին վրայ, ապա ուղղուեցաւ Երկրագործական ընկերութեան պալատը . պատուհանէն պարզուեցաւ լեհական դրօշը, յետոյ նոյն բազմութիւնը գնաց Ընկերութեան նախագահին՝ Չամոյսֆի կոմսին տունը և ապա Առուավարչին պալատը ուր հնչեցուց լեհ ազատութեան երգը : Իշխանը զինուորները դուրս հանեց, ապա ինքն ալ հեծեալ դուրս ելաւ յորդորելով զժողովուրդը որ ցրուին : Բայց մտիկ ընող չկար : Աորչաքով քանի մը վայրկեան շուարեալ մնաց, չկրցաւ արիւնահեղութեան հրաման մը տալ, գունդերը մի առ մի զինուորանոց զրկեց : Յետոյ ինքը ևս քաշուեցաւ յուզեալ ժողդրեան ծաղրածութեանց նշաւակ եղած :

Ապստամբք կարծեցին որ յաղթանակ մը տարին և զլիսաւորք առաւել ևս զրգոեցին ամբոխը չվախնալու : Երկրորդ օրը նոյն տեսարանք նորոգուեցան փողոցաց և կառավարչին պալատան դիմաց : Ամէն ջանք եղաւ որ ժողովուրդը ցրուի . երբ անհնարին եղաւ, այն ատեն թմրկի ձայնով երեք անգամ ժողովրդեան կարդացուեցաւ ցրուելու հրամանը, երբ ժողովուրդը սուլելով և քարով պատասխան տուաւ, այն ատեն հրաման եղաւ ոստիկանաց դաշոյնի լայնքէն վանել զամբոխը : Բայց ապստամբութեան կազմողք, կանխաւ ամենայն ինչ նախատեսեր էին . ոստիկանաց յարձակած ժամանակ եկեղեցական թափօր մը հասաւ խռովութեան վայրը, որուն առջևէն կ'երթային Սրբոց պատկերներ : Թափօրին անցքը երկու ժամ տևեց և ոստիկանք յարգանօք ստիպուած էին կենալու : Թափօրէն վերջը ժողովուրդը չցրուեցաւ . և երբ ոստիկանաց ջանքը անլսելի եղաւ, հրաման եղաւ զինուորացի հրապէնք գործանել : Հարուածք առաջին անգամ օդը պարպուեցան, որոց պատասխանեցին պատուհաններէն կարկտանման քարերը, յորոց շատ զինուորք վիրաւորուեցան և երկու ևս մեռեալք կը համարուին :

Այն ատեն հրաման եղաւ պարպել տուներուն և բազմութեան վրայ, և փութով բազմաթիւ վիրաւորք գետինը ինկան և 200 մեռեալք: Ամբոխը աղաղակներով ցրուեցաւ և քիչ վերջը մեռելատիպ լռութիւն մը տիրեց փողոցներուն մէջ: Երկրորդ օրը քաղաքը զինուորական կերպով բռնուեցաւ և հրատարակուեցաւ պաշարման վիճակը: Խստիւ արգիլուեցաւ ժողովրդեան հանդիսաւոր թաղումն մեռելոց և սգոյ զգեստներով հաւաքմունք:

Վարչաւիոյ ազատական յուզմունքը տարածուեր էր նաև մերձաւոր գաւառաց: Հոկտեմբեր 10ին ի Հոտլէվօ Լիթուանիոյ և Լեհաստանի սահմանագլխին վրայ երկու մեծ թափօրք՝ մինն լեհ և միւսն լիթուանիացի, տօնխմբեցին երկուց ցեղից դարական միութիւնը: Ռուս կառավարութիւնը, մարդասիրական խոհեմութեամբ, որպէս զի արիւն չթափի, բնաւ արգելք մը չեղաւ հանդիսին:

4. Եկեղեցական Գասը եւ Ազնուականութիւնը: — Մայիս 30ին վախճաններ էր խոհեմ իշխանն Կորչաքով և կայսրը անոր տեղ անուաներ էր զկոմսն Լամպէրդ, որուն մասնաւոր յանձնուած էր հանդարտեցնել եկեղեցական դասը և անոր միջոցով զժողովուրդը: Արդէն Ապրիլ 22էն մարգիզն Վիելլոփուքի հրովարտակով մը հրաւիրեր էր զլեհ քահանայս չգրգռելու զժողովուրդը և եկեղեցեաց մէջ ազգային երգերը դադրեցնելու, բայց ոչ քահանայք և ոչ արքեպիսկոպոսական փոխանորդը յանձն առին այս միջամտութիւնը: Եկեղեցական դասուն ոգին չէր ուզեր հաշտ ըլլալ յետ այնքան տարի կրօնական հալածանքներու: Կոմսն Լամպէրդ բովանդակ Լեհաստանը պաշարման վիճակի մէջ դրաւ, արգիլեց որ իրեք անձինք իսկ միաբան խմբուին ինչպէս նաև եկեղեցեաց մէջ ազգային հրգերը և սգոյ զգեստները: Հոկտեմբեր 15ին Քոչիւցքօ զօրավարին մահուան տարեդարձին ժողովուրդը Վարչաւիոյ մայր եկեղեցին խոնեցաւ: Զինուորական հրամանատարութիւնը զինուորներով պաշարեց եկեցին: Ժողովուրդը՝ յորս կային նաև բազում հանդար-

տարարոյ անձինք, վախերնէն եկեղեցիէն դուրս չեւ
լան և հոն անցուցին գիշերը: Երկրորդ օրը գինուոր-
ները բռնի մտան մայր եկեղեցին և 2000 հոգի բերդը
կալանաւոր տարին: Արքեպիսկոպոսական փոխանոր-
դը զմայր եկեղեցին պղծեալ հռչակեց և դռները գոցել
տուաւ մինչև որ « հաւատացեալք կարենան գալ ա-
պահովութեամբ աղօթելու »: Կոմսն Լամպէրդ որուն
անգիտութեամբ եղեր էր եկեղեցւոյն պաշարումը, բո-
ղոքեց Կէրսդէնսցվայկ զօրավար հրամանատարին ըրա-
ծին դէմ, որ յետ բուռն վիճաբանութեան մը ընդ կա-
ռավարչին, ինքզինքը ատրճանակի հարուածով մը ծանր
վիրաւորեց և քիչ օրէն մեռաւ: Եւ կոմսն Լամպէրդ
իւր հրաժարականը տուաւ: Լամպէրդ կոմսին տեղ զըր-
կուեցաւ կոմսն Լուտէրս որ խռովարարաց գլխաւոր-
ները և Երկրագործութեան անդամները կալանաւորել
տալով դղեակներու մէջ զրկեց: Կալանաւորուեցաւ նաև
արքեպիսկոպոսական փոխանորդը և մահուան դատա-
պարտուեցաւ. բայց յետոյ այդ պատժէն ազատ մնաց
Հոովմայ Քահանայապետին միջնորդութեամբ: Պարզ
քահանայ մը Ֆ'լինպի, որ մինչև այն ատեն Բէդբըր-
պուրկ ապրեր էր և Պետութեան հաճելի կը համա-
րուէր, արքեպիսկոպոս անուանուեցաւ, որ Վարչաւիա
գալով եկեղեցիներու դռները բանալ տուաւ:

5. Մոծ Գուքան Կոստանդին փոխարքայի Լեհաս-
տան: — Աղեքսանդր Բ միշտ նոյն յուսով որ կա-
րենայ վերջապէս քաղցրութեամբ և բարւոքումներով
չահիլ զԼեհս, իւր եղբայրը Կոստանդին Մոծ Գուք-
սը փոխարքայ անուանեց Լեհաստանի, իրեն խորհրդ-
դական տալով զմարգիպն Վիէլոփոլպի որ թէպէտ հայ-
րենասէր, բայց միշտ այն կարծիքը պաշտպանած էր
որ Լեհաստան իւր ազգային և առանձին օրէնքներով
պէտք էր միացեալ մնար Ռուսաստանի: Մոծ Գուք-
սը իւր եղբօրը իղձերով ներշնչեալ, գաւառական ազ-
գային տեսակէտով կարգադրութիւնք հաստատեց, կու-
սակալական ժողովոց գլուխք, դարձեալ լեհ պետական
խորհրդոյն անդամք, բնիկ լեհացիք անուանուեցան ի
կայսերէն: Համալսարանը ազգային կերպարանք մը

սուաւ . հաւասարութեան օրէնքին համաձայնելու համար , զարտուղութեամբ մը Հրէից ևս ընդարձակ աւանձնաշնորհութիւնք եղան : Մասնագլուխ հայրենասէրք որոնք անգործադրելի երազներով շէին սնանիր , խորհրդովք օգնեցին վարչութեան : Այսու հանդերձ շարունակուեցան գաղտ ընկերութիւնք , արգելեալ երգերը , և մինչև դաւաճանութիւնք եղան Լուտէրսի , Մեծ Դքսին և Վիէլոփուլքիի կենաց դէմ : Լեհ ազնուականութիւնը որոց գլուխ անցեր էր կոմսն Զամոյաքի՝ կը պահանջէր որ բաց յազգային մատակարարութենէ , ըլլայ նաև Ազգային Խօսարան մը որուն պիտի մասնակցէին նաև Պալատինեան Լիթուանիա և ուրիշ գաւառք որոնք երբեմն մասն եղած էին Լեհաստանի :

Ռուս տէրութիւնը որ ամէն քաղցր և ազատական միջոց փնտոներ էր յուզումը հանդարտեցնելու համար , հիմայ հարկ կը տեսնէր վերջ մը տալ այս յեղափոխական և ապստամբական շարժման որ երթալով կը տարածուէր Լիթուանիոյ մէջ ալ . և սահմանեց որ զինուորագրութիւնը սկսի քաղաքաց մէջ յամէն 1863 , մինչ շատ տարիներէ ի վեր դադրեր էր : Վարչաւիա մեծապէս վրդովեցաւ : Քաղաքավարչութիւնք բողոք և սղերս ներկայացուցին առ Մեծ Դուքսը , բայց ի գուր . սահմանուեցաւ բունի զինուորութեան տանել բովանդակ խռովիչ տարրը . բռնուեցաւ և աքսորուեցաւ կոմսն Զամոյաքի և 1863ի Յունուար 15ին գիշերը զինուորական իշխանութիւնը բռնութեամբ և կալանաւորմամբ ժողվեց զինուորագրեալքը :

Սակայն եղան նաև բազում փախստականք ալ որոնք այն ատեն յայտնապէս ապստամբական գունդեր կազմեցին զինուք Ռուսիոյ դէմ կռուելու համար , որոնք նախ գումարուեցան ի Պլոնիէ և ի Սիէրուք . և յետոյ անտառներու մէջ և անմարդի վայրեր՝ յօտարս աքսորեալ լեհացիներու հրամանաց ներքև : Կազմուեցաւ Առժամանակեայ վարչութիւն մը կեդրոնական Յանձնաժողով անուամբ , որ հրովարտակով մը գիւղացւոց կը բաշխէր իրենց մշակած երկիրը , պայ-

մանաւ միայն որ տուրք վճարեն և զինուորագրուին Առժամանակեայ վարչութեան: Մտուայից ուրիշ շնորհներ խոստացուեցան և հարուստներու իրենց օգնութեան փոխարէն ազգային կալուածներու վրայ փոխատրութիւն մը:

6. Զսխողութիւնը ապստամբաց. Խստութիւնը վարչութեան: — Սակայն այս հրաւերը չունեցաւ Յանձնաժողովոյն փսփագած արդիւնքը և փոքրիկ գունդեր՝ իւրաքանչիւրը ինքնագլուխ հրամանատարով մը, բնաւ զօրութիւն մը չտուին ապստամբութեան: Միէրոսլավսքի զօրավարը, 1848 – 49ի Յեղափոխութեան զլխաւորներէն մին՝ իւր հայրենիքը դիմեր էր և իշխանապետ անուանուեր էր, սակայն Փետրուարի մէջ յաղթուելով, կրկին ապաւինեցաւ յօտարութիւն: Նոյն վերջը ունեցաւ Մարիան Լանկիէվիչ որ ի սկզբրան փոքր յաջողութիւններ ունեցեր էր և ինքզինքը իշխանապետ անուաներ էր, բայց Մարտի 17, 18, 19ի գուպարածներէն վերջը փախաւ յԱւստրիա ուր կալանաւոր մնաց քիչ մը ժամանակ: Նմանօրինակ բաղդեր ունեցան Լէոն Ֆրանքովսքի, Սիկիսմոնտ Փասլէվսքի, Գաղիմիր Բոզտանովիչ, Միէլինսքի Պոսսաք Հաւքէ, ռուս բանակին երբեմն հազարապետ՝ զօրավարն Սիէրաքովսքի, որ ի Լիթուանիա պարտութենէն վերջը կախուեցաւ: Նշանաւոր դեր ունեցան նաև օրիորդն Փուսդավոյով, Զաքովսքի, քահանայն Մապէվիչ, Նարբուդ և Լէլէվէլ: Երբ այս զլխաւորք փոքր գուպարածներով յաղթուեցան կամ փախան, և շիկացին իշխանապետք, այն ատեն կեդրոնական Յանձնաժողովը ինքը առաւ վարչութիւնը, բայց այնքան գաղտ գործառնութեամբ, որ անհնար եղաւ ռուսական վարչութեան գիտնալ զայն կազմողաց անուանքը և անոնց բնակավայրը:

Կեդրոնական Յանձնաժողովը ըմբռնեց որ իրեն համար այլ ևս չէր կարելի կռուելով յաղթել, այն ատեն սկսաւ գաղտ դաւերը և սպաննութիւնները, յորս ահաւոր գործունէութիւն մը ցուցուց, ոչ միայն ի գիւղօրէս, այլ նոյն իսկ վարչաւիոյ մէջ: Ինքը կը դա-

տէր և կը վճռէր և իւր վճիռքը տպագրեալ կը հրատարակէր. կ'արգելուր որ ոուս վարչութեան տուրք վճարուի, ինքը զանոնք կը հաւաքէր բռնի և իբր մատնիչ կը հալածէր կամ կը սպաննէր ո՛վ որ ուզէր դէմ կենալ այս յեղափոխական շարժման: Ահաւոր վիճակ մ'էր քաղաքաց մէջ, ոուս կառավարութիւնը պատուհասելով զկասկածաւորս, որոնք վախերնէն օգնութիւն մը տուած էին Ապստամբութեան. և Ապստամբութիւնը պատուհասելով և դաւելով, որոնք որ հլու կամ հաճոյական կ'երևնային ոուս կառավարութեան: Ռուսաստան նորանոր բանակներ կը հասցնէր և Յեղափոխութիւնը անկարելի էր որ դիմանար: Պետութեան խտութիւնք բազմապատկեցան. Վիէլլոփուլքիի ձեռքէն իշխանութիւնը առնուելով տրուեցաւ Պէրկ զօրավարին, արդէն ծանօթ իւր խիստ զինուորական բնաւորութեամբ: Լեհաց բռնուող զլիաւորք ամէն կողմ կամ կախուեցան կամ հրացանի բռնուեցան, շատ աւաններ և գեղեր քանդուեցան և ինչ որ Պէրկ կը կատարէր ի Լեհաստան նոյնը կը գործադրէին Տլոդովքոյ ի Լիվոնիա և Աննէնքով յՈւքրանիս: Գերապայծառ Ֆէլինսքի Վարչաւիոյ արքեպիսկոպոսը, նամակով մը առ կայսրն Մարտի մէջ, աղերսեր էր որ Լեհաստան ազատ ազգ մը ըլլայ, իւր զլուխ ունենալով Ռուսիոյ հետ մի և նոյն գահակալը. Ֆէլինսքի, ի պատուհաս այս գրութեան, Ռուսաստանի ներսերը սքսորուեցաւ: Տէրութիւնը 1863ի Յուլիսի արդէն ապահով էր իւր յաղթանակին և Եւրոպական պետութեանց՝ որոնք փորձեր էին խօսքով միջամտութիւն մը ընել, աւելի հաստատապէս պատասխան կուտար որ «Լեհաստանի խնդիրը անոր վրայ իշխողաց միայն կը պատկանէր կարգադրել»:

1863

7. Լեհաստան եւ Եւրոպական Պետութիւնք: — Եւ յիրաւի որչափ որ ալ Լեհաց այս անգամուան Ապստամբութիւնը չունեցաւ 1794ի և 1831ի համակրանքը, այսու հանդերձ չէր կարելի որ չունենար իւր գթացողքը մարդասիրական և կամ կրօնական տեսակէտներով: ՅԱնգղիա և ի Գաղղիա հասարակաց կարծի-

քը յուզեցաւ Ազգի մը համար որ իր վերջին ճիգն կը թափէր իւր ազատութեանը համար: Իսկ պաշտօնական մարմինք կը դատապարտէին Ապստամբութեան « խարբերայ գրգռողները; կոյր հայրենասիրութեամբ մը»: Բայց և Անգղիա և Գաղղիա միացնելով միարան նաև զԱւստրիա սահմանեցին միջնորդութիւն և միջամտութիւն մը ընել ի նպաստ Լեհաց և Յունիս 17ին երեք պետութիւնք բարեկամաբար կ'առաջարկեն ռուսական վարչութեան, ընդհանուր ներումն, Ազգային Խօսարան մը, Հասարակաց Պաշտամանց լեհ պաշտօնեայք, Բարձումն հռոմէական կրօնից դէմ դժուարութեանց, Լեհաստանի մէջ միայն լեհ լեզուն ըլլայ պաշտօնական և Զինուորագրութեան նոր կարգաւորութիւն մը: Երեք Տէրութեանց առաջարկին չմիացաւ Բրուսիա որուն շահուն հակառակ էր Լեհաստանի ինքնավարութիւնը, ինքը ևս ունենալով լեհ գաւառներ, անոր համար Ռուսիոյ կողմը բռնեց և արդէն 1863ի Փետրուարի այդ իմաստներով դաշնադրութիւն մը ըրած էր Ռուսիոյ հետ:

Երեք Տէրութեանց բարեկամական առաջարկին Աղեքսանդր Կորչաքով իշխանը մերժողական պատասխան մը տուաւ ծանուցանելով որ Լեհաստանի խընդիրը այլ ևս չէր պատկաներ վեննայի դաշնաժողովը ստորագրողաց և թէ այդ ապստամբական յուզումը արդէն ընդհանուր Եւրոպիոյ ամէն կողմ եղած յեղափոխական շարժման հետեանք մ'էր, զոր Պետութիւնք պէտք էին ընկճել ամենուրեք: Գալով բարեկարգութեանց առաջարկներուն՝ արդէն Ռուսիոյ Պետութիւնը ինքնաբերաբար այն վեց առաջարկներէն զոմանս չնորհեր էր Լեհաց, որոնք սակայն չէին ուզած օգտուիլ: Լեհական խնդրոյն ծանուցագիրք մեծցուցած են Կորչաքովի անունը: Պետութիւնք իրենց առաջարկները մերժուելու ժամանակ երբէք մտադրութիւն չունէին եւրոպական պատերազմով կամքերնին յառաջ մղելու և արդէն Ռուսաստան իսկ գիտէր զայդ, նա մանաւանդ որ ամենայնիւ իրեն նեցուկ էր Բրուսիա որով և Պետութեանց միջամտութիւնը բնաւ ար-

գիւնք մը շունեցաւ և իւրաքանչիւրը լռելեայն խնդրոյն մէջէն հրաժարեցաւ. նախ Աւստրիա, ապա Անգղիա և Նարոլէոն միայն Հասարակաց կարծիքը գոհացնելու համար, մանաւանդ զկղերական մասը, Օրէնսդիր ժողովքին բացման առթիւ ըսաւ որ «Վեննայի Դաշնաժողովը ոտնակոխ եղեր էր ի Վարչաւիա և թէ փափագելի էր որ Դեսպանաժողով մը գումարուէր և հաստատուէր Պետութեանց համար Գերագոյն Դատարան մը որ համաձայնեցնէր ժողովրդոց և իշխանաց իղձերը և շահերը»: Նարոլէոն զրկեց իսկ հրաւէրներ առ Պետութիւնս այսպիսի Դեսպանաժողովոյ մը համար: Սակայն Պետութեանցմէ ընդունուեցան վերապահմամբ. իսկ Անգղիա բացարձակապէս մերժեց, որպէս զի Նարոլէոն այս առթիւ իրաւասու մը չերևնայ Եւրոպիոյ:

8. Ընկճումն ապստամբութեան ի Լեհաստան: — Յայնմհետէ Ռուսաստան ազատ էր իւր կարծած եղանակաւ ընկճելու ապստամբութիւնը և կարգադրելու Լեհաստանի համար: Այսու հանդերձ Աղեքսանդր Բ իւր մարդասէր բնաւորութեամբ չուզեց բնաւ ցուցընել վրէժխնդրութեան ոգի մը: Յետ ամէն կողմ ապստամբ գունդերու ցրուելուն, նորէն իւր տուած հողային և քաղաքական բարեկարգութիւնքը հաստատեց, բայց և լեհ ազգութեան մեծ հարուած մը տուաւ յիւր եկեղեցին և ի Դպրոցս: Պաշտօնական և հասարակաց գրութեանց մէջ ռուսերէն պիտի մտնէր փոխանակ լեհի, եթէ նախնական եթէ երկրորդական կրթութիւնը ինչպէս նաև Վարչաւիոյ համալսարանը, ռուսոյն հաստատութեանց ծրագրին կը վերածուէին: Լեհաստանի Ռաբաբրո-Նիւնը պարզ պատուանուն մը կը մնար. բարձր պաշտամունք Ռուսաց պիտի տրուէին. Լեհ պաշտօնատեարք Պետութեան ուրիշ կողմերը պիտի փոխադրուէին: Կ'արգելուէր ազնուականութեան հոլեր գնել ի Լեհաստան, ընդհակառակն գիւղացիք իրենց մշակած երկիրները կը ստանային: Եւ որովհետև Յեղափոխութիւնը յԱզնուականաց և յԵկեղեցականաց դրդեալ համարուեցաւ, 1865ի Նոյեմբեր 26ի հրովարտակ մը Պետութեան կը գրաւէր բոլոր ե-

կեղեցական կալուածները և եկեղեցականք Պետութեանէն պիտի ընդունէին ռոճիկնին: Հոովմէական եկեղեցին կորսնցուց ի Լեհաստան մինչև այն ատեն ունեցած առանձնաշնորհութիւնքը: Ի զուր բողոքեց Հոովմայ քահանայապետը, Ռուսաստան հաստատուն մնաց իւր որոշմանը վրայ, որով վերջ առին 1847ի Դաշլինք և խզեցան յարաբերութիւնք ընդ Հոովմ և ընդ վարչութիւն Ռուսիոյ:

9. Ռուսական վարչութեան ոգին եւ ուղղութիւնը Լեուստանի ապստամբութենէն վերջը: — Լեհաստանի ապստամբութիւնը չլնասեց միայն Լեհաստանի առանձնաշնորհութեանց և ազատութեանց, այլ կերպարանափոխեց Ռուսաստանի վարչական դրութիւնը այն մեծ հակազդեցութեամբ որ ունեցաւ սլաւական ոգոյն վրայ: Քաղքով Մոսկուայէ լրագրով Լեհաստանի պահանջմանց դէմ արթնցուց ռուսական զգացումը: Փառաւորեց և գովեց ամենայն ոք որ արութեամբ և խստութեամբ նուաճեց և ոչնչացուց Լեհաստանի ազգային հակառուս ոգին և Քաղքով իր այս սկզմամբ այնպիսի միաձայնութիւն և ազդեցութիւն մը ստացաւ մինչև պատկառելի ըլլալ կառավարութեան պաշտօնէից:

Աղէքսանդր Բ իւր առջևը նոր իրաց վիճակ մը տեսաւ և մինչ առաջին տարիներուն մէջ հակամէտ երևցիր էր ազգային տեղական առանձնաշնորհութիւնքը և բնագործը պահել, Լեհաստանի ապստամբութենէն վերջը այդ ուղղութիւնը սրբագրուեցաւ: Ռուսաստանի կառավարութիւնը, Դաստիարակութիւնը և Կրօնականութիւնը զգեցան Նիկողայոսի Ա. նոյն ոգին, պէտք էր ամենայն ինչ մի և նոյն դրոշմը ունենալ, ամենայն ինչ պէտք էր ըլլալ և ձուլուիլ ի ռուս և ի սլաւականութիւն: Եւ այս զօրաւոր ոգին և մղումը տարածեց Ռուսաստան Եւրոպիոյ ամէն կողմ ամէն խորշ ուր կը համարէր փտանել սլաւութեան նշմար մը ի Պոհնիա, ի Մանաստան ի Ռուտենա, ի Պալքանս ի Մոնղէնէկրօ, նպաստելով իսկ դրամով և դաստիարակութեամբ:

Ռուսական նահանգաց մէջ Ֆինլանտիա՝ կազմեալ մանաւանդ գերմանական ցեղերէ, առ ժամս կրցեր էր փրկել իւր առանձնաշնորհութիւնքը շնորհիւ իւր հաստատ հաւատարմութեան առ Պետութիւնն Ռուսիոյ. և Տորփադի համալսարանը գերմանական համալսարան մը կրնար համարուիլ: Սակայն 1866ի Յուլիսի մէջ հրովարտակ մը կը հրամայէր ռուսական լեզուն մտցնել բոլոր Պայթիքի գաւառաց պաշտօնական շրջանակներու մէջ: Լիվոնիոյ Աւագածողովը բողոքեց ասոր դէմ, սակայն բողոքը մերժուեցաւ կայսերական հրամանով: Երկու մեծամեծ սկզբունք ռուսականութիւն և ազգութիւնք կը մրցէին իրարու հակառակ և այս երկու հակառակ ոգիներու արտայայտութիւնք էին Աղեքսանդր Բի նման կայսեր կենաց դէմ եղած երկու դաւեր: Առաջինը կայսերական պալատան պարտիզին դրան քով Քարաքոզով անուամբ ռուսէ մը որ երեք ատրճանակի հարուած պարպեց կայսեր անձին դէմ, բայց իւր թեւն ցնցումն ընդունելով Քոմիսարով անուամբ երիտասարդէ մը, հարուածք չեղեցան և կայսրը ազատեցաւ, որ Քոմիսարովի ազնուականութիւն տուաւ¹: Երկրորդ դաւը փորձեց Պէրէզովսքի լեհ երիտասարդը երբ Աղեքսանդր Բ Բարիզ գացած էր յամին 1867 Տիեզերական Յուցահանդիսին համար, զոր առանձին պիտի տեսնենք Փաղղիոյ Պատմութեան մէջ: Աղեքսանդր իր մարդասէր և ազատասէր բարութիւնք վշտալիւր զգացմամբ դիտեց այս տժգոհութիւնքը:

Ունեցաւ նաև ընտանեկան մեծ վշտեր յորս մա-¹⁸⁶⁵
 2ի Ապր.

1. Առ Աղեքսանդր եկած ուրախակցութեանց մէջ ամենէն նշանաւորը և զարմանալին երեցաւ Միացեալ Նահանգաց ուրախակցութիւնը ի ձեռն հանդիսաւոր նուիրակութեան մը, որուն գլուխն էր Պ. Տոքս, ենթապաշտօնեայ ծովային զօրութեան, որ նաւատորմով մը եկաւ ի Քրոնշտատ և որոց համար երկու ամսուան չափ մեծ տօներ կատարուեցան ի Ռուսաստան: Ամերիկացիք մասնաւոր ուրախակցութիւն մ'ըրին նաև այն 2,000,000 գիւղացիներու զորս ազատեր էր Ռուսաստան:

նաւանդ, ի թողախտէ Նիցցայի մէջ, իւր անդրանիկ զաւակին մահը որ արդէն նշանուած էր Տանիմարքայի Տակմար իշխանուհւոյն հետ: Իւր երկրորդ զաւակը Աղեքսանդր թագաժառանգ անուանելով, կրկին նշանեց Տակմար իշխանուհւոյն հետ, որոց ամուսնութեան առթիւ շատ մը ներումներ եղան յանցաւորաց և դարձ տարագրելոց, յորս կային բազմաթիւ Լեհեր, որոնք համակերպեցան նոր դրութեանց:

Այս վերջը կ'ունենար 1863ի լեհ ապստամբութիւնը որ ինքնին մեծ և յետին թերևս հարուածը կու տար նոյն իսկ իր ազգութեան, գոզցես անդարձ եղանակաւ դատապարտելով անոր խառնումը, օր ըստ օրէ անյայտանալով, ռուսական մեծածաւալ և զօրաւոր ազգութեան ծովուն մէջ. իրեն հետ տանելով միաբան տակաւին բազմաթիւ ժողովրդոց յոյսեր և բաղդեր:



ԳԼՈՒԽ ԾԵ

ԱՊՏԻԻԼ ՄԷՃԻՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ . ՀԱՅՔ . ԱՍՈՐԻՔ

1. Տաճկաստան յետ Արևելեան Պատերազմին . — 2. Խաղաղի Հիւմայուն 1856ի . — Խնդիր զինուորագրութեան Քրիստոնէից . — 3. Հայոց Ազգին Ներքին Սահմանազրութիւնը . — Ընկերութիւն Համազգեաց . — 4. Ի ճիտտէ կոտորած Քրիստոնէից . — 5. Ատորիք և Լիբանան . — կոտորած Քրիստոնէից . — 6. կոտորած Դամասկոսի . — 7. Եւրոպական Պետութիւնք . Միջամտութիւն Գաղղիոյ . — 8. Ֆուատ փաշա Օսմանեան բարձր նուիրակ յԱտորիս . — 9. Լիբանանու վարչութիւնը — կարապետ Տավուս փաշա ընդհանուր կառավարիչ . — 10. Ապտիւլ Մէճիտի վերջին տարիները և մահը :

1. Տաճկաստան յետ Արեւելեան Պատերազմին : — Ղրիմու պատերազմը դարուս կէսին մէջ բարձրացուց և յաշս Եւրոպիոյ ժողովրդական ըրաւ Օսմանեան Պետութեան անունը : Արևելեան ճոխ և հիւրամեծար ընդունելութիւնք որոց առաւելագոյն փայլ մը կուտային Ապտիւլ Մէճիտի ազնիւ և անոյշ վարմունք, Դաշնակից զեպանաց և զօրավարաց համար հմայիչք եղեր էին : Անծանօթ էր մինչև այն ատեն իրենց առջև Օսմանեան Պետութեան նոր Պատմութիւնը և զարմանօք մը կը դիտէին անոր ըրած նոր փոփոխութիւնքը : Ղրիմու արշաւանքը Կ. Պօլսոյ և Սև ծովու ափանց վրայի քաղաքաց մեծ մղումն եղաւ վաճառականական : Հարստացաւ երկիրը եւրոպական բանակաց մեծածախ գումարներով, զորս աւելի սիրով կը վատնէին իսկ, զմայլած իրենց եղած հիւրընկալութեան վրայ : Օսմանեան քաղաքագէտք աւելի ծանօթացան

Եւրոպական դիւանագիտաց և մեծանուն քաղաքագիտաց հետ և զօրավարք ընկերակցեցան ռազմագիտական նոր յառաջագիմութեանց: Արևելեան Պատերազմը ստուգապէս մեծ վարժարան մը եղաւ օսմանեան Պետութեան համար, և ապագայ տաճիկ քաղաքագէտք և զօրավարք՝ ամէնն ալ քիչ շատ օգտուեր էին այդ վարժարանէն:

Բայց եւրոպական ազգաց կատարելութեանց հետ, ողողեցին նաև թերութիւնք, մանաւանդ բարուց և նորաձևութեանց մէջ: Ընտիր համարուեցաւ անխտիր ինչ որ էր եւրոպական և կորսուեցաւ արևելեան նախանձելի պարզութիւնը և ծանրութիւնը: Նոյն դրամական տագնապք և խաղեր որոնք Եւրոպիոյ և մանաւանդ Գաղղիոյ վէրք կը համարուէին, սովորական դարձան Կ. Պօլսոյ ալ, որով ծագեցան յանկարծական հարստութիւնք և կամ մեծամեծ կորուստք և սնանկութիւնք: Պատմութեան սահմանէն դուրս կ'ելլէինք թէ ուզէինք պատմել թղթադրամոց խաղերը և ամբողջ Միրէսի փոխառութեան բազմագիմի դէպքերը իրենց աղետալի հետևանքներով հանդերձ:

2. Խաղդիի կիւմայուն 1856 ամին — Քլիստոնէից զինուորագրութեան խնդիրը: — Եւրոպական Պետութեանց հետ այս մտերմական յարաբերութիւնք և իրաց և ժամանակի պարագայք առաւել ևս յորդորեցին զՍուլթան Ապտիւլ Մէճիտ, ոչ միայն հաստատելու Կիւլհանէի թանգիմաթը, այլ և 1856ի Փետրուարին Բարիզու Գաշնաժողովը տակաւին շաւարտած, նոր հրովարտակ մ': հրատարակել (Խաղդի Հիւմայուն) որով կը տրուէր ազատութիւն կրօնից, հաւասարութիւն քաղաքական բովանդակ օսմանեան հպատակաց, նոր բաժանումն տրոց և զինուորագրութիւն ի քրիստոնէից: Քրիստոնեայք կարող էին ընդունուիլ Պետութեան ամենայն բարձր պաշտամանց մէջ և արգելեալ էր որ և իցէ նուաստադուցիչ բացասութիւն մը անոնց նկատմամբ: Յարատև պատերազմունք վերջին տարիներուս մէջ, Օսմանեան պետութեան ամէն կողմ նուազումն պատճառեր էր տաճիկ մահմէտական

ժողովրդեան, հարկ էր դարման մը մտածել. միանգամայն օրինաց հաւասարութեան և ազատական գաղափարաց հետեանք մ'էր որ քրիստոնեայք ալ զինուոր մատակարարեն հասարակաց հայրենեաց և մասնակցին զինուորական աշխատութեանց և զոհողութեանց, ինչպէս առատօրէն բաժանակից էին քաղաքական պաշտամանց : Միագամայն զինուորութիւնը միջոց մը պիտի ըլլար ժողովրդական կրթութեան և ընդհանուր հպատակաց միասիրտ յառաջադիմութեան յօգուտ Հայրենեաց : Բայց այս ամէն փափագները՝ գաղափարականք էին միայն, գոնէ այնպէս համարուեցան թէ ի քրիստոնեայ և թէ ի մահմետական ժողովրդէն, որով և զինուորագրութեան լուրը առհասարակ յուզումն յարոյց երկու խմբին մէջ ալ :

Տածիկ ժողովուրդը որ միշտ երկու մեծ տարր կագմած է մին սիրող յառաջադիմութեանց խոհական ճամբով և միւսն մոլեռանդն թէ կրօնապէս և թէ քաղաքականապէս, միշտ դժուար էր համաձայնիլ : Ի զուր Սուլթան Մահմուտ և Ապտիւլ Մէճիտ մեծապէս աշխատեցին, այդ երկրորդ խմբին մտաց մէջ հպատակաց հաւասարութեան գաղափարը մտցնել, նա երբէք չէր կրնար յանձն առնուլ համապատիւ տեսնելու գոյան և միաբան պաշտպանելու զհայրենիս, նա մանաւանդ ըստ հարկին քրիստոնեայ գնդապետի հնազանդելու : Նորա համար ուրիշ միշտ ստրուկ է : Կար ևս մաս մը յորս բարձրաստիճան անձինք, քրիստոնէից զինուորագրութիւնը վտանգաւոր կը համարէին Կայսրութեան : Միւս կողմանէ Քրիստոնեայք ևս մեծապէս հակառակեցան այս զինուորագրութեան և իրենց Պատրիարքունք բողոքեցին, համարելով որ քրիստոնեայ հպատակ տարրը ոտնակոխ պիտի ըլլայ մահմետական բանակի մը մէջ թէ կրօնական և թէ զինուորական տեսակետօք. ասոր դիմացը առնելու համար հարկ էր որ մասնաւոր օրէնքներ ապահովէին բանակին մէջ քրիստոնէից դիրքը և խոստանային անոնց յառաջադիմութիւնը ըստ արժանեաց, մինչև իսկ ի սպարապետութիւն : Քաւառաց մէջ շփոթութիւնք եղան եր-

կու իմաստով ալ, մահմէտական գիւղացիք զայրանալով քրիստոնեայ ուսուցիչին հաւասարութեան վրայ և քրիստոնեայք բռնի իսկ չուզելով զինուոր գրուիլ և փախչելով յօտարութիւն: Եղան նաև որոնք խորհուրդ տուին Բ. Գրան առանձին առանձին գունդեր կազմել ի քրիստոնէից, ինչպէս Անգղիա և Գաղղիա ըրած են ի Հնդկաստան և յԱլճէրի: Բ. Գուռը չէր կարող զայն ընդունիլ, որով և առ ժամս դադրեցուց զինուորագրութեան օրինաց գործադրութիւնը քրիստոնէից մասին, փոխարէն տարուէ տարի վճարք մը հաստատելով (Պէտէլ-ի-Աքէրիէ): Արդէն մահմէտական մը ևս իւր զինուորութեան քուէն ստանալուն, կարող էր դրամով յղել ուրիշ մը, որով և տուրքին գաղափարը նոր չէր¹:

3. Հայոց Ալգային Սահմանադրութիւնը: — Համագգեաց Ըսկերութիւն — Ապտիւլ Մէճիտի քաղցր և ժողովրդասէր բարուց արդիւնքը միայն ընդհանուր Պետութեան կարգաց մէջ չփայլեցաւ, այլ և առանձին Հասարակութեանց նկատմամբ իւր ժամանակը եղած առանձնաշնորհութեանց մէջ: Թողլով ուրիշ ազգերու վերաբերեալքը յիշենք միայն որ Հայ ազգը մասնաւոր վայելեց իւր սէրը և համարումը, որոց դիմացը բացաւ ամէն բարձր պաշտամանց մուտքը, միանգամայն դպրոցական ամէն դիւրութիւններ և աւելին քան զսոսա՝ արտօնութիւն տուաւ հայ ազգին ԼՂմիածնական Հասարակութեան, որ անհամեմատ մեծամասնութիւն կը կազմէր յԱզգին, կազմել Սահմանադրութիւն մը Ներքին և Եկեղեցական գործոց համար, երեսփոխանական վարչութեամբ և այդ Սահմանադրութեամբ ընթանան Կ. Պօլսոյ և գաւառաց թէ Ազգային և թէ Եկեղեցական գործեր²:

Հայ-ԼՂմիածնական Հասարակութեան ընդհանուր

1. Արաբիոյ մահմէտական ժողովուրդն ևս չէր տար զինուոր, ուստի ապա սկսաւ առնուլ Գուլատ փաշա 7,000 անձինք միայն:

2. Սահմանադրութիւնը կայսերական հաստատութիւնը առաւ յամին 1862 Հոկտեմբեր 27:

ժողովք մը յամին 1860 Մայիս 24ին ի Կ. Պօլիս ի Պատրիարքարանի, ընդունեցաւ և ստորագրեց այս Սահմանադրութիւնը զոր պատրաստեր էր առ այս կազմեալ մասնաւոր Սահմանադիր Յանձնաժողով մը :

Սահմանադրութիւնը հինգ գլխաւոր մասանց կը բաժնուէր : Առաջին մասը կը պատկանէր Ազգային Ընդհանուր ժողովոյ կազմութեան մասին ի Կ. Պօլիս ընդ նախագահութեամբ Պատրիարգին և այդ Ազգային ժողովքին ներկայացուցիչք և ճիւղք պիտի համարուէին Քաւառական ընդհանուր ժողովքները, որոնք պիտի հաստատուէին Տաճկաստանի Առաջնորդանիստ քաղաքներու մէջ. և դա պիտի ընտրէր, երեսփոխանութեամբ ի վիճակաց, Քաւառի մը առաջնորդը որ հաստատուելով ի Կ. Պօլսոյ, կ'ըլլար ներկայացուցիչ մը ի գաւառին՝ Պատրիարքական իշխանութեան և բնականապէս նախագահ Քաւառական ընդհանուր ժողովոյն : Այս ժողովոյն իշխանութեան ներքև կը հաստատուէին Թեմական և ապա թաղական խորհուրդներ :

Բայց որովհետև վիճելի նիւթք կրնային ըլլալ կրօնականք, քաղաքականք և կամ յերկուց ևս, անոր համար ընդհանուր ժողովքը կ'ընտրէր ժողովք մը Կրօնական, ժողովք մը Քաղաքական և ուրիշ ժողովք մը Խառն : Կային դարձեալ Աւսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Ելեմտական խորհուրդ, Գաստաստանական խորհուրդ, Ազգային Գիւանատուն : Ամենայն խորհուրդ աստիճանաբար պատասխանատու էր իւր տեսակի մէջ իրմէ բարձրագունին :

Պատրիարգն էր միջնորդ ընդ Ազգն և ընդ Բ. Գունն՝ և իւր պարտքն էր « Խնդրել Տէրութեան պաշտպանութիւնը և Ազգին հպատակութիւնը հաւատարիմ պահել առ Տէրութիւնը » :

Իսկ Ազգային ընդհանուր ժողովքը կը կազմուէր 220 երեսփոխաններէ յորոց 160ը ընտրեալք ի Կ. Պօլսոյ և 60ը առաջնորդանիստ քաղաքներէ :

Բ. մասը կը կազմէր Տրոց մասը, որ կը հաւաքուէր ի ձեռն կեդրոնական վարչութեան կամ թաղական խոր-

հրրդոց : Իսկ տրոց բաշխման և հաւաքման եղանակը կ'որոշէր քաղաքական ժողովքը և կը հաստատէր ընդհանուր ժողովքը :

Գ. մասը կը պատկանէր ընտրութեանց , յորում կային պայմանք ընտրողութեան և ընտրելուութեան , ընտրական քուէարկութիւն , Քուէհամար , Վաւերացումն ընտրութեանց . ապա Ընտրութիւն Պատրիարգին որ « պէտք է ըլլայ ընկալեալ Եպիսկոպոս մը յԷջմիածնայ և Օսմանեան հպատակ : Նորընտիր Պատրիարգը Բ. Գրան շներկացած , Եկեղեցւոյ մէջ յԸնդհանուր ժողովի պէտք է երդնու « Առաջի Աստուծոյ և առաջի Ազգիս Հայոց . . . ուխտել հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հսկել բոլոր սրտով Նորին անթերի գործադրութեան » : Երրորդ մասին կը պատկանէին դարձեալ ընտրութիւնք Առաջնորդաց , Ժողովականաց և Խորհրդականաց :

Դ. Մասը կը պարունակէր կանոնադրութիւնք ժողովոց և Խորհրդոց , պաշտօնական կանոնք , Ատենական կանոնք :

Ե. մասը հաստատեալ էր « Սահմանադրութեան վերաքննութեան համար » որ թէ ըլլար հարկ , այն ատեն Ընդհանուր ժողովքը պիտի անուանէր երեսուն անձինք յայլ և այլ ժողովոց , որք յետ քննելու եղեալ դիտողութիւնքը , պատրիարգին միջնորդաւ պիտի ներկայացուէին առ Ընդհանուր ժողովն , եթէ այդ դիտողութիւնք չէին ի սպառ անհամաձայն հիմնական սկզբանց :

Այս Սահմանադրութեան հրատարակումը և մանաւանդ առաջին տարեդարձը , շատ հանդիսաւոր տօներով կատարուեցան , զոր կը յիշեն տակաւին տեսողք իբր հին աւուրց քաղցր յիշատակ մը , և զայնս նկարագրող ժամանակին լրագիրք , մանրամասնութիւնք , հայրենասէր ճառախօսութիւնք և քերդողութիւնք , որոց ներկայ էին և Պետութեան բարձր պաշտօնական անձինք , մեզ հիացումն կը բերեն և գոգցես անհաւատալիք կ'երևան նոր սերնդոց : Եւ սակայն պատմական ճշմարտութիւն մ'է որ Ապտիւլ Մէճիտի վար-

չութիւնը հաշտ և ուրախ աչքով դիտեց զասոնք և երբ տարի շանցած նոյն իսկ Ազգին մէջէն գտնուեցան անձինք որոնք սկսան հակառակութիւն ցուցընել Սահմանադրութեան, Պետութիւնը ինքնին արգելեց վիճարանական պայքարները, փափագելով Սահմանադրութեան պահպանութիւնը :

Բաց ի Սահմանադրութենէ որ մեծ կեանք մ'էր հայ ազգին համար, հաստատուեցան դարձեալ առանձին ընկերութիւններ Ազգային յառաջադիմութեան գաղափարով, յորս յիշեմք Համազգեաց Ընկերութիւնը որուն նպատակն էր ըստ Ա. Յօդուածի իւր կանոնադրութեան՝ հաստատեալ յամին 1861 Մայիս 26ի, « Ազգիս բարիք ընել ուսումնական կրթութեամբ և օգտակար գիտութեանց և արուեստից միջոցները տարածելով և իր ծախիւքը երկրորդական և արտաքին դպրոցներ և վարժարաններ հաստատելով » :

Եւ մինչդեռ Սահմանադրութիւնը միայն էջմիածնական Հասարակութեան համար էր, Համազգեաց Ընկերութիւն, աւելի ընդարձակ գաղափարով մը ճամբայ կ'ելէր և իր Բ. Յօդուածով կը ծանուցանէր թէ « Առանց Կրօնի և վիճակի խտրութեան ամէն հայազգի պիտի կարենայ այս ընկերութեան բաժանորդ ըլլալ և յամենայնի հաւասար իրաւունք ունենալ » :

Եթէ այս Բ. յօդուածին պատճառաւ ինչ յուզմունք, հակառակութիւնք և հալածանք ծագեցան ի Կ. Պօլիս և ի գաւառս հայ-հռովմէական հասարակութեան մէջ, շատերուն մտաց մէջ թերևս ժամանակը մաշեցուցած է, և անծանօթք նոր սերնդոց բայց մենք զանց կ'ընենք յիշատակել, համարելով աւելի պատկանողք Եկեղեցական Պատմութեան մը :

4. Կոտորած Քրիստոնէից ի Ճիտտէ : — Սակայն Ապտիւլ Մէճիտի թագաւորութեան վերջին տարիներուն մէջ, ամենայն հաւասարութիւն հպատակաց մէջ և նոր անանձնաշնորհութիւնք աւելի զայրացուցեր էին մահմէտական մոլեռանդն մասը : Իւր ամէն համակրանքը առ քրիստոնեայ հպատակս, փոխանակ արապնդելու ժողովրդոց մէջ աւելի սերտ միութիւն մը

ինչպէս ինքը կը յուսար կամ գէթ կը փափագէր, հակառակ ազդեցութիւն մը ունեցեր էր վերոյսասացեալ դասուն մէջ: Վրայ եկաւ նաև բիւրաւոր մահմէտական սիփայից կոտորածը ի Հնդկաստան. և ծածուկ քարոզիչք, մանաւանդ ի Մեքքէէ, կը զրգռէին առաւել այն ժողովուրդքը, որոնք արդէն բնածին հակառակութիւն մը ունէին արևմտեան քաղաքակաճութեան և քրիստոնէութեան դէմ: Յամին 1858 Յուլիսի 15ին, մոլեռանդն բազմութիւն մը, խառն Մեքքէի ուխտաւորաց հետ, ի ձիտտէ յարձկեր էր քրիստոնէից վրայ, սպաննելով նաև Գաղղիոյ և Անգղիոյ հիւպատոքը նոյն իսկ օրինաւոր գունդերուն և սպարապետին աչաց առջև: Անմիջապէս Յուլիս 25ին կը հասնին ձիտտէի դիմաց Անգղիոյ և Գաղղիոյ նաւատորմիդք որոնք միաբան կը ուժակոծեն զքաղաքը:

Յանցաւորներէն տասն հոգի բռնուելով կախուեցան, հիւպատոսաց ընտանիքներուն դրամական փոխարինութիւն եղաւ և Եւրոպա այսպէս գոհացաւ, առանց փոյթ ընելու և նախատեսելու որ նոյն պատահարք կրնային նորոգուիլ ուրիշ կողմեր ևս: Եւ արդարև տարի ու կէս վերջը ահաւորագոյն արիւնահեղութիւնք նոյն ոգիէ յառաջ եկեալք, պատահեցան Լիբանանու մէջ:

5. Ասորիք եւ Լիբանան. — Կոտորած Քրիստոնէից: — Յամին 1840 Յուլիս 14ի դաշինք զԱսորիս և զԼիբանան Բ. Գրան ուղղակի վարչութեան ներքև կը դնէին, որ շատ անգամ փորձեց զԼիբանան կուսակալութեան մը վերածել, բայց ընդդիմութիւնք գտնելով, քրիստոնեայ մասին քրիստոնեայ գլուխ մը տուեր էր և Տրուզներուն իրենց ցեղէն շէյխ մը: Սակայն քրիստոնեայ տարրը բազմաթիւ էր, որով և առիթ մը նախանձու Տրուզներուն որոնք միշտ պատճառ կը փընտռէին անոնց վնասելու և մահմէտական ըլլալով, շատ անգամ իրենց նեցուկ ունէին տեղական իշխանութիւնքը:

Եթէ Օսմանեան Պետութեան զաւառաց մէջ պաշտօնավարութիւնք և պաշտամունք այն ոգւով ի գործ դրուէին և կասարուէին ինչպէս Սուլթանին աչաց

ներքև ի Կ. Պօլիս, ուր ամէն ազգ և ամէն կրօնք անձնուրոյն լիովին ազատութիւններ կը վայլէր, երբէք յուզմունք մը կամ ինքնիշխանութեան փորձեր չէին յաներ ի քրիստոնէից Օսմանեան Պետութեան. և ամենայն հպատակ ժողովուրդ պինքը համեմատաբար երջանիկ պիտի համարէր: Սակայն Բ. Դրան մեծագոյն տազնապները և վէրքերը ծնած են գաւառաց մէջ պաշտօնակալաց, կուսակալաց քմահաճոյ, զօշաքաղ և կամ մոլեռանդն ընթացքէն: Եթէ Պէրութի ընդհանուր կառավարիչը Խուրչիտ փաշա և Արապիստանի ընդհանուր կառավարիչը՝ Ահմէտ փաշա, կրօնական ոգւով չգրգռէին զտրուզս ընդդէմ քրիստոնէից, այլ խաղաղասէր ոգւով հանդարտութիւն և հաւասարութիւն քարոզէին, ինչպէս կ'ընէր այն ժամանակ Ապտիւլ Մէճիտի վարչութիւնը ի Կ. Պօլիս, բնաւ չէին պատահեր Լիբանանու ահաւոր կոտորածները իրենց հետեւանքներով:

Մայիս 27ին տրուզ նշանաւոր գլուխ մը՝ Սայիտ Ճէմալաթ՝ կը կողոպտէ Ճէլինի Քրիստոնեայքը, որոնք ապաւէն մը շունենալով կը դիմեն ի Սայտա գտնուող տաճիկ գունդերու: Սակայն Տրուզք որոց կը միանան ուրիշ մահմէտականք ալ ընդ առաջ կ'ելլեն փախըստէից և կը կոտորեն զամենը արք և կանայք, ծեր ու տղայ: Այս առաջին նշանին վրայ Հաուրանի տրուզք կը յարձկին և կը պաշարեն զՀաշպէյա և Ռաշէլա ուր կը բնակէին յունադաւան քրիստոնեայք: Յետինքս կը դիմեն տաճիկական գունդերուն հրամանատար Օսման հազարապետին, որ կը խոստանայ պաշտպանել զիրենք եթէ զէնքերնին յանձնեն: Յետ ընդունելու դայնս, թէ զՌաշէլա և թէ զՀաշպէյա կը մատնէ Տրուզներուն աւարառութեան և սրոյն:

Կը միային քրիստոնէից ձեռքը միայն երկու ամուր բերդեր՝ Տէլի-էլ-Քամար և Չահլէ զորս պաշարեցին Տրուզք: Եւրոպական հիւպատոսք խնդրեցին Յունիս 12ի Խուրչիտ փաշայէ գունդեր զրկելու ի Չահլէ: Խուրչիտ փաշա խոստացաւ օգնելու, պայմանաւ որ քրիստոնեայք չկուռին և քանի մը հարիւր զի-

նուոր զրկեց որոնք օգնելով Տրուզներուն, Յունիս 19ին ումբակոծմամբ առին քաղաքը զոր այրեցին աւերեցին. և այն ատեն դադրեցան կոտորածէ երբ Չահլէի մէջ այլ ևս քրիստոնեայ մը չմնաց: Յետոյ Շէյխ Ապու Համուտ Նաքէր, Շէյխ Ճէմալաթ և Ասադ ցեղին շէյխերը յարձկեցան Տէիր էլ Քամար բազմամարդ քաղաքին վրայ, սպանեցին ի քրիստոնէից այր և կին, ծեր և տղայ, պղծեցին եկեղեցիները, անպատիւ ըրին զկանայս, և բոլոր աւարը և կողոպուտները ժողովեցին: Ամէն կողմէն փախստականք ապաւինեցան ի Դամասկոս, ուր կը կարծէին թէ ապահով կ'ըլլան: Եկեղեցիները, տունները, պանդխտանոցք և փողոցք լեցուեցան դժբաղդ քրիստոնէիւք, որոնք դռնէ դուռ հաց կը մուրային թէպէտ քիչ օր առաջ մեծամեծ գումարներու տէր: Տեղական վարչութիւնը փոյթ չըրաւ, փակեց քրիստոնեայ ժողովուրդքը առանձին թաղերու մէջ, ուսկից արգիլեց դուրս ելլել և մասունեց զիրենք իրենց թշնամեաց:

6. Կոտորած Դամասկոսի: — Դամասկոսի մէջ եղած կոտորածը վեր է քան զամենայն երևակայութիւն: Մոլեգին Տրուզք, ձեռքերնին դաշոյն, ամէն կողմէն յարձկեցան քրիստոնէից վրայ և սպանեցին մինչև հինգ հազար անձինք՝ ահաւոր բարբարոսութիւններով: Սպանելոց թուոյն մէջ կը յիշուին նաև ութ երոպացի կրօնաւորք փրանկիսկեան կարգէն, երկու եպիսկոպոսուք, մի յունադաւան արքեպիսկոպոս, 30 քահանայք: Այրեցին Ռուսիոյ, Բրուսիոյ, Հոլանտայի, Պելճիոյ և Յունաստանի հիւպատոսարանքը, չղբաչելով Անգղիոյ հիւպատոսարանին, որուն համակրութիւնը առ Տրուզս տեսնուեր էր ուրիշ առթով ընդդէմ մարոնիդներու: Կործանեցին վանք, եկեղեցի, առաջնորդարան և ինչ որ գտան կողոպտեցին:

Այս ահաւոր կոտորածին բնաւ դիմացը չառաւ Խուրչիտ փաշա և քրիստոնէից միայն պաշտպան եղաւ Ալձէրիի հին դիւցազնը Ապտ էլ Քատէր որ 16 տարի տազնապեցուցեր էր զԳաղղիա: Ապտ էլ Քատէր իր աքսորանաց ընկերոջ զինուորաց հետ դիմեց փողոց-

ները, մրցեցաւ և ազատեց շատ քրիստոնեայք զորս մի առ մի կը զրկէր ապահովելու իւր պալատը: Ապա իւր զինուորներով պաշտպանեց մնացեալ քրիստոնեայ թաղերը և շատ անգամ կեանքը վտանգի մէջ դրաւ: Բաց ասկէ վեհանձն հոգացողութեամբ առատ դրամով կարօտեալքը խնամելէն վերջը, իւր զինուորներով անոնց վահան ըլլալով, զանոնք հասուց ապահովութեամբ մինչև ի Պէրուս:

7. Եւրոպական Պետութիւնք. Միջամտութիւն Փաղըիոյ: — ՅԱսորիս եղած կոտորածներուն լուրերը յուզեցին ընդհանուր քրիստոնեայ ժողովուրդքը, բայց ամենէն աւելի զՓաղըիա որ աւանդական պաշտպանութիւն մը կը համարէր ունենալ Արևելքի քրիստոնեայ և մանաւանդ հռովմէադաւան ժողովրդոց վրայ: Նարոլէոն Գ Յուլիս 6ի հրամանով մը առ զաղղիական դեսպանն ի Կ. Պօլիս կը գրէր ծանուցանելու Բ. Դրան իւր վստահութիւնը որ փութով դարման պիտի տանէր այս եղելութեանց. միանգամայն իւր դեսպանաց ձեռքով կը յորդորէր Լոնտրայի, Պէրլինու, Փէդրպուրկի և Վեննայի վարչութիւնքը Դեսպանաժողով մը կազմել ի Մեծ Պետութեանց միացեալ Բ. Դրան հետ, քննելու թէ ուստի յառաջ եկան այս աղէտք, վնասելոց փոխարինել, և հաստատուն միջոցներ ձեռք առնուլ որ ապագային նոյն օրինակ աղէտք չպատահին: Միանգամայն հրամայուեցաւ զաղղիական նաւատորմին շատցնել նաւերը Ասորական ծովեզերքները և պատրաստ ըլլալ ընդ տրամադրութեամբ հիւպատոսաց: Քիչ օր վերջը թոււիլնէ՛ Արտաքին գործոց պաշտօնեայն ի Լոնտրա կ'առաջարկէր միաբան զինուք միջամտութիւն մը յԱսորիս աջակցութեամբ Բ. Դրան: Անգղիա փափագ չյայտնեց միջամտելու. չէր ուզեր որ ուրիշ Տէրութիւն մը միջամտէ. բայց Նարոլէոն Գի կրկին և կրկին խոստմուքներուն վրայ որ Փաղղիա բնաւ աշխարհակալութեան փափագ մը չունէր, այլ միայն մարդասիրական և քրիստոնէական էր իր զոհողութիւնը և միջամտութիւնը, այն ատեն թոյլ տուաւ Փաղղիոյ միջամտել, նոյնը ըրին նաև Աւս-

տրիա և Բրուսիա որոնք ուղղակի շահ մը չունէին հակառակելու համար: Բայց երբ Բ. Գուռը 26 Յուլիսի ծանուցագրով մը բողոքեց այս օտար միջամտութեան և արշաւանաց դէմ որ կը համարէր աւելի զրգռող զմահմէտականս ընդդէմ քրիստոնէից, մինչ Բ. Գուռը ինքնին բաւական զօրք ունէր զսպելու յուզումը և պատժելու յանցաւորքը, այն ատեն Անգղիա աւելի դժուարութիւն ցուցուց Քաղղիոյ միջամտութեան և նոյնը ըրաւ նաև Ռուսաստան որ չէր կրնար հաճաչքով մը դիտել Քաղղիոյ հովանաւորութիւնը ընդհանուր քրիստոնէից վրայ յԱրևելս. և պահանջեց և ստացաւ յայտարարութիւն մը իրր յաւելուած Բարիզու Քաշանց որ բնաւ նպատակ մը չկար նոր ազդեցութիւնք ստանալ, ըլլան կրօնական կամ վաճառականական:

Այս պայմաններով Քաղղիա Մեծ Պետութեանց հաւանութիւնը կ'ընդունէր միջամտութիւն մը ընելու որ կրնար տևել մինչև 1861ի Մարտ 5: Բայց բանակին հետ միաբան պիտի ըլլար Միջագոյնին Յանձնաժողով մը իբրև Ներկայացուցիչ Պետութեանց և Եւրոպիոյ, որուն նպատակը պիտի ըլլար հետաքննել վերջին աղիտից սկզբնապատճառքը, պատասխանատուութիւնքը, զրկելոց վճարուելիք փոխարինմունքը. և ինչ միջոցք ձեռք պէտք էին առնուիլ որպէս զի այդպիսի ահաւոր պատահարք չնորոգուին:

Քաղղիացի բանակը մեկնեցաւ Շալոնէն Օգոստոս 7ին ընդ հրամանատարութեամբ Հոփուլ — Պօֆօր զօրավարին և կայսրը բանախօսութեամբ մը առ մեկնող գունդերը, ծանոյց որ « իրենք չէին երթար պատերազմելու Պետութեան մը դէմ, այլ օգնելու Սուլթանին որպէս զի կարենայ հնազանդեցնել մուսուլմանդն կուրացեալները »:

8. Ֆուատ փաշա Օսմանեան բարձր նուիրակ յԱսորիս: — Եւ յիրաւի Քաղղիա կ'ուզէր այս կերպարանքը տալ իւր արշաւանքին. և միջամտութեանց համար կրած հակառակութեանց պատճառաւ, թերևս ի սպառ ետ կենար, եթէ Բ. Գուռը կանխէր փութով

դարման տանելու եղեալ ահաւոր պատահարաց: Սա-
կայն Բ. Գուռը այն ատեն շարժեցաւ երբ գաղղիա-
ցի գունդերուն մեկնիլը վճռաբար որոշուած էր: Սահ-
մանուեցաւ որ յԱսորիս բարձր նուիրակ զրկուի Ֆուատ
փաշա, լիազօր. իշխանութեամբ, անկարգութիւնքը
ընկճելու և դարման տանելու համար: Ֆուատ փաշա
Յուլիս 17ին հասաւ ի Պէրութ և պաշտօնանկ ըրաւ
Խուրշիտ փաշա, ինչպէս նաև Գամասկոսի Ահմէտ
փաշա առժամանակեայ կուսակալը և երկուքն ալ
Կ. Պօլիս զրկեց դատաստանի. որոնք ապա Գաղղիոյ
Լավալէթ դեսպանին բողոքելովը կրկին զրկուեցան
յԱսորիս, դատուելու Միջազգային Յանձնաժողովէն:

Ֆուատ փաշա Յուլիս 29ին մտաւ ի Գամասկոս 3000
զինուորօք և բանտ դնել տուաւ արիւնահեղութեանց
մասնակցող 700 անձինք սինլքոր խուժանէն¹: Դար-
ձեալ Հալէպէն կալանաւոր բերել տուաւ Հաճի Պաթ-
րան քիւրտ ցեղապետը: Օգոստոս 16ին հասան նաև
ի Պէրութ գաղղիացի գունդերը և այն ատեն Ֆուատ
փաշա յանցաւորներէն 188 անձինք դատապարտեց
մահուան, մեծաւ մասամբ աննշան անձինք: Այսպէս
Եւրոպիոյ արտաքսապէս գոհութիւն մը կու տար ա-
ռանց տեղւոյն մահմէտական զօրաւոր ազդեցութիւն-
քը թշնամանացնելու:

Յետոյ նոյն Եւրոպական հասարակաց կարծիքը գո-
հացնելու համար և մանաւանդ զգաղղիացի Հոփուլ
Պօֆօր սպարապետը որ կը սպառնար մտնել Տաճկաց
սրբազան՝ Գամասկոս քաղաքը, Ֆուատ փաշա այսպի-
սի փորձի մը դիմացն առնելու համար, որ մեծ հե-
տևանքեր կրնար ունենալ մահմէտական տարրին մէջ,
յանձն առաւ հրացանի բռնել Գամասկոսի առժամա-
նակեայ կուսակալը Ահմէտ փաշա որ սպաննող խու-
ժանին կողմը բռներ էր: Խուրշիտ փաշա, Ֆէրիք
Թահիր փաշա Աքբասյի բերդը փակուած պիտի մնա-

1. « Ի դուր կը պնդէր Գաղղիոյ հիւպատը բարձրաստիւան յան-
ցաւորաց համար. անոնք ազատ թողուեցան »: Գալքսիլ ՏԵ
լոր Բ կայսրութիւն Հտ. Գ:

յին մշտնջենաւոր բանտեալք: Նոյն պատուհասի դատապարտուեցան Ալի պէյ հազարապետն և Օսման պէյ Հաչպէյայի կուսակալը և Տրուզներուն նշանաւոր Սայիտ Ճէմալաթ գլխաւորը որ քիչ վերջը մեռաւ բանտին մէջ: Յետոյ օսմանեան և գաղղիացի բանակք միաբան սահմանեցին դիմել Տրուզներուն շէյխերուն վրայ որոնք կը քաշուէին դէպ ի Հաուրան: Բայց անոնք արդէն փախեր էին և միայն կրցան բռնել 290 փախտականք, յորոց քսան անձինք մահուան դատապարտուեցան, և միւսերը ազատ թողուեցան¹:

Հագիւ փոքր հանդարտութիւն մը տիրեր էր, արդէն Անգղիա կը պահանջէր որ գաղղիացի գունդերը ելեն յԱսորոց կամ գոնէ առ ժամա ծովեզերքները ամփոփուին: Անգղիոյ պահանջը այնպիսի սպառնական կերպարանք մը առաւ որ Նաբոլէոն կարևոր դատեց Պետութեանց հարցնել թէ արդեօք մարդկութիւնը և խոհեմութիւնը զինքը շէյն ստիպեր մնալու յԱսորիս սահմանեալ ժամանակէն ալ աւելի:

Բայց Պետութիւնք ևս եռանդ մը չցուցուցին Նա-

1. Պատմական անկողմնակալութեան համար պէտք է ըսենք որ ժամանակին Քրոպացի լրագիրք և գրիչք կ'ամբաստանեն ըզՏուատ փաշա որ ()սմանեան պետութեան շահուց նպատակաւ ինքնին դիւրեց յանցաւորաց փախուստը և մանաւանդ գլխաւորը ինքը գաղտ պատեց: Գաղղիոյ ծիրակուտին մէջ նոյն իսկ Ահմետ փաշայի մահուան վրայ տարակոյս յայտնեց Տը լա Ռոշժաքլէն ատենակալը: Այս ամբաստանութիւնք անհիշելի է: Կալանաւորաց մեծամասնութիւնը որ փակեալ էր յԱքեա կամ տարազրեալ ի Պէնկազի, տարին շանցած, ամէնն ալ ազատեցան: Իսմասկոսի նոր կուսակալը էմիր փաշա Ոստիկանութեան պաշտամանց մէջ նորոգեց սպանութեանց հեղինակքը, և զժողովուրդը զինաթափ ընելու պատրուակաւ, միայն Ապտ էլ Քատէրի զօրաց զէնքերը հաւաքուեցան:

Նոյն տարւոյն Մասիս Լրագրի Մարտ 15 թուոյն մէջ կը կարդանք « Պէրութէն հեռեկալ լուրը գրուած է Մայրաքաղաքիս Քուռիէ Թ'Օրիան լրագրին. էմիր Սիւլէյման էլ Հարֆուշ անուն անարկու ապստամբը և քրիստոնէից կոտորածին

բողոքն ի փափագին նպատելու, նա մանաւանդ Տաճկաստան կը համարէր որ Ծուատ փաշա և ոչ Հոփուլ Պօֆօր ընկճեց յուզումը և թէ ինքը կարող էր հսկել և ապագային այդպիսի պատահարաց առջևն առնուլ: 1861ի Փետրուար 15 Դեսպանաժողով մը կը շնորհէր Գաղղիացոց մնալ մինչև Յունիս 5: Դարձեալ Օսմանեան Պետութիւնը վնասելոց պիտի վճարէր փութով 75,000,000 դահեկան, հաւաքելով զայն տեղական ժողովուրդներէն¹:

9. Լիբանանու վարչութիւնը. Տավուտ կարապետ փաշա կառավարիչ: — Եւրոպիոյ Պետութիւնք իրենց ժողովուրդքը արտաքսապէս գոհացնելու համար, համարեցան զօրաւոր միջոցներ ձեռք առնելու Լիբանանու ապագայ ապահովութեան համար:

Մեծ Պետութիւնք յետ մէջերնին երկար բանակցութեան միաբանութեամբ Բարձրագոյն Դրան որոշեցին:

Ա. որ Լիբանանու լեռը մէկ միայն կառավարիչ ունենայ, ժողովրդեան կրօնից մեծամասնութեան խումբէն՝ այսինքն քրիստոնեայ, որ ըլլայ օսմանեան հպա-

գլիաւոր առաջնորդներէն Տասս Ադա ճէրուտի անուն մեծ յանցաւորը որ Դամասկոսի մէջ բանտարկեալ էին, ասկից քանի մը օր առաջ փախան: Ասոնք Դամասկոսի կուսակալ Էմին փաշայէն նրաման առեր էին բաղնիք երթալու և անկէջ ալ գերեզմանատան այցելութիւն մը ընելու. և երկու գինուոր պահապան դրուած էր քովերնին: Բաղնիքէն ելլելէն ետքը երկու բանտարկեալները գերեզմանատուն գացին և աղօթքի կայնեցան: Յանկարծ տասնի չափ քիւրտ ձիաւոր երեւան կ'ելլեն և Էմիր Սիւլէյմանը և Տասս Ադան մէկ մէկ ձիու վրայ նետուելնուն պէս ամէնքը մէկէն կը փախչին կ'երթան դէպ ի անապատը: Ճամբան ալ երկու մարդ կը սպաննեն, որոց գիականներն նետեալ օրը գտնուեցան»: Պէտք ենք յաւելուլ որ այս կը տպագրուէր ի մայրաքաղաքին:

1. Այդ դրամը՝ որուն հաւաքումը թողուած էր տահիկ Յանձնաժողովոյ, տակաւին չատ նուազեցաւ: Բարեբաղդաբար ի Գաղղիա « Արեւելեան Դպրոցաց » հաստատութիւնը փութով հատոյց կարօտելոց 2,800,000 ֆրանքն:

տակ, որուն տրուի վէճիրութեան աստիճան և նստի ի Տէիր էլ Քամար, ուղղակի Բ. Դոնէն կախումն ունենալով:

Բ. Լիրանանու լերան Ոստիկանութեան և պահպանութեան համար տեղացիներէն զինուոր պիտի առնուին և կառավարչին հրաւիրելովը միայն կրնան մըտնել Պետութեան գունդերը:

Գ. Կառավարիչը պիտի ընտրուի համաձայնութեամբ Բ. Բրան և Մեծ Պետութեանց ղեկավաններու: Իր իշխանութիւնը պիտի տևէ երեք տարի: Եթէ պէտք ըլլայ փոխել, միշտ Պետութեանց խորհրդակցութեամբ պիտի ըլլայ:

Դ. Լիրանան լեռը երկու Խորհուրդ պիտի ունենայ՝ Վարչական և Դատաստանական, որոց մէջ պիտի գտնուին համեմատաբար ամէն կրօնքէ:

Տաճկական զինուորք պիտի մնային և Լիրանանու ոստիկանութիւնը պիտի վարէին մինչև որ կազմուէր տեղացի զինուորութիւնը:

Ռուսաստան մասնաւոր առանձնաշնորհութիւնք ևս ստացաւ Զահլէի մէջ եղած յունադաւան քրիստոնէից համար:

Այս կարգադրութեանց համեմատ, կայսերական հրաման մը Յուլիս 14ին զհայազգի հոովմէական Կարապետ Էֆէնտի Տավութեան, վերատեսուչ հեռագրոց Պաշտօնարանին, կ'անուանէր կառավարիչ Լիրանանու՝ տալով անոր Դոնէն-Բեան աստիճան և կոչելով զնա Տավուտ փաշա որ Յուլիս 19ին մեկնեցաւ Ապրօ Էֆէնտիի հետ որ էր տեսուչ Օտար Լեզուաց՝ Արտաքին Գործոց պաշտօնարանին մէջ: Տավուտ փաշա Պէրութ հասնելով Յուլիս 26ին ընդունուեցաւ իշխանական պատուով թնդանօթաց ձայներով և հաստատուեցաւ ի Տէիր էլ Քամար. ամենայն ջանք ընելով երկրին վիճակը բարւոյնելու:

1. « Աստանօր արժան համարիմ գեկուցանել, զի որպէս ի հոովմէական Հայս, նոյնպէս և ի մերազնեայս էր (էջմիածնականս) տեսանել օր քան զօր բազմանալ պաշտօնաւորաց ազգիս թէ ի

10. Ապտիւլ Մէճիտի մահը: — Լիբանանու հանդարտութիւնը և կարգադրութիւնքը Ապտիւլ Մէճիտի կենաց և թագաւորութեանը վերջին պատահարքն եղան, որոնք միացեալ Մոնղէնէկրոյի պատերազմաց հետ զորս պիտի տեսնենք, հիւժեալ կենացը վրայ մեծ տըպաւորութիւն մը ունեցան և ատոնցմէ աւելի, Արքունեաց մէջ դաւի մը կասկածը: Ապտիւլ Մէճիտ վախճանեցաւ 1861 Յունիս 25ին 39 տարուան:

Ինչպէս թագաւորութեան սկիզբը, նոյնը ամբողջ թագաւորութեան ժամանակ և մինչև ցվերջ Ապտիւլ Մէճիտ միշտ սիրող եղաւ բարեկարգութեանց և իր ժողովրդոց բարւոյն: Իր կարգադրութեանց մէջ նշանաւոր պիտի մնան Արդարութեան, Հասարակաց կրթութեան Պաշտօնարաններու հաստատութիւնքը, ինչպէս նաև վաճառականական օրինագրութիւնքը և վաճառականական Ատեանքը, որովք Տաճկաստան կամ լաւ ևս ըսել կ. Պօլիս և մի քանի մեծ քաղաքներ Եւրոպիոյ կարգաւորութիւնքը զգեցան: Սիրող արհեստից և ամենագլխի ձեռակերտներու և մանաւանդ արևելեան ճոխ ձեռագործներու, զանոնք յառաջ մղելու ժամանակ շատ

քարտուղարութեան Արտաքին Գործոց Իրանատան Բ. Իրան և թէ յայլ և այլ վարչական մասունս Տէրութեան... Արքունի վառօդապետութիւն Տատեան երկոցուն գերդաստանացն Յովհաննէս Պէյի Տատեան և Պօղոս Պէյի Տատեան սեպականեակ գոլով որպէս նախնեացն սոցա... Նոյնպէս և ճատարապետութիւն Պալեան գերդաստանին սեպականեակ, կարապետ Պէյի Պալեան և որդւոց սորա յայտնաբարբառ քարոզեն արքունի ճարտարարուեստ նորոգ շինութիւնք, պալատք, մզկիթք և այլք զյաշողակութիւն սոցա յարուեստ և զհաւատարիմ ծառայութիւն առ վեհափառ Սուլթանս. մանաւանդ անուանի գտաւ ի ճարտարապետութեան որդի կարապետ Պէյի Նիկիոցոս Ազա որ վաղ զընթացս կենաց իւրոց իցաւ գերդաստանի և ազգին կնքեաց, այլ յաջորդեցին նմա և միւս որդիք կարապետ Պէյի Սարգիս Պէյ և Յակոբիկ Պէյ... Այս յաջողակութիւնք սոցա ոչ սակաւ պատիւ և պարծանս յաճախեն ազգիս: Այսպէս և յատարձագործութեան անուանի եղև յոյժ Քէմհանեան գերտաստանն, Գաձ

անգամ նկատի չառաւ Պետութեան գանձուն կարողութիւնը . և միանգամայն իւր մեծ առատաձեռնութեամբ որ կը հասնէր շռայլութեան, ձեացուց Օսմանեան պետութեան Պարտքը որ անծանօթ էր իւր նախորդաց ժամանակ . և սկսան այն բազմաթիւ փոխառութիւնք որոնք առ ժամանակեայ սպեղանիք մ'են վիրաց և ոչ հիմնովին դարմանք : Քաղցր կենցաղավարութեամբ, ներողամիտ, հեզահոգի, անխտիր սիրող իւր հպատակաց երջակութեան, կը պակսէր իրեն կենաց կանոնաւորութիւն և խստութիւն մը առ անձն իսկ, որով հիւծեալ վաղաժաման իջաւ ի գերեզման . սակայն, ճշմարտութեան համար հարկ է ըսել, տանելով իւր հետը բոլոր Օսմանեան Պետութեան ժողովրդոց ցաւը և Եւրոպիոյ համակրանքը ¹ :

լուստ ազա Տօղրամահիպաշի, որ առաջին եղև ի կայսերութեան Օսմանեան, հաստատելով գործարան մի մեծ (Ֆաբրիկա) ի Պէշեթաշ . . . մանաւանդ որդի նորա Որդիկ Էֆէնտի յոյժ անուանի եղև, մինչև հայթհայթել զամենայն ինչ որ ի զարդ կայսերական պալատանց և ի գործածութիւն կայսեր և կայսերազանց » : Պէրպէրեան Պատմութիւն Գլուխ ԿԷ :

Նոյնպէս Պետութեան կարեւորագոյն պաշտօններէն մին՝ Դըրամահատութիւնը կը շարունակէր Տիւզեան գերդաստանի մէջ, ձեռամբ Միհրան Պէյի . և Տիրան պէյ պաշտօնեայ Հեռազրոց :

1. Սուլթան Ապտիւլ Մէհիւ 16 զաւակ թողուցած է, յորս արուններէն մեծագոյնը Մուրատ Էֆէնտի 21 տարեկան էր իսկ Ապտիւլ Համիտ Էֆէնտի (յետոյ Սուլթան Ապտիւլ Համիտ) 19 տարեկան, Մէհմէտ Ռէշատ Էֆէնտի 18 տարեկան :



ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1. Սուլթան Ապտիւլ Ազիզի գահակալելը. — 2. Բարեկարգութիւնք և յառաջադիմութիւնք ի Կ. Պօլիս. — 3. Օսմանեան Ելեմուտք և Ֆուատ փաշա. — 4. Բ. Գուռը և Մոնղէնէկրօ. 5. Պատերազմ ի Մոնղէնէկրօ, Էօմէր փաշա, պարտութիւն Մոնղէնէկրոյի. — 6. Բ. Գուռը և Սերպիա. — Ռաբակոծուք Պելկրասի. — 7. Բ. Գուռը և Ռումանիա. — 8. Իշխանն Քուզա. — Բարեկարգութիւնք և իւր անկումը. — 9. Կարոլոս Հոնէնձոլլէոն Իշխան Ռումանիոյ. — 10. Աշխարհահանդէս ի Կ. Պօլիս. Ապտիւլ Ազիզ յեգիպոսս. — 11. Ճորտութիւնք Կ. Պօլսոյ. Ֆուատ փաշա. — 12. Մաղձախտ ի Տակկաստան յամին 1865. Հրդեհ՝ Պանչէքաբուսիի. — 13. Ճանապարհք, Թղթատունք:

1. Սուլթան Ապտիւլ Ազիզի գահակալելը: — Յամին 1861 Յունիօ 25ի պաշտօնական շրջաբերական մը առ բովանդակ գաւառս Օսմանեան Պետութեան և առ ամենայն Օտար Տէրութիւնս կը ծանուցանէր որ վախճաններ էր Ապտիւլ-Մէճիտ կայսրը, և Օսմանեանց ժառանգական օրինաց համեմատ կայսերական գահը կը բարձրանար իւր եղբայրը Ապտիւլ Ազիզ Խան: Եւրոպիոյ Պետութիւնք հեռագրով իրենց դեսպանաց ձեռքով անդէն յղեցին մաղթանքնին, ապագայ ժամանակի պահելով յղելու նաև արտասովոր դեսպան մը ի Կ. Պօլիս:

Ապտիւլ Ազիզ գահը բարձրացած ժամանակ 32 ամեայ էր. իւր ամբողջ կեանքը, Օսմանեան Պետութեան թագաժառանգներու սահմանեալ օրինաց համեմատ վարչական գործերէ դուրս ապրած էր և մանաւանդ քա-

չուած բոլորովին առանձնական կենաց և զբաղեալ մեծապէս տանկերէն լեզուի և գրականութեան, յորս նշանաւոր եղած է. առ այս կենակցեր էր ընդհանրապէս ուսումնական (է-լէ-ֆ) խմբին հետ, որով ժողովրդեան մէջէն մաս մը որ կ'ուզէր նորոգել հին դրութիւնը և տժգոհ էր վերջին երկու կայսերաց մըտուցած երոպական բարեկարգութեանցը և հպատակաց անխտիր հաւասարութեանցը, յուսով կը սպասէր փութով անոնց բարձումը: Սուլթան Ապտիւլ Ազիզ գահակալած օրէն ցուցուց որ այլ էր ըլլալ թագաժառանգ Պետութեան և այլ էր ունենալ մեծատարած կայսրութեան մը հոգը և պատասխանատուութիւնը, որով և ինքը ևս կ'ուզէր շարունակել իւր հօրը սկսած և Եղբօրը շարունակած յառաջադիմութեան ճամբան: Այն օրուրնէ իւլէմայի խումբը սրտին մէջ անհաշտ ատելութիւն մը ծնաւ կայսեր դէմ և զոր ստիպուած էր ընկճեալ պահել: Օսմանեան Պատմութեան մէջ ի հնումն կայսերական ընտանեաց, թագաժառանգներու և կայսերագանց վերաբերեալ պատմութիւնք, խիստ տխուր և ահաւոր էջեր ունեցած են. Սուլթան Մահմուտի օրէն բովանդակ կերպարանափոխ եղեր էին այդօրինակ սովորութիւնք. իսկ Ապտիւլ Մէճիտ ըստ ներելոյ օրինաց, սիրով վարուեր էր իւր Եղբօրը հետ, որ աւելի իմացուեցաւ մահուրնէն վերջը: Ապտիւլ Ազիզի առաջին գործերէն մին եղաւ նոյն խնամքը և մանաւանդ պատիւը ցուցնել իւր Եղբօրորդւոց. որոնք օր մը իրեն թագաժառանգ պիտի ըլլային՝ քանի որ իւր որդին Եուսուֆ Իզէտտին հազիւ մանուկ էր հնգամեայ. և անոնց՝ թէ Մուրատ էֆէնտիի և թէ Համիտ էֆէնտիի (յետոյ Սուլթան Ապտիւլ Համիտ) անձնական կալուածներէն շնորհեց: Արդէն հայրերնին Ապտիւլ Մէճիտ խնամք տարած էր սոցա դաստիարակութեան, սորուեցնելով իսկ գաղղիարէն լեզու: Ապտիւլ Ազիզ փափագեցաւ որ իւրաքանչիւրը առանձին մասնաճիւղ մը ուսումնասիրէ Պետութեան գործոց և հսկէ այն մասին: Իւր անդրանիկ զաւակն ալ Եուսուֆ Իզգէտտին էֆէնտին, տակաւին

փոքրիկ, պահապան զինուորաց ցանկին մէջ գրեց. որպիսի ինչ նոր էր Օսմանեան Պատմութեան մէջ: Պահեց իւր եղբորը հաստատած Մէճիտիէ պատուանշանը և ինքը ևս նոր մը հաստատեց Նիշանը Օսմանիէ, որ առանց կրօնքի և ազգի խտրութեան պիտի շնորհուէր ամէն արժանաւորներու: Քահակալութենէն քիչ օր վերջը մեծ շքեղութեամբ կատարեց յէյուպ թուր կապելու արարողութիւնը. և այս առթիւ ընդունելով քրիստոնեայ պատրիարզները հաստատեց անոնց ամէն առանձնաշնորհութիւնքը:

2. Բարեկարգութիւնք եւ յաւաքադիմութիւնք ի կ. Պօլիս: — Ապտիւ Ադիզ Աթոռը ելլելէն վեց օր վերջը հրովարտակով մը (Խաղզի Հիւմայուն 1861) առ մեծ վէզիրն Մէհմէտ Էմին՝ կը ծրագրէր իւր կարծիքները վարչութեան մասին: Նախ կը հաստատէր իւր պաշտաման մէջ զմեծ վէզիրը և միւս բովանդակ Պաշտօնեայք և Պաշտօնակալք, ապա կ'աւելցնէր որ իւր նպատակն էր « անխտիր ամէն հպատակները երջանիկ ընել և Տէրութեան համօրէն բնակչաց կեանքը, պատիւը և ստացուածոց վայելքը ապահովցնել »: Կր պատուիրէր խստիւ իւլէմայից և Պետութեան պաշտօնատեարց « ուղղութիւն և հաւատարմութիւն », որովք միայն կարելի էր « մեր Տէրութեան ներքին և Ելեմտական մատակարարութեան մէջ՝ կանոնաւորութիւնը և բարեկարգութիւնը փափագեալ աստիճանին հասցնել քիչ ժամանակուան մէջ և վերջ տալ դրամական այն դժուարութեանց, որ ժամանակէ մը ի վեր յառաջ եկած են զանազան պատճառներէ »:

Կը կնքէր հրովարտակը « Կ'ուզեմ յայտնել ևս նըմանապէս՝ թէ իմ հպատակներուս բարօրութեան համար ունեցած փափագս որ և է խտրութիւն չճանչնար և թէ զանազան ազգութենէ և կրօնքէ ժողովուրդներս, մի և նոյն արդարութիւնը մի և նոյն հոգը և իրենց բարօրութիւնը ապահովցնելու համար մի և նոյն յարատեւ փոյթը պիտի գտնեն իմ քովս »:

Ապտիւ Ադիզ գրով խոստացածը գործով ալ ցուցուց: Շատ մը քաղաքագիտական յանցաւորք և ի

մասնաւորի 1859 Սեպտեմբերի դաւադիրք որոնք Գուլէլիի գորանոցին մէջ բանտեալ էին, արձկուեցան: Խիստ հսկողութիւն մը սահմանուեցաւ պաշտօնավարաց վրայ, յորոց յանցաւորք առանց ակնառութեան պաշտօնանկ եղան: Նոյն հրամանքը ղրկուեցան նաև գաւառաց կուսակալներու: Բայց, աւա՛ղ, այդ գաւառներն են որոնք երբէք չեն կրցած համակերպիլ բարձրագոյն կամաց և մայրաքաղաքին մէջ եղած անդորրու կենաց:

3. Օսմանեան Ելեւմուտք եւ Ֆուլատ փաշա: — Ինչպէս կ'ըսէր կայսրը իւր հրովարտակին մէջ, հարկ էր անհրաժեշտ կարգադրել և սրբել Օսմանեան Պետութեան ամենէն մեծ վէրքը, որ էր դրամական յետին տազնապը: Ապտիւլ Մէճիտի վերջին օրերուն Օսմանեան լիրան մէճիտիէ դրամով 179 զրուշի հասեր էր: Ասկէ կրնայ գուշակուիլ վաճառականութեան և մանաւանդ աղքատ ժողովրդեան վիճակը: Մասնաւոր շահասէր անձինք իրենց արդիւնաբեր շահավաճառ մը համարեցան լիրան բարձրացնել իջեցնելով և կամ հրապարակին վրայ սուտ և երկեցուցիչ լուրեր տարածել դրամոյ մասին: 1861ի Նոյեմբերի վերջին օրերը այնպիսի սարսափ մը ծնաւ կ'. Պօլսոյ հրապարակին վրայ որ վաճառականք և սեղանաւորաց մաս մը ներկայացաւ Ալալի փաշայի, պաշտօնեայ Ելեւմտից, խնդրելով առաջարկել մեծագումար թղթադրամ ունողաց զայնս հրապարակ չհանել մինչև առաջիկայ Մարտ յորում կը յուսացուէր հաստատել Օսմանեան Գրամատուներ (պանքա) փոխարէն Լոնտրայի վրայ ապահովցնելով փոխանակագրով ²⁰/₂₅ առ հարիւր:

Պետութիւնը այս շփոթից պատճառ Գրամախաղը և հատավաճառքը համարելով, գոցեց անոնց կրպակները ցնոր տնօրէնութիւն, բայց տազնապը աւելի սաստկացաւ, Օսմանեան լիրան ելաւ 240 և մինչև 300, 350 զրուշի: Եղաւ օր մը յորում առուտուրները դադրեցան, կրպակք գոցուեցան, ժողովուրդը տազնապաւ վազեց հացեփեացներու խանութները, գոնեայ հացը ապահովցնելու, բայց այն ալ պակսեր էր: Այն ատեն

Պետութիւնը հիմնական դարմաններու դիմեց. բացուեցան Խաւեարխանը և Հատավաճառաց կրպակք, բայց և Ապտիւլ Ազիզ Հաստատուն միտքը դրաւ բառնալ այս աղետից սկզբնապատճառը, այն է թղթագրամը և Ելեմուտքը բարեկարգել: Կայսրը Յունուար 20ին կոչեց զՖուատ փաշա և իրեն յանձնեց այս մեծ ձեռնարկը:

Ֆուատ փաշա Ապտիւլ Մէճիտի և Ապտիւլ Ազիզի կայսրութեանց ամենէն յաջողակ և հնարիմաց քաղաքագէտը որ, իւր նպատակին հասնելու համար, լաւ կը համարէր ամէն միջոց, որդի էր Մոլլահ Իզզէթ նշանաւոր բանաստեղծին, նախ կայսերական բժշկութեան դպրոցի աշակերտ, յետոյ աշակերտ մտեր էր Դիւանագիտութեան ասպարիղին մէջ, քաջ դպիր հանդիսանալով, ապա զրկուեցաւ այլ և այլ քաղաքագիտական նուիրակութեանց, յորս փայլեցաւ միշտ յաջողակութեամբ և ասոնց ամենէն վերջինը եղած էր Լիբանանու բարձր նուիրակութիւնը, յորում գոհացուցեր էր զԵւրոպա իւր հնարագէտ հանձարով, գոհացուցեր էր Լիբանանու մահմէտական արհեստականութիւնը և գոհացուցեր էր քան զամէնը աւելի զԲիուռը որ պատուով կ'աւարտէր Լիբանանու շառաչալից խնդիրը և որուն փոխարէն Ֆուատ կը կոչուէր ի վեզիրութիւն և քիչ վերջը լիակատար իշխանութեամբ իրեն կը յանձնուէր Պետութեան Ելեմուտքը¹:

Ֆուատ փաշա նախ պայծառ տեղեկագրով մը առ կայսրը ծանոյց թղթագրամին որքան խարէական վարկ մը ըլլալը, և որ միշտ շփոթից պատճառ պիտի ըլլար Պետութեան հարկին և վաճառականական յարարութեանց. որով նախ հարկ էր ջանալ բոլորովին վերցնել թղթագրամը: Խնդիրը ընդ երկար ուսումնասիրուելէն վերջը, Յունիս 17ին Հրաման մը կը պատուիրէր որ՝

1. Ֆուատ ի Լիբանան նուիրակութեան և ուրիշ բարձր պաշտամանց մէջ միշտ հետն առած է իւր հաւատարիմ բժիշկ Սոսի-նեան հայագգին, զոր կը պատուէր մասնաւորապէս:

Ա. Յուլիս 1էն սկսեալ թղթադրամը պիտի սկսի վերցուիլ.

Բ. Պիտի վճարուին այլ և այլ մատակարարութեանց յարածուփ պարտքերը.

Գ. Հրատարակուին կանոնաւորապէս Ելեմուտք և եղած որ և է վերածմունք: Անդէն նոր փոխառութիւն մը եղաւ 8 միլիոն անգղիական ոսկւոյ և սկսան հաւաքուիլ թղթադրամք անուանական արժէքին վրայ գնդով մը 40% փոխարէն վճարելով մետաղը: Մի և կէս տասուան մէջ 774, 545, 430 զրուշի թղթադրամ հանուեր էր հրապարակին մէջէն:

Եւ սակայն Պետութեան պարտքը այս միջոցով չէր նուազեր. ի զուր Ապտիւլ Ազիզ ամէն կարելի եղած խնայողութիւն ըրած էր անձնական և Պայլատան ծախուց վրայ և մինչ իւր նախորդը կ'ընդունէր 25,000 քսակ¹, ինքը գոհացեր էր ընդունելու 9,500 քսակ: Հարկ էր նոր միջոցներու, նոր աղբիւրներու և հնարքներու դիմել. և այն ատեն ևս առաւել յառաջ մղուեցաւ Սամանեան Իրամպուան մը գաղափարը, առ որ կազմելու կը դիմէին անգղիացի և գաղղիացի զրամատէք և սեղանաւորք և այդ միջոցով կրկին փոխառութիւն մը եղաւ ուրիշ ութ միլիոն անգղիական ոսկւոյ, յորոց վիցը ուղղակի պարտքերու պիտի գործածուէր:

Այս միջոցէն զատ աւելցան նոր խնայողութիւններ և սղորիւրներ, զորս կ'առաջարկէր Գանձուն Պաշտօնեայն Մուսդափա Ֆազըլ փաշա: Բաց ի մեծագումար խնայողութեանց, իւրաքանչիւր Պաշտօնարանի Ելեմտից վրայ, որոնք ամէնը մէկէն կը հասնէին 223,000 քսակի, տուրք պիտի դրուէին 4. Պաշտոյ կալուածոց վրայ, Վաշէներու³ վրայ ծախքերը ըստ իրենց եկամտին պիտի կարգադրուէին, մաքսային վճարք և

1. Մէկ քսակն է դահեկան 500. ֆր. մտ 112 1/2.

2. (Սամանեան պանքան յետոյ եղաւ (Սամանեան կայսերական Իրամատուն 1865 Յունիս 11:

3. Եկեղեցական և կամ եկեղեցական բարեգործական տեղւոյ մը յատկացեալ ինչք:

անուղղակի տուրքերը պիտի կանոնաւորուէին և Տէրութեան հողերու հաւասար վճարք պիտի դրուէին: Ըստ Մուսդաֆա Ֆազլի փաշայի ծրագրին, Տէրութեան Եկամուտը 43,000 քսակի առաւելութիւն մը պիտի ունենար: Այս յաջողութեանց վրայ պիտի աւելցուէր նաև նամակներու թղթագրոյմը և թղթատունը:

Մուսդաֆա Ֆազլի փաշա իւր խորհրդոց և առաջարկութեանց մէջ ցուցուց որ դրամական ամենամեծ կարողութեան հետ ունէր նաև անկեղծ արտայայտութիւն մը կարծեաց առ իւր Տէրը: Սակայն վաղեմի անձնական հակառակութիւն մը ընդ Ֆուատ փաշա և ընդ Մուսդաֆա Ֆազլի փաշա, խանգարեց այս ամէն յարեւորողութեանց ծրագիր: Ֆուատ փաշա իւր ազդեցութեամբ պաշտօնանկ ընել տուաւ զՄուսդաֆա Ֆազլի փաշա և անոր տեղ դրուեցաւ Քեանի փաշա որ Հասարակաց պարտուց մեծ հաշուետետր կազմելով, իմացուեցաւ որ Պետութեան պակասը կ'առաւելուր քան 40,000,000 Օսմանեան ոսկի: Մուսդաֆա Ֆազլի փաշա իրեն այսօրինակ պաշտօնանկութեան վրայ զայրացած, թողուց անհրաման մայրաքաղաքը և մեկնեցաւ ի Բարիզ: Բ. Գուլը իւր կալուածները հրամայեց գրաւել, սակայն ընդմիջեցին բարեկամք և Մուսդաֆա Ֆազլի դարձաւ ի Կ. Պօլիս, ուր Գազդիոյ միջնորդութեամբ անուանուեցաւ Տեսուչ Հաշուէտան:

Այս պաշտաման մէջ ևս ջանաց համոզել զԿայսրը որ Պետութեան այս ընթացքը կը դիմէր ի սնանկութիւն և ամբաստանելով մանաւանդ Ֆուատ փաշայի խորհուրդքը, զորս վեասակար կը համարէր Գանձուն, լայց չըսուեցաւ և հակառակորդին զորաւոր ազդեցութենէն, որ իրեն նպաստ ունէր զԱնգղիա, Մուսդաֆա Ֆազլի աքսորուեցաւ: Յայնմ հետէ բուրբուլին անխիտանութիւն մը տիրեց Գանձուն մէջ, յորում մեծապէս օգտուեցան բարձրաստիճան անձինք: Առաջիկայ վեցամսեայ Պարտուց շահը վճարելու համար, հարկ եղաւ որ Օսմանեան դրամատան երաշխաւորութեամբ 150 միլիոնի ևս փոխառութիւն մը ըլլայ 12⁰/₁₀₀

Քարիզու կալուածական վարկէն : Բայց այս փոխառութիւնը հազիւ եռամիսը վճարելու բաւեց, որով և բընաւ օգուտ մը չունեցաւ ընդհանուր դրամական ցաւալի կացութեան, որ երթալով սաստկացաւ հրապարակին վրայ :

4. Բ. Գուռը եւ Մոնդէնէկրօ, Հերձելովինա : — Դերքին դրամական տազնապները կ'աւելցնէին մանաւանդ Արտաքին ևս մեծամեծ ծախքեր որոց պատճառք էին ի Պալգանեան իշխանութիւնս և եւրոպական և ասիական գաւառաց մէջ պատերազմունք և յուզմունք, յորոց ոմանք ժառանգութիւն մ'էին Ապտիւ Ազիզի իւր Եղբօր ժամանակէն մնացեալք, և յորս նախ պէտք են թուել զՄոնդէնէկրօ¹ :

Մոնդէնէկրոցիք մինչև ԺԳ դարը մասն կը կազմէին Սերպիոյ թագաւորութեան . ապա ապստամբելով, անկախ իշխանութիւն մը եղան, իրենց գլուխ ունենալով Չէոնոյէվիչ գերդաստանէն : Յամին 1516 Գէորդ իշխանը հրաժարեցաւ իշխանութենէն ի նպաստ Չէդդինեէի եպիսկոպոսին, որ այսպէս միացուց երկու իշխանութիւնքը և Չէդդինեէի եպիսկոպոսը կ'ըլլար միանգամայն իշխան Մոնդէնէկրոյի : Օսմանեան պետութեան արշաւանաց և տիրապետութեան ժամանակ Ադրիականի եզերքները, այս ժողովուրդք ալ հարկատու եղան Տաճկաց . բայց Ռուսաստանի հետ կրօնակցութիւնը մեծապէս նպաստեց և Բ. Գուռը ի շնորհս երեսաց Հիւսիսային մեծ Պետութեան, կը գոհանար միայն տուրքը ստանալով և իշխան եպիսկոպոսունք յաջորդեցին դարեր՝ ի հօրեղբօրէ ցեղբօրորդի : Յամին 1833 Պետրոս Փէդրովիչ Վլատիքա՝ օծուելու համար Փեդրրպուրկ գնաց և Ռուսիոյ դրամական օգնութեամբ եկաւ բարեկարգեց զՄոնդէնէկրօ : Վերջապէս յամին 1851 Տանիւօ Փէդրովիչ հրաժարեցաւ յեկեղեցակալութենէ և աշխարհական ըլլալով ամուսնացաւ և հաստատեց նոր հարստութիւն մը : Ապա գնաց ի Փէդրը-

1. Գարատաղ ըստ թուրք աշխարհագրաց, Չէոնակորա ըստ սլաւնչման :

պուրկ իւր իշխանական տիտղոսը հաստատելու համար, և Ռուսաստան ամենայն հովանաւորութիւն յայտնեց տաճկահպատակ իշխանի մը և փափագեցաւ որ եպիսկոպոսութիւնն ալ մնայ դարձեալ թագաւորոջ ցեղին մէջ: Բ. Գրան իշխանութիւնը Մոնղէնէկրոյի վրայ որչափ որ ալ անուանական ձև մը միայն ունէր, այսու հանդերձ Տանիլօ Փէդրովիչի անհրաման ըրածին վրայ զայրացաւ և Էօմէր փաշա զօրօք մտաւ ի Մոնղէնէկրօ և թշնամութիւնք դադրեցան միայն Աւստրիոյ միջամտութեամբ, յամին 1853 Մարտի:

Վրայ եկաւ Արևելեան պատերազմը և Բարիզու Դաշնաժողովը, որուն որոշողութեանց մէջ երբ Տաճկաստան իւր ամբողջութեան մասն համարեցաւ նաև զՄոնղէնէկրօ, Տանիլօ իշխանը Յուշագրով մը առ Պետութիւնս կը պահանջէր Մոնղէնէկրոյի անկախութիւնը, ընդարձակութեամբ սահմանաց՝ Հերձէկովինայի և Ալպանիոյ կողմէն, նաև մէջը բովանդակելով զԱնդիվարի: Դաշնաժողովը ընդհակառակն իւրեն խորհուրդ տուաւ հպատակել Բ. Գրան՝ որ յանձն կ'առնուր միացնել Մոնղէնէկրոյի՝ Հերձովինայի փոքր մաս մը, թոչակ մը տալ իշխանին և աստիճան մարաջախտութեան, դարձեալ Մոնղէնէկրոցիք հրաման պիտի ունենային ազատաբար մտնել թուրք նաւահանգիստները: Տանիլօ բողոքեց և յանձն շառաւ այս պայմանքը, յորս յայտնի հպատակութիւն կը տեսնէր և պատրաստուեցաւ պատերազմի:

Յամին 1858 Մայիս 4ին Հիւսէյին փաշա հրաման ստացաւ մտնել ի Մոնղէնէկրօ, և Բ. Գուռը կը համարէր դիւրաւ ընկճել այս ապստամբութիւնը, բայց Տանիլոյի եղբայրը Միրքօ Փէդրովիչ որ ժամանակակից Պատմութեան մէջ դիւցազնական և վիպասանական անուն մը ձգած է, Կրահովոյի քով ընդհարաւ թուրք բանակին և կոտորեց 3000 զինուոր, տիրելով նաև հրանօթից: Այն ատեն Ռուսաստանի թելադրութեամբ Եւրոպա միջամտեց և որոշուեցաւ որ առ ժամս դադրին թշնամութիւնք և ճշդունին Մոնղէնէկրոյի սահմանք:

Իշխանն Տանիւօ յամին 1860 Օգոստոս 13ի կ'ըսպանուէր Պաղդարոյի մէջ թողլով միայն դուստր մը . և կը յաջորդէր իրեն Նիկոլաս Փէգրովիչ՝ իւր Միրքօ եղբօրը զաւակը իւր հօրը հովանաւորութեան և կառավարութեան ներքեւ :

5. Պատերազմ Հէրձեկովինայ . — Էօմէր փաշա . — Պարտութիւն Մոնղէնէկրոյի : — Մոնղէնէկրոցւոց Կրահովոյի յաղթութիւնը և իրենց պահանջներուն յաջող ընթացքը , խրախոյս եղան Հէրձեկովինայի ևս հնարք մը փնտռելու և ազատելու Պէյերու և ազատազլուխ (պռչի պռչոս) զինուորներու հարստահարութիւններէն , որոց ներքեւ կը հեծէին : Տանիւօ իշխանը հանդիսատես միայն եղեր էր Հէրձեկովինայի յուզմանց . բայց երբ Մոնղէնէկրոյի կառավարութիւնը Միրքոյի ձեռքն անցաւ , սա գաղտ և յայտնի խրախուսեց Հէրձեքները . Մոնղէնէկրոյի խումբեր մըտան Հէրձեքներու բանակաց մէջ , որոնք միաբան կը ուռելով տիրեցին Սուգորինայի և Նիքսիչի : Բ . Գուռը Մոնղէնէկրոցւոց օգնութիւնը արգիլելու համար , պահապան գունդեր հաստատեց սահմանապլխոյն վըրայ և թուրք նաւատորմիղը հրաման ստացաւ բռնելու Ազրիականի նաւահանգիստքը : Նիկոլաս Փէգրովիչ իշխանը բողբեց , սակայն ի գուր . Բ . Գուռը կ'ուզէր կղզիացնել զՀէրձեկովինա որոց վրայ զրկեց իւր անուանի գորավարներէն մին զԷօմէր փաշա , որ պատերազմը սկսելէն առաջ Մայիս 23ին Յայտարարութիւն մը ուղղեց բնակչաց , իմացնելով որ Սուլթանը կը հաճէր իրենց հողային ինքնուրոյն վարչութիւն մը տալ , որոց վրայ պիտի կենային նոյն իսկ իրենցմէ կարգեալ տեսուչք (տօնիւրք) : Սակայն Հէրձեկովինացիք շարունակեցին իրենց ասպատակութիւնքը և Էօմէր փաշա Սեպտեմբեր 2ին պատերազմ հրատարակեց և յետ այլ և այլ փոքր գուպարածներու Նոյեմբեր 21ին Փիվայի քով յաղթեց և ջաղխեց անոնց գունդերուն բազմութիւնը :

Յետ այս յաղթութեան , որով Հէրձեկովինա ընկճեալ կրնար համարուիլ , Էօմէր իւր ոյժը դարձուց դէպ

ի Մոնղէնէկրոյ որ խրախուսեր էր զՀէրձէկովինա այս ապստամբութեան միջոց և Նիկոլա իշխանէն պահանջեց որ գունդերը ցրուէ և միայն սակաւ զինուորք պահէ ինչպէս խաղաղութեան ժամանակ: Երբ Մոնղէնէկրո մերժեց այս առաջարկը, Էսմէր փաշա 1862ի գարնան մտաւ ի Մոնղէնէկրոյ 60,000 զօրօք, երեք զօրաբաժին վերածուած, որոց կը հրամայէին յապագային ևս երեք նշանաւոր զօրավարք՝ Տէրվիչ փաշա, Ապտի փաշա և Հիւսէյին Ալի փաշա: Առաջին երկու զօրաբաժինները հակառակ կողմէ պիտի մտնէին Մոնղէնէկրոյի մինչև կեդրոնը և Հիւսէյին Ալի իւր զօրքերով նեցուկ պիտի ըլլար ծրագրին գործադրութեան:

Սակայն Հիւսէյին Ալի Լինի անցքերուն քով յաղթութեցաւ և ապստինեցաւ Սփուցցայի պարիսպներուն ներքև և Միրքօ կրցաւ երկու ամսոյ չափ վաստակաբեկ ընել միւս երկու զօրաբաժինքը: Բայց Մայիս 31ին Տէրվիչ փաշա 18 կանոնաւոր գունդերով և երկու հազար անկանոն զինուորօք Քիթթայի մօտ յարձակեցաւ Մոնղէնէկրոցւոց վրայ և յետ երկու արիւնահեղ կռիւններու, յաղթեց վուքալավիչի գունդերուն և ապա ճարտար դարձուածքով մը վանեց զՄիրքօ Օսրոկի կիրճերուն մէջ և հոն շրջապատելով մեծ յաղթութիւն մը տարաւ: Միրքօ մնացեալ գունդերով աճաւ պարանօք փախստական նահանջ մը կատարեց որ շատ աւելի աղետալի պիտի ըլլար, եթէ թշնամին զինքը հալածէր: Բայց Օսմանեան գունդերը որոնք ևս 308 անձինք կորուսեր էին, ցրուելով աւաններու և գիւղերու մէջ գանոնք ալ հպատակեցնելու նպատակաւ, Միրքօ կրցաւ նոր գունդեր հաւաքել և փոքր մասնական յաղթութիւնք ընել ի Լակարանչ և ի Գոգոզի: Բայց Մոնղէնէկրոցիք դժուար պարագաներու մէջ կը գտնուէին, յոյս ունէին որ իրենց այս յետին ճիգը համակրանք մը գտնէ յԵւրոպա և գոնեայ քաղաքագիտական օգնութիւն մը իրենց առջևը ելլէ. բայց պատրեցան, Եւրոպա և կամ Մոնղէնէկրոյի համակրող Պետութիւնք կը համարէին որ իրաց այս վիճա-

կին մէջ Բ. Գուռը չէր ընդունե՛ր որ և է միջամտու-
թիւն և չէին ուզեր գժտիլ Տաճկաստանի հետ: Էօ-
մէր փաշա յետ ի զուր հրաւիրելոյ զՄոնղէնէկրոցիս
ի հպատակութիւն առանձին գումարտակներով, մտաւ
ի Չէննացէվիչքա. Ռէքա, կրակ թափելով Մոնղէնէ-
կրոցուց վրայ ամէն կողմէն, որոնք թնդանօթ չունէին:
Միրքօ ամենայն քաջութիւն ցուցուց, բայց ի զուր-
անհնար էր յաղթել անհամեմատ բազմութեան: Օ-
գոստոս 23ին գարնուեցաւ թուրք գունդերու հետ Ռէ-
քա նահանգին Քոքոս ըսուած դժուարամտոյց տե-
ղը և բոլորովին յաղթուելով, տաճիկ գունդերը չունե-
ցին ի Չէդդինեէ, զոր պաշարեց Էօմէր փաշա և հոն
ևս յետ վերջին յուսահատ կռուոյ Վուքալովիչի և Միր-
քոյի սակաւաթիւ մնացեալ գունդերուն հետ, Չէդդի-
նեէ ընկաւ Տաճկաց ձեռքը ուր սակայն չմտաւ Էօմէր
փաշայ, նոր արիւնահնդութեանց խնայելու համար:
Կարելի է գուշակել ի Կ. Պոլիս եղած մեծ ուրախու-
թիւնը այս վերջնական յաղթութեան լրոյն վրայ: Ապ-
տիւլ Ազիզ մասնաւոր ուրախակցութեան հրովարտակ
մը ուղղեց առ Էօմէր փաշա կոչելով զնա Սպարապետ
(Սերբուր-Էտբե՛) Տէրվիչ և Ապաի փաշայք Օսմանիէ
պատուանշանին Առաջին կարգը ստացան, նաև հա-
մեմատարար ուրիշ զինուորականք: Մասնաւոր շքա-
նշան ընդունեցաւ Ռումէլիի պահեստի զօրաց գունդէն
(Խրիտացի վաշար որ մեծ քաջութիւն ցուցուցեր էր.
և հրահանգներ զրկուեցան գունդերուն դարձին:

Ապստամբութիւնը վերջացած կրնար համարուիլ,
Վուքալովիչ անձամբ գնաց հնադանդելու շէրձէկի
Խուրչիտ փաշայի և Օսմանեան Պետութիւնը իւր
սովորական արեւելեան վեհանձնութեամբ ոչ միայն
իրեն զօրապետութեան աստիճան տուաւ, այլ և հրա-
ման կայսրութեան ծախիւք 500 զինուոր ունենալ, եր-
կրին ասպատակները հնազանդեցնելու համար:

Իսկ Մոնղէնէկրոյի և Բ. Գրան մէջ խաղաղութիւնը
կատարուեցաւ ի Շքոտրա (Աքուդարի): Բ. Գուռը
որչափ որ համարուեցաւ ի սկզբան խիստ՝ բայց ա-
պա իւր աւանդական խոհեմութեամբ բարեւարտու-

Թեամբ մի առ մի զիջաւ : Պահանջեր էր որ Միրք¹ ելլէ Մոնղէնէկրոյէն, սակայն ապա շնորհեց անոր մնալ իւր հարենիքը . իրաւունք ստացեր էր բերդեր շինելու այն ճամբուն վրայ որ Մոնղէնէկրոյէն կտրելով կը տանի ի Հէրձէկովինա, և արհամարհեր էր ասոր նըկասամամբ Ռուսիոյ, Գաղղիոյ և Աւստրիոյ բողոքները, բայց հետ միանգամ բարեկամանալոյ Նիկոլա իշխանին հետ, զիջաւ անոր խնդրանաց ոչ միայն հրաժարեցաւ այդ իրաւունքէն, այլ և շինած մի մեծ հողաբերդը քակեց : Գարձեալ զԿրասնովօ կը շնորհէր Մոնղէնէկրոյի և Մոնղէնէկրոյի բնակիչք կրնային ապրանք անցնել Անդրիվարի նաւահանգստէն իրենց երկիրը տանելու առանց մուքսի¹ : Միայն օտար հպատակ մը պիտի չկրնար մտնել ի Մոնղէնէկրօ առանց անցագրի, և Մոնղէնէկրօ կը խոստանար բնաւ բերդեր չշինելու Աւստրիայի, Հէրձէկի և Պոսնիայի սահմաններուն վրայ : Իսկ Տաճկաստան պիտի ամրացնէր միայն իւր սահմանագլուխքը, ինչպէս սկսաւ ալ ընել :

1834

6. Բ. ԳՈՒՈՐ ԵՆ ՍԵՐԱՎԻԱ . Ռիբակոժուսն Պէլկրատի : — Ըստ 1830ի Գաշանց² Սերպիա ներքին ազատ ինքնավարութիւն մը ունէր իւր իշխանով և պաշտօնիք, վճարելով սահմանեալ տուրք մը և բերդերու մէջ տաճիկ պահանորդք պահելով : Այդ զինուորք չունէին իրաւունք մը իրենց չրջանակէն դուրս : Մոնղէնէկրոյի և Հէրցէկի պատերազմներուն միջոց Բ. Գուուր Սերպիոյ կողմէն ևս յուզումն համարեցաւ տեսնել բոլորովին ինքնիշխան Պետութիւն մը ըլլալու : Ընդհակառակն սերպ վարչութիւնը ստէպ կը բողոքէր որ Տաճիկք բնաւ չեն պահեր սահմանեալ դաշինքները և Պէլկրատի պահանորդաց հրամանատար փաշայն կ'ընդմիջէր ներքին քաղաքական որ և է գործոց մէջ : Ոգիները երկու կողմանէ ալ անվստահու-

1. 1865ի Մարտի մէջ Ապտիւլ Ազիզ ի Մոնղէնէկրոյ աղբատաց բաժնուէիք 2500 Օսմանեան լիրա զրկեց արեւելեան առատաձեւութեամբ :

2. ժամանակակից Պատմութիւն Ա Հատոր ԳԼ ԻԱ .

Թեան և զրգոի մէջ էին երբ 1862ի Յունիս 10ին թուրք զինուոր մը սպաննեց սերպիացի մը որ աղբիւրէն ջուր կ'առնուր և իրեն տեղիք չէր տուած : Սերպոստիկան մը վազեց բռնելու զմարդասպանը, սակայն տաճիկ պահապան մը հրացանի հարուածով զնա ևս տապալեց : Անդէն Պէլկրատի ժողովուրդը ի զէն դիմեց և յարձկեցաւ տաճիկ պահապանաց բնակատեղի վրայ և տիրեց ոմանց : Կարաչանին սերպ առաջին պաշտօնեայն յետ բազում ջանից հաղիւ կրցաւ ամբոխը հանդարտեցնել և տաճիկ կալանաւորեալ զինուորքը դղեակը յղեց՝ սերպ զինուորներու պահպանութեան ներքեւ : Բայց հաղիւ դղեակը հասեր էին, տաճիկք պահանորդք հրացաննին բերողաց վրայ դարձուցին և զանոնք սպաննեցին : Այլ անհնար էր քաղաքացւոց զայրոյթը զսպել, որոնք պատնէշներ բարձրացուցին մինչև ամրոցին շրջակայք իսկ, և պատրաստուեցան զինուք կուռելու : Այսու հանդերձ բանակցութիւնք կը շարունակուէին սերպ պաշտօնէից և հրամանատար փաշային մէջ և հիւպատոսաց միջնորդութեամբ սահմանուեցաւ որ քաղքին մէջ եղող տաճիկ պահապանք թողուն իրենց բնակատեղը և ամրոցը քաշուին և Կարաչանին երաշխաւոր ըլլայ անոնց ապահով հասնելուն և յարգել սայ թուրքերու անձինքը և կալուածքը :

Սերպք կատարեցին իրենց խոստմունքը, բայց հաղի Տաճիկք վտանգէն ազատելով, պարսպաց ներքեւ գտնուեցան, կարկտի նման ոււմբերը սկսան տեղալ Պէլկրատի վրայ. և հաղիւ դադարեցին կրկին յետ միջամտութեանց : Սերպիա դիմեց եւրոպական Պետութեանց և Քաղղիա որուն ազդեցութիւնը մեծ էր, առաջարկեց դեսպանաժողով մը ի Կ. Պօլիս :

Յետ երկար բանակցութեանց, որովհետև Պետութիւնք երկու մասի բաժնուած էին և Անգղիա, Աւստրիա չէին նպաստաւորք Սերպիոյ, վերջապէս միաբանեցան Սեպտեմբեր 8ի դաշինք մը հաստատելու, ըստ որոյ Սերպիացւոց կը յանձնուէին Սօքոլի և Ուշիցա բերդերը և Պէլկրատի ամրոցը որչափ որ ալ կը

մնար Տաճկաց ձեռքը, սակայն քաղաքին մէջէն կը վերցուէին տաճիկ պահապանք: Միւս երեք նշանաւոր բերդերուն մէջ ի Ֆէթէ-Իւլ-Իսլամ, Սէմէնտրէ և Շապաց, միայն պէտք եղածի չափ զինուորք պիտի մնային, որոց թիւը Բ. Գուռը պիտի որոշէր միաբանութեամբ Սերպիոյ իշխանին: Գարձեալ իբր պայման՝ Օսմանեան հրամանատարը յարգանք պիտի վարուէր Սերպիոյ իշխանին հետ:

Որչափ որ ալ Սերպիա ըստ այսմ դաշանց նոր իրաւունքներ կը ստանար, սակայն ժողովուրդը տոգոհ էր մեծապէս, քանի որ Պէլկրատի ամլոցը զրաւեալ էր ի Տաճկաց: Յամին 1865 դրամական փոխարինութեամբ մը Բ. Գուռը հրաժարեցաւ որ և է իրաւունքէ մը քաղաքին մէջ և սահմանափակ մնաց միայն յամրոցին զոր պահեց մինչև ցամն 1867 Մարտ, յորում Տաճկաստան տազնապեալ կրէտէի ապստամբութենէն, ուզեց զոնեայ Պալզաններու կողմանէ հոգ մը շունենալ և Պէլկրատի ամրոցէն հանեց տաճիկ զինուորքը, ուր Սերպիացիք անդէն մեծ ուրախութեամբ կանգնեցին եռագոյն դրօշակը:

7. Բ. Գուռը եւ Ռումանլիա: — Դախընթաց էջևրու մէջ տեսանք¹ որ Բ. Գուռը վերջապէս հաւաներ էր Մոլտավիոյ Վալաքիոյ միւթիւնը օրէնագիտական և մատակարարութեան մասերով. ունենալով մէկ միայն իշխան մը, որ էր Ալլեքսանդր Յովհաննէս Ա Գուզա: Եւ որուն ամրոջ կենաց ժամանակ պիտի տւէր այս միութիւնը: Յովհաննէս Գուզա որչափ որ ալ շքեղ իշխանութիւն մը ունեցեր էր և լաւ յարաբերութիւնք Բ. Գրան հետ որ զանապան առիթներով պատուեց զինքը, այսուհանդերձ երկու ներքին խնդիրք միշտ վըրդովման մէջ պահեցին իւր իշխանութիւնը, նախ յեղափոխականաց հակառակութիւնը որոնք 1862ի Յունիս 20ի նիստէն վերջը մինչև յանդնեցան գնտակահար սպաննելու զՊարպօ Քաթարճի Խօստրանին պահպանողական նախագահը, և երկրորդ Վանքերու կա-

լուածոց խնդիրը որ Միջազգային նիւթ մը եղաւ և պատճառ շատ մը Խանուցագրոց Պետութեանց մէջ, զոր կարևոր կը համարինք համառօտիւ մը յիշելու :

Ռումանիա յետ ինքնիրեն ազգային եկեղեցական ազատ իշխանութիւն մը ունենալու, փափագեցաւ ձեռք բերել նաև վանքերուն կալուածքը որոց եկամուտքը յոյն կրօնաւորք կը զրկէին ի պատրիարգարանն Ֆէնէրի որ ի Կ. Պօլիս. և այդ եկամուտք Նախընթաց Վանքերէն ախտոգոսով կը պատկանէին Լըուսաղէմի Սուրբ տեղեաց, Աթոս Լերին և կամ Սինայի: Այսպէս օտար եկեղեցականք միջամտութիւն մը կ'ունենային Ռումանիոյ Եկեղեցական իրաւասութեան մէջ և Ռումանիա որպէս զի ազատէ իւր հայրենի ժառագութիւնը օտար ձեռքերէ, յանձն կ'առնուր տարեկան տուրք մը վճարել, զոր կը մերժէր Ռուսիա իբր պաշտպան Ֆէնէրի պատրիարգարանի: Երբ յամին 1863 իշխանն Գուզա յարքունիս գրաւեց բոլոր վանքերու կալուածները, Ռուսաստան իրեն համամիտ առնելով նաև զԱնգղիա և զԱւստրիա, բռնադատեց զԲ. Գուռը ստիպելու. զՌումանիա ետ տալու գրաւած երկիրները, սպառնալեզօք Օսմանեան բանակներով բռնել զՌումանիա. ի զուր իշխանն Գուզա ջանաց համոզել զԲ. Գուռը որ ինքը պաշտպան կալով Ֆէնէրի պատրիարգարանին, միարան Ռումանիոյ հետ խնդիրը մէջերնին կարգադրեն: Իշխանը մինչև առաջարկեց մէկ անգամուան համար վճարել 19,000,000 ֆրանք Ս. Տեղիաց վանքերու նպատակաւ և այդ գումարը մնար ընդ հովանաւորութեամբ Բ. Գրան, Պետութեանց և Ռումանիոյ և վանքերը ամեն տարի այդ գումարին եկամտից գործածութեան հաշիւ տային: Գարձեալ Ռումանիոյ, վարչութիւնը յանձն կ'առնուր Կ. Պօլսոյ մէջ 2 միլիոն ֆրանքաց հիւանդանոց մը շինել և վարժարան մը ամէն դաւանանքէ քրիստոնէից համար: Այլի փաշա մեծ վէզիր այս խնդրոյն ժամանակ, յօտար էր բանակցիլ այս հիմանց վրայ, բայց յոյն կրօնաւորք բացարձակապէս մերժեցին: Այն ատեն Ռումանիոյ Խօսարանը աշխարհականացեալ հռչակեց բո-

լոր եկեղեցական կալուածքը, եւրոպական ուրիշ Պետութեանց օրինակին հետեւելով: Բ. Գուռը զրդեալ ի Ռուսիոյ բնաւ շուզեց ճանչնալ: Բայց երբ Գաղղիա և Իտալիա միջամտեցին իբր միջնորդ ի նպաստ Ռուսմանիոյ, Ալլի փաշա առաջարկեց Գուգա իշխանին որ փոխարինեալ գումարը ըլլայ 150,000,000 զուրուշ: Ռուսմանիա պատրաստ էր յանձն առնլու, երբ կրկին մերժեցին յոյն կրօնաւորք: Ռուսմանիա վերջնական կերպով այն ատեն ժողովեց իւր ազգային Սինոդը Գեկտեմբեր 13ին և ինքզինքը բոլորովին անկախ Եկեղեցի հրատարակեց և ազատ Ֆէնէրի պատրիարգարանէն:

8. Իշխանն Գուգա – բարեկարգութիւնք եւ իւր անկումն: - Վանաց կալուածոց վերաբերեալ խնդիրք սկսած ժամանակ միշտ միութիւնը տւած էր ընդ իշխանն և ընդ Խօսարանն, որ սակայն երթալով նուազած էր: 1864 Մայիս 14ի այնքան գայրացած էր ընդդիմութիւնը երկու իշխանութեանց մէջ որ իշխանը Պետական հարուածով մը ցրուեց Օրէնադիր ժողովքը և փոփոխութիւնք մտուց Սահմանադրութեան մէջ, որուն հաստատութիւնը ստացաւ ժողովրդախումբ քուէով: Անկէ վերջը ձեռք առաւ իշխանապետութիւն մը զոր ստուգիւ գործածեց ի նպաստ Երկրին հաստատութեանց մանաւանդ յօգուտ Երկրագործութեան և երկրագործ դասուն. վերցուց բռնի աշխատութիւնը, գիւղացիք կրնային կալուած ստանալ: Ընդունեցաւ կշոց և դրամոց մէջ տասանորդական դրութիւնը. հաստատեց ամուսնութեանց, ծննդեան և մահու քաղաքական տետրակք. կրթութիւնը և ուսումը ստիպողական եղաւ, մտուց Նարուէոնեան Սրինագիրքը, երդուեալք եղեռնական դատաստանաց համար. հաստատեց վարժարանք զինուորական, գեղարուեստից և հիւանդանոցք և անկելանոցք: Սակայն ինչ որ ինքն էր և ինչ զգացմամբ որ իշխանապետութիւն մը ձեռք առեր էր, նոյնը չէին զինքը շրջապատող անձինք և պաշտօնեայք, որոնք մեծապէս կը կեղեքէին զժողովուրդը:

Ընդդիմութիւնը զօրացաւ և յայտնապէս սկսաւ հա-

կառնակ երևնալ իշխանին: Յամին 1863 Օգոստոս 15ին Պուքրէշդի հրապարակին վրայ մեծ խռովութիւն մը ծագեցաւ և արիւնհաճեղութիւնք եղան, շատ անձինք կալանաւորուեցան, բայց ապա ներեց իշխանն Գուզա: Յերևան եկաւ որ Ազնուական և Զինուորական մասը պատրաստ էր տասպալելու իշխանութիւն մը զոր « ինքնակամ և քմահաճոյ » կը կոչէր: Բազմաթիւ ամբաստանութիւնք զրկուեցան առ Բ. Գուռը, զորս Յուստ փաշա ծանոյց աւ իշխանն որպէս զի ըստ այնմ կառավարուի. իշխանն Գուզա այնպիսի լեզու մը բանեցուց առ Բ. Գուռը, որով կորոյս նաև անոր համակրանքը և նեցուկը, վստահ եւրոպական Պետութեանց վրայ, որոց լրացիրք միշտ գովութեամբ կը խօսէին իր բարեկարգութեանց վրայ: 1861 Փետրուար 22/23ի գիշերը զինուորական կազմակերպեալ դաւ մը, որուն զլուխ էր Ռոպէղդի երեսփոխանը խմբագրապետ Ռամանուկ լրագրին, բռնադատեց զԳուզա թողլու իշխանութիւնը և ստորագրել հրաժարականը և առ ժամս զինքը բանտեց:

Պաշտօնեայք փութով Տեղապահութիւն մը կազմեցին և Առ ժամանակեայ վարչութիւն մը և Ներքին գործոց պաշտօնեայն Տիմիդրի Կիլքա Փետրուար 24ի Յայտարարութեամբ մը կը ծանուցանէր ժողովըրդեան Աղեքաանդր Գուզայի անկումը, Առ ժամանակեայ իշխանութեան կազմուիլը, ծանուցանելով նախկին իշխանութեան ժամանակ եղած անկարգութիւնքը և կը յայտնէր որ Ռումանիոյ համար կարևոր էր օտարագրի իշխան մը: Այդ կարծիքը ևս յայտնեց իշխանն Գուզա իր հրաժարականին մէջ: Բայց Բ. Գուռը ոչ միայն օտար իշխան մը չէր ուզեր, այլ և կը պահանջէր երկուց նահանգաց Մոլտավիոյ և Վալաքիոյ բաժանումը որոնք միացեր էին յանձն Գուզա իշխանին:

Ի Բարիկ դեպանաժողով մը պիտի սահմանէր այս խնդիրքը, երբ ի Պուքրէշդ երեսփոխանական ժողովը յետ յարտարարարելու Երկուց նահանգաց անբաժան միութիւնը կ'ընտրէր հոսփոտար Ռումանիոյ նախ զկոմ-

սըն Ֆլանտրիոյ, որ երբ չընդունեցաւ, ընտրեց զԻշխանն Կարոլոս Հոհէնձոլլէոն:

Գ. Կարոլոս Հոհէնձոլլէոն իշխան Ռումանիոյ: — Երբ Պետութիւնք տակաւին սահմանած չէին ընդունելու այս ընտրութիւնը, նա մանաւանդ Նարոլէոն կայսրը, և Անգղիա և այլք խորհուրդ կուտային չընդունիլ, յանկարծ Մայիս 22ին Կարոլոս իշխանը հասաւ ի Պոլսքէչդ՝ ուր հանդիսաւոր մուտք մը ընելով, ուղղակի գնաց յեկեղեցին, և անկէ ազգային խորհրդարանը հրթալով բազմութեամբ պաշտօնէից և երեսփոխանաց, երբուընցաւ Սահմանադրութեան վրայ և հաստատեց բոլոր նախկին պաշտօնեայնները: Նոյն երեկոյ մայրաքաղաքը մեծ ուրախութեան մէջ էր և շքեղ լուսաւորութիւնք եղան:

Կարոլոս իշխանին առաջին պարտք եղաւ գրել առ Սուլթանն Ապտիւլ Ազիզ յայտնելով թէ «որքան կը յարգէր այն կապերը որոնք Դանուբեան իշխանութիւնքը զօդեալ կը պահէին Տաճկաստանի հետ»: Եւ սակայն ոչ Եւրոպայ և ոչ կայսերական վարչութիւնը այս ընտրութեան հաւանութիւն մը ունէին և որչափ որ Կարոլոս իշխանը զայն պաշտօնապէս ծանոյց ամենուն, սակայն նախ Բ. Գուռը մերժեց տալ հաւանութիւնը և կը պատրաստուէր մտնել զօրօք Դանուբեան իշխանութեան մէջ, մինչ Պետութիւնք մի առ մի սկսան եղած լմնցածին հաւանութիւննին տալ: Կարոլոս իշխանը կրկին հպատակութեան թուղթ զրկած էր Կիքա իշխանին ձեռքով, այն ատեն Բ. Գուռը Յուլիս 20ի Ֆէրմանով հաստատեց Կարոլոս Հոհէնձոլլէոնի ընտրութիւնը իբր հոսփոտար Մուսու-Վալաքիոյ: Հետեալ Գեկտեմբերի մէջ իշխանը Կ. Պոլիս գնաց Սուլթանին ձեռքէն ընդունելու զգեստաւորումը և այս առթիւ շքեղ ընդունելութիւնք եղան իրեն և մեծամեծ հանդիսներ:

Իշխանն Կարոլոս Հոհէնձոլլէոն ազգակից բրուսիական թագաւորոջ Տանն, երկու տարի վերջը կ'ամուսնանար ի Քոպլէնց՝ Վիտի իշխանական ցեղին Եղիսարէթ իշխանուհւոյն հետ, որ ապա Գորթն Սելե-

քերթողուհւոյ անուամբ, պիտի զարդարէր և պարծանք բերէր Ռումանիոյ գահուն, յառաջ մղելով մեծապէս ուսումը և դաստիարակութիւնը. նոր ստացած Հայրենեացը մէջ:

10. Աշխարհաբանութիւնս ի Կ. Պօլիս. — Ապտիւլ Ազիզ յԵգիպտոս: — Ապտիւլ Ազիզ արտաքին գաւառները հանդարտեցնելու ժամանակ կէս մը յաղթութեամբ և երբեմն զիջումներով, բնաւ յետս չէր կեցած այն բարեկարգութեանց շաւղէն, որովք սկսեր էր իր թագաւորութիւնը և սրունք առաւել ևս յառաջ մղուելով, նոր ամենեին կերպարանք մը տուին Կ. Պօլսոյ իսկ, որ արդէն ի բն՝ սփտեալ այնքան նախանձելի գեղեցկութեամբ, մեծապէս ևս շքեղացաւ Ապտիւլ Ազիզի թագաւորութեան ժամանակ և յորում չէ անմասն Ֆուատ փաշայի նման պաշտօնէի մը զարմանազան հանճարը: Միաբան յղացան այն խորհուրդը որով Կ. Պօլսոյ և գաւառաց մղումն տալու համար և զանոնք մէկմէկու աւելի մերձեցնելու համար Օսմանեան Յուցահանդէս մը կազմակերպել ի Կ. Պօլիս: Խորհուրդը իրականացաւ և 1863ի Փետրուարի մէջ. չքեղ հանդիսիւ Կայսրը բացումը ըրաւ և յամենուստ դիմեցին բազմութիւնք սմանք հետաքննելու և այլք ուսանելու: Արուեստին ամենէն առատ մասն էր երկրագործականը և ամենէն գեղեցիկը և ուսուցանողը՝ մեքենական մասը, մանաւանդ երկրագործական մեքենայք, մեծաւ մասամբ սեպչականութիւնք Մուստաֆա Ֆազըլ փաշայի, որ և նա մեծ հոգ տարած էր Յուցահանդէսին ընդարձակութեան, որով և նոր ժամանակ մը կը բացուէր Օսմանեան Պատմութեան մէջ:

Ուրիշ նշանաւոր դէպք մ'էր նաև Սուլթանին այցելութիւնը յԵգիպտոս, ուր մեկնեցաւ Պետութեան Ֆէյշի Ղէհան շոգենաւով Ապրիլ 3ին: Ուրիշ մարդանաւի մը մէջ կը գտնուէին նաև կայսերացուն Երբորորդիք: Ապտիւլ 10ին հասաւ Աղեքսանդրիա ուր ընդունուեցաւ մեծամեծ փառաւորութեամբ և հանդէսներով: Այց ելաւ Գահիրէի և շրջակայից, ամէն

կողմ քաժնելով դրամ անխտիր ամէն ազգի և կրօնից վարժարանաց և աղօթատեղեաց և աղքատներու : Նոյն ըրաւ ևս ի դարձին ամէն հանդիպած տեղերը և ի Զմիւռնիա հիւր իջաւ և ճաշեց Վիթալի նշանաւորի մը տուն :

Ապտիւլ Ազիզ դարձաւ ի Կ . Պօլիս Մայիս 2ին , ուր իրեն մուտքը և ժողովրդեան ընդունելութիւնը ի վեր է քան գամենայն նկարագիր : Կ . Պօլիս հասնելուն , առաջին մեծ հոգն եղաւ մայրաքաղաքին ընտիր ջուր մը ապահովցնել և առ այս ղրկուեցան երկրաչափք և ջրաբաշխք ղեկորքք քննելու և անոնց ջուրը կանոնաւորապէս Կ . Պօլիս հասցնելու : Բնական է այսպիսի հոգատարութիւն մը առ ինքն զրաւած էր բոլոր ժողովուրդը և օր մը Քեասատհանէ գտնուած ժամանակ ներկայացուեցաւ իրեն 24,000 է աւելի քրիստոնեայ ականաւորաց ստորագրութիւն մը , որ կը խնդրէր բովանդակ ժողովրդեան կողմանէ որպէս զի իրենց « սիրելի կայսրը » լուսանկարուի և ժողովուրդը ունենայ իւր բարերար ինքնակալին պատկերը : Ապտիւլ Ազիզ խոստացաւ կատարել փափագողաց իղձը , յայտնի է այսպէս տհաճեցնելով մահմէտական զօրաւոր մաս մը :

11 . Ճոխութիւնք Կ . Պօլսոյ — Տուատ փաշա : — Ապտիւլ Ազիզի այս ամէն գործոց և յառաջադիմական շաւղաց մէջ միշտ իւր քովն կը գտնենք զՏուատ փաշա , որ ամենաբարձր միտք մը , նուրբ քաղաքագէտ և միանգամայն ընդել կենակցող , քաջ դրամագէտ և շքեղ իշխան մը , զբաղեալ Պետութեան մեծամեծ գործոց և արտաքին ճարտար յարաբերութեանց , առանց արհամարելու ներքին ամենափոքր կարծուած խնդիրքը , Տուատ փաշա եթէ հանդարտ և խղճօրէն քաղաքագիտութեան և մատակարարութեան մասին նուազ էր քան զԱլլի փաշա , սակայն ուրիշ ամենայն մասամբ Ապտիւլ Ազիզի թագաւորութեան ամենէն նշանաւոր անձն էր . և Ապտիւլ Ազիզի ևս մեծ պատիւ և պարծանք մ'է որ զհացաւ գնահատել նորա մէծ հանճարը միաբան ընդ հայրենասիրութեան և տիրասիրութեան : Նա մա-

նաւանդ իւր համարումը ուզելով հռչակել նաև բովանդակ Օսմանեան կայսրութեան, 1863ի Օգոստոսի մէջ հրովարտակ մը ղրկեց առ Ֆուատ փաշա յայտնելով անոր հանճարոյն և հայրենասիրութեան վրայ ունեցած բարձր վստահութիւնը: Իմացնելով միանգամայն որ հաստատութեամբ միտքը դրած է նեցուկ և պաշտպան ըլլալ անոր բարեկարգիչ քաղաքականութեան որ արդէն այսքան բարի արդիւնք յառաջ բերած էր:

Ապտիւլ-Ազիզ ի Տաճկաստան Ուսումը և Գիււանապիտութիւնը ևս յառաջ վարելու համար բազմաթիւ պատանիներ ղրկեց ի Գաղղիա քարձրագոյն Ուսումնարաններ և Համալսարաններ, և այս ղրկուած աշակերտաց մէջ պէտք է ըսենք մեծագոյն մասը կը կազմէր հայ տարրը սու որս դարական համակրանք մը շարունակած էր ի Սուլթանաց, և որք սակայն փոխադարձ մեծ եռանդով վաստակեցան իւրաքանչիւրը իրեն յանձնեալ ճիւղին և պաշտաման մէջ յառաջելու բարեգարգութեամբք յագուտ Օսմանեան մատակարարութեան:

Զայս ևս աւելցնելու ենք թէ որչափ ալ Տէրութեան դրաման վիճակը և Պետութեան գանձը տագնապալից դրութեան մէջ էր, իսոյց ոչ երբէք այնքան հարստութիւն, ճոխութիւն և բարեկեցութիւն եղած է Կ. Պօլսոյ մեծ քաղաքաց մէջ, ինչպէս Ապտիւլ Ազիզի օրերով և մանաւանդ առաջին ինն ամաց մէջ:

12. Ճանապարհք. Էտէմ փաշա — թղթատունք: — Ապտիւլ Ազիզի թագաւորութեան առաջին տարիներու կը պատկանին նաև հաստատութիւն մը երկրաշափական մասնաժողովոյ գաւառաց իրարու և մայրաքաղաքին հետ ունենալիք նիւթական յարաբերութեանց համար: Ամենուրեք ղրկուեցան երկրաշափք և ճանապարհադէտք, խճուղիներ և կամուրջներ շինելու համար որոնք փոքր Ասիոյ քաղաքները կապեցին իրարու հետ, յորս մասնաւոր հարկ է յիշել իրեն վաճառականական մեծ կարեորութեան համար Տրապիզոնի խճուղին մինչև ի Կարին, որով և Պարսկաստանի վաճառուց շահեկանութիւնը ունեցաւ: Շինուեցան

ուրիշ ճամբաներ Բիւթանիոյ մէջ . Պրուսայէ ուրիշ կողմեր, յԱնկիւրիա, Սամսոն, յԱզրիանուպօլիս և միով բանիւ Պետութեան ամեն կողմ, և այս մասին մեծ փոյթ և արդիւնք ունեցած է նշանաւոր Էտէմ փաշան, հանրածանօթ իւր ուսեալ մտքովը: Երկաթուղոյ գիծ մ'ալ սկսաւ Վառնայէն ի Ռուսնուք . և Գանուրի բերանքը կանոնաւորեցան վաճառականութեան դիւրութեան համար, Բ. Գուռը փափագեցաւ, որպէսզի սաէպ անհամաձայնութիւնք չյառնեն, Գանուրի Տել-բայէ նաւարկութեան վրայ, եւրոպական յանձնաժողով մը կարգուի, որ սահմանէ կանոնք և բարւոքմունք Ստորին Գանուրի նաւարկութեան մասին և հսկէ այդ կանոնաց գործադրութեան:

Նոր սահմանեալ բարեկարգութեանց մէջ յիշել արժան է նաև թղթադրոշմի հաստատութիւնը և կանոնաւոր թղթատանց և թղթատարութեանց դրուիլը ամեն 1861 Նոյ. կողմ: Յիրաւի որչափ որ ալ ծովային թղթատարութիւնը եւրոպացիք սիրով կը կատարէին, մեծ շահավաճառ ունենալով թղթադրոշմի, սակայն ցամաքային թղթատարութիւնը անկանոն դրութիւն մը ունէր. մեծաւ մասամբ յարաբերութիւնք կ'ըլլային ուղևորաց ձևաքով: Յետ միանգամ օսմանեան թղթադրոշմ տպագրելու, հաստատուեցան նաև թղթատունք նախ ի մայրաքաղաքն և ապա ամէն մեծ քաղաքաց մէջ, յորոց սփռեցան նաև գիւղաքաղաքաց և աւաններու մէջ: Յայտ է թէ եւրոպական այն Պետութիւնք որոնք ի սկզբան ունեցեր էին առանձնաշնորհութիւն մը թղթատարական, երբէք չուզեցին հրաժարիլ իրենց նախադրական իրաւունքէն և ասկէ միշտ մրցումն ունեցան Օսմանեան թղթատանց հետ, իրենք վայելելով մասամբ իւրիք և առատապէս իսկ երկրին ճոխագոյն եկամուտներէն մին:

13. Մաղձախտ եւ հրդեհի ի կ. Պօլիս յամին 1865: — Այս ամէն յաջողութեանց և շքեղութեանց մէջ կ. Պօլիս ունեցաւ նաև իրեն դժբաղդութիւնքը, յորս պարտիմք յիշել մանաւանդ երկուքը՝ Մաղձախտը և Հրդեհը, որոնք երկուքն ալ պատահեցան 1865 ամին մէջ և որոց առաջինը ոչ միայն ի մայրաքաղաքին, այլ

ընդ բովանդակ Տաճկաստան բիւրաւոր կեանքեր հընձեց, սարսափեցնելով բովանդակ Եւրոպա, ուր ևս տարածուեցաւ :

Մաղձախտը բնական հիւանդութիւն մ'է ի Հնդկաստան, իսկ ի Մէքքէ ստէպ կը պատահի բիւրաւոր ուխտաւորաց ժամանակ, ուր անհնարին կը տեսնուի կամ եղած է այնքան բազմութիւնը առողջապահական կենաց ենթարկել. և զարմանք չէ որ բիւրաւոր զոհերու արիւնք և այնքան անձանց կենակցութիւնք ջերմ երկիրներու մէջ դիւրաւ ևս յառաջ բերեն ապականութիւն մը օդոց և այդպիսի վարակիչ հիւանդութիւն մը :

1865ի մաղձախտին սկզբնապատճառն ևս ի Մէքքէ և ուխտաւորաց դարձը համարուեցաւ, որոնք հիւանդութիւնը բերին նախ ի Ղիտաէ, ուսկից ապա սփռուեցաւ ընդ բովանդակ Եգիպտոս ուր բիւրաւոր և անհամար կոտորածներ բրաւ, գտնելով մանաւանդ ժողովուրդ մը որ զմահը ճակատագրական համարեցաւ. որով և ի զուր որ և է խուսափումն և կամ զգուշութիւն : Ժամանակին պաշտօնական ծանուցագիր մը Եգիպտոս տասն և հինգ օրուան մէջ 100,000է աւելի կը համարի մեռեալ ուխտաւորաց թիւը մաղձախտէն : Ի Կ. Պօլիս ամէն զգուշութիւնք առնուած էին և Օսմանեան մաքրանոցք միշտ համբաւ ստացած են խիստ կանոնաց համար : Սակայն այսպիսի համատարած վարակման ժամանակ, մաքրանոցք անգամ անբաւական էին, և որ զարմանալին է շատ անգամ այդ հիւանդութիւնը ոչ ուղղակի ընդ ճանապարհ, այլ գոյցեա օդէն ստոււմներով կը քայլէ : Ի Կ. Պօլիս հիւանդութիւնը եկած համարուեցաւ Աղեքսանդրիայէն Օսմանեան շոգենաւով, որ նախ տարածուեցաւ ի Քասըմ փաշա և կը գտնենք առաջին դէպքերուն յիշատակութիւնը Յուլիս 3ին, որով և Կ. Պօլսոյ ամենէն ջերմին ժամանակը : Անդէն խստիւ պատուիրուեցան բժշկական զգուշութիւնք և կենաց կանոնք հրատարակուեցան ժողովրդեան համար ի լրագիրս, յորս յանուանէպէտք է յիշենք Հայազգի Աննապետն Գասպար պէյի՝ արքունի

բժշկին նախագգուչութիւնք, հրատարակեալք բոլոր լրագրաց մէջ: Հիւանդութեանը նախկին նշանքն էին թեթև փորհարութիւնք, որ այսպիսի ժամանակ գրեթէ էր ընդհանուր, որոնք յանկարծակի կը սաստկանային փսխամամբք և ստամոքային սուր ցաւերով, ապա մարմնոյն վրայ կը տիրէր ցրտութիւն մը, ծայրերու և բոլոր ջղաց ձգտումն, խաւարումն աչաց, կապուտակել մարմնոյն և հուսկ ահաւոր ցաւերու և ջղային քաշուելներով տաժանակիր մահ մը, և այս քիչ ժամերու մէջ:

Պետութիւնը ամէն հնարաւոր խնամք սարաւ, բայց ի զուր: Բազմաթիւ բժիշկք անձնանուիրաբար դիմեցին, ուր որ կը կոչէր իրենց արհեստը: Ամէն կողմ առ ժամանակեայ հիւանդանոցներ շինուեցան, հիւանդներուն անմիջապէս դարման տանելու համար. և յորս արժան է յիշատակել զոր շինեց ի Բերա՝ Սէրվէր փաշա, ուր անխտիր կ'ընդունուէին ամէն ազգէ և կրօնքէ:

Ապտիւ Ազիզ առատօրէն դրամ բաշխեց սղքատաց, յորդորելով որ նոյնը ընեն ուրիշ մեծատունք, կանոնաւորապէս բաշխուեցան դեղօրայք և թանք: Կը սակայն ահաւոր ախտը չէր դադարեր հազարաւոր կեանքեր հնձելէ. և եթէ յիշողութիւննիս չվրիպիր, Յուլիսի վերջերը արձանագրութիւն մը մինչև 2000 ննջեցեալք կը համարի մէկ օրուան մէջ և այս սաստկութեամբ տևեց մինչև Սգոստոսի կէսը մեծ հրդեհի ժամանակ: Անհնարին էր մարդկօրէն թաղմանց հասնելու, յորս հարկ էր առատօրէն կիր գործածել, և սակայն եկեղեցական դասը հուսաստրապէս մրցեցաւ և գերազանցեց քան զբժիշկս և յորոց զոմանս ապա Ապտիւ Ազիզ վարձատրեց շքանշաններով¹:

Մաղձախտիս առթիւ հաստատուեցաւ ի Կ. Պօլիս Առողջապահական Համազգային բարձր խորհուրդը,

1. Անձնանուէր վաստակողաց մէջ մասնաւորապէս ցարդ յիշուած է յամենեցունց Վ. Հ. Գարեգին Վ. Զարբանալեան ի Մխիթարեան Ուխտէ Վեհեակոյ, զոր կայսրը ապա պատուեց երրորդ Մէհտիէ նշանով:

հսկելու Մաքրանոցներու և Արգելանոցներու վրայ, թէ հիւանդութեան և թէ ուրիշ ժամանակ :

Հիւանդութիւնը մայրաքաղաքէն փախչողաց հետ ցրուեցաւ Տաճկաստանի գաւառաց մէջ թէ յԵւրոպայ և թէ յԱսիա : Բազմաթիւ մահեր եղան ի Պրուսա, Տրապիզոն, Կարին, Բաբերդ, Խարբերդ, Հալէպ, Քէօթահիա, Ատանա, Մարաշ, Ուրֆա, յԵրուսաղէմ և ուրիշ ամէն կողմեր : Ապա անցաւ Եւրոպիոյ ուրիշ Պետութեանց մէջ, ամէն կողմ ալ սարսափելի սնունն մը ձգելով Դարուս աղետից մէջ :

Ինչպէս ըսինք Կ. Պօլիս տեւց մինչև Օգոստոսի վերջերը, յորում պատահեցաւ Ստամպուլի մեծ հրդեհը և ժողովրդեան մէջ ընդհանուր տարածուած կարծիք մ'է որ այդ հրդեհը վերջ մը տուաւ մաղձախտին :

Հրդեհը պատահեցաւ Օգոստոս 24ին և սկսաւ Ստամպուլի կողմը Հոճա փաշա թաղէն : Անհնար է գրով գաղափար մը տալ կրակին անյագ լափող զօրութեան և անթիւ վիասներուն . այրեց, սրբեց, ամբողջ մեծ քաղաքի մը տարածութեամբ աւաններ : Հրկիզեալ տեղերու մէջ կային 13 մկկիթք, 12 բաղանիք, շատ խաներ և պանդոկներ, անթիւ կրպակներ և տուններ, երկու Յունաց եկեղեցիք բոլոր հարստութեամբք . մի Հայաց եկեղեցի (Կէտիք փաշայի) ութսունէն աւելի մեծ ապարանք յորս մանաւանդ թէութի պէյի ապարանքը, որ թանկազին գրատուն մը ունէր և թանկարան :

Հրդեհի առաջի օրուրնէ Սուլթան Ապտիւլ Ազիզ աւանդապահ Օսմանեան Կայսերաց նախանձելի սովորութեան, որոնք այսպիսի աղիտից ժամանակ ցըցուցած են արեւելեան մարդասէր առատութիւն և հոգ մը, սահմանեց որ իւր գանձէն առ իւրաքանչիւր անձն՝ օրը ճերմակ հաց մը տրուի (կէս հոխա) . միանգամայն ամէն կարօտելոց զգեստ և բնակութիւն : Բաց ասկէ Ապտիւլ Ազիզ անձնական գանձէն զրկեց 1,000,000 զրուշ և իւր յորդորանաց և օրինակին հետեւելով Պալատան պաշտօնեայք և քարտուղարք զրկեցին 122,500 զուրուշ, Եգիպտոսի փոխաբքայն

Իսմայէլ փաշա 750,000 ղուրուշ, և ուրիշ գումարներ: Ապա Ապտիւլ Ակիդի հաճութեամբ Յանձնաժողով մը կազմուեցաւ Հրկիզելոց օգնելու նպատակաւ, որ հաւաքեց մօտ 5,000,000 ղրշ:

Եւ եթէ այս գրամոց բաժանման մէջ փափագելի կանոնաւորութիւնը չ'եղաւ, դա երբէք չէ կարող ըստուեր մը բերել բարերարներուն առատասարսութեան և խնամոցը: Իրամական մատակարարութեանց գրութեանը բարւոքումը միշտ ըղձացեալ կէտ մը եղած է Օսմանեան Պետութեան մէջ ամէն ժամանակ:



ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԳԷՈՐԳ Ա

1. Ոթոնի թագաւորութեան Առաջին տարիները. — Գերմամանական տարրը ի Յունաստան. — 2. Յեղափոխութիւն Սեպտեմբերի. — Սահմանադրութիւն. — 3. Ոթոնի թագաւորութիւնը և Արտաքին դէպքեր. — 4. Յեղափոխութիւն. — Անկում Ոթոնի թագաւորութեան. — 5. Եւրոպական Պետութիւնք և Առաջարկեալ իշխանք. — 6. Ռնարութիւն Տանիմարքայի Գուլիէլմոս Գէորգ իշխանին՝ թագաւոր Յունաստանի. — 7. Գէորգ Ա և բարեկարգութիւնք:

1. Ոթոնի թագաւորութեան առաջին տարիները: — Գերմանական տարրը ի Յունաստան: — Ոթոն թագաւորը՝ Լուդովիկոս Ա Պապիէրայ թագաւորին երկկրորդ որդին, 17 տարուան էր յունական գահուն վերայ կոչուած միջոցը: Գժուարին աշխարհի մը դժուարին ժամանակ, տակաւին անփորձ պատանի մը վարչութեան գլուխ անցնելով, զարմանք չէ որ ունենալով յուզեալ սկիզբ մը թագաւորութեան, նոյն շարունակեց մինչև վերջը և զոր աւելի դժուարացուցին իւր ազգակից բարձր խորհրդականք, յորոց մաս մը ի պաշտօնէ ընկերացած էր իրեն ի Յունաստան և յորոց երեքը պիտի հսկէին իւր վրայ իրր Խնամակալք մինչև իւր քսաներորդ տարին: Այս խնամակալութեան նախագահը՝ կոմսն Արմանսփէրկ՝ և իւր ընկերք Մաւրէր և Հայտէկ՝ բնաւ չկրցան ստանալ յոյն ազգին համակրութիւնը և որ աւելի անտանելի էր Յունաց համար և անհանդուրժելի, պապիէրացիք և գերմանացիք ողողեցին հասարակաց պաշտամանց մէջ. պաշտօնական

գրութեանց իսկ մէջ գերմաներէնը մուծաւ և խառնաւ շիոթ մատակարարութեամբ մը 60,000,000 ֆրանք փոխառութիւնը՝ որ սկսեալ նոր Տէրութեան եկամուտ մը պիտի ըլլար, աննպատակ մաշեցաւ և կորաւ:

Ամենայն ոք անհամբեր կը սպասէր թագաւորին քսաներորդ տարւոյն, յորում ինքը անձամբ պիտի կառավարէր առանց խնամակալութեան: Եւ սակայն թագաւորը վարչութեան գլուխ իսկ անցնելով չկրցաւ բաժնուիլ իր պավիէրացիներէն, և զԱմանսփէրկ դիւանապետ՝ առաջին պաշտօնեայ անուանեց: Այն ատեն սօգոզութիւնք աւելի բուռն կիրպարանք առին և 1836 Փետրուարի մէջ Մէսսէնիա և մերձաւոր գաւառք ապստամբեցան: Ապստամբութիւնը դիւրաւ նուաճուեցաւ, բայց չվերցան գայն ծնանող պատճառք:

Յամին 1836 Սեպտեմբեր 22ի թագաւորը ամուսնացաւ ընդ Ամէլիա իշխանուհւոյ, դուստր Օլտէնպուրկի մեծ դքսին¹: Ոթոն ուղղափառ էր հուովմէական, թագուհին նորաղսնդ և սակայն, ըստ դաշանց, իրենց գաւակները պիտի կրթուէին յունագաւան կրօնից մէջ:

2. Յիդլափոխութիւն Սեպտեմբերի. — Սահմանադրութիւն: — Թագաւորը և թագուհին իրենց ամուսնութենէն վերջը առաջին հանդիսաւոր մուսքերնին ըրին յԱթէնա 1837 Փետրուար 14ին և այս առթիւ Ոթոն թագաւորը զժողովուրդը հաճելու նպատակաւ, վերցուց Դիւանապետութեան պաշտօն, առաւ Արմանսփէրկ կոմսին ձեռքէն պաշտօնէից նախագահութիւնը և պատուիրեց որ գերմանական լեզուն այլ ևս չգործածուի պաշտօնական գրութեանց մէջ: Որչափ որ այս երկու կարգադրութիւնք նաև Դրա-

1. Ամէլիա թագուհին շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ յԱթէնս, յոյժ առաւել քան զթագաւորը: Թագուհի մ'էր արիասիրտ և միանգամայն մարդասէր: Ի Յունաստան բազմաթիւ բարեգործական նաստատութիւններ հիմնած է, յորս մանաւանդ կոյր Տղայոց Հիւանդանոցը: Յարզ Յիւնք մեծ յարգանքօք կը յիշեն զիկքը:

1844

մատան մը հաստատութիւնը ժողովրդեան մեծապէս գոհացուցիչք էին, սակայն Յունաստան ասպարէզ մը դարձած երեք պաշտպան պետութեանց մրցման, միշտ վրդովեալ վիճակ մը ունէր: Թէ ի մայրաքաղաքին և եթէ գաւառներէն կը բարձրանային պահանջք որ արտաքսուին օտարք պաշտօններէ և քործադրուի այն Սահմանադրութիւնը որ խոստացուած էր Ռթոնի գաւառներէն իսկ առաջ: Այս ոգւոյն արդիւնք մ'էր Սեպտեմբեր ³/15ին Յեղափոխութիւնը, յորում ժողովուրդը դիմեց թագաւորական պալատը գոչելով « Կորսուին Պալիէրացիք »: Թագաւորը բռնադատուեցաւ ընդունիլ Քալէրճիսի պայմանքը, նոր պաշտօնարան մը կազմել ընդ նախագահութեամբ Ա. Մեդաքսասի և ամսուան մէջ կազմել Ազգային ժողովք մ', որ վերջնականապէս պիտի վճռէր ազգային Սահմանադրութիւնը: Թագաւորը անձամբ բացաւ Ազգային ժողովքը Նոյեմբեր 20ին և 1844ի Մարտին հուշակեց Սահմանադրութիւնը, մեծաւ մասամբ նման Քաղղիոյ 1830ի Դաշանց թղթոյն: Պալիէրացիք իրենց երկիրը զրկուեցան և Սեպտեմբեր ³/15ը ազգային տօն համարուեցաւ:

1845

Այսպէս Յունաստանի համար նոր ժամանակ մը պէտք էր սկսիլ. և սակայն կէս մը թագաւորին տնտեսութիւնը այսպէս բռնի Սահմանադրութիւն մը տալուն, որով ոչ միայն շնորհեց այլ և հալածեց անոր պատճառ եղողքը և կէս մ'ալ եւրոպական Պետութեանց գաղտնի հնարքները իրենց ի նպաստ, և մաս մ'ալ ժողովրդեան աժգոհութիւնը Սահմանադրութեան գործադրութեան կերպին վրայ, այնպէս ըրին որ վարչութիւնը յարպաշտօնարանական փոփոխութեամբք բնու յառաջագիմութիւն մը չունեցաւ, վրայ եկան նաև Արտաքին պատահարք, յորս պէտք էր մեծ քաղաքագիտութիւն:

3. Ռթոնի թագաւորութիւնը եւ Արուսբին Դէպքերը: — Ի սկիզբն 1847 տարւոյն Ռթոն թագաւորը բազմութեան առջև նախատինք մը ուղղելով առ Մուսուրուս փաշա, դեսպան Օսմանեան Պետութեան, թուրք վարչութիւնը կոչեց իւր դեսպանը ի Կ. Պո-

լիս և երկու Պետութեանց մէջ դադրեցան տարուան մը չափ թէ քաղաքագիտական և թէ վաճառականական յարաբերութիւնք: յորում վնասուեցաւ Յունաստան թէ պատուով և թէ նիւթականապէս:

Երկու տարի վերջը պատահեցաւ Տօն Փաշիֆիքոյի խնդիրը¹, յորում երեք ամիսէն աւելի Յունաստանի նաւահանգիստներուն պաշարման վիճակը, ուրիշ մեծ հարուաւ մը եղաւ վաճառականութեան և վճարեց ևս Պետութիւնը 330,000 որտի: Բայց այս առթիւ թագաւորը ցըցուց աներկիւղ արութիւն մը ընդդէմ սպառնալեաց օտարին ի նպաստ Յունաստանի, որով և ստացաւ ժողովրդեան համակրանքը: Իսկ թէ Յունաստան Արևելեան Պատերազմին ժամանակ ինչ ընթացք բռնեց, արդէն տեսանք: Անհնար էր որ ինքը հաւանէր ի շնորհս Անգղիոյ և Փաղղիոյ, օգնելու Տաճկաստանի ընդդէմ յունադաւան համակրօն Ռուսաստանի. որով և բազմաթիւ ասպատակութիւնք կազմակերպուեցան, որոց մաս մը պիտի սողդէր նաև ի Մակեդոնիա և ի Թեսաղիա. և հաղիւ Դաշնակից Պետութիւնք կրցան խափանել, բռնելով նաւատորմաւ զՊիրէոն: Բռնադատեցին դարձեալ զՌթոն նոր Պաշտօնարան մը կազմելու, որոյ զլուխ էին Մալրոքորատոն և Քալէրճիս, երկուքն ալ անհաճոյք թագաւորին և կողմակիցք Դաշնակցաց: Թագաւորը և մանաւանդ թագուհին մեծ դժուարութեամբ խոհեմութեան համար միայն յանձն առին օտարին բռնի և սպառնական միջամտութիւնը: Նոյն զգացումը ունեցաւ նաև ժողովուրդը որ այս առթիւ կրկին համակրանք մը զգաց առ իւր իշխանս: Այս բռնի վիճակը և նաւատորմին սպառնալիքը տեւեց մինչև 1856:

Ռթոն թագաւորը յամին 1861 ճանապարհորդութիւն մը ըրաւ ի Փերմանիա և ի դարձին շարունակ ժողովրդեան հակառակութեան հանդիպեցաւ և զինուորական դաւերու. մինչև եօթնևտասնամեայ պատանի մը փորձեց զինքը սպաննել: Ընդարձակ ապըս-

1. Գլուխ ԼԵ:

տամբուլիւն մը ծագեցաւ ի Նաւափլիա 1862ի Փետրուար 12ին, որ փութով տարածուեցաւ գաւառաց մէջ: Ապրիլին Նաւափլիա անձնատուր եղաւ և թագաւորը յանցաւորաց մէկ մասին ներումն շնորհեց, որոնք կրկին գացին միանալու ուրիշ ապստամբաց հետ մեծագոյն Յեղափոխութիւն մը պատրաստելու նըպատակաւ:

4. Յեղափոխութիւն. — Անկումն Ոթոնի թագաւորութեան: — Ոթոն ժողովուրդը հանդարտեցնելու դիտամբ աշնան սկիզբները Ամէլիա թագուհւոյն հետ այց ելած էր գաւառաց: Հոկտեմբեր 17ին Վոնիցա քաղաքին ժողովուրդը և զինուորք յեղափոխութիւնը սկսան և իրենք զիրենք ապստամբ հրատարակեցին Ոթոնի իշխանութենէն: Փութով ապստամբութիւնը տարածուեցաւ Փաթրասի, Միսսուլունկիի և Կորնթոսի զօրաց մէջ: Աթէնքի մէջ ալ արդէն յուզումը սկսեր էր և Հոկտեմբեր 22ի երեկոյ Պաշտօնարանք գոցուեցան, միայն բաց մնաց Պատերազմի Պաշտօնարանը ուր գումարուեցան պաշտօնեայք: Կէս գիշերուան մօտ ամէն կողմ հրացանի հարուածներ կը լսուէին: Ի Յունաստան ամենայն ուրախութիւն հրագինուք կը տօնախմբուի: Բանակը որ ի սկզբան անորոշ դիրք մը բռնած էր, տեսնելով որ իրեն հրամայող մը չկայ և արդէն զգացմամբը հակառակ թագաւորին, անցաւ ժողովրդութեան և ապստամբութեան կողմը:

Առաւօտուն Առժամանակեայ վարչութիւն մը կազմուեցաւ որուն զլուխ ընտրուեցան Քաննարիս, Պուլկարիս, Վէնիզէլլոս և Թուֆոս: Թագաւորին հաւատարիմ գերմանացի զօրավարք Հաճն և Սաքինի՝ որք արքունի պալատը ամրացեր էին անձնատուր եղան և ժողովուրդը ողողեց թագաւորական պարտէզը, ուր արմատախիլ ըրաւ ծառ և ծաղիկ, առանց սակայն շէնքին դպչելու: Ապա Առժամանակեայ վարչութիւնը

1. Ոթոն գաւակ չունէր և ըստ կանխաւ դաշանց մը ընդ Պետութիւնս իւր մահուընէն վերջը իւր փոքր եղբայրը իրեն պիտի յաջորդէր:

գումարուելով զՈթոն թագաւորը Յունաստանի թագաւորութենէն անկեալ հրատարակեց զինքը և իւր ցեղը: Նոր պաշտօնեաներ անուանեց, Չալիմիս՝ Ներքին գործոց, Մալրոմիխալիս՝ Պատերազմի, Տիամանդափուլոս՝ Արտաքին Գործոց, Տէլիօրկի՝ Հասարակաց Կրթութեան, Ֆալիֆուրնոս՝ Ծովային զօրութեան, Քուլմունտուրոս՝ Արդարութեան, Մաչինաս՝ Լշևատից և Նիքորրուլոս՝ Կրօնական խնդրոց: Նոր Պաշտօնարանը կը ծանուցանէր որ իւր նպատակն էր պահել Սալմանադրական Միապետութիւնը, պահել Յունաստանի երախտագիտութիւնը երեք Պաշտպան Պետութեանց (Անգղիոյ, Գաղղիոյ և Ռուսիոյ) պահել դարձեալ միւս Պետութեանց հետ բարեկամական յարաբերութիւնքը. անյայպաղ Ազգային Խօսարանը գումարել և սպասել անոր սահմանելեաց: Առ ժամս կը յանձնարարէր հանդարտութիւն և խաղաղութիւն:

Ոթոն թագաւորը բնաւ ծանօթութիւն չունէր այս եղելութեանց և գիացաւ միայն երբ Փաղրասէն հասաւ Սաղամինայի նաւահանգիստը որ մերձ է Պիրէոնի: Չարմանալին այն է որ նոյն իսկ իւր ուղևորութեան մարտանաւին հրամանատարը և նաւաստիք անցան ապստամբութեան կողմը և թագաւորը և թագուհին կրցան միայն գաղղիական շոգենաւ մը անցնիլ, ապաւինելով գաղղիական և անգղիական մարտանաւերուն հովանուորութեան:

Ոթոն ըմբռնեց որ այլ ևս անկարելի էր իրեն համար մտնել յԱթէնս առանց մեծամեծ արիւնահեղութեանց. և 24ին Յայտարարութեամբ մը որով կը ծանուցանէր Յունաստանի ժողովրդոց թէ՛ որ և է արիւնահեղութիւն խնայելու համար, կը մեկնէր ցաւած սրտով թողլով իւր հայրենիքը իր սիրելի Յունաստանը « որուն համար 30 տարի մեծապէս անխոնջ վաստակեր էր »: Աթէնքէն գնաց ի Քորֆու և անտի ի Վենետիկ, ուսկից մեկնեցաւ ապա ի Միւնիխ, ուր քաջուած և առանձին կեանք մը անցուց: Վախճանեցաւ յամին 1867 Յուլիսի 16ին ի Պամպէրկ: Էդմոնտ Ապու խիստ կերպով դատած է իւր թագաւորութիւնը « որ, 4՛ը

սէ, ուրիշ Եպատակ չունեցաւ բայց ջանալ մնալու ի վարչութեան և այնու սնանիլ» :

5. Եւրոպական Պետութիւնք եւ առաջարկեալ իշխանք : — Ռիոնի Յունաստանի թագաւորութենէ անկամար, Եւրոպիոյ քաղաքագիտութեան նոր ասպարէզ մը կը բացուէր, յորում իւրաքանչիւրը կը մրցէր նոր ազգեցութիւն մը ունենալ : Շուտով հասան յունական ջրերուն մէջ Անգղիոյ և Գաղղիոյ նաւատորմիդք, ապա ռուսականը և իտալականը : Ըստ 1832ի Գաշանց յունական թագաւորական գահուն ընտրելին չէր կարող ըլլալ Ռուսիոյ, Անգղիոյ և Գաղղիոյ թագաւորող ցեղերէն : Հարկ էր ուրիշ արքայական սուներէ ընտրելի փնտռել : Ի սկզբան կարծիքները Պէլճիոյ թագաւորին երկրորդ որդւոյն ընթացան, ապա Վիկտոր Լյամանուէլի երկրորդ որդւոյն . և սակայն Ռուսիոյ կայսրը մեծ հաճութեամբ կը տեսնէր իւր քեռորդւոյն Լէխգէնպէրկի դքսին անուանը առաջարկը . նոյն զգացումն կ'ունենար Անգղիա տեսնելով Ալֆրէտ իշխանին անուանը ընդունելութիւնը, որ էր երկրորդ որդի Վիկտորիա թագուհւոյն և ճանչցուած աւելի Լյամանուէրկի Գուքս տիտղոսով ¹ : Անգղիա արդեօք ներքին վեհանձնութենէ եթէ հաշուական խնդիրներէ շարժած Գեկտեմբեր 10ին ճոն Ռուսսըլի ձեռքով կը խոստանար Յոնիական Եօթն կղզեաց Յունաստանի թագաւորութեան հետ անբաժան միացումը, եթէ ապագայ թագաւոր ընտրուելիք անձը Անգղիոյ թագուհւոյն և Անգղիոյ Տէրութեան անհաճոյ անձ մը չըլլար : Այս խոստումը աւելի ևս համակրանք ծնաւ Անլիոյ համար և շատ քաղաքաց մէջ եռանդագին ցոյցեր եղան ի նպաստ Ալֆրէտ իշխանին : Սակայն Գաղղիա և Ռուսաստան իրենց ամէն ճիգն թափեցին, ապագայ հետևանքներ յառաջ բերելով, համոզելու Անգղիոյ քաղաքագիտութիւնը, որպէս զի չ'ընդունի Ալֆրէտ իշխանին ընտրութիւնը : Նոյն իսկ անգղիական ազգեցիկ լրագիրք՝ Թայմ,

1. Ապա Գուքս Սաքս Գոպուրկ — կոթայի .

Մերնիկ Փոփ՝ հակառակ էին այս ընտրութեան, տպագայ կնճիռներ խիթալով: Եւ սակայն յոյն ժողովուրդը անհամբեր կը պահանջէր որ օր մը առաջ ժողովրդախումբ քուէարկութիւն ըլլայ որպէս զի ազգը իւր կամքը յայտնէ, և կը համարէր որ յայնմհետէ ընտրեալը պիտի ստիպուէր յանձն առնու: Գեկտեմբեր 4ին քուէարկութիւնը եղաւ և բոլոր Յունաստան եռանդագին ցնծութեամբ ընտրեց զիշխանն Ալֆրէտ: Միւս ընտրելիք հազիւ սակաւ քուէներ ունեցան: Անգղիա արտասովոր դեպքան զրկեց ի Յունաստան զՍիր Հ. Լչիւրդ յայտնելու մտերմարար որ Անգղիա յանձնչէր առնուր Ալֆրէտ իշխանին ընտրութիւն, առաջարկելով ընտրել Փորթուգալի Տօն Ֆէրտինանտո թագաւորահայրը: Իսկ գողղիական մաս մը կ'առաջարկէր զԳուսն Տ'Օմալ. այլք Շուէտի թագաւորին եղբայրը, Նասաւի դուքսը, յետոյ գրեաթէ ամենը միարանեցան առաջարկել Սաքս Գոպուրկ Կոթայի դուքսը: Բայց ստոնք ստե՛նն ալ հրաժարեցան ընդունել Յունաստանի թագը և Ալգային ժողովքը Փետրուար 21ի պաշտօնապէս հռչակեց թագաւոր Յունաստանի զԱլֆրէտ իշխանը՝ արքայորդի Անգղիոյ և պաշտօնապէս ի ձեռն Սիր Լչիւրդի հաղորդեց Անգղիոյ Պետութեան, որուն քիչ օր վերջը ճօն Ռուսսըլ պաշտօնապէս պատասխան տուաւ որ Ալֆրէտ իշխանը չէր կարող ընդունիլ այդ թագը. « Բայց Անգղիոյ թագուհին և իւր թագաւորական գերդաստանը միշտ պանծանօք պիտի պահեն յոյն ազգին այդ ինքնայօժար քուէին յիշատակը » :

6. Ընտրութիւն Տանիւմարքայի Գուլիէլմոս Գէորգ իշխանին թագաւոր Յունաստանի: -- Յետ Ալֆրէտ իշխանին հրաժարելուն, հարկ էր փութով լուծուիմ տալ այս երկարատե խնդրոյն: Ժողովրդեան մէջ անտարբերութիւն մը սկսեր էր տիրել և արդէն դաւ մը յերևան ելեր էր ի նպաստ դարձի Ռթոնի: Դաժուկ բանակցութիւնք յայնմհետէ շտապաւ շարունակեցին Պետութեանց և Յունաստանի մէջ և Մարտ 31ին Յունաստանի Ալգային ժողովքը գումարուելով կ'ընտրէր՝

Տանիմարքայի թագաւորին երկրորդ որդին Քուլիէլմոս Քէորգ «Քէորգիոս Ա. թագաւոր Հէլլէնաց» տիտղոսով: Ինքը նորաղանդ՝ բայց իւր յաջորդները յունական Եկեղեցւոյ դաւանութիւնը պիտի ընդունէին. ազգային նուիրակութիւն մը պիտի երթար ի Քոփէնհակ ընտրելոյն թագը ընծայելու:

Բոլոր Աթէնք և Յունաստան մեծ ուրախութեամբ լսեց այս լուրը. ամէն կողմ հանդէսներ և լուսաւորութիւնք եղան: Նորընտիր թագաւորը միանգամայն մեծապէս հաճոյ էր Անգղիոյ, որովհետև իւր քոյրը ամուսին էր Կալլէսի իշխանին՝ թագաժառանգ Անգղիոյ: Ծնած էր յամին 1845 Գեկտեմբեր 24ին և ծովային գորութեան մէջ հրահանգուելով ի մանկութենէ արդէն Տանիմարքայի ծովային նաւապետ էր, երբ իրեն ընծայուեցաւ Յունաստանի թագը: Քէորգ իշխանը ընդունեցաւ նախ զնուիրակութիւնը առանձին և ապա հանդիսապէս, խոստանալով փութով մեկնելու ի Յունաստան ուր արդէն տիրեր էր յետին անիշխանութիւնը և ամէն օր կը կատարուէին աւագակութիւնք և սպանութիւնք նոյն իսկ մեծ քաղաքաց մէջ:

Եւ սակայն Քէորգ թագաւորին գալուստը ուշացաւ. փափագելով երիտասարդ թագաւորը որ Երեք պաշտպան Տէրութեանց միջոցաւ խաղաղութիւն և հանդարտութիւն տիրէ Յունաստանի մէջ և երկրորդ վճարար և անպայման եղանակաւ Յոնիական կղզիք միանան Յունաստանի հետ¹:

Արդէն Անգղիոյ հսկողութեան ներքև Եօթն կղզիք՝ Քորֆու, Քէֆալոնիա, Զանդա, Լևքէ, Քիթէրա, Իթակէ և Բապքոս կոչուած էին ժողովրդատեամբ քուէարկութեան, որ ընդունեցաւ «Կղզեաց միութիւնը անբաժանելի և անպայման եղանակաւ Յունաստանի հետ ընդ իշխանութեամբ Քէորգ Առաջնոյ և անոր սերընդոց²: Ամբողջ Յունաստան աննկարագրելի ուրախութեամբ և հանդէսներով ընդունեցաւ այս լուրը:

1. Գլուխ ԾԱ:

2. Անգղիոյ կողմէն կղզեաց մասին դաշնադրութիւնք ստորագրուե-

7. Գէորգ Ա ի Յունաստանս . բարեկարգութիւնը : — Յայնմհետէ ալ պատճառ չկար յամելու . և Գէորգ Ա որ մեկնած էր նախ ի Լոնտրա այց ելլելու թագաւորական ընտանեաց և պաշտօնէից , անկէ հասաւ ի Բարիդ ուր դիմքը Նարուէոն Գ ընդունեցաւ յունական Փրկիչ կարգին մեծ ժապաւէնը դրած ուսընդանութ : Հոկտեմբեր 23ին մեկնեցաւ ի Յունաստան և հասաւ ի Պիրէոն Հոկտեմբեր 30ին անգղիական և գաղղիական մարտանաւերու ընկերակցութեամբ , և կէսօրին հանդիսական մուտք ըրաւ յԱթէնս բովանդակ ժողովրդեան անպատմելի ուրախութեամբ , ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագայից մէջ :

Նոյն օրը Յայտարարութեամբ մը ծանոյց առ Հելլենացիս իւր ելլելն ի գահ Յունաստանի և իշխանութիւնը ձեռքը առնուլը , որուն նպատակը պիտի ըլլար « Արևելքի մէջ օրինակուելիք թագաւորութիւն մը վարել » : Կը վերջացնէր Յայտարարութիւնը « Կ'ազաչիմ զԱստուած որ իր սուրբ և փրկարար աջով հովանի ըլլայ Ձեզ » : Երկրորդ օրը Ազգային ժողովքին դիմաց երդուընցաւ Սահմանադրութեան հաւատարիմ կենալու . ապա Եկեղեցի զնաց և յետոյ չքեզ զօրահանլէսով մը յինքն գրաւեց ժողովրդեան համակրանքը : Պաշտօնարանական փոփոխութիւնք եղան , Պուլկարիս՝ Նախագահ կ'ըլլար Պաշտօնէից , Տէլիեանի՝ Արտաքին Գործոց , Սմուլէնց՝ Պատերազմական գործոց , Տիամանդոփուլոս՝ Արդարութեան :

Նախնական այս դրադմունքներէն յետոյ Գէորգ թագաւորին խնամքը եղաւ հաստատել նախ Աթէնքի և ապա Յունաստանի մէջ հանդարտութիւն և օրինաց պահպանութիւն , յորում ջանաց առանց եր-

ցան Նոյեմբեր 7ին , որով Եօթն կղզիք կը արուէին Յունաստանի պայմանաւ որ նախ քանդուին Քորֆուի ամրութիւնք : Այս բանս մեծ աժգոհութեան պատճառ եղաւ ի Յունաստան , սակայն Անգղիա կատարեց իր սահմանածը : Թեպէն թիւերը և ինչ որ կրնար տարուիլ , փոխադրեց ի Մալթա և յԱնգղիա . մնացեալ նիւթոց յետին քարն անգամ ահրզով վաճառեց :

կիւղի և ակնառութեան միանգամայն արի խոհեմութեամբ, յամենայնի իրեն խորհրդատու ունենալով զկոմսն Սփոննէք տանիմարքացի, զոր միաբան բերած էր իրրև խորհրդատու. և քիչ ժամանակուան մէջ փրկեց զՅունաստան անիշխանութեան հետեանքներէն: Յետոյ այց ելաւ Յունական կղզեաց և մանաւանդ նոր ստացեալ կղզիներուն և Մայիսի մէջ ներումն շնորհեց այն զինուորականաց որոնք քաղաքագիտական յանցանաց մէջ գտնուեր էին: Մի և նոյն միջոց նոր Սահմանադրութիւն մը պատրաստել կուտար Ազգային ժողովքէն և որուն վրայ երգուընցաւ Նոյեմբեր 28ին: Այս Սահմանադրութեան առթիւ ունեցաւ ընդգիմութիւնք երեսփոխանական ժողովքին մէջ և ի պաշտօնէից, բայց Գէորգ Ա գործեց աներկիւղ վրտահուութեամբ գիտնալով և զգալով որ ոչ միայն Աթէնքի այլ և բոլոր Յունաստանի ժողովուրդը երեն հետ էր և նմանօրինակ վտահուութիւնը պիտի գտնէր ժողովրդէն շատ պարագաներու մէջ:

Յամին 1867 Հոկտեմբեր 27ին ամուսնացաւ Ռուսիոյ Մեծ Գուքս Կոստանդնի՝ Օլկա դստեր հետ, այսպէս փոխարինութիւն մը ըլլալով և Ռուսաստանի, որուն համար Գէորգայ խնամութիւնը Անգղիոյ թագաւորական տան հետ, միշտ առաւելութիւն մը կը նկատուէր ի նպաստ Անգղիոյ: Այս երկուց մեծ Պետութեանց և Գաղղիոյ ևս բնածին համակրանքը վայելելով Գէորգ Ա, բազմավտանգ և մինչև սպառնական դիրքերու մէջ կրցաւ իր խոհեմ և անաստան բնաւորութեամբ կառավարել նորահաստատ և սահմանադրութեան թերավարժ թագաւորութիւն մը և ազատել զՅունաստան ապագայ ևս մեծամեծ վտանգներէ Յեղափոխութեան, միշտ յառաջացնելով իւր նոր ստացեալ հայրենիքը Յառաջադիմութեան և Պատուոյ ճամբուն մէջ:



ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՑ

1. Հարաւային Իտալիա և Սիկիլիա. — 2. Կարիպալտի և ար-
չաւանք Հազարաց. — 3. Պատերազմ ի Միլացցօ. — Կարիպալ-
տեանք կը տիրեն Սիկիլիոյ. — 4. Փրանկիակոս Բ ի Նափոլի.
Իւր վերջին ջանքերը. — փախուստ ի Կաէդա. — 5. Կարիպալ-
տի ի Նափոլի. Վոլգուռնոյի պատերազմը. — 6. Նուիրակութիւնք.
Ումբրիա. — Գաղղիացի զօրավարն Լամորիսիէր. — 7. Պատե-
լրազմ ի Քասպէլֆիտարոօ. — Նուիրակութիւնք և Ումբրիա կը
միանան Փիէմոնթի. — 8. Միացումն Նափոլիի. Անկումն Պուր-
պոնեանց. — 9. Թագաւորութիւն Իտալիոյ. — Առաջին խօսա-
րան. — 10. Մահ Քազուր Կոմսին. — 11. Կարիպալտի ի Տը-
րիտենդոն ի Վենետոս և յԱսփրոմոնդէ. — 12. Գաշինք Սեպտեմ-
բերի ընդ Գաղղիոյ.

1. Հարաւային Իտալիա եւ Սիկիլիա: — Վիլլա-
ֆրանքայի խաղաղութիւնը և Յուրիքի դաշնադրու-
թիւնը, ազատասիրաց համար չէր վերջ մը իրենց
ցանկացեալ ըղձից, այլ տակաւին սկիզբ մը. և յետ
միանգամ Գաղղիացւոց քաշուելուն յԻտալիոյ, Ազ-
գային Ընկերութիւնը իրեն նպատակ առաւ առանց
օտարին օգնութեան, ինքնին տարածելով ամէն կար-
գի ժողովրդեան մտաց մէջ իտալական միութեան գա-
ղափարը, յանկարծական ժողովրդախումբ քուէիւք դի-
մել առ այս միութիւն, որուն գլուխ պիտի համարուէր
Վիկտոր Էմանուէլ և պիտի շննային յԻտալիա այլ
իշխանք: Ըստ իրենց գաղափարին պէտք էր վանել
նախ օտարը, որ էր Աւստրիա՝ ի Վենետկոյ, և Գաղ-
ղիա՝ ի Հռովմայ. ապա գահընկէց ընել Նափոլիի Պուր-

պոնեանք: Սակայն առաջին երկու խնդիրք դժուարին յոյժ էին իրենց համար և հարկ էր եւրոպական կնճիռներու և խառնակութեանց սպասել նոր դրութիւն մը ստանալու համար յայսմ մասին. որով առ ժամս կը մնար իրենց փորձը ընել լինողէմ Պուրպոնեանց Հարաւային Իտալիայ, որոց վարչութեան եղանակը ըլլայ Փերտինանտոս Բի և կամ իւր որդւոյն Փրանկիակոս Բի, ոչ իւր ժողովրդոց և ոչ Եւրոպիոյ ուրիշ ազգաց համակրանքն ունէր:

Ազատականք որոց կառավարիչն էր Ազգային Ընկերութիւնը անդէն սկսան գաղտ աշխատիլ ապրատամբութիւն մը յարուցանելու համար Սիկիլիոյ մէջ ուր մեծ էր ժողովրդեան տժգոհութիւնը, ոչ միայն ընդդէմ Պուրպոնեանց, այլ և ի վաղ ժամանակաց նախատինք մը համարելով Նափոլի քաղաքին ենթարկեալ ըլլալին: Այս իրենց հակառակութիւնը ընդդէմ վարչութեան աւելի զրգոեր էին 1856էն սկսեալ Մածժինի և Մածժինեանք որոնք կը քարոզէին ամենուրեք ի Սիկիլիա « ազատիլ գերութենէ և միանալ Հիւսիսային Իտալիոյ հետ » և այս գաղափարը յետ 1859ի պատերազմին ամենուն մտաց առջև այլ ևս դժուարին չէր երևնար: Կղզւոյն մէջ գաղտ բազմութիւ մասնաժողովք կազմուած էին, որոնք յետ զժողովուրդը պատրաստելու, ապստամբութեան նշանը պիտի տային: Ապստամբութեան առաջին ցոյցերը եղան 1860ի Ապրիլ 4ին, զորս սակայն փութով ընկճեց Ոստիկանութիւնը, բայց ապստամբութեան լուրը հասնելով ի Հիւսիսային Իտալիա, յուզեց ոգիները դիմելու հոն:

2. Կարիպալտի եւ Արչաւանք Հազարաց: — Բազմաթիւ Սիկիլիացի երիտասարդք որոնք աքսորեալ կը գտնուէին հոն, յորս էր նաև Տրանչէսքոյ Քրիստի, խնդրեցին ի Կարիպալտիէ միանալ իրենց հետ և կամաւոր զինուորութեամբ դիմել և ազատել կղզին Պուրպոնեանց իշխանութենէն, միացնելով զայն Իտալիոյ միւս մասանց հետ: Կարիպալտի միշտ պատրաստ ազատ զօրապետութեան, յանձն առաւ սիրով: Զէնք

և դրամ հարկ էր, զորս մատակարարեց գաղտնապէս Քալուր, ընդունելով զայնս Ազգային Ընկերութենէն: Առանձնականք ևս գտնուեցան օգնողք, յորս Ակոս գինօ Պէրդանի՝ նշանաւոր բժիշկը, որ հաւաքեց ի Միլան պաշար, գէնք, մթերք և դրամ և ամենայն ինչ ուղղուեցաւ ի Ճենովա, ուսկից պիտի մեկնէր արշաւանքը: Մայիս 5ին գիշերը գրեաթէ հազար անձինք յորս 500 Լոմպարտացիք և 300 վենետք մեկնեցան ի Քուարդոյէ որ մերձ է Ճենովայի, Ռուպադգինօ Ընկերութենէ առնուած երկու շոգենաւովք և ուղղուեցան ի Սիկիլիա: Ճամբան ուղեցին արշաւանք մը ևս փորձել Քահանայապետին երկիրներուն մէջ, այլ չյաջողեցան և հասան ի Մարսալա որուն նաւահանգրատին մէջ բաց ի Նափոլիի թագաւորութեան երկու մարտանաւերէ, կային ևս երկու անգղիացի մարտանաւք, որոց նաւաստիքը ցամաք ելած էին: Հազարաց առաջին շոգենաւը առանց յայտնուելու կրցաւ մասնել ի նաւահանգիստ, սակայն երկրորդը դիտեցին թագաւորական մարտանաւք և ահաւոր կրակ մը սկսան թափել անոր ուղղութեան: Անգղիական մարտանաւուց հրամանատարը լուր ղրկեց կրակը դադրեցնել, մինչև որ իւր նաւաստիք դառնան ցամաքէն և կարիպալտեանք այս հրադարձարման ժամանակ կրցան ցամաքը ելլել ամբողջովին¹: Կարիպալտի Մարսալայէն ուղղուեցաւ ի Սալէմի ուսկից Յայտարարութիւն մը հրատարակեց՝ որ իշխանապետութիւնը կը ստանձնէր յանուն Վիկտոր էմանուէլի: Փութով իրեն հետ միացան ուրիշ կամաւոր զինուորք և իւր գնդին թիւը եղաւ 2000:

Ապստամբութեան այսպէս ընդարձակուելուն, վարչութեան զօրավարն Լանտի, ի Փալէրմոյ՝ դիմեց կարիպալտեանց վրայ 3000 զինուորք, հեծելովք և հրա-

1. Կը համարուի որ Կարիպալտի և անգղիացի հրամանատարը մէջերնին խօսած էին այս նախքը: Անգղիոյ բովանդակ ժողովրդեան Նափոլիի վարչութեան դէմ առեւտրութիւնը, ծանօթ էր ամենուն:

նօթիւք: Երկու բանակք վարնուեցան ի Քալադաֆիմի ուր Լանտիի գունդերը ջախջախուեցան և մնացեալքը 45 Մայիս կրկին ապաւինեցան ի Փալէրմոյ², ուր թագաւորական նոր տեղապահ զրկուեր էր զօրավարն Լանցա և որ իր ձեռաց ներքև ունէր 20,000 հետևակք, 600 հեծեալք և 36 թնդանօթք: Կարիպալտիի գունդերը ցըրուեցան այլ և այլ ուղղութեամբ թագաւորական բանակը բաժնելու համար և ինքը մեծագոյն զօրութեամբ Մայիս 27ին հասաւ Փալէրմոյի դիմաց ուր մտաւ առանց մեծ կուռոյ. և որչափ ինքը կը յառաջէր փողոցներուն մէջ, հետևաբար կը նահանջէին թագաւորական գունդերը, և Լանցա դուրս մղուելով գրեթէ 15,000 զօրօք, սկսաւ ահաւոր կրակ մը թափել քաղաքին վրայ, որուն դէմ բողոքելով բովանդակ օտար հիւպատոսք, դադրեցուցին կրակը: Արդէն Կարիպալտի քաղաքին մէջի թնդանօթներուն տիրած էր և ինքը ևս կրնար փոխադարձաբար ումրակոծել թագաւորական բանակը, որով և զօրավարն Լանցա աւելորդ համարելով կըռուիլ Փալէրմոյի դէմ, անգղիացի մարտանաւուց հրամանատարին միջնորդութեամբ զինադադարումն խընդրեց մինչև որ հարցնէ և հրահանգ ստանայ ի Նափոլիէ: Փութով հրաման ստացաւ՝ թշնամոյն հետ դաշամբ « զէնքերով և պաշարով մեկնելու ի Նափոլի », և թողուլ զՓալէրմո: Կարիպալտի սիրով ընդունեցաւ պայմանքը. և յետ մեկնելու թագաւորական բանակին ի Փալէրմոյի, գրեթէ բոլոր քաղաքերը սիրով ընդունեցան իւր իշխանապետութիւնը և տիրացաւ կըղզւոյն բաց ի Մեսսինայի և Միլացցոյի բերդերէն. և յետնոյս մէջ ամրացած էր թագաւորական քաջ զօրավարն Պոսքօ:

Սիկիլիոյ այսպէս ընկճուելով, Ազգային Ընկերութեան նախագահը Լաֆարինա, անդէն հոն դիմեց համոզելու զԿարիպալտի ժողովրդախումբ քուէով մեկէն միացնել Հիւսիսային Իտալիոյ հետ: Սակայն

1. Ըստ ոմանց Լանտի կամաւ պարտեցաւ, որով և մատնութիւն գործեց:

Կարիպալտի ոչ միայն չուզեց թողուլ իւր դիկտատուրական իշխանութիւնը, յորում իւր անձնական ատենադպիրն և ամենէն ազդեցիկ անձն էր Յրանչէսքո Քրիսփի, այլ և կղզիէն տարագրեց զլաֆարինա:

Այն օրուընէ կը սկսին Քալուրի և Կարիպալտի մէջ ընդդիմութիւնք և գժտութիւնք: Քալուր հակառակ էր Կարիպալտի բացարձակ իշխանութեան. սակայն մեծագոյն վնասներէ խոյս տալու համար զրկեց ի սիկիլիա զԱկոսդինօ Տէփրէզիս հաճելի անձն Կարիպալտի, որ անուանուեցաւ Փոխան Դիկտատորի. և այս երեք անձինք Կարիպալտի, Քրիսփի և Տէփրէզիս հռչակեցին ի Սիկիլիա Փիէմոնթի Սահմանադրութիւնը,

3. Պատերազմ ի Սիլացցօ. Կարիպալտեանք կը տիրանան Սիկիլիոյ: — Այս միջոցիս կը ստուարանային Կարիպալտի գունդերը որ 5000 հոգուովք ուղղուեցաւ Մեսսինայի վրայ, իրեն գունդերուն հրամատար ունենալով զՄէտիչի, զՊիքսիօ և հունգարացի թիւր և էպէրհարտ զօրավարք: Իրեն ամէն ջանքն և դաւ զՄեսսինա բաժնել Միլացցոյէ, այսպէս անօգնական թողուլ զՊուքօ զօրավարը Միլացցոյի մէջ: Թագաւորական զօրավարը ամէն ջանքը ըրաւ չկորսնցնելու իւր հաղողակցութիւնքը և բազմաթիւ գուպարածք եղան Միլացցոյի առջև և վերջապէս երկու բանակք զարնուեցան Յուլիս 20ին: Յետ արիւնհաճեղ մրցման մը Կարիպալտի տարաւ յաղթանակը, և Պուքօ սակաւ մնացորդովք քաշուեցաւ Միլացցոյի բերդին մէջ թողլով թշնամւոյն ձեռքը պաշար, մթերք և զէնք: Քիչ օր վերջը Մեսսինայի հրամանատարը զօրավարն Քլարի հրահանգ ընդունեցաւ ըստ պարագային դաշնախօսել Կարիպալտի հետ, որով Միլացցոյի և Մեսսինայի պահանորդքը և բանակը զինուորական պատուով և զինուք ձգեն այդ քաղաքները, և պահապանք միայն մնան բերդերուն մէջ, որոց չէր կարելի կռուիլ Կարիպալտի հետ, և ինքը ևս չյարձակի անոնց վրայ և խօսք սոյ չ'անցնիլ ի ցամաքն: Կարիպալտի ընդունեցաւ դաշանց առաջին մասունքը, բայց ոչ և եր-

կրորդը: Արդէն Մէտիչի զօրավարը յարձակմամբ տիրեր էր Մեսսինայի շրջակայից, որով և թագաւորականք ևս գոհ եղան դաշանց առաջին մասամբք:

Կարիպալտի յետ Սիկիլիոյ տիրապետութեան, իւր նպատակը դարձուց Նափոլիի թագաւորութեան և Եկեղեցւոյ Վիճակին վրայ: Արդէն Պէրդանի և Նիքոդէրա 9,000 զինուորօք պատրաստուեր էին յարձկել Քաւանայապետին երկիրներուն վրայ: Եւրոպական Պետութիւնք վրդովեցան և խիստ բողոքներ, մինչև սպառնալիք եղան Փիէմոնթի թագաւորութեան « որ ազատ թողուցեր էր զԿարիպալտի պէնք և զինուոր հաւաքելու Քաւանայապետին երկիրներուն վրայ յարձկելու համար»: Ըննովայէն ի Սարդենիա հասեր էին բազմաթիւ կամաւորք, Կարիպալտի անձամբ գնաց և առաւ բերաւ զանոնք ի Սիկիլիա ուր ունեցաւ 17,000 կամաւորաց բանակ մը և քանի մը հրանօթք:

4. Փրանկիսկոս Բ ի Նափոլի — իւր վերջին ջանքերը փախուստ ի Կատէդա: — Այս եղելութեանց ժամանակ Նարոլիի թագաւորը Փրանկիսկոս Բ դիմեր էր առ Նափոլէոն Գ խնդելով անոր օգնութիւնը և խորհուրդը: Կ'առաջարկէր Նափոլիի գաղղիական ներկայ Սահմանադրութեան նման օրէնքներ տալ և Սիկիլիոյ 1812ի ազատութիւնքը շնորհելով, հոն փոխարքայ անուանել իւր եղբայրը՝ Դրանիի Կոմսը: Նարոլէոն Գ իրեն խորհուրդ տուաւ դիմել առ Վիկտոր Էմանուէլ և անոր հետ համաձայնիլ: Փրանկիսկոս Բ Յունիս 24ին հրատարակեց Սահմանադրութիւնը, որով հրաման կուտար եռագոյն դրօշակի գործածութիւնը և կը խոստանար Փիէմոնթի հետ խորհրդակցելու երկուց թագաւորութեանց միաբան սրտով գործելու համար: Եւ յիրաւի նուիրակութիւն մը շնորհեց առ կոման Քալուր որ բնաւ արգիւնք մը չունեցաւ: Եւ սակայն ի Նափոլի ևս զինուորական ընդդիմութիւն մը ծագեցաւ ընդդէմ Սահմանադրութեան, զոր ընկճելու համար հարկ եղաւ գէնք գործածել: Ազգային Ընկերութիւնը դրամի միջոցով ցրտացուցեր էր Փրանկիսկոս Բէ զինուորական մասը, որոնք անոր ա-

բարբը այլ ևս չէին ուզեր պաշտպանել և նախ հրա-
ժարեցաւ ի ծառայութենէ անուանի զօրավարն Նուն-
ցիանդէ, որուն հետեւեցան ուրիշ ծովային զօրավարք,
զորս շահեր էին մարգիզն Վիլլամարինա դեսպան
Փիէմոնթի ի Նափոլի, և ծովակալն Փէրսանօ՝ հրա-
մանատար Փիէմոնթի մարտանաւուց հարաւային Ի-
տալիոյ ջրերուն մէջ: Վիկտոր Լճմանուէլ և Քաւուր
ամենայն զաղտնութեամբ ճիգն կը թափէին Պուրպո-
նեանց անկումը պատրաստել առանց զործակցութեան
Կարիպալտիի, անոր պահանջներէն ազատ ըլլալու հա-
մար և սակայն Կարիպալտի կը յառաջէր իր 17,000
բանակովը:

Սգոստոս 8ին գիշերը Կարիպալտիի գունդերը մեկ-
նեցան նաւերով ի Սիկիլիոյ, և դիմացը ի Քալապրիա
ցամաքը ելան առանց ընդդիմութիւն գտնելու թագա-
ւորական գունդերէն: Սգոստոս 20ին Կարիպալտի հա-
սաւ Ռէճճիոյի դիմաց, ուր բանակած էին 30,000 զի-
նուորք հրանօթիւք և հեծելովք, որոց կը հրամայէր զօ-
րավարն Վիալ: Սքա յետ առերևոյթ կռուոյ մը կէս մը
ցրուեցան և մաս մը անձնատուր եղան: Կարիպալտի
Սգոստոս 22ին մտաւ ի Ռէճճիօ: Վիալ պաշտօնէն հրա-
ժարեցաւ և իւր տեղը դրուեցաւ զօրավարն Կիօ: Սա
ևս փոխանակ կռուելու անձնատուր եղաւ, գէնքերով,
հեծելովք, և պաշարներով: Կարիպալտի ամէն կողմ
կը հրատարակէր թագաւոր՝ զՎիկտոր Լճմանուէլ և
զինքը դիկտատոր: Յետ այս յաջողութեանց դիմա-
ցը ուրիշ խափանարար արգելք մը չ'ունենալով, չուեց
ի Նափոլի, ուր Ոստիկանութեան գլուխը և ապա Պաշ-
տօնեայ Ներքին Գործոց՝ Տոն Լիպորիօ Ռոմանօ, ի
վաղուց ծածկապէս կ'աշխատէր և կը պատրաստէր
Վիկտոր Լճմանուէլի թագաւորութիւնը: Թագաւորին
հօրեղբայրը Կոման Աքուելայ, կասկածելով պաշտօ-
նէին արարոց վրայ, ջանաց զինքը պաշտօնանկ ընել
տալ, բայց Տոն Լիպորիօ այնպէս երկեցուց զՓրան-
կիսկոս Բ, ի բնէ տկար և յողոզող, որ խնդրեց իւր հօր-
եղբորմէն անսխալպէս հեռանալ ի Նափոլիէ: Այն ա-
տեն Տոն Լիպորիօ առաջարկեց թագաւորին որ՝ ժո-

ղովրդեան և գահուն մէջ փոխադարձ վստահութիւնը կորսուած ըլլալով, այս վտանգալից ժամանակին լաւ էր իրեն համար մայրաքաղաքէն հեռանալը: Թագաւորին հաւատարիմ մնացեալ զօրավարք, որոնք տակաւին բազմաթիւ էին և ունէին ընտիր բանակներ, խորհուրդ կուտային չվախնալ և քաջութեամբ դէմ կենալ թշնամոյն, ընդդիմութեան կեդրոն կազմելով զՍալէռնօ: Սակայն իւր պաշտօնեայք մանաւանդ Տօն Լիպօրիօ Ռոմանօ, անհնարին ցըցուցին այս ընդդիմութիւնը և անօգուտ, նա մանաւանդ ժողովուրդը, կ'ըսէին, վարկենէ վայրկեան կրնար յեղափոխութիւն մը յարուցանել: Գարձեալ Թագաւորին հօրեղբայրներէն կոմսն Սիրակուսայի, եռանդուն հիացող Քաւուրի վարչութեան, խորհուրդ կուտար Թագաւորին իւր հրպատակները արձկել յերդմանէ: Փրանկիսկոս Բ բուլղորովին շուարեալ, յետ բողոք մը գրելու առ երուպական պետութիւնս որ կը հեռանար մայրաքաղաքէն որպէս զի անոր աւերմանը պատճառ չ'ըլլայ և անվաւեր համարելով ինչ որ գործուին առանց իւր հաւանութեան, մտաւ մարտանալի մը մէջ և ապաւինեցաւ ի կէտէթա. իսկ գունդերը քաջուեցան Վոլգունոյի կռնակը:

5. Կարիպալտի ի Նափոլի — Պատերազմ Վոլգունոյի: — Հագիւ Փրանկիսկոս Բ հեռացեր էր, Տօն Լիպօրիօ Ռոմանօ անմիջապէս հրաւէր ղրկեց առ Կարիպալտի գալ փութով ստանալու քաղաքը¹: Կարիպալտի ընդունեցաւ հրաւէրը և ի Սափրիէ ուր գընացեր էր նաւով, Սեպտեմբեր 7ին հասաւ ի Նափոլի: Կարիպալտիի մինչև ի մայրաքաղաքն մուտքը, առանց դժուարութեան եղեր էր և իւր կողմնակիցք անգամ կը կոչեն զայն « Զինուորական շրջագայութիւն

1. Նոյն իսկ Պորպոնեանց հակառակ պատմագիրք կը պարսաւեն Տօն Լիպօրիօ Ռոմանօ պաշտօնէին բռնած այս ընթացքը, ումանք զայն վատութիւն կոչելով և այլք մատնութիւն: Իսկ ազատականք կը կոչեն զայն « գերագոյն ճայրենասիրութիւն » որ այսպէս խնայեց անօգուտ արիւնահեղութեան:

մը» յորում ժողովուրդքը հնազանդեցնելու համար մեծ ազդեցութիւն ունեցեր էր իւր հմայիչ անունը, իւր «առիւծանման» կերպարանքը և յառակս դարձած՝ իւր և ընկերակցաց կարմրագոյն շապիկքը: Ի Նափուլի նոր Պաշտօնարան մը կազմուեցաւ, թողլով Ներքին Գործոց պաշտօնեայ դարձեալ զՏոն Լիպորիօ: Սակայն կարևոր հրամանները կը տրուէին զօրավարին սենեկէն ուր քարտուղար էր Պէրդանի բժիշկը: Ամէն հրաման էր յանուն Վիկտոր Էմանուէլի: Կարիպալտի իւր կրօնական հակառակութեամբ, անդէն վերցուց Յիսուսեան Միաբանութիւնը և գրուեց անոնց ինչքը. ազգային կալուած հռչակեց թագաւորական տան և Եպիսկոպոսաց, Արքեպիսկոպոսաց կալուածք և եկամուտք: Միանգամայն ի Նափուլիէ կը կառավարէր զՍիկիլիա ուր մէկէն իր հեռանալովը տիրեր էր անմիաբանութիւն և գժտութիւն, Տէփրէդիս ուզելով անմիջապէս միութիւն ընդ Հիւսիսային Իտալիոյ և Քրիստի փափագելով յամեցումը: Կարիպալտի անցաւ ի Փալէրմոյ և հոն փոխան-գրիկտատոր անուանեց զՄորտինի՝ երբեմն պաշտօնեայ Արտաքին Գործոց ի Գոսքանա, Կուէրայցիի իշխանավարութեան ժամանակ: Կարիպալտի ապա դարձաւ ի Նափուլի ուր փոխան-գրիկտատոր դրած էր զՍիրդորի և Քրիստի պաշտօնեայ Արտաքին Գործոց: Աստ ևս տիրած էր անմիաբանութիւնը և շփոթութիւնը: Ռամկավար և ազատական դասը տժգոհ էր Փիէմոնթի վարչութենէն զոր յետամնաց կը համարէին և Կարիպալտի իւր ծանօթ անքաղաքագիտութեամբ, զմարգէզն Փալլապիչինի ղրկեց առ Վիկտոր Էմանուէլ, պաշտօնանկ ընելու զՔաւիւր և զՏարինի, յայտնի է սակայն առանց ընդունելու իւր պահանջքը: Այս շփոթից ժամանակ Պուրպոնեան թագաւորութեան գունդերը ամրացեալ դիրքերէ սկսեր էին շարժիլ և ունեցեր իսկ էին իրենց յաջողութիւնքը ալ և ալ գուպարածներու մէջ: Ի Քայյացցօ յետ ճակակատամարտի մը կարիպալտեան կամաւորք կորսնցուցեր էին ընդ մեռեալ և ընդ վիրաւոր 400 անձինք: Բայց և ունէին 20,000 կամաւորաց բանակ մը. իսկ

186.)

Թագաւորական բանակը կը կազմուէր 30,000 անձանցմէ, որոնք ամփոփուեր էին Վոլգուռնոյի թիկունքը, իրենց ապաւէն ունենալով զԿապուա: Սեպտեմբեր 30ին Գոլոննա զօրավարը թագաւորական գունդերով անցաւ զՎոլգուռնո և մեծ բաղխմամբ յարձկեցաւ թշնամուոյն գունդերուն վրայ, որոց կը հրամայէր զօրավարն Մէտիչի. նոյնը զանապսն կէտերէ ըրին սւրիչ թագաւորական զօրավարք Պիքսիոյի և Միլլիցլէճ զօրավարին գունդերուն: Մեծ էր թագաւորականաց եռանդը, որովհետև պատերազմին ներկայ էր նոյն իսկ Փրանկիսկոս Բ: Սիկիլիայի կամաւորք սկսան սկարանալ և յետո նահանջել: Հասաւ Կարիպալտի նոր օգնութիւններով, սակայն թագաւորականք յամառ արութեամբ կը կռուէին և կը սպառնային շրջապատել Մէտիչիի գունդերը: Պատերազմը առաւօտ սկսաւ և տևեց մինչև երեկոյ. յաղթութիւնը ընդ երկար անորոշ մնաց: Երեկոյեան դէմ նոր կամաւորք հասան ի Նափոլիէ և այնպէս վերջին թափով մը յարձկեցաւ Կարիպալտի թագաւորական գունդերուն վրայ, որոնք ամբողջ օրուան կռուէն պարտասեալք էին: Այն ատեն թագաւորականք խիթալով որ նահանջի ճամբան դէպ ի Կապուա իրենց շկտրուի, աճապարանօք սկսան քաշուիլ ի Կապուա և յաղթութիւնը մնաց Կարիպալտի: Երկրորդ օրը Կարիպալտի նոր հասած կամաւորներով, յորում կային նոյն իսկ փիէմոնթեցի նաւաստիք, մարտանաւերէն ելած, յարձկեցաւ Փէրոնէ թագաւորական զօրավարին 2500 անձանցմէ բաղկացեալ բանակին վրայ ի Քապէրդա. շրջապատեց դայն և գունդերը անձնատուր եղան: Վոլգուռնոյի յաղթութիւնը կ'ամրապնդէր Կարիպալտի իշխանութիւնը, և սակայն չէր բառնար Պորպոնեան թագաւորութիւնը. քանի որ կանգուն էին Կապուա և Կաէրա երկու ամուր ապաստանարանները, պիտի երկարէր յոյժ պատերազմը և Կարիպալտի թերևս չկարենար իսկ յաղթութեամբ ելլել յանդորր, եթէ օգնութեան չհասնէր փիէմոնթեցի բանակը որ յաղ-

Թութեամբք ի Միջին Իտալիա, կը յառաջէր դէպ ի Նափոլի:

6. Նուիրակուծիւնք — Ումբրիա. գաղղիացի զօրավարն Լամորիսիէր: — Իտալական ազատականաց գաղափարն էր Նափոլի տիրապետելէ վերջը, արշաւանք մը փորձել նաև Քաջանայապետին երկիրներուն վրայ: Որչափ որ ալ Նարոլէոն Գարտաքսապէս խստիւ պատուիրած էր Փիէմոնթի որ չթողու կարիպալտեանց դպչելու Քաջանայապետի երկիրներուն, սակայն յեղափոխականք յայտնապէս կը պատրաստուէին փորձելու զինուք: Եւ իրենց յուզմունքները վերջին ժամանակաց մէջ պատճառ եղան Քաջանայապետին վարչութեան կանխաւ կարևոր զգուշութիւնները ձեռք առնուլ: Այս նպատակաւ Գերապայծառ Տը Մէրոտ երբեմն սպայ և այժմ Պաշտօնեայ Ջինուց Պիոս Թ Քաջանայապետին, մտածեց զինուորական պաշտպանողական կազմակերպութիւն մը յարուցանել, որ կարող ըլլայ սահմանները պաշտպանել ստէպ յարձակմունքներէ, որով չդիմել ստէպ օտարին միջամտութեան: Տը Մէրոտ իւր գաղափարը յայտնեց Նարոլէոնի որ բնաւ ընդդիմութիւն մը չցըցուց. նա մանաւանդ որ Տը Մէրոտ սպարապետ կ'առաջարկէր գաղղիացի մը՝ զգորավարն Լամորիսիէր, Ալտ-Էլ Քատէրի յաղթողն և Կայսրութեան հակառակորդ մը որ կ'ապրէր առանձնացեալ և տժգոհ, և որուն ելքը ի Գաղղիոյ միշտ հաճելի պիտի ըլլար Նարոլէոն Գի: Լամորիսիէր զօրավարը՝ կրօնասէր և եռանդուն զմայլող Պիոս Թ Քաջանայապետին, միանգամայն ցանկացող զինուորական նոր փառաց մը, սիրով յանձն առաւ Տը Մէրոտի առաջարկը և Մարտ 25ին հասնելով յԱնքոնա, անդէն սկսաւ վաստակիլ քաջանայապետական իշխանութեան բանակ մը կազմել, յաղթելով բազում և մեծ դժուարութեանց զորս կը զըսնէր յամենուստ, և նոյն իսկ յիտալասէր բարձրաստիճան եկեղեցականներէ որոց հաճելի չէր իւր օտարազգի և գաղղիացի ըլլալը, նոյն անպատեհութիւն-

նը կը տեսնէին նաև Գերապայծառ Տը Մէրոտի վրայ¹ :

Այսու հանդերձ Եւրոպիոյ ամէն կողմէն ինքնայո՛ւ ժար դիմողք եղան կազմելու Ս. Փահուն պաշտպանութեան համար կանոնաւոր զինուորութիւն մը, յորս տւելի էր մանաւանդ գաղղիական տարրը և ի նուա երբեմն միապետական ազնուականութեան բարձրանուանք² : Ոչ նուազ եռանդով դիմեցին նաև Պէլճիայէն, Հոլանտայէն և ուրիշ երկիրներէ, որով այսպէս ձևացաւ Պապական շոտաժ բանակը, 12, 600 հետևակք, 480 հեծեալք իրենց կարևոր հրանօթիւք և հրանօթից լուծերով : Լամորիսիէր յատուկ գաղղիական վատահ բնաւորութեամբ, յետ հրահանգելու և կրթելու այս զինուորութիւնը, բաւական կը համարէր որ և է յարձակման դիմացն առնելու : Կրթեալ բանակէն այլ և այլ գունդեր բաժներ էր քաղաքաց և բերդորէից մէջ : Չէր կրնար համարիլ որ իւր գործն միայն Կարիպալտեանց հետ չէր. և վատահ Նարուլէոն Գի խօսից վրայ, ուրիշ որ և է յարձակումն չէր կրնար գուշակել ի Հիւսիսէ : Արդէն իշխանական խիստ վարչութիւն մը սկսած էր Ումբրիոյ և Նուիրակութեանց մէջ, որ իւր օտար բլլալովը անասանելի կ'երևար ազատականաց, և որոնք ամենայն գոյներով իրր բնաւորութիւն մը զայն կը նկարագրէին. մինչև կոմսն Քալուր, որ յամենայնի առիթ կը փնտռէր, պատրուակ առաւ այս խտտութիւնքը, բողոք մը գրելու առ կարդինալն Անդոնէլլի՝ Ատենադպիր Փահանայապետական Պետութեան, փութով ճամբելու օտար զինուորութիւնը և մէկ օրուան մէջ պատասխան մը ու-

1. Կոմսն Տ'իւրզիլ. Ատենադպիր Գաղղիական Դեսպանութեան ի Դուրին Ա Հատոր. 1860 : Նոյնը կը հաստատեն և այլ լուրջ պատմագիրք, և նոյն իսկ Լամորիսիէրի նամակք :

2. Զինուորաց կարգին մէջ կը յիշուին անուանք որպիսիք են՝ Ռօնան, աը Նեւվիլ, աը Դէրվ, Փէրրոտիլ, Մէսդր, Շանփրոպէր, Շէվիսեէ, Սապրան, Շարէզ և այլք բազումք, ամենն ալ սիրով յանձնառուք պարզ սոսկ զինուորութեան վիճակը :

զելով: Երկու օր վերջը զօրավարն Ֆանդի անուանուելով ընդհանուր հրամանատար Փիէմոնթի պատերազմող գունդերուն, կ'իմացնէր Լամորիսիէրի որ իւր թագաւորէն հրաման ստացեր էր տիրելու Նուիրակութեանց և Ումբրիոյ: Եւ 32,000 հետեւալք, 2000 հեծեալք հրանօթիւք կ'անցնէին սահմանազուխը ընդ հրամանատարութեամբ Չիալտինի և Մարոցցօ տէլլա Ռոքքա զօրավարաց¹:

7. Պատերազմ ի Քասդէլֆիտարտօ — Նուիրակութիւնք եւ Ումբրիա կը միասան Հիւսիսային Իտալիոյ: — Լամորիսէր որ Նաբուլէոն Գի արտաքին յայտարութեանց վստահացեալ չէր կրնար համարիլ որ Փիէմոնթի բանակ մը անցնի սահմանները, կրկին և կրկին հեռագրեց առ կարդինալն Անդոնէլլի որ ինքը պատրաստ էր պատերազմելու յամենայն դէպս. բայց թէ հարկ ըլլար կռուիլ Փիէմոնթի կանոնաւոր զօրաց դէմ. պատերազմը մեծապէս անհաւասար էր և լաւ էր յայնժամ խոյս տալ կռուելէ: Բայց Անդոնէլլի պատասխան մը չտուաւ և Լամորիսիէր ուզեց բաղդը փորձել²: Պատուիրած էր գունդերէն ոմանց ամփոփուելու Օզիմոյի և Մաչերագայի մէջ, հոն կուզէր սպասել Չիալտինիի զօրաբաժնին և թէ յաղթուէր պատասպարուիլ յԱնգոնա: Բայց սիւնակներէն մին ջախջախեցաւ և միւսն անձնատուր եղաւ և Փիմոտան քաջ զօրավարը մնացեալ սակաւ գունդերով եկաւ միանալու Լամորիսիէրի: Իտալացիք յետ տիրելու Օզիմոյի յա-

1. Նաբուլէոն Գ կը գտնուէր ի Շապէրի, ուր իրեն այցելութեան զնացին պաշտօնեայն Ֆանդի և զօրավարն Չիալտինի: Իւլանագիտական յիշատակարանք կը նաստատեն որ Նաբուլէոն գաղտ նաւանութիւն տուած ըլլայ Վիկտոր Էմանուէլի տիրելու Ումբրիոյ և Նուիրակութեանց, պայմանաւ որ չդպչին միայն Հոովմայ, աւելցնելով որ « շուտ ընեն » (mais sutout faites vite): Արդէն Վիկտոր Էմանուէլ չէր մտիր այսպիսի գործոյ մը առանց Նաբուլէոնի նաւանութեան:

2. Պիանքի, Իւլանական Պատմութիւն Եւրոպական յիտալիա Հտ. Էջ. Էջ 544: Լամորիսիէրի թզթոց մէջ այս մասին կան ծանր բացատրութիւնք:

ուսջեցին ի Քասաղէլֆիտարոս : Սեպտեմբեր 18ին Փիմոտան անցնելով զՄուզոնէ դիմեց իտալական առաջին սիւնակին վրայ ի Սանդա Քազա տի Լորէդօ, բայց ծանր վիրաւորուելով, իրենները սկսան փախչիլ և այսպէս շիրթութիւն ձգեցին գունդերուն մէջ, յորոց ոմանք սկսան անձնատուր ըլլալ : Ի զուր ջանաց Լամորիսիէր զանոնք կեցնելու, տեսնելով որ գունդագունդ զէնքէրնին ձգած անձնատուր կ'ըլլան, մնացեալ շոկատներով ապաւինեցաւ յԱնքոնա . նոյնը ըրաւ նաև տէ Քուրդէն զօրավարը որ օգնութեան դիմեր էր Լամորիսիէրի . ուրիշ գունդեր ալ ընդ ամենը 4000 անձինք սպաււիններ էին ի Լորեդոյ, որոնք երկրորդ օրը անձնատուր եղան : Քասաղէլֆիտարոսի կուռոյն մէջ երկու կողմանէ անկեալք 500 հոգիք կը համարուին, յորս նաև Փիմոտան քաջ զօրավարը, որուն մարմինը ապա չքեղապէս փոխադրուեցաւ ի Փաղղիա : Լամորիսիէր 7000 զինուորօք պատրաստուեցաւ պաշտպանել զԱնքոնա, և ութ օրուան մէջ կարելի եղածին չափ ամրացուց բերդորայքը, բայց ցամաքային բանակին յարձակման վրայ աւելցաւ նաև ծովային ումրակոծումը Փիէմոնթեցի երեք մարտանաւէ որոց կը հրամայէր ծովակալն Փէրսանօ, և որոց հարուածք քիչ ժաժամանակուան մէջ քանդեցին ամրոցները : Լամորիսիէր յանձն առաւ անձնատուր ըլլալ ծովակալին բայց ոչ ընդհանուր սպարապետին որ էր զօրավարն Ֆանդի, որով և պատերազմը տևեց կրկին երկրորդ օրը : Այն ատեն Լամորիսիէր անձնատուր եղաւ այս պայմանաւ որ քաղաքը յանձնուի և պահանորդը իւր պատուովը թողով զգէնս, գերի մնայ մինչև խաղաղութեան կնքուիլը : Իւրաքանչիւր կողմէն մեռած էին զրեթէ 200ական անձինք¹ : Անքոնայի անկմամբ առնուեցան

1. Լամորիսիէր զօրավարը անդէն պատուով արձակուեցաւ և Վիկտոր Էմանուէլ հրամայեց որ ձենովա հասնելուն իւր սպայակոտով հիւրընկալուի Թագաւորական պալատը : « Այսու հանգեք՝ կ'ըսէ կոմսն տ'Խալվիլ, զօրավարը շատ հարուածեալ է, լուռ և ցաւը շատ խորին » :

կութեամբ գրեաթէ միաբերան հաստատեց այս հարցմունքը և մեծամեծ տօնախմբութիւնք և հանդէսք յաջորդեցին այս քուէարկութեան :

Արդէն Հոկտեմբեր լին Վիկտոր Լամանուէլ հասեր էր ի Վոլդուռնոյ . և ի Մոնդէքրոյէ պատերազմի դաշտին վրայ հանդիպեցաւ Կարիպալտի որ գինքը ողջունեց « Թագաւոր Իտալիոյ » : Երկրորդ օրը Կարիպալտի վեհանձնութեամբ մը հրատարեցաւ իշխանապետութենէն և ընկերեց Վիկտոր Լամանուէլի հանդիսաւոր մուտքին ի Նափոլի : Յետոյ հրատարելով որ և է պատուոյ և վարձատրութեան և ծանուցանելով որ ինքը միշտ պատրաստ էր ուր որ կարևոր ըլլար կուռելու յանուն Իտալիոյ և Վիկտոր Լամանուէլի , քաշուեցաւ իւր առանձնարանը ի Քափրէրա կղզին :

Սակայն Վիկտոր Լամանուէլի կը մնար ցրուել Պուրպոնեանց յետին գունդերը որոնք ամրացած էին ի Կապուա և ի Կաէդա , ի սպառ տիրելու համար Նափոլի թագաւորութեան , և այս նպատակաւ արդէն Փիէմոնթեցիք մտեր էին Նափոլիի սահմանքը : Չիալտինի և Ֆանդի առանց մեծ դժուարութեան Մաչէրոնէի կիրճերուն քով Իսէրնիայի մօտ , պուրպոնեան մէկ քանի գունդերուն յաղթելով , զանոնք ցրուեցին . ապա յառաջեցին Կարելիանոյի անցքը ուր հաւաքեալ էր Պուրպոնեաց մեծագոյն ոյժը , մինչ ուրիշ բանակ մը ընդ հրամանատարութեամբ Մարոցցօ տէլլա Ռաքքա զօրավարին սաստկացուցեր էր Կապուալի պաշարումը , որ այլ ևս չկարենալով դիմանալ , անձնատուք եղաւ Նոյեմբեր 2ի և պահանորդը կալանաւոր զրկուեցաւ ի ճենովա : Նոյն օրը ևս Չիալտինի յաղթութեամբ մը կը ցրուէր ի Կարելիանոյ եղած գունդերը : Ի դոցանէ մի մասն ապաւինեցաւ քահանայապետական սահմանագլուխը , մաս մը ի Կաէդա և մաս մը ի լերինս , ուր ընդերկար սպրեցաւ հինարար : Ի Կաէդա Փրանկիսկոս Ռի ներկայութիւնը խրախոյս մը եղեր էր պաշարուելոց , որոնք յանձն առած էին դիմանալ մինչև վերջին կէտ , և Չիալտինի որուն յանձնուած էր Կաէդայի պաշարումը ամբողջ գրեաթէ Նոյեմբեր ամիսը

զբաղեցաւ լաւ դիրքեր ամրացնելու և նոր հրանօթք հասցնելու ի Ճենովայէ և ի Գուրինէ, ի զուր Նարուլէոն Գ ջանաց համոզել զՓրանկիսկոս անօգուտ ընդդիմութիւնէ մը ետ կենալու, Փրանկիսկոս Բ պատասխանեց որ կուզէր շարունակել պաշտպանութիւնը և աւելի յանձն կ'առնուր Կաէդայի աւերակաց ներքև թաղուիլ քան տեղիք տալ: Եւ սակայն երբ Նարուլէոն Նոյեմբերի կիսուն հրամայեց, որ զազդիական նաւատորմիդը ելլայ Կաէդայէն, այն ստեն Փրանկիսկոս Բ և օտար Պետութեանց դեսպանք ելան Կաէդայէն: Գեկտեմբերի առաջին օրերուն մէջ սկսաւ սաստիկ ուժակոծում մը որ ներկայ պատմութեան ահաւորներէն մին է: Մէկ օրուան մէջ 8000 հարուածք արձկուեցան, որուն քաղքէն պատասխանեցին 2,500 հարուածք: Գազդիական նաւատորմին մեկնելէն վերջը իտալական նաւատորմիդը ընդ հրամանատարութեամբ Փէրսանօ ծովակալին, ծովուն կողմանէ ևս սկսաւ պաշարումը: Յունուար 22ին ահաւոր շառամամբ և թնդմամբ ուժակոծումը սկսաւ թէ ծովէն և թէ ցամաքէն: Ներքուստ ևս դիւցազնական պաշտպանութեամբ կը մրցէին պաշարեալք. սակայն այլ ևս անկարելի էր շարունակել: Վառօդանոցի մը պայթմամբ 200 զինուորք թաղուեր էին փլատակաց ներքև, բերդերը բովանդակ ի հիմանց քանդուեր էին և Փետրուար 14ին պահանորդը անձնատուր եղաւ թողլով քաղքին մէջ 700 թնդանօթք, անբաւ պաշար և մթերք: Քիչ օր վերջը անձնատուր եղաւ նաև Մեսսինայի ամրոցը և Սիկիլիա ևս ժողովրդախումբ քուէով միացաւ իտալիոյ վերին գաւառաց հետ:

9. Թագաւորութիւնն իտալիոյ եւ առաջին Խօսարան: — Կաէդայի անկմանէն վերջը Քափուր հռչա-

1. Փրանկիսկոս Բ Գազդիական շոգենաւով մը ապաւիններ էր ի Չիվիթա Վէքքիա, ուսկից անցաւ ի Հոովմ, ուր շատ տարիներ հիւր եղած է Պիոս Թի: Երբ իտալացիք մտան ի Հոովմ յամին 1870, անցաւ ի Գազդիա. վախճանեցաւ յամին 1894 Գեկտեմբեր 27:

կեց որ նոր ընտրութիւնք ըլլան երեսփոխանական և Խօսարանը գումարուի ի Դուրին: Առաջին անգամ Իտալիոյ միացեալ գաւառաց ընտրեալք, միաբան գըտնուեցան ի Դուրին և Փետրուար 18ին բացուեցաւ Իտալական Խօսարանը: Այն օրուընէ վերջացան Դոսֆանայի, Սիկիլիայի և Նափոլիի տեղապահաց իշխանութիւնքը և Խօսարանը առաջարկութեամբ Քափուր կոմսին հրատարակեց « Վիկտոր Էմանուէլ Բ շնորհին Աստուծոյ և կամօք Ազգին թագաւոր Իտալիոյ »: Քափուր իւր գործը ի զուի կը հանէր: Այս հրատարակութեան վրայ յայտնի է բողոքեցին իրենց իշխանութենէն արտաքսեալ իշխանք, նաև Աւստրիա և կարգինալն Անդոնէլի՝ Ատենադպիր Քահանայապետին աշխարհական իշխանութեան: Մեծ Պետութիւններէն միայն Անգղիա անմիջապէս ընդունեցաւ Իտալիոյ նոր թագաւորութիւնը. իսկ Նաբոլէոն Գ ճանչցաւ զայն պաշտօնապէս՝ Սեպտեմբրի մէջ: Քիչ վերջը նաև Ռուսսաստան, Տաճկաստան և այսպէս կարգաւ բովանդակ Պետութիւնք Եւրոպիոյ:

Խօսարանը ուզեց ապա որոշողութիւնք ընել Իտալիոյ ուրիշ մասանց համար, որոնք տակաւին միութենէն դուրս էին և յորս էր նաև Հուովմ: Եւ այս առթիւ է որ կոմսն Քափուր ըսած է իր այնքան ծանօթ առածը և կամ առեղծուածը « Ազատ Եկեղեցի, յազատ Պետութեան¹ »: որուն ցարդ քաղաքագէտք ամէն օրինակ մեկնութիւն տուած են: Այրիլ 8ին առաջին անգամ Խօսարանի մէջ իւր մուտքը ըրաւ Կարիպալտի իւր պատմական կարմիր շապկով: Բոլոր Խօսարանը, բաց ի սակաւուց, ոտք ելաւ կեցցէներով և ծափահարութեամբ ողջունելու զինքը: Տիրող Երկուց Սիկիլիայց, զօրավար ինքնաստեղծ բանակի մը, միշտ յաղթող, միշտ ժողովրդական և սիրելի ռամկին և շուրջ պատեալ շողքորթներէ, որոնք զինքը կուզէին գործիք մը առնուլ իրենց նպատակներուն, Կարիպալտի արհամարհող ընթացք մը բռներ էր առ վարչութիւնը և առ

1. Libera Chiesa in libero Stato.

Խօսարանն իսկ, որուն չէր խնայեր իւր նախատինքնե-
րը: Եւ սակայն ի Գուրին ուր միապետական վարչու-
թեան ձեւը հնացեալ էր ժողովրդեան զգացման մէջ,
չատ անսիրելի էր Կարիպալտի և համարեալ իբր վը-
տանգաւոր անձ մը: Ամենայն ոք կը վկայէր իւր ար-
դարասիրութիւնը, շափաւորութիւնը, արութիւնը և
մինչև դիւցազնութիւնը, բայց և ծանօթ էր իւր տկար
քնաւորութիւնը և սահմանափակ քաղաքագիտութիւ-
նը: Ի Փիէմոնթ ուր մեծ էր Քաւուրի ազդեցութիւնը
և համարումը, ժողովուրդը չէր կարող համակրութեամբ
մը տեսնել և լսել Կարիպալտի մեծարանութիւնքը
որոնք սակայն դեռ պաշտօնական ձև մը առած չէին:
Կարիպալտի իւր զգացումները մտուց նաև Խօսարա-
նի պայքարաց մէջ նախատական բացատրութեամբ և
ամբաստանելով ևս զՔաւուր իբր նախանձող մը իւր
փառաց և զինուորական յաղթանակաց սուելցնելով ևս
այն բացատրութիւնը որ « Երբէք ինքը պիտի չսեղմէր
այն անձին ձեռքը որ զինքը Իտալիոյ մէջ օտարական
մը ըրաւ ¹ »: Այսու ակնարկելով Նիցցայի ընծայու-
մը առ Գաղղիա: Վերջացուց իւր խօսքը « որ կը միա-
ցուէին Նափոլի և Սիկիլիա Իտալիոյ հետ և սակայն
կ'արձկուէին այն զինուորները որ զանոնք ազատեր
էին »: և առաջարկեց ընդունել իւրաքանչիւր զինուո-
րական իւր աստիճանով: Առաջարկութիւն մը որ շա-
տերէն վտանգաւոր կը համարուէր բանակին: Իր ա-
մէն մէկ իմաստից մեծապէս կը ծափահարէին ձախ-
կողմեանք և հանդիսատեսք: Ի վերջ խօսից սաստիկ
աղմուկ մը ելաւ: Զախակողմեան երեսփոխանք սպառ-
նական խօսքերով դիմեցին Քաւուրի վրայ, զոր ան-
դէն շրջապատեցին Աջակողմեանք: Նիստը քսան վար-
կենի չափ խափանուեցաւ. Քաւուր յուզեալ՝ բայց լուռ
կեցած էր: Երբ նորէն նիստը բացուեցաւ, զօրավարն
Պիքսիօ թէպէտ Կարիպալտեան՝ սակայն ըմբռնելով

1. Վիկտոր Էմանուէլ շատ անգամ Զանաց հաշտեցնելու զԿարի-
պալտի՝ Քաւուր կոմսին հետ. բայց միշտ նոյն պատասխանը
ընդունեցաւ:

իւր գլխաւորին ձախ դրութիւնը, ծանոյց որ իւր սպարապետը հարկ էր նկատել աւելի հայրենասէր մարտիկ մը, քան հոետոր. և թէ ինքը անձնականապէս կը խնդրէ միաբանութիւն և խաղաղութիւն: Աջակողմեանք ծափահարեցին և Չախակողմեանք վշտացան որ Կարիպալտի մեծագոյն բարեկամը կերպով մը կը հռչակէր անոր խօսից անիմաստութիւնը: Քաւուր որ միշտ յուզեալ, գունաթափ, բայց և լուռ կեցած էր, սիրով ընդունեցաւ Պիքսիս զօրավարին խօսքերը, որոնք սակայն անոր մեծին զգացմունքները չէին և իւր պատասխանին մէջ բնաւ ակնարկութիւն մը չ'ըրաւ Կարիպալտի ընկալեալ նախատանաց: Յետոյ երկու բանաձևք առաջարկուեցան, մինն ի Կարիպալտի և միւսն ի Ռիքագոլի և յետինս լիովին հաւանութեամբ Պաշտօնարանի քաղաքագիտութեան: Պաշտօնեայք ընդունեցան Ռիքագոլի բանաձևը, որուն վերայ քուէն խընդրեցին որ համարուեցաւ իբր քուէ վստահութեան և Խօսարանը ընդունեցաւ Ռիքագոլի բանաձևը 190 քուէիւք ընդդէմ 79 քուէից: Այն օրը միայն կատարուած կրնար համարուիլ Իտալիոյ թագաւորութիւնը, և վարչութեան գլուխ կ'ըլլային Աջակողմեանք որոց գլուխ էր կոմսն Քաւուր:

10. Մահ Քաւուր կոմսին: — Եւ Սակայն Քաւուր որ այնքան աշխատեր էր այդ մեծ գործոյն կառուցման, և կազմեր էր Իտալիա մը ընդ իշխանութեամբ Սաւոյիոյ տան՝ իւր տերանց, ինքը պիտի տեսնէր միայն այդ գործոյն յաջող ելքը և երկու ամիս վերջը պիտի թողուր գայն: Քաւուր ընկճեալ այս անհամար աշխատութենէն, զի ինքն էր միայն ամենայն ինչ կառավարողը և խորհողը, հիւանդացեր էր Յունիս լին: Դուրին ամբողջ յուզեալ էր այս լրոյն վերայ: Հազարաւոր անձինք տանը դռնէն չէին հեռանար, ուր ստէպ կը մտնէին պարզ քաղաքացւոյ մը պէս թագաւորը և ամէն դեսպանք, որոնք ամէնն ալ հիացմամբ կը յարգէին այդ մեծ հանճարը: Հիւանդութիւնը երթալով սաստկացաւ: Քաւուր խնդրեց քահանայ, խոստովանեցաւ հաղորդուեցաւ և Յունիս 6ին վախճա-

նեցաւ 61 ամաց, թողլով զԴուրին ցաւոց, ապշու-
թեան և արտասուաց մէջ: Երբ ի Մերակուտին և ի Խօ-
սարանի Նախագահք ծանուցին մահը, գրեաթէ երես-
փոխաններէն շատերը բարձրաձայն կ'արտասուէին՝:

Քաւուր որ ձեացուցեր էր իտալիոյ թագաւորու-
թիւնը աջակցութեամբ Վիկտոր Լյամանուէլի և Կարի-
տալտիի, յայտնի է որ Դարուս և Պատմութեան ամե-
նամեծ քաղաքագէտ և Հնարիմաց միտքերէն մէկն ե-
ղած է և օրինակ վերջին ժամանակացս մէջ ուրիշ բա-
զում մեծ միտքերու: Միանգամայն կիրթ, գիտուն,
ազնուապետական և հմայիչ կերպերովը առ ինքն գը-
րաւած էր թէ իւր ժողովուրդը և եթէ Օտար Պետու-
թեանց գլուխքը և ներկայացուցիչքը: Ի բնէ եռան-

1. Կոմսն տ'իւրելի. 1861 Յունիս: «Չեմ կրնար բացատրել քաղ-
քին զարհուրեալ կերպարանքը, բոլոր կրպակները գոց են,
բնակիչք շուարեալ կը պատին, առանց գիտնալու թէ ո՛ր
կ'երթան. դէմքերնին տխուր, գլխակոր մէկմէկու կը հարցը-
նեն այս անդամանելի դժբաղդութեան վրայ: Շատերը չեն
հաւատար և կ'երթան կրկին տունը հարցնելու: Ես
իսկ, խոստովանիմ, կը խեղդուէի յուզմունքէս, կրնամ ըսել
որ կը պաշտէի իտալիոյ կորուսած այդ մեծ անձը և ինքն ալ
մասնաւոր սէր և գութ մը ունէր առ իս: Հասարակաց այս-
պիսի ցաւոց առջև, բոլոր ժողովրդեան մը սուգին դիմաց, ոչ
ոք կրնայ անկարեկիր մնալ: Քաղաքապետութիւնը հրովարտակ
մը յարեց քաղքին որմոց վրայ խրախուսելով զժողովուրդը չը
վհատելու և պատուելու անոր յիշատակը՝ որ այլ ևս չկայ . . .
Աստուած կը զրկէր իրենց այս մեծ փորձութիւնը, իմացնե-
լու որ քաջանան: Լրագիրք բոլոր սևով չըջանակեալ են ա-
մենն ալ ազնուական բացատրութեամբ մեծ քաղաքացւոյն հա-
մար . . . Միայն վատ լրագիրն Մի-Մի-ն իր-լոյ, բերան Մած-
ժինիի և Կարիպալտիի՝ ուրախութիւննին չեն ծածկեր »:
Վիկտոր Լյամանուէլ Բ փափազեցաւ որ Քաւուրի մարմինը թա-
ղուի ի Սուփերկա թագաւորազանց Իամբանարանին մէջ, սա-
կայն ընտանիքը հրաժարեցաւ այս պատուէն »:

Արդէն յիտալիա չկայ քաղաք և զիւր որ չունենայ արձան
կամ շիրիմ իւր յիշատակին:

դուն և բուռն, սակայն արտաքսապէս զայնս կը ծածկէր շատ անգամ լուռութեամբ մը և բարձր քաղաքագիտական անայլայլութեամբ: Բնաւ ոխ չպահող, որով և չկար ոք որ իրմէ վրէժ առնուլ ուզէր: Իւր տնական անպաճոյճ կեանքը, յարգելով յամենայնի ընտանեկան կենաց մէջ իւր անդրանիկ եղբայրը, զմարգիզն Քավուր, աւելի համակրելի ըրած էին իւր անունը: Երբէք չբաժնուեցաւ իւր եղբորմէն և նորա զաւակունք աննման սէր մը ունէին իրենց հօրեղբորը¹: Այսքան քաղաքական և առտնին առաքինութեամբ զարդարեալ էր այն անձը որ կազմեց և Եւրոպիոյ առջև ներկայացուց զՆորն Իտալիա:

11. Կարիպալտի ի Տրիտենդուն — Ի վիճակուս եւ յԱսփրոմոնդէ: — Քավուրի մահուամբ Պաշտօնարանին գլուխ անցաւ Պաուռնէ Ռիքագոլի դուքանացի, որ իւր հայրենեացը միութեան համար մեծապէս վաստակած էր. և Ներքին Գործոց պաշտօնէութիւնը կը շարունակէր դարձեալ Մինկէդդի: Յիրաւի Ռիքագոլի չէր կրնար երբէք ունենալ Քավուրի քաղաքագիտութիւնը և ազդեցութիւնը, սակայն Իտալիոյ նոր թագաւորութեան ընթանալիք ուղին արդէն գծուած էր ի Քավուրէ, և յաջորդաց կը մնար առանց խոտորելու հետևիլ այն ուղւոյն մէջ: Կարիպալտի քաջուած էր ի Քափրէրա երբ 1862ի Մարտի մէջ կրկին յերևան եկաւ, թերևս հրաւիրեալ Ռիքագոլի Պաշտօնարանէն, արշաւանք մը փորձելու Տրիտենդունի և վենետկոյ գաւառաց մէջ: Ռիքագոլի կ'ուզէր նոյն իսկ փորձ մը ընել Հռովմայ վրայ, որով տհաճելով Չափաւորականք, Մինկէդդի Պաշտօնէութենէ հրաժարեցաւ: Ազատականաց գաղափարք շատ ընդարձակք էին: Կ'երազէին անցնիլ ի Յունաստան, օգնել Յունական Յեղափոխութեան,

1. Պետութեանց նեա ծանր թղթակցութիւններէ վերջը ստիպուած էր տունը սեղանի բազմել իւր եղբորը կալուածոց գիւղապետին նեա, որ իրեն համար անտանելի էր. և սակայն բնաւ չէր յայտներ, որպէս զի եղբորը տհաճելի գործ չ'ընէ. որ սեղանոյն գլուխ կը բազմէր:

ապստամբութիւն մը սկսանել յԱւստրիա, յԵպիրոս, Տաճկաստան վրդովել և հարուածել, շփոթել Ադրիականի եզերքը և տապնապեցնել զԱւստրիա: Առ այս ի ճենովա կազմուեցաւ մեծ ընկերութիւն մը Ընկեր-Մի-ն Աշտիկ անուամբ: Ռիքագոլի Պաշտօնարանը ինկաւ և յաջորդեց Ռադացցի պաշտօնարանը որ աւելի խրախուսեց Կարիպալտի յոյսերը: Կարիպալտի իւր գունդերով գաղտ հասաւ ի Գիրոլ և երբ պատրաստուած էր յարձակումն ընել Տրիտենդոնի վրայ, յանկարծ Տէրութեան հրամանով կալանաւորուեցան բոլոր իւր կամաւորք, որոց մաս մը ղրկուեցան ի Սառնիքս և մաս մը ի Պրէշիա, ուր ժողովուրդը յարձկեցաւ ազատելու կալանուորքը և հոն երկուստեք կռիւ ծագելով, եղան ևս սպանուողք:

Վիկտոր Լյամնուէլ այս միջոցիս կը գտնուէր ի Նափուլի ուր յաղթական մուտք մը ըրած էր: Թագաւորը և Ռադացցի անդէն դարձան ի Գուրին. Խօսարանը խմբուեցաւ, յորում կարգացուեցաւ Կարիպալտի մէկ նամակը որ կ'ամբաստանէր զՌադացցի իբրև դրժող խօսքին: Կարիպալտի քաշուեցաւ ի Քափրէրա, բայց 1862 Յուլիսի մէջ յանկարծ երևցաւ ի Փալէրմոյ ուր սկսաւ կամաւորք ժողուել Հռովմայ վրայ արշաւանքի մը համար, իր խօսից մէջ կոչելով զՆաբուլէոն Գ « Գաղղիոյ վատ տէրը, կեղծաւոր և մատնիչ Գեկտեմբեր 2ի, որ եկեր և կեղծաւորութեամբ բռներ էր զՀռովմ գորպէտք էր ազատել »: Կարիպալտի փութով բազմաթիւ բանակ մը կազմեց: Եւրոպայ յուզեցաւ այս լրոյն վերայ և Վիկտոր Լյամնուէլ՝ Օգոստոսի սկիզբը հրովարտակով մը ծանոյց որ « Հեռուող չէ իւր դրօշակին ո՞վ որ ոտնակոխ ընելով գորէնս, հայրենիքը վտանգի մէջ կը դնէ, անոր բազդին ինքնակոչ իրաւասու ըլլալով »: Գրեաթէ բոլոր Խօսարանը համամիտ էր թագաւորին: Սակայն Կարիպալտի չկասեցաւ և 4000 հոգւովք հասաւ ի Քալթանիսէզդա: Հոն իմանալով որ կրնար չլծապատուիլ թագաւորական գունդերէն, միայն 1500 կամաւորք անցաւ ծովը: Իտալիոյ թագաւորութիւնը, որուն անուամբ կուզէր գործել Կարիպալտի, զՀարաւային

Իտալիա պաշարման վիճակի մէջ դրաւ: Զիալտինի ղրկուեցաւ ի Գալապրիա ուր Ասփրոմոնդէի մօտ բանակած էր Կարիպալտի և Փալլավիչինի հազարապետին յանձնեց ցրուել կարիպալտեանքը: Պատերազմը ուժով, բայց կարճատև եղաւ. Կարիպալտի ծանր վէրք մը ընդունեցաւ ոտքին և երկու կողմանէ 60 մեռեալք մնացին դաշտին վրայ¹: Կարիպալտի գերի բըռնուելով, կամաւորներովը միաբան ժողովրդեան յաղթանակաց մէջէն տարուեցաւ ի Սիկիլիա, ուսկից ծովով ղրկուելով ի Սփէցիա բանտուեցաւ Վարինեանօ դղեկին մէջ: Ամեն կողմ խստութիւնք ի գործ առնուեցան այսպիսի յանկարծական յուզմանց դէմ: Լամարմորա կալանաւորեց ի Նափոլի երեք նշանաւոր երեսփոխաններ՝ Ծապրիցի, Գալվանօ և Մորտինի. և առ ժամս տիրեց հանդարտութիւն մը: Իտալիոյ նոր թագաւորութիւնը հարուածելով գլխարիպալտի, ցըցուց որ ինքնին կարող էր հսկել ներքին հանդարտութեան առանց վախի մը և այսպէս քաղաքագիտական մեծ յաջողութիւն մը կ'ունենար Եւրոպիոյ Իւլանագիտութեան առջև:

12. Կաշինք Սեպտեմբեր 15ի: — Իտալիոյ թագաւորութիւնը յետ պաշտօնապէս ընդունուելու, իւր մեծագոյն ջանքը եղաւ դրամական վիճակին բարւոքումը, Ելեմտից հաւասարակշռութիւնը: Պաշտօնարանք որոնք մէկմէկու յաջորդեցին, գրեաթէ ամենն ալ նոյն նպատակն ունէին և Ելեմտից պաշտօնեայք յայսմ ցըցուցին իրենց մեծ հանճարը, և մանաւանդ անուանիք եղան Սարգօ Մինկէզզի, Քուինթինօ Սէլլա և Լանցա, երեք մեծ անուանք ուրիշ տեսակէտներով ալ Իտալական Պաշտօնարանական տարեգրոց մէջ: Քաղաքագիտական մասին մէջ առ ժամս մէկդի թողուցին որ և է նոր աշխարհակալութեան գաղափար մը: Նա մանաւանդ հարկ տեսնելով մայրաքաղաքը փոխադրել Ի-

1. Գնդակը ընդերկար մնաց վէրքին մէջ և կ'ըսպառնար իսկ կենացը: յետոյ մեծ ճարտարութեամբ կրցաւ հանել գաղղիացի հռչականուն վիրաբոյժ Նելաթոն:

տալիոյ ակելի կեդրոն տեղ մը, զՆարոլէոն Գ ապահովելու համար որ այդ փոխադրութիւնը չունէր նպատակ մը ծածկեալ դէպ ի Հռովմ արշաւանաց, յանձն առին նոյն իսկ առանձին Դաշնադրութիւն մը ի Սեպտեմբերի: Ըստ այսմ Դաշանց Իտալիոյ թագաւորութիւնը կը խոստանար չմտնելու Հռովմայ սահմանագլուխքը և Նարոլէոն Գ փոխադարձ կը խոստանար գաղղիացի զինուորքը հանելու ի Հռովմայ: Մայրաքաղաքին փոխադրութեան լրոյն տարածուելուն մեծամեծ յուզմունքներ եղան ի Դուրին, զորս Պաշտօնարանը և Ոստիկանութիւնը ընկճեց, բայց ոչ առանց արիւնահեղութեան: Յետոյ առաջարկը ընդունելի եղաւ ի Խօսարանի 305 քուէիւք ընդդէմ 63ից: Ժողովուրդը այս փոխադրութիւնը առ ժամանակեայ համարեցաւ, Վիկտոր Էմանուէլ զԴուրինցիս հաճելու համար, Պաշտօնարանին զլուխ կոչեց Փիէմոնթեցի մը՝ զգօրավարն Լամարմորա: Այսպէս 1865ի Խօսարանի նիստերը բացուեցան ի Տիրէնցէ. ուր փոխադրուեցան Ալբունիքը և ամէն Դեպանութիւնք:

1864



ՄԵՔՍԻՔՈՅ ԵՒ ԿԱՅՍՐԿ ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆՈՍ

1. Մեքսիքոյ 1853էն վերջը — Պէնիղօ Յուարէզ Նախագահ. —
2. Միջամտութիւն Սպանիոյ, Գաղղիոյ և Անգղիոյ. — 3. Նաբուլէոն Գի մտածութիւնքը — Առաջարկ Կայսրութեան առ արշիդուքսն Մաքսիմիլիանոս. — 4. Սպանիա և Անգղիա կը հրաժարին — Գաղղիոյ առանձին միջամտութիւնը. — 5. Պաշարումն Փուէպլայի և Առուձն. — Գաղղիացիք ի Մեքսիքոյ մայրաքաղաք.
6. Եռապետք — Կայսրութիւն ի Մեքսիքոյ. — 7. Մաքսիմիլիանոս կայսր ի Մեքսիքոյ. — Երկրին զինուորական դրամական վիճակը. — 8. Կայսրն Մաքսիմիլիանոս և Միացեալ Նահանգաց թշնամութիւնը — 9. Մաքսիմիլիանոս լքեալ ի Գաղղիոյ և յԵւրոպայէ. — 10. Մաքսիմիլիանոս կը թողու զմայրաքաղաքը. Միրամոն — Եկեղեցական դասուն օգնութիւնը — Պագէն պաշտօնանկ. — 11. Հասարակապետական բանակցութիւնք. Գաղղիացիք կը մեկնին ի Մեքսիքոյէ. — 12. Քուէրէզարոյ — Գերիլ Մաքսիմիլիանոսի. — 13. Դատաստան և սպանումն Մաքսիմիլիանոսի. — 14. Մեքսիքոյ Մաքսիմիլիանոսի մահէն վերջը:

1. Մեքսիքոյ 1853էն վերջը — Պէնիղօ Յուարէզ Նախագահ: — Մեքսիքոյի վարչութեան զլուխ անցած էր յամին 1830, Սանդ'Աննա զօրավարը ¹, որ զանազան անգամ կորսնցնելով իր նախագահութիւնը, միշտ կրցեր էր պատերազմելով և հնարագիտութեամբ նորէն ձեռք բերել. և հուսկ ուրեմն ինքզինքը ցկեանս Նախագահ անուանել տուեր էր յամին 1853 «Նորին Բարձրութեան» պատուանունն ալ ստանալով:

1. Պատմութիւն ժամանակակից Ա. Հտ. Գլ. Ը:

Այնքան մեծ էին իրեն իղձերը որ մինչև խորհուրդ ունեցաւ նուիրակք զրկել ի Բարիզ առ Նարոլէոն Գ և անոր միջոցաւ վերցնելով Հասարակապետութիւնը ի Մեքսիքոյ, իրմով սկսիլ միապետութիւն մը: Սակայն ազատականք որոց զլուխ էին Աւվարէզ և Քոմոնֆոր, չկրցան ընդերկար համրերել այս դիկտատուութեան և 1855ի Օգոստոստոս 9ին զինքը բռնադատեցին փախչիլ ի Մեքսիքոյէ, ուր այլ ևս պիտի չմտնէր: Աւվարէզ սիրով տեղիք տուաւ որ իւր ընկերը Քոմոնֆոր նախագահ անուանուի. և անմիջապէս Սահմանադիր ժողովք մը գումարեց նոր Սահմանադրութեան կազմութեանը համար և այս աշխատութիւնը յանձնուեցաւ նշանաւոր փաստարանի մը, Պէնիդօ Յուարէզ, որ ի հովուութենէ Մեքսիքոյի ամենէն բարձր պաշտամանց հասեր էր: Յառաջադիմականք նոր ընտրութեանց մէջ զինքը մրցող դրին Նախագահութեան ընդ Քոմոնֆորի: Քոմոնֆոր յաղթեց. բայց և Յուարէզ Նախագահ անուանեցաւ Բարձրագոյն Ատենին: Ըստ նոր Սահմանադրութեան հաւասարութիւն էր կրօնից: Եկեղեցական դասը սաստկապէս բողոքեց, քանի որ անհամեմատ առաւել էր հոռովէականութիւնը: Զուլոակա զօրավարը 1857ի Դեկտեմբեր 17ին ապստամբութիւնը սկսաւ գոչելով « վերցուի Սահմանադրութիւնը և Քոմոնֆորի դիկտատորութիւնը »: Քոմոնֆոր շուարեալ և խիթալով հաւասարապէս թէ բանակէն և թէ ի կղերականաց, Դեկտեմբեր 17ին վերցուց Սահմանադրութիւնը որուն վրայ երդուեր էր 16 օր առաջ, և տեսնելով որ ինքը այլ ևս չէր կարող կառավարել, փախըստեամբ մեկնեցաւ յԵւրոպա և Զուլոակա քանի մը ազնուականաց միջոցաւ Նախագահ հռչակուեցաւ ի Մեքսիքոյ: Իսկ Ազգային Խորհրդարանը որ հաւաքեալ էր ի Կուանայուատցոյ, ըստ Սահմանադրութեան կարգաց, Նախագահ հռչակեց Բարձրագոյն Ատենին Նախագահը զՊէնիդօ Յուարէզ: Ըստ Սահմանադրութեան հոն էր իշխանութիւնը ուր էր Խորհրդարանը և որուն միայն իրաւունքն էր ընտրել զնախագահը. և սակայն Եւրոպայոյ Պետութիւնք նախագաս համարե-

ցան ճանչնալ Զուլտակայի Նախագահութիւնը . իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգաց վարչութիւնը ճանչցաւ Նախագահ զՅուարէզ : Այն օրուրնէ Քաղաքական պատերազմը սկսեալ կրնար համարուիլ ի Մեքսիքոյ :

Զուլտակա , ինչպէս ամենայն տկար մատակարարութիւն , շատ մը փոխանակագիրք դրաւ ի շրջանի եկեցական բարձրաստիճան անձանց ստորագրութեամբք և 1 առ 100 տուրք դրաւ ամէն շարժուն և անշարժ կալուածոց վրայ : Իւր ամէն ջանքն եղաւ անձնական հարստութիւն մը դիզել , որով և ապնուականք և մաս մը յեկեղեցականաց զինքը պաշտօնանկ ընելով , իւր տեղը անուանեցին Միրամոն անուամբ կտրիճ երիտասարդ մը որ գնդապետութենէ զօրավարութեան աստիճանի բարձրացեր էր :

Սպանիա որ Մեքսիքոյի ներքին պարտուց բազմաթիւ պարտամուրհակք ստացած էր , յարափոփոխ վարչութեանց պատճառաւ միշտ կը վնասուէր , և առ այս բազում անգամ սպառնացեր էր Մեքսիքոյի վարչութեան և մինչև դադրեցուցեր էր իր քաղաքագիտական յարաբերութիւնք : Միրամոն ի Բարիզ Մեքսիքոյի Ալմոնթէ զօրավարին միջոցաւ դաշնագրութիւն մը ըրաւ Սպանիոյ հետ , որով շահերը կ'ապահովէր . սակայն մնաց և դա առանց գործադրութեան : Իսկ Ազատականաց նախագահը Յուարէզ՝ Վէրա Քրուզի մէջ հաստատելով իւր աթոռը , ջանացեր էր բարեկարգութեամբք համակրելի ընել իւր իշխանութիւնը , որով 1860ի մէջ Մեքսիքոյի 24 Նահանգներէն 21 Նահանգք զինքը Նախագահ ընդունեցան : Քաղաքական երկպառակութեան վերջ մը տալու համար , Յուարէզ յանձն առաւ որ ազգային Խորհրդարանը և ժողովուրդը քուէարկութեամբ ընդունի նախագահ զինքը կամ զՄիրամոն , կղերը պահանջեց որ ընտրութիւնը միայն ազնուականաց ձեռքով պէտք էր ըլլայ . Յուարէզ տեսնելով որ չէր կարելի միաբանիլ , Միրամոնի վրայ զըրկեց իւր Օրդէկա զօրավարը որ Դեկտեմբեր 22ի յաղթեց Քալչիուլալիամի քով անոր և Յուարէզ մտաւ Մեք-

սիբոյ մայրաքաղաքը և ամէն գաւառք զիւքը Նախագահ ճանչցան :

2. Մրջամտութիւն Սպանիոյ, Գաղղիոյ եւ Անգլիոյ : — Շատ ժամանակէ ի վեր օտար Պետութեանց հպատակք թէ նիւթական և թէ բարոյական զրկանքներ կ'ունենային , ի զուր կը բողոքէին դեսպանք , վարչութեան անհաստատութեան պատճառաւ երբէք լսելի չէին ըլլար : Երկիրը դրամական յետին խառնակութեան և խեղճութեան մէջ էր , գանձը բոլորովին պարպուած . վերջին Նախագահք միայն անձնական հարստանալու հոգ տարած էին : Յուարէզ վարչութիւնը ձեռք առած ժամանակ , օտար պետութիւնք պահանջնին նորոգեցին . սակայն Յուարէզ օտարները չգոհացուցած , խորհեցաւ նախ պետութեան արկղը լեցնել , որով և յետաձգեց երկու տարուան ամենայն վճարք և միանգամայն կըրկնապատկեց ամէն օտար ապրանքներու մաքս : Սպանիական վարչութիւնը բազում պահանջներ ունէր , որոնք օրէ օր կ'առաւելուին : Քաղաքական պատերազմին ժամանակ սպանիացի նաւ մը գերուելով , նիւթական մեծ փնաս կրեր էր և ի զուր սպանիական կառավարութիւնը փոխարէն կը պահանջէր . իւր դեսպանը Փաչէքս արտաքսուեր էր Մեքսիքոյէ . և որչափ որ ալ պատճառը անձնական խնդիր մ' էր , սակայն իզապէլլա թագուհին չէր կարող հանութեամբ տեսնել : Այս ամէն պատճառաց վրայ աւելցնելու է բնածին ընդդիմութիւն մը զոր կը զգար Սպանիա իւր երբեմն գաղթականութեանց հասարակապետական ձեւը ընդունելու և համոզեց զ'Կաղղիա և զ'Անգղիա խորհրդակցութիւն մը ընել ի Լոնտրա Մեքսիքոյի նկատմամբ : Արդէն Նարոլէոն Գ ևս կը փափագէր : Կոմսուհին Մոնդելյո՝ Կայսրուհի ըլլալով Գաղղիոյ , պահած էր իր ըսպանիական զգացմունքները և բազմաթիւ Մեքսիքոյի տիկնայք ի Բարիզ գարմանքնին ստէպ կը յայտնէին առ Կայսրուհին Եւթէնի որ անտարբեր աչօք կը համբերէր Մեքսիքոյի հասարակապետական վարչութեանը , և ընդդէմ Եկեղեցականաց և Ազնուականութեան կառավարութիւն մը :

Երեք Պետութիւնք ի Լոնտրա խորհրդակցութեամբ միարան ծանուցին Մեքսիքոյի վարչութեան որ՝ նախ ցարդ իրենց հպատակաց և անոնց ստացուածոց վնասներուն հատուցումն կը պահանջեն և դարձեալ ապահովութիւն մը ապագային համար: Իսկ ներքին վարչութեան ձևոյն վրայ բնաւ միջամտելու միտք մը չունէին: Եւ որպէս զի իրենց պահանջը ոյժ առնու, Երեք Պետութիւնք խորհրդակցութենէն վերջ, նաւատորմիդ ղրկեցին ի Մեքսիքոյ՝ որոց կը հրամայէին Փրիմ Սպանիացւոց, Ժիւրիէն տը լա Կրավիէր Գաղղիացւոց և Անգղիացւոց Սիր Չարլս Ուայթ: Գաշնակից նաւերը բռնեցին նախ զՎէրա Քրուզ և զՍ. Յովհան Ուլլոայ իբրև գրաւականք, մինչև ստանան պահանջներն: Երեք հրամանատարք ապա միարան իրենց պահանջներովը վերջնագիր մը ղրկեցին Յուարէզի, որուն արհամարհանօք պատասխանեց Նախագահը և առանձին յայտարարութեամբ առ Մեքսիքացիս մահ սպաննացաւ ով որ արչաւողաց հետ հաղորդակցութեան մտնէ: Միանգամայն պատերազմի նոր տուրք մը դրաւ ժողովրդեան և մանաւանդ օտարաց վրայ: Գաշնակից հրամանատարք, ընդդէմ որոշողութեանց իսկ Լոնտրայի խորհրդակցութեան, ի Սոլէտասա բանակցութեան մը մտան Յուարէզի հետ, ճանչնալով զինքը պաշտօնապէս իբր նախագահ և յարգելով Մեքսիքոյի վարչութեան ձևը: Յուարէ զալ յանձն առաւ որ մինչև բանակցութեանց աւարտումը, գաշնակցաց ձեռքը իբր գրաւական մնան Քորտուպա, Օրիզապա և Թեհուաքան քաղաքները:

3. Նաբոլէոն Գի մտածութիւնքը. — Աւազարկ կայսրութեան առ Արշիդուքսն Մաքսիմիլիանոս: — Սակայն Գաշնակից Պետութեանց իւրաքանչիւրը առանձին գաղտփարով մը եկեր էր ի Մեքսիքոյ, և Նաբոլէոն Գ. քանի մը փոքր պահանջներու համար նաւատորմիդ մը ղրկած չէր: Հասարակապետական ձև մը ուր որ ալ ըլլար իրեն համար տհաճելի էր և չար օրինակ մը Գաղղիոյ մանաւանդ թէ ըլլար լատին ցեղերու մէջ: Մղեալ մանաւանդ ի Կայսրուհւոյն, ի բազմաց հետէ

1862

Հոկտ. 19.

երկնած էր իւր մտաց մէջ ջնջել ռամկավար հասարակապետութիւն մը ի Մեքսիքոյէ, հաստատել անդ հըռովմէական ուղղափառ Միապետութիւն մը, ուղղափառ իշխանով և այսպէս զօրութիւն տալ միապետական ձևոյն թէ յԵւրոպա և թէ յԱմերիկա: Այս նշապատակին իր մտացը մէջ ի Մեքսիքոյ կայսր սահմանած էր զՄաքսիմիլիանոս Աւստրիոյ արչիդուքսը, եղբայր Փրանկիսկոս Յովսէփ կայսեր, եւանդուն և աշխատելու փափագող երիտասարդ մը, որ այնքան փայլեր էր իւր իմաստուն փոխարքայութեամբ ի Լոմպարտիա-Վենետիկ . և այժմ իւր ազատական գաղափարաց համար, գոգցես մէկդի թողուած իւր կայսր Եղբորմէն, առանձին քաշուած կ'ապրէր Իրիէսդի մօտ իւր Միրամար դղեկին մէջ, և Նարոլէոն Գ սպահով կը համարէր արչիդքսին հաճութեամբ ընդունիլը այդպիսի առաջարկ մը որ միանգամայն փայլմ'էր Հապըսպուրկի Տան: Քաղտնի նուիրակութիւնք զրկուեցան առ Փրանկիսկոս Յովսէփ և առ Մաքսիմիլիանոս արչիդուքսը: Փրանկիսկոս Յովսէփ ծանոյց որ լիովին ազատ կը թողուր իւր եղբայրը ընդունելու կամ ո՛չ: Իսկ արչիդուքսն Մաքսիմիլիանոս ի սկզբան բնաւ յօժարութիւն մը չցըցուց . և շատ ստիպմունք և խոստմունք հարկ եղան ի Նարոլէոնէ զՄաքսիմիլիանոս համոզելու համար . և ի Միրամար դաշինք հաստատուեցան որովք Նարոլէոն Գ յանձն կ'առնուր նախ երկիրը խաղաղեցնել և պատրաստել կայսրութեան և ապա թողուլ Մաքսիմիլիանոսի: Այն օրուընէ Նարոլէոնի ամէն քայլերը ի Մեքսիքոյ այն նպատակին կ'ուղղուէին և գաղտ իսկ միւս երկու դաշնակիցներէ, յորս Անգղիա միայն իրմէ Մեքսիքոյէ առնուած փոխառութեան շահը ապահովելու համար գինուորած էր: Նարոլէոն Գ ի Բարիդ Մեքսիքական գործոց համար խորհրդական և մղիչ ունէր նաև զՄեքսիքացի զօրավարն Տոն Յուան Ալմոնթէ, հակառակորդ մը Յուարէզի Նախագահութեան և Ապատական կուսակցութեան, որ ունենալով իւր հայրենեաց մէջ իւր կուսակցութիւնը, Նարոլէոնի մեծ վստահութիւն կը շնչէր:

4. Սպանիա եւ Աւգղիա կը հրաժարին. — Գաղղիոյ առանձին միջամտութիւնը ի Մաքսիքոյ: — Յետ միանգամ իմանալու Մաքսիմիլիանոս արշիդքսին գըրեաթէ հաւանութիւնը, Նաբոլէոն յայնմհետէ առաւել եռանդեամբ ջանաց դիմել իւր նպատակին: Յանկարծ դաշնակցաց բանակին մէջ հասան զօրավարն Ալմոնթէ ի Գաղղիոյ, Հ. Միրանտա քահանայն, ուրիշ կղերական գլխաւորներով իբրև վստահանալի անձինք Նաբոլէոնի և որոց խորհրդակցութեամբ լաւ կ'ըլլար գործել: Արդէն քիչ առաջ Իաշնակիցք բանակցութեան մը մտեր էին Յուարէզի հետ, և այժմ այդ անձանց ներկայութիւնը բանակին մէջ մեծապէս տհաճեցուց սպանիացի և անգղիացի հրամանատարքը, որոց հրահանգն էր նաւատորմաւ աւելի ցոյց մը, սպառնալիք մը ընել՝ քան պատերազմ պատրաստել, և երբ Յուարէզ, իբր սպահովութիւն, պահանջեց որ Ալմոնթէ և իւր ընկերքը իբրև մեքսիքացի հպատակք և փնտսակարք իրենց հայրենեացը, Մեքսիքայի հողին վրայ ըլլալով, իրեն յանձնուին, Փրիմ և Ուալք ուղեցին գոհացնել զՅուարէզ, բայց ընդդիմացաւ Ժիւրիէն սը լա Կրավիէր: Բանակցութիւնք կտրուեցան ընդ Իաշնակիցս և ընդ Յուարէզ և յայտ էր որ խնդիրը կը դիմէր ի պատերազմ, նա մանաւանդ որ Գաղղիոյ վարչութիւնը սպառնական ոճով, որիչ ի Իաշնակցաց, փոխարինումն կը պահանջէր նաև զուիցցերացի ժէսթ սեղանաւորին ի Մեքսիքոյ դրամական գործառնութեանց մէջ կրած փնտաներուն համար: Սպանիոյ և Անգղիոյ հրամանատարք ծանուցին իրենց Պետութեանց իրաց վիճակը և Գաղղիոյ բռնած ինքնակամ ուղղութիւնը, որ կը տանէր ի պատերազմ. և 1862ի Ապրիլի հրամանն ստացան դառնալ յԵւրոպա իրենց նաւերով: Իաշնակցաց մեկնելէն վերջը կոչուեցաւ նաև Ժիւրիէն սը լա Կրավիէր ի Գաղղիա և արդէն Լորանսէ զօրավարը նոր գունդերով կը հասնէր ի Մեքսիքոյ: Գաղղիացի բանակը ամբողջ ամառը շատ տառապանք քաշեց այն ճահճային երկիրներուն մէջ, ուր ժանտաստենդը բազում մահեր պատճառեց, որով և ի

Քաղղիա անդէն սկսաւ հակակրօւթիւն մը այս անօգուտ արշաւանքին դէմ, յորում ազգը բնաւ պատճառ մը չէր կրնար գտնել:

Զօրավարն Ալմոնթէ գալով Քաղղիոյ բանակը, ինքզինքը Նախագահ Մեքսիքոյի Հասարակապետութեան ծանուցեր էր, սակայն իւր կուսակիցներէն չկրցաւ զինուորական օգնութիւն մը բերել, մինչ Յուարէզի խումբերը կը ստուարանային և ամէն կողմէն կամաւորք կը դիմէին կռուելու ազատութեան դրօշակին ներքև: Լորանսէ չէր համարձակեր յարձկիլ Մեքսիքացի գունդերուն վրայ, որոց ընդհանուր հրամանատար էր զօրավարն Զարակոզա, բայց և իր զինուորքը աւելի առողջ տեղեր փոխադրելու համար, բանակը փոխադրեց Օրիպապայի բարձր դիրքերու վրայ, հոն սպասելով նոր օգնութեանց: Նարոլէոն Ք տժգոհ էր իրեն անգործութենէն և Օգոստոսի մէջ իւր տեղը զրկուեցաւ զօրավարն Տորէյ, որ 30,000 զինուորօք պաշարեց 1863ի առաջին օրերը զՓուէպլա՝ ժայռերով պատսպարեալ ամուր քաղաքը, ուր հաւաքուած էր Մեքսիքացւոց մեծագոյն զօրութիւնը, մթերքը և պաշար պատերազմական:

5. Պաշարումն Փուէպլայի եւ առումն — Գաղղիացիք ի Մեքսիքոյ մայրաքաղաք: — Զարակոզա զօրավարը հիւանդ ըլլալով, քաղքին պաշտպանութիւնը 22,000 զինուորօք ստանձնած էր Օրդէկա զօրավարը, որուն նեցուկ էր Յուարէզի մեծագոյն բանակը որ պիտի պաշտպանէր Փուէպլայէ ի Մեքսիքոյ գնացող ճամբան և հաղորդակցութիւնքը: Երեք ամիս երկու բանակք դիմացէ դիմաց կեցան առանց յարձակման: Տորէյ զօրավարը գիտէր որ քան զպատերազմը աւելի մեծ ջարդ կ'ընէր ի քաղաքին մաղձախտը և ծիրախտը: Մինչև Մարտի կէսերուն Մեքսիքացի բանակը երթալով նուազեր և տկարացեր էր, որով յանկարծակի յարձակմամբ բաժնեց զՕրդէկա մայրաքաղաքէն և տիրեց հաղորդակցութեան ճամբուն: Ապա Տորէյ սաստկացուց Փուէպլայի պաշարումը և յարձակեցաւ քաղաքին վրայ ուր սակայն չկրցաւ մտնել ա-

րիւնահեղ մրցման: Հարկ եղաւ կռուիլ ամէն մէկ փողոցի տիրելու համար շատ անձինք գոհ ընելով, տուն, վանք և եկեղեցի մէկ մէկ բերդ եղեր էին Մեքսիքացւոց և յորս կը կռուէին յուսահատաբար: Քոմոնֆոր զօրավարը յետին փորձ մը ըրաւ հաղորդակցութիւնը հաստատելու Օրդէկայի հետ որ սակաւ պաշարով Փուէպլայի բերդին մէջ էր, բայց ի զուր. ի Սան Լորէնցօ գաղղիացի Պագէն զօրավարը այնպիսի հարուած մը տուաւ իւր ջոկատին որ այլ ևս չէր կարող օգնել Փուէպլայի և Օրդէկա տեսնելով որ անհնարին էր շարունակել ընդդիմութիւնը, անձնատուր եղաւ 26 զօրավարօք, 225 սպայիւք, 800 ենթասպայիւք և 11,000 զինուորօք:

Ի Բարիդ այս յաղթութիւնը ունեցաւ իւր մեծ արձագանքը և Անկելանոցի թնթանօթք ողջունեցին Քաղղիոյ զինուոց այս նոր և շառաշալից պարծանքը, որով կը խրախուսուէր Նարոլէոն յառաջ վարել սկսած գործը և խորհուրդքը Մեքսիքոյի նկատմամբ:

Փուէպլայի անկմանէն վերջը Յուարէզ բովանդակ Մեքսիքոյ պաշարման վիճակի մէջ դրաւ և ամենայն ոք պէտք էր զինուոր գրուիլ բայց յօտարաց: Կը պատրաստուէր նաև պատերազմ՝ տալ մայրաքաղաքին պատուարաց ներքև, բայց ապստամբութիւն յառնելով քաղաքին մէջ, թողուց դայն և վարչութեան ակտը փոխադրեց ի Սան Լուի Փոթոսի: Այն օրը որ ի Քաղղիա կը հասնէր Փուէպլայի յաղթութեան լուրը, զօրավարն Ֆորէյ մեծ յաղթանակաւ կը մտնէր ի Մեքսիքոյ իրեն քովն ունենալով զԱլմոնթէ զօրավարը, և ժողովուրդը, ինչպէս սովորական է այսպիսի պարագայից մէջ, ուրախութեամբ ընդունեցաւ զինքը: Մայրաքաղաքին հետևեցան նաև մերձաւոր քաղաքք և Քաղղիացիք առանց ընդդիմութեան մը տիրեցին երկրին ներքին գաւառաց: Ֆորէյ ի վարձ այս յաղթութեան ընդունեցաւ Նարոլէոնէ մարաջախտութեան գաւազանը, և փութով սկսաւ կարգաւորել երկիրը և պատրաստել առ այն փոփոխութիւնս զորս խորհեր էր իւր տէրը:

6. Եւապետք — Կայսրութիւն ի Մեքսիքոյ: —

Մեքսիքոյի վարչութեան տեղական գոյն մը տալու համար Եւսայետութիւն մը հաստատուեցաւ զոր կը կազմէին Ալմոնթէ գորավարը, Լապասգիտա Մեքսիքոյի արքեպիսկոպոսը և Մարիանօ Սալաս, որոնք Ազնուականաց ժողովք մը գումարեցին, որ սահմանեց փոխել հասարակապետական դրութիւնը, հաստատել սահմանադրական յաջորդական միապետութիւն մը որ ըլլայ հռովմէական ուղղափառ, որ կրէ « Կայսրութիւն Մեքսիքոյի » տիտղոսը և առ այդ ընտրել զՓերտինանտոս Մաքսիմիլիանոս արչիդուքս Աւստրիոյ, որուն հաւանութիւնը արդէն հարցուցեր և ստացեր էր Քաղղիացուց կայսրը Նաբոլէոն Գ : Սահմանուեցաւ հանդիսաւոր Նուիրակութիւն, մը որ մեկնեցաւ Մեքսիքոյէ ի Միրամար, տանելով ոսկի մական մը :

Մեքսիքայիք չէին կարող արժանաւորագոյն իշխան մը գտնել յԵւրոպա, զարդարեալ թագաւորելու համար ամէն յատկութեամբք : Իւր ներկայ անորոշ դիրքը առանձնացեալ ի Միրամար, Վեննայի Արքունեաց մէջ առ ինքն յայտնեալ ցրտութիւն մը, միանգամայն իւր Քարլոզդա ամուսնոյն եռանդը կայսրուհի մը ըլլալու և նոր ասպարէզ մը ունենալ գործելու, պատճառք էին և յորդոր ընդունելու այն թագը զոր արդէն ոչպաշտօնապէս ընծայեր էր իրեն Նաբոլէոն Գ . և Հոկտեմբեր 31ին ընդունելով Մեքսիքացուց նուիրակութիւնը, ծանոյց որ պատրաստ էր ընդունելու նուէրնին, միայն թէ բովանդակ Մեքսիքոյի ժողովուրդը ազատ կամօք հաստատէ մայրաքաղաքին իղձը : Մեքսիքացի նուիրակք դառնալով ի հայրենիս անդէն սկսան պատրաստել ժողովրդախումբ քուէարկութիւնը բովանդակ գաւառաց մէջ : Ի զուր ԅուարէզ ջանաց արգելք ըլլալ, իւր կողմնակիցք նուազեր էին : Նոյն իսկ Միացեալ Նահանգաց վարչութիւնը, որոյ վրայ յոյս ունէր և որուն խոստացած էր Սոնորա ոսկեբեր գաւառը, զբաղեալ Հարաւային պետութեանց դէմ պատերազմով, չէր կարող օգնութիւն մը զրկելու : Քոմոնֆոր զօրավարը յուսահատած, ուղեց անցնիլ յԵւրոպա սակայն գունդերէ բռնուեցաւ և սպաննուեցաւ :

Յետին խստութիւն մը սկսաւ հասարակապետականաց դէմ, շատերը բանտարկուեցան, տանջուեցան և ահաւոր մահուամբք սպանուեցան և յայսմ մեծապէս ամբաստանեալ է նաև մարաջախտն Ֆորէյ որ այս պատճառաւ կանչուեցաւ ի Գաղղիա և իրեն տեղ ընդհանուր սպարապետ դրուեցաւ զօրավարն Պագէն: Օրդէկա զօրավարը որ գերի եղեր էր ի Փուէպլա, բանտէն փախչելով կրկին միացաւ Յուարէզի հետ, որուն հետ սակայն շհամաձայնելով, նա մանսուանդ թշնամանալով, անցաւ Պագէնի բանակը: Յուարէզ լքեալ բոլոր իր հաւատարիմներէն և յուսահատած թողուց զՍան Լուի Փոգոսի և ապաւինեցաւ ի Գաբսաս Միացեալ Նահանգաց հովանաւորութեան ներքև, առանց սակայն հրաժարելու իւր նախագահութենէն: Յուարէզի մեկնելովը, համարուեցաւ որ վերջ կ'առնուր Հասարակապետութիւնը և Փետրուար 4ին գոհարանական ազօթքով մը ի մայր եկեղեցւոյ մայրաքաղաքին՝ կը հռչակուէր գաղղիական զինուց յաջողութիւնը, Հասարակապետութեան բարձումը և թագապահութիւնը մինչև զգալուստ նոր իշխանին: Միանգամայն նոյն օրը արշիդուքսն Մաքսիմիլիանոս լուր կ'ընդունէր որ Մեքսիքոյի 2000 Հասարակութիւնք ժողովրդախումբ քուէով զինքը կայսր կը հռչակէին Մեքսիքոյի:

7. Մաքսիմիլիանոս կայսր Մեքսիքոյի. — Երկրին զինուորական եւ դրամական վիճակը: — Մաքսիմիլիանոս թագը ընդունելով հանդերձ դեռ ի վարանման կայսր մեկնելու՝ երբ Նարուէոն Գ զինքը ի Բարիզ հրաւիրեց ուր ինքը և կայսրուհին շատ խոստումներով

1. Իժուարութեանց պատճառներէն մին այն էր որ Մեքսիքոյի թագը յանձն առնելով, հարկ էր հրաժարիլ Աւստրիոյ գահուն պատահական յաջորդութենէ մը. և Մաքսիմիլիանոս կը դժուարէր այդ հրաժարման և կ'ընդունէր միայն այն պայմանաւ որ իւր Եղբայրը ստորագրութիւն տայ՝ որ այդ հրաժարականը ոչինչ կը համարուի եթէ հրաժարի կամ թողու Մեքսիքոյի թագը: Երկու Եղբարց մէջ այս իմաստով դաշինք դրուեցաւ, կ'ըսուի: Փրանկիսկոս Յովսէփ մեղադրուած է շատ գրի:

Նոր կայսրութեան ապահովութեանը համար, յաջողեցան բոլորովին համոզելու զՄաքսիմիլիանոս, որ իւր ամուսնոյն հետ միարան մեկնեցաւ ապա ի Լոնտրա և հոնկէ Պելճիոյ արքունիքը ամէն կողմ սիրալիր ընդունելութիւն գտնելով: Պելճիոյ թագաւորը Լէոփոլտ գոհ էր մեծապէս իւր դստեր զլխոյն վրայ կայսրուհւոյ մը թագ դնելով, այսպէս առաւել ևս գոհացնել զինքը: Ապա դարձան ի Միրամար ուր մի աւստրիացի և մի գաղղիացի մարտանաւ կը սպասէին զիրենք տանելու մինչև ի Վէրա Քրուզ: Գրիեստէ բաժանումնին շատ սրտաշարժ եղաւ, ժողովրդեան շատը կ'արտասուէր բաժնուելով այնպիսի սիրելի իշխանէ մը. « Միայն կայսրուհին ուրախ էր մեծապէս և կը փայլէր յոյսը իր կերպարանաց վրայ ¹ »:

Մաքսիմիլիանոս փափագած էր առնուլ նաև Ս. Քաշանայապետին օրհնութիւնը և խորհրդակցել մէկ երկու առկախ խնդրոց վրայ: Աւստրիական Նալթա մարտանաւը յորում էր Մաքսիմիլիանոս, հասնելով ի Չիլի գա Վէքքիա, ընդունուեցաւ թագաւորական պատուով: Երկրորդ օրը կայսերականք պատարագ տեսան զետնագամբանաց մէջ և այդ ելան Քաշանայապետին որ զիրենք շատ սիրով ընդունեցաւ, օրհնեց և փոխադարձ այցելութիւն տուաւ: Նալթա և Խեֆա Ապրիլ 29ին կը մտնէին յՈւլիանոս և Մայիս 28ին կը հասնէին ի Ս. Յուան Ուլտայ, ուր ընդունուեցան կայսերական պատուով: Անկէ վերջը իրենց ուղևորութիւնը մինչև ի Մեքսիքոյ, յաղթական գնացք մ'էր բազմութեան ուրախութեանց, ծաղկանց և յաղթական կամարներու

ներէ որ նախանձելով իւր կրօնը եղբոր ժողովրդականութեան յԱւստրիա, միշտ ցրտութեամբ վարուած է նետը, խնայելով իսկ խորհուրդ Մեքսիքոյի ժանր պարագայից մէջ և մատնելով զնա Նաբոլէոն Գի ցնորական երազներու: Բայց Փրանկիսկոս Յովսէփէ աւելի, ուրիշ ընտանեկան պատճառացմէ չարկ է փնտռել Մաքսիմիլիանոսի հաւանութիւնը:

1. Յիշատակարանք կոմսուհւոյն Քուլտնից, Տիկին պատուոյ կայսրուհւոյն Քարլոզայ:

մէջէն, իրենց կայսերական կառաց քովէն հեծեալ ընթանալով զօրավարն Պազէն և կոմսն Պոմպէլ հրամանատար Պազպանաց :

Սակայն Մաքսիմիլիանոսի ուրախութիւնը հասցիւ օր մը տեւեց : Իւր հանդիսաւոր մտից երկրորդ օրը տեսաւ ինչ մեծամեծ դժուարութիւնք կային իւր առջևը և արդեօք կարող պիտի ըլլա՞ր անոնց յաղթելու : Ըստ Միրամարի դաշանց զինուորական բարձր հրամանատարութիւնը պիտի ըլլար Պազէն զօրավարին ձեռքը : Մաքսիմիլիանոս իւր հետը բերած էր աւստրիացի զինուորականք, ինչպէս կային նաև բարձրաստիճան մեքսիքացի զօրավարք, որոնք երբէք չէին կրնար հանդուրժել գաղղիացի զօրավարի մը այդքան բարձրութեան և յոխորտանաց, և յիրաւի Պազէն զօրավարին բռնած արհամարհոտ ընթացքը առ բնիկս, զՄաքսիմիլիանոս անդէն անսիրելի ընելու միջոց մ'էր, մանաւանդ երբ քիչ յետոյ մեծամեծ խստութիւնք, գլխատմունք և կախաղանք սկսան հասարակապետական բռնուողներու :

Գանձուն մէջ բնաւ դրամ չէր մնացած . Մաքսիմիլիանոս զԱզատականս շահելու նպատակաւ, չէր ընդունած Քահանայապետի նուիրակին պայմանն որ հռոմէական ուղղափառութիւնը միայն ազատ կրօնք ըլլայ ի Մեքսիքոյ, սպա Գանձուն դարման տանելու համար ուզեց կանոնի մը դնել եկեղեցական կալուածոց խնդիրը, անդէն վշտացաւ իրմէ Հռոմմայ Ս . Գալը, թշնամացաւ իրեն հետ բարձր կղերը և ցրտացաւ ազնուականութիւնը և սակայն հարկ էր դրամ գտնել : Ըստ Միրամարի Գաշանց ի Բարիզ Մե+թեան Դրոմառան մը պիտի հաստատուէր որուն կառավարիչքն պիտի ըլլային մեքսիքացի մը, գաղղիացի մը և անգղիացի մը և 201,600,000 ֆրանքի փոխառութիւն մը պիտի կատարուէր : Բայց այս դրամէն 54 միլիոնը պիտի տրուէր իբր ծախք գաղղիական արշաւանին և 12 միլիոն՝ իբր փոխարինութիւնք գաղղիացի հպատակաց փնասուց : Զեղչելով ուրիշ այլ և այլ վճարքներ ալ, հասցիւ 30,000,000 ֆրանք կը մնային Մեքսիքոյի վարչութեան, որուն շահովը չէր կարելի տարուէ տարի

փոխառութեան պարտուց շահը վճարել. և նոր կայսրութեան դրամական վիճակը բնաւ չէր կրնար վստահութիւն շնչիլ անոր հաստատ կացութեանը յաշս դրամատեարց և Պետութեանց: Այսու հանդերձ Մաքսիմիլիանոս մեծ եւանդով և աշխուժութեամբ իւր մուտքէն քիչ օր վերջը Ելեմտից կատարեալ ծրագիր մը պատարաստեց, նշանակելով անոր մէջ իբր կանխաւ հմուտ, Պետութեան բովանդակ Հնարաւոր մուտքը մանրամասն թուելով նաև այն անմշակ երկիրները որոնք կրնային օգտակար ըլլացուիլ. և այս իւր ծրագիրը իբր կանոն մը յղեց առ պաշտօնեայն Ելեմտից Վէլլապէզ տէ Լէոն: Ապա կարգաւորութիւնք ըրաւ Գատաստանարանաց մասին. Հասարակաց կրթութեան նոր ուղղութիւն և եւանդուն մղումն տուաւ, ինքնին ուզելով հսկել յառաջադիմութեան: Վաճառուց արտարերութեան համար ճամբաներ գծուեցան. խրախուսեց ճարտարները և արուեստաւորները: Տպագրութեան և մանաւանդ լրագրութեան մեծ կարեւորութիւն տուաւ: Թէ Ամերիկայի և Թէ Լեւոպիոյ մայրաքաղաք մէջ նամակագիրք հաստատուեցան որոնք, տեղական յառաջադիմութիւնք պիտի ծանուցանէին և նոյն իսկ ազատ պիտի հաղորդէին Մեքսիքոյի վարչութեան վերաբերեալ բարւոյնման կարծիքներ յառաջադիմելու նպատակաւ: Գործեալ լրագրութեան ամենէն կարեւոր վսիսման պիտի ըլլար զժողովուրդը տակաւ առ տակաւ հրահանգելու միապետական վարչութեան գաղափարաց և այսպէս հաստատուն համոզմամբ հաստատուն վարչութիւն մը ունենալ, որովհետև զժուարին էր հասարակապետական երկիր մը անդէն միապետական ընել:

8. Կայսրն Մաքսիմիլիանոս եւ Միացեալ Նահանգաց Խճնամուկութիւնը: — Սակայն այս միապետական գաղափարաց հաստատութեան և ծաւալման նկատմամբ եղած ջանքերը սկսան տակաւ առ տակաւ իրենց հակառակութիւնքը ունենալ ի վարչութենէ Միացեալ Նահանգաց, որ զանազան տարիներէ ի վեր զբաղեալ քաղաքական պատերազմով, լռեր էր Եւրոպական միջամ-

տուժեան ժամանակ, բայց հիմայ ազատած այդ հոգէն կ'իմացնէր. յայտնապէս որ երբէք չէր կրար հաճութեամբ տեսնել իւր սահմանաց վրայ կայսերական իշխանութեան մը հաստատուիլը և Ուոշինկթոնի Խորհրդարանը Ապրիլ 4ին վճռով մը ծանուցած էր որ իր օրինաց հետ անհաշտ էր ճանչնալու յԱմերիկա միապետութիւն մը հաստատեալ միջամտութեամբ օտար Պետութեանց Հասարակապետութեան մը աւերակաց վըրայ: Եւ թէպէտ Մերսկուտի Ատեանը չէր համաձայնած այդ վճռոյն և ջանացեր էր ապոցեութիւնը մեղմել ի Գաղղիա, այսու հանդերձ յայտնի էր խորազննին տեսողաց որ օր մը պիտի ծագէր այն մեծ թշնամութիւնը ընդ կայսրութիւն Մեքսիքոյի և ընդ Միացեալ Նահանգս, յոսանց որոյ ուզեր էր գործել Նաբոլէոն Գ և որ կը շարունակէր ճանչնալ զՅուարէզ իբր օրինաւոր Նախագահ և Ներկայացուցիչ Մեքսիքոյի առկայծեալ Հասարակապետութեան: Միացեալ Նահանգաց հակակրութիւնը աւելի կը շատնար առ կայսրութիւնը, որչափ կը խորտակուէին հասարակապետական հոսհոն մնացած գունդեր և առ որս մեծ խստութիւն և անգթութիւն իսկ կը ցուցընէր գաղղիացի ընդհանուր հրամանատարը: Եուարէզ միշտ քաշուած էր ի Չիչուաչուա, սակայն սակաւ հասարակապետական գունդեր բռներ էին զՍաքսաքա քաղաքը: Պագէն քիչ զօրքով կրցաւ ընկճել քաղաքը և հասարակապետականքը ցրուել ի հարսաւ, բայց ապա շարունակեց իւր բանտարգելութիւնքը և սպանութիւնք որոնք մեծապէս զայրացուցին զՄիացեալ Նահանգս որ շուզեց ալ ևս պարզ հանդիսատես մը ըլլալու և յամին 1865 Փետրուար 9ին խնդրեց ի Նաբոլէոնէ որ իւր գունդերը հանէ ի Մեքսիքոյէ, որպէսպի Մեքսիքոյի ժողովուրդը իր լիովին ազատութեամբ կարենայ ընտրել իւր ուլամ վարչութիւնը, որովհետև Միացեալ Նահանգք ըստ Մընրոտ օրինաց չեն կարող ընդունիլ զինուք օտար միջամտութիւն մը յԱմերիկա: Ի Ուոշինկթոն Գաղղիոյ դեսպանը հրահանգ ստացաւ բանակցելու և մինչև խոստացաւ որ գաղղիացի բանակներ

ըը ելլեն ի Մեքսիքոյէ, բայց այս պայմանաւ որ Միացեալ Նահանգք ևս պաշտօնապէս ճանչնան Մեքսիքոյի Կայսրութեան օրինաւոր հաստատութիւնը: Սակայն Ուոշինկթոնի վարչութիւնը մերժեց այս պայմանքը և յայտնապէս ծանոյց որ ինքը այլ ևս չէր կարող հանդուրժել ի Մեքսիքոյ միապետութիւն մը՝ որ ոչ ժողովրդեան կամաց այլ օտար զինուց վրայ հաստատուած ըլլայ, և պէտք էր որ այս խնդիրը որոշակի պայծառանայ և թէ միացեալ Նահանգաց և Քաղղիոյ մէջ եղած բարեկամութիւնը ի վտանգի կը մտնէր եթէ Նարոլէոն Կայսրը պնդէր զինուորները պահել ի Մեքսիքոյ:

Նարոլէոն երկու սուսերց մէջ մնաց. գիտէր որ իւր զինուորները հանելը՝ զՄաքսիմիլիանոս մատնել ըսել էր, և սակայն չէր կրնար պատերազմի առիթ տալ Միացեալ Նահանգաց, զոր Ազգը դժուարաւ կ'ընդունէր նոյն իսկ վտանգ կրնար ըլլալ իւր գահուն համար, քանի որ ի Քաղղիա հասարակաց կարծիքը ի սկզբանէ հետէ հակառակ երևցեր էր և մեղադրող Մեքսիքոյի միջամտութեան և Մարտ Տին նամակով մը առ զօրավարն Պաղէն կ'իմացնէր անոր իր եռանդան նուազիլը Մեքսիքոյի նկատմամբ: Ասիկայ յառաջարան մ'էր: Սակայն այս միջոցիս Պաղէն բնաւ փոփազ մը չունէր թողու զՄեքսիքոյ: Քիչ առաջ մարաջախտ Քաղղիոյ, ամուսնանալով Մեքսիքոյի հարուստ և ազնուական օրիորդի մը հետ, նոր կապ մը կը ստանար այդ երկրին հետ և հարսանեաց համար կատարուած շքեղ հանդէսներ, Մաքսիմիլիանոսի երախտագիտութեան նամակը և բաց յայլոց ընծայից, հոյակապ պալատան մը նուէրը և կամ տարեկան 60,000 ֆրանքաց վարձու բնակութիւն մը, զՊաղէն հասուցեր էին իւր փառասիրութեան ամենէն ցանկալի կէտը: Այժմ ինքը պիտի շանար որ գաղղիացի բանակը մնայ ի Մեքսիքոյ:

9. Մաքսիմիլիանոս լքեալ ի Քաղղիոյ եւ յԵւրոպայ: — Մաքսիմիլիանոս կայսրութիւնը յանձն առած ժամանակ իւր բովանդակ յոյսը դրած էր Քաղղիոյ օգնութեան վրայ յամենայն դէպս և 1866ի սկիզ-

բը Քաղղիոյ լրագրաց լեզուք՝ որունք խորհուրդ կուտային և կը պահանջէին իսկ որ գաղղիացի զինուորք թողուն զՄեքսիքոյ, իրեն ոչ զարմանք միայն ալ և զարհուրանք պատճառեցին: Եւ սակայն յայդմ կար նաև Նարոլէոն Գի մատը որ կը տագնապէր և ևս Միացեալ Նահանգաց սպառնական կերպէն, և խորհեցաւ մասնաւոր դեսպան մը զրկելով ի Մեքսիքոյ քաղցրութեամբ մը ծանուցանել առ Մաքսիմիլիանոս Քաղղիոյ վարչութեան պատճառքը և խորհուրդը: Պարոն Սայյար զրկուեցաւ ի Մեքսիքոյ, որուն յանձնած էր նամակ մը Քաղղիոյ Արտաքին Գործոց պաշտօնեայն՝ Տրուէն տը Լիւյ, առ դեսպանն Քաղղիոյ ի Մեքսիքոյ, որով կ'իմացնէր թէ « Մեքսիքոյի վարչութիւնը իւր ամենայն բարի կամօքն հանդերձ, չէր կրցած, Միրամարի դաշանց պայմանքը կատարել, որով աշնան գունդերը պէտք էին ելլել » . կը յաւելուր ևս՝ որ այդ լաւ էր նոյն իսկ Մաքսիմիլիանոս կայսեր համար որպէս զի չկարծուի թէ « օտար զինուց ազդեցութեան վրայ հաստատեալ է իւր կառավարութիւնը » : Այսպէս Քաղղիոյ վարչութիւնը դրամական պատճառ մը կ'ուզէր պատրուակել իւր զինուորաց ելլելուն ի Մեքսիքոյէ, որով և յանցանքը ձգել նոյն իսկ Մեքսիքոյի վարչութեան վրայ:

Մաքսիմիլիանոս այս լրոյն վրայ այնքան այլայլեցաւ և զայրացաւ որ ընդերկար մերժեց ընդունելու Նարոլէոն Գի նուիրակը: Ապա հասանեցաւ ընդունելու և մինչ Պարոն Սայյար խոստումն կը փափագէր գաղղիացի բանակին ելլելու ժամանակին նկատմամբ, Մաքսիմիլիանոս բնաւ պատասխան մը չտուաւ: Պարոն Սայյար դարձաւ ի Քաղղիա. երկրորդ օրը Մեքսիքոյէ պաշտօնական լրագիրը կը ծանուցանէր որ 1867ի դարնան գաղղիացի զունդերը պիտի թողուն Մեքսիքոյ:

Արդէն վարչութիւնը թէ ի դրամական և թէ ի զինուորական մասին երթալով կը սկարանար: Մաքսիմիլիանոս անհնարին տագնապէն, շուարեալ վիճակ մը սկսաւ, ուսկից ի գուր կը ջանար զինքը հանել կայս-

բուհին Քարլոզդա: Երկրին անորոշ վիճակը՝ ընդհանուր եղաւ. օտարք սկսան կալուածներն ծախել առ երկիւղի, վաճառականք դիւրագնի սկսան ջանալ ապրանքներն հեռացնել, գործերը դադրեցան և սակայն Քաղղիա կը պահանջէր իւր մեծագումար փոխարինումը: Իրաց այս վիճակին մէջ հասարակապետականք և ուրիշ ազատ խումբեր սկսան խրախոյս առնուլ և յարձակմունքներ փորձել: Տեղացի խումբեր կողոպտեցին Պաղտատ քաղաքը: Քաղղիացւոց բանակէն բազմամթեր պաշար մը ինկաւ ապստամբաց ձեռքը և հասարակապետականք հասան մինչև ի Գլաքոքալա քաղաք՝ մօտ Փուէպլայի: Յուարէզի կուսակցաց խումբեր մինչև ի Սան-Նոպէլ հասած ըլլալով, գաղղիացի զնդապետն Պրիւս վրանին յարձկեցաւ, բայց այնպիսի պարտութիւն մը ունեցաւ որ պատերազմէն հազիւ երևք անձինք ողջ մնային: Յիրաւի բաղմաթիւ էր Մաքսիմիլիանոսի բանակը ընդ ամէնը 43,000 զինուորք, յորս 1324 Պելճիացիք, 6545 Աւստրիացիք 1400 հեծեալք և մնացեալքը Քաղղիացիք. բայց գունդերուն մէջ բնաւ միութիւն մը չկար: Արդէն Մաքսիմիլիանոս կորուսեր էր իւր վստահութիւնը Պագէնի վրայ, որ առաւել կը ծառայէր իւր անձին փառասէր խորհրդոցը քան Մեքսիքոյի շահուն. մերթ կը փափագէր Պագէնի մեկնելուն. սակայն գիտէր որ գաղղիական բանակն ալ միաբան պիտի մեկնէր, և Քաղղիացւոց մեկնելէն վերջը Մաքսիմիլիանոս չէր կարող մնալ առանց բանակի. մերթ իւր ցաւոց և տագնապներուն մէջ կը նախատէր գնարդէոն՝ խաբբայ կոչելով. և երբեմն յուսահատած նորէն վերջին անգամ կ'առաջադէր անոր դիմելու: Վերջապէս խորհեցաւ զԱլմոնթէ զօրավարը ի Բարիզ զրկել և ջանալ շահիլ Քաղղիոյ վարչութիւնը: Ալմոնթէ հասաւ ի Բարիզ, սակայն Տրուէն տը Լիւյ՝ Արտաքին Գործոց պաշտօնեայն ծանոյց որ թէ Քաղղիոյ դրամական ամենայն պահանջք չվճարուէին, Պագէն զօրավարին հրաման եղած էր բանակը դարձնել ի հայրենիս ինչ կերպով որ ինքը օգտաւէտ կը դատի Քաղղիոյ: Մաքսիմիլիանոս այս

1866 լրոյն վրայ գոգցես կայծակնահար գոչեց « Զիա խարեցին, իմ և Նարոլէոնի մէջ դաշինք կայ, առանց որոյ ես յանձն չէի առնուր գահը, որ ինձ կապահովէր գաղղիացի զօրաց օգնութիւնը մինչև 1868ի վերջը » : Յուլիս 7ի իր տօնախմբութեան օրը ուզեց զրել հրաժարականը, սակայն կայսրուհին ձեռքէն գրիչը յափշտակեց : Արի և դժբաղդ կայսրուհին սահմանեց դիմել յԵւրոպա և յետին փորձն ընել առ Նարոլէոն Գ և առ Պիոս Թ . յառաջնոյն խնդրելով գաղղիացի բանակին մնալը, երկրորդէն եկեղեցական դաշնախօսութիւն մը : Քարլոզդա կայսրուհին առանց վարանելու մեկնեցաւ երկրորդ օրը Յուլիս 8ին . թողուց ՂԵՔՍԻՔՈյ ուր այլ ևս չունէր դառնալիք : Ո՛վ կրնար գուշակել որ խեղճ մանկամարդ կայսրուհին, պատրեալ իր թուր յոյսերուն մէջ, չքեալ իր բարեկամներէն և մերձաւորներէն անգամ, իւր սիրելի ամուսնոյն համար վշտաց և անհնարին տագնապներու մէջ ծփեալ, իւր այլայլութենէն պիտի կորսնցնէր ընդ ամուսնոյն, նաև իւր իմացականութիւնը, և պիտի տարուէր իւր հայրենի տունը, ուր ցարդ կ'ապրիռ երբէք պայծաւ վայրկեան մը ունենալու :

Գեռ նոր մեկներ էր կայսրուհին կայսեր կենաց դէմ դաւ մը եղաւ յարքունիս, որուն նպատակն էր կղերական մասին ձեռքը տալ վարչութիւնը : Մաքսիմիլիանոս կալանաւորել տուաւ Պաշտօնարանին Նախագահը, պաշտօնեայքը, զօրավարք և բազում բարձր սուտիճան անձինք, որոց ամենուն տեղ հարկ էր նոր անձինք դնել . այլ ևս շփոթ մը և տագնապ արդէն տագնապեալ վարչութեան մը :

Ի Բարիզ Միացեալ Նահանգաց պաշտօնեայն՝ Սիւլարտ, կ'աճապարեցնէր Նարոլէոնի վարչութիւնը փութով գունդերը յետս կոչելու « որովհետև իւր Տէրութիւնը այլ ևս չէր կրնար ներել այդօրինակ միջամտութիւն մը » և կը պահանջէր ժամանակը սահմանել : Եւ երբ Քարլոզդա կայսրուհին հասնելով ի Բարիզ դիմեց առ Նարոլէոն Գ և ընդհանուր նպաստաւոր կարծիք մը համարուեցաւ ծնանիլ Մեքսիքոյի դժբաղդ կայ-

սերականաց համար¹, Միացեալ Նահանգաց պաշտօնեայն խիստ շեղու մը առաւ և հարկ եղաւ որ Տրուէն տը Լիւյ իմացնէ որ Քաղղիոյ վարչութիւնը հաստատէ իւր մտաց վրայ յետս կոչելու բանակը: Նաբուէն գուշակելով բանակաց դարձէն վերջը Մաքսիմիլիանոս սի վիճակը, ջանար ժամանակ շահել որպէս զի կարենայ յայտմ՝ միջոցի համոզել և մինչև բռնադատել զՄաքսիմիլիանոս հրատարելու կայսրութենէն. և որովհետև ինքն ևս սկսեր էր կասկածիլ Պազէնի վրայ, իրեն հաւատարիմ անձանցմէ մին՝ զգորավարն Քաղղինօ լիազօր իշխանութեամբ զրկեց ի Մեքսիքոյ որ մեկնեցաւ Սեպտեմբեր 17ին, որուն յանձնեալ էր հրա-

1. Կայսրուհին Քարլոզա Եւրոպա հասնելուն, իմացուցեր էր Նաբուէնի որ մտադիր էր Քաղղիա անմիջապէս իջնելու: Նաբուէնն Գ ծանոյց որ իւր հիւանդութեանց պատճառաւ պիտի չկարենար ընդառաջել զինքը ընդուննելու. բայց կը յուսար տեսնել զինքը ի դարձին ի Պրուսսիէ: Քարլոզա միտքը չփոխեց և ուղևորեցաւ անմիջապէս ի Բարիզ, ուր հասնելուն, ի կայարան ոչ գոք գտաւ պաշտօնական անձ մը զինքը բարեւելու. իբրու վրիպակաւ մը: Յետոյ Նաբուէնն զրկեց առնա զկայսրուհին Եւժէնի, առ որ պնդեց թէ կ'ուզէր տեսնել զկայսրը: Վերջապէս Նաբուէնն զինքը ընդունեցաւ և կայսրուհին Քարլոզա անոր մատոյց Մաքսիմիլիանոսէ զրեալ Յուշագիր մը: Կայսրը խոստացաւ ընթեռնուլ և պատասխանել բերանացի Ոգոստոս 24ին: Քարլոզա կրկին գնաց ի Սէն Քլու պատասխան մը ընդուննելու, և կայսրը յուշագիրը իրեն դարձուց առանց խօսք մը ըսելու, զոր և ոչ կարողացեր էր: Այլայլեցաւ Քարլոզա, ամէն աղերս թափեց, աղաչեց, թախանձեց, լացաւ յիշեցնելով Նաբուէնի առ իւր ամուսինը բրած խոստումները, բայց ի գուր: Նաբուէնն վայրկեան մը աչքէ անցուց Յուշագիրը և ըսաւ « ինչ որ կրնայի ըրի. աւելին չեմ կարող »: Այն ատեն Քարլոզա ինքնիբմէ դուրս՝ ոտք ելաւ և ըսաւ « Արժանի եմ ասոնց. Լուի Ֆիլիպի թոռն՝ երբէք պէտք չէր վստահի իւր ապագայն Պոնափարդի մը »: Երկրորդ օրը հարկ էր որ թողուր Քաղղիա. Մանիքիօս գայն զգուշութեամբ մը կ'իմացներ և Քարլոզա մեկնեցաւ դէպ ի Հոլմ:

ժարեցնել նախ զՄաքսիմիլիանոս ի կայսրութենէ և ապա բանակը Պազէն գորավարին հետ դարձնել ի Քաղղիա : Արդէն յԵւրոպա քաղաքավարութիւն մթին դիրք մը կ'առնուր :

10. Մաքսիմիլիանոս կը թողու զմայրաքաղաքը . — Միրամին — Եկեղիցական ղասուն օգնութիւնը . — Պազէն պաշտօնանկ : — Մաքսիմիլիանոս այս տագնապալից դրութեանց մէջ իրեն միակ խորհրդական ունէր զՀ. Ֆիլէր իւր խոստովանահայրը, որուն խորհրդով սահմանեց չընդունիլ զգորավարն Քաղղընօ, ամէն բանէ քաշուիլ և այս ատեն եղելութեանց պատասխանատուութիւնը ձգել Քաղղիացւոց վրայ : Հոկտեմբեր 2]ին առաւօտեան ժամը 2ին իր խոստովանահօր, Արրոյա պաշտօնէին և քանի մը ծառայից հետ ձգեց զմայրաքաղաքը և մեկնեցաւ յՕրիգասպա, թողլով Պազէն մարաշախտին նամակ մը, յորում կըսէր որ Երեք բան աւելի մտածութեան նիւթ էին իրեն և յորոց կուգէր փրկել իր պատասխանատուութիւնը՝ Զինուորական դատաստանք, Հոկտեմբեր 3ի օրէնք և հետամտութիւնք : Զինուորական դատաստանարանք անմիջապէս պէտք էին դադրիլ : Հոկտեմբեր 3ի օրէնքը վերցուէին և չ'ըլլուէին զինուորական հետամտութիւնք : Կը յանձնէր Պազէնի ասոնց գործադրութեան մասին բանակցիլ պաշտօնէից հետ : Յայնմ'հետէ Պազէն կը մնար ինքնազուլ և հրատարակեց իսկ որ Տեղապահ կարգեալ էր կայսրութեան Նախագահութեամբ պաշտօնէից¹ :

Այս միջոցիս հասաւ զօրավարն Քաղղընօ և իմանալով Մաքսիմիլիանոսի մեկնիլը յարքունեաց, ուրախ եղաւ որ առանց իւր միջամտութեան կայսրութենէ

1. « Փառասէր առանց փառասիրի մը յատկութեանց... իւր ամէն ջանքը եղաւ իւր անձնական փառքը և ճոխութիւնքը շատցընել... վարժ սպանիացի լեզուին, կրթեալ մեքսիքացւոց կերպերուն, ամուսնացեալ մեքսիքուելոյ մը հետ ինչո՞ւ չ'յուսար և չ'երազէր Պէճնատողի մը ապագայն »... Գաքսիլ տը լոր. Պատ. Բ. կայսրութեան Հա. Գ :

հրաժարեր էր անշուշտ և արդէն տարածուած էր համբաւ որ Մաքսիմիլիանոս իւր բովանդակ կայքը զրկած էր աւստրիական Տաւրոյ մարտանաւը, պատրաստ և կազմ ի Վէրա Քրուզ: Մաքսիմիլիանոս ամէն ջանք ըրած էր չպատահելու Նարոլէոնի նուիրակին, բայց Այոդլա աւանին մէջ գտնուեցան մի և նոյն ժամանակ: Զօրավարը ուզեց տեսնուիլ կայսեր հետ որ մերժեց: Քաղընս միշտ այն համոզման վրայ որ Մաքսիմիլիանոս հրաժարեր է, փոյթ չ'ըլաւ, շարունակեց իւր ճամբան և կը խորհէր ըստ Նարոլէոնի հրահանգաց փութով ժողովուրդը կոչել ի ժողով, մրցումն յարուցանել և տալ ընտրել Նախագահ զայն՝ որ աւելի հակի Գաղղիոյ կողմը, միայն թէ չ'ըլայ Յուարէզ:

Մաքսիմիլիանոս Զալաիիլլա քաշուած Օրիզապայի մօտ, պարտասեալ, հիւանդ. կարելի էր վշտացեալ, մերթ խորհելով դառնալ ի Միրամուր և մերթ ամօթ համարելով այսպիսի դարձ մը յետ երազական կայսրութեան, դառնացեալ մեծապէս որ Նարոլէոնի խորհրդոց և շահուց գործիք մը եղեր էր, որ զինքը այժմ կը զոհէր: Միացեալ Նահանգաց սպառնալիքներուն, ներքին ոգեկան մեծ կռիւներու մէջ էր, երբ լսեց որ Միացեալ Նահանգք՝ տագնապեցնելու համար սահմանաց մօտ կը զրկէին զՔամիպէլ իրենց ներկայացուցիչ առ Յուարէզ և Նարոլէոն Գի բանակցութիւնքը նոյն Պետութեան հետ իր անկման մասին. վրէժխնդրութիւն մը կը զգար ի դերև հանելու Նարոլէոնի խորհուրդքը: Յետոյ կրկին հանդարտելով, ուզեց մի անգամ մը տեսնել զՔաղընս զօրավարը, բայց նախ փափագեցաւ որ ականուի նա իւր Լարէս պաշտօնէին հետ: Քաղընս յայտնապէս ծանոյց որ եկեր էր իմացնելու իւր Տիրոջ կողմանէ որ այլ ևս չէր կարող նա զինուոր և զրամ տալու և թէ Մաքսիմիլիանոս տէր էր հրաժարելու կամ պահելու թագը: Իմացաւ դարձեալ որ 6000 զինուորք կը պատրաստուէին մեկնելու Գրիեստէ ի Վէրա Քրուզ, երբ ի վեննա Միացեալ Նահանգաց պաշտօնեայն պահանջեց իւր անցյալիքը մեկնելու: Փրանկիսկոս Յովսէփ արգիլեց զինուորաց մեկնիլը: Մաքսիմի-

լիանոսի համար այլ ևս յոյս մը չկար յԵւրոպայէ, և թե-
րևս սահմաններ էր իսկ ինքզինք ծովեզերք ձգելու, երբ
հասան յՍտիզապա Պաշտօնարանը, Պետութեան Ա-
տեանը և Միրամոն, որոնք յետ երեք օր խորհրդակցու-
թեան մը աղաչեցին զՄաքսիմիլիանոս չհրաժարելու
և մնալու ի Մեքսիքոյ, խոստանալով իրեն կղերին կող-
մանէ 4 միլիոն փիսաղրա. և զօրավարքն Մարբուէզ,
Միրամոն և Մէյա պատրաստ էին իրենց գունդերու-
վը կռուելու: Մաքսիմիլիանոս ընդունեցաւ և հրովար-
տակով մը ծանոյց ժողովրդեան որ վարչութիւնը ձեռք
կ'առնուր և մեկնեցաւ դէպ ի մայրաքաղաքը: Մերձ
ի Փուէպլա եկան զինքը գտնելու Քաղղիոյ պաշտօ-
նեայն Տանօ և զօրավարն Քադըլնօ, որոնք ջանացին
համոզելու իւր որոշողութենէն ետ կենալու: Տանօ իրր
յուշագիր մը՝ ներկայացուց Մաքսիմիլիանոսի նորա վը-
տանգաւոր դրութիւնը որուն ներքև ստորագրած էին
Տանօ, Քադըլնօ և Պազէն, ջանալով այսպէս համո-
զել զինքը հրաժարելու: Մաքսիմիլիանոս ցըցուց հեռա-
գիր մը զոր նոյն ժամուն ընդուններ էր ի Պազէնէ և
որ խորհուրդ կուտար չհրաժարելու: Յետոյ մի առ մի
Մաքսիմիլիանոս պատմեց իւր կրածները ի Պազէնէ և
Պազէնի պատճառաւ, աւելցնելով որ ինքը պիտի գու-
մարէր ժողովքը որ թէ չուզէ զկայսրութիւն, պատ-
րաստ էր թողուլ զՄեքսիքօ և դառնալ յԵւրոպա յա-
ռանձնական կեանս « ուր պիտի զբաղիմ գրելու թա-
գաւորութեանս Պատմութիւնը. զարմացնելով զԵւրո-
պա եղածներուն վրայ »:

Յետ այս խօսակցութեան, Տանօ պաշտօնեայն պա-
հանջեց ի Քադըլնոյէ պաշտօնանկ ընելու զՊազէն,
պատճառ բազում երկդիմի գործոց: Քադըլնօ կոչեց
զինքը և պահանջեց որ հրաժարի: Երբ Պազէն կ'ընդդի-
մանար, զօրավարը ցըցուց իւր լիազօր իշխանութեան
թուղթը և մարաջախտը անդէն հպատակեցաւ:

11. Հասարակապետութեան համար բանակցու-
թիւնք. — Գաղղիացիք կը մեկնին ի Մեքսիքոյ: —
Նարոյէտն Գ իւր պաշտօնէին ձեռքով ի Ուոյլինկթոն
իմացուցեր էր Միսպեալ Նահանգաց վարչութեան, որ

ինքը հակառակ չէր հաստատելու կրկին զՀասարակապետութիւն ի Մեքսիքոյ, միայն թէ Յուարէզ չ'ըլլայ նախագահ, մինչ Պապէն բանակցութեան մէջ էր ընդ Պօրֆիրիօ Տիագ զօրավարին, Յուարէզի վաճառելու 6000 հրացանք և 4 միլիոն փամիուշաք: Իսկ Ուռչինկիթոնի վարչութիւնը կը ստիպէր վերջ մը տալ խընդրոյն և Քադըլնօ զօրավարը կ'աճապարեցնէր զՊապէն և զբանակը փութով մեկնելու, որոնք վերջապէս ձգեցին մայրաքաղաքը Փետրուար 5ին Օրիզուպայի ճամբով դէպ ի Վէրա Քրուզ ամենայն հանդերձանօք: Հազիւ գաղղիացի բանակը ձգած էր զՕրիզուպա, անդէն Յուարէզեանք բռնեցին զայն սակաւ զինուորօք. ինչպէս ևս ուրիշ տեղեր ալ անմիջապէս յաջորդեցին Հասարակապետականք, « Կարծես իբրև կանխաւ դաշնադրեալք » կ'ըսէ Գաքսիլ տը Լոր: Գաղղիացի գունդերը Մարտ 13ին նաւերը մտան, և մայիս 5ին Պապէն մարաջախտը կը գտնուէր ի Թուլոն, ուր քաղաքին ծովային պետը քաղաքացի զգեստով զինքը ընդունելով ծանոյց որ հրաման ընդունած էր չմտտուցանելու իրեն այն զինուորական պատիւք որոնք օրէն են մարաջախտի մը ընդունելութեան համար: Պապէն քիչ մը ժամանակ կորոյս իւր վարկը, սակայն իւր հնարիմաց ճարտարութեամբ փութով ստացաւ իր նախկին ազդեցութիւնը:

1867

12. Քուէրէդարօ. Մաքսիմիլիանոսի գերութիւնը: — Գաղղիացւոց մեկնելէն վերջը Մաքսիմիլիանոս որչափ կը ներէր իւր ազբատ գանձը, ջանաց կայսրութեան ոյժ մը տալ: Ամբողջ Մեքսիքոյ հինգ զինուորական հրամանատարութեան բաժնեց: Մարքուէզի յանձնուեցան Փուէպլայի և Վէրա Քրուզի պաշտպանութիւնք: Ի մայրաքաղաքի բազմաթիւ պաշանորդք դրուեցան և ինքը ևս մեկնեցաւ Միրամոնի բանակը անձամբ զլուխ կենալու պատերազմող գունդերուն, որոնք ոգևորուել էին հազիւ Չաքադէքասի առմամբ, երբ լուր հասաւ որ Հասարակապետականք տիրել էին Չամորայի, որով կայսերականք ստիպուեցան թողուլ զՄորէլիա, բովանդակ բնակչօք և պաշարովք և ուղ-

տասն օր տևեր էր և այն ինչ դժուարութեամբ մաս առ մաս պաշարը բաշխելով, Մաքսիմիլիանոս նկատելով որ այլ ևս անհնար էր դիմանալ ի խորհուրդ կոչեց զՄիրամոն, Մէյա և Քասդիլլօ, որոնք խորհուրդ տուին յարձակմամբ ճամբայ բանալ թշնամւոյն մէջէն և այսպէս բազդը փորձել: Մաքսիմիլիանոս բանակցութիւն մը ուզեց փորձել և իւր հաւատարիմ հազարապետը Լոփէզ Ղրկեց առ Լաքապէտօ հրամանատարը առաջարկելով որ շնորհուի իրեն սոցատ հասնիլ մերձաւորագոյն նաւահանգիստ մը: Սակայն նա, ըստ իւր հրահանգաց, մերժեց առաջարկը և իւր առած տեղեկութիւններէն դատելով որ յարմար ժամանակ էր յարձակման, բանակը յառաջեցուց. սակաւ հասարակապետականք զաղտ սահեցան մինչև քաղքին պարսպաց ներքև և տիրեցին մէկ դրան գերելով պաճապանը, մտ էր վէրաՔրուզ վանքը ուսկից պէտք էր անցնիլ քաղաք մտնելու համար և ուր կը հսկէր հազարապետն Լոփէզ: Հասարակապետանք սպառնացան իրեն ատրճանակի հարուածով և պահանջեցին որ զիրենք ներս մտցնէ: Լոփէզ կենաց վտանգը տեսնելով բացաւ դրունքը և թըշնամիք վանքին զանգակաց ձայներով հրաւիրեցին ամբողջ իրենց զունդերը, որոնք դիմեցին ի քաղաքն¹. Լոփէզ անմիջապէս լուր տուած էր Մաքսիմիլիանոսի, որ ատրճանակը ձեռքը դիմեց Քրուզի հրապարակը կամ ելլել քաղքէն և կամ մեռնիլ թշնամեաց հարուածներէն: Եւ որովհետև զինուորական զգեստ չէր կրեր, Լոփէզի հնարիւքը ազատեցաւ և հասաւ ի Չէր-

1. « Հազարապետն տոն Միկէլ Լոփէզ, Մաքսիմիլիանոսի ամենէն հաւատարիմը, վերջին վարկենին մատնեց իւր կայսրը իրեւ Յուդա մը դրամի համար և բացաւ զդեակը »: Վէպեր Պատմ. ժամանակակից § 262:

Լոփէզ ինքզինքը արդարացուցած է ըսելով որ՝ զայդ ըրաւ կայսեր փախուստը դիւրելու համար, և յիրաւի օգնեց ծուլտեալ փախստեանը. բայց զինուորական պատմութիւն մը չկրնար երբէք արդարացնել իւր ըրածը:

րօ տէ լաս Գամփանաս¹ : Հոն կը սպասէր որ հասնին Միրամոն և Մէյա և գունդերը ժողուելով վերջին փորձ մը ընեն թշնամեաց մէջէն ճամբայ բանալու : Մէյա հասաւ, բայց Միրամոն վիրաւորուելով գետին ինկեր էր : Սակայն իմացուեցաւ Մաքսիմիլիանոսի ներկայութիւնը ի Չէրրօ տէ լաս Գամփանաս և ահաւոր կրակ մը սկսաւ թափիլ աւանին վրայ : Հարկ եղաւ սպիտակ դրօշ կանգնել և Մաքսիմիլիանոսի նիզակակից մը գնաց առ զօրավարն Էպրոպէտօ որ հասաւ իւր սպայիք : Մաքսիմիլիանոս ուղղունեց զայն ազնուութեամբ և ծանրութեամբ . յետոյ խնդրեց առանձին տեսակցութիւն մը յորում իմացուց որ շնորհուի իրեն հասնիլ մերձաւոր նաւահանգիստ մը, Էպրոպէտոյի զօրաց հսկողութեան ներքեւ, Եւրոպա մեկնելու համար « Էւ պատուոյս վրայ կ'երդնում, այլ ևս չդառնալ ի Մեքսիքոյ » : Զօրավարը ծանոյց որ չէր կարող շնորհը ընել : Այս ատեն խնդրեց Մաքսիմիլիանոս որ գոնեայ նախատինք մը չ'ըլլըցուի իրեն, վասն զի պատերազմի գերի էր . և իւր սուրը Էպրոպէտոյի տուաւ որ հրամայեց իւր սպայից միոյն զայն ընդունելու : Յետոյ Մաքսիմիլիանոս, Մէյա և Միրամոն զօրավարք փոխադրուեցան վեղարաւորաց վանքը . ուսկից Մաքսիմիլիանոս հեռագրեց իւր ընտանեացը յԵւրոպա, գերի բռնուիլը :

1867
Մայիս
15, 16

13. Դատաստան եւ Սպանումն Մաքսիմիլիանոսի .— Զօրավարն Էպրոպէտօ անմիջապէս հեռագրեց առ իւր վարչութիւնը Մաքսիմիլիանոսի գերի բռնուիլը և անոր յայտարարութիւնը որ « արդէն 1866ի Մարտէն իւր հրաժարականը գրած էր և վաւերացեալ պատանապէս . և այդ թուղթը կը գտնուէր ի Քրուզ յափըլտակեալ թղթոց մէջ, միանգամայն կը խնդրէր որ թէ զոհ մը կարևոր էր ինքն ըլլայ այդ, և ազատ թողուին իւր մարդիկը որոնք հաւատարմութեան համար իրեն ընկերացած էին . դարձեալ փսփագ կը յայտնէր մեկ-

1. Լոփէզ տեսնելով զկայսրը ըսաւ Հասարակագետականաց « Միշուէթ այդ քաղաքացւոյն » :

նելու յԵւրոպա» : Հասարակապետական վարչութիւնը խիստ պատասխանով մը մի առ մի կը թուէր ազատութեան հակառակ կուսակցութեան արարքը 50 տարուընէ ի վեր, որոնք ամենէն վերջը գործիք առեր էին Մաքսիմիլիանոսի անձը և անոր իշխանութեան ձեռքով եղած հազարաւոր մեքսիքացւոց սպանումները. դարձեալ կը յիշէր ամէն շարիք որոնք եղան գաղղիական միջամտութեան ժամանակ և անկէ վերջը. և կ'աւելցնէր որ արդէն այդպիսեաց պատուհասը, որոնք բռնուած են կռուելու ժամանակնին, յայտնի է յօրինաց, յետ հաստատուելու իրենց անձնաւորութիւնը. այսու հանդերձ կը շնորհուէր որ Ասեան կազմուի դատելու զՓերտինանտոս Մաքսիմիլիանոս Հապսպուրկի, զՄիկէլ Միրամոն և զԹոմաս Մէյա :

Արդէն այս պատասխանէն կը գուշակուէր դատատանին վախճանը : Փերտինանտոս անմիջապէս խնդրեց ի Մեքսիքոյէ որ Մանյուս Բրուսիոյ պաշտօնեայն գայ ի Քուէրէզարօ՝ Ռիվա Փալաչիօ և տէ լա Դորրէ փաստարաններով, բերելով միանգամայն իւր կարևոր թղթեանքը և հրաժարականը որ կը գտնուէր ի Պաշտօնարանի : Փաստարանք յետ տեսնուելու կայսեր հետ և պատրաստելու պաշտպանութեան գլխաւոր մասունքը, դիմեցին առ վարչութիւնը ի Սան Լուի Փոթոսի, ուր հասան Յունիս Տին և տեսակցեցան Արդարութեան պաշտօնէին հետ խնդրելով որ Մաքսիմիլիանոս դատուի ի քաղաքական և ոչ ի զինուորական Ասինէ : Պաշտօնեայն իրենց արդէն անձնական բարեկամ, պատասխանեց որ մտածեր էր հաստատապէս գործելու ըստ Արդարութեան առանց ատելութեան և վրէժխնդրութեան. միանգամայն խորհուրդ տուաւ դիմել և առ Յուարէզ նախագահ Հասարակապետութեան : Երկու փաստարանք խնդիրքնին նորագեցին առ Յուարէզ և նա որոշելու համար ժողով գումարեց, որ յետ երկար քննութեանց մերժեց առաջարկը : Յայնմհետէ յայտնի էր Մաքսիմիլիանոսի դատապարտութիւնը ըստ 1862ի Յունիսի 25ի օրինաց : Փաստարանք ամէն ճիգն թափեցին առաջի պաշտօնէից որ

չդատուի այդ օրինաց համեմատ, քանի որ Մաքսիմիլիանոս և ոչ իսկ գիտէր այդպիսի օրինաց գոյութիւնը: Որուն պաստասխան տրուեցաւ որ՝ ի ժամանակին Հասարակապետութեան պաշտօնեայն ներկայացած էր ի Միրսումար համոզելու զՄաքսիմիլիանոս որ հասարակապետական երկրի մէջ անհնար էր միապետութիւն մը հիմնել և ազդած էր իրեն 25 Յունիսի օրէնքը: Հուսկ ուրիշ սպաւէն մը շինալով փաստաբաններուն, երբ իմացան ի Քուէրէդարօ Մաքսիմիլիանոսի դատապարտուիլը զինուորական ատենէն, հեռագրեցին առ Մանյուս փութով հասնիլ ի Սան Լուի Փոթոսի և յանուն Բրուսիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Պելճիոյ և բովանդակ Եւրոպիոյ դիմել Յուարէզ Նախագահին գթութեան: Հասաւ Մանյուս, բայց Յուարէզ մերժեց շնորհը ըսելով որ « Հասարակաց փրկութիւնը կը պահանջէ որ օրէնքը յարգուի »: Միայն Միացեալ Նահանգաց միջնորդութիւն մը կրնար մեծապէս ազդեցութիւն ունենալ ապրեցնելու Մաքսիմիլիանոսի կեանքը, բայց Ուոշինկթոնի վարչութիւնը խոյս տուաւ այդպիսի միջնորդութենէ մը: Յունիս 19ին պիտի կատարուէր սպանումը և Մանյուս, Բրուսիոյ պաշտօնեայն դիմեց ի Քուէրէդարօ, գոնեայ վերջին վայրկեաններուն քաջալերել զգժբաղդն Մաքսիմիլիանոս: Այս պատճառաւ գործադրութիւնը յետաձգուեր էր և երբ յապտղման հրամանը հասաւ, արդէն դատապարտեալքը խոտտովանեալ և հաղորդեալ մահուան կը ըսպատէին, որով կերպով մը կրկին պիտի ենթարկուէին սպանման: Մաքսիմիլիանոս այդ իմաստով հեռագրեց առ Յուարէզ իւր երկու ընկերաց շնորհը խնդրելու, բայց ի զուր: Վերջին հեռագիր մ'ալ ըրաւ առ Յուարէզ որ « գոհ կը մեռնի թէ այսպէս պիտի տիրէ խաղաղութիւնը ի Մեքսիքոյ, յանձնելով որ իւր մահը վերջինն ըլլայ »:

Յունիս 19ին Մաքսիմիլիանոս կը ննջէր երբ Լյաֆուպէտօ զօրավարը եկաւ հրաժեշտի ողջոյնը տալու: Փութով փողերու և թմբուկներու շառաչը զարթուցին միւս դատապարտեալքն ևս: Մաքսիմիլիանոս և ընկերքը ել-

լելով բանտէն իւրաքանչիւրը քահանայով մը մտաւ գոց կառքի մէջ, և առաւօտեան ժամը 6ին հասան լուռ ամբոխի մը մէջէն ի Չէրբո տէ լաս Փամիհանա, պաշարեալ 4000 զինուորներէ, իրենց նշանակեալ տեղին: Հոն նախ կարգըցուեցաւ իրենց դատավճիռը. Մաքսիմիլիանոս « Կը մեռնիմ, պատասխանեց, Մեքսիքոյի անկախութեան և ազատութեան համար և կը մաղթեմ որ իմ արիւնս զանոնք ամրապընդէ »: Ապա դրամ բաժնեց զինքը սպանող զինուորաց յանձնելով որ իւր երեսին հարուած չ'ուղղեն: Միրամոն կը գոչէր « Կեցցէ Կայսրը, կեցցէ Մեքսիքոյ »: Մէյա կը համբուրէր զԽաչը: Հրամանատու սպայն սուրը բարձրացուց և եռապատիկ հարուածոց ներքեւ ինկան երեքն ալ: Այս վերջ ազնուական իշխանի մը աննման իւր քրիստոնէական ոգւով, բարութեամբ և իմաստութեամբ: Եթէ կայսրութիւն մը երազեր էր, և այն իւր մտաց մէջ ժողովրդոց երջանկութեան համար էր և ոչ անձնական փառասիրութեան, զոր շունէր: Յարդ իրմէ կառավարեալ ժողովուրդք կը յիշեն հառաչելով¹:

Երեք սպանելոց դիակունք տարուեցան ի բանտ, ուր մնացին պարզեալ տախտակաց վրայ: Պարոն Մանյուս յանուն Աւստրիոյ, Իսալիոյ և Պելճիոյ խնդրեց Մաքսիմիլիանոսի մարմինը, սակայն հասարակապետութեան վարչութիւնը շտուաւ, պատճառելով որ զայն պիտի զմուսէր և յղէր ընտանեացը: Յետոյ ծովակալն Դէկէթոֆ գալով ի Մեքսիքոյ, իւր մօրը և Եղբօր կողմանէ խնդրեց զայն Յուարէյէ. և Սեպտեմբեր ամսոյն առաջին օրերը բերաւ յԵւրոպա, զոր թէ ոչ իշխանք՝ բայց ժողովուրդք ընդունեցան բազում արտասուօք:

1. Ընդհանրապէս ամէն պատմագիրք այս անաւոր և ցաւալի ողբերգութեան պատասխանատուութիւնը կը ձգեն Նաբոլէոն Գի վրայ, որ ուզեց օգուտ քաղել Մաքսիմիլիանոսի եռանդուն երիտասարդութենէն, զինքը համոզելով այնպիսի անօգուտ, երազական և նոյն իսկ ապօրինաւոր ձեռնարկի մը:

14. Մեքսիքոյ Մաքսիմիլիանոսի՝ մահէն վերջը : — Չօրավարն Մարքուէզ կրցեր էր քիչ մը ժամանակ տիրել մայրաքաղաքին մէջ յանուն կայսեր, չքեղ և ոչ նշմարիտ լուրերով : Մաքսիմիլիանոսի սպանման օրը հասարակապետական Պորֆիրիօ Տիագ գօրավարը տիրեց անոր : Ութ օր վերջը առնուեցաւ նաև Վէրա Քրուզ և իսպառ ամէն տեղէ վերցաւ կայսերական դրօշակը և Յուարէզ Նախագահը շորս տարի սքսուրանքէ վերջը կրցաւ մտնել ի մայրաքաղաքն և նորէն սկսիլ հասարակապետական կառավարութիւնը : Չորս տարի վերջը կրկին ընտրուեցաւ իւր բարձր պաշտաման մէջ և մինչև իւր մահը մնաց նախագահ : Իր իշխանութեան ժամանակ եղան փոքր սպստամբութիւնք, որոնք սակայն փութով ընկճուեցան :



ԱՄԵՐԻԿԱ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ

1. Վարչական և բարոյական կազմակերպութիւն կեդրոնական և Հարաւային Ամերիկայի. — 2. Հասարակապետութիւնք ի Միջին Ամերիկա. — 3. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. Գալուստի Միացեալ Նահանգք Նոր Կրանտայի. — 4. Միացեալ Նահանգք Վենեսուէլայի. — 5. Միացեալ Նահանգք Էքուադորի. — 6. Հասարակապետութիւն Փէրուի. — 7. Հասարակապետութիւնք Պուերտիկայի. — 8. Հասարակապետութիւն Քիլիի. — 9. Հասարակապետութիւն Արճէնդինայի և Պուէնոս Այրէս. — 10. Հասարակապետութիւն Ուրուկուայ. — 11. Հասարակապետութիւն Փարակուայ և Լոփէզք. — 12. Կայսրութիւն Պրագիի և Տոն Փէզրօ Բ:

1. Վարչական եւ բարոյական կազմակերպութիւն կեդրոնական եւ Հարաւային Ամերիկայի: — Ինչ որ համառօտիւ մը տեսանք ի Մեքսիքոյ իշխանութեան անհաստատութիւնը, կուսակցութիւնք, մրցմունք, փոփոխակի ազդեցութիւնք, նոյնը պիտի ըմբռնենք նաև կեդրոնական և Հարաւային Ամերիկայի Հասարակապետութեանց համար: Այս գաւառք շունենալով վարչականայն ըմբռնմունքը և կրթութիւն, երբ օգնեալ ի պարագայից ազատեցան սպանիական հպատակութենէ, շարունակ ինկան ի յեղափոխութենէ ի յեղափոխութիւն, միշտ կուսովք ցեղ ցեղի, կուսակցութիւն կուսակցութեան դէմ, *†*, *†*, *†*. *Հնդիկք*: Եւ այս

1. *†* կոչուած են այն եւրոպացիք կամ առաւել սպանեացիք՝ ծնեալք յԱմերիկա:
2. Խառնածինք կոչուած են անոնք՝ որոց ծնողաց մին եւրոպացի է միւսը ընդ տեղացիք:

կուիւք ոչ խօսարանականք, այլ շատ անգամ զինուք, ևս որս կը դիմէին հաւսարապէս Պահպանողական համարեալք, ազատականք, ազնուապետականք, կղերականք, ռամկապետականք, մի և անբաժան Հասարակապետութիւն քարոզողք և Դաշնակցութեանց հետամուտք: Այնպէս որ այդ գաւառք բնաւ շահ մը չտեսան իրենց անկախութենէն: Իրենց յեղափոխութիւններէն յառաջ եկեալ Հասարակապետութիւնք, չէին ծնունդք ժողովրդեան գաղափարաց, ջանից և կրթութեան, այլ թերի և անհիմն նմանողութեան փափագ մը Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգաց դրութեան, ունենալու անոր նման Սահմանադրութիւն մը՝ նախագահ, ծերակոյտ և խօսարան, սակայն առանց ունենալու դարական կրթութեամբ նախ յԱնգղիա և ապա յԱմերիկա Սահմանադրութեամբ կրթեալ ժողովուրդ մը: Այս պատճառաւ քառասունէն աւելի տարուան ընթացքին մէջ շարունակարար Պատմութիւնը կը ներկայացնէ մեյ յեղափոխութիւնք և կուսակցական կուիւք, չունենալով քրէտը գործունէութեան հետ այն բարոյական ոյժը որով միայն Պետութիւն մը հաստատուն կրնայ մնալ: «Քրէտը պահած է միայն սպանիական հին մեծանձնութիւնը, կըսէ Վէպէր, առանց ունենալու զայն պահելու համար պէտք եղած մեծ և հաստատուն առաքինութիւնք»: Երկու իշխանութիւնք չկրեցին այդ յեղափոխութիւնք, Փարակուայ ուր Հասարակապետութիւնը բոլորովին միապետական ձև մը ունէր. և Պրագիլ՝ որուն միապետական ձևոյն հետ կը միաբանէին իւր կայսեր անձնական և սահմանադրական յատկութիւնք, որոնք մեծապէս յառաջ վարեցին զերկիրը: Սակայն միապետութիւնը չըջապատեալ ի Հասարակապետութեանց չէր կարող դարական կեանք մը ունենալ: Միապետութիւն մը որ բնաւ չէր տարբերիր ի Հասարակապետութենէ, բայց եթէ նախագահին միշտ նոյն անձը ըլլալովը, և այն օրը որ զՄիապետութիւնը սիրելի ընող անձն տկարանար, Պրագիլ ևս պիտի անցնէր հասարակապետութեանց կարգը առանց որ և է դժուարութեան մը:

2. Հասարակապետութիւնք ի Միջին Ամերիկա : — Յամին 1821ի Յուլիսի մէջ, Միջին Ամերիկայի Նահանգները՝ Կուադէմալա, Սան Սալվատոր, Հոնտուրաս, Նիքարակուա և Քոստարիքա միաբան Հասարակատետութիւն մը կազմեցին Միջ Աշերէյայէ Մեքսիկո Նահանգի անուամբ, մէկ նախագահով մը և սահմանադրութեամբ, մեծաւ մասամբ ընդօրինակեալ Հիւսիսային Միացեալ Նահանգաց Սահմանադրութենէն : Սակայն հազիւ ութ տարի անցած էր, կուսակցութիւնք կրկին բաժնեցին այդ եղած միութիւնը և մինչև 1842 Միջին Ամերիկա տեսարան մը եղաւ քաղաքական պատերազմներու և շփոթից : Այդ տարւոյն մէջ Կուադէմալայի Մարագան նախագահը ուղեւորվ վերջին ճիգն փորձել նորէն միացնել և կեդրոնացնել իշխանութիւնը, գերի ինկաւ իւր հակառակորդաց ձեռքը և հրացանի բռնուեցաւ : Անկէ վերջը իւրաքանչիւր նահանգ առանձին անկախ կառավարութիւն մը հաստատեց, ունենալով առանձին իւր Նախագահը, Մերակոյտը, Խօսարանը, որոնք միաբան կը կազմէին ժողովքը : Մնացին միայն մէջերնին վաճառականական և մաքսային յարաբերութիւնք և դիւրութիւնք, առանց որ և է քաղաքական կապերու :

4842
Սեպտ.

Այս առանձին և անմիաբան ձեւը խրախուսեց զՈւալքէր ամերիկացի ծանօթ բաղդախնդիրը ի Մեքսիքոյ և ի Քալիֆոռնիա, յանկարծ յարձակելու Նիքարակուայի վրայ, որուն տիրելով և նախագահելով կ'ողէր միացնել Միացեալ Նահանգաց հետ : Վախտուն և հինգ հոգուիք ի Նիքարակուա հասնելով, ինքզինքը զօրավար հռչակեց ծանուցանելով որ զուսկապետականս և զժողովուրդը եկեր էր ազատելու ազնուապետականաց և կղերականաց լուծէն և փութով երկրին տիրեց : Բայց երբ յայտնի ըլլաւ սկսան իւր նպատակքը, այն ատեն ռամկապետականք ևս ընդիմացան Ուալքէրի որ քաշուեցաւ ի Հոնտուրաս : Հոն ի Քալիֆոռնիայէ եկած նոր խումբերով ջանաց ձեւացնել Միջին Ամերիկայի ամբողջական միաբան Հասարակապետութիւնը և ապա միանալ Միացեալ Նահանգաց հետ : Ի

1860 Սեպտ. Հոնտուրաս ևս չյաջողեցաւ . և երբ կրկին անգամ կուզէր արչաւանօք մտնել ի Հոնտուրաս, Անգղիացիք զինքը բռնեցին և մատնեցին տեղացւոց, որոնք մահուան դատապարտելով, հրացանի բռնեցին :

Այս օրինակ մահեր սովորական էին և ուրիշ կողմեր : Ի Քոստա Ռիքա նախկին Նախագահը՝ Ռաֆայէլ Մորա, ուզելով կրկին բռնանալ իշխանութեան, կալանաւորեցաւ և հրացանի բռնուեցաւ : Կուադէմալայի մէջ Գարրէրա յեղափոխութեամբ մը կրցաւ դիկտատորութիւնը հաստատել և ազդեցութիւն ունենալ ազնուապետական և կղերական կուսակցութեանց ձեռքով, բովանդակ Միջին Ամերիկայի Հասարակապետութեան վրայ, այն միջոցին յորում Մաքսիմիլիանոսի կայսրութիւնը կը հաստատուէր ի Մեքսիքոյ : Գարրէրա նպաստաւոր երևցաւ նոր հաստատուած Միապետութեան և ընդդէմ Յուարէզի . և եթէ ի Մեքսիքոյ հաստատապէս յաղթանակէր Միապետութիւնը, նոյնը կրնար մեծ հետեւանքներ ունենալ Միջին Ամերիկայի համար, սակայն Քուէրէգարայի ողբերգութենէն առաջ յանկարծակի մեռաւ Գարրէրա, և դարձեալ իւրաքանչիւր նահանգ յառաջ վարեց իր առանձին իշխանութիւնը, շարունակ սակայն կուսակցութեանց շփոթներու մէջ :

3. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. Գոլումպիա — Մասցեալ Նահանգք Նոր Կրսնատայի : — Յամին 1831 յետ Պոլիվարի մահուան Գոլումպիոյ Հասարակապետութիւնը, երեք նոր և անկախ Հասարակապետութիւնք բաժնուեցան՝ Նոր Կրանատայի, Վէնէցուէլայի և Լքուադորի . երեքն ալ առանձին Սահմանադրութեամբ ըստ օրինակի Հիւսիսային Միացեալ Նահանգաց վարչութեան, նախագահ ընտրական, Պաշտօնեայք, Ատեան Պետութեան . Երակոյտ և Խօսարան որոնք միացած ժամանակ կը կազմէին Ժողովքը, սահմանեալ թուով բանակ մը և պաշտպան ոստիկանութիւն . սակայն այս ամէն ազատական հաստատութիւնք անուանական էին միայն և առերևոյթ :

Յամեն 1831 Սեպտեմբերի մէջ, Նոր Կրանատա իրեն առաւ Միացեալ Նահանգի Գոլումպիոյ յորջորջումը . և

հռչակեց անկախ Հասարակապետութիւնը, յորում սակայն տասն տարուան միջոցք պահպանողական, ապատական, կղերական և զինուորական կուսակցութիւնք կուսեցան փոփոխակի իշխանութիւնը յափըտակելու: 1838էն մինչև 1840 երկիրը շարունակաբար քաղաքական պատերազմի մէջ էր. կուսակցութիւն կուսակցութեան, գաւառ գաւառի դէմ: Վերջապէս 1840ի մօտ երկու խոհական և պահպանողական նախագահք՝ Հէրրան և Մուքուէրա, յաջողեցան շահելով մեծամասնութիւն մը հանդարտել երկիրը, բարեօքել Քանձը, կարգաւորել սահմանադրական հաստատութիւնքը, ընդարձակել վաճառականութիւնը և Հասարակաց կենաց ապահովութիւնը պահպանել: Քանի մը տարի վերջը Յոգէ Հիլարօ Լոփէզ և Յոգէ Մարիա Օպանդէ նախագահի Սահմանադրութեան մէջ մուծին գաւառական բաժանմունք, որով իւրաքանչիւր գաւառ, առանձին իշխանութիւն մը կը կազմէր անկախ՝ դաշնակցեալ մնալով ընդ Նոր Կրանատայի մեծագոյն և կեդրոնական վարչութեան: Եոյնը եղաւ նաև ի Փանամա և յԱնտիոքիա: Այս դրութիւնը ունեցաւ իւր հակառակորդքը որոնք Միւշուրէ կը կոչուէին մինչդեռ միւսերը Վաշնակցական կանուանուէին: Միավարք՝ Պահպանողականքն էին որոնք մինչև յաջողեցան ի Նոր Կրանատա իրենց կողմէն նախագահ ընտրել զՄարիանօ Օսիինա հռչականուն օրէնագէտը որ նաև յաջողովքի միջոցով փոխել միութեան մնացեալ սակաւ կապերը: Ժողովքին որոշողութիւնք տժգոհացուցին զՎաշնակցականս՝ զոր կազմողք էին ռամկապետականք և որոց գլուխ կեցաւ Մուքուէրա՝ երբեմն պահպանողական և այժմ ռամկապետական: Օսիինա ամբողջ Վաշնակցութիւնը պաշարման վիճակի մէջ դրաւ և իւր Նախագահութեան ժամանակը լմնցած ըլլալով, թողլով իւր պաշտօնը իրիւ պարզ զինուոր մը մտաւ Միութիւնը պաշտպանող գունդերուն մէջ: Իրեն յաջորդ ընտրուեցաւ Յուլիօ Արպոլէտօ, անուանի հոետար և քերդող, նշանաւոր ցեղէ մը սերեալ որ Ազատութեան կռիւներու մէջ բազում գոհեր ունեցեր էր:

1853

1756, 57

Արպողէտա և Մոսքուէրա մէկմէկու ազգակիցք, շարունակեցին քաղաքական պատերազմը և Մոսքուէրա Յուլիս 18ին յաղթելով Պաշպանողականաց գունդերուն, մտաւ ի Պոկոդա և ինքզինքը անուանեց Նախագահ Միացեալ Նահանգաց Գոլուպիոյ: Հուշակեց որ Ազգը բնական օրէնքով միայն պիտի կառավարուէր. բաժնեց Եկեղեցի ի Պետութենէ, արգիլեց քահանայից վարել պաշտօննին առանց Տէրութեան կամաց և յափշտակեց վանքերու կալուածները: Քիչ վերջը մատնութեամբ բռնուեցաւ Արպողէտա և սպանուեցաւ, ապա յաջորդեցին ուրիշ բազմաթիւ նշանաւոր քաղաքացւոց սպանութիւնք: Մոսքուէրա 18 ամիս լիազօր դիկտատորութիւն վարելէն յետոյ Սաճմանադիր ժողովք մը գումարեց, որուն յանձնեց իւր պաշտօնը և որովհետև ըստ Սաճմանադրութեան չէր կրնար կրկին ինքը ընտրուիլ անմիջապէս, իւր տեղը ընտրուեցաւ Մանուէլ Մուրիլլօ Գորօ: Սակայն յուզմունք և քաղաքական կռիւք կը սաստկանային Գաշնակցութեան ամէն կողմ ի Մակտալէնա, ի Պուլիվար և մանաւանդ ի Փանամա, որ կուգէր ձեանալ անկախ հասարակապետութիւն մը: Մուրիլլօ չէր կրցած հանդարտեցնել, երբ թողուց իւր իշխանութիւնը և որուն տեղը անցաւ դարձեալ Մոսքուէրա եօթանասուն և չորսամեայ: Նախագահը որ արդէն վատահ էր ժողովրդեան լիովին համակրանաց վրայ, կրկին ձեռք առաւ դիկտատորութիւնը և արհամարհեց Սաճմանադրութիւնը զոր ինքը գծեր էր և ջանաց Գաշնակից Նահանգաց ինքնիշխանութիւնը բառնալ որոնք անդէն ապստամբեցան: Կողոպտեց բոլոր եկեղեցիները և 1867 Ժողովք մը դումարելով ոչնչացուց առանց իրեն հուշակեալ հրովարտակք: Սակայն երբ Ժողովքը Ելեմտից հաշիւ պահանջեց, Մոսքուէրա ծանոյց որ բնաւ անոր մտիկ ընող չէր և հրամայեց կարանաւորել զՄուրիլլօ, որ ապստեցաւ փախստեամբ Գաղղիոյ հիւպատոսարանը: Այն ատեն ժողովքը քուէարկեց ըստ կամաց Մոսքուէրայի, որ ի նշան այս հաշտութեան, յաղթական շրջան մը ըրաւ Պահօդայի փողոցներուն մէջ շրջապա-

1862

1864
Ապրիլ1866
Ապրիլ

1867

տեալ բոլոր երեսփոխաններէ ամենն ալ չքազգեստնե-
րով: Սակայն գժտութիւնը նորէն ծնաւ ժողովքին մէջ,
զոր Մուքուէրա ուզեց ցրուել և հրացանի բռնել չորս
ազգեցիկ երեսփոխանք: Վերջապէս Ագոստա զօրա-
վարը Մայիս 22ին գիշերը զինքը յանկարծակի կա-
լանաւորեց և բանտ ձգեց: Ապա իւր դատաստանը
եղաւ իբրև բռնակալ, յափշտակիչ. և պաշտօնանկ ըլ-
լալով չորս տարուան աքսորի դատապարտուեցաւ: Մու-
քուէրա մեկնեցաւ ի Լիմա. իւր կողմնակիցք հպա-
տակեցան և առ ժամս տիրեց հարդարտութիւն մը:
Կուտիէրէզ առաջին փոխան-նախագահը՝ նախագա-
հութեան պաշտօն վարեց և 1868ի Ապրիլ 1ին նոր
նախագահ ընտրուեցաւ զօրավարն Սալկոր:

4. Միացեալ Նիսիանգք Վէնէցուէլայի: — Վէնէ-
ցուէլա ինքնին միայնակ երկու անգամ մեծ է իբրև
գՊաղղիա, ունենալով սակայն 1,300,000 բնակիչք
խառն սպանիական և հնդկային ցեղերով: Պոլիվարի
մահուընէն վերջը առաջին նախագահն եղաւ Փաէզ, որ
հաւասարութիւն հրատարակեց ժողովրդեան դասուց
մէջ և յառաջ մղեց երկրագործութիւնը և արհեստք:
Յամին 1835 իւր պաշտաման ժամանակը լրանալով ի-
րեն յաջորդեց Յոզէ Վարկաս և կրկին Փաէզ յամին
1839, ապա յամին 1842 Սուպլէդ: Վէնէցուէլա այս
Նախագահութեանց միջոց խաղաղութեամբ և հան-
դարտութեամբ կրցաւ զբաղիլ երկրին յառաջադիմու-
թեանց: Սակայն յամին 1846 քրէոլներուն և բնիկ-
ներուն մէջ քաղաքական կռիւ մը ծագելով, Փաէզ
դիկտատորութիւնը ձեռք առաւ և խռովութիւնը ընկ-
ճելէն վերջը Յունուարի մէջ նախագահ ընտրել տուաւ
զԹադէօ Մոնակաս, որ երկու տարի պաշտօն վարեց.
և ապա երբ իր յաջորդը ընտրուեցաւ, ջանաց զնա
պաշտօնանկ ընել, որով բռնուեցաւ, բանտ դրուե-
ցաւ ի Քարաքաս, ուսկից փախաւ ի Նիւ Եորք: Նոր
ընտրութեամբ Մոնակասի եղբայրը նախագահ ըլլա-
լով Թադէօ դարձաւ ի Քարաքաս և երկու եղբայրք
տասը տարի բռնութեամբ պահեցին նախագահութիւ-
նը իրենց ընտանեաց մէջ, մինչև 1858ի Մարտ 18ին

1851

1817

1858

յեղափոխութիւն մը ծագելով, Առժամանակեայ իշխանութիւն մը կազմուեցաւ որուն գլուխ դրուեցաւ Գասդրօ և սա պաշտօնանկ ըրաւ Մոնակաս ցեղը և ետ կանչեց անոնց աքսորածները :

Գասդրօ ազնուապետական մասին վրայ յենլով ժողովքը գումարեց ՍաՀմանադրութեան մէջ փոփոխութեանց համար : Ապա ուսմակապետականաց կողմը հակեցաւ, յետոյ Գաշնակցականքը պաշտպանեց, որով ոչ մի կողմ գոհացուց և կուսակցութիւնք մէջերնին մրցելով և կուտելով երեք տարուան մէջ չորս նախագահ փոխեցին : Փաէզ զօրավարը կանչուեցաւ Նիւ Եորքէն ուր ներկայացուցիչ էր իւր հայրենեաց, բանակին գլուխ կենալու և կարգաւորելու զՎէնէցուէլա, բայց չկարենալով համաձայնիլ Նախագահին հետ, հրաժարեցաւ : Ապա կրկին կանչուեցաւ բանակին գլուխ դիկտատորութեան պաշտօնով, զօրօք ուզեց նուաճել Գաշնակցականքը որոց գլուխ էր զօրավարն Յուզէ Ֆալքոն : Սակայն իւր գնդապետքը հակառակորդին կողմը անցան : Վերջապէս Փաէզ ածեսաւ յետ երկար ջանից որ անհնար էր յաղթել Գաշնակցականաց, Մայիսի մէջ բանակցութեան մտաւ անոնց հետ որով ժողովք մը կազմեալ երկու կողմանէ պիտի կառավարէր երկիրը և երկու գլուխները պիտի հրաժարէին : Անմիջապէս ժողովքը սու ժամանակեայ նախագահ անուանեց զՖալքոն, որ Սահմանադիր ժողովք մը գումարեց Ինկտեմբեր 24ին և Սահմանադրութիւն մը կազմեց Հիւսիսային Միացեալ Նահանգաց կարգաց վրայ, ունենալով հիմն Գաշնակցական դրութիւնը :

Այսպէս տաանեութ վիճակաց անկախ վարչութեամբ Գաշնակցական Հասարակապետութիւն մը կը կազմէին՝ « Միացեալ Նահանգք Վէնէցուէլայի » յորժոյժմամբ, ունենալով մէկ միայն Նախագահ ի Քարաքաս և բարձր Ատեան մը հինգ ընտրելոց դատելու որ և է խնդիր մը ընդ նահանգ և ընդ նահանգ : Զինուորութիւնը մի էր որուն կը մասնակցէր ամենայն նահանգ ըստ մարդաթուի : Նախագահը ունէր իւր պաշտանեայքը, և ինքը կ'անուանէր իւր ներկայացուցիչ-

քը: Մահուան պատիժը վերցուեցաւ, գերութիւնը ջնջուեցաւ, սպիտակք և սեւաւք հաւասարապէս կրնալին հասնիլ պաշտամանց. Ազատութիւն տպագրութեան, և Կրթութիւնը ստիպողական և ձրի: Սակայն այսպէս բազմաթիւ փոքր պետութեանց դաշնակցական վարչութիւնը, ունեցաւ յապագային իւր անտեղութիւնքը և ընդդիմութիւնքը:

5. Մրացեալ Նախանգք Էքուադորի: — Յամին 1831 երբ Գուլումպիոյ Հասարակապետութիւնը լուծուեցաւ, Էքուադոր առանձին ինքնիշխան Հասարակապետութիւն մը ձևացաւ, իրեն նախագահ ընտրելով զՅուան Բոգէ Տլորէս, Պոլիվարի Ազատարարին հաւատարիմ զինակիցներէն մին: Ինքը պահպանողական ըլլալով միշտ բռնադատուեցաւ մրցիլ սոցատական կուսակցութեան հետ, որոյ գլուխն էր Վիլչէնդէ Ռաքա-Տուէրդէ: Յամին 1834ի Քուիդոյի մէջ յեղափոխութիւն մը ծագելով, Տլորէս աքսորուեցաւ. բայց ապա յաղթանակելով դարձաւ և գերի բռնեց իւր հակառակորդը: Յամին 1835 մէջերնին հաշտութիւն եղաւ և ժողովքը գումարուելով Սահմանադրութիւն մը հռչակուեցաւ նման Միացեալ Նահանգաց: Ռաքա Տուէրդէ նախագահ ընտրուեցաւ և Տլորէս ընդհանուր հրամանատար բանակին: Անկէ վերջը շատ տարիներ փոփոխակի մէկմէկու յաջորդեցին ի նախագահութեան Տլորէս և Ռաքա Տուէրդէ և երկուքն ալ ջանացին երկրին յառաջադիմութեան համար. և վաճառականական դաշինք դրին ընդ Սպանիոյ՝ իրենց մայր հայրենիքը: Յամին 1845 Մարտ 5ին Տլորէս նախագահ էր երբ ազատականք կրկին յեղափոխութիւն մը յարուցին յանուն Ռաքա Տուէրդէի, բայց նախագահ ընտրուեցաւ երրորդ մը՝ Վիլչէնդէ Ռաքա: Տլորէս համոզուեցաւ որ ընդհանուր սպարապետի տիտղոսով և թոշակով հեռանայ Քուիդոյէ, բայց յետոյ փափագելով նախագահութիւնը ձեռք բերել, դիմեց օտար օգնութեանց: Այն ատեն Ռաքա Տուէրդէ զրկուեցաւ ի Փէրու օգնութիւն ուզելու այսպիսի արչաւանքի մը դէմ: Ռաքա Տուէրդէ հասնելով ի Լիմա հոն մեռաւ, կտակե-

1835

1845

1847
Մայիս 7

լով իւր հայրենեաց՝ ճոխ գրատուներ: Իւր մարմինը իրեն արժանավայել չքեղութեամբ փոխադրուեցաւ ի Կուսայանաքուիլ Ֆլորէս չկրցաւ յաջողիլ իր խորհրդոց մէջ և Ռոբա Նախագահ միաց մինչև 1849: Իւր իշխանութեան ժամանակ վաճառականական դաշինք մը դրաւ Պէլճիոյ հետ և ուրիշ մը Անգղիոյ հետ գերութեան բարձման համար: Իւր յաջորդին ընտրութեան ժամանակ զօրացան կղերականք, որոնք յաջողեցան նախագահ ընել իրենց ընտրելին Տիէկօ Ռոպօս՝ որ Յիսուսեանքը կոչեց և ապաւէն տուաւ Նոր Կրանադայի փախստական պահպանողականաց: Նոր Կրանադա սպառնացաւ պատերազմ յարուցանել և ազատական մասը զօրանալով յԱքուադորէ 1851ին բռնեց և աքսորեց զՏիէկօ: Զօրավարն Յոզէ Մարիա Ուրպինա ազատականաց գլուխը՝ նախագահ և դիկտատոր անուանուեցաւ, որ իւր աթոռը դրաւ ի Կուսայանաքուիլ: Պահպանողականաց և կղերականաց զայրոյթը և յուզումը ուզելով առնուլ իրեն ի նպաստ հին նախագահն Ֆլորէս՝ 1852ի Մարտին նաւատորմաւ երևցաւ Կուսայանաքուիլի դիմաց զՌոպօս կրկին Նախագահ հաստատելու դիտմամբ. բայց երբ իւր նաւաստիք զինքը ուզեցին թողուլ, այն ատեն կրկին փախաւ և հաստատուեցաւ Ուրպինայի իշխանութիւնը: Սակայն իւր յաջորդը եղաւ Ռոպէա որուն ժամանակ Փէրուի հետ պատերազմ ծագեցաւ սահմանազիխոյ վրայ քսնի մը կտոր հողերու համար և Փէրուի վարչութիւնը եկաւ պաշարեց զԿուսայանաքուիլ: Մինչ Ռոպէա և Ուրպինա բանակին գլուխ անցած պատերազմելու կը պատրաստուէին, Ֆրանքօ զօրավարը ուղղակի դաշամբ փէրուցի հրամանատարին հետ, վերցնել տուաւ պաշարումը: Ռոպէա և Ուրպինա յանձն չ'առին պայմանքը, բայց և Քուիդոյի և Կուսայանաքուիլի մէջ ապստամբութիւն ծագելով իրենց դէմ, ստիպուեցան փախչիլ: Ազատականք նախագահ ընտրեցին ըզ-Ֆրանքօ զօրավարը որ նստաւ ի Կուսայանաքուիլ և պահպանողականք զԿարչիա Մորէնօ՝ Ֆլորէսի փեսայն, որ նստաւ ի Քուիդոյ: Ֆլորէս կանչուեցաւ բանակին գլուխ և ծեր զօրավարը յաղթելով Ֆրանքոյի մտաւ ի

1859
31 Օգ.Սեպտ.
14

Կուլյանաբուհի, այն ատեն Նոր Ժողովքը զգիտնականն
 Կարչիա Մորէնո Նախագահ ընտրեց: Յետոյ Ֆլորէս
 դարձուց իւր զէնքերը և արչաւեց այն երկիրներուն
 մէջ, զորս Փէրու իրեն կ'ուզէր համարիլ: Ասկէ վեր-
 ջը բաւական ժամանակ իշխանութիւնը մնաց պահպա-
 նողականաց ձեռքը: Մորէնո հմուտ պատմաբան և
 միանգամայն չափաբան, խաղաղութիւնը իրեն նպաստ
 առաւ երկիրը բարւոքելու, ճամբաներ բանալու և դըպ-
 րոցները զարգացնելու: Սակայն ազատականք, որոնք
 շատ դժուարութեամբ կը տանէին Մորէնոյի պահպա-
 նողական վարչութեան, ամբաստանութիւն յարուցին
 վրան իբրու թէ զԼքուադորէ կուզէ յանձնել Քաղզիա-
 ցուոց, առ այս մղուելով եւրոպական միջամտութենէ
 ի Մեքսիքոյ, սակայն Մորէնո այսպիսի իր մը երբէք
 կարող չէր խորհել: Ազատական մասը իբր յուզեալ
 այս հնարեալ ամբաստանութեան վրայ դիմեց դրա-
 ցի եղբարց և Մուքուէրա Նոր Կրանատայէն եկաւ
 բանակով մը ազատելու « ռամկապետական եղբարքը,
 ուսուցիչ Մորէնոյի աստուածպետական լուծէն »: Նա-
 խագահը որուն համամիտ էին Խորհրդարանք, զհայ-
 րենիս ի վտանգի հրատարակեց: Եւրն Ֆլորէս 6000
 հոգևով բանակի մը զլուխ անցաւ և Քուասիուտի քով
 Գեկտեմբեր 6ին արիւնահեղ պատերազմ մը եղաւ, յո-
 րում Լքուադոր կորսնցուց 1500 անձինք բաց 2000
 վիրաւորաց և գերեաց: Սակայն յաղթութենէն վեր-
 ջը Մուքուէրա վեհանձնութեամբ շարժեցաւ և խաղա-
 ղութեան դաշինք միայն դնելով, առանց ուրիշ պայ-
 մանաց իրեն երկիրը քաշուեցաւ: Մորէնո այն ատեն
 հրաժարեցաւ իւր Նախագահութենէն, սակայն
 ժողովքը 1864ի Մարտին կրկին զինքը ընտրեց: Քիչ
 վերջը ծագեցաւ Սպանիոյ և Փէրուի մէջ պատե-
 րազմը, յորում Մորէնո Սպանիոյ կողմը բռնեց հա-
 կառակ միւս ամէն Հասարակապետութեանց: Փէրու-
 ցիք յայնժամ օգնեցին ազատական Ուրպինայի, կրկին
 փորձել Նախագահութիւնը ձեռք բերելու: Եւրն Ֆլոր-
 րէս կը պատրաստուէր զօրօք վրան դիմելու, երբ մե-
 աւ ի Կուլյանաբուհի: Ուրպինաս չկրցաւ յաջողիլ,

բայց և Մորէնօ չկրցաւ մնալ ընդերկար ի նախագահութեան: Այսու հանդերձ կրկին ուրիշ պահպանողական մը ընտրուեցաւ Յերոնիմօ Քարրիօն որ Ամերիկայի Հասարակապետութեանց համակրութիւնը և նեցուկը ստացաւ Փէրուի կողմը բռնելով ընդդէմ Սպանիոյ եղած պատերազմին մէջ: Սակայն Քարրիօն իւր նախագահութեան ժամանակ վարչութիւնը թողուց Պուսդամէնդէի ձեռքը որ Ժողովքին սանդխոց վրայ ինքնահրաման կալանաւորել տուաւ իրեն հակառակորդ երկու ատենակաք. և երբ այս անիրաւութեան դէմ բողոքեց Ժողովքը, Քարրիօն և Պուսդամէնդէ ուզեցին զայն ցրուել: Այն ատեն Մորէնօ անցաւ բանակին գլուխ և Ժողովքը հրատարակեց զնախագահը անարժան իւր աթոռոյն և անկեալ ի պաշտամանէն: Քարրիօն հպատակելով հրաժարեցաւ և նախագահ ընտրուեցաւ Էսփինոզա:

1863
Մ-սի-1868
29 Յ-վ.

6. Հասարակապետութիւն Փէրուի:— Յամին 1821ի Դեկտեմբերի 9ին Այաքուքոյի յաղթութեամբ Պոլիվար բոլորովին ազատած էր զՓէրու ի Սպանիացւոց և 1826ի նոյն յաղթութեան տարեդարձին, բովանդակ Փէրուի ժողովուրդը կ'երդնուր իւր Ազատարարին տուած Սահմանադրութեան վրայ: Այսու հանդերձ դժուարին էր անդէն սահմանադրական վարչութեամբ կառավարուիլ. մօտ քսան տարի երկիրը շարունակ շփոթից մէջ էր կուսակցութեանց գլխաւորներու պատճառաւ, որոց իւրաքանչիւրը կ'ուզէր ինքը իշխել անձնական՝ շահերու նպատակաւ. և մինչև 1840 Փէրու ասպարէզ մ'էր քաղաքական պատերազմի, յորում զիւցազնական անունն ձգած է նաև մանկամարդ տիկին մը Տոննա Չիփրիանա Լագորրէ, ամուսին Վիվանքօ հազարապետին, որ ձիու վրայ աշտանակեալ դիմեր էր բանակը և ամենը հիացեալ իւր արութեանը և գեղոյն վրայ երգուընցեր էին իրեն հետ դիմել մինչև ի մահ և Տոննա Չիփրիանա զօրաց գլուխ՝ մըտնելով յաղթանակաւ ի Լիմա, հոն իւր ամուսինը Վիվանքօ հազարապետը՝ իշխանապետ հաստատել էր: Այսպիսի զարմանալի և վիպասութեանց արժանաւոր

Նախագահութեան մը առաջին օրերը սահեցան մեծ հանդէսներով և զուարճութեամբք. ապա յաջորդեցին նշանաւոր քաղաքացւոց տարապրութիւնք, յորս էր և զօրավարն Ռոմոն Քասդիլլա, որ ապա բանակ մը գումարելով եկաւ Վիլիամսթրոյի վրայ: Յետինս ևս բանակով ընդ առաջ գացեր էր Քասդիլլայի, երբ Տոմինկո Էլիաս անուամբ հարուստ մը մտնելով Նախագահութեան Պալատը սակաւ կողմնակցօք, ինքզինքը նախագահ հռչակեց. սակայն ոչ ոք ընդունեցաւ զինքը: Քասդիլլա ամէն կողմ յաղթանակեց և Ժողովքը միաբան զինքը ընտրեց Նախագահ Օգոստոս 19ին: Անկէ վերջը Փէրու հանդարտեցաւ և կառավարութիւնը հաստատուն ձև մը առաւ. բարեկարգեցաւ ելեմուտքը և վաճառականութիւնը, բանակը կանոնաւորեցաւ, նորանոր ճամբաներ բացուեցան և առաջին անգամ երկաթուղին մտաւ ի Փէրու, զլիմա մայրաքաղաքը միացնելով Քալլասոնաւահանգստին հետ: Յամին 1851 Քասդիլլա յետ Ժողովքին դիմաց հաշիւ տալու Հասարակապետութեան վիճակին վրայ, իշխանութիւնը յանձնեց իւր յաջորդին որ էր տօն Յոգէ Ռուֆինօ Էքէնիքուէ: Սա քաջ զօրավար քան հանդարտ նախագահ, պատերազմ յարոյց ընդդէմ Միացեալ Նահանգաց Լոպոս կղզւոյն համար զոր իրեն կուգէր զրաւել Ուոշինկթոնի վարչութիւնը: Սակայն խնդրոյն մէջ միջամտեց Գաղղիա և համոզեց Միացեալ Նահանգաց վարչութիւնը զԼոպոս կղզին հարուստ շտեմարան կոչելու թողուլ Փէրուի Հասարակապետութեան: Էքէնիքուէ անկէ վերջը մեծ խնամք տարաւ վաճառականութեան և առանձին գաշինք մը դրաւ նաև Պրագիլի հետ: Սակայն Տէրութեան պարտուց շահը նուազեցնելուն պատճառաւ ասպետամրութիւն մը ծագեցաւ, որուն զլուխ կեցաւ Ռոմոն Քասդիլլա: Էքէնիքուէ թողուց զլիմա. և Քասդիլլա կամ մեծ մարաջատր, ինչպէս կոչած են զինքը իւր հայրենակիցք, նախագահ անուանուեցաւ, որ ուզեց Սահմանադրութեան

1844
17 Յունիս

1845

1889

1860

1. Կուանօ կամ հուանօ՝ ծիրտ ծովային թռչնոց, Ամերիկայի ծովափանց մեծ հարստութիւնը կը կազմէ:

մէջ փոփոխութիւնք մտցնել: Սակայն Քասդիլլա իւր հակառակորդքը վրէժխնդրութեամբ հալածելուն պատճառաւ իր կենացը դէմ դաւ մը ունեցաւ: Գնդակին հարուածը միայն զթեւը վիրաւորեց: Քասդիլլա շատ անձինք աքսորեց յորս նաև զԼքէնիքուէ, որ բանակով մը եկաւ Լիմայի վրայ, բայց բռնուեցաւ և կրկին աքսորուեցաւ: Յամին 1861ի նախագահական ընտրութեան ժամանակ Քասդիլլա իւր ազգակիցքը յառաջ մղեց, որուն և մեծագոյն ազդեցութիւնը պահեց: Հաստատեց ի Լիմա Անկախութեան Պաշտպան ընկերութիւնը, որուն կը ջանար մասնակից ընել բովանդակ Հարաւային Հասարակապետութիւնք, և Մեքսիկոյի խընդրոյն մէջ օգնութիւն խոստացաւ Յուարէզի: Սան Ռոման և Յուան Փէզէզ Նախագահներուն ժամանակ երկիրը վաճառականական մեծ օգուտներ ունեցաւ, երկաթուղւոյ դժեր շինուեցան, հանքերը սկսան պեղուիլ և Փէրու բարգաւաճ երկիր մը դարձեր էր երբ վրայ հասաւ Փէրու.—սպանիական պատերազմը:

Սպանիա երբէք չէր ուզած ճանչնալ Փէրուի անկախութիւնը: Յամին 1864 Մարտի մէջ շատ մը փոխարինմունք և տուգանք պահանջելու համար յանկարծ Տոն Եւզէպիօ Սալազար ի Մազարէտոյ, սպանիական բարձր Նուիրակ տիտղոսով, նաւատորմաւ մը որուն կը հրամայէր Փինզոն ծովակալը, իբր գրաւական մը եկաւ բռնեց Քինքա կղզիները որոնք Փէրուի կը պատկանէին և որուն կոտորածով վաճառումը տարին Պետութեան կը բերէր եօթն միլիոն փիասոյրա: Սպանիացւոց յանկարծական այս արշաւանքը մեծապէս վրդովեց Փէրուի ժողովուրդը որ ամէն կողմ պատերազմ կը գոչէր. սակայն Պաշտօնարանը և նախագահ Փէզէզ զիտնալով որ չեն կարող մրցիլ սպանիական նաւատորմի մը հետ, ուզեցին բանակցութեան մտնել սպանիական հրամանատարին հետ: Հրամանատարը ասկէ աւելի խրախուսեալ դիմեց ի Քալլաս և սպառնացաւ ոմրակոծել զքաղաքը թէ չկատարեն իւր պահանջները: Գաղղիա և Անգղիա պարտաւեցին յայտնապէս Սպանիոյ գործելուն եղանակը, բոլոր Ամերի-

1864

1865

Յունուար

կա յուզուեցաւ, Փէրուի ժողովուրդը ուրք ելաւ և պատերազմի կ'ուզէր, Քասդիլլա գլուխ կեցաւ, բայց բռնուելով պատրուեցաւ: Բայց Փէզէդ ևս նախագահը տեսնելով որ իրեն դէմ դաւեր կը պատրաստուին իբրև մատնիչ հայրենեաց, թողուց Լիմա և ապաւինեցաւ անգղիացի շոգենաւ մը: Սակայն Քանսէքօ իւր փոխանորդը և յաջորդը ևս ուզելով Սպանիացւոց հետ յարմարութեան մը գալ, ինքը ևս ստիպուեցաւ հրաժարելու ժողովրդեան յուզումը տեսնելով, որ զհազարապետն Փրասօ դիկաստոր անուանեց և վճռուեցաւ պատերազմի: Անդէն Հասարակապետութիւնը դիմեց առ Քիլի և անոր հետ դաշինք դնելով պատերազմ հրատարակեց Սպանիոյ: Քիչ վերջը միաբանեցան նաև օգնելու Պոլիվիա և Լքուալորէ: Սպանիացի ժովակալն Փարէյա անձնասպան եղեր էր ի Քիլիցւոց կըրած վնասուն համար և իւր յաջորդը ժովակալն Նունէզ յետ բաղխելու Անքուտի ծոցին մէջ Քիլի-Փերուական նաւատորմիդը և յետ ուժակոծելու զՎալիարայիգօ, ուզեց տիրել Քալլաոյի որ է նաւահանգիստ Լիմայի: Չորս ժամ ուժակոծեց քաղաքը որ լաւ պաշտպանեալ էր, սակայն վիրաւորուած ըլլալով և իւր նաւերը վնասուած, ետ քաշուեցաւ և թողուց Փէրուի, Քիլիի ժովափունքը: Ժողովուրդը մեծ յաղթանակաւ ընդունեցաւ զՓրասօ զոր համաձայնութեամբ նախագահ ընտրեց և Յունիսի մէջ Փէրուէն և Պոլիվիայէն արտաքսուեցան բոլոր ըսպանիացիք: Քիչ վերջը պատահեցան այն ահաւոր երկրաշարժք որոնք աւեր և կործանումն բերին Փէրուի և մանաւանդ Լիմայի՝ անթիւ վնասիւք անձանց և հարրստութեանց, որոց հետեանքը շատ տարի կրեց Փէրու:

1865
2 Դեկտ
1866
31 Մարտ
1866
Մայիս

7. Հասարակապետութիւն Պոլիվիայի: — Ոսկւոյ և արծաթի հանքերով լցեալ այս հարուստ երկիրը իր անկախութիւնը ստացեր էր, միւս Հասարակապետութեանց նման, Պոլիվարի և Սուքրէ գորավարին ձեռք: Հոս ևս ի սկզբան եղան կուսակցական կռիւներ: Բամին 1829ի Յունուար ին ժողովրդեան ապստամբութիւն մը սպաննեց զՊլանքօ նախագահը յաջորդ Սուքրէ գորավարին. և վարչութեան գլուխ անցաւ ի

1826

- 1831
21 Յուլիոս Բուհբուհարա՝ զօրավարն Սանդա Քրուզ, որուն օրով առաջին անգամ բացուեցաւ Օրէնսդիր ժողովքը. երկիրը խաղաղեցաւ և դրամական, զինուորական բազում յառաջագիմութիւնք եղան: Երբ յամին 1835, ի Փէրու կուսակցութիւնք փոփոխակի մէկգմէկ կը յօշոտէին, Սանդա Քրուզ գնաց իբրև խաղաղարար և տիրելով Փէրուի զայն երկու մաս բաժնեց Հարաւային և Հիւսիսային մի և նոյն սահմանադրութեամբ և կեդրոնական վարչութեամբ մը որուն ինքը կ'ըլլար խնամակալ. և այդ երկու Նահանգները միացնելով Պոլիվիայի հետ, կը կազմէր Փէրու-Պոլիվիական Իաշակցութիւնը: Սակայն այս միութիւնը ունէր իր հակառակորդքը երկու երկիրներուն մէջ ալ: Ի Փէրու կամարրա զօրավարը ապստամբութեան զուլի կենալով, յաղթեց Եունկայի քով: Ի Պոլիվիա ևս Սանդա Քրուզի դէմ ելլելով զօրավարն Վէլասքօ, Սանդա Քրուզ թողուց զՊոլիվիա: Կամարրա օգտուելով ի Պոլիվիա եղած անմիաբանութենէն, գնաց տիրեց Լափազ հարուստ երկրին Տիտիքաքա լճին վրայ: Պոլիվիացիք զՊոլիվիան զօրավարը նախագահ անուանեցին որ պատերազմաւ մը ի Փամփա տի Յուկավի, յորում մեռաւ նաև Կամարրա, մտաւ յաղթանակաւ Փէրուի սահմանքը և հաստատեց նախկին կարգադրութիւնքը: Սակայն Պոլիվիանի դէմ ալ եղան ապստամբութիւնք. Սանդա Քրուզ դարձաւ և ջանաց ձեռք բերել իշխանութիւնը, բունուցաւ և Քիլի զրկուեցաւ, ապա Վալասքօ պաշտօնանկ ըրաւ զՊոլիվիան՝ տեղը անցնելով, զինքն ալ պաշտօնանկ ըրաւ Պէլցու: Բետոյ զինուորական ապստամբութիւն մը զինքն ալ պաշտօնանկ ըրաւ. այսպէս յետին շիփութիւն և անիշխանութիւն տիրած էր երկրին մէջ, մինչև որ ուսուցիչն Լինատէս որ շատ մը ապստամբութեանց մասնակցեր էր, ինքզինքը դիկտատոր հրատարակեց: Սակայն զօրութիւն մը շունենալով հաստատուն մնալու, յետ բազում շիփից իւր հակառակորդք զինքը պաշտօնանկ ըրին և զօրավարն Քորտովա Նախագահ կարգեցին Հասարակապետութեան, զոր և քանի մը ամիս վերջը վանեց Բոգէ Մա-

1854
Յուլիոս 21

1848

1858

1861

րիա տէ Աքա . սա ևս իմանալով թէ իրեն դէմ ևս դաւ կը պատրաստուի մէկ գիշերուան մէջ 106 անձինք հրացանի բռնեց յորս նաև Քորտովա զօրավարը և նշանաւոր քաղաքական և զինուորական պաշտօնակալք : Յայնմհետէ ևս եղան դաւեր Աքայի դէմ, զորս ամենն ալ ընկճեց և յամին 1863 հաստատուեցաւ Նախագահութեան մէջ : Վաճառականական դաշինքներ դրաւ շատ պետութեանց հետ և երկիրը բարւոքեց : Հազիւ քիչ մը խաղաղութիւն տիրեբ էր երբ նախկին նախագահ Պէլցու սպասամբութիւն յարոյց : Աքա յաղթուեցաւ, բայց և Պէլցու իւր յաղթութեան պտուղը չկրցաւ քաղել, Մալկարէյո հազարապետը ինքզինքը նախագահ հրատարակեց և Պէլցու պատերազմով ուզելով մրցիլ, սպանուեցաւ : Մալկարէյո յաղթանակելով բոլոր իւր հակառակորդաց վրայ նախագահ ընտրուեցաւ ի Պոլիվիա 1869ի Փետրուարի մէջ :

1865

8. Քիլիի Հասարակապետութիւնը : — Սպանիայէն ազատեալ գաղթականութեանց մէջ Քիլի միայն յետ նախկին յուզմանց որոնք անհրաժեշտք էին վարչութեան մը կազմուելուն և որոնք տևեցին մինչև Տէրէյրէ զօրավարին արտաքսումը, հանդարտ և խաղաղ հասարակապետական վարչութիւն մը ունեցաւ, շնորհիւ թերևս իւր հանդարտաբարոյ ժողովրդեան, որ նմաւ նութիւն կը կրէ եւրոպական ցեղերու ամենայնիւ և առաւել համեմատուած է Անգղիացւոց, որոց նման լուրջ վաստակելով երկրին թէ քաղաքագիտական և թէ նիւթական յառաջադիմութեանց, լաւ ապագայ մը բերած է իւր հայրենեաց : Երկիրը ի բնութենէ արդէն հարուստ հանքերովը, ժողովուրդը իւր զործունէութեամբ առաւել զայն արգասաւոր բրած է : Քիլի ևս Հասարակապետութիւն մը ունէր նման Միացեալ Նահանգաց և նախագահութեան աթոռն էր ի Սանդիակօ, ուր կը կը հաւաքէին Ժողովք և Խօսարանք, յորում կային երկու միայն կուսակցութիւնք՝ Պահպանողական և Ազատական, որոնք կը մրցէին մէկմէկու հետ սրինաւոր միջոցներով՝ միայն հայրենեաց մեծագոյն օգտին համար : Երբ զօրավարն Սանդա Քրուզ Պոլիվիոյ

1837

1839

Հետ միացուց զՓէրու, կուզէր զՔիլի ևս ենթարկել իր իշխանութեան, ուր զինքը կը հրաւիրէր Ֆէրէյրէ երբեմն դիկտատոր Քիլիի: Քիլի երկու տարի կռուելով յաղթանակեց և այնքան զօրաւոր և յարգելի եղաւ որ Սպանիա ճանչցաւ անոր անկախութիւնը և հետը վաճառականական դաշինք դրաւ: Քիչ վերջը նոյնը փափագեցան Պելճիա և Գաղղիա: Այս ամէն յառաջադիմութեանց մէջ մեծ արդիւնք ունեցաւ նախ Փրիէդօ նախագահը, ապա զօրավարն Պուլնէս, որ աւելի ընդարձակեց վաճառականական յարաբերութիւնքը: Երբ Պուլնէսի նախագահութեան ժամանակը լինցաւ, Ժողովքը երախտագէտ այսպիսի պահպանողական յառաջադէմ վարչութենէ մը նորէն գինքը ընտրեց մինչև 1851: Եւ որովհետև Նախագահութիւնը մի անգամ միայն կրնար կրկնուիլ, երկրորդ անգամ աւարտելուն յաջորդեց իրեն Մանուէլ Մոնթ որ թէպէտ ազատական սակայն հետևեցաւ իր նախորդին շաւղաց և զնա ընտրեց ընդհանուր հրամանատար բանակին: Մանուէլ Մոնթի Նախագահութիւնը բազմաբեղուն եղաւ նոր Օրինաց գիրք մը հաստատուելուն, Երկաթուղեաց շինութեամբ, Աւանդոց և Զեղջի դրամատանց բացուելով և վաճառականական շահաւէտ դաշամբ Անգղիոյ հետ: Երբ իր իշխանութեան ժամանակը աւարտեցաւ. Ժողովքը կրկին զինքը ընտրեց հինգ տարուան համար: Ի Վալփարայիգօ նորադանդ մատրան մը հաստատութեան համար ծայրայեղ պահպանողականք յուզմունք յարուցին, սակայն նախագահը կրցաւ հանդարտեցնել, ինչպէս նաև զինուորական ապստամբութիւն մը, որուն զլուխ էր զօրավարն Վիտաւրի: Եւ որ մեծագոյն է՝ իր քաղաքական հակառակորդքը համոզեց որ սպասեն հանդարտութեամբ մինչև նոր ընտրութեանց ժամանակ, յորում կրնային օրինաւորապէս իրենց կարծիքները յաղթանակել տալ: Նոր ընտրութիւնք եղան յամին 1861 Յուլիսի և ընտրուեցաւ ուրիշ խոչական անձ մը Յոպէ Յոչաքին Փէրէզ, որ 1851 է ի վեր եղած ամէն քաղաքագիտական յանցաւորներու ներումն շնորհեց, և նոյն իսկ զինուորա-

կանաց, որոնք մասնակցած էին, իրենց աստիճանները շնորհուեցան: Արակուանի հնդիկ հին ցեղը որ Հասարակապետութեան հարաւային կողմը կը բնակէր և կը զբաղէր առաւել երկրագործութեան և որսորդութեան, ապստամբեցաւ Քիլիի իշխանութենէն առջնորդութեամբ Իոնան տը Փէրիկէս գաղղիացւոյն զոր իրենց «Թագաւոր» կոչեցին, բայց յաղթուեցան:

Ինչպէս տեսանք Քիլի օգնեց Փէրուի՝ Սպանիոյ դէմ պատերազմին մէջ. Սպանիացիք յետ տիրելու Քինքաս կղզւոյն, պաշարման վիճակի մէջ դրին նաև Քիլիի նաևահանգիստքը: Բայց որովհետև ասկէ մեծ փնաս կուգար նոյն իսկ եւրոպական վաճառականութեան, Գաղղիոյ և Անգղիոյ վարչութիւնք միջամտել ուզեցին հաշտութեան մը համար: Սպանիական ծովակալը հազիւ յանձն տուաւ, բայց բանակցութիւնքը չսկսած Քիլիի պատերազմական նաւը յետ քսան վայրկեան պատերազմի մը, գերեց սպանիական մարտանաւ մը յորում կային վեց ըւպայք և 144 զինուորք: Կրնայ գուշակուիլ ի Սանդիակոյ և ամէն կողմ այս գործոյն ազդեցութիւնը և Սպանիացւոց կորանքը որոց Փարէյս ծովակալը անձնասպան եղաւ¹: Սպանիացիք վրէժ ուլեցին առնուլ հրկիզելով շատ մը առագաստաւոր քիլիցի նաւեր և Փարէյսի յաջորդը Մէնտէզ Նունէզ ոմրակոծեց Վալփարայիզօ անպատսպար քաղաքը որով փնասուեցան շատ մը քիլիցի և եւրոպացի անմեղ վաճառականք: Սպանիացիք «այս բարբարոսութեամբ շահեցան միայն, կըսէ գրիչ մը, ամօթ և անպատուութիւն²»: Տարի մը վերջը Միացեալ Նահանգաց միջնորդութեամբ, յետ զինա-

1. Մեռնելէն առաջ տոմսակ մը գրեց, ինդրելով միայն որ իր դիակը Քիլիի ծովերուն մէջ չնետեն: Քիլիի վարչութիւնը խընդրեց ծովակալին մարմինը հանգիստով թաղելու Վալփարայիզոյի գերեզմանատունը, մինչև որ ընտանիքը ապա փոխադրէ յԵւրոպա: Բայց Սպանիացիք արդէն հեռացեր և նետեր էին յովկիանոս:

2. Վէպեր Պոմ. Ժամանակակից § 266.

դադարման, Սպանիացիք փոխարինեցին Վալփարա-
յիզոյի վլասներուն:

9. Հասարակապետութիւն Արճէնդինայի եւ Պուէ-
նոս Այրէս: — Յետ Պրագիլի՝ Արճէնդինայի Հասա-
րակապետութիւնը Հարաւային Ամերիկոյ ընդարձա-
կագոյն երկիրն է. և իրեն քաղաքականութեամբ և գոր-
ծունէութեամբը, մրցող Հիւսիսային Միացեալ Նա-
հանգաց հետ. և իւր մայրաքաղաքը Պուէնոս Այրէս
գիտութեան Աթէնք մը կոչուած է. որ ծնունդ տուաւ
բազում հռչականուն մատենագրաց և բանաստեղծից:
Իւր ծովային դրութեան և Փլազա գետոյն բերանոյ
ընդարձակութեան պատճառաւ, որ մինչև 300 մէդր
ծաւալ ունի, երկիրը վաճառականական հարուստ շաե-
մարան մը դարձած է:

Յամին 1816 Գուբումանի ժողովքը հռչակեք էր « Ռիօ
տէլլա Փլազայի Միացեալ Նահանգները ». յորում կը
բովանդակէին նաև Ուրակուայ և Փարակուայ. որոնք
ապա երկիրն և գետոյն դրից պատճառաւ բաժնուելով,
առանձին Հասարակապետութիւնք եղան. և 1825 ի
կազմուեցաւ « Արճէնդինայի դաշնակցութիւնը » տասն
և չորս ընդարձակ գաւառներէ, յորս միշտ նախապա-
տութիւն մը կուգէր ունենալ Պուէնոս Այրէս. որով
սուաջին տարիներու մէջ անպակաս էր կռիւր ընդ
Միւլթրո՝ որոց նշանաւոր գլուխն էր Ռիվատավիա
և ընդ Գաշնալցոն՝ որոնք գաւառաց հաւասարու-
թիւն կը պահանջէին և իրենց գլուխ Տոն Մանուէլ
Օրդիզ տէ Ռոզաս հարուստ կալուածատէրը, յաջո-
ղեցաւ ընտրուիլ կառավարիչ Պուէնոս Այրէսի և գլուխ
Արճէնդինայի Գաշնակցութեան: Եւ այնքան զօրա-
ւոր եղաւ իւր սզգեցութիւնը որ ընտրուեցաւ այլ և
այլ անգամ: Յամին 1832 երբ բացաւ ժողովոց չըր-
ջանը, յայտնապէս հրատարակեց որ « իւրաքանչիւր
գաւառ պիտի կառավարուէր առանձին վարչութեամբ.
նուիրակ մը ունենալով Պուէնոս Այրէսի քով »: Յե-
տոյ ամէն միջոց ձեռք առաւ Միավարները ջախջախե-
լու, սպաննելով, տարագրելով բազմաթիւ նշանաւոր քա-
ղաքացիք և ահաւոր սարսափ մը տարածելով բովան-

դակ երկրին մէջ: Տասն և հինգ տարի տեւեց իր դիկտատորութիւնը, յորս իր անխոնջ ջանիւք և արթնութեամբ կրցաւ ազատ մնալ ամէն վտանգէ. միանգամայն Եւրոպիոյ Պետութեանց հետ հաստատելով օգտաւէտ յարաբերութիւնք: Սակայն երկրին մէջ ընդդիմութիւնը երթալով կը զօրանար, որուն գլուխ կեցաւ Տոն Յոգէ տէ Ուրքուիզա, որ օգնութեամբ Պրագլիլի, Ուրակուայի և Փարակուայի յաղթեց Մանդէ Քաղէրոսի քով, և Տէ Ռոզաս ընտանեօք փախաւ յԱնգղիա: Իր կալուածքը և ազարակները և անասունքը որոնք անթիւ էին, գրաւուեցան յօգուտ Պետութեան: Ուրքուիզա՝ միավարական, Պուէնոս Այրէսի վարչութեան գլուխ անցաւ, ընդունեցաւ Փարակուայի ինքնիշխանութիւնը. և Փլադա գետին օփանց ազգերուն ազատ նաւարկութիւն հաստատեց: Բայց երբ ի Սանդա Տէ Ժողովքի գացեր էր, իր բացակայութեան ժամանակ յեղափոխութիւն մը ծագեցաւ ի Պուէնոս Այրէս, վալէնդինօ Ալսինա կառավարիչ անուանուեցաւ. մայրաքաղաքին որ բաժնուեցաւ Դաշնակցութենէն և անկախ տէրութիւն մը ձևացաւ: Ի զուր ջանային միւս վիճակները համոզել զՊուէնոս Այրէս Դաշնակցութեան մէջ մնալու, և Ուրքուիզա որ արտամարտութիւնը ընկճելու գացած էր, Դաշնակցականաց կողմանէ կը խոստանար Պուէնոս Այրէսի մշտնջենաւոր քաղաքամայրութիւն, չկրցաւ ստանալ Պուէնոս Այրէսի հաւանութիւնը: Այն ատեն Արճէնդինայի Հասարակապետութիւնը իրեն ակող ընտրեց զՊայատա տէլ Փարանա. և Պուէնոս Այրէս նոր Սահմանադրութիւն մը ունեցաւ ազատ յինքեան, ունենալով պաշտպանողական դաշինք մը Արճէնդինայի Դաշնակցութեան հետ ընդդէմ օտարաց. միանգամայն ունէր իրաւունք, թէ փափագէր հինգ տարի վերջը դառնալ ի Դաշնակցութիւն: Եւ յիրաւի Միավարականք ամէն ջանքերնին յրին զՊուէնոս Այրէս նոյն իսկ բռնութեամբ մտցնել Միութեան մէջ. գաւառաց մէջ ամէն կողմն յուզումն ստարածուեցաւ և սահմանուեցաւ կամայ ակամայ ըզ-Պուէնոս Այրէս մտցնել միութեան մէջ: Երկու կող-

1852
3 Փետր.

1853

- 1839 մանէ պատերազմի պատրաստութիւնք եղան: Միավա-
րականք Ուրբուիզայի յանձնեցին զօրավարութիւնը:
Գաղղիոյ, Անգղիոյ և Միացեալ Նահանգաց ներկա-
յացուցիչք ուզեցին միջնորդութիւն մը ընել: Պուէնոս
Այրէս չ'ընդունեցաւ որ և է միջամտութիւն և Մի-
դրէ զօրավարին յանձնեց հրամանատարութիւնը, որ
- Հոկտ. 25 յաղթուեցաւ յՈւրբուիզայէ ի Չէփատա և Պուէնոս
Այրէս բռնի մտաւ Արճէնդինայի Դաշնակցութեան մէջ:
Ուրբուիզայի նախագահութեան ժամանակը աւարտե-
լով, տեղը ընտրուեցաւ Սանդիակօ Տէրբուի. և Միդրէ
զօրավարը կառավարիչ անուանուեցաւ Պուէնոս Այրէս
քաղաքին: Սակայն Պուէնոս Այրէս երբէք չէր կրնար
համոզուիլ հաւասարիլ ուրիշ գաւառաց և կը պատ-
րաստուէր ծածկապէս սպստամբութեան մը, երբ Դաշ-
նակցութեան ժողովք զՊուէնոս Այրէս աթոռ հռչա-
կեց Սահմանադրական Դաշնակցութեան: Սակայն ի
զուր. Պուէնոս Այրէս չ'ընդունեցաւ զայդ և մերժեց
վճարելու նոյն իսկ Գանձուն համար 100,000 փրաս-
դրան զոր պէտք էր վճարել իբր մաքսային սուրբ: Նո-
րէն ծագեցան միավարական և դաշնակցական պայ-
քարք: Ուրբուիզա տժգոհ նախագահին ընթացքէն.
ինքնին ուզեց բանակցութեան մտնել Միդրէ զօրավա-
րին հետ. Պուէնոս Այրէս կը պահանջէր քաղաքական
վաճառականական և մաքսային առաւելութիւն մը ու-
րիշ գաւառաց նկատմամբ: Ուրբուիզա քաշուեցաւ և
Միդրէ Նախագահին բանակին յաղթեց Փապոնի մաս
օգնականութեամբ կարիպայտեան Լէգէոնին որոց կը
- Սեբտ. 17 հրամայէր իտալացի կոմսն Փիլոնի, ապա արշաւեց
Սանդա Ֆէ Նահանգը և 12,000 հոգևով մտաւ ի Ռո-
զարիս: Տէրբուի փախաւ ի Մոնդէ Վիտէօ: Քիչ ա-
միս վերջը Միդրէ հաշտութեան դաշինք կը ստորա-
գրէր Ուրբուիզայի հետ և Նախագահ կ'ընտրուէր Ար-
ճէնդինայի Հասարակապետութեան, որուն աթոռը
կ'ըլլար առ ժամս ի Պուէնոս Այրէս: Միդրէ իւր ա-
մէն ջանքը դրաւ երկրին վաճառականական յառաջա-
դիմութեանց համար, նոր երկաթուղւոյ ճամբաներ բա-
ցուեցան, նաւարկութիւնք բազմացան և դիւրութիւն-
- 1861
Մայիս
- 1862

ներ ընծայուեցան Եւրոպայէ դիմող գաղթականաց, ուրոնք յառաջ վարեցին երկրագործութիւնը և ճարտարութիւնք: Միդրէ մեծ դեր ունեցաւ նաև այն պատերազմին մէջ զոր Պրազիլ և իւր դաշնակիցք վարեցին ընդդէմ Փարակուայի 1866ի սկիզբները. ընդհանուր հրամանատար ընտրուեցաւ Դաշնակից բանակին և իրեն առաջնորդութեամբ կատարուեցաւ Փարանայի դժուարին անցքը: Այսու հանդերձ Պուէնոս Այրէսի Ժողովքը բնաւ համակրութիւն չունեցաւ այս պատերազմին որ արիւնահեղ միջոցներով լմեցաւ Պրազիլի ձեռքով, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Յամին 1867 ահաւոր մաղձախտ մը բազմաթիւ կոտորած ըրաւ ի Պուէնոս Այրէս:

10. Հասարակապետութիւն Ուրակուայ: — Երբ 1820ի Սպանիոյ Հարաւային Ամերիկայի աշխարհակալութիւնքը բաժնուեցան իրենց մայր հայրենիքէն, ընդերկար Պրազիլ և Պուէնոս Այրէս կռուեցան ունենալու իւրաքանչիւրը իւր մէջը Փլադայի արեւելեան մասը: Երբ Պրազիլ յուսահատեցաւ տիրելու անոր, չուզելով նաև որ մնայ Պուէնոս Այրէսի, որով անհամեմատ ընդարձակուի անոր ազդեցութիւնը և վաճառականութիւնը, առաջարկեց և ընդունելի ըրաւ Անգղիոյ միջամտութեամբ, Ռիօ Յանէյրոյի և Սանդա Ֆէի դաշինքներով, որ Մոնդէվիտէօ առանձին իշխանութիւն մը ըլլայ, Միացեալ Նահանգաց նման Սահմանադրութեամբ և կոչուի Հասարակապետութիւն Արևելեան Ուրակուայ: Բայց հազիւ հաստատուեր էր ինքնիշխանութիւնը և ճանչցուեր էր Տէրութիւններէն, նելփին պատերազմ սկսաւ ընդ պահպանողականս որոց զլուխ կեցաւ Օրիպէ և ընդ ազատականս, որոց զլուխ էր Ռիպէրա: Ընդերկար փոփոխակի բաղդով շարունակուեցան մրցումները նախագահական ընտրութեանց մէջ և վերջապէս պատերազմի փոխուեցան, յորում միջամտեցին նաև Արձէնդինայի Դաշնակցութեան պահպանողականք: Յամին 1845 յաղթուեցան ազատականք և Ռիպէրա փախաւ: Սակայն Օրիպէ իւր ինքնակամ և բռնաւոր վարչութեամբ ատելի եղաւ ժողովրդ-

1828

1830
24 Մ. յի-

1840

- դեան և օտարազգի բնակիչք անգամ իրեն դէմ ապրատամբուն յարուցին որոց գլուխ եղաւ իր գունդովը
- 1851 Կարիպալտի: Օրիպէ յաղթուեցաւ և ազատականք և Ռիպէրա իշխանութիւնը ձեռք բերին: Քիչ վերջը մեռաւ Ռիպէրա և իրեն տեղ նախագահ ընտրուեցաւ
- 1855 Ֆլորէս հազարապետը: Օրիպէ եկաւ պաշարեց զՄոնդէվիտէօ և բռնադատեց զՖլորէս հրատարելու: Ապա միջամտութեամբ Անգղիոյ, Գաղղիոյ և Սպանիոյ հաշտութիւն մը եղաւ կուսակցութեանց մէջ և նախագահ ընտրուեցաւ Փէրէյրա: Այսու հանդերձ վերջ շառին քաղաքական կռիւնները, զորս աւելի զայրացուցին Փէրէյրայի երեք սպանութիւնք նշանաւոր անձանց: Փէրէյրայի յաջորդ ընտրուեցաւ Փրուտէնչիօ Պէրրօ, որուն ժամանակ մեծամեծ դժուարութիւնք ծագեցան Գաղղիոյ, Անգղիոյ վարչութեանց հետ փոխառութեանց շահուն վճարման պատճառաւ: Ուրիշ եւրոպական պետութիւնք ևս պահանջներ ունէին, որով ընդհանուր տրտունջք ծագեցան նախագահին դէմ. յորոց օգուտ քաղելով Ֆլորէս հին նախագահը, ազատականաց ձեռքով ինքզինքը նախագահ հրատարակեց և յԱրճէնդինայէ դիմեց ի Մոնդէվիտէօ մեծամեծ խոստումունքներով: Սակայն ընդունելի չեղաւ և Պէրրոյի նախագահութիւնը աւարտած ըլլալով, ժողովուրդը ընտրեց զԱնաստազիօ Ակուիրրէ: Սակայն Ֆլորէս չյուսահատեցաւ և զրգուեց Արճենդինայի Հասարակապետութիւնը և զՊրագիլ ընդդէմ Ուրակուայի: Պրագիլ վերջնագրով մը պահանջեց Ուրակուայէ 1858էն ի վեր իւր հպատակաց վնասները և երբ Ակուիրրէ մերժեց, Պրագիլի նաւատորմիղը պաշարեց զՄոնդէվիտէօ: Սակայն Ակուիրրէի կուսակիցք երթալով կը տկարանային և բռնադատուեցաւ իւր պաշտօնը յանձնել Վիլլալպայի ատենակալին որուն պայման դրուեցան Խորհրդանիւն հետ (այսպէս կը կոչուէին ազատականք, մինչ պահպանողականք կը կոչուէին պահպանողականք) դաշնագրութիւն մ'ընել: Վիլլալպա Փետրուար 21ին իշխանութիւնը յանձնեց Ֆլորէսի կուսակցի մը և Ֆլորէս յաղթանակաւ մտաւ ի Մոնդէվիտէօ, մինչ Ակուիրրէ կը մեկնէր նաւով մը:

Յետոյ Ուրակուայ դաշամբք միացաւ Արձէնդինայի և Պրագիլի հետ ընդդէմ Փարակուայի: Սակայն դաշնակիցք համամիտ չէին և Փարակուայ դիւցազնաբար պաշտպանուելով, Արձենդինա և Ուրակուայ իրենց բանակներով քաշուեցան, Պրագիլի թողով պատերազմին շարունակութիւնը: Տլորէսի բացակայութեան ժամանակ պլանքոսները նորէն զօրացան և երբ Տլորէսի կողմնակիցք կը ջանային զինքը նորէն նախագահ ընտրել, կառավարութեան պալատան մէջ չորս դաւաճանք զինքը սպաննեցին: Ժողովուրդը գայրացած մեծամեծ վերէժխնդրութիւնք ըրաւ և իրեն տեղ նախագահ ընտրուեցաւ իւր եղբայրը: Պէտք է յիշենք որ Տլորէսի ջանիք Մոնդէվիտէօ եւրոպական առաջնակարգ քաղաքաց հետ մրցելու վիճակի մէջ մտաւ, իւր յառաջադիմութեամբ, վաճառականութեամբ, արուեստիւք, հոյակապ շէնքերով՝ արժանաւորք ամենէն մեծ մայքաղաքաց: Միանգամայն մեծ հիւրասիրութեամբ ընդունեցաւ եւրոպացի գաղթական ժողովուրդները, ուրոնք իրեն ջանիցը աւելի գործիք մը եղան: Մոնդէվիտէօյի մաքսը մի ամսուան մէջ 1,456,720 ֆրանք բերած է իր ժամանակ:

11. Հասարակապետութիւն Փարակուայի: — Փարակուայ յետ ապստամբելու ի Սպանիոյ յամին 1811, առանձին Հասարակապետութիւն մը ձևացաւ նախագահով մը: Քիչ վերջը երկու բղեաշիւք դրուեցան, ուրոնք եղան Յեկրոս և Տրանչիա: Սակայն յետինս բռնացաւ և ամբողջ իշխանութիւնը ինքը առաւ և 1816ի ժողովքով մը, ինքզինքը դիկտատոր անուանեց: Տրանչիա քաջ ճարտասան, գործունեայ, մեծ օրէնագէտ և դատաւոր, վեհանձն և միանգամայն ազահ, զանազան հակառակընդդէմ յատկութիւններով, իւր գիտնական ազդեցութեամբը կրցաւ մինչև իւր մահը երկիրը խաղաղութեամբ կառավարել: Որպէս զի ժողովուրդը օտար երկիրներու հետ հաղորդակցութեամբ, իշխանութեան դէմ գաղափարներ շտտանայ, արգիլեց իւր հպատակաց օտար երկիր երթալը, ինչպէս նաև օտարաց մուտքը ի Փարակուայ: Այսպէս Փարակուայ

1844 կղզիացեալ և հանդարտ երկիր մը մնաց : Սակայն իր մահուընէ վերջը նուագեցան այս խստութիւնք : Ազգային Ժողովքը յետ կազմելու Հասարակապետութեան օրինագիր մը, նախագահ ընտրեց զՏոն Քարլօ Անդոնիօ Լոփէզ, թոռն Ֆրանչիսայի : Ժողովուրդը արդէն վարժած մէկ անձի մը կառավարութեան, յիշխանութեան թողուց մինչև իւր մահը զԼոփէզ, որ Պրագիլի, Անգղիոյ և Գաղղիոյ հետ եղած ամէն դժուարութիւնքը խաղաղական բանակցութեամբք աւարտեց : Երբ ինքը մեռաւ, Ժողովքը հաւանեցաւ որ ըստ իւր կտակին յաջորդէ իրեն իւր որդին Ֆրանչիսկոս Սոլանօ Լոփէզ, որուն օրով Փարակուայ սկսաւ վրդովիլ . և արդէն յիշեցինք Փարակուայի և Պրագիլի մէջ պատերազմը, երբ Փարակուայ նպաստաւոր երեցաւ յՈւրակուայ Կոլոմբոնէրուն կուսակցութեան : Բայց Պրագիլի համար այդ պատրուակ մ'էր, իւր նպատակն էր Միացեալ Նահանգաց նման աշխարհակալութիւնք ընել և տիրել գոնեայ Փարակուայի, յորում չէր կրնար գուշակել այնքան արութիւն և զինուորութիւն, որչափ փորձեց յետոյ : Եւ յիրաւի Փարակուայ հանդարտ և լուռ վարչութեամբ լաւ բանակ մը ստացեր էր, որ դիւցազնաբար կռուեցաւ նախ ընդդէմ Երից դաշնակցաց և ապա ընդդէմ Պրագիլի : Ամենէն մեծ պատերազմները եղան ի Քուրափայդի և Հումայդայի բերդին դիմաց : Պրագիլի զօրաց եռանդ տալու համար, անձամբ բանակը եկեր էին կայսրն Տոն Փէտրօ և իւր փեսայ թագաժառանգը կոմսն Տ'Եւ, որդի Նըմուրի դքսին : Պրագիլցիք յարձակեցան և կռուեցան մեծ խանդով, սակայն դիւցազնական և յամառ ընդդիմութիւն մը գըտան : Բոլոր Եւրոպա զարմացած կը դիտէր հսկայ Պետութեան մը պատերազմը իւր փոքրիկ դրացոյն հետ որ ամենուն համակրանք կ'ազդէր : Եւ թէպէտ վերջապէս Աքուիտապանի կռուոյն մէջ դիւցազնաբար ինկաւ Լոփէզ և իւր փոխան-նախագահը, սակայն ամենուն հիացումն և պատկառանք ազդելով : Պրագիլ տեսաւ որ ի զուր կը փափագէր աշխարհակալութեան մը . յետ յաղթութեան գոհացաւ միայն դաշնադրութիւն ընել

1862
Մարտ.1860
Մարտ.

այսպիսի ժողովրդեան մը հետ, ստանալով միայն որ Փարակուայի դրոււնքը գոց շման: Փարակուայ հաշտութենէն վերջը Սահմանադրութիւն մը ընդունեցաւ ժողովքով, նման միացեալ Նահանգաց Սահմանադրութեան, և առաջին նախագահն ընտրուեցաւ 1871ի Օգոստոսի՝ 2իրիցս Անդոնիօ Ռիվարոյա:

12. Պրագիլի կայսրութիւնը եւ Տոն Փէտրօ Բ՝ — Պրագիլի կայսրը Տոն Փէտրօ Ա այրի մնացեալ ըլլալով յամէն 1826, 1829ի տարւոյն կրկին ամուսնացաւ ընդ Մարիա Ամէլիա Լէւիզէմպուրկի, դուստր Եւգինէոսի Պոհաննէ: Արքունեաց մէջ այս նորութիւնը ունեցաւ իւր ազդեցութիւնքը և հետեւանքները՝ պաշտամանց և պաշտօնակալութեանց մէջ, յորս օտարք եւ եւրոպացիք մանաւանդ առաւել ընդունելութիւն գտան: Ժողովուրդը տժգոհացաւ և յուզեցաւ օտարաց այսքան ընդարձակուելուն և Ազգային Խորհրդարանը յայտնեց իւր վիշտը: Տոն Փէտրօ փոխանակ դարման տանելու, ցրուեց զԽորհրդարանը: Ժողովրդեան ձայնը աւելի բարձրացաւ և կայսրը զայն գոհացնելու նըպատակաւ Խորհրդարան մը կազմեց միայն ի տեղացւոց. բայց միանգամայն նուաղեցուց տպագրութեան ազատութիւնք: Այն ատեն մայրաքաղաքը յուզեցաւ. բազմութիւն զինելոց խումբ խումբ փողոցներու մէջ կը շրջէին հասարակապետական երգերով, և կայսերական պալատան պահապանք միացան քաղաքացւոց: Տոն Փէտրօ ցաւով դիտեց հասարակապետութեան մը գաղափարի ծաւալիլը և զՄիապետութիւնը փրկելու համար կարևոր ըմբռնեց իւր քաշուիլը և Ապրիլ 7ին 1831ի հրատարեցաւ ի կայսրութենէն ի նպաստ իւր որդւոյն Տոն Փէտրոյի Բ որ վեց տարուան էր, և ինքը մեկնեցաւ ի Պրագիլէ յԵւրոպա, միտքը դրած անձամբ երթալ մրցիլ Փորթուգալի աթոռոյն համար ընդդէմ Տոն Միկէլի:

Տոն Փէտրօ Ա ինքնին անուաներ էր իւր որդւոյն խնամակալութիւնը մինչև անոր աւագութեան տարին: Սա

կայն մեկնելէն վերջը Խորհրդարանը չընդունեցաւ և ինքը անուանեց նոր խնամակալ մը որոնք ստէպ փոխուեցան, անհաճոյ ընթացք ունենալով Պաշտօնարանին: Վերջինն եղաւ Հ. Ֆէյօ, եպիսկոպոս Մարիաննայի և ծերակուտի անդամ որ մեծ կորով և իմաստութիւն ցուցուցեր էր Արդարութեան պաշտօնեայ եղած ժամանակ: Կայսրը հնգետասանամեայ էր. Հասարակապետականք Պահիա գաւառին մէջ ապստամբութիւն մը փորձած ըլլալով, խնամակալը հրաժարեցաւ և իւր տեղը ընտրուեցաւ Ներքին գործոց պաշտօնեայն, որ զՏոն Փէտրօ աւագացեալ կայսր հռչակեց:

Տոն Փէտրօ Բ հանդարտաբարոյ, քաղցր, բարեսէր, ազատական և լուսամիտ, դարուս ընտրելագոյն իշխողաց մէկն եղած է: Առաջին օրուրնէ գիտցաւ երկիրը հանդարտութեան մէջ պահել և մեծամեծ յառաջագիմութիւնք մտցնել: Լիովին ազատութիւն տուաւ տպագրութեան և խղճիւ պահպանող և հպատակ եղաւ Սահմանադրութեան որ Եւրոպիոյ հնագոյններէն մին է և ըստ որում կայսրն է « Առաջին ներկայացնող Պրագիլի քաղաքացւոց քաղաքական ընկերութեան », միով բանիւ առաջին ի քաղաքացիս. և կայսրութիւնը ուրիշ բան չէր բայց թէ Նախագահութիւն մը անփոփոխ: Տոն Փէտրօ Բ. յարգելով հանդերձ այդ իմաստը, գիտցաւ խոհեմութեամբ մեծ ազդեցութիւն ունենալ կառավարութեան վրայ որ ըստ Սահմանադրութեան ունէր իւր Պաշտօնեայքը, Պետութեան Ատեան, ծերակոյտը և Խօսարանը: Իւր իշխանութեան առաջին տարիներուն մէջ երկու կուսակցութիւնք օրինաւորապէս մրցեցան ի կառավարութեան՝ Պահպանողականք, որոնք կը կոչուէին Ստորաբնիմ, և Յառաջագիմականք, կոչուած Ստորա Լուսիմ, որոնք երբեմն միացան իսկ, և յետոյ դարձեալ Յառաջագիմականաց ձեռքը մնաց վարչութիւնը մինչև 1848: Իսկ թէ այս ժամանակէն վերջը Պրագիլի կառավարութիւնը ինչ խնդիրք և պատերազմունք ունեցաւ մերձաւոր սզպաց հետ, զայնս տեսանք արդէն: Յամին 1826 Անգղիա ստէպ բողոքեր էր

Պրազիլի, գերեաց վաճառման մասին: Պրազիլի վարչութիւնը խափաներ էր զայն, սակայն միշտ անպակաս էին վաճառուէնք: Յամին 1850 խիստ արգելքներ դրուեցան այդ շահավաճառութեան, և բարւոքեցան երկրին մէջ մնացելոց վիճակքը: Միանգամայն գերմանացի, փորթուգալի և իտալական բազմաթիւ գաղթականութիւնք սփռուելով Պրազիլի ընդարձակ և անմշակ երկիրներուն մէջ, կեանք մը տուին երկրին նիւթական հարստութեան: Պաշտօնարանական փոփոխութիւնք բնաւ չվրդովեցին երկրին կառավարութեան ստացած բնական ընթացքը, որով Պրազիլ Հարաւային Ամերիկայի մէջ ունեցաւ այն զօրութիւնը և ազդեցութիւնը, ինչ որ Միացեալ Նահանգք ի Հիւսիսային Ամերիկա: Տոն Փէտրօ երկու մեծ պատերազմ ունեցաւ յորոց առաջինն ընդդէմ Ռոզասի որ կ'օգնէր Օրիպէի զՈւրակուայ միացնելու Արձէնդինայի Դաշնակցութեան. և որ վերջացաւ Ուրակուայ ազատ և շէզոք երկիր մը ըլլալով. և երկրորդը ընդդէմ Փարակուայի զոր տեսանք Փարակուայի Պատմութեան մէջ: Պատմագրացմէ ոմանք ազատական գաղափարով մը կ'ուզեն դրուատել Պրազիլի կառավարութեան այս որոշողութիւնը ընդդէմ Լոփէզի կղզիացեալ վարչութեան զոր կ'ուզեն նմանեցնել նախկին բռնաւորաց: Սակայն մեծամասնութիւնը և նոյն իսկ Փարակուայի վիճակը տարբեր մեզ կուտան խորհիլ այս միջամտութեան նկատմամբ, որ մեծամեծ արիւնահեղութեամբ տևեց մինչև ցամն 1871:

Յամին 1859 Տոն Փէտրօ Ի սկսաւ այն բազմաթիւ և դժուարակիր ճանապարհորդութիւնք ի Ներքին Պրազիլ, որոնք այնքան մեծ արդիւնք ունեցան յառաջադիմութեան, ամէն կողմ քննելով և ուսումնասիրելով բարւոքման միջոցներ: Յամին 1861ի Պրազիլ ունեցաւ նաև խնդիր մը Անգղիոյ հետ. քանի մը անգղիացի նաւաստիք զինովութեան և անկարգութեանց պատճառաւ բանտարկուեր էին պրազիլցի պաշտօնեայներէ: Անգղիա միշտ վրէժխնդիր իւր հպատակաց հեռաւոր երկիրներու մէջ, անդէն մեծագումար տուգանք մը

պահանջեց և ծովակալն Ուոթրէն իբր գրաւական, գերեց պրազիլցի նաւեր: Խնդիրը երկու կողմանէ Փորթուգալի թագաւորին իրաւասութեան ձգուեցաւ որ ծանոյց թէ Պրազիլի կառավարութիւնը գինով նաւաստիները պատժելու ժամանակ բնաւ դիտաւորութիւն մը չունէր Բրիտանական ծովային զօրութիւնը արհամարհելու: Այսպէս խնդիրը վերջ առաւ:



ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԻՔ — ՊԱՏԵՐԱԶՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1. Հիւսիսային և Հարաւային Նահանգք. — 2 Գերեաց խնդիր ի Միացեալ Նահանգս. — 3. Տարածայնութիւն Հիւսիսային և Հարաւային Նահանգաց մէջ — Աբրահամ Լինքոլն նախագահ. — 4. Քաղաքական պատերազմ. — 5. Պատերազմ ձիգսպըրկի և Առուսն Վիքսպըրկի. — Հարաւայնոց սկարանալը. — 6. Պարտութիւն Հարաւայնոց — Վէրջ Քաղաքական պատերազմին. — 7. Սպունուսն Լինքոլն նախագահին. Զօրավարն կրանդ՝ նախագահ. — 8. Աւազամայի խնդիրը:

1. Հիւսիսային եւ Հարաւային Նահանգք: — Յետորոյ Միացեալ Նահանգք անցեալ դարուն վերջերը իրենց անկախութիւնը ձեռք բերին, երկիրը մեծաքայլ ընթացաւ յառաջագիմութեանց ճամբուն մէջ: Ամէն աշխարհէ արհեստաւորք, ճարտարք, հնարագէտք և ուսումնականք՝ նոր բաղդերու յուսով, զորս այլ ևս չէին գտներ Հին աշխարհի մէջ, կը դիմէին երկիր մը, որ իրենց պէտք ունէր և ուր առատօրէն կը վարձատրուէր ջանքերնին: Այն աղքատք և մշակք որոնք ամբողջ կեանքովն քիչ մը հողոյ տէր չէին կարող ըլլալ, կը հիանային փութով հարուստ հողատէր ըլլալու դիւրութեամբ. և որ զարմանալին է՝ շարագործք, եղեռնագործք և քաղաքական յանցաւորք որոնք փրկութեան համար հոն կ'ապաւինէին: Ովկիանոսը անցնելէն վերջը շատ անգամ նոր բարք մը կը ստանային, նոր աշխարհի կենաց և սովորութեանց մէջ կորսնցնելով իրենց նախկին շարութիւնք և ախտք: Ամերիկայի անունը ամենուն հմայիչ ձայն մը դարձեր էր և Միա-

ցեալ Նահանգաց աշխարհը վարչական և յառաջագիւմական գաղափարաց մեծագոյն կատարը: Հին աշխարհի գաղթականութեանց ընտրելագոյն մասը կը դիմէր ի Միացեալ Նահանգս և անոր հիւսիսային գաւառքը, ուր աւելի դիւրատար կլիմայ մը կը գտնէր, յորս դիւրակ' ընդունէր քաղաքացիութեան իրսուունքը: Հիւսիսային գաւառաց մէջ մեծագոյն էր գաղափարաց շիւումը Եւրոպիոյ հետ քան Հարաւային Նահանգաց մէջ, յորս կը բռնակէր Ամերիկեան հարուստ կալուածասէր և վաճառական տարրը, վրէժխնդիր և հակառակող գաղթականութեանց բերած նորամուտ և ազատական գաղափարաց զորս փնտրարք կը համարէր Երկրին վաճառականական արդեանց: Արովհետեւ յամին 1823ի ընդունել էր Միացեալ Նահանգաց վարչութիւնը չթողուլ յԱմերիկա որ և է դրսէն միջամտութիւն մը. նոյն խըստութիւնը հարաւային Նահանգք կը պահանջէին Երկրին ընդհանրական կազմակերպութեան մէջ: Եւ սակայն ստէպ յարարերութիւնք և ուղեորութիւնք յԵւրոպա պէտք էին ունենալ իրենց արդիւնք. այն բազմաթիւ երիտասարդք որոնք Հիւսիսէն կ'երթային յԵւրոպա և մանաւանդ Գերմանիոյ համալսարանները հրահանգուելու փիլիսոփայութեան, մարդկային իրաւանց և մատենագրութեան մէջ, իրենց դարձին յԱմերիկա այլ ևս չէին կարող հաշտ աչքով տեսնել Հարաւային գաւառաց հարուստ կալուածատեարց ընկերական կազմակերպութիւնը: Հարաւայինք առաւել քան զկրթութիւն, զբաղած էին բրինձի, մարացորենի, ծխախոտի, և մանաւանդ բամբակի մշակութեան որ երկրին ամենամեծ հարստութիւնը կը կազմէր: Եւ որովհետեւ Հասարակածի շերմութեան ներքեւ այդ մշակութեանց չէր դիմանար տեղացի ժողովուրդը և փորձուած էր որ միայն արիւրիկիցի սէը կը համբերէր այդ ծանր կլիմային, այս պատճառաւ շատ մը վաճառականք այդ սէերը բերել տալով յԱւրիկէէ, զայնս կը վաճառէին մեծ կալուածատեարց: Այդ սէերը քարոզչաց խնամք առ սակաւ սակաւ ընդունեցան քրիստոնէութիւնը և իրենց հոգւոյն կրթութեան հետ զարգացաւ մտաւորական

կրթութիւննին իսկ, և ըմբռնելով իրենց դառն վիճակը, և ւելի գութ մը կ'ազդէին:

2. Ստրկաց խնդիրը ի Միացեալ Նսմանգւ: — Որքան Հիւսիսային գաւառաց մէջ բազմացաւ Եւրոպիոյ ազդեցութիւնը, այնքան երկու մասերուն մէջ շատցաւ հակակրութիւնը: Ժողովքին մէջ մաս մը յամին 1820 ի, Միսուրի Նահանգին միանալու առթիւ ընդ Միութեան, բողոքեր էր ստրկութեան դէմ: Յետ երկու տարի մեծ պայքարներու, յաղթեց Հարաւային մասը և ի Միսուրի ներեալ էր ստրկութիւնը: Նոյնը եղաւ յամին 1848 ի երբ Դաբասս Մեքսիքոյէն բաժնուելով, յարեցաւ Միացեալ Նահանգաց: Զարմանալի ամերիկեան հնարագիտութեամբ ժողովքը սահմաններ էր որ ի Հարաւ կը մնար ստրկութիւնը, բայց չէր կըրնար տարածուիլ լայնութեան 36, 30 աստիճանէն վեր: Ի Հարաւ այս ստրուկներուն թիւը 4 միլիոնէն ւելի կը հաշուէր: Յիրաւի Հարաւային կալուածատէրք այնպէս կ'ուզէին ցուցընել աշխարհի դիմաց որ իրենք մարդկութեան կարելի եղած գութը կը ցուցընէին ստրուկներուն, թողլով որ անոնք ամուսնանան, զաւակաց տէր ըլլան և փոքրիկ գումար մ'ալ ունենան, սակայն այդ շնորհքները կախումն ունէին կալուածատիրոջ մը բնաւորութենէն, և ինչ կ'ըլլային այդ շնորհքները երբ ստրուկը ապրանք մ'էր և կրնային ի վաճառ հանուիլ իւր կինը, ուստրը և դուստրը: Ո՞վ սոսկացած և յուզուած չէ կարդալով Աղբար Թովմասի Տնակը, որ նկարագիր մ'է Հարաւային ստրուկներուն շարունակ կենաց: Երբ յամին 1852 Տիկինն Պիչըր Սդով, հրատարակեց այդ պատմական վէպը, բոլոր Եւրոպա սարսափեցաւ, ճըմլեցաւ ամենուն սիրտը և ամենայն ռեդատասպարտեց և անիծեց Միացեալ Նահանգաց այդ ահաւոր անգթութիւնը և Հիւսիսային գաւառաց մէջ ձեւացաւ զօրաւոր կուսակցութիւն մը որուն դրօշն եղաւ « Ստրուկներուն ազատութիւնը ». որ ամէն միջոց ձեռք պիտի առնուր՝ տըպագրութիւն, եկեղեցւոյ բեմ, հրապարակական ճառախօսութիւնք, մինչև որ հասնէր իր նպատակին՝ ջնջելով զստրկութիւն որ հակառակ էր մարդկային՝ իրաւանց,

մարդկային հաւասարութեան և որ մեծ է՝ Քրիստոնէական կրօնից, վասն զի «Այդ ստրուկներն ալ իրենց նման Աստուածային փրկչին ձեռօք ազատեալ էին գերութեան կապանքներէն, և սակայն արգելուած էր կրթել այդ սեւերը և ծանր տուգանք կար ով որ ուզեր զայդ փորձել. և անգղիական եկեղեցւոյն կղերը կուզէր Ս. Գրոց միջոցով արդարացնել գերութիւնը¹... Որչափ որ Հիւսիսայինք սաստկացուցին իրենց կռիւը և զայրոյթը, այնքան Հարաւայինք նենգութեամբ կը պնդէին պաշտպանելու զոր իրենց իրաւունք և կալուած կը համարէին և Ազատարարաց եռանդեան կը պատասխանէին սարսափներով և անգթութեամբ առ ստրուկս²» : Եւ մինչև կ'սպառնային զատուիլ Միութենէն, ասկէ Հարաւայինք կոչուեցան ևս Անջատականք և կռիւը « Պատերազմ Անջատման » : Յամին 1852ի Նախագահական ընտրութեանց մէջ Հարաւային ռամկապետականք յաղթողք հանդիսացան և տակաւին անհնար էր ստրկութեան մասին բարեփոխումն ընել, նա մանաւանդ յամին 1854 Հիւսիսային գաւառաց ռամկապետ մը՝ կողմնակից ստրկութեան, առաջարկեց որ յամին 1820ի եղած Միսուրիի դաշնը վերնայ և Քանսաս և Նէպրաւսքա գաւառք ևս ստրկութեան չըջանակին մէջ պարունակուին : Յետ երկար վիճից Էրկու խօսարանաց մէջ ալ, առաջարկը մեծամասնութեամբ ընդունելի եղաւ : Ապատականք բողոքեցին և բռնաբարումն համարեցան այս որոշողութիւնը մինչև այն ատեն ստրկաց մասին եղած դաշանց ընդ Հիւսիս և ընդ Հարաւ :

3. Տարածայնութիւն Հիւսիսային եւ Հարաւային Նախանգաց մէջ. — Ընտրութիւն Աքրահամ Լինքոլնի : — Յայնմհետէ Քանսաս գաւառը և Միսուրիի սահմանակից նահանգք մրցադան մը եղան Ազատչաց

1 Հարաւայինք մեծապէս նակառակ էին նոովմէական քարոզչաց և խստիւ կը նակառակէին իռլանտացի դաղթականաց, որոնք կրօնից նետ ատելութիւն մը ևս կը տարածէին նակառակ ստրկութեան :

2. Վէպեր Պատմութիւն ժամանակակից § 270 :

և Գերեվարաց: Հարուստ ուսմկապետ կալուածատեարք դիմեցին հաստատուելու անդ և ստրկութեան իրաւունքը գործածելու, և Ազատիչք բազմաթիւ գաղթականներ փոխադրելով: Սակայն Ազատիչք բազմացան և Տեղական ժողովքը սահմանեց որ Քանսաս ևս ազատ վիճակաց մէջ էր: Այն ատեն հարուստ գերեվարք բազմաթիւ աւազակաբարոյ խումբեր շրկեցին որք ամենազգի բռնութիւնք և աւերք ըրին Քանսասի մէջ. և այս խումբերուն աւարառութեանց և սպառնալեաց ներքև եղաւ 1856ի Նախագահական ընտրութիւնը, յորում գերեվարք և ուսմկապետականք յաղթանակեցին ընտրելով զՊըչանան իրենց կողմնակից: Սակայն հարաւայնոց ըրած աւարառութիւնք ունեցան իրենց դիմադրողքը և ծեր նաւապետն ճոն Պրալին, որ Քանսասի յաիշտակութեանց մէջ կորսնցուցեր էր ինչք և երկու որդիք, իր մարդիկներով արշաւեց ի Միսուրի ապականելով և աւերելով երկիրը և դիմելով Հարփըրս Յէրբէի դաշնակցական նաւարանին վրայ, ապստամբութեան յորդորեց բոլոր ստրուկները, բայց բռնուեցաւ Վերձինիայի վարչութենէն և դատապարտուելով, կախուեցաւ: Այսու հանդերձ ի Քանսաս զօրացան հակագերեվարականք և Ազատ Նահանգ հռչակուեցաւ յամին 1861: Արդէն քիչ առաջ Մինէսոդա և Օրէկոն ևս մտեր էին ազատ վիճակաց մէջ և յայտնի էր որ Հարաւայինք առաջին ընտրութեամբ պիտի կորսնցնէին իրենց ազգեցութիւնը: Յամին 1860ի ընտրութիւնք մեծամեծ վիճից նիւթ եղան և յաղթանակեցին Հիւսիսականք որոց ընտրելին Արրուսամ Լինքոլն նախագահ եղաւ: Այն օրուընէ Հարաւայինք մտքերնին դրին անջատուելու Միութենէն: Եւ սակայն ըստ հիմնական Դաշանց Միացեալ Նահանգաց, յետ միանգամ յարելու չէին կարող այլ ևս ինքնիշխանութեամբ բաժնուելու Միութենէն: Անջատման առաջին օրինակը տուաւ Քարոլինա որ քուէարկեց ժողովքով՝ բաժնուելու Միութենէն: Հետեւեցան իրեն օրինակին Հարաւային միւս նահանգները՝ Ճէորձիա, Յլորիտա, Ալապամա և Միսիսիպի որոնք « Հարաւային Դաշնակցու-

1859
Սեպտ.

1860
Դեկտ. 20

թիւն » մը հրատարակեցին, ընդդէմ « Հիւսիսային Դաշնաւորաց » և ընտրեցին նախագահ զՃիֆըրսըն Տէվիս . և որովհետև Պըչանան պաշտօնը ձգելու ժամանակ դիտմամբ պէտք եղած զգուշութեանց անհոգացեր էր, Հարաւային դաշնակիցք տիրեցին շատ մը նաւարաններու և բերդերու : Այսպէս կը սկսէր Քաղաքական պատերազմը, յորում յաջորդաբար ձեռք առնուեցան երկու կողմանէ ամենէն սարսափելի ատելութեան և վրէժխնդրութեան միջոցներ . տխուր հետեանք առտնին ամէն ծանր հակառակութեանց :

4. Քաղաքական Պատերազմ : — Հարաւայինք չունէին Հիւսիսայնոց բանակաց բաղմութիւնը և կազմութիւնը, և սակայն ունէին լաւ զօրավարներ, յորս մանաւանդ Պորըկար և Լի : Զօրավարն Պորըկար դիմեց Սըմդըր բերդին վրայ և տիրելով անոր՝ աստղագարդ ամերիկեան դրօշը վար առաւ : Հարաւային Նահանգաց նախագահը ի զէն կոչեց ամենայն արու սպիտակ : Վիրճինիա Նահանգը որ ի սկզբան վարանեալ էր անցաւ և նա Անջատելոց կողմը և Ռիչմոնտ քաղաքը աթոռ եղաւ Հարաւային Դաշնակցութեան, որով 120 հազարամէդր միայն հեռի կը մնային ի Ուոշինկթոնէ : Առաջին անգամ Յուլիս 20ին Դաշնակցաց ժողովքը գումարուեցաւ և Ճիֆըրսըն Տէվիս նուիրակներ ղրկեց Յէլրոպա Նոր Պետութիւնը ճանչցնելու համար և նաւեր դրաւ ծովու վրայ Դաշնաւորաց նաւերը գերելու համար :

Յէլրոպա՝ Գաղղիա և Անգղիա մանաւանդ, ինչպէս նաև ուրիշ Պետութիւնք, թէպէտ սրտանց Հարաւային Դաշնակցութեան կողմն էին առ Ուոշինկթոնի վարչութիւնը ունեցած հակակրութեան և մանաւանդ նախանձուն համար, այսու հանդերձ ոչ ոք համարձակեցաւ ճանչնալու այս նոր Պետութիւնը : Հրատարակեցին որ զերկու կողմն այ պարբերապէս կը ճանչնան, առ որս խիստ չէզոքութիւն մը պիտի բանեցնէին : Այսու հանդերձ Անգղիա չկրցաւ ծածկել իւր համակրութիւնը առ Հարաւայինս, զանազան միջոցներով և նոյն իսկ գաղտ յորդորանք : Դաշնաւոր վարչութիւնը զայրացաւ այս համա-

1861

Մարտ 6

կրութեան վրայ, զոր միշտ ուրացաւ Անգղիա: Լինքոլն Ապրիլ 15ին ի գէն կոչեց 75,000 անձինք և Աքոդ զօրավարը եօթանասուն և հնգամեայ թէպէտ Վիրճինիացի, ընդհանուր հրամանատար անուանուեցաւ Դաշնաւոր բանակին: Մայիսի մէջ նոր բանակ մը ևս կազմուեցաւ 82,000 զինուորաց և Մայիսի վերջերը դաշնաւորք սկսան մտնել ի Փոթոմաք որ զիրենք կը բաժնէր ի Դաշնակցաց. և առաջին անգամ երկու բանակները մէկմէկու դիմաց գտնուեցան ի Տիրիփի, ուր փոքրիկ գուպարածներու մէջ դաշնաւորք ունեցան յաջողութիւններ: Ապա պատրաստուեցան մեծ պատերազմի Պիուլս Ռըն գետին եզերքը, ուր մեծ բազմութիւն եկեր էր ի Ուոշինկթոնէ պատերազմը դիտելու համար, ապահով Դաշնաւորաց յաղթութեան վրայ: Սակայն Հարաւայինք որոց կը հրամայէր զօրավարն Պորըկար, մեծ յաղթութիւն մը կատարեցին Դաշնաւորաց վրայ, որոց կը հրամայէր զօրավարն Մըք Տովէլ, զանոնք ձգելով խառնաշփոթ ի Ուոշինկթոն. և այնքան էր պարտութիւնը որ թէ ուզէր Մըք Տովէլ հալածել, կըրնար մտնել մայրաքաղաքը, և արդէն բանակին մէջ էր նախագահն Տէվիս. սակայն ինքը գոհացաւ ամէն կողմ աւետաւոր զրկելով այս մեծ յաղթութեան: Այն ատեն Ուոշինկթոնի վարչութիւնը շատ աւելի լրջութեամբ նկատեց պատերազմը. պաշարման վիճակի մէջ հրատարակեց ամէն հարաւային և Արեւմտեան նաւահանգիստներ և արգիլեց նոյն իսկ ուղևոր նաւեր: Այնքան էր երկուստեք մոլեգնութիւնը, որ նաւք փոխադարձաբար մէկզմէկ կը հալածէին մինչև Անգղիոյ ելելիքը կամ Միջերկրական: Հարաւային Դաշնակցութեան երկու նուիրակք որոնք Եւրոպա պիտի անցնէին, անվտանգ կրցեր էին հասնիլ յԱվանա, հոն գտան անգղիացի թղթատար շոգենաւը, յորում հազիւ մտած էին երբ Դաշնաւորաց մարտանաւ մը, որուն կը հրամայէր նաւապետն Ուայքս՝ որ արդէն կը լրտեսէր, մտիկ շընելով անգղիացի նաւապետին բողոքներուն, գերեց երկու նուիրակքը և զանոնք կալանաւոր տարաւ ի Նիւ Եորք: Բոլոր Անգղիա դրդեցաւ համա-

րելով այս գործը նախատինք մը բրիտանական դրօշուն: Անմիջապէս վերջնագրով պահանջեց կալանաւորեալքը, պատերազմ սպառնալով եթէ ետ չդարձուին: Դաշնաւորութեան խորհրդոյն մէջ կային, որք կ'ուզէին յանձն առնուլ այս պատերազմը և բոլոր Եւրոպա կը համարէր հանդիսատես գտնուելու հսկայական ժովամարտի մը, երբ Նոյեմբեր 30ին տակաւին Անգղիոյ վերջնագիրը չհասած, Միացեալ Վահանգաց Պետութեան ատենադպիրը՝ Սիվարա, ծանոյց որ բնաւ չէր կրնար ստանձնել Ուայլքս նաւապետին գործածին պատասխանատուութիւնը և պատրաստ էր յետս դարձնելու գերեալքը: Այսպէս Անգղիա հանդարտեցաւ:

Ուոշինկթոնի վարչութիւնը զՄաք Քչիլան, երեսուն և հինգ ամաց զօրավարը, հրամանատար անուանեց յաղթուած բանակին, ապա ընդհանուր հրամանատար փոխան Աքոդի: Մաք Քչիլան ամբողջ աշունը և ձմեռը զբաղեցաւ բանակը կազմաւորելու. 1862ի սկիզբը արդէն 150,000 զինուորք պատրաստ էին: Իսկ Պորկարի յաջորդեց Յոնադան որ Պիուլս Ռընի ստոյգ յաղթողն էր, և Մայիս 31ին ահաւոր և արիւնհահեղ բաղխման մը մէջ ի Ֆէրոյի, որ երկու օր տևեց, ծանր վիրաւորուելով, իր տեղը ընդհանուր հրամանատար անուանուեցաւ զօրավարն Ռոպըրդ Լի, որ Յունիսի 27ին յաղթութիւն մը տանելով Դաշնաւորաց վրայ, կը սպառնար Միսիսիփիի ափանց և Ուոշինկթոնի: Մարսաիեցաւ ժողովուրդը և փութով բովանդակ զօրքը կանչուեցաւ մայրաքաղաքին պարսպաց ներքև: Մաք Քչիլան այնպիսի ճարտարութեամբ զետեղեց գունդերը որ Դաշնակիցք անհնար համարելով տիրել քաղաքին քաշուեցան:

Ծովու վրայ ևս պատահեր էին զանազան նաւային կռիւններ յորս մեծ հուշակ ունեցաւ Նորֆոլքի նաւահանգստին մէջ երկու զրահաւորաց բաղխումը: Առաջին անգամ՝ երկաթապատ նաւեր մէկմէկու դիմաց կը գտնուէին իբրև երկու վիթխարի հսկայք: Յետ երկար մաքառելու, երկուքն ալ պատերազմէն քաշուե-

ցան անվնասք : Այն օրուընէ նաւային ռազմագիտութեանը նոր դար մը սկսաւ և բովանդակ ծովային ազգաց ուշադրութիւնը դարձաւ զրահաւոր նաւերու կարևորութեան վրայ . և սակայն ապագայ պատերազմի մը մէջ ընդ զրահաւորս և ընդ փայտաշէն նաւս , ծովակալին հմուտ հրամանատարութիւնը յետինքս յաղթական ըրաւ ի Լիսսա : Երկար կ'ըլլար մեզ թէ ուզէինք այս քաղաքական ահաւոր պատերազմին ամէն գուպարածքը և մանրամասնութիւնքը պատմել , որպիսի հազիւ կը գտնենք հին պատմութեանց մէջ : Երկու կողմանէ ևս հաւասարապէս մոլեգնութեամբ կ'այրէին կ'աւրէին գիւղ և աւան , դաշտ և արտօրէ : Պատերազմի դաշտերուն վրայ մեռեալքը և հիւանդանոցներու վիրաւորք ահաւոր տեսարան մը կը ներկայացնէին . երկու կողմանէ ալ անյագ վրէժխնդրութեան ոգևով կ'անդամահատուէին խեղճ անկեալք . երկու կողմանէ ալ արգելուած և կեցած էր վաճառականութիւն և ճարտարութիւն , երկու կողմանէ ևս վարչութիւնք հաւասարապէս կը խորհէին ամէն միջոց իրարու մեծագոյն վնաս հասուցանել և զիրար ջնջելու : Այսքան ահաւոր է քաղաքական պատերազմը : Ստրկաց ազատութեան խընդիրը առ ժամս մոռցուեր էր , երբ Քաղաքական պատերազմին աւելի բորբոքումն տալու համար Հիւսիսայնոց ժողովքը խոստացաւ զինուք պաշտպանել այն գաւառքը որ առանց փոխարինութեան մը ազատէին ըստրուկքը . դեռ աւելի յառաջելով վերուց ստրկութիւնը Հարաւային գաւառներէ , այսպէս համարելով զանոնք ապստամբեցնել իրենց տէրերուն դէմ : Սակայն անոնք այնպէս սուստկապէս ընկճեալ էին որ չէին կարող օգտուիլ այդ ի հեռուստ իրենց շնորհեալ ազատութենէն : Բայց այդ որոշողութիւնը մնաց պատերազմէն վերջն ալ և այն օրուընէ կը համարուի անոնց պաշտօնական ապատութիւնը :

5. Պատերազմ Ճէդդսպրկի . Առումն Վիքսպրկի . Հարաւայնոց տկարանալը : — Ուոշինկթոնի վարչութիւնը յետ այսքան մեծ պատրաստութեանց , յետ 300,000է բանակ մը ոտք հանելու , կը համարէր որ

1862
Մ-ր-ր

1863

ուէտք էր ըմննար պատերազմը և տժգոհ էր այս անվերջանալի կռուոյն համար, յորում դանդաղ կ'ամբաստանուէին հրամանատարը: Յանկարծ Մաք Քէլլանի ձեռքէն առնուեցաւ սպարապետութիւնը, որուն տեղը անուանուեցաւ զօրավարն Պըրնսայտ, որ անդէն որոշեց յարձակմամբ ագնուլ զՖրէտէրիքսպըրկ. սակայն յաղթուեցաւ սաստիկ կերպով և հրատարեցաւ հրամանատարութենէ: Դաշնակիցք խրախուսեցան և զօրավարն ՚ի յառաջեց ի Փէնսիլվանիա և ի Մէրիլանտ, այսպէս կրկին սպառնալով Ուոշինկթոնի: Երկու բանակք Յուլիս 1ին դիմացէ դիմաց գտնուելով ահաւոր պատերազմ ծագեցաւ ճէդգսպըրկի քով յորում դաշնաւորք 10.000 անձինք կորուսին ընդ մեռեալ և ընդ վիրաւոր: Դաշնաւորաց զօրավարն Միտ չյուսահասեցաւ. երկրորդ օրը ևս ծանր բաղխումն եղաւ, յորում կրկին Միտ կորսնցուց 10,000 զինուոր: Երկու կողմանէ մեծ էր մրցումն, իւրաքանչիւր կողմն ըմբռնելով պատերազմին ելից ամենամեծ կարեւորութիւնը, Յուլիս 3ին վերջին անգամ Միտ բաղխեց Դաշնակցաց ճակատը 120 հրանօթիւք: Օրը երեկոյացած էր և դեռ յաղթութիւնը անորոշ էր: Յանկարծ Դաշնաւորաց հրանօթք լոեցին պաղշտիկելու համար, ՚ի համարեցաւ որ հրանօթք անգործածելի եղեր են և հրամայեց Փիքքըդ զօրավարին 14,000 հոգւով ինկնալ թշնամուոյն վրայ: Երբ գունդերը մօտեցեր էին Դաշնաւորաց. յանկարծ թովանդակ հրանօթք միաբան սկսան կրակ թափել: Յարձակողք պաշարուեցան և հոն դիւցազնաբար կռուելով մարմին առ մարմին, ամէնն ալ ինկան դաշտին վրայ: Այս խորտակումը որոշեց այն կռուոյն և ամբողջ Քաղաքական պատերազմին բաղդը. Միտ մեծ յաղթութիւն մը կը տանէր և կը փրկէր իւր հայրենիքը: Լի զօրավարը երկրորդ օրը թողուց Փէնսիլվանիոյ յարձակումը և ետ քաշուեցաւ:

Դաշնակիցք ճէդգսպըրկի պարտութեան օրը ուրիշ հարուած մ'ալ կուեննային յԱրեմուտս Վիքսպըրկի անկմամբ, որ կոչուած է « Սէվաստափոլ Ապստամբաց »: Դաշնակիցք իրենց մեծագոյն ամբողջութիւնքը

հաստատած էին ի Վիքսպրիկ : Ի զուր շատ անգամ Դաշնաւորք փորձեր էին գետոյն կողմանէ ջրանցքներ բանալով, մօտենալ քաղաքին և նաւատորմդաւ զայն ոմբակոծել : Հիւսիսայնոց Կրանդ գօրավարը Ապրիլի մէջ աիրեր էր 60,000 հոգւով գետոյն ափանց և քաղաքին ամենայն հաղորդակցութիւնքը կտրեր էր զայն պաշտպանող դաշնակից ճոնսդոն գօրավարին բանակէն : Մայիս 22ին Կրանդ ընդհանուր յարձակումն փորձեց, սակայն առանց արդեանց և յորում հազարաւոր անձինք մեռան առանց նպատակի մը : Պատմութիւնը այսպիսի ուրիշ կոտորածներ ալ կը յիշէ Կրանդ գօրավարէն մղեալք : Պէտք եղաւ կանոնաւոր պաշարումն սկսիլ : Յուլիսի վերջը քաղաքին մէջ պաշար չէր մնացած և բերդերը կործանուեր էին. որով Վիքսպրիկ Յուլիսի սկիզբը անձնատուր եղաւ 18,000 պահանորդօք և Յուլիս 4ին Դաշնաւորք յաղթանակաւ մտան բերդը : Վիքսպրիկի անկման լրոյն վրայ, անձնատուր եղաւ նաև Փորդ Հըասըն 8000 զօրաք :

1864

1864

6. Պարտութիւնն Հարաւայնոց — Վերջ Քաղաքական Պատերազմին : — Ճէդդսպրիկի և Վիքսպրիկի պարտութիւնք, երկու մեծ հարուածք կ'ըլլային Դաշնակցոց, որոնք յայնմհետէ այլ ևս չէին կրնար յուսալ յաղթելու և պիտի շարունակէին պատերազմը պարզ պատուով ինկնալու համար : Արդէն բոլոր նահանգներէն չորս միայն կը մնային՝ Վիրճինիա, Հիւսիսային Քարոլինա, Հարաւային Քարոլինա և ճէորճիա, միւս ամէն նահանգք հնազանդեր էին դաշնաւորաց : Պայքարը լուծուած կրնար համարուիլ և « մի իշխանութեան » գաղափարը կը յաղթանակէր . կը մնար ընկճել զինուք չորս նահանգները : Կանխաւ յամին 1863ի Դեկտեմբերի ժողովոց նիստերուն մէջ ռամկապետական մը առաջարկած էր բանակցութեան մտնել Ռիչմոնտի վարչութեան հետ և « վերջ մը տալ այս արիւնահեղ, աւերիչ և վայրենի պատերազմին » : Բայց ժողովքը ընդհակառակն սահմանեց յառաջ վարել պատերազմը, առանց ընդունելու որ և է միջնորդութիւն, մինչև որ չմնայ ոչ մի ապստամբ : Եւ սակայն կը մերձենար Նա-

1864

խագահին ընտրութեան ժամանակը և կուսակցութիւնը սկսան զբաղիլ աւելի ընտրական պայքարներով, քան պատերազմի շարունակութեամբ: Նոյեմբեր 8ին Նախագահի ընտրութիւնը պիտի կատարուէր: Հաշտութեան և բանակցութեան մը կողմնակցաց ընտրելին էր Մաք Քլիւան զօրավարը, սակայն հակազերեվարք և հասարակապետականք յաղթանակեցին և կրկին ընտրուեցաւ Արրահամ Լինքոլն: Այս ընտրութեան իբր հետեանք մը՝ որոշուեցաւ շարունակել պատերազմը մինչև որ Միութիւնը նորէն հաստատուի, « ճանչցուի ազատութեան և մարդկային իրաւանց սկզբունքը և յայսմ հետէ սեւերն ալ յԱմերիկա հաւասար այլոց ունենան իրաւունք, և համարուին անդամք մարդկութեան, ըստեղծեալք ըստ պատկերի Աստուծոյ »: Եւ Սահմանադրութեան մէջ հաստատուեցաւ ստրկութեան բարձումը: Հարաւային Նախագահն ևս ձիֆըրսըն Տէվիս տեսնելով որ Հիւսիս շուգէր ընդունիլ Անջատումը, ինքը ևս ծանոյց պատերազմին շարունակութիւնը: Սակայն այլ ևս զօրութիւն չէր մնացած ի Հարաւ, ի զուր զինուեցան ստրուկները: Դաշնաւորաց Կրանդ և Շէրիտան զօրավարները մի և նոյն ժամանակ պաշարեցին Ռիչմոնդ-Փէդէրսպուրկ բերդերը որ վերջին ապաւէնն էր Դաշնակցաց և զորս կը պաշտպանէր քաջ զօրավարն Ռուպըրդ Լի ունեցած պինուորներով, որովհետև անհնարին էր այլ ևս նոր գունդեր հաւաքել, և դաշնաւոր զօրավարք քայլ առ քայլ կը յառաջէին առանց ընդդիմութեան մը, առջևնէն վանելով դաշնակցաց սակաւաթիւ գունդերը: Շէրման վանեց Հուտ, Հարտի և Պորըկար զօրավարաց բանակները և ծովակալն Տահլէ կրին՝ Սընտըր բերդին վրայ կանգնեց Միացեալ Նահանգաց աստղազարդ զրօշը, որ վար առնուած էր 1861ի Ապրիլ 12ին: Ահաւոր հրդեհ մը ճարակեցաւ Ռիչմոնտ մայրաքաղաքին մէջ որ այրեց աւերեց շտեմարանք, կայարան, զրահաւորք և անթիւ տունք և շէնքեր: Ամենայն ոք կը փախչէր. սակաւաթիւ զինուորք մնացեր էին քաղքին մէջ: Տէվիս մնացեալ գունդերը հաւաքեց ի Հիւսիսային Քարոլինա և յանձնեց Ճոնսդոնի, իբրև

վերջին ապաւէն մը փրկութեան և ի սպառ ջախջախման, անոնցմով խափանել Շէրմանի անցքը: Զինուորական ամենայն իշխանութիւն յանձնեց Լի զօրավարին. սակայն անօգուտ էր ամէն ջանք: Իաշնաւորաց սպարապետը Շէրիտան ուղղակի շուեց դէպ ի Ռիչմոնտ և Մարտ 24ին միացաւ Կրանդի հետ: Զօրավարն Լի ճարտար դարձուածքով մը կարծեց չըջապատելու երկու բանակքը, սակայն Շէրիտան յետ զանազան բաղխմանց Ապրիլ 2ին խորտակեց Իաշնակաց գունդերը և հազարաւոր գերիներ բռնեց: Նոյն երեկոյ Տէվիս թողուց Ռիչմոնտ մայրաքաղաքը և Լի՝ պարպելով զՓէդէրսպուրկ, Էվուէլ զօրավարին հետ սահմանեց քաշուիլ ի Տանվիլ. սակայն դաշնաւորք այնքան երազութեամբ հասան, որ Ապրիլ 6ին Էվուէլ Տիդոնվիլի քով իւր բոլոր գունդովը բռնուեցաւ և Լի Տանվիլի ճամբան գոց գտաւ: Յետ ամբողջ օրը յուսահատաբար ընդդիմանալու, այլ ևս հնար մը չգտնալով, Ապրիլ 7ին 25,000 զինուորովք անձնատուր ելաւ Հարաւայնոց՝ սլմենէն ճարտար և շատ անգամ յաղթող զօրավարը: Երկրորդ օրը Լինքոլն Նախագահը յաղթանակաւ կը մտնէր Ռիչմոնտի կապիտոլիոնը:

1863

1863

7. Սպանու մն Լինքոլն Նախագահին, Կրանդ՝ Նախագահին: -- Արրահամ Լինքոլն որ այնքան յամառութեամբ և աներկիւղութեամբ պատերազմին գլուխ կեցեր էր և ապա տեր էր Միացեալ Նահանգաց միութիւնը և զօրութիւնը, ինքը չվայլեց իւր այնքան եռանդեան արդիւնքը: Ապրիլ 14ին երեկոյ թատրոն կը գտնուէր իւր ընտանեօք, երբ Ուայքըս Պութ անուամբ մէկը ատրճանակի հարուածով մը զինքը սպաննեց գոչելով դերասանական ձեով մը « Այսպէս միշտ բռնաւորք » և թէ « Հարաւ ստացաւ իւր վրէժը »: Բոլոր Հիւսիսային Նահանգք ցաւեցան այս մահուան վրայ: Արրահամ Լինքոլն որ պարզ մշակութենէ հասեր էր մինչև այդ բարձր պաշտաման և պատւոյն, զովուած էր առ հասարակ ամենէն իբրև արդար, քաղցրարարոյ և բարեսէր անձ մը: Մարդասպանը բռնուելով ըսպանուեցաւ և Հարաւայինք որոնք կը համարէին թէ

այս մահը նոր շփոթից սկիզբ մը պիտի ըլլայ, խաբուեցան: Ըստ կարգաց Սահմանադրութեան փոխան նախագահը Անդրէաս Ճոնսըն ստանձնեց Նախագահութիւնը: Քիչ յետոյ բռնուեցաւ և բանտարկուեցաւ Ճիֆֆըրսըն Տէվիս, որ իւր դիզած հարստութիւններով կ'ուզէր փախչիլ յԵւրոպա, որով և բարձաւ Քաղաքական պատերազմին վերջին մնացորդը: Անկէ վերջը կը բացուէր ընդարձակ սաժանակիր ասպարէզ մը: Ամենայն ինչ խանգարեալ էր, հարկ էր նորոգել բարւոքել: Եւ Միացեալ Նահանգաց վարչութիւնը յետ այս պիտի մոլեգին քաղաքական պատերազմի մը, բնաւ վըրէժխնդրութեան ոգի մը շքուցուց հակառակորդաց նըկատմամբ, այլ յառաջեց բարեկամութեամբ և լրջութեամբ ինչպէս հանդարտ ժամանակի միջոց, նա մանաւանդ պարսաւեց և պատուհասեց որոնք քինու և վրէժխնդրութեան ոգի ցուցուցին: Մեծաստուար գունդեր առանց շփոթութեան մը ցրուեցան, որոնք դարձան իրենց տուները: Պատերազմի նաւերէն ոմանք վաճառուեցան և ժողովրդեան փութաջան զոհողութեամբ փութով գոցուեցան ահաւոր պատերազմի մը ծախքերը: ՎաճառակաՆութիւնը կեանք առաւ. Եւրոպա և Ամերիկա մէկմէկու միացան յարաբերութեամբ ընդովկիտնեան հեռագրին հաստատութեամբ: Եղան նաև տարածայնութիւնք ընդ Ժողովն և ընդ Ղոնսըն Նախագահը, որոնք մինչև ծանր կերպարանք առին, սևերուն քաղաքակցութիւն տալու խնդրոյն մէջ: Սակայն խոհեմ անձանց խորձրդով, չարեաց դիմաց առնուեցաւ և Ղոնսըն մնաց իւր պաշտաման մէջ ցնոր ընտրութիւն որ կատարուեցաւ 1868ի Նոյեմբեր 3ին, և յորում ընտրուեցաւ զօրավարն Կրանդ որ այնքան յատկութիւնք և քաջութիւնք ցուցուցեր էր Քաղաքական պատերազմին ժամանակ:

1868

8. Ալապամայի խնդիրը: — Քաղաքական պատերազմին սկիզբը յամին 1862 Մայիս 13ին, բրիտանական կառավարութիւնը հրատարակած էր որ թէ ըզՔաշնաւորս և թէ զՔաշնակիցս պատերազմողք կը ձանչնար, որով և բոլոր թագուհւոյն իշխանութեան ներքև եղած նաւահանգիստներուն խստիւ կը պատուի-

րէր պահել անկողմնակալ չէզոքութիւն: Սակայն այն չէզոքութիւնը շատ անհաւասար կերպով պահուեցաւ: Մինչ Հիւսիսական դաշնաւորաց նաւերուն և ոչ իսկ ածուխը նորոգել կը շնորհուէր, Հարաւային Դաշնակցաց ամէն բարեկամութիւնք կ'ըլլային և աչաց ներքեւ կը ներուէր իսկ որ զլիսաւոր նաւահանգիստներու մէջ զինուորական լրտեսութիւնք ըլլան ի վնաս դաշնաւորաց և մինչև ռազմամթերք բեռցուին: Նոյն իսկ երկու նաւք շինուեցան ի Լիվորփոլ՝ յԱնգղիա, որոնք իբրև վաճառական նաւք մեկնելով անգղիական դրօշով, յանկարծ զինուեցան և եղեն մարտանաւք Հարաւայնոց, որոց մին ստացաւ Ֆլորիս անունը միւսը Ալտոմօ, և ասոնք վեր ի վայր Ուլկիանոսին մէջ կ'ընթանային որսալու դաշնաւորաց առագաստաւոր նաւեր: Յամին 1854ի Յուլիսի 19ին, Դաշնաւորաց Քերսէն մարտանաւը յարձկեցաւ Ալտոմօյէ վրայ Չերպըրկի բացերը, և յետ ահաւոր կռուոյ մը, որ նշանաւոր մնացած է ծովային զօրութեան տարեգրոց մէջ, Ալտոմօ ընկղմեցաւ: Ուրիշ մարտանաւք ևս ելած էին անգղիական նաւարաններէ: Ի զուր Միացեալ Նահանգաց դեսպան, ի Լոնտրա բողոքեր էր առ ճոն Ռուսսըլ որ այսպէս կը բռնարարուէր չէզոքութիւնը: Անգղիա դարուս ամենայն խնդրոց մէջ, յայտ է միշտ իւր առտնին շահը նկատի առած է. և սոսանց խնդրոյն ստոյգ տեսակէտը դիտելու, կամ անկէ առաջ եկած այլոց վնասը: Ինքը որ հակառակ կը քարոզէր ստրկաց վաճառման, և սակայն կը պաշտպանէր գերեվարաց վարչութիւնը և կուսակցութիւնը: Երբ պատերազմը լիցցաւ ի նպաստ Հիւսիսայնոց, ի մեծ ցաւս Անգղիոյ որ Հարաւայնոց յաղթանակին կը փափագէր, նաև Ուոշինկթոնի կառավարութիւնը Անգղիայէն փոխարինումն պահանջեց իւր ժողովրդեան կրած այն վնասներուն համար, որոնք եղած էին հինարար արշաւող նաւերուն միջոցաւ և որք գնուած էին յԱնգղիոյ. և այս պատերազմին երկարելովը վաճառականութեան եկած վնասներուն համար: Այս պահանջը և խնդիրը կոչուեցաւ խնդիր Ալտոպամայի: Այնքան պայքարը և հակառակութիւնը սաստ-

կացաւ երկուց Պետութեանց մէջ, որ ծովային պատե-
 րագմի մը պատրաստութիւնք սկսան: Սակայն յամին
 1866 Միացեալ Նահանգաց վարչութիւնը յանձն ա-
 ռաւ որ խնդիրը իրաւասութեան¹ մը ենթարկուի: Նոյ-
 1871 նը ընդունեցաւ նաև Անգղիա յամին 1871: Սահմա-
 նուեցաւ որ ըլլայ ի ճինևրա ժողովք որուն կ:սզմողք
 ըլլան նուիրակ մը յԱնգղիոյ, ի Միացեալ Նահան-
 գաց, ի Պրագիլէ և ի Հելուեսիոյ, որոց նախագա-
 հէ իտալական պաշտօնետոյն Աքլոփիս, հմուտ օրէնս-
 գէտը: Իրաւասունները յետ երկար քննութեանց, դա-
 տապարտեցին զԱնգղիա 15,000,000 տողարփ փոխա-
 րինութեան առ Միացեալ Նահանգս, զոր խոհեմու-
 թեամբ յանձն առաւ վճարելու բրիտանական վար-
 չութիւնը:

1. Arbitrage.



ԲՐՈՒՍԻԱ ԸՆԴԴԵՄ ԱՒՍՏՐԻՈՑ — ՍԱՏՈՎԱ

1. Գժտութիւնք ընդ Բրուսիա և ընդ Աւստրիա. — 2. Դաշնակցութիւն Բրուսիոյ ընդ Իտալիոյ. — 3. Բրուսիա, Աւստրիա և Գերմանական Տէրութիւնք — Հաշտութեան մը փորձեր. — 4. Բրուսիա կը մտնէ ի Հոլշտայն. բողոք Գերմանական Աւագածողովոյն. Բրուսիա ընդդէմ Աւագածողովոյն. — 5. Բանակ բրուսիական և բանակ աւստրիական. — 6. Բրուսիա կը տիրէ Սաքսոնիոյ, Հէսսէ Գասսէլի, Հանովերի. Պատերազմ ի Լանկէնսայցա. — 7. Բանակք ի Պոնիմիա — Պատերազմ ի Միւնխէնկրաց և Նախտա. — 8. Նախտա յաղթութեան լուրը յԵւրոպա և ի Պէռլին. — Գուլիէլմոս Թազաւորը ի բանակն. — 9. Պատերազմ Սատովայ. — 10. Բանակցութիւնք Զինադադարման. — Շարունակութիւն պատերազմին. Նիքոլսպուրկի Զինադադարումը. — 11. Պատերազմունք Մայնի վրայ — Բրուսիացիք կը մտնեն ի Ֆրանքֆորդ. — 12. Հաշտութիւն ֓րակայի:

1. Գժտութիւնք ընդ Բրուսիա եւ ընդ Աւստրիա: — Բոտ Վեննայի դաշանց յամին 1864¹, Շլէզվիկի կառավարութիւնը կը մնար Բրուսիոյ և Աւստրիա պիտի մատակարարէր զՀոլշտայն և զԼաւէնպուրկ: Ապա յամին 1865 Կաշտայնի դաշամբ Բրուսիա դրամական գումարով մը կը ստանար Լաւէնպուրկի դքսութիւնը, Քիէլ և Ռէտէնպուրկ: Բրուսիա Դքսութեանց առժամանակեայ վարչութիւնը բոլորովին ի նպաստ բրուսիական աշխարհակալութեան մը կ'ուղղէր, մինչ Աւստրիա բնաւ չէր ուզեր խանգարել Դաշնակցական դրութիւնը

յամենայնի. որուն համար մեծապէս տժգոհ էր կոմսն Պիսմարք. և ինչպէս կրցեր էր ճարտարութեամբ համոզել զԱւստրիա և դրամական փոխարինութեամբ մը ստանալ զԼաւէնպուրկ, նոյնը ուզեց ընել նաև Հոլշդայնի համար: Սակայն Վեննայի արքունիքը իրեն անպատուութիւն համարեցաւ այսպիսի տուրևաւ մը և հակառակ դաշնակցական կարգաւորութեանց ի Գերմանիա. նա մանաւանդ ամենայն առթի մէջ սկսեր էր դիտել Պիսմարք կոմսին ձգտումը յաշխարհակալութիւն, հակառակ աւստրիական ազդեցութեան: Հոլշդայնի մասին Պիսմարքի առաջարկին մերժումը աւելի ևս գրգռեց այդ ոգին և այն օրուընէ բրուսիական դիւանագիտութիւնը ցրտութեամբ սկսաւ վարուիլ Աւստրիոյ հետ և ստէպ կը լսուէր այս տրտունջը որ՝ Հոլշդայնի մատակարարութեան դրութիւնը պատճառ կ'ըլլար կնճոեելու Բրուսիոյ և Աւստրիոյ մէջ յարաբերութիւնքը: Պիսմարքի պարոյթը իւր սաստկագոյն աստիճանին հասաւ երբ Յունուարի մէջ Ալթոնա քաղաքին ժողովրդեան մաս մը յայտնեց իւր համակրանքը առ « օրինաւոր և սիրեցեալ դուքսն իւր Փրեդերիկոս իշխան դուքս Ալկուզէնպուրկի » և Աւստրիոյ կառավարութիւնը չէր արգելած այդ ցոյցը: Պիսմարք անդէն ծանր և կծու ծանուցագրով մը կշտամբեց, պախարակեց Աւստրիոյ բռնած ընթացքը ի Բքսութիւնա, որ ըստ իւր կարծեաց « կը խրախուսէր դիւափոխականս և կը խանգարէր Վաշդայնի դաշինքը, թողլով որ իւր աչաց առջև եղած կարգաւորութեանց հակառակ ըզգացմունքներ յայտնուին, զոր ուրիշ կերպով չէր կրնար ըմբռնել Բրուսիա, բայց իբր հետեանք մը դարական հակառակութեան Աւստրիոյ ընդդէմ Բրուսիոյ հարկ էր որ նոյն դրութիւնը պահուի ի Հոլշդայն, ինչ որ ինք կը պահէր ի Շլէզվիկ »: Պիսմարքի այս ծանուցագիրը յայտնապէս գրգիռ մ'էր և սպառնալիք. սակայն Աւստրիոյ Արտարին Գործոց պաշտօնեայն՝ կոմսն Մէնստորֆ հանդարտ ոճով մը պատասխանեց, մերժելով Պիսմարքի ամբաստանութիւնը, ծանուցանելով միանգամայն որ ինքը երբէք զՀոլշդայն Աւս-

տրիոյ սեպհականութիւն մը չէր համարեր . բայց և ըստ դաշանց Կաշդայնի ոչ ոք իրաւունք ունէր քննելու իւր մատակարարութեան դրութիւնը : Այս միջոցիս Պիսմարք արդէն գաղտ յառաջ վարեր էր իտալիոյ հետ դաշնակցութեան մը բանակցութիւնք ընդդէմ Աւստրիոյ, որով և համարձակութեամբ մը ծանոյց առ կոմսն Քարոլի՝ գեսպան Աւստրիոյ ի Պէտլին որ « Աւստրիա և Բրուսիա կը ստանան իրենց յարաբերութիւնքը այն հիման վրայ, ինչ որ էին նախ քան զՏանիմարքայի պատերազմը » : Այս ծանուցմունքը կրնար պատերազմի յայտարարութեան կերպ մը համարուիլ և Աւստրիա ըմբռնեց այդպէս : Զինուորական բարձր խորհուրդ մը խմբուեցաւ ի Վեննա, յորում կը գտնուէր և մարալախտն Պէնէտէք : Երբէք Աւստրիա չէր կրնար գուշակել որ Բրուսիա այնպէս հրահանգեալ և կազմ ըլլայ ինչպէս յետոյ տեսնուեցաւ . ամենայն ոք կը համարէր 1850ի պէս անգամ մը ևս խոնարհեցնել զԲրուսիա, որով և ընդունուեցաւ պատերազմը և հրամայուեցան պատրաստութիւնք եթէ ընդդէմ Բրուսիոյ և եթէ ընդդէմ իտալիոյ, որուն դաշնակցութիւնը ընդ Բրուսիոյ այլ ևս գաղտնիք մը չէր : Իսկ Բրուսիա կը շարունակէր իւր ոճը, խօսելով և պանծացնելով Շլէզվիկ Հոլշդայնի միութեան գաղափարը Բրուսիոյ միապետութեան հետ : Հոլշդայնի ազնուականաց փոքր նուիրակութիւն մը աղերսագիր մը ներկայացնելով այդ կարծեաց համաձայն, Պիսմարք առաւել ևս տարածեց Բրուսիոյ պահանջքը : Միանգամայն ձեռք առաւ ամէն խստութիւն ընդդէմ կուսակցաց Աւիուտգէնպուրկի դքսին, սպանալով իսկ զանիկայ կայանաւորելու թէ յանկարծ ոտք կոխէր Շլէզվիկի հողոյն վրայ : Այսպէս յայտնելով որ ինքը ոչ իբրև առ ժամանակեայ մաստակարարող այլ իբր տէր կը նկատէր զԲրուսիա Շլէզվիկ Հոլշդայնի :

1866
Մարտ 1

2. Գաշնակցութիւն Բրուսիոյ ընդ իտալիոյ : — Պիսմարք աւելի համարձակութիւն մը առած էր գործելու ընդդէմ Աւստրիոյ, յետ ապահովելու դաշամբ իտալիոյ աջակցութիւնը ընդդէմ Աւստրիոյ : Արդէն յամին 1864 Պիսմարք սուղարկած էր իտալիոյ մաք-

սային դաշնակցութիւն մը, հաւասար գերմանական մաքսային դրութեան: Յետոյ յամին 1865ի Մայիսի մէջ երբ Բրուսիոյ և Աւստրիոյ յարաբերութիւնք թըշնամական կերպարանք մը սկսան առնուլ. Պիսմարք նախ նորոգեց մաքսային դաշանց առաջարկը. ապա Օգոստոսի մէջ կը հարցնէր Լամարմորա զօրավարին որ էր Նախագահ պաշտօնարանին, թէ արդեօք Իտալիա կը միանա՞ր Բրուսիոյ հետ պատերազմելու ընդդէմ Աւստրիոյ:

Իտալիա յամին 1864 Բրուսիոյ առաջին մաքսային առաջարկին եռանդ մը չէր ցուցուցած. յստալով գաղտնի մտերմական դաշնախօսութեամբք համոզել Վեննայի արքունիքը դրամական փոխարինութեամբ մը թողուլ զՎենետիկ Իտալիոյ, և Իտալիա պիտի ջանար որ Աւստրիա ուրիշ կողմ հողային փոխարինութիւն մը ունենայ և կամ աւստրիական իշխան մը դրուի Ռումանիոյ գահուն վրայ, յետ հրաժարելու Կուզա իշխանին: Սակայն երբ Աւստրիա բացարձակապէս մերժեց Վենետիոյ համար եղած առաջարկը, այն ատեն Իտալիա աւելի յօժարութեամբ մտիկ ըրաւ Բրուսիոյ մաքսային առաջարկին և Պիսմարքի հրաւիրելովը Կովոնէ զօրավարը զրկուեցաւ ի Պէռլին իբր մաքսային դաշանց համար, բայց աւելի քննելու համար Բրուսիոյ դիտաւորութիւնը Աւստրիոյ նկատմամբ: Զօրավարն Կովոնէ հասաւ ի Պէռլին Մարտ 10ի և Պիսմարք կը սպասէր իրեն Իտալիոյ դեսպանատունը: Աւստրիոյ պատերազմական հանդերձանք յայտնի էին, Պիսմարք ծանուցագրով մը հրատարակեք էր որ հարկ էր գերմանական Դաշնակցութեան մէջ փոփոխութիւնք մուծանել: Պատերազմ մը ընդ Բրուսիա և ընդ Աւստրիա անհրաժեշտ էր, և սակայն որչափ որ յառաջ կը մղուէին տագնապեցուցիչ պատահարք, այնքան Պիսմարք անտարբերութիւն կը սկսէր ցուցընել Իտալական դաշնակցութեան մասին. իւր առաջարկը առ Կովոնէ զօրավարը այն էր՝ որ Իտալիա սկսի պատերազմիլ ընդդէմ Աւստրիոյ և Բրուսիա ի Գերմանիա զինուորական շարժմամբք օգնած կը համարուէր իրեն: Իտա-

լիա բացարձակապէս մերժեց այս առաջարկը, չուզելով երբէք ինքը սկսիլ պատերազմը: Պիսմարք այնքան յարափոխ առաջարկք ըրաւ Իտալիոյ, մինչև զօրավարն կոչունէ Մարտ 22ին կը ծանուցանէր իւր Պետութեան որ այլ ևս աւելորդ էր իւր մնալը ի Պէռլին¹: Բրուսիա—Իտալական դաշնակցութեան մը այսքան երկարաւ ձգելով, Նափուէոն Գ և ի Բարիզ Իտալական դեսպանն՝ Նիկրա ասպետը, խորհեցան կրկին աւստրիա—իտալական դաշնակցութիւն մը, ըստ որում Աւստրիա պիտի նուիրէր զՎենետիկ Գաղղիոյ և Գաղղիա զայն պիտի շնորհէր Իտալիոյ. իսկ Աւստրիա պիտի ընդարձակուէր ի Շլէսիա և կամ ի Ռումանիա, որուն գահը պարսպ էր: Պիսմարք իմացաւ պատրաստուած հարուածը և աճապարեց Ապրիլ 20ին ստորագրել Իտալիոյ և Բրուսիոյ մէջ արդէն շատոնց պատրաստուած դաշինքը լստ որում. Ա. Նախ Բրուսիա պատերազմ պիտի սկսի՝ ձեռք բերելու Գերմանական դաշնակցութեան մէջ պահանջը, և անմիջապէս Իտալիա ևս պատերազմ պիտի հրատարակէ: Բ. Այն ժամանակէն երկու թագաւորք, իրենց բոլոր ուժով պիտի կռուին և մին աւանց միւսոյն պիտի չկրնայ հաշտութեան դաշինք կռելնոյն իսկ թէ Աւստրիա հաւանի թողուլ զՎենետիկ Իտալիոյ: Գ. Այս դաշինքը էր երեք ամսուան համար: Երբ Աւստրիա իւր դեսպանին միջոցաւ իմացաւ գաղտնապէս այս դաշինքը, անմիջապէս զօրք սկսաւ թափել ի Վենետիկ յանկարծակի բաղխելու զԻտալիա: Իտալիոյ պաշտօնարանը տագնապեցաւ և դիմեց առ Պիսմարք որ պատասխան տուաւ թէ ըստ դաշանց ինքը պարտական չէր օգնութիւն հասնելու յԻտալիա և սակայն պիտի առաջարկէր իւր վարչութեան խորհրդոյն, փութով սկսիլ պատերազմը, այսպէս բաժնելու Աւստրիոյ զօրութիւնքը:

Իտալիա ուզեց իմանալ նաև Նաբուէոն Գի գաղտնարը այս դաշակցութեան մասին: Ընդհանուր

1. Պաշտօնական Հեռագիրք « Քիւ ՚ը — էի էյ » Համարմորս զօրավարին. 1866 Մայիս:

կարծիք էր մանաւանդ յԱւստրիա, որ Նաբոլէոն Գ շոնտոսեան գաւառաց պահանջով մը, սպառնական դիրք մը պիտի ունենար Բրուսիոյ նկատմամբ: Սակայն Նաբոլէոն միշտ համակրող Իտալիոյ, խոստացաւ Իտալիոյ երբէք ի փնաս իրեն չմիջամտել. այսպէս յոյս մը կար անգործ չէզոքութեան ի կողմանէ Գաղղիոյ: Աւստրիա այն ատեն սկսաւ ըմբռնել իւր դրից զժուարութիւնը և ծանրութիւնը: Նուիրակ զրկելով ի Տիրէնցէ առ վարչութիւնն Իտալիոյ, ծանոյց որ Գաղղիոյ միջնորդաւ կը շնորհէր զՎենետիկ, միայն թէ Իտալիա յայնձն առնու չէզոք կենալ Բրուսիոյ և Աւստրիոյ կռուոյն մէջ: Մեծ էր Իտալիոյ համար փորձութիւնը. Նաբոլէոն կողմնակից էր այդ ոճով Վենետիկոյ ազատելուն. Բրուսիա սազնապալից վայրկեաններ ունեցաւ կասկածելով իր դաշնակցին վրայ: Սակայն յԻտալիա գրեաթէ ամէն կուսակցութիւնք հակառակ էին այս օրինակ Վենետիկ ստանալու մասին, զոր Ազգին յետին անպատուութիւն կը համարէին. և Իտալիա մերժեց Աւստրիոյ նուէրը, պատճառ բերելով որ ինքը արդէն կանխաւ ընդունէր էր Բրուսիոյ հետ դաշինքը¹:

3. Բրուսիա, Աւստրիա եւ Գերմանական Տէրութիւնք — Հաշտութեան մը փորձեր: — Այն օրուներէ յորում Պիսմարք սահմանած էր իւր մտացը մէջ Աւստրիոյ դէմ պատերազմը, ամէն առթով ջանացեր էր համոզել Գերմանական Դաշնակցութեան Պետութիւնքը որ իրենց շահը և կեանքը զօդեալ էր Բրուսիոյ զօրանալուն հետ, որուն տկարանալովը վտանգ կար իրենց ինքնիշխանութեան: Պիսմարք կ'ուզէր գիտնալ մի առ մի իւրաքանչիւրին տրամադրութիւնը և որո՞ց վրայ արդեօք կարող էր վստահել: Սակայն երկրորդական պետութիւններէն ոչ մին փափագ կը ցուցընէր պատերազմի մը, նա մանաւանդ Գերմանիոյ ամէն կողմ խաղաղութեան համար կ'աշխատուէր: Ի զուր Պիսմարք կը հրատարակէր գերմանական դաշնակցութեան

1. « Քիւ ՚ը -- էլէ 171 » . Պաշտօնական հեռագիրք Համարմորայի Մայիս 22:

մէջ բարեփոխութիւնք մտցնել, ոչ ոք կը վստահէր և կը հաւատար հետեւելու Բրուսիոյ, որուն ձգտումները այլ ևս գաղտնի չէին և ամենայն ոք հետամուտ էր որ խաղաղութիւնը չվրդովի. և սակայն զինուորական պատրաստութիւնք և բանակաց շարժումները տագնապեցուցիչ կերպարանք մը կուտային: Աւստրիա կ'ըսէր որ երբէք խորհուրդ մը ունեցած չէ բաղխելու զԲրուսիա. և ի Պոհնմիա ու յիտալիա ներքին տեղական յուգմունք զինքը կը բռնադատէին պաշտօնորդքը բաղմացնելու: Նոյնը կը պնդէր Պիսմարք որ երբէք մտածութիւն մը ունեցած չէ բաղխելու զԱւստրիա և պատրաստ է զինաթափ ըլլալու, թէ նոյնը կատարէ նախ Աւստրիա որ իրմէ առաջ սկսած էր զինուել: Աւստրիա կը պատասխանէր որ յանձն կ'առնուր զինաթափութիւն մը մի և նոյն ժամանակի մէջ, բայց Բրուսիոյ սահմանաց նկատմամբ միայն, որովհետև իտալիոյ հանդերձանքը իրեն կասկած կու տային. և հարկ էր հոն բանակները բազմացնելու: Պիսմարք զինաթափութիւն կը պահանջէր հաւասարապէս ամէն կողմ, գիտելով որ այդ սնկարելի էր յիտալիա, որ իրենցմէ կախումն չունէր: Այսու հանդերձ Գերմանական փոքր Պետութիւնք դեռ յուսահատած չէին խաղաղութեան համար ջանքերէ. և Ֆրանքֆորդի Աւագաժողովը միաձայն առաջարկեց « հրաւիրել զԲրուսիա հանդարտեցնելու ոգիները»: Ամենայն ոք յուզմանց և խռովից պատճառ կը համարէր զԲրուսիա և մանաւանդ զՊիսմարք, որուն դէմ մեծ էր ընդհանուր գերմանական ատելութիւնը: Եւ որովհետև կոմսը այս միջոցիս ուղեորութիւն մը ըրած էր ի Պիսարից իրր բաղնիքի ջուրերու առողջութեան համար, ուր կը գտնուէր նաև Նարոյոն Գ, ընդհանուր հակառակորդաց ամբաստանութիւնն էր որ Քաղղիոյ չէզոքութիւնը ստանալու համար, Նարոյէոն Գի խոստացած էր Սաարպրուքի Նահանգը իւր ւածխահանքերով: Ամենը զինքը հայրենեաց մասնիչ կը կոչէին միայն Բրուսիոյ մեծութեան համար: Այնքան միտքերը յուզեցաւ որ ժողովրդենէն բարեմոյն երիտասարդ մը կարողոս Քոհն կարծեց լաւ գործ մը կատարել սպաննե-

լով զՊիսմարք. բայց հարուածը շեղեցաւ և յանցաւորը բռնուեցաւ որ ինքզինք սպաննեց բանտին մէջ: Ոգիները աւելի գայրացան Պիսմարքի դէմ երբ թագաւորը արձկեց Խօսարանը և զինուորական հանդերձանք յառաջ մղուեցան: Գերմանական պետութեանց շատերը կը փափագէին չէղոք մնալ, ոմանք զայդ վատութիւն կը համարէին, այլք չէին ուզեր միանալ Աւստրիոյ հետ որ միշտ արհամարհող եղեր էր Գերմանական Դաշնակցութեան. ուրիշները կ'աշխատէին միջնորդութեան մը. միայն Սաքսոնիա յայտնպէս Աւստրիոյ կուսակից կը քարոզէր ինքզինքը, միշտ հակառակ ըլլալով Բրուսիոյ աշխարհակալ գաղափարաց: Գերմանիայէ զատ Նաբոլէոն ևս չէր ուզեր որ խաղաղութիւնը վրդովի. ուզեց Դեսպանաժողովի մը կանչել զԱնգղիա և զՌուսիա ի Բարիզ, հրաւիրեց ևս զԱւստրիա և զԲրուսիա. երկուքն ալ յանձն առին գալու, սակայն Աւստրիա պայման կը դնէր որ այս Դաշնախօսութեան մէջ աշխարհակալութեան որ և է առաջարկ մը պիտի չըլլար: Եւ այդ չէր կարելի ըստ Նաբոլէոնի որ զՎենետիկ կ'ուզէր տալ Իտալիոյ. որով հաշտութեան մը ամէն փորձեր ապարդիւն ելան:

4. Բրուսիա կը մտնէ ի Հոլշդայն. բողոք գերմանական Աւագաժողովոյն. Բրուսիա ընդդէմ Աւագաժողովոյն: — Յայնմհետէ անխուսափելի էր պատերազմը և փոքրիկ կայծ մը բաւական էր յառաջ բերելու ահաւոր հրդեհը և այս կայծը թերևս թուալ Աւստրիոյ: Վեննայի վարչութիւնը առաջարկեց Գերմանական Աւագաժողովոյն՝ Դքսութեանց խնդրոյն վրայ որոշողութիւն մը ընել ըստ իրաւանց. միանգամայն աւստրիացի մարաշխատն Կապլէնց, կառավարիչ Հոլշդայնի, հրաման կ'ընդունէր Յունիս 11ին գումարել Հոլշդայնի գաւառքը յիգըհօէ և ժողովրդախումբ քուէով հարցնել երկրին կամքը վարչութեան եղանակին նկատմամբ: Բրուսիա որ չէր ընդունած օտար միջամտութիւն մը Դքսութեանց խնդրոյն մէջ, բողոքեց Աւստրիոյ ըրածին դէմ, զոր հակառակ կը համարէր Կաշդայնի դաշանց և որովհետև այդ դաշանց պայմանաժամը լրա-

նալու վրայ էր և յայնմհետէ երկու Պետութիւնք, ինչպէս երբեմն, միարան պիտի մատակարարէին Գրսութիւնքը, այն պատճառաւ Մանդէւֆֆէլ զօրավարը հրաման ընդունեցաւ բանակով մտնել ի Հոլշդայն, հրաւիրելով ևս զաւտորիացի հրամանատարը, որ թէ ուզէր, ինքն ալ մտնէր ի Շլէզվիկ և խաղաղութեամբ հաստատել նախկին աւստրիա-բրուսիական կառավարութիւնը Երկուց Գրսութեանց մէջ: Մարաջախան Կապլէնց, առանց սպասելու Բրուսիացոց մտնելուն, քաշուեցաւ յԱլզոնա և հոնկէ բողոքեց եղածին դէմ, չընդունելով միանգամայն աւստրիա-բրուսիական մատակարարութիւն մը: Այն ատեն Մանդէւֆֆէլ մտաւ ի Հոլշդայն, արգիլեց զաւստաց զումարումը և զպարոն Շիլ Փլէստէն փարչութեան զլուխ զբաւ իբր Նախագահ: Մարաջախան Կապլէնց սակաւ զունդեր ունենալով իր հրամանաց ներքև, խոհեմութիւն համարեցաւ անոնցմով քաշուիլ ի Պոշեմիա: Աւստրիա՝ Հոլշդայնի զբաւումը ընդդէմ Գերմանական գաշանց համարեցաւ և հրաւիրեց զաշնակցութեան Պետութիւնք, բաց ի Բրուսիոյ, բանակինն պատրաստել: Ֆրանքֆորդի Աւագածողովը մասնաւոր զումարուեցաւ այս աստջարկին համար Յունիս 14ին. Բրուսիոյ նաւերակը բողոքեց որ զայդ ընդունելը հաւասար էր պատերազմի հրատարակութեան: Աւագածողովը մտիկ չըբաւ և մեծամասնութեամբ ընդունեցաւ Աւստրիոյ առաջարկը: Անդէն Բրուսիա ծանոյց որ այդպիսի որոշողութիւն մը ընդդէմ ըլլալով դաշնակցական կարգաց, ինքը ոչ միայն կը քաշուէր Աւագածողովէն, այլ և կը ցրուէր զայն: Ապա կը հրատարակէր գերմանական գաշնակցութեան մը նոր հիմունքը, որոյ համեմատ Աւստրիա կը հանուէր Գաշնակցութենէն իբրև պատճառ երկպառակութեանց, և գաշնակցութիւնը մէկ միայն բանակ մը պիտի ունենար, բաժնուած երկուքի՝ Հիւսիսային և Հարաւային. առաջնոյն պիտի հրամայէր Բրուսիա և երկրորդին՝ Պավիերա: Սակայն Պիամպրֆի մտաց մէջ ասիկայ պարզ փորձ մ'էր այն գաշնակցական միութեան, որուն գլուխ միայն զԲրուսիա սահ-

մանած էր: Եւ իւր յղացած յանդուգն գաղափարին հաւասար ունեցաւ աննկուն կամք մը և զօրութիւն զայն գործադրելու:

5. Բանալին բրուսիական եւ բանալին աւստրիական: — Արդէն Բրուսիա երկար ժամանակէ ի վեր իւր զինուորական կազմակերպութեամբը կը պատրաստուէր այս մեծ պատերազմին զոր Մոլդֆէ զօրավարը « Պատմական հարկ » մը կոչած է¹. և երբ Ապրիլ 24ին Աւստրիա մերժեց հաւասարապէս զինաթափ ըլլալու ի Գերմանիա և յիտալիա, հինգ բանակք՝ 549,000 զինուորօք կազմ էին և Յունիս 6ին կրնային մտնելու ի ճակատամարտ: Արևելեան մեծ բանակին ընդհանուր հրամանատարը պիտի ըլլար ինքնին Թագաւորը, իւր սպայակուտին զլուխ ունենալով զզօրավարն Մոլդֆէ: Այս Մեծ բանակը կը բաժնուէր դարձեալ երեք մասնաւոր բանակի. Կեդրոնական կամ Առաջին բանակ՝ որուն ընդհանուր հրամանատարն էր իշխանն Փրեդերիկոս Կարոլոս Բրուսիոյ, իւր զօրավարաց մէջ ունենալով նաև զիշխանն Ալպէրդ Բրուսիոյ: Չախակողմեան կամ Երկրորդ բանակ՝ որուն ընդհանուր հրամանատարն էր Թագաժառանգ իշխանը Փրեդերիկոս, իւր զօրավարաց Թուոյն մէջ ունենալով զիշխանն Օգոստոս Վիւրդէմպէրկի և զզօրավարն Շոյայնմէց: Էլպայի կամ Երրորդ բանակ՝ որուն ընդհանուր հրամանատարն էր զօրավարն Հէրվարդ Ֆոն Պիդդէնֆէլտ: Այս դարուս մէջ երբէք Բրուսիա այսպիսի մեծ բանակ մը կազմած չէր, արդիւնք իւր զինուորական կազմակերպութեան. և որչափ որ իւր զօրավարաց անուանքը դեռ անծանօթ էին Եւրոպիոյ համար, դեռ ոչ ոք գիտէր Մոլդֆէի անունը, սակայն պատերազմին ելքը նոր լոյս մը ծագեց բրուսիական բանակին կազմակերպութեան վերայ, և մինչ երբեմն ընդհանուր արհամարհութեան նիւթ եղած էր և մասնաւոր թէ ստէպ պատճառ ծաղրածութեանց ի Գաղղիա, 1866էն վերջը ծանր և լուրջ նիւթ մը պիտի ըլլար ուսումնասիրելու ամէն ազգաց

1. Տեղեկագիր բրուսիական Սպայակուտին:

ռազմագէտներու . բանակ մը՝ յորում ամենայն զինուոր ունէր սպայի մը կարևոր տեղեկութիւնք և ամենայն սպայ հրամանատարի մը պէտք եղածը այլուր, ցուցնելով որ յաղթութեան համար պատերազմական խանդի և քաջութեան հետ ներկայ ժամանակիս կարևոր էր և ուսումն : Բրուսիական բանակին հաւասար էր թուով և եռանդով նաև աւստրիական բանակը որ երկու զլիաւոր բաժանմունք ստացաւ Հարաւային կամ Իտալիոյ բանակ, Հիւսիսային կամ Պոնդմիոյ բանակ : Որչափ որ Փրանկիակոս Յովսէփ, զինուորական կայսր մը, ինքնին կը փափագէր զլուիս կենալու Հիւսիսային բանակին, սակայն 1859ի Սոլֆերինոյի պատերազմին յիշատակը, իրեն անբաղդութիւն մը կ'ընծայէր ի պատերազմի՝ ժողովրդական մտաց մէջ, որով և այդ բանակին որ ունէր 271,000 զինուոր, ընդհանուր հրամանատար անուանեց զմարաշախտն Պէնէտէք, որ բժշկի մը որդի, խոնարհ աստիճանէ իւր արութեամբը և ռազմագիտութեամբ մանաւանդ Իտալական պատերազմաց մէջ, զինուորութեան ամենէն բարձր և ամենէն ժողովրդական կէտին հասեր էր : Իւր զօրավարաց թուոյն մէջ էին զօրավարն Գլամ-Կալլաց, զօրավարն Թուն, արշիդուքսն Էրնէսդ, զօրավարն Ֆէսդէդիչ, արշիդուքսն Լէոփոլտ և զօրավարն Կապլէնց : Հարաւային բանակին ընդհանուր հրամանատար կ'անուանուէր արշիդուքսն Ալպէրդ, որդի քաջանուն իշխանին Կարոլոսի Աւստրիոյ, որ Նաբոլէոն Առաջնոյն ամենէն յամառ ախոյեանն եղեր էր : Երկու բանակաց իսկ զինուորական Ռազմագիտութեան դիւանին զլուիս էր զօրավարն Քրիստմանիք : Հիւսիսային բանակը ինքը պիտի չսկսէր յարձակողականը այլ պիտի սպասէր թշնամուոյն Օլմիւցէն մինչև Միւնխէնկրացի թիկունքը :

Աւստրիա դիմեց նաև գերմանական Աւագաժողովոյն, որպէս զի կեդրոնական դաշնակից այն Պետութիւնք, որոնք Աւագաժողովոյն մէջ Յունիս 14ի ընդունած էին իւր առաջարկը, իրենց բանակները զրկեն միանալու աւստրիական բանակին : Սաքսոնիա որ Աւստրիոյ և Բրուսիոյ պատերազմաց մէջ միշտ կայսերա-

կան բանակաց յառաջապահութիւն վարած է, անդէն ինքզինքը պատրաստ ցուցուց անակցելու իւր հին դաշնակցին: Սակայն Աւստրիոյ իղձը աւելի Պավիէրայի համար էր որ կրնար ի դաշտ հանել 80,000 զինուոր. և Պավիէրա յետ երկար վարանմանց, վերջապէս սահմանեց զրկել բանակը ընդ հրամանատարութեամբ Պավիէրայի Կարոլոս ծեր իշխանին: Այս բանակը պիտի ըլլար Եօթներորդ բանակ և Ութերորդ բանակ մը ևս կազմուեցաւ որուն մասնակցեցան Հաննովէր, Վիւրդէմպէրկ, Երկու Հեսսէները և Պատէն. Ութերորդ բանակին հրամանաւար ընտրուեցաւ յետ կուսակցական մրցմանց՝ իշխանն Աղեքսանդր Հէսսէի: Իսկ ընդհանուր բարձրագոյն հրամանատարութիւնը ընծայուեցաւ Պավիէրայի Կարոլոս իշխանին, որ իւր սպայակուտի գլուխ՝ Ծոն տէր Թան զօրավարը զրկեց ի վեննա բանակցելու և սահմանելու Պավիէրայի գունդերէն որչափ ի Պոհմիս զրկուելու մասին: Եւ սակայն Յունիս 18ին վեննայի վարչութիւնը կ'իմանար որ Պավիէրա մտադիր չէր իւր երկրէն այդչափ հեռու զրկելու իւր բանակը. և դաշնակցութեան բանակաց վարանմունքը և դանդաղութիւնքը, մեծ ազդեցութիւն ունեցան պատերազմին սկզբնական յաջողութեանց վերայ ի նպաստ Բրուսիոյ:

6. Բրուսիա կը տիրէ Սաքսոնիոյ — Հէսսէ Գասսէի, Հաննովէրի — Պատերազմ ի Լանկէնսայցա: — **Յունիս 15** օր վերջը, Պիսմարք վերջնագիր մը ուղղեց առ Սաքսոնիա, Հաննովէր և Հեսսէ Գասսէլ, տալով իրենց տասն և երկու ժամ պատասխանելու համար: Երբ վերջնագիրք մերժուեցան, բրուսիացի գունդերը երազութեամբ չուեցին Աւստրիացիքը բաժնելու ի Պավիէրացուց և ապահովելու Արևելեան և Արևմտեան Բրուսիոյ մէջ բանակաց հաղորդակցութիւնքը: Պէնէտէք իւր ծրագրին մէջ ունէր բռնելու զՍաքսոնիա և առ այս կը շարժէր, երբ Բրուսիա գուշակելով երազութեամբ և թափով դիմեց այն կողմը: Լչպայի բանակը Հէրվարթ զօրավարին հրամանատարութեան ներքև արդէն Յունիս

6ին մօտ էր սահմանագլխին և 18ին մտաւ ի Տրէզտա, զոր Սաքսոնիոյ Յովհաննէս Թագաւորը չկարենալով պաշտպանել, թողուցեր էր մեկնելով Թագաժառանգին և Պէօսդ պաշտօնէին հետ ի Պոհնմիա աւստրիական բանակը: Փութով, յետ Տրեզտայի, տիրեցին Բրուսիացիք Լայպցիկի և ամբողջ Սաքսոնիոյ, յորում հաստատեցին կառավարութիւն մը, ջանալով յամենայնի քաղցրութեամբ գնալու ժողովրդեան հետ, « որուն հետ չէր պատերազմին, ինչպէս ամենուրեք կը հռչակէին, այլ ընդդէմ վարչութեան »: Այս միջոցիս արդէն Մանդէլֆֆէլ զօրավարը անցեր էր գլխաւ, և բռնադատելով անձնատուր ըլլալու Սդատէի պահանջողքը և յետ տիրելու հոն եղած պատերազմական անբաւ միջերից, Լինէպուրկի ճամբով դիմեր էր ի Հաննովէր, զոր Գէորգ Թագաւորը թողուցեր էր, և թէպէտ կոյր՝ իւր Թագաժառանգին հետ գացեր էր գլուխ կենալու 19.000 զօրօք բանակին որ կը հաւաքուէր ի Կէօդդինկէ, որպէս զի միաբանութեամբ Աւստրիոյ կռուի ընդդէմ Բրուսիոյ՝ որ իւր նորահնար դաշնակցական կարգօք կը փոքրկացնէր Հաննովէրի իշխանութիւնը: Երբ Մանդէլֆֆէլ հասաւ ի Հաննովէր, արդէն հոն մտեր էր 17ին զօրավարն Տոլքէնշդայն Յունիսի հրակէզ արևուն ճառագայթից ներքև, անհովանի երկիրներու մէջ անխոնջ յառաջ մղելով բրուսիացի գունդերը: Տոլքէնշդայն տիրեց շատ պաշարներու և վարչութիւն մը հաստատեց յանուն Բրուսիոյ Թագաւորին: Երկու օր վերջը Բրուսիացիք տիրեցին նաև Գասսէլի և կայսրընտիրն տարուեցաւ ի Սդէդդին: Հաննովէրի Գէորգ Թագաւորը շուեր էր ի հարաւ միանալու Պավիէրայի գունդերուն հետ, սակայն Այգէնախէն մինչև Էրֆուրդ իր ճամբան գոց գտաւ բրուսիացի և Սաքս-Կոթայի գունդերէն, որոնք կը խափանէին իրեն ի հարաւ իջնելու ինչպէս նաև Պավիէրացւոց իրեն օգնութեան դիմելու ի հիւսիս: Եւ որովհետև բրուսիացւոց միայն յառաջապահն էր 9000 զինուորք, Հաննովէրի քաջ Թագաւորը բռնի ուզեց ճամբայ բանալ, այն ատեն բրուսիացի Տլիէս զօրավարը բաղխեց հաննովէրացի յառաջապահը Լան-

Յունիս
17 - 18

կէլրալցայ և Մէքսիկէպէնի մէջ, Հաննովէրացիք յետ քաջ և եռանդուն կռուոյ մը քաշուեցան ի Հանկէնսալցա: Զօրավարն Տլիէս ուզեց զիրենք վանել բռնած դիրքերնէն և յարձակեցաւ վրանին Ֆոքէնշդայն Մանդէլֆֆէլ յառաջապահներով: Մոլեգին և արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ յորում Հաննովէրացիք ցուցուցին իրենց հին քաջութիւնը և Տլիէս յաղթուեցաւ մեծ կորուստներով: Սակայն Բրուսիացւոց յամենուստ նոր գունդեր կը հասնէին: Գէորգ թագաւորը նախ քանի մը օրուան զինադադարումն խնդրեց, ապա տեսնելով որ յամենուստ պաշարեալ է մեծաթիւ բանակներէ, անձնատուր եղաւ, պայմանաւ որ իրեն շնորհուի ազատ ելլել Հաննովէրէն և իւր զինուորք թողլով զէնքերնին դառնան տներնին, երգուըննալով զէնք չառնուլ ընդդէմ Բրուսիոյ:

Գէորգ թագաւորը քաշուեցաւ իւր որդւոյն հետ յԱւստրիա. արդէն պատերազմէն առաջ իւր հարստութիւնքը և դրամը անցուցեր էր ի Գաղղիա և յԱնգղիա: Իրմով կը լմննար Հաննովէրի թագաւորութիւնը, զոր Բրուսիա միացուց իրեն, անլսող ըլլալով թէ թագաւորին և թէ ժողովրդեան մեծամասնութեան բողոքներուն:

7. Բանակը ի Պոնեմիա. Մրնխխէնկրաց եւ Նախուտ: — Սաքսոնիոյ տիրելով, բրուսիական երեք բանակք նոյն երազութեամբ և նոյն ճշդութեամբ դիմեցին միանալու աւստրիական սահմանազլխին վրայ ի Պոնեմիա: Մարաջախտն Պէնէտէք որ իւր բանակները հաւաքեր էր ընդ մէջ Թէրէզիէնշդատի և Փրակայի, ընդ մէջ Յոգէֆշդատի և Փարդուպիցի, որպէսզի ի թիւկանց Պավիէրայէն օգնուելով կարենայ յարձակիլ Բրուսիոյ կեդրոնին վրայ և մտնել մինչև ի Պէոլին և վերջացնել պատերազմը, Բրուսիացւոց այսպիսի երազ և ամբողջական շարժմանէն շուարեցաւ, հարկ եղաւ որ թողու իւր ծրագիրը և յանձնեց Գլամ Կալլացի խափանել Իսէրի անցքը, մինչև որ Պէնէտէք բոլոր գունդերով յարձկի Էլպայի բանակին վրայ: Միանգամայն ուրիշ անցքերու վրայ ևս բազմաթիւ ջոկատ-

ներ զրկեց զանոնք պաշտպանելու, այսպէս տկարացրնելով առանց արդեանց մը իւր ամբողջական զօրու թիւնը: Գլամ Կալլաց իւր գունդերը հաւաքեց Իսէրի վրայ պաշտպանելով այսպէս զՄիւնխէնկրաց և ի հիւսիս թողլով միայն զՓոշախէր ջոկատը՝ Ռայխէնպէրկի ճամբան բռնելու համար: Գլամ Կալլաց ունէր 60,000 հոգի, մինչ իւր առջևը կար 140,000 զինուորաց բանակ մը: Իշխանն Փրեդերիկոս Կարոլոս և Բրուսիոյ թագաժառանգ իշխանը Յունիս 25էն մինչև 29 կտրեցին անցան լեռները և անցքերը, որոց զօրութեան դիմաց չէին կարող սակաւաթիւ ջոկատներ դիմանալ, և մինն Կապէլի և միւսը Ռայխէնպէրկի ճամբով շուեցին Միւնխէնկրացի վրայ: Փրեդերիկոս Կարոլոսի յառաջապահը շուելով դէպ ի Ռայխէնպէրկ Փոտոլ գիւղին քով Յունիս 26-27ին գիշերը, յետ մոլեգին կըլուտոյ մը յորում բրուսիացի ասղնևոր հրացանը կը կըրկնապատկէր անհամեմատ յարձակման ոյժը և թիւը, յաղթեց Փոշախէր ջոկատին որ քաջութեանցը համար «Երկաթեայ ջոկատ» կոչուած էր, և բռնելով Իսէրի եզերքը, միացաւ Հէրվարդ զօրավարին հետ որ յաղթութեամբ մը ի Հիւննէրվասէրէ կը յառաջէր դէպ ի Միւնխէնկրաց: Պէնէտէք որ ի սկզբան Գլամ Կալլացի զօրաց անհամեմատ սակաւութեան պատճառաւ, պատուիրած էր թողլու Իսէրի փոռնքը, այժմ գուշակելով թշնամւոյն շարժումը, սահմանեց կրկին ջանալ բռնելու Իսէրի փոռնքը, և մինչև որ ինքը հասնի մեծ բանակով մը, հրամայեց Գլամ Կալլացի զթըշնամին զբաղեցնել՝ չթողլով որ յառաջէ և մտնայ Պոհեմիոյ մէջ: Սակայն թագաժառանգ իշխանը Յունիս 26ին Կլացի կողմէն ամբողջ Բ բանակին կեցցէներով մտեր էր ի Պոհեմիա, ուր քաղաքներ և աւաններ աւերակք գաւաւ, չքեալ բնակիչներէն որոնք փախած էին բրուսիացւոց զալստեան լուրէն, անուննին ատելի ըլլալով Պոհեմներուն: Յառաջապահը Շդայնմէց զօրավարին հրամանատարութեան ներքև յառաջեց մինչև ի Նախոտ, որուն կործանեալ կամուրջը նոյն գիշերը հաստատեցին Բրուսիացիք: Գլամ Կալլացի և Սաքսոնիոյ թագաժա-

ուանգին հրաման եղած էր, որ և է հնարիւք պահպանել զԳիուռնաու և Միւնխէնկրաց, սակայն Գլամ Կալլաց իւր առջև իր զօրաց գրեաթէ եռապատիկը գտնելով, թողուց Բրուսիացուց Իսէրի ափուկքը և սկսաւ նահանջել ի Միւնխէնկրաց. հոն ևս անկարելի դատելով պատերազմ տալ Փրեդերիկոս Կարոլոսի 150,000 զօրաց. բազմաթիւ պահանորդք թողլով իրենց նահանջը պահպանելու համար, ինքը սկսաւ քաշուիլ ի Կիչին: Փրեդերիկոս Կարոլոս իշխանը Յունիս 27ին հասաւ Միւնխէնկրացի դիմաց և կը պատրաստուէր մեծ պատերազմ մը տալ հոն կարծելով զԳլամ Կալլաց զօրավարը, բայց գտաւ միայն Լայնինկէն ջոկատը և յետ կարճատե կռուոյ մը, յորում սակայն Բրուսիացիք ունեցան 341 անկեալք՝ ընդ մեռեալ և ընդ վիրաւոր և Աւստրիացիք 2000 յորոց 1393ը գերի, Բրուսիացիք տիրեցին

Յուն. 29 Միւնխէնկրացի և Իսէրի ամբողջ ափանց. ապա Փրեդերիկոս Կարոլոս յառաջեցուց զինուորքը ահաւոր շերմութեան ներքև անջուր երկիրներէ դէպ ի Կաչին. և որովհետև նոյն օրը հեռագիր ստացած էր փութով դիմել թիկունք ըլլալ Բրանսկին, սահմանեց նոյն օրը անմիջապէս քաշել Կաչինի վրայ: Հաւասար եռանդեամբ կը կռուէին Աւստրիացիք և Բրուսիացիք, որոնք վերջապէս յաղթութիւնը տանելու վրայ էին, երբ հասան սաքսոն գունդերը: Այն ստեն սուրիններու ահաւոր խառնուրդ մը սկսած է, որուն քաղաքացիք ևս մասնակցեցան ընդդէմ Բրուսիացուց և որ տեւեց ամբողջ գիշերը անպատմելի արիւնհեղութեամբ: Բրուսիացիք այլ ևս պահեստ չունէին, մինչ սաքսոն գունդերը կը յամրորէին և պատերազմը անորոշ դիրք մը կ'առնուր երբ Գլամ Կալլացի հրաման եկաւ՝ որ և է բաղխումն շունենալ թշնամոյն հետ և գունդերով միանալ մեծ բանակին ի Հորսիչ և Միլէտին: Ի զուր Աւստրիացիք քաջութեամբ կռուեր էին և աննպատակ կը կորսնցնէին մօտ 7000 զինուորք ընդ մեռեալ, վիրաւոր և գերի: Աւստրիացիք քաշուեցան և երկրորդ առաւօտ Բրուսիացիք մտան ի Կիչին որ կոյտ մ'էր դիականց, թողեալ ի բնակչաց և զոր ստանալու համար հաւասար Աւստրիացուց զոհեր ըրեր

էին : Սակայն այս յաղթութեան լուրը և Աիշինի առու-
մը մեծ ազդեցութիւն կ'ունենար պատերազմին վրայ :

Առաջին բանակին այս կռիւներուն ժամանակ, Բ բա-
նակը ընդ հրամանատարութեամբ թագաժառանգ իշխա-
նին, որուն սպայակուտին զլուխ էր զօրավարն Պլումէն-
թալ, յետ Ալաքի կոմսութենէն մտնելու ի Պոհեմիա,
Ռայզէնկէպիրկէ անցքերուն մէջ մեծ դժուարութիւնք
կրեր էր, լերանց դժուարութեան և աւստրիացի թեթև
ջոկատներու արգելքներուն պատճառաւ . և Շրայնմէց
զօրավարը վերջապէս կրցեր էր հասնիլ Նախոսուանին
քովի տափարակքը, ուր կը բաղխէ զինքը Զ բանակով
Ռամմինկ աւստրիացի զօրավարը : Բրուսիացիք ի սկզբ-
բան 12 միայն հրանօթք ունէին ընդդէմ աւստրիական
42 հրանօթից, սակայն մի զմիոյ կնի կը հասնէին բրու-
սիացի գունդեր իրենց սաղնէոր հրացանով, և կը տի-
րեն Վէնցէլսպէրկ անտառին : Ժամը 10ին զօրավարն
Ռամմինկ, աւստրիացի բանակին ամենէն քաջ զօրա-
վարներէն մին, ընդհանուր յարձակումն կու տայ և կըր-
կին կը տիրէ Վէնցէլսպէրկ անտառին : Աւստրիացի Սու-
մոյ զօրավարին հեծեալք և բրուսիացի «նշան» ահաւոր
և արիւնհազեղ խառնուրդ մը կ'ունենան . բարձրադէզ
փոշիներու մէջ կը տեսնուէին մերթ ընդ մերթ սուրե-
րու և սաղաւարտներու փայլքը . բայց Բրուսիացիք և
ասղնէոր հրացանը վերջապէս կը զօրանան և նորէն տի-
րելով Վէնցէլսպէրկի անտառին իրենց հրանօթքը կը
տեղաւորեն Նախոսի տափարակին վրայ : Աւստրիացի
Զ բանակը կը ստիպուի նահանջել բրուսիացի 94 հրա-
նօթներուն ներքև : Զօրավարն Ռամմինկ իւր խոշտան-
գեալ գունդերը ժողուելով կ'ամրանայ ի Տուպնօ և Քլէ-
նի . Բրուսիացիք ևս վաստակարեկէ չեն կրնար հալա-
ծել իւր նահանջը : Աւստրիացիք թողուցին պատերազմի
դաշտին վրայ 225 սպայք 7575 զինուոր, յորոց 2500ը
գերի, դարձեալ դրօշք և թնդանօթք : Իսկ Բրուսիա-
ցիք կը կորսնցնէին 62 սպայք 1060 զինուոր ընդ մե-
ռեալ և ընդ վիրաւոր : Բրուսիացուց ասղնէոր հրացանը
կը տանէր առաջին մեծ յաղթանակը ի Նախոս :

Սակայն մի և նոյն միջոց Բրուսիացիք ուրիշ կողմ պար-

տուժիւն մը կ'ունենային : Շլէզիոյ բանակէն գունդ մը, ընդ հրամանատարութեամբ բրուսիացի Պոնին զօրավարի, յառաջեր էր Լիպաւէն ի Դրաւդէնաւ, ուր ընդհաւրաւ աւատրիացի գունդերու հետ որոց կը հրամայէր զօրավարն Կապլէնց : Յետ ջերմագին կռուոյ մը Բրուսիացիք տիրեցին Դրաւդէնաւի . և որովհետև երեկոյացեալ էր, Պոնին համարեցաւ որ պատերազմը վերջ առաւ և մերժեց իրեն օգնութեան եկած գունդերը : Սակայն Կապլէնց կրկին կազմաւորելով իր գունդերը, յանակընկալս նորէն մեծ թափով յարձկեցաւ Բրուսիացւոց վըրայ՝ Պոնին ստիպուեցաւ ետ քաշուելու կորսնցնելով անհամար. բազմութիւն, որովհետև քաղաքացիք իսկ հրացանի հարուածք կ'ուղղէին բրուսիացի փախստական բանակին ետևէն : Սակայն Կապլէնց չկրցաւ վայլել իւր յաղթութիւնը, երկրորդ օրը Բ բանակէն վիւրդէմպէրկի իշխանը բաղխեց զինքը նոր գունդերով և յետ ահաւոր կրակի մը ստիպեց զԿապլէնց քաշուելու, թողլով դաշտին վրայ ընդ մեռեալ, ընդ վիրաւոր և գերի 5000 զինուոր, դարձեալ երեք դրօշ և 10 թնդանօթ¹ : Կապլէնց կը յուսար որ Դ բանակը օգնէ իրեն որ կը գտնուէր քիչ հեռու ի Քէօնիկինհոֆ, սակայն իւր յոյսը ի դերև ելաւ :

Քիչ օր վերջը թագաժառանգ իշխանին բանակը յառաջեց դէպ ի Քէօնիկինհոֆ, ուր Պէնէտէք 150,000 զինուոր ունէր : Շոքայնմէց զօրավարը յարձկեցաւ քաղաքին վրայ և յետ արիւնահեղ մրցման մը տիրեց քաղաքին : Շոքայնմէց զօրավարին այս երրորդ մեծ յաղթութիւնն էր : Այն երեկոյ Բրուսիացի Ա և Բ բանակին յառաջապահք մէկմէկու մօտ կը գտնուէին Պոհեմիոյ մէջ, հասնելով իրենց նպատակին :

8. Նախտոյ յաղթութեան լուրը ի Պէւլին . — Գուլիէլմոս Թագաւորը ի բանակն : — Բրուսիական ժողովուրդը մեծ սրտի տազնապաւ կը հետևէր պատերազ-

1. Պատերազմի անկելոց թիւերուն մէջ հետևած ենք Բրուսիոյ Սպայակուտի պաշտօնական տեղեկագրին, որ սակայն շատ չտարբերի յայլոց :

մին ամէն պարագաներուն : Առաջին անգամն էր որ կը գտնուէր հսկայական պատերազմի մը մէջ ընդդէմ Աւստրիոյ . և բոլոր Եւրոպա ցուրտ հանդիսատես այս մեծ մրցման և արիւնհեղուկեանց , չէր կրնար հաւատալ որ այսպէս փութով Բրուսիոյ բանակը ջախջախեն աւստրիացի ի հնուց հռչակաւոր բանակները . և Ֆրանքֆորդի ամենօրեայ լրագիրք որոնք ծաղրածութեամբ միշտ Բրուսիացուց պարտութիւն մը կ'իմացնէին , լուեցին Նախոտի յաղթութեանէն վերջը : Բովանդակ Եւրոպա և աւստրիացի . գորավարք անգամ ճանչցան որ միայն ասղնևոր հրապանը չէր պատճառ այսպէս երազ յաջողութեանց . այլ Բրուսիացիք իրենցմէ շատ բարձր կը գըտնուէին հրամանատարութեամբ , երազութեամբ և ճշդութեամբ շարժմանց , հեծելազօրուն գործածութեամբ , հետևակ զօրուն կրակին ներքև յամառութեամբ և տեղեկութեամբ դրից , որոնք ամէնը մէկէն միացեալ , յոյժ առաւելութիւն մը կու տային բրուսիական բանակին , որ անստերիւր ընթացաւ սպայակուտի սահմանած ծրագիրը . մինչ մտրաջախտն Պէնէտէք պատերազմի ամբողջ ընթացքին ժամանակ զանազան անգամ փոխեց ծրագիրը , միշտ գուշակել կարծելով թշնամւոյն միտքը , առանց հաստատ պահելու իւր ընելիքը . յայսմ ահա մեղադրուած է Պէնէտէք աւստրիա—բրուսիական պատերազմին մէջ , թէպէտ ամենայնիւ արի և հայրենասէր գորավար մը :

Նախոտի յաղթութեան աւետիսը Յունիս 29ին առաւօտ կպցուեցաւ Պէռլինու ամէն որմոց վրայ . մէկէն տունները զարդարուեցան , կրպակները գոցուեցան , աշխատանոցք դադրեցան և հարիւր հազար անձանցմէ աւելի դիմեց թագաւորին պալատը զինքը դուրս գոչելով : Գուլիէլմոս երևցաւ յուզեալ և արտասուելից և խօսեցաւ բազմութեան կոչելով զայն « Իմ սիրելի ժողովուրդս » , ապա ամբոխը ազգային երգը հնչեցնելով , անցաւ Արասքին Գործոց պաշտօնարանը և հոն նոյնպէս գոչեց զկոման Պիսմարք : Ճարտասան մը խօսեցաւ որ Աւստրիա սյլ ևս դեր մը չունէր Գերմանիոյ մէջ և անկէ վերջը Բրուսիա պիտի կանոնաւորէր գերմանական

մեծ հայրենիքը : Պիսմարք պատասխանեց որ սիրով կ'ընդունէր այդ պարտաւորութիւնը . խօսեցաւ չքեղ յաղթանակաց վրայ և մեղմով մը սահեցուց խօսիցը մէջ Լանկէնսալցայի պարտութեան լուրը որ Պէւլիճու բազմաթիւ ընտանեաց մէջ մահ ցաններ էր :

Երկրորդ օրը թագաւորը ժողովրդեան կեցցէներուն մէջէն անցաւ կառօք բանակը երթալու , ունենալով իւր կառաց մէջ զկոմսն Պիսմարք՝ լանտվէրի գրահաւոր հրամանատարի զգեստովը : Թագաւորին կ'ընկերակցէին նաև Պատերազմի պաշտօնեայն զօրավարն Տոն Ռուն և Սպայակուտի գլուխ՝ զօրավարն Մոլդքէ : Գուլիէլմոս Յուլիս Նին հասաւ ի բանակն և իւր բնակութիւնը դրաւ ի Սիխով , ուր հասաւ փութով և Պէնէտէդդի դեսպան Նարոլէոնի ի Բրուսիա : Բրուսիոյ շառաչալից յաջողութիւնքը վերջապէս կրցեր էին Նարոլէոնի սըրտին մէջ կասկածք և խէթք ծնանիլ , և կ'ուզէր կեցնել այս յաղթական ընթացքը , որ կրնար կերպարանափոխ ընել Եւրոպիոյ քաղաքագիտութիւնը : Եւսակայն Բրուսիա այլ ևս չէր կասիր իր յաջող ճամբէն : Թագաւորը իրականապէս ստանձնեց հրամանատարութիւնը :

9. Պատերազմ Սատովայ . — Իշխանն Փրեզերիկոս Կարոլոս լրտեսներու ձեռքով ստուգելու էր որ աւստրիական չորս բանակք իրեն դիմաց կը գտնուէին ի Պիսգորիչ , Սատովա և Լանկէնհօֆ : Ամենայն երազութեամբ առաւ պէտք եղած տրամադրութիւնքը , թշնամին զինքը չբաղխած , ինքը յանակնկալս յարձակելու : Յուլիս Չի երեկոյեան ժամը իննին հրամայուեցաւ Ա բանակին երկրորդ առաւօտ պատրաստ ըլլալու բաղխել թշնամւոյն դիրքերը Պիսգորիցէն ի Սատովա , Հորսիցէն Քէօնիկսկրացի ճամբուն վրայ : Միանգամայն Փրեզերիկոս Կարոլոս նամակ մը ուղղեց առ թագաժառանգ իշխանը ի Քէօնիկինհօֆ՝ 20 հազարամէյր հեռու իրմէ , փութով հասնիլ իւր ձախը գոցելու , որչափ աւելի գունդով կարելի էր : Պէնէտէք զօրավարը իւր ճամբարը փոխադրած էր ի Քէօնիկսկրաց , իսկ բանակը ամբողջ հաւաքուած էր Պիսգորիցի քով , ի թիկանց ունենալով ըզ-Քէօնիկսկրաց և զետեղուած իշպայի և Պիսգորիցի

տափարակներուն վրայ, իւր ճակատը անկիւն մը կազմելով, որուն գագաթը կը գտնուէր Գլում և Լիփա գիւղերուն դիմաց. իսկ ծայրերէն մին յեցեալ էր Էլպայի, միւսը Պիսդրիցի վրայ, որով ալը կ'իյնար թագաժառանգ իշխանին դիմաց, ձախը Փրեզերիկոս Կարոլոս իշխանին. և որովհետև արդէն հինգ օրէ ի վեր հոն ըլլալով, սկսած էր ապրուստի և կարևորաց նեղութիւն քաշել, ինքն ալ սահմանած էր յարձակումն տալ, գիտնալով թշնամւոյն առժամանակեայ նուազութիւնը քան զինքն: Պատերազմական խորհուրդ մը հաստատեր էր իւր կարծիքը, յայտնելով միանգամայն զօրաց եռանդը վրէժ առնելու աւստրիական զինուորական պատւոյն համար: Եթէ Պէնէտէք փոխանակ դանդաղելու անմիջապէս պատերազմ տար իւր ամբողջ գունդերը թափելով բրուսիական Ա բանակին վրայ դեռ Բը չհասած, գրեթէ ապահով կրնար ըլլալ յաղթելու, և սակայն նորէն սպասեց որ թշնամին կեդրոնացնէ իւր ուժերը: Յուլիս 2ի կէս զիշերուն բրուսիացի հրամանատարութիւնը, որուն անձամբ գլուխ կեցեր էր ինքնին Գուլիէլմոս, Երեք բանակաց ալ պէտք եղած հրամանքը ղրկեր էր և արդէն առաւօտեան ժամը 2ին իշխանն Փրեզերիկոս Կարոլոս՝ Ա բանակին վեց զօրաբաժնով կը յառաջէր: Եւ սակայն Հէրվարդ զօրավարին բանակը ժամը իննէն առաջ չէր կրնար ըլլալ պատերազմի դաշտին վրայ և թագաժառանգ իշխանը 20 հազարամէդր ճամբայ պիտի կտրէր հասնելու օգնութեան. որով անգամ մը ևս բաղդը Պէնէտէքի կ'ընծայէր յաղթութիւնը, եթէ իր ձեռաց ներքև եօթը զօրաբաժիններով և սաքսոններով միանգամայն ինկնար թըշնամւոյն վրայ որ կը յառաջէր, սակայն չուզեց ամբողջ գունդերը գործածել և թողուց որ երեք բանակք կարգաւ միանան:

Փրեզերիկոս Կարոլոսի Ֆրանսէքքի զօրաբաժինը և Հոռն զօրաբաժնէն մաս մը՝ առաւօտուն արդէն անցեր էին Պիսդրիցը Սատովայի մօտ և Ֆրանսէքքի զօրաբաժինը ամբացեր էր ձախակողմեան անտառին քով, մինչ միւսերը կը տիրէին աջակողմեան անտառին: Ա-

ուսուտեան ժամը իննին Աւստրիացի գունդերու մաս մը Չիսդովայի և Լիփայի բարձունքներէն իջան և յարձակեցան Բրուսիացւոց վրայ: Տրանսէքքի գունդերը զօրաւոր ընդդիմութեամբ կը կուռէին. թշնամին ծառերու ետև ապաւինելով ասոններ հրացանին արդիւնքը կ'ոչնչացնէր: Փութով հասան աւստրիացի բազմաթիւ հրանօթք, ահաւոր կռիւ մը ծագեցաւ, յորում Բրուսիացիք կը մրցէին ծառէ ծառ. երկու կողմանէ մեծ կորուստներ եղան և Բրուսիացիք վանուեցան անտառներէն դէպ ի Պէննադէք: Սակայն յաջորդեցին ուրիշ գունդեր մրցելու համար անտառաց վրայ, առանց առիթ տալու թշնամւոյն կողմանէ ընդհանուր յարձակման մը, մինչև հասնի թագաժառանգ իշխանը: Բայց Աւստրիացիք երթալով կը բազմանային և ճակատամարտը ծանր դիրք մը կ'առնուր: Աւստրիացիք սկսած էին կռուելու եռանդով մը. հասեր էր Էլչայի բանակը, սակայն պատերազմը շատ կը սարածուէր: Փրեզերիկոս Կարոլոսի բանակը Աւստրիացւոց կրկին թուով գունդերուն դիմաց խոնջ և վաստակաբեկ այլ ևս չէր կրնար դիմանալ և արդէն կը խորհէին զանոնք անցնել Պիսդրիցի միւս կողմը: Աւստրիացւոց սրտին մէջ յաղթութեան յոյսը ծներ էր. իսկ Բրուսիացւոց յոյսը կը մնար թագաժառանգին գալստեան վրայ¹: Թագաւորը, Պիսմարք և Մուլդէ՝ Տուպի բլրոյն վրայէն անհամբեր տագնապալիցք նշանի մը կը սպասէին գալստեան: Կէսօր եղեր էր երբ դիտեցին որ թշնամեաց թնդանօթներու ուղղութիւնք երկու բաժնուեցան, լուեցան հեռուանց թնդանօթի ձայներ, և յիբաւի թագաժառանգ իշխանը, Պատմութեան մէջ սակաւանման ընթացքով մը, կը հասնէր իւր բանակով: Պէննտէք ըմբռնեց Բրանակին հասնելով պատերազմին վտանգը: Կ'ուզէ իւր բանակը հաստա-

1. Ըսուած է որ մինչև պատրաստ էր նահանջին հրամանը: Բայց Բրուսիացի զօրավարք զայդ կ'ուրանան: Սակայն յայտ է և Պիսմարք ևս ըսած է, կը պատմուի, թէ «Մինչև իւր ձեռաց մէջ ծխած գլանիկը չհասնէր թագաժառանգին, Բրուսիացիք պիտի կորսնցնէին պատերազմը»:

տուն պահել Լիփայի և Քլումի մէջ, երբ իրեն իմաց կու տան որ այդ երկու դիրքերուն ալ տիրեր է թշնամին։ Քլում այնպիսի դիրք մը ունէր որ կը տիրէր բովանդակ պատերազմի դաշտին։ Վրայ Պէնէտէք լաւ ամրացուցեր էր զայն և բնաւ չէր կրնար հաւատալ անոր ինկնալուն։ Դիմեց ի Քլում, բայց ասղնէն հրացանի անձրէք սկսան թափիլ վրան, նոյնը կը պատահի ի Ռոզպրից, ուր դիմեր էր յետոյ և կը վիրաւորուի արշիդուքան Գուլիէլմոս։ Սակայն Պէնէտէք ունէր տակաւին երկու պահեստ բանակ, ամբողջ հեծեալը և շատ հրանոթք¹։ Բայց երբ ուղեց զանոնք ի դաշտ հանել, շատ ուշ էր. ալ ևս չէր կարող տարածել թևերը։ Արդէն Բրուսիացի ջոկատ մը բռներ էր Լէսինից գեղը, տիրելով կամրջին, 52 թնդանոթից և 5000 գերի ընելով։ Պէնէտէք ժամը 4ին կրկին փորձ մը ուզեց ընել, սակայն Փրեդերիկոս Կարոլոս որ Սատովայի բարձանց վրայ մինչև այն ատեն պաշտպանողական դիրք մը բռներ էր, յառաջ քալեց ամէն ուղղութեամբ կրակ թափելով։ Պէնէտէքի համար այլ ևս յոյս չկար յաղթութեան, կը մնար իր ձեռքը միայն Լչպայի կամուրջը և թէպէտ ամէն կողմանէ պաշարեալ ի թշնամւոյն, սակայն կարգաւորեց ճարտար նահանջ մը և մնացեալ գունդերով գետը անցնելով սկսաւ քաշուիլ ի Քէոնիկսկրաց։

Սատովայ դաշտին վրայ հաւասարապէս սփռուած էին կապոյտ և սպիտակ վերնազգեստք. բայց ի Քլում և ի Ռոզպրից անհամեմատ աւելի էր սպիտակը՝ այն է Աւստրիացւոց վերնազգեստքը, ուր յետին ճիգն թափեր էին կրկին ձեռք բերելու այդ կարեւոր դիրքերը։ Աւստրիացի զօրավարք կռուեցան իրր պարզ զինուորք. Արշիդուքան Յովսէփ երեք անգամ ձի փոխեց և երեքն ալ սպաննուեցան, քանի մը հետևակ զինուորոք թիզ առ թիզ թշնամւոյն հետ մրցեր էր նախանձելի արութեամբ։ Բայց ի գո՛ւր։ Երեկոյեան դէմ

1. Պատերազմական գրիչ մը կը խորհրդածէ որ ավստրիացի զօրավարաց սովորութիւն է նահանջի համար պահելու այնքան զունդեր, փոխանակ զանոնք գործածելու յաղթութեան։

Գուլիէլմոս թագաւորը եկաւ պատերազմին դաշտը, և զինուորք ընդունեցան զինքը մեծագոչ կեցցէներով, հոն անկելոց դաշտին վրայ թագաւորը ի նշան երախտա- գիտութեան թագաժառանգ իշխանին կուրծքին վրայ կախեց Արդեանց պատուանշանը: Յետոյ խօսեցաւ առ բանակն պանծօցնելով անկելոց փառքը, որոց թը- ւոյն մէջ կը գտնուէր իրեն ազգակից մ'ալ՝ իշխանն Անտոն Հոհէնձոլլէուն: Յուլիս 3ին գիշերը բանակը վրանները դրաւ պատերազմի դաշտին վրայ ի նշան յաղթութեան: Աւստրիացիք Բրուսիացւոց ձեռքը կը թողուին 18,000 գերի, ութ դրօշակ, և 182 թնդա- նօթք: Իսկ երկու կողմանէ անկեալք, բազում հազա- րաւորք կը համարուին: Եւ այս ամէն կեսնքերը, յորս նաև նշանաւոր հանճարներ, ի՞նչ նպատակաւ հնձուեր էին: Սատովա՝ Գարուս պատերազմաց մէջ ահաւորնե- րէն մին է, յորում 420,000 անձինք բաղխեցան մէկ- մէկու, որուն նման և ոչ իսկ կը գտնենք Նարոլէոնա- կան պատերազմաց մէջ, բայց եթէ ի Վայպցիկ և այն յայլ և այլ դաշնակցաց. և ոչ իսկ ինքնին Նարոլէոն ունեցաւ իւր հրամանատարութեան ներքև միանգա- մայ այսքան բազմութիւն մը: Նոյնպէս քիչ պատերազմ Եւրոպիոյ քաղաքականութեան վրայ այնքան ազդե- ցութիւն ունեցած է ինչպէս Սատովա որ նախերգանք մ'էր 1870ի յաղթանակաց և Գերմանական կայսրու- թեան:

Աւստրիա սակայն այս միջոցիս կ'ունենար յաջո- ղութիւնք յիտալիս:

10. Բանակցութիւնք Ջինադադարման — Շարու- նակութիւն Պատերազմի — Նիքոլսպուրկի Ջինադա- դարումը: — Սատովայի պարտութենէն վերջը, Պէ- նետէք սկսաւ քաշուիլ դէպ յՍլմիւս, մինչ ինքը կը համարէր բանակով մտնելու մինչև ի Պէրլին, հիմայ հարկ էր Վեննայի պաշտպանութիւնը մտածել: Փրան- կիսկոս Յովսէփ զմարաջախտն Կապլէնց Բրուսիոյ բա- նակը զրկեց չորս եօթնեակ զինագադարումն խնդրե- լու, սակայն առաջարկը մերժուեցաւ: Այն ատեն զի- մեց դարձեալ առ Նարոլէոն, խոստանալով նորա ձեռքով

զՎենետիկ շնորհել իտալիոյ, որուն բանակաց յաղթեր էր ի Քուսդոզա և այսպէս հատանել բրուս-իտալական դաշնակցութիւնը: Նաբոլէոն Վենետիկոյ նուէրը կ'ընդունէր իբր պարզ պայման մը իւր միջամտութեան և զՊէնէտէզզի և տը Կրամոնն՝ դեսպան յԱւստրիա, զըրկեց առ Քուլիէլմոս զինադադարման համար: Նաբոլէոն ուսումնասիրած էր հաշտութեան մը հիմունքը, ըստ որոց Աւստրիական կայսրութեան ամբողջութիւնը կը մնար բաց ի Վենետիկոյ, ցրուումն նախկին գերմանական դաշնակցութեան, նոր կազմակցութիւնն Գաշնակցութեան մը յորմէ դուրս պիտի մնար Աւստրիա և յորում պիտի մտնէին Մայն գետին հիւսիսային պետութիւնք, որոց գլուխ պիտի ըլլար Բրուսիա, որուն ձեռքը պիտի ըլլար զօրաց հրամանատարութիւնը: Իսկ Մայնի հարաւային պետութիւնք, առանձին ինքնիշխան Գաշնակցութիւն մը պիտի կազմէին ապահովեալ ի պետութեանց. Լչպայի դքսութիւնք պիտի միանային Բրուսիոյ, բաց ի հիւսիսային Շլէզվիկէ, որուն ժողովրդեան պիտի հարցուէր. դրամական փոխարինումն Աւստրիոյ կողմէն առ Բրուսիա վասն ծախուց պատեւրագմին: Ասոնք էին հաշտութեան մը նախաստուերագիծք զորս կ'առաջարկէր Նաբոլէոն երկուց Պետութեանց, ինքնին պատրաստելով Բրուսիոյ ապագայ մեծութիւնը: Սակայն Քուլիէլմոս ծանոյց առ Նաբոլէոն որ չէր կրնար զինադադարման մը վրայ խօսիլ առանց նախ պատերազմական գրաւներու յետ այսքան յաղթութեանց. իսկ դաշինք չէր կարող կռել առանց իտալիոյ հաւանութեան: Նոյնպիսի պատասխան մը տուաւ Վիկտոր Լմանուէլ որուն կ'ընծայուէր Վենետիկ փոխանակ հաշտութեան մը, որ ինքը չէր կարող դաշնագրել առանց Բրուսիոյ: Այսպէս Քաղղիա չհասաւ իւր նպատակին, և թէպէտ Պիամալք յայտնապէս ծանոյց որ գերմանական խնդրոց մէջ Քաղղիոյ կայսեր միջամտութիւնը չէր ընդուներ, այսու հանգերձ խաղաղութեան սիրողք թէ ի Բրուսիոյ թէ յԱւստրիոյ ի Վեննա գաղտ կ'աշխատէին Նաբոլէոնի ներկայացուցչաց ձեռքով:

Յուլիս
14

Բայց խաղաղութեան մը ձայներուն վրայ, Պիսմարք կարևոր տեսաւ աճապարել և զինուորական նոր յաջողութեամբք աւելի բռնանալ պարագայից վրայ և առաւելապէս օգտուիլ պատերազմէն: Զօրավարն Մոլդրէ որ քիչ օր բանակին հանգիստ տուեր էր, և սակայն յանկարծ հարկ եղաւ պահանորդ գունդեր ձգելու Քէսնիկս կրացի և Յոգէֆշդատի դիմաց և Փարագուպիցէի երկաթուղոյ գծով դիմել յՕլմիւց աւստրիական բանակին վրայ: Ուրիչ գունդեր ալ յառաջելով, առանց պատերազմի տիրեր էին Փրակայի և մարաջախտն կապէնց Դանուբի վրայ քաշուեր էր ի Ֆլորիստորֆ, զմայրաքաղաքը յանկարծական բաղխմանէ պաշտպանելու համար: Կարելի է գուշակել այս լուրերուն տպաւորութիւնը ի Վեննա: Ի սկզբան արքունիքը խորհեցաւ դիւնել բոլոր ժողովուրդը և ապստամբեցնել զՊոհնմիա ընդդէմ Բրուսիոյ, որոյ դէմ մեծ ատելութիւն ունէր պոհնմ ազգը: Սակայն ապա սահմանուեցաւ հանդարտօրէն գործել: Այսու հանդերձ հասարակաց կարծիքը գոհացնելու համար որ ամէն պարտութեան մը մէջ յանցաւոր մը և մատնիչ մը կը փնտոէ և այժմ կը պահանջէր Զինուորական Ատենի ենթարկել Պէնէտէք, Հէնիքշդայն և Գլամ կալլաց զօրավարքը. ընդհանուր հրամանատարութիւնը առնուեցաւ Պէնէտէքի ձեռքէն և յանձնուեցաւ Ալպէրդ արշիդքսին որ այնքան յաջողութեամբ վարեր էր իտալիոյ պատերազմը. և Աւստրիոյ զՎենետիկ ձգելովը, կրնար Հարաւային բանակը միացնել Հիւսիսային բանակին հետ: Սակայն Արշիդքսը դեռ իտալիոյ բանակը յԱւստրիա չանցուցած, բրուսիացի բանակը Պրիւնի վրայէն կը յառաջէր դէպ ի Դանուբ: Բրուսիոյ թագաժառանգ իշխանին բանակը բաւական էր ճակատելու Պէնէտէքի յՕլմիւց: Իսկ Լչպայի և Փրեդերիկոս կարոլոսի բանակք կը շուէին Աւստրիոյ արշիդքսութեան վրայ: Փրանկիսկոս Յովսէփ կրկին զինադադարումն առաջարկեց, սակայն պայմանաւ որ նոյն զինադադարման մասնակցին Գերմանական Գաշնակից Պետութիւնք: Գուլիէլմոս մերժեց զինադադարումը և իւր բանակները այնպիսի դիրք մը բռնեցին որ վտանգ կար

Վեննա Օլմիցէն բաժնուելու : Արշիդուքսն Ալպէրդ հրամայեր էր Պէնէտէքի իւր բանակով դիմել մայրաքաղաքը պաշտպանելու , սակայն հազիւ դուռդերուն կէսը զրկեր էր , միւս կէսը բաժնուած մնաց . հարկ եղաւ շուել ի հարաւ Փրէզպուրկի վրայէն , յետ շատ վնասներ կրելու բրուսիական հեծելազօրէն : Երբ Գուլիէլմոս իւր ճամբարը հաստատեց Մորավիոյ Նիքոլսպուրկ քաղաքը , բրուսիացի բանակք Մարքֆէլտի մօտ էին և իրենց գիշերային լոյսերը կը տեսնուէին ի Վեննայէ . և արդէն Փրեդերիկոս Կարոլոս կը դիմէր բաղխելու զՖլորինստորֆ և զՓրէզպուրկ , որոնք միայն կը մնային Աւստրիացւոց ձեռքը Դանուրի հարաւային ափանց վրայ : Երբ Իտալիայէն եկած օգնութեամբ 100,000 զինուորաց արշիդուքսն Ալպէրդ բանակած կը սպասէր Ֆլորինստորֆի մօտ և կը փափագէր պատերազմ տալ , Յուլիս 22ի երեկոյ լուր եկաւ երկու բանակաց ալ՝ Զինադադարման ի Նիքոլսպուրկ :

11. Պատերազմունք Մայնի վրայ . — Բրուսիացիք կը մտնէն ի Ֆրանքֆորդ : — Բրուսիացի Արևելեան մեծ բանակին գործողութեանց ժամանակ , Արևմտեան բանակը ևս , որուն ընդհանուր հրամանատարն էր Ֆալքէնշդայն և յորում կը հրամայէին Կէօպէն , Մանդէլֆֆէլ և Պէյէր զօրավարք , պիտի խաղիէր Պավիէրայի և Դաշնակցական բանակը , որոնց ընդհանուր հրամանատար ընտրուեր էր , ինչպէս ըսինք , յետ բազում տարաձայնութեանց , պավիէրացի ծեր արշիդուքսն Կարոլոս , հինաւուրց զինուոր մը Մեծին Նարոլէոնի ժամանակէն : Որչափ որ հրամանատարութիւնը մի էր , բայց այդ շէր կրնար խափանել զանազան ազգութիւններէ կազմեալ բանակի մը փոփոխակի մրցմունք , կասկածք , անվստահութիւնք որոնք ապարդիւն ըրին հրամանատարութիւնը և բանակք Յուլիսի սկիզբը հազիւ պատրաստք էին պատերազմելու : Ի բանակը զոր կը կազմէին 50,000 պավիէրացիք , բանակած էր ի հարաւային Ֆրանքոնիա , ընդ մէջ Ռէօնի և Թուրինկիոյ անտառին . իսկ Ը բանակը զոր կը կազմէին 2էստէ Տարմշդատի , Պատէնի , Նասաւի

և սակաւ աւստրիացի գունդեր, բանակած էր Ֆրանքֆորդի հիւսիսային կողմը: Ֆալքէնշդայն զօրավարը սահմանեց երկու բանակաց մէջ մտնել և չթողուլ երբէք որ միանան. այս պատճառաւ զրկեց զԿէօպէն զօրավարը ընդդէմ Պավիէրացւոց, որոնք յառաջելով բռներ էին զՆիտհարտշալգէն և Ռոսդորֆ՝ Ֆուլտայի ձորոյն մէջ: Յուլիս 4ին երկու բանակները դիմացէ դիմաց գտնուեցան ի Տէրմպախ, ուր արիւնհանել պատերազմ եղաւ և երկու կողմանէ մեծ քաջութեամբ կռուեցան. սակայն պատերազմին ելքը անորոշ մնաց, թէպէտ պավիէրացիք աւելի էին քան զթշնամին: Իշխանն Կարոլոս այն ստեն Ը բանակին հետ միանալու դիտաւորութիւնը փոխեց և յառաջեց դէպ հարաւ Ֆրանքոնիոյ ձորոյն մէջ, միշտ ետևէն հալածող ունենալով զուգահեռական գծով մը բրուսիական բանակը: Յետ բազում աւուրց շուշուր, երկու բանակք ալ հասան Մայնի դաշտերուն մէջ: Ֆալքէնշդայն սահմանեց պատերազմ տալ և հասաւ Պավիէրացւոց վրայ Սաալի ձորերուն մէջ: Յետ արիւնհանել պատերազմաց ի Քիսսինկէն և Համմէլպուրկ ուր սպանուեցաւ նաև պավիէրացի Ֆոլլէր քաջ զօրավարը, Պավիէրացիք մեծ կորուստներով քաշուեցան ի Շվայնֆուրդ՝ Մայնի ետևը:

Այն ստեն Ֆալքէնշդայն դարձուց բանակը ընդդէմ Ը բանակի դաշնակցաց, որուն հրամանատարը Հէսսէի Աղեքսանդր իշխանը, զՆայփէրկ զօրավարը զրկեց բրուսիացւոց առաջն առնելու յԱշաֆֆէնպուրկ: Միանգամայն բռնել տուաւ Կէզնհալգէնի անցքերը: Սակայն Կէօպէն և Վրանկէլ կռուով տիրեցին Աշաֆֆէնպուրկի յետ քանի մը ժամ մոլեգին կռուոյ և Գաշնակցութեան բանակը ի սպառ ջլախջախուելու համար, թողուց զՖրանքֆորդ և քաշուեցաւ յՕտէնվալտ: Մեկնեցան նաև Աւագածողովոյն անդամք, որոնք քիչ մը ժամանակ ևս խմբուեցան յԱլկուսդա, սակայն առանց ումեքէ կարևորութիւն մը ստանալու: Նաև Գուքսն Նասաւի և Հէսսէ Տարմշդատի մեծ Գուքսը թողուցին իրենց երկիրը: Ֆրանքֆորդ առանց պաշա-

պանութեան մնալով, Ֆալքէնշդայն և Կէօպէն զովարք ներս մտան. և որովհետև շատ տարիներէ ի վեր Յրանքֆորդ կեդրոն մը եղած էր արհամարհութեանց և ծաղու ընդդէմ Բրուսիոյ և մանաւանդ ընդդէմ Պիսմարք կոմսին, թէպէտ Յրանքֆորդ իրրև բաց քաղաք կրնար ալատ ըլլալ շատ մը խստութենէ, սակայն վերոյասացեալ պատճառներուն համար Ֆալքէնշդայն 25 միլիոն ֆիորին (54,000,000, ֆրանգ) պատերազմական տուրք դրաւ քաղքին վրայ¹. պատուիրեց ևս ուրիշ խստութիւնք, որոց գործադրութենէն ազատելու համար ինքզինքը սպաննեց քալլաքազլուխր: Ֆալքէնշդայն յետ իւր մտից ի Յրանքֆորդ, յանուն Բրուսիոյ թագաւորին վարչութիւն մը հաստատեց հոն, ինչպէս նաև ի Նասաւ և ի Հեսսէ Բարձրագոյն: Քիչ վերջը Ֆալքէնշդայն կանչուեցաւ իրրև կառավարիչ Պոլէմիոյ և իրեն տեղ Մայնի բանակին հրամանատար կարգուեցաւ զօրավարն Մանդէլֆֆէլ: Յետինս կը պատրաստուէր կրկին զինուորական գործողութեանց երբ ընդունեցաւ Նիքոլայուրկի զինադադարման լուրը: Սակայն Պիսմարք ճարտարութեամբ Նիքոլայուրկի զինադադարման պայմանաց մէջ դրած էր որ՝ Բրուսիոյ և Պավիէրայի զինադադարումը պիտի ըլլար Օգոստոս 2ին. որով Մանդէլֆֆէլ օգուտ քաղելով, բաղխեց Մարիէնպէրկ քաղաքը և տիրեց անոր բերդին: Յետոյ հրահանգ ընդունեցաւ հաշտութեան պայմանաց նկատմամբ Երկրորդակարգ Պետութեանց հետ, որ եղաւ Օգոստոս 4ին:

12. Հաշտութիւն Փրակայ: — Նարոյէոնի հաշտութեան մը հիման առաջարկք որ ի սկզբան ընդունելութիւն չէին գտած ոչ ի Բրուսիոյ և ոչ իսկ յԱւստրիոյ, չէին յուսահատցուցած զՔաղղիոյ կայսրը ամէն հնա-

¹ Քանի մը օր վերջը ի Բարիզ լուր տարածուելով որ կրկին 6 միլիոն ֆիորին ևս տուրք մը պրուսեր է, Նաքուլէոն բողոքեց առ 'Իեսպանն Բրուսիոյ Տոնկոյց: Յետինս պատասխանեց որ միայն 25 միլիոն էր վճարուելիքը, որ « աննշան գումար մ'էր, Ռոյլիտներու քաղաքին համար »:

րիւք ջանալ համոզելու, և Պէնէտէ դդի յառաջ կը մղէր իւր բանակցութիւնք, երբ պատերազմը բոլորովին ըստ պատնական կերպարանք մը կ'առնուր Աւստրիոյ համար: Այն ատեն Փրանկիսկոս Յովսէփ տեղիք տուաւ, և կոմսն Քարոլի, գորավարն Տէնկէնֆէլտ և պարոն Պրէննէր Նիքոլսպուրկ զրկուեցան զինադադարումը ընդունելու: Բրուսիա յանձն առաւ հինգ օրուան համար, մինչև որ հարցնէ Խտալիոյ կամքը ըստ դաշանց: Յետ այս ձևակերպութեան կատարուելուն, Նիքոլսպուրկի հաշտութեան սկզբնական պայմանագիրք երկու կողմանէ հաստատուեցան Յուլիոս 28ին, որոնք ապա վերջնականապէս ստորագրուեցան ի Փրակա Օգոստոս 23ին:

Ըստ այսմ Դաշանց՝ Աւստրիոյ ամբողջութիւնը կը պահուէր բաց ի վենետկոյ, զոր Փրանկիսկոս Յովսէփ, յաղթող յիտալիա, պիտի ընծայէր Նաբոլէոն Գի և Նաբոլէոն Վիկտոր Էմանուէլի: Աւստրիա պիտի վճարէր պատերազմի ծախք 20 միլիոն թալէր երեք շարաթուան մէջ, և ապա Բրուսիա պիտի թողուր Աւստրիոյ հողը: Աւստրիա պիտի ճանչնար այն Դաշնակցութիւնը զոր Բրուսիա կ'ուզէր հաստատել Մայնի հիւսիսային կողմը եղած Պետութիւններէն, Մայնի հարաւային կողմի Պետութիւնք Դաշնակցութիւն մը պիտի կազմէին անկախ, ապահովեալ ի Պետութեանց, և երկու Դաշնակցութեանց մէջ ըլլալիք յարաբերութիւնք ապա պիտի սահմանուէին երկուստեք: Աւստրիա կը հրաժարէր յամին 1864ի իւր ստացած Իրաւունքներէն ի Շլէզվիկ Հոլշթայն. միայն՝ եթէ Հիւսիսային Շլէզվիկ ուղեմայ միանալ Տանիմարքայի հետ ազգակցութեան պատճառաւ, ապա տ է: Յետին կէտո պնդողն էր Գաղղիոյ կայսրը իբր պաշտպան ազգութեանց սկզբան:

Երկրորդական պետութեանց հետ բանակցութիւնք,

1. Կը պատմուի որ Պիսմարք կոմսը կրկինը պահանջած էր, բայց ապա Բրուսիոյ թագաժառանգ Իշխանին միջնորդելովը գումարը նուազեցաւ:

որոնք սկսած էին ի Նիքոլսպուրկ, աւարտեցան ի Պէտլին: Վիւրդէմպէրկ պիտի վճարէր իրր պատերազմի ծախք ութ միլիոն ֆիորին, Պատէն՝ վեց միլիոն, Պավիէրա երեսուն միլիոն և միանգամայն կը կորսնցունէր երկու գաւառք որոնք միարան ունէին 500,000 բնակիչ: Հէսսէ Տարմշդատի Մեծ Դուքսը և Սաքսոնիոյ Թագաւորը փախած էին իրեց աթոռներէն: Բրուսիա Հէսսէ Տարմշդատէն պահանջեց և առաւ Հէսսէ Օմպուրկ, Մայզէնհայմ և Մակոնցայի բերդը: Իսկ Բարձր Հէսսէ միացաւ Հիւսիսային Գաշնակցութեան: Կը մնար Սաքսոնիոյ խնդիրը, որոյ դէմ մեծ պայրոյթ ունէր Պիսմարք և կ'ուզէր անկէ ևս երկիր առնուլ, սակայն Նաբոլէոնի միջնորդութեամբ գոհ եղաւ որ Տրէզտայի մէջ առ ժամս բրուսիացի և սաքսոն պահանորդք կենան միարան և տասն միլիոն թալէր վճարուի պատերազմի ծախք: Միանգամայն Յովհաննէս Թագաւորը ինքզինքը պատրաստ ցուցուց մտնելու Հիւսիսային Գաշնակցութեան մէջ և արձկեց զՊէտլոզ պաշտօնեայն, որոյ դէմ մեծ էր Պիսմարքի ռիսակալութիւնը: Փրանկիսկոս Յովսէփ քիչ վերջը զՊէտլոզ անուանեց Պաշտօնեայ Արտաքին Գործոց փոխան Մէնստորֆի, և յետոյ Դիւանապետ Աւստրիոյ: Այսպէս առանց դժուարութեան կը ձեւանար Հիւսիսային Գաշնակցութիւնը. իսկ Հարաւայինք անկախ Գաշնակցութիւն մը եղան՝ Պետութեանց հովանաւորութեան ներքե: 1866 տարւոյն վերջերը Պավիէրայի Լուդովիկոս Բ երիտասարդ թագաւորը փոխան Ծորտգէն Պաշտօնարանին, Հոհէնլոհէ — Շիլլինկսֆիւրսոզ պաշտօնարան մը կազմելով, սա Բրուսիոյ հետ դաշինք մը դրաւ, որով Բրուսիա պատերազմի ժամանակ պիտի ունենար զինուորական բարձր հրամանատարութիւնը երկուց բանակաց, առանց սակայն ստանանելու Պավիէրայի ինքնավարութեան:

Նաբոլէոն Գ, որ այսքան ջանք տարած էր հաշտութեան ընդ Բրուսիա և ընդ Աւստրիա, և որ առանց դժուարութեանց յանձն առած էր որ Բրուսիա տիրէ Հաննովերի, Նասաւի, ստանայ երկրի մասունք միւս Պետութիւններէն և մեծանայ, զօրանայ, եթէ ի սկզբ-

բան ինքն ալ միտքը դրած էր պահանջ մ'ընելու Հռե-
նոսի կողմէն, սակայն ի վերջոյ կոմսն Պիսմարք իրեն
առատօրէն երախտագիտական բացատրութիւններով
Նարոլէոնի «անշահասէր միջամտութեան», ամէն խօսք
խափանել տուեր էր: Պիսմարք աւելին ըրաւ: Երբ հաշ-
տութենէն վերջը Մայնի Հարաւային Պետութիւնք չէին
ուզեր Բրուսիոյ հետ յարաբերութիւն մը ունենալ,
Պիսմարք ճարտարութեամբ երկիւղ մը ձգեց անոնց
սրտին մէջ Գաղղիոյ պահանջներու փոխարինման մա-
սին: Հարաւային Պետութիւնք վախնալով անպաշտ-
պան մնալու, անոնք ալ դիմեցին Բրուսիոյ հովանաւո-
րութեան:

Այսպէս վերջ կ'ունենար Աւստրիա – բրուսիական
պատերազմը, որ կերպարանափոխ ըրաւ Եւրոպիոյ
քաղաքագիտական դիրքը և ազդեցութիւնքը, բար-
ձրացուց Բրուսիոյ զինուորական անունը, սանդուխ
մը եղաւ Գերմանիոյ կայսրութեան և զինքը ընդեր-
կար հրամանատար ըրաւ Եւրոպիոյ քաղաքագիտու-
թեան իւր Պիսմարք «Երկաթեայ» պաշտօնէին բե-
րանով: Այն օրուրնէ Նարոլէոնի ազդեցութիւնը սկսեր
էր խոնարհիլ, և Պատմութիւնը նոր ժամանակ մը կը
սկսէր:



ԻՏԱԼԻԱ ԸՆԴԴԵՄ ԱԻՍՏՐԻՈՅ — ԳՈՒՍԴՈՉԱ

1. Իտալիա ընդդէմ Աւստրիոյ. Երազիր Պատերազմին. —
2. Իտալական և աւստրիական բանակք. — 3. Պատերազմ Քուսդոզայ. Յաղթութիւն Աւստրիացւոց. — 4. Արշաւանք իտալական բանակին յԱւստրիա յետ Քուսդոզայի պատերազմին. — 5. Կարիպալտի Ի Դիրոլ. իւր յաջողութիւնք. — Ուրիշ կամաւոր գունդեր. —
6. Նաւատորմիցք իտալիոյ և Աւստրիոյ. — Պատերազմ Լիսսայ. — 7. Վենետիկ կը շնորհուի և կը միանայ իտալիոյ:

1. Իտալիա ընդդէմ Աւստրիոյ. Երազիր պատերազմին: — Աւստրիոյ ի Պոճեմիա պատերազմական ձախողութեանց ժամանակ, կ'ունենար յաջողութիւնք և յաղթութիւնք Բրուսիոյ դաշնակցին՝ իտալիոյ դէմ: Երբ Յունիս 19ին իտալիա պատերազմ հրատարակեց ընդդէմ Աւստրիոյ, Բրուսիոյ ներկայացուցիչն ի Ֆրէնցէ՝ պարոն Իւզըտոմ, իտալական կառավարութեան պատերազմի ընդարձակ ծրագիր մը առաջարկեց, ըստ որում իտալիա երկու մեծ բանակ պիտի պատրաստէր, մինն կռուելու Քառակողման մէջ¹, միւսը պիտի անցնէր Փոյ գետը, պիտի կտրէր Ալպեանքը և պիտի շուէր Վեննայի վրայ, երբ Բրուսիացիք ալ միւս կողմանէ դիմէին Վեննայի վրայ: Ուրիշ կամաւորաց գունդեր ալ Կարիպալտիի առաջնորդութեամբ պիտի անցնէին Տալմացիա, պիտի մտնէին ի Խռուալս և ի Մաճառստան և ոտք պիտի հանէին ժողովուրդքը: Այս նպա-

1. Քառակողման (Quadrilatero) ասուր բերդերն էին Վերոնա, Մանդուա, Փեսքիերա և Լէնյակո:

տակաւ Իտալական վարչութիւնը դաշինք պիտի կոէր Սերպիոյ Միքայէլ իշխանին հետ, որ և նա բանակ մը պիտի կազմէր յանձնելով Օրէսքովիչ խուռադ քաջ զօրավարին որ Սերպիոյ ծառայութեան մէջ կը գտնուէր: Այսպէս Աւստրիա ամէն կողմանէ պաշարեալ և հարուածեալ, քիչ օրուան մէջ պիտի յաղթուէր և կործանուէր: Այս էր Բրուսիոյ ծրագիրը. զոր մերժեց Լամարմորա՝ նախագահ պաշտօնարանին և ոչ իսկ յանձն առնելով առաջարկը, և այս մերժումը յետոյ պաշտպանեց Իտալական Խօսարանին մէջ¹: Բաց ի դժուարութենէ ծրագրին, Լամարմորա Փիէմոնթեցի՝ արեամբ և զգացմամբ, չէր կրնար Կարիպալտեան, որով և յեղափոխական աջակցութիւն մը ընդունել: Լամարմորայի կարծիքն էր անմիջապէս բաղխել զԱւստրիա Քառակողմեան մէջ, մինչ Չիալտինի և Ֆանդի զօրավարք կը պնդէին կարգաւ տիրելով յառաջել, Իտալական ռազմագիտութիւնը ընդունեցաւ խորհրդով Լամարմորայի կարծիքը: Սակայն այդ պատերազմին հրամանատարութիւնը այնքան տկար և խառնաշփոթ եղաւ, որ և ոչ մի ծրագիր զոգցես ի գործ դրուեցաւ:

2. Իտալական եւ Աւստրիական բանակք: — Չօրավարն Լամարմորա՝ զլուխ Իտալական սպայակուտին, յետ յանձնելու Ռիքսաղոլի պարոնին Պաշտօնարանի նախագահութիւնը, մեկնեցաւ ի բանակն որ երկու կը բաժնուէր. մինն՝ զուգահեռական գծով Մինչիոյ գետին և միւսը Փոյի: Առաջին բանակին հրամանատարն էր Վիկտոր Էմանուէլ, ունենալով 140,000 զինուոր և 282 թնդանօթք, իսկ երկրորդ բանակին, որ ունէր 85,000 զինուոր և 174 թնդանօթք, կը հրամայէր զօրավարն Չիալտինի: Բաց ի կանոնաւոր բանակէն, կային նաև Կարիպալտիի կամաւորաց զուեղերը 22,000 անձինք, որոնք Չէֆֆարոյի գծով կազմէին մտնելու ի Իիրոլ: Ամենայն հրամանք պիտի մեկնէին ի Լամարմորա զօրավարէն՝ զլուխ սպայակուտին:

1. Բանախօսութիւն Լամարմորայ զօրավարին ի Խօսարանի 21 Յուլիս, 1866:

Այսպիսի բազմաթիւ բանակի մը դիմաց արշիդուքսն Ալպէրդ ընդհանուր հրամանատար ւաստրիական բանակին ունէր միայն 35,000 զինուոր և 168 թնդանօթք: Սակայն ամբացեալ Քառակողմեան հզօր բերդերուն դիքքով, կրնար կարևոր եղած ժամանակ յարձակիլ այս բանակին վրայ և հարուածել դեռ օգնութիւն մը չհասած. որով յետ ձգելու ջոկատ մը ի Դիրոյ և գունդ մը ի Ուվիկոյ, մնացեալ բանակը շարեց Ատիճէի ձախակողմը: Ամբողջ իտալական պատերազմին ժամանակ արշիդուքսն Ալպէրդ ցուցուց այն երազութիւնը, որուն պակսելովը Պէնէտէքի բանակը յաղթուեր էր ի Բրուսիացոց: Երբ Յունիս շշին գուշակեց իտալական Առաջին բանակին շարժումը անցնելու զՄինչիոյ, ինքը մեծ երազութեամբ մը իւր գունդերը անցուց գետին աջ կողմը Վերոնայի շրջակայքը. և բռնել տուաւ Քուսդոզայէն ի Քասդէլնուովոյ գիծը: Աւատրիացի զօրավարը ամէն մանր տեղեկութիւն ունէր իտալական գունդերուն շարժման, մինչ թշնամին կ'ընթանար գոգցես շուարեալ և անտեղեակ:

3. Պատերազմ Քուսդոզայ. Յաղթութիւն Աւատրիացոց: — Յունիս շշին Աւատրիացոց Ատիճէի աջ ափունքը բռնած ժամանակ, Վիկտոր Լյմանուէլ Առաջին բանակով կը մտնէր ի Քառակողմն, անցնելով զՄինչիո ի Կոյգօ և Սալինձոնէ և կը յառաջէր բանակը երեքի բաժնած, որոց Առաջնոյն կը հրամայէր զօրավարն Տուրանտօ՝ ունենալով հրամանատար զօրաբաժիններու զՍիրդորի, Փիանէլ և Չէրալէ զօրավարք: Երկրորդին կը հրամայէր զօրավարն Տէլլա Ռոքքա. և զօրաբաժիններուն՝ զօրավարն Պիքսիօ, թագաժառանգ իշխանն Ումպէրթօ, Քուճիա, Կոլոնէ և Տէ Սոնագ զօրավարք: Երրորդ մասին կը հրամայէր զօրավարն Քուքքիարի, ունենալով հրամանատարք Պրինյոնէ, Քոզէնց, Անճիոլէզզի և Լոնկոնի զօրավարները: Իսկ Չիալտինի կամ Բ մեծ բանակը կը գտնուէր Փոյի աջ կողմը՝ կեցրոնացեալ ի Ֆէրրարա: Առաջին բանակը անցնելով զՄինչիո նպատակ ունէր սպառնալ

Վերոնայի և Մանդովայի հաղորդակցութեանց և զանոնք բաժնել Փէպքիէրայի բերդերէն :

Արշիդուքսն Ալպէրդ տեղեկանալով իտալացւոց շարժման և դիտաւորութեան, սահմանեց ընդ առաջ ելլել անոնց 80,000 զօրօք, կարգադրելով միանգամայն ինչ որ կարևոր էր նահանջի, հակառակ պարագայի մը մէջ : Յունիս 24ին առաւօտը մինչ Լամարմորա զՊրինյոնէ զօրավարը կը զրկէր բռնելու Քուսդոզա երկու զօրաբաժնով, աւստրիացի հեծելագունդը Վիլլաֆրանքայի մօտ մեծ թափով յարձկեցաւ Ումպէրթո իշխանին զօրաբաժնին վրայ : Այս զօրւոր բաղխումէն, իտալացիք ի սկզբան շուարեցան, սակայն ապա խրախուսուելով իշխանին անձնանուէր արութենէն, կրկին քառակուսիները կազմեցին և յամառութեամբ ընդդիմացան մինչև որ հասաւ օգնութեան զօրաբաժինն Պիքսիօ . և այն ատեն աւստրիացի հեծելագունդը ետ քաշուեցաւ : Ուրիշ կողմ զօրավարն Սիրդորի լեգէոնով մը անցաւ Գիոնը և ամենայն արութեամբ դիմեց թշնամւոյն վրայ, սակայն ընդհանուր հրամանատարութիւնը լուր մը չունէր, որով և յետ չորս ժամ սաստկութեամբ կռուելու, նորէն անցաւ Գիոնը : Բայց ապա կազմակերպելով գունդերը, կրկին փորձեց յարձակումը : Այսպէս ամենայն ոք կը գործէր առանց ընդհանուր առաջնորդութեան մը : Զօրաբաժիններէ ոմանք և ոչ իսկ տեղեկութիւն ունէին թշնամւոյն յարձակման և պաշարուած ոտնկապած իրենց կազմածներով և մթերներով, առանց կռուելու թողուցին իրենց դիրքերը, ուրիշները, ինչպէս Չէրէալէ զօրավարին գունդերը, յանպատրաստից կարծեցին խափանել Աւստրիացւոց բուռն յարձակումը : Շատ անձինք մեռան . Չէրէալէ և Վիլլըրէյ զօրավարք մահացու վիրաւորուեցան և գունդերը խառնաշփոթ ցրուեցան աստ և անդ : Այս վնասներուն ժամանակ Լամարմորա իւր ոյժը կը ջանար կեդրոնացնել ի Վիլլաֆրանքա ուր կը համարէր դիմել թշնամւոյն մեծագոյն նպատակը և երբ Պրինյոնէ զօրաբաժինը ուղղեց ի Քուսդոզա, երեք ջոկատք ահաւոր կրակով մը պաշա-

րեցին զայն . յիտալացւոց 700էն աւելի սպայք և զինուորք ինկան . վիրաւորուեցաւ և իշխանն Ամէտէօ, երկրորդ որդի Թագաւորին որ ջոկատի մը կը հրամայէր, և հինգ թնդանօթք ինկան թշնամւոյն ձեռքը: Աւստրիացիք տիրեցին Մոնդէքոչէ, Պէլվէտէրէ, և Քուսդոզա դիրքերուն: Փութով դիմեցին հոն Քուճճիա և Կովոնէ զօրաբաժինք, որոնք պատերազմը նորոգեցին: Հոն ահաւոր և արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ . Քուճճիայի և Կովոնէի զօրաբաժինք մոլեգնաբար կը մըրցէին ձեռք բերելու Իտալացւոց կորսնցուցած դիրքերը, մազլցելով ժայռերէն վեր Աւստրիացւոց ահաւոր կրակին ներքև . կը հասնին օգնութեան Քուճճիա և Կովոնէ պահեստք և Աւստրիացիք ստացած դիրքերնին կը թողուն և խառն ի խուռն կը դիմեն ապաւինելու և կազմակերպուելու իրենց պահեստներուն ետև: Իտալացիք ոգի կ'առնուն և կը իրախուսուին: Եթէ այս միջոցիս Լամարմորա, որ կը դիմէր մէկ կողմէ միւս կողմ՝ անգէտ ո՛ւմ օգնելու, ըմբռնած ըլլար թէ ո՛ր հարկ էր հասցնել օգնութիւնը, մեծ հաւանակաւ նութիւն կար որ ուրիշ կերպ ըլլար պատերազմին ելքը: Բայց ոչ Սիրդորի օգնութիւն ունեցաւ որ Իիւնէն անդին վաներ էր զԱւստրիացիս և ապա անօգնական յետս դարձեր էր, ոչ Տուրանտօ՝ որ դիմեր էր ժողվելու Չէրէալէի գունդերուն մնացորդքը, և ոչ Փիանէլ որ նոյն նպատակաւ ընթացեր էր: Եւ որ զարմանալին է՝ ի ձախն և ի կեդրոն այս բաղխմունք պատահած ժամանակ, աջակողմը բնաւ անգործ մնացեր էր . նաև տէ Սոնազ զօրավարին հրամանատարութեան ներքև եղած հեծելազօրը:

Ժամը երեկոյեան 4ին մօտ էր երբ Ալպէրդ արշիդուքսը մօտեցուց իւր բանակակետողը պատերազմի դաշտին: Քունդերը յետ վայրկեան մը ամփոփուելու, յետոյ ամէնը իրենց սպարապետին աչաց առջև մեծ եռանդեամբ յարձկեցան Քուսդոզայի վրայ: Արիւնահեղ մրցում մը ծագեցաւ . Աւստրիացիք ամենայն մուլեգնութեամբ կ'ուզէին տիրել Քուսդոզայի բարձանց, յորոց քանի մը անգամ վանուեցան ահաւոր կրակով մը՝ Քուճճիա և Կովոնէ զօրաբաժիններէն: Սակայն աւս-

արիացի գունդերը իւրաքանչիւր յարձակման՝ փոքր փոքր կը յառաջէին : Քուճիա պահեստքը յառաջ կը վարէ , բայց ռազմամթերք կը սկսին պակսիլ և թնդանօթներէն զոմանս հարկ է հեռացնել պատերազմի կեդրոնէն : Այս եղաւ Իտալացւոց մեծագոյն հարուածը , հրամանատարութեան սակաւ հոգածութենէն : Արշիդուքսն Ալպէրդ իւր պահեստէն մաս մը կը մղէ իտալական հետևակին վրայ որ թէպէտ գրեաթէ առանց հրանօթից , սակայն քաջութեամբ կը դիմանայ , Աւստրիացւոց յարձակող գունդին նոր օգնութիւնք կը հասնին , որոնք վերջապէս յետ բազմաթիւ կորուստներու , կը աւերեն Քուսդոզայի բարձանց : Այն ատեն Իտալացիք որոնք մեծ արութեամբ կռուեր էին , ընդունելով իսկ յետոյ թշնամւոյն գովեստը , կը սկսին նահանջել . նահանջ մը որ թէպէտ ոչ կարգադրեալ սպայակուտի հրամանատարութենէն , սակայն մեծ պատիւ բերաւ զորաբաժնի հրամանատարաց պաղ արիան և արութեան : Պիքսիօ և Ումպէրթօ զօրաբաժինք առանց մեծ կորուստի հասան Մինչիոյի գիծը , բայց Քուճիա և Կովոնէ լեզէոնք , որոնք 8000 էին ընդդէմ 20000ի , լերանց անցքերու մէջ կորսնցուցին շատ զինուոր և թընդանօթք : Երբ ձիերը կը սպաննուէին , զինուորք թընդանօթը թշնամւոյն ձեռքը չձգելու համար ուստիւնին կը կրէին , մինչև որ իրենք ալ հարուածեալ ինկնային : Աւստրիացւոց դիմաց այլ ևս կռուող բանակ մը չէր մնար : Արդէն Լամարմորա թողուցեր էր պատերամին դաշտը և դիմեր էր ի Կոիդօ նոր գունդեր հասցնելու , և առաջին ձախողութիւններէն գրեաթէ յուսարեկ , դեռ Քուսդոզա շառնուած բռնադատեր էր զՎիլիսոր Լմանուէլ ապաւինելու ի Չէրլունկօ : Տուրանտօ զօրաբաժինը յետ յամառ մրցման մը , քաշուեր էր ի Վալէձճիօ . Փիանէլ՝ ընդ երկար յաղթող , ոչ հրաման և ոչ լուր մը ունենալով , կրկին անցեր էր գետը . նոյնը ըրաւ Սիրդորի : Տէլլա Ռոքքայի բանակը բնաւ մասնակցած չէր կռուոյն և միայն նահանջը պաշտպանեց : Իտալացիք կը կորսնցնէին պատերազմը , յորում թէպէտ զինուորք գընդապետք և հրամանատարք մեծ արութիւն և անձնա-

նուիրումն ցուցուցեր էին, սակայն ընդհանուր ուղղութիւնը պակսելով, պակսեցաւ միանգամայն համաձայնութիւն և միութիւն շարժմանց, որով և ձախողեցաւ ամենայն ինչ: Իւրանքանչիւր ոք գործեց ըստ կարծեաց և ներշնչմանց և Սպայակուտին զլուխը Լամարմորա որ աստ անդ կը դիմէր, ինքն ալ շուարեալ, ամէն անգամ նոր հրամաններ կու տար պատահամար հանդիպած գունդերուն¹: Մինչդեռ Իտալիոյ բանակը Աւստրիոյ բանակին կրկինն էր, պատերազմի դաշտին վըրայ գտնուեցան 50,000 Իտալացիք և 105 թնդանօթք ընդդէմ 70,000 Աւստրիացւոց որոնք ունէին 180 թնդանօթք: Իսկ երկու կողման կորուստք՝ կը համարուին յԱւստրիացւոց 1785 մեռեալք և 3375 վիրաւորք. իսկ Իտալացւոց 1085 մեռեալք, 2400 վիրաւորք, շատ մը գերի և 16 թնդանօթք: Վիկտոր Էմանուէլ ամբողջ պատերազմին մէջ քաշուած դիրք մը առած էր, նախ տժգոհ որ իրեն միայն անուանական հրամանատարութիւն մը յանձնուած էր, երկրորդ որպէս զի խափան չըլլայ իրական հրամանատարութեան, և իւր երկու որդիքն իսկ թողուցած էր ի վըտանգի:

4. Արշաւանք խտալական բանակին յԱւստրիա, յետ Քուստոզայի պատերազմին: — Քուստոզայի պատերազմէն վերջը Իտալացիք քիչ մը ժամանակ ամփոփուեցան իրենց բանակները կարգաւորելու: Առաջին բանակէն 70,000 զինուորք կային որոնք տակաւին մտած չէին պատերազմի. դարձեալ կար Փոյի բանակը 80,000 զինուորք, որոց կը հրամայէր զօրավարն Չիալտինի: Յետ

1. Հասարակաց կարծիքը մեծապէս զայրացաւ ընդդէմ Լամարմորայի, որ ջանաց ինքզինք արդարացնել՝ ձգելով յանցանքը պարոն Իւզըտոմի և Չիալտինի վրայ: Նոյն իսկ թագաւորին և արքայորդոց ներկայութիւնը ի բանակն իրեն խոչընդոտն համարուեցաւ ի բարեկամաց, ազատ հրամայելու: Ռոստոսի մէջ առնուեցաւ իրմէ սպայակուտի հրամանատարութիւնը և տրուեցաւ Չիալտինի զօրավարին, որ միշտ հակառակորդ մը եղած է Լամարմորա զօրավարին:

ունենալու այսպիսի մեծ բանակ մը Լամարմորա կրկին կրնար բաղդը փորձել աւստրիացի վաստակաբեկ զօրաց դէմ, կամ դարձուածքով մը անցնիլ ի Վենետիկ ուր ամենեւին գրեաթէ զօրք չկար. սակայն Լամարմորա քաշուեցաւ մինչև ի Փիցցիկէդոնէ և Փիաչէնցա և Չիալտինի գնաց բանակելու Ռէճճիոյ և Մոտենայի մէջ: Այն ստան շարժեցան գործելու՝ երբ Աւստրիա՝ Բրուսիոյ երազ ընթացքէն մինչև Վեննայի պատուարաց մօտ, տագնապեալ, յանձն առաւ թողուլ զՎենետիկ Գաղղիոյ և անտի Իտալիոյ, պայմանաւ որ Իտալիա բաժնուի ի Բրուսիոյ. և Նարոլէոն հաղորդելով այս լուրը Վիկտոր Լամանուէլի, կը յանձնէր որ դադրին թշնամութիւնք: Զայրացաւ Իտալիոյ ժողովորդը և վարչութիւնը, այսպիսի պատուէր մը իրեն նախատական համարելով և անպատիւ, զՎենետիկ ոչ պատերազմով մը կը ստանար այլ իբրև շահավաճառ մը: Եւ առանց ունկնդիր ըլլալու Նարոլէոն Գի խորհրդոց ուզեց պատերազմը շարունակել: Բայց փոխանակ եւրագութեամբ արգիլելու 50,000է բանակ մը որ Իտալիայէն կ'անցնէր յԱւստրիա, Յուլիա 10ին գնացին տիրելու Ռովիկոյ քաղաքին, ուր մի պահանորդ չկար, ուրով միշտ իրենց տրամադրութեան ներքև: Պաշտօնաւորանի նախագահը պարոն Ռիքագոլի անձամբ բանակը եկեր էր, յանուն ազգային պատուոյն համաձայնութիւն մը գոյացնելու հրամանատարաց՝ մանաւանդ Լամարմորայի և Չիալտինիի մէջ: Որոշուեցաւ դարձեալ երկու բանակ ձեւացնել մինն ուղղակի թագաւորին հրամանատարութեան ներքև, սպայակուտի զլուխ ունենալով զզօրավարն Լամարմորա, երկրորդը ընդ հրամանատարութեամբ Չիալտինի զօրավարին. և մէջտեղ հանուեցաւ պատերազմին սկիզբը Բրուսիոյ դեսպանին առաջարկած ծրագիրը: Մինչ Ա բանակը պիտի մնար յԻտալիա Քառակողման դիմաց, Չիալտինիի բանակը պիտի դիմէր յԱւստրիա՝ Փիապէի ձորերուն մէջէն և անցնելով Ալպեանքը պիտի իջնէր ի Տրալա և պիտի չուէր Վեննայի վրայ: Այսպիսի ծրագիր մը թերևս պատերազմին սկիզբը իւր արդիւնքը ունենար, բայց

պարագայք փոխուեր էին: Զիալտինի Ռովիկոյի մէջ պահանորդ դնելէն վերջը անցաւ ի Փատուա, ապա Վիչէնցա և Դրէվիգօ, և երբ կը կարգադրէր Ուտինէի վրայ, ն Փոնդէպպայի և Փրէտիլի անցքերէն իջնել ի Դարվիս և Վիլպախ՝ մինչ ուրիշ գունդեր Գոնէլիանոյէ և Պասսանոյէ՝ Պէլլունօ քաղքին ճամբով և Հոհէնշդայնի շղթայքը կտրելով պիտի իջնէին ի Տրավա, հասաւ Նիքոլսպուրկի զինադադարման լուրը:

Զիալտինի այս արշաւանքը փորձած ժամանակ, Նունցիանդէ զօրավարը որ երբեմն պորպոնեան և այժմ Իտալիոյ ծառայութեան մէջ մտեր էր, կը տիրէր Պորկոֆորդէի կամրջին, զոր Աւստրիացիք թողուցեր էին յետ Իտալացոց հետ կռուոյն:

5. Կարիպալտի ի Դիրոլ — Ուրիշ կամաւոր գունդեր: — Կանոնաւոր բանակները Քառակողման վերայ արշաւած ժամանակնին, Կարիպալտի ևս գրեթէ 22,000 կամաւորօք, առանց հրանօթից, վստահ իրենց անձնական քաջութեան վրայ, պատրաստուեր էին դիմել Տրիտենդեան գաւառը, երբ Քուսդոզայի պարտութիւնը պատահեցաւ: Կամարմորա որ երբէք համակրութիւն մը չէր ունեցած Կարիպալտիի, սակայն իւր նեղ ժամուն բռնադատուեցաւ դիմել անոր ազգասիրութեան, խնդրելով որ իւր կամաւորներով պաշտպանէ զՊրէշիա մինչև որ ինքը վերջացնէ նահանջը: Կարիպալտի անմիջապէս պէտք եղած տրամադրութիւնքը առաւ և վանեց զԱւստրիացիս Պորմիոյէ, ուր իջեր էին՝ անպաշտպան գտնելով Սդէվիոյ անցքերը: Ապա զՔորդէ հազարապետը զրկեց տիրելու Մոնդէ Սուէլլոյի, որուն տիրեր էին Աւստրիացիք՝ անցնելով Քաֆֆարոյի անցքերէն: Աւստրիացիք բազմաթիւ էին և լաւ զինուք պատսպարեալք. կարիպալտեանց ձեռք ամէն ոճով հրացան կը գտնուէր, սակայն մոլեգին կռուով մը վանեցին զԱւստրիացիս յանկոյս Քաֆֆարոյի կամրջին և տիրեցին Մոնդէ Սուէլլոյի: Բայց ի վէցցա Տէլլ'Օլիօ աւստրիացի գունդ մը յանկարծ դիմելով կարիպալտեանց վրայ, յետ բազում հարուածներ տալու, նորէն դարձաւ Աւստրիոյ հո-

ղը: Մոնղէ Սուէլոյէն Կարիպալտի մտաւ վերնագոյն Քիէզէի հովիտքը, մտադիր էր Վալլէ Ճիուտիքադայէ և Ամփոլլայէն անցնիլ ի Ռիվա և անտի Ռովէրէթօ ապա ի Տրիտենդոն. յոյժ դժուարին ճանապարհ մը, և այն երկրին և զինուորութեան անփորձ կամաւորներով, ընդդէմ տեղեակ և վարժ գունդերու: Կարիպալտի Իտալիոյ պաշտօնարանէն խնդրեր և ստացեր էր հրանօթից լուծ մը որովք կարենայ յարձկիլ Ամփոլլայի բերդերուն վրայ: Յուլիս 16ին սկսաւ կռիւը. Դիբոլի որսորդաց ջոկատը կտրիճ ընդդիմութիւն մը բրաւ երեք օր, բայց տեսնելով որ անհնարին էր այլ ևս դիմանալ, քաշուեցաւ ի Լաուտաոս և Ռիվա և Ամփոլլա բերդը անձնատուր եղաւ: Անկէ Կարիպալտի ուղղուեցաւ դէպ ի Ռիվա և անցնելով զՊացցէքա, հասաւ ի Փիէվէ տի Լէդրօ, ուր գտնուեցաւ ամբողջ աւստրիական բանակի մը դիմաց: Կարիպալտի երեք կողմանէ պաշարուեցաւ և տեսնելով Դիբոլի որսորդ գունդերուն մագլցելով ժայռերուն և անցքերուն վրայ դիմագրաւելը, վախցաւ որ իւր նահանջը կտրուի և բռնադատուեցաւ ետ դառնալ Պացցէքա: Սակայն գիշեր ատեն տները գրաւած էին աւստրիացի զինուորք, որոնք արիւնահեղ կռիւ մը սկսան ընդդէմ կարիպալտեանց հրացանով և սուիինով: Իտալացի կամաւորք դժուարին դրից մէջ կը գտնուէին, երբ գնդապետն Տոլլիոդդի իտալական կանոնաւոր զնդերէն հասաւ այն սակաւ հրանօթիւք, որոց հետ զրկուած էր իտալական պետութենէն և փոխեց պատերազմին բաղդը: Ապա հասան ուրիշ կամաւոր գունդեր ալ որոնք կրցան յաղթել Աւստրիացւոց որք շատ մեռեալ թողուցին և գերի: Կարիպալտի անկէ վերջը պատրաստուեցաւ պաշարել Լարտարայի բերդը և արդէն իւր յառաջապահը կը գտնուէր ի Ռիվա, երբ Նիքիլսպուրկի գինադադարման լուրը հասաւ:

Կարիպալտի Քիէզի ձորերէն Տրիտենդոն արշաւած ժամանակ, Մէտիչի Կարիպալտեան զօրավարը, Պրէնդա գետին ձորէն, Փրիմոլանս և Վալլէ Սուկանայէ դիմելով ի Տրիտենդոն պիտի միանար Կարիպալտի:

Հարկ էր շուել նեղ և դժուարին անցքերէ, և Փրիմոլանի քով հանդիպեցան աւստրիացի ընտիր գունդերու, որոնք կուռեցան իրենց անցքը խափանելու: Բայց երբ Իտալացիք մագըլցելով ժայռերուն վրայէն կը սպառնային հատանել Աւստրիացւոց նահանջը, այն ատեն աւստրիացի գունդերը քաշուեցան ի Վալլէ Սուկանա. հոն ևս յաղթուելով, քաշուեցան ի Լէվիքո, ուր ետևնէն հասաւ Մէտիչի, և հոն ևս տանելով յաղթութիւն, գերեց 100 զինուոր: Մէտիչի Տրիտէնդոնէ քիչ ժամ հետու կը գտնուէր, երբ զինադադարման լուրը հասաւ: 1866ի իտալական պատերազմաց մէջ կարիպալտեան կամաւորք, անկախ բարձրագոյն հրամանատարութենէ, աւելի ընտրելագոյն ծրագիր մը ունեցան և գործադրեցին, քան կանոնաւոր բանակը:

6. Նաւատորմիդք իտալիոյ եւ Աւստրիոյ — Պատերազմ Լիսսայ: — Իտալիա իւր միութիւնը կազմելէն վերջը, իբր ծովային ազգ մը, մեծագումար ծախքեր ըրած էր բազմաթիւ և զօրաւոր նաւատորմիդ մը ունենալու: Աւստրիոյ դէմ պատերազմի ծրագրին մէջ կար նաև նաւատորմիդին կողմանէ յարձակումն աւստրիական մարտանաւերուն վրայ, որոց կը հրամայէր ծովակալն Դէկէդոֆ՝ Ադրիականի հիւսիսային ափունքը: Յետ Քուսդոզայի պարտութեան, Իտալացիք գրեաթէ ապահով էին նաւական յաղթութեամբ մասամբ մը սրբել անոր յառաջ բերած ցաւալի տպաւորութիւնը: Ծովակալն Փէրսանօ հրամանատար էր նաւատորմիդին որ խարսխեալ էր յԱլքոնա: Յունիս ՉՅին աւստրիացի ծովակալն Դէկէդոֆ քանի մը նաւերով մտեցաւ թշնամւոյն նաւերուն յԱլքոնա և զանոնք ի պատերազմ հրապուրելու համար, նախ ինքը սկսաւ ուժակոծել: Իտալացի նաւապետներէն ոմանք առանց իսկ սպասելու ծովակալին հրամանին, պատրաստուեցան պատերազմելու: Հրամանատարք խորհրդի կանչուելով ի ծովակալէն, Փէրսանօ կը տարտամէր պատերազմ ընդունելու և երբ հրամանատարք հակառակը կը պնդէին, արդէն Դէկէթոֆ գոհ իւր ըրած ցոյցէն, նաւերու զլուխը դարձուցեր և վսեմութեամբ մեկնեւ էր: Փէրսանօ, որ

ի Հարաւային Իտալիա այնքան յանդուգն և կըտրիճ երևցեր էր, ամբողջ այս ծովային մարտին մէջ, անըմբռնելի ընթացք մը ունեցաւ. ի զուր Մովային պորութեան պաշտօնեայն և Լամարմորա կը յորդորէին զինքը գործելու. յետ մինչև Յուլիս 8 մնալու նաւահանգստին մէջ, ապա ելաւ ծովը և աննպաստ պտոյտէ մը վերջը Յուլիս 13ին մտաւ կրկին յԱնքոնա: Ապա բռնադատեալ գործ մը ցուցընելու համար, սահմանեց արշաւելու Լիսսալի վրայ, որ կողի մ'է Տալմացիայի եզերքը, անմատչելի ափուկքներով, պատսպարեալ ի ժայռից, թնդանօթներէ և 2000 պահանորդէ: Յուլիս 16 ին սկսաւ անօգուտ ումրակոծումը սր տեւեց երկու օր: Երրորդ օրը տեսնուեցաւ աւստրիացի նաւատորմիդը որ կը դիմէր ճեպընթաց բովանդակ շագուովը: Փէրսանօ իւր նաւերը կրկին զուգահեռական զծով շարեց, առաջին դնելով զրահաւորքը և սպասեց թշնամւոյն, որուն նաւերը թուով իւր նաւաց կիսուն կը հասնէին: Ապա Ռէ Գիլլո հրամանատար նաւը ձգելով անցաւ Աֆֆոնօտորէ բերդանաւին վրայ, իւր անձնական ապահովութեան համար: Կայծական պէս երագութեամբ մը զոգցես հասան աւստրիական նաւերը և դիմեցին ի կեդրոն երկուստեք ումրակոծելով: Գէկէդոֆ Մոսիւր հրամանատար մարտանաւը ուղղեց Ռէ Գիլլո զրահաւորին վրայ և իւր նաւուն ցուկով ուժով հարուածելով մէջտեղէն, քիչ ժամանակուան մէջ ընկղմեցաւ նաւը և նաւաստեաց կէսէն աւելի խեղդուեցան: Այս միջոցիս Աֆֆոնօտորէ իտալական վիթխարի բերդանաւը ահաւոր թնդանօթներ կ'արձկէր թէ աւստրիական Քոյդէրի և թէ ուրիշ նաւերու վրայ, բայց այնքան հեռաւորութենէ որ և ոչ մի փնաս կրցաւ բերել: Նաւատորմիէն մաս մը որուն կը հրամայէր ծովակալն Ալպինի, ի հեռուստ պարզ հանդիսատես կ'ըլլար կըռուոյն առանց շարժելու, և այս ի պատճառս նախանձու Ալպինի ծովակալին ընդդէմ Փէրսանոյ որ նախադասուեր էր հրամանատարութեան մէջ: Այսու հանդերձ եղան ևս պատուարեր քաջասրտութիւնք, արժանաւոր յիշատակութեան: Փոլօտորօ մարտանաւին մէջ

ահաւոր ոմբերէն հրդեհ մը ճարակեցաւ, որոց հրամանատարը Քափէլլինի յետ վիրաւորքը ուրիշ նաւ մը փոխադրելու, ջանաց որ նաւաստիք ամէնը թողուն նաւը, իսկ ինքը կ'ուզէր մեռնիլ իւր նաւուն մէջ: Սակայն նաւաստիք եռանդեամբ գոչեցին որ երբէք չէին յանձն առնուր թողուլ իրենց նաւը և նաւապետը. քիչ վերջը մեծածայն ճայթիւններու մէջ ընկղմեցաւ վիթխարի նաւը, հետը տանելով յանդունդս երեք հարիւր նաւաստի, յորոց հազիւ սակաւք ջրին երեսէն փրկուեցան: Դէկէդոֆ յետ այսպիսի ջախջախիչ հարուածի մը, որուն նմանը ամենայն պարագայքը նկատելով, հազիւ կը յիշուի ի Պատմութեան, քաշուեցաւ Լեզենայի ջրանցքը. իսկ Փէրսանօ քաշուեցաւ յԱնքոնա:

Լիսուայի պարտութիւնը աւելի ցաւ պատճառեց Իտալացոց, քան ուրիշ որ և է պարտութիւն մը. ուրովհետև Իտալիա կը պարծէր և վստահ էր իւր զրահաւորաց վրայ, և որոց համար իւր կարողութենէն շատ վեր դրամական զոհողութիւնք ըրած էր, ինքը որ դեռ նոր ձեացեալ թագաւորութիւն մ'էր: Եւ ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագայից մէջ, հասարակաց կարծիքը փնտռեց մատնիչ մը և գտաւ ի Փէրսանօ, որոյ դատաստանը պահանջուեցաւ: Եւ որովհետև նա անդամ էր ծերակուտի, ծերակոյտը բարձրագոյն դատարան ձեակերպեցաւ Հոկտեմբեր 11ին: Դատաստանը շատ երկար տևեց և մերժեց մատնութեան մը ամբաստանութիւնը: Բայց հաստատեց անհմտութիւնը, անհոգութիւնը և անհնապանդութիւնը. որով դատապարտեց զՓէրսանօ կորսնցնելու ծովակալութեան աստիճանը և վճարելու դատաստանին ծախքը¹:

7. Վէնետիկ կը շնորհուի եւ կը միանայ Իտալիոյ: —

1. Փէրսանօ առանձնացած ի Դուրին, ատեցեալ բոլոր ազգէն, այլ և այլ հրատարակութեամբք ջանաց ինքզինքը արդարացընել, ձգելով այլոց վրայ պարտութեան և ձախողանաց պատճառքը, պախարակելով Իտալիոյ քաղաքագէտքը գրութեամբք, որոնք ժամանակին մեծ շռուաչ ունեցան նոյն իսկ յաշս օտարաց: Վախճանեցաւ յամին 1885:

Եւ սակայն Իտալիա յաղթուելով իսկ յԱւստրիոյ ի ցամաքի և ի ծովու, բաղդաւոր կը գտնուէր, ընդունելով իւր յաղթողէն պահանջածը՝ զՎենետիկ, որոյ համար մասնակցներ էր պատերազմին: Որչափ որ ի սկզբան Իտալացիք նախատինք համարներ էին այդօրինակ ընդունիլը զՎենետիկ և արչաւեր էին Աւստրիոյ երկիրները, անոր տագնապալից օրերու մէջ, բայց երբ Աւստրիա, Բրուսիոյ հետ դաշամբ՝ ազատելով ի հիւսիս, սպառնալով ծանոյց Իտալիոյ՝ քաջուիլ իւր նախկին սահմանները և նոյնը կը յորդորէր Նաբուլէոն Գ, Իտալիա ստիպուեցաւ թողլու փութով բռնած երկիրները և ընդունել ինչ որ Աւստրիա և Նաբուլէոն Գ սահմաններ էին: Զինադադարումը Օգոստոս 12ին ստորագրուեցաւ ի Քորմոնս, և Աւստրիա Օգոստոս 24ին կը ստորագրէր իւր հրաժարիլը Վենետիկոյ տիրապետութենէն ի նպաստ Քաղղիոյ: Զօրավարն Լըպէօֆ մարտանաւով մը զրկուեցաւ Վենետիկոյ նաւահանգրատին մուտքը ի Մալամոքքոյ, հսկելու որոշողութեանց կանոնաւորապէս կատարման, և ընդունելով զՎենետիկ յԱւստրիոյ յանձնել իւր ժողովրդեան. որ ապա քուէով պիտի հարցուէր եթէ արդեօք կ'ուզէր նորոգել Նախկին Հասարակապետութիւնը թէ միանալ Իտալիոյ: Մէնապրէտ զօրավարը մեկնեցաւ նախ Բարիզ և ապա ի Վեննա կարևոր ձևակերպութեանց և ստորագրութեանց համար: Աւստրիա պիտի դարձնէր Երկաթեայ թագը, հրաժարելով յԻտալիոյ. պիտի տար Վենետիկոյ զբառուներն և դիւանէն վերուցած հատորքը և Իտալիա պիտի վճարէր, իրենց գնոյն վրայ, Աւստրիոյ կողմանէ թողեալ ամենայն զինուորական կազմածք և մթերք: Հոկտեմբեր 3ին ստորագրուեցան դաշինք ի Վեննա. և 19ին կատարուեցան կրկին հրաժարմունք նախ յԱւստրիայէ առ Քաղղիա և ի Քաղղիոյ առ Իտալիա. Իտալացի զինուորք մտան ի Վենետիկ¹: Ապա 21ին և 22ին ժողովրդախումբ քուէար-

1866
Հոկտ.

1. Որչափ որ ականատես Վենետիկոյ ազատութեան մեծ աւուրց, յիշեմ աստ միայն նոյն ամսուան Բազմավիպի հրատարակած

կութիւնը գրեաթէ միարեւրան ընդունեցաւ Վենետկոյ միուկիւնը ընդ իտալիոյ « Վիկտոր Էմանուէլի և իւր յաջորդաց սահմանադրական միապետութեան ներքև » :

յօդուածէն քանի մը տոչքը որով կ'իմացնէ թէ « Անկարելի է բերանով պատմել և գրչով ստորագրել ինչ որ կը զգար ժողովուրդը իր սրտին մէջ: Այն օրուան անպատմելի ցնծութիւնը նա միայն կը զգայ, որ գիտէ և կը ճանաչէ ազգի մը ազատութեան յարգը: Բոլոր քաղաքը ոտքի վրայ էր, տուները և հրապարակները զարդարուած դրօշներով և դիպակներով, ամենուն այքը եկող զօրաց վրայ, ականջը երածըտական քաղցր նուագաց . . . »: Եւ սակայն ի Վենետկոյ մեկնող իշխանութիւնն, Հապսպուրկի վեհանձն և պընուական ցեղն էր:



ԳԼՈՒԽ ԿԴ

Ի ԳԱՂՂԻԱ ՆԵՐՔԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 1861 — 1867

1. Գաղղիոյ Արտաքին Գործոց քաղաքականութիւնը. — 2. Ամս 1861. Օրէնսդիր ժողովոյն և ծերակուտին գումարումները. — 3. Յարձակողականը Նաբոլէոն իշխանին ընդդէմ Օուլէանեանց — Նամակ Դքսին Տ'Օմալ. — 4. Գումարումներ 1862 Ամին — Նոր ընտրութիւնը 1863ի. — 5. Գումարումներ 1864ի — Ընդդիմութիւնը պայքարաց մէջ և Կայսրութիւնը դէպ յազատականութիւն. — 6. 1865 տարւոյն Պսակի ճառին Պատասխանւոյն առթիւ վիճաքանութիւն. — Թիէր կը պաշտպանէ Քանյայայետին ժամանակաւոր իշխանութիւնը. — 7. Կայսրոնին թագապահ — Ուղեորութիւն յԱլճէրի — Խօսք Նաբոլէոն իշխանին յԱյալիօ. — 8. 1866 ամին Պսակի ճառը և Պատասխան — Կոմսն սը Պուասսի. — 9. Յաւելուած Քառասնից. — 10. Բրուսիա Աւստրիական պատերազմը Օրէնսդիր ժողովոյն մէջ. — Թիէրի ճառը. — 11. Պատրանք Գաղղիոյ — Նոր ուղղութիւն քաղաքականութեան մէջ:

1. Գաղղիոյ Արտաքին Գործոց քաղաքականութիւնը: — Եթէ յԵւրոպա և եթէ Եւրոպայէ դուրս, որ և է մեծ կամ փոքր խնդրոց մէջ, տեսանք արդէն Գաղղիոյ, կամ ճշգրիտ ևս ըսել, Նաբոլէոն Գի քաղաքականութիւնը. և պէտք է աւելցնենք ոչ առանց մեծ ազդեցութեան ի բազում խնդիրս. յիտալիա ի Յունաստան, ի Լեհաստան, յԱսորիս, ի Չինաստան, ի Ճափոն, ի Տանիմարբա, ի Մեքսիկոյ և վերջապէս ի Գերմանիա: Իսկ թէ Գաղղիա ի՞նչ շահ ունեցաւ այդ ազդեցութիւնէն, կամ թէ վնասուեցաւ նիւթականապէս և բարոյապէս, այդ վիճելի մեծ խնդիր մ'է: Չէ կարելի ժխտել որ եղաւ ժամանակ մը յորում Կայս-

րութիւնը, նա մանաւանդ որ զայն կը ներկայացնէր Նարոլէոն Փ, կարծեց ունենալ ի ձեռին ընդհանուր տիեզերական իրաւասութիւն մը. իրաւասութիւն մը զոր ստիպեալ էին ճանչնալ ամէն պետութիւնք և ամէնքը խոնարհիլ կամ շողոքորթել, կայսերական արքունիքը Ողիւմպոս մը կոչելով: Գաղղիա այն տարիներուն մէջ աւելի զօրաւոր էր արտաքսապէս քան ինքն յինքեան, և Նարոլէոն Փ շլացեալ արտաքին ազդեցութենէն և փառքէն, աւելի խնամք տարաւ ստէպ միջամտութեամբք այդ ոյժը տածելու, քան ներքին ժողովրդական և ուսումնական և բազում հիմնական յաւաջադէմ հաստատութեանց, որոց վերայ հարկ էր որ ամրապնդէր իւր և իւր ցեղին յիշխանութեան յարատեութիւնը: Որով այն օրը յորում գտնուեցաւ յԵւրոպա քան զինքն աւելի զօրաւոր ազդեցութիւն մը, արտաքին գօրութեան կորսուելուն, արդէն ներքին ոյժը կորսուեր էր: Գարծեալ այս արտաքին միջամտութիւնք ճետեանք մ'էին պարզ Արքունեաց քաղաքականութեան. և ծերակուտին և Օրէնսդիր ժողովոյն մէջ ընդգիմութիւնը որ ի սկզբան շինք¹ երեսփոխաններէ կը կազմուէր, օր յաւուր իւր ձայնը կը բարձրացնէր և կը բազմանար. և պարիսպ մը որչափ հաստատուն ըլլայ անհնար է որ չի կրէ ամենօրեայ բաղխմունքներէ: Եթէ կար միջամտութիւն մը յորում փառքէն աւելի, սեպչական և անձնական զգացումն կը տեսնուէր՝ այդ իտալիոյ նկատմամբ էր. և Նարոլէոն Փ, ինչ ալ ըսեն իտալացիք, միշտ սիրով կատարեց այդ խնդրոյն վերաբերեալ ամէն զոհողութիւն. և այդ ազգին կազմութեան և միութեան համար յանձն առաւ Աւստրիոյ նման մեծ ազգի դէմ գաղղիական պատերազմ մը, գաղղիացի արեամբ շաղախելով իտալական միութեան չէնքը ի Մաձէնդա և ի Սոլֆերինո: Արտաքին Քա-

1. Շինք երեսփոխանք որոնք աներկիւղ ընդգիմութիւն մը կազմեցին կայսրութեան դէմ, այն օրերուն յորս ամենայն ոք կը շողոքորթէր, էին՝ Նավէն, Ժիւլ Ֆալբը, Էռնէ Փիքար, Էմիլ Ուիվիէ և Տարիմոն:

ղաքականութեան խնդրոց մէջ, Քաղղիոյ միայն թերևս «գտակարագոյնը եղաւ Քոչինչինի արշաւանքը, ուր Քաղղիա նաւեր զրկեր էր 1858ի վրէժ խնդրելու հոռով-մէական քարոզչաց սպանութեան, և 1861ի յետ այլ և այլ կոիւններու, ամբողջովին տիրեր էր Սայկոնի, Պիէն-հոայի և Միտոյի, որով և գաղղիական հարուստ գաղթականութիւն մը ձեւացեր էր :

2. Ամն 1861 — Ծերակուտին եւ Օրէնսդիր ժողովոյն գումարումները : — 1861ի տարեգլխի ընդունելութիւնք չքեղութեամբ ըստ սովորութեան կատարուեր էին : Լորտ Քովլի՝ դեսպանաց մէջ հինաւորցը, սմենուն կողմանէ յայտներ էր առ կայսրը « Մաղթանք և Ուխտքը, իւր վեհափառութեան և Օգոստափառ ընտանեացը համար » : Որուն Նարոլէոն պատասխաներ էր, յայտնելով իւր իղձը՝ « համաձայնութեամբ Պետութեանց, խաղաղութիւնը պահելու » : Խօսելով առ ծերակոյտը և Օրէնսդիր ժողովքը, իմացուցեր էր որ ընդ հուպ Քաղղիոյ բարեկարգութեան համար օրէնքներ պիտի առաջարկուէին :

Օրէնսդրական նիստերուն բացումը եղաւ Փետրուար 4ին : Երկու ամիս առաջ Մոնիթօրը հրովարտուի մը հռչակեր էր, որով հրաման կուտար եթէ ծերակուտին և եթէ Օրէնսդիր ժողովոյն Պսակի ճառի Պատասխանւոյն առթիւ, վիճել վարչութեան նեքին և արտաքին աշխարհափարութեան վրայ. կ'ընդարձակէր Պետութեան պաշտօնէից իշխանութիւնքը, կը բառնար Ալճէրիի պաշտօնէութիւնը և անդեր պաշտօնեայք՝ կը հաստատէր, որոնք կրնային միջամտել Խօսարանական պայքարոց մէջ : Կայսրը բացման ճառին մէջ կը դրուատէր այս հրովարտակը և կը յորդորէր որ Պատասխանին առթիւ վիճեն և փնտոեն Պետութեան օգտակարագոյնքը : Յիրաւի այս ազատական քայլը առ ժամա պարզ առերևոյթ էր, և սակայն էր ինչ : Ծերակուտի մէջ կղերական մասը պարսաւեց իտալիոյ թագաւորութեան կազմութիւնը և Քաջանայապետին

1860
Նոյ. 24

նկատմամբ բռնուած ընթացքը: Իշխանն Նաբոլէոն այն քան սաստկութեամբ պատասխանեց ընդդէմ կղերականաց որ Պիլլօ պաշտօնեայն, բռնադատուեցաւ մասամբ իւր սրբազրել կայսեր հօրեղբորորդուն խօսած քը և ծանուցանել որ կայսերական վարչութիւնը միջին ուղի մը բռնած էր ընդ Վիկտոր Էմանուէլ և ընդ Քահանայապետն: Բանաձև մը առաջարկուեցաւ ի նպաստ Քահանայապետին ժամանակաւոր իշխանութեան, Պիլլօ զայն չընդունեցաւ և մերժուեցաւ տասն քուէից առաւելութեամբ: Օրէնսդիր ժողովքին մէջ Ալակողմեանք և Զախակոլմեանք տժգոհութիւն ցուցուցեր էին վարչութեան Արտաքին Գործոց անորոշ ուղղութեան վրայ, Պիլլօ վստահութեան քուէ մը պահանջեց, զոր անմիջապէս ստանալով, գոցեց վիճաբանութիւնը: Ներքին քաղաքականութեան վերաբերեալ պայքարաց մէջ, Փիքար՝ Հնգերէն մին՝ պահանջեց որ վերջապէս Բարիզ ալ ունենայ իւր ժողովրդենէ ընտրեալ Քաղաքավարութիւնը՝. և աւելցուցեր էր, « Ե՞րբ պիտի տաք մեզ գԲարիզ » . որուն Պիլլօ պատասխաներ էր « Երբէք Ձեզ պիտի չտանք » . Այն ատեն Փիքար աւելցուց « Ե՛հ, մենք կ'աւնունք զայն » և Պիլլօ վերայ բերաւ. « Թէ որ կը համարիք ստանալ Խօսարանի մեծամասնութեամբ, շատ ժամանակ պէտք է, իսկ եթէ զօրութեամբ, երբէք պիտի չկարենաք »: Ո՛վ կրնար գուշակել ինն տարի վերջը պատահելիքները: Օրէնսդիր ժողովքին մէջ հազիւ քանի մը հասարակապետականք կը համրուէին և արդէն դոցանէ գլխաւորներէն մին՝ Էմիլ Օլիվիէ, սկսած էր անցնիլ կայսրութեան կողմը: Եւ եթէ կայսեր Պսակի Ճառին Պատասխանը քուէարկուեցաւ 213 քուէիւք ընդդէմ 131 ից, յետին բացասականքս չէին ընդդիմակացք, այլ յայտարարք տժգոհութեան, որովհետև կայսրը տպագրութեան և Օրէնսդիր ժողովոյ պայքարաց ազատութիւնք կը չընորհէր:

3. Յարձակողականք Նաբոլէոն իշխանին ընդդէմ

Օւլէանեանց . Նամսկ դքսին տ'Օմալ : — Մարտ 1ի ծերակուտի գումարման մէջ իշխանն Նարոլէոն իտալական խնդրոյն մէջ իւր հօրեղբորորդին և իւր աները զՎիկտոր Էմանուէլ պաշտպանած ժամանակ , սաստկապէս յարձակեր էր Պուրպոնեանց և մանաւանդ Օւլէանի ցեղին վրայ , լմնցնելով իւր խօսքը որ « այդ ընտանիքը ամենուրեք և միշտ ամէն երկիր ուր որ իշխեր է , միայն ներքին կռիւներու և մատնութեանց գայթակղական օրինակք ներկայացուցած է մեզ » և կը յիշէր զՖիլիպ Էկալիթէ և զայլս : Ներքին գործոց պաշտօնեայն պատուիրած էր որ այս « վսեմ ճառը » կը պատուի Քաղղիոյ ամէն Հասարակութեանց որմոց վրայ , որ ժողովրդեան վերայ « ամենամեծ ազդեցութիւն ունեցեր էր » : Յայտնի է այս ճառախօսութիւնը , որքան յուզեց Օւլէանեան ցեղին իշխանքը և բարեկամքը : Դուքսն տ'Օմալ կայսեր հօրեղբորորդւոյն պատասխանեց գրքուկով մը Քաղղիոյ Պարսն-Նէան վրայ Նամակ տալիշխանն Նարոլէոն » վերնագրով , զոր կը սկսի « Արդեօք պատրու կորսնցնել կու տայ ամենէն բնական , ամենէն սրբազան իրաւունքը , այսինքն պաշտպանելու հրապարակաւ նախատեալ ընտանիքս և անոր հետ Քաղղիոյ անցեալը . . . » ապա ի մէջ այլոց յայտնութեանց կը պատմէր Հորդէնսիա թագուհւոյն իւր որդւոյն Լուի Նարոլէոնի հետ ի Բարիզ գալը , գաղտ ի պաշտօնէից , հրամանաւ Լուի Ֆիլիպի . պաշտօնէից յանդիմանութիւնը առ թագաւորն որ Լուի Նարոլէոն ի Բարիզ եկեր էր իւր կուսակիցքը գրգռելու , և Լուի Ֆիլիպ իւր բնական բարեսէր ոճով բնաւ հոգ չընէր : Եւ որովհետև Նարոլէոն իշխանը իւր ճառախօսութեան մէջ ըսեր էր , « Թող օրինաւորականք և բուռն հասարակապետականք յԱնգղիոյ փորձեն դիմագրաւելու մեր ծովեզերքները , զամէնն ալ գեղեցկապէս հրացանի կը բռնենք » . Դուքսն տ'Օմալ կը պատասխանէր որ « Յուլիսի թագաւորութեան ժամանակ եղաւ արատաւորութիւն մը ի Սդրագպուրկ և դիմագրաւուամն ի Պուլուներ , սակայն ոչ ոք հրացանի բռնուեցաւ . արդարև մեծ յանցանք մ'է , և սակայն այս Օւլէանեանք ա-

նուղղայ են և թէ կրկին նոյնը պատահեր, անցելոյն պէս գթած պիտի ըլլային, բայց Պոնափարդներուն համար երբ խնդիր կայ հրացանի բռնելու, հաւատարիմ են իրենց խօսքերուն: Հաւատացէք, իշխան, Չեր և Չերայնոց ամէն ըրած և ընելիք խոստմունքներէն, դորա ևեթ գործադրութեան հաւատք կ'ընծայեմ »: Տ'Օմալ Դբսին գրեուկը փութով ամէն ձեռք գտնուեցաւ. Ոստիկանութեան վրիպակաւ մը մտեր էր ի Բարիզ և երբ Ոստիկանութիւնը գնաց գրաւելու գրավաճառին քով, արդէն օրինակ մը չէր մնացած: Այսու հանդերձ տպագրողը դատապարտուեցաւ մէկ տարուան բանտի և 5000 ֆրանք տուգանքի. վաճառողը վեց ամիս բանտի և 5000 ֆրանք տուգանքի: Նարոլէոն իշխանը նամակով մը առ կայսրը խնդրեց որ ազատ թողուի այդ գրքոյկը « որպէս զի Գաղղիոյ հայրենասէրք տեսնեն այդ պարսաւագիրքը և ըստ արժանւոյն դատապարտեն »: Կայսրուհին անգամ օրինակ մը դրած էր իւր գրասեղանոյն վրայ ի ցոյցս ամենեցուն, և ընդերկար խօսից նիւթ մ'էր յԱրքունիս, յայտ է միշտ պանծացնելով իշխանին ճառախօսութիւնը:

4. Գումարմունք 1862ի¹ - Նոր ընտրութիւնք 1863 ամին: — 1862 տարւոյն գումարմունք չունեցան կարևորութիւն մը: Գաղղիա զբաղեալ էր յիտալիա և ի Մեքսիքոյ. ստէպ զրամական նոր ծախուց վրայ էին քուէարկութիւնք և մերթ ընդ մերթ փոքրամասնութենէն ոմանց բողոքը այս միջամտութեանց նկատմամբ, արդիւնք մը չէին ունենար: Երկար վիճից և ապա դատաստանաց նիւթ եղաւ Միրէս սեղանաւորին շահավաճառութեան խաբեբայ արարքը, որ այն միջոցին իւր մեծ շառաչը ունեցաւ ի Գաղղիա, յԵւրոպա և յԱրևելս: Միրէս դատապարտուեցաւ հինգ տարուան բանտի և 3000 ֆրանք տուգանքի:

1. Յամին 1862 Նարոլէոն Գ կայսրը իւր մեծադիր իւղաներկ պատկերը կայսերական նշանազգեստիւք կը յղէր « ի նշան համարման և համակրանաց » առ Մխիթարեան Ուխտն ի Վենետիկ, որ դրուած է ի գրատան վանաց Սրբոյն Ղազարու:

Օրէնսդիր ժողովքի երեսփոխանաց ժամանակը լրացեր էր և 1863ի առաջի ամիսներուն, ընտրութիւնք պիտի կատարուէին: Մայիս 31ին և Յունիս 10ին ընտրութիւնք եղան: Վարչութիւնը ամէն միջոց և հնարք գործադրեր էր Կայսրութեան կողմնակցաց յաջողութեան համար ի գաւառս: Ուրիշ կողմանէ երիտասարդ օրէնսգիտաց խումբ մը յորս նշանաւորքն էին Ժիւլ Ֆէրրի, Շարլ Ֆլոքէ, Ռուսսէլ, Տըլոր, Կիւստավ Շոտէ, Հէրիսսոն, Կամպէդդա, Քլամաժըրան և այլք, միաբան ստորագրութեամբ իրենք զիրենք ժողովրդեան տրամադրութեան տակ դրին խորհուրդ տալու համար: Թիէրի բարեկամք իրեն հարցուցին որ արդեօք յանձնկ'առնուր ընտրուիլ պատասխանեց « որ ամէն ձև վարչութեանց մէջ՝ բարի քաղաքացիք ունին կատարելու պարտքեր, յորոց չէ ներելի խոյս տալ և որովհետև Նոյեմբեր 24ի հրովարտակով Կայսրութեան սահմանադրութիւնը փոփոխեցաւ և փոփոխելի ժանուցաւ, որով երգումը անոր վրայ բնաւ հակասութիւն մը չէր ազատասիրաց կարծեաց հետ »: Փէրսինեի Ներքին գործոց պաշտօնեայն շրջաբերականով մը, յետ պանծացնելու Կայսրութեան մեծութիւնը որ « զՔաղղիա ազատեր էր անիշխանութեան և թշուառութեան անդունդէն, ուր զինքը ձգեր էր հռետորաց վարչութիւնը », յայտնապէս կը յանձնարարէր քուէ տալ անոնց « որոնք վարչութեան վստահութիւնը ունին »: Քաղաքապետաց լիովին իշխանութիւն տրուեցաւ ամէն միջոց գործածել պաշտօնական ցանկին յաջողութեան համար. և որոնք, պէտք է ըսել, զեղծան մեծապէս, բանտարգելով իսկ կամ խափանումն դնելով ընտրելեաց կամ ընտրողաց: Կուուոյն մէջ մտան նաև քաղաքագլուխք և շահապք, որոնք աւանաց և գիւղօրէից մէջ ամէն հնարք գործածեցին որպէս զի քուէ շտրուի ընդդիմութեան, յորս առ հասարակ կը հասկըցուէին թագաւորականք և հասարակապետականք: Եւ սակայն ընդդիմութիւնն ալ առանց պաշտօնական միջոցներու իսկ, խօսից ուժով կ'աշխատէր իւր յաղթանակին: Թիէրի առաջարկուեցաւ ընդունիլ Բարիգու

չրջանակներէն մին, զոր ընդունեցաւ. և ազատականք Բարիզու ամէն շրջանակաց համար ընտրելեաց ցանկ մը շինեցին: Ներքին գործոց պաշտօնեայն բուռն շրջարեականով մը կը պատուիրէր քաղաքացւոց արհամարհել «այն անձանց խաբէութիւնքը, որք այլ և անգամ զՊաղլիա վտանգեր էին»: Հոսման քաղաքացեալ Սէնի, աւելի ջաղխիչ բացատրութեամբք միջամտեց կռուոյն ընդդէմ ընդդիմակացից և մանաւանդ ընդդէմ Թիէրի. զոր կենդանի անձնաւորումն կը համարէր սահմանադրական վարչութեան, և անոր մուտքը յՕրէնսդիր ժողովք՝ աղիտարքեր կայսրութեան: Պատերազմը յայտնի և հանդիսական էր ընդ մէջ Պետական հարուածի կուսակցաց և հակառակորդաց: Բովանդակ Եւրոպա հետաքրքրութեամբ հանդիսատես կանգներ էր կռուոյն. առաջին անգամն էր որ կայսրութիւնը կը ստիպուէր այսպիսի զօրաւոր ընդդիմութեան մը հետ մաքառիլ: Ընտրութեան ամբողջ օրը ի Բարիզ ժողովուրդը լռելեայն կը շրջէր փողոցաց մէջ. անկարելի է բացատրել իւրաքանչիւր կողմին այլայլութիւնը: Երեկոյեան դէմ կ'իմացուէր որ ընդդիմակացից բովանդակ ցանկը ընտրուեր էր: Ամենայն ոք ապշեցաւ. կայսրութիւնը գողցես փոքրկացաւ: Բարիզ կը դատապարտէր Գեկտեմբեր Չը և մայրաքաղաքին և կայսեր մէջ անջատումը պաշտօնապէս եղած կրնար համարուիլ: Բարիզու ընտրելոց մէջ էին Հավէն՝ Սէօլը լրագրին քաղաքագիտական տնօրէնը Թիէր, Էմիլ Ուրվիէ, Փիւքար, Ժիւլ Տավրը, Տարիմոն, Ժիւլ Սիմոն, Փէլլըզան և Կէրու: Ուրիշ գաւառներ ընտրած էին զՊէրիէ, Մարի, Լանժուիկէ: Ընդ ամէնը երեսուն և հինգ ընդդիմակացք, որ թերևս աննշան թիւ մ'էր մեծամասնութեան քով, սակայն այս առաջին յաղթանակն էր ընդդիմութեան: Փէրսիներ Ներքին Գործոց հրաժարեցաւ. կրկին վերցուեցան անդեր պաշտօնէութիւնք. Պիլլօ՝ Պետութեան պաշտօնեայ անուանուեցաւ, Պուդէ՝ Ներքին Գործոց. Տիւրիւյ՝ Հասարակաց կրթութեան, Պարոշ՝ Արդարութեան և կրօնից, Ռուհէ՝ Նախագահ Պետութեան ատենին: Քանի մը ամիս

վերջը մասնական ընտրութեամբք կը մտնէին Օրէնսդիր ժողովքին մէջ Քառնօ և Կառնիէ Փաժէս, երկու ազատական նշանաւոր գործողք 1848ի :

5. Ժողովաշրջան¹ 1864ի. — Ընդդիմութիւնը պայքարաց մէջ. — Կայսրութիւնը դէպ յաւատականութիւն: — Ամենայն ոք հետաքրքրութեամբ կը սպասէր ժողովաշրջանին բացման որ եղաւ Նոյեմբեր 5ին: Նարոյէոն Քյետ մի աւ մի յիշելու վաճառականութեան, նաւարկութեան, երկաթուղեաց յառաջադիմութիւնը, Աւճէրիի և գաղթականութեանց երջանիկ վիճակը, Քոչինչինի աշխարհակալութիւնը, որով Քաղղիա երկիր մը կը ստօնար Ասիոյ ծովերուն մէջ, դարձուց խօսքը Արտաքին քաղաքականութեան վրայ և խօսքը բերաւ Լեհաստանի մասին, ծանուցանելով որ Քաղղիա չէր կրնար միջամտել ի նպաստ ապստամբ համարեալ ազգի մը՝ Ռուսիոյ նման մեծ Տէրութեան մը կամաց հակառակ, որուն հետ Ղրիմու պատերազմէն վերջը սերտ բարեկամութեամբ կապուած էր. և սակայն Քաղղիայով միայն չէր աւարտիր այդ խընդիրը: « Արդէն իրաց պարագայք ամենուրեք կը տապալեն 1815ի Դաշինքը ի Յունաստան, ի Պելճիա, յիտալիա ինչպէս նաև ի Գանուր: Գերմանիա կը յուզի զայն փոխելու. Անգղիա վեհանձնութեամբ այլայլեց զայն հրաժարելով Յոնիական կղզիներէն և Ռուսաստան զայն ոտնակոխ ըրաւ ի Վարչաւիա »: Աւելցուց ևս որ իւր ըրած ջանքերը Դեսպանաժողովի մը համար ի դերև ելեր էին մեծ Պետութեանց մերժելովը: Պսակի ճառին Պատասխանին մէջ ի ծերակուտի, Պոնտան մեծ հռետորութեամբ պաշտպանեց ըզլեհաստան, Քաղղիոյ նպաստը առաջարկելով, նոյնը ըրաւ նաև իշխանն Նաբոյէոն: Սակայն մեծամասնութիւնը և ընդդիմակացք իսկ գիտէին որ չէր կարելի Լեհաստանի ազատութեան նպատակաւ օգնութիւն մը ընել: Պատասխանը ընդունելի եղաւ համաձայնու-

թեամբ, բաց ի մի հակառակ քուէէ, զոր տուեր էր իշխանն Նարոլէոն¹ :

Օրէնսդիր ժողովքին մէջ պայքարք ամիս մը տւեցին, յորում ընդդիմակացք մեծ շառաչով, մի առ մի ուզեցին աչքէ անցնել արտաքին և ներքին քաղաքագիտական խնդիրք և յորս քաջ հանդիսացան մանաւանդ Թիէր և յորինաւորականաց՝ և հինաւորցն Պէրիէ : Յունուար 11ի գումարման մէջ, Թիէր խօսեր էր ընդհանուր ազատութեան դրութեան վրայ, զոր չորս մասի կը բաժնէր՝ Ազատութիւն տպագրութեան, ընտրութեանց, քաղաքացւոց և հասարակաց կարծեաց. և այս ազատութիւնքը, զորս կը կոչէր « կարևոր ազատութիւնք », կը պահանջէր յանուն փոփոխակի իրաւանց և պարտուց վարչութեան և ընդդիմութեան » : Ռուհէ աճապարեց պատասխանելու որ Թիէր յեղափոխութեան թմբուկը կը հարկանէր, նկարագրեց ազատութեան փնասները, զոր « Թիէր ինքնին պէտք էր գիտնալ, որ տեսեր էր գահու մը տապալելը » . ապա պանծացնելով կայսրութիւնը, աւելցուց որ համբերեն. և կուգայ այն օրը յորում կայսրն ինքնին առ սակաւ սակաւ պիտի տար այս ազատութիւնքը : Թիէրի յաջորդեր էր Ժիւլ Ֆալրը . ուրիշ վիճարանութեանց մէջ գործաւորաց նկատմամբ խօսեր էին Տարիմոն, Էմիլ Օլիվիէ և Ժիւլ Սիմոն² . Պայքարք աւելի սաստկացան երբ խընդիրը Արտաքին քաղաքականութեան վրայ եկաւ : Արդէն Պէրիէ պայծառ հաշուով մը ցուցուցեր էր որ կայսերական վարչութիւնը Դեկտեմբեր 2էն ի վեր ուրիշ վարչութեանց 50 տարուան մէջ ծախսածէն աւելի ըս-

1. Ի Գաղղիա Նարոլէոն իշխանը աւելի կոչուած էր Փլնփլն մականուամբ :

2. Այս նիւթոյն պայքարաց մէջ Փիքար՝ երեսփոխան Բարիզու ընդդիմակաց, կոչեր էր զԲարիզ « Ուղեղ Գաղղիոյ » : Մեծամասնութենէն ձայն մը գոչեց « Հիւանդ Ուղեղ մը » . և տը Մոռնի նախագահը աւելցուց « Եթէ Բարիզ գլուխ է, գաւառք սիրտն են, որով Գաղղիա լաւ սիրտ մը ունի և վատթար ուղեղ մը » :

պառեր էր և ունէր պակաս մը 3 միլեար և 144 միլիոն : Երբ կարգը Մեքսիքոյի արշաւանքին եկաւ, Թիէր բացատրեց հաշուով որ այդ արշաւանքը ամիսը 14 միլիոն ֆրանքի կ'ըլլար Ազգին . և առաջարկեց քանի որ արշիդուքսն Մաքսիմիլիանոս չէ մեկնած յԵւրոպայէ , կասեցնել և բանակցիլ Յուարէզի հետ : Մեծամասնութիւնը թերևս ամբողջովին իւր կողմն էր չմիջամտելու նկատմամբ , բայց ոչ բանակցելու Յուարէզի՝ հասարակապետականի մը հետ : Ռուհէ վարչութեան գործածը պաշտպանեց և մեծամասնութիւնը , յայտնի է , ծափահարեց : Թիէր կրկին դիմեց ի բեմը խօսելու , բայց ժողովքը չուզեց մտիկ ընել . և մեծամասնութենէն երեսփոխան մը գոչեց որ « բաւական խօսուեցաւ աստի նպատ օտարին » : Վերջին երկու գումարումները Լեհաստանի վրայ վիճարանութեամբք անցան : Փէլլըտան առաջարկեց որ Գաղղիոյ դեսպանը կոչուի ի Բէդէրպուրկէ . բայց տը Մոռնի պաշտպանեց զՉարը և Գաղղիոյ քաղաքականութիւնը « Եթէ ազգութեանց օգնելու զգացումը ունի իւր վեհանձնութիւնը , սակայն խաղաղութիւնն ալ ունի իւր հմայքը : Լեհաստան ի խաղաղութեան միայն կրնայ գտնել իւր երջանկութիւնը . Գաղղիա պատերազմ չուզեր » : Եւ յայտմ ունէր իրաւունք : Պատասխանը քուէարկուեցաւ մեծամասնութեամբ : Ընդդիմութիւնը առ այժմ որոշողութեանց վրայ ազդեցութիւն մը չէր կրնար ունենալ , և ցուցուց միայն որ ունէր կորովի և պատճառարան հռետորներ , յորս մանաւանդ Թիէր միշտ հանդարտ , քաղցրալեզու , անխոնջ և ոչ զոք պարտասող . նոյնպէս Պէրիէ՝ ընդարձակ և բարձր միտք մը և խօսք : Այս երկու հռետորական մեծ հանճարներու հետ եռօտանի մը կը կազմէր Ժիւլ Ֆալըր պատճառարան և ազուարան . և անկարելի էր որ այսպիսի խօսողք առ սակաւ սակաւ չազդէին և չտիրէին ունկնդրաց վրայ :

Յամին 1863ի ընտրութեամբք , խօսից տրուած ազատութիւնը , կայսրութեան կողմնակիցք Նարոլէոնի կողմանէ ինքնայօժար շնորհք մը կը համարեն . այլք

ստիպեալ հարկ մը, յորմէ բռնադատուեցաւ Նարո-
լէոն Գ փոխել իր ուղղութիւնը և յորում յետ միանգամ
մտնելու, ակամայ հարկ էր յառաջել. այդ պատճա-
ռաւ իսկ փափագեցաւ ձեացնել կայսերական—ազատա-
կան կուսակցութիւն մը: Այս իւր գաղափարք յայտ-
նուելով սակաւ մտերմաց և ազդեցիկ հոետորներու,
ունեցան իրենց միտողքը, յորս մանաւանդ էմիլ Օլի-
վիէ, Բարիզու հասարակապետական երեսփոխանը, որ
այդ նոր ուղղութեան տարերքներէն ամենէն աւելի ազ-
դեցիկը պիտի ըլլար քիչ վերջը: Բայց զարմանալի ճա-
կատագիր. այդ կայսերական—ազատական ուղղութիւ-
նը պիտի տանէր զԳաղղիա ի Սէտան:

6. 1865ի Պսակի նառին պատասխանուոյն առթիւ
վիճարանութիւնը. — Թիէր կը պաշպանէ Հռովմայ
Քահանայսպետին ժամանակաւոր իշխանութիւնը: —
1865 տարւոյն ժողովաշրջանի բացման ճառով Նարո-
լէոն Գ կը ծանուցանէր գոհութեամբ որ Գաղղիա կըր-
ցեր էր պահել իւր չէզոքութիւնը Տանիմարքայի խըն-
դրոյն մէջ, համակրանօք մը առ Տանիմարքա և բարի
կամեցողութեամբ Գերմանիոյ նկատմամբ», կ'իմա-
ցնէր որ հեռաւոր միջամտութիւնք վերջ կ'առնուին, որ
Մեքսիքոյէ բանակք կը դառնային և Հռովմ գտնուողք
պիտի ելլէին. կը վերջացնէր ճառը ըսելով որ « հաս-
տատութեամբ բռնենք Սահմանադրութեան մը հիմունք
քը և դէմ կենանք անոնց, որք չափազանց մղումներ
նպատակ առած են փոփոխութիւնք յառաջ բերելու,
որպէս զի հարթայատակ ընեն ինչ որ հիմնեցինք»: Այս-
պէս կայսրը չէր ուզեր կարծուիլ որ տեղիք տուած ըլլայ
ազատականաց: Պատասխանին համար վիճարանու-
թեանց առաջին խօսողն եղաւ մարքիզն տը Պուասսի,
ոգելից և զուարճաբան խօսող մը, որ կայսրութեան
վերջի տարիներուն վարչութեանց յուսահատութիւնն
էր: Տը Պուասսի, արտաքսապէս ծածկեալ ձեերով,
սաստկապէս քննադատեց կայսրութեան վիճակը,
միանգամայն ինք զինքը շերմ կայսերական հրատարա-
կելով, ստէպ ծիծաղ պատճառելով ընդդիմութեան և
զայրոյթ մեծամասնութեան: Բաղդատեց զՆարոլէոն Ա

Նարուէոնն Գի հետ և զվերջինս գերազանց գտաւ և « այս առթիւ մի միայն դէպք մը յիշեմ. ոչ միայն չեմ ուզեր խօսիլ Վէնսէննի փոսերու մասին¹, այլ ինձ պատմուած է որ Կայսրը՝ այս վեհանձն գործը ըրած է. իմանալով որ տարագրեալ իշխան մը կը գտնուի ի Բարիզ, ոչ միայն զինքը բռնել շտուաւ, այլ իմացնել տուաւ որ փութով դառնայ յԱնգղիա » : Մեծամասնութեան համբերութիւնը հազիւ կը զսպուէր. ապա առաջարկեց տուրք մը դնել ստար նշան կրողներուն վրայ « Եթէ դոցանէ քանի մը հատը արժանաւորութեամբ ստացեալ են, սակայն որքանը ստացուած են այնպիսի առիթներու մէջ, զորս պարկեշտ բերան մը չկրնար յիշել : Բայց առանց երկդիմի բաւերու դիմելու, կրնայ ճանչցուիլ որ այս նշաններէն շատերը տրուած են, զոր օրինակ իշխան մը Բուսարանութեան պարտէզ տանելուն համար, կամ ի թատրոն, կամ դերասանի մը անունը և կամ հասցէն տուած ըլլալուն ... » : Նախագահը ալ չկրցաւ համբերել և զայրացաւ այսօրինակ բացատրութեաց համար. անդէն Տը Պուլասսի սկսաւ բացագանչել որ ինչ մեծ շիթից մէջ պիտի ինկնար Քաղղիա թէ յանկարծ կորսնցնէր զԿայսրը, և ապա քանի մը վայրկեան խնդրեց հանգչելու : Մէկէն մարաշխտն Մանեան կանգնեցաւ որ թէ Քաղղիա այդպիսի դժբաղդութիւն մ'ունենայ, բնաւ չկորսուիր. ծերակոյտը, օրէնսդիր ժողովքը, բանակը, ամէնը պիտի շրջապատէին զԿայսերական իշխանը գոչելով՝ « Կայսրը մեռաւ, կեցցէ Կայսրը » : Մերակոյտը եռանդնալից ծափահարեց և նախագահը յիշեցուց որ մոռցաւ յիշելու և զՔաղղիա :

Յետոյ վիճարանութիւնը անցաւ Եկեղեցւոց և Պետութեան մէջ յարաբերութեանց նկատմամբ և մանաւանդ Սէլապոս կոնդակին վերաբերեալ, որ վերջ մը կու տար Գալլիական Եկեղեցի կոչուած խնդրոյն. այս խնդիրը ևս ունեցաւ իւր պաշտպանքը և ընդդիմաւ

1. Ուր սպաննուեցաւ Գուքսն Անկիէնի, հրամանաւ Նարուէոնի առաջնոց :

խօսքը: Եւ սակայն աստուածարանական և կանոնագիտական այսպիսի ծանր խնդրոյ մը հետ ինչ յարաբերութիւն ունէր ծերակոյտը: Այսու հանդերձ վեց գումարումն այս նիւթով զբաղեցաւ, և բաց յաշխարհիկ հռետորաց, խօսեցաւ նաև Ռուանի արքեպիսկոպոսը՝ կարգինալն Պոնըչոզ, պաշտպանելով զՍիլլապուս կոնդակը, և Բարիզու արքեպիսկոպոսը՝ գերապայծառ Տ'Արպուա, Պետութեան և Եկեղեցւոյ մէջ հաշտարար զօդիչք ջանալով փնտռել:

Ապա յատենակալաց ոմանք և մանաւանդ Ռոշըժաքլէյն սաստկապէս խօսեցան Սիպտեմբեր 15ի Գաշանց դէմ, որով Հռովմ կը մատնուէր Իտալիոյ ձեռքը, անկէ գաղղիացի զօրաց ելլելովը, Ռուհէ պաշտպանեց կայսրութեան ընթացքը իբր գովեալ ամէն տէրութիւններէ: Յետոյ խօսեցաւ Մեքսիքոյի արշաւանաց մասին և մարաջախտն Ֆորէյ այդ արշաւանքը կոչեց «Ներշընչումն աստուածային՝ ի կայսրն» . և հաստատեց որ Մեքսիքոյի արշաւանքը իւր թագաւորութեան փառաւորագոյն էջերէն մին պիտի ըլլար: Ամէնը ծափահարեցին կեցցէներով: Վերջը Տիւսիէն երկար ճառախօսութիւն մը ըրաւ ժամանակիս ասպականութեանց և նորաձեւութեանց մասին: Յուլիս 7ին արձկուեցաւ ծերակոյտը «Կեցցէ կայսրը» աղաղակներով:

Օրէնսդիր ժողովքը իւր գումարումները սկսած էր Փետրուար 17ին և նախ հարկ էր Պսակի ճառին պատասխանը քուէարկել: Ի զուր ընդդիմութիւնը ուզեց մտցնել մէջը մի երկու բացատրութիւնք ազատութեանց նկատմամբ, մանաւանդ ընտրութեանց մասին եղած զեղծմունքը ջանալ վերցնելու: Գիւլիէ վարչութեան կողմանէ ծաղրածու ոճով պատասխաններ տուաւ. Արդէն ընդդիմակացից ոգիները յուզեալ էին երբ երկրորդ օրը կայսեր սենեկապահ տ'Ավրէնքուր երեսփոխանը ելաւ պատասխանելու առ թիէր որ «վախ չըկար յեղափոխութիւններէ, քանի որ այն հանճարեղ անձը որ կը կառավարէ զԳաղղիա, մեծամասնութիւն ունի Օրէնսդիր ժողովքին մէջ: Անոր ջանքով Գաղղիա ելած է անդունդէ ուր զինքը ձգեր էր հասարակա-

պետութիւնը : Ամենայն ինչ կորսուած էր երբ հասաւ Դեկտեմբեր 2ը » : Այս բացատրութեան վրայ Փիքար զայրացմամբ գոչեց որ « Դեկտեմբեր 2ը եղեուն մ'էր » : Մեծ յուզում և շփոթութիւն ծագեցաւ ժողովոյն մէջ . ամէն կողմանէ կը գոչէին Փիքարի ըսածը կրկին լսելու՝ զինքը դատապարտելու համար . և նախագահը Շնայտէ հազիւ մեծ ջանիւք կրցաւ լռեցնել աղմուկը , խոհեմութիւն համարելով այդպէս : Պաշտօնական գումարմանց տեղեկագիրներու մէջէն վերցուեցաւ Փիքարի ըսածը : Սեպտեմբեր 15ի Դաշանց վիճարանութեան առթիւ Թիէր պաշտպանեց Քահանայապետին ժամանակաւոր իշխանութիւնը . Թիէր աւելցուց որ « շատ շքտեւեր և Հռովմ պիտի ըլլայ մայրաքաղաք ամբողջ Իտալիոյ , և Գաղղիա իւր քովը սահմանաց վրայ պիտի գտնէ առաջնակարգ պետութիւն մը , որուն հետ անկէ վերջը հարկ է որ զգուշութեամբ գնայ » : Յայտնի է որ Թիէր ժամանակաւոր իշխանութենէն աւելի կը հոգար Քաղղիոյ նկատմամբ , որ իւր սահմանաց մօտ մեծ պետութիւն մը կանգնուելու կ'օգնէր , ինչինքը միշտ ապահով համարելով անոր անընդհատ երախտագիտութեան : Ռուհէ իւր պատասխանին մէջ ըսած էր Հռովմայ նկատմամբ որ « Ժողովուրդ մը կրնայ ինչ ինչ պարագայից մէջ սահմանել կամ փոխել իւր ներքին վարչութիւնը » : Փէլլըդան գոչեց որ « ի նկատի կ'առնուր պաշտօնէին այս ըսածը » և Ռուհէ վրայ բերաւ « Փէլլըդան նկատողութեան կ'առնու իմ խօսքերս . ժողովուրդ մը ունի իրաւունք փոխելու իւր ներքին վարչութիւնը . այո՛ . բայց երբ խռովարարաց փոքրամասնութիւն մը ուզէ տապալել վարչութիւնը , մեծամասնութիւնը գիտէ զայն ջաղխել » : Առ որ մեծապէս եղան ծափահարութիւնք : Պատասխանին ամբողջութիւնը քուէարկուեցաւ Ապրիլ 16ին 249 քուէիւք ընդդէմ 15 քուէից : Ապագայ նիստերու մեծագոյն նիւթն եղաւ երկրին դրամական և տնտեսական վիճակը որ երթալով կը խանգարէր : Ճարտասանք և մանաւանդ Թիէր խօսեցաւ պայծառ հաշիւներով և առաջարկներով , սակայն առանց արդեանց :

Գումարմանց բացմանէն երեք եօթնեակ վերջը մեռեր էր տը Մոռնի, նախագահ Օրէնադիր ժողովոյն, որ աներկիւղ, նրբամիտ և հնարագէտ քաղաքագիտութեամբ կազմեր էր Նարոլէոնի Նախագահական իշխանութիւնը և կայսրութիւնը: Իւր յուղարկաւորութիւնը կատարուեցաւ մեծ չքեղութեամբ Պետութեան ծախիւք. և իրեն յաջորդեց կոմսն Վալկաքի: Մեռաւ Պետական հարուածին ուրիշ նշանաւոր օգնական մ'այլ՝ մարաշախտն Մանեան: Սորա ևս յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Պետութեան ծախիւք:

7. կայսրուհին թագապահ. Խօսք Նարոլէոն իշխանին յԱյաչիօ — Ուղեւորութիւն կայսեր յԱլճէրի: — Նարոլէոն Գ մտադիր ըլլալով այց ելլելու Ալճէրիի գաղթականութեանց, Ապրիլ 26ի հրովարտակով մը թագապահ կարգեց զԵւսթէնի կայսրուհին և ինքը Ապրիլ 29ին մեկնեցաւ:

Այս թագապահութեան ժամանակ իշխանն Նարոլէոն Այաչիօ գացեր էր, Մայիս 15ին ներկայ գտնուելու տօնախմբութեանց՝ ի պատիւնոր կառուցման շիրմի մի, Նարոլէոն Ա. նոյ և իւր չորս եղբարց յիշատակին: Իշխանը բանախօսութիւն մը ըրաւ այս առթիւ, յորում կը բացատրէր իւր հօրեղբօրը քաղաքականութիւնը զոր կը համարէր ազատական և ռամկապետական: Իշխանն Նարոլէոն ի սկզբանէ անտի հակառակ Նարոլէոն Գի, նոյն հակառակութիւնը ցուցուցեր էր միշտ և ի կարծիս և ի խօսս, ինքզինքը ազատական մը հռչակելով, այսպէս համարելով առաւելագոյն համակրութիւն մը ստանալ, և զոր շատացաւ երբէք: ՅԱյաչիօ ըրած ճառախօսութիւնը իւր զգացմունքը յայտնելու համար էին և ծածկեալ քննադատութիւն մը Նարոլէոն Գի քաղաքականութեան: Թագապահ կայսրուհին ծանոյց զայս առ իւր ամուսինը յԱլճէրի և Մայիս 27ին Մոնթեթօւը կը հրատարակէր յԱլճէրիէ կայսեր նամակ մը յանդիմանական առ իւր հօրեղբօր որդին, յորում զինքը կը կշտամբէր հակառակ գործած ըլլալուն իւր ունեցած վստահութեան. ընդ անուամբ Նարոլէոնի սկզբունքներ ըսեր էր, որոնք ու-

րիչ նպատակ չունէին, բայց զէնք ըլլալու վարչութեան հակառակորդաց ձեռքը: Ամենէն վերջը կը յաւելուր որ «Նարոլէոն Ա ոգիները հանելու համար յանիշխանութենէ, որ միայն հակառակորդ է ազատութեան, նախ իւր ընտանեաց և ապա վարչութեան մէջ խտուրտ կը պահանջէր մէկ կամք, մէկ գործելոյ եղանակ. նոյնը ինքն ալ ասկէ վերջը պիտի պահանջէր»: Իշխանը այս նամակին վրայ հրաժարեցաւ Առանձին խորհրդոյ փոխան—նախագահութենէ և ի Նախագահութենէ 1867ի Տիեզերական Յուցահանդէսին: Եւ սակայն այս ընտանեկան տարաձայնութեան բնաւ կարևորութիւն մը չտրուեցաւ. երկու Նարոլէոնրուն մէջ աւելի համակրելի էր կայսրը. իշխանը՝ որ թէպէտ կը կրէր ճշգրիտ Նարոլէոն Ա նոյն կերպարանքը, կորսնցուցած էր իւր ժողովրդականութիւնը, մանաւանդ հակակրօնական զգացմամբք և խօսիւք: Այս եղելութեանց ժամանակ կայսրը կը գտնուէր յԱլճէրի:

Յամին 1863ի Փետրուարի մէջ կայսրը նամակ մը ուղղած էր առ մարաջախտն Փէլիսիէ, զոր 1860ի զինուորական հրամանատար անուաններ էր Ալճէրիի, յորում կը խոստանար Ատենավճիռ մը պատրաստել, որ հաստատէ Ալճէրիի ցեղերուն անհատական սեպհականութեանց իրաւունքը. որովհետև «հաւասարապէս կայսր եմ Արապներուն ինչպէս Գաղղիացւոց»: Ապրիլ 11ի Ատենավճիռ մը արար ցեղերը տէր ըրաւ այն երկիրներուն զորս գրաւած էին, հրամայելով զայնս բաժնել ցեղի անդամակցաց մէջ. ունենալով իւրաքանչիւր ոք արտօնութիւն վաճառել վարձել կամ գրաւի դնել իւր հողը:

Յամին 1864ի վախճանելով մարաջախտն Փէլիսիէ, նոյն տարուան Սեպտեմբերի մէջ իւր տեղը զինուորական հրամանատար անուանուեր էր մարաջախտն Մաք Մահոն: Ալճէրիի հարաւային կողմը ապստամբութիւն մը ծագած էր, և տևած էր մինչև 1865ի սկիզբները. որ թէպէտ մեծ նշանակութիւն մը չունէր, սակայն Նարոլէոն Գ անձամբ ուզեց տեսնել և քննել իրաց վիճակը և այս պատճառաւ անցաւ ծովը: Նարոլէոն Գ

երեք եօթնեակ մնաց յԱլճէրի, աճապարանօք և ճեպընթաց ուղևորութեամբ այցելելով երեք գլխաւոր գաւառաց մեծ քաղաքներուն, ամէն կողմ ոչ այլ ինչ տեսնելով այդ երազ ընթացից մէջ, բայց բազմութիւն հետաքրքիր ժողովրդեան մը: Իւր դարձէն վերջը ի Գաղղիա ատենավճռով մը արարներուն գաղղիացի քաղաքակցութեան իրաւունքը շնորհաց:

Քիչ վերջը հասաւ ի Գաղղիա ահաւոր մաղձախտը որ միայն Սէն գաւառին մէջ Սեպտեմբերէն ցԻեկտեմբեր 6000 անձինք կոտորեց:

8. 1866 ամին Պսակի Ճաւռին Պատասխանին առթիւ վիճարանութիւնը: — Բնաւ չէին կրնար գուշակուիլ 1866 տարւոյն սկիզբը, իւր շրջանին մէջ պատահելիք ամենակարևոր դէպքերը: Ամենայն ինչ հանդարտեալ կ'երևար յԻտալիա, ի Մեքսիքոյ, ի Տանիմարքա և ի Գերմանիա ևս կաշղայնի դաշամբք: Նարուլէոն Յունուար 22ի բացաւ 1866ի ժողովաշրջանին գումարումները, նոյն խաղաղական ծանուցումներով Արտաքին քաղաքականութեան մասին: Գերմանական խընդրոց վրայ խօսելով կ'ըսէր որ « իմ դիտաւորութիւնս է խիստ չէզոքութիւն մը պահել, վասն զի այդ պատահարք ոչ ուղղակի և ոչ անուղղակի յարաբերութիւն մը ունին Գաղղիոյ շահուց հետ »: Սակայն ներքին քաղաքականութեան մասին չկրցաւ լռել և ակնարկութիւններ չընել ընդդիմութեան մասին, աւելցնելով որ « 80 տարիէ ի վեր բաւական վիճուեցաւ ի Գաղղիա լաւագոյն վարչութեան ձև մը գտնելու. և արդէն փորձը կը ցուցնէր թէ յորում Գաղղիա գտեր էր իւր անդորրութիւնը. և կը յանձնէր հաստատուն միանալու այն վարչութեան հետ որ նեցուկ էր ընկերութեան և կ'ապահովէր բարիք և պատիւ, և խորհել ևս որ գիտութիւններէն և բանավարութենէ վեր կայ գերագոյն կամք մը որ կը կառավարէ թէ մարդկանց և թէ ազգաց ճակատագիրը »:

Ի ծերակուտի Պատասխանի համար վիճարանութիւնքը սկսաւ մարքիզն տը Պոլսարի մերթ ծաղրածու ոճով, և մերթ գովեստիւք. խօսելով առանց կարգաբանութեան

մը որ ունէր իւր նպատակը. երբեմն փափագելով որ հաստատուի խօսարանական վարչութիւնը և երբեմն կարեկցարար խորհուրդներ տալով կայսեր : Ծերակոյտը զայրացաւ և Գրողն նախագահը ծանր ազդարարութիւն մը ըրաւ « կը խոնարհիմ, ըսաւ Տը Պուլասսի, Նախագահին իշխանութեան, համարեցէք որ բան մը չըսի ... կը կարծէի որ Սահմանադրութիւնը ենթակայ է կատարելագործուելու, բայց չըլլար եղեր, շատ լաւ . այդ այնպէս է իբրև թէ զինքը գերեզմանի դատապարտած ըլլայինք . այն ատեն ամեննիս ալ միաբան իջնանք ի գերեզման և երթանք ճաշելու մեռելոց հետ » : Ծերակուտի բարկութիւնը յետին ծայրն էր, սակայն մարքիզն Տը Պուլասսի շարունակեց իւր խօսքը հանդարտ պաղուծեամբ, որովհետև իրեն պարտք մը կը համարէր ոգիներուն անհանգստութեան պատճառաւ, խօսիլ առ կայսրը « զոր կը խաբեն լռութեամբ և շողոքորթութեամբ » . աղաղակները բարձրացան . իսկ տը Պուլասսի յանկարծ գոչեց « կայ մէկը յաշխարհի որ գոհ ըլլայ իւր դրութենէն » : Բազմաթիւ ձայներ մեծագոչ աղաղակեցին « Այո՛ ամէննիս ալ գոհ ենք » : Տը Պուլասսի շարունակեց որ « ես չեմ հաւատար » : Ապա խօսեցաւ Այաչիոյ ճառին վրայ զոր կոչեց « Դաւաճանող ընդդէմ կայսեր, նախատական ընդդէմ Նարոլէոնի Ա.նոյ և ամպարիշտ ընդդէմ Աստուծոյ » . և նկատելով այդ ճառը իբր սկիզբ մը դաւերու, խորհուրդ կուտար կայսեր յայսմհետէ զգուշանալ ուղևորութիւններէ : Որչափ որ Ռուհէ ամենայն ոգևովը ջանաց ճարտասանին ըրած զաւելտախառն տխուր տպաւորութիւնքը սրբել, սակայն Տը Պուլասսիի խօսքերը կ'ունենային իրենց ազդեցութիւնք և ծերակուտէն դուրս : Սեպտեմբեր 15ի դաշանց դէմ ևս եղան խօսողք և մասնաւորապէս կարտինաքն Պոնըչոզ և Մաթիէլ : Ապա Պատասխանը գրեաթէ համաձայնութեամբ քուտարկուեցաւ :

Օրէնսդիր ժողովքին վիճարանութեանց սկիզբը թիէր կրկին նորոգեց « կարևոր ազատութեանց » բողոքը : Կլէ Պիզուան երեսփոխանը սկսաւ խօսիլ կա-

ուսման ժամանակն անցնելու վրայ, բայց բազմաթիւ ձայներ իւր խօսքը խափանեցին: Ոմանք Սեպտեմբեր 15ին Գաշինքը գովարանեցին, ուրիշները անպատուութիւն համարեցան, ցաւելով որ այսպէս կը թողուին կը քանչէին զՔահանայապետը. Պետութիւնը պարծեցու որ այսպէս 22 միլիոն ժողովրդոց ազատութիւն տուեր էր և ուրախ էր իւր սահմանաց վրայ այսպիսի մեծ ազգ մը ձևացնելուն, որ միշտ իւր ազատարարաց համար յարգանք պիտի ունենար և երախտագիտութիւն:

9. Յաւելուած Քառասուն եւ հինգից: — Պսակի ճառին վերջին մասին վրայ վիճուած ժամանակ, մեծամասնութենէն քառասուն և հինգ երեսփոխանք, յորս էին Պիւֆֆէ, տը Կրամոն, Շըվանտիէ, տը Վալտրոմ և այլք, յաւելուած մը առաջարկեցին որ « Գաղղիա հաստատապէս յարեալ այն գերդաստանին որ կը պահէր յինքեան կարգ և օրէնք, սակայն հաւասարապէս յարեալ էր այն ազատութեանց զորս կարևոր կը համարի իւր նպատակին կատարման: Այսպէս Օրէնսդիր Ժողովք այսօր ինքզինքը թարգման ընելով հասարակաց զգացման, Ձեր Վեհափառութեան գահոյից ոտքը կը դնէ իւր իղձերը որպէս զի ընդարձակուին 1860ի Ձեր ըրած շնորհքները»: Առաջին անգամ էր որ մեծամասնութենէն այսքան երեսփոխանք միարան ազատութեանց համար իղձերնին կը համարձակէին յայտնելու: Պիւֆֆէ նախ խօսեցաւ ընդարձակ այս Յաւելուածի մասին, որուն պատասխաններ եղան թէ ինչ էին երկրին փափագները կայսերական ընտանեաց և անոր ուղղութեան նկատմամբ, առանց որոց ամենայն ինչ պիտի ընկղմէր խառնակութեան անդնդոց մէջ: Ռուհէ ընդերկար համարեցաւ ցուցընել խօսարանական վարչութեան մեծամեծ փնասները, և թէ ամենայնիւ հարկ էր վստահիլ ներկայ վարչութեան, որ կը պաշտպանէ զընկերութիւնը և անհատական և ընկերական ամէն շահերը, խօսեցաւ ապա մասնաւորապէս տպագրութեան ազատութեան դէմ և խօսքը լմընցուց յայտնելով քառասուն և հինգ երեսփոխանաց ճարտար բացատրութեամբ մը, որ չափէ աւելի յառաջագի-

դիմեր էին: Էմիլ Օլիվիէ որ բաւական ժամանակէ ի վեր ձգեր էր Հնգից խումբը առանց մեծամասնութեան կողմը անցնելու, այս առթիւ յարեցաւ քառասուն և հնգից կուսակցութեան և պաշտպանեց եռանդեամբ Յուլիանը, մինչև յայտնապէս գոչելով առ նոսա որ « շուսահատինք, ապագայն մերն է »: Յաւելուածը ի նպաստ իրեն ունեցաւ 65 քուէ, բաց յընդդիմութենէ սակաւ հրաժարելոց: Գեկտեմբեր շէն վերջը առաջին անգամ էր որ Նարոլէոն Գ' լուռ տօգոհութեան մը այսպիսի բազմաթիւ քուէ կ'ունենար. բայց այս լուռ տօգոհութիւնը օրէ օր պիտի փոխուէր պահանջով տօգոհութեան, սա առաջին ազդարարութիւն մ'եղաւ. և Նարոլէոն ըմբռնելով, Օրէնսդիր ժողովոյն Պատասխանը ընդունած ժամանակ, հարևանցի ակնարկութիւններով հաստատեց որ « ինքն ևս ի կողմն էր ազատութեան, բայց կան եղանակք ազատութեան »: Ապա աւելցուց, զոր միշտ իւր բերանը պատրաստ ունէր որ « Գաղղիա իմ ձեռացս մէջ երբէք չկորսուիր » . վըստազ միանգամայն « Պետութեան բարձր պաշտօնէից, բանակին հաւատարմութեան, բարի քաղաքացւոց հայրենասիրութեան և վերջապէս Աստուածային հովանաւորութեան վրայ, որ երբէք պակասած չէ մեր հայրենեաց »: Սակայն այս մեծամեծ բացատրութիւնք չճնջեցին Յաւելուածին տպաւորութիւնը:

10. Ֆրուսիա-Աւստրիական պատերազմը Օրէնսդիր ժողովոյն մէջ — Թիէրի Ճառը. — Օրէնսդիր ժողովքը զբաղեցաւ իւր գումարմանց մէջ այլ և այլ օրէնքներու համար, յորս վաճառականութեան և նաւարկութեան: Զինուորական բանակաց կազմակերպութեան մասին խօսից մէջ՝ Թիէր բուռն եղանակաւ խօսեցաւ կայսերական արտաքին քաղաքականութեան դէմ և մանաւանդ գերմանա — տանիմարքական պատերազմին նկատմամբ. այնպիսի քաղաքագիտական նրբամիտ և սուր գուշակութեամբք, որոց վրայ յիրաւի կը զարմանանք յետ իրականացման: Ուզեց հաստատել որ Շէլլե-վիկ երբէք չէ վերաբերած Գերմանիոյ. իսկ թէ լեզուն պատրուակ կ'առնուի ազգի մը տիրելու, « կը նմանի որ

Քաղաքային Ալգասը առնուի, որովհետև գերմաներէն կը խօսուի հոն» : Ապա քննադատելով լրջութեամբ Քաղաքային բռնած չէզոք դրութիւնը բրուսիա-աւստրիա-իտալական խնդրոյն մէջ աւելցուց այս նշանաւոր խօսքերը « Եթէ պատերազմը յաջող ըլլայ Բրուսիոյ, ապա պահովապէս պիտի տիրէ Հիւսիսային գերմանական նահանգաց. և հարաւայիններն ալ պիտի ենթարկէ այն պիտի Աւագածողովոյ մը որ իրմէ կախումն ունենայ : Այսպէս Գերմանիոյ մաս մը պիտի ունենայ իւր ուղղակի և մաս մը անուղղակի իշխանութեան ներքև. և Աւստրիա այս նոր կարգաւորութեանց մէջ պաշտպանելոյ մը դիրքը պիտի ունենայ : Եւ այն ատեն, ներքեցէք որ ըսեմ, պիտի տեսնենք ձևացումն գերմանական մեծ կայսրութեան մը, նման Կարոլոս Եի կայսրութեան, որ այն ատեն կը բազմէր ի Վեննա, իսկ սա պիտի բազմի ի Պէոլին, յոյժ մերձ մեր սահմանաց զոր պիտի սեղմէ և ճնշէ : Եւ որպէս զի նմանութիւնը ամբողջովին ըսենք, մինչ Կարոլոս Ե ի կայսրութիւնը կը յենուր Սպանիոյ վրայ, սա պիտի յենու Իտալիոյ վրայ » : Քաղաքագէտ որ և է բարձր միտք մը չէր կարող աւելին գուշակել ճշգրտապէս թիէր չէր ըսեր յենու 1815 Գաշանց վրայ, այլ 1852ի տարւոյն Գաշանց, յորում Քաղաքային ստորագրեր էր Տանիմարքայի ամբողջութիւնը, զոր ոտնակոխ ըրեր էին Բրուսիա և Աւստրիա : Թիէրի խօսքերը մեծ տպաւորութիւն ըրին համարէն ժողովոյն վրայ . Ռուսէ կը խիթար հակառակ քուէ մը Արտաքին քաղաքականութեան մասին, երբ յանկարծ իրեն հեռագիր մը ներկայացուեցաւ, զոր անդէն կարգաց ժողովոյն, որ կ'իմացնէր թէ « Իտալիա պիտի չկուռէր ընդդէմ Աւստրիոյ » : Այսպիսի պաշտօնական հեռագրէ մը վերջը, աւելորդ էր խօսիլ, քանի որ կը վերնար պատերազմին կարելիութիւնը : Վարչութիւնը հաւանութեան քուէ ստացաւ. բայց հեռագիրը բնաւ հաստատութիւն մը չըստացաւ և վարչութեան հնարագիտութիւն մը համարուեցաւ ժողովքին տպաւորութիւնը ցրուելու համար :

Նարոյէոն Գ քիչ օր վերջը նամակով մը, ինչպէս

իւր սովորութիւն էր, կ'իմացնէր առ Տրուէն տը Լիւյ, պաշտօնեայ Արտաքին Գործոց, իրաց վիճակը յԵւրոպա, Աւստրիոյ, Իտալիոյ և Բրուսիոյ մէջ համաձայն հաշտութեան մը ի դերև ելլելը, իւր դեսպանին բռնած ընթացքը կը և վերջացնէր, « Անշուշտ Գուք ծանուցած կ'ըլլաք որ բնաւ նոր սահմանաց փափագ մը չունինք, մինչև որ Եւրոպա իւր աշխարհագրական հաւասարակշռութեան մէջ մնայ. և այն ատեն կրնանք մտածել այդպէս, եթէ յանկարծ ի նպաստ մեծ պետութեան մը փոփոխութիւնք կրէ այդ կշիռը, և եթէ մեզ սահմանակից գաւառք ինքնայօժար ուխտիւք փափագին յարիլ ի Գաղղիա » : Յետոյ Նամակին մէջ կ'ուզէր բացատրել Աւստրիոյ և Բրուսիոյ մէջ ծագած կըռուոյն պատճառքը, զորս Բրուսիոյ աշխարհագրական թերի սահմանագծութեան կ'ընծայէր և Իտալիոյ ամբողջական ազատուելուն. և կը դնէր իւր գաղափարքը թէ Գերմանիոյ և թէ Իտալիոյ նկատմամբ և զորս ապա առաջարկեց Նիքոլսպուրկի զինադադարման: Կըլմնցնէր նամակը որ եթէ խաղաղութիւնը խռովի և « Ինչ ալ ըլլան պատերազմի արդիւնք, բնաւ մեզ վերաբերեալ խընդիր մը պիտի չսահմանուի առանց մեր կողմանէ հաւանութեան » : Այս նամակը, և մանաւանդ վերջին ապահովութիւնը, այնքան տպաւորութիւն ունեցան Օրէնս գիր ժողովքին վրայ, որ Թիէր ուզելով խորհրդածել թէ յինչ իրս համամիտ էր նամակին, մեծամասնութիւնը շառաչալից գոչմամբ խափանեց ձայնը : Օրէնս գիր ժողովոյն գումարմունք վերջացան Յունիս 30ին. երբ արագութեամբ կը յառաջէր աւստրիա – բրուսիական հսկայ պատերազմը : Իսկ թէ Նաբոլէոն Գ այս ժամանակին մէջ ինչ քաղաքականութեան հետեւեցաւ և ինչ միջամտութիւնք ըրաւ, արդէն զայն տեսանք պատերազմին ամբողջական պատմութեան մէջ¹ :

1. ԱՅն 1866 այնքան փառաւոր Բրուսիոյ և անգութ Աւստրիոյ համար, Երկրորդ կայսրութեան աղետալիններէն մին պիտի սեպուի դժբաղդաբար : Մինչև ցայսօր չեմ կրցած ըմբռնել Գաղղիոյ կառավարութեան ընթացքը : Այս մեծ կռուոյն սկիզբէն

11. Պատրանք Գաղղիոյ. Նոր ուղղութիւն քաղաքականութեան մէջ: — Պատերազմին ամբողջ շրջանը և վերջը մեծ զարմացումն և պատրանք պատճառեց բովանդակ Եւրոպիոյ և մանաւանդ Գաղղիոյ. ուր ամենայն ոք համակրանօք մը առ Աւստրիա, չէր կըրնար երբէք գուշակել Բրուսիոյ զինուց և քաղաքականութեան այսքան մեծ զօրութիւնը: Պատերազմի իբր բրարբիոն՝ Բրուսիա նոր երկիրներ կը ստանար ի հիւսիս, և ի հարաւ կ'ենթարկէր իրեն մնացեալ գաւառքը: Աւստրիա կը կորսնցնէր Գերմանիոյ մէջ ունեցած դիրքը. և վերջապէս ամէն երկրորդական պետութիւնք նկատմամբ Բրուսիոյ, հպատակ իշխանութեանց դիրք մը կ'առնուին: Արդ այս ամէն սահմանամերձ փոփոխութեանց պատճառաւ, անշուշտ Գաղղիա ևս պէտք էր ունենար իւր նոր սահմանքը ինչպէս կը խոստանար Նամակը առ Տրուէն տը [Իւյ Յունիս 1]ին: Նարոլէոն Գ կրնար ունենալ և ապահովապէս ունեցեր էր այդ դիտումը և յոյսը պատերազմին սկիզբը, իբր փոխարէն իւր չէզոք կենալուն, բայց Սատովայէ վերջը այնպէս կերպարանափոխ կ'ըլլար ամենայն ինչ, որ թէ պահանջէր իսկ, իրեն տուող չկար. կը մնար ցաւել միայն պատրանքին վրայ: Նոյն իսկ իբր միջնորդ երկուց պետութեանց չկրցաւ որ և է օգուտ մը ունենալ Գաղղիոյ համար, ընդ որ տհաճեցան իրեն հաւատարիմ երեսփոխանք անգամ: Կայսրը իմացաւ քաղաքականութեան եղած անդարմանելի վրիպակը:

մինչև վերջը, կարծես մտամուրթած էր»: Գուքսն Տը Փէնսինի. Յիշատակութիւնք 1896: Նոյն հեղինակը մուկուանդն կայսերական, կը պատմէ Նարոլէոն Գի իսկզբանէ այդպիսի պատերազմի մը շանքը և փափաքները. բայց մեծագոյն պատասխանատուութիւնը կը ձգէ կայսրուհւոյն գրգռմանց վրայ. և երբ Նարոլէոն ուզեց դարման մը տանիլ, ժամանակը անցեր էր: « Ամէն քաղաքագիտական միջոցք սպառեր էին... երբ կայսրը վերջապէս անըմբռնելի թմբուրութենէ մը արթննալով, իւր պաշտօնեայքը առանձնական ժողովքի կանչեց խորհրդակցելու այսպիսի ծանր պարագայից մէջ: Անդ:

Տրուէն տը Լիւյ այլ ևս չէր կրնար մնալ պաշտօնեայ Արտաքին գործոց, իւր հրաժարականը տուաւ և իւր տեղը անուանուեցաւ Սեպտեմբեր 1ի տը Մուսդիէ, երբեմն դեսպան ի Կ. Պօլիս և որ ուշանալով ցՀոկտեմբեր, առ ժամս իւր տեղը պաշտօնը վարեց Ներքին գործոց պաշտօնեայն Լավալէթ:

Ամիս մը վերջը մասնաժողով մը հաստատուեցաւ ուսումնասիրելու և բարեկարգութիւնք մտցնելու զինուորական կարգաց մէջ և շատցնելու Գաղղիոյ ոյժը « Երկրին պաշտպանութեան համար »: Գեկտեմբեր 1ի Մոնթէթէօ-ը կը պարունակէր՝ Մասնաժողովն տեղեկագիրը, կ'իմացնէր որ Գաղղիա այնպիսի կազմակերպութեան կ'ենթարկուէր, որ ուզած ժամանակ կարենայ ոտք հանել 800,000 զինուոր և նոյնքան թուով շարժուն պահանորդք: Բանակին վերարբերեալ կարգաւորութիւնք և օրէնք այլ ևս պիտի չքուէարկուէին 10-րէնսդիր Ժողովոյն, այլ պիտի սահմանուէին ի պաշտօնէէ պատերազմին և ի կայսերէ: Այս յետին մասը մեծ տհաճութեան և քննադատութեան նիւթ ըլլալով, վարչութիւնը բռնադատուեցաւ ծանուցանել որ առ ժամս իրր պարզ փորձ մը կ'ըլլըցուէր և թէ կրնայ յետոյ փոփոխուիլ:

Այս նոր տրամադրութիւնք յայտնապէս կը ցուցընէին որ Սատովայի պատերազմը կերպարանափոխ ըրեր էր զԵւրոպա և Գաղղիա այն օրուընէ կ'ըմբռնէր որ յապագային օր մը բռնադատուած էր կռուելու նոր զօրութեան մը հետ, և որ Ղրիմու պատերազմէն ի վեր իւր ձեռքը ունեցած Եւրոպիոյ հրամանատարութեան գաւազանը կ'ուզէր իւր ձեռքէն յափշտակել: 1867էն մինչև 1870 տարիները սահեցան երկուստեք այդ գաղափարով և լուռ, բայց ակներև պատրաստութեամբ:



ԱՆԳՂԻԱ — ՓԱԼՄԵՐՍԻՈՆԻ ՎԵՐՁԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1. Լորտ Տէրպի պաշտօնարանը յամին 1859. — 2. Լորտ Փալմէրսոնի պաշտօնարան և Արտաքին քաղաքականութիւն. — 3. Մահ Ալպերզ Ամուսին իշխանին. — 4. Լորտ Փալմէրսոնի վերջին տարիները. — 5. Մահ Լորտ Փալմէրսոնի:

1. Լորտ Տէրպի պաշտօնարանը յամին 1859: — Օրսինի դաւոյն վերաբերեալ վիճարանութեանց մէջ յԱնգղիա (1858) տեսանք արդէն Լորտ Փալմէրսոնի պաշտօնարանին անկումը, ուզելով գոհացնել Նարոլէոն Գի վարչութեան պահանջքը: Յաջորդեր էր Լորտ Տէրպի պաշտօնարան մը, նշանաւոր պաշտօնեայք ունենալով զՏիգրաէլի՝ Ելեմտից, և Մալմէսպլլի՝ Արտաքին Գործոց: Թէպէտ որչափ որ պաշտօնեայք ազդեցիկ անուանք էին, սակայն ամենայն դէպ յԱնգղիա ժամանակիս բրիտանական քաղաքականութիւնը և մանաւանդ Արտաքին Գործոց պաշտօնէութիւնը չէր կրնար բաժնուած ըմբռնել Լորտ Փալմէրսոնի անձէն. որուն ազդեցութիւնը կէս դարու ժամանակ գոգցես կը կառավարէր զբովանդակ Եւրոպա, փոփոխակի օգնուելով և օգնելով Նարոլէոն Գի: Արդէն 1859ի ըսկիզբները Լորտ ճոն Ռչսսըլի, ընտրութեանց նոր լայն ծրագրի մը նեցուկ եղեր էր Լորտ Փալմէրսոն, որ ընդունելի եղեր էր 330 քուէիւք ընդդէմ 291ի, որք էին ի կողմն պաշտօնարանին: Լորտ Տէրպի՝ Խօսարանը լուծեր էր և նոր ընտրութեանց մէջ էր, երբ ընդդէմ Աւստրիոյ, իտալական պատերազմը ծագեցաւ օգնութեամբ Քաղղիոյ: Լորտ Տէրպի պաշտօնարանը աւելի

կը միտէր Աւստրիոյ կողմը և կը դատապարտէր բունած ուղին: Իսկ Փալմէրսդոնի համակրութիւնը նոր իտալիոյ նկատմամբ ծանօթ էր ամենուն: Առաջին տարին Խօսարանի պայքարաց մէջ պաշտօնարանը ունենալով 310 քուէ ընդդէմ 323ից, հրաժարեցաւ, և Լորտ Փալմէրսդոն կանչուեցաւ նոր պաշտօնարան կազմելու, յորում Լորտ ճոն Ռուսսը կը մտնէր պաշտօնեայ Արտաքին Գործոց և Կլատսդոն՝ Ելեմտից:

2. Լորտ Փալմէրսդոն պաշտօնարան եւ Արտաքին քաղաքականութեան: — Լորտ Փալմէրսդոնի պաշտօնարանը յայտնելով հանդերձ իւր համակրանքը ի նպաստ իտալական միութեան, պահեց խիստ չէզոքութիւն մը: Զանազ և կրցաւ վաճառականական մեծ օգուտ մը բերել իւր Երկրին, Գաղղիոյ հետ առևտրական նոր դաշամբ մը, որով կը վերնային Նաբոլէոն առաջնոյ ժամանակէն մնացեալ Յամբուրցի պաշտօն խիստ հրամանները, և կը հաստատուէր ազատ առևտուրը: Քիչ տարուան մէջ գաղղիական ապրանքին մուտքը յԱնգղիա աւելցաւ 175 առ 100 և Անգղիոյ վաճառուց մուտքը ի Գաղղիա 139 առ 100: Լորտ Փալմէրսդոն այս դաշանց յաջողութեան համար, չուզեց բնաւ արգելք ըլլալ Նաբոլէոն Գի պինուք միջամտութեան յիտալիա: Բայց Նիցցայի և Սալոնիոյ միութիւնը Գաղղիոյ հետ, մեծ յուզումն պատճառեց Անգղիոյ Խօսարանին մէջ: Առաջարկուեցաւ և ընդունելի եղաւ Ալքսանդր Կոլարի օրէնքը, որով կամաւոր զինուորութեան թիւ կը հասնէր իւր բարձրագոյն առաւելութեան, և 130,000 կամաւորք իրենց դրօշակներով Յունիս 23ի Վիկտորիա թագուհւոյն դիմացէն կ'անցնէին զինուորական չքեղութեամբ: Միանգամայն հրամանք տրուեցան զօրացնելու նաւարանները և ծովային բերդերը, իբրև պահեստ մը յանկարծական յարձակման: Լորտ Փալմէրսդոն թողուց որ ազգը արտաքսապէս գոհանայ այս ցոյցերով ընդդէմ Նաբոլէոն Գի գործածին. իսկ ինքը գիտէր որ Սալոնիա և Նիցցա Գաղղիոյ անցնելով բնաւ վնաս մը չունէին Անգղիոյ շահուն, և չուզեց յայտնապէս գժտիլ Նաբոլէոն Գի հետ: Եւ երբ

ազգը արտաքսապէս կը հոգար այս հանդերձանքը, ինքը կը հռչակէր որ բնաւ տեղէ մը չունէր թշնամութեան տազնապ կամ երկիւղ:

Իսկ 1860էն սկսեալ Լորտ Փալմէրսդոն ինչ մեծ ազդեցութիւն ունեցաւ Եւրոպիոյ ընդհանուր Արտաքին քաղաքականութեան վրայ, արդէն զայնս տեսանք նախորդ գլուխներու մէջ. յիշենք համառօտիւ որ՝ Տրուզներու և Մարոնիդներու խնդրոյն մէջ, պաշտպանելով օսմանեան պետութիւնը, հակառակեցաւ ընդերկար Քաղղիոյ միջամտութեան, թէպէտ կը խոստանար իւր բարեկամն Նարոլէոն Գ, որ բնաւ աշխարհակալութեան մը համար չէր. և այն ժամանակ միայն թողուց Քաղղիոյ միջամտել, մինչ այլ ևս պէտք չկար. որով և չէր կարելի հետևանք մ'ըլլալ ի նպաստ Քաղղիոյ: Սակաւ յետոյ իւր քաղաքականութիւնը յաղթանակեց ի Պարսկաստան և յաջողութեամբ լմնցուց չինական պատերազմը, յորում ինքը աւելի օգտուեցաւ քան իւր զինակիցն Քաղղիա: Փալմէրսդոնի Արտաքին յաջողութիւնք, ի ներքս լուեցուցած էին իրենց ազդեցութեամբը, զընդդիմակացս: Յամին 1861 Փետրուար 4ին Վիկտորիաթագուհին բացաւ ժողովաշրջանը յայտնելով իւր մեծ ցաւը Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հիւսիսային և Հարաւային գաւառաց երկպառակութեանց համար. « որոց ժողովուրդքը իրենց ծագմամբ այնպէս կապուած էին իւր հպատակաց հետ, և շարունակ հաստատուն բարեկամական յարաբերութեամբք՝ որոց արդիւնքն էր սակաւ յառաջ կալլէսի իշխանին յԱմերիկա ուղևորութեան ժամանակ գտած չքեղ ընդունելութիւնը »: Այս՝ պաշտօնական ծանուցումն էր համակրանաց թագուհւոյն բերանէն. իսկ թէ Փալմէրսդոն որպիսի ընթացք բռնեց ամբողջ քաղաքական պատերազմին ժամանակ, մինչև անգամ պատերազմի մը սպառնալեօք Հիւսիսայնոց հետ, հարաւայնոց երկու նուիրակաց պաշտպանութեան համար, զայնս տեսանք կանխաւ այլուր: Յամին 1861 պահանջեր էր Անգղիա Մեքսիքոյի Յուարէզ նախագահէն դրամական բազում վճարք և վնասք, և այս պատճա-

առաւ նաւատորմիդ զրկեր էր յԱմերիկա Գաղղիոյ և Սպանիոյ հետ: Ապա համակրելով և յուսալով յապագային առաւելապէս հասարակապետական կուսակցութենէն, համոզելով նաև զՍպանիա, նաւատորմիդը ետ առաւ Մեքսիքոյի ծովերէն և փոյթ չըրաւ Գաղղիոյ ընդարձակ միջամտութեան և Մեքսիմիլիանոսի կայսրութեան, կանխաւ գուշակելով անհիմն հաստատութիւնը:

3. Մահ Ալպէրդ Ամուսին իշխանին: — 1861 տարին սգով կը լմննար Անգղիոյ և մանաւանդ Վիկտորիա թագուհւոյն համար: Գեկտեմբեր 15ին, յիսուն և երկու կորովի ամաց մէջ կը վախճանէր ամուսին իշխանն Ալպէրդ, թողլով զթագուհին ի սուգ անմխիթար: Քաղցրաբարոյ, ազնիւ, և խոհական բնուորութեամբը սիրելի և յարգելի էր առ հասարակ ամենայն կուսակցութեանց: Ամէն դէպք քննող և ուսումնասիրող, առանց միջամտելու ուր իր սահմանը չէր: Եռանդուն զմայլող և սիրող գեղարուեստից. ինքն էր հանդիսադիր և նախագահ Լոնտրայի 1862ի տիեզերական Յուցահանդէսին: Միանգամայն քաջ երաժիշտ էր և յորինող. լաւ մատենագիր և գողտր բանաստեղծ: Ընտիր օրինակ ամուսնոյ և որդեսէր հօր, ամենայն խնամքով ստանձնած էր զաւակացը հոգը և դաստիարակութիւնը որոնք բազմաթիւ էին. և այդ անձնական հոգատարութիւնը զրդեց իրենց ձրի դաստիարակութիւնը ընդարձակել յԱնգղիա, զայն « ամենուն անխըտիր իրաւունք մը » քարոզելով: Հեզահամբոյր ի կենակցութեան, իւր ծառայից հետ անգամ այնպէս կը վարուէր, իբրու թէ յազնուականութենէ մը թշուառութեան մէջ անկեալ անձինք ըլլային: Հետամուտ և սիրող երկրագործութեան, անձամբ կը պտըտէր խնամելու և ուսուցանելու անգղիացի երկրատէրքը: Այս ամենայն զբաղմանց հետ, էր միանգամայն իմաստուն և արդար խորհրդական թագուհւոյն առանց կողմակալութեան մը յօգուտ ազգին միայն: Մեծն Բրիտանիա մասնակցեցաւ թագուհւոյն ցաւոց, և մասնաւոր ազնիւ մտածութեամբ եթէ պաշտօնական ընդդիմու-

թիւնը և եթէ կուսակցութիւնք, ջանացին հրաժարելու մեծամեծ պայքարներէ, որոնք կարող էին փոփոխութիւնք պատճառել վարչութեանց և այսպէս հոգեբու և տազնապներու նիւթ ըլլալ թագուհւոյն:

4. Լորտ Փալմէրսդոնի վերջիւ տարիները: — Յամին 1862ի Ապրիլի մէջ Անգղիոյ վարչութիւնը Միացեալ Նահանգաց հետ դաշինք դրաւ ստրկութեան վերնալուծն համար, միանգամայն նաւերու այցելութեան իրաւունքը հաստատեց, զոր ցարդ մերժեք էր Միացեալ Նահանգաց կառավարութիւնը:

Մայիս 1ին մեծ հանդէսներով բացուեցաւ Լոնտրայի երկրորդ տիեզերական Յուցահանդէսը, զոր առաջնոյն պէս պատրաստեք էր Ալպէրդ ամուսին իշխանը, և որ իւր մահուամբ այլոց թողուց զայն աւարտելու հոգը: Հանդէսը տեւեց գրեթէ վեց ամիս և ունեցաւ 6,198,000 այցելուք աշխարհիս ամէն կողմէն հիանալու արհեստից և մարդկային մտաց մեծաքայլ յառաջադիմութեան վրայ:

Յուցահանդէսը լմննալու վրայ էր, երբ ծագեցաւ յունական յեղափոխութիւնը, և որ տեւեց մինչև 1863ի Հոկտեմբեր 31. յորում անուանուեցաւ թագաւոր Հելլէնաց Գէորգ Ա. եղբայր Կալլէսի իշխանուհւոյն: Գործոյն այս կերպ յանգիլը, մեծագոյն յաղթանակներէն մին էր Լորտ Փալմէրսդոնի, զոր Եւրոպայ՝ Նեստոր քաղաքագիտութեան սկսած էր կոչել. և այս մեծ գործը ի գլուխ տարաւ հանդարտ և լուռ ճարտարութեամբ. Անգղիոյ գրաւելով ամբողջ յունական ժողովուրդը, որոնք միաձայն յամառեցան ընդերկար ընտրելու թագաւոր Վիկտորիայի երկրորդ որդին:

Փալմէրսդոն որուն համար համակրելի էին Մածծինի, Կարիպալտի և Քոչութ, Լեհաստանի ապստամբութեան բնաւ նպաստաւոր չերեցաւ և մերժեց իսկ Նաբոլէոն Գի առաջարկած դեսպանաժողովը այդ խընդրոյն նկատմամբ: Զարմանալի երևցաւ դարձեալ իւր քաղաքականութիւնը Տանիմարքայի պատերազմին ժամանակ խիստ և անկարեկիր շէղաբութեամբ. թողլով որ ջախջախուի Քրիստիան Թ. Կալլէսի իշխանուհւոյն

Հայրը: Յայտնի է արքունիքը վշտացաւ այդ քաղաքա-
կանութեան վրայ, սակայն Վիկտորիա անստերիւր
սահմանադրական իշխող մը, բնաւ չչեղեցաւ վարչու-
թեան ուղղութենէն, որուն ղեկը Լորտ Փալմէրսդո-
նի ձեռքն էր:

5. Ման Լորտ Փալմէրսդոնի: — Եւ սակայն ար-
դէն երկար տևեր էր Լորտ Փալմէրսդոնի ասպարէ-
զը և Անգղիոյ ամենէն հին և ամենէն գործունեայ և
ազդեցիկ քաղաքագէտը արդէն 1865ի ժողովաշրջա-
նին մէջ յայտնապէս կը նեղուէր այն հիւանդութենէն
զոր ինքը ահաւորագոյնը կը կոչէր ցաւոց մէջ « գծե-
րութիւնը »: Յօդացաւք երթալով կը յաճախէին և կը
բազմանային և ծերունին երթալով կը տկարանար: Կը
գտնուէր ի Պրոքըր խօսարանական ընտրութեանց հա-
մար մրցելով, երբ ի Լոնտրա լսուեցաւ որ Փալմէրսդոն
ցուրտ առած ըլլալով հիւանդացեր էր: Բովանդակ
Լոնտրա յուզեցաւ. ամենայն ոք նոր լուրերու կը սպա-
սէր առողջութեան յուսով, երբ հասաւ փութով նաև
մահուան լուրը:

Լորտ Փալմէրսդոն կը մեռնէր 1865ի Հոկտեմբեր
18ին, ութսուն և միամեայ հասակին մէջ և Հոկտեմբեր
27ին կը թաղուէր Ուէստմինստըրի վանքին մէջ ազ-
գային մեծ յուղարկաւորութեամբ: Լորտ Փալմէրսդոն
պահեր էր իւր գործունէութիւնը մինչև կենաց վեր-
ջին օրերը ի վարչութեան և ի խօսարանի. ուր բազ-
մեր էր մօտ վախճուն տարի և ուր մտեր էր երբ Լորտ
Պայրըն կը հրատարակէր իւր առաջին քերթութիւնքը:
Մեռած ժամանակ հասած էր ժողովրդականութեան
գերագոյն կէտին, յորում կրնար հասնիլ առաջին պաշ-
տօնեայ մը: Ինքը թէպէտ հին ազնուական ցեղէ,
պաշտպանեց ժողովրդոց ազատութիւնքը և իւր անու-
նը մինչև վերջը տագնապ մ'էր միապետական բացար-
ձակ իշխանութեանց: Այդ ազատասիրութիւնը նոյն
խակ երբեմն տագնապի նիւթ եղած է անգղիական ժո-
ղովրդեան, ինչպէս Քոչուրթի և Մածօրինիի նկատմամբ.
և սակայն Փալմէրսդոն փոյթ ըրած չէ: Բարձր իմա-
ցականութիւն մը, հնարիմաց և արթուն միտք մը, քա-

ղաքագէտ սովորականէ շատ վեր, ոչ ոք կարող էր գուշակել Լորտ Փալմէրսդոնի բռնելիք ուղին վարչութեան մէջ, և այս ստէպ կը շփոթէր Եւրոպիոյ քաղաքականութիւնը: ՅԱնգղիա մեծ և անկեղծ եղաւ իւր մահուան համար ցաւը. միայն Դուքսն Ուէլլինկթոն վայլած էր հաւասար ժողովրդականութիւն: Փալմէրսդոն համարձակ կրնար ըսել որ բնաւ անձնական հակառակորդ մը ունեցած չէր: Վեհանձն և ազնուական սիրտ մ'ունէր, ներող յամենայնի և դիւրամատոյց յետին աղքատի, թշուառի: Բնաւ չգժտեցաւ անոնց հետ, որոնք իրեն քաղաքական հակառակորդքն էին և բնաւ վրէժխնդրութեան մը ոգի ցուցուցած չէ: Ժողովուրդն ալ սիրով ներեց իրեն և մոռացաւ թագուհւոյն հետ ունեցած տարածայնութիւնքը: Համոզիչ հոետոր մը, գիտէր յանկարծական դարձուածքներով յափշտակել ունկնդրած միտքը և քուէն. ոչ երբէք գեղեցկաբան. կը խօսէր միայն ունկնդրաց համար և ոչ վասն փառաց անձին:

Իւր կենաց հոետորական և քաղաքագիտական յաղթանակները աւելորդ կը համարինք յիշել աստ. արդէն գայնս տեսած ըլլալով ժամանակակից պատմութեան ընթացքին մէջ. նոյն իսկ աննշան կարծուած պայքարներու ազգային կերպարանք մը տալով, գրաւել ամենուն միտքը ինչպէս Տոն Փաշիֆիլոյի և Հարով Լոչայի նաւուն խնդրոց մէջ: Աւելցնենք միայն որ իւր մահուանէ վերջն իսկ Անգղիա աշխարհավարութեան ընթացից ուղղութեանը մէջ, ունեցաւ Փալմերսդոնի անուան ազդեցութիւնը:



ՍՊԱՆԻԱ — ՓՈՐՔՈՒԳԱԼ

1. ՍՊԱՆԻԱ — Կուսակցական կռիւք. — 2. Ազատական միութիւնը. Օ՛Տոննէլ. — 3. Օ՛Տոննէլի գինուորական յաջողութիւնք. — Տոն Կարլոսի դերի բռնուիլը — 4. Պաշտական կառավարութիւն — Ժողովրդեան յուզումը. — 5. Նարվաէզ — Պետական նարուած. Բացարձակ վարչութիւն. — 6. Յեղափոխութիւն ԻՍպանիա — Զօրավարքն Փրիմ և Սէրրանօ — Առժամանակեայ վարչութիւն — 7. Իզապէլլա կը թողու զՍպանիա. Կարլոսեանք — Կարլոս Է — Հասարակապետականք. — 8. Ընտրութիւնք Ի նպաստ թագաւորութեան — Թագապահութիւն Սէրրանօ մարաշխախին — Սպանիա Ի խնդիր թագաւորի:
9. ՓՈՐՔՈՒԳԱԼ. Տոն Փէարօ — 10. Տոն Լուիս:

1. ՍՊԱՆԻԱ. Կուսակցական կռիւք ¹: — Յամին 1846ի Փետրուար 12ի Իզապէլլա թագուհին կ'ամուսնանար ընդ Տոն Ֆրանչիսքոյ դուքս Քատիչէի. իսկ իւր քոյրը կ'ամուսնանար Մոնիանսիէ դքսին հետ, որդի Լուի Ֆիլիփի Քաղղիոյ թագաւորին: Իզապէլլա իւր ամուսնութենէն մինչև 1848 տարին, գրեթէ անձնական վարչութիւն մը ունեցած է, և տասնևինն ամիսներու մէջ վեց պաշտօնարանք մէկմէկու յաջորդած են, յորս առաւելագոյն նշանաւոր կրնար համարուիլ Նարվաէզ պաշտօնարանը. և այս պաշտօնարանք ա-

1. Պատմութիւն Ժամանակակից Ա Հատոր Ի Գլ. ԺԷ, պատմուած է Իզապէլլայի վարչութիւնը մինչև իսպուրից պաշտօնարանը (1848):

մէնն ալ ապրեցան յուզմունքներու և կուսակցութեանց բուռն կռիւններու մէջ :

Երբ յամին 1848 ի Գաղղիա յեղափոխութիւնը ծագեցաւ, Սպանիոյ վարչութիւնը պահպանողականաց ձեռքն էր և պաշտօնարանին գլուխ էր Գուքան Նարվաէզ : Յառաջադիմականք յուզեցան և յուսացան նոր շարժմունքներով մեծագոյն ազատութիւններ ձեռք բերելու : Գարրէրա ծանօթ կարլոսեանը որ կը գտնուէր յօտարութեան, անցաւ ի Սպանիա ապստամբութիւն մը փորձելու յանուն Տոն Կարլոսի և Անգղիա համամիտ կը թուէր այս ձեռնարկին : Սպանիոյ պաշտօնարանը անդէն Անգղիոյ Պիուլվըր դեսպանին անցագիրքը յանձնեց, երագութեամբ ընկճեց ապստամբական շարժումը և Գարրէրա կրկին փախաւ ի Գաղղիա, և Սպանիա հաշտուեցաւ Անգղիոյ հետ : Վարչութիւնը փութով յինքն այնքան զօրութիւն զգաց, որ մինչև ներուձն չնորհեց Կարլոսեանց, հրաման տուաւ դառնալ յօտարութենէ ի հայրենիս :

1850

Սպանիա ունեցաւ գժտութիւն մը Ամերիկայի Միացեալ Նահանգաց հետ Գուպայի համար, ուր զօրավարն Լոփէզ ապստամբական գունդով մը կը ջանար գժուպա միացնել Միացեալ Նահանգաց հետ : Սպանիա զօրաւոր գտնուեցաւ, Լոփէզ բռնուելով Ավանայի մէջ կախուեցաւ :

1851
Սեպտ.

Յամին 1851 Նարվաէզ քաշուելով պաշտօնարանէն, իրեն յաջորդեց Մուրիլլօ Պրալօ, որ խրախուսեալ Լուի Նարոլէոնի Պետական հարուածէն, ինքն ալ փափագեցաւ բացարձակ թագաւորութիւնը նորոգել Սպանիոյ մէջ : Սակայն մեծ ընդդիմութիւն գտաւ թէ ի պահպանողականաց և թէ ի յառաջադիմականաց, և 1852ի վերջերը քաշուեցաւ պաշտօնարանէն : Յաջորդեցին Ռոնքայի և Լէրսանտի պաշտօնարանք, որոնք աշխատելով նոյն նպատակին և բազում իսկ բռնութեամբք ընտրութեանց մէջ, չկրցան յաջողիլ : Երկրորդեց Սարդորիուս պաշտօնարանը, որ սահմանափակեց տպագրութեան ազատութիւնը, գժարվաէզ հեռացնելու համար վեննա դեսպան զրկեց. աքսորուեցան Օ'Տոննէլ և Մա-

նուէլ տէ լա Քոնք^ա զօրավարք, լուծուեցաւ խորհրդարանը և արքունական քացարձակ վարչութիւն մը սկսաւ, որուն ոգին էր Մարիա Քրիստինա մայր թագուհին և իւր ամուսինը. որոնք այս ժամանակին իրենց Սալամաքա հրեայ սեղանաւորին միջոցով, անձնական մեծագումար հարստութիւն բարդեցին:

2. Ազատական Միութիւնը. Օ'Տոննէլ: — Մեծ էր ի Սպանիա տեղագրութիւնը. Չափաւորականք և Յառաջադիմականք միացան և կազմեցին Ազատական Միութիւն մը: Օ'Տոննէլ որ աքսորեալ էր բանակ մը ժողուեց և ուրիշ համամիտ զօրավարներէ օգնեալ, մեծ յաղթութիւն մը տարաւ թագաւորական գունդերու վրայ ի Վիլբալվարօ և հասաւ մինչև Մատրիտ: Արդէն ժողովուրդը պատրաստուած էր ոտք ելլելու և պատնէշներ կանգնելու, և ամենայն մեծ քաղաքաց մէջ ապստամբութիւնը տարածուեր էր, այն ատեն միայն իզապէլլա յանձն առաւ պաշտօնարանը փոխել և ոչընչացնել Սարդորիուս պաշտօնարանին հրամանները: Էս փարդէրոյի յանձնուեցաւ նոր վարչութիւնը կազմելու յորում մտաւ նաև Օ'Տոննէլ, իրրև պաշտօնեայ պատերազմի: Մարիա Քրիստինա զինուորական պահանջօրդով Փորթուգալի սահմանագլուխը տարուեցաւ և իւր հարստութիւնք գրաման ներքև դրուեցան: Նոյեմբերի մէջ Սահմանադիր ժողովք մը գումարուեցաւ յորում յառաջադիմականք մեծամասնութիւնը ունեցան: Սահմանուեցաւ հաստատել երկաթուղիք, հեռագիր, դրամատունք. և այս նպատակաց օգնելու համար, սահմանուեցան փաճառելու ամէն բարեպաշտական և եկեղեցական յանձնարար: Կալուածք: Նորոգուեցան տպագրութեան և բազում ընկերական ազատութիւնք: Սակայն փութով սկսաւ անմիաբանութիւնը նոյն իսկ Ազատական Միութեան մէջ. Էս փարդէրօ ստիպուեցաւ հրատարիլ: Պարչէլլոնայի մէջ ապստամբութիւն և արիւնահեղ կռիւք ծագեցան: Օ'Տոննէլ պաշարման վիճակ հռչակեց և ապստամբութիւնը ընկճեց մեծ արիւ-

1884
1 Յուլիս

1884

նահեղութեամբ: Թագուհին նոր պաշտօնարան մը կազմեց որուն գլուխն եղաւ Նարվաէզի դուքսը՝ պահպանողականաց առաջնորդը: Ամենայն ոք կը համարէր որ խաղաղ վարչութիւն մը պիտի սկսի. սակայն Նարվաէզ աւելի բացարձակ իշխանութեան կողմը միտելով, սկսաւ մի առ մի վերցնել 1854ի ազատութիւնքը: Նախկին Ազատական Միութիւնը խիթալով կորսնցնել ինչ որ մեծ ջանիւք ձեռք բերած էր, սպառնական դիրք մը առաւ և բռնադատեց զթագուհին կոչելու զՕ՝ Տոննէլ ի գլուխ պաշտօնարանին: Ամենայն ոք պարտասեալ էր պաշտօնարանական փոփոխութիւններէ և ներքին երկպառակութիւններէ, որով և Օ՝ Տոննէլ պաշտօնարանը գրեթէ հինգ տարի մնաց յիշխանութեան, և ջանաց գոհացնել առ հասարակ երկպառակ կուսակցութիւնքը. միանգամայն ազգին ուշադրութիւնը դարձուց արտաքին զինուորական ձեռնարկներու:

3. Օ՝ Տոննէլի զինուորական յաջողութիւնքը. — Տոն կարլոսի գերիլը: — Օ՝ Տոննէլ նախ բանակ մը զրկեց օգնելու Գաղղիացւոց Սայկոնի և Դուրանի արշաւանաց ժամանակ, յորս Սպանիացիք ևս մեծապէս քաջացան: Ապա Մարոքի վրայ գնաց, ինքնին բանակին գլուխ կենալով. և հոն պատերազմով տիրելով Թէթուանի, անուանեցաւ՝ Դուքս Թէթուանի, և թշնամիք ստիպուեցան վճարելու պատերազմին ծախքը և տալ Չէւդայի մօտ երկիրները: Իւր համհարզը՝ տեղապահ զօրավարն Փրիմ՝ անուանուեցաւ մարքիզ Քասդիլոնի:

Այս պատերազմներուն զբաղած ժամանակ, կարլոսեանք ապստամբութիւն մը փորձեցին: Օրդէկա զօրավարը որ հրամանատար էր Բալէարեան կղզիներուն, բանակով մը Թորթոգա ելաւ Լչպրոյի բերաններուն մօտ և յառաջեց ամէն կողմ ապստամբութիւն քարոզելով, զկոմսն Մոնդէմոլին գահը դնելու համար որ իւր եղբորը, Փերտինանտոսի և Գարրէրայի հետ բանակը կը գտնուէր և որ թագաւոր հրատարակուեցաւ կարոլոս է անուամբ: Սակայն արշաւանքը ձախորդ վերջ մը ունեցաւ. Օրդէկա զօրավարը բռնուեցաւ և զինուո-

բական դատաստանով սպանուեցաւ : Երկու իշխանազունքը գերի բռնուելով, բռնադատուեցան հրաժարելու թագաւորելու ո՞ր և է իրաւունքէ մը, և սահմանազուլի տարուելով, հոն միայն ազատ ձգուեցան :

Օ՛Տոննէլի երկար և յաջող վարչութիւնը, Սպանիոյ վահառականական և արուեստական մեծ յառաջադիմութիւնք պատճառեց և բարձրացուց երկրին վարկը : Նարոլէոն Գ մինչև այն ատեն սիրալիր յարարերութեամբք կասուած Սպանիոյ արքունեաց հետ, քաղաքագիտական առաջարկք ըրած էր միւս պետութեանց, զՍպանիա մեծ պետութեանց կարգը ընդունելու, ինչպէս էր երբեմն, որով և մասնակցելու Եւրոպական խնդրոց վճռուելուն : Սակայն Միքսիքոյի արշաւանքին ժամանակ զօրավարն Փրիմ բաժնուելով ի Փաղղիացուց, Նարոլէոն Գ ցրտացաւ Սպանիոյ հետ . ընդհակառակն Խորհրդարանք հաւանութիւն տուին վարչութեան գործածին : Այսու հանդերձ Իզապէլլա թագուհին սերտ մտերմութեանը պատճառաւ ընդ Եւսէնի կայսրուհւոյն, տօգոհացաւ Պաշտօնարանին ուղղութեան վրայ և Օ՛Տոննէլ բռնադատուեցաւ հրաժարիլ : Իրեն յաջորդեց պահպանողական պաշտօնարան մը, որուն գլուխ էր մարքիդն Միրաֆլորէս, սակայն չկըրցաւ յառաջել և Սպանիա ինկաւ նախկին յուզմանց մէջ :

4. Պալաւտական կառավարութիւնը . ժողովրդեան յուզումը : — Արդէն Մարիա Քրիստինա դարձեր էր յաքսորանաց և Իզապէլլա կրկին կը սկսէր պալտաի վարչութիւն մը, մեծապէս գայթակղեցնելով զժողովուրդը, մանաւանդ Մարֆորի անուամբ Իտալացուոյ մը ըրած շնորհներովը : Եւ սակայն Իզապէլլա արքունեաց այս մթին և խորհրդաւոր կառավարութեան մէջ, կ'ուզէր իրեն նեցուկ առնուլ կղերական մասը, և ամենայն հնարք ի գործ կը դնէր, անոնց շնորհքը և երախտագիտութիւնը ստանալու : Քիչ վերջը պատահելով Սան Տոմինկոյի և Փէրուի պատերազմները, Սպանիա դրամական տագնապալից վիճակ մը առաւ : Նարվաէպ անցնելով պաշտօնարանին գլուխ, չկրցաւ ոգինները հան-

դարտեցնել. ընդհանուր հակառակութիւն մը ծնաւ պուրպոնեան թագաւորող ցեղին դէմ, զոր աւելի կը զայրացնէր Մարիա Քրիստինա՝ պաշտական քմահաճոյ վարչութեամբ: Կազմակերպուեցաւ մեծ կուսակցութիւն մը « Իրերական Միութիւն » յորջորջմամբ. որուն նպատակն էր միանալ ընդ Փորթուգալի՝ Պրէկանցա ցեղին իշխանութեան ներքեւ: Նարվաէզ ըմբռնեց որ անհնարին էր այս տարերաց մէջ վարչութեան վրայ մնալ և հրաժարեցաւ. և վարչութեան գլուխ անցաւ Ազատական Միութիւնը, յորում ազդեցիկ անձինքն էին Օ՛Տոննէլ և Սէրրանս. որոնք իրենց կողմը շահեցան յառաջագիմականքը և բռնադատեցին զթագուհին յարքունեաց հեռացնելու կղերական կուսակցութեան վարիչքը՝ զՀ. Քլարէզ և Փաղրոյինիս մայրապետը և ընդունիլ Իտալիոյ նոր կազմեալ թագաւորութիւնը:

Օ՛Տոննէլ ջանաց հաշտուիլ Գաղղիոյ հետ. և անդէն փոփոխակի արքունական այցելութիւնք եղան ի Պիարից և ի Սան Սէպաստիանո: Թագուհին երկրին դրամական վիճակին օգնելու համար իւր անձնական գանձէն տուեր էր 600 միլիոն ուէալ: Սակայն այս հանդարտութիւնը քիչ ժամանակ տևեց. ուսկապարականք որոց գլուխ էր զօրավարն Փրիմ՝ կը պահանջէին բաժանումն ընդ Եկեղեցի և ընդ Պետութիւն: Բազում քաղաքաց մէջ հասարակապետական յուզմունքներ եղան. սակայն դեռ կազմակերպութիւն մը չըլլալով, ընկճուեցան: Փրիմ վանեցաւ դէպ ի հարաւ և 700 հոգևով անցաւ ի Փորթուգալ և հոնկէ յԱնգղիա, յարմար ժամանակի սպասելով արշաւելու ի Սպանիա: Ապա իւր հետը եղողներուն շնորհուեցաւ դառնալ հայրենիքնին:

5. Նարվաէզ պաշտօնարան — Պետական հարուած. Բացարձակ վարչութիւն: — Հասարակապետականաց յանկարծ բազմաթիւ յերևան գալը, բողոքովին հակառակ ընդդէմ ազդեցութիւն մը ունեցաւ յարքունիս, ի վնաս նոյն իսկ սահմանաւոր ազատութեանց: Թագուհին նոր պաշտօնարան մը կազմելու

1867
Յունվար1867
Մարտ1868
Յուլ 7

կոչեց զՆարվաէզ, յանձնելով յետին խստութիւն առ հասարակ ընդդէմ ազատական կուսակցութեանց: Հարիւրէն աւելի երեսփոխանք բողոքեցին նոր խստութեանց դէմ և ի Քաթալոնիա ապստամբութեան փորձ մ'եղաւ, ուր յԱնգղիայէ օգնութիւն ղրկեք էր զօրավարն Փրիմ. սակայն Նարվաէզ Պետական հարուածով մը փոփոխեց վարչութեան ոճը և բազմաթիւ երեսփոխաններ աքսորեց Քանարեան կղզիները և ուրիշ կողմեր: Օ'Տոննէլ և Ազատական Միութեան գլխաւորները փախան օտար երկիրներ: Նոյն իսկ թագուհւոյն հօրեղբայրը՝ իշխանն Հենրիկոս Պուրպոնեան, իբրև ազատամիտ թագաւորական հրովարտակով մը մերկացեալ ամենայն պատիւներէ, թողուեցաւ որ ապաւինի ի Քաղղիա: Խորհրդարանք արձկուեցան, տպագրութեան ազատութիւնը վերցաւ և պաշարման վիճակը սարածուեցաւ Սպանիոյ ամէն կողմ: Յետոյ բռնութեան ներքև նոր ընտրութիւնք եղան, յորս Պաշտօնարանը շահեցաւ լիովին մեծամասնութիւն մը: Սահմանադրութեան միայն անունը մնաց և իզապէլլա կը համարէր այսպէս որ մահացու հարուածը տուած ըլլայ ամէն ազատական կուսակցութեանց: Յամին 1868ի Ապրիլի մէջ մեռաւ Նարվաէզ Գուքս Վալէնցայի, և պաշտօնարանին գլուխ անցաւ Կոնցալէզ Պրավո, որ և ևս յառաջ մղեց իւր նախորդին սկսած ուղղութիւնը: Պետական հարուածով մը կալանաւորել տուաւ ի Մատրիտ և ի Սպանիա բոլոր նշանաւոր զօրավարները յորս էին Սէրրանօ՝ Գուքս տէլլա Գորրէի, Տուլչէ, Չապալա, Քորտովա և զանոնք աքսորեց ի Բաղէարեան կամ ի Քանարեան կղզիս. հրամայեց Մոնփանսիէի դքսին, քեռայր թագուհւոյն, թողուլ զՍպանիա, իբրու թէ իւր ներկայութիւնը կրնար խրախուսել սահմանադրականքը: Մուփանսիէ մեկնեցաւ յղելով թագուհւոյն սպանիական բովանդակ նըշանք և տիտղոսք: Սակայն ազատական կայծը, որ մոխրոյ ներքև թաղուած էր և ոչ չիջեալ, յանկարծ փայլելով և բորբոքելով, ահաւոր հրդեհ մը յարոյց չկար-

ծուած ժամանակ. հրկիզելով նոյն իսկ Իզապէլայի թագաւորական գահը :

6. Յեղափոխութիւն ի Սպանիա . Զօրավարքն Փրիմ եւ Սէրրանօ — Առժամանակեայ վարչութիւն : — Արդէն կանխաւ տեսանք ընդհանուր ժողովրդեան տրժգոհութիւնը Իզապէլայի վարչութեան և մանաւանդ առանձնական կենաց դէմ : Թագուհին միանգամայն առատութեամբ կ'օգնէր Քանձուն և աղքատաց և մեծամեծ բարեգործութիւնք կ'ընէր եկեղեցիներու և վանքերու , որոց համար արժանացեր էր 1868ի Հոովմայ Քահանայապետէն ընդունելու հուշակաւոր Ուիեայ վարդ, շնորհեալ թագուհեաց և արքայազուն իշխանուհեաց : Մինչև ցամն 1868 տժգոհութիւնը կուսակցութեանց մէջ էր , բայց իւր կենաց վէպք՝ հուշակեալք լրագրոց մէջ , ցրտացուցին ի սպառ ժողովրդեան սիրտը , մանաւանդ Մարֆորի իտայացւոյն պատճառաւ զոր թագուհին չէր ուզէր հեռացնել : Ոգիները պատրաստ էին յեղափոխութեան մը և նշանի մը կը սպասէին . այս նշանը տուողք եղան ազատական կուսակցութիւնք : Յետ ընդերկար դադոտ բանակցութեանց միաբանեցան Ազատական միութիւնը , յառաջադիմականք և ռամկավարք տապալելու թագուհւոյն իշխանութիւնը : Զօրավարն Փրիմ որ կը գտնուէր յԱնգղիա արդէն պատրաստ էր գլուխ կենալու . և յուզմանց օգնելու համար յԱնգղիայէն հասաւ ի Ճիպիլդէրրա :

Արքունեաց մէջ այնքան անհոգութիւն էր հսկողութեան , որ թագուհին բնաւ կասկած մը չունէր ծածուկ դաւանաց . և Սեպտեմբերի մէջ ի Սան Սէպասդիանոյէ կը պատրաստուէր անցնիլ ի Պիարից և բանակցելու նոր բարեկամական դաշանց համար ընդ Նարոլէոն Գի , երբ լուր հասաւ իրեն որ ծովակալն Թոփէդէ ապստամբութեան դրօշը կանգներ էր ի Քատիչէ , որուն միացեր էին Սիվիլիա և ուրիշ մեծ քաղաքներ : Ամէն կուսակցութեանց արտօրեալ զօրավարք կամ զլիաւորք հրատարակութեամբ կը հրաւիրէին գտնվանդակ Սպանիացիս մոռնալ որ և է խտրութիւն և հակառակութիւն , և միաբան վաստակիլ տապալելու

Իզապէլլայի թագաւորութիւնը . ապա ընդհանուր ազգին քուէին համեմատ նոր բարոյական և քաղաքական կեանք մը տալ Սպանիոյ : Փրիմ ևս իւր մէկ հրովարտակը կը վերջացնէր « Կեցցէ՛ ազատութիւն, կեցցէ՛ ժողովրդեան իշխանութիւնը » :

Թագուհին ապստամբութեան լրոյն վրայ փոխանակ Կոնցալէս Պրավոյի, պաշտօնարանին զլուխ կոչեց զգորավարն Քոնքա դուքս Ավանայի, և զգորավարն, Նովալիլքէս զրկեց ապստամբերուն վրայ, որ Քորզովայի մօտ կամրջին քով մեծապէս պարտեցաւ Սէրրանօ զօրավարէն և վիրաւորուեցաւ : Սէրրանօ քիչ օր վերջը յաղթանակաւ մտաւ ի Մատրիտ և փութով առժամանակեայ վարչութիւն մը կազմուեցաւ, որուն անդամք էին մարալխասն Սէրրանօ, Փրիմ, Թոփէդէ և Օլոցակա : Ասոնք ընդհանուր քուէիւք Մերակոյտը և Խօսարանը ընտրել պիտի տային, որ Սպանիոյ նոր սահմանադրութիւն մը պիտի տար :

7. Իզապէլլա կը թողու զՍպանիա — Կարլոսեանք . Կարոլոս է — Հասարակուպետականք : — Առժամանակեայ վարչութեան մեծամասնութիւնը թագաւորական կուսակցութենէ էր . և եթէ թագուհին անմիջապէս յանձն առնուր արտաքսելու ամենուն ատելի և գայթակղութեան նիւթ զՄարֆորի իւր պաշտպանեալը, կամ հրաժարէր թագաւորութենէ ի նպաստ իւր անդրանիկ որդւոյն Ալփոնսոսի, Դուքս Աստուրիոյ, թերևս յեղափոխութիւնը անմիջապէս վերջանար . սակայն Իզապէլլա ոչ մին և ոչ միւսը կ'առնուր յանձն : Միանգամայն գիտնալով որ անհնար էր իրեն մտնել ի մայրաքաղաք կամ մնալ Սպանիոյ հողին վրայ, անցաւ գաղղիական սահմանագլուխը միաբան իւր խեղճ ամուսնոյն և Մարֆորի : Ապա ի Փօ՛ բողոք մը գրեց ընդդէմ յեղափոխութեան, վերապահելով իւր ամէն թագաւորական իրաւունքները և իւր ընկերաց հետ մեկնեցաւ ի Բարիզ ¹ : Իզապէլլայի մեկնելէն վերջը կու-

1. Իզապէլլա ի Բարիզ յամին 1870 խաղաղութեամբ բաժնուեցաւ իւր ամուսնոյն՝ Տոն Ֆրանչիսքօ Տ'Ասսիզի . 1870ի Յունիսին

սակցութեանց մէջ փութով սկսաւ անմիաբանութիւնը: Առժամանակեայ վարչութիւնը թագաւորութեան մը կողմն էր. հարաւային գաւառաց մէջ հասարակապետականք սկսեր էին բազմանալ և զօրանալ, իսկ ի հիւսիս կարլոսեանք կանգնեցին օրինաւորականութեան դրօշը և Տոն Կարլոսի եղբորորդին՝ հռչակեցին թագաւոր Սպանիոյ Կարլոս Է յորջորջմամբ. հիւսիսային կղերը մեծաւ մասամբ կարլոսեան էր: Սակայն կանոնաւոր կազմակերպութիւն մը չունենալով, չկրցան տիրելու կարևոր քաղաքներու, և առժամանակեայ վարչութեան գունդերը զիրենք կրցան ցրուել առանց դժուարութեան և Տոն Կարլոս անցաւ ի Փաղղիա. ուսկից երբ տարի մը վերջը կ'ուզէր կրկին փորձ մ'ընել արշաւելով ի Սպանիա, Նաբոլէոն Ք, Սպանիոյ դեսպանին բողոքներուն վրայ, զինքը տանել տուաւ մինչև Զուիցցերիի սահմանագլուխը:

1870
Փետր.

Կարլոսեաններէն աւելի յաջողութիւն գտան հասարակապետականք, որոց թիւը ստուարացաւ ի հարաւ, և հազիւ ընկճուեցան Քատիչէի և Մալակայի կռիւներով:

Սակայն առժամանակեայ վարչութիւնն ալ առ սակաւ սակաւ կը կորսնցնէր իւր զօրութիւնը և ընդհանուր անիշխանութիւնը կը տիրէր ամէն կարգի մէջ. պաշտօնեայք և ժողովուրդք կը գործէին ըստ կամաց: Ընդհանուր հակառակութեան ոգի մը ծնաւ ընդդէմ եկեղեցականաց, որովհետև հպատակք երևցեր էին Իզապէլլայի թագաւորութեան և պաշտպանք: Հռովմայ հետ Դաշինքը¹ այրուեցաւ Քահանայապետին նուր-

հրաժարեցաւ թագաւորութենէն ի նպաստ իւր Ալփոնսոս որդւոյն: Յետոյ ժամանակաւ երբ սա թագաւորեց, իզապէլլա Սպանիա եկաւ նետը բերելով զՄարֆորի, ընդդէմ հրամանաց վարչութեան,՝ անոր համար Մարֆորի բռնուեցաւ և բանտ դրուեցաւ: Իզապէլլա կրկին անցաւ ի Բարիզ, ուր ցարդ կը բնակի:

1. Concordato.

րակի պալատան առջև . Արդարութեան պաշտօնեայն Սրդէց՝ խափանեց Յիսուսեան Միաբանութիւնը և գըրաւեց անոր ինչքերը : Ժողովուրդը արշաւեց այն վանքերը որոնք ընդունեց էին զՅիսուսեանս : Իշխանութիւնը ոյժ չունէր դէմն առնելու . ազատութիւն հրատարակեց Հասարակաց կրթութեան, և Սպանիոյ պաշտօնական կրօնքը կաթողիկէութիւն իսկ հրատարակելով, հրաման տուաւ պաշտելու միւս քրիստոնեայ կրօնքները :

8. Ընտրութիւնը ի նպաստ Թագաւորութեան — Թագապահութիւն Սէրրանս մարաջախտին — Սպանիացիք ի ինդիոյ Թագաւորի : — Ամենուն հետաքրքրութիւնը և յոյսը խօսարանական ընտրութեանց վրայ էր, որոնք կատարուեցան 1869ի առաջին ամիսները և որ Սպանիոյ վարչութեան հաստատուն ուղղութիւն մը պիտի տար : Ընտրութիւնք նպաստաւոր ըլլալով Թագաւորական երեսփոխանաց, յայտնի էր որ Սպանիա գրեաթէ ամբողջովին Թագաւորութիւն կ'ուզէր : Նոր Սահմանագրութիւնը Յուլիսի սկիզբը հռչակեալ, կը սահմանէր որ Սպանիա յաջորդական Թագաւորութիւն մը ունենայ, որ ծերակուտին և Խօսարանի հետ կառավարէ գծողովուրդը ազատական սահմանագրութեամբ մը, յորում ապահովեալ էին ժողովրդեան բարոյական, ընկերական և քաղաքական ամէն իրաւունքները : Առ ժամս Թագապահ ընտրուեցաւ մարաջախտն Սէրրանս « Նորին Բարձրութիւն » պատուանուամբ : Զօրավարն Փրիմ պաշտօնարանին գլուխ եղաւ և զօրավարն Տուչէ ընդհանուր հրամանատար ղրկուեցաւ ի Գուպա, ուր սկսեց էր դարձեալ ապստամբութիւնը : Կը մնար այժմ փութով ընտրել զԹագաւորը :

Բնական կարգաւ իրաւունքը կը նշանակէր զԱլփոնսոս իշխան Աւստրիոյ՝ անդրանիկ Իզապէլլա Թագուհւհւոյն, կամ Տոն Կարլոս գլուխ օրինաւորականաց և կամ Մանփանսիէի դուքսը՝ քեռայր Իզապէլլա Թագուհւհւոյն, որ հպատակեց էր առ ժամանակեայ իշխանութեան : Սակայն այս երեք անձիւնքն ալ ընդհանուր ազգին համակրութիւնը չէին վայելեր այն ժամանա-

կին. և Նարուէոն Գ չէր կրնար Մոնփանսիէի դուքսը, որդի Լուի Ֆիլիփի, տեսնել դրացի ազգի մը թագաւորական գահուն վրայ¹: Կար ստուար կուսակցութիւն մը որ կ'ուզէր միացնել Սպանիոյ և Փորթուգալի թագերը և ընծայել զայն Պրէկանցայի Տան: Սակայն ի Փորթուգալ ոչ թագաւորը և ոչ ժողովուրդը կ'ուզէր ընդունիլ այդ միութիւնը: Ոմանք կը խորհէին առաջարկել Վիկտոր Էմանուել Ի տալիոյ թագաւորին երկրորդ որդւոյն՝ Ամէտէօ իշխանին, այլք թումագօ իշխանին՝ Գուքս ձենովայի՝ եղբորորդի Վիկտոր Էմանուէլի: Եղան՝ մինչև խորհուրդ կու տային թագաւոր հռչակել զԷսփարդէրօ և կամ զՍէրրանօ: Սպանիա յետ երկար վարանմանց, վերոյսացեալ իշխանաց ընտրութիւնքը յաջող չհամարելով, վերջապէս սահմանեց դիմել Սպանիոյ գահուն համար առ իշխանն Հոնէնձոլլէանի, արեւակից Բրուսիոյ թագաւորող Տան: Այդ ընտրութեան լուրը զայրացուց զՔաղղիա և թէպէտ մնաց առանց արդեանց, սակայն յառաջ բերաւ 1870ի Քաղղիա-Քերմանական մեծ պատերազմը:

9. ՓՈՐԹՈՒԳԱԼ. — Տոն Փէտրօ Ե: — Ի Փորթուգալ Տոննա Մարիա Բ տա Կլորիա վախճանեցաւ 1853ի Նոյեմբերի 15ին, և իրեն յաջորդեց իւր անդրանիկ որդին Տոն Փէտրօ Ե, որ 16 տարուան ըլլալով և ոչ յաւագութեան, իւր թագաւորահայրը Տոն Ֆէոնանտօ Սաքս Քոպուրկ Կոթայի թագապահ կարգուեցաւ: Տոն Փէտրօ դեռ վարչութիւնը անձամբ

1. Մոնփանսիէի դուքսը որ կը համարէր ունենալ մեծագոյն իրաւունք մը, գրութեամբք մեծ շառաչ կանեց, և որոց դէմ զրեց Հենրիկոս Պուրպոնեան իշխանը, Նորեղբայր Իզապէլլայի, նախատելով մինչև զդուքսը, որով և մենամարտութիւն մը կարեւոր դատուեցաւ: Մերձ ի Մատրիա երկու ատոյեանք ճակատեցան ատրճանակով: Երբորդ անգամ սկսելուն հարուած մը գետին փռեց զՀենրիկոս իշխանը: Մոնփանսիէի դուքսը դատաստանի մատնուելով դատապարտուեցաւ 80,000 ֆրանք տուգանքի և մէկ ամիս աքսորանաց:

ձեռք չառած, ուսումնասիրելու նպատակաւ յԵւրոպա ուղևորեցաւ. անցաւ յԱնգղիա և դիտեց սահմանադրական այդ մեծ երկրին ընկերական հաստատութիւնքը, ապա այցելեց Վաղղիոյ՝ տիեզերական Յուցահանդէսին ժամանակ, մի առ մի քննելով յառաջագիմուսթիւնքը, յետոյ ուղևորեցաւ ի Զուիցցերի և մանաւանդ ի Պելճիա: Յամին 1855 Սեպտեմբերին կը լրանար իւր 18դ տարին, որով և ձեռք կ'առնուր թագաւորութիւնը: Իւր հայրը թագապահութեան ժամանակ դաշինք հաստատեր էր Վաղղիոյ և Պելճիայի հետ շարագործաց արտահանման համար, նաև Հարաւային Ամերիկայի Տէրութեանց հետ նաւարկութեան և վաճառականական դաշինք հաստատեր էր:

Տոն ֓էտրօ Ե վարչութիւնը ստանձնելով ի սկզբան պահեց Սալտանհա դքսին պաշտօնարանը որ չորս տարիէ ի վեր կը կառավարէր երկիրը: Երբ յաջորդ տարին բարձրագոյն խօսարանին մէջ կորսնցուց իւր մեծամասնութիւնը, և պաշտօնարանը նոր ծերակուտի անդամք կ'առաջարկէր անուանել մեծամասնութիւնը ունենալու համար, Տոն ֓էտրօ որ միշտ սահմանադրական թագաւոր եղած էր, մերժեց Սալտանհա դքսին առաջարկը և պաշտօնարանը ինկաւ և իրեն յաջորդեց Լուլէ պաշտօնարանը, որ տևեց ոչ ընդ երկար և որուն յաջորդեց երրորդ յառաջագիմական պաշտօնարան մը, որուն զլուխ եղաւ Ալիլա: 1859ին հրաժարեցաւ այս պաշտօնարանը և տեղն անցաւ Թէրչէյրա Ֆոնդէս պաշտօնարանը: Յամին 1859 Տոն ֓էտրօ Ե ամուսնացաւ ընդ իշխանուհւոյն Հոհէնձոյլէն Սիկմարինկէն, արենակից Բրուսիոյ թագաւորին:

Յամին 1861 ճարակելով ժանտատենդը ի Լիզպոնա, երիտասարդ թագաւորը շուզեց մայրաքաղաքին վտանգէն հեռանալ, նա մանաւանդ ուզեց մնալ հոն օգնելու իւր ժողովրդեան: Ինքն ալ բռնուեցաւ շարտենդէն և վախճանեցաւ Հոկտեմբեր 18ի երկու օրուան հիւանդութեամբ, 25 ամեայ հասակին մէջ: Ժողովուրդը մեծապէս ցաւեցաւ այս անակնկալ մահուան

վրայ . իրեն յաջորդեց իւր երկրորդ եղբայրը Տոն Լուիձ Ա :

10 . Տոն Լուիս Ա : — Նոր թագաւորը որ ծանօթ էր Գուքս Օփորթոյի յորջորջմամբ և նաւապետութեան աստիճան ունէր , Պորթուգալի Տէաշ մարտանաւին հրամանատարութիւնը կը կատարէր , երբ իւր Եղբորը մահուամբ զահը կոչուեցաւ Նոյեմբեր 11ին , և Գեկտեմբեր 23ին պսակուեցաւ հանդիսապէս : Յաջորդ տարւոյն Հոկտեմբեր 6ին ամուսնացաւ ընդ իշխանուհւոյն Մարիա Փիա , գուստր Վիկտոր Լյմանուէլի Իտալիոյ թագաւորին :

1861

Թագաւորութեան առաջին գործերէն մին եղաւ Գիէն-Չինի դաշինքը , որով Չինաստան վերջնակաւ նապէս Փորթուգալի կը թողուր Մաքաօ թերակղզին : Անկէ վերջը իւր բովանդակ հոգը Ներքին Գործոց մասին դարձուց , յորս միշտ յաջող չգտնուեցաւ : Վերցուց ի Փորթուգալ անցագրի պարտաւորութիւնը , տեղացուց և թէ Օտարականաց համար : Յամին 1865 , 66 Տիեզերական Յուցահանդէս մը պատրաստեց ի Փորթօ , որ երկրին մեծ մղումն տուաւ . տասանորդական զրութիւնը մտուց ի չափս և թէ ի դրամի : Փորթուգալի նահանգք և գաւառք նոր բաժանմունք ստացան սազմական դիւրութեան համար : Յամին 1868 կոմսն Փէնիչէ անդամ Երեւակուտին , դաւ մը փորձելով ընդդէմ թագաւորին , ծերակոյտը ամբողջ դատարանի փոխուեցաւ իւր անդամակիցը դատելու համար : Երբ ի Սպանիա ծագեցաւ Յեղափոխութիւնը որ վանեց գիզապէլլա թագաւորական աթոռէն , Սպանիոյ ժողովուրդը յօժար էր միանալու Փորթուգալի հետ ընդ իշխանութեամբ Տոն Լուիձի . բայց Տոն Լուիձ անշահասիրութեամբ մերժեց այդ առաջարկը : Յաջորդ տարւոյն մէջ ջնջեց ստրկութիւնը Փորթուգալի ամէն երկիրներէ : Ապա համարելով զրամական տագնապալից վիճակին դարման տանիլ զօրաւոր միջոցով մը , վաճառեց բոլոր եկեղեցական կալուածք : Յայտնի է որ ասկէ մեծ յուզմունք յառաջ եկան : Զօրավարն Սալտանհա , դեսպան Փորթուգալի ի Հռովմ , տուաւ իւր

1862
Օր . 13

1863
Հ . 4 .

1870

հրաժարականը: Ի Հոռով մեծ էր տեղահանութիւնը, և յաջորդ Մայիս 19ի գինուորական ապստամբութիւն մը ծագեցաւ, արդիւնք նոյն խնդրոյն, որով ինկաւ մարքիզ Լուլէ պաշտօնարանը, որ հրամայեր էր եկեղեցական կալուածոց վաճառումը. Խօսարանը լուծուեցաւ և Սալտանհա կոչուեցաւ նոր պաշտօնարան մը կազմելու: Սակայն հակառակութիւնք վերջ շառին, և ընդհուպ հրաժարեցաւ նաև Սալտանհա:



ԳԼՈՒԽ ԿԷ

ՇՈՒԷՏ, ՊԵԼՃԻԱ, ՀՈԼԱՆՏԱ, ԶՈՒԻՑՑԵՐԻ

1. ՇՈՒԷՏ — Օսկար Ա. — 2. Կարոլոս ԺԵ — Յառաջադիմութիւնք. — 3. ՊԵԼՃԻԱ — Լէոփոլտ Ա. Սահմանադրական վարչութիւնը — 4. Լէոփոլտ Բ. — 5. ՀՈԼԱՆՏԱ. Գուլիէլմոս Գ. — 6. ԶՈՒԻՑՑԵՐԻ — 7. Համաձայնութիւն ձինեւրայի, Կարմիր Խաչ:

1. ՇՈՒԷՏ — Օսկար Ա. — Ի Շուէտ Կարոլոս ԺԳԻ¹ յաջորդեր էր յամին 1844 իւր որդին Օսկար Ա: Իւր թագաւորութեան երկրորդ տարին անդէն ջանացեր էր Շուէտը յառաջադիմութեան ընթացքի մէջ դնել: Ազնուականաց ընտանիքներու մէջէն վերցուց անդրանկութեան իրաւունքը և եղեոնական դատաստանագիրքը բարւոքեց: Յամին 1846 Մասնաժողով մը կազմեց սահմանադրութիւնը պատրաստելու համար, յորում ընկերական հաւասարութիւն պիտի հաստատուէր կղերին, ազնուականութեան, քաղաքացւոց և գիւղացւոց մէջ. որոց իւրաքանչիւրը մինչև այն ատեն ի Սդոքհոլմ առանձին ժողովատեղի ունէր: Ազնուականութիւնը կը ժողվէր Ասպետաց հրապարակը, կղերը Սդոքհոլմի մայր եկեղեցւոյն աւանդատան մէջ, քաղաքացիք ի դրամատունն և գիւղացիք քաղաքին պալատը: Սահմանադրութիւնը 1848ին աւարտեցաւ, բայց Աւագաժողովոյն մէջ երեք դասակարգութիւնք զայն չընդունեցան: Այսու հանդերձ Օսկար Ա խաղաղ թագաւորութիւն մը ունեցաւ, յորում երկիրը նիւ-

1. Զօրավարն Պէռնատող, Նաբուէոն Ա. նոյ նշանաւոր հրամանատարներէն մին:

Թականապէս իսկ մեծ յառաջադիմութիւնք և արդիւնք ունեցաւ, մանաւանդ երկաթուղեաց հաստատուելով: Յամին 1855ի Ղրիմի պատերազմին ժամանակ, Շուէտ չէզոք դրութիւն մը պահեց, միայն ապահովութիւն պահանջեց և ստացաւ ի Քաշնակցաց, որ ինքը բնաւ երկիր մը պիտի չկորսնցնէր:

Օսկար Ա մշակեալ միտք մը ունէր, որով դաստիարակութեան և օրինաց մասին ջանացնոյն իսկ գրութեամբք հրահանգել իւր ժողովուրդը: Սիրող գեղարուեստից և հետևող մասնաւորապէս երաժշտութեան, այս ճիւղին մէջ ևս բազում հեղինակութիւնք թողուցած է: Սակայն տկար առողջութեամբ, յամին 1857 խնդրեց հրաժարիլ գործոց կառավարութենէ. թագապահութիւն մը հաստատուեցաւ, որուն գլուխ էր իւր որդին Թագաժառանգ իշխանն Կարոլոս: Օսկար Ա վախճանեցաւ երկու տարի վերջը խաղաղ և յառաջադէմ թագաւորութիւն մը վարելով:

2. Կարոլոս ԺԵ, Յառաջադիմութիւնք: — Թագապահ իշխանն Կարոլոս, որ ծնեալ էր յամին 1826, անդէն թագաւոր հռչակուեցաւ Շուէտի և Նորվեկիոյ Կարոլոս ԺԵ անուամբ: Ի մանկութենէ ընտիր և գիտուն դաստիարակութիւն մը առած էր թէ ի Քրիստիանիա և թէ յՈւփսալա: Յամին 1841 զինուորական վարժարան մտնելով, յետ փայլուն քննութեանց, աստիճանաբար մինչև ընդհանուր զօրավարութիւն ըստացեր էր. որով և հասարակաց կարծիքը կը համարէր որ փութով պիտի դիմէր զինուորական և պատերազմական բաղդերու: Եւ սակայն հակառակն եղաւ: Շուէտ և Նորվեկիա երբէք իւր թագաւորութեան ժամանակի նման ամենեւին խաղաղ և հանդարտ ժամանակ ունեցած չեն: Ճշդիւ սահմանադրական թագաւոր՝ որչափ որ Տանիմարթայի պատերազմին ժամանակ անձնականապէս մեծ համակրութիւն մը կը զգար առ Տանիմարթա, որպէս և յամին 1870 Քաղղիոյ համար, սակայն հնազանդելով սահմանադրական թագաւորի մը պարտուց, չուզեց՝ բայց զայն միայն զոր կ'ուզէր Ազգը և Խօսարանը: Նոյն սահմանադրական խղճիւ

վարուեցաւ նաև Նորվեկիոյ հետ և Շուէտի հետ միութեան կսպին բնաւ բռնական և աշխարհակալ ձև մը չուզեց տալ, որով և մերժեք էր չուէտացի փոխարքայի մը ընտրութեան առաջարկը: Փոխարքարձարար Նորվեկիա միշտ պաշտպան իւր ինքնիշխանութեան, կամեցաւ մասնակցիլ որ և է նաւարկութեան և վաճառականական դաշանց, զորս կուեր էր Շուէտ, չուզեց ընդունել նոյն օրինագիրքը և պահանջեց որ յարտաքինս նոյն ներկայացուցիչք չըլլան թէ Շուէտի և թէ Նորվեկիոյ համար: Նորվեկիա յամենայնի պահանջեց պահել իւր բաժանմունքը, և կարողոս ՔԵ բնաւ սաստկութիւն ի գործ չզրաւ պայն Շուէտի ենթարկելու. ինքզինքը հաւասարապէս թագաւոր ճանչնալով երկուց պետութեանց ալ, պահեց այն բաժանմունքը զոր սահմանադրութիւնը գծեր էր:

Իսկ ի Շուէտ օրէնսդրական մեծ յառաջադիմութիւնք եղան յամին 1865: Շուէտ ունեցաւ երկու Խօսարանք, Բարձր և Ստորին: Առաջնոյն երեսփոխանքը ինն տարուան համար ընտրուած էին գաւառական ժողովքներէ. և ի քաղաքս քաղաքապահական ժողովքներէ և ընտրեալը պէտք էր ըլլալ առ նուազն 35ամեայ և տարեկան առ նուազն 500 ֆրանքի եկամուտ մը ունենալ: Ստորին Խօսարանի երեսփոխանք կ'ընտրուէին երեք տարուան համար: Ընտրութեանց օրէնք ազատականք էին և որուն կը մասնակցէին քաղաքք և գիւղօրէք, ամենայն 25ամեայ որ փոքր տուրք մը կը վճարէր՝ իրաւունք ունէր ընտրութեան: Յամին 1866 Յունիս 22ին հաստատուեցան այս նոր կարգադրութիւնք: Արդէն քիչ առաջ ազատութիւն տուած էր կրօնից, ազատութիւն արհեստից և ուսումնական ուսուցչութեան. հաստատեք էր քաղաքապահութիւնը, նղեռնական և վաճառականական օրինագիրք և դաշինք առևտրոյ Գաղղիոյ հետ: Երկաթուղեաց շինութիւնը իւր ատենը մեծ մղունն առաւ. երկրագործութիւնը և արհեստք զարգացան, 1866ին ի Սղոքհոլմ Ցուցահանդէսը հռչակեց ընդ բովանդակ Եւրոպա՝ Շուէտի տնտեսական և արհեստական յառաջադիմու-

թիւնք: Ինքն ևս քաջ նկարիչ էր տեսլարանաց և ունինչանաւոր գործեր: Գրած է նաև ռազմագիտութեան մասին. և իւր բանաստեղծութիւնք ժողովրդականք եղած են: Կարողոս վախճանեցաւ ի Մալմոէ յամին 1872 Սեպտեմբեր 18ի: Իւր միակ արու զաւակը Քարլ Օսկար՝ վախճաններ էր երկամեայ, որով յաջորդեց իրեն իւր եղբայրը Օսկար Բ:

3. Պելճիւ Ա. Լէոփոլտ Ա. իր Սահմանադրական վարչութիւնը: — Դարուս յառաջադէմ ժողովրդոց պատմութեան մէջ միշտ առաջին կարգի մէջ դասուած է Պելճիա, նախանձելի օրինակ մը հանդիսանալով ամէն տէրութեանց:

1841 Լէոփոլտ Ա. յետ թագաւոր ընտրուելու Պելճիոյ և Լուի Ֆրիլիփի դստեր հետ ամուսնութեամբ ամբացընելու իւր գահը, ունեցաւ սակայն դաւեր ալ ի նըպաստ Օրանժի տան, որոց զլուխ եղեր էին վանտէրմէէր և վանտէրմիսէն զօրավարք. որոնք սակայն բնաւ արդիւնք մը ունեցած չէին: Յայնմհետէ գրաղեցաւ երկրին սահմանադրական կարգաց ճշգրիտ և եռանդուն գործադրութեան, որովք Լէոփոլտ Ա. օրինակ եղած և հռչակուած է սահմանադրական թագաւորի, այսպէս իմաստուն խոհականութեամբ ջանալով հաշտ պահել մէկմէկու հետ քաղաքական կուսակցութիւնք՝ որք անհնար է թէ չըլլան վարչութեան մը մէջ:

1836-40 Պելճիա իւր անկախութեան օրէն սկսեալ, երկու մեծ կուսակցութիւնք ունեցած է՝ կրօնական կաթողիկէ և աղատական: Եղաւ ժամանակ յորում քիչ մը ատեն այս երկու կուսակցութիւնք միաբանեցան: Առաջին տարիները Խոսարանին մէջ կաթողիկէ մասը ստուար մեծամասնութիւն մ'ունենալով, թագաւորը կուսակցութեան երկու գլխաւորներուն անուամբ՝ Թէօ—Նոթոմպ պաշտօնարանը կազմեց, որ վեց տարի երկիրը կառավարեց մեծ մղումն տալով վարժարանաց և Հասարակութեանց խորհուրդներուն՝ ընդարձակ արտօնութիւններ: Սակայն Թէօ պաշտօնարանը խնդրոյ մը վրայ փոքրամասնութիւն ունենալով,

հրաժարեցաւ և Լէոփոլտ կոչեց Ռոժիէ-Լըպօ ազատական պաշտօնարան մը, որ երբ ուզեց ցրուել: Խօսարանը, յորում մեծամասնութիւնը ի կաթուղիկէից էր, թագաւորը յանձն չառաւ և պաշտօնարանին զլուխ անցաւ դարձեալ Նոթոմպ: Ապա յաջորդեց Վան վէյէր՝ ազատական պաշտօնարանը և դարձեալ Թէօ կաթուղիկէ պաշտօնարան մը:

1841-45

Երբ ի Գաղղիա յամին 1848 ժազեցաւ այն Յեղափոխութիւնը որ տապալեց Օուէանեանց գահը, Լէոփոլտ Ա պաշտօնարանին զլուխ կոչած էր զՌոժիէ ազատական կուսակցութեան զլուխը, որուն հետ ընկերացեր էր այս անգամ Յրէր-Օրպան: Յիշեցի՞նք ուրիշ տեղ արդէն որ Լէոփոլտ Ա, ինքնայօժար հարցուց ժողովրդեան որ եթէ փափագող էր Հասարակապետութեան մը, ինքը պատրաստ էր հրաժարելու յԱթոռոյն: Սակայն այս անհիշխանասիրութիւնը և իւր սահմանադրական ընթացքը, արդէն գրաւեր էին բովանդակ ժողովրդեան սիրտը, որ համակրալից ցոյցերով յայտնեց որ բնաւ չէր ուզեր բաժնուիլ իւր թագաւորէն զոր իբր հայր մը կը նկատէր: Յամին 1856 ժողովուրդը մեծ և շքեղ հանդէսներով տօնեց իւր գահ ամբառնալուն 25դ տարին: Երբէք թագաւոր մը առաւել սիրալիր և զգայուն ցոյցեր ունեցած չէր: Լէոփոլտ Ա յայնմհետէ ևս շարունակեց նոյն սահմանադրական ընթացքը առանց մասնաւոր միտումն ցուցընելու որ և է կուսակցութեան և ինքզինքը գերի համարելով ժողովրդեան բարւոյն: Յամին 1857 Ողորմութեան ընկերութեան օրէնքի մը առթիւ՝ յետ շառաչալից պայքարներու, որոնք ունեցան իրենց արձագանգը նոյն իսկ ի փողոցի, Լէոփոլտ զազատական կոչեց վարչութեան զլուխ և որոնք կառավարեցին մինչև 1870: Իւր յետին մեծ արդիւնքը եղած է Էպօյի մուտքին ապահարկութիւն ստանալը, ուր ամէն նաւ մտած ժամանակ տուրք մը կը վճարէր Հոլանտայի: Լէոփոլտ թէպէտ ծեր և տկար, այս բանիս համար ուղեորութիւն մը յանձն առաւ այլ և այլ արքունիքներ և առանց կռուոյ, բարոյական իւր մեծ ազդե-

ցուծեամբ որով պատկառելի եղած էր բովանդակ Եւրոպիոյ իշխողաց, կրցաւ իւր փափագածը ձեռք բերել: Մեռաւ յամին 1865 թողլով անմահ անուն մը իւր հպատակաց մէջ և համբաւ իմաստնագոյն թագաւորի այս դարուս մէջ:

4. Լէոփոլտ Բ: — Լէոփոլտ Ա. նոյ յաջորդեց իւր որդին Լէոփոլտ Բ, ծնեալ յամին 1835, որ ի ծննդեանէ կը կրէր Գուքս Պրապանդի պատուանունը: Լէոփոլտ Բ դեռ չթագաւորած՝ ուղևորեց էր ընդ բովանդակ Եւրոպա, յԱրևելս, յԵգիպտոս ի Հնդկաստան և ի Չինաստան: Իւր հօրը մահուընէ վերջը, ժողովուրդը անմիջապէս սիրոյ և յարգանաց եռանդուն ցոյցերով զինքը թագաւոր հռչակեց: Լէոփոլտ Բ իւր հօրը նման ժողովրդասէր բարուք, վարչութեան մէջ ևս նոյն սահմանադրական շաւիղը ընտրեց: Եւ սակայն իւր թագաւորութիւնը ի սկզբան ունեցաւ դժուարին վայրկեաններ. վասն զի մինչ Նարոլէոն Գ. կը յայտնէր իւր մեծ համակրանքը առ նա, գաղտ կը բանակցէր ընդ Բրուսիոյ, գՊելճիա Գաղղիոյ հետ միացնելու համար: Յամին 1869 Գաղղիոյ երկաթուղեաց Արևելեան ընկերութիւնը ուզեց գնել Լիւսսամպուրի Դքսութեան երկաթուղիք. աստի մեծ անհամաձայնութիւնք ծագեցան ընդ Գաղղիա և ընդ Պելճիա որ վերջացաւ յետ բազում բանակցութեանց ընդ Ֆրէր Սրպան՝ Պելճիոյ կողմանէ և ընդ տը լա Կէրրոնիէր՝ Գաղղիոյ կողմանէ: Յամին 1870 Ազատական կուսակցութիւնը յետ երեքտասան ամ վարչութեան գլուխ մնալու, նոր ընտրութեամբ կը կորսնցնէր մեծամասնութիւնը և թագաւորը պաշտօնարանին գլուխ կը կոչէր կաթողիկէ կուսակցութիւնը, որուն գլուխ էր Պարոն տ'Անըթան: Քիչ վերջը կը յառնէր գաղղիա-բրուսիական պատերազմը:

5. ՀՈԼԱՆՏԱ. Գուլիէլմոս Գ. — Յամին 1849 Մարտ 17 ի Հոլանտա Գուլիէլմոս Բի կը յաջորդէր իւր որդին Գուլիէլմոս Գ: Դեռ քիչ առաջ հռչակուեց էր ի Ստորին Նահանգս Սահմանադրութիւնը, և սակայն նոր թագաւորը հաւատարմութեամբ ջանաց ի գործ գնել զայն: Մա-

տակարարութեան ամէն ճիւղերը, թղթատունք, Գատաւ-
տանարանք հասարակութիւնք, ամէնն ալ ժամանակին
պահանջից համեմատնոր բարւոքմունք ստացան: Հոլան-
տա դրամական լաւ վիճակ մը չունէր. Գուլիէլմոս Գի
մեծ փոյթը եղաւ Ելեմտից հաւասարակչութիւնը հաս-
տատելու, ամենուն յանձնելով խղճիւ խնայութիւն մտցը-
նելու իւրաքանչիւր մատակարարութեան մէջ. և ինքը ևս
սիրով փափագեցաւ որ իւր տարեկան թոշակէն 400,000
ֆիորին առնուին, որով կը մնային միայն 800,000
ֆիորին: Հոլանտա մինչ նորադանդ է կր.նիւք, Գու-
լիէլմոս Գ կրօնից հաւասարութիւնը պաշտպանեց և
Հոլովմէական Եկեղեցւոյ հրաման եղաւ ունենալու
բարձրաստիճան եկեղեցականութիւն ի Ստորին Նա-
հանգս: Միանգամայն բազմաթիւ ջրանցքներ բացուե-
ցան և Հարլէմի ճախճախուտը և ծովը ցամքեցաւ և
երկաթուղեաց շատ գծեր ձգուեցաւ: Ղրիմու պատե-
րազմին ժամանակ Գուլիէլմոս անկողմնակալ չէզոքու-
թիւն մը պահեց, և գոհացաւ միայն խնդրել յիւր անե-
րորդւոյն ի Նիկողայոս կայսրէն, որ խաղաղութիւնը
պահպանէ: Երկու անգամ նախ յամին 1861 և ապա
1862 առ Նարոլէոն Գ եկած է ի Բարիզ, բարեկա-
մութիւնը ամրապնդելու համար:

1836

Հոլանտա գաղթականութեանց մէջ ևս ունեցաւ իր
յաջողութիւնքը: Արդէն յամին 1849 Պալի կղզւոյն մէջ
մեծ յաջողութիւնք ունեցեր էր. յետոյ յաղթեց Չի-
նաց, որով ստացաւ զՊոռնէօ. ապա յամին 1873 և
1874 ունեցաւ երկար կռիւններ Աչինի Սուլթանին հետ,
յորս թէպէտ յաղթական հանդիսացաւ, սակայն ունե-
ցաւ նաև նիւթական մեծամեծ զոհողութիւնք:

6. ԶՈՒԻՑՑԵՐԻ: — Յետ Սոնտէրպուենտի կռուոյն, զոր
տեսանք արդէն Պատմութեանս Ա Հատորոյն մէջ,
Զուիցցերի խաղաղ ընթացքով մը կրկին ստացեր և
չարունակեր էր իւր նահանգական վարչութիւնը, ե-
թէ արհեստական և եթէ քաղաքական մեծամեծ օ-
գուտներով, և մանաւանդ ուսումնական և վարժարանա-
կան յառաջադիմութեամբք, որովք ընդ երկար և ցարդ
Զուիցցերի իբր օրինակ մը հռչակուած է կրթական

և մանկավարժական հաստատութեանց : Եւ պէտք չենք կարծել որ Զուիցցերի միայն ապաւէն մը եղաւ բազում ազատական մտքերու , հնոց մը ուսկից ծագեցան բազում հրդեհք . այլ և տածեց , սնոյց , և յառաջ բերաւ բազում մարդասիրական գաղափարք և ընկերութիւնք : Յիշենք միայն Կարմիր Խաչի ընկերութիւնը , յորում առաջնագոյն արդիւնքը ստացած է ձիւնեւա քաղաքը և որոյ անուամբ շատ անգամ կը յիշուի այդ ընկերութիւնը :

7. Համաձայնութիւն Ճինսերայ — Կարմիր Խաչ : — Հազարաւոր դարեր սահեր էին առանց երբեք մտածելու որ վերջապէս հարկ էր մեզմացնել պատերազմաց անհուն աղէտքը : Այս դարուս մէջ , յորում մարդասիրական հաստատութիւնք , աւելի ընդարձակութիւն մը ստացան , բազում մտքերու մէջ ծնաւ այն հարցը որ ինչո՞ւ այսքան անգթութիւնք և ի պատերազմի և յետ պատերազմի իսկ , ընդդէմ այն անձանց որոնք ըստ ինքեան բնաւ չունէին պատասխանատուութիւն , որով և արդարացեալք պէտք էին ըլլալ առաջի մարդկութեան , ինչպէս էին անպատասխանատուք առաջի գերագոյն Արդարութեան : Խեղճ զինուորը և սպայն , շատ անգամ սողատ և դժբաղդ ընտանեաց զաւակ , ինքը պիտի կռուէր և մեռնէր . և եթէ մնար ողջ վիրաւոր կամ գերի , զուրկ պիտի մնար յամենայն հոգոց և ստէպ ենթարկեալ անստանելի կեանաց և ցաւոց : Նոյն իսկ եթէ ըլլար իսկ պատասխանատուութիւն մը , վատ է նախատել զպարտեալը , մանաւանդ թէ վիրաւոր : Այս գաղափարը Գարուս կիսուն սկսեր էր ընթանալ մարդասէր ոգիներու մէջ : Արդէն տեսանք որ Ղրիմու պատերազմին ժամանակ Նայթիկէլ օրիորդը , աւողմապահական ընկերութիւն մը կազմեր էր ի Ղրիմ և ի Կ . Պօլիս , վիրաւորաց օգնելու համար : Եւ սակայն այդ դեռ առանձին պատահական հաստատութիւն մ'էր :

Վիրաւորաց օգնելու ընկերութեան մը գաղափարը ծնաւ 1859ի Իտալիոյ պատերազմին ժամանակ . և Վաղդիա և Իտալիա մէկ մէկու կը մրցին նախնական սկզբը .

նաւորութեան համար¹ : Սակայն թողլով այս վէճը, 1859էն մինչև 1863, այդպիսի ընկերութեան մը գաղափարը դեռ էութիւն մը առած չէր և նախ ի ճիւնկրա հաստատուեցաւ ընկերութիւն մը, որուն նախագահն էր Կիւսդավ Մուանիէ, տարածելու նպատակաւ ամէն սրգաց իշխաններու մտաց մէջ այսպիսի համաշխարհական հաստատութիւն մը կազմակերպելու կարեւորութիւնը, որով պատերազմի ժամանակ վիրաւորք, վիրաւորաց կառախումք և ծառայող անձինք սզատք համարուին : Եւ սակայն ճիւնկրայի ընկերութեան գաղափարը ի սկզբան մեծ հակառակութիւն կրեց ի զինուորականաց, որոնք պատերազմի մը ժամանակ չէին կրնար ըմբռնել բանակաց մէջ քաղաքական և այն երբեմն օտար մարմնոյ մը ներկայութիւնը : Այսու հանդերձ մարդասիրական ոգին առանձնական բանախօսութեամբք վաստկեցաւ ազգաց մեծամասնութիւնը և տասն և ութ պետութիւնք ընդունեցան Նախագահին հրաւերը ի ճիւնկրա, և ներկայացուցիչք զրկեցին 1863ի Հոկտեմբեր 23ի սկսած գումարմանց : Հոն նախ պաշտօնապէս հաստատուեցաւ վիրաւորաց օգնելու համազգային ընկերութիւնը, որոց անդամք թեքնուն վրայ սպիտակ ժապուէնի կարմիր խաչ մը կրելուն համար, ընկերութիւնը կոչուեցաւ նաև Կարմիր Խաչի Ընկերութիւն : Ըստ որոշողութեանց ճիւնկրայի համաձայնութեան, ամէն ազգ պիտի ունենար ինքնավար կարմիր խաչի հաստատութիւն մը, իւր կեդրոնական տեսչութեամբ : Ամէն ազգաց կարմիր խաչի ընկերութիւնք մէջերնին յարաբերութիւնք պիտի ունենային, և ըստ պարագային փոփոխակի պիտի առաջարկէին իրենց նպաստը : Եւ որովհետև պատերազմի ժամանակ յանպատրաստից չէր

1. Գաղղիացիք արդիւնք կը համարին Հանրի Տիւնան չեղինակին Յուլի Ալֆրէնայի գրութեան : Իսկ Խաչապիք նախկին գաղափարը կ'ընծայեն Փերտինանտ Փալաշիանոյ կոմսին : Ներկայ տարւոյս (1896), Նափոլիի գերեզմանատան մէջ մեծազորք դամբանարան մը կառուցին իրեն :

կարելի փութով կազմակերպել ամենայն կարևորք, անոր համար ընկերութիւնք խաղաղութեան մէջ ալ միշտ պատրաստութիւն պիտի տեսնէին մասնաւոր պաշտօնակարգօք: Իսկ ի պատերազմի պիտի ըլլային զօրավարաց հրամաններու և տրամադրութեան ներքև: Եւ որպէս զի անընդհատ ըլլայ ամէն ազգաց ընկերութեանց մէջ հաղորդակցութիւնը, ընկերութեանց զլիաւորք իրենց վիճակին վրայ պիտի տեղեկացնէին ձինկերայի կեդրոնական ընկերութիւնը:

Ասոնք սկզբնական որոշողութիւնք էին, որոնք երթալով ընդարձակուեցան և նոր սահմաններ հղան բժըկաց և դեղօրէից պատրաստութեան նկատմամբ, միանգամայն անբոնոսարելի ընելով ամենայն անձն որ կը պատկանէր Կարմիր Խաչի, զոր անխտիր պէտք էր որ կրէին ամէն ազգաց ծառայողք: Այնքան փութով տարաժուեցաւ այս մարդասիրական ընկերութիւնը, որ 1866ին արդէն ձինկերայի Համաձայնութեան մասն կը կազմէին Եւրոպայի բովանդակ Պետութիւնք յորս և Տաճկաստան¹: Դարձեալ Ամերիկայի Միացեալ Նահանգք, Արժէնտինայի Հասարակապետութիւնը, Փէրու, Ճափոն, Քոնկո, և եւրոպական ազգաց գաղթականութիւնք: Իզան որոնք ուզեցին ընկերութեան Միջազգայն² անունը տալ, սակայն ցարդ մնացած է Կարմիր Խաչի յորջորջմամբ, անբաւ բարիքներ յաւաջ բերելով պատերազմի ահաւոր աղիտից ժամանակ: Այսպէս մարդիկք հնարագիւտ գէնքերով մեծամեծ աղէտք յառաջ կը բերեն, լաւագոյն չէր իսպառ աղիտից առաջքը առնուլ³:

1. Ի Տաճկաստան այդ ընկերութիւնը կը կոչուի Կարմիր Մահիլի:

2. Internationale.

3. Դարուս կէսէն վերջը ի զուր ջանաց Խաղաղութեան Ընկերութեան մը պետութիւնքը համոզելով միջազգային Դատաստանարանք հաստատել պատերազմաց առջև առնելու և անոր վաստակաւորաց մէջ յիշենք երկու մեծ մարդասէր իմաստասէրք՝ գաղղիացին ժիւլ Սիմոն և իտալացին Ռուճիէրօ Պոնկի:

ԶԵԹՈՒՆ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

(1819 — 1879)

1. Զեթունի վիճակը մինչև ժԹ Դարուն սկիզբները. — 2. Զեթունի ինքնավարութիւնը մինչև ցամա 1862. — 3. Պատճառք և Պատերազմ 1862ի. — 4. Յաղթութիւն Զեթունցոց. — 5. Յանձնաժողովք Բ Դրան. — Նաքուէոն Գի միջամտութեան պատճառ. — 6. Իշխանք Զեթունի ի Կ. Պօլիս և Գերապ. Հասունեան Նախազան արքեպիսկոպոս Հռովմէական Հայոց. — 7. Բարձուճ ինքնավարութեան Զեթունի. — 8. Ապստամբութիւն Զեթունի յամին 1876 — Պատերազմ Ֆոնուզի — Շինութիւն ի Զեթուն թուրք զինուորանոցին :

1. Զեթունի վիճակը մինչև ժԹ Դարուն սկիզբները¹: Ժամանակակից Պատմութեան մը վերաբերեալ դէպքեր հաւաքելու միջոցնիս, անհնար է մեզ Օսմանեան Պետութեան անցից մէջ շիշել այն նշանաւոր մրցմունք և կռիւք որոնք տեղի ունեցան Կիլիկիոյ անկիւն մը, յարեմուտս ի հիւսիս, ընդ երկար ժամանակ, և մանաւանդ յամին 1862 Ապտիւլ Ազիզի կայսրութեան առաջին տարիները, ընդ Օսմանեան Պետութեան կուսակալս և ընդ հայ բնակիչս Զեթունի. որոց

1. Ընդհանուր սովորութիւն է յԱզգիս զԶեթուն՝ Զեթուն գրել: Մէք նետեցանք ձեռագրոց յիշատակարանաց և մանաւանդ վ. Հ. Ղևոնդ վ. Ալիշանի որ Սիսուանայ մէջ կ'ըսէ « Թէ ոչ հաւանիմք ի ձիթենւոյ ընծայել անուանդ », ինչպէս առ հասարակ կ'ուզեն ընդունել նոր լրագրիք: Ապաքէն ևս զԶեթուն ըստ հայաստանեայց, հարկ է նշել Զիթուն:

սակայն այդ ազնուական յետին ճգունք, ի պահպանութիւն կրօնից, կենաց, ընտանեկան պատուոյ և ընդդէմ ինքնագլուխ հարստահարութեանց կուսակալաց, և նոյն իսկ իրենց տարած յաղթութիւնք, փոխանակ խրախուսանաց և կամ դարմանի մը, ամենեին տխուր հետեանք մը ունեցան այն հին ինքնավարութեան համար, զոր շատ ժամանակօք վայելեր էին Չեթունի Հայք, և զոր գրեթէ միշտ յարգեր էին և հաշտ ապամբ դիտեր էին Օսմանեան Պետութեան հզօր և աշխարհակալ կայսերք, իբրև յետին փոքր մնացորդ մը մեծափարթամ կորուսեալ ժառանգութեան մը և կամ արժանաւոր վայելք մը և վարձք արի և սրտոտ ժողովրդեան:

Ռուբինեան թագաւորութեան անկմանէն վերջը, Չեթուն առաջին օրինակը չէ ինքնավար կառավարութեան մը: Նոյն դրութեան մէջ գտնուած են կանխաւորիչ հայաբնակ ամուր տեղեր և առաւել թիւրքմէն ցեղեր, որոնք ընկճեալ իսկ ըլլալով զօրաւորագոյն պետութենէ մը, հաղորդակցութեանց սակաւին դժուար ժամանակներու մէջ, կարողացան ընդ երկար համեմատական ազատութեամբ և ինքնավարութեամբ ապրիլ. ոչ առանձին կազմելով իշխանութիւն կամ Տէրութիւն մը, այլ հարկատու միայն ըլլալով զօրաւորագունի մը և այս զօրաւորագոյնը կրնար չըլլալ միշտ նոյնը, բայց երկիրը կը մնար դարձեալ նոյն ներքին ինքնավարութեան մէջ, եւրոպական միջինդարեան հասարակութեանց և կամ բերդատէրութեանց կերպարանքին ներքև: Արդեօք Չեթունի այսօրինակ ինքնավարութիւնը որչափ հնութիւն ունի չենք կրնար ճշգրիտ ըսել. բայց ստոյգ է որ դարերէ ի վեր էր, եթէ իւր աշխարհագրական և անառիկ դրիցը նայինք, պէտք ենք հաստատել որ Չեթուն բեկոր մ'էր հայկական իշխանութեան որ փշրեցաւ Վեոն Զի բռանց մէջ. նա զի այն լիբանց բնակիչք, չէ կարելի որ այլ օրինակ ապրած ըլլան¹:

1. Չենք գիտեր ինչ հաստատութիւն տալ ժողովրդական այն ա-

Զեթունի բնական դիրքը յետին ժամանակներս շատ և շատ անգամ նկարագրուած է, մեզ կը մնայ այդ մասը զանց առնելով փութով դիմել պատմականին։ Զայս միայն ըսենք որ՝ պատսպարեալ յամենուտ բարձր լեռներէ, նեղ և զաղտագողի անցքեր անառիկ և անմատչելի կ'ընեն զինքը. և Զեթունցին ընդերկար վրէժխնդիր և նախանձոտ այդ ձորերուն և կիրճերուն զաղտնեաց, բնաւ յանձն առած չէ որ օտար մը այց ելլէ և հմտանայ անոնց. և առաջինն եղաւ Վիկտոր Լանկլուա որ զօրաւոր միջնորդութեամբք, ընդունեցաւ հրաման յամին 1852 այց ելլելու Զեթունի և ծանօթացնել Եւրոպիոյ այդ արի և իւր նախնի կարգաց հետեող եռանդուն ժողովուրդը, իրեն բնիկ նահապետական և պարզ օրինօք և սովորութեամբք հանդերձ։ Ժողովուրդ մը որ իւր հայութեամբ հանդերձ կը տարբերի միւս ամէն զաւառաց հայերէ, որուն համար մատենագրութենէ, քերթողութենէ, ողբերէ և համակերպութիւնէ վեր համարուեր են՝ զէնք, միշտ զէնք և ազատ լեռներ։

Զեթունի բնակիչք միշտ 17,000էն աւելի համարեալ են, որոց վարչութիւնը յանձնեալ էր չորս իշխանաց, ասոնք կ'ընտրուէին ժողովրդենէն և ժողովուրդը կարող էր փոփոխել։ Իոքս միարան ընդ ժողովոյ և ընդ Նախագահին որ էր Զեթունի արքեպիսկոպոսը, դատաստանները կը տեսնէին, վէճերը և խռովութիւնքը կը հանդարտեցնէին, ծանր յանցաւորքը Զեթունէն կ'արտաքսէին, և ըստ իւրաքանչիւրին կարողութեան տուրքերը կը սահմանէին, որոց հաւաքումը յանձնեալ էր իւրաքանչիւր թաղի թաղապետաց (քեահեայ)։ Տրոց մաս մը կը տրուէր Օսմանեան Պետութեան ներկայացուցչին ի Մարաշ, մաս մը Ստոյ կաթողիկոսին, Զեթունի արքեպիսկոպոսին և միւս եկեղեցականաց։

Լանդութեան որ հրովարտակաւ մը Սուլթան Սելիմ (հաւանօրէն Առաջին) տուած ըլլայ այդ ինքնավարութիւնը, և թէ դաբուս սկիզբները հրովարտակը մատնչի մը ձեռքով տարուելով ի կ. Պօլիս, վաճառուած ըլլայ Բ. Իրան։

Գիւղերը ունէին իրենց գիւղապետքը և փոքրիկ խորհուրդք ժողովրդականաց, որոնք կը հաւաքուէին բարձր ծառոց ներքև կամ առուակի մը եզերք. հոն կը խաղաղեցնէին վէճերը, կը հաւաքէին տուրքերը, և ըստ հարկին մարտիկ կը ժողվէին իրենց պաշտպանութեան համար: Ի Զեթուն պէտք եղած ժամանակ ամենայն դէպքերու էր, 16 տարեկանէն մինչև 60 տարեկան, և կրցած է ունենալ 7000 պատերազմող: Զեթունցոց հետ շատ անգամ միացած են նաև այն թիւրքմէնք, որոնք Զեթունի երեք գիւղերը բնակելով հայերէն լեզուին հետ առած են անոնց սովորութիւնքը և ազատ լերանց սէրը:

2. Զեթունի ինքնավարութիւնը մինչեւ ցամախ 1862: Զենք կրնար ստուգիւ ճշդել այն ժամանակը յորում Զեթուն սկսաւ ունենալ ընդհարումներ Օսմանեան Պետութեան հետ իւր ինքնավարութեանը համար, սակայն կը տեսնուի որ անցեալ դարու վերջերը յետ այլ և այլ կոիւնքերու վերջապէս երկուստեք դաշինք մը դրուած պիտի ըլլայ, որ Զեթուն մնայ իւր ինքնավար վիճակին մէջ, սակայն վճարէ Օսմանեան Պետութեան և կամ լաւ ևս ըսենք Մարաշու կուսակալին և թիւրքմէններուն 60,000 դահեկան: Զեթունցիք չուզելով մերթ ընդ մերթ երկրի անյաջող տարիներու մէջ վճարել, ստէպ նորէն պատերազմներ կը ծագէին. և այս օրինակ կռիւ մը կը յիշուի նաև 1819ին:

Երբ Իպրահիմ փաշա, Եգիպտոսի Մէհէմմէտ Ալիի աշխարհակալ որդին (1830 — 1841) յաղթական քայլով դիմեց Օսմանեան Պետութեան վրայ, Զեթունցիք չուզեցին բնաւ իրեն հետ միանալ ընդդէմ Տաճկաստանի, և Իպրահիմ փաշա թէպէտ Նիզիպի յաղթութեամբ տիրեց Ուրֆայի, Մարաշի և Տարուսեան լերանց, սակայն այդ տիրապետութիւնը բնաւ այլայլութիւն մը չբերաւ Զեթունցոց վիճակին, որոնք իրենց անմատչելի լերանց մէջ շարունակեցին նախկին ինքնավարութիւնը: Նոյն վիճակի մէջ էին և մնացին դարձեալ երբ 1841ի Պէրութի և Աքբայի ուժակոծմանէն վերջը Իպրահիմ փաշա ստիպուեցաւ Տաճկաց

ձեռքը թողուլ այդ քաղաքները: Իսլրահիմ փաշայի արչաւանքէն վերջը զօրացան առանձնական ցեղեր, յորս Չափան-Օղլու և Քօզան-Օղլուները որոնք ուզեցին ազդեցութիւն մը ունենալ Զեթունի վրայ, բայց չյաջողեցան: Զեթունցիք հանգիստ ապրելու համար դարուս կէսին միջոցները պզտիկ տուրք մը կը վճարէին Քօզանի Որդւոց:

Բարձրագոյն Գուռը մինչև ցամօ 1848 թիւրքմէն Պէկերու ձեռք ձգած էր Մարաշի և Ատանայի կուսակալութիւնք, որոց հետ էր միշտ Զեթունցւոց վէճը տուրքերուն մասին: Բայց երբ 1848ին Բ. Գուռը սահմանեց անկէ վերջը Կ. Պօլսէն կուսակալներ զըրկելու այդ երկու քաղաքաց ալ, այն ատեն դժուարացաւ Զեթունցւոց դրութիւնը, անկէ վերջը գործերնին էր Սամանեան պետութեան մը հետ: Եւ պէտք է ըսենք որ թուրք վարչութիւնը զԶեթուն կը նկատէր անշուշտ իբրև զմին ի հազարաւոր Գեթեյութեանց (Չորիչխանութեանց) որովք լի էր Անատոլու և զորս կը թողուր Բ. Գուռը անմիաս մինչև դարուս սկիզբները. և երբէք փորձած չէր կանոնաւոր պատերազմ վարել ընդդէմ Զեթունի՝ լիազօր բանակներով: Այսու հանդերձ 1848էն վերջն իսկ այլ և այլ անգամ մերժեցին աւելի տուրք վճարելու և փոքրիկ ընդհարումներու մէջ յաղթող գտնուելով, անդէն շուտով կ'ամրանային լեռները:

Տրոց դժուարութեան մասին խօսած ժամանակնիս, ճշմարտութեան համար պէտք է ըսենք որ Զեթուն իր գեղեցիկ ծառաստանաք և ջուրերով հանդերձ, շատ աղքատ երկիր մը եղած է, ուր ինչպէս ի Սպարտա, մշակութիւնը անհոգ մնացած է: Երկիրը երկաթի հանք ունենալով, ժողովուրդը խնամք տարած է աւելի երկաթագործութեան, թողլով մէկդի ուրիշ աշխարհաց հետ յարաբերութիւնք և վաճառականութիւնք, որ հայ ազգին դրոշմը կը կազմեն աշխարհիս ամէն կողմ, և տրոց նեղութիւնը բնական հետեւանք մ'էր այսօրինակ կացութեան:

Յամէն 1852 սկսեալ, Մարաշու կուսակալք ի զուր

դրամ պահանջած են, յորս նախ Զիա փաշա որ փոխան 60,000 դահեկանաց 150,000 ուզեց: Զեթունցիք բողոքեցին և չվճարեցին: 1856ի նոյն փորձ ըրաւ Մինիպ փաշա, պահանջելով 160,000 դահեկան, և երբ Զեթունցիք չվճարեցին, բազմաթիւ գունդերով դիմեց վրանին, սակայն յետս վանեցաւ: Նոյն բաղդը ունեցաւ նաև Խուրչիտ փաշա որ 1860ին Յունիս 8ին բազմաթիւ կանոնաւոր զինուորօք, չէրքէզներով և թաթարներով ընդ ամէնը 12,000 հոգևով դիմեց Զեթունի վրայ: Տասիկք կորուսին զինուոր, պաշար և թնդանօթ իսկ, և յետս նահանջեցին: Այս յաջողութեամբ հանդերձ սակայն Զեթունի վիճակը երթալով կը դժուարէր, մանաւանդ այն բազմաթիւ չէրքէզ, նուրայ և թաթար լեռնական գաղթականութեանց պատճառաւ, զորս Բ. Դուռը հիւրընկալելով ի Կաւկասիոյ լեռանց, մասնաւոր դիտամար կը սփռէր Անատոլուի մէջ և մանաւանդ ի Կիլիկիա, ուր, ըստ վկայելոյ ազգահամարի մը, 1858էն մինչև 1862, 30,000էն ուելի չէրքէզք տարուեցան, որոնք սկսան բռնանալ և աւրչտկել ամէն կողմ, մանաւանդ Զեթունի մօտերը:

3. Պատճառք եւ Պատերազմ 1862ի:— Զեթուն այս տագնապեալ վիճակի մէջ էր, երբ յառաջ եկան այնպիսի պարագայք, որոնք ծնան իր զօրաւոր ընդհարումը Օսմանեան Պետութեան հետ: 1862ի կոռոյն սկզբնապատճառը ոմանք կը համարին Ազիզ փաշա Մարաշու կուսակալին շափագանց պահանջը, որ կը պահանջէր ներկայ տարւոյն համար տուրք, 95,296, և անցեալ պարտքէն (պաքըէ) 1,777,097 զրուչք. և որովհետև, ինչպէս յայտնի է, մերժեցին Զեթունցիք այս վճարքը, ատկէ ծագեցաւ պատերազմը: Սակայն ժամանակին անտիպ տեղեկագիր մը Մարաշու Հայոց առ Բ. Դուռը, և նոյն իսկ Զեթունցւոց բողոքին պատճառը առ դեսպանս Մեծ Պետութեանց, հողային խնդիր մը կը դնէ, և ինչպէս կը հաստատէ նաև Սիսուանայ մեծանուն գրիչը: Արդ ըստ վերոյասացեալ Տեղեկագրոց, 1862ի ամառուան մէջ վարուցանի հողի մը համար թուրք Քերթմէն գիւղի բնակչաց մէջ

անհամաձայնութիւն և կռիւ մը կը ծագի և մին միւսոյն վրայ կը բռնանայ : Տկարացողք օգնութիւն կը խնդրեն թուրք Պէշէն գիւղէն :

Պէշէնցւոց հասնելով՝ կռիւը աւելի կը սաստկանայ և երկու կողմանէ սպանութիւնք կ'ըլլան : Պէշէնցիք կը վանուին . որոնք կը դիմեն օգնութիւն խնդրելու Ալապաշ կոչուած հայ գիւղի գլխաւորներէն : Գիւղապետը Կարապետ՝ և քեահեայն Յակովբ, Ալապաշցի ընկերներով կը դիմեն կռիւը խաղաղացնելու , բայց Քէրթմէնցիք մեծապէս կ'ընդդիմանան և անոնց վրայ կը յարձկին . ասկէ կռիւ մը ծագելով Պէշէնցիք ալ և Ալապաշցիք կը սպաննեն հակառակորդացմէ զոմանս , և երբ տեղերնին կը դառնային յաղթական , Քէրթմէնցիք հտեւնէն ինկնալով սպաննեցին զՅակովբ ալապաշցի քեահեայն : Այն ատեն իւր վեց եղբարքը յետ տանելու զմարմինը Փրկիչ վանքը , դիմեցին փախըստական Քերթմէնցւոց ետեւէն , եղբորը մահուան վրէժն առնելու . բայց մարդ չգտան , և ըստ վկայելոյ Զեթունցւոց տեղեկագրին , առանց փնասելու դարձան տըներնին և ամէն մարդ իւր գործին զբաղեցաւ :

Այս պատահարաց միջոց Կիւլ Ալի անուամբ մարաշցի ականաւոր տաճիկ մը , ռիսերիմ ատեցող քրիստոնէից , համբաւ տարածեց քաղաքին : « Էջ , որ « Կեաւուրք (Հայք) կը կոտորեն անիրաւարար զմահմէտականս » , և Ազիզ փաշայի դիմացն ելլելով , արդարութիւն կը պահանջէր : Փութով Ատեանը գումարուեցաւ և Հայոց հակառակ մահմէտականք յետ բողոքելու աղմկաւ , հաւատացուցին Ազիզ փաշայի որ Ալապաշցի հայերը երեք մահմէտական տղայք սպաններ էին և հարկ էր ջնջել անհաւատները : Կուսակալը գըրգոռալ և զայրացեալ , շուկայէն բռնել տուաւ երեք գեթունցիներ և բանտը դրաւ : Պատուէր ևս ղրկեց ամէն կողմ՝ որչափ գեթունցի բռնեն , իրեն ղրկեն . միանգամայն հրաման հանեց որ աղատագլուխ (պաշիպօզուք) զինուորք հաւաքուին , և հարիւր ձիաւոր ղրկեց բռնելու ձիհան Քէօփրիւսիւ կամուրջը որ Զեթունի ճամբուն վրայ է : Զեթունցիք իմանալով այս ամէնը բողոքեցին

առ փաշայն որ իրենք բնաւ մաս մը շուենին այս խընդրոց մէջ, և թէ երեք տղայոց սպանութիւնը ստուծիւն մ'էր. ինչպէս կրնար ստուգել: Զեթունցիք եղելութիւնքը գրեցին նաև առ հիւպատն Գաղղիոյ ի Մարաշ՝ Պ. Մոլինարի, որպէս զի խօսի առ կուսակալն, և եթէ կան յանցաւորք « թող պահանջուին ըստ հաստատեալ կարգաց »: Հիւպատն խօսեցաւ առ կուսակալն, բայց անօգուտ տեղ. Զեթունցիք գրեցին և առ Անգղիոյ հիւպատն Հալէպի Պ. Եօբայն՝ որ գիմեց հասնելու ի Մարաշ¹:

Արդէն այս միջոցիս 5000էն աւելի ազատագլուխ գինուորք, թաթարք, շէրքէզք, թիւրքմէնք մտեր էին յԱլապաշ, սպաննելով ո՛վ որ ձեռքերնին ինկաւ, այրելով և քանդելով սուռն, տեղ: Փութով սարսափը տիրեց ամէն կողմ: Բազմութիւն մոլիսանպից կը քարոզէին որ այս « Կրօնից պաշտպանութեան կոիւ էր » և ահաւոր հրացայտ աչքերով հրամանի մը կը սպասէին անդէն խողխողելու բոլոր քրիստոնեայք: Մարաշի մէջ եղող քրիստոնեայ ազգեր Հայք, Յոյնք, Ասորիք ևն գիմեցին առ Ազիզ փաշա պաշտպանութիւն և հովանաւորութիւն խնդրելու: Նա խոստացաւ որ հանգիստ ըլլան, միայն թէ գէնքերնին իրեն յանձնեն, զորս հաւաքելով անմիջապէս բաշխեց մահմէտականաց: Արդէն իւր քովն ընդ հեծեալ և ընդ հետևակ 6,000 զինուոր հաւաքեր էր և Յուլիս 7ին շուեց ի Ճիհան Քէօփրիւ, երեք ժամ հեռու Զեթունէն, ամէն կողմ հրատարակելով հրաման կողոպտելու Զեթունցւոց ինչքը. և ինքը ևս հասնելով Չապլը-Տէրէ գիւղը, որ 150 տնէ բաղկացեալ էր, տներուն դռները կոտրել տուաւ, որովհետև գիւղացիք զայնս փակելով փախեր էին, նոյնը ըրաւ նաև եկեղեցւոյն և ամենուն միարան կրակ

1. Ժամանակին անգղիական լրագիր մը որ կը հրատարակուէր ի Կ. Պօլիս, Լէվընդ Հէրալտ, այլընդայլոյ լրերով կ'ուզէ պնդել Հայոց տղայ սպաննելը և Զեթունի բնակիչքը կը նկարագրէ իբր ապստամբ, վայրենի, բարբարոս և արիւնարբու գազաններ:

տուաւ : Երկրորդ օրը հասաւ յԱլապաշ, ուր երեք հարիւր Հայք ընդ առաջ կ'ելլեն փաշային ջանալով գինքը համոզել : Այս բանակցութեան միջոց կանայք և սղայք ժամանակ կը գտնեն փախչելու ի Զեթուն : Ալապաշի ալ 180 տունք և եկեղեցին յետ կողոպտուելու, կրակի կը սրուին : Յետոյ կը շուեն Իլիճայի հովիտը, մօտ յԱմենափրկիչ վանքը, ուր կը խողխողեն, երեք քահանայք, դպիրը և պառաւ մը և շուն մը ևս սատկեցնելով, դիակը անոնց մարմնոց վրայ կը նետեն . կը յափշտակեն բովանդակ եկեղեցական և սրբազան անօթք, սպապ, հանդերձք և դարդք, դարձեալ ինչ որ կը գտնեն պաշար և անասուն և ապա կրակ կու տան բոլոր շէնքին, 50 տանց և եղած տասն ջաղացքներուն : Բանակը ճամբան երթալով կը բազմանար . ամէն կողմէն բազմաթիւ մահմէտականք կը դիմէին կռուելու կրօնից և աւարառութեան համար :

Ազիզ փաշա նուիրակ զրկեց Զեթուն որ իրեն յանձնեն բոլոր քահանայքը և իշխանքը . բայց Զեթունցիք պատասխան տուին որ « պատրաստ են իրեն ստացուածք տալու , բայց կեանքեր՝ ոչ » : Կուսակալը զրկեց Պուլանքի Դեմիտրէ Ահմէտ Աղա , պահանջելով 125,000 զրուշ : Առաջարկութիւնը բանակցութեան մէջ էր՝ երբ հասան բանակը նոր մոլեւանդն մահմէտական ընթերցողք , որոնք գայթակղեցան կուսակալին վրայ և սկսան համոզել գինքը բնաջինջ ընելու դքրիստոնեայս : Զեթունցիք կասկածելով , պատուով յետս կը զրկեն նուիրակները և ապա կը սկսին ամրացնել մարտիկներով իրենց գագտագողի անցքերը : Արդէն այս միջոցիս Մարաշի նշանաւորներէն Ահմէտ փաշա բանակով մը հասեր էր Զեթունի աջ կողմէն , որուն յարձակումը դիւրաւ վանեցին Զեթունցիք : Արևմտեան կողմէն ևս ումիշ նշանաւոր թուրք Քարատիշի Օսման պէյ 800 հոգւով հասեր էր աւերելով և հրկիզելով Միթալ գիւղը ուր կը բնակէին 200 քրիստոնեայ ընտանիք :

Օգոստոս 14ին առաւօտը բովանդակ բանակը , ընդ ամէնը 10,000էն աւելի , և ուրիշ կողոպտելու եկած առանձին խումբեր , գունդ գունդ կը յառաջեն երկու

հրանօթիւք: Զեթունի մօտ գիւղերը ի սկզբան շուգեցին զէնք առնուլ և անձնատուր կ'ըլլային կարգաւ, համարելով որ այսպէս անվնաս կը մնան. բայց երբ տեսան իրենց եկեղեցեաց պղծուիլը, իրենց տանց հըրդեհը և իրենց կանանց և դստերաց եղած յետին նախատիւքը, և լսեցին անոնց կոծը և ճիչը, ալ չկրցան դիմանալ. փայլատական երագուժեամբ զինուեցաւ բովանդակ Զեթուն և ամենայն ոք դիմեց իրեն նշանակեալ կիրճերը բռնելու, ուր սկսեք էին մանել Տաճիկք. և հրաման եղաւ կրակ թափել վրանին:

4. Յաղթութիւն Զեթունցւոց: — Այն ատեն ահա մահմէտական գունդերուն մէջ ահաւոր խառնակութիւն մը կ'իյնայ, կ'ուզեն տակաւին մրցիլ և յառաջել, սակայն իրենց դիականց բազմութիւնը արգեք կ'ըլլայ իրենց և կը սարսափեցնէ. այն ատեն ամենայն ոք փախստեան ճամբայ մը կը փնտռէ: Ազիզ փաշա իւր գայրոյթը Ս. Աստուածածնայ վանաց քահանայէն կ'ուզէ հանել, և դառն կերպով սպաննել կու տայ զայն. շուգէր յուսահատիլ և թնթանօթները յառաջ մղելով կը շարունակէ անընդհատ կրակ մը թափել Զեթունի վրայ. բայց տեսնելով որ անհնարին էր այլ ևս դիմանալ, ինքն ալ գունդերուն հետ թողուց փախաւ, հոն թողլով նաև թնդանօթներէն մին: Այնքան էր փախչողաց վախը որ Զեթունէն մինչև Մարաշ 12 ժամուան ճամբան ընթացան վեց ժամուան մէջ: Պատերազմը սկսեք էր առաւօտը և տեք էր մինչև վեցերորդ ժամ՝ այն է կէսօրէն վերջը ցերկրորդ ժամ: Զեթունցիք այսպիսի ամբողջական յաղթութեան մը վերջն ալ չհալածեցին զթշնամին և դարձան տեղերնին՝ իրեն ամուր լերանց մէջ:

Իսկ Ազիզ փաշա գայրացած հասնելով ի Մարաշ, երբ կը պատրաստուէր նոր գունդեր հաւաքելու, Կ. Պօլսէն լուր եկաւ որ պաշտօնանկ եղած է, և իրեն տեղը անուանուեք է Ալի փաշա, որ գօրօք և նոր հրահանգօք կը մեկնէր ի Մարաշ, միանգամայն յանձնուած էր խոհեմութեամբ գնալ և քննել և ստուգել այս դժբաղդ եղելութեանց սկզբնապատճառքը:

5. Յանձնաժողով Բ. Դրան. Նաբոլէոն Գի միջամտութեան պատճառ: — Աշիր փաշա հասնելով, սկսաւ իւր պաշտօնը: Անմիջապէս ըստ Պետութեան ըղձանաց Յանձնաժողով մը կազմեց, որուն մէջ պիտի ըլլային արդար և անկողմնական անձինք և հայ-էջմիածնական և հայ-հռովմէական մի մի եպիսկոպոսունք: Հայք խնդրեցին որ այդ յանձնաժողովին մասնակցի Երզրատի Մատթէոս առաջնորդը, զոր Բ. Դուռը սիրով ընդունեցաւ: Ապա երբ սա յանկարծ հիւանդացաւ. կրկին Ազգային վարչութիւնը ի կ. Պօլիս խնդրեց որ ընդունի անդամ զգերպ. Ներսէս Վ. Վարժապետեան, քարոզիչ Խասգեղի որ այն ժամանակ կը գրտնուէր յԱտանա: Ապտիւլ Ազիզի վարչութիւնը սիրով ընդունեցաւ Հայոց առաջարկը. Հռովմէական Հայոց եպիսկոպոսներէն ընտրուեցաւ Յանձնաժողովոյն անդամ Մարաշու Պետրոս եպիսկոպոսը: Ժողովոյն մեծամասնութիւնը պատճառ համարեցաւ շփոթից ութ ալապաշցի և զէթունցի զոմանս որոնք ուզուեցան Չէթունցիներէն: Չէթունցիք բոլորելով հանդերձ այդ վճռոյն դէմ, յետ շատ օրեր լերանց մէջ փնտռելու այդ անձինքը, ուր փախեր էին, զանոնք համոզելով տարին ի Մարաշ և հոն բանտ դրուեցան: Երբ ամենայն ամբաստանութիւն ծանրացաւ այդ ութ անձանց և Չէթունցուց վրայ, այն ատեն Չէթունցիք լաւապոյն համարեցան նուիրակութիւն մը ղրկել ի կ. Պօլիս և հոն բերանացի պատմել Բ. Դրան իրացեղելութիւնքը և սկզբնապատճառքը: Չորս իշխանք՝ Աստուածատուր Եէնի Տիւնիա օղլու, իշխան Մարտիրոս Նապարէթ Սուրէնեան, իշխան Ղաղարոս, իշխան Մկրտիչ Եղպենց, Մովսէս քահանայ և ուրիշ օսկաւ անձինք Ներսէս վարդապետի հետ: Դեկտեմբերի մէջ հասան ի կ. Պօլիս, և քիչ օր վերջը Բ. Դուռը երթալով, տեսաւորեցան Արտաքին գործոց պաշտօնեայ Ալի փաշայի հետ, բողոքելով ի Մարաշ կաղմուած Յանձնաժողովոյն վճիռներուն դէմ: « Բարձր. Ալի փաշայն մարդասէր ընդունելութիւն մը ընելով, Չէթունի ցաւալի անցքին պատճառն ու պարագաները մի ըստ միովէ պատմել տուեր է Մովսէս քահանային

և իշխաններուն, և արդարասիրարար խոստացեր է նոր քննութիւն մը ընել տալ այն անցքերուն վրայ, Բ. Դրան կողմէն յատուկ պաշտօնատար մը քննիչ կարգելով, որուն պիտի ընկերանային նաև ազգիս կողմէն մէկ եկեղեցական և մէկ ալ աշխարհական բանիրուն անձիւք¹ : Այս նոր քննութեան զաղափարը արդէն առաջարկեր էր Նարոյէոն Գ, որ միջամտութիւն մը ընել կը փափագէր և սկսեր էր Չեթունցւոց ի նպաստ² : Նա մանաւանդ որ Չեթունցիք հռովմէական եկեղեցւոյ եռանդուն միտումն կը ցուցընէին և յայտներ էին իրենց փափագը Մարաշու հայ-հռովմէական Պետրոս Եպիսկոպոսին՝ միանալու հռովմէական Եկեղեցւոյ հետ³ :

6. Չեթունի իշխանք ի Կ. Պօլիս — Գերապ. Հասունեան Նախագահ արքեպիսկոպոս Հռովմէական Հայոց : — Չեթունի անցից այս քննութիւնք ի Կ. Պօլիս յոյժ երկար տևեցին և ըստ օսմանեան դատարանաց մերթ ի նպաստ իրենց և մերթ հակառակ . մինչև իսկ իշխանքը բանտուելու վտանգի մէջ եղան : Պէտք է ըսենք սակայն որ իշխանք ի Կ. Պօլիս ևս ցուցուցին որ լեռնային ժողովրդեան մը բնածին ազատա-

1. Մասիս 1862 Դեկտ. 22. Ուրիշ լրագիրներէն աւելի Մասիս լրագրէն կը փափագինք ընդունել վկայութիւնքը, քանի որ ազգային պաշտօնական թերթ համարուած էր :
2. Յանձնաժողովը մեկնեցաւ սովորական դանդաղութեամբ 1863ի Դեկտեմբերի մէջ և անդամներն էին՝ Շահին Պէյը Բ Դրան կողմանէ . Սարգիս Ազա Աղաբեկեան հայ-էջմիածնականաց կողմանէ և Տոքթոր Տավուս Էֆէնտի հայ-հռովմէականաց կողմանէ :
3. Քոստէի Տ'Ուրէն լրագիրը Նոյեմբեր 18 թուական (1863) կը հրատարակէր Չեթունի և Մարաշի ժողովրդեան դիմումը առ փոխ-հիւպատոսն Գաղղիոյ Պ. Մուրիարի, Հռովմէական Եկեղեցւոյ հետ միանալու համար : Փոխ-հիւպատոսը այս իրզը հաղորդեց Երուսաղէմայ լատին պատրիարքին առ Գեր. Վալերկա, որ քննիչ-իրկեց զՀ. Ռավեննա : Չեթունցիք հրաւիրեցին աւելի վերջը Մարաշու հայ հռովմէական Պետրոս Եպիսկոպոսը ձայնաւոր պատարագի և ուրիշ արարողութեանց, լիովին սիրով :

սիրութեան հետ ունէին նաև ճարտարիմաց քաղաքագիտութիւն մը ըստ պարագային: Բայց այլազգէին ժամանակք, և կը գտնուէին ի Կ. Պօլիս օսմանեան քաղաքագիտութեան ամենէն փայլուն և ամենէն ազդեցիկ ժամանակը:

Մայրաքաղաք հասնելով, ըմբռնեցին որ իրենց դատը դժուարին էր որ յաջողէր պաշտպանել հայ-էջմիածնական պատրիարքարանով: պէտք էր եւրոպական յենարան մը ունենալ և յուսալով յԱնգղիոյ պաշտպանութիւն մը, նախ միտք ունեցան դիմել նորաղանդ հաստատութեանց: Սակայն չկարենալով երբէք համակերպիլ այդպիսի դաւանաց, նոյն իսկ առ ժամանակեայ միջոցաւ և ըմբռնելով թերևս որ ի Կ. Պօլիս ժամանակին ամենէն հաճ տեսնուածը Գաղղիոյ և անոր կայսեր միջնորդութիւնն էր, հայասէր կրօնասէր և մատենագիր կրօնաւորի մը միջոցաւ դիմեցին առ Նախագահ Արքեպիսկոպոսն Հռովմէական Հայոց՝ Գերապայծառ Անտոն Հասունեան. որուն պատիւը, ազդեցութիւնը թէ Բ. Դրան և թէ Եւրոպիոյ Պետութեանց և ի մասնաւորի Գաղղիոյ առջև ոչ մի պատրիարք մինչև իւր ժամանակ վայլած է, և զոր ստացեր էր իւր հանճարով և գիտութեամբը՝ Հասունեան Նախագահը: Արդէն ծանօթ էին ի Զեթուն ժողովրդեան միտումը առ հայ-հռովմէական եկեղեցին, գորովանօք զիրենք ընդունեցաւ և պէտք եղած հովանաւորութիւ-

1. Ստոյգ է որ գաղղիացի քարոզիչը ջանացին համոզել զԶեթունցիս խոստանալով անոնց Գաղղիոյ հզօր հովանաւորութիւնը որ մինչև ըստ նոցա խոստման փոխ-հիւպատոս պիտի հաստատուէր ի Զեթուն և պիտի պաշտպանէր անոնց իրաւունքները, և ընաւ պիտի չդպչէր ազգային ծիսից և կարգաց: ի Կ. Պօլիս ազգային եկեղեցականութիւնը, ուրիշ գունով ներկայացուց խնդիրը Բ. Դրան առջև: Զեթունցիք վախցան արժգոհացնել զԲ. Դրուը, և ետ դարձան ըրած քայլերնէն: Ազգային էջմիածնական պաշտօնական լրագիրը Դեկտեմբեր 13ին ուրախութեամբ կը ծանուցանէր որ Զեթունցիք նորէն իրենց մայրենի եկեղեցին դարձան:

նը ցուցընելով, մանաւանդ իրր առ Կիլիկեցիս, Նարոլէոնի ներկայացուցչին իսկ ձեռօք, զիրենք ազատեց քաղաքական ամէն տագնապներէ: Ըսուած է, և զարմանք չէ, նա գովելի իսկ մեծապէս Հասունեանի մը քաղաքագիտական հանճարոյն, որ իշխանաց յոյս մը տուած ըլլայ Զեթունի քաղաքական արտօնութիւնքը ամրապնդելու նոյն իսկ հաստատութեամբ Բ. Գրան, եթէ Զեթունցիք հաւանին մտնել հայ-հռովմէական Հասարակութեան մէջ, ինչպէս իրենք կը խոստանային և իղձ կը ցուցընէին: Իշխանք իսկ միշտ այդ գաղափարներով և խոստմունքներով մնացին երեք ամսոյ շափ Հասունեան Արքեպիսկոպոսի քովը, որով ծախքերը և բնակութիւնք ամենայն սիրով հոգաց Փերայայածառ Հասունեան, և եկաւորներուն մի ծառան ծանր հիւանդանալով՝ մեծաւ խնամօք դարմանել տուաւ Բենեդիկտեան գաղղիացի կրօնաւորաց հիւանդանոցը. բայց երբ հուսկ ուրեմն զեթունցի իշխանք յետ դատերնին աւարտելու, անցան առ Պատրիարգն հայ-էջմիածնական և թողուցին զՀասունեան Արքեպիսկոպոսը, այն ատեն Հասունեանի հրաժարելովը խնդրոյն մէջէն, Նարոլէոն Գ ևս հրաժարեցաւ յայնմհետէ միջամտելու, Յանձնաժողովոյն ըրած քննութիւնքը մանաւանդ իր փափագին չհամաձայնելով¹:

Այսու հանդերձ իրր աւանդութիւն մը շարունակած է միշտ հայ-հռովմէական պատրիարգարանի մէջ համակրանք մը առ Զեթունցիս, որոնք մասն կը կազմեն Կիլիկիոյ, որոց կաթողիկոսութեան տիտղոսը կը կրէ հայ Հռովմէական Պատրիարգ-Կաթողիկոսը Ի Կ. Պօլիս:

7. Բարձումն ինքնավարութեան Զեթունի: — Իշխանք Օսմանեան Պետութեան առջև միայն անձնա-

1. « Զեթունցիք Նարոլէոնի համակրալից միջամտութեանը, երախտագէտ ըլլալու համար Գաղղիոյ, 1870ի գաղղիա-բրուսիական պատերազմին ժամանակ իրենց քաջ մարտիկներէն զոմանս զրկեցին կամաւոր գրուելու Գաղղիական բանակին մէջ »: Հանդէս Հանդիսից 1896. Մարտ 15:

կան արարքնին կրցան արդարացնել, իսկ իրենց երկրին վիճակը կը կերպարանափոխուէր, և իրենք չէին զգար կարողութիւն մը սահմանեալ իրաց հակառակելու համար: Պետութիւնը անկէ վերջը Զեթուն տաճիկ +յոհոհո պիտի զրկէր և ինքը պիտի ժողվէր տուրքերը և այդ քայմաքամը կախունն պիտի ունենար Մարաշու կուսակալէն: Ներումն կը շնորհուէր Զեթունցոց առ հասարակ, և կը թողուէր իրենց ներքին ազգային և եկեղեցական գործոց կառավարութիւնը, աւելի ընդարձակ սահմանօք, քան ինչ որ ուրիշ տեղեր:


Այսպէս Զեթունի ինքնավարութիւնը առաջին մեծ հարուածը կ'ընդունէր, և իրեն հարկ էր լռել և բանալ իւր այնքան ժամանակ նախանձով փակած դռները և անցքերը թուրք զօրաց և զօրապետաց:

8. Ապստամբութիւն Զեթունի յամին 1876. — Պատերազմ Ֆունուզի — Շինութիւն ի Զեթուն թուրք զինուորանոցին: — Ասկէ վերջը տասը տարիէ աւելի Զեթուն արտաքուստ հպատակած կ'երևար, սակայն ունենալով ի ներքուստ նոյն կիրքը և յուզումը գերութեան ամենածանր լուծը հնարիւ իւրիք թօթափելու: Արդէն յամին 1876 թուրք քայմաքամին անգթութիւններէն յուսահատեալ, միաբան սպառնալեօք յարձկեր էին քանդելու կառավարութեան պալատը, այսպէս Զեթունէն վերցնել անոնց բնակութիւնը: Մարաշու Վայս կուսակալը պատրաստուեցաւ շուել ի Զեթուն. և իւր գրգռելովը բազմաթիւ թափառական ցեղեր՝ Աւշարք, Ղէրիտք, Թէճիլիք յարձկելով, աւերեցին հայ շատ գեղեր: Զեթունի հայերը իրենց զլուխ դնելով անուանի քաջ Պապիկը, դիմեցին դրացի ազգակցաց օգնութեան, յարձակողները ցրուեցին և շատ աւարներով դարձան ի Զեթուն: Բայց քանի մը ամիս վերջը վրանին շուեց Մարաշու Վայս փաշա կուսակալը, որուն դէմ ելաւ քաջ խմբերով Ֆունուզի վանահայրը՝ Նիկողայոս Եպիսկոպոսը և երկու կողմէն գունդերը մեծ զայրացմամբ զարնուեցան Ֆունուզի մօտ. և թէպէտ Զեթունցիք յաղթողք հանդիսացան և փախուցին յարձակողքն. սակայն ապա Նիկողայոս Եպիսկո-

1870

պոսը և իրենց գլխաւորներէն մին՝ Յարութիւն Զուլաքեան, դաւճով արդեօք գերի բռնուեցան և իրենց հետ միաբան հարիւրէն աւելի անձինք. ուրիշ 150 հոգի ալ լեռները ապաւինեցան: Գերիներէն մաս մը զրկուեցան ի Կ. Պօլիս և մաս մ'ալ տաժանելի բանտերու մէջ ձգուեցան ի Մարաշ և Հալէպ: Երկրորդ տարին հազարապետ մը զրկուեցաւ ի Զեթուն 400 զինուորօք որպէս զի կալանաւորէ մնացեալ գլխաւորքն, բայց Պապիկ իւր խումբերը ժողվելով, յարձկեցաւ վրանին և զանոնք փախուց: Այս միջոցիս ուս—թըրքական պատերազմը ըլլալով, Օսմանեան Պետութիւնը զբաղած ուրիշ կողմեր, մեծ բանակ մը չղրկեց ի Զեթուն. որով Զեթունցիք առ ժամս ինքնագլուխ մնացին: Ապա Պէոլինու դեսպանաժողովէն վերջը, Բ. Դուռը անսալով բարեկամ խորհրդատուներու, քաղցրութեամբ ուզեց շահիլ Զեթունի ժողովուրդը, նոր բարեկարգութիւններ խոստացաւ և մասնաժողով մը ևս բարեկարգիչ գնաց ի Զեթուն որոյ անդամոց մին թուրք միւսն հայազգի, որոնք միաբան Սոոյ Կաթուղիկոսին և Մարաշու Անգղիոյ հիւպատոսին, համոզեցին զԶեթունցիս հաճիլ զԲ. Դուռը և մնալ միշտ բարեկամ կամ լաւ ևս ըսել հպատակ, և յանձն առնուլ որ Զեթունի վրայ տիրող բարձրադիտակ տեղ մը շինուի ընդարձակ և ամուր զօրանոց մը, որ կարենայ պահել 800 զինուոր: Այս անախորժ լուծը Զեթունցոց մեղմ երևցնելու համար, արձկուեցան բազմաթիւ բանտեաք յորս և Նիկողայոս Եպիսկոպոսը, Կարապետ Քէհէեան որ շատ տարիներէ ի վեր բանտի մէջ էր:

Այս զօրանոց բերդն ի սկզբանէ հետէ գերութեան ծանր շղթայ մը երևցաւ Զեթունցւոց աչքին. թէպէտ զայն հիւսողք չէին օտարազգիք ոմանք և սակայն միշտ փափագած են ազատիլ այդ արտասովոր իրենց համարուած լուծէն:



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՈՒՌ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ

1. Մէհէմէտ Ալիի վերջին տարիները — Պօղոս Պէյ. Արթին պէյ. — 2. Իպրահիմ փաշա. — 3. Աբրաս փաշա. — 4. Սայիտ փաշա. — 5. Իսմայիլ փաշա և Խտիվութիւն. — 6. Նուպար փաշա. — 7. Սուէզի ջրանցքին բացումը:

1. Մէհէմէտ Ալիի վերջին տարիները — Պօղոս պէյ. Արթին պէյ. — Յամին 1841 պատերազմներէն վերջը¹, Մէհէմէտ Ալի յետ ապահովելոյ դաշամբ Եգիպտոսի իշխանութիւնը իւր սերնդոց համար, յայնմհետէ գրադեցաւ երկրին քաղաքագիտական, դրամական և ուսումնական յառաջադիմութեանց: Բնաւ աշխարհակալ մը և իշխան մը քիչ ժամանակուան մէջ աւելի խնամք տարած չէ քան զՄէհէմէտ Ալի երկրը կրթելու: Բայմաթիւ ուշիմ երիտասարդներ զրկեց ի Բարեց, Լոնտրա, Պրիւստէ, ուսանելու և գիտելու երկրի մը յառաջադիմութեան կարևորքը և զայնս ապա բերելու Եգիպտոս. և յորս առասեւ բազմաթիւ էր հայազգի տարրք, որուն վրայ ունեցաւ մասնաւոր համարմունք և համակրութիւն և որոնք փոխադարձաբար նուիրեցին Եգիպտոսի յառաջադիմութեան իրենց մտաւորական և վաճառականական ամէն կարողութիւննին: Արդէն իւր իշխանութեան առաջին տարիներուն մէջ կատարած դիւանական մեծամեծ յաջողութիւնք, Եղուսթեան Պօղոս պէյի արդիւնք կը համարուէին նոյն իսկ յաշս բովանդակ Էւրոպիոյ: Բայց Մէհէմէտ Ա-

1. Պատմութիւն ժամանակակից Ա. Հատոր. Գլ. ԻԱ. § 43:

լիի ևս արդիւնքն մեծ այն եղաւ որ կրցաւ միշտ գնահատել և կատարեալ լիովին վստահութիւն մը ունենալ իւր պաշտօնէին վրայ :

Երբ Պօղոս պէյ վախճանեցաւ, արդէն ուրիշ հայազգի դիւանագէտ մը Արթին պէյ Չրաքեան, սկսեր էր փայլել յԵգիպտոս Մէհէմմէտ Ալիի վարչութեան և քաղաքականութեան ասպարիպին մէջ: Արդին պէյ յամին 1826ին փոխարքայէն Բարիզ զրկուած էր և հոն մեծ գովութեամբ կատարեր էր կառավարչական, վաճառականական և համազգային օրինաց ուսումները, և ապա դառնալով յԵգիպտոս, Պետութեան պաշտամանց բազում ճիւղերու պաշտօնեայ ըլլալով, մեծամեծ բարւոյրութեան մտուցեր էր և մանաւանդ Ելեմտից և Հաշուակալութեան ճիւղերուն մէջ: Արթին պէյ ունենալով բարեկամական և մինչև մտերիմ յարաբերութիւնք Լորտ Փալմէրսթոնի, Ուէլլինկթոնի դքսին, Թիէրի և Կիզոյի հետ, կրցաւ Եգիպտոսի օգտակար դեր մը ունենալ Պէրութի ոմրակոծումէն ետքը¹, և որ մեծագոյնն է և արդիւնք իւր մեծ քաղաքագիտութեան, կրցաւ զԱպտիւլ Մէհիտ հաշտեցնել Մէհէմմէտ Ալիի հետ, մոռցնել տալ Նէգիպի պատերազմը, այսպէս ապահով վիճակ մը տալով Եգիպտոսի և Մէհէմմէտ Ալիի սերնդոց: Եւ այս հաշտութենէն վերջը նախ Սայիտ փաշա, որդի փոխարքային, ապա նոյն ինքն Մէհէմմէտ Ալի այցելութեան գնացին առ Սուլթանն ի Կ. Պօլիս, և շքեղ ընդունելութիւններ գտան. ի վարձ այս մեծ ծառայութեանը: Արդին պէյ յամին 1849 ւտացաւ ի Սուլթանէ պաշտութեան բարձր աստիճանը, որ զայնժամ չէր տրուէր քրիստոնէից:

Մէհէմմէտ Ալիի կենաց վերջին յառաջադիմութեան քայլերն եղան եգիպտական նաւարկութեան և թղթատարութեան ընկերութեանց հաստատուիլը, զոր ցայնժամ կը վարէին Անգլիացիք. և յայսմ մղիչ, խորհրդատու և օգնական ունեցեր էր դարձեալ զԱրթին պէյ, արդէն պաշտօնեայ Արտաքին գործոց և վաճառակա-

նութեան և զԱպտուրահման Ռիւշտի փաշա, այն ատեն պարզ հազարապետ մը:

Մէհէմմէտ Ալիի իշխանութեան վերջին ժամանակաց մէջ, վրան տիրացեր էր ջղային յետին տկարութիւն մը, որ ազդելով ուղեղին վրայ, զինքը տգայացուցեր էր և զրկեր ի բանավարութենէ: Կարևոր դատուեցաւ որ դիմէ յԵւրոպա ականաւոր մասնագիտաց. սակայն այդ ուղևորութիւնը օգուտ մը չունեցաւ և ի դարձին Եգիպտոսի կառավարութիւնը ստանձնեց իւր որդին Իպրահիմ փաշա փոխանորդաբար: Մէհէմմէտ Ալի մեռաւ յամին 1847 Օգոստոս 2ին:

1847
Օգ. 2

2. Իպրահիմ փաշա փոխարքայ: — Արդէն ժամանակակից Պատմութեանս Առաջին հատորոյն մէջ տեսած ենք որ Մէհէմմէտ Ալիի աշխարհակալ խորհրդոցը յաջող բազուկ և անուանի զօրավար եղեր էր իւր որդին Իպրահիմ փաշա, Նէզիպի յաղթողը: Իպրահիմ փաշա հաշտութեան կնքուելէն վերջը, զբաղեցաւ օգնելու իւր հօրը նեղքին բարեկարգութեանց մէջ, և արդէն տկարացած առողջութեամբ, յամին 1846 դիմեր էր ի Քաղղիա բժիշկներու խորհրդոց և Վէրնէի ջրերուն: Հոն առ ժամանակեայ կապգուրումն գտնելով դարձաւ յԵգիպտոս, այս առթիւ անցնելով ի Բարիզէ, ուր Լուի Ֆիլիպի իրեն շքեղ ընդունելութիւն մ'ըրաւ, ի շնորհակալութիւն փոխարքային մեծ համակրանաց առ Քաղղիա և առ գաղղիացի պաշտօնատարս յԵգիպտոս: Սակայն անողոքելի թոքախտը յառաջեր էր, և Իպրահիմ փաշա իւր հօրը մահուընէն երեք ամիս վերջը կը մեռնէր:

1848
Նոյ. 20

3. Աբբաս փաշա փոխարքայ: — Իպրահիմ փաշայի կը յաջորդէր իւր վախճանեալ թոսուն որդւոյն զաւակը՝ Աբբաս փաշա՝ 32 տարուան, որ կառավարիչ ըլլալով Քահիրէի, եթէ տեղացւոց և եթէ օտարաց մտաց մէջ լաւ համարումն և համակրանք ձգած չէր իւր բարուք և վարուք. աստի ծնան ընդդիմութիւնք և կուսակցութիւնք, յորս իշխանաց իտալացիները ընդդէմ Աբբասի վարչութեան: Ներքին պառակտումնք պատրուակ եղան Քաղղիոյ և Անգղիոյ մրցելու յԵ-

գիպտոս ազդեցութեան մը համար: Անգղիա առաջարկեց որ կրկին ինքը ստանձնէ թղթատարութիւնը և երկաթուղի մը շինէ Նեղոսէն մինջև ի Կարսի ծով: Աբբաս փաշա հաւանեցաւ առաջարկին, առանց հարցնելու Բ. Դրան, ինչպէս կը բռնադատէին 1841ի դաշինք: Բարձրագոյն Դուռը բողոքեց և Աբբաս բռնադատուեցաւ խոնարհելու և ետ առնելու Անգղիոյ տուած հաւանութիւնը: Ապտիւլ Մէճիտ ուզեց որ Կիւլհանէի Խաղաղի շէրիֆը և թանգիմաթը ևս հրատարակուին և գործադրուին Եգիպտոսի մէջ, որով Նեղոսի ափանց վրայ ևս տարածուին Սուլթան Մահմուտի մտուցած բարեկարգութիւնք. այդպէս ապահովութիւն ըլլայ կենաց և կալուածոց, վերնան գրամուկք, բռնի աշխատութիւնք, մարմնաւոր պատիժք և անսահման զինուորագրութիւնք: Աբբաս փաշա պատասխանեց որ առանց յեղափոխութեան մը վտան չի չէր կարելի այդ նոր կարգադրութիւնքը մտցնել յԵգիպտոս: Ապտիւլ Մէճիտ ծանոյց որ ըստ դաշանց ինքն է տէր Եգիպտոսի, և իրեն կը պատկանէին օրէնսդիր և քաղաքական իշխանութիւնք, և եթէ Եգիպտոսի փաշայք գործադիր էին միայն ի Կ. Պոլսոյ եկած կեդրոնական կարգաւորութեանց: Աբբաս փաշա զիսեց օտար հիւպատոսաց ազդեցութեան և Բ. Դուռը արտասովոր նուիրակ զրկեց զՖուատ Էֆէնտի (ապա Ֆուատ փաշա), որ շընդունեցաւ հիւպատոսաց միջամտութիւնը և անտեղիտալի եղանակաւ ստիպեց զԱբբաս փաշա ընդունել և հրատարակել զԷմնը-Ֆէր: Տարի մը վերջը Բ. Դուռը ի փոխարէն Աբբասի հպատակութեան, շնորհեց իրեն փոխարքայութեան տիտղոսը ցկեանս, և կենաց և մահու շնորհը հպատակաց վերայ: Սակայն Աբբաս չկրցաւ վայելել ընդ երկար այս իշխանութիւնը, և մեռաւ 1854ի Յուլիս 14ին յանկարծամահ:

4. Սայիտ փաշա փոխարքայ: — Աբբասի յաջորդեց իւր հօրը հօրեղբայրը Սայիտ փաշա, չորրորդ որդի «մեծ փաշային», ինչպէս Եգիպտացիք կը կոչէին զՄէհէմէտ Ալի: Սայիտ փաշա իւր հօրմէն ժառանգած էր քաղաքակիրթ և ձեռնարկող միտք մը, զար-

գացեալ եւրոպական դաստիարակութեամբ մը, Քէօնիկ պէյի¹ հսկողութեան ներքեւ: Սայիտ փաշա թէպէտ յաջողակ և յառաջադէմ ի գիտութիւնս, սակայն ցանկացող զինուորական և գործունեայ կենաց, իւր հօրը ըղձանօք ծովային զինուորութեան մէջ հրահանգուեր էր մեծ յառաջադիմութեամբ. և արդէն ծովակալի պաշտօնով կը բնակէր Աղեքսանդրիոյ մօտ Կապպարիի պալատը, երբ իւր թուան մահը զինքը կոչեց ի իշխանութիւն ըստ անդրանկութեան օրինաց: Ի սկզբանէ թէպէտ տեսնուեցաւ փոքր ընդդիմութիւն մը, սակայն յետ երթին ի Կ. Պօլիս և ընդունելու Սուլթանին ձեռքէն իշխանութեան զգեստաւորումը, ամէն հակառակութիւն դադրեցաւ: Սայիտ փաշա ի Կ. Պօլիս իւր բարձր քաղաքագիտութեամբ և պատրաստ հպատակութեամբը, յինքն գրաւեց զՍուլթանը և զԲ. Գուռը, որոնք փոխադարձ մեծ համարումն, պատիւք և առանձնաշնորհութիւնք ընծայեցին իրեն: Սայիտ փաշա ի դարձին յԵգիպտոս՝ 10,000 զօրաց բանակ մը զրկեց յօգնութիւն Ղլիմ գացող օսմանեան բանակին:

Նոր փոխարքայն բազմաթիւ ուղևորութիւնք ըրաւ Եգիպտոսի ներսերը, երկրին վիճակը անձամբ քննելու համար. և իւրաքանչիւր դարձին՝ բազում բարւոքմունք ի գործ կը դնէր: Խափանեց գերեաց առուտուրը, ներքին մաքսը, մենավաճառը, տուրքերը կանոնաւորեց, սահմանեց թոշակ մը փոխարքային և իշխանագանց և հասարակաց օգտի բազմաթիւ շինութիւնք կատարեց: Եւրոպայ այցելութենէն վերջը, մասնաւոր խնամք սարաւ դպրոցաց, զորս եւրոպական ոճի ձևակերպեց, եւրոպական ընտիր ուսուցիչք կարգելով, որոց արդիւնք համարելու է Եգիպտոսի ներկայ յառաջադէմ վիճակը: Սայիտ փաշա նոր և կանոնաւոր միղումն տուաւ Սուէզի պարանոցի պեղմանը, յանձնելով զայն Փ. Լըսէփսի, որ իւր տղայութեան ըն-

1. Մաթիէօ Օկիւսդ Քէօնիկ, գիտնական գաղղիացի, որուն յանձնած էր Մէհէմէտ Աւի իշխանագանց կրթութիւնը:

կեր եղած էր, և գործոյն երազութեան և յաջողութեան նպատակաւ շինեց զՓոր-Սայիտ նաւահանգիստը իւր կառուցմամբ և փարոսով: Եթէ այս մեծ ձեռնարկին և եթէ ուրիշ դիւանական գործոց մէջ իրեն օգնող և խորհրդատու ունեցաւ եւրոպացի և միանգամայն հայազգի նշանաւոր անձինք և մանաւանդ ըզնուպար պէլ: Սայիտ փաշա առանց տեսնելու իր բազում ջանից կատարածը, վախճանեցաւ 1863ի Յունուար 18ի:

863
1824-18

5. Իսմայէլ փաշա: — Սայիտ փաշայի յաջորդը Իսմայէլ փաշա, որդի քաջայաղթ Իպրահիմ փաշայի, 33 տարուան էր երբ յաջորդեց իւր հօրեղբօր: Ինքը ևս իւր ուսումը ի Գաղղիա կատարած էր, և ի դարձին յԵգիպտոս ոչ միայն որ և է մեծ պաշտամանց մէջ շէր ծածկած իր հակակրութիւնը Արբաս փաշայի վարչութեան, այլ մանաւանդ զլուխ եղիւր էր էշեանոց կոսակցութեան: Ընդհակառակն մեծ սիրով օգնական եղեր էր իւր հօրեղբօրը Սայիտ փաշայի և համակարծիք անոր իմաստուն և յառաջադիմական գաղափարաց: Սայիտ փաշա զինքը արտասովոր դեսպան զըրկած էր եթէ ի Բարիդ և եթէ ի Հռովմ, ուր փոխարքային ինքնագիր նամակ մը տարեր էր առ Քահանայապետն: Իւր գահակալութեան առթիւ բանախօսութեան մէջ առաջի պաշտօնէից և օտար հիւպատոսաց, ծանոյց որ ամենայնիւ պիտի հետևէր իւր նախորդին, շարունակելով անոր սկսած բարեկարգութիւնքը: Եւ արդարև եթէ գիտութիւնք, եթէ վարժարանք և թանգարանք մեծ յառաջադիմութիւն ունեցան. միանգամայն Միացեալ Նահանգաց քաղաքական պատերազմը պատճառ եղաւ բամպակի մշակութիւնը ըսկսելու յԵգիպտոս, որ հարուստ արգիւնք մ'ունեցաւ երկրին համար:

Իսմայէլ փաշայի ժամանակ Եգիպտոս նշանաւոր այլակերպութիւն մը կրեց եթէ ներքին կազմակերպութեան և եթէ առ Օսմանեան պետութիւնը յարարեւութեանց նկատմամբ: Յամին 1866 Մայիսի մէջ Իսմայէլ փաշա կրցաւ հրովարտակ մ'ընդունիլ Ապտիւլ

Ազիզէ, որով Եգիպտոսի փոխարքայութեան յաջորդութիւնը, ուղղակի գծով պիտի յանձնէր յորդոց որդի և ապա դարձեալ 1867 տարւոյն Յունիսի մէջ կը ստանար Խոյ՛՛՛լ պատուանուներ, որ վեր էր քան զփոխարքային և ստոր քան զթագաւորի: Միանգամայն իրաւունք կը ստանար յայնմհետէ առանց Բ. Դրան հարցնելու, հրամաններ տալու Եգիպտոսի մատակարարութեան, մաքսատանց, թղթատանց նկատմամբ, կարող էր հսկողութեան մասին օտար հպատակաց համար, ուղղակի բանակցիլ օտար պետութեանց հետ. բայց ոչ համազգային համաձայնութիւնք և քաղաքագիտական դաշինքներ կռել առանց հարցնելու Բ. Դրան: Այս ամէն շնորհքները փոխարէն մ'էին իւր աշակցութեանը կրէտէի ապստամբութիւնը ընկճելու համար: Եգիպտոս յայնմհետէ կ'ունենար հարկատուութիւն մը գրեթէ միլիոն ֆրանքաց, ներքստպէս ազատ ինքնավարութիւն մը ունենալով:

Իսմայէլ փաշա խրախուսեալ այս ստացած իրաւունքներէն, ուրիշ բազմաթիւ քաղաքական կարգաւորութիւնք ըրաւ եւրոպական պետութեանց համակերպելով: Նոյն իսկ եգիպտական խօսարան մը ձևացուց, զոր անձամբ բացաւ յամին 1868 Նոյեմբեր 25ին: Թէպէտ չէր երեսփոխանական ժողովք մը ինչպէս եւրոպական սահմանադրական վարչութեանց մէջ, բայց խղճիւ կը զբաղէր տրոց, մաքսերու, դատաստանաց և Նեղոսի ոռոգմանց մասին: Կազմեց Սղեքսանդրիա քաղաքապահութեան խորհուրդ մը, որուն նախագահն եղաւ Քոլուչչի պէյ: Աղեքսանդրիա զարդարուեցաւ գեղեցիկ շէքերով փողոցներով և ծառուղիներով, ամէն կողմանէ հարուստ դրամատէրք հոն դիմեցին, նոր պալատներ և հրապարակներ շինուեցան. թատրոնները բազմապատկեցան և Աղեքսանդրիա աշխարհիս գեղեցկագոյն և զուարճալի քաղաքներէն մին եղաւ. Ըարից մը Սփրիկէ որուն պարոն շոսմանն եղաւ Հայազգին Նուպար փաշա:

6. Նուպար փաշա: — Նուպար փաշա ծնած է յամին 1825ի Զմիւռնիա, և իւր ուսումը աւարտած է ի Քաղ-

դիա նշանաւոր հանդիսանալով բազում նիւթոց մէջ: Յամին 1842 գալով յԵգիպտոս, անմիջապէս քարտուղար եղաւ Պօղոս պէյի որ այն ժամանակ պաշտօնեայ էր Արտաքին գործոց և վաճառականութեան: Քիչ վերջը կը գտնենք զինքը երկրորդ ատենադպիր թարգման Մէհէմէտ Ալիի և ապա առաջին ատենադպիր թարգման Իպրահիմ փաշայի, որուն ընկերացաւ ի Կ. Պօլիս և յԵւրոպա: Արբաս փաշա զինքը անձնական ատենադպիր ըրաւ, տալով պէյութեան տիտղոսը: Յամին 1850ի Լոնտրա ղրկուեցաւ Անգղիոյ վարչութիւնը շահելու ի նպաստ փոխարքային ընդդէմ պահանջմանց Բ. Իրան: Այս պաշտօնը յաջողութեամբ կատարելէն վերջը, դեսպան ղրկուեցաւ ի Վեննա, և այս պաշտաման մէջ կը գտնուէր երբ մեռաւ Արբաս փոխարքայն: Սայիտ փաշա երկու տարուան չափ զինքը անպաշտօն թողուց, բայց ապա կոչեց իւր քովը և անոր յանձնեց Եգիպտոսէ ի Հնդկաստան ապրանք անցնելու ծրագրի մը ծանր և դժուարին ձեռնարկը: Հարկ էր Գահիրէէն ի Սուէզ փութով երկաթուղւոյ գիծ մը հաստատել անջրդի և անապատ երկիրներու մէջէն: Նուպար այս ուղւոյն գործադրութեան մէջ ցուցուց այնքան մեծ իմացականութիւն, կորով և փորձառութիւն, որ յինքն գրաւեց եւրոպական արքունիքներու ուշադրութիւնը: Եւ սակայն Նուպար փաշա այս գործոյն յաջող ելքէն վերջն իսկ տարի մը մնաց անպաշտօնապա կրկին ղրկուեցաւ ի Վեննա, ուսկից Սայիտ զինքը կոչելով, այլ ևս չհեռացուց իւր քովէն մինչև իւր մահը:

1863

Երբ Իսմայէլ փաշա յաջորդեց ի փոխարքայութեան, նուիրակութեամբ զՆուպար պէյ ղրկեց ի Կ. Պօլիս, Բ. Իրան հետ բանակցելու քանի մը առ կախ միտցեալ խնդրոց վրայ. և այնքան յաջողութեամբ կատարեց այս պաշտօնը, որ ի դարձին փաշայութեան համապատասխանող քաղաքական պատիւներու արժանացաւ և Ապտիւլ Ազիզ իւր այցելութեան ժամանակ արդեամբ շնորհեց Նուպարի՝ փաշայութեան աստիճանը: Յետոյ անուանուելով դերպաշտօնեայ, ղրկուեցաւ ի Բարիզ:

Սուէգի ջրանցքին նկատմամբ եղած դժուարութիւնքը հարթելու Նարոլէոն Գի միջամտութեամբ: Ի դարձին յԵգիպտոս պաշտօնեայ անուանուեցաւ Հասարակաց վաստակոց, պաշտօնարան մը գոգցես հնարեալ մասնաւոր իրեն համար, և որով այլափոխեց, զարդարեց երկիրը օգտաւէտ ձեռնարկներով: Իսմայէլ փաշա իբրև նշան մը իւր մեծ գոհութեան, 1866ին վերջերը զինքը անուանեց պաշտօնեայ Արտաքին Գործոց և արտասովոր դեսպան զրկեց ի կ. Պօլիս: Այս դեսպանութեան ժամանակ էր, յորում Նուպար փաշա յաջողեցաւ առնուլ Խոյն-Խոյն իւր Տիրոջը համար, և ապա ի դարձին՝ Բ. Դրան հաւանութեամբ բանակցիլ և դաշնակցիլ Պետութեանց հետ, հիւպատոսական առանձնաշնորհութեանց մասին ընդ Եւրոպա և ընդ Արևելս: Յայնմհետէ մինչև Սուէգի պարանոցի հատումը, զՆուպար կը գտնենք զբաղեալ այս մեծ գործոյն աւարտմանը, որով ոչ միայն Եգիպտոս զբաղեալ էր, այլ և բովանդակ Եւրոպա:

7. Սուէգի ջրանցքը: — Դարուս հրաշալեաց և մեծագործութեանց մին արդարապէս համարուած է Սուէգի պարանոցին հատումը, որով Միջերկրական և Կարմիր ծովերը միացան մէկմէկու հետ նաւարկելի անցքով մը. « Գաղափար մը, որուն օգտակարութիւնը արդէն ըմբռներ էին ամէն մեծ մարդիկք, որոնք կամ տիրեր և կամ տեսեր էին զԵգիպտոս՝ Սեսոստը, Աղեքսանդր, Կեսար Ամրու, Նարոլէոն Գ. և Մէհէմմէտ Ալի՝: Եւ արդէն եգիպտական հին պատմութեան մէջ կը գտնենք որ Նեկոս, հայր Փսամետիկոսի, սկսած էր նմանօրինակ ձեռնարկ մը և այդ գաղափարը և իղձը աւանդութեամբ հասեր էր մինչև առ Պտղոմեանս և մինչև Օսմանեան տիրապետութեան ժամանակ. և Մուսդաֆա Գ. յանձնած էր պարոն թոթ երկրաշափին, նախնական ծրագիրքը պատրաստելու: Ընդ երկար ժամանակ կը համարուէր որ Կարմիր ծովը 9Մ, 90 առաւել բարձրութիւն ունենայ քան զմակերեւոյթն Մի-

զիա նշանաւոր հանդիսանալով բազում նիւթոց մէջ: Յամին 1842 գալով յԵգիպտոս, անմիջապէս քարտուղար եղաւ Պօղոս պէյի որ այն ժամանակ պաշտօնեայ էր Արտաքին գործոց և վաճառականութեան: Քիչ վերջը կը գտնենք զինքը երկրորդ ատենադպիր թարգման Մէհէմէտ Ալիի և ապա առաջին ատենադպիր թարգման Իպրահիմ փաշայի, որուն ընկերացաւ ի Կ. Պօլիս և յԵւրոպա: Արբաս փաշա զինքը անձնական ատենադպիր ըրաւ, տալով պէյութեան տիտղոսը: Յամին 1850ի Լոնտրա ղրկուեցաւ Անգղիոյ վարչութիւնը շահելու ի նպաստ փոխարքային ընդդէմ պահանջմանց Բ. Իրան: Այս պաշտօնը յաջողութեամբ կատարելէն վերջը, դեսպան ղրկուեցաւ ի Վեննա, և այս պաշտաման մէջ կը գտնուէր երբ մեռաւ Արբաս փոխարքային: Սայիտ փաշա երկու տարուան չափ զինքը անպաշտօն թողուց, բայց ապա կոչեց իւր քովը և անոր յանձնեց Եգիպտոսէ ի Հնդկաստան ապրանք անցնելու ծրագրի մը ծանր և դժուարին ձեռնարկը: Հարկ էր Գահիրէէն ի Սուէզ փութով երկաթուղւոյ գիծ մը հաստատել անջրդի և անապատ երկիրներու մէջէն: Նուպար այս ուղւոյն գործադրութեան մէջ ցուցուց այնքան մեծ իմացականութիւն, կորով և փորձառութիւն, որ յինքն գրաւեց եւրոպական արքունիքներու ուշադրութիւնը: Եւ սակայն Նուպար փաշա այս գործոյն յաջող ելքէն վերջն իսկ տարի մը մնաց անպաշտօնապա կրկին ղրկուեցաւ ի Վեննա, ուսկից Սայիտ զինքը կոչելով, այլ ևս չհեռացուց իւր քովէն մինչև իւր մահը:

1863

Երբ Իսմայէլ փաշա յաջորդեց ի փոխարքայութեան, նուիրակութեամբ զՆուպար պէյ ղրկեց ի Կ. Պօլիս, Բ. Իրան հետ բանակցելու քանի մը առ կախ միտցեալ խնդրոց վրայ. և այնքան յաջողութեամբ կատարեց այս պաշտօնը, որ ի դարձին փաշայութեան համապատասխանող քաղաքական պատիւներու արժանացաւ. և Ապտիւլ Ազիզ իւր այցելութեան ժամանակ արդեամբ շնորհեց Նուպարի՝ փաշայութեան աստիճանը: Յետոյ անուանուելով դերպաշտօնեայ, ղրկուեցաւ ի Բարիզ,

Սուէզի ջրանցքին նկատմամբ եղած դժուարութիւնքը հարթելու Նարոլէոն Գի միջամտութեամբ: Ի դարձին յԵգիպտոս պաշտօնեայ անուանուեցաւ Հասարակաց վաստակոց, պաշտօնարան մը գոգցես հնարեալ մասնաւոր իրեն համար, և որով այլափոխեց, զարգարեց երկիրը օգտաւէտ ձեռնարկներով: Իսմայէլ փաշա իբրև նշան մը իւր մեծ գոհութեան, 1866ին վերջերը զինքը անուանեց պաշտօնեայ Արտաքին Գործոց և արտասովոր դեսպան զրկեց ի կ. Պօլիս: Այս դեսպանութեան ժամանակ էր, յորում Նուպար փաշա յաջողեցաւ առնուլ Խոթէ-Նի-ն իւր Տիրոջը համար, և ապա ի դարձին՝ Բ. Դրան հաւանութեամբ բանակցիլ և դաշնակցիլ Պետութեանց հետ, հիւպատոսական առանձնաշնորհութեանց մասին ընդ Եւրոպա և ընդ Արևելս: Յայնմհետէ մինչև Սուէզի պարանոցի հատումը, զՆուպար կը գտնենք զբաղեալ այս մեծ գործոյն աւարտմանը, որով ոչ միայն Եգիպտոս զբաղեալ էր, այլ և բովանդակ Եւրոպա:

7. Սուէզի ջրանցքը: — Դարուս հրաշալեաց և մեծագործութեանց մին արդարապէս համարուած է Սուէզի պարանոցին հատումը, որով Միջերկրական և Կարմիր ծովերը միացան մէկմէկու հետ նաւարկելի անցքով մը. « Գաղափար մը, որուն օգտակարութիւնը արդէն ըմբռներ էին ամէն մեծ մարդիկք, որոնք կամ տիրեր և կամ տեսեր էին զԵգիպտոս՝ Սեսոստը, Աղեքսանդր, Կեսար Ամրու, Նարոլէոն Գ. և Մէհէմէտ Ալի՝: Եւ արդէն եգիպտական հին պատմութեան մէջ կը գտնենք որ Նեկոս, հայր Փսամետիկոսի, սկսած էր նմանօրինակ ձեռնարկ մը և այդ գաղափարը և իղձը աւանդութեամբ հասեր էր մինչև առ Պտղոմեանս և մինչև Օսմանեան տիրապետութեան ժամանակ. և Մուսղաֆա Գ. յանձնած էր պարոն Թոթ երկրաշափին, նախնական ծրագիրքը պատրաստելու: Ընդ երկար ժամանակ կը համարուէր որ Կարմիր ծովը 9^մ, 90 առաւել բարձրութիւն ունենայ քան զմակերևոյթն Մի-

Ղերկրականի : Բայց յամին 1840 անգղիացի զինուորական սպայք յետ մանր քննութեանց և հաշուոց, հաստատեցին երկուց ծովուց մակերևութին հաւասարութիւնը, և յամին 1854 Նոյեմբեր 30ին, Սայիտ փաշա փոխարքայն, հրովարտակով մը կը շնորհէր Փերտինանտ Լըսէփսի, որ շատ ժամանակէ ի վեր կ'ուսումնասիրէր և կը մղէր այդ խնդիրը, համաշխարհային ընկերութիւն մը կազմել այդ պարանոցին բացման և ընդարձակ նաւարկութեան մը համար : Զրանցքին իրականց գործածութեան շնորհը կը տրուէր 99 տարուան համար սկսեալ բացմանէն և Ընկերութիւնը կրնար օգտուիլ անոյ ջրոյ նաւարկելի ուղիդ գծերէ : Միանգամայն պետութիւնը կը շնորհէր այն հողերը, որոնք կը գտնուէին ափանց վրայ, զորս ընկերութիւնը իւր ծախիւք պիտի ուողէր և մշակէր : Ընկերութիւնը գաղղիական ըլլալով, անմիջապէս բազում ընդդիմութիւնք սկսան Անգղիոյ կողմէն, և երկար կ'ըլլար թէ յիշէինք մանրամասն մրցմունք : Անգղիա կ'ուզէր ցուցնել այս բացման վնասները, մանաւանդ Օսմանեան պետութեան նկատմամբ : Գաղղիոյ զրիչք և ամենէն աւելի Փերտինանտ տը Լըսէփս, կը բացատրէին Զրանցքին մեծ օգտակարութիւնը Տաճկաստանի համար թէ կրօնական և թէ վաճառականական տեսակէտներով : Այդ ջրանցքին միջոցաւ Կ. Պօլիս և Սուլթանը, որ էր մեծ խալիֆայն մահմէտականութեան, կը մօտենար Մեքքէի և Արաբիոյ : Կօստանդնուպօլիս Եւրոպիոյ նաւահանգիստներէն մերձաւորագոյնը կ'ըլլար Հնդկաստանի և Զինաստանի « և կրնանք գաղափարել որ ինչ մեծ շարժում պիտի ըլլայ վաճառականութեան, նկատելով որ Տրապիզոն և Օտեսաս աւելի նուազ հեռաւորութիւն ունին ի Սուէզէ, քան Դրիէստ և Մարսիլիա ¹ » :

Այսու հանդերձ անգղիական հզօր ազդեցութիւնը կրցաւ առ ժամս դադրեցնել բացման աշխատութիւնքը : Խտիվը յուսաց աւելի նպաստաւոր պայմաններ

1. Փ. տը Լըսէփս Եփէդոս և Տ-ճկաստան :

ունենալ Ընկերութեան հետ և Նուպար փաշա դժուարացուց գործոյն շարունակաթիւնը: Իսմայէլ փաշա խնդրեց որ Սուլթանը իրաւասու ըլլայ այս տարածայնութեան մէջ, և Տուատ փաշա Նեգիպտոս գալով, միաբան ընդ Նուպար փաշայի ծանուցին տը Լըսէփսի որ բռնի աշխատողաց թիւը 20,000էն պէտք էր իջնել 6000ի, և թէ յետս կ'առնուէին ջրանցքի եզերքը շնորհեալ հողերը: Ընկերութիւնը բողոքեց Եգիպտոսի վարչութեան դէմ. և յետ երկար բանակցութեանց, երկուստեք ընդունելի եղաւ զՆաբոլէոն Գ իրաւասու կարգել այս անվերջանալի անհամաձայնութեան: Նուպար փաշա Բարիզ գնաց, և Նաբոլէոն Գի միջամտութեամբ սահմանուեցաւ որ Եգիպտոսի վարչութիւնը 28 միլիոն ֆրանք վճարէ, բռնի աշխատողաց թիւը նուազելուն համար: Անոյ ջրոյ անցքերուն վայելքը պիտի ունենար Ընկերութիւնը ամբողջ շնորհին ժամանակ, բայց բովանդակ աշխատութիւնքը ինքը պիտի կատարէր և Խտիվի վարչութեան պիտի տար միայն փոխարէն 10 միլիոն ֆրանք: Իսկ բաշխեալ հողերէն 10,264 եկտար ծովային ջրանցքին և 9000 եկտար անոյ ջրոց եզերքը պիտի ունենար: Մնացեալ հողերուն համար Ընկերութիւնը պիտի ստանար այլ և այլ սահմանեալ ժամանակաց մէջ վճարումն 30,000,000 ֆրանքաց: Այս իրաւասութեամբ կը վերջանար վէճը: Յետոյ մասնաւոր յանձնաժողով մը գծեց և սահմանեց շնորհուելիք հողերը:

1865
12 Հոկտ.

1864

1866

Յունվար 30

Յայնմհետէ աշխատութիւնը ընթացաւ մեծ եռանդեամբ և սահմանուեցաւ 1869 Նոյեմբերի հանդիսական բացումն ընել: Իսմայէլ փաշա անցաւ չրջեցաւ Եւրոպիոյ արքունիքները՝ անձամբ հրաւելու գիշխանս բացման հանդիսին: Ասկէ Բ. Դուռը վշտացաւ և զայրացաւ. կը համարէր որ այդ հրաւէրը պէտք էր ըլլալ բարձրագոյն Դրանէն և Սուլթանը անձամբ նախագահէր բացման. որով մեծ ցրտութիւն մը յառաջ եկաւ Բ. Դրան և Խտիվի յարաբերութեանց մէջ: Մինչև խօսք եղաւ որ Եգիպտոսի փաշայութեան եղած ամենայն առանձնաշնորհութիւնք ետ առնուին:

Ասլի փաշա վերջնագիր մը ղրկեց Խտիվի, որով կ'արգելուր նաւատորմդին կազմութիւնը, կը նուազեցնէր ցամաքային զօրաց թիւը, կը պահանջէր որ ամէն տարի ղրկուին Եգիպտոսի ելեմտից հաշիւք առ Բ. Դուռը, և արգիլեց որ և է փոխառութիւն կամ քաղաքագիտական դաշինք առանց Բ. Դրան հաւանութեան: Գժտութիւնք սաստկանալու վրայ էին երբ Անգղիա համոզեց զխտիվը տեղիք տալու, և նորէն սկսան յարսբերութիւնք: Սակայն Իամայէլ փաշա ինքնին կատարեց Սուէզի ջրանցքին բացման հանգէսը, որուն ներկայ կը գտնուէին բազմաթիւ գիտնականք յամենայն սզգաց, իշխանք, թագաւորագունք: Յետոյ անմիջապէս այցելութեամբ պատուեց Նարոլէոն Գի կողմանէ կայսրուհին Եւթէնի, մտնելով ջրանցքին մէջ գաղղիական պետութեան Էլլէ շոգենաւով, միաբանութեամբ ուրիշ քառասուն շոգենաւուց: Կայսրուհին Եւթէնի նախ այցելեր էր ի Կ. Պօլից Սուլթան Ապտիւ Ազիզի ուր եւրոպական ձեւակերպութեամբ և արեւելեան ճոխութեամբք հիւրընկալուեր էր ի Սուլթանէն:

Սուէզի ջրանցքով Եգիպտոսի յառաջագիմութեան և հարստութեան մեծ ասպարէզ մը կը բացուէր և ընդարձակ մրցարան մը եւրոպական սզգեցութեանց, որոնք ի շահ և եթ իրենց պետութեանց իրաւունք համարած են միջամտել յԱրեւելս և յամենուրեք:



ԿՐԵՏԷ ԵՒ Բ. ԴՈՒԹԸ 1866 — 1879

1. Կրետէ կղզին և ժողովուրդը. — 2. Ապստամբութիւն ի Կրետէ. 3. Աալի փաշա պաշտօնարան ի Վ. Պօլիս. — 4. Աալի փաշա և Կրետէ. — 5. Տասկաստանի և Յունաստանի սպառնալիք Կրետէի պատճառաւ. — 6. Նուաճում Կրետէի. — 7. Կրետէի տրուած արտօնութիւնք Բ. Դանէն. — 8. Հալէպայի Դաշինք և Ազգային ժողովք. և Առանձնաշնորհութիւնք Կրետէի:

1. Կրետէ կղզին եւ ժողովուրդը: — Կրետէ կամ Քանտիա կղզին Միջերկրականի մեծ կղզիներէն մին է որ կը տարածուի արևելքէն արևմուտք, ունենալով 8,580 քառակուսի հազարամէրը ընդարձակութիւն: Մէջտեղէն զինքը կը բաժնեն Իդալերան շղթայք, որուն բարձրագոյն գագաթն ունի 2,164 մեղր բարձրութիւն: Բարեբեր հող մը, նախանձելի ըրած է կղզին, որ թէպէտ այժմ միայն առատօրէն ձէթ և գինի կու տայ և քիչ քանակով պտուղք, աղ, մեղր և մետաքս, սակայն բարւոք մշակութեամբ կարող է նաև հասցնել շաքարի եղէգ և խահուէ և տարեկան 20,000,000ի արտահանութիւն մը ունենալ: Բնակիչքը դարուս սկիզբը 300,000է աւելի կը համրուէին, յորոց 50,000ը մահմէտականք և ասոնցմէ մաս մը սերեալք յունական հին ընտանիքներէ և ապա ընդունած մահմէտականութիւնը: Իրենց մեծագոյն քաղաքներն են Հանեսա¹, Ութիմօ, Հերակլէոն, որոնք սակայն քիչ բնակիչք ունին: Ժողովուրդը ցրուած է 800 գիւղերու մէջ, յորոց աշխ-

1. La Canée.

տարնակք աւելի խաղաղասէրք, սիրող եղած են երկիրը մշակելու, իսկ լեռնականք միշտ կռուած են իրենց անկախութեան համար Վենետկեցւոց իշխանութեան ներքեւ եղած ժամանակէն ի վեր: Երբ յամին 1669ի Վենետկոյ Հասարակապետութիւնը յետ հինգ դար տիրելու, այլ ևս չկրցաւ պահպանել զԿրետէ Օսմանեան պետութեան յարձակմունքներէն, և տիրեցին թուրք 28 տարի պատերազմելէն վերջը Քէօփրիւլի Մէհէմէտ փաշային յամառ քաջութեամբ, Կրետացիք որ արդէն դժուարութեամբ տարեր էին վենետկեան լուծը, աւելի հակառակեցան ոչ քրիստոնեայ պետութեան մը, և ամէն առթիւ ջանացին ձեռք բերել իրենց անկախութիւնը: Վենետկեցիք ի սպառ կը լքանէին կղզւոյն տիրելու յոյսը յամին 1715 և Կրետացիք կը մնային ամբողջովին ընկճեալ Օսմանեան թագաւորութեան ներքեւ:

Երբ Յունաստան գաղտ կը պատրաստուէր ապստամբութեան, Կրետացիք ևս կ'ուզէին մի և նոյն ժամանակ փորձ մ'ընել յամին 1821, սակայն եգիպտական բանակը հասնելով, կրկին զայն ենթարկեց Տաճկաց: 1824ին մինչև 1840 Սուլթանք զայն Եգիպտոսի թողուցին, որոնք կղզւոյն մէջ Եգիպտական զօրաց հիւանդանոցք շինեցին: Բայց յամին 1840 Տաճկաստան կրկին իւր ուղղակի կառավարեալ գաւառաց մէջ անցուց և հոն զրկեց մահմէտական կուսակալք և մաքսապետք:

2. Ապստամբութիւն ի Կրետէ: — Արդէն ուրիշ առթիւ ըսած ենք որ ի Տաճկաստան բոլորովին տարբեր պէտք է ըմբռնել գաւառաց վիճակը մայրաքաղաքին վիճակէն, ուր մեծ էր հանգստութիւնը և ազատութիւնը: Ի Կրետէ զրկուած կուսակալաց նպատակն ոչ կղզւոյն յառաջադիմութիւնն էր այլ անձնական հարստութիւնք դիզել, զորս ստանալու համար կը դիմէին հարստահարութեանց և անիրաւ տուրքերու. կըղզեցիք անտանելի նեղութեանց մէջ էին և գարմանք չէ որ նախանձէին Յունական կղզեաց բաղդին վրայ, որոնք միանալով Յունաստանի, ազգային վարչութիւն

մը կը վայլէին. շփտուիր ևս որ հայրենասէր Յոյնք եւանդնաւորած և խրախուսած ըլլան իրենց յոյսերը :

Կրետացիք նախ աղերսով մը դիմեցին առ Բ. Դուռը, խնդրելով իրենց վիճակին բարւոգումը, տուրքերուն թեթևութիւն մը և 1856ի Խաղդի Հիւմայունի անթերի գործադրութիւնը այս առթիւ շփածկելով Իսմայէլ փաշա կառավարչին արարքը : Բ. Դուռը պատասխանեց յոյսերով և խոստումներով, միանգամայն լիովին հպատակութիւն և համակերպութիւն պահանջելով : Բայց Իսմայէլ փաշա իմանալով իրեն դէմ եղած ամբաստանութիւնը, վրէժխնդրութեան ոգևով լեցուած, ինքնահրաման սկսաւ բանտել և նեղել որուն վրայ որ կասկած ունէր, արգիլեց որ և է գումարումն նոյն իսկ սակաւ անձանց, և գունդերով բռնեց կղզւոյն և քաղաքաց զլիաւոր կէտերը : Կրետացիք արդէն իրնէ և ի հնուց դժուարատարք բռնութեան, այս քմահաճոյ խստութեանց շուգեցին ենթարկուիլ, և Ալիաքէոսի մէջ 25,000 անձանց պաշտպանութեան ներքև ապստամբական ընդհանուր ժողովք մը խմբեցաւ որ զԿրետէ հռչակեց միացեալ Յունական թագաւորութեան հետ : Փութով կղզւոյն ամեն կողմ ապստամբական ժողովքներ հաստատուեցան, կամաւոր զինեալ խումբեր կազմուեցան, Յունաստանէն, Յոնիական կղզիներէ և մինչև ի Մալթայէ կամաւորք դիմեցին, որոց ընդհանուր հրամանատարութիւնը առաւ կրետացի Զիմպրաքաքի զլուխը. և լերանց նեղ ու ծամածուռ կիրճերուն մէջ ամրանալով Իսմայէլ փաշայի գունդերուն յաղթեցին ի վրիստէոս, յԱփոքրոն և ի Սէլինո : Անդէն Առժանանակեայ վարչութիւն մը կազմուեցաւ որ երկու կեդրոն ունեցաւ, մինն ի Քանտիա և միւսն Հայնեայի մօտ¹ :

Բարձրագոյն Դուռը որ ի սկզբան այս յուզման այնքան

1. Կարիպալտի յետ խրախուելու ապստամբութիւնը նամակով մը որ կը սկսէր « Ողջոյն քեզ Ելլազա, Քոյր Խաւոյ », կը պատրաստուէր իւր կամաւորներով դիմել յօգնութիւն Կրետացոյ : Բայց իտալական պարագայք խափանեցին զինքը :

կարևորութիւն չէր տուած, կայսերական գունդերուն պարտութեան լրոյն վրայ անմիջապէս 20,000 զինուոր ղրկեց, և որովհետև Անգղիա և Գաղղիա կը պահանջէին որ արիւնահեղութենէն աւելի նուիրակ մը ղրկուի այս եղելութեանց սկզբնապատճառը քննելու, զանոնք հաճելու համար լիազօր իշխանութեամբ նուիրակ ղրկեց զԿիրիտլի Մուսդաֆա փաշա, որպէս զի շահի և համագէտ պատամբները: Մահմետական ժողովուրդը ուրախութեամբ ընդունեցաւ զՄուսդաֆա փաշայն, իսկ քրիստոնեայք որոնք արդէն երբեմն մեծապէս կրեր էին անոր կուսակալութեան ժամանակ, բնաւ չուզեցին ընդունիլ իւր միջնորդութիւնը և շարունակեցին թշնամութիւնքը: Այն ատեն Կիրիտլի Մուսդաֆա փաշայն թողուց հաշտարարի դերը և զինուորական միջոցներու դիմեց: Սակայն թէ Ռէթիմոյի և թէ Հերակլէոնի կողոյն մէջ որ ութ ժամ աւեց, քրիստոնեայք յաղթութիւնը տարին և տաճիկ երկու հրամանատարք գերի բռնուեցան: Յայնմհետէ Մուսդաֆա փաշա նաւերէն ծովեզերքի վրայ ահաւոր կրակ մը սկսաւ թափել այրելով և քանդելով: Մալաքայի և Քէրունիայի քով արիւնահեղ կռիւններ եղան, յորս ապստամբք մեծապէս վնասուելով և Սփաքիայի լեռները ապաւինեցան: Մուսդաֆա փաշա հոն ևս փորձեց յարձկիլ, բաց չյաջողեցաւ ուետ վանեցաւ:

Կրետացիք իրենց տղայքը, կանաքը և ծերերը ծովեզր իջեցուցեր էին և զանոնք օտարազգի նաւերով, յորս կային գաղղիացի, անգղիացի, իտալացի և ռուս շոգենաւք, զանոնք կը փոխադրէին ի Յունաստան: Բ. Գուռը այս եղելութիւնը անկողմնակալ չէզոքութեան դէմ համարեցաւ և նպաստաւոր ապստամբաց, որով իւր դեսպանաց ձեռքով բողոքեց առ Պետութիւնս, առաջարկելով որ ինքը պատրաստ էր օսմանեան նաւերով զանոնք փոխադրել օսմանեան հողոյ վրայ ուրիշ կողմեր: Երկար տևեցին բանակցութիւնք. Եւրոպիոյ պետութիւնք բաց ի Ռուսիոյ, յանձն առին այլ ևս գաղթականք չփոխադրել ի Յունաստան: Իսկ ռուս և յոյն նաւեր շարունակեցին իրենց նախկին բռնած

ընթացքը և ի զուր Բ. Դուռը դիմեց միւս Պետութեանց որ Ռուսիա ևս յետս կասի: Արդէն Էնոսիս հռչականունն հէնը կանոնաւոր ծառայութիւն մը հաստատեր էր ընդ Կրետէ և ընդ Յունաստան, գաղթականք տանելով և ի դարձին անբաւ մթերք, գէնք և կամաւորք բերելով, առանց երբէք բռնուելու թուրք նաւերէն որոնք ամէն կողմ կը կարծուէին դարանել և երբէք չէին տեսներ Էնոսիսի նաւը:

3. Ալլի փաշա պաշտօնարան: — Եւրոպիոյ Պետութիւնք ևս միարան չէին իրենց տեսութեանց մէջ. իւրաքանչիւրը հնարք կը փնտռէր առաւելագոյն ազդեցութիւն մը ունենալու ի Կ. Պօլիս, և առաւելագոյն մրցողքն էին Գաղղիա և Անգղիա: Ֆուատ փաշա որ աւելի անգղիական կողմը կը միտէր, Փալմէրսդոնի մահուընէն վերջը հրաժարեր էր ի մեծ վէզիրութենէ և տեղը փոխանակեր էր Մէհմէտ Ռիւշտի փաշա: Յետինս տեսնելով Կրետէի ապստամբութեան ծանր կերպարանք մը առնուլը, և որովհետև պատերազմի և ծովային զօրութեան պաշտօնեայք զայն խստիւ ընկճելու կողմն էին, մինչ ինքը կը փափաքէր մեղմ միջոցներով դիմաց առնլու, Փետրուար 11ին հրաժարեցաւ նախագահութենէն և Ապտիւլ Ազիզ նոր պաշտօնարան մը կազմեց, որուն գլուխ եղաւ մեծ վէզիրն Ալլի փաշա և յորում Ֆուատ փաշա ևս կը մտնէր իրր պաշտօնեայ Արտաքին Գործոց և Մէհմէտ Ռիւշտի փաշա իրր պաշտօնեայ պատերազմի: Սակայն պաշտօնարանին ուղղիչն և ոգին էր նոյն ինքն Ալլի փաշա, Օսմանեան Պատմութեան մէջ արժանապէս կոչուած « ամենէն նշանաւոր քաղաքագէտը » . ոչ ստորին՝ դարուս Եւրոպիոյ նրբամիտ դիւանագէտներէ. նա մանաւանդ եթէ ի նկատի առնունք իւր և Տաճկաստանի դժուարին դրութիւնքը թէ ներքին, թէ արտաքին և թէ դրամական, և յորս յաջողութեամբ կրցաւ ղեկավարել Ալլի փաշա, պէտք է ըսենք անկողմնակցութեամբ, որ Ալլի փաշա իւր խեղճ, վտիտ, և լուռ կերպարանաց ներքեւ բարձր միտք մը ունէր, անխոնջ աշխատութիւն, արդար և անկաշառակեր կեանք մը, որ օս-

մանեան պաշտօնէի մը համար անգիւտ յատկութիւնն ներէն մին է :

Աալի փաշա որ Ռէշիտ փաշայի հետ միարան ան նկուն ոգուով ջանացեր էր բարւոքելու և բարեկարգելու զՏաճկաստան, ծնած էր 1815ին և փութով իւր ուսմամբ և արդեամբք յառաջեր էր դիւանագիտական ընթացից մէջ և արդէն 1841էն մինչև 1844 դեսպանութիւն կատարած էր ի Լոնտրա : Յամին 1854ի զինքը կը գտնենք նախագահ Թունզիմալի ժողովոյն որուն նպատակն էր բարեկարգութիւնք մտցնել, և քիչ վերջը Պաշտօնեայ Արտաքին Գործոց : Ինքն էր որ ներկայացուցեր էր զՏաճկաստան Բարիգու դաշնաժողովոյն մէջ և ինքն եռանդուն առաջարկող եղեր էր 1856ի Խաղդի Հիւմայունը հրատարակելու, այնքան նպատաւոր քրիստոնէից : Արդէն Ռէշիտ փաշայի պաշտօնարանին մէջ (1856) միշտ գրեթէ ունեցեր էր Արտաքին գործոց պաշտօնէութիւնը . մերթ համակարծիք և մերթ տարբեր . և այս պատճառաւ հրաժարեր էր Գանուբեան իշխանութեանց խնդրոյն մէջ : Իսկ Ռէշիտ փաշայի մահուընէն վերջը ինքը եզաւ մեծ վեպիր (1858) : Տաճկաստանի բազմազգի խնդիրք և յարաբերութիւնք ստէպ պատճառ ըլլալով պաշտօնարանական փոփոխութեանց, քիչ տարիներու ժամանակի մէջ Աալի փաշա միշտ կը գտնուէր կամ ի գլուխ պաշտօնարանին և կամ Արտաքին Գործոց վրայ . և թէ Ապտիւլ Մէճիտ և թէ Ապտիւլ Ազիզ մեծապէս գնահատելով իւր հայրենասիրութիւնը, հանճարը, խոհական միտքը և զհպատակս շահող բնաւորութիւնը, միշտ իրենց խորհրդոց մէջէն չհեռացուցին :

4. Աալի փաշա եւ կրետէ : — Աալի փաշա պաշտօնարանին գլուխ անցած ժամանակ, կրետէի ապրտամբութիւնը դժուարին կացութիւն մը առեր էր : Կիրիտլի Մուսդաֆա փաշային տեղ զրկուեցաւ Սէրտար Էքրէմ (մեծ մարաջախտն) Էօմէր փաշա, որ իրեն նպատակ առաւ զապստամբքը վանել Սֆաքիա լեբանց մէջ և զանոնք հոն սպառել : Սակայն վայրաց անհմտութեան և զօրաց սակաւութեան պատճառաւ,

Տաճիկք ամէն կողմ յաղթուեցան: Բ. Դուռը մտադիր էր մեծ բանակով մը ի սպառ վերջ տալ կրետական խնդրոյն, երբ Գաղղիա, Ռուսիա, Իտալիա և Բրուսիա առաջարկեցին միջազգային նուիրակութիւն մը ղրկել ի Կղզին, որուն նպատակն ըլլայ կեանք և ինչք ապահովել և օրինաւոր գոհացուցիչ մատակարարութիւն մը հաստատել Կրետէի մէջ: Անգղիա և Աւստրիա շուրջեցին մասնակցիլ այս համաձայնութեան. իսկ Բ. Դուռը Յուլատ փաշայի բերնով մերժեց չորս Պետութեանց առաջարկը, բողոքեց որ յայտնապէս Յունաստան ամէն միջոցներով կը յորդորէր և կը գրգռէր կրետացի ապստամբքը և սահանջելով որ դադրի յոյն վարչութիւնը այդ օրինակ գործելէ. միանգամայն ծանոյց որ ինքը լիազօր իշխանութեամբ բարձր նուիրակ մը պիտի ղրկէր խօսելու ապստամբաց հետ և զանոնք խաղաղութեամբ համոզելու: Ալլի փաշա մեծ վեզիրը ինքը փափագեցաւ երթալ, նախ լիսվին ներուֆն հրատարակելով ապստամբաց ըստ յայտարարութեան և խոստման Սուլթանին և թողլով ամիսուկէս ժամանակ հնազանդելու համար: Ալլի փաշա հասնելով ի Կրետէ մեծ հանդէսով մտաւ ի Հանիա ուր նորոգեց Կայսեր խոստումը անոնց համար որ զինաթափ ըլլան և առաջարկեց որ ամէն թեմէ չորս անձինք ընտրուին, որոնք կառավարութեան ծանուցանեն երկրին պիտոյքը և բարուքումները: Միանգամայն շինայեց դրամի, պատուոյ և նշաններու, զկղզեցիս շահելու համար, ամենայն քաղցրութեան հնարքներ փորձելով: Նոյեմբեր 22ին հանդիսաւոր կերպով Ալլի փաշա ժողովքը բացաւ ի Հանիա և կարգացուեցաւ Սուլթանին հրովարտակը նոր կանոնադրութեանց մասին. ապա նոյնը յունարէն կարգաց Քոսթաքի փաշան: Յետոյ Ալլի փաշայ յորդորական բանախօսութիւն մը ըրաւ զոր թարգմանեց Քարաթէոտորի փաշայն, և հանդէսը լինցաւ աղօթքներով: Նոյն օրը Զիմպրաքաքի ևս յայտարարութիւն մ'ըրաւ ապստամբաց՝ բնաւ « չխաբուելու » և կուուելու մինչև վերջ, միանալու համար Յունաստանի հետ: Էջովէր փաշա կ'ուզէր զինուորա-

1867
Մարտ

1867

կան բուռն յարձակմամբ ջնջել ապստամբութիւնը, որուն հակառակ էր Աալի փաշա, թէ բնաւորութեան պատճառաւ և թէ միանգամայն գուշակելով Եւրոպիոյ պետութեանց զգացմունքը: Էսմէր փաշա հրաժարեցաւ սպարապետութենէն և իրեն յաջորդեց Հիւսէյին Աջնի փաշա իբրև հրամանատար և կուսակալ:

1867
Նոյ. 11.

Սակայն Կրետէի ապստամբութիւնը հայրենասիրական յուզմունքներ ծներ էր յԱթէնս, որ ժողովրդէն հաղորդուելով պետական բարձր շրջանակներու, նոր քաղաքագիտական և տազնապողական դիրք մը կ'առնուին Յունաստանի և Տաճկաստանի յարաբերութիւնք, որով Ապտիւլ Ազիզ աճապարեց կոչելու զԱալի փաշա ի Կ. Պօլիս:

1868
Յունվ.

5. Տաճկաստան եւ Յունաստան Կրետէի համար:— Եւ յիրաւի Աթէնքի և Յունաստանի ամէն կողմ մասնաժողովք հաստատուեր էին Կրետացոց օգնութիւն ժողովելու համար, կամաւոր գունդեր և պաշարք կը ժողուէին, որոնք կանոնաւորապէս կը շրկուէին ի Կրետէ և որոց կը հրամայէր յոյն զօրավարն Բէդրոփուլաքի. և պաշտօնարանին նախագահ Քումոնտուրոս՝ ոչ միայն չէր խափաներ, այլ կը թուէր զՅունաստան պատերազմի պատրաստելու: Բազմաթիւ փոքրիկ նաւեր ոչ միայն ստէպ տեղափոխութեանց համար կը ծառայէին, այլ և մեծ նեղութիւն և տազնապ կը պատճառէին Տաճկական նաւերու. իսկ Էնոսիս հէնին աներկիւղ և անընդհատ ուղևորութիւնք յունական նաւահանգիստներէն ի Կրետէ և փոխադարձ, վիպասանութեանց արժանի արարք էին: Բ. Գուռը զՀոպարդ ծովակալը, որ Անգղիոյ ծառայութիւնը թողլով օսմանեան ծառայութեան մէջ անցեր էր, զրկեց նաւատորմը և Կրետէի ափունքը, որ ծովասպատակութիւնը ջնջէ: Սակայն յոյժ դժուարին պաշտօն մ'էր, ցորքան Յունաստան ապստամբաց թիկունք էր: Եւրոպիոյ պետութեանց ազգարարութիւնք համոզեցին զԳէորգ Ա աւելի խոհեմ ճամբայ մը բռնելու, այն ատեն Քումոնտուրոս հրաժարեցաւ նախագահութենէն, սակայն խօսարանը յայտնի քուէով ցուցուց որ պատերազմի կողմն

էր և Քուժոնսուրոս նորէն կանչուեցաւ պաշտօնարանը կազմելու : Ի զուր Անգղիա և Գաղղիա խորհուրդ կու տային Յունաստանի անտարբեր մնալու : Աթէնքէն խումբ խումբ երիտասարդք, յորս կային նաև բնիկ կրետացիք չէին դադրեր դիմելու ի կղզին, և պաշտօնարանին նախագահը ծանոյց Խօսարանին մէջ որ բոլոր յոյն ժողովրդեան փափագն էր Կրէտէի միութիւնը Յունաստանի հետ :

Աթէնքի օսմանեան դեսպանը՝ Յոթիատէս պէյ բողոքեց ասոր վրայ առ Տէլիեանի, պաշտօնեայ Արտաքին Գործոց, որ պատասխանեց թէ ինքը անկարող էր ազգին կամացը հակառակելու : Այն օրերը օսմանեան դեսպանատան դիմաց նախատական ցոյց մ'ալ ըլլալով, Բ. Գուռը կտրեց իւր պաշտօնական յարարերութիւնքը Յունաստանի հետ, զՅոթիատէս պէյը կանչեց ի Կ. Պօլիս, յոյն դեսպանին սուաւ իւր անցագիրքը և 15 օր տուաւ որ հեղին հպատակք, որոնք կրնային ըլլալ 200,000 անձիք, հեռանան օսմանեան հողէն : Միանգամայն դադրեցաւ վաճառականութիւնը Յունաստանի հետ : Ի Կ. Պօլսոյ ևս հեղինական դեսպանը դեսպանատան վրայէն վար առնելով յունական նշանը, գաղղիական շոգենաւով մեկնեցաւ յԱթէնս ծանուցագրով մը առ դեսպանս Գաղղիոյ, Անգղիոյ և Ռուսիոյ պաշտպանելու իւր հպատակքը :

Պատերազմը անհրաժեշտ կ'երևար և արդէն Հուպարդ փաշա 11 պատերազմական նաւուք սպառնական դիրք մը առաւ Յունաստանի դէմ, եթէ յոյն վարչութիւնը չարգելու Էնոսիս ի Պիրէոն : Յոյն վարչութիւնը խոհեմութիւն համարեցաւ հնազանդելու : Արդէն Եւրոպական պետութիւնք ամէն ջանք կ'ընէին պատերազմի մը առջևը առնելու, որ կրնար տարածուիլ : Մեծ պետութիւնք ի Բարիզ Դեսպանաժողով մը կազմեցին որուն նախագահ էր կոմսն Լալալէթ և ուր հրաւիրուեցան նաև Տաճկաստան և Յունաստան : Յետոյս դեսպանը քաջուեցաւ գումարումներէն, եղած որոշողութեանց դէմ բողոքելու համար : Այսու հանդերձ Դեսպանաժողովը շարունակեց իւր գումարումնե-

1868
Հ-4-22

ըը, որոց որոշողութիւնքը եղաւ ստիպել զՅունաստան շօզնելու Կրէտէի ապստամբութեան: Գաղղիոյ Արտաքին գործոց պաշտօնէին որդին կոմսն Վալեւաքի՝ Նարոլէոն Գի կողմանէ մեկնեցաւ տանելու առ Գէորգ Ա, թագաւոր Հելլէնաց այս յորդորը: Թագաւորը կ'ըմբռնէր որ անհնար էր ընդդիմանալ բովանդակ Եւրոպիոյ կամաց, հարկ եղաւ փոխել Պուլկարիս պաշտօնարանը և կոչել վարչութեան զԼուիս զՉայիմիս: Թէ յԱթէնս և թէ ամէն կողմ մեծ յուզմունքներ եղան այս փոփոխութեան հակառակ, սակայն Գէորգ Ա հաստատուն մնաց իւր որոշողութեան վրայ և ընդունեցաւ Բարիզու դեսպանամոզովոյն որոշողութիւնք, որով Փետրուարի մէջ Տաճկաստանի և Յունաստանի պաշտօնական յարաբերութիւնք նորոգուեցան¹:

6. Նուաճու մ'ս Կրէտէի: — Այսպէս Կրետացիք մնալով անոք, անօգնական, առանց պաշարի, առանց զինուոց և հրանօթից ընդդէմ բազմաթիւ գունդերու ծովէն և ցամաքէն, և որոնք շարունակաբար կը հասնէին ի Տաճկաստանէ, սպանուեցան, ցրուեցան լեռներու ժայռերու մէջ և կամ փախան յօտարութիւն և դարձան ի Յունաստան: Վերջին դիւցազնական և յամառ ընդդիմութիւննին եղաւ Ալքասէոնի վանքին մէջ զոր կրետացի կանայք օդը հանեցին, տկաններուն կրակ տալով, երբ թուրք գունդերը յաղթականք վերջին պատուարաց, իրենց արանց և որդւոց դիակները ոտնակոխ ընելով պիտի մանէին ի մենաստանը: Գաղղեցան նաև վերջին ընդդիմութիւնք ի Սֆաքիա և յԱփոքրոնս, յորս յուսահատութեամբ և մեծ քաջութեամբ կռուեր էին Փէդրոփուլաքի և Չիմլորաքաքի: Առ ժամս

1. Յամին 1869 Յունուարին կը մեռնէր ի Նիցցա քաղաք Ֆուսս փաշա, ուր դիմած էր առողջութիւն գտնելու համար իւր մարմինը մեծ շքով փոխադրուեցաւ ի Կ. Պօլիս, Ապտիւլ Ազիզ իւր այրւոյն 25,000 դահեկան թոշակ կապեց: Ֆուսս մահուընէ առաջ այցելած էր Եւրոպիոյ արքունիքները յորս Հռովմայ, և թէ ի Պիոսէ և թէ ամէն կողմ մեծ պատիւ և համակրանք գտնելով:

1868
Յունվ.

1869
Սեպտ.

Կրետէի ապստամբութեան հրդեհը կը մարէր արեան և աւերակաց ներքև :

7. Կրետէի տրուած արտօնութիւնք Բ. Դունէն : — Այսու հանդերձ Ապտիւ Ազիզ և Աալի փաշա չէին հանդուրժեր որ Կրետէի օրինաւոր բողոքները անլսելի ըլլան, թէպէտ և յաղթուած էին Արդէն 1867ին Սեպտեմբերի մէջ Կրետացւոց սահմանադրութիւն մը տրուած էր, և 1868ի Մարտէն սկսեալ երկու տարի շնորհուած էր ամէն տուրք, յորս և զինուորական գլխահարկը : Յետ այս առանձնաշնորհութիւնքը կրկին հաստատուելու, ընդհանուր կառավարիչը իւր ժողովքը կ'ունենար, յորում պիտի բազմէր տեղոյն Դատարանին նախագահը և Եպիսկոպոսը դարձեալ վեց անդամք, յորոց երեքը քրիստոնեայք և երեքը մահմէտականք : Ամենայն վաճառականական, քաղաքական և եղեռնական դատք ընդ քրիստոնեայ և ընդ մահմէտական, խառն Ատեանէ պիտի նայուէր, որոյ անդամք պիտի ընտրուէին տեղոյն իշխանութենէն հաւասար թուով ի մահմէտականաց և ի քրիստոնէից : Յայտնի է որքան որ այս արտօնութիւնք շնորհներ էին, այսու հանդերձ չէին կարող գոհացնել ի Կրետէ գրիստոնեայ տարրը որ յոյժ մեծամասնութիւն մը ունէր քան զմահմէտականը, և որով միշտ կը պահանջէր և կը պահանջէ որ ի նկատի առնուի ամենայն ընտրութեանց և անուանմանց մէջ կրօնական թուահամարը :

8. Հալէպայի Դաշինքը : — Ազգային ժողովք եւ Ազատութիւնք : — Բ. Դուռը Նոյեմբեր 15ին Մուսթար փաշայի ձեռամբ կրետացի երեսփոխանաց հետ դաշնախօսութիւն մը ըրաւ՝ կոչուած « Դաշնախօսութիւն Հալէպայի » որ թաղ մ'է Հանեայի մէջ և ուր կը բնակէին եւրոպական հիւպատոսք : Ըստ այսմ դաշանց՝ Կրետէ Ազգային ժողովք մը պիտի ունենար, կազմեալ 80 երեսփոխաններէ, յորոց 49ը քրիստոնեայք և 31 մահմէտականք ¹

1868

1. Այս Ազգային ժողովքը, հաստատեալ յամին 1868, հազիւ կրցաւ հրաման ունենալ խմբուելու յամին 1889 :

Պիտի հաստատուէին յամին 1866ի Արեւտէի Սահմանադրութեան վրայ եղած բարեփոխումը :

Բ. Գուռը Արեւտէի համար ամէն հինգ տարի քրիստոնեայ կուսակալ մը պիտի անուանէր Պետութեանց հաստատութեամբ, և եթէ Ազգային ժողովքը քուէից առաւելութեամբ ուզէր, պաշտօնը աւարտելուն կրնար կրկին հաստատուիլ :

Կուսակալի օգնականք պէտք էին ըլլալ զաւառի կամ քաղաքի մը կրօնից մեծամասնութիւն ունեցող ժողովրդէն :

Խերի օրէնքները պիտի լրանային գաղղիական օրինագրքէն. Դատաւորք պէտք էին ըլլալ անփոփոխելիք և ոչ ենթարկեալք թուրք իշխանութեանց :

Միայն բերդորէից մէջ պիտի ամփոփուէին տաճիկ պահանորդք :

Կղզւոյն կէս եկամուտը պիտի ղրկուէր Պետութեան գանձուն, միւս կէսը պէտք էր գործածուիլ կղզւոյն Հասարակաց վաստակոց :

Թուրք վարչութիւնը պիտի անուանէր հաշտարար դատաւորք :

Յոյն լեզուի գիտութիւնը անհրաժեշտ էր կղզւոյն համօրէն վարչական պաշտօնէից :

Մաքսատանց մէջ քրիստոնեայ պաշտօնակալք ևս պիտի անուանուէին :

Յայտնի է որ այս առանձնաշնորհութիւնք մեծապէս գոհացուցիչք էին քրիստոնէից եթէ խղճիւ ի գործ դրուէին բարձրագոյն Դրան կողմէն : Սակայն մահմէտական տարրը կը զայրանար քրիստոնէից իղձերը կատարուելուն, որով ամէն որոշմունք և շնորհք անգործադրելիք կը մնային բարձրագոյն Դրան կողմէն, այսպէս ապստամբական յուզումը անշէջ պահելով ի Արեւտէ : Մանաւանդ երբ կը տեսնէին ոչ հեռի իրենցմէ Սամոս կղզւոյն բարգաւաճ վիճակը, որ սեպհական իւր մատակարարութիւնը ունի և յատուկ դրօշակ, միանգամայն քրիստոնեայ կուսակալ մը իշխանի տիտղոսով և տուրք մը միայն կը վճարէ Բ. Դրան, այսպէս ինքնիշխան և հարկատու միայն մնալով, Սամա-

նեան պետութեան: Չէր կարելի որ կրետացի քրիստոնեայք տեսնելով այդ բարօրութիւնը, չփափագին և չփորձեն ձեռք բերելու, թէ ոչ ինքնիշխան ազատութիւն մը, գոնեայ կենաց, պատուոյ և ընչից ինքնօրէն պահպանութիւնը, առ որ իրաւունք ունի հաւասարապէս ամենայն մարդ և զոր անիրաւութեամբ կը զլանան քաղաքականացեալ բայց անձնասէր և իրենց շահը միայն խորհող ազգեր ինն և տասներորդ դարուն վերջը:



Գ Լ Ո Ւ Խ Ի Է

Գ Ա Ղ Ղ Ի Ա

ԲԱՐՉՈՒՄՆ ԼՈՒԻ ՁԻԼԻՓԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

1. 1848. Բարեկարգութեանց փափաք	1
2. Հացկերոյթք. — Ընդդիմակացք 'ի խօսարանի	2
3. 1848ի խօսարանի բացումը	3
4. Յեղափոխութիւն Փետրուար 24ի	5
5. Օտիւնն Պարօ և Թիէր Պաշտօնարան	9
6. Անկումն Լուի Ֆիլիպի թագաւորութեան	10
7. Վարչակալութիւն	12
8. Առժամանակեայ վարչութիւն	12

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ

1. Հասարակագիտութիւն. — Իրաւունք աշխատութեան	16
2. Հասարակագիտութեան հրատարակուիլը	20
3. Գաղղիոյ ներքին և արտաքին վիճակը	21
4. Ապրիլ 16	25
5. Ընտրութիւնք — Սահմանադիր ժողովք	27
6. Մայիս 15	29
7. Զանազան ընտրութիւնք, Լուի Նաբուլէոն	36
8. Յեղափոխութիւն Յունիսի	38
9. Քաղէնեայ դիկտատոր	40
10. Սահմանադրութիւն	44
11. Լուի Նաբուլէոն Նախագահ	46

Գ Լ Ո Ւ Խ Ի Թ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՔԻ ՅԱԻՍՏՐԻԱ, Ի ԲՐՈՒՍԻԱ, ԳԵՐՄԱՆԻԱ

1. Գաղղիոյ Յեղափոխութեան արձագանգ	50
2. Ա--որէ-- , Մէդէնիքի փախուսալ	51
3. Սանմանադրութիւն	55
4. Կայսեր փախուսալ յինսպրուք	55
5. Պ--հի-- , Յեղափոխութիւն	55
6. Աւագածողով. — Յունիս 12ին խռովութիւնը	57
7. Կ--իցի-- . Յեղափոխութեան ընկճուիլը	58
8. Մ--հար-- , Քոչուք Ազատական առաջարկք	59
9. Խռուաղք , Սլավոնք . Զինուորական սանմանք՝ ընդդէմ Մանաուսանի	60
10. Բ--ի-- , Յեղափոխութիւն Ի Պէուիսն	61
11. Փրեզիդէնտ Գուլիէլմոս Գ կը խոստանայ սանմանա- դրութիւն	63
12. Գերմանական պետութիւնք	65
13. Տանիմարքա . Խնդիր յաջորդութեանց , Դքսութիւնք :	67

Գ Լ Ո Ւ Խ Լ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՔ Ի ՖՐԱՆՔՅՈՐԴ

1. Սանմանադիր Ազգային ժողովք Ի Ֆրանքֆորդ	69
2. Սանմանադրութիւն	70
3. Արտաքին Խնդիրք	71
4. Բրուսիս և Ֆրանքֆորդի խորհրդարանը	73
5. Աւարիական խօսարան	74
6. Ապստամբութիւն Ի Վեննա . փախուսալ կայսեր	75
7. Վիեննիչիքաց կը պաշարէ զՎեննա և կը տիրէ — Գլխա- պարտութիւնք	78
8. Ազգային ժողովք Ի Պէուիսն	80
9. Աւարիս , խորհրդարան Ի Քրէմսիէր . — Հրամարիլ Փեր- տինանտոս Գի	82
10. Փրանկիսկոս Յովսէփ կայսր .—Սանմանադրութիւն	83

11. Խորհրդարան Ծրանքֆորդի. Աւագ և Կրսեր գերմանացիք	84
12. Նուխրակք կայսերական թագի առ Փրեդերիկոս	88
13. Ծրանքֆորդի ժողովք Տանիմարքայի և Դքսուլթեանց ինչրոյն մէջ	89
14. Յեղափոխութիւն ի Տրեգտա և յայլ տեղիս Գեր- մանիոյ — Վերջ Ծրանքֆորդի ժողովոյն . . .	91
15. Դաշինք Երկոյ թագաւորաց—Խորհրդարան Էրֆուրդի — Աւագածողով Ծրանքֆորդի — Տեսակցութիւն յՕլ- միւց	93
16. Շլէզվիկ — Հոլշտայնի Տանիմարքայի յանձնուիլը	95

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա

ԻՆՔՆԻՇԵՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՌԻԻ Ի ՄԱՃԱՌՍՅԱՆ

1. Փափագ ինքնիշխանութեան. Գժտութիւն Խուուաթնե- րու և Սերպերու. Ելլաշիշ	97
2. Քոշութ. Մանառաց բանակները	98
3. Վինտիշկրաց ի Մանառաստան	100
4. Մանառք ընդդէմ Դրանսիւվանիոյ	101
5. Պատերազմ ընդ Աւստրիոյ. — Կռիւ ի Նակի Սարլոյ — Յաղթութիւն Մանառաց	102
6. Աւստրիացիք կը թողուն զԲէշդ. Մանառք կը ախրեն Պուտայի	104
7. Առժամանակեայ վարչութիւն. Քոշութ և Կէօրկէյ	105
8. Միշմամութիւն Ռուսաց. Բանակք Փապքէրի և Հայնաւի	106
9. Փոփոխակի յաջողութիւնք	106
10. Պատերազմ Դմշվարի — Կէօրկէյ դիկտատոր	108
11. Կէօրկէյ անձնատուր ըլլալը	109
12. Հայնաւի անաւոր դատաւարտութիւնքը. Օսմանեան Պետութեան պաշտպանութիւնը	110
13. Քոշութ յԱնգղիա և յԻտալիա	111

Գ Լ Ո Ւ Խ Լ Բ

ԻՏԱԼԻԱ ԸՆԴԴԵՄ ԱՒՍՏՐԻՈՅ . ԻԱՏԵՑՔԻ

1. Իտալիոյ վիճակը — Յեղափոխութիւն ի Միլան	113
2. Հիւֆ —ու—րփ Միլանու	113
3. Առժամանակեայ վարչութիւն	117
4. Յեղափոխութիւն ի Վիննաիկ	117
5. Մանին . Հասարակապետութեան հրատարակուիլը	120
6. Յեղափոխութիւն ի Գոմոյ, Պերկամոյ, Պրէշիա, Գրէմոնա, Մանդուա, Մոտենա	121
7. Փիէմոնթի բանակը ի Լոմպարտիա	122
8. Դոսդանա, Հոովմ, ԷՆափոլի կը մասնակցին պատերազմին	123
9. Պատերազմուկք ի Փասդրէնկօ, ՍանդաԼուչիա . Գոռնուտա, Գուրդադոնէ, Կօիդօ, Վիչէնցա	124
10. Ռատէցքի յաղթութիւնքը, անկումն Վիչէնցայի	126
11. Մայիս 15 ի Նափոլի	127
12. Բանակցութիւնք միութեան Լոմպարտիա — Վիննակոյ ընդ Փիէմոնթի	128
13. Պատերազմ Քուադոզայ — Աւստրիացիք կը տիրին Միլանու	130

Գ Լ Ո Ւ Խ Լ Գ

ԻՍՍԱՐԱՆՔ ՅԻՏԱԼԻԱ, ՓԵՒՈՒՍՑ ՊԻՍՍ ԹԻ

1. Հոովմ.—Աւստրիացիք ի Պոլոնիա . — Պիոս Թի բողոքը	133
2. Խօսարան ի Դոսփոնա . Լիվոնոյի ազմուկքը . — Կուէրացիք . Մոնդանէլի	136
3. Խօսարան ի Փիէմոնթ . Իտալական դաշնակցութեան դադար	138
4. Նփոլի Է Սիլիէ	141
5. Սիկիլիա թագաւոր կ'ընտրէ զԱլպէրդօ Ամէաէօ Սալոնիոյ — Մեսսինայի պաշարումը	143

6. Ի Հոսվ՝.—Պաշտօնարանն Ռոսսի — Ռոսսիի սպանումը — փախուստ Պիոս Թի	143
7. Հոսվ՝ յետ փախստեան Պիոս Թի	147
8. Հասարակապետութիւն ի Հոսվ՝	150
9. Իստանբուլ — Կուէրացցի — Փախուստ Լէոփոլտի Բ	151
10 Վիէրի — Յեղափոխութիւն 11 Օգոստոսի	153
11. Վարչութիւն Մանիի — Պատերազմ Մէսդրէի — Մա- նիի դիկտատոր	155
12. Դիսպանիաժողով ի Պրիւսսէլ վասն Իսալիոյ	158

Գ Լ Ո Ի Խ Լ Դ

ՅԵՏԱԼԻԱ ԸՆԿՃԻԼ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆՑ

1. Փիեմնի ընդդէմ Աւստրիոյ	160
2. Սովարայի պատերազմը. — Գարլօ Ալպերդոյի հրամա- րիւր	163
3. Վրկատոր Էմմանուէլ Բ — Սահմանադրութիւն	164
4. Յուզմունք ի Պրէշիա, Ճենովա — Ընկնուած	165
5. Իստանբուլ — Կուէրացցի իշխանապետ և կալանաւոր	167
6. Իարձ Լէոփոլտի յիշխանութիւն	169
7. Սիլիէի ընդդիմութիւնը և Նուանուած	170
8. Հոսվ՝ Միջամտութիւն Գաղղիոյ — Պատերազմ 30 Ապրիլի	173
9. Պաշարուած Հոսվմայ — Վախճան Հասարակապետու- թեան	177
10. Իարձ Պիոս Թի	179
11. Վիէրիոյ Պաշտպանութիւնը. — Պատերազմ Մալկէրայ	180
12. Բանակցութիւնք հաշտութեան	182
13. Սով և մաղձախտ	181
14. Անկուած Վենետիոյ	185
15. Աւստրիոյ վարչութիւնը տիրեալ գաւառաց վրայ	188

Գ Լ ՈՒ Խ Լ Ե

Ա Ն Գ Ղ Ի Ա

Ա Ն Գ Ղ Ի Ա Ե Ի Ի Ռ Լ Ա Ն Ց Ա

1. Բարիգու Յեղափոխութիւնը ի Պելճիա	191
2. Յուզմունք յԱնգղիա . — Ի Լոնտրա դաշնագրականաց ժողովակ	191
3. Իւլնոս . — Նորաբողոք իւլանտա . — Օ'Պրիեն, Մի- լլի, Մայլը	194
4. Լրագրոց ազատաբանութիւնը . Միլլի ի բանտ և յաքսոր .	197
5. Գուպարած ի Դիփփերարի — Իստապարտութիւնք .	198
6. Լորտ փալմէրսդըն . Տօն փաշիֆէթոյի խնդիրը	201
7. Պայքարք ի Խօսարանի ընդդէմ Պաշտօնարանին	204
8. Մահ Թոպըրդ Փիլի	206
9. Հռովմէական Եկեղեցի յԱնգղիա	208
10. Հռովմարտակ ընդդէմ Հռովմէական Եկեղեցւոյ պատուա- նուանց	209
11. Առաջին Ախարհահանգէս ի Լոնտրա	212

Գ Լ ՈՒ Խ Լ Զ

Փ Ա Լ Մ Ե Ր Ս Մ Ի Ն Ե Ի Վ Ի Կ Ց ՈՐ Ի Ա

1. Փալմէրսդըն	214
2. Գժտութիւնք ընդ Վիկտորիա Թագուհին և ընդ Փալ- մէրսդըն	215
3. Լորտ փալմէրսդըն և Քոչութ	218
4. Լորտ փալմէրսդըն . և Լուի Նաբոլէոն նախագահ	220
5. Փալմէրսդընի հրաժարիլը	221
6. Տէրպի պաշտօնարան	225
7. Տիգրաէլի՝ վիպասան հռետոր և երգիծարան	224
8. Տիգրաէլի պաշտօնեայ դանձուն	227
9. Մահ Ուէլլինկթըն դքսին	228
10. Պաշտպանողականաց պարտութիւնը ի Խօսարանի	229

11. Տիգրաւէլի և Կլասսոսն հակառակընդդէմք . . .	231
12. Կլասսոսն — Եկեղեցւոյ և Պետութեան մէջ յարա- բերութիւնք — Կլասսոսն պաշտօնեայ. — Ճառ Ելեմոսից, իւր նուտորական հանճարը . . .	232

Գ Լ Ո Ի Խ Լ Է

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻԻՆ ԼՈՒԻ ՆԱՅՈԼԿՈՒՄ

1. Նախագահութիւն — Ա. Պաշտօնարան — Հոովմէա- կան խնդիր	235
2. Օրէնսդիր ժողովք 15 Յունիս	237
3. Ուղեորութիւն Նախագահին	241
4. Կայսրութեան համար ջանքերը	242
5. Տարածայնութիւն ընդ Նախագահն և ընդ Ժողովը	243
6. Պերհախօսութիւնք Պէրիէի, Դիէրի, Շանկաունիէի կոյս- րութեան մը դէմ	244
7. Թոշակ Նախագահին — Խնդիր վերաքննելու զՍահմա- նադրութիւն	247
8. Խօսք Նախագահին ի Տիծոն. — Հետեանք	248
9. Պաշտօնարան Հոկտեմբերի — Սէնդ Առնօ պաշտօնեայ Պատերազմի	250
10. Կրօնական հանդերձանք Պետական հարուածին	252

Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾ ԴԵԿՏԵՄԲԵՐ 2Ի

1. Պետական հարուած	253
2. Մոռնի և աը Մոփա գլխաւոր գործողք	256
3. Կալանաւորութիւնք 16 Երեսփոխանաց	257
4. Հրովարտակք Նախագահին — Առաջարկ նոր Սահմանա- դրութեան	259
5. Ընդհանուր քուէարկութիւն	263
6. Բողոք երեսփոխանաց ընդդէմ Նախագահին	264
7. Բարիզեցւոց անուարբերութիւնը — Սակաւ պատնէջք	266

8. Նոր պաշտօնարան . — Պատրաստութիւնք քուէարկութեան	268
9. Պատերազմ Բարիզու . — Դատապարտութիւնք	269
10. Խստութիւնք Ի Գաւառս	271
11. Ընդհանուր քուէարկութիւն — Տասնամեայ Նախագահութիւն	272
12. Աքսոր Հասարակապետականաց	275
13. Սահմանադրութիւն	275
14. Օրէնք ընդդէմ Օուլէանեան ցեղին	274

Գ Լ Ո Ւ Խ Լ Թ

Բ. Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Օրէնսդիր Ժողովք	277
2. Ուղեորութիւն Նախագահ Իշխանին — Խօսք Ի Պորտո — « Ողջն Կեսար »	279
3. Ընդհանուր քուէարկութիւն Կայսրութեան նամար . — Արդիւնք	281
4. Կայսրութեան հրատարակումը. Նաբուլէոն Գ	285
5. Կայսերական արքունիք	284
6. Օտար պետութիւնք	285
7. Ամուսնութիւն Նաբուլէոն Գի — Կայսրունին Եւթէնի — Պերնութիւն	286
8. Նխագք Ասենին դռնփակ	
9. Դաւք ընդդէմ Կայսեր	290

Գ Լ Ո Ւ Խ Խ

Տ Ա Ճ Կ Ա Ս Ց Ա Ն Ե Ի Լ Ի Բ Ա Ն Ա Ն

1. Սուլթան Ապաիւլ Մէհիտ	292
2. Ռէշիտ և Մէհէմէտ Ալիփաշայք	295
3. Ճէդայիրլեան Մկրտիչ Աղա սեղանաւոր . Բարենորոգումն մաքսատանց	294

4. Ռէշիտ Պաշտօնարան	295
5. Մէհէմէտ Ալի Պաշտօնարան — Բանտարգելութիւն Ճէզայիրիկանի	296
6. Մէհէմէտ Ալի յաքսոր — Ազատութիւն Ճէզայիրիկանի	298
7. Ճէզայիրիկան յԱնգղիա	299
8. ԼիճԱՆԱՆ — Տրուզ և Մարօնիդ ցեղերուն հակառակու- թիւնը	500
9. Գաղղիա և Անգղիա ի Լիբանան	501
10. Տրուզներուն շարքը 1843ի Մարտին	504
11. Բողոք Գաղղիոյ և Թնդանօթակոծել զՊէրութ	503
12. Բարեկարգութիւնը Լիբանանու	507

Գ Լ Ո Ւ Խ Խ Ա

ԴԱՆՈՒԻՅԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՅՔ

1. Մուսավիա — Վալաքիա	398
2. Վալաքիա — Աղեքսանդր Կիքա նոսփոտար և Ազատականք	309
3. Պիպէսքոյ նոսփոտար	311
4. Մուսավիա — Միքայէլ Աղուրցա նոսփոտար և բարեկար- գութիւնք	312
5. Պիպէսքոյ վարչութիւնը	315
6. Յեղափոխութիւն ի Վալաքիա և ի Մուսավիա	314
7. Սահմանադրութիւն ի Պուքրէշի և Առժամանակեայ վարչութիւն	316
8. Միջամտութիւն Ռուսաստանի. Յեղափոխութեան ակա- րանալ	318
9. Միջամտութիւն Տանկաստանի	320
10. Տեղապահութիւն	
11. Ընկերուծ Ազատականաց	322
12. Դաշինք Պալթա Լիմանի	323
13. Իշխան Յովհաննէս Աղեքսանդր Ա. նոսփոտար Մուսա- վիա—Վալաքիոյ	324

Գ Լ Ո Ւ Խ Խ Բ

ՊԱՏՃԱՌԻՔ ԴՐԻՄՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Ռուսաստան և Եւրոպիոյ Պետութիւնք	325
2. Նիկողայոսի Խորհուրդքը Տաճկաստանի վրայ	326
3. Գարատաղի խնդիրը — Էօմէր փաշա	327
4. Սրբազան տեղեաց խնդիրը	328
5. Նուիրակութիւն Մէնչիքով Իշխանին Ի Կ. Պօլիս — Իւր պաննջքը	329
6. Ապաիւլ Մէճիտ և օսմանեան պաշտօնարան	352
7. Ռուսիոյ Վերջնագիրը Ռուսք Կ'անցնին Փրութը	353
8. Եւրոպիոյ Պետութիւնք. — Անգղիոյ և Գաղղիոյ նա- ւատորմիդք յԱրևելս. — Ծանուցագիր Վեննայի	354
9. Հրատարակումն պատերազմին. — Նաւամարտ Սինոպի	355
10. Դաշնակցութիւն Գաղղիոյ և Անգղիոյ ընդդէմ Ռու- սաստանի	357
11. Նիկողայոս և Փրանկիսկոս Յովսէփ, Բրուսիա և Գեր- մանիա	340
12. Տաճկաստան. — Ռէշիտ փաշա. — Սպարապետն Էօմէր փաշա	345
13. Պատերազմուիք յԱսիա և Դանուբի վրայ. — Պաշա- րումն Սիլիստրէի. — Յունական դաւառք	347
14. Պատերազմ Պալթիկի վրայ. — Առումն Պորսմուշտի	349

Գ Լ Ո Ւ Խ Խ Գ

ԴԱՇՆԱԿԻՑՔ Ի ԴՐԻՄ—ԱԼՄԱ ԵՒ ԻՆՔԻՐՄԱՆ

1. Դաշնակից բանակք — Սպարապետք	351
2. Դաշնակիցք Ի Կալիփոլի, Վառնա — Թնդանօթակոծումն Օտէսայ	353
3. Ղրբիմ. Դաշնակիցք կը հասնին յԵւփազորիա — Բանակ Մէնչիքովի	355

4. Պատերազմ Աւմայի	537
5. Գաշնակիցք Սէվաստափոլի առջև, Զօրավարն Գոդլէպէն	560
6. Մաղձախտ. — Մահ Սէնչ Առնոյի, Քանրուպէր սպարապետ	561
7. Պաշարուած Սէվաստափոլի	
8. Պատերազմ Պալրքըլավայի. — « Վեցնարիւրք »	563
9. Պատերազմ Ինքէրմանի — Ռոււք և Անդդիացիք	566
10. Ռոււք և Գաղղիացիք — Յաղթուածին Գաշնակցաց	571
11. Գաշնակիցք յետ Ինքէրմանի. Հիւսիսային նաւատորմիդն	573

Գ Լ Ո Ւ Խ Խ Գ

ԳԱՇՆԱԿՑԱՅ ՏԱԳՆԱՊԲ. — ՄԱՀ ՆԻԿՈՂԱՑՈՍԻ Ա.

1. Գաշնակցաց նեղութիւնք ի ձմեռան. — Հիւանդութիւնք	575
2. Հաշտութեան մը բանակցութիւնք	577
3. Սարտենիա կը միանայ Գաշնակցաց	578
4. Տրտունջք յԱնդդիա վասն դանդաղութեան պատերազմին. — Անկումն Պաշտօնարանի. Փայմէրսզոն պաշտօնարան	579
3. Նաքուլէոն կը զրկէ զզօրավարն Նիէլ. — Նոր կարգադրութիւնք ի բանակի	580
6. Հանդերձանք Ռոււսաց. — Էօմէր փաշա. — Սպիտակամրոցք	581
7. Մահ Նիկողայոս կայսեր	582
8. Աղեքսանդր Բ. — Հաշտութեան մը փորձք. — Կորչաքով	583
9. Գաշնակից բանակք ի Ղրիմ. — Նաւատորմիդն ի ծովափնեայս	585

Գ Լ Ո Ւ Խ Խ Ե

ԱՆԿՈՒՄՆ ՍԷՎԱՍՏԱՓՈԼԻ. ԲԱՐԻՋՈՒ ԳԱՇՆԱԺՈՂՈՎՐ

1. Նաքուլէոն ի Լոնարա. — Յուցանանգէս ի Գաղղիա. — Վիկտորիա ի Բարիզ	588
2. Մայիս 2 ի Ղրիմ	589

3. Զօրավարն Փէլիսիէ ընդհանուր սպարապետ . — Վլէ- րաւորիւ Դոդլէպէնի	390
4. Մահ Լորտ Ռէկլանի	392
5. Պատերազմ ի Չէռնայա	393
6. Ընդհանուր յարձակումն Սէվաստափոլի վրայ	395
7. Մաք-Մահոն կը տիրէ Մալպոֆի	
8. Կորչաքոճ կը թողու զՍէվաստափոլ	398
9. Սէվաստափոլի անկմանէն ցհաշտութիւն	399
10. Ռուսք կը տիրեն Ղարսի	399
11. Հաշտութիւն և դարձ բանակաց	400
12. Դաշնախօսութիւն Բարիզու	401

Գ Լ Ո Ւ Խ Խ Թ Զ

ԳԱՂՉԻՈՅ ԱՐՅԱՔԻՆ ՓԱՅԼՔ. ՆԵՐՔԻՆ ՏԱԳՆԱՊԵՐ

(1 8 5 6 — 1 8 5 9)

1. Երևունդ Կայսերազուն Իշխանին	405
2. Շահեկանութիւն Դրամոյ . Տազնապ դրամական	407
3. Պարոն Հոսման քաղաքապետը դուռն Սէնի . Բարիզ քա- ղաք զուարճութեանց . Օտար իշխանք ի Բարիզ	408
4. Օրէնսդիր ժողովքը . Երերակոյտը . Օրէնք համալսարա- նական . Տպագրութիւն	410
5. Եկեղեցական վէճք . Սիպուր Արքեպիսկոպոս Բարիզու . Սպանումն	412
6. Իշխանական այցելութիւնք և հանդէսք . — Մահ Գա- վէնեաք զօրավարին	414
7. Օրսինիի դաւը	415
8. Օրսինիի դաւոյն հետեանք . Սպսոնալիք ընդդէմ Անդրոյ	417
9. Օրէնք Ընդհանուր ապահովութեան . Տարագրութիւնք	418
10. Դատաստան և Գլխապարտութիւն Օրսինիի	419
11. Հասարակապետականք . Վիկտորիա Թագուհին ի Շէր- պուրկ . Իշխանն Նաբուէոն յԱլէքի	421
12. Թագաւորականք . Չուլումն . Դատ Մոնդալամպէրի	421

Գ Լ Ո Ւ Խ Խ Է

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ 1859Ի ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԱՌԱՋ

1. Փիեմանի. Վիկտոր Էմանուէլ Բ և կոմսն Քաւուր	425
2. Փիէմոնթեցիք ի Ղրբիմ և Փարիզու Գաշնածողովոյն մէջ	429
3. Յեղափոխական փորձեր ի Լիվոնսո և ի Ճինովա. Աբշա- ւանք ի Սափրի	430
4. Լ՛ոգոբոբ — Վիշեբի. Արշիդուքսն Մաքսիմիլիանոս	452
5. Դոստանա. — Իարձ ի Նախկին Վիճակ	455
6. Իրաւական Դոստանութիւն. Փարմա. Մոսկնա	436
7. Հոսով. Ուղեորութիւն Պիոս Թի	437
8. Նախնի և Սիլիէի. — Փերտինանտոս Բի վարչութիւնը	458
9. Իտալական միութեան մը ընկերութիւնը	440
10. Քաղուր և Լուի Նաբուլէոն Գ	442

Գ Լ Ո Ւ Խ Խ Ը

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ի Տ Ա Լ Ի Ո Յ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, ՎԻԼԼԱՖՐԱՆՔԱՅ, ԴԱՇԻՆՔ ՑՈՒՐԻՔԻ

1. Պատերազմի յայտարար նշանք. Նաբուլէոն Գ և Խնա- մութիւն Սափոյիոյ տան նկատ	444
2. Պատճառք և Հանդերձանք պատերազմին	446
3. Բանակն Գաղղիական և բանակն Փիէմոնթի	448
4. Բանակն աւստրիական յիտալիա	459
5. Պատերազմ ի Մոնդեպլէլլօ. Վարէզէ և Փալէսզրոյ	454
6. Պատերազմ Մաճէնզոյի. — Մաք Մանոն զօրավարը. Նաբուլէոն ի Միլան	454
7. Կայսրն Փր. Յովսէփ ընդհանուր հրամանատար. Պա- տերազմ Սուֆլերինոյ	457
8. Դոսքանա. Դքսութիւնք և Միջին Իտալիա պատերազ- մին ժամանակ	460
9. Զինադադարութիւն. Իտալիական Վիլլաֆրանչոյ. Դա- շինք ի Ցուրիք	465

10. Տժգոնութիւնք Փիէմոնթի և Հիւսիսային Իտալիոյ .	465
11. Միութիւն Միջին Իտալիոյ ընդ Փիէմոնթի . . .	466
12. Միացումն Սափոյիոյ և Նիցցայ ընդ Գաղղիոյ . . .	467

Գ Լ Ո Ւ Խ Խ Թ

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՅՈՎԻՓ ԵՒ ԳՈՒԼԼԻՂԼՐՈՍ Ա

1851 — 1859

1. Փրանկիկոս Յովովի կայսեր առաջին տարիները . . .	470
2. Սանմանադրական բարուքումներ	472
3. Բրուսիա. — Փրեդերիկոս Գուլիէլմոս Գ	474
4. Բրուսիա Ղրիմու Պատերազմին և Նէօլադէլի խնդրոյն մէջ	475
5. Փրեդերիկոս Գուլիէլմոս Գի չրածարիւրը	476
6. Գուլիէլմոս իշխան թագապահ և թագաւոր	477
7. Կոմսն Պիսմարք Շէօնհաւզէն	479
8. Գերմանական Միութեան խնդիրը	480
9. Գերմանական իշխանութիւնք և Սանմանադրութիւն .	481
10. Տնտեսագիտական և Արուեստական հաստատութիւնք	482

Գ Լ Ո Ւ Խ Խ Ր

ՇԼԷՋՎԻԿ ՀՈԼՇԳՈՅՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԱՆԻՄԱՐԳԱԿԱՆ

1. Պատահող Տանիմարքական պատերազմին	484
2. Հոլշթայն կ'ուզէ թօթափել Տանիմարքայի լուծը	485
3. Մահ Փրեդերիկոս Էի. Բրիտանիանոս թ. — Փրեդերիկոս Աւկուսդէնպուրկցի	486
4. Զինուորական միջամտութիւն Բրուսիոյ և Աւստրիոյ . Տիրել Տանէվէրքէի և Շլէզվիկի	487
5. Յուզմունք ի Գոփէնհակէն. Բանակ յԵլթլանա. Պա- տերազմ Տիւփէլի	489
6. Տանիմարքացիք կը յաղթեն ծովու վրայ	491

7. Դեպքանաժողովի Լոնարա	492
8. Իշխանն Փրեդեբրիկոս Կարոլոս Բրուսիոյ. Առուձն Աւսէնի	493
9. Դաշինք Վեննայի	493

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ա

ԱՆԳՂԻԱ — ՀՆԴԿԱՍՏԱՆ 1856 — 1860

1. Անգղիոյ Ներքին վարչութիւնը և Արտաքին քաղաքականութիւնը	496
2. Ճոն Ռոսսըլի առաջարկած օրէնքները. — Ազլանդական հեռագրի և Սուէզի բացման խնդիրք	498
3. Արբուճ Նաւըի Քանթոն	499
4. Օրսինիի պայթուցիկ գնդակք	501
5. Յոնիական կղզիք	502
6. Կլատտոն Նուիրակ Արտասովորի Յոնիական կղզիս	503
7. Անգղիա կը թողու գՅոնիական կղզիս	504
8. Անգղիա և Պարսկաստան	505
9. ՀՆԴԿԱՍՏԱՆ. — Տժգոնութիւն բնիկ ժողովրդոց	506
10. Սիփայից ապստամբութիւնը	508
11. Անգղիացիք կը տիրեն Տէլիի և Գաւփորի Վրէժխընդրութիւնք	510
12. Ընկնուձն ապստամբութեան	512
13. Հրովարտակ վասն Հնդկաստանի. փոխարքայութիւն	513

Գ Լ Ո Ւ Խ Ծ Բ

Զ Ի Ն Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

1. Զինաստան ժիթ դարուս մէջ	516
2. Պատահաք շինական պատերազմին	518
3. Դաշնակցութիւն Անգղիոյ և Գաղղիոյ ընդդէմ Զինաստանի	519
4. Առուձն Փէյ-Հոյի	520

5. Դաշնակիցք կը շուեն ի ֆէքին. Պատերազմ ի ֆա- լիքաօ	521
6. Աւարառութիւն Ամարաստանի կայսեր	523
7. Դաշնակիցք ի ֆէքին. — Հրկիզումն Ամարաստանի կայ- սեր	525
8. Հաշտութիւն և Դաշինք ֆէքինի	526
9. ՃԱՓՐՆ. Դաշինք Ճափոնի նեա	526

Գ Լ Ո Ւ Խ Ի Մ Գ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԱՂԵՐՍՏԱՆԻՐ Բ

1. Աղեքսանդրի Թագաւորութեան առաջին տարիները	528
2. Աղեքսանդր Բ և Բարեկարգութիւնք. Յառաջադիմու- թիւնք	529
3. Դաստիարակութիւն և Վարժարանք	530
4. Նաւարկութիւն և Երկաթուղիք	531
5. Տաղստան և Շամիլ	532
6. Վիճակ Գիւղացւոց. Սարկութիւն կալուածական	533
7. Ազատութիւն Գիւղացւոց	535
8. Կարգաւորութիւնք դատաստանականք	538

Գ Լ Ո Ւ Խ Ի Մ Գ

ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

1. Լեհաստանի վիճակը յամին 1837	540
2. Յուզմունք և ապստամբութիւն ի Վարշաւիա	542
3. Աղեքսանդր կայսեր զիջող ընթացքը	543
4. Եկեղեցական Դասը և Ազնուականութիւնը	543
5. Մեծ Դուքան Կոստանդին փոխարքայ ի Լեհաստան	546
6. Չախողութիւնք ապստամբաց — Խստութիւնք վարչու- թեան	548
7. Լեհաստան և Եւրոպական Պետութիւնք	549
8. Ի սպառ ընկնումն Ապստամբութեան ի Լեհաստան	551

9. Ռուսական վարչութեան ոգին և ուղղութիւնը Լինաստանի ապստամբութենէն վերջը	552
--	-----

Գ Լ Ո Ւ Խ Ե Ե

ԱՊՏԻԻԼ ՄԷՃԻՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ. ՀԱՅՔ, ԱՍՈՐԻՔ

1. Տանկաստան յետ Արևելեան Պատերազմին	553
2. Խաղաղի Հիւմայուն 1836ի. — Խնդիր զինուորագրութեան Քրիստոնէից	556
3. Հայոց Ազգին Ներքին Սահմանադրութիւնը. — Ընկերութիւն Համազգեաց	558
4. Ի ճիտաւ կոտորած Քրիստոնէից	561
5. Ասորիք և Լիբանան. — կոտորած Քրիստոնէից	562
6. կոտորած Դամասկոսի	564
7. Եւրոպական Պետութիւնք. Միջամտութիւն Գաղղիոյ	565
8. Ֆուատ փաշա Օսմանեան բարձր նուիրակ յԱսորիս	566
9. Լիբանանու վարչութիւնը — կարապետ Տավուս փաշա ընդհանուր կառավարիչ	569
10. Ապտիւլ Մէհթաբ վերջին տարիները և մահը	571

Գ Լ Ո Ւ Խ Ե Զ

ԱՊՏԻԻԼ ԱԶԻՋԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

1. Սուլթան Ապտիւլ Ազիզի գահակալիւր	575
2. Բարեկարգութիւնք և յառաջադիմութիւնք Ի կ. Պօլիս	575
3. Օսմանեան ելեմուսք և Ֆուատ փաշա	576
4. Բ. Դուռը և Մոնղէնէկրօ	580
5. Պատերազմ Ի Մոնղէնէկրօ, Էօմէր փաշա, պարսութիւն Մոնղէնէկրոյի	581
6. Բ. Դուռը և Սերպիա. — Ռաշակոճուճ Պելկրատի	585
7. Բ. Դուռը և Ռումանիա	587
8. Իշխանն Քուզա. — Բարեկարգութիւնք և իւր անկումը	589

9. Կարողոս Հոհենհոլլէոն իշխան Ռուսանիոյ	391
10. Աշխարհահանդէս ի Կ. Պօլիս. Ապտիւլ Ազիզ յԵգիպտոս	392
11. Ճոխութիւնք Կ. Պօլսոյ. Ֆուսա փաշա	393
12. Մաղձախտ ի Տահաստան յամին 1865. Հրդեհ Պահ. շէքաբուսիի	394
15. Ճանապարհք, Թղթատունք	395

Գ Լ Ո Ի Խ Ծ Է

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԳԵՈՐԳ Ա

1. Ոթոնի թագաւորութեան առաջին տարիները — Գերմանական տարրը ի Յունաստան	600
2. Յեղափոխութիւն Սեպտեմբերի. — Սահմանադրութիւն.	601
3. Ոթոնի թագաւորութիւնը և Արտաքին դէպքեր	602
4. Յեղափոխութիւն. — Անկումն Ոթոնի թագաւորութեան.	604
5. Եւրոպական Պետութիւնք և Առաջարկեալ իշխանք	606
6. Ընտրութիւն Տանիմարքայի Գուլիէլմ Գէորգ իշխանին՝ թագաւոր Յունաստանի	607
7. Գէորգ Ա և բարեկարգութիւնք	609

Գ Լ Ո Ի Խ Ծ Ը

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՑ

1. Հարաւային Իտալիա և Սիկիլիա	611
2. Կարիպալտի և արջաւանք Հազարաց	612
3. Պատերազմ ի Միլանցո. — Կարիպալտեանք կը տիրեն Սիկիլիոյ	615
4. Փրանկիսկոս Բ ի Նափոլի. — Իւր վերջին ջանքերը. — Փախուստ ի Կաէդա	616
5. Կարիպալտի ի Նափոլի. Վրլդուոնոյի պատերազմը	618

6. Նուիրակութիւնք . Ումբրիա . — Գաղղիացի զօրավարն Լամորիսիէր	621
7. Պատերազմ ի Քասդէլֆիտարոս . — Նուիրակութիւնք և Ումբրիա կը միանան Փիէմոնթի	625
8. Միացումն Նափոլիի . Անկումն Պուրպոնեանց	623
9. Թագաւորութիւն Իտալիոյ . — Առաջին Խօսարան	627
10. Մահ՝ Քաժուր կոմսին	630
11. Կարիպալտի ի Տըթահենդոն , ի Վենետս և յԱսփրոմոնդէ .	632
12. Դաշինք Սեպտեմբերի ընդ Գաղղիոյ	634

Գ Լ Ո Ւ Խ Ն Թ

ՄԵՔՍԻՔՈՅ ԵՒ ԿԱՅՍՐԻ, ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆՈՍ

1. Մեքսիքոյ 1855 էն վերջը — Պէնիդօ Յուարէզ Նախագահ .	636
2. Միջամտութիւն Սպանիոյ , Գաղղիոյ և Անգլիոյ	639
3. Նաքուէոն Գի մտածութիւնքը — Առաջարկ կայսրու- թեան առ արշիդուքսն Մաքսիմիլիանոս	640
4. Սպանիա և Անգլիա կը նրամարին — Գաղղիոյ առան- ձին միջամտութիւնը	642
5. Պաշարումն Փուէպլայի և Առումն . — Գաղղիացիք ի Մեքսիքոյ մայրաքաղաք	645
6. Եռապետք — կայսրութիւն ի Մեքսիքոյ	644
7. Մաքսիմիլիանոս կայսր ի Մեքսիքոյ . — Երկրին զի- նուորական զբամական վիճակը	646
8. կայսրն Մաքսիմիլիանոս և Միացեալ Նահանգաց թըշ- նամութիւնը	649
9. Մաքսիմիլիանոս լքեալ ի Գաղղիոյ և յԵւրոպայէ	651
10. Մաքսիմիլիանոս կը թողու զմայրաքաղաքը . Միրամոն Էկեղեցական դասուն օգնութիւնը — Պազէն պաշ- տօնանկ	656
11. Հասարակապետական բանակցութիւնք . Գաղղիացիք կը մեկնին ի Մեքսիքոյէ	658
12. Քուէրէզարոյ — Գերիլ Մաքսիմիլիանոսի	659
13. Դատաստան և սպանումն Մաքսիմիլիանոսի	663
14. Մեքսիքոյ Մաքսիմիլիանոսի մահէն վերջը	666

Գ Լ Ո Ւ Խ Կ

ԱՄԵՐԻԿԱ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ

1. Վարչական և բարոյական կազմակերպութիւն կեդրոնական և Հարաւային Ամերիկայի	667
2. Հասարակապետութիւնք ի Միջին Ամերիկա	669
3. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. Գոլոմոյէ-Միացեալ Նահանգք Նոր Կրանսաայի	670
4. Միացեալ Նահանգք Վենէցուէլայի	673
5. Միացեալ Նահանգք Էքուադորի	675
6. Հասարակապետութիւն Փէրուի	678
7. Հասարակապետութիւն Պոլիվիայի	681
8. Հասարակապետութիւն Գիլիի	685
9. Հասարակապետութիւն Արճէնդինայի և Պուէնոս Այրէս	686
10. Հասարակապետութիւն Ուրակուայ	689
11. Հասարակապետութիւն Փարակուայ և Լիփէզ	691
12. Կայսրութիւն Պրազիլի և Տոն Փէդրօ Բ	693

Գ Լ Ո Ւ Խ Կ Ա

ՄԻԱՅԻՆԱԼ ՆԱՀԱՆԳՔ — ՊԱՏԵՐԱԶՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ

1. Հիւսիսային և Հարաւային Նահանգք	697
2 Գերեաց խնդիր ի Միացեալ Նահանգս	699
3. Տարածայնութիւն Հիւսիսային և Հարաւային Նահանգաց մէջ — Աբրահամ Լինքոլն նախագահ	700
4. Քաղաքական պատերազմ	702
5. Պատերազմ Ճիդապլըրի և Առուձ Վլէթապլըրի. — Հարաւայնոց սկարանալը	705
6. Պարտութիւն Հարաւայնոց — Վերջ Քաղաքական պատերազմին	707
7. Սպանուձ Լինքոլն նախագահին. Զօրավարն Կրանդ՝ նախագահ	709
8. Աւազամայի խնդիրը	710

Գ Լ Ո Ւ Խ Կ Բ

ԲՐՈՒՍԻԱ ԸՆԴՆԵՄ ԱՒՍՏՐԻՈՑ — ՍԱՏՈՎԱ

1. Գժտուլթիւնք ընդ Բրուսիա և ընդ Աւստրիա . . .	715
2. Գաշնակցութիւն Բրուսիոյ ընդ Իտալիոյ . . .	715
5. Բրուսիա, Աւստրիա և Գերմանական Տէրութիւնք — Հաշտութեան մը փորձեր	718
4. Բրուսիա կը մտնէ ի Հոլլանդայն. բողոք Գերմանական Աւազածողովոյն. Բրուսիա ընդդէմ Աւազածողովոյն .	720
5. Բանակ բրուսիական և բանակ աւստրիական . . .	722
6. Բրուսիա կը տիրէ Սաքսոնիոյ, Հէսսէ Գասսէլի, Հանո- վերի. Պատերազմ ի Լանկէնսալցա	724
7. Բանակ ի Պոնձիա — Պատերազմ ի Միւնխէնկրաց և Նախոտ	726
8 Նախոտի յաղթութեան լուրը յԵւրոպա և ի Պէուլին. Գուլիէլմոս Թազաւորը ի բանակն	750
9. Պատերազմ Սառովայ	752
10. Բանակցութիւնք Զինադադարման. — Շարունակու- թիւն պատերազմին. Նիքոլսպուրկի Զինադադա- րումը	756
11. Պատերազմունք Մայնի վրայ — Բրուսիացիք կը մըա- նեն ի Տրանքֆորդ	759
12. Հաշտութիւն Փրակայի	741

Գ Լ Ո Ւ Խ Կ Գ

ԻՏԱԼԻԱ ԸՆԴՆԵՄ ԱՒՍՏՐԻՈՑ — ՔՈՒՍԴՈՋԱ

1. Իտալիա ընդդէմ Աւստրիոյ. Երազիր Պատերազմին .	745
2. Իտալական և աւստրիական բանակք	746
5. Պատերազմ Քուսդոզայ. Յաղթութիւն Աւստրիացոց .	747
4. Արշաւանք իտալական բանակին յԱւստրիա, յետ Քուս- դոզայի պատերազմին	751

5. Կարիպալատի Ի Գիրքու. Իւր յաջողութիւնք. — Ուրիշ կամաւոր գունդեր	735
6. Նաւատորմիցք Իտալիոյ և Աւստրիոյ. — Պատերազմ Լիսսայ ,	735
7. Վենետիկ կը շնորհուի և կը միանայ Իտալիոյ	657

ԳԼՈՒԽ ԿԴ

Ի ԳԱՂՂԻԱ ՆԵՐՔԻՆ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ 1861 — 1876

1. Գաղղիոյ Արտաքին Գործոց քաղաքականութիւնը	760
2. ԱՅ 1861. Օրէնսդիր ժողովոյն և ծերակոտին գումարուձեռքը	762
3. Յարձակողականք Նաբոլէոն Իշխանին ընդդէմ Օռլէանեանց — Նամակ Դքսին Տ'Օմալ	765
4. Գումարմունք 1862 ամին — Նոր ընտրութիւնք 1863ի	765
5. Գումարմունք 1864ի. — Ընդդիմութիւնք պայքարաց մէջ և Կայսրութիւնը դէպ յազատականութիւն	768
6. 1865 տարւոյն Պսակի Ճառին պատասխանւոյն առթիւ վիճաբանութիւն. — Թիէր կը պաշտպանէ Քանանայապետին ժամանակաւոր իշխանութիւնը	771
7. Կայսրուհին թագապահ — Ուղեորութիւն յԱլճէրի — Խօսք Նաբոլէոն Իշխանին յԱյաչիօ	775
8. 1866 ամին Պսակի ճառը և Պատասխան — Կոմսն ար Պուասսի	777
9. Յաւելուած Քառասնից	779
10. Բրուսիա — Աւստրիական պատերազմը Օրէնսդիր ժողովոյն մէջ. — Թիէրի ճառը	780
11. Պատրանք Գաղղիոյ — Նոր ուղղութիւն քաղաքականութեան մէջ	783

ՔԼՈՒԽ ԿԵ

ԱՆԳՂԻԱ — ՓԱԼՄԵՐՍԻՄՆԻ ՎԵՐՋԻՆ ՑԱՐԻՆԵՐԸ

1. Լորս Տէրպի պաշտօնարանը յամին 1859.	785
2. Լորս Փալմէրսոն պաշտօնարան և Արաաբին քաղաքականութիւն	786
3. Մահ Ալպէրդ Ամուսին իշխանին	788
4. Լորս Փալմէրսոնի վերջին տարիները	789
5. Մահ Լորս Փալմէրսոնի	790

ԳԼՈՒԽ ԿԶ

Ս Պ Ա Ն Ի Ա — Փ Ո Ր Թ Ո Ւ Գ Ա Ա

1. Ս Պ Ա Ն Ի Ա — Կուսակցական կռիւք	792
2. Ազատական միութիւնը՝ Օ՛Տոննէլ	794
3. Օ՛Տոննէլի գինուորական յաջողութիւնք — Տոն Կարլոսի գերի բռնուիլը	796
4. Պալատական կառավարութիւն — Ժողովրդեան յուզումը	796
5. Նարվաէզ — Պետական նարուած. Բացարձակ վարչութիւն	797
6. Յեղափոխութիւն ի Սպանիա — Զորավարքն Փրիմ և Սէրրանո — Առժամանակեայ վարչութիւն	799
7. Իզապէլլա կը թողու զՍպանիա. Կարլոսեանք — Կարոլոս Է — Հասարակապետականք	800
8. Ընտրութիւնք ի նպաստ թագաւորութեան — Թագապանութիւն Սէրրանո մարաջախտին — Սպանիա ի խնդիր թագաւորի	802
9. ՓՈՐԹՈՒԳԱԼ. Տոն Փէարո	803
10. Տոն Լուիձ	803

ԳԼՈՒԽ ԿԷ

ՇՈՒԷՏ, ՊԵԼՃԻԱ, ՀՈԼԱՆՏԱ, ԶՈՒԻՑՑԵՐԻ

1. ՇՈՒԷՏ — Օսկար Ա	807
2. Կարոլոս ԺԵ — Յառաջադիմութիւնք	808
3. ՊԵԼՃԻԱ — Լէոփոլա Ա. Սանմանադրական վարչութիւնը	810
4. Լէոփոլա Բ	812
5. ՀՈԼԱՆՏԱ. Գուլիէլմոս Գ	812
6. ԶՈՒԻՑՑԵՐԻ	815
7. Համաձայնութիւն ճինեւրայի, Կարմիր Խաչ	814

ԳԼՈՒԽ ԿԸ

ԶԵԹՈՒՆ ԵՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

(1819 — 1879)

1. Զեթունի վիճակը մինչև ժիթ Կարուն սկիզբները	817
2. Զեթունի ինքնավարութիւնը մինչև ցամա 1862	820
3. Պատճառք և Պատերազմ 1862ի	822
4. Յաղթութիւն Զեթունցւոց	826
5. Յանձնաժողովք Բ Կրան. — Նաբուէոն Գի միջամտութեան պատճառ	827
6. Իշխանք Զեթունի Ի Կ. Պօլիս և Գեբապ. Հասունեան Նախագահ արքեպիսկոպոս Հռովմէական Հայոց	829
7. Բարձունք ինքնավարութեան Զեթունի	850
8. Ապստամբութիւն Զեթունի յամին 1876 — Պատերազմ Ֆանուզի — Շինութիւն Ի Զեթուն թուրք զինուորանոցին	851

ԳԼՈՒԽ ԿԹ

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ԴՈՒՌՇ ԵՒ ԵԳԻՊՑՈՍ

1. Մէ՛էմէտ Ալիի վերջին տարիները — Պօղոս Պէյ	854
Արթինպէյ	
2. Իպրահիմ փաշա	855
3. Աբրահ փաշա	855
4. Սայիտ փաշա	856
5. Իսմայիլ փաշա և խտիզութիւն	858
6. Նուպար փաշա	859
7. Սուէզի շրանցքին բացումը	841

ԳԼՈՒԽ Զ

ԿՐԵՑԷ ԵՒ Բ. ԴՈՒՌՇ 1866 — 1879

1. Կրեաէ կղզին և ժողովուրդը	843
2. Ապստամբութիւն ի Կրեաէ	846
3. Աալի փաշա պաշտօնարան ի Կ. Պօլիս	849
4. Աալի փաշա և Կրեաէ	850
5. Տահկաստանի և Յուկաստանի սպանալիք Կրեաէի պատճառաւ	852
6. Նուանուճն Կրեաէի	854
7. Կրեաէի արուած արտօնութիւնք Բ. Դռնէն	856
8. Հալէպայի Դաշինք և Ազգային ժողովք. և Առանձնա- շնորհութիւնք Կրեաէի	855

